



Հարգելի՛ ընթերցող.

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտը, չհետապնդելով որևէ եկամուտ, իր կայքերում ներկայացնելով հայագիտական հրատարակություններ, նպատակ ունի հանրությանն ավելի հասանելի դարձնել այդ ուսումնասիրությունները:

Մենք շնորհակալություն ենք հայտնում հայագիտական աշխատասիրությունների հեղինակներին, հրատարակիչներին:

Մեր կոնտակտները՝

Պաշտոնական կայք՝ <http://www.armin.am>

Էլ. փոստ՝ info@armin.am

**ՄԻՍԱԶ ՄԻՍԵՈՒԵԱՆ
(Մ. ՈՒԼՆԵՑԻ)**

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԶԷՅԹՈՒՆԻ

(1409-1921)

**1996
ԼԻՏԱՆԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ
(ԳԵՂԱՐՈՒՄ)

ԳԵՂԱՐՈՒՄԻ ՎԵՐԱԳՆԱԾՈՒՄ


(ԳԵՂԱՐՈՒՄ)

1991
ՀԱՅԱՍՏԱՆ



ՄԻՍԱԿ ՍԻՍԵՆԻԱՆ
1888 - 1954

(1891) ԿԱՐԱՎԱՆԱՆԻ ՊԱՐԿԻ



Ջեյթունի ընդհանուր տեսարանը դիմացեն



Ջեյթուն աներակոյտ (1928)

ՓՈԽԱՆ ՅԱՌԱՋԱՐԱՆԻ

ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ ՄԻՍԱՔ ՍԻՍԵՌԵԱՆԻ (Մ. ՈՒԼՆԵՑԻ)

«Միսաք Սիսեռեան (Մ. Ուլնեցի), ծնած է Ջեյթունի մէջ 1888-ին: Մանկութեան շրջանը ապրած է 1895-ի մեծ դեպքին արհաւիրքները շնչելով: 1904-ին շրջանաւարտ եղած է Ջեյթունի Կեդրոնական լրացուցիչ նախակրթարանէն: 1905-1909, վարիչ ուսուցչի պաշտօն վարած է Կոկիսոնի, Թաշուզի, Ալպիսթանի մէջ: 1908-ին մտած է դաշնակցութեան շարքին մէջ: 1099-1911 կ'անցնի Ատանա, ուր գրագրի պաշտօն կը վարէ Իբրանոսեան վանառան մէջ: 1911-1913 ուսուցչական պաշտօն կը վարէ Անտիոք, լուրջ աշխատանք կը տանի կրթական գործին եւ ժողովուրդին օգտակար ըլլալու համար: Հոն կը կազմէ ընտանիք: 1915-1919 ընդհ. տեղահանութեան կը մնայ Համա, գործ կը գտնէ պետական պարենաւորման գրասենեակին մէջ, եւ օգտակար ծառայութիւններ կը մատուցանէ նաեւ տարաբախտ իր հայ հայրենակիցներուն: 1919-26, ուսուցիչ Հալէպի Հայկազեանին մէջ: 1926-1928 կը ստանձնէ Միս Եփեփի որբանոցին տնօրէնութիւնը եւ կը մատուցանէ մեծ ծառայութիւն, կազմակերպչական գործին եւս ուժ տալով: 1928-1932 տնօրէն՝ Տէր Զօրի Ազգ. Վարժարանին, հոն Եկեղեցի մը շինել տալու համար մեծ ջանքեր կը թափէ, եւ այդ ձեռնարկը կը յաջողի, շնորհիւ բարերար Բարսեղ Պալըզեանի: 1932-1953-ին կ'անցնի Հալէպի Կիւլպենկեան Ազգ. Վարժարանի ուսուցչական պաշտօնին: Կուսակցութեան մէջ վարած է պատասխանատու գործեր: Աշխատակցած է հայ թերթերու:

Գրած է Ջեյթունի ամբողջական պատմութիւնը, որը կը մնայ անտիպ: 1954-ին կնքելով իր մանկանացուն, կը կատարուի ուսուցչի վայել թաղման արարողութիւն եւ մարմինը կ'ամփոփուի Հալէպի Ազգ. Գերեզմանատան մէջ»:

ՄԱՇԹՈՑ Ա. ՔԱՀԱՆԱՅ ՈՍԿԵՐԻՉԵԱՆ «Ջեյթուն Ալպոմ» (1960)

Օգտուելով հօրս վերոյիշեալ կենսագրութենէն, գրուած հակիրճ կերպով, իր հայրենակից, դասընկեր եւ պաշտօնակից Հալէպի Ազգ. վարժարանէն, Եդուարդ Ոսկերիչեան ուսուցիչ, ապա 1930-ին քանադայ ձեռնադրուած Տ. Մաշթոց Քենյ. Ոսկերիչեանի կողմէ, կ'ուզեմ կարգ մը լրացուցիչ մանրամասնութիւններ տալ, որոնք կը վերաբերին իր կրթական, ազգային եւ գրական գործունեութեան, որոնք տեւեցին աւելի քան կէս դար, 1904-1954, իր շրջանաւարտութենէն մինչեւ իր մահը:

Ա. ԿՐԹԱԿԱՆ, ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ

1904-ին շրջանաւարտ Զեյթունի Կեդրոնականէն, ստանալով ուսուցչական վկայական Կ. Պոլսոյ Ազգ. Կեդրոնական Վարժարանի ուսումնական Խորհուրդէն, որպէս տնօրէն ունենալով Յովհաննէս Անարոնեանը եւ ուսուցիչներ՝ Խաչիկ Եսդուպեան, Գրիգոր Գասապեան, Նշան Եզեկեւեան, Յովհաննէս Ալեքսանեան եւ ուրիշներ:

Զեյթուն ապրած շրջանին 1904-1909, եղած է ուսուցիչ Զեյթուն եւ իր շրջանները՝ Կոկիսոն, Բաշուլուզ, Ալպիսթան, յետոյ միջանկեալ՝ Ատանա, գրագիր, հաշուապահ Իրքանոսեան վանառատան մէջ:

1911-1913 ուսուցիչ Անտիոք:

1914-ին կ'աքսորուի Համա, յետոյ պարեմաւորման պաշտօնեայ կը դառնայ:

1919-1926 Հալէպի Հակագեան Ազգ. վարժարանին մէջ ուսուցիչ:

1926-1928 կը ստանձնէ Միս Եփփէի որբանոցին տնօրէնութիւնը:

1928-1932 Տէր Զօրի Ազգ. վարժարանի Տնօրէն եւ դպրապետ տեղւոյն եկեղեցիին:

1932-1945 կրկին Հալէպ, հայկազեան վարժարանի ուսուցիչ:

1945-1953 Հալէպի Կիւլպէնկեան Վարժարաի ուսուցիչ:

Աւանդած է հայերէն, աշխարհագրութիւն եւ տոմարակալութիւն:

Բ. ԳՐԱԿԱՆ, ԼՐԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

1.- Սուրիահայ Տարեցոյցի հրատարակութիւն

1924-ին եւ 1925-ին Հալէպի Հայկազեան Ազգ. վարժարանի երեք ուսուցիչներուն (Միհրան Անեմեան, Միսաք Սիսեռեան, Եղուարդ Ոսկերիչեան) աշխատասիրութեամբ խմբագրուեցաւ Սուրիոյ մէջ առաջին հայ պատկերազարդ Տարեցոյցը, որուն նիւթերը եղած են Ազգային, գրական, գիտական, բժշկական, պատմական, մարմնամարզական եւ այլն: Հոն գրութիւններ կան Բարգէն Եպիսկոպոսէն (ապա Կաթողիկոս), Ատուր լեւոնեանէն, Տօքթ. Պօղոսեանէն, Արմէն Անուշէն, Հ. Գ. Տօլպազեանէն, Մ. Ուլնեցիէն, ինչպէս նաեւ կարեւոր անձնաւորութիւններու նկարներ:

2.- Իբր գրագետ եւ թղթակից աշխատակցած է հետեւեալ թերթերուն. Արեւելք (Հալէպ), Ազգակ (Պէյրութ), Յուսարբը, Արեւ (Եգիպտոս), Յաւաջ (Բարիզ), Հայրենիք Ամսագիր (ԱՄՆ):

3.- Ունի քանաստեղծութիւններ, տակաւին անտիպ:

4.- 1930-ին հայերէնի թարգմանած է պելնիզացի նշանաւոր գրագետ եւ Նոպէլեան մրցանակակիր MAURICE MAETERLINK-ի «LA SAGESSE ET LA DESTINEE» (Իմաստութիւն եւ ճակատագիր) երկը, դարձեալ անտիպ:

5.- Իր վերջին գործը՝ «Զեյթունի Պատմութիւնը» (ծագումէն մինչեւ

1921) այս հատորը, ուր կը տեսնենք մերթ ընդ մերթ իր յուշերը եւ իր ժամանակակից պատմութիւնը:

Գ. ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

1.- 1908-ին մտած է Զեյթունի Հ. Յ. դաշնակցութեան շարքերը, ուր մնացած է ցման եւ ունեցած պատասխանատու գործունէութիւն:

2.- Դպրոցի ժամերէն դուրս (1925-1926), կարճ ժամանակի մը համար տնօրէն եւ ուսուցիչ գիշերային դասընթացքի, Հալէպի Տիգրանակերտի հայրենակցական Միութեան որբանոցին:

3.- 1926-1928, տնօրէն հալէպի Միս Եփփէ հայկական որբանոցին, որուն առաքելութիւնը եղած է 1915-ի ցեղասպանութեան որբերը հաւաքել Տէր Զօրի անապատէն եւ թրքական, իրաքեան սահմաններէն, բերել զանոնք որբանոց, կրթել, դաստիարակել գիշերային դասընթացքներով, իսկ ցերեկը չափաճառ որբերը դրկել քաղաք արհեստ եւ հայկական ձեռագործ սորվելու:

4.- 1928-1932 Տէր Զօր դրկուած է Ազգային առաքելութեամբ, վերակազմելու ազգային կեանքը, Ազգային դպրոցը եւ եկեղեցին: Կը յիշեմ Տէր Զօրի նախկին դպրոցը, ուր նախակրթարանի երկու տարիներս աւելցուցած եմ, նոր վարժարանի շինութենէն առաջ: Այդ դպրոցը վարժու առնուած բակ մըն էր, ուր կային երկու սենեակ մէջ մէջ իբր դասարան նախակրթարանին եւ հողաշէն սրահ մը, ուր խորանը վարագոյրով զոցուած էր շարքուն 6 օրերը եւ կը գործածուէր որպէս մանկապարտէզ, իսկ Կիրակի օրերը վարագոյրը կը բացուէր եւ պատարագ կը մատուցուէր:

Հայրս, այս կարութեան առջեւ ամիսներ շարունակ թերթերուն մէջ գրեց յօդուածներ եւ կոչեր, պարգելով հայ դպրոցին եւ եկեղեցիին վիճակը, յայտնելով արդար պահանջքը դպրոց, եկեղեցի եւ յուշարձան ունենալու վերապրող նոր սերունդին համար: Դժբախտաբար երկար ժամանակ անպատասխան մնացին կամ գաղջ հետաքրքրութեան արժանացան այդ գրութիւնները, որուն պատճառով դառնացած՝ գրեց այլ շեշտով յօդուածներ: Այսպէս, օրինակ մը տալու համար.

«Ասկայն մե՛ղք այն ամէն հայ գաղութներուն եւ մեծ արծաթաւորներուն, որոնք քար գրին իրենց սրտերուն վրայ եւ չլսեցին այն մեր անպատի աղաղակները, որոնք՝ իրենց մէկ միլիոն նահատակներու ընդերքէն կը հասնէին իրենց, յօրանջեցին անոնք եւ իրենց լուրթեամբ հեզեցին մէկ միլիոնի արիւնը, որ իրենցն էր»:

... Եւ օր մը մամակ մը կու գայ Եգիպտոսէն, Տիար Բարսեղ Պալըզնեանէն, որով կը յայտնէ իր պատրաստակամութիւնը ինքը առանձին տալու ծախսերը: Տեղւոյն հայութիւնը իր մասնակցութիւնը բերաւ աշխատանքով եւ նաեւ նիւթականով, դպրոցի, եկեղեցիի եւ յուշարձանի շինութեան:

6 Դեկտեմբեր 1931-ին կատարուեցաւ եկեղեցւոյ օծումը՝ ձեռամբ Առաջնորդ Արտաւազդ Արք. Սիւրմեանի եւ ներկայութեամբ բարերար Բարսեղ Պալըզեանի: Դպրոցը կոչուեցաւ Նանատակաց Ազգ. Վարժարան: Օրուան հանդիսութեան խօսեցաւ Տնօրէն Մ. Սիսեռեան, որ յանուն աշակերտութեան, ծնունդնունելու եւ պաշտօնեութեան շնորհակալութիւն յայտնեց Տիար բարերարին, որ լսեց մեր ձայնը, հոգի տուաւ մեր «անապատի բարբառի»-ին եւ հասաւ օգնութեան: Երեք տարուան մեր երազը աշխարհականութիւն է դարձած, ըստ ան, ունինք սեփական եկեղեցի, ունինք սեփական վարժարան եւ «Ապրիլ 24»-ի ուխտատեղի: Քանի կ'անցնին դարերը, կը վսեմանայ, կը սրբանայ այս ուխտավայրը, որպէս մի *պանդէռն*, ուր պէտք է ուխտի գան սերունդները, աշխարհի ծագերէն:

«Մեր մէկ միլիոնի ոսկորներուն վրայ ցորչափ բարձրացած կը մնան եկեղեցին ու դպրոցը, ապահով ենք թէ՛ հայը կրնայ պահել իր ինքնութիւնը իր հայ հոգիին, հայեցի դիմագիծն ու աւանդութիւնը, չմոռնալ իր Մեծասքանչն ու պատմութիւնը եւ աւանդել, ուսուցանել գանձը նոր սերունդին» (Մ. Սիսեռեան, Ազդակ, 1932 Յնր. 5):

1928-1932-ին, հօրս պաշտօնավարած շրջանին, 100-է աւելի հայ ընտանիքներ կային Տէր Զօր: Տարիներու ընթացքին նուազեցաւ թիւը եւ 1946-ին, 20 ընտանիքներ միայն կային, դպրոցը եւ եկեղեցին չէին գործածուեր: Դպրոցը փակուեցաւ, դպրոցի եւ եկեղեցիի շէնքերուն պատերը ճեղքուեցան եւ փլատակ դարձան: Այս վիճակէն ազդուած, Բերիոյ Թեմի Ազգ. Եկեղեցական իշխանութիւնը, ցեղասպանութեան 70-ամեակի նախօրեակին, (1984) գաղափարը կ'ունենայ հիմնովին վերանորոգել եւ արժանավայել կերպով վերակառուցել եկեղեցին, յուշարձանը եւ յարակից փոքր շինութիւնները: Այդ շինութիւնները յաջողութեամբ կ'աւարտին եւ նորակառուց եկեղեցին եւ յուշարձանը կ'օծուին 1991 Մայիս 5-ին:

60 տարիներ յետոյ, անգամ մը եւս կ'իրականանայ հօրս երազը՝ «Քանի կ'անցնին դարերը՝ կը վսեմանայ, կը սրբանայ այս ուխտավայրը, որպէս մի *պանդէռն*, ուր պէտք է ուխտի գան սերունդները աշխարհի ծագերէն»:

5.- Հալեպի մէջ բացի իր կուսակցական եւ ուսուցչական պարտաւորութիւններէն, եղած է հիմնադիր եւ երկար տարիներ ատենապետ կամ ատենադպիր եւ խորհրդական Վարչական Զէյթունի Հայրենակցական Միութեան:

6.- Իբր գէյթունցի եւ մղուած ազգային պարտականութեան գիտակցութենէն, իր շրջանի սերունդին եւ գալիք սերունդներուն համար գրեց Զէյթունի մաքողական պատմութիւնը, այն թուականէն սկսեալ, որ Զէյթուն անունը կը յիշուի պատմական գիրքերու մէջ, 1409-էն մինչեւ վերջին ապստամբութեան նահանջը՝ 1921: Կ'անդրադառնայ նաեւ 1045-էն,

Բագրատունեաց անկումէն յետոյ, Անիէն Կիլիկիա եւ Զէյթուն գաղթածներուն մասին:

Այս գիրքը գրեց 1940-1945-ի միջոցին, Բ. Համաշխարհային պատերազմի ընթացքին, Հալեպ: Հայրս պատմաբան մը չէր, համեստ գիտութեամբ ուսուցիչ մը, եւ այն շրջանին որ գրեց այս գիրքը, Հալեպ չունէր հայագիտական, պատմագիտական մատենադարանային մակարդակ ունեցող գրադարան, բայց գրեց իր ժրջան աշխատանքով եւ համեստ, սահմանափակ աղբիւրներով:

1888-ին, իր ծննդեան թուականէն մինչեւ 1913 եղած Զէյթուն եւ շրջակայքը, ուրբ տարեկանին ականատես եղած է 1895-96-ի մեծ ապստամբութեան եւ բոլոր դէպքերուն, մինչեւ 1913: 1919-էն Հալեպ հաստատուած գէյթունցիներէն մտիկ ըրած է յուշեր, ինչպէս նաեւ 1921-ին վերջին նահանջողները, որոնք կրցած են ազատիլ քեմալականներու հիւանդներէն, պատմած են իրեն իրենց ողիսականը՝ նահանջի սկիզբը իրենց թիւը՝ 318, իջած է 150-ի. ասոնցմէ ալ կորսուածներէ եւ ընդհարումներու ընթացքին սպաննուածներէն յետոյ մինակ 118 ազատուածները Քիլիսի վրայով հասած են Հալեպ:

Զէյթունի պատմութիւնը գրուած է աղքատիկ թերթի թուղթի վրայ մանր ձեռագիրով, ինծի համար շատ դժուար չեղաւ իր ձեռագիրը կարդալ հօրս գիրին վարժ ըլլալով, բայց գրաշարին գործը շատ հեշտ չեղաւ. այս մատնանշումները կ'ընեմ որովհետեւ ընթերցողը կրնայ գտնել թերեւս բառեր կամ յատուկ անուններ սխալ ուղղագրութեամբ կամ սխալ ընդօրինակուած: Կը յուսամ եւս եւ իմ աշխատակիցները այս գիրքին համար արժանի պիտի ըլլանք իրենց մասնաւոր բարեացակամութեան, որովհետեւ ուզեցի որ հօրս այս գրութիւնը չկորսուի:

Կարելի եղածին չափ, չուզեցի դաճալ գրութեան ոգիին, ապրումներուն, ընդվզումներուն, յուզումին, տառապանքին, որով շատ հպարտ եր իր Զէյթունով եւ իր հայրենակիցներով. կը ցաւի, կը տառապի գրելով մանուկներուն եւ կիներուն վիճակին. այսպէս «Կը սպասեմ ոմանք կիսամեռ, ոմանք խոշտանգումի բռնութիւն, լլկանքի ահոռի վայրկեանին: Անոնք արդեօք այդ օրուա՞ն համար ծնած էին: Ու հոս միտխքս կու գայ թուի Արամազդի՝ Ա. Անարոնեանի, մեր մեծ ցաւի երգիչին սա տողերը...»

Այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք

Թող ողջ աշխարհ հային կարգայն նախաւոր

ու յետոյ՝

Թէ անգոր է սրբել արցունք աշխարհում,

Գաճ էլ պէտք չէ, եւ ո՛չ Աստուած երկնքում:

Զէյթունի տառապանքի օրերուն 1913-1915, յետոյ վերադարձի օրերուն 1919-ին եւ նահանջին 1921ին, ինք եղած է նաեւ Անտիոք, յետոյ ար-

կը դառնան ինքնագլուխ. Արտաշէս կը տիրէր Մեծ Հայքի, իսկ Զարեհ Մովսէս (Մովսէս) աշխարհին, Փոքր Հայքի Հարաւային մասին: Եղած է ատեն մը որ Կիլիկիան եւս մաս կազմած է Փոքր Հայքին:

Հնագոյն ժամանակներուն, նոյնիսկ նոր քարային շրջանի սկիզբէն, եթէ ոչ միայն, գէթ միացեալ բնակչութիւն մը ապրած է թէ՛ ներկայիս Հայաստան կոչուած երկրին, թէ Կապադովկիոյ կամ Գամբրէ անունով մանչցուած շրջանին մէջ: Հայաստանի մէջ ապրած են Սուրարիները, Խարրի Միտանիները, իսկ Փոքր Հայքի եւ Կապադովկիոյ մէջ Քէտացիները կամ Նախահաբերը (Խէթ):

Այս բոլորին հետ միաժամանակ սակայն հնախոյզները հայ ազգին օրրանը նկատած են Փոքր Հայքը, այսինքն Եփրատի արեւմուտքը, Տաւրոսի եւ Անդիտաւրոսի զառիթափերը եւ անոնց ստորոտը տարածուած հովիտները: Նախքան Քրիստոս Ք. դարուն, համաձայն Փրօֆ. Լէիման Հաիւսպի այնտեղ եկած հաստատուած էին Արմինի կամ Արմինիք, այսինքն աւելի քան երեք դար առաջ հնդեւրոպական ուրիշ ցեղերու արշաւելը:

Համաձայն մեր լսած բերանացի տեղեկութեանց, եռովմէական եւ այլ հին պատմաբաններու արձանագրութեանց մէջ հայերու գոյութիւնը յիշուած է նոյնիսկ Մեծն Տիգրանէն առաջ հիւսիս արեւելեան եւ արեւելեան Միջերկրականի, այն է Կիլիկիոյ ծովեզերքները: Լատին բանաստեղծ մը՝ (Tibulle) Թիպուլ, նախքան Քրիստոս՝ 54-19 թուականներուն, իր գործերուն մէջ գովեստով խօսած է Կիլիկիա բնակող հայերուն մասին: Կը պատմուի նաեւ, թէ ուրիշ հին պատմագիրներ իրենց արձանագրութեանց մէջ յիշած են հետեւեալ յատկանշական տեղեկութիւնը: «Նախքան Հռովմէացի զօրավարներուն արեւելք արշաւելը, Մեծն Տիգրան Հռովմէացուց դէմ մրցելու եւ պայքարելու համար, փրկիկեցիներուն կ'առաջարկէ որ դաշնակցին իրեն հետ՝ ընդդէմ Հռովմի: Փրկիկեցիք սակայն նման պարագայի մը, պայման կը դնեն որ Տիգրան մաքրէ արեւելեան Միջերկրականի հայ ծովահէնները (հինահարները), որոնք կը նեղէին Փրկիկէն: Մեծն Տիգրան կ'ընդունի եւ կը գործադրէ: Սակայն հայ հինահարներու ձեռնափութիւնը, յետագային կը դառնայ ի նպաստ հռովմէացիներու ծրագիրներուն: Այս ըսուածները սակայն շատ շատ Քրիստոսէ մէկ երկու դար առաջուան մասին են եւ երբ շատ աւելի հին, եւ նոյնիսկ քանի մը հաազարամեակ դէպի ետ ժամանակներուն կը յառնենք մեր հայեացքը, այնտեղ կը նշմարենք եթէ ոչ հայերու, գոնէ Արմէններու, նախահայերու հետքերը, համաձայն հնապատմաբան, հնախոյզ կարգ մը գիտուններու հետախուզութեանց եւ ուսումնասիրութեանց վրայ հիմնուած տուեալներու եւ պատմական օրէնքներու եւ սկզբունք-

ներու տրամաբանական հետեւութեանց: Մանօք արեւելագէտ Զեյն Հրոզնի, մասնագէտ մասնաւորաբար հաթերէնի, գտած է նաեւ Հայաստան տեղեկութեան եւ ժողովուրդին անունը Բարձր Հայքի մէջ, որով կը հաստատէ թէ հայերու նախնիքը տեղաբնիկ ազգ են:

Համաձայն Պերլինի համալսարանի ուսուցիչ Տոքթ. Ժ. Մարտարօթի իր «Հայոց Որրանը» վերնագրով ուսումնասիրութեան, Արիմները հայերն են, որոնք Հայաստան հասնելէ առաջ բնակած են Կիլիկիա եւ Աֆեմենեանց գործածած՝ Արմինիյա՝ Հայք քառին վերջին մասը կը համապատասխանէ ուրարտական ինի մասնիկին, աւելցուած Արմ կամ Արիմ արմատին վրայ: Գ. Տեօվլէթ, մեր գրաբարի ունի մասնիկն ալ նոյն ծագումն ունի կը կարծէ. ինչպէս Արշակունի, Խորխորունի եւայլն. եւ մեր աշխարհաբարի ներ մասնիկին ալ Զէյթունի հնչումով՝ նի կամ նը է, օրինակ՝ քիրոն քիրոնը (քերան, քերաններ) ուտվէ, ուտվընը (ոտք, ոտքեր), ալոո, էկոէնի (ակոսայ, ակոսաներ): Ուրեմն Արիմը յայնքը յոգնակի ըրած են իրենց կանոններով Արիմօ-ի կամ Արիմ-ի իսկ սեմականները՝ ըրած են յոգնակի՝ «Արմենի կամ Էրմենի, թէն երբայքէնի մէջ Արիմ քառը արդէն յոգնակի է եղեր (Գ. Տեօվլէթ) քաղաքներ իմաստով: Իսկ Հոմերոս գայն գործածած է որպէս ժողովուրդի անուն: Բայց ինչ որ ալ ըսուի, հայ ժողովուրդի անունն եւ ծագման մասին, շատ մը ուրիշներու կարգին Գ. Գիւզէեան, «Հայ ժողովուրդը կը կարծէ քառդ երեւոյթ մի շարք ազգագրական տարրերից կազմուած, որի երկու գործօնները՝ Հայը եւ արմէնները որոշիչ նշանակութիւն ստացած են հայուն կազմաւորման մէջ: Զափագանց վիճելի կը գտնէ Գիւզէեան թէ Հայն էլ, Արմէնն էլ հնդեւրոպական ծագում ունին: Հիւներուն հաղորդած ապացոյցները ալ կը գտնէ անարժէք եւ կարելի չէ, կ'ըսէ, այժմ հիմնուիլ անոնց վրայ: Ամէն արեւմուտքէն եկողը անպայման Հնդեւրոպական չի նշանակեր: Նոյնպէս վիճելի կը գտնէ ան լեզուական կապը Արմէններու եւ Փոխիթացիներու: Ոչ մէկ հիմք կայ, կ'ըսէ, հայերուն Հնդեւրոպական ծագում վերագրելու: Հայութեան կառուցումը շատ աւելի երկար ժամանակներ եւ աւելի մեծ աստիճանաւորումներ ունեցող հոլովոյթ է կ'ըսէ Գիւզէեան: Ըստ իրեն հայութեան կառուցումը առնուազն 12-րդ (Ն.Ք.) դարուն է որ կը սկսի եւ այն ալ ո'չ թէ Մեծ Հայքի, այլ Փոքր Հայքի մէջ: Մինչդեռ Հայր Տաշեան հայութիւնը որպէս ժողովուրդ կը տեսնէ Քրիստոսէ առաջ 15-րդ դարուն: Հայ ժողովուրդի կառուցման յետագայ գործողութիւնները միայն կը կատարուին Մեծ-Հայքի մէջ: Հոն է որ Հայը եւ Արմէնը իրարու կը հանդիպին, Տարօնի մէջ եւ Արածանիի շուրջը հայութեան կազմաւորման մէջ հընդեւրոպական եթէ կ'ուզէ՝ կ'ըսէ Գիւզէեան՝ փոխիթական տարրը

խոշոր դեր է խաղացել, որուն ապացոյցն է մեր լեզուն: Բայց մեր լեզուի ուսումնասիրութիւնը ցոյց կու տայ, թէ մեր լեզուն իր բառակազմով թէ բերականական շատ տուեալներով կը մօտեմայ ազիանիկ կոչուած լեզուներուն: Հաքերու եւ Միտանիներու ժամանակակից են Հայասանները, Գասաանները եւ Դանայինիք. սակայն Վեր. Ե. Քասունի դիտել կու տայ որ Հաքերը եւ Միտանիները չեն կրնար ըլլալ հայերուն նախահայրերը եւ հայոց պատմութիւնը սկսած է Հայասաններով: Եւ սակայն անպայման որ, որոշ տարրեր եկած խառնուած են Հաքերէն, Միտանիներէն, Գասաաններէն Հայասաններուն եւ հաւանաբար յառաջ բերած հայ ժողովուրդը:

Իսկ Հայ-արմէններու երեւնալով Հայաստանի հողին վրայ, վերջ կը գտնէ Ուրարտուի պետութիւնը: Եւ ուրարտացիին իր հայրենիքին մէջ աստիճանաբար ձուլուելով հայերու հետ, ըստ Գիւզէլեանի կը ստեղծուի հայութեան այն հատուածի տիպը, որ յետագային կը դառնայ վանեցի հայը: Իսկ ուրարտացիին չէ նկատուած նաեւ ուրոյն առանձին տարր, անոր բաղկացուցիչները կը համարէ Վեր. Ե. Քասունի Խալդ, Բիաինա եւ Ուրարտու տարրերը, որոնք ոչ հնդեւրոպական, ոչ արիական եւ ոչ ալ սեմական էին կ'ըսէ Քասունի, այլ մարդկային մէկ տարրեր տիպ, որ պատմագիտութեան մէջ զանազան անուններով երեւան եկած է:

Գալով Գասա կամ Կասաաններուն մասին, Ք.Ա. 1200 թուականներուն հնդեւրոպական նոր ցեղեր եւ անոնց հետ Գասաանները կ'ողողեն Փոքր Ասիան եւ կը կործանեն Նատտի (Հիթիթ, հաք-էէթ) մեծածաւալ պետութիւնը վերջնականապէս: Գասաաններ յետոյ կ'իջնեն, արեւելեան Կապադովկիան կը գրաւեն, կը հասնին մինչեւ Տարսուսեան լեռնագոտիին կիրճները, իսկ աւելի վերջերը (Ք.Ա. 1130) Ասորեստանի Թագաւոր Բալասար Ա. թագաւորը զանոնք կը գտնէ Կոմմազիէի երկիրը, մինչեւ արեւմտեան Միջագետք թափանցած: Ասորեստանցիք Գասա կը գրեն անոնց անունը, իսկ Սարգոն Բ. (Ք.Ա. 722-705) զանոնք յիշած է որպէս խիստ զօրաւոր ժողովուրդ մը արեւելեան Կապադովկիոյ նահանգներուն մէջ բնակութիւն հաստատած:

ՆԱԽԱՀԱՅԿԱԿԱՆ ԿԻՒԿԻԱ ԲՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

ԱՆՈՒՆԸ, ԴԻՐՔԸ, ՍԱՀՄԱՆՆԵՐԸ, ՏԱՐԱԾՈՒԹԻՒՆԸ, ԾՈՇԵՐԸ, ՀՐՈՒԱՆԴԱՆՆԵՐԸ, ԿՂՋԻՆԵՐԸ, ԼԵՌՆԵՐԸ, ԴԱՇՏԵՐԸ, ԳԵՏԵՐԸ, ՋԵՐՄՈՒԿՆԵՐԸ, ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ, ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ՀԱՆՔԵՐԸ, ԿԼԻՄԱՆ, ՀԻՆ ՔԱՂԱՔՆԵՐՆ ՈՒ ՆԱԽԱՀԱՆԳԻՍՏՆԵՐԸ:

Համաձայն մեր սերտած ալլագան աղբիւրներուն՝ Կիլիկիան մօտաւորապէս կը կոչենք Հաթերու ժամանակէն Խանիւլաթ, Տիգարամա, Կոմանու երկիր, Տապալներու կամ Տիպարեաններու երկիր, Կասաւոնիա կամ Կեզուադնա եւ մասամբ Փոքր Հայք, (գոնէ Լեռնային Կիլիկիոյ մէկ մասը, Հիւսիսային Ծալը), այժմ զայն իր երկու մասերովը, այն է դաշտային եւ լեռնային Կիլիկիա անուններով պիտի առնենք: Դաշտային Կիլիկիան կոչեր են Կուէ, իսկ ըստ Փոթմ. Ն. Ադոնցի լեռնային Կիլիկիան կոչուեր է Խիլլակուէ, որուն «է» տառը անպայման որ ժամանակի ընթացքին կորսուեր է եւ մնացեր Խիլլակու, այսինքն՝ քարային Կիլիկիա:

Հայր Դեռոնդ Ալիշան իր «Միսուանի մէջ Կիլիկիոյ անունին մասին կու տայ հետեւեալ տեղեկութիւնները. «Ըստ ոմանց ենթադրութեանց այս երկիրը Կիլիկիա կոչուած է իր նախաքնիկին՝ Կիլիկ կամ Կիլ-քիսի անունով, որ Փիւնիկէի Աքենորի (Agenore) դիւցազունն թագաւորին որդիներէն մէկն էր: Աքենոր իր երեք որդիները՝ Կիլիկ, Կաթմոս եւ Փիւնիկը կը դրկէ որ երթան գտնեն իրենց Եւրոպէ քոյրը, զոր փախցուցած էր Արամազդ: Կիլիկ եւ իր երկու եղբայրները բաւական պտրտեցան, փնտռեցին իրենց քոյրը եւ չկրցան գտնել եւ Կիլիկ մնաց այս երկիրը, որ կոչուեցաւ Կիլիկիա կամ Կիլիկիա: Այս առասպելախոսն ստուգաբանութենէն զատ «Կիլիկեցի»՝ Գր. Հ. Գալուստեան «Մարաշ կամ Գերմանիկ» գիրքի երկասիրողը մէջ կը բերէ այն աւանդութիւնը թէ՝ Տրոյադայի կամ Միսիայի սահմանները գտնուող եւ Հոմերոսի դիւցազնեղբորեան մէջ յիշուած Կիլիկիա անուն վայրէ մը մաս մը բնակիչներ եկած հաստատուած են արեւելեան Միջերկրականի հիւսիս արեւելեան դաշտերը եւ կոչած են այդ շրջանը Կիլիկիա: Կարգ մը հնաբաններ ալ, ինչպէս յիշեցինք քիչ առաջ Ն. Ադոնց նաեւ անոնց կարգին, կը խորհին թէ Կիլիկիա բառը առաջ եկած է եբրայական խիլքիմ (քարեր) բառէն որուն ե-

զակին է խալէք (քար): Եւ մինչեւ հիմա հէլիք կամ խալիք բառը տակաւին այդ իմաստով կը գործածուի Մարաշի, Անթապի, Ջէյթունի եւ Թերեւս նաեւ Կիլիկիոյ թրքաբարբառ ժողովուրդներու մէջ: Հէլիք կամ խալիք կը նշանակէ մանր, անտաշ քարի կտորներ, որոնք որմնադիրները պատերուն մէջ կը լեցնեն, շաղախի մէջ հիւսելով: Պարսիկ սատրապներու դրամներուն մէջ ալ կը գտնուի յունարէն Բիլիքիոն, իսկ հնագոյն բեւեռագիրներուն մէջ գիտուններ զայն կը կարդան Քեալքու (խիլյակուէ):

Ինչպէս ամէն երկրի սահմանները եւ տարածութիւնը նոյնը մնացած չեն, այնպէս ալ փոփոխութեան ենթարկուած են պատմութեան մէջ ժամանակի ընթացքին Կիլիկիոյ սահմանները եւ տարածութիւնը: Ատեն մը, ինչպէս քիչ առաջ յիշեցինք, Լեոնային Կիլիկիոյ մէկ մասը կոչուած է Փոքր Հայքի Բ. եւ Գ. Հայքերը: Իսկ ներկայ ժամանակներու Կիլիկիան կը գտնուի հիւսիսային լայնութեան 36-38 եւ արեւելեան երկայնութեան 32-37 աստիճաններուն տակ, Փոքր Ասիոյ հարաւ արեւելեան անկիւնը: Բնական սահմաններն եղած են հիւսիսէն եւ արեւմուտքէն՝ Տաւրոսի լեռնաշղթայի աղեղը, արեւելքէն՝ Ամանոս լեռնաշղթան եւ Մեծ Հայք կամ Եփրատի միջին աւազանը, հարաւէն՝ Միջերկրական ծովը: Այս ներկայ սահմաններով քառասուն հազար քառակուսի հազարամետր է իր տարածութիւնը:

Կիլիկիոյ հնագոյն սահմաններն եղած են՝ հիւսիսէն Կապադովկիա, արեւմուտքէն Պամփիլիա, արեւելքէն Ասորիք, հարաւէն Միջերկրական ծով: Հայոց ծոցի հիւսիս արեւմուտքի եզերքը կը գտնուի Այասի (Իսոս) խորշը, այժմ Եռամուրթալքը կը կոչուի Հին ատեն նշանաւոր եւ վաճառաշահ նաւահանգիստ եղած է Այաս: Արեւելեան դիմացն է Փայաս քաղաքը: Հրուանդաններն են Միզարոս (Գարաթաշ), Սարպեդոն (Վիան էլ Գահպէ), Զեփիւրոն (Գաւալիէրէ) եւ Պոսիթոն՝ Անամուռէն քիչ մը արեւմուտք: Կիլիկիա ունի նաեւ իր ափերուն քանի մը կղզեակներ, ինչպէս Արադոս՝ Հայոց ծոցին մէջ, Կոռիկոս՝ Տարսոնի գոգին արեւմուտքը, Տանա Ատտար, Գաւալիէրէ եւ Պապադուլքա: Կիլիկիա ատեն մը դէպի արեւմուտք յառած եւ իր մէջ առած է Ատալիան, մինչեւ Այապ «հին Կոռիկոսին» քաղաքը: Ժամանակ մը նոյնիսկ իրեն մաս կազմած է Նիյոն (Տիանա), էրէյլի եւ Գարաման քաղաքները: Դէպի հիւսիս արեւելք տարածուած է մինչեւ Ճահան գետը (Գ.Հ. Գալուստեան «Մարաշ» էջ 4):

Լեռները՝ Կիլիկիոյ լեռները շարունակութիւնն են Մեծ Հայքի Հայկական Տաւրոս կոչուող արեւելքէն արեւմուտք մինչեւ Եփրատ գետ երկարող լեռնազօտին: Կիլիկիոյ գլխաւոր լեռնաշղթան է

Կիլիկեան Տաւրոսը, որ ծայր կ'առնէ Եփրատի արեւմուտքէն, այսինքն Հայկական Տաւրոսի վերջաւորութեան, կը սահմանէ Կիլիկիան հիւսարեւելքէն, աղեղաձեւ կ'երկարի դէպի հարաւ արեւմուտք եւ կը հասնի Միջերկրականի ափը՝ Անամուռ Կիլիկիոյ մէջ բարձրագոյն եւ խոշոր, բազմաճիւղ լեռնակոյտն մըն է Տաւրոսը, իր միջին մասէն, Կիլիկիոյ սահմանէն սկսած դէպի հիւսարեւելք կ'արձակէ Անդրատաւրոսը, որ կ'ուղղուի դէպի Սեւ ծով եւ կ'երթայ կը մօտենայ Պոնտական, Պոտիարեան լեռնաշղթաներուն: Իսկ Կիլիկիոյ մէջ Տաւրոսի գլխաւոր ճիւղն է Պուլկար Տաղը: Տաւրոսի միւս ճիւղերն են Ամանոս կամ Սեւ լեռներ, կամ Ագ Տաղ: Իսկ Անդրատաւրոսի գլուգահեռական՝ երկու ճիւղերն են արեւմտեանը՝ Գօզան Տաղ, արեւելեանը՝ Պին Պուղա: Ամանոսն ալ բաժնուած է քանի մը ճիւղերու՝ ինչպէս Սեւ Լեռ կամ Կեալուր Տաղ, Ճէպէլ Մուսա եւ Գըզլի Տաղ: Տաւրոսի բարձրագոյն գագաթը Պուլկար Տաղի Մեթէսիս կատարն է, որ 11408 ոտք բարձրութիւն ունի եւ ծածկուած է մշտնջենական ձկնով:

Դաշտերը, Հարաւային Կիլիկիա ընդարձակ դաշտադաշտին մըն է, որուն մասերն են Չուգուր-Օվա, Էրօլլու, Ատանայի դաշտադաշտինը: Այս դաշտադաշտինը արեւելքէն կը սահմանուի Տիւրիւզ կոչուած բարձրութիւնով:

Կիրճեր-Դրունք.- Նշանաւոր է Կուկլակայ Կապանը, (Քիւլէկ պողազը): Այս կիրճը որ 4000 ոտք բարձր է, շատ կարեւոր դեր կատարած է Ռուբինեանց իշխանութեան ժամանակ: Կուկլակայ անցքը Կիլիկիան կը կապէր արեւմտեան Փոքր Ասիոյ Կան նաեւ Կիլիկիոյ հարաւ արեւելքը Ամանոսի կիրճերը (Թօփ Պօղազը), Դրունք Ասորւոյ կոչուածները:

Քեաները.- Գլխաւոր գետերն են Ճիհուն (Պիրամոս) եւ Սիհուն (Մարոս): Կիլիկիոյ մեծագոյն գետն է Ճիհունը կամ Զահանը, Կիլիկիոյ արեւելեան կողմը, կը բխի Ալպիստանի հարաւէն: Իրեն կը խառնուին Խուրմասու, որ կու գայ Պին Պուղա հաստամեասէն, Մէօյինտլու, Կէօկսու եւ Ջէյթունի Եուղը գետակը: Զահան երբ կը մօտենայ Մարաշի, իրեն կը միանայ էրքէնէզ եւ Ագսու: Աւելի հարաւ յառաջանալով կը մտնէ դաշտային Կիլիկիա, ուր կ'ընդունի Կապանի եւ Սիսի գետակները: Վերջապէս կը թափի Հայոց Ծոցը: 400 հազարամետր երկարութիւն ունի Զահան:

Մեծութեամբ երկրորդ գետն է Սէհունը կամ Սիհունը (Հին Սա-

րոս), հիւսիսէն հարաւ կ'իջնէ զուգահեռ Զահանի եւ Կիլիկիոյ միջին մասէն՝ լեռնային Կիլիկիայէն կ'ողողուի դաշտային Կիլիկիա, հիւսիսէն հարաւ իր մէջ կ'ընդունի շատ մը գետակներ եւ հասնելով Ատանա քաղաքը՝ կը թափի Միջերկրական ծով: Սիւննի երկարութիւնն է 550 հազարամետր:

Միւս գետերն են Կիւղնոս (Թարսուս Զայ) եւ Կաթկաղնոս (Կէօք-Սու կամ Սիլիֆքէ Սու):

Կիլիկիա ունի նաեւ հետեւեալ մանր գետակները:՝ Տէլիսու, Լիպարիա կամ Միւլիֆլի, Ալաթա, Լամաս, Սովուզ Սու, Անամուռ, Կալանտրան, Սէլինթի, Թէքիր, Սու Զաթը, Անտոլպ եւայլն:

Լիճերը:՝ Կիլիկիոյ մէջ մեծ լիճեր չկան, եղածները լճակներ են, եւ հետեւեալներն են:՝ Իսլահիէի շրջանին մէջ Գազան Ալիի մօտ՝ կայ Արսլան Կէօլլու, Էրզլուի մօտ՝ Կեպուր Կէօլլու, Ազապլլի մօտ՝ Չինար Կէօլ, Պէհլանի մօտ՝ Մատէն Կէօլ, Զէքուանի հիւսիսի Պէրիս լիւան ստորոտը՝ Սիլիւքլի Կէօլ:

Ջերմուկներ:՝ Զէյթունէն մէկ ժամ հարաւ արեւելք կան երկու ջերմուկներ, ծծմբային ջուրերով, Հարունիէի (Խաւնը-Պուլանը) ջերմուկը Տունգալէի (Տէօնկէլէ) Պունազ Ըլըճաը, Պուկար Տաղի ջերմուկը Այս ջերմուկներուն մեծ մասը կը գտնուի Զահան գետի անցած տեղերուն մօտերը եւ բուժիչ յատկութիւն ունին:

Կիլիկիոյ գլխաւոր քաղաքները:՝

Կեդրոն քաղաքն է Ատանան: Միւս գլխաւոր քաղաքներն են Մերսին՝ նաւահանգիստ Միջերկրականի վրայ. Տարսոն² Լամբրոնի ստորոտը, Միս, Կիլիկիոյ Ռուքինեանց մայրաքաղաք եղած է յաճախ միւսնոյն ատեն կաթողիկոսանիստ քաղաք. Մարաշ, Այնթապ, Զէյթուն, Հաճըն, Ապլաստա (Էլպիստան), Կէօկաիւն, Պազարճըզ, Օսմանիէ, Համիսիէ, Իսլահիէ, Միսիս (Մամեստիս), Ֆէքէ (Վահկա), Պաիճէ, Հարունիէ, Իյնթիլի, Տէօրթ-Եօլ (Զորք Մարզուան), Արաբիսոս, Կապան, Կարս Պազար, Ասորըն, Հասան Պէյլի (Ամանոս) Արսո եւ Փայաս: Իսկ հին քաղաքներ եւ նաւահանգիստներ են նմանապէս Կոռիկոս, Մալոս (այժմ Գարաթաշ), Ալանյա (Կոռակոսիոն), Զեփուտիոն՝ Մերսինի մօտ, Անամուռ, Քալէնտրիս, Քանամեյլա (Ճկեր Փայաս), Անարզաբա (Անաւարզ Գալասը):

Արտադրութիւնները:՝

Կիլիկիա բարեբեր երկիր մըն է շնորհիւ իր հողին, արեւդէմ

դիրքին եւ գետերուն, գետակներուն եւ բազմաթիւ աղբիւրներուն, մասնաւորաբար Զահանի, Սիւննի եւ Կիդնոսի ստորին հովիտները, Չուգուր Օվայի տարածութիւնը: Այս գետերը կը բերեն հիւսիսի բարձրութիւններէն առատօրէն բերրի հող, ու Կիլիկիան կ'ընեն Եգիպտոսի Նեղոսի հովիտին նման արգասաբեր: Կիլիկիա կ'արտադրէ ցորեն, գարի, բրինձ, սուսամ, (չուշմա), շաքարեղէճ, բամպակ, եւ խաղող, նարինջ, կիտրոն, խնձոր, կեռաս, սալոր եւ ուրիշ պտուղներ: Նշանաւոր է բամպակը եւ ցորենը: Հին ատեն նշանաւոր եղած է Կիլիկիոյ քրքում ծաղիկը (սաֆրան), որմէ կը պատրաստեն ընտիր դեղին ներկ մը: Ունի նաեւ ճահրա (ալաժարի) եւ տորոն ներկի տուկերը: Հին ատեն, Ռուքինեանց տիրապետութեան օրով Կիլիկիան աւելի մշակուած եւ աւելի արդիւնաբեր եղած է: Կիլիկիոյ անտառները հարուստ են նաեւ չինութեան փայտերով: Նշանաւոր է մայրին, եղենին, շոճին, կաղնին, սօսին, գիւհին, ձրդին, մաթուզին եւ ընկուզենին: Կիլիկեան բոլոր լեռներն ալ անտառներով ծածկուած են:

Կենդանիները:՝ Կիլիկիա ունի բարեխառն գօտիին կենդանիներէն եզ, կով, ոչխար, աք, գոմէշ, էշ, մի, ջորի նաեւ ուղտ եւ հաւազ-դիններէն՝ հաւ, կաքաւ, լորամարգի, եւ այլ բազմատեսակ թռչուններ՝ բարեխառն կլիմայի յատուկ: Վայրի կենդանիներէն առատութեամբ կը գտնուին աքեամ, քարայծ, վիթ, յամոյր եւ եղնիկ եղջերուազդինները: Գազաններէն կը գտնուին վարազ, արջ, յովազ, գայլ, բորենի, լուսամ, աղուէս, նապաստակ, երբեմն տեղեր նոյնիսկ ընձառիւծ եւ վագր: Կը գտնուին նաեւ գորշուկ կամ իշխար (փորսուզ), վայրի կատու, շնագայլ, ոզնի, կուզ, աքիս եւ այլ մանր կենդանիներ: Սողուններէն կը գտնուին խժը (էնկէրէք կամ օզ յըլանը) եւ սեւ օձը՝ լորտու եւ գորշ կարմրորակ սակայն թունաւոր տեսակ մը օձ (քէօր յըլան): Գետերու մէջ առատօրէն կը գտնուին տեսակ տեսակ ձուկեր: Կիլիկիոյ մէջ կը զբաղին նաեւ շերամաբուծութեամբ եւ մեղուաբուծութեամբ:

Կլիմայ:՝ Թէպէտեւ Կիլիկիա հարուստ է բուսական եւ կենդանական արտադրութեամբ, սակայն վատաւողջ կլիմայ մը ունի: Մասնաւորաբար դաշտային Կիլիկիոյ մէջ կը գտնուին ճահճային ընդարձակ տարածութիւններ, որոնք տեղով կը վարակեն ամբողջ շրջանները, մանաւանդ ամրան եւ աշնան երկու ամիսներուն: Ի վիճակի եղող ընտանիքներ ամառը, նոյնիսկ շատ հին ժամանակներէ ի վեր Տաւրոսներու բարձր եւ զով հովիտները կը բարձրանան: Դաշտային Կիլիկիոյ մէջ, ձմեռը ջերմաստիճանը հազիւ թէ 0 աստիճանի կ'իջնէ, սակայն լեռնային

Կիլիկիոյ մէջ առատ ձիւն կը տեղայ, յաճախ մեթրէն աւելի բարձրութեամբ: Տաւրոսի մէջ կը գտնուին մշտնջենական ձիւնով ծածկուած տեղեր, սարեր:

Դաշտային Կիլիկիան փետրուարին արդէն գարուն է, Ատանայի դաշտը, Զուզուր Օվան, Մերսինի չրջակայքը օդը մեղմացած է, ծառերը ծաղկած են եւ դաշտերը կանաչցած, մինչդեռ լեռնային չրջանները տակաւին ցուրտ է եւ լեռները դեռ ձիւնով ծածկուած: Ամառը շատ տաքը կը սկսի դաշտային Կիլիկիոյ ծովեզերեայ չրջանները: Անձրեւը դադրած է արդէն, երաշտը կը տիրէ: Հարաւէն, Միջերկրականի վրայով կը հասնի Ափրիկէի Սահարայի տաք խորշակը եւ Սուրիայէն տաք հովեր: Արեւմուտքէն եկող հովերն են որ կը մեղմացնեն երբեմն դաշտային Կիլիկիոյ կլիման: Իսկ Արեւելեան չրջանը՝ Այնթապի, Մարաշի օդը մեղմ է եւ առողջարար: Գալով Հիւսիսային լեռնային մասերուն, այն տեղերը չեն հասնիր հարաւի չոր եւ կիզիչ հովերը:

ԶԷՅԹՈՒՆ

ՀԻՆ, ՆԱԽԱՀԱՅԱԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐՈՒՆ, ԱՆՈՐ ԲՆԻԿՆԵՐԸ, ՀԱԹԵՐՈՒ, ՓՈԽԻԳՆԵՐՈՒ, ՏԱԲԱՆԵՐՈՒ, ԿԻՄՄԵՐՑՆԵՐՈՒ, ԱՍՈՐԵՍՏԱՆՑԻՆԵՐՈՒ, ՄԵԾՆ ԱՂԵՔՍԱՆԴՐՈՒ, ՅՈՅՆԵՐՈՒ, ՀՈՌՎՄԷԱՑԻՆԵՐՈՒ ԵՒ ՄԵԾՆ ՏԻԳՐԱՆԻ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԾՐՋԱՆՆԵՐՈՒՆ

Գիտենք որ՝ Փոքր Ասիա նախապատմական ժամանակներէն սկսած, աւելի քան 6000 տարիներէ ի վեր, եկած, ապրած են զանազան ցեղեր, ժողովուրդներ, դարերով մղած են պատերազմներ, ունեցած են իրենց յատուկ քաղաքակրթութիւնը, մշակոյթը: Գիտենք նաեւ որ Փոքր Ասիոյ անանջատ եւ անմիջական մասերը եղած են Փոքր Հայքի եւ Կիլիկիոյ չրջանները, անպայման ուրեմն այդ Հին ժողովուրդներէն հատուածներ, եկած հաստատուած են նաեւ Փոքր Հայքի եւ Կիլիկիոյ լեռնային ամուր վայրերու մէջ, քանի որ այն հնագոյն ժամանակներու պատերազմներուն համար շատ աւելի կարեւոր էին լեռները, ամուր դիրքերը, անառիկ բարձրութիւնները, որովհետեւ նոյնիսկ շատ տեղեր մարդիկ ստիպուած են արուեստական բլուրներ (էօփլեք), բերդեր շինել, որոնցմէ շատեր մինչեւ այսօր տակաւին կը մնան: Նկատի ունենալով այս բոլոր անհերքելի իրողութիւնները եւ նկատի ունենալով նաեւ որ լեռնային ամուր վայր մը եղած է Զէյթունի տեղը - անտարակոյս մեզի անծանօթ տարբեր անունով մը - ուրեմն չէ կարելի չընդունիլ թէ՝ Զէյթուն եւս ուրիշ նման վայրերու հետ եւ անոնց պէս ունեցած չրջայ իր բնակչութիւնը, հաթերու, փոխուներու արմէներու, հայասաներու, սուբարիներու եւ այլ ժողովուրդներու ժամանակները: Զէյթուն իր հիւսիսի կողմը, անմիջական թիկունքին, Տաւրոսներու շարունակութեան մէջ՝ 9800 ոտք բարձրութեամբ Պէրիտ սարը ունի, ուր Զէյթունի շատ մը գերդաստաններ, ունէին իրենց երկաթի հանքը: Այդ հանքերու խորշերը շատ տեղեր շատ խորերը կ'երկարին, ահագին պարապութիւններ, քարայրներ գոյացնելով: Զէյթունցին փորելու, հանքերը կտրելու, հանելու եւ արագ եւ մեծ քանակութեամբ փոխադրելու արդիական ոչ մէկ գործիք եւ միջոց ունէր: Նախնական գործիքներով կը տանէր այդ դժուար աշխատանքը, իսկ հանածոն կը փոխադրէր գրաստ կենդանիներով: Ուրեմն որքա՞ն դարեր թերեւս պէտք եղած են այդքան ընդարձակ խորութիւններ, փոսեր բանալու համար: Որովհետեւ ճարտարարուեստի սա հսկայական յառաջդիմութեան եւ ա-

ներեւակայելի արագութեան ներկայ ժամանակներուն, կը դիտենք որ կրադիւս (չիմէնթօ) պատրաստելու համար ընկերութիւններ կան, որոնք իրենց կատարելագործուած շինաներով եւ գործիքներով տարիներ անդու աշխատելով եւ բնասատար հսկայ ինքնաշարժներով փոխադրելով հանդերձ, բոլորի մը հողին մէկ մասը հազիւ պակսեցուցած կ'ըլլան: Ուրեմն պէտք է կրկին ըսել թէ Չէյթունի վայրը շատ ու շատ հին ժամանակներուն, նախապատմական դարերուն ապրած են մարդիկ: Գալով այն տեղ ապրած ժողովուրդի մասին, որոշ չէ կարելի ըսել թէ ովքեր եղած են անոր նախաքնիկները: միայն սա յայտնի է ցեղերու կազմութեան մասին թէ գտարիւն եւ անխառն ցեղ մը կամ ուել ազգ գոյութիւն չունի: Երբ ուշադրութեամբ քննութեան առած են հնաքաններ, ցեղաբաններ մարդուն պատմութիւնը, մինչեւ այսօր չեն կրցած անվարան եւ վճռական կերպով հաստատել թէ այս կամ այն ժողովուրդը միատարր, գտարիւն է: Անյիշատակ հնագոյն ժամանակներէն, նոյնիսկ հին եւ նոր քարային դարաշրջաններէն սկսած, բոլոր ժողովուրդները այդ երկար ժամանակներու ընթացքին եկեր, գացեր են, գաղթեր են, արշաւեր են, հեղեղներու նման հոսեր են, խառնուել իրարու մէջ, եւ այդ բազմատեսակ խաւերու խառնուրդէն առաջ եկած են նոր ժողովուրդներ, որոնք անտեղեակ իրենց առհաւական անցեալին, իրենց ծագումին, կորսնցուցած են իրենց նախկին յատկանիշները, որքան ալ որ ժառանգականօրէն իրենց հոգիներուն խորը եւ իրենց արիւններու ճամբաներուն տակաւին բաներ մը պահուած, թաղուած ըլլան, սակայն քանի անցած են այդ անսահման դարերը, հետզհետէ արհաւական եւ ցեղային հոգեկան ինքնայատկութիւնները եթէ բոլորովին անհետացած, սրբուած չեն, լաւագոյն պարագային ենթագիտակցութեան, նոյնիսկ պէտք է ըսել անգիտակից (inconscient)ին անքննելի բաւոյններուն մէջ կորսուած են:

Եւրջ քառասուն տարիներ են անցեր, որ մենք մեր հայրենիքէն դուրս ենք: Մեր պատանութեան տարիքը, եւ պատմութեան մասին մեր այն ատենները ունեցած պատրաստութիւնը եւ հետաքրքրութիւնը բաւարար չէին մեզի, մեր երկրին, նոյնիսկ մեր ծննդավայր Չէյթունի եւ իր անմիջական շրջապատի հնութիւնները, աւերակները, քարերը, հին վայրերը քննութեան, հետազոտութեան առարկայ դարձնելու համար: Իսկ այն ատենուան մեր հայրենակիցները եւ օտարներ ալ մեզմէ առաջ շատ քիչ փնտռութեան ըրած էին, որոնց մասին իսկ մենք դեռ վերջերս է որ կը ծանօթանանք: Եթէ տակաւին հայրենիք եղած ատեն պեղումներ, փնտռութեան կատարած ըլլայինք, անպայման որ շատ բան գտած պիտի ըլլայինք, որոնք բաւական չափով պիտի լուսարանէին մեզ եւ ուրիշներ՝ Չէյթունի հնագոյն անցեալին, հոն

ապրած ժողովուրդներու եւ անոնց գործերու մասին, որովհետեւ համաձայն մեր վերը ըրած տրամաբանական ենթադրութիւններուն եւ հաւանականութեանց, անկասկած որ ապրեր են այնտեղ ժողովուրդներ, հնագոյն ցեղերու մնացորդներէն յառաջացած խառնուրդ ժողովուրդ մը, որ պէտք է որ թողուցած ըլլայ իր հետքերը, յիշատակները եւ շատ հաւանօրէն եւ բնականօրէն անոնց մեծ մասը թաղուած հողէ խաւերուն եւ աւերակներուն տակ, որոնցմէ մեր մանկութեան տարիներուն մեր ծննդավայրը ապրած, պտտած ժամանակ մեր ճամբաներուն, մեր այգիներուն, մեր լեռներուն մէջ, հանգիպած եւ առանց ուշադրութիւն ըրած ըլլալու, թեթեւօրէն նայած եւ անցած էինք: Այժմ շատ ուշ է արդէն երբ մեր միտքը կ'երթայ այդ ուղղութեամբ աշխատանքի սկսելու, ու ահա մեր ոտքերուն տակէն հայրենիքի հողը վազուց սահած է, օտար հորիզոններու տակ ենք, եւ հին սերունդէն մնացածներու շատերուն մէկ ոտքը գերեզմանին կը մօտենայ: Ու այսպէս, յիշապատմութիւնը համար ամէն առիթ եւ միջոց գրեթէ կորսուած է, ուստի մեր ընելիքը լոկ համեստ եւ կարելի փորձ մը եղած պիտի ըլլայ Չէյթունի հնագոյն անցեալի եւ վաղնջական ժամանակներուն հոն ապրած ժողովուրդներու մասին, մասամբ տրամաբանութեան ուժով եւ մասամբ ցարդ մէջտեղ ելած տուեալներով հաստատումներ ընելու համար:

Ըստ կարգ մը օտար հնապատմաբաններու եւ անոնց աղբիւրներ՝ հայ հին պատմութեամբ զբաղած հայ հնախոյզ, հնաքաններու, որոնց կարգին Նիկողայոս Ալոնցի, Գ. Արսլանի, Փրօֆ. Ա. Խաչատուրեանի, Հ. Յ. Տաշեանի, Ա. Ալպոյանեանի, Վերապատուելի Ե. Բասուկի եւ ուրիշներու կատարած հետազոտութիւններուն, փնտռութեան եւ ուսումնասիրութիւններուն արդիւնք՝ մէջտեղ հանուած հետքերու, յիշատակներու, բեւեռագիրներու, սեպագիրներու արձաններու այլ նմանօրինակ իրողութիւններու, կիլիկիոյ հիւսիսային, լեռնային մասը որ կոչուած է Խիլլակու, մասնաւորաբար Չէյթունը իր անմիջական շրջապատով կիւրինէն մինչեւ Մարաշ տարածուած երկրամասը ատեն մը կոչուած է Կատաւոնիա, հաւանաբար՝ Խաթաւոնիա, հոն գտնուող նախաքնիկ հայերէն կոչուած է նաեւ Կումանա կամ Գամմադինէ, թերեւս կիմերներու պատճառով, Տապալներու երկիր Տիպարիան ժողովուրդներու անունով, ինչպէս նաեւ Խանիդալթաթ ըսուել է աւելի հին ատեն մը թերեւս նախահայերու կամ ցարդ մեզի բոլորին անծանօթ եւ անունը մինչեւ հիմա մեզի չհասած նախնական ցեղի մը կողմէ: Եթէ նկատի առնենք նաեւ մեր աւանդական-դիւցազնական պատմութեան կարգ մը պարագաները, հաւանաբար մասամբ առասպելախառն գրուածները, ինչպէս Արամ հայ նահապետի մը նուա-

ճուճները, Կապադովկիոյ տիրելը, աշխտեղ քաղաք մը Հիմնելը եւ Մը-
շակ անուն իր մէկ հայը աշխտեղ կառավարիչ նշանակելը, անմիջա-
պէս մեր միտքը կու գայ թէ՛ այդ շրջանները այդ հնագոյն ժա-
մանակներն իսկ կ'ապրէին մարդիկ, որ այդ ատեն այլեւս հայ կոչ-
ուիլ սկսած էին: Դարձեալ Մեծն Տիգրանի կարճատեւ տիրապետութեան
թուականին՝ Ն.Ք. 60-ին, Փոքր Հայքի մասեր կոչուած են Հիւսիսային,
լեռնային Կիլիկիոյ որոշ կարգ մը վայրերը, ուրեմն անպայման որ
հայ ըսուած, կամ հայացած ժողովուրդներ կ'ապրէին այլեւս այդ
շրջանները: Պալքաններէն, Թրակիայէն Տարտանէլէն եւ Վոսփորի
վրայով Փոքր Ասիա անցած մարդկային մեծածաւալ հոսանքներ, Հե-
ղեղներ՝ անպայման որ Փոխկիայէ մը եւ Կապադովկիայէ մը ան-
միջապէս յետոյ, անոնցմէ տարրեր, որոշ արշաւախումբեր եկան,
հաստատուեցան ու մնացին Տաւրոսներու մէջ, հոն գտնուող նախաքնիկ-
ները մասամբ բնաջնջելով, մասամբ ալ իրենց մէջ ձուլելով, մարսելով,
Հայ-Արմէն ժողովուրդը հետզհետէ մէջտեղ բերելով, սկզբնական
հայրենիքը կը դառնայ հայուն Տաւրոսեան շրջանը, եւ դարերու ըն-
թացքին կը բազմանայ ցեղը, ծնունդով, ձուլումով ու կ'ընդարձակուի
հայուն հայրենիքը մինչեւ կովկասները, մինչեւ Կասպից լիճը: Ուրեմն
պէտք է այլեւս ընդունինք հետեւեալ երկու պարագաները, որպէս իրո-
ղութիւն, թէ հայուն հայրենիքը եղած է սկիզբը Տաւրոսներու աշ-
խարհը (Եւրոպայէն գաղթելէ յետոյ, երբ այն ատեն տակաւին հայ
անունով չէր յորջորջուեր), երկրորդ պարագան, որ հայուն հայրենիքը
եղած է շատ ընդարձակ եւ ան նախապէս ընդարձակուեր է արեւ-
մուտքէն դէպի արեւելք: Իսկ արեւելեան Հայաստանէն-Մեծ Հայքէն,
հայ պետութեան կործանումէն յետոյ, շատ մը հայ հաստատութիւններու
դէպի արեւմուտք՝ Փոքր Հայք, Կիլիկիա գալ հաստատուելը, բնաւ
մեզի ենթադրել չի տար թէ հայերը վերջէն եկեր են եւ հաստատուեր
են իրենց համար բոլորովին նոր եւ անծանօթ, ոչ հայաբնակ երկիր
մը՝ Կիլիկիա, Փոքր Հայք, այլ ընդհակառակն մեր անկախութեան
կորուստէն յետոյ արեւելքէն արեւմուտք գաղթող հայերու իրողութիւնը
կ'ապացուցանէ թէ՛ հայեր արդէն շատ հին ժամանակներէ կային
Փոքր Հայք, Կիլիկիա, Տաւրոսի հովիտներուն եւ գոգթափերուն եւ
եկան այս վերջինները գտան իրենց նախաբնիկներու մնացորդները
եւ դիւրութիւն ունեցան աշխտեղ հաստատուելու եւ ապրելու: Մեծն
Տիգրանի նուաճումները մինչեւ հեռաւոր վայրեր, մեզի կ'ըսեն թէ՛
հայեր վաղնջական ժամանակներէն իսկ կը բնակէին արդէն նաեւ արեւմտեան
Հայաստան, Փոքր Հայք, Կիլիկիա եւ Տիգրանի յաղթանակնե-
րէն յետոյ անոնցմէ եղան հաստատութիւններ, որոնք իջան թերեւս Ամա-
նոսներու հարաւը, Հայոց ծոցէն ալ հարաւ եւ հաստատուեցան Սե-

լեկիոյ շրջանէն մինչեւ Կասիոս, Քասապեյլա (Քեսապ): Քրիստոսէ
առաջ հռովմէացի Կիլիկերոն կառավարիչ կարգուած էր Կիլիկիոյ եւ
Հռովմի կողմէ վարած էր զինուորական գործողութիւններ եւ Ն.Ք.
51 թուականին եւ իր նամակներով կը գանգատէր ապստամբ լեռ-
նականներուն համար: Մեր լուսահոգի հայրենակից Պ. Տէօփլէթ Գէ-
որգեան իր «Զէյթուն» Ա. հատորին մէջ շատ հաւանական կը գտնէ
որ այդ ապստամբ լեռնականները զէյթունցիներն էին, Թոթափելու
համար օտարի լուծը, որովհետեւ յետնագոյն ժամանակներուն իսկ
զէյթունցիին միշտ ապստամբած է, չէ հանդուրժած օտարին եւ անոր
ընտելութիւններուն:

Կիլիկիան Մեծն Տիգրանի ժամանակ եւ նոյնիսկ ինչպէս ըսինք
նախապէս, Տիգրանէն առաջ հայկական էր եւ չէր կարելի որ Զէյ-
թունը, անշուշտ մեզի անծանօթ անունով մը, հայկական եղած
չլլար: Նախկին Կատալոնիան, շատ մը անուններ ստանալէ յետոյ,
Քրիստոսի թուականէն ասդին ըսուած է ատեն մը Զահանի շրջան,
որուն բաղկացուցիչ մասերը կոչուած են Ուլնիա, Արաբիսոս, Ապրաստա,
Կոկիսոն: Իսկ Ուլնիա փոքր տեղափոխութեամբ մը, նախկին տեղը՝
Ուլնիա-Ֆրոնոս մնալով հանդերձ վեց ժամ դէպի Հիւսիս գտնուած
վայրը իր բնակչութեամբ եւ բնակիչներուն իսկ բերնով կոչուեր է
Գեղ: Ուլնեցի Կարապետ Կաթողիկոս տակաւին 1727-ին Զէյթուն չի
կոչեր իր ծննդավայրը այլ կ'անուանէ զայն «Քաղաքագեղ» եւ հե-
տեւեալ կերպով կը նկարագրէ Զէյթունը «Որ չինեալ կայ ի մէջ ե-
րից մերձակայ լեռանց՝ Պարզընկոյ Այրածոյ Կանկուտայ, ընդ գո-
գացեալ նեղ ձորում բարերբրի, ուր լինի այգի, ձիթենի, նոնենի,
թզենի եւայլն եւ ամենայն ըստ կարգի՝ այլեւ բամպակ եւ մետաքս,
որ է ապրչում եւ հանք երկաթի. որ ըմպէ զջուր բարեհամ կար-
կաչուն փոքր գետոյն՝ որ հոսի ի լեռնէն Պիրիտոյ, որ թարգմանի՝
ցուրտ, վասն մշտագիւտ ձեանն որ ի նմա: Ասացեալ գէօղ ունի յա-
րեւելս՝ առ ոտս Պարզնկոյ լեռին՝ զառաքելաչէն վանսն զսուրբ
Աստուածածնի եւ այլ յառաջ դէպի հարաւ՝ զդաշտն արքաւանդ, որ
ունի զրժչկարար ջուրն ջերմկոյ եւ զաքանչելի եկեղեցին ամենափրկիչն:
Զէյթունը զէյթունցիին համար «Գեղ» անունով կոչուեր էր, այդ-
պէս կը ճանչնար զէյթունցիին իր ծննդավայրին անունը ուրիշները
միայն Զէյթուն կոչեր են իրենց Գեղը: Զէյթունցիին ինքն իրեն հա-
մար զէյթունցի չէր ըսեր այլ ըսեր է «գեղացի»: Զէյթունցիի քաղաք
կոչածը հին ատեն եղած է թերեւս իր արեւելքը գտնուող եւ Շէհիր-
ճոկ կոչուած աւերակներու ամբողջութիւնը (հաւանաբար Շէհիրճիկ
= քաղաքիկ կոչուած է այդ հին վայրը սերնուկներէն կամ սեր-
ճուկ-սուկներէն կամ տանիշմաները երբ գրուած էին այդ շրջանը

եւ կործանած) իսկ ղէթունցիին համար Զէյթունը Գեղ կոչուելով, եւ նախկին Շէհինովը այլեւս գոյութենէ դադրած ըլլալով, իր քաղաք կոչածը Ապրաստան էր, զւր ուղղակի «քաղաք» յատուկ անունով կը կոչէր, քիչ անգամ ալ Ապրաստան, մինչդեռ Մարաշին ուղղակի Մարաշ ըսեր է փոխանակ քաղաք ըսելու: Կիլիկիան պատմիչներէն արդէն Զէյթուն անունով չէ յիշատակուած Զէյթունը, հաւանաբար Յըռնըսի, Արեգինի հետ միեւնոյն վիճակը ներկայացուցած ըլլալով: Մինչդեռ մինչեւ 1528 եւ նոյնիսկ ինչպէս որ տեսանք 1727 թուականները Զէյթունը «Գեղ» անունով կոչուած է ղէթունցիներէն եւ այդ թուականներէն յետոյ է որ դրացիներու կողմէ Զէյթուն կոչուելովը, ղէթունցիին ալ սկսած է իր գեղը ճանչնալ որպէս Զէյթուն, իր Զէյթուն յատուկ անունով անուանուելէ շատ առաջ իր չրջակայքը գտնուած են նաեւ Բերդուսը, Արեգինը, Կապանը, Ապրաստան, Արաբխուսը, Կոկիսոնը, քիչ մը հարաւ մէկ օրուան հեռաւորութեամբ (ի հարկէ ոտքով) հին Գուրգումը կամ Մարգագին, արդի Մարաշը կամ Գերմանիկը, հիւսիսը երկու օրուան հեռաւորութեամբ հին Տեգարաման, արդի Կիւրինը, Լարեսան՝ արդի Լորշուն անունով, այժմ թուրք գիւղը, Հոնին, ատեն մը կաթողիկոսանիստ քաղաք մը, որ այժմ կը կոչուի Խունի եւ դարձեալ թրքաբնակ է: Այս բոլորէն կարելի է հետեւցնել թէ այդ բաւական ընդարձակ չրջանը որ ինչպէս յաճախ յիշեցինք Կատաւոնիա անունով շատ հին ժամանակներէն սկսած, ապրեր են նախաքնիկներ եւ հետզհետէ հայացած են անոնց մնացորդները: Երկիր մը որքան ալ որ ջարդերու, բռնագողթերու, հալածանքի ենթարկուելու ըլլայ, այդ երկրի ժողովուրդին թէպէտեւ կարեւոր եւ մեծագոյն մասը կը բնաջնջուի, սակայն մնացորդներ կը մնան ասդին անդին այդ երկրին մէջ դարձեալ տարբեր անուններով եւ զօրաւոր ու տիրող ցեղի մը ձուլուելով: Ապացոյց, կը տեսնենք որ հակառակ թուրք կառավարութեան 1914-1918 սխիւմաթիկ կերպով կազմակերպուած հայկական ընդհանուր տեղահանութեան, ընդհանուր ջարդերուն, հայը մնաց դարձեալ թուրքիոյ մէջ թէպէտեւ մեծագոյն մասը բնաջնջուած, սակայն մէկ մասը կայ այսօր այնտեղ հայ անունով, կարեւոր մաս մըն ալ թրքացած, թուրքերու մէջ կորսուած: Եւ թրքական ջարդերը, հալածանքներն ու բռնագողթը անսովոր երեւոյթ էին, եւ կարելի էր մտածել թէ հայը իսպառ պիտի բնաջնջուէր: Սակայն մնաց ան այնտեղ իր նախկին դիմագիծով, մաս մըն ալ հարէմներու մէջ կամ ուղղակի ազգափոխ ըլլալով: Արդի թուրք ժողովուրդը արդեօք հարիւրին քանի՞ համեմատութեամբ նախկին թուրքն է իր արիւնով, անոր մէջն է յոյն, չէրքէզ, քիւրտ, հայ արիւնը: Հնագոյն ժամանակներուն ուրեմն մեր

երկրին, Զէյթունի եւ իր մօտ ու հեռու չրջակայքը ապրած պէտք է ըլլան այլազան ցեղեր, եւ պարագաներու հարկադրանքով անոնք ենթարկուած են պատմութեան հորովոյթին եւ կրած են դիմադրումներ, խռովումներ ձուլումներ են քիչը շատին մէջ, տկարը զօրաւորին հետ, աւելի քաղաքակիրթը բարբարոսին մէջ, ու լատ այնմ նաեւ փոխուած են իրենց գտնուած երկրին անունները, շատ անգամներ: Հայաստանի մէջ Գեղ անունով աւաններ, բնակութիւններ կան, որոնցմէ յիշենք Մշգեղ, Մեծ Գեղ եւ ուղղակի Գեղ, հաճընցիին Զէյթունին կ'ըսէ Զամիշի Գեղ:

Անգամ մը եւս անդրադառնալով մեր քիչ առաջ պարզած տեսութեան չենք կրնար տարակուսիլ թէ՛ երբ պատմական Տէգարաման՝ արդի Կիւրինը, Մեյիտինէն կամ Մալաթիան, Գուրգումը կամ արդի Մարաշը, Բերդուսը, Կոկիսոնը կամ Կոկաց աշխարհը արդի Կէօկսիւնը, հաթերու տիրապետութեան տակ եղած քաղաքներ ըլլան, Ճահանը Տաքաշներու, եւ յետոյ նոյնիսկ Ասորեստանի Մարգոնի ձեռքը կը գտնուին Փոլսներ, Կիւմսներ կու գան ու կ'անցնին այդ չրջաններէն եւ այդ բոլոր յիշուած վայրերու միջեւ գտնուող Զէյթունը (անշուշտ այն ատեն ուրիշ անունով մը) բնակչութիւն ունեցած չըլլար Հաթ-Հիթիթ, Տափալ կամ Տիրարեան եւայլն: Այս մասին չէ կարելի երկմտիլ: Այդ ժողովուրդները կամ իրարու յաջորդած են, յաջորդը բնաջնջելով նախորդը մասամբ մը եւ մասամբ ալ իր մէջ լուծելով, մարսելով, ինչպէս Հռովմէական, Բիւզանդական կայսրութեան ատենները, լատ աւանդական պատմութիւններուն՝ Զէյթունի բնիկները յոյներ էին, Յըռնոսը իր չրջակայքով Ուլիա կոչուեր էր Յուլիանոս ուրացողին անունով, իսկ որպէս թէ հայերը վերջէն եկած են եւ հալածելով զանոնք իրենք բնակեր են անոնց տեղը, ինչ որ բոլորովին ճիշդ չի կրնար ըլլալ, հաւանաբար գտնուած ըլլան այնտեղ յոյներ, կամ յունացած նախաքնիկներ, սակայն փաստ չունինք հաստատելու թէ գտնուած չեն նաեւ հայացած նախաքնիկներ, այլ մեզի կը թուի թէ՛ հայեր կամ հայացած բնիկներ աւելի շատ էին այնտեղ եւ աւելի կանուխէն հաստատուած, հաթերուն ժամանակակից կամ անոնցմէ քիչ յետոյ եւ անոնց մնացորդներէն հայացած նախահայրեր:

Եփրատէն արեւմուտք, Փոքր Հայքի, Կիլիկիոյ, Կապադովկիոյ հոծ հայութիւնը նկատի առած, Պրն. Ա. Ալպոյաճեան դարձեալ իր երկհատոր ստուար գործին «Հայ Կեսարիա» պատմութեան մէջ, բնաւ հաւանական չի գտներ որ՝ Քրիստոսէ առաջ՝ 300-էն 190, այսինքն մօտաւորապէս հարիւր տարուան համեմատաբար կարճ ժամանակամիջոցին մէջ, Եփրատի արեւմտեան կողմը այնքան մեծ թիւով հայութիւն

մը գոյացած ըլլաւ: Աւելի հաւանական է մտածել կ'ըսէ Պ. Ալպոյաճեան՝ թէ հին ժամանակներէ ի վեր այդ երկիրներուն մէջ ապրող խառն բնակչութեան մէջ հայ տարրն է չոր քաղաքակրթական նուաճում մը գործադրած էր, իր գերակշռութիւնը զգալի ընելով եւ իր մէջ ձուլելով ուրիշ ցեղեր: Մինչեւ հիմա մեր գտած ու մէջտեղ բերած, արձանագրած տուեալներուն, ենթադրութիւններուն եւ յայտնութիւններուն վրայ այս մասին, ահաւասիկ նպաստ մը եւս մեր պաշտպանած տեսութեան, Պ. Ալպոյաճեանի ցիւած հաւանականութիւնը Պրն. Ալպոյաճեան անմիջապէս կ'աւելցնէ նաեւ հետեւեալ տողերը. «Պրն. Բարսեղ Օհանեան կ'ենթադրէ թէ՝ Արիարամ հայ է ծագումով: Եթէ այս ենթադրութիւնը հաստատող ոեւէ զօրաւոր ապացոյց գտնուի, ըսել է թէ՝ Մ. Խորենացիի աւանդական Արամին պատմութիւնը կապաղովկիոյ տիրապետութեան մասին՝ արձագանգն է Արիարամի պատմութեան»: Պրն. Ալպոյաճեան փակագիծի մէջ դիտել կու տայ թէ՝ բոլոր կապաղովկիոյ թագաւորները իրենց անուններուն սկիզբը կը կրէին «Արի» մասնիկը, ինչպէս՝ Արիարամ, Արիափարզան, Արիարամ, Արիադէս եւայլն: Արեւելքի մէջ սովորական եղող երեւոյթի մը համաձայն, թագաւորներու սրուած ընդհանուր տիտղոսի մը հանգամանքն ունի այդ մասնիկը, որ թերեւս նոյնիսկ արիական «Արի» = քաջ, ազնուական բառն է: Եթէ ճիշդ է Պրն. Ալպոյաճեանի տեսութիւնը՝ արի Արամը կը դառնայ Արամ եւ նոյնացումը աւելի կը շեշտուի Դարձեալ տեղին է հոս յիշել Մ. Խորենացիին հետեւեալ պատմութիւնը «Վարդգէս մանուկն»⁵ Տուհաց գաւառէ, որ ի վերայ Քասախ գետոյ, գորմէ առին յառասպելսն, հասուած դնացեալ եկեալ նստեալ զԵրէշ բլրով (Մ. Խ. Գիրք երկրորդ ԿԵ): Ուրեմն կապաղովկիայէն, այսինքն արեւմուտքէն արեւելք է եղած առաջին անգամ հայութեան գաղթը կամ արշաւը: Որովհետեւ Քասախ գետն ու Երէշ բլուրը արեւելեան Հայաստանի, Այրարատեան դաշտի մէջ են, Խորենացին անշուշտ որ այդ ժամանակներուն տակաւին աշխարհ եկած չէր, սակայն հայ գոլաններու երգերէն եւ աւանդական պատմութենէն լսած եւ իմացած էր եւ ըստ այնմ գրած էր իր պատմութիւնը: Կապաղովկիա, Գոմմագէն, Կատաւոնիա իրարու անմիջական սահմանակից վայրեր են, եւ ինչ որ Կապաղովկիոյ համար ըսուած է, տարբեր բան չի կրնար ըսուիլ ուրեմն Կատաւոնիոյ համար: Այսինքն Կատաւոնիան ալ շատ կանուխէն բնակուած է հայերէ, կամ հայացած նախաբնիկներէ: Իսկ Կատաւոնիան, ըստ Անդրէաս վրդ. Ալեքսանեանի (պատմիչ Սեբաստիոյ) եւ ուրիշներու կը համապատասխանէ Զէլթունի, Կէօքսիւնի, Հաճընի, Կիւրիւնի շրջաններուն: Կապաղովկիոյ Կոմանան է Հաճընի մօտ, հիւսիս արեւելքը գտնուող գիւղը, որ այժմ կը կոչուի

Շար կամ Շար Տէրէսի Կատաւոնացիքն սկզբանէ ի վեր անջատ եւ կապաղովկիացիներէն տարբեր ժողովուրդ մը կը նկատուին, կ'ըսէ Պ. Ալպոյաճեան, եւ ազգաց թուահամարին մէջ Կապաղովկիայէն ետքը կը համարուէր Կատաւոնիան, յետոյ Եփրատ եւ անդին եղող ազգերը, այնպէս որ, Մեյլիսինէն ալ Կատաւոնիոյ մաս կը համարուէր, որ վերջնոյն եւ Եփրատի միջեւ կ'իյնայ եւ մինչեւ Կոմմագինէ կը հասնի Կրնայ ըլլալ որ սկզբանէ ի վեր, կամ սկիզբէն Կատաւոնացիք տարբեր ժողովուրդ մը նկատուին, սակայն նկատուիլը բացարձակ հաստատում մը չենթադրելու: Այլ լոկ ենթադրութիւն մը կարգ մը գիտնական-պատմաբաններու կողմէ եւ կամ սկիզբէն նկատուին եւ ժամանակի ընթացքին այս իրարու սահմանակից շրջաններու ժողովուրդները միախառնուին եւ առաջ գայ նոր ժողովուրդ մը: Որովհետեւ ինչպէս քանիցս յիշեցինք մեր անցեալ էջերուն մէջ արեւմտեան Ասիոյ ժողովուրդներու խառնիճաղանճը եւ անոնց շարժումները Փոքր Հայքի (Արմինիա) Բ. Հայքի կեդրոն եղած է ատեն մը Մեյլիսինէն եւ անոր շրջանի մէջ ինկած են Արկա Կոմանա (Շար Տէրէ) Արաբսոս (Եարփուզ) եւ Կիթարիճոր: Արտաշէս Աշխարհակալի եւ Մեծն Տիգրանի ժամանակներէն սկսած Փոքր Հայք որակուիլը արեւմտեան այն երկիրներուն, մեզ կը տանի այն համոզման թէ՝ այդ ատենները այնեւ արդէն մեծամասնութիւն մը կար հայ բնակչութեան: Կը կարծուի թէ՝ եթէ հայեր վաղնջական ժամանակներու հայացեալ բնակիչներն ըլլային վերոյիշեալ մասերուն՝ Փոքր Հայքի, Կատաւոնիոյ, Կապաղովկիայեան Կիլիկիոյ մէջ, շատոնց կորսնցուցած պիտի ըլլային իրենց ցեղային նկարագիրը եւ լեզուն: Եւ հետեւաբար կ'ենթադրուի, կը խորհուի թէ՝ Փոքր Հայքի մէջ, այդքան ստուար թիւի մը հասած հայերը մօտ ժամանակներու մէջ Եփրատը անցած պէտք է ըլլան եւ հաւանաբար Հայաստանի մէջ քրիստոնէական կրօնքին վերջնականապէս հաստատուելէն յետոյ, աւելի ստուարացաւ հայերու թիւը, վասնզի քրիստոնէութենէն յետոյ հայերու դէպի արեւմուտք տեղափոխութիւնը անհամեմատ աւելի աճած է: Նախ ըսենք թէ՝ եթէ հայերը վաղնջական ժամանակներու հայացեալ բնակիչներն ըլլային Փոքր Հայքի Կատաւոնիոյ, ոչ թէ պիտի կորսնցնէին իրենց ցեղային նկարագիրը եւ լեզուն, այլ ընդհակառակը, իրենց նկարագիրը պիտի պահէին, իրենց լեզուն պիտի ճոխանար նոր տարրերով: Բնաւ հաւանական չէ որ Քրիստոսէ առաջ 300-190, այդ գրեթէ մէկ դարուն մէջ - ինչ որ պատմութեան համար կարճ ժամանակ մըն է - Եփրատի արեւմտեան կողմը այդքան մեծ թիւով հայութիւն մը գոյացած ըլլար: Ուրեմն աւելի հաւանական է մտածել ինչպէս քիչ առաջ միշտ չեցինք, թէ հին ժամանակներէն ի վեր այդ երկիրներուն մէջ ապրող

խառն բնակչութեան մէջ հայ տարրն է որ քաղաքակրթական նուա-
ճումներ ըրած է, իր գերակշռութիւնը զգացնելով եւ իր մէջ ձու-
լելով ուրիշ ցեղեր, հետեւաբար մենք այստեղ անմիջապէս աւելցնենք
նաեւ՝ իր նկարագիրը եւ լեզուն պահելէ զատ, պարտադրեր է նաեւ
ուրիշներուն: Եւ կը խորհինք թէ այդպէս ալ եղած ըլլալու է: Իսկ
այն բոլորովին տարբեր խնդիր է թէ՛ քրիստոնէութենէ յետոյ Հա-
յաստանէն աւելի ստուար թիւով հայեր գաղթեցին արեւմուտք, ան-
ցան Եփրատը եւ հաստատուեցան վերոյիշեալ շրջանները: Ասիկա
ապացուցուած իրողութիւն է եւ չի հակասեր սակայն առաջին հա-
ւանականութիւնը:

Նախքան Բրիտանոս 190 թուականներուն, Եփրատէն արեւմուտք
գտնուող հողերուն վրայ՝ Փոքր Հայքի թագաւորութեան մը կազմութիւնը
բաւականէն աւելի զօրաւոր փաստ մըն է հայ ցեղին ո՛չ միայն դէ-
պի արեւմուտք տարածումին, ալ աւելի փաստ մըն է նախապէս
արեւմուտքի մէջ զօրաւոր եւ հիմնական հայ տարրի մը, մեծ թիւով
հայերու բնակած ըլլալուն:

Ուրեմն, այս բաւական ընդարձակ հաւանականութիւնները վերջա-
պէս կը բերեն մեզ այն մտածումին թէ Փոքր Ասիոյ, Կապադովկիոյ
հետ եւ անոնց նման եւ Կատալոնիան բնակած են վերջէն Հայացած
նախաբնիկներ եւ հայեր եւ Կատալոնիոյ անմիջական մաս է նաեւ
Զէյթունը, Կոկիսոնի, Ալպիստանի, Արարիսոսի, Կիւրինի հետ: Զէյ-
թուն հին պատմութեան մէջ անծանօթ անունով մը գոյութիւն
ունեցած ըլլալու է նոյնիսկ վաղնջական ժամանակներուն, Մեծն
Տիգրանէն ալ շատ առաջ, իր դիրքին կարեւորութեան եւ այլ պատ-
ճառներով եւ բազում անգամներ շարժերէ եւ այլ վերիվայրումներէ
կործանուած ըլլալու է եւ վերաջնուած, հինաւուրց բերդը, ստորերկրեայ
ջրուղիները, կոյուղիները, որոնք գտնուած են, ինչպէս նաեւ Պէրիսի
երկաթահանքին անյիշատակ ժամանակներէ ի վեր շահագործումը
նշաններ են ասոր:

Ըստ շատ մը հնախոյզներու, Փոքր Հայաստանը, Տաւրոսները
նկատուած են օրրանը հայութեան: Լեւման Հառուլթ անոր բնակիչները
կը կոչէ Արմէնք կամ Արմէնիք (Արմէնունիք) Ն.Ք. 9-րդ դարուն է
որ անոնք եկած են Տաւրոսները լեցուած:

Հայուն հալոնիքը, պատմականօրէն շատ աւելի ընդարձակ հողամաս
մը կ'ընդգրկէ: Հայը եկած է Եւրոպայէն արեւելք. իր առաջին կա-
յանը եղած են Տաւրոսեան լեռները, անոր հովիտներն ու լեռնա-
շղթաները, կեդրոնը՝ Չահան գաւառը որ Կիւրինի շրջանը Ալպստան
եւ Տէգարաման, Կոկիսանշուն (Կոկիսոնը): Դարեր հոն մնալէ յետոյ,
գաղթած է դէպի հիւսիս արեւելք, արշաւելով գրաւած է Տարօնը,

Բարձր Հայքը, Արարատի շրջանները: Բայց մաս մը հայեր կեդրոնացած
մնացած են ու միացած իրարու Տաւրոսեան շրջանին մէջ եւ կազ-
մած են աւատական իշխանութիւններ: Մեծն Տիգրանի բանակին
հետ, Տաւրոսեան հայերը հաւանաբար իջած են Ամանոսեան լեռները,
Անտիոք եւ հոն ալ հաստատած բնակութիւն: Մինչեւ որ Բագրատունեաց
հարստութեան անկումէն յետոյ, Բագրատունեաց սերունդին քաջարի
իշխաններու գլխաւորութեամբ կազմուեցաւ Կիլիկեան նոր պետութիւն
մը եւ բնիկ, հին հայերը որ Տաւրոսները կը բնակէին, միացան Մեծ
Հայքէն այդ եկողներուն: Իսկ նախքան Կիլիկեան-Ռուբինեան իշ-
խանութիւնը՝ Վարաժնունի Փիլարտոս իշխան, օգտուելով Ռոմանոս
Դիոգինէս (Տիոփէն) Դ. կայսեր Մանազկերտի առաջ Ալփասլանէ
պարտուելով գերի իյնալու առիթէն, ինքը հիմնեց իշխանութիւնը
1078-ին Հոնիի, Ճահանի, Մարաշի շրջանը, որ վերջը ընդարձակուեցաւ:
Եւ Փիլարտոս հայն էր որ տեսակ մը հիմնադիրը կ'ըլլայ Ռուբինեան
իշխանութեան: Արծրունեաց եւ Բագրատունեաց ազնուականներէն
Ռուբէն, Գող-Վասիլ, Ապիրատ իշխան եւ ուրիշներ կ'ապաստանին
Մարաշ՝ Փիլարտոսի քով: Փիլարտոս սիրով կ'ընդունի զանոնք եւ իր
իշխանութեան սահմաններուն մէջ, Ռուբէնը կը դրկէ Անտի-Տաւրոսի
երկիրը՝ Վահկայի շրջանը (Կոռոմոզոյ) Գող-Վասիլի կու տայ Քէսու-
նի բարերբը եւ բազմամարդ շրջանը, որը կը հասնի մինչեւ Բեր-
դուս, Մարաշի մօտը, որպէսզի անոնք պաշտպանեն եւ շէնցեն այդ
շրջանները, զանոնք այդ շրջաններուն վրայ կը կարգէ որպէս իշ-
խան-գաւառապետներ:

Երեք հարիւր տարի տեւող թագաւորութեան մը տեղացի բնիկ
տարրը, կ'ըսէ Տոքթ. Յ. Տ. Ղազարեան, հայերը, Կիլիկիոյ մէջ ծնած,
ապրած ու մեռած, բայց վերջին ատեններն՝ տեսակ մը անհո-
գութեամբ, անփութօրէն, ազնուականութիւն կը սեպեն հռչակելու ի-
րենք գիրենք Հայաստանէն եկած գաղթականներ: Անանկ որ զէյ-
թունցին Անիէն եկած կ'ըլլայ, ատանացին Տարօնէն, տարսոնցին՝
Շիրակէն կամ Կարսէն, միթէ՛ Ապղարիպ Տարսոնի հայ իշխանը Գա-
գիկ Աբասեանի ազգական չէ՞: Այսքան «Հայաստանասիրութիւնը» ը-
սէ՛ «հայրենասիրութիւն» ո՛չ մէկ ազգ, ո՛չ մէկ դարուն ցոյց տուած
է, զոհել իր ծննդավայրի՝ Կիլիկիոյ անունն ու փառքը, հայկական
իշխանութիւնը եւ անոր բնիկ ժողովուրդը կոչուելու առանձնաշնորհումը,
եւ ցոյց տալ թէ՛ իրենք Բարձր Հայքէն եկած գաղթականներ են:
Մինակ հայ մարդը՝ Նահապետ Ռուսինեանն է եղած, որ առանց այ-
լեւայլի աշխարհի հռչակած իր ծանօթ երգով. -

Յաճկամ տեսնել զիմ Կիլիկիա

Աշխարհ որ ինձ Խոտը արեւ:

ԺԱ. դարուն վերջին քառորդին, հայութեան ցրուած եւ զանազան իշխանութեանց բաժնուած ըլլալուն որպէս հետեւանքը, հայութիւնը սկսած 1070-էն, միաժամանակ զից կաթողիկոսութիւններ ունեցած է:

1. Գրիգոր Վկայասէր, որ շրջիկ հանգամանք մը ունէր եւ օրինապէս միակ իրաւատէր նկատուած էր:

2. Բարսեղ Անեցի, 1081-ին Գր. Վկայասէրի հաւանութեամբը օծուած էր եւ Անի կը նստէր, սեյնուզ իշխանութեանց երկիրներուն վրայ իբր հոգեւոր հովիւ:

3. Թէոդորոս Ալաիօսիկ, որ կը մնար Հոնի, իբր Զահանի Հայոց հոգեւոր պետ:

4. Պօղոս Վարազեցի, կը մնայ Մարաշ, իբր եկեղեցականութեան գլուխ, Փիլարտոսի իշխանութեան տակ եղող երկրամասի հայերուն:

5. Գէորգ Լուսեցի, Տարսոն, Ապղարիպի իշխանութեան մէջ:

6. Գրիգոր կաթողիկոս, Եգիպտոս, խալիֆայի երկրին հայերուն համար:

Ասոնցմէ գուրս էր Աղուանից Ստեփաննոս կաթողիկոսը, որ կարելի է դասել Հայ կաթողիկոսներու կարգին: Ասոնցմէ ամենէն ազդեցիկը Անիի կաթողիկոսն էր, իր իշխանութեան տակ ամենէն ընդարձակ թեմը ունէր ան: Հոնի երբ սեյնուզ իշխանութեան ձեռքը ինկաւ, Անիի կաթողիկոսը պաշտօնանկ ըրաւ Թէոդորոս Ալաիօսիկը «Առեալ ի նմանէ զքօղն եւ զգաւազան եւ զՍուրբ նշան Տեառն Պետրոսի 1090-ին»: Թէոդորոս 5 տարի եւս կ'ապրի անկէ յետոյ եւ կը վախճանի 1095-ին: Մարաշի աթոռը նստող Պօղոս կաթողիկոս ինքնաբերաբար կը հրաժարի եւ կը վախճանի 1093-ին: Տարսոնի աթոռը Գէորգի մահով վերջ կը գտնէ եւ Բարսեղ իրականին մէջ կը դառնայ միակ կաթողիկոսը եւ 1091-ին կ'այցելէ Հոնի, Մարաշ, Ուռհա, Կեսարիա եւ Անտիօք ու կը դառնայ կրկին Անի 1093-ին, շարունակելու համար իր գործը:

1071-ին, Մանազկերտի աղէտով, (բիւզանդացւոց պարտութիւնով) Ռոմանոս Դիոգիենէս Դ. կայսրը, իր 100000-նոց բանակով ընդդէմ Արփասլանի երբ կը յաղթուի եւ ինքն ալ գերի կ'իյնայ, հայեր անկարելի կը գտնէին բնակիլ Արփասլանի տիրապետութեան տակ եւ կու գային, կը հաստատուէին Փոքր Ասիոյ հարաւ արեւելեան խորշերուն մէջ: Ինչպէս քիչ առաջ յիշած ենք բնիկ հայազգի եւ Վարաժնուհեաց տոհմէն, Փիլարտոս, որ բիւզանդացիներու կողմէ գինուորական ընդհանուր հրամանատար էր Զորորդ Հայոց կողմերը, պահ մը կրցած է կեցնել արեւելքէն խուժող արշաւանքներու հեղեղը, սակայն տեսնելով բիւզանդացւոց պարտութիւնը Մանազկերտի մօտ եւ Ռոմանոսի գերի իյնալը, անկախ իշխանութիւն մը կազմեց ըն-

դարձակ սահմաններով եւ մայրաքաղաք ըրաւ Մարաշը: Փիլարտոս իր հետատեսութեամբ աշխարհագրական եւ քաղաքական հանգամանքներու մասին իր ունեցած փորձառութեամբ արեւելքէն եկած, արտագաղթած հայերը փոխանակ ցիրուցան ընելու եւ աննպատակ թափափիլ տալու, եկողները խտացուց, կեդրոնացուց որոշ շրջաններու մէջ, անոնց տուաւ առանձին գաւառներ, ինչպէս Ռուբէնի, Գող Վասիլի եւ ուրիշներու: Կարեւոր թիւ մը տեղաւորուեցաւ Խոսի ծոցին բոլորտիքը: Այս ծոցը նախքան Քրիստոս եւ աւելի առաջ իսկ Հայոց Մոց կոչուած է, ինչ որ նախապէս մեր այս գործին մէջ առիթով մը արդէն յիշած ենք: Այնպէս որ Ամանոսի եւ Արեւելեան Տաւրոսի երկու զառիթափերը հետզհետէ հոծ հայութեամբ մը լեցուեցաւ: Հայ վանքեր մեղուններու փեթակներու չափ բազմաթիւ, նոյնքան ալ ժրաջան կերպով եւ խանդով կը շէնցնէին Բերդուսի, Ուլնոյ, Քէստանի, Գերմանիկոյ եւ Տլուքի շրջանները: Ամանոսի կամ Սեաւ լեռներէն մինչեւ Եփրատ, մինչեւ Զահան գետ, Կարմիր վանք, Շուղը (Մարաշի մօտ, Տունգալա, Մուճուխ տէրէսի, Իչ Նայիէ, կոչուած շրջանի մէջ) Ընկուզուտ, Արեգին, Յիսուհեաց անապատ եւ ուրիշ մենաստաններ: Այս բոլորը կարճ ժամանակի մէջ Գր. Վկայասէրի եւ Փիլարտոսի ջանքերով եւ պաշտպանութեամբ եղան եւ դարձան կրթական գործունէութեան կեդրոններ, մօտ ապագային պիտի ըլլային Հայ գրականութեան, գրչակցութեան, մանրանկարչութեան, վերջապէս Հայ մշակոյթի վառարաններ:

Թորոսի եղբօր, Ստեփանէին ձեռքն էին 1160-ին Բերդուսը, Ուլնիան, Կապանը եւ Ամանոսի բարձրագաւառները:

Միքայէլ Ասորի կը գրէ թէ «Ի թուին Ասորոց՝ 1476 = մեր 1165-ին, զօրացաւ Գլին Ասլան եւ էառ գկատուկն եւ զԱպլաստան եւ զՏալանդան ի ձեռն Տանանի եւ հալածեաց զորդիսն Դանիլմանայ: (Կատուկ կարեւոր կեդրոն մըն եղած է խաչակիրներու ատեն, կը գտնուի Մարաշի հիւսիս արեւելքը, կէօլ պաշի նշանաւոր Հատաթան է Adatha): Ըստ արաբ հեղինակներու հայերը Քայթուք կոչած են այդ քաղաքը, իսկ թուրքերը Սէրայ կոչած են, որը աւերակ է: Օրմանեան Պատրիարք իր «Ազգապատում»-ին մէջ կը յիշէ թէ հայերս Կատուկեցի անուն կաթողիկոս մը ունեցած ենք 1285-1289-ին: Բերդուսի պատերազմը տեղի ունեցած է 1107-ին Գող Վասիլի եւ Պարսկաստանի սեյնուզ իշխան հրոսակին միջեւ: Թորոս Ռուբինեան կը միանայ Գող Վասիլի եւ կը յաղթեն սեյնուզի իշխանին:

Գող Վասիլ, կ'ազատէ Հըսն-Մանուէր (այժմ Ատիեաման) Թուրքեր եւ Ուրիմ աւանները Տանգրէսի տալով Ռապանը:

Գր. Կաթողիկոս Վկայասէր եւ Գող Վասիլ Թաղուած են Շուղրի Կարմիր վանքը (Տէօնկէէ, Մուճուգ տէրէսի) Գող Վասիլ 1112-ին:

Գր. Վկայասէր Արեգին վանքէն 1102-ին Հայրապետական Թուղթ մը գրած է Մուգատիկի չենթարկելու համար հայ եկեղեցիին:

Jonquiere (Բ. հատոր 515 էջ) կ'ըսէ թէ՝ երբ կը կործանի Կիլիկիոյ Հայ Թագաւորութիւնը, թաղթականին սուրէն խուսափելու համար շատ մը հայեր կ'ապաստանին Տաւրոսի կիրճերուն մէջ, իրենց շուրջը կը համախմբեն ազատասէր հայերը: Զէյթուն կ'ըլլայ այդ կայաններէն մին. արագօրէն կը զարգանայ չորս ժառանգական իշխաններու կառավարութեան տակ:

Իսկ ըստ ուրիշներու Զէյթուն հիմնուած կ'ըլլայ 1545-ին եւ 1618-ին Սուլթան Մահմուտի հրովարտակով բացառիկ ինքնավար աւան մը դարձած է... Արտօնութիւնը որպէս թէ տրուած է նման բացառիկ վարչութեան մը, որովհետեւ 1617-ին գրեթէ բոլորովին դատարկուած է եղեր, ըստ ականատես Սիմէոն Լեհացիի հաստատումին որ կ'ըսէ թէ՝ Զէյթուն 6 եկեղեցի եւ մէկ վանք ունի եւ ասին թէ 800 տուն հայ եղած է սկիզբը եւ այժմ մնացած է 30 տուն. զի ցիրուցան եւ հալածեալ են եղել ի Ճէլալօղն (Հ.Ա. 1539,90)...

Իսկ Հ. Ղ. Ալիշան, իր «Սիսուանի մէջ Մարաշ գաւառի մասին գրելու առթիւ, կ'ըսէ թէ՝ Ճահանի եւ անոր հարկատու երեք գետակներու հովիտները (Զէյթունի Շուղր գետակը Կոկիսոնի գետակը եւ Թէքիրի գետակը) եւ՝ Մարաշէն հարաւ տարածուող հողամասը Կիլիկիոյ սահմաններէն դուրս են: Իսկ Սարոսի (Սիւսուն) եւ Ճահանի (Պիւրամոս) միջեւ գտնուող լեռնային վիճակները (Հանըն, Ղարս-պազար, Անաւարդ, Սիս, Վահկա, Շար-Տէրէ) գրաւուած են մեր Թագաւորներէն, թէեւ հիւսիսային մասեր մնացած են անայցելու: Այս վիճակները հարաւէն հիւսիս երթալով են՝ Կապան, Ֆոնուս (կամ Ֆոնուս)՝ եւ Ուլի կամ Զէյթուն, այս վերջինը Սիսուանեան Պայազատներու ատեն Զէյթուն անունով ծանօթ չէր... Հաւանաբար առնուած ըլլալով Մարաշի, իշխողներու սահմանին մէջ: Մինչդեռ Ֆոնուս եւ Արեգին կը յիշուին մեր պատմագիրներէն, շատ հաւանական է որ այդ վիճակը ամբողջ անցած ըլլայ հայոց ձեռքը: Ահա այս իսկ պատճառով, այս վիճակը (Զէյթուն) Կիլիկիայէ անջատել շատ օտար կը թուի ազգային տեսութեան. թէեւ շատ աչքելուած են այդ շրջանները, մանաւանդ Գօգանեաններու նուաճումէն առաջ: Եթէ Ճահանի այս վերնահովիտները ազգային իշխանութեան տակ իսկ եղած են՝ ըստ Ալիշանի, յայտնի չէ եղած թէ ինչ անունով կը կոչուէին: Հաւանաբար Կապան գաւառի կամ Կոկաց-Կոկիսոնի եւ Թերեւս ալ Ապաստայի կամ Մարաշի մաս կը

կազմէին եւ հետեւաբար Կիլիկիայէ դուրս կ'ըլլային: Ասոնք ճշդել կարելի չըլլալով, հաւանական կարելի է նկատել որ եղած են Կապանի առանձին եպիսկոպոսական թեմին մաս: Իսկ Թրքական վիճակագրութեան մէջ Ֆոնուս եւ Զէյթուն կը յիշուին իրրեւ զատ վիճակներ:

Կիլիկեան աթոռի 15 վիճակներէն մէկն է Ուլիա կամ Զէյթուն եպիսկոպոսական վիճակը, որ իր մէջ կը ներառէ նաեւ Ֆոնուսի վանական թեմը:

Թէեւ մենք, շատ առաջները, մեր այս գործի գրեթէ սկիզբի էջերուն մէջ խօսած ենք Զէյթունի մասին, անոր ծագման, անուան եւ այլ պարագաներուն շուրջ, եւ ըրած ենք մեր ենթադրութիւնները, աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել մեր տրամաբանական հետեւութիւնները հանած էինք հիմնուած որոշ տուեալներու, նշաններու վրայ, սակայն այս տեղ վերջին անգամ մը վերստին անդրադարձանք մէջբերելով Jonquiere-ի, Սիմէոն Լեհացիի, Հ. Ղ. Ալիշանի եւ Ա. Ապոյանեանի գրածները:

Ըստ մեզի Զէյթուն շատ հինէն եղած է, Թերեւս հաթ բնակչութեամբ կամ յոյն գաղթականներով, որոնք հայացած ըլլան դարերու ընթացքին: Սակայն չենք գիտեր թէ՝ այդ հին ժամանակներուն ինչ անունով կոչուած է ան նախքան Ուլիա կամ Զէյթուն կոչուիլը, Յուլիանոս ուրացողի ժամանակ Ֆոնուսի մէկ գիւղը, Հին-գեղ, որ Ուլիա կոչուած է եւ ի վերջոյ այդ գեղի բնակչութեան Զէյթուն գաղթելովը, այս վերջինը կոչուած՝ այս անգամ Զէյթուն, ինչպէս կ'ըսէ մեր հայրենակիցը՝ Մնացական Սէմէրեան. իսկ Թերեւս Մայթ կամ Մայթունեանց (Թերի ի հաւատոս) անունով ըսուած է աւելի առաջ եւ 1545-ին Զէյթուն անունով ազաւաղուած է: Jonquiere-ի ըսածով 1545-ին հաստատուած է, հիմնուած է Զէյթուն, ինչ որ ճշմարտութիւն չի կրնար եղած ըլլալ, որովհետեւ այդ թուականին Զէյթուն ունէր ծաղկած մշակոյթ, գրչագրութիւն, վանքերու մէջ դպրոցներ, մտաւորական եւ բարոյական աշխատանքներ: Իսկ Զէյթունի մէջը եւ շուրջը կը գտնուէին շատ մը հնութիւններ, գեանուղիներ, շահագործուած երկաթի հանքը Պէրիսի, շէնքերու մնացորդներ, բերդը, հիթիթական, հռոմէական, բիւզանդական, արաբական շինութեանց նշաններ, քարեր: Ըսկանաոր անուն քարաշէն աղբիւրը, հաւանաբար Մեծն Աղեքսանդրի ատենէն յինուած եւ այդ անունով կոչուած է: Այդ աղբիւրի առջեւէն կ'անցնէր լայն ճամբայ մը Ռասաֆ-սալայատակ, Թերեւս հռոմէական պողոտայի մը մէկ մասն էր ան:

Այս բացառիկ եւ յսկերական գրութով կանազան՝ Հայ թէ՛

տար աղբիւրներէ քաղուածաբար մեր տուած կարգ մը ծանօթութիւններէն ի յայտ կու գայ թէ՝ Փոքր Հայք եւ Կիլիկիա նախքան Քրիստոս երկու, երեք նոյնիսկ չորս՝ հազար տարիներ առաջ ունեցած է մեծ բազմութեամբ բնակչութիւն եւ հետզհետէ խռայցած է Տաւրոսներու զառիթափերուն ստորտը եւ հովիտներուն մէջ։ Եղած են այնտեղ արշաւանքներ, պատերազմներ, հաթերու, ասորեստանցիներու, մակեդոնացիներու, պարսիկներու, սելեւկեաններու, հռովմէացիներու, արաբներու, բիւզանդացիներու, եգիպտացիներու, սարակինոսներու, սելճուզներու, դանիշմաններու, հայերու, թուրքերու։ Տեղի ունեցած են ներգաղթ եւ արտագաղթ։ Պատերազմներու համար հին ատեններ լեռնային ամուր դիրքերը միշտ նախընտրած են, ինչպէս նաեւ բնակած են մարդիկ առհասարակ անառիկ եւ դժուարամատոց բարձրութիւններու վրայ այն ժամանակներ։ Հետեւաբար անկարելի պիտի ըլլար խորհիլ թէ Զէյթունի պէս լեռնային ամուր դիրք մը անբնակ մնացած ըլլայ նոյնիսկ նախաքրիստոնէական դարերուն։ Գալով անոր բնակչութեան հին ատեն ինչ տարրերէ բաղկացած ըլլալու մասին, անոնք եղած ըլլան նախարհիկներ՝ հաթ կամ հայասա, հռովմէացի թէ յոյն, ինչպէս նաեւ թէ անիկա ինչ անուն կը կրէր նախքան Ունիա եւ կամ Զէյթուն կոչուիլը էական չէ, ինչպէս էական չէ թէ ովքեր էին այդ քաղաքին նախարհիկները։ Մինչեւ հիմա գրուած պատմութիւնները ցոյց տուած են թէ՝ Բագրատունեաց անկումէն յետոյ, երբ հայեր կը գաղթէին մինչեւ Խրիմ, Լեհաստան, Կալեցիա, Թրանսնիպանիա եւ այլուր, այդ ժամանակներ եկած են նաեւ հայեր Եդեսիա, Զէյթուն, Հաճըն, Ամանոսեան լեռներ, Սուէյաիա, Սուրիա, Եգիպտոս։ Սակայն այս իրողութիւնը չի կրնար հերքել Փոքր Հայքի եւ Կիլիկիոյ մէջ հինէն իսկ գտնուած բնիկ հայերու գոյութիւնը։ Նման ճշմարտութիւն մը չի կրնար հակասել եւ միւս ճշմարտութիւնը՝ թէ հայեր կային շատ հին ժամանակներ նոյնիսկ Մեծն Տիգրանէն առաջ Փոքր Հայքի եւ Կիլիկիոյ մէջ։

Փիլարտոս կեդրոն ունենալով Մարաշ քաղաքը, իր սահմանը կ'անցնէր Հոնին եւ Ապլաստան, Կիւրինը, Տարէնտէն, Գող Վասիլ կը տիրէր Քէսունէն մինչեւ Արեգին, Բերդուս, մինչեւ Սեաւ լեռներէն ալ անդին։ Այստեղ չենք յիշեր Ռուբինեանք, Աքրասեանք, որովհետեւ անոնք Զէյթունի անմիջական չրջանակի հողերուն չէին հասներ, թէ եւ Ստեփանէ, Թորոսի եղբայրը ատեն մը տէրն էր Բերդուսի, Ուլնիոյ, Կապանի։ Մասնաւոր կը յիշենք Փիլարտոսի եւ Գող Վասիլի տիրապետութեանց չրջանները, որովհետեւ անոնց անմիջական չրջանակին մէջ կը գտնուէր Ուլնիան կամ Զէյթունը եւ թերեւս այդ ատենները «Գեղ» անունով փոքր աւան մը եղած ըլլայ քանի որ այդ ատեններ

իր մասին մասնաւորաբար յիշատակութիւն մը չկայ։ Զէյթուն կը գտնուէր Հոնիի, Արաբիսոսի, Բերդուսի, Ապլաստայի, Արեգինի, Մարաշի, Կապանի, Ֆոնուսի եւ Կոկիսոնի միջեւ եւ երբ այդ բոլորը հայաբնակ էին, կամ հայ բնակիչներ ունէին այն ժամանակներ, չէր կարելի տարակուսիլ թէ Զէյթունէն հազիւ մէկ ժամ ոտքի գնացող կան Շէհրճուկ անուն հին քաղաքի մը աւերակները։ Մեր հայերը կը պատմէին թէ այդ քաղաքին բնակիչները հեթանոսներ եղած են հին ատեն, որոնք յետոյ քրիստոնեայ եղած են եւ հայացած։ Արաբներ-Սարակենոսներ եւ Սելճուզ Տանիշմանեաններ գրաւած եւ աւերած են այդ քաղաքը եւ բնիկներէն մէկ մասը Զէյթուն ապաստանած։ Իրենցմէ ոմանք ալ մօտերը գիւղ մը հիմնած են Ղալիճնց (Գլրճեան) գիւղ անունով։

1045-ին, Բագրատունեաց անկումէն յետոյ, բագրատունիներէն մաս մը հայեր կու գան նաեւ Զէյթուն, եւ սակայն Զէյթունի հարաւ արեւելքը՝ մէկ ժամ հեռուն, Զերմուկի դաշտը կը հաստատուին, հոն կը շինեն քաղաք մը, որը՝ ինչպէս քիչ առաջ ըսինք սելճուզներ վերջէն կը կոչեն Շէհրճուկ։ Այս վայրէն հարաւ գտնուող ձորը կոչեր են Անի ձոր, որը երկու մասերէ կը բաղկանայ, Վերի Անի Ձոր եւ Վարի Անի Ձոր։ Այս երկու ձորերը ընդարձակ այգեստաններ էին Պոզպայիր թաղեցիներուն։ Այդ ձորերէն կ'անցնէր Ս. Փրկիչի գետակը, միշտ պղտոր եւ կարմիր ջուրով։ 1824-ին Յուլիս 4-ին գրուած «Գանձ» անունով գրչագիր յիշատակարան մը այս մասին կը վկայէ հետեւեալը։ «Յորժամ աւերեցաւ արքայական ոստանն՝ Անի, մաս մի լաւագոյն ի գաղութս անցեալ՝ ի դրունս Տաւրոսի, եկին եւ ի տեղիս բնակութեան իւրեանց զվայրսն ընտրեցին, զոր կոչեցին Անի ձոր»։ Այս մասին մեր նախահայրերն ալ կը պատմէին, կ'աւանդէին բերնէ բերան։ Սակայն իրենց հաստատուած այդ դաշտային վայրէն քաշուած պէտք է ըլլան հիւսիս արեւմուտքը՝ երեք լեռներու միջեւ գտնուող ամուր մէկ վայրը, ուր նախապէս ալ բնակութիւն գտնուած ըլլալու է, քանի որ իր անմիջական մօտերը կը գտնուին հին աւերակներ։ Միայն չենք գիտեր թէ այն հին ատենները ինչպէս կոչուած է։ Զէյթուն անունը վերջէն տրուած պէտք է ըլլայ մեր քաղաքին։ Նախքան Զէյթուն կոչուիլը, ինչպէս ըսինք Յուլիանուպոլիս ըսուած է, ըստ ոմանց, Ֆոնուկի մօտ գտնուող Ուլնիա-Հին Գեղ կոչուող գաղաթականներ եւս Զէյթուն գալով հաստատուած ըլլալուն համար։ Հին գեղ կամ Ուլնիա, Զէյթունէն 6 ժամ հեռու Ֆոնուզի մօտը կը գտնուէր։ Այդ վայրին մօտ կը բնակէին Ապլարիպեան բերդատէրերը։ Զէյթունցիք այդ տեղ կը կոչէին Ալի-պարինք, կամ Թէլ էլ մէլիք (Թագաւորի բլուր)։ Հիմնուած «Գանձ» վկայութեան,

զէթունցիներ ուղղակի Բաղրատունեաց շառաւիղէն սերած կ'ենթադրուին, որովհետեւ «Մաս մի լաւագոյն» կ'որակուին Անի ձոր գաղթող 7 ընտանիք հայերը:

ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ԱՆԿՈՒՄԷՆ ՍԿՍԱՄ՝
ՀԱՅԵՐՈՒ ԶԱՆԳՈՒԱԾԱՅԻՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ
ԴԷՊԻ ՓՈՔՐ ՀԱՅՔ. ՊԱՐՈՅՐ ՀԱՅԿԱԶՆ,
ՄՕՐԻԿ ՀԱՅԿԱԶՆ ԿԱՅՍՐ, ԵՒ ՍՏԵՓԱՆՈՍ ՈՒԼՆԵՑԻ

Նախընթաց էջերով նկատի առած կարգ մը հնապատմագիրներու որոնումներն եւ ուսումնասիրութիւնները, ցուցմունքները, վերջապէս եկած էինք այն եզրակացութեան թէ՝ Արեւմտեան Հայաստանի՝ Փոքր Հայքի եւ Կիլիկիոյ հին բնակիչները՝ նախահայերը եւ հայացած բնիկները իրենց մէջ միախառնած, ձուլած են նաեւ այլազան ուրիշ տարրեր: Այսքանը բաւական կը թուի մեզի ըսելու թէ՝ Ուրեմն հայը շատ հին է այս երկրամասերուն մէջ: Իսկ սկսած հայ Արշակունեաց Հարստութեան օրերէն, Քրիստոնէութեան Հայաստան մուտքին հետ, կրօնական եւ քաղաքական տաղնապներու հետեւանքով, մինչեւ Բաղրատունեաց իշխանութեան անկումը, եւ Կիլիկիոյ մէջ նոր հայ իշխանութեան մը, Ռուբինեանց տիրապետութեան տարիները, հայ բազմութիւններ գաղթեր եկեր են Փոքր Հայքի եւ Կիլիկիոյ լեռնային մասերը: Եւ այդ տեղերը գտած են իրենց ցեղակից եւ նախապէս հոն բնակող հայ բնիկներ: Ըստ Փաւստոսի՝ Արշակունեաց Պապ Թագաւորը յոյներէն պահանջած է Կեսարիան, Ուռհան (Ուրֆա, Ուրայէնի շրջան) եւ ուրիշ տասը քաղաքներ, որոնց մէջ էին շատ հաւանօրէն՝ Ապլատտան, Զէյթունը (իր նախկին եւ մեզի անծանօթ անունով) Մարաշը, Կիւրինը, Մելիտինէն, Սամաստը, Հըռոմկլա-Տէլուքը, Անազարբան, Ֆլավիան (Միո) Ատանան, Տարսուր: Փաւստոս որ գրեթէ ժամանակակից եղած է Պապ Թագաւորի՝ 300-314-ին, անպայման որ իրազեկօրէն գրած եւ յիշած է այդ պարագան: Իսկ Պապ այդ քաղաքները կը պահանջէ Մեծն Տիգրանի Կեսարիոյ տիրելէն շուրջ 450 տարիներ յետոյ, անպայման յիշելով գոյութիւն ունեցող աւանդութիւնները եւ ժողովրդական երգերը, որոնց մէջ խօսուած են Տիգրանի այդ քաղաքներուն տիրած ըլլալուն մասին, եւ պահանջած է զանոնք որպէս ազգային իրաւունք եւ ժառանգութիւն: Դաշտային Կիլիկիան եւ Գոմմագինէն (նախկին Կատաւոնիան) Մեծն Տիգրանի տիրապետութեան տակ եղած աստեղ, վտանգի մէջ էին Հռովմի ասիական նահանգները եւ Կապադովկիան, որ Տիգրանի բանակներէն վեց անգամ կոխկռտուեցան: Ուրեմն Խորենացիին եւ Փաւստոսի ականարկութիւնները բոլորովին անգոյ եւ անհիմն չէին պատմականօրէն: Ուրեմն նաեւ Կապադովկիոյ, ինչպէս Փոքր Հայքի մէջ մեծ եղած է հայոց թիւը այդ թուականներուն: Հայաստանի Ե-

կեղեաց գաւառի (արդի Երզնկայի շրջան) դրացի՝ Եփրատի աղբերակներուն մերձակայ երկիրները, ինչպէս Սատաղ, Կողոնիա, Նիկոպոլիս քաղաքներու շուրջի հողերը հայկական էին եւ ստացան Փոքր Հայք անունը:

Պարոյր Հայկազն կամ Պրոքրիստմն, որ հաւանօրէն ապրած ըլլայ 272-էն 363-ին, եւ որ այնչափ հռչակաւոր պիտի դառնար, Կոկիսոնցի հայ մըն էր: Ուրեմն Կոկիսոնը որ Պարոյր Հայկազնի ծննդավայրն էր, այնտեղ այդ թուականներուն հայր կարելու քանակ եւ որակ կը ներկայացնէր: Իսկ Բիւզանդական հայ կայսրը՝ Մորիկ Հայկազն Արաբիստացի էր, ինչպէս Յովհ. Չմչիկ եւ ուրիշներ Փոքր Հայքէն էին: Արաբիստս կամ հնագոյն ժամանակներուն Հարաբիստոն, Կոկիսոնէն 40 մղոն իսկ Չէյթունէն ոտքով միայն 12 ժամ հեռու բերդաւան մըն է: Յովհաննէս Եփեսացի կը հաւաստէ թէ՝ Մորիկ Արաբիստացի⁸ հայ մըն էր: (Եկեղեցին. պատմութիւն. Բաղմավէպ 1934 էջ 57-58): Մորիկ 582-ին վերաջինած է իր ծննդավայրը՝ Արաբիստսը, որ սակայն երկու տարի յետոյ 584-ին կործանած է երկրաշարժէ: Մորիկ զայն երկրորդ անգամ վերստին կառուցած է: 1925 Յունիսին, Երուսաղէմի Տօմիթիկեանց Ս. Ստեփանոս վանքին արեւմտեան կողմը, պարիսպէն 170 մեթր հեռու դաշտին մէջ, նոր տան մը հիմերը փորուած ժամանակ գտնուեցաւ մոզայիքով զարդարուած յատակ մը յունարէն սա արձանագրութեամբ: «Հոս կը հանգչի Մորիկի քոյրը, Անատոլիա, ծննդեամբ Արաբիստցի, որ բարուք պատերազմ պատերազմելով նուիրուեցաւ Աստուծոյ եւ ամսոյս Հոկտմ. 21-ին ինտիքիոն 3-ին վախճանեցաւ»: Դարձեալ Ս. Յովնան Ոսկերերանի նամակներէն յայտնի է որ 404-ին Կոկիսոնի գաւառը հայկական է: Ս. Յովնան Ոսկերերան Հայրապետը 404-ին 20 Յունիսին, Կ. Պոլսէն կ'աքսորուի Կոկիսոն: 70 օրէն կը հասնի Կոկիսոն, այն ատեն հայեր կը բնակէին այս կողմերը: Ոսկերերան «հայաբնակ» կ'անուանէ այդ վայրերը, 100-ի չափ նամակներ գրած է Կոկիսոնէն: Ողիմպիադայի գրած մէկ նամակին մէջ կը գրէ. «Հոս շատ մարդասէրներ գտայ, հիւանդութիւնս փարատեցաւ. ա՛յ լաւ եմ»: Այս բարեկամներէն գլխաւորն էր Սոպատրոս (արդեօք Չօհրա՛պ) անուն հայ իշխան մը, զոր շատ կը գովէ Հայրապետը: Իրեն սերտ մտերիմ մըն էր նաեւ հայ եկեղեցական մը՝ Դիոսկորոս, որ այդ կողմի հայոց վարդապետը կամ առաջնորդն էր: Դիոսկորոս եւ ուրիշ հայեր հիւրասիրած էին Ոսկերերանը: Հայկական ձմեռ կոչած է Ոսկերերան այդ կողմերու ձմեռը: Երբ 408-ին Իսաւրացիք յարձակած են Կոկիսոնի վրայ, Ոսկերերան շատ դժուարութեամբ ազատած եւ ապաստանած է Արաբիստս: Ոսկերերան 407-ին վախճանած

է հիւսիսային Կոմուռա, Եւդոկիայէն 7-8 մղոն հեռու: Ստեփաննոս Ուլնեցի, փոքր հայոց Կոկիսոն քաղաքը կը բնակէր, 25 տարեկան եռանդուն հայ երիտասարդ մըն էր: Յուլիանոս Ուրացողի ատեն, երբ հալածանքը կը սկսի քրիստոնեաներուն դէմ, իր ծնողքը, ազգականները հաւաքուելով մերձակայ լեռները կ'ապաստանին: Հայրը կը կոչուէր Ղազարոս. այս տեղ կը վախճանի: Մնացեալներուն թաքստոցը հովիւի մը միջոցով կը յայտնուի Ասոնք կը ձերբակալուին եւ կը տարուին Կանչի (Չուգուրհիսար = Չուխրասար), Ֆոնուզի մօտ, Սոկրատ դատաւորին առջեւ կը հանուին: Սոկրատ դատաւորը սպառնալիքով եւ տանջանքներով կը փորձէ անոնց հաստատամտութիւնը Ամէնքն այն անդրդուելի կը մնան իրենց հաւատքին վրայ եւ կը նահատակուին: Նախ Բաղարատ պատանին տանջանքներու տակ կը մեռնի, յետոյ Ստեփանոսի մայրը՝ Մարիամ իր եօթը կոյս աղջիկներով առանձին կը գլխատուին: Ինչպէս նաեւ Գրիգորիս Կոկիսոնցի, Սմբատ եւ Յովհաննէս իր գաւակներովը, յետոյ Սիմէոն Կեսարացի, Ջեպասիոն, Բասիլիոս, ուրիշ ծերունի մը եւ իր չորս զաւակներով եւ ուրիշ ութը անձեր, որոնց մէջ կային եւ կիներ: Ամենէն վերջը՝ Ստեփանոս կը նահատակուի 382-ին, Օգոստոս 18-ին, Կանչիի մէջ: Մինչեւ վերջերս հայեր ուխտի կ'երթային Կանչի Սուրբ Ստեփանոսի դերեզմանին վրայ յիշուած մատուռը (զէյթունցիներ եւ ֆոնուզցիներ «Արթըր փէանիւս»⁹ կը կոչէին այդ ուխտատեղին): Հայ առաքելական եկեղեցին Ստեփաննոս Ուլնեցիի համար յատուկ տօնական օր մը ունի, նշանակուած օրացոյցներու մէջ: Այդ օրը Ֆոնուզցիներ այնտեղ պատարագ կը կատարէին (Օրմանեան, Ազգապատում էջ 187-188, Յայրմաւուրք Կ. Պոլիս տպուած 1730 էջ եւ Աւգերեան «Լիակատար վարք եւ վկայութիւնք սրբոց» 1810-15, Հայր Յ. Տաշեան. «Մայր ցուցակ» էջ 28, Հ. Ղ. Ալիշան «Միսուան» էջ 1842):

Այս վկայագրութիւնները ուրեմն արդէն կը բաւեն հաստատելու թէ՝ հայաբնակ էին այդ վայրերը եւ Չէյթուն, Ուլնիա: Մեծ Հայքի հայութեան զանգուածօրէն գաղթը, տեղափոխութիւնը շեշտուեցաւ մասնաւորապէս Ե. դարուն, յատկապէս 451-էն յետոյ, երբ Պարսիկները քրիստոնեայ Հայաստանի դէմ կիրարկել սկսան աններող քաղաքականութիւն մը: Արշակունեաց պետութեան ջնջուելու, Եփրատէն դէպի արեւմուտք մինչեւ Ալիսի եւ Ջահանի հովիտները լեցուն էին խիտ բնակիչներով: Նոյնիսկ Գ. դարուն վերջերը Սեբաստիա եւ Սատաղ, ինչպէս նաեւ Մելիտինէ, իր անմիջական շրջակայքով Հայաստանի մաս համարուած էին: Այնպէս որ, բիւզանդական պետութեան մէջ, բնակչութեան կէսէն աւելին կը կազմէին հայերը: Հակահայ, նեղմիտ եւ ազգամոլ յոյն մը կը յիշէ Պ. Ալ-

պոյաճեան 1875-ին այսպէս գրած է. «800-ական թուականներուն հայերը յոյն կայսրութեան շփացած տղաքը դարձած էին եւ գրաւած էին Կապադովկիան, հոն հիմնած էին գինուորական գաղութներ, եւ նուաստացնելու համար ազգային տարրը, իրենց անունը պարտադրած էին բոլոր նահանգներուն: Փոքր Հայքի՝ Բ. Հայքի կեդրոնն էր Մելիտինէն, իսկ գլխաւոր քաղաքներն էին՝ Արկա¹⁰, Կոկիսոն, (Կոկսոն), Կոմանա (Շարտէրէ), Արաբիսոս (Եարբուս), Արիարաթիա (Ազիզիէ), Թանիր:

Փոքր Հայքի եւ Կիլիկիոյ հնագոյն հայութեան այս վայրերուն ինչպէս նաեւ վերջէն այնտեղ եկած հայերու մասին այս բաւական ընդհանուր եւ ընդարձակ պրպտումներէն եւ ուսումնասիրութենէն յետոյ այժմ յետագայ դրութիւններով պիտի անցնինք ուղղակի Զէյթունի պատմութեան, օգտուելով մեր հին հայրենակից եւ հին սերունդին պատկանած եւ շատոնց հանգուցեալ Մնացական Սէմէրճեանի «Զէյթունի Անցեալէն եւ Ներկայէն» հատորէն (յոյս տեսած 1900-ին Վիեննա), Պրն. Նազարէթ Զէյթունցեանի «Զէյթունի վերջին դէպքերը» գիրքէն, Վարդապար Գարանֆիլեանի «Զէյթունի նահանջը» գործէն, հայրենակից եւ Բարիզ վերջերս մեռած Տէօվլէթ Գէորգեանի «Զէյթուն» հատորներէն եւ Լեւոն Նորաշխարհեանի «Մըռալ օրեր»էն եւ ուրիշ աղբիւրներէ:

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

ԶԷՅԹՈՒՆԻ ԴԻՐՔԸ ԵՒ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Զէյթուն Միջերկրական ծովու հիւսիս արեւելեան ուղղութեամբ, Ալեքսանտրէթէն կամ «Հայոց ծոց»-էն, ջրիի ընթացքով 46 ժամ հեռաւորութեամբ գիւղաքաղաք մըն էր: Կ'իյնայ երբեմնի Փոքր Հայքի եւ վերջէն՝ լեռնային Կիլիկիոյ սահմանին վրայ: Ծովէն 3500 ոտք բարձրութիւն ունի ան: Տասը ժամ հեռու է Մարաշէն դէպի հիւսիս արեւմուտք իսկ Միսէն 38 ժամ դէպի հիւսիս արեւելք կը գտնուի: Հայէպի կուսակալութեան ենթակայ Մարաշի գաւառին, համանուն գաւառակին կեդրոն անունն է Զէյթուն: 1915-ին Զէյթունի տեղահանութենէն յետոյ, թուրքերը զայն կոչեցին Միւլէյմանլը, իսկ այժմ Օսմանիէ անունը տուեր է անոր թուրք կառավարութիւնը: Զէյթունի դիրքը լեռնոտ է, Անդիտաւրոսի մէկ ճիւղին զառթափին շինուած է ան: Իր անմիջական սահմաններն են՝ հիւսիսէն Չորրզ, Քէրծէր, Այրած, Պէրիտ, Սաղտալը, Աղաճառը եւ Եէտի գարտաշ լեռները, արեւելքը՝ Պէրզինկայ, Մափըլը սարերը, հարաւը այգիստաններուն հովիտներէն, դաշտերէն բաւական հարաւ Շէնպէք լեռը եւ Կիւրէտինի բարձրութեանը (հաւանաբար Կոստուն) նոյնանուն բերդով, իսկ արեւմուտքէն Սօլադտէրէ, Կանկոտոս եւ Ղուզախ լեռները: Այս լեռներուն բարձրագոյնն է Պէրիտ, որ 9800 ոտք բարձրութիւն ունի ծովու մակերեսէն: Իսկ Չորրզ լեռը այդպէս կոչուած է չոր եւ լեռկ ապառաժ մը ըլլալուն, որ կը նշանակէ նաեւ ջրիկ (ջրորկ), իր վրայ ունեցած փոքր մէկ աղբերակին համար: Կոչած են նաեւ զէյթունցիք իրած=այրած, որովհետեւ բուսականութենէ գուրկ է: Ասոր վերջաւորութիւնը տեղական բարբառով կոչուած է Քէրծէր (քարծալ):

Այս լեռները թէպէտեւ բնական պարիսպ մը ձեւացուցած են Զէյթունի շուրջը եւ անառիկ դիրքի մը հանգամանքը տուած են անոր, սակայն հարաւէն բաց ըլլալով, թշնամին այն կողմէն եկեր է Զէյթունի վրայ: Հաճոյն իր դիրքով շատ աւելի անառիկ էր քան Զէյթունը:

ԶԷՅԹՈՒՆ ԳԱՆԱՌԱԿԻՆ ՍԱՀՄԱՆԸ

Իսկ գաւառակին սահմաններն են. հիւսիսէն Զափտոր, իրիճէկ կամ իսէնտէրէ Պօղազը ըսուած թուրք գիւղը, որ Զէյթունէն 10 ժամ հեռու է, արեւելքէն՝ Մալաթիա թրքաբնակ գիւղակը՝ 9 ժամ

հեռու, հարաւէն՝ Արեգինի Եկանեանք Հայաբնակ գիւղը՝ նոյնպէս 9
ժամ հեռաւորութեամբ, իսկ արեւմուտքէն՝ Կանչի կամ Զուխրասար
թուրք գիւղը՝ 10 ժամ հեռու:

ԼԵՌՆԵՐԸ

Բացի սահմանագիծ վերոյիշեալ լեռներէն, որոնց մէջ ամենէն
բարձրը Պէրիտի լեռն էր, մնայուն ձիւնով, Զէյթունի շրջակայքերը
կը գտնուին նաեւ նուազ բարձր լեռներ եւ բլուրներ, որոնք ճիւ-
ղերն են նախորդներուն: Ասոնք են Աւազ Կէտեկի, Չաթու Բոր,
Հուպօք, Սախոր էգէ (Ջաքարի այգի), Անկըզօկ (Ընկուզիկ), Քէշ
Տաղը, Ղանտըյ, Աղայը, Կարմըր Լեռ, Բարոկ Սող, սրածայր լեռ մը,
որուն գագաթէն ճամբայ մը կ'երթայ դէպի Մարաշ: Դրախտիկ,
Ֆունուզի Ս. Կարապետ վանքին արեւմուտքը կը գտնուի 2 ժամ հե-
ռաւորութիւնով: Իսկապէս որ իրական փոքր դրախտ մըն էր իր
դալարազեղ բոյսերով, քաղցրաբոյր ծաղիկներով, զորս կը վայելէին
տեղացիք ամառը, իրենց հօտերով եւ արշաւանքներով բարձրանալով
անոր գագաթը: Աղայը, Ղափսէրդ սրագագաթ լեռ մը, ուրկէ ճամ-
բայ մը կ'անցնի դէպի Մարաշ: Սաղիր, Օգ Գայառը եւ Գափու Ղա-
յա: Այս լեռներուն մէջ կան շատ մը քարայրներ եւ իրենց փէշե-
րուն կը տարածուին գեղեցիկ արօտատեղիներ, ինչպէս՝ Շընտըզ,
Խընըխէօզ, էլլէզ Օղլու, Գանկըյ-Ալաղը, Գօրգմազ, Ալաջայը, Չափտոր
եւ Ծէօլք: Ասոնց մօտերը կը գտնուի Սիւլիւքլի Կէօլ (Տգրուկի լի-
ճը): Կարժէ այստեղ քիչ մը աւելի ծանրանալ Պէրիտի մասին: Ա-
նիկա Զէյթունի հիւսիսը՝ 7 ժամ հեռու է Զէյթունէն, ոմանք կը
կարծեն թէ իր անունը առած է արաբերէն պէրտ-ցուրտ բառէն, ո-
րովհետեւ մշտնջենական ձիւնով ծածկուած է անոր գագաթը, որ
Ապլաստաչի դաշտէն կ'երեւայ: Իսկ ոմանք ալ Պէրիտ անունը կը
վերագրեն Պերիթոս չաստուծոյն: Նշանաւոր են իր երկաթահանքերը,
որոնք բարձրագոյն կատարէն 500 ոտք ցած են: Պէրիտի երկաթը
շատ կարծր չէ, դիւրաւ կարելի է անով շինել ամէն տեսակ եր-
կաթէ գործիքներ, շէնքեր, երկրագործի կազմածներ: Զէյթունի եր-
կաթը կ'արտածուի մինչեւ Հալէպ, Սեբաստիա եւ այլ վայրեր: Պէ-
րիտի եւ Եէտի Գարտաչի միջեւ կայ Զիմէն կոչուած ընդարձակ եւ
ջրաբեր արօտավայրը, ուր Հալէպէն, Պաղատաւէն եւ այլ վայրերէ
ոչխարի հօտեր կը բերէին մեծ վաճառականներ զէյթունցի աղաներու
գործակցութեամբ եւ ամառը արածելով, պարարտացնելով վանոնք
աշուներ կը տանէին Սուրիա, Միջագետ, Ատանա եւ կը ծախէին: Իսկ
Եէտի Գարտաչի արօտաշատ կողերէն առատ ճարակ կը գտնէին գէյ-
թունցիներուն հօտերը, արջառները: Իր գագաթի ուղղաձիգ կատարին

եօթը ակեր կը գտնուին, ատկէ ստացած է իր անունը: Այս լեռան
եւ Պէրիտի միջեւ կայ Այրան Փունար ըսուած փոքրահոս վտակը:
Եէտի Գարտաչի բերնով, Փոքր Ասիոյ բարձր լեռներուն հետ ու-
նեցած իր հաւասարութեան համար հետեւեալ զրոյցը կայ: Պէրիտ՝
պաշտ, էրճեաս դարտաշտ, Պեն պուղա եօլտաշտ, Սաղ տալը՝ գու-
շաղը, Անկըզօկ տիլիմ, Ախրրտաղ՝ թօփուզում:

1907-ին, Կիլիկիցին՝ Պրն. Գ. Գալուստեան, ամառը շարաթ մը
անցուցած է Պէրիտի եւ Եէտի Գարտաչի լանջերուն վրայ եւ այդ
առթիւ պտտեր է երկաթահանքը, զոր կը նկարագրէ հետեւեալ
ձեւով: Հողին մէջ փորուած սանդուղներէ վար իջնելով, երկու ըն-
կերներով, նախ մտանք ստորերկրեայ սրահածեւ ընդարձակ տեղ մը,
բարձր եւ մուկ: Քանի մը ուղղութեամբ կ'երթային փորուած գետ-
նուղիներ, երբեմն ծռելով անցնելու չափ ցած, երբեմն սրահի մը
չափ բարձր եւ ընդարձակ: Ստորերկրեայ ջրահոսանքի ձայներ ահա-
ւոր տպաւորութիւն մը կ'ընէին մեր վրայ, այդ մուկ ու խոնաւ
գետնափորներուն մէջ: Ահա այսպիսի խորութիւններէ, անակնկալ
փլուզումներու վտանգին տակ, զէյթունցիներ դուրս կը հանէին՝
երկաթի հանածոն, եւ ջորիներով հեռու անտառ փոխադրելով, փայ-
տի կրակի տաքութեամբ կը հալեցնէին ու հաղիւ թէ նախնական
միջոցներով կը պատրաստէին իրենց այնքան օգտակար երկաթը:
Պէրիտի կատարէն իրապէս հիւսիսի է տեսարանը: Հիւսիսէն Ալ-
պիստանի արգաւանդ դաշտը, որուն մէջէն ոլորապտոյտ կը հոսի
Ճահանը (Ջահան) գետը, արեւմուտքէն՝ Տաւրոսի լեռնաշղթան ու
աւելի հեռու Արգէոսը (Էրճիաս) պատկառելի կոնաձեւ ցցուած հո-
րիզոնին վրայ, Կապադովկիոյ դաշտին մէջ, արեւելքէն եւ հարաւէն՝
բարձր եւ ցած լեռներ եւ լեռնաշղթաներ: Ահա այս լեռներու հը-
մաքէն հրապուրուելով զէյթունցի աշուղ մը երգած է հետեւեալ
տաղը, որ դժբախտաբար թուրքերէն է, սակայն թարգմանած է
զայն Կիլիկիցին նաեւ հայերէնի՝ նոյն չափով:—

Ամէն մէկ ակեղ ջուրեր կը բոխին
Սիրուն եղնիկներն շրջին քու չորս դին,
Պայքարանն ու սմբուլը ինչպէս կը բուրբն
Ինչ հեշտալի է գլուխդ Պէրիտ:

Ուր կախաներ կ'երգեն սարերէդ
Անծանօթ եմ տարիներէդ, դարերէդ
Առատ երկաթ կը հանեն քու քարերէդ
Գործըդ ամբողջ շահ է Պէրիտ:

Բու առջեւդ է Եօթնօրս սար
Համբերէդ դուրս կը հանեն երկաթափար
Զիւնով պատած է բու կատար
Բու մամնդ էրնեասն է Պէրիտ:

Համբերուդ մէջ մտնողներուն,
Փափաքներուն հասնողներուն
Մըրիկդ ու բուք, անձրեւդ ու ձիւն
Ինչ փորձամբոս է ձմեռդդ, Պէրիտ:

Աշուղ ըրեր է զիս բու մեծ անուն,
Բու տարիքդ անծանօթ է ամենուն
Դուն կայիր Ադամի, Նոյի օրերուն,
Զի հասկցուիր քմաւ բու տարիքդ, Պէրիտ:

Այս տողերով անմահացած է Պէրիտ լեռը, որուն վրայ կը բուսնին Պայթարան (փարէ եմալան), Սարը սիւմպիւլ, Նէրկիդ եւ այլ բազմատեսակ բուրբուխաւէտ ծաղիկներ եւ Մուշկ (գատըն կէօպէկի) կոչուած ծաղիկը. շատ հաճելի բոյրով փորձուած է որ չորնալէ յետոյ նոյնիսկ քսան տարի մուշկը կը պահէ իր հոտը: Այդ ծաղիկին չորացածը երբեմն ընծայ կը դրկուէր Երուսաղէմի Պատրիարքին եւ Հայէպի կուսակալին:

ԳԵՏԵՐԸ

Զէյթունի գլխաւոր գետակն է Շուղուրը: Պէրիտ լեռան փէշերէն հոսող ջուրերէն եւ ակերէն կը կազմուի, կ'իջնէ դէպի հարաւ, կու գայ կ'անցնի Զէյթունի արեւմուտքի եզերքէն, իրեն խառնուած է Սեւ Աղբիւրը: Շուղրի վրայ, Զէյթունի հիւսիսային սահմանին կայ Կարսի¹¹ կամուրջը, իսկ հարաւ արեւմուտքը Շուղրի կամ Ղարղալարի կամուրջը որ թէպէտեւ նեղ է, սակայն 35 մետր բարձրութիւն ունի գետէն: Այս կամուրջը Պայճեանք չինել տուած են: Գարնան ձիւնհալքին եւ անձրեւներուն կը յորդի Շուղրը, եւ առանց կամուրջի կամ ինչպէս կ'ըսեն զէյթունցիք, առանց կանտարայի անկարելի է անցնիլ անկէ: Սաղ Տալը լեռան ակերէն կը կազմուի՝ Զոր կոչուած վտակը, Պէրգինկա սարին ստորոտի ձորը կ'իջնէ, կ'անցնի Զէյթունի արեւելքը, յետոյ կը թեքի հարաւ արեւմուտք: Այս վտակի վրայ են Մագէ կանտարիկը, կամ կոտորածի կամուրջը, Ս. Պօղոս-Պետրոսի եւ Պաղ Աղբիւրի կամուրջները: Ի վերջոյ Զէյթունի հարաւը կը գծէ ու կու գայ կը խառնուի Շուղրի Այսպիսով

Զէյթուն կը ստանայ տեսակ մը թերակղզիի ձեւ: Ուրիշ գետակ մըն է Անի Զորի գրեթէ միշտ աղտոտ ջուրի ընթացքով, Զէյթունէն մէկ ու կէս ժամ հեռու է ան: Կը կազմուի Ս. Փրկիչի աղբիւրէն, երկու ջերմուկներու ջուրերէն եւ ուրիշ քանի մը ակերէ: Վտակ մըն է նաեւ Անտոյալը, Զէյթունէն 2 ժամ հեռու: Զէյթունէն ութը ժամ հեռու է Թէքիրի գետակը, իսկ վեց ժամ հարաւն է Սուլաթը վտակը: Ութ վայրկեան դէպի արեւմուտքէն կու գայ Տալախըն ձոր առուն: Այս բոլորը կը միանան Շուղրի եւ Ֆունուզի գետակին հետ, կը կազմեն կուռխտին գետը ու վերջապէս կը միանան Զահանի, որ հինգ ժամ հեռու, հարաւ արեւելքէն կ'ընթանայ դէպի Մարաշ:

ԱՂԲԻՒՐՆԵՐ

Իր ջուրի պաղուցեամբը եւ առատութեամբը նշանաւոր է Պէղ Աղբըրը (Պաղ Աղբիւրը): Մարմար քարէ չինուած է անոր շէնքը, ունի երեք քարէ գուռեր, ուր երեք հաւասար բաժանմունքներէն խոշոր քարէ աշէրէ կը հոսի փոփոտ ջուրը: Ամրան իսկ մարդ չի կրնար անոր մէջ երկար առնն ձեռքը թողուլ: Մարաշի Գաւապոյաճի Յակոբ անուն հայը չինած է աղբիւրին քարաշէն կառուցուածքը: Մէջտեղի աշէրն վերը, կամարի տակ գրուած, փորագրուած է այդ մարդուն անունը: Աղբիւրի շէնքին վերը, երկու անկիւններուն կողմը ճակատին քանդակուած էին մարմարի վրայ երկու առիւծներ, զոր թուրքերը քանդեցին: Վերջէն խմացած ենք որ ամբողջ շէնքն ալ փլցուցած են:

Փայթենց Աղբիւրը, Ս. Աստուածածնի վանքին մօտ, մարտեցուցիչ եւ շատ պաղ ջուրով: Նահատակ Աղբիւր Կարսի կամուրջին մօտը: Այստեղ ժամանակին Յակոբ անուն մարաշցի կօճակար մը սպաննուած է իպիշ անունով թուրքէ մը, որ զէյթունցիներուն վրէժխնդրութենէն վախնալով Մարաշ փախած է: Այս պատճառով Նահատակ Աղբիւր կոչուած է այդ աղբիւրը, որ շատ պաղ ջուր մը ունի: Կան նաեւ Սուս Աղբըր (Սօսիի Աղբիւր) Եօթնօրայալ Աղբիւր, որ համանուն լեռնէն կը բղխի եւ եօթը ակեր ունի: Այրան Փունարը, Զէյթունէն եօթը ժամ հեռու է, Պէրիտի ստորոտէն կը բղխի, ջուրը թանի պէս սպիտակ է եւ փոփոքն, այդ պատճառով թուրքերը կոչեցին Այրան փունարը: Այս փունար, որուն զէյթունցիք կ'ըսէին Խէաս Աղբըր, շատ պաղ եւ թեթեւ ջուր մը ունի: Մէջի գոյնզգոյն, խառնուտիկ խմելուն համար ըսուած է՝ Խէաս աղբըր: Այլ աղբուրը, կամ Ակը, Զէյթունի արեւմուտքը, կէս ժամ հեռու է, Եաղուպեաններու հողերուն մէջ, կը գտնուի: Այստեղ զէյթունցիք կու գան զուարճանալու ամառը, աշուղներու յաճախավայր է այս ակը:

ԸՍՏ ԱՒԱՆԴՈՒԹԵԱՆ ՁԵՅԹՈՒՆԻ ՀԻՄՆԱԴԻՐՆԵՐԸ

Համաձայն Մնացական Մեմորանդանի պատմածին, Ձեյթունի բնիկ տեղացիները յոյներ եղած են. սկիզբէն եօթը¹² հայ ընտանիքներ եկած հաստատուած են այնտեղ: Այդ հայերը Ս. Լուսաւորիչ անուն մատուռ մը կառուցեցին, Քրիստոսի առաքեալներէն նախկին Լուսաւորիչ Բարթողիմէոսի անունին նուիրուած: Վերջէն այդ մատուռին վրայ կը շինեն Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին: Եւ կը կարծուի թէ այս եօթը ընտանիք հայերը եկած են Նդեպիսայէն: Յետոյ կու գան, անոնց վրայ կ'աւելնան տակաւ, մեծաւ մասամբ ուլնեցիներ եւ Անիէն գաղթած եւ Ձեյթունի հարաւ արեւելքը, դաշտը հաստատուած հայեր, որոնց վայրը սելճուկները կոչած պիտի ըլլան Շէհերճուկ¹³ (Շէհերճիկ): Ասոնք որպէս թէ չկրնալով դիմադրել բռնակալներուն ճնշումներուն եւ հալածանքներուն կը թողուն Շէհերճուկը եւ կու գան նոյնպէս Ձեյթուն: Ձեյթունին ըսուած է նաեւ Ուլնիա, ուլնեցի գաղթականներուն հոն հաստատուած ըլլալուն համար: Մինչդեռ Ուլնիան կը գտնուի Ֆոնուզի կողմը, եւ կը կոչուի Հին գեղ եւ Յ ժամ հեռու է Ձեյթունէն: Հոն կը մնան միայն Ապղարեպեան բերդատէրերը, որոնք վերջը կոչուած են Այիպարենք, եւ վերջէն գաղթած են Թէլ էլ մէլիք (թագաւորի բլուր) գիւղը:

Բազրատունեաց անկումէն, այն է 1045-էն յետոյ Անիի գաղթականներէն մաս մըն ալ Ռուբէն իշխանի առաջնորդութեամբ կու գայ, կ'ապաստանի Հարգան, արդի Հաճըն կամ հին Պաթիմոն քաղաքը, ասոնցմէ կարեւոր մաս մը եւս կու գայ Ձեյթուն ու բնակչութեան թիւը կը հասնի մօտաւորապէս 700 ընտանիքի: Իրենց այս թուական առաւելութիւնը համարձակութիւն կու տայ որ իրենց մէջէն վանեն յոյները: Ձեյթունի ազատ ապրելու ձգտումը կը սկսի այդ թուականին:

Ձեյթունի անուան եւ հիմնադիրներու մասին մէկէ աւելի աւանդութիւններ կան, որոնք սակայն բոլորն ալ իրարմէ շատ մեծ եւ հիմնական տարբերութիւններ չունին: Եւ մենք ատոնց բոլորն ալ կ'առնենք մեր այս երկասիրութեան մէջ, սեփականութիւնը դարձնելու համար զանոնք մեր ընթերցողներուն, որոնք կրնան անոնցմէ ամենէն հաւանական ու տրամաբանականը գատորոշել:

Թէ ինչու Ձեյթուն կը կոչուի եւ որո՞նք են անոր հիմնադիրները—

• Ձեյթուն հիմնուած է ԺԱ դարուն, Սէթ անուն բազրատունի իշխանի մը կողմէ: Անիի անկումէն, Բազրատունեաց իշխանութեան կործանումէն յետոյ՝ Սէթ իրեններով եկած է Տաւրոսեան լեռ-

ներու չրջանը եւ բնակութիւն հաստատած է Անի ձորի հովիտը:

• ԺԱ դարուն, Ռուբինեանց չրջանին, իշխան Սուրէն՝ Սէթ իշխանին թոռը, իր բնակութեան տեղը կը կոչէ Սէթ-տուն: Այս Սուրէն իշխան Բազրատունին, հետեւելով Թորոս եւ Մլեհ իշխաններուն, կը ջարդէ Շէհերճուկի յոյն բնակչութիւնը եւ իր բնակչութիւնը կը հաստատէ ներկայիս Պէրզինկա եւ Սօլուք Տէրէ կոչուած լեռներուն միջեւ, Շուղուր եւ Ջոր գետակներու հոսանքներուն միացման կէտին քիչ մը հիւսիսը, ուր արդէն բնական բերդի մը դիրքը կը պարզուի հիւսիսէն, արեւմուտքէն եւ հարաւէն: Այս բերդը կրնայ անկէ առաջ յունական եղած ըլլալ, Բասիլոս բերդ անունով: Բայց վերջէն հայեր՝ Սուրէնեանք կամ Սէթեանք դրաւած կրնան ըլլալ յոյն Բասիլոս իշխաններէն: Բայց բերդին անունը կը մնայ Բասիլոսեանց բերդը, եւ վերջը հոն հաստատուած Սուրէնեանք, Սէթեանք, մասամբ կոչուած են նաեւ Բասիլոսեանք: Որովհետեւ Բասիլոս հայկական անունն է, մենք ունեցած ենք Վասիլ, ինչպէս Գող վասիլ եւ ուրիշ վասիլներ, բայց բնաւ Բասիլոս:

• Իսկ ըստ Մնացական Մեմորանդանի «Ձեյթունի անցեալէն եւ ներկայէն» պատմութեան՝ «Ձեյթունի Ս. Սարգիս եկեղեցիին մէջ գտնուած է Գանձ անուն ձեռագիր պատմութիւն մը, որ կը կրէ Քրիստոսի 1624 թուականը, հետեւեալ կերպով կը բացատրէ Ձեյթունի անուան, այդ անունով կոչուած ըլլալու պարագան»: Երբ գաղթականներ յաջորդաբար կու գան ու կ'աւելնան, հայ ժողովուրդի թիւը կ'աճի, դատաւոր-կառավարիչի մը պէտքը կը դառնայ զգալի: Արժանաւոր անձնաւորութիւն մը ընտրելու համար ժողով կը գումարեն եւ միաձայն հաւանութեամբ իրենց պետ կը նշանակեն Սէթ անուն բարձրահասակ հսկայ անձ մը, որ Ձեյթունի հին եօթը տան սերունդներէն մէկուն կը պատկանէր: Ասիկա արդարութեամբ եւ անաչառութեամբ կը կառավարէ ժողովուրդը եւ մեծ անուն եւ համբաւ կը ստանայ: Այնպէս որ չրջակայ հայ գիւղերու ժողովուրդը եւ նոյնիսկ օտարազգիներ կը դիմեն իրեն՝ փոխանակ Մարաշի Պէյին երթալու: Իրար կը յորդորէին թէ Սէթին գացէք, Սէթին գացէք: Այս յորդորումը շարունակ կը կրկնուի եւ այսպէս երկրին անունը կը մնայ Սէթին, ինչ որ յետոյ՝ 1545-ին, օտարներու, թուրքերու կողմէ կը կոչուի Ձէթին կամ Ձէթին, յետոյ՝ Ձէթուն: 1545-ին է որ Սէթինը փոխուած է Ձեյթինի:

Արեգինցի, Աւագկալցի եւ չրջականերու հայերը իրարու կ'ըսէին «Սէթին գացէք» եւ ոչ թէ թուրքերը, որոնք պէտք է ըսէին Սէթէ կիտին: Ֆոնուզի հայերը Ջըթուն կ'ըսեն, իսկ թուրքերը Ձէթին ըսած են եւ ոչ թէ Ձեյթուն, ինչ որ փաստ է թէ ձիթենիի հետ ոչ մէկ առնչութիւն ունի:

Մեծուգեան արշաւանքին Սուրէնի իշխանութիւնը կը տկարանայ եւ Պոզ Պայիր Թաղէն Մարկարոսեան Փանոս (Ղըրճա) կը դառնայ ազդեցիկ: Մարկարոսեան Ղըրճա կը բնաջնջէ Զէյթունի արեւմտեան եւ արեւելեան կողմի թուրքերը.... :

• Ուրիշ կարծիքի մը համաձայն, զէյթունցիք իրենց տնկած այգիներուն հետ մեծ քանակութեամբ ձիթենի (որուն զէյթունցին պաղենի կ'ըսէ) տնկած են եղբր, եւ 1870-ին Էօմէր Փաշան Զէյթունի վրայ կու գայ եւ չկրնալով յաղթել անոր, բարկութիւնը կը թափէ ձիթենիներուն վրայ, եւ իր զօրքերուն կը հրամայէ որ բոլոր ձիթենիները ջարդեն:

Այս ենթադրութիւնը բնաւ խելքի մօտ չթուիր, նախ՝ որովհետեւ այգիներն ալ ջարդած պէտք է ըլլան, որովհետեւ զէյթունցիին ապրուստին հիմը իր այգիներն են, իսկ եթէ այգիներն ալ ջարդեցին, մենք գիտենք՝ մեր օրերուն Զէյթունի չրջակայքը եւ մինչեւ հեռուները լեցուն էին այգիներով, մինչդեռ ձիթենի գրեթէ չկար, կային քանի մը անպտուղ, վայրի ձիթենիներ, որոնք կը ծառայէին Մաղկազարդի օրուան: Եթէ այգիներ վերջէն տնկեցին կրնային նաեւ ձիթենի եւս տնկել: Զէյթունցիին գրեթէ անծանօթ ծառ մըն է ձիթենին եւ անոր պտուղը: Ղարդալարի կողմը, Շուղրի կամուրջը անցնելով դէպի Ակը կամ Քէրէրտինէր երկարած ճամբուն հարաւը մէկ երկու փոքրիկ պտղենի թուփ կար, մէյ մը Հարոմ աղբար վայրի ձիթենի մը գիտէի, իսկ մէկ երկու վայրի ձիթենիներ կային Չանաղայը ըստած վայրը, Ճապկի Չայիր կոչուած պարտէզը եւ թերեւս ուրիշ քանի մը վայրի թուփեր ուրիշ կողմերը, բայց այգիներուն եզերքը կամ մէջը ձիթենի չկար: Կային ձէհրէ (Ալաժարի, դեղին ներկի հունտի թուփ մըն է) սերկեւիկ ծառեր, թզենի եւ վայրի փշատի, ինչպէս նաեւ կաղնի եւ շոճի, մայրի, եղեւնի ու ձրդի, գիհի անտառային ծառեր:

Այս ամենուն մէջ աւելի տրամաբանական է Սէմէրճեանի յիշած «Գանձ» ձեռագրի մէջ եղած արձանագրութիւնը:

Արդ ձեռագրի վերջաւորութեան կայ նաեւ հետեւեալ յիշատակարանը: «1624 Յուլիս 4, գրեցաւ Գանձ գրքոյկս, ընդ հովանեաւ սրբոյն Սարգսի զօրավարին եւ որդւոյ նորա Մարտիրոսին եւ չորեքտասան զինուորացն: Յիշեցէք միտ չայր Մեղային, Տրուպ քահանաս Միծաղածեան, Ոսկան Երէց, առաջնորդութեան Տէր Մկրտիչ Արքեպիսկոպոսի: Իսկ ինչպէս նախորդ էջերուն մէջ յիշեցինք թէ 1727-ին Ուլնեցի Կարապետ Կաթողիկոսը «Քաղաքագիւղ» կոչած է Զէյթունը: Իսկ բոլոր զէյթունցիք Գեղ կ'ըսէին Զէյթունի եւ իրենք ալ կը կոչուէին Գեղացի: Աւելի ուրիշներ, դրսեցիներ եւ թուրքեր կոչած

են Զէյթին կամ Զէյթուն եւ վերջին պատմութիւններուն ալ արպէս, այսինքն Զեթուն կամ Զէյթուն կոչուած է: Զ. Ս. Էփրիկեան, Զ. Ղ. Ալիշան, Պատրիարք Օրմանեան եւ հաւանաբար ուրիշներ եւս, բնաշխարհիկ բառարանի, Սիսուանի եւ Ազգապատումի մէջ մօտաւորապէս հետեւեալը կը գրեն Զէյթունի մասին. «Զահան, գետի լեռնահովիտին մէջ ամենէն կարեւոր վայրն է Զէյթուն, որ թէեւ այդ անունով չի յիշուիր Կիլիկիոյ պատմիչներէն, բայց հաւանական է որ Ֆոնուզի եւ Արեգինի հետ միեւնոյն վիճակը կը կազմէ¹⁴: 1197-ին, Լեւոն Մեծագործի թագադրութեան ի շարս 14 եպիսկոպոսներուն կը գտնուէին նաեւ Գրիգոր Կապանի, Աստուածատուր Մեծ-Քարի, Ստեփանոս Բերդուաի, Մխիթար Ընկուզատի եպիսկոպոսները, ինչպէս նաեւ Գէորգ Եպս-Անդրէասեանց, եւ ժողով եւ բազմութիւն յորժ. Օրմանեան կը յիշէ, ինչպէս նաեւ ուրիշներ Գրմաղբիւր¹⁵ անուն վանքի եպիսկոպոսը, Զէյթուն ունէր Գրմաղբիւր անուն վայր մը իր հիւսիս արեւմտեան սահմանին վրայ: Չենք հասկնար թէ ինչ կապ կայ այս երկու Գրմաղբիւրներու միջեւ. մանաւանդ որ անոնցմէ մէկը կամ միւսը եպիսկոպոս ունեցած է, որ ներկայ եղած է հանդիսութեանց եւ ժողովներու: Արդեօք Գերմ-Չերմ իմաստով ըստած է, եւ տաք աղբիւր կը նշանակէ: Մեզի յստակ չէ: Իսկ 1179-ին Կոկիսոնի Գրիգորիս Եպս. ներկայ կ'ըլլայ Հոռմկլայի ժողովին: 1317-էն քիչ յետոյ Եւրոպա կը զրկուի հայկական դատը պաշտպանելու համար Կապանի Յակոբ Եպիսկոպոսը եւ իր թարգմանը Պարոն Գրիգոր: Ուրեմն նաեւ այս վերջին մէկ երկու ծանօթութիւնները կը հաստատեն կարծեմ՝ որոշ չափով թէ՛ Զէյթուն մաս կը կազմէ Ֆոնուզի, Արեգինի, Կապանի եւ թերեւս նաեւ Կոկիսոնի, ինչպէս քիչ առաջ յիշեցինք Օրմանեանի, Ղ. Ալիշանի եւ Էփրէկեանի այս մասին գրածները:

Այս մասին մենք հոս մէջ կը բերենք միայն Ալիշանի Սիսուանէն հետեւեալ տողերը, պահելով իր լեզուն գրաբարը:—

«Արդ՝ թէպէտ ոչ միայն որ յառաջ քան զմիութիւն երիցուն առաջիցն գետահովիտն (Զահանայ եւ Սարոսի Մ.Ս.) արտաքոյ է Կիլիկիոյ, այլեւ բովանդակ միջոցն որ այնք քան զՄարաշ, սակայն զի եւ անդ վիճակը ինչ լեռնայիք ընդ մէջ Սարոսի եւ Զահանայ գրաւեալ էին ընդ ձեռամբ մերոց թագաւորաց, զայնոսիկ միայն խնդրեսցուք ըստ դոյզն ինչ ծանօթութեանս, քանզի հնագոյն աղբերա վայրիցն անայցելու մնան եւ վայրքս՝ որ ի հիւսիսոյ Սսոյ, յիկից Հաճնոյ (արեւելից Մ.Ս.) ի հարաւոյ Կոկիսոնի, յարեւմտից կամ յաջմէ գետոյն եւ Ալպիստանի եւ Մարաշոյ, եւ ի վիճակին ի հարաւոյ ընդ հիւսիս գնալով Ֆոնոնոս, Կապան եւ Ուլնիս կամ Զեթուն, յետինս եւ ոչ միով անուամբ ծանօթ է մեզ ի ժամանակս մե-

րոյ Միսուանեան Պալատայ, հաւանօրէն ի սահմանի իշխեցողացն Մարաշոյ ամփոփեալ գոլով. բայց զի մերձաւոր նմին տեղիք՝ Ֆոնոս եւ Արեգին յիշեն առ մերայինս, չէ անդէպ նոյնպէս լինել եւ համօրէն վիճակին: Նա զի ըստ այժմեան ազգային տեսութեան օտար յոյժ թուի անջատել զայն ի Կիլիկիոյ: Բայց ըստ վերագոյն ակնարկութեան ընդ սակաւածանօթ կողմանս Կիլիկիոյ դատելի են վիճակքդ, ոչ ուրուք գիտնականի յայց ելանելով տեղագրեալ գնոսին, թէ եւ արդ յետ նուաճման Գօգանեանց լեռնականաց՝ դիւրեալ իցեն մուտք ի նոյնս, այլ տակաւին չիկան մեզ ստոյգ տեղեկութիւն: Գուշակի յառաջեցելոցս, զի թէ եւ եղեալ իսկ էր այս մասն վերին հովտաց Զահանայ՝ ընդ մերոցս իշխանութեան, ոչ գիտեմ յի՞նչ աշուն կոչել, կամ որո՞յ գաւառի սեփական յանկագոյն ինձ թուի կապան գաւառի, գուցէ եւ մասամբ կոկաց կամ կոկիսոնի, Ալպիստանայ եւ Մարաշու, որք անրեկրայաբար արտաքոյ են Կիլիկիոյ: Արդ՝ ոչ կարելով ճշգրտել զայնոսիկ՝ կարգեմք ընդ միով անուամբ Կապանայ որ եւ առանձին եպիսկոպոսական թեմ էր, իսկ զարթիս յՕսմանեան վիճակագրութեան ուրիշ յիշեմ Ֆոնոս կամ Ֆոնուզ եւ Զէյթուն վիճակք եւ այլք եւ մերձաւորք, ինձ բնաւին անծանօթ: Իսկ ի պատրիարքական վիճակագրութեան յանուն Զէյթունի խառն գրին գէտք եւ տեղիք պատշաճեալք Ալպիստանայ եւ այլոց, թերեւս ըստ հոգեւորական վարչութեան միախմբեալք...

Զէյթուն = (Ունի)¹⁶ յեղեղուն վիճակացն յիշեցելոց ըստ այժմեան արքունի վիճակագրութեան՝ արեւելագոյն եւ Հիւսիսային է Զէյթուն, արեւմտեան՝ Ֆոնոս, հարաւային՝ Կապան:¹⁷ Կապանի Հիւսիս արեւմուտքը Հեռուն, Հ. Ղ. Ալիշան կը յիշէ մեծ լեռը՝ Աստուածաշէն, չենք գիտեր թէ յետոյ թուրքերը ինչ կոչած են զայն:

Գոմմագինէին, կամ նախկին Տափալներու եւ կամ Կատաւոնիոյ քաղաք՝ Ալպիստան գէյթունցիներէն կոչուած է Ալպիստա եւ ոչ թէ Էլպիստան կամ կոչած են շատ անգամ ուղղակի Քաղաք, իսկ մեր Զէյթունը կոչած են Գեղ: Ուրեմն Զէյթուն Ալպիստայի Հետ աւելի կապ ունեցած է եւ անոր Հետ ինկած է Գոմմագինի չրջանին մէջ, քան թէ Կիլիկիոյ, ուրեմն կերպով մը ան ինկած է Փոքր Հայքի մէջ: Ատեն մը Կիլիկիան կը հասնէր Միս, Կապան, Վահկա բերդ եւ մինչեւ Բարձր Բերդ: Ռընէ Կրուսէ իր Լէ Քրուազատ գիրքին մէջ կը յիշէ Յունաստանի Հիւսիսային մասին մէջ, Լամիայի չրջանը, Եգէականի եզերքին մօտ Զէյթուն անուն քաղաք մը եւ քարտէսին մէջ ալ նշանակուած է, որ յիշուած թուականէն յայտնի է թէ այդ Զէյթուն քաղաքը 1200-էն առաջ գոյութիւն ունեցած է այդտեղ: Չենք գիտեր թէ արդեօք ոեւէ կապ ունի՞ մեր Զէյթունին Հետ:

ԶԷՅԹՈՒՆԻ ԿԵՆՏԱՆԻՆԵՐԸ

Զէյթուն ունէր ընտանի եւ վայրի շատ մը կենդանիներ, ինչպէս խոշոր եղջիւրաւորներ՝ եզ, կով, յետոյ այծ, ոչխար, ձի, ջորի, էշ: Արեգինի մէջ կային հակայ դամբուներ: Լեռներու մէջ կը գտնուէին գայլ, արջ, վարազ, կուզ, աղուէս, նապաստակ, վերէ (եղջերու), էօշէկ (վարշակ-քաֆթար), որուն մորթը մինչեւ 2-3 ոսկի կը ծախուէր: Գետերը լեցուն են կարմրախայտ, դեղինպորտ, օձաձուկ, մանր տեսակ մը սեւ ձուկ, որուն գէյթունցիին կ'ըսէր շնաձուկ եւ ուրիշ ձուկերով: Գետերուն մէջ կայ նաեւ ջրչուն: Թռչուններէն նշանաւոր է ուռ քէքլիկ ըսուած տեսակ մը խոշոր կաքաւ, որ միայն Պէրիտ լեռը կը գտնուի, որմէ Տէտէ Փաշային ձեռքով Պոլիս Սուլթան Համիտին դրկուած է: Կան նաեւ հասարակ կաքաւ, տատրակ, աղաւնի, սագ, բադ, սոխակ, կկու, արծիւ, բազէ, Հուքու-Հաւալ, սարեակ, ագուաւ, խրվ (խատուտիկ թռչուն մը որուն զարգուր կ'ըսեն ուրիշ տեղ), մեղուաթռչուն, անծեղ կամ կաշաղակ, ճագոռվ (ճայ ագուաւ), մածանպուր-անգղի տեսակ մը, ծիծեռնակ (քէքէզ), ճնճղուկ, կերնեխ (գարաթաւուզ): Սողուններէն խօ, սեւ, գորշ օձեր, թունաւոր եւ անթոյն, կրիա, մողէս, գետնադիւծ (կիր իշու կոռնոկ-խրուէանջ):

ԲՈՅՍԵՐ ԵՒ ԲԵՐՔԵՐ

Զէյթուն, որպէս լեռնային երկիր, ընդարձակ դաշտեր չունի, Հետեւաբար արատ արմտիք չէր արտադրեր: Փոքր տարածութեամբ դաշտերու եւ հովիտներու մէջ կը մշակուէին ցորեն, գարի, կորեկ, ոսպ, սիսեռ, լուբիա, ոլուն, գետնախնձոր, եգիպտացորեն, (Հընտուտոն), քուշնա, գետնատանձ (եէր ալմասը), բանջարեղէններէն՝ ճակնդեղ (տակ), չողգամ, բողկ, ստեպղին, դդում, սմբուկ, լոլիկ, պտուղներէն՝ խաղող: Զէյթուն իր հովիտներու երկայնքին խաղողի այգեստաններ, այգիներ կային, ուր կը գտնուէին տեսակ տեսակ խաղողներ: 21 տեսակ խաղող ունէր Զէյթուն, թագաւորի խաղող ըսուածը՝ խոշոր, կլոր եւ ընկուզի մեծութեամբ կ'ըլլար: Մեր այգիին մէջ ունէինք խիւրէշ (ճերմակ դապարճը ըսուածը) որմէ ուռալ, պաստեղ եւ այլ անուշեղէններ կը չինէինք: Սեւ սալոր, սեւ ձուարդ ծայրը սուր խաղող մըն էր, որմէ սեւ չամիչ կը պատրաստէինք, Պէհէանի, դեղին եւ երկար՝ չամիչի համար: Տեսակ տեսակ խնձորներ, տանձ, սերկեւիլ, սալորի տեսակներ, թութ, ընկոյզ, նուշ, նուռ, ալոն, ունկըամալ, աղտոր, ձմերուկ, վարունգ, շնալարունգ, մորենի:

Ուրեմն մեր այգիին խաղողները 20 տեսակ էին. խիւրիշ

սեւ սալոր

պէհնանի

պալխազը - խոշոր, ամուր, մուկ կարմիր եւ երկար խաղող մը
հէվէնք - կլոր, վարդագոյն, ջրոտ (արաբերէն կ'ըսեն հըլուանի)

թագաւորի խաղող

միակտի - մէկ կուտով դեղին, ձուարդ, բոյրով մը

սեւ միակտի - մէկ կուտով, սեւ, ձուար, բոյրով մը

ազէզի - դեղին, ձուարդ

գըրադարձը - սեւորակ, կլոր

դոմոկ խէաղ - ճերմակ, կլոր

մաշէօ խէաղ - դեղին (աղիւզիւմ)

ազուրուկ - սեւ, խոշոր, ձուարդ

մսոտ միակտի - մէկ կուտով, ձուարդ, աւելի մսոտ

աքորի սրտիկ - վարդագոյն, ձուարդ, սրածայր, խոշոր

թէհէմէյի խաղող - վարդագոյն սրածայր

գինի խաղող - սեւ, կլոր, ջրոտ

պանտրմա - խոշոր, դեղին ձուարդ

պարպուր - սեւ, կլոր, մանր

ճերմակ կոպ - ճերմակ, կլոր, շուտ թափող (ճերմակ կապ)

Խաղողէն կը պատրաստեն, ուռպէն, պաստեղէն (ջուխտով) շա-
րոցէն զատ, նաեւ օղի, գինի, բանդակ, չամիչի տեսակներ: Զէյ-
թուն ունէր նաեւ ընտիր եւ պատուական մեղր, որ շատ հեռու
տեղեր կը զրկուէր, որպէս նուէր, խաղողը եւ չամիչն ու ուռպը
կ'արտածէին, ինչպէս նաեւ գինին Ալպետան, Կոկիսոն, Կիւրին, Ա-
րարիսոս, Խունի (Հոնի), Լորշուն (Արիսա), Մէլքեր, Արրատը, Թա-
նրը եւ Զէյթունի շրջակայքի միւս թուրք գիւղերը եւ կը բերէին
այդ տեղերէն հացահատիկ, ընդեղէններ, իւղ (ուղղակի փոխանա-
կութեամբ կ'ընէին այս արտածումն ու ներածումը): Բանջարանոցի
ծաղիկներէն նշանաւոր էր ուհանը՝ կանաչ եւ մանիշակագոյն (շա-
հասպրամ), վարդ, մանիշակ: Կը հանեն նաեւ ողին (չիրիշ քէօքիւ),
որուն թարմը կ'ուտուի եւ չորը կ'աղան, կը չինեն չիրիշ եւ կ'ար-
տածեն: Ունի նաեւ դար եւ դազ: Սակամոնի (տեսակ մը բաղեղազգի)
որուն կաթը կը հանեն, չորցընելով սեւ գոյն կը ստանայ, Հալէպ՝
վաճառականներուն կը ծախուի, եւ Եւրոպա կ'արտածուի բժշկատունկ
մըն է, 100 տիրէմը մինչեւ մէկ օսմ. ոսկի կը ծախուի: Ներկի բոյ-
սերէն Ալաթարի (ճէհրէ), տորոն (արմատ): Գերմանացի Հաուսքիթը
1865-ին միայն Պէրիտ լեռան վրայ 200 տեսակ ծաղիկ գտած է:
Մուշկը չորցուելով մինչեւ 20 տարի իր հոտը կը պահէ: Լեռներու
վրայ, միւսի սահմաններուն կը բուսնի նաեւ նունուֆար, որուն զէյ-

թունցիք կ'ըսեն նարճէս, ինչպէս նաեւ խունծուլու: Անտառի ծառե-
րէն նշանաւոր են մայրի (թընապա), շոճի (փիճի), գիհի, ճրդի,
եղեւնի (մեզտէքի կ'ըսէին զէյթունցիք), բեւեկնի, կաղնիի տեսակները,
թեղին, մաթուզի, խնկենի, սօսի, բարտի, կաղամախի, հացի, ցարասի,
լուսնարունի եւայլն:

ԱՐՉԵՍՏ ԵՒ ԶԲԱՂՈՒՄ

Զէյթունցիին գլխաւոր զբաղումներն էին այգեգործութիւն (այ-
գեմշակութիւն), պարտիզպանութիւն, փոքր դաշտերու հողագործութիւն,
յետոյ շերամաբուծութիւն, մեղուաբուծութիւն, անասնապահութիւն:
Արհեստներն են երկրագործութիւն, որմնադրութիւն, հիւսնութիւն,
ատաղձագործութիւն, մսավաճառութիւն, գինագործութիւն, դարբնութիւն,
վառօղի պատրաստութիւն, կօշկակարութիւն, ջորեպանութիւն եւ
մանր առեւտուրի զբաղում: Վաճառականութեան մէջ նախնական
աստիճան մը կը ներկայացնէին: Միջին թաղը վաթսունի չափ կրպակներով
շուկայ մը ունէին որուն պէզոր կ'ըսէին իրենք, իսկ Պոզպայիթ
թաղը կար Աղճրպոտի փոքր շուկան: Զմուռնանք նաեւ ըսել թէ զէյ-
թունցիին իր ճերմակեղէնին համար կը գործեր կոշտ կտաւ մը, ու-
րեմն կային նաեւ կտաւագործ ջուհակներ: Կային նաեւ քանի մը
փուռեր հացագործի: Զէյթունցիին բարակ հաց մը կը չինէր տուներու
մէջ անթթու, բաղարջ եւ սաճի վրայ կ'եփէր: Կ'արտածէր նաեւ եր-
կաթ եւ կը ներածէր ճարտարարուեստական նիւթեր, ինչպէս կերպաս,
հագուստեղէն, գործիքներ ինչպէս նաեւ արմտիք: Զէյթունցիին սակաւա-
պէտ էր եւ չարքաշ: Զէյթունցիք Ալպիստան 18 ժամ, Կոկիսոն 12
ժամ, Եարփուզ 12 ժամ, Մարաշ 12 ժամ պիտի քալէին գիշեր ցերեկ,
հագիւ երեք օրէն կրնային երթ ու դարձ ընել ջորեպանները ապ-
րանք տանելու կամ բերելու համար այդ վայրերէն: Զէյթունցիին
նկարագրին յատկանշական գծերն են արութիւնը, իրարու օգնելու
ոգին, արժանապատուութեան զգացումը: Համարձակ է ան եւ ուշիմ:
Սրամիտ, պատրաստաբան: Ուտելիք ունեցողը նեղ օրերուն միշտ
պարտական զգացած է չունեցողին հետ բաժնելու իր հացը, իր ու-
նեցածը: Հիւրասէր է: Զէյթունի մէջ պանդոկ, իթեւան չկար: Դուր-
սէն եկող անցնող օտարներ տուներու մէջ կը հիւրասիրուէին:
Տարուան երեք եղանակները կ'աշխատէին, իսկ ձմեռը առհասարակ
հանգիստ կ'ընէին, բացի շուկայի վրայ գործ ընող առեւտարականներէ
եւ արհեստաւորներէ: Սակայն զէյթունցիին տնտեսական վիճակը
միխիթարական չէր: Դժնդակ էին ապրուստի պայմանները: Ապրուստի
գլխաւոր միջոցը այգեգործութիւնն էր: Տարեկան 4500 ոսկիի մօտ
չամիչ, ուռպ կ'արտածուէր Ագիզիէ, Կիւրին, հարաւէն Շուրուէն մին-
չեւ Զուգուր Օվա, Տէօրթեօլ:

ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ՄՈՒՏՔԸ ՁԷՅԹՈՒՆ

Ս. Լուսաւորիչ եկեղեցիին Ենովք քահանայ Դաւիթ Երէցեանի յունական գրով ու հին հայերէնով գրուած մագաղաթեայ ձեռագիր Աւետարանին ետեւը, ղէյթունցիներուն քրիստոնէութիւն ընդունելու մասին ծանօթութիւն մը գտնուած է ըստ Մնացական Մէմէրճեանի «Ձէյթունի անցնալէն եւ ներկայէն» գրքին: Այդ աւետարանը որ «Մանկութեան աւետարան» կոչուած է, գրուած է Յ. Տ. 250 թուականին, որ սակայն դժբախտաբար, անգին հնութիւն մը լրջալով հանդերձ, կարելի չէ եղած ազատել Ձէյթունի 1884-ի մեծ հրդեհէն, որուն ճարակ գացած է այն եւ իրեն հետ նաեւ Գող Վասիլի հռչակաւոր Աւետարանը եւ ուրիշ կարեւոր ձեռագիր հնութիւններ:

Այդ «Մանկութեան Աւետարան»-ին մէջի ծանօթութեան համաձայն՝ «Յամի Տեառն ԴՍ. Բարթողիմէոս առաքեալ, երբ Հայաստան կ'երթար քարոզելու, Մարաշ կը հասնի եւ քաղաքէն տասնըհինգ վայրկեան հեռուն, Քառասուն ակ (գրգ կէօզ) ըսուած տեղը, որ Աղբիւրի Գլուխ (Փունար պաշը) ալ կը կոչուի կը հրաւիրէ քաղաքացիները եւ կը քարոզէ անոնց եւ հաւատացեալները կը մկրտէ նոյն ջրով Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ: Այժմ այդ տեղը կը կոչեն մարաշիք Թաքս Առաքէօլ¹⁸ (Թաղէոս Առաքեալ): Յետոյ Բարթողիմէոս առաքեալ կու գայ Ձէյթունի հարաւ արեւելքը՝ այժմ Ծէհիրճոկ կոչուած տեղը, Ձէյթունէն 2 ժամ հեռուն եւ հոն բնակող կուսակաշտ բնիկներուն կը քարոզէ քրիստոնէութիւնը: Անոնք սկիզբը կը մերժեն, եւ սաստիկ կը բարկանան անոր դէմ, վրան կը յարձակին որ սպաննեն: Մօտակայ անտառը կ'ապաստանի եւ կ'ազատի Բայց այդ գիշերը բոլոր ժողովուրդը բորոտութենէ կը վարակուին: Կը զղջան, կը փնտռեն զինքը. պիտի խնդրեն որ գայ զիրենք բժշկէ: Երեք օր յետոյ Աստուծոյ հրեշտակը երազին մէջ կ'երեւայ տեղւոյն պետին եւ կը յանդիմանէ անոնց չարութիւնը եւ կը հրամայէ որ անպատճառ գտնեն առաքեալը, հետիւին անոր քարոզութեան, հաւատան եթէ բժշկուիլ կ'ուզեն: Պետը երկիւղածութեամբ անոր տեղը կը հարցնէ. «Քաղաքին արեւելքի անտառն է» կը պատասխանէ եւ կ'անհետանայ: Հետեւեալ առտուն պետին հրամանով ամբողջ ժողովուրդը կառավարատուն կը հաւաքուին, կ'ունկնդրեն պետը, կը գտնեն առաքեալը, որ աղօթքի մէջ է, կը պաղատին որ զիրենք բժշկէ: Կը գթայ անոնց, զիրենք կ'առաջնորդէ քաղաքին հիւսիսը, քառորդ ժամ հեռուն, ուր ծծմբաջուր ջերմուկ մը կայ, կը

հրամայէ որ հոն լուացուին: Յետոյ ինքը Աւագ լեռան կողը հասնելով ծնրադիր կ'աղօթէ եւ կը պատուիրէ որ բոլորն ալ իր հետ աղօթեն: Ահա երկնային պայծառ լոյս մը կը փայլի եւ կը լեցնէ ամբողջ վայրը: Սուրբ առաքեալին աղօթած տեղէն ալ ջուր մը կը բխի, ուրկէ կը խմէ ամբողջ ժողովուրդը: Ներկաները այդ ջուրէն աւազան մը կը շինեն, հրեշտակին հրամանով այնտեղ կը մկրտուին եւ կը բժշկուին: Ու այդ տեղը կը կոչեն Ս. Փրկիչ: Հոն յետոյ մատուռ մը կը շինեն նոյն անունով, ուր ջերմեռանդ քրիստոնէայ հաւատացեալներ ուխտի կ'երթան զոհերով, 2 ժամ հեռու տեղ բոկոտն քալելով: 1820-ին հոգեւոյս Տ. Յովհ. Եպս. Չարսանճագցին, որ Այնթապի առաջնորդն էր, եւ Տ. Յակոբ Եպս. Ձէյթունցի, աջակցութեամբ Ձէյթունի ժողովուրդին, այդ մատուռին տեղը գմբէթաւոր կոկիկ եկեղեցի մը կառուցանել կու տայ եւդոկիացի ճարտարապետներուն: Գմբէթին ներսը եւ խորանը զարդարուած էին գեղեցիկ նկարներով, զորս մանկութեանս տեսած եմ ծնողքիս հետ երբ ուխտի գացած էինք: 1896-ի Դեկտ. 2-ին, թրքական կռիւն թուրքերը գմբէթները քանդեցին: Ս. Փրկիչի վանքին շրջակայքը գմայլի տեսարաններ կը պարզուին: Հիւսիս արեւելքը քառորդ ժամ հեռու կը գտնուէր Եգիպտեր կամ Ղարճենց գիւղը, որ կը կոչուէր նաեւ Ղրլճը Օպէն (Օպա-գիւղակ): Ասոր բնակիչները սկիզբէն կուսակաշտ են եղեր, մինչեւ վերջին ժամանակները կը գտնուէին Եգիպտոսի Պաշ ըսուած քիւրտեր, որ հոգեփոխութեան կը հաւատան: Միեւնոյնը կը պատմուի նաեւ Աւագլոր - Աւագինի գիւղին համար: Այս երկու գիւղերն ալ կը պատկանէին Արեգինի:

Ս. Փրկիչէն զատ Բարթողիմէոս առաքեալ չինած է նաեւ Ս. Կարապետ անուն մենաստան մը: Ջերմուկի հարաւ արեւմուտքը, Ձէյթունէն մէկ ու կէս ժամ ոտքով դէպի հարաւ: Թէեւ շատոնց քար ու քանդ եղած, աւերակ մըն է, սակայն Վարդապետի Մեռելոցին ղէյթունցիներ ուխտի կ'երթային եւ Պոպայիթ Թաղի քահանաները կը պատարագէին այնտեղ: Կը պատմէին մեր հայրերն ու պապերը թէ՛ Թէհիրլիցի թիւրքմէն կէօլմէնները, վաչկատուններ, աշնան իրենց հօտերով (եայլա) ամառանոցէն կը վերադառնան ու կ'անցնին Ս. Կարապետի մենաստանի մօտէն: Կը բռնեն մենաստանին վարդապետը, կը չարչարեն, կը խոշտանգեն որ պահուած դրամներուն տեղը ցոյց տայ: Կը մերկացնեն եւ բլուրին գազաթէն մինչեւ վար՝ Անի Ձորը կը քաշկուտեն, բայց վանականը լուռ կը մնայ, բնաւ չի խօսիր: Չարագործները յուսակտուր կը թողուն զինքը եւ կը հեռանան: Շուտով սակայն կը պատժուին այդ անգամ չարագործները: Տեղատարափ անձրեւ մը կը սկսի, հովիտներն ու ձորերը հեղեղներ ծայր կու

տան, Անի Զորի գետակը ահագին գետի մը կը փոխուի, հսկայ հեղեղ մը, թիւրքմէնները իրենց ընտանիքներով, զաւակներով, առջարներով, հօտերով, բռնակիր անասուններով եւ կահ կարասիներով Անի Զորի այդ հեղեղին մէջ կը խեղդուին: Ազատողներ յետոյ կը պատմեն աղէտը եւ կ'ընդունին թէ իրենց անգթութեան պատճառով պատժուեցան, իրենց գլխուն եկածը անխօս Գարապաշէն եղաւ: Թուրքերը այդ վայրը Մէօյլէմէզին Տէրէսի (անխօսի ձոր) կոչեցին:

Պերզինկա լեռան ստորոտը, Զէյթունէն 20 վայրկեան արեւելք, շինուած է Սուրբ Աստուածածին նշանաւոր վանքը, ուր կը պահուէր Անանիա առաքեալին սուրբ աջը: Վերափոխման տօնին, Զէյթունէն, Մարաշէն, Կիւրինէն, Ալպիստանէն եւ նոյնիսկ հռաւոր վայրերէն բազմաթիւ ուխտաւորներ կը հասնէին հոն, մատաղներով, նուէրներով: Շաբաթ մը ամբողջ ուրախութիւններ, հանդիսութիւններ, խաղեր, նշանաձգութիւններ տեղի կ'ունենային: Խաղողը կ'օրհնուէր: Մինչեւ այդ օրը բարեպաշտ տարեց զէյթունցիներ խաղող չէին ուտեր: Զէյթունի առաջնորդ-վանահայրը հոն կը բնակէր:

Զէյթունէն 6 ժամ հարաւ արեւմուտք Ֆոնուզի սահմանին մէջ էր ուրիշ Ս. Կարապետ անուն վանք մը Դրախտիկ լեռան ստորոտը: Հոն կը նստէր Ֆոնուզի վանահայրը:

Ս. Փրկիչ վանքին Բարթողիմէոս առաքեալի կողմէ հաստատուած ըլլալը եւ չհիւրճուցիներուն-զէյթունցիներուն՝ իր կողմէ քրիստոնէութիւնը ընդունած ըլլալին կ'ապացուցանէ ժողովրդական շատ հին հետեւեալ երգը--

Բարթուղիսէ յայս աղօթեաց,
Լոյս ի վերայ կամար կապեաց,
Մնգատեղաց սուրբ ջուր քիսեաց,
Ո՛վ սուրբ Փրկիչ եւ ազատիչ,
Ազատեա՛ գմեգ, Յիսուս Փրկիչ,
Յոյս, ապաւեն քրիստոնէից:

Աւագ լերին կռչի տեղի,
Ծաղկումն բուսեալ ի չորս կողմի,
Փառք եւ պարծանք Ուլմիա բաղձի,
Ո՛վ Սուրբ Փրկիչ եւ ազատիչ... (կրկ.):

Յիսուս Քրիստոս յերկնից իջաւ,
Առաքելացն երեւեցաւ,
Մարդկան ազգի մեղքն քարծաւ,

Ո՛վ Սուրբ Փրկիչ եւ ազատիչ... (կրկ.):

Սօքանասուն եւ հինգ բւոյն,
Ի գալ սրբայ առաքելոյն,
Յախտէն բուժեաց Փրկչին անուն,
Ո՛վ սուրբ Փրկիչ եւ ազատիչ... (կրկ.):¹⁹

ՆՈՒՆԻՐԱԿԱՆ ԱՅԼ ՎԱՅՐԵՐ

Զէյթունցիք նուիրական կը նկատէին Նաեւ հետեւեալ վայրերը եւ անոնց նկատմամբ տեսակ մը խորհրդաւոր, վերապահ զգացումներ մը ունէին: Արդեօք հին՝ քարապաշտութեան ժամանակներէն մնացած հողեկան երեւո՞յթ մըն էր այդ վերաբերումը:

Արընաքարտակ (Անրանի քարտակ).-- Վիթիարի քար մըն էր, Զէյթունէն հինգ վայրկեան արեւելք, վանքին ճամբուն վրայ: Անգործ մարդիկ ամառը անոր շուքին կը նստէին զովանալու եւ ժամանակ անցընելու համար:

Ֆօշոն քար.-- Քար մը հիւսիս արեւմուտքը, Օրթանըն Տէրքի կողմը, իսկ ուրիշ Ֆշան քար մը, Զէյթունի հարաւը, տասը վայրկեան հեռու: Այս երկուքին առջեւ երբ կենաս, Փշֆշ, շարունակական հեք մը կը լսուի եւ զէյթունցիք կը կարծէին թէ անոնց տակը, մինչ աղէկները երկաթագործութիւն կ'ընեն եւ այդ Փշոցը փքոցներուն ձայնն է: Ես անձնապէս մտիկ ըրած եմ եւ սակայն նկատած եմ որ այս երկու ապառաժներն ալ Շուղր գետակին այնպէս մը դիմացը կը գտնուին որ գետակին ջուրին ձայնին արձագանգն է այդ Փշոցը: Որովհետեւ գետակին՝ այն քարերուն երեւցած բաց տեղը, ջուրը քարավազ տեղէ մը կ'անցնի եւ աղմուկ կը հանէ: Զէյթունցիին այս հողեկան վիճակն ալ արդեօք, հարց հին ժամանակներէն եւ Արտաւազդի Մասիսի վիճին եւ երկաթագործներու սալը ծեծելու առասպելէն չէ՞ եկած:

Տափակ քար.-- Խոշոր տափակ քար մը, Զէյթունի հարաւը, էմէն ըսուած տեղը. այս քարին եզերքէն ահագին անդունդ մը կ'իջնէ մինչեւ վարը՝ Շուղր գետակը:

Թօզլենց քարեր.-- Պուլիպցենց մօտ (բլուր)՝ Ղուլօ (մարտկոց) խաչքար, Արընաքարտակի վարը, մաղէ կունտարեկի մօտը: Այս նշանակուած քարերը եւ վայրերը անանցանելի պատնէշներ նկատուած էին զէյթունցիներէն, շնորհիւ իրենց նուիրագործուած հանգամանքին: Արդարեւ ոչ մէկ պատերազմի թշնամին չէ կրցած անցնիլ այս սահմաններէն ներս:

գտնուէին հին շէնքերու հետքեր, աւերակներ, կը խորհինք թէ դարձեալ ուխտատեղի մըն էր որ կար այդ տեղ: Զօփօր բառը կ'ենթադրենք արաբերէն զիւլար - այսինքն այցելող, ուխտաւոր: Ինչպէս Սուրիոյ մէջ կան Տէր-Զօր - ուխտի դուռ (վանք), Զօր Թազսին (զիւղ մը), Զօր Զապէր եւայլն:

ԽԱՆՈՍ ԱՆՏԱՌԸ. - Զէյթունէն 2 ժամ դէպի արեւմուտք, Անտուլ գետին երկու ափերուն կը տարածուի Խանոս անտառը, խիտ ծառերով եւ թուփերով: Զէյթունցիք այդ անտառէն կը հալթայթէին իրենց փայտը: Այդ անտառին ճամբուն վրայ է Իսկի աղբըրէկը (ոսկի՝ աղբիւրիկ): Մութ, խորհրդաւոր անտառ մըն է այս, մանաւանդ Անտուլ գետին անդնդախոր եւ ամայի եզերքները, մարդուս վրայ պակուցիչ տպաւորութիւն մը կը թողուն: Իսկ Իսկի աղբըրէկ սքանչելի ջուր մը ունի, ուրկէ անցորդներ, մանաւանդ հիւանդներ երբ կը խմէին զգալի բարեփոխութիւն մը կ'ունենային: Անտուլի եւ Խանոսի մօտակայ երկու հայ գիւղերէն Ղօզճուղազ եւ Հաճի Տէրէյէն զէյթունցիք երբ հարս բերէին, Իսկի աղբըրիկէն հարսնեւորներ ջուր կը բերէին եւ կը խմցնէին հարսին ու փեսին, որպէսզի նորապակները եւ իրենց զաւակները շատ ոսկի շահին իրենց կեանքին մէջ: Այս Խանոս անտառը խորունկ եւ տարտարոսային ձոր մըն է, լեցուն են հոն խիտ խիտ եւ հինաւուրց կեղեւաթափ, խոշոր, հսկայ ծառեր, կաղնիներ, շոճիներ, զառամած, փտած ամէն տեսակի վայրի ծառեր: Թէճիրլիցիներու եւ զէյթունցիներու երկարատեւ կոխներուն, շատ մը Թէճիրլիցի թիւրքմէններ Անտուլի մէջ թափուած են զէյթունցիներու կողմէ:

ՇԷՕՒԼՔ (ծովք). - Զէյթունի հիւսիս արեւմուտքը, երեք ժամ հեռու հովիտ մըն է, Սուլա-Տէրէյի ետեւը շրջապատուած լեռնաշղթայով մը: Պարսպապատ շրջանակի մը ձեւ առած է: Զմեռը ձիւնը կը հաւաքուի այդ տեղ: Փարնան այդ կուտակուած ձիւնը կը հալի, ահազին լիճ մը կը գոյանայ, ատոր համար է որ Մովք անունն առած է: Յունիսին լիճը կը չորնայ, ցամքած տեղը կը վերածուի դրախտի պէս մարգագետնի մը, պճնուած գոյնզգոյն նունուֆար (նարճիս) ծաղիկներով, զէյթունցի խաշնարածներ վերի Ծայլաները (արօտատեղի) Խընրխէօզ Ալաշայիւր ձգելով, Յուլիս 15-ին, 50-60 տուն կու գան իրենց վրանները կը հաստատեն հոն եւ կը մնան մինչեւ Օգոստոսի վերջերը: Այդ տեղի ընտիր եւ զով ջուրը խմողները շատ կ'ապրին: Սեպտեմբերին կ'իջնեն Կանկուոտ, Սօլուխտէրէ լեռան ստորոտը, ուրկէ Զէյթունը սանդխաձեւ կ'երեւի, մինչեւ անգամ տունները կրնան համրուիլ մէկուկէս ժամ հեռուէն: Հայ հովիւները արշալոյսին կ'ածեն իրենց սրինգները (ղաւալ) այնքան քաղցր:

Փալու անապատ. - Մեր հայրենակից Գ. Տէօվլէթ, Զարհանելեանի «Հայ մատենադրութեան պատմութիւն»-ին մէջ գտած է յիշատակարան մը, գրուած 1336-ին, Լեւոն Դ-ի օրով «ի սուրբ անապատս՝ որ կոչի Փալու, ընդ հովանեաւ Սր. Աստուածածնի... եւ ի գետահովիտս Զահանայ, որ հաւանաբար Զէյթունի շրջանն է («Զէյթուն», Տէօվլէթ էջ 70):

ԶԷԹՈՒՆԻ ՆՇԱՆԱԽՈՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐ

1) Զէյթունցի երեք կաթողիկոսներ բազմած են Կիլիկիոյ (Սսոյ) կաթողիկոսական աթոռը: Տ. Սիմէոն Ա. 1539 Ապրիլ 7 - 1545, Տ. Ղազար՝ 1545-1547, եւ Տ. Խաչատուր Բ. Երաժիշտ մականուանեալ՝ 1560 Փետ. 16 - 1584 Փետրուար:

2) Էջմիածնայ կաթողիկոսական աթոռը բազմած է Կարապետ Գ. Ուլնեցի (1726-1730): Ծնած է 1681-ին, Հօր անուն՝ Դահուկ Մարտիրոս, մայրը՝ Մարիամ: Աստուածաշունչ գրոց յիշատակարանի մը մէջ իր վրայ կը գրէ. «Եօթնամասնի ծնեալ, ես եօթն ամ զկաթն առեալ ի մօրմէն, թագաւորոյ ծովեր եմ մականաւանդաւ դահուկէն աղաւաղուած է դահուկնց կամ դէպիւնց»: Այս մականունով ընտանիքը կ'ապրէր մինչեւ վերջին տեղահանութիւնը Զէյթունի քաղաքի վերի թաղը՝ Բէր-ծէր ըստած ժայռին վրայ: Դահ (դահ) Զէյթունի բարբառով կը նշանակէ տարիքոտ. իրմէ նուիրուած սկիհի մը յիշատակարանին մէջ գրուած է «Յիշատակ է Ս. Սկիհս Ուլնիոյ Ս. Հրեշտակապետ եկեղեցւոյ Ս. Սեղանին, յամի Տեառն 1705, նուիրատու՝ ծովեր Կարապետ Եպիսկ. Դահուկնց, Առաջնորդ Գաղատիոյ»: Ծնողքին մահէն յետոյ կը լսէ իրեն հայրենակից Սաչլու մականուեալ Ստեփան Վարդապետին Գաղատիոյ վիճակին վրայ Եպիսկոպոս ձեռնադրուիլը (1697), քովը կ'երթայ ուսանելու: 1681-ին, Արեղայութեան կարգ կը ստանայ 1684-ին եւ 1687-ին Մ. Վարդապետի աստիճանին կը բարձրանայ, շատ կ'աշխատի վանքին նորոգութեան եւ շատ մը սպասներ կը ձգէ հոն. յետոյ կը զրկուի Էջմիածին Նահապետ Կաթողիկոսին եւ անկէ կը ձեռնադրուի Եպիսկոպոս: Յետոյ յաջորդ եւ տեղապահ Կաթողիկոսին օրով կը պաշտօնավարէ աւելի քան 30 տարի 1694-1726: Ղազար Ջահեցիին Կարապետ Եպիսկոպոսի մասին կը գրէ. «Էր այր չքեղ եւ փառազարդեալ»: Իր աթոռակալութեան երկար տարիներուն կը շէնցընէ եւ կը նորոգէ Գաղատիոյ եկեղեցիներն եւ վանքերը, կը ճախարհէ գրքերով եւ սպասներով: 1705-ին իր ձեռնասուն Մովսէս Վարդ.ի հետ ուխտի կ'երթայ Երուսաղէմ, Հռոմկլայ եւ իր հայրենիքը՝ Զէյթուն, ուր իր եղբորը Ստեփանոս երէցի հետ կը տեսնուի, չորս ամիս կը մնայ հայրենիք, ճամբաներու անապահովութեան պատճառով: Այս մասին Մովսէս Վարդապետ իր ընկերը կը գրէ. «Անդ (ի Զէյթուն) զուխտս մեր կատարեցաք թէ՛ ի Ս. Փրկիչն, թէ՛ ի Ս. Աստուածածնայ վանքն, եւ թէ յԱնանիա Առաքելոյն Ս. Աջն, որ ի Զէյթունայ վանքն կայ եւ ուսուցչին մերոյ գերեզման (Ստեփանոս Եպիսկոպոսի) եւ անդէն զտեղի կալաք աւուրս հարիւր եւ քսան յա-

հէ Թորգոմանաց (ըսել ուզած է՝ Թիւրքմէն վաչկատուններու համար) որք շրջէին իրեւ զառիւծ շուրջ զմեօք. բայց յետոյ փախստեալ ճանապարհաւ հազիւ հասաք ի Հաճնոյն վանքն, առ Յովհաննէս Կաթողիկոսն»: Աստուածատուր Կաթողիկոսին վախճանելէն ետքը, Կ. Պոլսոյ մէջ կաթողիկոս կ'օծուի 17 Փետր. 1726-ին: Յետոյ ինքն է որ Եպիսկոպոս կը ձեռնադրէ Յովհաննէս Կոլոտ Վարդապետը եւ որ վերջէն պատրիարք կ'ըլլայ Կ. Պոլսոյ ի վերջոյ Կարապետ Բ. Ուլնեցի Կաթողիկոս կը մեկնի Էջմիածին, ուր կը գահակալէ չորս տարի եւ կը վախճանի 1730-ին: Իր գերեզմանը կը գտնուի Վաղարշապատի Ս. Հովսիսի վանքին գաւիթին աջ կողմը, բաց տապանաքարը լաւ չ'որոշուի իր շուրջի սալերէն:

3) Զէյթունցի էին Նաեւ Կ. Պոլսոյ Սարգիս եւ Յովհաննէս Պատրիարքները (1587-1590):

4) Զէյթունի բարձրաստիճան եկեղեցականներ եղած են Նաեւ. -

1586-ին՝ Յովհաննէս Ա. Եպիսկոպոս

1596-ին՝ Ծերուն Եպիսկոպոս

1626-ին՝ Մկրտիչ Եպիսկոպոս

1666-ին՝ Մովսէս Եպիսկոպոս

1694-ին՝ Ստեփան Եպիսկոպոս Սաչլու

1720-ին՝ Կարապետ Ա. Եպիսկոպոս

1800-ին՝ Յովհաննէս Բ. Եպիսկոպոս

1806-ին՝ Յարութիւն Եպիսկոպոս

1808-ին՝ Միքայէլ Եպիսկոպոս

1817-ին՝ Մարտիրոս Եպիսկոպոս

1821-ին՝ Պօղոս Եպիսկոպոս

1823-ին՝ Յակոբ Եպիսկոպոս Պղտեան

1826-ին՝ Մատթիա Եպիսկոպոս Ղազիկեան

1828-ին՝ Յակոբոս Եպիսկոպոս Պոստանեան կամ

Պարմաղը Բէսիկ (մատնատ)

1832-ին՝ Սարգիս Ա. Խանդբորեան

1851-ին՝ Յովհաննէս Գ. Եպիսկոպոս Էօքսիւղեան

Էօքսիւղեան Եպիսկոպոս մեծ ծառայութիւն մատուցած է Ս. վանքին շինութեան եւ ինքը շինել տուած է Մարաշի ճամբուն վրայ Զահանի նշանաւոր կամուրջը, որ կը կոչուի «Վարդապետին կանտարան»: Թուրքերը ապա կոչեցին զայն Համիտիէ քէօփրիսիւ:

1861-ին՝ Սարգիս Բ. Եպիսկոպոս Կիլիկեան

1883-ին՝ Կարապետ Եպիսկոպոս Քէչէկեան

Յարութիւն Վարդապետ Տ. Դաւիթեան

Դաւիթ Վարդապետ Տ. Դաւիթեան վախճանած Վէլիը քէօփրին

Պետրոս Վարդապետ Քէչեան վախճանած Զէյթուն
Պօղոս Վարդապետ Տատիշեան
Սարգիս Վարդապետ Կիլիկեան
Ստեփան Վարդապետ Աղճապէկեան, Պրուսա վախճանած
Գալուստ Վարդապետ Տ. Գալուստեան, Ազիզ Փաշայի պատերազմին
1862-ին նահատակուած

Մամբրէ Վարդապետ Զմշկածագեցի, Ս. Փրկիչի վանքը նահա-
տակուած նոյնպէս 1862-ին պատերազմին

Յովհաննէս Վարդապետ Զօփուրեան, Զէյթուն վախճանած 1896-ին
Գրիգոր Վարդապետ Արարդեան, Կ. Պոլիս վախճանած

Վաղարշակ Վարդապետ Արշակունի
Յովհաննէս Մ. Վարդապետ Գրանֆիլեան, 1915-ին Տէր-Զօր ւա-
սորուած բանտարակուած եւ յետոյ նահատակուած է:

Վերոյիշեալ եկեղեցականները որպէս առաջնորդ կամ վանահայր
յաջորդաբար պաշտօնավարած են Զէյթունի մէջ:

Վերջին Առաջնորդն եղած է մարաշցի Տ. Խաչատուր Վարդապետ
Տ. Ղազարեան կամ Խատենց, որ շատ կարճ ատեն մը միայն մնա-
ցած է Զէյթուն:

Նոյնպէս Մկրտիչ Եպս. Աղաւնունիի «Միաբանք եւ այցելութեան» հայ
Երուսաղէմի հատորին մէջ՝ (1920 Տպրն. Երուսաղէմ) գէյթունցի
կարգ մը նշանաւոր եկեղեցականներու մասին հետեւեալ տեղեկութիւնները
կան, իրենց ժամանակագրական կարգով կ'արտագրենք այստեղ:—

Գաբրիէլ Սարկաւազ Զէյթունցի, միաբան Երուսաղէմի, որդի
Կոստանդինի եւ Ոսկիի ԶԷԵ. 1528 թուին, Յայսմաուրք մը կ'ըն-
դօրինակէ Երուսաղէմի մէջ (ի հայրապետ Տ. Յովհաննէս Կթղի եւ
Առաջնորդ Ս. Ուխտին Տ. Յովսէփի): Այս ձեռագիրն ստացողն ե-
ղած է Ներսէս Եպս. Զէյթունցի, որդի Կիրակոսի եւ Շնորհաւորի:

Յովհան Քհնյ. (տէյի քէյի) դաւուղը Պէօյլուքեան կամ Օզդ. Ե-
րէց ծնած է Զէյթունի Ղարալար թաղը 1763-ին Մայիս 13-ին, աւա-
զանի անունն է Պրոխորոն, հայրը՝ Յովհան Քհնյ., մեծ հայրը Յով-
հանէս Քհնյ. Յովհան Քահանայ տիրացու Սիմոն անուն Ղուհակի
մը քով կ'ուսանի կարգալ եւ գրեյ Քահանայ կը ձեռնադրուի Սոոյ
Ազապահան Թէոդորոս Կթղ-էն: Ինն անգամ ուխտի կ'երթայ Երուսա-
ղէմ Ս. Յակոբայ վանքը սկսած 1838-էն մինչեւ 1852 վերջին ան-
գամ: Առաջին ուխտագնացութեան, ճամբան Դամասկոսի մօտ կը
կռուի աւազակախումբի մը հետ եւ կը յաղթէ: «Լուսաւորեալ»-ի օրն
ալ Ս. գերեզմանին շուրջ ծագած շփոթութեան մէջ խոհեմութեամբ
շարժելուն, Զաքարիա Պատրիարքէն կը ստանայ թանկագին ծաղկեայ
փիլոն մը:

1802-1814 Ատանայի կողմերը զինուորապետելով կը ծառայէ Օս-
մանեան կառավարութեան, վերջը կը շարունակէ իր քահանայութիւնը
1833-ին Կ. Պոլիս կը ներկայանայ Սուլթան Մահմուտի. 1835-ին
վերաշինել կու տայ Զէյթունի Ս. Սարգիս եկեղեցին: 1836-ին կը
ներկայանայ Մարաշ՝ Եգիպտոսի Իպրահիմ Փաշային եւ Զէյթունի
մէջ կը վարէ միւսէյիմի (տեսուչ) պաշտօն: 1842-ին կը մասնակցի
Երուսաղէմ Փաշայի պատերազմին, 1852-ին կը բանտարկուի Շքոտրացի
Մուստաֆա Փաշային: Կը վախճանի 1858-ին եւ կը թաղուի իւրակերտ
Ս. Սարգիս եկեղեցիին բակը, Աւագ Զորեքչարթի օրը:

Աթանաս Վրդ. Աստուածատուրեան, Զէյթունցի, միաբան Երուսա-
ղէմի, ծնած 1825-ին, ձեռնադրուած 1853-ին: տեսուչ Բեթլէհէմի
1861-ին...

Կիւրեղ Վրդ. Յակոբեան, գէյթունցի, միաբան Երուսաղէմի, ձեռ-
նադրուած 1857-ին եւ տարի մը յետոյ կը վախճանի:

Յովհաննէս Վրդ. Զէյթունցի, Ս. Երուսաղէմի միաբան, 1860-ին:
Վրթանէս Վրդ. Դասապեան, գէյթունցի, միաբան Երուսաղէմի,
ծնած 1869-ին, ձեռնադրուած 1898-ին եւ վերջերս վախճանած:

Յակոբ Քհնյ. Մովսէս, գէյթունցի, այժմ հոգեւոր հովիւ Հաթթայի
Հայոց:

Ստեփան Զէյթունցի, քրճազգեաց, ի նպաստ Ս. Յակոբայ վանքին
յիշատակ կը թողու մթերանոց մը Յոպպէի մէջ, կը վախճանի 1887-
ին:

Կարապետ Ա. Քհնյ. Երկանեան կամ Պօղոբեան, վարչապետ, կրթաս-
էր քահանայ մը, որ տարիներ վարած է Զէյթունի առաջնորդութիւնը
Տ. Նշան Քհնյ. Ղազեան, ուսեալ եւ կարող քահանայ մը:

Տ. Մովսէս Քհնյ. Խաչուկենց, քաջ, կարող եւ դիւանապետ քա-
հանայ մը:

Տ. Սահակ Քհնյ. Մարկոսեան, խիզախ եւ յանդուգն քահանայ
մը, նահատակուած:

Տ. Եղեղի Քհնյ. Տ. Վահանեան, ուսեալ քահանայ մը, վախճանած:

Տ. Վաղարշակ Քահանայ Ճէրահեան, նահատակուած Տէր-Զօր:

Տ. Սահակ Քահանայ Ափարթեան կամ Քեթեան, նահատակուած:

ԺԶ. դարու վերջը եւ ԺԷ դարու սկիզբը կը յիշուի նաեւ Վա-
հան անուն քաջ քարտուղար երէց մը:

Այս բոլորէն զատ, Զէյթուն ունեցեր է նաեւ իր ճգնաւորները,
նահատակները, որոնցմէ յիշենք Մեղթոն ճգնաւորը, որ խիստ ժուժկալ
եւ սակաւապետ կեանք մը կ'անցընէր, օրը մէկ անգամ շատ թեթեւ
սնունդ մը առնելով: Ժամանակին մեծ մասը կ'անցնէր աղօթքով: 5
տարի երուսաղէմ, 5 տարի Կեսարիոյ Ս. Կարապետ վանքը մնացած

է: Ու 15 տարի Զէյթունի Ս. Աստուածածնի վանքը բնակած է ու մեռած է 1808-ի 7 Ապրիլին 80 տարեկան: Ծ-ի Զէյթունի պատերազմին իր աղօթքի եւ մաղթանքի միակ նիւթն էր եղած հայ ազգի փրկութիւնն ու Զէյթունի զինաց յաջողութիւնը: ԺԶ. դարուն վերջերը 1580-ական թուականներուն, զէյթունցի եպիսկոպոսի մը ստորագրութիւնը կը տեսնուի Գրիգոր ԺԳ. պապին ուղղուած թուղթի մը մէջ, որ կը հաղորդէ Սահ խաչատուր Կաթողիկոսին ընտրութիւնը 1586-ին: Տասը տարի ետքն ալ Յակոբ Եպս-ի համար գրուած ձեռնադրութեան գրքի մը յիշատակարանին մէջ արձանագրուած է «ի Զէյթունոյ վանքն, ի Ս. Աստուածածնի դուռն, ի ստորոտ Պարզնկայ լեռին, յԱռաջնորդութեան Տ. Մերուն Արքեպիսկոպոսին»: Վերոյիշեալ Վահան քաջ քարտուղար Երէցը, որուն աշակերտած է Վի քաղաքի Զեյթունայ Յակոբիկ դպիր: Այդ Յակոբիկ դպիրը 1808-ին կը գրէ Սեբաստիայէն հետեւեալը. «Ղարիպ էի եւ սրտիկս տրտում... ոչ ոք ի մարդկանէ ի վրայ խնամք չտարան, հանապազ լացի եւ տա-րակուսեալ էի, բայց հէմշէրին իմ զէյթունցի Մղտեսի Առաքելն (սարկաւազ), որ էր վաճառական, նա տանէր զիս իւր օտայն եւ մխիթարէր...»: Վերոյիշեալ Վահան երէց քաջ քարտուղարն ալ կը գրէ 1825-ին. «...ի քաղաքն ի Զեյթուն, ընդ հովանեաւ սրբոյն Սարգսի Զօրավարին եւ ալ ամենայն սուրբ տաճարացս եւ սրբութեանց... ի յառաջնորդութեան յայտ մեր գաւառիս, Տ. Մկրտիչ Արքեպիսկոպոսի եւ Տ. Վարդան Եպիսկոպոսի եւ խաչատուր Վարդապետի եւայլն...»:

Զէյթունի Ս. Աստուածածնայ վանքը պահուած կամ օրինակուած են շատ մը ձեռագիրներ, երբ Կիլիկիոյ միւս վանքերը անշքացած էին արդէն: Զարհանէլեանի հայ մատենագրութեան պատմութեան մէջ, մեր հաջորդակից Գ. Տէօվլէթ գտած է նմոյշ մը 1508-ին Զեյթունի մէջ գրուած նոտրդիր յիշատակարան մը հետեւեալ բառերով. «Փա՛ռք Աբ. Երրորդութեան հաւր եւ որդւոյ եւ սբ. հոգոյն ամէն: Գրեցաւ ձեռնադրուի գիրքս ի թվին Ռեւ (1045+551=1596), ի խնդրոյ Տէր Յակոբ անարժան Եպսկս. ի վայելումն անձին իմոյ... Գրեցաւ գիրքս յի Զէյթունոյ վանքն ի Աբ. Աստուածածին, ի դուռն յառաջնորդութեան Տ. Մերուն Արքեպիսկոպոսին»:

ԶԷՅԹՈՒՆԻ ԹԱՂԵՐԸ ԵՒ ԱՆՈՒՑ ԻՇԽԱՆՆԵՐԸ

Բնական ամրութիւններով պատնէշուած Զէյթուն կառուցուած էր դէպի հիւսիս բարձրացող զառիթափի մը վրայ, տուներուն տալով բաւական ընդարձակ ամփիթատրոնի մը երեւոյթը: Զէյթուն կը բաղկանար չորս թաղերէ, որոնց իւրաքանչիւրը ունեցեր է զինքը կառավարող իշխանը, որուն իրենք «Իխթիյօր», տեսակ մը ծերա-կուտականի հանգամանքով կը ճանչնային եւ կ'անուանէին:

Այդ չորս թաղերն են. —

Շորվոյեան կամ Պօզպայիր թաղ. հիմնուած իսկապէս գորշ զառիթափի մը վրայ, որ կ'իջնէ մինչեւ Պաղ Աղբիւր, Չոր գետակի հիւսիսէն հարաւ: Այս թաղին արեւմուտքի մասը կը կոչուէր Աղ-ճիպոտ, ուր փոքր շուկան կը տարածուէր: 1800-ին է որ սկսած է Շորվոյեանի իշխանութիւնը:

Եաղուպեան կամ Ղարդալար (ոմանք ըսած են Գարկըլար) թաղ, որ կը տարածուի Աղճիպոտի արեւմուտքը, Սիւրէնեան թաղի հարաւը եւ կ'իջնէ դարձեալ հարաւ մինչեւ Չոր գետակը, իսկ արեւմուտքը կը սահմանուի Շուղր գետով եւ Շուղրի կամուրջով:

Սիւրէնեան կամ Միջին թաղ. կը տարածուի Եաղուպեան եւ Շորվոյեան թաղերու հիւսիսը եւ կը հասնի մինչեւ քաղաքին հիւսիս արեւմուտքը՝ Կարսի կամուրջը, Նահատակ աղբիւրը եւ իր մէջ կ'ընդգրկէ բերդը:

Վերի թաղ կամ Ենիտիւնեան թաղ. կը տարածուի Սիւրէնեանի արեւելքը եւ Շորվոյեան թաղի հիւսիս արեւելքը եւ կը հասնի մինչեւ Քէրճէր դէպի հիւսիս, իսկ դէպի արեւելք Աբընաքայտոկ տանող ուղին: Պօզպայիր թաղին իշխանութիւնը կը սկսի Շորվոյեան Հաճի Սահակէն, որ կուտած է Գալէնտէր Փաշայի դէմ եւ ամիս մը շա-րունակ ապուր-շուրփօ խմցուցած է կուտող աղքատիկ ժողովուրդին եւ կոչուած է Շորվոյեան: Եաղուպեան թաղի իշխանն է Յակոբ ա-նուն անձ մը, որ 1870-ին Զէյթունի վրայ արշաւող հօմէր Փաշան կը սպաննէ, խոյի մը մորթ-մուշտակին մէջ փաթթուած: Կը մտնէ բանակին ուղիարներուն հօտին մէջ, ոչխարի մը պէս մորթին մէջ քայլելով կը մօտենայ փաշային վրանին եւ կը սպաննէ իր տապանչալով-բանակը կը ցրուի, կը փախչի:

Ենիտիւնեան թաղի իշխանութիւնը նախ Ափարթեան ցեղին ձեռքն էր, յետոյ կ'անցնի Ենիտիւնեաններուն, հետեւեալ պարագաներուն տակ²¹: Ենիտիւնեան Ղազար աղայի հալը՝ Վահրամ - Ալլոզ կոչուած, Կապանը հարստահարող թուրք բռնատէր մը կը սպաննէ անոր ձեռ-

քէն ազատելով հայ հարս մը, 1790-ին, ու ինք կու գայ Արեգին, հօրեղբորորդին ալ Համբըն կը փախչի Սպաննութեան այս դէպքը յաջողցնելով երբ Զէյթուն կը հասնի «Ենի տիւնեայի» կէտիք կ'ըսեն: Ու այդպէս կը կոչուին իր յաջորդները: Կրօնական եւ աշխարհական երեւելիներու համահաճութեամբ վերի թաղի Ափարթեան իշխանութիւնը կը յանձնուի Ենիտիւնեաններուն:

Մինչդեռ Կիլիկիցիներ իր «Մարաշ կամ Գերմանիկ եւ հերոս Զէյթուն» ստուար երկասիրութեան մէջ, խօսելով Զէյթունի քաղաքական վիճակի մասին, տարբեր կերպով կը ներկայացնէ վերոյիշեալ պարագան եւ կը դրէ «Զէյթունի դիրքը ամուր ու անառիկ, ժողովուրդը ազատասէր ու ռազմիկ: Զէյթունի կտրիճները իրենց դերը ունեցած են խաչակիրներու ժամանակէն սկսած եւ յաճախ զբաղցուցած են սարակինոսներն եւ եգիպտական բանակները: Ռուբինեանց իշխանութեան վերջանալուն, եգիպտական բանակներու կրկնակի եւ վճռական յարձակումներուն վրայ, զէյթունցիք կ'ամբառնան իրենց անմատչելի լեռներուն մէջ ու այնտեղ կը պահեն ու կը շարունակեն իրենց անկախութիւնը: Վաչկարնակ այլեւայլ ցեղեր Կիլիկիոյ շատ մը մասերը բաժնուած էին իրենց մէջ: Զէյթուն մնացած էր սակայն աննուաճ եւ անկախ: Անկախութեան այդ դրութիւնը տեւած է Ռուբինեանց անկումէն ետքը, տակաւին աւելի քան երկու դար, գրեթէ մինչեւ 1865: Սակայն Հեթում բերդատէր քահանային Սուլթան Մուրատ Դ-էն նշանաւոր այն մէկ հրովարտակը չստացած (այդ հրովարտակին մասին նախորդ էջերուն մէջ եթէ տեղ մը անցողակի կերպով յիշեցինք, սակայն հրովարտակը յաջորդ էջերուն մէջ յարմար առիթով մը պիտի արտագրենք իր բնագիրին օրինակովը եւ թարգմանութեամբը): Ուրեմն նախ քան այդ հրովարտակին ձեռք բերուիլը, թուականէս գրեթէ երեք դար առաջ Մարաշի Զիւլգատէր (Տուլ Գատըրը) եւ Պայագիտլի երկու հակառակորդ թուրք ցեղեր կը փորձեն նուաճել Զէյթունը: Այդ ժամանակէն կը սկսի Մարաշի թուրքերուն հակառակութիւնն ու ատելութիւնը Զէյթունի դէմ, որը սակայն մաքառած է եւ չէ ենթարկուած թուրք լուծին: Պայագիտլիները սակայն որպէս բարեկամ եւ հարեւան դրացիի, դաշնակիցի դիմակին տակ չափով մը կըրցած են մուտ գտնել Զէյթունի մէջ: Զէյթուն այդ տեսները տարեկան հարկ կը վճարէր Մարաշի: Հարկահաւաք մը կու գար տուրք հաւաքելու: Պէքիր անուն հարկահաւաք մը կու գայ տեսն մը: Սակայն այս մէկը կը հաստատուի կը մնայ Զէյթուն եւ հաւաքած դրամներն ալ կեդրոն չի դրկեր: Տարիներով կը մնար Զէյթուն եւ իր դիրքը ամրացնելով կ'ապրէր գեղիս կեանք մը: Այս բանաւորին օրով Զէյթունի անդորրութիւնը կը խանդարուի, անկախու-

թիւնը կը վրդովուի: Պէքիր կը սկսի արհամարհել ամէն սրբութիւն: Կը սկսի աչք տնկել Զէյթունի գեղուհիներուն եւ կ'ուզէր որ նորապսակ հարս մը նախապէս իր կանանոցը բերուի: Ժողովուրդը զայրացած նման առաջարկի մը հանդէպ եւ առիթ կը փնտռէ զայն մէջտեղէն վերցնելու համար: Եւ առիթը չ'ուշանար:

Միւրէնեան թաղի Ս. Աստուածածնի եկեղեցին պսակ մը տեղի պիտի ունենայ, Միջնաբերդի բնակիչներէն՝ երիտասարդ մը թաղին մէկ գեղեցիկ կոյսին հետ պիտի պսակուէր: Հարսանեկան թափօրը եկեղեցիէն ելլելուն, դուրսը Պէքիր ձիուն վրայ իր մարդերով կը սպասէր: Պէքիր իր հետեւորդներէն մէկուն նշան կ'ընէ, հետեւորդը կը մօտենայ հարսին եւ մէկ ակնթարթի մէջ զայն վերցնելով Պէքիրի ձիուն գաւակը կը նետէ: Փեսան իսկոյն կը խոյանայ առեւանգիչին վրայ մէջքի սուրովը գետին կը տապալէ Պէքիրը եւ կ'ազատէ հարսը: Գազանին արիւնը կը ներկէ փողոցը: Իր հետեւորդները յուսահատական կոխ կը մղեն: Կատաղի եւ գիրկընդխառն կռիւն կ'իշխայ նաեւ փեսան: Ժողովուրդը հարսը կ'ազատեն, կը տանին եւ Պէքիրի բոլոր մարդիկը սուրէ կ'անցընեն: Կը դառնան կու գան Պէքիրի բնակարանը, հոն ապաստանողներն ալ մէկիկ մէկիկ սուրէ կ'անցընեն մինչեւ օրօրոցի մանուկը եւ բնակարանը քարուքանդ կ'ընեն: Այս հարսանիքը զէյթունցիք «Արիւնոտ հարսանիք» կոչած են:

Իսկ Միւրէնեան թաղի իշխանութիւնը, ըստ Մ. Սէմէրճեանի գիրքին ամենէն հինն է եւ կը սկսի 1545-ին, Սէթէն, որուն մասին նախապէս խօսեցանք: Սէթի եղբոր Սուրէնի անունով Միւրէնեանք կոչուեցան: Կը բնակէին բերդը. 30 տունէ կը բաղկանային եւ եօթը ճիւղերու կը բաժնուէին:— Սուրէնեան, Սէթեան (Սեթինք), Բասիլոսեան, Կէյիկեան, Մահտեսի Վարդիվարեան (Մէխճիկոնք), Աղպաշեան եւ Թումիկեան: (Այս բերդը գետին կողմէ 70 մեթր բարձրութիւն ունի):

Ետեւորակեանք նոյնպէս եօթը ընտանիքներէ կը բաղկանային:—
Խեչերինք (Պաշերեանք)
Տ. Սահակենք (Տ. Սահակեանք)
Թիւրիւսենք (Թորոսեանք)
Սըրըրբենք (Սերըրեան)
Կարապետենք (Կարապետեանք)
Աստըճատուրենք (Աստուածատուրեանք — հում նամնամենք)
Մնացակնենք (Մնացականեանք)

Շորվոյեան գերդաստանը
Շորվոյեանք (Շորվոյիներ)
Սարգիսեանք (Սարգսիներ)
Պուտուսեանք (Պուտուսներ)
Չափառեանք (Չափառներ)
Հայրապետեանք (Հայրապետիներ)
Շաշեանք (Շաշիներ)

Եփեսիսեան գերդաստան
Ասատուրեանք (Ասատուրներ)
Աւետիսեանք (Աւետիսներ)
Փանոս փաշեանք (Փէնիւս Փէշիներ)
Նշանեանք (Նիշաններ)
Բրեչեանք (Բիրչիներ)
Մրխար փանոսեանք (Մրխար Փէնիւսներ)
Մարկոսեանք (Մէրկիւսիներ)
Մրխայէլեանք (Մրխայիլներ)

Մնացական Մէմէրճեան իր գիրքին մէջ դարձեալ տարբեր կերպով կը խօսի Զէյթունի սկիզբի քաղաքական դրութեան մասին: Ան կ'ըսէ, ոչ թէ Պայագիւս օղլուներու, այլ Զիւլգատր օղլուներու հետ կապ կը պահեն զէյթունցիք եւ անոնց հարկ կը վճարէին, զոր տարին անգամ մը Պէշէն գիւղի թուրք պետերը կու գային կը գանձէին, որպէս փոխանորդ Զիւլգատրներու: Սակայն Զիւլգատրները սկսան չբաւականանալ այս սահմանափակ իրաւունքով եւ չարիքներ հասցընել զէյթունցի ճամբորդներուն: Զէյթունցիք չհանդուրժեցին, ապստամբեցան եւ տուրք սկսան չվճարել եւ դաշնակցեցան թէ՛ ճիրփի թիւրքմէներու հետ, որոնց պետն էր խօճա Քէհրա Հանիֆի Աղա: Թէ՛ ճիրփիք պիտի կրնային իրենց հօտերը եւ ժողովուրդը Զէյթունէն անցընել ամառանոց երթալու եւ դառնալու ատեն, գարնան եւ աշնան: 800 տնուոր աշիրէթ մըն էին այն ատեն, իսկ զէյթունցիք իրենցմէ քիչ մը աւելի էին: Մօտ յիսուն տարի տեւեց այս դաշինքը, մինչեւ որ Ս. Կարապետ վանքին վանահայր վարդապետը չարչարեցին, որուն մասին արդէն խօսեցանք նախապէս: Այլ կ'ըսեն անոնք անցնիլ Զէյթունէն:

Մինչեւ 1818 թուականը խաղաղ ապրեցան զէյթունցիք Զիւլգատրներուն հետ դարձեալ բարեկամանալով եւ դաշնակցելով: Այդ տարին էր որ Հեթում²² քահանայ Պոլիս գնաց եւ յաջողեցաւ Սուլթան Մուրատ Դ-էն վերոյիշեալ հրովարտակը ձեռք բերել: 1865-ին էր թուրք կառավարութիւնը յաջողեցաւ վերջ տալ ըմբոս-

տութիւններուն, տալով ներքին ինքնավարութիւն եւ չորս իշխաններէն իւրաքանչիւրը կ'իշխէր իր թաղին վրայ:

Այս իշխանական տուներէն այժմ կը մնան միայն հետեւեալները.— Եաղուպեանց Տ. Սահակեանցէն, Կարապետ, Մկրտիչ, Լեւոն, Հայկ եւ Սիրական:

Շորվոյեանց-Չափառեան տունէն Արամ:

Ենիտիւնեանց-Մարկոսեան տունէն Լեւոն եւ տղան Յակոբ, Մրխայէլեան տունէն Խաչեր եւ տղան:

Սիւրէնեանցէն չենք գիտեր թէ ողջ մարդ մնացած է:

Այս չորս իշխանները իրենց թաղերէն զատ ունէին նաեւ իրենց տիրապետութեան տակ եղած գիւղեր, ինչպէս.—

Սիւրէնեանք կը տիրէին նաեւ Ղօզլուղազ, Հաճի Տէրէ, Թանըր (տաճիկ գիւղ) եւ Տէօնկէլ (տճկէ) գիւղերուն վրայ:

Եաղուպեանք՝ Աւագկալ, Խէրէղէճ «Գարա աղաճ», Ղուռա, Գափու Գայա գիւղերուն:

Ենիտիւնեանք՝ Արեգինին գիւղերուն, յետոյ էյլէնճէ, Քէթմէն, Սարը կէօզէլ կամ Քիւրէճիք (տճկ. բնկ.) գիւղերուն:

Շորվոյեանք՝ Խէպի կամ Փէնկ — Քէյլոր հայ գիւղին, Տճկբնկ. Տէօնիւքէր եւ Թոխլու գիւղերուն վրայ:

Այս իշխանները այդ գիւղերուն կալերուն բերքին 20-ին մէկը կ'առնէին իրենց ձիրուն կերը, դարմանը: Այս չորս իշխանները իրենց թաղի եւ իրենց տիրապետութեան չըմանի գիւղերուն վրայ ամենագոր էին գրեթէ: Իրենց հպատակներուն կեանքին վրայ իսկ իրաւունք ունէին: Ենացող կին մը կամ այլ մը երկու երեք անգամ կը խրատուէր, դարձի չգալուն, իշխանին հրամանով կը սպաննուէր: Մարդասպան մը կրնար ազատիլ միայն իր թաղէն ուրիշ թաղ մը ապաստանելով եւ տեղւոյն իշխանին պաշտպանութեան տակ մտնելով: Նման պարագայի մէջ 12 (դապատայի) ըսենք տեսակ մը թիկնապահներ, որոնք որպէս խորհրդական եւ զինակիրները իշխանին, կ'ընկերանային անոր ունէ կարեւոր խնդրի ատեն: Մարդասպանին տունը կ'երթային հիմնադատակ կը քանդէին զայն իշխանին հրամանով, եւ այսպէս գոհացում կու տային սպաննուածին պարագաներուն կամ ընտանիքին: Ժամանակ անցնելէ յետոյ, երբ այդ ընտանիքը ներէր մարդասպանին եւ հաշտուէր անոր հետ, կրնար այլեւս մարդասպանը ազատ պտըտիլ ամէն տեղ: Ոչ ոք իրաւունք ունէր այլեւս անոր ունէ վնաս հասցնելու: Ներումը տեղի կ'ունենար հետեւեալ կերպով.— Թաղին իշխանն ու միւս պաշտպան իշխանը 12 դապատայիով միասին, մարդասպանը իր ուսին մէկ կանգուն ճերմակ կտաւ մը, որպէս պատանք կրելով կու գան սպաննուածին տունը:

Այն ատեն կը ներուրի:

ԶԷՅԹՈՒՆԻ ԳԻՒՂԵՐԸ.-

Մեծ գիւղերն են.- Զուտ Հայաբնակ

1. Արեգին (գիւղախումբ մըն է) տնկ. Ալապաշ կը կոչուէր կամ

Ալապաշ

2. Աւագկալ տնկ. Մխալ

3. Ֆոնոզ կամ Խոտո

Փոքր գիւղերն են.-

1. Խէպի կամ Ֆէնկ (վանք) Քէլլոր

2. Ղօզլուղազ

3. Հաճի Տէրէ

4. Էյլէնճէ կամ Ս. Ած-րդ վանքի գիւղը

5. Աճը թէյիկենց ագարակը-Պալլիս

6. Խընրիէօզ

7. Պէշէն (տանկախառն)

Թրքաբնակ

8. Քէթման

9. Սարը կէօզէլ

10. Գապագտէփէ

11. Մալաթնա

12. Ալիշար

13. Ամպարճըզ

14. Աղլըս պասը

15. Գարաթութ

16. Սոյսալը

17. Էրէճիք կամ Էսէն տէրէ պօղազը

18. Թօմպազ

19. Գարամանլը - Բերդուս

20. Պէյ թէմուրլու կամ Պայ-Տէմիրլի

21. Տէօնիւքլէր կամ Տօնիկոնք

22. Թոխլու

23. Զուգուր Հեսար - կամ Կանչի - Զուխրասար

24. Տէօկէլ

25. Թանուր

26. Ղանտիլ

27. Զիթթիլք

28. Քիւրթիւ կամ Քիւրտէլի

Աւագկալի շրջակայքը՝ ագարակներ.- Զուտ Հայաբնակ,
150 տուն բնակիչներով

1. Խերէդէճ (Խարաղաճ)

2. Զանթու աղբըր (երկճիւղ աղբիւր)

3. Գարուղայա

4. Ղուռա

5. Ալապոզան կամ Անդրէասենք

6. Թէքիւր

7. Առիւրդնա

8. Գայափունար

9. Եղիինք

10. Ագարիկոնք

11. Ղազըրինք

12. Դէգէվիւրինք

13. Սիսնէ

14. Եայլաճուխ

15. Ղալճուխ

Ֆոնուզի շրջակայքը՝ ագարակներ (զուտ Հայաբնակ,
300 տուն բնակիչներով)

1. Կուչոզ

2. Ուլնի կամ Հին Գեղ

3. Ղափու սալլիս

4. Շուղուր

5. Կանչի կամ Զուգուր Հիսար (երկու մասերէ կը բաղկանար,
տանկաբնակ մասը կը պատկանէր Զէյթունի, իսկ Հայաբնակ մասը՝
Ֆոնուզի, որովհետեւ Ֆոնուզէն դաղթած էին):

6. Ղըլլինդըր (զուտ Հայաբնակ)

7. Ղարա-թութ

8. Մըմակ աղբըր

9. Պայազը

10. Պուղուրենք

11. Պօզօղլենք

12. Թէլէմէլիք - Ապլղարիս

13. Վասապենք

14. Խուզուզենք

15. Մէրգէրենք

Արեգինի շրջակայ ագարակներ. (զուտ Հայաբնակ)

1. Աւագլոր կամ Աւագենք

2. Եչկիտինք կամ Ղալճենք

3. Եղկանենք
4. Թուփալենք
5. Տանտանենք
6. Սեփենք (Սեւեանք)
7. Մըխալենք
8. Գիւղիւրենք
9. Ղըրմանուկենք
10. Մընացակենք
11. Քէօմպէնենք
12. Քէօնտէլենք
13. Հանիսենք
14. Մակարենք
15. Մէրկէրիտանք
16. Քիղիթիկոնք
17. Աղնուղենք
18. Վարդանենք
19. Մկրտիչենք
20. Սարգըսենք
21. Թարխանենք
22. Զիլենք
23. Անանիկոնք
24. Ղախատենք
25. Զահանենք
26. Իսեփենք
27. Ճուլֆենք
28. Սահակենք
29. Եղիենք
30. Մըխսը Փէնիսիենք
31. Մանառենք
32. Պարսամենք
33. Մինասենք
34. Ղազըրենք
35. Ղուրտիկոնք
36. Մըխսըղանիլենք
37. Եաղլենք
38. Խալալենք
39. Մալխասենք
40. Մէնտիկիլենք
41. Փէհլիվանենք

42. Թիւրիւսենք (Թորոսեանք)

43. Ճոթտուրենք

44. Ղըլլենք

45. Զեփի Մէրտիւրեսին ազարակը

Այս բոլորը հայաբնակ էին եւ 300 տուն բնակչութիւն ունէին։ Վերջէն Զէյթուն գաղթած եկած են։

1 տուն Փայասցի

1 տուն Զաթցի (Պօզոխ)

1 տուն Մաղնիսացի

3 տուն Կիւրիցի

1 տուն Տարէնտէցի

4 տուն Թէյէկցի (Կեափուր տաղ)

1 Շէփիկեցի (Անտըուուն)

2 տուն Կապանցի

2 տուն Շամցի

1 տուն Պաղտատցի

1 տուն Մոսկուացի

1 տուն Շահպէնտէրեանք (Պարսկաստանցի)

1 տուն Պըզմըշէնցի (խարաբը)

1 տուն Ատանացի

1 տուն Հանընցի

6 տուն Պօղոխցի

5 տուն Մարաշցի

1 տուն Ամրզցի (Անտիօքի կողմէ)

1 տուն Տէրէցի (Մարաշու գիւղ)

24 տուն Լազ թիւրք (Տրապիզոն)

1 տուն Կեսարացի

--

60

Վերոյիշեալ գաղթականները ժամանակին Զէյթուն եկած ապաստանած են իբր ազատ երկիր։ Ատենօք շատ տեղերէ մարդիկ երբ յանցանք մը գործէին, փոխանակ թուրք բանտերու մէջ տանջուելու, կը փախչէին եւ Զէյթունի պաշտպանութեան կ'ապաստանէին։

Զէյթուն գաւառակին բնակչութիւնը։-- Համաձայն Վ. Քինէի 1891-ին հրատարակած աշխարհագրութեան, Զէյթուն գաւառակի ամբողջ բնակչութիւնը իր 39 գիւղերով 24023 նկատուած է։ Զէյթունցիին իր «Զէյթունի Պատմութիւն» գիրքին մէջ, որը տպուած է 1908-ին, Կ. Պոլիս, Զէյթուն քաղաքին բնակչութիւնը կը հաշուէր

12800. Մամիկոն Վարժապետեան՝ Տ. Յակոբեանէ թելադրուած իր «Յուշիկք Զէյթունի» (որ տպուած է 1912) երկին մէջ ամբողջ գաւառակին բնակչութիւնը 32 գիւղերով կը հաշուէ 21500, որոնց 18500 հայեր են, մնացածը՝ թուրք: Իսկ Պ. Գրիգոր Գուտուկեան իր «Աշխարհագրութիւն Կիլիկիոյ» հատորով կը բարձրացնէր Զէյթունի բնակչութիւնը մինչեւ 30000 իր ամբողջ գիւղերովը: Զէյթունցիներու գրեթէ ամբողջ բնակչութիւնը հայ առաքելական եկեղեցիին կը պատկանէր: Քաղաքական եւ այլ տագնապնեւրու պատճառով 60-70 ընտանիքներ յարեցան բողոքականութեան եւ կաթոլիկութեան:

Զէյթուն քաղաքը շինուած ըլլալով Քէրօն լեռան զառիթափին, տուները ամփիթատրոնի ձեւով իրարու վրայ բարձրացած էին, եւ կը հաշուուէին 1800:

ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՐԱՏ 4-ՐԴ-Ի ՀՐՈՎԱՐՏԱԿԸ

«Զէյթուն գասապասը թաշլոյ օլուալ կէնիշ արապխի պուլուն-մատրոքնտան խտարէի թէպիւշէրի իշլուն կիւնիւք չէքմէյէրի վէ հընթա, շայիր վէ ճէմի հուպուպաթ թաշլալարտան կէլմէսի իյնապ իթ-տիկի տէրքեար օլտուղունտան՝ մէմալիքը մահրուսէմտէ պուլունան ճիւմէ թէպամտան Մարաշ սանճաղընա թապի Զէյթուն գասապասը միւսթէնա թուրքալարաթ թէտիէ իտէճէքէրի խարաճ վէրկիւսինտէն աֆվը շահանէմ օլմուշտուր. եալընը սէնէվի մագթու վէրկիւլէրի օնպէշ պին դուրուշ օլուալ՝ պու մըգտար ազճէյի տէ Այա Սօֆիա ճամիի շէրիֆին միւսթէվէլլիսինէ թէտիէ օլունսուն, քի գանտիլլէրէ զէյթնաղը ալուպ ճամիի շէրիֆէ նուր ու լէման օլուն, օն պէշ պին դուրուշ տա քէնտու քիլիսալէրինի էտա էյլէսունլար, եէնի գանտիլլէր իւշիւն. իպատէթխանէյէրի միւնէվվէր օլուն. կէրէք Այա Սօֆիա ճամիսինէ վէ կէրէք քէնտուլէրին քիլիսալէրինէ վագրֆ սա-լլսընլար. պաշա հիւ պիր հիւքիւմտար միւտախէլէ էթմէսուն թէ-վէճճիւհին շահանէմէ նայիլ օլան Զէյթունա. վէ տախի Օսմանլը մէմուրէյն տէրունը գասապատա պուլունմասուն, հէմտէ Օսմանլը մէմուրէյնտէն պիրիսի եօլնուլուզլա գասապայա թէսատիւֆ իտէր իսէ՝ օ սէյհաճ տէրունը գասապատա եաթմայուպ շէհրին տը-շարըսընտա եաթուն, շէօյլէ քի վէրմիշ օլտուղում իսթիսնայիէթ վէ իսթիզլայիէթի հիւ պիր թարաֆտան խայլէ կէլմէյուպ՝ քէնտու քէն-տուլէրինի խտարէ էյլէսունլար, շէօյլէ պիւլէր, ալամէթը շէրիֆէմէ իթիմատ դըլալար:

ՄՈՒՐԱՏ

Սէնէ սիթթէ վէ թէլաթին վէ էլֆ

Ասիթանիէ իսթամպօլ, ֆի շէհր իւշ շէվվալ 20

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆԸ

«Զէյթուն գաւառակը ապառաժուտ ըլլալուն՝ բնակիչները ընդարձակ հողեր չունին իրենց տրամադրութեան տակ եւ ապրուստին ճարելու համար դժուարութիւն կը կրեն. իրենց պէտք եղած ցորենը, գարին եւ այլ արմտիքը ստիպուած են դուրսէն բերել: Ուստի Մարաշի գաւառին ենթակայ սոյն Զէյթուն գաւառակը՝ կայսերական հովանաւորութեան տակ գտնուած բոլոր հպատակներու մէջ իր-բեւ բացառութիւն՝ զերծ կը կացուցանեմ պետութեան գանձին վճարուելիք գլխահարկի տուրքէն: Տարեկան 15 հազար դուրուշի ուրոշ տուրք մը միայն կը սահմանեմ զոր պիտի վճարեն Պոլսոյ Այա Սօֆիա մզկիթի հոգաբարձուին, որպէսզի կանթեղներու համար ձէթ գնուի եւ սոյն մզկիթը լուսաւորուի: Նոյնչափ գումար մալ թող իրենց եկեղեցիներուն վճարեն, նորէն իբրեւ ձիթագին, որպէսզի այդ սրբավայրերը պայծառազարդուին: Այս տուրքն, թէ Այա Սօֆիայի համար եւ թէ իրենց եկեղեցիներուն համար, թող կրօնական կտակ նկատուի եւ ուրիշ ոչ մէկ վեհապետ թող չմիջամտէ կայսերական համակրութեանս արժանացող Զէյթունի: Գաւառակին մէջը Օսմանցի պաշտօնեայ պէտք չէ որ գտնուի, եւ եթէ դուրսէն այդ տեսակ պաշտօնեայ մը հոն հանդիպելու ըլլայ, պէտք է որ արտաքոյ քաղաքին օթեւան ընտրէ, այնպէս որ իմ շնորհած բացառիկ եւ անկախ դուրսիւնը վտանգի պէտք չէ ենթարկուի ոչ մէկ կողմէ. բնակիչները թող ինքզինքնին կառավարեն առանց արտաքին միջամտութեան: Թող ամէն ոք զիտնայ թէ այս է իմ կամքս, եւ յարգանք թող ընծայուի իմ կայսերական ստորագրութեանս»:

ՄՈՒՐԱՏ

Կ. Պօլիս, 20 շէվվալ 1036 (17 փետր. 1618).

Սուլթան Մուրաաի հրովարտակին պատճէնը. (Տես վերջը)

1618-ին փետր. 17-ին Սուլթան Մուրատ վերջ տալու համար գէյթունցիներու անվերջ ըմբոստութիւններուն պետական հետեւալ հրովարտակով ներքին ինքնավարութիւն կու տայ Զէյթուն քաղաքին:

Այս հրովարտակին տրամադրութեան համեմատ նշանակուած 15000 դահեկանը յետոյ բարձրացաւ 24000-ի: Ամէն տարի հաւատարիմ անձի մը ձեռքով ուղղակի Կ. Պօլիս կը դրկուէր Այա Սօֆիայի մզկիթին վերառեսչին: Վերջին այս հրովարտակը կը վաւերացուէ նաեւ Սուլթան Մէճիդէն, միջամտութեամբ Մատթէոս Պատրիարքի եւ պետական վառօգարանի պետ Տատեան Պօղոս Ամիրայի:

Այս նշանաւոր հրովարտակը 1884-ի Զէյթունի մեծ հրդեհին հրոյ ճարակ կ'ըլլայ ուրիշ շատ մը թանկագին հնութիւններու հետ:

ՁԷՅԹՈՒՆԻ ԿՐԹԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԵՒ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՆԵՐԸ

Ձէյթունի Ս. Աստուածածին, Ս. Փրկիչ, Ս. Կարապետ եւ այլ վանքերուն մէջ թէեւ եկեղեցականներ մեծ ջանք թափած են Հայ մշակոյթի, գրչութեան, գրարարի եւ այլ ուսումնասիրութեանց մէջ, եւ կարելի է ըսել ունեցած են արդիւնաւոր աշխատանք, այդ վանքերն ու եկեղեցիները եղած են մշակոյթի օճախներ եւ դպրոցներ, դպրութեան վառարաններ, եւ թէեւ ընդհանուր ժողովուրդը բլլալով հանդերձ ազատատենչ, սակայն կրթական տեսակէտով աշխարհական զանգուածը մնացած է յետամնաց: 1848-ին, առաջին անգամ Յովհաննէս Գառնեցի Վարդապետը, Ս. Յովհաննէս եկեղեցիին մէջ դըպրոց մը շինել կու տայ եւ կ'ուսուցանէ, իրեն օգնական ունենալով զէյթունցի Տ. Ղազար Քահանան: Կարապետ Գ. Ուլնեցի իջմիածնի կաթողիկոսէն եպիսկոպոս կը ձեռնադրուի եւ ի վերջոյ պատրիարք կ'ըլլայ Կ. Պոլսոյ Մկրտիչ Էֆ. Աղաթօն, 1856-ին Կ. Պոլսէն որպէս կրթական գործիչ կը ղրկէ Խաչատուր Պատուելի (ուսուցիչ) իւթիւճեանը, որ Պալճեան Մ. Հազոր Աղային նուիրած արտին²³ վրայ կը ձեռնարկէ դպրոցի մը շինութեան: Շինութիւնը կը սկսի, սակայն չաւարտած՝ Խաչատուր Պատուելի կը մեռնի: Աղաթօն Էֆ., 1861-ին կը ղրկէ մաշկերտցի Շարոյեան Սարգիս Պատուելին, որ 3 տարի պաշտօնավարելէ յետոյ կը մեռնի: 1865-ին դասատու կը կարգուի զէյթունցի Յարութիւն Զաքրեան՝ Կ. Պոլիս ուսած: Այդ միջոցներուն Գահիրէէն Պօղոս Էֆ. Կարապետեան 400, իսկ Աղեքսանդրիայէն Թազուր Փաշա Յակոբեան 200 Օսմ. ոսկի կը նուիրեն Ձէյթունի կրթական գործին ի նպաստ եւ պարտիզակցի Կարապետ Տ. Մինասեան, որ վերջը եղաւ Վահան Վրդ. Տ. Մինասեան, առակագիր, կը ղրկուի Ձէյթուն իբրեւ ուսուցիչ: 1880-ին Ձէյթունի կրթական գործը կը ստանձնէ Կ. Պոլսոյ Հայ Միացեալ Ընկերութիւնը եւ որպէս ուսուցիչ յաջորդաբար կը ղրկէ Ձէյթուն Բարսեղ Վարդանեան, Պոյաճեան, Ալլահմէտեան, Սմբատ Բիւրատ Տ. Ղազարեան, Աւետիք Կէսիւսեան: 1900, Յունուար 1-ին Միացեալ Ընկերութիւնը Ձէյթունի մէջ ունէր մանչերու վարժարան մը, Կեդրոնական անունով, բարձրագոյն նախակրթարանի (իրատի) աստիճանով, որուն մասին նախորդ էջերով արդէն խօսած ենք եւ ընդհանուր կերպով նաեւ չրջանի դպրոցներու մասին: Ունէր նաեւ 4 ծաղկոց: Կը պաշտօնավարէին 12 այլ ուսուցիչներ, տնտես մը: Աշակերտներու թիւը հասած էր 455-ի, իսկ տա-

րեկան ծախքը եղած էր 204.5 Օսմ. հնչուն ոսկի: Իսկ Կ. Պոլսոյ Հայուն հաց ընկերութիւնը բացած էր վերջին տարիներու նորակառոյց Ս. Հրեշտակապետի շէնքին մէջ աղջկանց համար մանկապարտէզ մը, տարրական միջին եւ բարձրագոյն կարգերու համար նախակրթարան մը: Ձէյթունցի աղջիկներէ զատ այնտեղ կը յաճախէին նաեւ Ձէյթունի կառավարական թուրք պաշտօնեաներու աղջիկները:

Միացեալ ընկերութեան 1 Մեպտ. 1911-1912 Օգոստ. 31-ի շրջանի տարեկան տեղեկագրին մէջ հետեւեալ տեղեկութիւնները արձանագրուած են Ձէյթունի եւ չրջականերու կրթական գործի մասին.

Ձէյթունի Տնօրէնութիւնը.— Ձէյթունի դպրոցները կը կառավարուին փոխ տնօրէնով մը: Ձէյթունի Կեդրոնականն ալ բաղձացուած չափին հասցնելու համար անհրաժեշտ է ունենալ քանի մը կարող ուսուցիչներ: Բացի Ձէյթունի Կեդրոնականէն եւ Ծաղկոցներէն, Ընկերութիւնը այս շրջանին մէջ ունէր նաեւ հետեւեալ նախակրթարանները.—

	1900-1910 Աշակերտ	1910-1911 Աշակերտ	1911-1912 Աշակերտ
Ձէյթունի Կեդրոնական	120	143	171
Ձէյթունի 4 Ծաղկոցներ	335	382	400
Կոկիսոն	35	41	45
Թաշ Օլուզ	55	43	82
Քիրէճ	60	34	35
Տէյիրմէն Տէրէ	30	35	—
Ալպիստան	80	75	92
Ֆունուզ	150	130	125
Միսալ	45	50	51
Կապան	150	63	53
Շիվիլիկի	60	48	51

Գումար 1120 1024 1105
Այս աշակերտները բոլորն ալ մանչեր են, Ձէյթունի Կեդրոնականի աղջկանց նախակրթարանի աշակերտուհիները եւ մանկապարտէզի աղջիկները այս ցանկէն դուրս են:

1911-12-ի շրջանին, Ձէյթունի Կեդրոնականին ուսուցիչներն էին.— Փոխ Տնօրէն՝ Յովհաննէս Ահարոնեան, Խ. Եղուպեան, Խ. Քարուկեան, Ն. Եզէկիէլեան, Յովհաննէս Աղեքսանեան, Գէորգ Շահինեան, Աւետիս Կանծեան, տնտես էր Փանոս Պատուլեան: Տարեթոշակներուն գումարն էր 20380 Օսմ. ոսկի, աշակերտներուն թիւն էր 101 մանչ,

Ս. Աստուածածին Ծաղկոցին ուսուցիչներն էին Արտաշէս Պօսթանեան, Վարդապար Խուլմունեան, Յովսէփ Ազրբեան: Լուսաւորչի Ծաղկոցին ուսուցիչներն էին Լեւոն Նորաշխարհեան, Յակոբ Գերմանիկեան: Ս. Յովհաննէս Ծաղկոցին ուսուցիչներն էին Աստուածատուր Տէճեան, Վարդապար Պօզողյան: Ս. Սարգիս Ծաղկոցին ուսուցիչն էր Հայկ Տիրացուեան: Այդ թուականէն առաջ նոյն կեդրոնականին մէջ որպէս ուսուցիչ պաշտօնավարած են նաեւ Ասատուր Խրրբուրդեան, Գր. Գասապեան, Յակոբ Թաշճեան, Միսաք սիսեռեան, սակայն այդ թուականին Ա. Խրրբուրդեան Ձէյթուն չէր, Յ. Թաշճեան ձգած էր ուսուցչութիւնը, կառավարական պաշտօնեայ եղած եւ փաստաբանութեամբ զբաղած էր ատեն մը, եւ ժամանակ մըն ալ Մարաշ հրաւիրուած էր տեղւոյն հայ վարժարանին (կեդրոնական) մէջ պաշտօնավարելու համար: Իսկ Մ. Միսեռեան 1808-1810-ին պաշտօնավարած է Ս. Յովհաննէս Ծաղկոցը: 1810-1811-ին Թաշուղ եւ տարւոյ կէսին Ալպիստան ղրկուած է պաշտօնի բարձրացումով եւ թոշակի յաւելումով: 1811-12-ին Կոկիսոնի նախակրթարանի մէջ պաշտօնավարած է, եւ դպրոցական արձակուրդին փոխանակ իր ծննդավայրը՝ Ձէյթուն վերադառնալու, մեկնած է Ատանա, Ճիհան, Տէօրթեօլ եւ անկէ ղրկուած է Անտիօք ուսուցչութեան եւ մնացած է հոն եւ երեք տարի յետոյ աքսորուած է Համա: Ձէյթունի մէջ կային նաեւ կաթողիկ եւ բողոքական վարժարաններ, փոքրաթիւ աշակերտներով:

Ձէյթունի եւ շրջականերու մէջ ուսման համար նոր շարժում մը սկսած էր: Ասիկա Միացեալի գործն էր:

Աւելորդ չենք նկատեր այստեղ տալ քանի մը անուն կրթական մշակներու, մտաւորական հայրենակիցներու կենսագրական գծերուն մէկ համեմատ պատկերը:—

ՄՆԱՅԱԿԱՆ ՍԷՄԻՐՃԵԱՆ («Ձէյթունցի» ծծկն.) Ծնած է 1840-ին, աշակերտած է տեղւոյն ազգ. վարժարանին: Ետոյ ուսուցիչ եղած է Ձէյթունի մէջ: Ազիզ Փաշայի 1862 պատերազմին առիթով ղէյթունցի Յակոբ քահանայի հետ պատգամաւոր կը ղրկուի Կ. Պոլիս: 1864-ին կը դառնայ Ձէյթուն իր նախկին պաշտօնին: 1866-ին Զազրեան Աւագի հետ որպէս պատգամաւոր Ատանա կ'ուղեւորի Կիլիկիոյ կաթողիկոսի ընտրութեան համար: Քաղաքական դէպքերու հետեւանքով 7 ամիս կը բանտարկուի Քիլիսի մէջ: Ազատուելէ ետքը կ'անցնի Կիպրոս, յետոյ Աղեքսանդրիա: 1890-ին կը մեկնի Էլմիսին, կ'այցելէ ուլնեցի կարապետ (Դահուկոնց) կաթողիկոսին գերեզմանը: Խրիմեան Հայրիկ իրեն 8000 ռուպլի կու տայ Ձէյթունի

մէջ որբանոց մը բանալու համար: Կ'անցնի Մոսկուա, Վարչաւիա, Վիեննայի ճամբով կ'երթայ Ժընեւ, 4 տարի կը մնայ այնտեղ, 1902-ին կ'անցնի Բարիդ: 1908-ի սահմանադրութեան տարին կը դառնայ Ձէյթուն: Ձէյթունի լսարանին մէջ կը խօսի Ձէյթունի ժողովուրդին, կը խրախուսէ երիտասարդութիւնը (եւ ներկայ եղած եմ իր բանախօսութեան): Ատանայի-Կիլիկեան ջարդերէն յետոյ, հիասթափուած եւ դառնացած 1911-ին, իր եղբոր որդի Աշոտ անուն որբը հետը առնելով, վերջնականապէս կը հեռանայ Ձէյթունէն, կը մեկնի Քէօսթէնճէ եւ Պուլքէշ: 1912-ին, չորրորդ անգամ կ'այցելէ Զմիւռնիա, երկու անգամ 1896-ին, 1914-ին կ'այցելէ Երուսաղէմ Ս. Յակոբի վանքը, 74 տարեկանին կը վախճանի եւ կը թաղուի Սիոնի գերեզմանատունը: Իր գործն է «Ձէյթունի անցեալէն եւ ներկայէն» պատմութիւնը, երկհատոր եւ երկու անգամ տպագրուած:

ՍՄԲԱՏ ԲԻԻՐԱՏ (Տ. Ղազարենց) Ծնած է Ձէյթուն 3 Մարտ 1862-ին: Աշակերտած է 1871-1880 Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանին: 1880-82-ին Մարաշ ուսուցիչ-տնօրէն: 1884-ին ուսուցիչ Ձէյթունի Միացեալ վարժարանին մէջ: Այդ ատեն էր որ իր պաշտօնակից Խ. Տատուրեանի հետ կը պատրաստէ Ուլնիա կամ Ձէյթուն տեղագրականը, որուն ձեռագիրը Յ. Ալլահվերտեան շորթելով, իբրեւ իր գործը, մամուլին յանձնած է վերջը: 1885-ին դպրոց մը կը բանայ Սիս: Նոյն տարին Ս. Բիւրատ Կ. Պոլիս կ'երթայ, կը ծանօթանայ գրչի մարդոց, Կամուսնանայ Գալֆայեան որբանոցէն վարժուհիի մը հետ: 1885-1887 տնօրէն Կիւմիւլճինէի եւ Ձէյթունի դպրոցներուն: 1887-90-ին ալ Սամսոն կը հիմնէ կրթարան մը: Որպէս հնչակեան գործիչ կը ճամբորդէ դաւառները, քարոզչութեան գործով: Ձերբակալուելով 5 տարի կը մնայ Մարաշի բանտը իր կնոջը հետ: Ազատ արձակուելուն, կ'երթայ Կ. Պոլիս, մէկ տարի կը պաշտօնավարէ Գատըքճօլի Արամեան վարժարանը: 1896-ին կը փախչի Եգիպտոս, հրաժարելով կուսակցութենէն կը նուիրուի կրթական, գրական եւ հասարակական գործերու: Գահիրէ կը բանայ դպրոց մը եւ կը յաջողի 4 տարի շարունակել: Այնտեղ կը հրատարակէ «Նոր օր» եւ «Փիւնիկ» թերթերը: 1904-ին Աղեքսանդրիոյ Ազգ. վարժարանին տնօրէնութեան կը կոչուի: Երկու տարի կը մնայ այն տեղ: 1907-ին կ'անցնի Ռումանիա, սակայն հազիւ տարի մը կը մնայ եւ լրտեսութեան հետապնդումէն կը ստիպուի վերստին դառնալ Եգիպտոս: Սահմանադրութեան հռչակումին, շունչը կ'առնէ Պոլիս, նետուելու համար լրագրական եւ ուսուցչական ասպարէզները Պահ մը շարունակած է «Փիւնիկը», յետոյ «Գաղափար» թերթը: Ազգային երեսփոխան ընտրուած է իր ծննդավայր՝ Ձէյթունի

թունէն: Գրած է ազգային պատմական վէպեր եւ յեղափոխական կեանքէ կարգ մը գրքոյկներ, ինչպէս նաեւ բանաստեղծութիւններ, որոնք են.— «Բանտէ բանտ», «Երկրորդ Սասուն», «Զէյթունի վրէժը», «Դէպի Երլարզ», «Իննսունըվեց», «Զէյթունցի վարդապետը», «Որդեսպան ծնողը», «Սասունէն ետքը», «Վերջին բերդը», «Տէմիր մուշու», «Վեղարաւոր հերոսը», «Դիակապուտները», «Աւարայրի արծիւը», «Ազատութեան համար», «Արիւնի ճամբուն վրայ», «Աւետարան» (Զէյթունի բարբառով), «Բուրգերէն» բանաստեղծութիւնը, «Պատմութիւն հայոց» (Ա. հատոր), «Արիւնի ձոր», (յետ մահու լոյս տեսած): Զեռագիր թողուցած է բանաստեղծութեան հատոր մը՝ «Լեռնականի մը յուշատետրը», «Լեռին կոյսը», Հանրիատ (Վոյթէրի) թարգ. հմուտ էր գրաբարի, ֆրանսերէնի եւ պատմութեան: 1900-ի սահմանադրութեան ամառը վերջին անգամ եկաւ Զէյթուն եւ քանի մը ամիս յետոյ վերադարձաւ Պոլիս: Սմբատ Բիւրատ 1915 Ապրիլ 24-ին հայ մտաւորականներուն հետ Պոլսէն աքսորուեցաւ Այաշ եւ զոհ գնաց մեծ եղեռնին:

ՆՇԱՆ ԵԶԵԿԻԷԼԵԱՆ.— Ուսուցիչ, ծնած է Զէյթուն 1888-ին: Ընթացաւարտ Միացեալ ընկերութեան Զէյթունի կեդրոնական բարձրագոյն նախակրթարանէն: Ինքնաշխատութեամբ մասնաւորապէս կը զարգացնէ թուրքերէնը: Նախ Զէյթունի, յետոյ 1913-1914-ին Մարաշի մէջ կը վարէ ուսուցչական պաշտօն, որպէս թուրքերէնի դասախօս: Մ. Եզեկիէլեան թէ Մարաշի եւ թէ Զէյթունի մէջ սիրուած էր որպէս պարտաճանաչ պաշտօնեայ: Մտած է դաշնակցական շարքերը, մասնակցած է ազգային գործերու: Իբրեւ Զէյթունցի եւ ուսուցիչ, տարագրութեանց սկիզբը իսկ, կը ձերբակալուի եւ 1915 Նոյեմբերին Մարաշի մէջ կախաղան կը հանուի, իր հայրենակից 80 Զէյթունցիներու հետ:

Նոյն ժամանակները, թուրք կառավարութեան կողմէ 300-ի մօտ Զէյթունցիներ կը բերուին Մարաշ, որոնց մեծ մասը կիր պատրաստելու փոսերու մէջ ողջ ողջ կ'այրեն, իսկ մէկ մասը կը գնդակահարեն:

ԽԱԶԵՐ Ս. ԵԱՂՈՒՊԵԱՆ.— Ուսուցիչ, թողը Եաղուպեան իշխանին: Ծնած է Զէյթուն, 1880-ին, նախակրթութիւնը ստացած է Զէյթունի վարժարանը, յետոյ զրկուած է Կարնոյ Մանասարեանը, զոր աւարտելէ յետոյ դարձած է Զէյթուն: Երկար ատեն եղած է ուսուցիչ Զէյթունի Միացեալ կեդրոնական վարժարանին մէջ: Եղած է նաեւ տնօրէն Զէյթունի որբանոցին: Աւանդած է հայ լեզու, հայ գրականութիւն եւ Ազգ. պատմութիւն: Նշանակուած է Մէճլիսի իտարէի անդամ: 1915-ին կախաղանի չուանէն ազատած, կը տարագրուի Հա-

լէպ եւ կրած չարչարանքներէն տկարացած, հիւժած հոգեւոր մէջ ժանտատենդէն կը մեռնի: Զէյթունի մէջ ինքն էր որ Հ.Յ. Դաշնակցութեան հիմը դրաւ:

ԾԱՐՈՒԹԻՒՆ ԵԱՂՈՒՊԵԱՆ.— Զէյթունցի, դաշնակցական, ուսուցիչ, եղբայրն էր Խաչիկ Եաղուպեանի, ծնած է Զէյթուն 1886-ին: Նախակրթութիւնը ստացած է Զէյթուն, իր ուսումը շարունակած է Սիս, Արմաշ եւ ի վերջոյ Կ. Պոլսոյ երկրորդական վարժարանին մէջ: Որպէս ուսուցիչ պաշտօնավարած է Պոլիս, Սիս եւ Զէյթուն: Յարութիւն եւս եղած է եղբոր պէս եռանդուն ուսուցիչ եւ նուիրուած դաշնակցական մը: Տարիներու տառապանքներէ յետոյ վերապրած է տարագրութեան սարսափներէն, դարձած է Զէյթուն, 1921 Նահանջին սակայն, հերոսական կռիւի ընթացքին նահատակուած է:

ՔԵՐՈՎԼԷ ԵԱՂՈՒՊԵԱՆ.— Նմանապէս Զէյթունցի դաշնակցական ուսուցիչ եւ իշխանադունի թող, ծնած է 1900-ին: Ատանա կը զրկուէր Դաշնակցութեան շրջանային ժողովին Զէյթունի Կ. ի կողմէ որպէս պատգամաւոր: Օսմանիէ-պաղէի մօտ ճամբան կը սպաննուի կիլիկեան ջարդի ատեն, թուրք ջարդարար խուժանի մը կողմէ, իր զարմիկ՝ Յարութիւն Եաղուպեան եւս վերջէն քերովքէն ինկած տեղւոյն մօտերը նահատակուեցաւ 1921-ին:

ԳՐԻԳՈՐ ԳԱՍԱՊԵԱՆ.— Զէյթունի ուսուցիչ: Ծնած Զէյթուն 1877-ին: Ընթացաւարտ Միացեալի Զէյթունի կեդրոնականէն: Ինքնաշխատութեամբ կը հմտանայ թրքերէնի, թուրք օրէնքները ուսումնասիրելով կը ձգէ ուսուցչութիւնը ատեն մը եւ կը գործէ որպէս փաստափան Զէյթունի մէջ: 1911-1913-ին, Մարաշի կեդր. վարժարանին մէջ պաշտօնավարած է որպէս թրքերէնի դասախօս: Գասապեան շուրջ 25 տարի ուսուցչութեամբ գրադած է եւ սիրուած կրթական մշակ մը եղած է, հասցուցած է բազմաթիւ աշակերտներ: Աշխատասիրած է Բիւզանդիոնի եւ ուրիշ թերթերու: Թողուցած է անտիպ գործեր: Վերջերս՝ 1914-ին մեկնած է Պոլիս հետեւելու համար իրաւաբանութեան, սակայն ընդհանուր պատերազմին պատճառով վերադարձած Զէյթուն, ընտանիքով տարագրուած է Բազա եւ հոն մեռած 1916-ին թշուառութեան մէջ:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ.— Զէյթունցի ուսուցիչ: տարիներ վարած է Զէյթունի եւ շրջակայից միացեալ վարժարաններուն փոխ տնօրէնութիւնը: Հմուտ է թուաբանութեան, գրահաշիւի (Ալճեպրա) եւ

Թուրքերէնի 1915-ին ընտանիքով տարագրուեցաւ Դամասկոսէն Հարաւ Հափրանի գիւղերը: Վերապրեցաւ, Հ.Բ.Ը. Միութեան Երուսաղէմի «Արարատեան» եւ «Վասպուրական» որբանոցներուն մէջ պաշտօնավարեց որպէս ուսուցիչ եւ «մատակարար»: Այդ հանգամանքով դնաց Հայաստան ու վերադարձաւ: Կարճ ատեն մը ետքը ընտանիքովը եւ տղաներովը մեկնեցաւ Հարաւային Ամերիկա: Եւ հոն բաւական տարիներ ապրելէ եւ բարուք տնտեսական վիճակ մը ապահովելէ յետոյ, այնտեղ մեռաւ վերջերս: Մեծ տղան, ատամնաբոյժ՝ Արշակ Ա-Հարոնեան Ամերիկա էր: Մեկնեցաւ Հայաստան: Այժմ այնտեղ կ'աշխատի:

ՅԱԿՈՐ ԹԱՇՃԵԱՆ.— Զէյթունցի ուսուցիչ: Աքսորուեցաւ Հալէպ տարագրութեան ատեն: Յետոյ իր Հայրենակից՝ Յովհաննէս Տ. Նըշանեանի, Կարապետ Պալճեանի եւ ուրիշներու հետ տարուեցաւ դէպի Տիգրանակերտ, որպէս թէ այնտեղ դատուելու: Սակայն ճամբան սպաննուեցաւ ինքը եւ իր հետ եղողները, ճիշդ Գր. Զօհրապի, Վարդգէսի սպաննուած տեղերը:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՄՏԱԽՈՐԱԿԱՆՆԵՐ ԷՒՆ ՆԱԵԻ.

Յովհաննէս Ալեքսանեան (ուսուցիչ), Վարդափառ Խուլմանեան (ուսուցիչ), Յարութիւն եւ Սեդրակ Գասապեաններ (պետական պաշտօնեայ), Արտաշէս Պոստանեան (ուսուցիչ), Եղիշէ Սաթճեան (Կ. Պոլսոյ պետական անասնաբուժական վարժարանէն ընթացաւարտ): Եղիշէ որպէս փոքր սպայ (կիշիւք զապէթ) բանակին հետ Պաղտատի ճակատը կը ղրկուի եւ այնտեղ կը սպաննուի: Իսկ վերոյիշեալ մտաւորական երիտասարդները Տէր-Զօրի ջարդին զոհ կ'երթան:

ԳՐԻԳՈՐ ՄԷՆՃԻԿԵԱՆ. — (ուսուցիչ) չենք գիտեր ո՛ւր սպաննուեցաւ:

ԿԱՐԱՊԵՏ ՊԵՐՊԵՐԵԱՆ եւ **ՄՏԵՓԱՆ ԳԵՐՄԱՆԻԿԵԱՆ** Ատանայի ջարդերուն զոհ գացին:

ՎԱՐԴԱՎԱՐ ԳԱՐԱՆՅԻԼԵԱՆ, նոյնպէս ուսուցիչ եւ հնչակեան, 1915-ին կը բանտարկուի Հալէպ, մահուան կը դատապարտուի: Գինադադրին ազատ կ'արձակուի, կը վերսկսի ուսուցչութեան պաշտօնին, Հալէպի Ներսէսեան եւ Հայկազեան վարժարաններուն մէջ եւ կը վարէ նաեւ «Սուրբական մամուլ» հնչակեաններու օրկանի խմբագրութեան գործը: Ունի «Գիւղատնտեսութիւն» անունով գրքոյկ մը, կը գրէ նաեւ 1921-ի «Զէյթունի նահանջին» պատմութիւնը: Կը հրատարակէ

«Գիտական շարժում» անունով պարբերաթերթ մը, որ քանի մը թիւերէ ետքը կը դադրի: 1925-ի Յունուարին կը մեռնի Հալէպ թոքախտէ:

Հ.Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԶԷՅԹՈՒՆԻ ՄԷՋ

Ինչպէս քիչ առաջ ըսած էինք, Խաչիկ Եաղուպեան, Կարնոյ Սանասարեանը աւարտելով դարձած էր Զէյթուն եւ կը պաշտօնավարէր Զէյթունի Միացեալ Կեդրոնական վարժարանին մէջ: Ինքն էր որ հիմնեց Զէյթունի Շրջանաւարտից Միութիւնը 1908ին: Իսկ 1908-ին Օսմ. սահմանադրութեան հռչակումէն անմիջապէս յետոյ Շրջանաւարտից Միութիւնը վերցուց իր վրայէն այդ անունը, որը տեսակ մը ծածկանուն էր Համիտեան ըէժիմին հարկադրանքին տակ եւ դարձաւ Հ.Յ.Դաշնակցութեան ենթակոմիտէութիւն: Մենք այս տեղ հարկ չենք տեսներ Դաշնակցութեան գործունէութեան մասին աւելի բան գրելու եւ պիտի բաւականանանք միայն ընկերներու անունները յիշատակել եւ անցնիլ:— Անուններ՝ որոնք այլեւս պատմութեան կը վերաբերին, որովհետեւ անոնց մեծամասնութիւնը զոհ գնաց մեծ եղեռնին, հազիւ մէկ երկու հոգին կ'ապրին, հրաշքով ազատելով աքսորի ճամբաներէն եւ ջարդերէն: Վերապրողներն են.— Խաչիկ Քարուկեան, Միսաք Միսեռեան, Միքայէլ Գուլումճեան, Սեդրակ եւ Թորոս Մարկոսեաններ, իսկ սպաննուած են Կախաղան Հանուելով, Կիրի օճախներու մէջ ողջ ողջ ալրուելով կամ գնդակահարուելով՝ Նշան Եզէկիէլեան, Յակոբ Քէօքիկեան, Յովսէփ Զօլագեան, Վարդափար Խուլմանեան, Լեւոն Ա-Հարոնեան, Ասատուր Ղուկասեան եւ ուրիշներ, որոնց անունները չեմ յիշեր: Գալով երեք Եաղուպեաններուն, վերը յիշեցինք թէ ինչ պարագաներու տակ մեռան կամ սպաննուեցան:

ՀՆՁԱԿԵԱՆՆԵՐ

Զէյթունի մէջ հնչակեանութիւնը աւելի կանուխ մուտք գտաւ, սակայն որոշ գործունէութիւն մը ցոյց չտուին: Անոնցմէ կը յիշենք Զազրեան Փանոս, որ հերոսաբար կուռեցաւ Ս. Աստուածածնայ վանքը եւ յետոյ Ֆնտրճագ եւ հոն կոխին մէջ ինկաւ: Յետոյ եղբայրը՝ Յակոբ եղբօր որդին՝ Էմմանուէլ, Անդրանիկ Զազրեաններ, որոնց առաջին երկուքը նոյնպէս Ֆնտրճագի մէջ ինկան, իսկ Անդրանիկը Զէյթունի նահանջին ճամբան սպաննուեցաւ: Վարդափար Գրանֆիլեան ինչպէս ուրիշ առիթով մը քիչ առաջ յիշեցինք, Հալէպ մեռաւ թոքախտէ, տարիներ բանտ մնալէ եւ ազատ արձակուելէ քանի մը տարի յետոյ:

Թէպէտեւ Զէյթունի կրթական վիճակի եւ մտաւարականներու մասին մեր ամփոփ տեղեկութիւնները տուինք վերոյիշեալ տողերով, սակայն աւելորդ չնկատեցինք տասնեակներով տարիներ Զէյթունի եւ շրջակայից դպրոցներու տնօրէնութիւնը վարող եւ հետեւաբար կրթական կեանքին անմիջականօրէն տեղեակ եւ իրազեկ Յովհաննէս Ահարոնեանի մէկ յօդուածին եւս մէկ ամփոփումը մէջբերել այստեղ։

Յ. Ահարոնեան կը գրէ։

«Հին ժամանակներէն սկսած, մինչեւ 1862 թուականը, թաղեցիական կոիւններ, զինեալ բախումներ, ընդհարումներ, միշտ անպակաս կ'ըլլային։ Իսկ արտաքին թշնամի յարձակումներուն, վերջ կը գտնէր ներքին կոիւլը, կը միանային, մինչեւ որ թշնամին պարտուէր։ Թշնամին իրենց սահմանէն հեռանալէն յետոյ, կը վերսկսէին իրենց խռովութիւնները։ Երբեմն ալ թաղին մէջէն իշխանին դէմ ըմբոստացողներ կ'ըլլային։ Զէյթունցիին մինչեւ վերջ մնացած է կրօնասէր եւ բարեպաշտ եւ այդ պատճառով, իշխանի մը դէմ ըմբոստացումը առիթ տուած է որ 600—700 տնուոր զէյթունցիին ստիպուի ունենալ 6 եկեղեցի։ Մինչեւ 1915 անոնցմէ չորսը կանգուն կը մնային, 1887-ին Ս. Յակոբ Մծբնայ Հայրապետին անուան եկեղեցին մեծ հրդեհին աշրելով, ինչպէս միւսները, իր տեղը կառուցուեցաւ Ս. Յակոբի կեդր. վարժարանը։ Անոր կից 1912-ին բարձրացուցին Առաջնորդարանի շէնքը։ Ս. Հրեշտակապետ վերածուեցաւ աղջկանց վարժարանի։ Մատուռներէն՝ Պօղոս-Պետրոս հիմնայատակ եղաւ։ Ս. Թորոս Աստուածածնայ եկեղեցիին միացուեցաւ։ Միւս Ս. Յակոբի մատուռը գերեզմանոց եղաւ, իսկ Ս. Պարսամի գետինը ծախուեցաւ։

Մինչեւ 1862-ը, այսինքն Ազիզ Փաշայի 40000-նոց զօրքով Զէյթունէն պարտուիլը, Զէյթուն տնտեսական, կրթական եւ կազմակերպական շատ աննախանձ վիճակ մը կը ներկայացնէր։ Եղբայրական կոիւններու պատճառով, ծաղկոց մանգամ չունէր։ Ս. Գիրք եւ այլ գիրքեր միայն եկեղեցականը կարդալու արտօնուած էր։ Եկեղեցական ջուհակներու քով կը յաճախէին մանուկներ, որպէսզի Սաղմոս կարդալ սորվին եւ վարժուին փոխասացութեան։ 1850-ին Զէյթունի մէջ միայն 23 հոգի կարդալ գիտցող եւ 3 հոգի ալ ընթերցանութեան հետ նաեւ գիր-գրել գիտցող եւ նաեւ հալիւ ընել կրցող կը գտնուի եղեր։ Մինչեւ 1862 գիր գրողներ մատի վրայ կը համրուէին։ Իսկ նամակ գրող մէկ երկու հոգի միայն կային։ Ազիզ Փաշայի պարտութենէն յետոյ, Զէյթուն՝ ազգայիններու ուշադրութիւնը կը գրաւէր եւ այցելողներ կը սկսին գալ Զէյթուն։

1863-ին զէյթունցի Պրն. Յարութիւն Չազրեան (Չօլազ վարժապետ)

հօրեղբայրը Պ. Յովհաննէս Չազրեանի (որ իր «Մոմին փարան տուր» ոտանաւորովը անմահացած է) Զէյթուն այցելող ազգայինի մը հետ Պոլիս կ'երթայ եւ զէյթունցի տղու մը դաստիարակութեան համար Ստեփան Պերճ Պօղոս Փափազեանի պաշտպանութիւնը ձեռք կը բերէ։ Յովհաննէս կը դառնայ Զէյթուն եւ Յարութիւն Չազրեանը կը տանի Կ. Պոլիս որ դաստիարակուի։ Այդ թուականէն յետոյ է որ Զէյթունի իւրաքանչիւր եկեղեցին կ'ունենայ իր ծաղկոցը։ ... Յովհաննէս Պոլիս երկրորդ վերադարձին ծանօթութիւններ կը հաւաքէ կը բերէ Զէյթուն շերամի որդին եւ թուրք տերեւի, շերամարտուծութեան մասին։ Այս տեղեկութիւնները մղում կու տան Զէյթունի մէջ շերամարտուծութեան։ Չազրեան (Չալազեան) ընտանիքին երկաթագործի եւ դուխն ու դումաշ՝ մետաքսէ կերպաս պատրաստելու մասնագէտ վարպետներ կը բերեն դուխսերէն Զէյթուն։ Մեքենաներ ջուրով կը դառնան, դուխնու²⁴ կը գործուի։ Բայց ժողովուրդին ըմբոստացումը արգելք կ'ըլլայ արտածման եւ Չազրեանը կը փնտրուի եւ վարպետը կը մեկնի։ 1865-էն յետոյ Օսմ. կառավարութիւնը մուտք կը գործէ Զէյթուն, կ'ունենայ իր ներկայացուցիչը, թաղեցիական կոիւնները վերջ կը գտնեն, ժողովուրդը կը սկսի շինարար աշխատանքի։ Զէյթունի մէջ, առաջին նախակրթարանը կը բացուի 1868-ին, Պ. Յարութիւն Չազրեան Զէյթուն դառնալով։ Այդ նախակրթարանի պիւտճէն կ'ապահովէ Նուպար Փաշա։ Չորս ծաղկոցները աւարտողներէն կ'ընտրուին նախակրթարանի աշակերտները։ 1869-ին, Իզմիրի Նշանաւոր վաճառական Պ. Ապարթախանի կողմէ՝ Զէյթուն, որպէս Փրանսերէնի ուսուցիչ կը ղրկուի Կարապետ վարժապետ (վերջէն Վահան Վրդ. Պարտիզակցի), սակայն այս վերջինը եւ Յ. Չազրեան չեն կրնար համերաշխ գործել։ Մէկ տարի յետոյ կը մեկնի Կարապետ վարժապետ։ Իսկ Չազրեան ալ երկու տարի կը մնայ պաշտօնի վրայ։ Չազրեան կամ զէյթունցիներու որակումով Չօլազ վարժապետ որքան ալ ըմբոստ, չհամերաշխող, սակայն իր պաշտօնին նուիրուած ուսուցիչ մը եղած է եւ կարճ ժամանակի մէջ տուած է կարգ մը շրջանաւարտներ, որոնցմէ երկուքը՝ Ասատուր Էֆ. Խըլլարաբեան եւ Աւետիք Կէսիանեան թուրքերէն լեզուն լաւ սորված են եւ միշտ պաշտօնի վրայ եղած։

Յետոյ Զէյթուն կու գայ հրապործ Մկրտիչ Վրդ. Տիգրանեան (եօթը փորձանք 52 սնտուկ գիրքերով եւ 7 զէյթունցի պատանիներով կը վերադառնայ Պոլիս եւ զանոք կը տեղաւորէ Նուպար Շահնազարեան վարժարանը)։ Նախակրթարանը կը փակուի, սակայն ծաղկոցները տակաւին կը շարունակէին իրենց գոյութիւնը։ 150 աշակերտներ կը

յաճախէին ծաղկոցները:

1871-ին, Երուսաղէմի միաբաններէն զէյթունցի Տ. Աթանաս Վրդ. Զէյթուն կու գայ, աս ալ 7 ուշիմ սաներ կը տանի Երուսաղէմի ժառանգաւորացը: Ասոնցմէ մէկն է Սմբատ Բիւրատ եւ հրաշագործ սաներէն Փիլիպպոս, որը 1878-ին Զէյթուն կը ղրկուի Շահնազարեանի կողմէ, Զաքրեանի նախակրթարանը վերաբանալու համար: Սակայն Փիլիպպոսի պաշտօնը ինը ամիսէն կը վերջանայ առանց որոշ արդիւնքի: Երկրորդ տարին պաշտօնի կը կանչուի զէյթունցի Պ. Ու. Տատուրեան, որուն թոշակը կը հոգայ Պոլսոյ Կիլիկեան ընկերութիւնը, որ վերջէն «Արարատ» եւ «Վասպուրական» ընկերութեանց հետ միանալով կազմուեցաւ «Հայ միացեալ ընկերութիւն»ը: Պրն. Տատուրեան թուրքերէնի ուսուցիչ նշանակեց Զաքրեանի սաներէն Պ. Աւետիք Կէսխանեանը եւ հայերէնի համար՝ Պ. Նղիա Զաքրեանը²⁵:

Մինչեւ 1878, բացառութիւնը յարգելով անշուշտ, ժողովուրդը ընդհանրապէս անվարտիք էին եւ մեծամասնութիւնը կը հաղուէր արաբ գիւղացիներու պէս տեսակ մը շապիկ (զպուկ, էնթարի) եւ գինուած կը պատէին: Աշակերտներն ալ անվարտիք էին եւ գլուխին կը կապէին գունաւոր թաշկինակ մը²⁶:

Յետոյ չորս թաղերուն մէջ կազմուեցան առանձին ընկերութիւններ, որոնց նպատակն էր ուսումն ու կրթութիւնը տարածել Զէյթունի մէջ: Թաղերու ընկերութիւնները ունէին իրենց ժողովներն ու գիւղացիները: Միջին թաղի ընկերութիւնը, որ կը կրէր «Միւրոյ ընկերութիւն», անունը, ամենէն շատ անգամը ունէր: Ասիկա տեսնելով որ Տատուրեանի պաշտօնավարութիւնը ամուլ կ'անցնի, Միացեալ ընկերութիւնը կը դիմէ եւ կը խնդրէ որ, ընտանիք ունեցող, ամուսնացած վարպետ մէկը ղրկէ, եւ անիկա միեւնոյն ատեն գիտնայ եկեղեցական երաժշտութիւն: Այդ գալիքը պիտի ըլլայ տնօրէն, իր տիկինը կարողութիւն պէտք է ունենայ որպէս ուսուցչուհի, որ պէսզի Զէյթունի մէջ բացուի նաեւ աղջկանց վարժարան մը:

Մինչեւ 1880, պահքի օրերուն արկածով մեռնող ոեւէ կենդանի, այծ, ոչխար, կով պիղծ կը համարուէր եւ կ'այրուէր: Պահքի օրերուն չէին ուտեր նաեւ ձէթ, սուսամի իւղ (թահին): Կ'ուտէին աղ, չոր կարմիր փոշի պղպեղով հաց, ատոր համար Մեծ պահքին Զէյթունցին ըսած է «Աղհոցը», այսինքն «Աղուհաց»: Կառավարութեան խլամ թուրք պաշտօնեաները իրենք ալ կը պարտաւորուէին պահք պահել, որովհետեւ շուկան չէին կրնար գտնիլ ուտելիք, սննդեղէն, միս, իւղ, հաւկիթ, մածուն: Միւրոյ ընկերութիւնն ալ պայման կը դնէր որ որոշուած տնօրէնը եւ ուսուցիչները խիստ պէտք է ըլլային պահեցողութեան մէջ, որպէսզի աշակերտներու մաքրերը չպայթակղին

տնօրէնը պահքը կ'աւրէ եղեր ըսելով եւ իրենց զաւակները դպրոց ղրկելէ կը զգուշանան:

Զէյթունցիին պահեցողութեան խստութիւնը ծանօթ էր նոյնիսկ Պատրիարք Ներսէս Վարժապետեանի (որ ժամանակին Զէյթուն հանդիպած է), եւ կը զգուշացնէր Միացեալի Տնօրէն ժողովը, որ ազատամիտ (ըսել կ'ուզէ պահք չընտոյ) տնօրէն չղրկէ Զէյթուն: Տնօրէն ժողովը, այդ պայմաններով տնօրէնցու մարդ գտնելու դժուարութիւն կ'ունենայ կը ստիպուի Պոլսեցի Պ. Յակոբ Ալլահվէրտեանը ղրկել Զէյթուն 18 Օսմ. հնչուն ոսկի ամսականով հակառակ համեստ կարողութեան: 1880-ին Ալլահվէրտեան իր տիկնոջ եւ որդեգիր օրիորդին հետ կը հասնի Զէյթուն, կարի մեքենայով եւ երգեհոնով մը, որոնց վրայ զէյթունցին մինչեւ այդ ժամանակները ոեւէ գաղափար չունէր: Ժողովուրդին հետաքրքրութեան գոհացում տալու համար, Ալլահվէրտեան երգեհոնը եւ կարի մեքենան կը ցուցադրէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ ի ներկայութեան հոծ բազմութեան:

Աղջկանց վարժարանի բացումը տեղի կ'ունենայ 1880-ին: Պ. Ալլահվէրտեանի տիկինը իրմէ աւելի պատրաստուած էր: Զէյթունցիք հազիւ տարի մը հանդուրժեցին անոր պաշտօնավարութեան, ան ալ շնորհիւ իր պահեցողութեան, սակայն երկրորդ տարեշրջանին սկիզբը «Տնօրէնը պահքը կ'աւրէ» ըսելով շուկան չաւտեց: Ալլահվէրտեան ժողովուրդին առջեւ ուրացաւ եւ ասոր վրայ գրուեցաւ Միացեալի որ ուրիշ մը ղրկէ: 1882-ին Զէյթուն կը ղրկուի Վենետիկի ընթացաւարտներէն՝ Պ. Գէորգ Պոյաճեանը իր տիկնոջ հետ:

Պ. Ալլահվէրտեան սակայն հակառակութեան համար Կեդրոնականը յատկացուց Աղջկանց վարժարանի, իսկ մանչերու բաժինը փոխադրեց Ղարալար թաղը, որովհետեւ հոն գինքը պաշպանողներ ունէր: Ղարալարցիք հակառակեցան Ալլահվէրտեանի պաշտօնականութեան եւ Պոյաճեանի պաշտօնի կոչուելուն, որովհետեւ այս վերջինը եկեղեցական երգեցողութիւն չէր գիտեր: Միացեալը իր կարգադրութեան մէջ մնաց անդրդուելի: Ալլահվէրտեան մեկնեցաւ եւ Ղարալարցիք Պոյաճեանի առջեւ փակեցին վարժարանի դռները, եւ սղաքը դպրոց չղրկեցին 8 տարի ամբողջ: Մինչ այդ Սմբատ Բիւրատ ժառանգաւորացի շրջանը լրացնելով մինչեւ 1882-ը կը պաշտօնավարէ Մարաշի Կեդր. վարժարանը: Ան իր թեկնածութիւնը կը դնէ Զէյթունի տնօրէն-ուսուցչութեան: Սմբատ Բիւրատի ծնողքին Տ. Ղազարի տունը կը գտնուէր Ղարալարի եւ Պողպայի երկու թաղերուն միջեւ, այդ պատճառով Սմբատ Բիւրատ մասամբ կը համարուէր Ղարալարցի: Ան, արձակուրդին Զէյթուն կու գայ, եւ կ'աշխատի Ղարալարի դպրոցը վերանալ իր հաշույն: Պ. Պոյաճեանը կը պահանջէ

Միացեալի ղրկած գրքերուն մէկ չորրորդը: Անհամաձայնութիւն մը կը սկսի: Իւրաքանչիւրը կ'աշխատի աշակերտ որսար: Բայց լրջախոհ Հայեր տեսնելով որ Սմբատ Բիւրատի ձեռնարկը Հաստատուն Հիմ մը չունի, եւ աւելի ապահով է Միացեալի նախակրթարանը, չուզեցին իրենց տղաքը ղրկել անոր, Սմբատ Բիւրատ ստիպուեցաւ յանձն առնել Միացեալ վարժարանին մէջ Աւագ ուսուցչի պաշտօնը: Պոյաճեանի տնօրէնութեան տակ բացուեցան Միացեալի երկու վարժարանները, ուր կը պաշտօնավարէին 8 ուսուցիչներ: 1884-ին դպրոցը ունեցաւ 8 ընթացաւարտ: Վարժարանի մէջ բացի Հայերէն եւ թուրքերէն լեզուներէն, աւելցաւ նաեւ ֆրանսերէնը: 1884-ին Սմբատ Բիւրատ հրաժարեցաւ: Նոյն տարին ալեւելեան Չէյթունի չորս թաղերը, դպրոցներով եւ եկեղեցիներով, Կեդրոնականի կա՛հ կարասիները, գոյքերը հրդեհէն ազատելով փոխադրուեցան Պօզպայի թաղը, որուն մէկ մասը հրդեհէն զերծ մնացած էր: Կեդրոնական վարժարանն ալ հոն փոխադրուեցաւ: Ս. Բիւրատի տեղ պաշտօնի կանչուեցան Ասատուր Խրլըբորդեան եւ Յովհաննէս Ահարոնեան, որ այդ տարին չըջանաւարտելած էին: Պոյաճեան նոյն տարի Միայ գիւղը բացաւ ծաղկոց մը: 1884-ին Միացեալը իր հովանաւորութեան տակ առաւ Չէյթունի բոլոր վարժարանները, իր ծրագրով յառաջ տանելու համար զանոնք: Երկսեռ աշակերտութեան թիւը Չէյթունի Կեդրոնականին մէջ հասած էր 250-ի: 1886-ին Ս. Բիւրատ ամսունացած վերադարձաւ Չէյթուն որպէս յաջորդ Պոյաճեանի: Պոյաճեան կը մեկնի Չէյթունէն, սակայն Մարաշի կառավարիչ՝ Տէտէ Փաշայի մէկ հեռագրին վրայ Պոլիս, Միացեալը կը հեռագրէ Ս. Բիւրատի որ ցնոր տնօրէնութիւն պաշտօնի չձեռնարկէ: Այդ օրերուն Տէտէ Փաշայի կոյր աղջիկը կը մեռնի, Ս. Բիւրատ թուրքերէն ոտանաւորով մը կը մխիթարէ Փաշան, որմէ զգացուած Փաշան կը հեռագրէ Միացեալի որ Ս. Բիւրատ Հաստատուի իր պաշտօնին մէջ: Ս. Բիւրատ պաշտօնի անցնելէ յետոյ Մարաշէն բերել կու տայ փորագրիչ-կահագործ վարպետ մը, որպէսզի աշակետները՝ ուսման հետ միաժամանակ արհեստ ալ սորվին: Ու այդ ատեններն է որ տեղի կ'ունենայ Չէյթունի մեծ հրդեհը, 1887 Յուլիս 28-ին, եւ մոխրի կը վերածէ այս անգամ գրեթէ ամբողջ Չէյթունը, այրելով 736 տուն, 5 եկեղեցի, 2 մատուռ, 6 ջաղացք, 4 վարժարան, շատ մը կրպակներ: Պատրիարքարանը, Տիար Պատրիկ Կիւլպէնկեանի նախագահութեամբ է որ հրկիզելոց Յանձնախումբի ներկայացուցիչ Պ. Քերովրէ Գուլումեանը Չէյթուն կը ղրկէ նպաստ բաժնելու պաշտօնով: Թիշեալը Ս. Յակոբ եկեղեցիին տեղը բարձրացնել տուաւ Կեդր. Վարժարանը, որ կը մնար մինչեւ 1915-ը: Չէյթունի իրենց օգնութիւնը Հասցուցին նաեւ այդ առթիւ

արտասահմանի Հայեր: Ու Չէյթուն քիչ ժամանակէն վերաշինուեցաւ չորս եկեղեցիով, Կեդր. մեծ դպրոցով եւ չորս ծաղկոցներով: Չմոռնանք յիշելու որ 1884-ի հրդեհէն ալ, որ պատահած էր Սեպտեմբերին, այրած էր 60 խանութէ բաղկացած մեծ շուկան (պէզորը), 600 տուններ, Ս. Յովհաննէս եկեղեցին, բողոքականներու ժողովարանը եւ միացեալ վարժարանները:

1888-ին Պոյաճեան կը նշանակուի տեսուչ եւ վարժարանը կը փոխադրէ նոր Կեդրոնականը, իսկ Աղջկանցը կը մնայ Պօզպայի, Ս. Յովհաննէս եկեղեցիին կից շէնքին մէջ: 1889-ին Միացեալը կը բանայ նոր վարժարաններ նաեւ չըջանները՝ Ծոնուզ, Կոկիսոն, Թաշուզ, Քիրէճ, Եփեսոս (Արաբիսոս), Ալպիստան, որոնց ուսուցիչ կը ղրկուին Չէյթունի Կեդրոնականի չըջանաւարտները: Նոյն տարին Պոլսէն Չէյթուն ղրկուեցաւ երկաթագործ վարպետ մը իր ընտանիքովը, մանչ գաւակը ձայնագրութեան, իսկ աղջիկը վարժապետութեան պաշտօնը վերցուցին: Պոյաճեանի պաշտօնը վերջ կը գտնէ 1892-ին, եւ իր տեղը կը նշանակուի զէյթունցի Աւետիք Կէսխանեան, որպէս փոխ տնօրէն: 1895-ին, Չէյթունի ապագայ ուսուցիչ պատրաստուելու համար Եաղուպեան իշխանական ընտանիքէն Կարնոյ Սանասարեանը կը ղրկուի Խաչիկ Ս. Եաղուպեան: 1895-ին, երկսեռ աշակերտներու թիւն էր Չէյթունի մէջ 300, իսկ չըջանները՝ 350: 1895-96-ի Չէյթունի կոիւնէն յետոյ Միացեալը լուծուեցաւ եւ Չէյթունի դպրոցներն ալ փակուեցան մինչեւ 1898: Պոլսոյ Պատրիարքարանի ծախքով 1898-ին վերաբացուեցան Չէյթունի դպրոցները, տարեկան 150 Օսմ. Հնչուն ոսկի պիւտճէով: Տնօրէն նշանակուեցաւ Յովհ. Ահարոնեան տասը ուսուցիչներով: 1899-ին վերաբացուեցան նաեւ Արաբիսոսի եւ Ալպիստանի վարժարանները:

Ուսուցիչներու համերաշխ կազմը - բոլորն ալ զէյթունցի - եւ աշակերտներուն հետզհետէ անհամեմատ չափով շատնալը եւ ներկայ ուսուցիչներուն անբաւական թիւը նկատի առնելով եւ միեւնոյն ժամանակ գիտնալով որ Պոլսոյ Պատրիարքարանը իր յատկացուցած գումարէն այլեւս ոչ մէկ նախարակիտ չի կրնար աւելցնել, 1902-ին, գաղափար մը կը յղացուի Չէյթունի չորս եկեղեցիներու թաղակա-նութիւնները կազմել, եկեղեցիներուն եկամուտները հակակշռի տակ առնել եւ եկեղեցիներու յատուկ ծախքերէն աւելցած գումարները յատկացնել գոնէ ծաղկոցներուն: 1899-ին, Ս. Աստուածածնայ վանքը բացուեցաւ նաեւ որբանոց մը, սակայն առանց արդիւնք մը տալու, կարճ ատենէն գոցուեցաւ: 1900-ին Միացեալ ընկերութեան կողմէ տնօրէնութեան կը ղրկուի Կ. Պոլսէն կիւրիքի Պ. Տիգրան Գոչունեան, իսկ Յովհ. Ահարոնեան կը մնայ Աւագ ուսուցիչ: Սակայն 1910-11-ի

չըջանին մեկնած է արդէն Գոշունեան, եւ տնօրէնութիւնը յանձնուած դարձեալ Յ. Ահարոնեանի Նոյն տարին վարժարաններ կը բացուին Միսալ, Կապան, Շեփիլքն, իսկ Կոկիսոն, Ալախատան, Թաշուլուզ, Քիրէճ, Արաբխոս, ինչպէս քիչ առաջ յիշած էինք, արդէն ունէին իրենց դպրոցները, ինչպէս նաեւ Ֆոնուզն, դարձեալ Միացեալի - որ վերակազմուած էր - ծրագրով եւ պիւտճէով, եւ Զէյթունի տնօրէնութեան վերին հսկողութեամբ: 1910-ին Զէյթունի աղջկանց վարժարանի հոգածութիւնը կը յանձնուի Պոլսոյ Հայուհեաց ընկերութեան, որոնք Պոլսէն կը ղրկեն որպէս տնօրէնուհի Օրդ. Զարուհի Փէշտիմալճեանը: Իսկ 1911-12-ին վերոյիշեալ գիւղերուն մէջ ալ կը բացուին աղջկանց վարժարաններ: Աչակերտներու եւ նոր բացուած դպրոցներու թիւը կը շատնայ: Կառավարութեան մէջ, մեր ընթացաւարտներուն պաշտօններ կը բացուին, միւս կողմէն ուսուցիչներ կ'ուզուին, ժողովուրդը կը տեսնէ որ ապագան Ա.Բ. գիտցողին է, իր լուսման չի խնայեր, չէնք կը չինէ դպրոցին համար, դրամ կու տայ դպրոցի համար: Որքան որ դժուար է կրթուելու, ուսման համար տղայ գտնել եւ հեռաւոր քաղաքներու բարձր դպրոցներ ղրկել, վերջին ժամանակները աւելի դժուար եղաւ ուսման համար այդ հեռաւոր կեդրոնները երթալ փափաքողներու գոհացում տալ, որովհետեւ շատեր կը դիմէին, որ զիրենք ղրկենք:

Տակաւին դպրոցի երես չտեսնող գիւղացիներ ամէն կողմէ կը դիմէին եւ կ'ըսէին. «Մեր գիւղին մէջ ալ դպրոց բացէք, մեր տղաքն ալ բան սորվին, մարդ ըլլան»: Միացեալը կը խոստանար բոլորին ալ գոհացում տալ: Միայն թէ գիւղացիները գոնէ առնուազն 30 աշակերտ պիտի տրամադրէին, եւ իրենք պիտի չինէին դպրոցի համար երկյարկանի, ծեփուած, օդասուն չէնք մը եւ պիտի հոգային ուսուցչի թոշակին մէկ երրորդը: Գիւղացիները ընդառաջեցին այդ պահանջներուն եւ բացուեցան իրենց գիւղերուն մէջ եւս դպրոցներ: Արեգինի Գարաքիւթիկ գիւղը ուսուցիչ ղրկուեցաւ Յարութիւն Եղիսեան, որ վերջը քահանայ եղաւ տեղւոյն համար: Դպրոց մը բացուեցաւ նաեւ Պէհնիլիք:

1909-էն սկսած Զէյթուն ունեցաւ լսարան, ղեկավարութեամբ կեդրոնականի ուսուցչութեան: Ամէն Կիրակի տեղի կ'ունենային բանաստեղծութիւններ, լրագրական եւ այլ տեղեկութիւններ կը տրուէին: Կը խօսէին ուսուցիչները, Տօթ. Լեւոն Մելիստեան եւ ուրիշներ: Կ'երգուէին ազգային, յեղափոխական եւ հոգեւոր երգեր: Իսկ Շրջանաւարտից Միութիւնը օժանդակելով հանդերձ լսարանի գործին, բացաւ նաեւ գիշերային վարժարան կեդրոնականի շէնքին մէջ, ուր կը յաճախէին անուս, անգրագէտ արհեստաւոր, գործաւոր երիտասարդներ

եւ չափահաս մարդիկ եւ կը սորվէին գրել, կարդալ, հաշիւ, եւ հայերէն լեզուն ու պատմութիւնը: Շրջանաւարտից Միութեան անդամները, ընթացաւարտ կեդրոնական վարժարանէն մեծ եռանդով փարեցան այս գործին, եւ շատ մը կարդալ չգիտցող զէյթունցի պարզ արհեստաւորներ սորվեցան կարդալ, գրել:

Զէյթունի համար, ապագայ ուսուցիչներ պատրաստելու մտքով, ընթացաւարտներ կը ղրկուէին հեռաւոր քաղաքներու բարձրագոյն վարժարանները, ինչպէս Պոլիս՝ Կեդրոնական եւ Պէրպէրեան վարժարանները, Էջմիածին՝ Գէորգեան Ճեմարանը, Արմաշ, Երուսաղէմի եւ Սոյ ժառանգաւորացները, Կարնոյ Սանասարեանը, վերջը Սեբաստիա, Տարսոնի եւ Այնթապի գոյէճները, Պարտիզակ, Ատափազար, Պրուսա, Հալէպ եւ այլ վայրեր:

Զէյթունի կեդրոնականը բարձրացաւ (խտարիի) բարձրագոյն նախակրթարանի աստիճանին եւ առ աղ արտօնութիւն տրուեցաւ Հալէպի Օսմ. կառավարութեան կրթական տնօրէնութեան (մէարիֆ) կողմէ: Հոն կը պաշտօնավարէին կարող ուսուցիչներ: Կ'աւանդէին հայերէն եւ հայ գրականութիւն, տաղաչափութիւն, Ազգ. պատմութիւն, գրարար (Եղնիկ, Մ. Խորենացի, Տէլէմաք) նաեւ թուրքերէն լեզու, մէհէլլէ, դավանինը օսմանիէ, թուրքերէն լեզուով նաեւ Քեամիլ Փաշայի թարգմանած Տէլէմաքը, Մէզաքը, Էտէպիէթ, Կիւլտէսթէ, Նէվ-տէսթէ, Իքթիթաֆ, նաեւ դիցաբանութիւն, բնական գիտութիւններ (կենդանաբանութիւն) կրօնագիտութիւն (Մկրեան) եկեղեցական պատմութեան (Մէլքիսէթիկ Բհնյ. Մուրատեան):

Կեդրոնականի շրջանաւարտները տեղական կառավարութեան մէջ կ'ըլլային Մահքէմէի անդամ, միւսթանթրզ, դատարանի գրագիր, Պանք մէմուրը, թափուի պաշտօնեայ, վէրկի մէմուրը, սանտրզ էմինի, մալմիւտիւրի, անտառներու պաշտօնեայ, կրթական (մէարիֆ) պաշտօնեայ, Պէօլիք էմինի թահսիլտար - հարկահաւաք, էյթամ միւտիւրի (որբերու տնօրէն) եւայլն:

Զէյթունի շրջակայ գիւղերուն մէջ ներկայանալի եւ երկյարկանի շէնքերը վարժարաններ էին, որոնք հեռուէն յայտնի կ'ըլլային: Եկեղեցի չունեցող գիւղեր առաջին անգամ դպրոց կը չինէին եւ ուսուցիչ կ'ուզէին: Զէյթուն իր կեդրոնականով, չորս ծաղկոցներով, մանկապարտէզով եւ շրջակայքը ունեցած 14 դպրոցներով ունէին 1592 երկսեռ աշակերտութիւն, 27 վարժարան եւ 57 ուսուցիչներ:

Շրջակայ գիւղերու դպրոցները ամէնքն ալ ենթակայ էին Զէյթունի Տնօրէնութեան եւ կապուած էին Միացեալի: Շրջանի 14 դպրոցներն էին. - Ալախատան, Կոկիսոն, Արբխոն, Թաշուլուզ, Քիրէճ, Ֆոնուզ, Կապան, Տէյիւրմէն Տէրէ, Շիփիլի, Պալիկի գիւղ,

Միտալ, Արեգինի Գարաքինթիւք եւ Պէհաննիլիք գիւղերը, Ֆնտրճազ։ 1915-ի համաշխարհային պատերազմի վերջաւորութեան, հայ ժողովուրդի տարագրութեան եւ մեծ սպանդէն մազապուրծ վերապրող, կոտորակուած հարիւրորդուած հայերս, երբ հայրենիքի կարօտէն վերադարձանք հայրենիք, ոչ միայն այդ դպրոցները, այլ եւ ոչ մէկ շէնք գտանք կանգուն, ամէն կողմ աւեր, աւերակ էր։ Զէյթուն ալ-րաւ մոխրակոյտ մը դարձած էր եւ վերջէն փուշ եւ տատասկով պատած, վայրի ծառերու անտառի մը տխուր երեւոյթը ստացած էր։ տեղ տեղ կը նշմարուէին ունէ հաստատուն շէնքի մը մէկ անկիւնը կամ անկիւնաքար։ Դարերու աշխատանքը մէկ երկու տարուան մէջ ոչնչացաւ։

1915-ի սկիզբը, Մարտի առաջին օրերուն արդէն գոցուեցան Զէյթունի եւ չրջակայից բոլոր վարժարանները։ Զէյթուն բռնեց տարագրի ճամբան, ուսուցիչներ, մտաւորականներ տարուեցան Մարաշ եւ ալ-լուր եւ կախաղան հանուեցան, գնդակահարուեցան, այրուեցան եւ Տէր Զօր քուեցան ու ջարդուեցան, միւս բոլոր եւ ամէն տարիքի հայրենակիցներու հետ։

Զէյթունի մէջ գոչագրութեան արուեստը, կարելի է ըսել «գոչագրութեան դպրոցը»։ գլխաւոր գոչագրող դէմքերը

Գաբրիէլ սարկաւազ մարաշցի, աշակերտած է Զէյթունի վանքին, ինչպէս կը հասկցուի իր 1528-1536 եւ 1554-ին գրուած երեք ձեռագիրներէն (գրուած Զէյթուն, Մարաշ, Երուսաղէմ)։ Գաբրիէլի ուսուցիչներն էին Կարապետ Եպս., Թորոս քհնյ., Ղազար Եպս. Զէյթունցի, եւ Պաղտատար սարկաւազ Սեբաստացի՝ ծաղկող եւ կապող (Արտաւազդ Արքեպս. «Թուցակ հայերէն ձեռագրաց» Հայէպ, էջ 323)։ Նոյն Գաբրիէլ սարկաւազը գրչագրած է նաեւ Աւետարան մը Կեսարիա 1557-ին։ Կեսարիոյ մէջ տեսնուած (գրչագրութեան) գրչութեան շարժումը (գրիչ) մասնաւորապէս Կիլիկիոյ լեռնագաւառներուն մէջ ապաստանած մի քանի կեդրոններու, մասնաւորապէս Զէյթունի մէջ տեսնուած շարժումին անդրադարձումը ըլլալ կը թուի (Արշակ Աւ-պոյաճեան, հայ կեսարիա)։ Վասնզի Յակոբ քհնյ.-ի 1580-ին գրչագրած ձեռագիրը՝ Սմբատ Գունտատապի (Պարոնտէր) եւ Յովհաննէսի 1597 ընդօրինակած շարականը խղկնի օրինակէն ըլլալը, Կիլիկիան մասնաւոր կ'ընեն, իբր անոնց վարժութեան վայր։ Իսկ վերոյիշեալ Գաբրիէլ սարկաւազը՝ մարաշցի, հոն, այսինքն Կիլիկիա իսկ ծնած եւ գործած է։ 1588-ին «Ճաշոց գիրք» մը գրուած է ի գիւղս Տումարգեայ (Թումարգա), ի հայրապետութեան Տ. Ազարիա Սոյ կաթողիկոսի,

յիպիակոպոսութեան Սբ. Ուխտիա՝ Զէյթունցի Յովհաննէսին եւ որդւոյն Տ. Յակոբ Վրդ.-ին։ Յովհաննէս Եպսկ. վարած է նաեւ Կ. Պոլսոյ Պատրիարքութիւնը 1590-91-ին։

1629-30 թուականներուն Զէյթունի Ս. Աստուածածնայ վանքը ծաղկած գրչագրական դպրոցի աշակերտներուն գործունէութեան կայաններէն մէկը կը հանդիսանայ Թումարգա։ 1580-1584-ի թուականներուն Կաթողիկոս՝ Ուլնեցի Ռաչատուր երաժիշտ, Զէյթունի մէջ պատրաստուած եկեղեցական մըն էր։

Դարձեալ Զէյթունի մէջ, բարունապետ Ղուկաս Վրդ. Կեղեցի եւ իր եղբոր՝ Մարկոս Վարդապետ Կեղեցի (Քղի) աշակերտութենէն, Զէյթունի Վահան Երէցի (գրչապետին) շուրջը հաւաքուած էին բազմաթիւ աշակերտներ, որոնցմէ անունով ծանօթ են մեզի՝ Վասիլ Եպսկ., Յակոբ Զէյթունցի, Ռաչատուր, Յովնան եւ Յովհաննէս երէցները։ Վահան Երէց Զէյթունցի գրչագրութեան արուեստը սորված էին Սարգիս Վրդ. Հեղանցիէ կամ Երզնկացիէն։ Վահան Երէցի մէկ զաւակն էր Գրիգոր Վարդ. Աստուածաբան եւ Երջանիկ (կոչուած) բարունապետ չղոնահանճար եւ բազմաբեղուն ծնունդ, խոհեմ իմացականութեամբ եւ կատարեալ իմաստութեամբ» (Միսուան 186 եւ 536), որ յետոյ եղած է Զէյթունի առաջնորդ եւ իր հօրը՝ Վահան Բհնյ. Զէյթունցիի քաջ քարտուղարին գործը շարունակած է եւ իր կարգին զարկ տուած է Զէյթունի մէջ գրչագրութեան աշխատանքներուն։ Գր. Եպս. վախճանած է 1663-ին։ Վահան Երէցի միւս զաւակն էր Աւետիս Երէց, որուն որդին՝ Յովհաննէս Երէց իր հօրեղբորը՝ Գրիգոր Եպս.ի առաջնորդութեան չրջանին գրչագրութեամբ զբաղած է։ Վահան Երէց ունէր նաեւ երեք եղբայրներ՝ Ստեփաննոս Բհնյ., Կոստանդին եւ Ներսէս (ցուցակ Հայէպի), որոնց վերջինը եղած է եպիսկոպոս։

Ինչպէս կը տեսնենք ուրեմն որ՝ Վահան Երէց Զէյթունցի, հանդերձ ընտանիքովը, պարագաներովը եւ աշակերտներովը Զէյթունը դարձուցած է Մեծ դպրոց մը գրչագրութեան։ Կեսարիա եւ մասնաւորաբար Թումարգա՝ որ կարծես թէ իր աշխարհագրական դիրքովը կապուած է Զէյթունի, այնքան մօտ էր այս՝ այսինքն Զէյթունի դպրոցին, որ կրած է ազդեցութիւնը եւ կերպով մը գործակցութիւն մը ստեղծուած է։ Հոն կը տեսնենք Զէյթուն մարզուած դէմքեր, ինչպէս Յովհաննէս Եպս. Զէյթունցի եւ իր որդին Յակոբ Վրդ. Զէյթունցին 1588-ին, զորս քիչ առաջ յիշատակեցինք, Գր. Եպսկ. Մերունը կամ Պարոնտէրը 1629-1630։

Յակոբ քարտուղար Զէյթունցի պատրաստուած մէկը եղած ըլլալու ամէն նշանները կան, մասնաւորապէս այն ժամանակներուն ամե-

նէն գլխաւոր գիտութիւններն համարուած երկու արուեստներուն՝ երաժշտութեան եւ գրչութեան մէջ նշանաւոր եղած է, նոյնիսկ Զէյթունի մէջ, Վահան Երէց գրչապետին ձեռքին տակ Յետոյ անցած է Հալէպ, ուր 1602-ին եւ 1604-ին ընդօրինակած է Աւետարաններ, ի վերջոյ անցած է Կեսարիա, ուր 1608-ին է շարականոց մը (ցուցակ Հալէպի) եւ վերջապէս գացած է Երուսաղէմ եւ հոն ընդօրինակած է գանձարան մը: Քաջ քարտուղար Վահան Երէց եղած է ուսուցիչը Յակոբ քարտուղար Զէյթունցիին: Ան ընդօրինակած է Սսոյ (Հիսուս կոչուած) խկեցիի շարականէն օրինակ մը, որմէ օգտուած է նաեւ Վահան Երէց զէյթունցի, իր ծննդավայրին մէջ, որպէս լաւ, ընտիր, ստոյգ որակուած շարականցի: Ըստ (Հ. Յ. Տաշեանի մայր ցուցակ): Այս Սսոյ առաջին վարժապետը՝ խուլ (որջորջեց) յորջորջուած է, եւ իր շարականոցը՝ խկեցի:

«Մի կրնայ պնդել թէ, կ'ըսէ Ալպոյանեան, որ՝ Յակոբ Զէյթունցի քարտուղարէն յետոյ «Քարտուղար Յովհաննէս Երէց», որ 1621-ին Կեսարիոյ մէջ «Յայսմաւուրը» մը օրինակած է զցայգ եւ զտիւ տքնութեամբ եւ բազում աշխատանք» մինչեւ Հալէպէն, Երուսաղէմէն, Կ. Պոլսէն եւ Սպահանէն սուղ գիներով թուղթ բերելով, ով կրնար պնդել թէ մէկ ուրիշ աշակերտը չէ Զէյթունի դպրոցին: Ասիկա, այսինքն Յովհ. Քարտուղար (զէյթունցի) Երէց եւս, Յակոբ Զէյթունցիի պէս վարպետ մըն էր որ կը գրէր եւ կը ծաղկէր իր ձեռագիրը գաղափարական մարդու մը տոկունութեամբ եւ ճիգերովը զայն գլուխ հանելով:

Ուրեմն այս փաստերով տեսանք թէ Զէյթունի դպրոցը իր աշակերտները կը դրկէր մինչեւ Կեսարիա. նաեւ գործելու համար եւ արդիւնաբերելու համար Կիլիկիոյ վարդապետարանին գործունէութիւնը, իբրեւ կայան ընտրելով Թումարգայի Ս. Աստուածածին վանքը, ուր արդարեւ այդ ժամանակամիջոցին կը տեսնենք Զէյթուն ուսում առած վարդապետներու վարչութեան տակ ուսումնական գործունէութիւն մը, ուղղակի կիլիկեան վարդապետներու շունչով:

ՇԱՐԱԿՆՈՑ-

Յիշատակարան.- «Փառք..... Արդ անկ եղեալ կատարեցաւ առ ի մայրաքաղաքս Կապադովկիա, որ է Կեսարիա՝ Հալքն Առաջին եւ միւս անունն է Մաժակ: Ընդ հովանեաւ Ս. Մարգարի, Ս. Աստուածածնի եւ այլ սրբոց, որ աստ կան ի օգնութիւն քրիստոնէից: Արդ, գրեցաւ սա ձեռամբ անարժան գրչի Յակոբ Քարտուղարի եւ ի թվականութեան մերում Հայկազան տոմարի, ՌՄԷ (1608) Մայիս ամսոյ ԻԶ. աւրն Եշ.ի եւ ի կաթողիկոսութեան Սսոյ Տեառն Տ. Յովհաննէսի եւ յառաջնորդութեան քաղաքիս քաջ եւ արի ռաբու-

նապետին՝ Գրիգոր Վրդ.ին եւ Մարտիրոս Եպս.ին: Արդ, երեսս անկեալ աղաչեմ զդասս քահանայից եւ սարկաւագաց, որք տեսանելով զսա կամ ընդօրինակելով յիշեալիք... զՅակոբ Զէյթունցի եւ զծնողս իմ զՅովհաննէսն եւ զՍառա եւ զուսուցիչն իմ զքաջ Քարտուղարն, Զէյթունցի Վահան Երէցն եւ միւս վարդապետին իմս Հեղանցի Տէր Մարտիրոսին, որ աշխատեցաւ ի յուսուցանել զոսկին: Դարձեալ աղաչեմ զամենեսեան, որ տեսանէք զսա կամ գաղափար առնէք, անմեղադիր լերուք սխալանաց եւ խռոտութեան գրոցս, զի զարիպ էի եւ սրտիկա տրտում: Ի դառն եւ ի նեղ ժամանակիս, երբեքալ եւ տառամսեալ կամք ի մէջ այլազգեաց որ ի զօրացեալ են ազգք ի վերայ ազգաց եւ բազում քաղաք եւ գաւառք աւերեցան եւ ձալալիքն քանդեցին եւ աւերեցին... հաց սուղ էր զայս (օր) արի, որ Լ. (30) տիրէմ հացն ստակ մի գնեցի եւ կերայ եւ գրեցի զՇարականոցս:

Աւետարան ասէ թէ՝ ցամաքեսցի սէր բազմաց, ոչ ոք ի մարդկանէ ի վրայս խնամք չտարան, հանապազ լացի եւ տարակուսեալ էի, բայց հէմշէրին իմ Զէյթունցի Մղտեսի Առաքելն որ էր վաճառական, նա տանէր զիս իւր օտայն, եւ մխիթարէր մարմնաւոր կերակրօք եւ ըմպելեօք եւ ասէր. եղբայր, մի հոգա, ես հանեմ զքեզ այս դառն, դժուար աշխարհէն: Եւ լսէի զխեղճ ձայն քաղաքին մերոյ Գերմանիկոյ, որ է Մարաշ, որ էր սով եւ սուղ. ԼԶ (36) տրէմ հացն ի. (20) փարա մի. որդիքս իմ անդ, ոչ եկող կայր, ոչ գնացող: Այսպիսի տառապանօք գրեցի, զՇարականոցս, ի լաւ եւ ընտիր օրինակէ Սսոյ, մականունն որ խուլ կոչի, այլ մխիթարանք ոչ ունէի, բայց Մղտեսի Առաքել սարկաւագն հայրն իւր զՅովհաննէսն եւ զմայրն իւր Մարթայն...

ՃԱՇՈՑ, Կեսարիա 1604, Ս. Աստուածածին եկեղեցին պահուած է:

Յիշատակարան.- «Փառք...

Արդ՝ գրեցաւ ձեռամբ յոգնամեղ անձին Յովհաննէս Երիցու, ի յերկիրս Գերմանիկոյ, ի գիւղաքաքս Զէյթուն, ընդ հովանեաւ Ս. Մարգարի զօրավարին, Ս. Փրկչայ ուխտին, որն լուսոյ Ս. Աստուածածին եւ Ս. Հրեշտակապետաց, եւ ի Յովհաննու Կարապետին, եւ Ս. Գր. Լուսաւորչին, եւ Յակոբայ Մծբնայ Հայրապետին եւ Պարսումայ Ճգնաւորին, եւ Թէոդորոսի զինուորին (Սբ. Պօղոս-Պետրոսը մոռցած է Մ.Ս.):

Չի Ս. տաճարքս որ աստ են, յանուն սրբոյն կառուցեալ. Եւ ի Հայրապետութեան Ս. Էջմիածնի լուսաճեմ աթոռոյն Տն. Յակոբը

երջանիկ դիտապետի եւ տանա կիլիկիոյ Դաւիթ Կաթողիկոսի եւ Առաջնորդութեան մերոյ նահանգի՝ Տ. Գրիգոր Աստուածաբան բարու-նապետի:

Ձէյթունի առաջին թուրք բնակիչները.— 1547-ին Տրապիզոնէն լազազգի 14 հոգիներ, Հաճի Իպրահիմ անուն պետի մը առաջ-նորդութեամբ, իբրեւ ոճրագործ՝ կառավարական հետապնդումներէ խոյս տալով, կու գան, կ'ապաստանին Ձէյթուն Սէթ իշխանին մօտ: Ասոնք Սուրէնեան թաղը կը հաստատուին, տուրքէ եւ զինուորութենէ ազատ կ'ապրին: 1882-ին Ազիզ Փաշայի դէմ, զէյթունցիներու կողքին կը կռուէին: Այդ կռիւին Ֆէրիզ Օղլու Մէհմէտ ձիկ եւ Ջէօքիւք Մէհմէտ քաջաբար կ'իյնան: 24 տուն եղած էին: 1895-ին Ձէյթունէն հեռացան: Այժմ կը բնակին Ձէյթունի արեւմուտքը: 6-7 ժամ հեռաւորութեամբ գիւղ մը, Կոկիսունի եւ Ձէյթունի միջեւ եւ կը կոչուին «Հաճի Իպրահիմ ուշադրներ»: Հին սերունդը գիտէր խօսիլ նաեւ Ձէյթունի բարբառը: Թունդ թշնամիներ էին զէյթունցիներուն:

Ձէյթունցւոց Առողջական Պայմանները.— Ձէյթունի օդն ու ջուրը առողջարար են: Ձմեռը թէեւ յաճախ կը ձիւնէ, սակայն ցուրտը անապատի ցուրտին պէս չի վնասեր, որովհետեւ Ձէյթուն երեք կողմէն լեռներով պաշտպանուած է նաեւ ցուրտէն: Ամառը նորէն այնքան տաք չ'ընէր: Միայն աշունը, Սեպտ. Հոկտ. ամիսներուն, երբ հարաւի այգիները (Տէվրիշին Ձորը, Խախմէն, Անի Ձոր, Ղարօղլոն կոչուած այգեստանները), Չամիչձէգի (չամչընուն) համար քանի մը շաբաթ զբաղած կ'ըլլան զէյթունցիներ - եւ առ հասարակ ընտանիքներով - արեւին տակ եւ Շուղրի գետակին մօտ դողի, կրակցաւի, մալարիայի կը բռնուին անոնցմէ ոմանք: Ուրիշ, մասնաւոր զէյթունցիներու յատուկ, ոեւէ հիւանդութիւն գոյութիւն չունէր, ինչպէս ոմանք անիրաւօրէն նման վերագրումներ ըրած են ժամանակին Ֆրանկախտի մասին: Ինչպէս ամէն երկիր եւ ամէն քաղաք, Ձէյթուն ալ կ'ունենար սովորական եւ ամէն տեղի մէջ ծանօթ հիւանդութիւններ: Մինչեւ 1900 թուականը Ձէյթուն բժիշկ մը անգամ չու-նէր: Միջին թաղը Պօզողլենց Պուզուխ նազարէթը, բժշկութիւն կ'ընէր: Անիկա ոեւէ տեղէ վկայական առած կամ համալսարանի մէջ բժ-ժըշկութեան չէր հետեւած: Հէքիմարան մը անցած էր ձեռքը, անոր կը հետեւէր. փրաթիսիէն մըն էր: Ձինքը կը կանչէին, ականջը կը դնէր հիւանդին կուրծքին, կռնակին, բազկերակը կը նայէր, ջերմաչափ մը ունէր անով հիւանդին տաքութեան կը նայէր, ըստ այնմ գեղ մը կը պատրաստէր ինքը կարգ մը բոյսերով եւ իրեն ծանօթ նիւ-

թերով: Միայն թէ ամենուն ծանօթ էր սօլֆաթօ (քինին) փոշին, փոքրիկ շիշերով կը ծախէր ինքը ինչպէս նաեւ Պէզօրը կրպակի մէջ, փերեզակներու քով կը ծախուէր սօլֆաթօն: Տաքութիւն, կամ դող կրակցաւ ունեցողը, յաճախ ինքը, առանց պուզուխի երթալու, այդ սոլֆաթոյէն կ'առնէր եւ սիկարի թուղթի մէջ փաթթելով կը կլոր-ցընէր եւ կը կլլէր: Հարսանիքն ու ծաղկախաղ, երբեմն համաճարակի բնոյթ կը ստանային եւ մանուկներ զոհ կ'երթային, ոմանց աչքը կը կուրծար, ոմանց ալ դէմքը կ'աւրուէր, ծաղիկի հետքերը փոսիկներ կը թողուր: Ինչպէս ամէն քաղաք, հոն ալ կը գտնուէին չեչոտ, ծաղ-կաւէր դէմքեր: Բայց ծաղիկի պատուաստը երբ դտնուեցաւ եւ բնդ-հանրացաւ, ծաղիկի աւերն ալ նուազագոյնի իջաւ, մանաւանդ 1900-էն յետոյ, երբ Ձէյթուն ունեցաւ իր զէյթունցի բժիշկը: Մայրեր բազմածին էին, եւ առողջ ալ, մանուկներ կը ծնէին, սակայն առողջապահութեան մասին, ինչպէս ասկէ վաթսուն տարի առաջ ամ-բողջ Ասիան, Փոքր Ասիան, Կիլիկիան շատ քիչ բան գիտէին, նոյնն էր պարագան նաեւ Ձէյթունի մէջ, այդ բազմածին մայրերուն գա-ւակներուն շատերը դեռ երախայ կը մեռնէին: Իսկ մնացողները, ապրողները կ'ըլլային առողջ, տոկուն եւ երկարակեաց: Մնող գա-ւակներուն մեծ մասը մանչեր կ'ըլլային: Ութը մանչու վրայ երեքը միայն աղջիկ կ'ըլլար: Այսպէս. Ձէյթունի մէջ աղջկայ սով կ'ըլլար: Ձէյթունցիք յաճախ Մարաշէն, Ալպիստանէն, Կիւրիւնէն հարս կը խնդրէին: Սափարնա (smilax, medica) բուսարմատը կը բերէին Մա-րաշէն, կ'եռացնէին եւ անոր ջուրը (ղայպոթ) դուրսը պաղեցնելէ յե-տոյ կը խմէին յօգացաւ (սրգը) ունեցողները: Մաքարոնի հաստութեամբ կ'ըլլայ եւ աւելի մը կոթին ձեւովը փաթթուած: Հիւանդ մը քրտնցնելու համար երբեմն ուսինի կանաչ տերեւներով, ճիւղերով կը պատէին հիւանդին մարմինը, յետոյ հաստ վերմակով կը ծածկէին, մինչեւ որ քրտնէր: Բիշ հաքը հեղեղի պէս քրտինք մը կը փրթէր: Հայաստանի մէջ «Քարաւաղիք» կոչուած կերպ մը ունէին քրտնցնելու համար, որը վտանգաւոր էր. հիւանդը կը խեղդուէր, կը մեռնէր երբեմն: Ձէյթունցիք ունէին նաեւ ուրիշ միջոց մը ծանր հիւանդ մը քրտնցնելու համար, հիւանդին մարմինը կը պատէին նոր մորթուած աթի մը տաք մորթովը եւ նորէն կը ծածկէին վերմակներով: Իսկ հիւանդին ճակտին կը դնէին սառի կտորներ, որպէսզի հիւանդը չ'իտղղուէր յառաջ եկած տաքութենէն եւ քրտինքէն: Այս կերպով անբուժելի շատ մը հիւանդութիւններ բուժուած են երբեմն, գոնէ այսպէս կը հաւաստէին շատ մը հայրենակիցներ: Ձէյթունցիք Վերթի քէշալվաթ կ'ըսէին այս դարմանումի ձեւին:

Սրբեմն ալ հաւատացեալ հիւանդը կամ իր պարագաները բժիշկի

տեղ քահանան կը կանչէին: Քահանան կու գար քանի մը գլուխ բռնակցեալ Աւետարան կը կարդար հիւանդին գլխուն, Աւետարանը կը թօթուէն գլխուն «փարատեա՛ւ» զգաւս աղօթքը կարդալէ յետոյ, հիւանդին վիճակը կը թեթեւնայ: Կը պատահի նաեւ որ հիւանդին թաշկինակը, ծայրն ալ քանի մէթալիք ծրարած կը տանէին քահանային: Եւ քահանան այդ դրամը կ'առնէր թաշկինակին վրայ կը կարդար, աղօթք մը կ'ընէր եւ թաշկինակը կը բերէին հիւանդին գլուխը կը կապէին: Իսկ շատ ծանր հիւանդի մը պարագային «Նարեկ» կը կարդար «Գշօր իրէց» Սուրբ Սարգիս եկեղեցւոյ քահանան: Հիւանդը կամ կը մեռնէր, կամ կ'առողջանար: 1890-ին զէյթունցիներ Մարաշի կառավարիչ Սալիհ Փաշային դիմեցին բռնակցի մը համար: Որպէսզի Զէյթունցիք ազատին կարգ մը պառաւական, տնավարի դարձաններէ եւ դեղերէ, որոնք շատ անգամ մահ պատճառած են: Սալիհ Փաշան Զէյթուն զրկեց Մարաշ բնակող Այնթապցի Հէքիմ Ապունճան Գալիպզեան անուն բռնակը, որը որպէս թէ փաշայէն դրողած, ծաղիկի թունաւոր պատուաստով 500 զէյթունցի մանուկներ մեռցուցած ըլլայ: Կիլիկացիին իր «Մարաշ կամ Գերմանիկ եւ Հերոս Զէյթուն» հատորին մէջ այս մասին անդրադառնալով կը յիշէ Տ. Ղեւոնդ Քահանայ Նահապետեանի 11 Յունիս 1931 նամակը, ըստ որում «ողբացեալ Հէքիմ Ապունճանի վերագրուած ոճիրը սուտ է, գրպարտութիւն է, ստուգուած ճշմարտութիւն չէ»: Եւ Կիլիկացիին իր կողմէ կ'աւելցնէ նաեւ հետեւեալը. «Տոքթ. Գալիպզեան զուր տեղը ամբաստանուած է թէ 500 զէյթունցի մանուկներ պատուաստած էր թունաւոր պատուաստով եւ մեռցուցած: Մինչդեռ ինքը հազիւ քանի մը մանուկներ պատուաստած էր եւ փոքրիկներ 1890-ի այդ ծաղկախորի, կարմրախորի եւ այլ համաճարակի զոհ գացին: Զէյթունցիք Մարաշի կառավարութիւնը ամբաստանելու համար այդպէս ներկայացուցեր են խնդիրը: Ուրիշ զէյթունցիներ ալ նոյնը վկայած են: 1900-էն յետոյ է որ Զէյթուն կ'ունենայ զէյթունցի բռնակ մը՝ Տոքթ. Լեւոն Մեկիտոնեան, որ Պէյրութի համալսարանի բժշկական ճիւղը աւարտելով կը հաստատուի իր ծննդավայրը եւ կը ծառայէ այնտեղ: 1913-ի ատենները Տոքթ. Լեւոն սակայն թիֆոտէ վարակուելով կը մեռնի: Ծանր եւ երկարատեւ հիւանդներ երբեմն Մարաշ, եւ նոյնիսկ մինչեւ Այնթապ կը բերէին կենդանիով կամ պատգարակով, Տոքթ. Շէրըրթին:

Զէյթունցիք կանուխ կ'ամուսնացնէին իրենց զաւակները: Մանչերը 18-էն մինչեւ 20 - 24 տարեկանին, իսկ աղջիկները 14-էն 17-ին արդէն ամուսնացած կ'ըլլային: Ամուսինները իրարու կապուած կ'ըլլային, ընտանեկան բարոյականն ու սրբութիւնները բարձր եւ ա-

նադարտ կը պահուէին: Հագուադէպ պարագայի որեւէ անհաւատարմութիւն կամ թեթեւութիւն, ան ալ դուրսերէն բերուած կիներու կողմէ, խիստ կերպով կը պատժուէր: Այսպէս պարագայի մըն էր որ Պօզպայի թաղի Շերամեաններուն տունը այրեցին նոյն թաղեցի պատուախնդիր երիտասարդներ, որովհետեւ այդ ընտանիքին մէկ հարսը՝ որ Մարաշէն բերուած էր կասկածներու տեղի տուած էր իր վարմունքովը: Այս կինը Շերամեան Պօղոսի տղան Մարաշէն բերած էր. առաջին կինը մեռած ըլլալով, երկրորդ անգամ ամուսնացած էր ան: Կանուխ ամուսնութիւնները, սեռային բարոյականի մասին զէյթունցիին ունեցած խստութիւնն ու բարձր գաղափարը, թոյլ չէին տար ապօրինի յարաբերութիւններու: Ու այս իսկ պատճառով անծանօթ էին այնտեղ սեռային, ամբողջական հիւանդութիւններն ու Ֆրանկախոր զէյթունցիին մինչեւ որ շատ ծանր կերպով չ'հիւանդանար բռնակի չէր դիմեր, օրինակ այն թուականներուն, երբ այլեւս բռնակ կար: Ու այդ պատճառով ալ յաճախ թոքատապէն, դալկախտէն, ջերմէն, ստամոքսի տկարութենէն կամ անմարսողութենէն, թաղքէն կը մեռնէին, որովհետեւ կը դիմէին բռնակի այն ատեն երբ ալ մեռնելու ժամը հասած էր, եւ Տ. Լ. Մեկիտոնեան ցաւով կ'ըսէր թէ՝ «զիս Աստուած կարծեցիք որ այդ վիճակին մէջ ինծի բերիք» զէյթունցիին ամէն հիւանդութեան հիւանդութիւն չէր ըսեր. ուրեմն կարեւորութիւն չէր տար եւ ատոր համար ալ շատ փրկուելիք հիւանդներ կը մեռնէին. մանաւանդ այրեր, որոնք շատ անգամ հիւանդ վիճակով իսկ գործի կ'երթային: Ու կը մնային շատ մը մանուկներ ի հօրէ որո: Ու զէյթունցիին անոր համար ունի իր առածը որ կ'ըսէ. «Հէօյն օգսուզը, օգսուզ չէ, մէօյն օգսուզն է օգսուզ» Հայրազուրկ որբը չէ որբը, այլ մայրազուրկը: Ուրիշ առած մըն ալ ունէին թուրքերէն լեզուով, հաւանաբար աղքատ թուրքերու կեանքէն առնուած. «Ֆուխարայըդ չոռ կէթիրիր, չոռ տա էօյլիմ կէթիրիր: Այսինքն աղքատութիւնը կոփ կը բերէ, կոփն ալ մահ: Զէյթունցիք թէեւ արիւնով առողջ էին, առողջ զաւակներ ալ կ'ունենային, սակայն վերոյիշեալ պայմաններուն տակ, ինչպէս նաեւ տնտեսական, քաղաքական սեղմումներու պատճառով, առողջապահութեան մասին իրենց տգիտութեան երեսէն, թէեւ շատ կը ծնէին, սակայն քիչեր ողջ կը մնային, կ'ապրէին ու հետեւաբար դանդաղ էր իրենց աճումը: Մանաւանդ թուրք կառավարութեան Զէյթուն մուտք գործելէն ի վեր Զէյթունցիին պանդխտանալու սովորութիւն ալ չունէր, մանաւանդ երկար ժամանակով եւ հեռաւոր վայրեր, այդ պատճառով ալ մաքուր մեկնած եւ մաքուր ալ վերադարձած կ'ըլլային, հայրենիք՝ իրենց ընտանիքներուն ծոցը, երկրին կարօտը իրենց հո-

գիններուն մէջ: Վերջին տարիներն էին, որ շատ աղքատները -բէնդ-
պէր- կարգ մը մարդիկ Ատանայի կողմերը կ'երթային, եւ հոն բամ-
պակի դաշտերուն խոտերը կը գատէին, քանի մը ամիսէն, Մեծ
Ջատկի օրերուն կը վերադառնային: Իսկ կարգ մը զէյթունցիներ,
առհասարակ ջորեպաններ, իշապաններ, կօշկակարներ (փօսթալ կարողներ)
ինչպէս նաեւ խաղող, խնձոր, սալոր եւ այլ պտուղներու վաճա-
ռորդներ կը ճամբորդէին Ջէյթունի շրջակայ թուրք գիւղերը, մինչեւ
Թանըր, Տէօնկէլ, Թէքէր, Ղուրուճօղա, Արըսուլ, Խունի, Լորշուն եւ
իրենց այգիներու, պարտէզներու բերքերը կամ ոտնամանները կը
փոխանակէին իւղի, ցորենի եւայլնի հետ: Ձմեռն ալ հազիւ մատի
վրայ համրուող զէյթունցիներ լպուտներ²⁷, կ'երթային Մարաշի թուրք
գիւղերը Վիւրթիւլ, Նէտիրլէ, Կէօճէկ, ոմանք ալ մինչեւ Չուգուրօվա,
էլօղլու, Թէճնըլի, Խառնը, Պուլանըզ իրենց տարածները կը ծախէին
եւ կը գնէին բամպակ, սուսամ, հետերնին կը բերին նաեւ որսացուած
խոզ, ամբողջ մարմնովը դեռ չքերթուած, երբեմն ալ անոնց զավուրման,
Գզրար, լպուտներ, կը գզէին Չուգուրօվայ, Քիւրթիզի եւ Նէտիրլիի
մէջ բամպակ եւ այս վերջինները նոր տարիին կամ շատ շատ մեծ
բարեկենդանին կը դառնային Ջէյթուն, երկու ամիս պանդուխտի
կարճ կեանքէ մը յետոյ: Ջէյթունցիին մեծագոյն մասը, որ հասած
էր այլեւս երիտասարդութեան հասակին, արդէն քաջառողջ էր եւ
երկար կ'ապրէր: Ջէյթունցիք ունէին իրենց ազգային տարազը, ի-
րենց առանձին հայերէն-բարբառը Մարմնով նրբակազմ էին, միջահաս-
կէն քիչ մը բարձր, սակայն առհասարակ բարձրահասակ էին եւ
յաղթանդամ հին հերոսներու նման: Կարճահասակներ բացառու-
թիւն կը կազմէին: Ջէյթունցիներուն շատ քիչերը սիկարէթ կը ծխէ-
ին, ինչպէս նաեւ ոգելից ըմպելիքի գործածութիւնը շատ քիչեր ու-
նէին, ան ալ հարսանիքի մը կամ բուն Բարեկենդանի եւ այլ
խնջոյքի առիթով կը խմէին գինի: Կարելի է ըսել թէ զէյթունցիին
հարիւրին իննըսունը եւ աւելին ոչ կը ծխէր, ոչ ալ օղի կը խմէր: Քա-
ջառողջներ կ'ապրէին մինչեւ 100 եւ աւելի տարիներ: Մեր հայրենակից
Տէօվլէթ իր գրքով կը միշտ ՎՅՈՒՄԻՆ-ի մէջ ներկայացուած Արեգին
գիւղի Զիվի Մէարտիւրեանը որ 125 տարեկան էր եւ դեռ կ'ապրէր,
զէյթունցի Կիւճիկեան Մնացականը 105 տարեկանին 1895-ի պատերազմին
մասնակցած էր: Ինչպէս նաեւ Քէուուկոնց Պուտուսը որ 100-ը ան-
ցուկ էր կ'ըսէին: Այս ծերունին եւ իր կինը՝ Էաղվիւրը, կ'աւելցնէ
Տէօվլէթ, որոնք իրենց թոռներուն թոռները տեսնելու տարիքին հա-
սած էին, ըստ զանոնք մօտէն ճանչցողներուն, կողմէ իրեն
պատմածներուն, ամառ իրիկունները քաղաքին արեւմտեան ծայրը,
իրենց տան դիմացը, օդասուն բարձունքի մը վրայ նստած կ'ըլլային,

համակիրներու խումբի մը մէջ երբ թաղի աղջկունք եւ պատանեակներ
իրենց դռններն ու կուժերը քաղաքի եզերքը Նահատակ Աղբիւրի սա-
ռուցիկ ջուրէն լեցուցած՝ կը վերադառնային: Ծերունիին արթուն
միտքը մնացած էր թէ՛ Ջէյթունի մինչեւ ամենէն աննշան անկիւնի
տուններուն մէջ, որ աղջիկը ո՛ր երիտասարդին հետ ամուսնացած էր,
ինչ օժիտ տարած էր հետը, իսկ տիկին Աղուոր,- կը շարունակէ
Տէօվլէթ,- իր ոսկրուտ ձեռքերը քիչ մը վեր բարձրացուցած կ'ըսէր,
«չիյք էնիմ մառցի է», ինչ ընեմ մոռցեր է: Այս բառերը ա-
նիմաստ են զէյթունցուց հոգեբանութեան ծանօթ չեղողներուն, բայց
զէյթունցիին համար անոնք պատկերալից նշանակութիւն մը կը
ստանան, օծուած քրիստոնէական դիցարանութեամբ: Ջէյթունցիին՝
Աստուծոյ մասին ունեցած գաղափարն ալ տարօրինակ էր: Ան կ'ե-
րեւակայէր թէ Հայր Աստուած բազմած է երկնից մէջ խոշոր ոս-
կեպատ աթոռի մը վրայ մեծ սեղան մը առջեւը, վրան բացուած է
անուանացանկերու հսկայ տետրակ մը: Ամենակալը հայ կաթողիկոսի
մը գէմքով, պատկառելի, ալեքառ մօրուքով, սագի փետուրէ գրիչ
մը ձեռքը, կը գրէ այն մահկանացուներուն անունները, որոնց
կեանքը վերջացած է: Բայց ինչպէս երկրի վրայ մարդիկ մոռա-
ցումներ կ'ունենան, Աստուած ալ, վերը, երբեմն այդ անուանացան-
կէն կարգ մը մահկանացուներու անունները ջնջել կը մոռնայ եւ ա-
տանկները շատ կ'ապրին, մինչեւ որ օր մը վերստին աչքէ անցընէ
այդ տետրակը եւ մոռցած անուններուն վրայ խոշոր գիծ մը քաշէ:
Յաճախ հիւանդներ փոքր հիւանդութենէ մը կամ արկածէ մը կը
մեռնէին, բժիշկի չգոյութենէ կամ չգիմելէն եւ զէյթունցիին կ'ըսէր.
«Աճող եկեր էր, մեռաւ»:

ԲԱՐՔԵՐ, ՍՈՎՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԾՆՈՒՆԴ ԵՒ ՄԿՐՏՈՒԹԻՒՆ

Յղի կնոջ ծնած օրը պէպէս (դայեակ) կը փութայ կնքապոպին (կնքահայր) եւ տաներէցին տեղեկացնելու թէ ութ օր ետքը կնունք (մկրտութիւն) պիտի ըլլայ: Եթէ ծնածը մանչ է՝ կնքահայրը կ'ուրախանայ եւ դայեակին կը պատուիրէ որ առատօրէն ցանէ աղը, (սովորութիւն որ գիտական կամ բժշկական ոչինչ ունէր եւ կը կարծուէր թէ այդպէս ընելով մանուկը քրտախաշ չըլլար եւ քաջ ու տոկուն կ'ըլլայ: Կնքահայրը եւ տնեցիներ ուրախ կ'ըլլային ըսելով «Օ՛խ, չախմոխ մը խիլցով»: Հրացան մըն ալ աւելցաւ: Մկրտութեան պահուն կնքահայրը նորածինին վրայ մէկուկէս կանգուն մետաքսեայ կտոր մը կը ծածկէր՝ երբ մանչ ըլլար, իսկ տպածոյ՝ աղջիկ երեխային համար: Կնքահայրը կանուխէն կը խոստովանէր եւ կը հաղորդուէր: Ինքը եւ տաներէցը ութ օր իրենց կիներէն կը մեկուսանային: Արու երեխային մկրտութիւնը մատաղով եւ Պատարագով կը կատարուէր: Յետոյ կնքահայրը նորածինը գրկած եւ զոյգ մը վառ մոմ բռնած, զգեստաւորեալ քահանաներու եւ դպիրներու ընկերակցութեամբ Վոյս ի լուսոյ շարականը երգելով մկրտուողին տունը կ'երթային, ուր նորածինին մայրը նստած կ'ըլլար մինտէրի մը վրայ՝ ծածկուած հարսնութեան քողով: Կնքահայրը երախան կը դնէր մօրը առջեւ, եւ երբ մանչ ըլլար կ'ըսէր. «Աստուած մնացական ընէ, հօրով մօրով մեծնայ», եթէ աղջիկ է. «Աստուած խալըրլու ընէ»: Սանամայրն ալ խոնարհելով կնքահօր ոտքը կը համբուրէր: Պահպանիչով արարողութիւնը վերջացնելէ ետքը կը սկսէր կնունքի հացը՝ ճաշ, զոր ուտելով եւ շնորհաւորելով կը մեկնէին: Սանամայրը մինչեւ մահ անխօս կը մնար կնքահօր հետ: 40 օր տունէն դուրս չէր ելլեր: Ական նշանաւոր օրեր սանամայրը կնքահօր ամէն տարի նուէրներ կը դրկէր՝ ինչպէս քիչ մը օղի, գինի, մրգեղէն, թաշկինակ եւլն. պարունակող ծրար մը: Կնքահայրը մկրտութեան առթիւ քահանային 1-5 դահեկան կը վճարէր, նոյնչափ մըն ալ՝ եկեղեցիին:

ՆՇԱՆԱՆՕՍՈՒԹԻՒՆ

Զէյթունի մէջ ալ օրօրոցէն նշանելու պէշիկ քէրթմէ անիմաստ սովորութիւնը կար, երբեմն: Զափահասութեան տարիքն ալ աղջկան համար՝ 12-14, իսկ տղուն համար՝ 15-17 ընդունուած էր, ինչ որ սխալ էր Զէյթունի կլիմային համար: Ամուսնութիւնը ծնողքներու

փոխադարձ հաւանութեամբ կը կարգադրուէր: Տղուն տաներէցը տղուն կողմէ աղջկան ծնողքին զոյգ մը ապուծօն ապարանջան կամ զոյգ մը դազի ոսկի Սուլթան Մահմուտի դրամ, 20-30 դահեկաննոց կը յանձնէր իբրեւ նշան: Նշանախօսութեան եւ Պսակին միջեւ 1-3 տարի ժամանակ կը թողուէր սովորաբար: Մանչն ու աղջիկը իրար չէին տեսներ եւ երբ պատահմամբ հանդիպում ըլլար՝ իրարմէ խոյս կու տային: Բայց խնամինքը փոխադարձ այցելութեան կ'երթային, մանաւանդ նշանաւոր օրեր հարսնատես կ'երթային նուէրներով եւ բարեկամներով: Նշանը պսակին մօտեցած օրերը կ'օրհնուէր եւ եթէ նշանախօսութեան շրջանին փեսացուն մեռնէր՝ հարսնցուն անոր փոքր եղբօր կամ եղբորորդուն կամ պատկանեալ ազգատոհմէն երկրորդի մը կը պսակէին:

ԱՄՈՒՄՆՈՒԹԻՒՆ

Երբ փոխադարձ հաճութեամբ հարսանիքի օրը որոշուէր՝ 15-20 օրիններով խանոս անտառը կ'երթային հարսանիքի փայտ բերելու, երթ ու դարձի առթիւ ուրախութիւն եւ կերուխում ընելով: Վերադարձին հրացանաձգութիւն՝ (կիւլպէնկ) կ'ընէին: Հարսանիքի պատրաստութեամբ կը զբաղուէին, կը խոստովանէին ու կը հաղորդուէին: Ուրբաթ կէս օրին հարսնետրներ քահանաներով եւ տիրացուներով հարսին տունը կ'երթային, ճարդրում-զարդարանք կատարելու: Կիւլպէնկ տեղի կ'ունենար երբ հարսնետրներ աղջկան տունը հասնէին: Ազապ-պաշին՝ աղջկան զգեստները փեսային կողմէ՝ գլխուն վրայ ափսէ մը դրած՝ կը տանէր աղջկան: Կիներ կ'առնէին ափսէն, որուն վրայի զգեստներով աղջկան տաներէց կիներ կը հագուեցնէր հարսը, կը հինայէր ձեռքերը եւ նոյն միջոցին քահանաներ եւ դպիրներ կ'երգէին: «Խնկի ծառի նման ես, Բարի պտուղ բերկեալ ես, Դու քաղցր պտուղի համ ես, Աստուածածին, մեղայ քեզ» երգը: Հանդէսը կը վերջանար Պահպանիչով եւ կը վերադառնային փեսային տունը: Նոյն օրը կէս օրին վանքին վանահայրը կը հրաւիրուէր փեսային թաղի եկեղեցին եւ միւս եկեղեցիներու քահանաներուն եւ նշանաւոր անձերու ներկայութեամբ կը կատարուէր նշանօրհնէքը: Խորաններու վարագոյրները կը քաշուէին, հանդիսականներ ծնրադիր, նշանները մէջտեղ կը դրուէին: փեսային կողմէ զոյգ մը ապարանջան, իսկ հարսին կողմէ մատանի մը, որոնք իրարու կապուած կ'ըլլային մետաքս թելով մը: Աւագ քահանան աջը տղուն եւ ձախը աղջկան կնքահայրը կեցնելով, անոնց կ'ուղղէր հաւանութեան բանաձեւի հարցումը եւ կը ստանար հաստատական պատասխանները, երեք անգամ կրկնելով: Կ'երգուէր «Նշանաւ Ամենայաղթ» շարականը եւ հանդէսը կը փակ-

ուէր Պահպանիչով, Ազապ-պաշին եկեղեցիին դուռը կեցած մէջ-մէկ բուռ չամիչ եւ լէպլէպի կը բաժնէր հանդիսականներուն «Տառօսը ձեր գաւկիսն» մաղթանքը յանկերգելով: Այդ օրը ներկաները փեսային տունը կ'երթային թագաւորը հագուեցնելու: Օրը Ուրբաթ ըլլալով՝ պաշէի կերակուրներ կը դրուէին ընթրիքի սեղանին վրայ թագաւոր եղբօր կողմէն: Ուրբաթ իրիկուն փեսան հրապարակաւ իր տան բա-կին մէջ տաք ջուրով եւ օճառով լողանք կ'ընէր մեծ կոնքի մէջ եւ այդ միջոցին ծնծղաներով կ'երգուէր «Այսօր Անճառ»ը: Ազապ-պաշին կարմիր թանկագին ապան հագած, թարապուսը մէջքը կապած՝ իր-րեւ հրաւիրագիր՝ թաղերը պտըտելով կը բաժնէր մանրիկ գաթաներ կլոր անխղ հաց: Ուրբաթ օր փեսային տունը լեցուն կ'ըլլար բազ-մութեամբ, առատ կերուխում: Ազապ-պաշին պնակով ներկաներէն դրամ կը հաւաքէր քահանաներուն եւ տիրացուներուն համար: Ի-րիկունը՝ փեսային լուացումէն ետքը, թագաւորն ու թագուոր եղբայրը (սովորաբար 8-10 տարեկան պատանի մը) «Այսօր երկնայինքն ու-րախացան» շարականը երգելով կը հագուեցնէին փեսան Շամ Ղութ-նուսու պարեգօտով, Շամ Թարապուս գօտիով: Վրայէն վարդապե-տական սեւ վերարկու մը՝ զոր վանահօրմէն առժամապէս կը ստա-նային 5 դահեկան վճարելով: Գլուխը կը դնէին Ղափուխ, քահանայի տեսակ մը սեւ գդակ՝ շուրջը նուրբ մետաքսէ սեւ փուլի մը փաթ-թըւած 2-3 կանգուն երկարութեամբ, ոտնամանները Այնթապի կիւլի-չէֆթալի կօշիկ, Թագաւոր-եղբայրն ալ նոյն ձեւով հագուած միայն վերարկուն կարմիր: Երբ զգեստաւորումի արարողութիւնը լրանար՝ թագաւորը, թագաւոր-եղբայրը եւ ազապ-պաշին կը ծնրադրէին, քահանան «Պահպանիչով կ'օրհնէր զիրենք եւ մաղթանքով մը սուր մը կը յանձնէր փեսային որ զայն ընդունելով իր ընկերներուն հետ, կար-գով կը համբուրէր հրաւիրեալներուն ձեռքերը, լսելով. «Աստուած շնորհաւոր արասցէ» մաղթանքը: Երիտասարդներ առանձին եւ աղջիկներ ու հարսներ առանձին տավուլ գուռնայով կ'երգէին ու կը պարէին բոլոր գիշերը: Երիտասարդներուն խոտիւ արգիլուած էր մտնել կի-ներու մէջ: Շարաթ առտուն կանուխ Ազապ-պաշին, կոչնականներուն, քահանային եւ փեսային հետ կ'երթային հարսին տունը, ուր քա-հանան հարսին ձեռքը փեսային կու տար՝ կատարելով նախապսակը: Յետոյ հարսը ձիու վրայ, իսկ փեսան ու թագաւոր-եղբայրը ջորիներու վրայ նստած կը տանէին եկեղեցի: Պատարագի ատեն հարսին տան երէցը կը կատարէր պսակը: Փեսայի եւ հարսի գլխուն վրայ մե-տաքսէ ժապաւէնով մը մէյմէկ փոքրիկ խաչ կը կախէին եւ փե-սային պարանոցին շուրջ խաչաձեւ ուրար մը կը փաթթէին. ձեռքն ալ կու տային ծայրերը մետաքս ծոպերով թաշկինակ մը, որուն

մէջ դրուած կ'ըլլար խնձոր մը կամ նարինջ մը, զոր քթին առջեւ կը բռնէր մինչեւ պսակադրութեան լրումը: Ազապ-պաշին մերկ սու-րը խաչաձեւ կը բռնէր թագաւորին եւ թագուհիին գլխուն վերեւ: Երբ պսակը աւարտէր՝ բոլոր ժողովուրդը նորապսակներու առջեւէն կ'անցնէին, այրեր՝ փեսային, իսկ կիներ՝ հարսին յիշալ առկախ խաչերը համբուրելով: Հարսը ծածկուած կ'ըլլար սպիտակ մեծ քօղով մը: Եկեղեցիէն դարձին քահանայական խումբը ծնծղաներով կ'եր-գէր. «Արեգականն Արդարութեան» շարականը, իսկ երիտասարդները՝ թուրքերէն երգեր: Թագաւորը, թագուհին եւ թագաւոր-եղբայրը կը հեծնէին երեք ձիերու վրայ, եկեղեցիի բակէն, եւ կը սկսէր հրացա-նաձգութիւնը: Դէպի տուն ճամբուն վրայ հարսին ձիուն գլուխը կը բռնուէր, յաճախ քանի մը անգամներ, բարեկամներու կողմէ, որոնց տան առջեւէն կ'անցնէր հարսանեկան թափօրը: Ժողովին մէջ կանխաւ պատրաստուած կ'ըլլար խրախճանքի սեղան. պատուասիրողը կ'արգի-ւէր թափօրին յառաջանալը եւ կը հրամայէր փեսային ազգականնե-րէն մէկուն, էվէլք մը աւելի խաղ մը կանչել այնպիսի մէկուն որ կեանքին մէջ ըրած ըլլար այդպիսի բան: Խեղճ մարդը զոյգ մը կօշիկ կամ ոչխար մը նուիրելով ազատիլ կ'աշխատէր, սակայն չէր ընդունուեր յաճախ. եւ երբ բերանը բանար՝ զինքը չընկալատողնե-րէն 8-10 հոգի ձեռքերնին բարձրացնելով «Գու, լու, լու, լու» աքա-ղաղի ձայնով մը գոչելով ափի թեթեւ հարուածներ կ'իջեցնէին ան-ճարակ աւչողին գլխուն, կամ Ֆէսը գետին կը նետէին: Թափօրը կը հասնէր փեսին տան առջեւ: Հարսը դեռ ձիէն չիջած՝ Ազապ-պաշին կոնք մը կը ներկայացնէր հարսին, որ ձեռքերը խմոր շաղուելու ձե-ւով կը շարժէր անոր մէջ: Փեսին մայրը պատուհանէն ափ մը փէ-նէս դեղին թիթեղէ փուլեր կը ցանէր հարսին եւ փեսին վրայ: Աղքատները փէնէսի տեղ գարիի հատիկներ կը նետէին: Այդ պահուն թաղին իշխանը կը հարցնէր փեսին հօրը թէ ինչ կը նուիրէր իր հարսին. ան ալ իր կարողութեան համեմատ 300-1.000 որթատունկ կը նուիրէր իրեւ հարսին ցմահ սեփականութիւն: Հարսն ու փեսան ձիերէն կ'իջնէին, սակայն դեռ դուռը դոց կ'ըլլար: Նուռ մը կը տրուէր հարսին որ ամբողջ ուժով կը զարնէր դուռին եւ հատիկները կը ցատկուտէին, մինչ ժողովուրդը «կեցցէ հարսը» կ'աղաղակէր, Եթէ շատ հատիկներ թափէին ժողովուրդը կը խորհէր թէ հարսը շատ զաւակներ պիտի ունենայ եւ կը մաղթէին թէ մանչերը շատ ըլլան: Հարսը կ'առաջնորդէին տեղ մը որ այրերէն վարադոյրով մը բաժնուած կ'ըլլար: Փեսան սուրը մէկ ձեռքը, խնձորով թաշկինակը միւս ձեռքը բռնած՝ իշխանին կամ Աւագ քահանային ետեւը ոտքի վրայ կը կենար: Հարսնեւորները մատաղն ու գինին վայելէին ետքը

բարեմաղթութիւններով կը ցրուէին: Յետոյ փեսան, թագաւոր-եղբայրը եւ հարսնիքի աշխատաւորները կը նստէին ճաշելու: Կիններն ալ վարագոյրին ետին կ'աշխատէին կերակրել հարսը: Պարերն ու երգերը կը տեւէին մինչեւ Կիրակի, երբ հարսին տունէն մեծ անտուկով մը կը դրկուէր օժիտը, որ կը բաղկանար շապիկներէ, թալիքնակներէ, գուլպաներէ, քսակներէ եւ մանր ձեռագործներէ, որոնք կը բաժնուէին փեսին ազգականներուն:

Հարսնիքը վերջացած կ'ըլլար Երկուշաբթի, բայց նորապսակներ ութ օր վերջ կը մանէին առազաստ. փեսան այդ ութ օրերը կնքահօր տունը կը գիշերէր եւ ամէն օր հացկերոյթի հրաւէր կը տրուէր: Եթէ մէկը թագաւոր լսելու տեղ սխալմունքով անունը կանչէր՝ ոչխար կամ արջառ մը տուգանք տալու կը դատապարտուէր, զոր մորթելով ուրախութիւն կ'ընէին: Ութ օր ետքը պսակադիր քահանան կու գար ուրաքը եւ խաչը վերցնելու. երկու ամոնները կը ծնրադրէին քահանային առջեւ, որ խրատներ կու տար անոնց փոխադարձ պարտականութեանց մասին. իբրեւ խոստովանահայր կը թելադրէր մերձաւորութեան մէջ չափաւոր ըլլալ, զգուշանալ անկէ՝ Պահքի, Կիրակի եւ Տէրունական Օրերը, եւ անպայման դադրիլ յղութեան առաջին նշաններէն սկսեալ մինչեւ ծննդաբերութենէն ետքը 48 օր: Այս պատուէրները կու տար իբր եկեղեցւոյ օրէնք ու կը մատնանշէր անսաստելու վտանգները: Հին օրերուն մինչեւ 2.000 դահեկան ծախք կ'ըլլար հարսնիքի մը. սակայն, վերջերը, հարսանիքները մէկ գիշերուան մէջ կը վերջանային եւ ծախքը հազիւ կէսը կ'ըլլար: Նորահարսը 40 օր ետքը հօրը տունը կը տանէին ու 15 օր մնալէն ետքը տան երէցկիներ ետ կը բերէր: Հարսը չէր խօսեր սկսուր պապին (կեսրայրին հայրը) եւ կեսուրին հետ՝ մինչեւ զաւակ մը ունենալը, իսկ կեսրայրին հետ միայն անոր խոր ծերութեանը: Հարսը կեսուրին ու կեսրայրին կը ծառայէր հլութեամբ եւ հիւրերուն ոտքերը կը լուար: Փեսան ալ զրքոյ պոպին (աներ) եւ զրքոյ մէրին (զոքան) հետ չէր խօսեր՝ առանց ստիպողական հարկի, ինչպէս հարսնիք կամ մահ, անոնց տունը ոտք չէր կոխեր, եւ եթէ երթար՝ հարսին հետ կ'երթար, եւ հարսի նման փսփսալով կը խօսէր աներոյ եւ զոքանչին հետ. եւ այդ ալ ներքի էր զաւակ ունենալէ ետքը եւ եթէ չունենար՝ երեք տարի ետքը:

ԹԱՂՈՒՄ

Ձէյթունցիներ վերջին Հաղորդութիւնը կը կոչէին իտէմիտէ պէշօր (վերջին պաշար). առանց խոստովանութեան եւ հաղորդութեան մեռնիլը մեղք եւ դժբախտութիւն կը համարուէր: Մեռնողին բերանն ու

աչքերը փակել կարեւոր կը սեպէին եւ քահանային Հոգւոցէն ետքը դիակը կը լուային. լոգանքի ջուրը տաքցնելու կրակը շուտով կը մարէին եւ կիսավառ փայտերը տունէն հեռու կը նետէին եւ զանոնք ոչ ոք կը գործածէր՝ վախճալով թէ մահ կը պատահի: Պատանքը 7 կանգուն կտաւ կ'ըլլար. մեռելին բերանը նշխարի կտոր մը կը դնէին, ձեռքն ալ Երուսաղէմի խունկ ու մոմ կու տային. պատանքին վրայէն կուրծքին վրայ Երուսաղէմի լոյս-պատանք կը կարէին: Դադաղը, զոր լէշփէտ կ'անուանէին, չինուած էր երկու ձողերէ՝ սանդիսածեւ կարգ կարգ երկաթ շղթայով իրարու միացած: Ննջեցեալը՝ եթէ հարուստ ըլլար՝ թաղումը երկրորդ օրը կը կատարուէր Պատարագով. վերջերը անտուկով թաղելու նորամուտ սովորութիւն մը սկսած էր: Լաց ու կոծի տեսարանը կ'ըլլար սրտաճմլիկ. մեռնողին մայրը, քոյրը եւ ազգականները անոր զգեստներէն մասեր ունենալով ձեռքերին՝ գովբեզի ողբերով մինչեւ գերեզման կը հետեւէին դադաղին: Բացառութիւն կը համարուէին պատերազմի մէջ մեռնողները, որոնց վրայ բարձրաձայն լալը ամօթ էր՝ իբրեւ նախատինք նահատակի յիշատակին: Ջրկիր կիներ ճամբու վրայ կամ մինչեւ իրենց տանը դուռը երբ լսէին թէ մահ պատահեց է՝ սափորներնուն ջուրը կը թափէին եւ նորէն կ'երթային ջուր բերելու՝ իբրեւ նշան ննջեցեալի տէրերուն սգակից ըլլալու:

Քահանային թաղումը մեծ հանդիսութեամբ կը կատարուէր եւ սուգը ընդհանուր կ'ըլլար. քաղաքին բոլոր խանութները կը փակուէին՝ եւ Կիրակիի հանգամանք կը ստանար այդ օրը: Վախճանողին կողոպուտը (փիլոն, սեւ զգեստեղէն) վանք կը դրկուէր: Քահանային հոգեճաշը իր օրհնութեան կնքահայրը կու տար՝ անձնական ծախքով:

ՔԱՀԱՆԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ

ԵՒ ՁԵՌՆԱԴՐՈՒԹԻՒՆ

Ձէյթունցիներ քահանայի ընտրութեան մէջ վերջին ծալք բռնադիր էին. նախապատուութիւն կը տրուէր քահանայի օճախէ սերունդներու: Ընտրելիին ամբողջ կեանքին մասին թաղին ժողովուրդէն տեղեկութիւն կը պահանջուէր. եթէ գէշ անցեալ մը ունենար, գողութեան կամ մարդասպանութեան դէպք մը, ընտրութիւնը կը բեկանուէր: Պատերազմի մէջ մարդասպանութիւնը յանցանք չէր նկատուեր՝ ընդհակառակը: Քահանայի ընտրութեան ատեն նկատի կ'առնուէին նաեւ Հին եւ Նոր Կտակարաններուն քիչ-չատ հմուտ ըլլալը, քարոզելու կարողութիւնը, ազգասիրութիւնն ու պատերազմասիրութիւնը, ինչպէս նաեւ Փիղիբական կազմն ու կորովը: Ընծայացուին կնոջ հաւանութիւնն ալ կ'առնուէր:

ձեռնադրութենէն առաջ ժողովին կողմէ տաներէց քահանան ղրկուելով: Արժանաւորութեան եւ հաւանութեան կէտերը ճշդելէ ետքը ժողովը գրով մը Ս. Աստուածածին վանքին Եպիսկոպոսէն կը խնդրէր վարդապետ մը եւ Առաջն. Փոխանորդ քահանան ղրկել ընծայացուն քննելու: Այս երկու եկեղեցականները միանալով թաղին իշխանին, թաղականութեան քարտուղարին, երէցփոխանին, եւ տաներէցին՝ կը կազմէին 6 անդամներով քննիչ ժողով մը, ուր վարդապետը ընծայացուն կը քննէր Աստուածաշունչի եւ եկեղեցական կարգ ու կանոններու մասին: Երբ պատասխանները գոցահուցիչ ըլլային՝ ընտրութիւնը կը հաստատուէր եւ կը տեղեկացուէր Եպիսկոպոսին, որ որոշուած օրը վանքէն քաղաք կ'իջնէր բերելու համար ընծայացուին կնքահայրը, իշխանը, երէցփոխանը, պատկանած եկեղեցիին քահանաները, ուսուցիչները, ձայնաւոր աշակերտները, իշխանին 12 դասպատայիները որոնք թաղական կը սեպուէին խմբովին վանք կ'երթային եւ հանդիսաւոր թափօրով Եպիսկոպոսը քաղաք կը բերէին. ահագին բազմութիւն կ'ելլէր դիմաւորելու. երբ Պօղոս - Պետրոսի կամուրջը գային՝ Եպիսկոպոսը ձիէն վար կ'իջնէր, կը զգեստաւորուէր եւ «Պահպանիչ»ով ժողովուրդը օրհնելէ ետքը «ԶԲրիստոս թագաւոր» շարականին երգեցողութեամբ թափօրը կ'ուղղուէր դէպի եկեղեցին այն թաղին, ուր պիտի կատարուէր ձեռնադրութեան խորհուրդը: Այդ օրը Շաբաթ կ'ըլլար եւ իրիկուան կը կատարուէր կոչումի արարողութիւնը. բայց անկէ առաջ եկեղեցիին բակին մէջ ջուր տաքցնելով խոշոր դէյրիւիներ մէջ (դաշտիշոն - մեծ կոնք) ընծայացուն կը լուային. լողանքը կու տար կնքահայրը կամ անոր կողմէ որոշուած մէկը՝ երբ տիրացուներ կ'երգէին «Այսօր Անճառ»: Իրիկուան կը զարնուէին եկեղեցիին փայտէ եւ պողպատէ կոշնակները, չորս թաղերէն ժողովուրդը եկեղեցի կը դիմէր գունդագունդ, եւ կը կատարուէր կոչումը: Կիրակի առտուն Եպիսկոպոսը կը պատարագէր, կը ձեռնադրէր եւ կ'օծէր նորընծան: Եթէ Մեծ Պահքի մէջ չըլլար՝ կնքահայրը 2-3 ոչխար մատաղ կ'ընէր եւ շուրջ 100 հոգիի ճաշ կը տրուէր, ուր բաժակներ կը պարպուէին, բարեմաղթութիւններ կ'ըլլային նորընծային եւ երէցկնոջ արեւշատութեան համար եւ ուղղափառ Եպիսկոպոսներու կենացը: Եպիսկոպոսն ալ բաժակ կ'առաջարկէր Աստուածասէր իշխաններու կենացը. բաժակներ կը բարձրանային նաեւ քաջամարտիկ հերոսներուն համար:

Ձեռնադրութեան օրէն կը սկսէր նորընծային քառասունքը, զոր կ'անցընէր եկեղեցիին խուցը՝ փիլոնով ծածկուած՝ աղօթքով ու ծոմապահութեամբ, Սաղմոս եւ Նարեկ կարդալով եւ քահանայական պարտականութիւններու վարժութիւններով: Նորընծային կերակուրը

40 օր ժողովուրդէն կը ղրկուէր, խնամքով պատրաստուած պահքի կերակուրներ, զոր նորընծան չէր կրնար սպառել եւ կը բաշխուէին աղքատներուն: Ամէն իրիկուն «Եկեցցէ» եւ գլուխ մը Աւետարան կը կարդացուէր եկեղեցիին մէջ, որու ընթացքին նորընծան դէմքը ծածկած՝ պահարանին դռնէն կը մտնէր եկեղեցին, գրակալին առջեւ ծնրադիր լուռ ու մունջ հարսի նման կը նստէր եւ Աւետարանի ընթերցումէն ետքը կը վերադառնար պահարանը: Քառասներորդ օրը քահանայ մը կու գար եւ կը կատարէր նորընծային լուացումը եւ կը հագուեցնէր կնքահօրմէն նուէր ճերմակեղէնները, պարեգօտ, գօտի եւ մէրտին մէշահար ըսուած վերարկուն. կնքահայրը Եպիսկոպոսին աջահամբոյր կու տար եւ ան ալ նորընծային փիլոն մը կը նուիրէր: Հետեւեալ առտուն նորընծան կը մատուցանէր իր անդրանիկ Պատարագը: Պատարագի աւարտումէն ետքը նորընծան զգեստաւորուած կ'առաջնորդուէր իր տունը, ուր կնքահօրմէն պատրաստուած մատաղը օրհնելով թափօրով կը վերադառնար եկեղեցի: Առաջիկայը սովորութիւն է եղեր որ նորընծային կինը շրջապատուի երէցկիներով, սաւանով եւ վերմակով ծածկուի եւ ականջները բամպակ թխուի եւ անոր զլխուն վրայ նորընծան քանի մը տուն Աւետարան կարդալով մեկնի: Կը կարծուի եղեր որ եթէ նորընծային երէցկիներ լսէ անոր ընթերցումին ձայնը՝ կը մեռնի, ինչպէս պատահեց է անգամ մը: Կարապետ Եպիսկոպոս ջնջած է այս ծիծաղելի սովորութիւնը: Նորընծան եկեղեցական զգեստներէն մերկանալէ ետքը, երկրորդ անգամ կու գար տուն եւ կը մասնակցէր ճաշկերոյթին՝ լուծելով այն օրուան պահեցողութիւնը: Անկէ ետքը ամբողջ տարի մը տունը ոտք չէր կոխեր եւ եկեղեցիին կից սենեակ մը կը բնակէր՝ պահքով անցընելով օրը, բացի Շաբաթ եւ Կիրակի օրերէ, երբ իւղով կերակուր եւ մատաղ կրնար ուտել: Զէյթունցիք ծայրայեղ եկեղեցասէր էին. ամէն օր եկեղեցի չերթալ ամօթ կը համարուէր եւ ժամերգութիւնը չաւարտած ոչ ոք տեղէն կը շարժէր. արարողութեան պահուն մեկնիլ գայթակղութիւն կը համարուէր եւ թաղին իշխանն ու տաներէցը պատճառը կը հարցնէին. կոխի կամ հրդեհի ատեն միայն ժողովուրդը եւ Աւագ քահանան դուրս կ'ելլէին, ինչ որ բացառիկ պարագաներ կը համարուէին:

ԶԷՅԹՈՒՆՑԻՒՆ ԿԵՐԱԿՈՒՐՆԵՐՆ ՈՒ ԽԱՂԵՐԸ

Ձէյթուն հարուստ էր արօտավայրերով: (Ինչպէս Պէրիտի, Ուզօրի, Իւկէճի, Ալաշայիի դրախտանման արօտատեղիները), այնտեղ կը ճարակէին բազմատեսակ սննդառատ ծաղկախառն խոտեր եւ կը խմէին զով եւ առողջարար, մաքուր ջուրներ: Ձէյթունցիներու մտացու կենդանիները՝ այծերը, նոխազները (չէպիշ), Անոնց միսերը շատ համեղ կ'ըլլային: Նոյնիսկ հեռաւոր Իրաքէն, Սուրիայէն բազմահազար հօտեր ոչխարներու կը բերէին խաշնարածներու առեւտուրով զբաղող վաճառականներ, Պոյամեաններու Ենիտիւնեաններուն եւ ուրիշ ընտանիքներու արօտավայրերը: Մինչեւ աշնան վերջերը կ'արածէին այդ հօտերը եւ յետոյ կը տարուէին Հայէպ, Մուսուլ, Պաղտատ եւ կը վաճառուէին: Ձէյթունցիք իրենց այդ չապիշներուն համեղ միսէն կը շինէին իրենց կերակուրները: Ձէյթունցիք կը պատրաստէին (քիւֆթէ) յօշածոյի տեսակներ, ինչպէս՝ հում քուֆթօ, դօլմօ քուֆթօ, մէլէօլ քուֆթօ, օտուզով քուֆթօ, թօթու քուֆթօ, ճանկիկ, կէօթիկ կամ կեօթիկ, թուպով քուֆթօ, սիմինտով քուֆթօ, բիպկէօլ քուֆթօ, էադէօլ քուֆթօ: Անոնց բոլորը նկարագրել շատ երկար պիտի ըլլար: Կը շինէին նաեւ դավուրմօ, դայմօ, հիւրիսէ, զոր կը շինէին մասնաւոր ժամանակներ՝ ինչպէս Վարդանանցի Հինգչարթի կամ Բուն Բարեկենդանին, Սուրբ Յակոբայ եւ Ս. Սարգիսի շաքաթական պահքերու վերջաւորութեան Շաբաթ եւ Կիրակի օրերը: Բուն Բարեկենդանի Կիրակին եւ Վարդանանց Հինգչարթի տեղի կ'ունենար նաեւ հրացանաձուլթիւն, ձիարշաւ, մականաձուլթիւն (ճիւրիտ), հազար տախտան, էօմպէք, լըրշամարտութիւն, ուռուցոծ պապա (Ֆրանսացիներու փօլիշինէլը), ուր երեք դերակատարներ կ'ըլլային, կուրծքը եւ կրօնակը արուեստականօրէն կուզ շինուած (լաթեր լեցնելով) եւ դէմքը ալիւրոտած ուռուցոծ պապան՝ փեսան, իր հակառակորդը՝ եւ նշանածին սիրահարը սէած կախէօղը, երեսը մուրով սեւցուած, քովէն կախուած սեւ սաճ մը (Ֆրանսացւոց արլըքէնը) թիթեղէ, զոր կը գործածէր որպէս վահան եւ միայնգամայն թմբուկ, որու վրայ կը զարնէր զաւազանով մը, զրովսը փետրազարդ ճիւղ Ամբիկայի պղնձամորթներուն պէս: Հարսը՝ երիտասարդ մըն էր, պճնուած կնոջական ճոխ հագուստներով: Ուռուցոծն ու հարսը կը պարէին ընդարձակ տանիքի մը վրայ, ուր խոնուած կ'ըլլար երկսեռ եւ ամէն տեսակի բազմութիւն մը: Սէած կախէօղը յանկարծ ներս կը մտնէր ուռուցոծը փախցնելով ինք կը պարէր հարսին հետ: Ուռուցոծը հանգչած, ինքզինքը գտած

կը հասնէր, կը փախցնէր հակառակորդը եւ կը վերսկսէր իր պարը հարսին հետ: Այս պարերուն տեղի կ'ունենային կատակներ, սպառնալիքներ, սրախօսութիւններ: Ի վերջոյ սէած կախէօղը կը սպաննէր ուռուցոծ պապան, իր վրայ կը հրակրէր իշխանութեան ուշադրութիւնը կը միջամտէին, բօխէր կը հասնէր, ուռուցոծի դիակին, որ մեռած չէ եղեր, այլ մարած է: Ընդոստ կը կանգնէր եւ կը զգար թէ իր բերանը դեղ մը պիտի դնեն քարի կամ փայտի փշրանքներ: Խաղը կը վերջանար փեսային յաղթանակով:

Ձիարշաւը աւելի ասպետական մրցում մըն էր: Հարուստի զաւակներն է որ կը մասնակցէին անոր, անոնք որ ընտիր նոյգններ կ'ունենային, ինչպէս Բէասիլիսենք, Նիշանենք-Պէալճենք, Մարկանենք, Խըաբարդենք, Տաղտապախենք: Եւ ձիարշաւը տեղի կ'ունենար տարի մը Մարկանենք դըարը (թէրլէն), այն տարին որ ցանուած չէր ըլլար, իսկ յաջորդ տարին Չաղորենց թէարլէն: Եւ հանդիսատես ժողովուրդը Ձէյթունի տանիքներէն կը դիտէր, թէ որոնց մին պիտի չահէր մրցանակը, Բէասիլիսենց թէ Նիշանենց միւրը: Յաճախ այս երկուքին միւրն էր որ մրցանիշը կը կտրէին, երբեմն ալ Խըաբարդենց մին առաջ կ'անցնէր:

Ձէյթունցի պատանիներ ունէին նաեւ չանթինը, վիզինը, մէսզլիսինը, թուփինը, դէարվէրը, հըմվիլինը, թուփինը, տեվէրը, չուփին էօմպէքը, դանթարը, ալախուկը, տըստուկ քարվուկը եւ այլ խաղերը:

Հանելի մարմնամարզ մըն էր նաեւ լոդալը, Շուղրի գետակին մէջ: Լոդալու վայրեր էին այդ գետակին հետեւեալ տեղերը՝ Ճըռազօն, Շուղր, Սուսիկ, Ավալտանենց կէօլ, Հէալվիւրկոն կէօլ: Լոդալու ատեն ամուրիներ (տէլիղանը) կը մրցէին ամուսնացածներուն (էվլի) հետ, եւ կ'աշխատէին զիրար թաղել ջուրին մէջ: Երկու ճակատ կ'ըլլային զիրար թաղելու կռիւ կ'ընէին: Տկարացած, պարտուելու վրայ եղող կողմին օգնութեան կը հասնէին, իրենց դասակարգի մարդիկը: Այրի կիներն ալ երիտասարդներուն կողմը անցած կ'ըլլային: Ահագին բազմութիւն մը հանդիսատեսներու հաւաքուած կ'ըլլար գետին կամ լճին ափերը:

Ինչպէս կ'ընտրուէր մեռնող իշխանի մը յաջորդը (դըռուազներ զէյթունցիներու կեանքէն)՝ Ձէյթունի չորս թաղերուն պետերը կամ իշխանները, որոնք (ըխթէյօր) ծեր կը կոչուէին, ժառանգական իշխանութիւն ունէին: Երբ իրենցմէ մէկը մեռնէր, յաջորդին ընտրութեան համար կրօնական դասը, միւս թաղերու իշխանները, եւ անոնց դասաւորները (հավէր) թիկնապահները կ'երթային մեռնող իշխանին

տունը, մէջտեղ կը բերէին անոր որդին, եթէ մանչ զաւակ ունէր, եղբայրը եւ վրան Պահպանիչ ու մաղթանքներ կարդալէ ետքը, զայն կը նստեցնէին բարձրագոյն բազմոցի մը վրայ. նոր իշխանին անհրաժեշտ թելադրանքները ընելէ յետոյ զայն կը ծանուցանէին իր թաղի ժողովուրդին, որոնք պատրաստ էին հնազանդիլ անոր եւ յարգել զայն՝ մինչեւ իսկ եթէ տակաւին անչափահաս է: Անհնազանդները կը պատժուէին մինչեւ իսկ մահուամբ:

ԱՐՇԱԿԱՆ ՔՆԵՐՈՒ ՇՐՋԱՆ.

Հայ եւ թիւրքմէն կոիւներ, Դաշնակցութիւններ

Եղած էր ատեն մը որ Զէյթուն տնտեսական եւ հոգեկան նախանձելի վիճակ մը չունէր, իր շրջանակէն մինչեւ հեռաւոր շրջաններ երթալէ դադրած եւ ինքն իր մէջ ամփոփուած էր: Սակայն այդ ժամանակը երկար չտեւեց, Դարձեալ սկսաւ ան դուրս գալ իր լեռնոտ սահմաններէն եւ հետամտիլ մօտակայ վաչկատուն ցեղախումբերու կեանքին եւ ընթացքին: Այդ ցեղերէն ամենէն նշանաւորներն էին թիւրքմէնները: Ընդհանրապէս խաշնարած էին եւ ամառները Կիլիկիոյ դաշտերէն կը բարձրանային Կիլիկիոյ բարձունքները եւ հովիտները իբրեւ ամարանոց, իրենց հօտերով կը տարածուէին բարեբեր արօտավայրերը ու կը մնային մինչեւ աշնան կէսը: Տիրացած էին Կիլիկիոյ ամէն կողմերը տարածուած այդ վայրերուն եւ հարստացած: Ասոնք Կիլիկիայէն վտարած էին եգիպտական բանակները եւ տեղաւորուած էին Ռուրինեանց երկիրներուն աւերակներուն վրայ, թիւրքմէններուն կը պատկանէին Անարզաբայի դաշտը, Չուզուր Օվան (Խորանիստ դաշտը), հայ լեռան խիտ անտառները իրենց բազմաթիւ գիւղերով: Օսմանեան իշխանութիւնը անուանական էր, երկրին իրական տէրը ասոնք՝ թիւրքմէններն էին: Որպէս քաջ ձիաւորներ սարսափ ձգած էին Կիլիկիոյ մէջ: Նոյնիսկ իրենց կիները կայտառ, խրոխտ գեղուհիներ, իբրեւ ճարտար հեծւորներ, անվախ ռազմիկներ, իրենց այրերուն հետ արշաւանքի կ'ելլէին: Այս ցեղախումբերը ամէն գարնան իրենց հօտերով եւ ընտանիքներով կու գային, կ'անցնէին Զէյթունի հարաւ արեւմուտքի սահմաններէն:

Աշնան, իրենց վերադարձին պիտի անցնէին Զէյթունի շրջակայ հայ գիւղերու մէջէն: Իրենց հօտերն ու արջառները պիտի մտնէին, կոխկռտէին, ճարակէին արտերը, այգիները եւ պարտէզները: Այսպէսով ամէն տարի մեծ վնասներու կ'ենթարկուէին զէյթունցիներ եւ շրջակայ հայ գիւղացիներ: Այս կացութիւնը տանելի չէր զէյթունցիներուն: Սուրէն իշխանի նախաձեռնութեամբ եւ ղեկավարութիւնով կը կազմակերպեն արշաւանք մը: Կիւռեսիի կիրճին մէջ թիւրքմէններ իրենց դիմացը կը գտնեն Զէյթունի արշաւախումբի տղաքը: Կ'ընդհարին իրարու, թիւրքմէնները յանկարծակիի եկած, փախուստի ճամբան կը բռնեն իրենց գոյքերով եւ կենդանիներով: Զէյթունցիներուն շախմախըները կը գործեն, գնդակը կը տեղայ փախչողներուն ետեւէն, ձիաւորներէն շատեր կ'իյնան գետեզերքի մացառներուն մէջ, ուրիշներ գետը կը նետեն ինքզինքնին ու կը խեղդուին: Յերեկ մը ամբողջ կը տեւէ կոիւր, ճամբաները դիակներով կը լեցուին: Գիշերը

վրայ կը հասնի թիւքմէն ձիաւորներ կը ստիպուին չշարունակել իրենց ճամբան դէպի ամարանոցները Զէյթունի ճամբաներէն եւ հայ գիւղերու, արտերու մօտերէն եւ ետ կը դառնան մեծ աւար թողլով զէյթունցի քաջերուն ձեռքը:

Յաջորդ տարին սակայն, անոնք այս անգամ հազարներու հասնող ձիաւորներով կ'արշաւեն դէպի Զէյթունի սահմանները, իրենց պարտութեան վրէժը լուծելու համար:

Զէյթունցին անակնկալի չի գար, անոր ազդարարուած է, կազմ ու պատրաստ է կրկին: Կը բռնեն բոլոր կիրճերն ու անջգերը: Թիւքմէն այդ հսկայ արշաւախումբը երբ կը մօտենայ Ջահանի եզերքը, զէյթունցի տղաք ժայռերու ետեւ դիրք բռնած, կը սկսին համազարկ բանալ անոնց վրայ: Այդ տարին ալ կը պարտուին եւ ետ կը դառնան:

Այս երկու տարիներու կրկնակի պարտութիւններէն յուսահատ եւ տնտեսապէս ալ վնասուած, կը պարտաւորուին քանի մը տարի առանց ամարանոցի մնալ եւ դաշտային կիլիկիոյ Չուզուր Օվաջի կիզի կիմաջի տակ անցընել ամառները իրենց հօտերով եւ ընտանիքներով: Տասնեակ տարիներ զէյթունցիք արգելք կ'ըլլան անոնց մեր լեռները, մեր արօտավայրերը բարձրանալու: Այդ դրութիւնը կը տեւէ մինչեւ 1850-ական թուականները: Ու այդ տարիներուն, Զէյթուն գիւղուած խաղաղութիւն մը ապահոված, թէճիրլիցիները կ'երթան դէպի Գօզանի լեռները, Հաճընի, Վահկայի բարձունքները: Թշնամութիւնները թէճիրլիցիներու եւ զէյթունցիներուն միջեւ կը խորանայ եւ տեւական բնոյթ կը ստանայ: Զէյթունցիներ ալ կը պարտաւորուին իրենց սահմաններէն շատ հեռուները չերթալ, ինչպէս որ նախապէս կ'իջնէին շատեր էլ Օղյու, Թէճիրլի, Հարունիէ, Չուզուր Օվաջի շրջանը առուտուրի համար: Շատ քիչեր միայն կը յանդգնէին նորէն փոքր արշաւախումբ մը կազմելով ձմեռները իջնել վերոյիշեալ վայրերը վարազ որսալու, բամպակ եւ սուսամ բերելու Զէյթուն: Հայրս ալ կ'երթար Չուզուր Օվա, 1900 թուականներուն, ուր մենք Զէյթոշաղթէճիրլիցի բարեկամ մը ունէինք Երրիկ Ահմէտ անունով: Հայրս քանի մը ամիս կը մնար այնտեղ, Մեծ պահոց Բարեկենդանին կը դառնար Զէյթուն եւ կը բերէր խոզի դաւուրմա, երբեմն ալ խոզը զարնուած, ամբողջութեամբ, իր մորթերով եւ գլուխով բեռուցած կը բերէր Զէյթուն: Թէճիրլիցիներու եւ զէյթունցիներու այս երկարատեւ ձգտուած վիճակի արձագանգը կը հասնի կիլիկիոյ ամէն կողմերը, անոնց արշաւանքներու ենթակայ ուրիշ ցեղախումբեր, նոյնիսկ Ադաատաղի քիւրտերը, յատուկ մարդիկ կը ղրկէին Զէյթուն եւ կը խնդրէին որ դաշնակցին զէյթունցիներու հետ ընդդէմ թիւքմէններուն:

ՉԷՅԹՈՒՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԹԵՄԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԳԼՈՒԿԱՆԵՐ ԵՒ ԳԻՒՂԵՐ

ԱՆՏԸՌԸՆ (Անտառէն).— Թէպէտեւ Անտրոն գաւառակը Մարաշ գաւառին մաս կը կազմէ կառավարական - վարչական կարգադրութեամբ, սակայն, եկեղեցական-վարչական տեսակէտով կը պատկանի Զէյթունի-Ուլնիոյ եպիսկոպոսական վիճակին: Կը տարածուի Զէյթունի հարաւ-արեւմուտքը, 14 ժամ հեռու: Երրորդ կարգի գաւառակ մըն է: Ունի 82 գիւղեր, շուրջ 25000 բնակչութեամբ, որուն 6000-ը հայ էր: Գաւառակին կեդրոնն է Կապանի կամ Կէպէն: Երկու վտակներ ունի՝ Քէշիշ սու եւ Անտրոն սու, որոնք Ջահանի կը խառնուին: Անտրոնի շրջանը կը տարածուին ընդարձակ անտառներ:

1895-ի Զէյթունի կոիւին, Եայճը Օղյու՝ թուրք ցեղապետը, լսելով Չուզուր Հիսարի սարսափը եւ զօրանոցին գրաւուիլը զէյթունցիներէն, իր բազմաթիւ հետեւորդներով կը յարձակի Շեվիլի (Շեպիլի...) հայ գիւղին վրայ: Եայճը Օղյու զէյթունցիները պահանջեց, չեպիկեցիներ մերժեցին եւ կռիւր սկսաւ: Լուրը հասաւ Ֆռնուզ եւ Զէյթուն, օգնութեան խումբեր ճամբայ ելան, սակայն հանդիպեցան չեպիկիցի հայերու եւ անոնցմէ խնայան թուրքերուն պարտութիւնն ու փախուտը: Իսկ երբ տեղեկացան թէ 150 հայեր բանտարկուած են Անտրոնի մէջ եւ սպաննուելու վտանգին տակ են 400 հոգիով, զէյթունցի եւ ֆռնուզցիներ կ'երթան Անտրոն եւ գրութիւնով մը դաջմագամէն կը պահանջեն անոնց ազատ արձակուիլը: Բանտարկուածները չեն արձակեր, ոչ ալ ոեւէ պատասխան կու տան, այլ ընդհակառակն, կանխաւ բռնուած դիրքերէ կը սկսին կրակել հայ խումբերու վրայ: Հայ տղաք, ասոր վրայ շատ բարկացած՝ կը յարձակին անոնց վրայ, որոնք ժամ մը դիմադրելէ յետոյ, կը լքեն դիրքերնին եւ կը փախչին: Հայեր կը պաշարեն կառավարական (ղօնախը) տունը, կը գրաւեն զայն, կ'ազատեն բանտարկեալները, որոնց սակայն 40-ը արդէն սպաննուած էին: Մեր տղաքը որպէս փոխ վրէժ կը սպաննեն կառավարութեան երկու պատասխանատու պաշտօնեաները:

Թուրքեր երեք զեղեցիկ կոյսեր բռնի խլամացուցեր եւ ամուսնացուցեր էին: Մուրատեան Տէօվլէթ եւ Սանդուրեան Աղեքսանդր, 7 ամիս յետոյ կը յաջողին զանոնք փախցնել Եէնիճէ Գալէ եւ յանձնել ֆրանսական հիւպատոսին: Օգնութեան հասնող զէյթունցի եւ ֆռնուզցի խումբերը կ'այրեն կառավարական շէնքը, աւարի կու տան Անտրոն:

որնը եւ տեղւոյն հայերը կը բերեն Ֆոնուզ: Չագրեան Փանոս, Զէյթունի Պօղպոյսի թաղէն, մեծ քաջութիւն եւ յանդգնութիւն ցոյց կու տայ: Թուրքեր սարսափահար կը փախչին, հայեր կը հալածեն զանոնք եւ ծաղրելով անոնց ետեւէն կը պոռան «Գապագճը տոմոզլար գաչմայըն, կելէն օմուզը սալմալը գէյթունլուտը»:

Զէյթունցիք իրենց շապիկներուն թելերուն ծայրի մասը երկար կը ձգեն, եւ կոխի կամ գործի ատեն անոնց երկու ծայրերը կապելով, կը սոթթեն եւ ուսերուն վրայ կը ձգեն: Այդ ծայրի մասին «սօլոք» (սալմա) կ'ըսեն: Իսկապէս որ սլաքի պէս սուր ծայրով մը կը վերջանայ, յաճախ ծայրն ալ ծոպ կ'ունենայ, թուրքերը սօլոք սալմա կ'ըսեն: Անտուրնի այս գրաւումը տեղի կ'ունենայ Նոյեմբեր 8-ին:

1900-ի Կիլիկեան ջարդին ալ Անտուրնի Աճէմլի, Տրդատլը, Տէյրմէն Տէրէի հայ գիւղացիները յարձակման կ'ենթարկուին, կը կողոպտուին եւ 15 հոգիի ալ կորուստը կ'ունենան:

ԿԱՊԱԿԱՆ²⁵.— Ինչպէս քիչ առաջ ըսինք, Անտուրնի կեդրոնն է Կապան, Զէյթունի հարաւ-արեւմուտքը, 12 ժամ հեռու Զէյթունէն: Կապան կը բաղկանայ երկու գիւղերէ, որոնցմէ միայն մէկը հայ է, իսկ միւսը՝ Թրքաբնակ, որը շինուած է բերդին եւ Հայ գիւղին ճիւղ մէջտեղը: Հայ գիւղը 400 տուն բնակիչ ունէր, բնդհանրապէս երկրագործ եւ խաշնարած էին կապանցիք: Գեղեցիկ դիրք մը ունի Կապան, հողը բարեբեր է եւ ջրառատ: Զէյթունի շրջակայ գիւղերէն ամենէն հարուստն էր Կապան, որովհետեւ Ատանայի հետ առեւտրական յարաբերութեան մէջ էր ան միշտ: Մինչեւ 1895-ի Զէյթունի կռուիւր Կապան հանդարտ մնացած էր, հակառակ որ Զէյթունի կապուած ամենահեռաւոր գիւղն էր: Սակայն 1895-ին Կապան ալ ենթարկուեցաւ մեծ կորուստներու Ալի պէյի բանակէն եւ այլ թրքական սէկմէններէ, Եայճը Օղլու ցեղապետէն: Այդ կռիւին կապանցիք եկան եւ Զէյթուն ապաստանեցան: Ես այդ ատեն 7 տարեկան տղայ, լաւ կը յիշեմ, հինգ ընտանիք կապանցիներ մեր տունը բնակեցան, որոնցմէ ոմանք մեզի ազգական էին, եւ ոմանք ալ ծանօթներ մեծ հօրս՝ Մնացական Աննիկեանին: Պատերազմի վերջնապուն վերադարձան Կապան եւ կարճ ատենէն դարմանեցին իրենց վնասները, որպէս աշխատասէր գիւղացիներ: Դարձեալ կը յիշեմ, կապանցի հարս մը, որուն ամուսինը կռիւի զացած էր Զէյթունի դիրքերը, զաւակ մը ծնաւ, սակայն երախան ծնելէն անմիջապէս ետք, տղաբեր մայրը մեռաւ եւ որովհետեւ բոլոր այրերը դիրքերը զացած էին, տուները այդ մարդ չկար, կիները նորածինը ողջ ողջ թաղեցին մեր բակին ձիւնի մեծ դէզի մը մէջ: Երախան բաւական ատեն ձիւնին տակ

ճշալէն յետոյ ձայնը կտրեցաւ: Անպայման որ մեռած էր:

Տարագրութեան ատեն, կապանցիներն ալ տեղահանուեցան եւ քշուեցան Տէր Զօրի անապատները եւ այն տեղ եղաւ իրենց գերեզմանը: Կապանցի հայը թէեւ թրքախօս էր, սակայն վերջին տարիները ոյժ կու տար կրթական գործին: 1911-ին շինած էր դպրոցի շէնք մը: Կրթական տեսակէտով Կապան կապուած էր Զէյթունի, ուսուցիչները կը դրկուէին Զէյթունէն, կեդրոնական վարժարանի ընթացաւարտներէն:

Այդ դպրոցական պիւտճէին մեծագոյն մասը կը հոգար Պոյսոյ Հայ Միացեալ Ընկերութիւնը, ինչպէս նաեւ գրեական պիւտոյքը: Զէյթունի կեդրոնական վարժարանի Տնօրէնութեան շրջանակին մէջ կ'իյնար Կապանի վարժարանը: Տնօրէնը տարին մէկ կամ երկու անգամ կ'աջցելէր եւ տեղեակ կ'ըլլար աշակերտներու կրթական վիճակին եւ ուսուցչին տարած աշխատանքին:

Կապանի բերդը կը բարձրանայ երկու հսկայ լեռներու բարձրութեանց մէջէն դուրս ցցուած բլուրի մը վրայ: Բերդին շատ մը մասերը դեռ կանգուն կը մնային մինչեւ վերջին տարիները: Կապան-բերդը կը գտնուի գիւղէն մէկ ժամ հեռու Կոկիստնէն եկած ճամբուն, Մէյ-րէմ Զիլ անուն անցքին առջեւ, թերեւս շինուած ըլլայ ան Կիլիկիան պաշտպանելու համար հիւսիսէն եկող արշաւանքներու դէմ: Դաշտային Կիլիկիայէն սկսած՝ շատ մը բերդերու աւերակները կը մնան տակաւին: Կապան-բերդը այդ բերդերուն ամենէն հիւսիսային լեռնանցքին կը կենար որպէս պահպան: Վահկա (Ֆէքէ) բերդը, Կարմիր լեռը եւ Կապան բերդը անցած էր Լեւոն իշխանի ձեռքը: Լեւոն Պոլիս տարուելէն ետքը, Մէյիք Ահմէտ կը գրաւէ զայն, բայց Լեւոնի որդին Թորոս Բ, դարձեալ ետ առաւ 1138-ին: Թորոսի եղբորորդին՝ Ռուբէն Բ. իր եղբոր Լեւոնին յանձնեց Կապանը: Լեւոն որ յետոյ թագաւոր եղաւ եւ կոչուեցաւ Լեւոն Մեծագործ: Կապան այդ ժամանակներուն ընտիր վիճակ մը նկատուած էր, որովհետեւ Ճահանի վտակ՝ Քէօր Սուլուի մօտ ըլլալով, թէ՛ լեռնային եւ թէ՛ ջրային անցք մըն էր: Քաջափուս Սուլթանը 1217-ին պաշարեց Կապանը, չյաջողեցաւ նուաճել, թէեւ գերի վարեց քանի մը հայ իշխաններ: Կասկած չկայ թէ՛ Կապան մինչեւ վերջը մնացած է հայերու ձեռքը, սակայն տարակուսելի է թէ՛ Լեւոն Լուսինեան, վերջին թագաւորը ոչ թէ Սիսի, այլ Կապանի բերդին մէջ ապաստանած եւ անձնատուր եղած ըլլայ եգիպտացիներուն: 1435-ին է որ Կապանի բերդը, ինչպէս նաեւ Տաւրոսի եւ Ամանոսի մէջ հաստատուած բերդակայանները կը գրաւուին իսլամ պետութիւններէ: Այս վերջինի՝ Լեւոն Զ. գերութեան տարուելէն եւ Կիլիկեան անկախութեան 1375-ին կործանումէն յետոյ, Սիս իր ամիրան ունէր: Ան լիազօյն իշխանութեամբ

երկրին տէրն էր: Պարտաւոր էր միայն գերիշխան սուլթանին տա-
րեկան տուրք մը վճարել եւ անոր հրամանին համեմատ իր գուն-
դովը պատերազմի երթալ: Սակայն ազատ էր նաեւ իր հաշույն ար-
շաւանքներ կատարել եւ ասպատակներ հանել: Այդ դրութեան մէջ
դիւրին էր մասնաւոր անձերու ալ ամուր տեղեր ապաւինիլ եւ ա-
նոնց շուրջը, որչափ որ կը զօրէին ազատ իշխանութիւն վարել: Կի-
լիկիոյ թագաւորութեան հռչակումը այդ դիրքը զօրացուց: Իրաւ
թագաւորութիւն չկար, եւ երկիրը ընդհանրապէս Եգիպտոսի գե-
րիշխանութեան անցած էր: Բայց իշխաններէն որոնք որ կրնային,
Տաւրոսի եւ Ամանոսի բարձունքներուն վրայ իրենց համար ամ-
րութիւններ եւ իշխանութիւններ կազմեցին, սկսելով ու մեծնալով,
երբեմն ալ պզտիկնալով ու ջնջուելով պարագայից համեմատ: Այս
կացութիւնը երկար տեւեց Կիլիկիոյ մէջ եւ մինչեւ վերջին ժամանակները
հասած, Զէյթունի իշխանները այդ դրութեան մնացորդներ եղած են:

Թէպէտեւ ընդարձակ եւ կանոնաւոր պատմութիւն մը կը պակսի
այս մասին եւ ցրիւ տեղեկութիւններ մտադիր ուսումնասիրողի
տքնութեանց կը կարօտին, կ'ըսեն Մադ. Օրմանեան եւ Ալպոյաճեան,
կատարեալ պատմութեան վերածուելու համար: Այս բաւական երկար
միջանկեալէն յետոյ վերադառնանք մեր պատմութեան ընթացքին եւ
Կապանի մասին մեր խօսքը վերջացնելէ առաջ ըսենք թէ՝ Կապան ա-
նունով երեք տեղեր ծանօթ են, առաջինը 400 տնուոր Հայ զիւղն
է, Պունտուխ Հայ գիւղի արեւմուտքը՝ միւսը մեծ մասով Թրքաքանակ
գիւղը, իսկ վերջինը՝ բուն Կապան բերդն է, լեռնուտին եւ ձորին
վերեւ, Փոնուզի եւ Աստուածաշէն լեռան միջեւ: Այս կողմերը
պէտք է փնտռել կ'ըսէ Կիլիկեցին Շողական բերդը, որ կը կոչուի
նաեւ Եզտի:

Շիվիլիկի.- Որուն գէյթունցին կ'ըսէ Շիպիլիկի, ըստ Ղ. Ալիշանի
Սիսուանի մէջ յայտնած կարծիքին, հաւանաբար Շուպլայ կամ
Շուպլաս բերդն եղած ըլլայ: «Յետ գերութեան Պարոն Լեւոնի
(1138-9) եկն գողանալ Մելիք Մահմուտ կամ Ահմատ դանիշմանը. եւ
բազում մարդիկ մարտացեալ եւ նետս անթիւ հեղեալ կ'ըսէ Ալիշան,
ոչ ինչ կարաց առնել բերդին եւ այնպէս գնալով ընդկատար լեռանց
Կուլլայ կոչին՝ գնաց յաշարս իւր: Չայս բան, կը շարունակէ
Սիսուան, Ուռհայեցւոյն կրկնեալ ժամանակագիրն Կիլիկիոյ: Կամեցեալ
էր նշանակել եւ շատ անուն լեռանցն, այլ ոչ գիտելով դատարկ
թողեալ եւ չէր օտար համարել զայն ի շարս Կուլլակայ լեռանց: Շիվիլիկի
կը գտնուի Փոնուզի հարաւ արեւմուտքը 200 տնուոր զուտ
հայաքանակ գիւղ մըն էր, ճիշդ Զէյթունի եւ Անտրոքնի գաւառակ-

ներուն սահմանին: 1896-ին, կարճ դիմադրութենէ մը յետոյ Զէյ-
թուն ապաստանեցան չիվիլիկիցիներ: Գիւղին դիրքը լեռնային էր: Իր
հովիտները, զարնան կապոյտ մանիշակներու ծովի մը տեսարանը կը
պարզէր: Կրթական տեսակէտով Շիվիլիկի ալ Զէյթունի կապուած է
ր: Շիվիլիկիի հայութիւնն ալ թէպէտեւ Կապանի պէս ջանաց պահել
իր հանդարտութիւնը 1915-ին Զէյթունի դէպքերուն առթիւ, սակայն
ընդհանուր տեղահանութեան ընթացքին ինքն ալ ենթարկուեցաւ
Զէյթունի, Փոնուզի, Կապանի ճակատագրին եւ շրջակայ հայ գիւղերուն
հետ տարագրուեցաւ Տէր-Չօր եւ հոն բնաջնջուեցաւ:

ՊՈՒՆՏՈՒԽ.- Կապանի եւ Շիվիլիկիի մէջտեղը, Փոնուզէն չիտակ
արեւմուտք 4 ժամ հեռաւորութեամբ զուտ հայաքանակ գիւղ մըն
էր 150 տնուոր: Բնակիչները կը զբաղէին երկրագործութեամբ եւ
խաշնարածութեամբ: Հայերէն գաւառաբարբառ մը ունէր Զէյթունի
բարբառի բաւական մօտ: Իր ամէն կարգի, այսինքն առեւտրական,
կրթական եւ քաղաքական յարաբերութիւնները Զէյթունի հետ էին:
1896-ին ասոնք ալ Զէյթուն ապաստանեցան: Տեղահանուեցան 1915-ին
դէպի Տէր-Չօրի անապատները եւ ենթարկուեցան հայկական բնաջնջման
նոյն ահաւոր ծրագրին:

ԿԱՆՉԻ.- Թրքաքանակ գիւղ մըն էր Կանչի, որուն կ'ըսեն Թուրքեր
Չուգուր-Հիսար, իսկ Զէյթունցիք զայն կը կոչեն Չուխրասար: Կը
գտնուի Կոկիսոնի հարաւը եւ Փոնուզի հիւսիսը: Հին Կանչի կամ
Կանչուկ բերդն է ան: Այս տեղ նահատակուեցաւ Ստեփաննոս, իր
մայրը, քոյրերը եւ ընկերները: Իրենց անուններով մատուռներ կա-
յին մինչեւ վերջին տարիները, այն է՝ 1915-ի տխուր թուականը:
Կանչու բերդը հիմակուան Չուխրասարի վերեւն է: ԺԲ դարու վեր-
ջերուն, Աշոտ անուն իշխան մը տէր եղած է բերդին: Հեթում Ա.
թագաւորին եղբայրը՝ Օշինն ալ հոս իշխած եւ մեռած է 1285-ին:
Իսկ 1320-ին Օշին Պայի եղբայրը՝ Գուխտոն տիրած է Կանչի բեր-
դին, Կանչիի բերդին եւ Կոկիսոնի միջեւ գտնուող երեք լեռները
միասին որ կը կոչուին Կէպէն Տաղլար, մեր Աստուածաշէն լեռներն
են: Այս վայրերը պէտք է եղած ըլլայ նոյնպէս Ծանճի բերդը
(Չինչին Գալան): Լեւոն Մեծագործի օծման հանդէսին ներկայ կ'ըլլայ
նաեւ Վասակ՝ Տէր Ծանճոյն, ի շարս Բերդուսի, Փոնուզի, Կանչիի
եւ Կապանի տէրերուն: Այս Վասակ, Ծանճի բերդատէրը Կոստանդին
թագաւորահօր որդին էր, որ Եգիպտոսի Սուլթանին դրկուեցաւ, գե-
րի տարուած Լեւոնը բերելու համար: Կիլիկեցին իր գրքին մէջ թե-
րեւս այս բերդն է, կ'ըսէ, որ յիշած է Տէսիէ ուղեւոր 1836-ին Չին-

չին Գալա անունով: Ընդարձակ հովիտի մը մէջ, բրգաձեւ ժայռի մը վրայ, բարձրացած այս բերդը, ուր ելլելու համար ոեւէ ճամբայ չկար: Զորի մը եւ վտակի մը միջեւ կը բարձրանայ ան, Քարաբլուրին ծայրը պարսպապատ է, իսկ ստորոտը վայրի ձիթենիներու եւ գիհիներու մացառներով ծածկուած է: Մեծ դժուարութեամբ կարելի եղած է վեր ելլել եւ ճեղքէ մը ներս մտնել: «Ամրոցին մէկ ծայրը կը տեսնուէր եկեղեցւոյ կիսաներ յարկը, առանց ոեւէ արձանագրութեան» կ'ըսէ նոյն կիլիկեցին, հաւանաբար ուղեւոր Տէսիէի նկարագրութիւններէն մէջբերելով: Թէքիր-Սու գետակին արեւմուտքը, Զուխրասար բարեբեր հողով, ջրարփի լեռնադաշտ մըն էր եւ կ'արտադրէր մասնաւորապէս վարունգ, որու սերմնցուն՝ կուտը մեծ անուն ստացած էր եւ կը գոհացնէր ամբողջ Սուրիոյ վարունգի կուտի պահանջը: Կ'արտադրէր նաեւ էսրար (հաշիշ): Զէյթունի 1895-ի կոիւին զէյթունցիք շրջակայ թուրք գիւղերու զէնքերը հաւաքեցին, որպէս կանխապատրաստութիւն, սակայն միայն Զուխրանարի թուրքեր չուղեցին յանձնել զէնքերը, որովհետեւ Զէյթունէն 10 ժամ հեռու ըլլալով, Կոկիսոնի եւ Անտրոնի կառավարութեան եւ մօտակայ չէրքէզ գիւղերուն վրայ դրած էին իրենց յոյսը: Զէնքերը պահանջող Ֆռնուզցի հայերը կը նախատեն, հետերնին կոիւի կը բռնուին, իրենց պետական զէնքերով թէպէտեւ բաւական կը դիմադրեն, սակայն բոլորն յարձակումէ մը ետքը, զէնքերը կը թողուն եւ կը փախչին: Ֆռնուզցիք 30 հոգի թուրք երեւելիներէն կը կապեն եւ Զէյթուն կը բերեն: Անոնք ճամբան կը մոլորան ըսելով. «Ինչալլահ, փատիշահ սայէսինսէ եագընտա հալընըզը կիօրիւրըզ»: Ասոր վրայ բոլորն ալ կը սպաննուին: Զուխրասարի գրաւումը տեղի կ'ունենայ 19 Հոկտ. 1895-ին:

ԿՈԿԻՍՈՆ կամ Կէօկսիւն.- էյէր Պէյի-Մէյրէմ Զիլ լեռնանցքին հիւսիսը եւ Պին Պուղայի հարաւ արեւելքը կը տարածուի Կոկիսոնի ընդարձակ դաշտը, ուր բացի Տաշօլուզ եւ Ճամուս-Հէօյիւկի գիւղերէն, մէկ գծի վրայ հիւսիսէն հարաւ շարուած են Կոկիսոն, Քիրէն-Փունարը, Կէօփունար եւ Տէյիրմէն Տէրէ գիւղերը:

Կէօկսիւն կը գտնուի Զէյթունի հիւսիս արեւմուտքը եւ 12 ժամ հեռու է Զէյթունէն, ունէր 75 տուն հայութիւն, ունէր իր մանչերու տարրական նախակրթարանը: Միւս գիւղերն ալ ունէին իրենց տարրական վարժարանները Հայ Միացեալի կապուած եւ Զէյթունի Կեդրոնական վարժարանին Տնօրէնութեան հսկողութեան տակ: Կոկիսոն եւ Տէյիրմէն Տէրէ եւ Տաշօլուզ թրքախառն էին, իսկ միւսները զոտ հայ: 600 տնուոր հայութիւն մը կը հաշուուէր Կոկիսոնի դաշտի այս գիւղերուն մէջ: 1910-ի մինչեւ Յունուար որպէս ուսուցիչ

պաշտօնավարած եմ Տաշօլուզի վարժարանին մէջ, Յունուարի մէջ ինծի յաջորդած է տարաբախտ Կարապետ Պտուկեան (որ Տէր-Զօր՝ Եփրատի ալիքներուն մէջ յանձնած է ինքզինքը, ջարդի օրերուն), իսկ Յունուարի կէսին պաշտօնի բարձրացումով դրկուած եմ Ալպիստանի վարժարանը, որպէս աւագ ուսուցիչ: 1911-12-ի դպրոցական շրջանին ալ պաշտօնավարած եմ Կոկիսոնի դպրոցին մէջ: Ասոնցմէ ամենէն աղքատն էր Կէօլ-Փունարը, իրենց արտերն ու ագարակները պարտքի փոխարէն ոչինչ գինով Կոկիսոնի թուրք տէրէպէյիներուն եւ հարուստներու ձեռքը անցած էին եւ կը սպառնային գիւղը ամբողջ տեղահան ընել եւ թուրք գաղթական տեղաւորել: Գիւղին Քիւհեան, Եարութիւն Փաշայեան քանիցս դիմում կ'ընէ Կիլիկիոյ Կաթողիկոսին, որ Գիւտ Եպիսկոպոսի ձեռքով եւ վանքին անունով պարտքերը կը վճարէ եւ կ'ազատէ Կէօլ-Փունարցիները: Այդ պատճառով անկէ ետքը, գիւղը «Վեհափառի գիւղ» կոչեցին:

Բնակչութիւն.- Կոկիսոն 350 տուն բնակիչ ունէր, որուն միայն 75 տունը հայ էր: Հէօյիւք 20 տուն հայ ունէր, Քիրէն 100, Կէօլ-Փունար 20 տուն, Տաշօլուզ 120 տուն հայ եւ 50 տուն թուրք ունէր, իսկ Տէյիրմէն Տէրէ 120 տուն էր, որուն 80-ը միայն հայ էր:

1900-ի, Կիլիկեան կոտորածին Կէօկսիւնի եւ շուրջի թուրք խուժանը՝ սէկմէները կը յարձակին այս հայ գիւղին վրայ եւ կը կողոպտեն անոնց ինչքերը: Գիւղացիներ Զէյթուն կ'ապաստանին: Զէյթունցիք սակայն զիրենք անմիջապէս իրենց գիւղերը կ'առաջնորդեն եւ կը տեղաւորեն իրենց տունները: Խուժանին ձեռքէն ետ կ'առնեն իրենց ինչքերը եւ կը վերադարձնեն հայ գիւղացիներուն: Տեղահանութեան ատեն Կոկիսոնի եւ իր շրջակայ հայութիւնն ալ կը տարագրուին Տէր Զօրի անապատները եւ կը բնաջնջուին (Սելճուզ-ոտմի կայքաւուս 1211-ին կը պաշարէ Կոկիսոնը: Պարոյր Հայկազն Կոկիսոնցի հայ մըն է):

ԵՓԵՍՈՍ.- (Էֆսոս կամ Եաբբուզ), որուն զէյթունցին Արքրսոս կը կոչէ իր նախկին անունով, այսինքն Արափիսոս, որ կը յիշուի շատ հին ժամանակներուն եւ հաւանաբար հաթերու Հարաբեսինան եղած ըլլայ, ինչպէս Վեր. Քասունի Կոկիսոնը կ'ենթադրէ Կոսկուզան շուն եւ Բերդուզը Բերդուշան:

Արքրսոս կը գտնուի Զէյթունի հիւսիս արեւելքը, 12 ժամ հեռաւորութեամբ, իսկ Ալպիստանի հիւսիս արեւմուտքը 3 ժամ հեռու անկէ: Օդն ու ջուրը առողջարար են: Վերջին ժամանակները, տակաւին տեղահանութիւնը ծայր չտուած, 2000-ի մօտ հայութիւն մը բազմաթիւ թուրք բնակչութեան մը մէջ: Հայերն ունէին դպրոց մը

100 աշակերտներով, ունէին նաեւ եկեղեցի: Եւրոպացի էր Ներսէս եպիսկոպոս Դանիէլեան (Սսական վարդապետ), ինչպէս նաեւ Գր. Վրդ. Ոսկերիչեան: Այս վերջինը 1895-ին թուրք խուժանէն սրախողխող նահատակուեցաւ: Ատեն մը Մարաշի Ս. Կարապետ եկեղեցիին քարոզիչ եղած էր, եռանդուն եւ լաւ քարոզիչ մըն էր: Տ. Ղեւոնդ Քհնյ. Կիլիկեցեանի հետ հիմնած էր Սիրոյ ընկերութիւնը (Մուհապէթճի):

Ներսէս Եպս. Դանիէլեան, զոր յիշեցինք քիչ առաջ, Սսական վարդապետ գրչանունով, ծնած է Եւրոպաց 1868-ին: Աշխարհական անունը Գէորգ: Ուսած է Սսի Մայրավանքը 1883-ին, յետոյ գացած է 1886-ին Պոլիս, Սամաթիոյ Սահակեան վարժարանը: Շրջանաւարտ ելլելով եղած է ուսուցիչ Ատանա՝ Ազգ. վարժարանի մէջ: 1890-ին վարդապետ կը ձեռնադրուի Մկրտիչ Եպս. Վհապետեանէ, եւ մինչեւ 1896-ը Առաջն. փոխանորդութիւնը կը վարէ Իսկէնտէրուի Հայոց: 1896-ին կը բերուի Հալէպ եւ կը բանտարկուի 7 ամիս, որպէս Զէյթունի ապստամբութեան կազմակերպիչներէն: Ներման կ'արժանանայ եւ սակայն կ'աքորուի Դամասկոս: Օրմանեան Պատրիարքին ջանքերով եւ Սուլթանի մօտ ըրած բարեխօսութեամբ կը թողարկուի գալ Պոլիս եւ 1898-էն սկսեալ կը տանի Պատրիարքին անձնական քարտուղարութիւնը: 10 տարի կը վարէ Սկիւտարի Հայոց եկեղեցիին քարոզչութեան գործը: 1903, Յուլիս 8-ին կը ձերբակալուի Երլարցի «դժոխային մեքենայի» դէպքին, Վհապետեան Սրբազանի հետ 3 գիշեր կը մնայ Երլարց հսկողութեան եւ արգելքի տակ: Օրմանեանի եւ Կիլիկիոյ Կաթողիկոսի երաշխաւորութեամբ 1907-ին կու գայ Սիս: Կիլիկեան ջարդէն անմիջապէս ետքը, Մարաշի եւ Էրզրոմի պատերազմական ատենաներու առջեւ կը դատուի որպէս գործակից Մուշեղ Եպիսկոպոսի, երեք ու կէս ամիս բանտերու մէջ կը տառապի, հակառակ որ 400 իսլամներու կեանքը փրկած էր Հաճընի մէջ, Հաճընի ինքնապաշտպանութեան ատեն: Հետեւող մը եղած է Խրիմեան Հայրիկի, վարձատրուած է անկէ լանջախաչով: Սսական վարդապետ ծածկանունը ստացած է Հայրիկէն: 1910-ին, Հաճընէն Առաջնորդական պաշտօնով փոխադրուած է Ատանա: 1912-1914 եղած է Առաջնորդ Հալէպի թեմին: Այստեղ կ'ունենայ լայն եւ արդիւնաւոր գործունէութիւն: Շատ կանուխէն եղած է հնչակեան: 1911-ին է որ ձեռնադրուած է եպիսկոպոս: 1914-ին կը զրկուի Եօզղատ որպէս Առաջնորդ, սակայն այն տեղ կախաղան կը հանուի, որպէս յեղափոխական եւ որպէս Հալէպէն 1914-ին Զէյթուն գէնք զրկող: Զէյթերու թիւերէն հասկցուած է եղեր թէ Հալէպի բերդէն փախցուածներ են:

Ներսէս Եպս. Դանիէլեան աշխատակցած է բազմաթիւ թերթերու իր գործերն են. «Կեանքը առանց հաւատքի», «Կաթիլ մը ջուր այ-

րած սրտերու», իսկ անտիպ կը մնայ «Կեանքը առանց յոյսի եւ առանց սիրոյ», «Կաթողիկոսութիւն Հայոց Կիլիկիոյ», «Կիլիկիոյ Հայոց գաւառաբարբառը», «Արիւնոտ ծրար», «Սրտի սփոփանք-վշտին գեղեցկութիւնը», «Վերջին լեւնի ողբերգը»:

Եւրոպացի մէջ նշանաւոր Հայ մըն էր նաեւ իր արեւելեան հիւրասիրութեամբը Կարապետ Աղա Գուլումճեան, որուն համար կը պատմէին թէ այդ աժանութեան տարիներուն, տարեկան 300 օսմ. հնչուն ոսկի կը ծախսէր մեծ մասամբ հիւրասիրութեան համար: Նշանաւոր ընտանիք մըն էր նաեւ Հայկազուն Օգոսեանի տունը: Եւրոպացիներն ալ ալպաստանցիներուն հետ տարագրուած են Տէր-Զօրի անապատներէն անդին Շէտտատիէ, ուր ջարդուած են: Հազիւ մէկ երկու տասնեակ վերապրողներ կան այսօր:

Եփեսոսէն 3 հազարամեթր դէպի արեւմուտք կը գտնուէր եօթն մանկանց ընդարձակ հիւրանոցը, իր յունական եկեղեցիով: Հոն էր Սապրէճյֆ ըսուած վայրը: Քաղաքին մէջ ու շրջակայքը կային շատ մը հնութիւններ եւ աւերակներ:

ԱՂԴԻՍՏԱՆ.— Զէյթունի աւելի արեւելք քան հիւսիս, 14 ժամ հեռու է ոտքի գնացքով: Ալպիստան կը գտնուի Շար Տաղի արեւելեան ստորոտը ընդարձակ դաշտի մը մէջ, Զահանը հարաւէն, մէկ ժամ հեռաւորութեամբ իր քարանձաւ ակէն բղխելով կու գայ կ'անցնի Ալպիսթանի մէջէն, Հայոց եկեղեցիին եւ դպրոցին անմիջապէս քովէն: Տեղացիներ քաղաքի փողոցին մէջ իսկ Զահանէն ձուկ կը հանէին: Ալպիստանէն հարաւ արեւելք կը գտնուի Նուրիսաղ (Նուրհաճ) նշանաւոր եւ բարձր հաստամետր, որ մէկ ճիւղը կամ շարունակութիւնն էր Կիլիկեան Տաւրոսներուն: Քաղաքին ծովէն բարձրութիւնն է 1100 մեթր: Էլպիստան բառը ոմանք կը կարծեն թէ արաբերէն է եւ պարտէզ կը նշանակէ, նկատի առնելով հաւանաբար քաղաքի շրջակայքը գտնուող պտղատու ծառերը, որոնք սակայն մեր պաշտօնավարութեան տարին 1910-1911-ին արդէն չկային, մենք պտղատու ծառերու նման պարտէզներ չտեսանք քաղաքին բոլորտիքը - բացի ձիւհանի եղերներուն ուռիներէն եւ բարտիներէն: Ուրեմն չենք կարծեր թէ, վերի Էլպիստան-պարտէզ բացատրութիւնը ճիշդ եղած կ'ըլլայ, իսկ արաբները այս քաղաքին, իրենց հին պատմութիւններուն մէջ Էլպէստէյն ըսած են, ինչ որ հայերու մօտ ալ կոչուած է Ապլաստա: Մեր գէթունցիները երկու անուն կու տան անոր, երբեմն Ապլաստա ըսած են, երբեմն ալ յատուկ անունի առումով Քաղաք: Օրինակ, երբ գէթունցի գէթունցի ջորեպանին կը հարցնէր թէ ո՛ւր կ'երթաս, Ապլաստան կ'երթամ կը պատասխանէր, կամ թէ ուր-

կէ՝ կու գաս, ի՞նչ կը բերես, Քաղաքէն կու գամ կ'ըսէր, բերածս ալ ցորեն է: Ապրաստան գէթունցիին համար քաղաք էր, իսկ Զէյթունը Գեղ եւ ինքը՝ գեղացի, սակայն Մարաշին բնաւ քաղաք չէր ըսեր, այլ Մէյէշ կ'ըսէր: Հաւանաբար ուրեմն հին անցեալի մէջ, ինչ-պէս նախորդ էջերով յաճախ յիշած ենք, Ապրաստան կեդրոն էր եւ Զէյթուն եւ միւս քաղաքները անոր շրջակայքը՝ իրեն ենթակայ: Տապալներու, Զահանի գլխաւոր քաղաք եղած է Ապրաստա, իսկ աւելի առաջ՝ Հաթերու գլխաւոր կեդրոններէն մէկն եղած է ան: Լեւոն Մեծագործ 1205-ին յարձակած է բերդին վրայ, սակայն չէ կրցած գրաւել զայն: Միայն թէ իր շրջակայքը գտնուող 10 բերդերուն մեծ մասը հայերու իշխանութեան տակ ինկած էին: Ապրաստայի քիչ մը մասը հայերու իշխանութեան տակ ինկած էր: Ապրաստայի քիչ մը հարաւ արեւմուտքը, ճամբուն դիմաց հեռուն տեսած եմ բարձունքի մը գագաթը հին բերդ մը, շուրջը չոր ու ցամաք զառիթափով մը: Այս բերդին մօտն է Գարա Ալպիստան, Զիհանի եզերքը: Իսկ Ապրաստայի հարաւը, մէկ ժամ հեռու, Զիհանի քարանձաւ ակունքին մօտ է հայ գիւղ մը (կենավուր քէօյի կը կոչէին թուրքերը) հայ ընտանիքներ կ'ապրէին հոն, ունէին մատուռ մը, որուն անունը չեմ յիշեր: Ալպիստանէն 3 ժամ հիւսիս, 5 մեթր բարձրութեամբ կոթող մը կայ, իսկ 8 ժամ աւելի անդին դէմ դիմաց երկու ժայռեր կը տեսնուին, մէկը առիւծի եւ միւսը վագրի պատկերներով: Ասոնք երբեմն սահման կը համարուէին Փոքր Ասիոյ եւ Ասորոց միջեւ՝ Աւլան թաշ անունով: Աւերակ բերդերէն կարեւորները թուրքերը կոչած են Խուրման՝ խուրման սուի վրայ, Զէրքէս Քէօյ եւ Գըզ-Գալէսի: Խուրման համանուն գետակին վրայ, 35 մեթր բարձրութեան մը վրայ շինուած է, իր արտաքին պարիսպները դեռ կանգուն մնացած են: Մօտակայ մեծ ճամբուն երկու դէմ դիմաց ժայռերուն վրայ յունարէն գիրեր կային: Ապրաստայէն 12 ժամ դէպի արեւելք Պէհէսնիի ուղղութեամբ հին ատեններէ մնացած երկու ընդարձակ խաներ Քարվան-սարայներ կան, որոնցմէ մէկը կը կոչուի Ֆախ-ըշտտի խան: 1276-ին Եգիպտոսի Բիբարս Փունտուխտար մեծ կոխ մը մղած է Ալպիստանի դաշտը, մոնկոլներուն դէմ: Պատմիչները, ըստ մեր կիլիկեցիի գրքին, այն տեղ ինկած դիակներուն թիւը կը հասցնեն մինչեւ 7760-ի: Այս տեղ երկար ատեն իշխած են Հաճի աղա Զատէներ, Սալթ օղլու ձորապետները եւ Նախըպ աղա զատէները:

Ապրաստայի լեռնադաշտը իր շուրջը ունի Մալաթիոյ, Պին Պուզաֆ (Անտի Տաւրոսի սկզբնաւորութիւնը) Նուրխաղ կամ Նուրհազ եւ Պէրիտ լեռները: Պէրիտ 3300, իսկ Նուրհազ 3200 մեթր բարձրութիւն ունին, իսկ հիւսիսը ընդարձակ դաշտը կը տարածուի, ուր կը բնա-

կին Աւշարները, Ծափալախցիները լեռնադաշտը 40 հազարամեթր լայնութիւն եւ 80 հազարամեթր երկայնութիւն ունի, արմտիքի, ցորենի, գարիի ընդարձակ շտեմարան մըն է այս լեռնադաշտը: Քաղաքին մօտն է իջմէ անուն ջերմուկը: Զահան կամ Զիհան իր ակնադիւրին մօտ 40 մեթր լայնութեամբ դանդաղ ընթացք մը ունի, եւ հազիւ մէկ մեթր հուն մը: Զահան նախապէս քաղաքին հարաւէն կու գայ հիւսիսի ուղղութեամբ, կը մտնէ քաղաքը, կը դառնայ արեւմուտք ու կրկին կ'իջնէ դէպի հարաւ Շար Տաղի արեւմուտքը, իրեն կը խառնուին քաղաքէն մէկ հազարամեթր դուրս Սէօյիւսի Սու, վեց հազարամեթր վար՝ Խուրման Սու, իսկ 18 հազարամեթր աւելի վար արեւմուտքէն դէպի արեւելք գալով Կէօկսու²⁹, կամ Կէօկսիւն Սու գետակը կը միանայ Զահանի, որ կը շարունակէ իր ընթացքը դէպի հարաւ: Զահանի այս օժանդակները թէեւ ձմեռը եւ գարնան կը յորդին, կ'աճին, սակայն ամառը վտակներ կը դառնան: Ինչպէս քիչ վերը ըսինք Ապրաստայի դաշտը շատ բարեբեր է: Նոյնիսկ նախնական միջոցներով մշակուելով երկուք ու կէս միլիոն քիլ³⁰ ցորեն կ'արտադրէ: Դեկտեմբերին արդէն կը սկսի ձիւնել Ապրաստայի դաշտին վրայ: Ապրաստա դաւառակը կը պարունակէ 10 Նահիյէ, միւսիւրիյէթ եւ 153 գիւղեր: Ապրաստայի 12000 բնակչութեան 4000-ը հայեր էին, որուն 1000-ը հայ կաթողիկ եւ բողոքական համայնքին կը պատկանէին: Հայ Առաքելական համայնքը ունէր աղիւսաշէն եկեղեցի մը Հաճի Համզա թաղին մէջ, եկեղեցիին կից էր դպրոցը, վերի յարկը մանչերու վարժարանն էր, իսկ վարն ալ աղջկանց բաժինը:

Առաքելական համայնք.- Ալպիստանի հին բնիկ հայութիւնը շատ մեծ թիւ մը չէին կազմեր, բարեկեցիկները, առհասարակ վաճառականներ էին եւ եկած՝ հաստատուած էին Ալպիստան Աշոտիէն, Տարինտէյէն, Կիւրիւնէն եւ Մարաշէն: Յայտնի ընտանիքներ էին Ժողովարեան Սարգիս աղան եւ տղան՝ Գարեգին Ժողովարեան, Յարութիւն Ներսէսեան, Ներսէս Տէյրիմէնեան, Աբրահամ, Աւետիս եւ Սարգիս Կէտէրեաններ, եկած Տարրէնտիէն, Կատարինեան Փանոս, Աղազարեան Թորոս, Կեսարացի Կարապետ աղա, Էրզրումլեան կը կոչուէր, Թաթոյեան Մկրտիչ աղա, Տ. Յակոբեան Համբար եւ տղան Մանուկ, որ իմ օգնական ուսուցիչն էր այնտեղ, վերջէն Արարայի ճակատամարտին սերժանտ Մանուկ էր, այնտեղ նահատակուեցաւ: Սահակեան Յարութիւն աղան, Մելիտոնեան: Ասոնք առաքելական եկեղեցիին կը պատկանէին: Իսկ բողոքականներէն Ժանօթ ընտանիքներ էին Տոքթ. Յովհաննէս Մակարեան, բժիշկ եւ փաստաբան, եղբայրը վաճառական Կարապետ աղա, Մերունեան Յովհաննէս աղա, Բարուճի Ծաղուպ Պոյաճեաններ: Կաթողիկ համայնքի յայտնի ընտանիքներ էին Պապաշանեան, Ղաւապեան,

Արթին եւ Մինաս Ակոբեան, Արթին Մահտեսի Սարգիսեան, Գրիգոր Կէյիկեան, Արթին Գուլումճեան եւ Մանուկ Պետրոսեան: Այսպիսի հաստատուած Սարգիս աղա Թօփալեան եւ Այսիստան ծնած իր տղան՝ Վարդան Թօփալեան, որ Պէյրութի բժշկական համալսարանէն շրջանաւարտ եղած էր, սակայն շատ ատեն չի մնար Այսիստան, կը հաստատուի Հալէպ, ծանօթ է Տոքթ. Վարդան Թօփալեան կամ Քաջբերունի անունով: Այժմ Պաղտատ է: Այսիստանի հայութիւնն ալ տարուեցաւ Շէտտատիէ եւ գրեթէ ամբողջութեամբ ջարդուեցաւ: Հազիւ քանի մը ընտանիքներ կան վերապրողներ ներկայիս, ցրուած մինչեւ հարաւային Ամերիկա եւ ալլուր:

ՖԻՆՈՒՋ կամ **Ֆոնոս-Խոնոս**.-- Զէյթունէն 8 ժամ հարաւ արեւմուտք, ձորակի մը մէջ յիւնուած էր Ֆոնուզ, որ կը կոչուէր Նօնոս կամ Խոնոս, զանազանելու համար հին Ֆոնուզ գիւղէն, որ կը գտնուէր հիւսիս արեւմուտք: Սէկ կոչուած կամ Սէկի կէտիկ անուն լեռան վրայ եւ կ'ենթադրուէր հին Վուլկան: Ֆոնուզի դիրքը Զէյթունի դիրքէն շատ աւելի ամուր էր, օդն ու ջուրը աւելի առողջարար, հետեւաբար բնակչութիւնը աւելի առողջ, աշխոյժ եւ գեղեցկադէմ էր: Ունէր կայտառ եւ համակրելի երիտասարդութիւն մը: Ֆոնուզցիք բանակը որ շուրջ 20000-նոց ուժէ մը կը բաղկանար, Ֆոնուզցիք կրցան քանի մը օր զբաղցնել, մեծ կորուստ պատճառելով զօրքերուն եւ խուժանին: Յետոյ քաշուեցան Ֆոնուզի կողքին բարձրացող լեռան անմատչելի եւ անառիկ փապարներուն մէջ: Անոնք այդ ամբողջ դէպքի տեւողութեան բանակին յատկացուած ուտեստի եւ ռազմամթերքի կարաւանները կը կողոպտէին ու կը քաշուէին կրկին այդ անառիկ վայրը: Անձի կորուստ չունեցան գրեթէ, բացի Տ. Ղեւոնդ քաջահայնէն եւ քանի մէկ ուրիշ տղաներէ: Կարելոր մաս մը, մանաւանդ ընտանիքներ կրցան Զէյթուն հասնիլ եւ ապաստանիլ մեր տունները: Բանակը սակայն աւերեց եւ քարուքանդ ըրաւ գիւղը:

Ֆոնուզի Ս. Կարապետ վանքին մօտ, աղբիւրի մը կից, քարաժայռի մը վրայ, մեծ խաչ մը քանդակուած է. Գետ «Յորդանան» կը կոչէին Ֆոնուզցիք այդ տեղը, հոն կը կատարէին ջրօրհնէքի տօնը Ապրիլարիկ՝ Տէր Ֆոնուզին ներկայ եղած է Լեւոն Մեծի Թագադրութեան հանդէսին ուրիշ բերդատէրերու կարգին: Ժ. դարու վերջերը եւ ԺԵ. դարու սկիզբները՝ Ռուբինեան Հեթում սպարապետի Տիկնոյ Զարմանուհիի առաջնորդութեամբ, գրաւուած էր Կապանի հետ նաեւ Ֆոնուզը: Ֆոնուզի վանքին մէջ այս տիկնոյ յիշատակը արձանագրուած էր: 1557-ին այդ վանքին վանահայրն եղած է Զարմանուհիի ցեղէն

Ղուկաս վարդապետ: Վենետիկի վանքը պահուած է եղեր մագաղաթեայ պատկերազարդ շարական մը, ՌԻԷ (1578) թուին գրուած «ձեռամբ յոգնամեղ եւ անարհեստ եւ փծուն գրչի՝ Մարգարէ քահանայի... ի լաւ եւ յընտիր արինակէ Սըսոյ, առաջին վարժապետին եւ քաջ քարտուղարին Գրիգորի Խուլ կոչեցելոց: Ի յերկիրս Գերմանիկոյ, եւ ի գիւղաքաղաքս ի Ֆոնուս ընդ հովանեաւ Ս. Աստուածածնի»: Ֆոնուզ իր եկեղեցիէն եւ դպրոցէն յետոյ եւ զատ ունէր իր Ս. Կարապետի վանքը, որ հայ ճարտարապետութեան դրոշմը կը կրէր: այժմ սակայն աւերակ է: Աղայու լեռան հիւսիսէն, Դրախտիկի ստորոտէն կը բղխի գետակ մը, իսկ Թէքիր Սու գետակը կ'անցնի Ֆոնուզէն մօտ 3 ժամ հեռաւորութեամբ Թէքիր Պալղը ըստած համեղ կարմրախայտ ձուկը կ'ելլէ Թէքիրի գետակէն: Ֆոնուզցիք ալ տեղահանուեցան եւ Տէր-Զօրի անապատներուն մէջ փնացան, բացի տասնեակ մը վերապրող ընտանիքներէ, որոնց մէկ մասը Հայաստան ներգաղթեց, մէկ մասը հարաւային Ամերիկա է, եւ քանի մը ընտանիքներ ալ Հալէպ ու Պէյրութ են: Ֆոնուզ տուած է քաջ եւ յեղափոխական քանի մը յայտնի հայեր, որոնցմէ այս տեղ կը յիշենք Տ. Նիկողայոս Եպս. Դաւիթեանը եւ իր յաջորդը՝ Տ. Բարթուղիմէոս Ծ. Վրդ. Թագանեան, ստորեւ տալով անոնց համառօտ կենսագրականը:

Նիկողոյոս Եպս. Դաւիթեան (Խորխոռունի).-- Ծնած է Ֆոնուզ 1833-ին: Սրկար տարիներ վանահայրն եղած է Ֆոնուզի Ս. Կարապետ վանքին: Թուրքերը զինքը կը ճանչնային Տէյի Մահրասա անունով, իր քաջութեան համար: Իսկ հայեր զինքը կոչած են Ֆոնուզի առիւծը: Պապիկ փաշայի եւ Յ. Զաքրեանի (Զօլազ վարժապետի) հետ եղած է Զէյթունի 1879-ի ապստամբութեան պարագլուխներէն: Ներսէս Վարժապետեանի պատրիարքութեան օրով շղթայակապ՝ դատաւարտուած է կամուրջին գլուխը կախաղան հանուելու, սակայն Մեծ Խասգիւղցիներ Վարժապետեան իր ազդու միջամտութիւնով յաջողած է ազատել: 1890-94 տարիներուն որպէս յեղափոխական՝ բանտարկուած է Հալէպ, 1895-ին տարուած է եւ արգելափակուած Պատրումի բերդը: Ընդհ. ներման կ'արժանանայ Պատրիարք Իզմիրլեանի ժամանակ եւ կը բերուի Պոլիս: Հայրենիքի կարօտէն, կը դիմէ երկաթէ պատրիարքին, որ զինքը հայրենիք դրկէ, սակայն ապարդիւն դիմումներէ յուսահատ՝ եւ իրեն յատուկ մանկային միամտութենէն թելադրուած՝ Նազըմ փաշայի մտերիմ՝ Աբրահամ Եպս. Մամիկոնեան եւ Յովհ. Եպս. Գազանճեանի հետ Համիտեան կառավարութենէն ճանապարհածախս ստանալով, առանց Պատրիարքի գիտակցութեան, կու գայ Սիւ, ուր իր ձեռքով կաթողիկոս կ'օծէ Գազանճեանը, անգիտակցաբար գործակցելով

Գրիգորիս Արք. Ալեքսանդրի կաթողիկոսութեան դէմ ըմբոստացողներուն հետ: Իզմիրլեան կոնդակով մը կը դատապարտէ զինքը եւ կը դադարեցնէ եկեղեցական գործունէութենէ: Սակայն յետոյ նկատի առնելով այս լերան նահապետին անկեղծ հայրենասիրութիւնը, եւ այդ պատճառով ալ կրած տառապանքները, մանաւանդ փառաւոր անցեալը, ներման կ'արժանանայ ու մինչեւ իր մահը կը մնայ իր սիրական վանքին մէջ, կը վախճանի 1911, Մայիս 5-ին, 78 տարեկան հասակին մէջ: Հանգուցեալ սրբազանը պարթեւ հասակով, յաղթ մարմնով եւ խկապէս պատկառելի եկեղեցական մըն էր: Իր քաջագործութիւններէն եւ պարգուկ միամտութիւններէն շատ մը հետաքրքրական դրուագներ կը պատմուին ժողովուրդին մէջ: Թէեւ Փռնուզի վանահայր, սակայն իր ազգասիրութեան համար շատ համակրանք կը վայելէր Մարաշի մէջ:

Նիկողոյոս Եպս. Խորխոռունիի վերոյիշեալ կենսագրական գծերը նոյնութեամբ արտագրեցինք Կիլիկեցիին «Մարաշ կամ Գերմանիկ» հատորէն, ինչպէս նաեւ իր մասին Ներսէս Եպս. Դանիէլեանի գրութենէն այդ գրքով մէջբերուածներէն եւ Բարթողիմէոս Մ. Վրդ. Թադաճեանի կենսագրութեան համառօտագրութիւնը պիտի տեսնենք քիչ մը յետոյ, հետագայ տողերուն մէջ:

«Վեհափառ դէմքով ուրուրի հոգեթափանց նայուածքով, ալեփառ մօրուքով, տիտան հասակով, բառին իսկական առումով հայ գողիաթ մըն էր Նիկողայոս Սրբ. Խորխոռունի, քան թէ եպիսկոպոս մը: Վանքին վանահայրն ըլլալէ աւելի Փռնուզի անմատչելի սարերուն արծիւն էր սրաթոյն, իր լեռնական հօտին հովուապետն ըլլալէ աւելի՝ անթագ թէպէտ վիւրն (թագաւոր) էր անոր: Անոր պատկառազու երեւոյթը հին հայ քրմապետներու խորհրդաւոր նմանութիւնը կը բերէր: Վասպուրականի Արծիւն հետ, Սիսուանի առիւծը պաշտելի ու պատկառելի էր դարձեր ամէն հայու սրտին: Առաջինը Հայրիկն էր Հայոց, վերջինը՝ պաշտպան՝ Կիլիկեան սարերուն: Հայրիկ գրիչն ունէր իր ձեռքը, Նիկողայոս Եպս. պողպատն ունէր իր ափին մէջ: Առաջինը կ'երգէր, կը գրէր հայուն վիշտը, խօսիլ կու տար Հայաստանի խաչքարերուն ու սարերուն, աւերքներուն ու գետերուն, ան՝ կը յեղափոխէր մտքերն ու հոգիները հին բռնապետութեան դէմ: Հայրիկը հայուն ողբերգու Երեմիան կ'ըլլար ստէպ, իսկ Նիկողայոս Եպս. միշտ կ'աշխատէր գործնապէս Լեւոններու կիսափուլ արծուի բոյներու Զօրաբարէյը ըլլալ: Ինքը ծանօթ էր թուրք եւ թիւրքմէն աւատապետերուն Տէյի Մահրասա անունով, երբ արդէն վարդապետացած էր եւ իր հոգակը ահ ու սարսափ էր ազդեր ամենուն...: Զինքը եկեղեցիէն ներս միայն կարելի էր ճանչնալ իրր եպիսկոպոս, ուր երբ

վեղարը գլխուն կանգնէր տաճարին մէջ՝ հին պարթեւազն հայոց հայրապետները յիշել կու տար: Նիկողայոս Եպս. եկեղեցագէտ մը ըլլալէ աւելի հիանալի ռազմագէտ մըն էր: Քաջաբարդ մը ըլլալէ աւելի, քաջասիրտ կռուող մըն էր բռնութեան դէմ, ու խունկին բոյրէն աւելի՝ վառօդի հոտն էր որ կը գինովցնէր զինքը: Զեմ գիտեր սակայն թէ՝ ինչո՞ւ զայն վարդապետ եւ եպիսկոպոս օծեր էին փոխանակ հայ Սաւուղ մը կամ Դաւիթ մը օծելու: Հոգեւոր իշխանութիւնը խոտոր կը համեմատէր անոր սկզբունքներուն հետ, բուն իր կոչումին չէր որ կոչուած էր ան»:

Այս տեղ, Կիլիկեցին վերջացնելով Ներսէս Եպս. Դանիէլեանի՝ Նիկողայոս Խորխոռունիի նկարագրութիւնը, իր կողմէն կը սկսի դարձեալ Դանիէլեանի, Խորխոռունիի մասին կարգ մը դրուագներ մէջբերել հետեւեալ տողերով. «Օր մը Նիկողայոս Եպս. Փռնուզի վանքին մէջ կը պատարագէր, լուր կը հասնի թէ՝ չէր քէզները այծերն ու տաւարները յափշտակեր տարեր են: Եպիսկոպոսը կը թողու պատարագը կիսատ, կը զինուի եւ իր կտրիճներով 3-4 ժամէն կը բռնէ չէր քէզները աւարով միասին, կը բերէ վանք, ու դարձեալ զգեստաւորուելով կը վերսկսի պատարագը ընդհատած տեղէն: «Ամբացո՛ր զմեզ եւ աներկիւղ պահեա յամենայն չարէ»: Ի՞նչ յարմար աղօթք ժամանակին ու պարագային: Պատարագէն ետքը երբ ծերունի քահանան կը համարձակի հարցնել թէ՝ ինչո՞ւ պատարագը կիսատ թողուց, Սրբազանը կ'ըսէ. «Տէրտէր, Պատարագն ու Քրիստոս իրենց տեղն են, չեն փախչիր, տաւարները յափշտակող անօրէնները պատարագ մատարագ չեն ճանչնար, տե՛ս հիմա պատարագն ալ լմացուցի, այդ անօրէններուն ալ արժանաւոր ժամուցն ու տիպոցը պիտի տամ»: Ու դարձեալ Կիլիկեցին կը շարունակէ. «Նահատակ յօդուածագիրը Նիկողայոս Եպսկ.ի ձերբակալման եւ բանտարկութեան մասին եւս կը գրէ հետեւեալ տողերը: «Զէյթունի եօթը փէշին տարին էր, որ Տէյի Մահրասա Պապիկ իշխանին հետ մեծ բռնաւորին բանակին դէմ ճակատելով, յաղթութիւններ տարած ու յետոյ դարանակալ թշնամիներուն կողմէ բռնուելով Զազրեան Յարութիւն վարժապետին հետ Պոլիս տարուած է, բայց Ներսէս Պատրիարքը կրցած էր փրկել անոնց կեանքը Սուլթան Համիտի մահահօտ ճիրաններէն: Նիկողայոս Եպս. 1892-ին դարձեալ խարդախ միջոցներով ձերբակալուած՝ Հալէպի կեդրոնական բանտը դրուած էր, Զէյթունի կարապետ Եպս.ին եւ Հաճնոյ վանահայր Յովհ. Եպս. Գազանճեանի հետ: 15 տարուան բերդարգելութեան կը դատապարտուի եւ կ'աքսորուի Պատրում: Անգլիոյ Քէնթըրպրիի Արքեպիսկոպոսը բողոք կը բանար Բրիտանական տէրութեան դէմ՝ հայ նշանաւոր եպիսկոպոսի մը իրր մահապարտ յանդուակ բերդար-

գելութեան դատապարտութեան համար: Իզմիրեանի օրերուն, բոլոր աքսորական եպիսկոպոսներուն՝ Եզնիկ Ապահունիի, Մկրտիչ Վեհապետեանի, Կարապետ Քէչեանի, Յովհաննէս Գազանճեանի եւ Արահամ Մամիկոնեանի հետ Նիկողայոս Եպիսկոպոսն ալ Պօստոլմէն Պորիս բերուած էր: Անգլիական դեսպանը, Սըր Ֆիլիպ Քլորի, պատրիարքարան գալով մասնաւոր փափաք յայտնած էր Ֆոնուզի եպիսկոպոսը անձամբ տեսնելու: Ու երբ Տէյի Մահրասան կը ներկայանայ դեսպանին, պատկառազօր եւ վեհափառ յաղթ հասակովը, դեսպանը յարգալից ձեռքի սեղմումէն ետքը, կ'ըսէ Իզմիրեան պատրիարքին. «Այս մարդը եկեղեցական մ'ըլլալէ աւելի զօրապետ մը ըլլալու արժանի է եղեր արդարեւ»: Քաջաբարոյ մը ըլլալէ աւելի քաջ կռուող մըն էր: Խոնկի բոյրէն աւելի վառօդի հոտը կը սիրէ: Գրիչ չունէր, պողպատ կար իր ձեռքին մէջ:

Բարթողիմէոս Մ. Վրդ. Թազաճեան (վեղարաւոր հերոսը).— Մնած է Ենիճէ գալէ, 1850-ին: Հայրը՝ Սուքիաս, մայրը՝ Մարիամ: Միաբան Ֆոնուզի Ս. Կարապետ վանքին, ձեռնադրուած է 1888-ին՝ Նիկողայոս եպիսկոպոսէ եւ վանահայր նոյն վանքին 1888-90: Զէյթունի Ազգ. խնդիրներու պատճառով կը բանտարկուի Հալէպ 1890-էն մինչեւ 91: Երկրորդ անգամ վանահայր 1891-95, սակայն նոյն խնդիրներու հետեւանքով կրկին կը բանտարկուի այս անգամ Մարաշ: Բանտէն ազատ արձակուելով ուխտի կ'երթայ Երուսաղէմ՝ Ս. Յակոբայ վանքը 1897-ին: Կ'անցնի Եգիպտոս եւ հոն կը հաստատուի 1898-1908 Օսմանեան սահմանադրութեան՝ 1908-ին կու գայ Զէյթուն: 1908-1910 Սիս, կը ստանայ Ժայռագունութեան աստիճան Տ.Տ. Սահակ Բ. Վեհափառ կաթողիկոսէն: 1910-ին Վեհափառ Հայրապետին կոնդակով, ի նպաստ Սոյ Աթոռին հանգանակութեան կ'ուղեւորուի Զմիւռնիա: Սակայն քաղաքական դէպքերու բերումով չի կրնար ձեռնարկել դրամահաւաքութեան եւ նոյն տարին իսկ կը վերադառնայ Ֆոնուզ, որու վանահայրութիւնը կը վարէ մինչեւ 1915: Կը տարագրուի Զէյթունցիներու հետ Գոնիա, յետոյ Հալէպ եւ ի վերջոյ Իսթիպ եւ հոն կը մնայ 1918-էն մինչեւ 1919-ը: Զինադադարին դարձեալ կ'երթայ Ֆոնուզ: 1921-ին Զէյթունի վերջին նահանջին ատեն, Միլլի կառավարութեան յանձնուող 600 զէյթունցիներու (մեծաւ մասամբ կիներ, այրիներ եւ անչափահասներ եւ ծերեր) հետ կու գայ Մարաշ, ուրկէ իր ժողովուրդով կ'աքսորուի Տիգրանակերտի Զերմուկ գաւառը: Երկու տարի այնտեղ մնալէ յետոյ, կը մեկնի Հալէպ ու անկէ ալ Երուսաղէմ եւ հոն կը վախճանի:

Կիլիկեցի տալով Բարթողիմէոս Վրդ-ի համառօտ կենսագրութիւնը,

կը յիշէ այս տեղ նաեւ անոր կեանքին կարեւոր թուականներէն քանի մը ամփոփ գծերէն հետեւեալ տողերով. — «Շատ պատշաճօրէն կոչուած է ան վեղարաւոր հերոս»ը իբրեւ քաջարի եկեղեցական եւ արժանաւոր յաջորդ Նիկողայոս եպիսկոպոսի: Հոգին եղած էր ան Զէյթունի 1895-96-ի կոլուին: Իր սուրին տակէն անցուց ան Զէյթունի զօրանոցին դրան առջեւ 700-ի մօտ թուրք կանոնաւոր զինուորներ, որոնք իր կուրծքի լանջախաչը համրուելով յարգանքի բարեւով անցան յաղթական Զէյթունցիներու դրօշակին առջեւէն եւ գերի բերուեցան վարը՝ Զէյթուն: Իր գիւղին՝ Ֆոնուզի եւ իր վանքին համար շատ կռուած եւ տառապած էր: 1895-ին վանքը քանդուած էր ու կը մնար աւերակ վիճակի մէջ: Բարթողիմէոս Հայր Սուրբ Եգիպտոսէն վերադարձին, մասամբ նորոգել կու տայ զայն: Եւ երբ գիւղն ու վանքը հետզհետէ շէնհալու վրայ էին, վրայ կը հասնի 1915ի աղիտալի տարին: Տեղահանութեան նախօրեակին՝ երբ Զէյթունի յեղափոխական փոքրամասնութիւնը պայքարելու, կռուելու իսկ աղայական կողմը հնազանդութեան կողմնակից էին, Բարթողիմէոս Հայր Սուրբ Ֆոնուզէն Զէյթուն կ'անցնի եւ կը ջանայ այս երկու կողմերը մէկ յայտարարի, մէկ հասկացողութեան բերել: Վեհափառ կաթողիկոսին հնազանդութեան յորդորը կը ստիպէ զինք տեղի տալու: Զէյթունցիներու հետ կ'աքսորուի...

ԱԼԱՊԱՇ կամ **ԱՐԵԳԻՆ**. — Այս գիւղը, աւելի ճիշդ պիտի ըլլար Բսեղ այս գիւղախումբը կը գտնուի Զէյթունի հարաւը, 6 ժամ հեռու: Արեգինը կը կոչեն թուրքերը նաեւ Ալապաշ կամ Ալայպաշ, մասնաւորաբար իր գիւղացիներուն՝ որպէս յառաջապահներ, Զէյթունի կոլուներուն, թուրք բանակին դէմ առաջին գիծերը բռնելու եւ քաջաբար կռուած ըլլալուն համար: Կտրիճ եւ քաջամարտիկ, բաւ նշանաւորներ, երկար ատեն զբաղեցած են թշնամի բանակը 1860-ին, 1862-ին եւ 1895-ին: Արեգին իր հին եւ հայկական անունն է: Արեգին նշանաւոր եղած է նաեւ Ռուբինեանց ժամանակ: Արեգինի վանքն էր Կապանի Արքեպիսկոպոսական աթոռը: Լեւոն Մեծագործի օծման հանդէսին ներկայ եղող 14 եպիսկոպոսներու երկրորդն էր Արեգինի եպիսկոպոսը, ինչ որ նախապէս ալ յիշեցինք ուրիշ առիթով, մեր այս պատմութեան ընթացքին:

Կիլիկեան իշխանութեան ժամանակ հաւանաբար Ֆոնուզի եւ Կապանի հետ Զէյթուն եւս Արեգինի Արքեպիսկոպոսութեան թեմին մաս կը կազմէր: Անտիօքի հայազգի Մակար Պատրիարքը 1695-ին արարեցէն պատմութեան գիրք մը գրած է, ուր կը յիշէ իր ուղեւորութիւնը Մարաշէն Զէյթուն, Ս. Կարապետի վանքը տափարակ բր-

յուրի մը վրայ, այնտեղի ջերմուկները, Հասան փաշայի մը Զէյթունի սահմաններուն մէջ ըրած ասպատակութիւնները եւայլն:

Արեգինի սահման էր արեւելքէն Ջահան գետը, արեւմուտքէն՝ Զէյթունի գետակը, հարաւէն Քիւրթիւլ թուրք գիւղին սահմանը՝ Մարաշէն 4 ժամ հեռու եւ անոր արեւմուտքը: Գիւղը կը բաղկանար 300 տուներէ եւ շինուած էր Շէնպէք կոչուած լեռան արեւելքն եւ հարաւը մինչեւ Ջահան գետը: Արեգինցիները եւս Զէյթունի պէս կը կառավարուէին նահապետական դրութեամբ: Շատ հիւրասէր էին արեգինցիք: Կը զբաղէին առհասարակ անասնապահութեամբ, այգեմշակութեամբ եւ երկրագործութեամբ: Աւելի կը մշակէին բամպակ, որովհետեւ տեղին կլիման շատ յարմար էր անոր: Արեգինցիք եւս զո՛հ գացին Տէր-Զօրի մեծ սպանդին: Իսկ սակաւաթիւ վերապրողները վերատին Զէյթունի 1921-ի վերջին նահանջին, թողուցին իրենց հողերը, ունեցածները եւ զէյթունցիներու հետ հեռացան:

ԲԵՐԴՈՒՍ (Պէրթիզ).-- Զէյթունի հարաւ արեւելքը՝ 38 մանր գիւղակներէ բաղկացած, եւ բոլորն ալ թրքաբնակ, գիւղախումբ մըն է Բերդուս, Ախրը Տաղ լեռան փէշերուն տարածուած: Գիւղակներէն Զէյթունի ամենէն մօտը 5 ժամ հեռաւորութիւն ունի Բերդուս եւ ժամանակին երբեմն եղած է եպիսկոպոսական թեմի կեդրոն եւ իշխանանիստ քաղաք: Գող Վասիլի ձեռքն էր Բերդուս Ռուբինեաններու առաջին թուականներուն: Գող Վասիլ 1107-ին, պարսիկ ասպատակներու վրայ փառաւոր յաղթանակ մը կը տանի եւ կը վերադառնայ Քեսուն (Պէհէսնի) իր կեդրոն քաղաքը: Գող Վասիլի մահէն եւ Լեւոն Ա-ի գերութենէն ետքը, օտարները տիրացան անոնց երկիրներուն, իսկ երբ Թորոս Ա. Բիւզանդիոնէն վերադարձաւ, իր եղբայրը Ստեփանէն գրաւեց այդ տեղերը: Քիչ ետքը սակայն Թորոս Բ-ի կողմէ Բերդուսը տրուեցաւ խաղաղութեան համար Գլըք Ասլանին 1157-ին: Բերդուս հայերու ձեռքէն կ'ելլէ 1208-ին, երբ Իկոնիոյ Սուլթանը՝ Խոսրով Շահ, զրդումովը՝ Յովհաննէս Մեծաբարոյ կաթողիկոսին, կու գայ եւ կը բռնէ բերդատէր Գրիգոր իշխանը եւ կը տիրէ Բերդուսի Լեւոն Մեծի հետ գծուած էր այս կաթողիկոսը եւ անոր հրամանով զահնդկէց եղած: Բերդուսի բնակիչները ժամանակին հայ էին, բռնութեան եւ հալածանքներու պատճառով մահմետական կրօնը ընդունած են ԺԷ դարուն:

Բերդեպցիք քաջ կռուողներ են եւ անհաշտ թշնամի հայերու: Զէյթունի 1895-ի կոլուին առաջին ընդհարումը տեղի ունեցած է Պէրթիզ Զայի մէջ: Այս մասին յետոյ իր կարգին պիտի անդադառնանք 1895-ի կոլուին նկարագրութեան ատեն: Բերդուս կիլիկիոյ ամենէն

կարեւոր բերդերէն եղած է:

Բերդեզ Զայ Զէյթունէն 6 ժամ հեռու է: Բերդուսի գլխաւոր գիւղերն են Պայէմլի եւ Գարամանլը, որոնց երկուքին ալ աթմու բնակիչները ծագումով հայ էին եւ մահմետականացած են: Կայտառ, գեղեցիկ, կտրիճ մարդիկ են: Ռուբինեան թագաւոր՝ Մլիհի գերեզմանը կը գտնուի Բերդուսի բարձունքներուն վրայ, իր հետ թաղուած են իր սուրը, մատանին, մականը եւ շատ մը զոհարեղէններ: Սելուզ-Ռումի կայ-Խոսրով 1207-ին կը գրաւէ Բերդուսը Լեւոն թագաւորէն:

ՊԷՇԷՆ (Պէշանցը).-- 50 տնուոր գիւղ մըն է Պէշէն, Զէյթունի հարաւ արեւելքը եւ կ'իյնայ Զէյթունի շրջանակին մէջ, Ջահան գետի Զէյթունի կողմի եզերքը, երկուք ու կէս ժամ հեռու: Պէշէն 1915-ի ընդհանուր պատերազմէն առաջ կէս առ կէս հայաբնակ եւ թրքաբնակ էր: Պէշէնի թուրքերը ժամանակ մը եւ բաւական ատեն ստրուկ-ճորտերն եղած են Պօղպայի թաղի Քիւփէլեանց գերդաստանին: Երբ 1908-ին Օսմ. Սահմանադրութիւնը հռչակուեցաւ, թուրքեր հոն ապրիլ չկրցան, ծախսեցին իրենց սեփական կալուածները եւ հեռացան Կէօկ-Չայրը կոչուած վայրը, որ Զէյթունէն արեւելք 11 ժամ հեռու է: Սակայն 1915-ի ընդհանուր հայկական տեղահանութեան եւ զէյթունցիներու տարագրուելովը եկան եւ գրաւեցին իրենց հին հողերը: 1919-ին զէյթունցի վերապրողներ երբ վերադարձան հայրենիք, գտան որ Պէշէնցի թուրքեր տեղաւորուած են հոն:

ԱՒԱԳԿԱԼ կամ ՄՈՒԱԼ.-- Զէյթունի երեք մեծ գիւղերէն մէկն էր Աւագկալ կամ Միսայ, միւսները, որոնց մասին արդէն խօսեցանք Ֆոնուզն ու Արեգինն էին: Աւագկալ կը գտնուէր Զէյթունէն հարաւ արեւմուտք երկու ու կէս ժամ հեռու, Ղուզախ լեռան արեւելեան ստորոտը: Շատ արգասաբեր հայ գիւղ մըն էր Աւագկալ: 1895-ի մեծ կոլուին եւ ուրիշ կոլուներու ալ աւագկալցիք օգնած են Զէյթունի՝ Թուրքին դէմ: Աւագկալցիներ եւս տեղահանուեցան եւ Տէր-Զօրի անապատները քշուեցան: Այսօր շատ քիչ վերապրողներ կան, Հալէպ եւ այլուր: Աւագկալի անմիջական շրջակայքը կը գտնուէին Հաճի-Տէրէ, Ղօզնուղալ, Ղալաճուխ, Խէրէղէն (Ղարաղան)³¹ հայ փոքր գիւղերը:

ՋԷՅԹՈՒՆԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՆ ՈՒ ԿՈՒՒՆԵՐԸ 1780-ԷՆ ՄԻՆՉԵՒ 1915

1780. Էօմէր փաշայի պատերազմն ու սպաննուիլը. Խոյ Յակոբ-Մնացական Սէմէրճեան, Չէյթունի Ս. Հրեշտակապետ եկեղեցիի ձեռագիր մէկ Յայամաւորքի վերջաւորութեան, 1780, Փետր. 24-ին Պապուկ անուն քահանայէ մը ստորագրուած արձանագրութիւն մը, իր «Չէյթունի անցեալէն եւ ներկայէն» հատորին մէջ առնելով, կը ներկայացնէ Էօմէր փաշայի պարտութեան եւ Խոյ Յակոբի քաղաքործութեան պատմութիւնը, զոր մենք կ'ամփոփենք ստորեւ:

Չէյթունցիին իր ամուր դիրքերուն մէջ, երկար ժամանակներ, տեսակ մը ինքնիշխան կեանք ապրած էր: Թէճիւրլեցի թիւրքմէններուն դէմ տարիներով կռիւներ մղած եւ իր արօտավայրերը փակած էր անոնց առջեւ. իր անունը տարածուած էր մինչեւ հեռաւոր վայրեր: Մանաւանդ, համաձայն Սուլթան Մուրատ Դ-ի հրովարտակի տրամադրութեան, ուղղակի Կ. Պոլսոյ Կեդրոնական կառավարութեան հետ կապ կը պահէր եւ իր 15000 դահեկանի հարկն ալ, փոխանակ Մարաշի թուրք կառավարութեան վճարելու եւ անոր միջոցով Պոլիս հասցնելու, ուղղակի Բ. Դուռ կ'ուղարկէր: Այս բոլորը կը տեսնէին Մարաշի թուրքն ու իր կառավարութիւնը եւ անհանգիստ կ'ըլլային: Պէտք էր վերջ տալ զէյթունցիներու այս արհամարհական վերաբերմունքին եւ իշխանութեան, ամէն գնով, եւ ի հարկին, ի սպառ ընկճելով այս արի եւ ինքնօրէն ափ մը հայութիւնը:

1780-ին, Օսմանեան գահը կը բազմէր Սուլթան Համիտ Ա.: Սակայն երկիրը տեսակ մը անիշխանական վիճակի մէջ էր, եւ դէպի քայքայում կ'ընթանար: Ամէն կողմ թշուառութիւն, սով, որ հետեւանքն էր 1774-ին ռուս-թուրք պատերազմին մէջ թուրքիոյ պարտութեան: Խրիմը վրայ տուած էին թուրքերը: Քրիստոնեաներու եւ մանաւանդ հայերու դէմ ատելութեամբ եւ զայրոյթով լեցուած էին անոնք ամէն կողմ: Ահա, պատեհ առիթը Չէյթունը նուաճելու: Մարաշի կառավարիչն էր Էօմէր փաշա: Մարաշի մուխանդ թուրքեր, կը դրդեն Էօմէր փաշան, ուղղութեան բերելու համար այս անպատկառ լեռնականները: Էօմէր կը համաձայնի իր կրօնակիցներուն հետ եւ 1780-ին, բազմաթիւ զօրքով կու գայ կը բնակի Չէյթունի հարաւ-արեւմուտքը,

վարի թաղի ջաղացքի առուին մօտերը եւ կը պահանջէ որ զէյթունցիներ իրեն վճարեն իրնց տարեկան տուրքը: Պարզ պատրուակ մըն էր ասիկա, խնդիր հանելու եւ Չէյթունի վրայ յարձակելու համար: Չէյթունցիք կը մերժեն, կը հասկնան փաշային դիտաւորութիւնը եւ կը պատրաստուին դիմադրութեան: Էօմէր սակայն վստահ չըլլալով յարձակելու պարագային իր տանելիք յաղթանակին ապահովութեան, չի համարձակիր կռիւի բռնուելու, այլ խոհեմութիւն կը նկատէ ճամբաները գոցել զէյթունցիին առջեւ: Եօթը ամիս պաշարման վիճակի մէջ կը մնայ Չէյթուն: Այսպէսով կը նեղէ եւ կը ստիպէ որ անձնատուր ըլլան: Չէյթունցիք մեծ նեղութեան մէջ են սովին պատճառով, որովհետեւ անկարելի կ'ըլլայ չըջակայ թուրք գիւղերէն ոնէ արմախք բերել Չէյթուն, իսկ իր սահմանափակ դաշտերէն եկած հացահատիկը, ցորենը արդէն սպառած է: Էօմէր փաշան իր բանակին ջարդել կու տայ Չէյթունի չըջակայքը դառնուող պարտէզներուն պտղատու ծառերն ու այգիները: Չէյթունցիք կը խորհին վերջ պէտք է տալ այս վիճակին: Մեծամեծները ժողով կ'ընեն ելք մը գտնելու համար: Ահա, ժողովի ընթացքին, վարի թաղէն, Յակոբ անուն կարճահասակ բաց ճարպիկ զէյթունցի մը, իր տեսած երազը պատմելով, կ'ըսէ թէ՝ փաշան իմ ձեռքով պիտի սպաննուի: Ես պիտի երթամ եւ զայն պիտի սպաննեմ: Խոյ մը կը մորթէ, կ'առնէ անոր մորթը եւ իր ատրճանակը, ժայռերու ետեւը պահուրտելով կամաց կամաց կը մօտենայ այն տեղ արածող ոչխարներու խումբին, որ թրքական բանակին կը պատկանէր: Իրիկուան մուկին, մորթը վրան առած չորքոտանի մը պէս կը քայլէ, կը խառնուի ոչխարներուն, որոնք արդէն բանակի վրաններուն միջեւ տարածուած էին: Հրամանատար Էօմէր փաշային վրանին մօտ տեղ մը կը պահուրտի ամբողջ գիշերը: Առտու է, փաշան, տակաւին լոյսը լաւ չբացուած, վրանէն դուրս կ'ելլէ իր ապտէսթը (կրօնական լուացուիլը) առնելու: Յակոբին՝ մէյ մըն ալ «Անուն իւսիւսը քիւրիւստիւն ըսելը եւ ատրճանակին բլթակը քաշելը մէկ կ'ըլլայ: Պուժալ ձայն մը եւ փաշան արդէն արիւններու մէջ, «Զարնուցայ, հասէք» կը պոռայ ու կ'իյնայ անկենդան: Յակոբ սակայն անմիջապէս դուրս կու գայ բանակատեղէն եւ վրաններուն ընդմէջէն վազելով կը հասնի իր ընկերներուն, որոնք իրեն կը սպասէին: Ամէնը միասին դրոհ կու տան բանակին վրայ, մինչդեռ զօրքը հազիւ թէ վերահասու եղած փաշային սպաննուելուն, արդէն շփոթ վիճակի մը մէջ էր, ահա այս անակնկալ յարձակումէն խուճապահար, ուզմամթերք եւ զոյք թողուցած կը փախչի: Յակոբ իր ընկերներուն առջեւ անցած իր սուրով եւ ընկերները ատրճանակով, նոյնիսկ ճէղկուտ-կացիսով, հրացանով կը յարձակին ու կը ջարդեն

Թշնամին: Իշխանը կը բաժնէ աւարը, վարի թաղի կտրիճներուն բա-
ժին կ'իյնան գեղարդները (գարկը): Եւ այդ թաղին անունը կը
կոչուի Գարկըլար, որ յետոյ աղաւաղուելով ըստած է Ղարդալար
թաղ: Պատերազմէն այդ յաջող ելքը, թուրք ուժերուն պարտութիւնն
ու խուճապը ուրախութեամբ կը համակէ ժողովուրդը: Իշխան, եկե-
ղեցական դաս եւ ժողովուրդ միաձայն, Յակոբը իշխան կը կարգեն
Գարկըլար թաղին: Մեր հայրենակիցները այս պատերազմի յիշատակին
նուիրած են հետեւեալ քառեակը.-

Էօմէր փաշա ապտէսթինի էյուճա ալտը,
Գոշտան գուրշուն կելուպ, էօմրին գալտըրտը,
Լաշէսի չատըր գափունումտա տէվրիտի գալտը,
Ծագուպ իշխան էիկիթլիյին պիտիրտի:
Թարգմ.

Էօմէր փաշան իր աղօթքը կատարեց,
Խոյէն գնդակ մ'եկաւ, հոգին դուրս հանեց,
Դին վրանին դրան առջեւ գլտորեց,
Ծագուպ իշխան քաջութիւնը ցոյց տուեց:

Այլ փաշա. Կիւրիտինի կռիւր.- Էօմէր փաշայի սպաննուելէն ետ-
քը, Մարաշի կառավարիչ Այի փաշա, իր նախորդին վրէժը լուծելու
համար, 1782-ին բազմաթիւ զօրքերով կ'արշաւէ Կիւրիտին, որուն
կիրճին արդէն հասած են զէյթունցիք եւ դիրք բռնած: Անոնք թոյլ
չտուին, որ թշնամին յառաջանայ դէպի Չէյթուն: Ու կը սկսի կը-
ռիւր, որ սակայն երկար չի տեւեր: Այի Փաշա գէշ կերպով կը
պարտուի, կը փախչի հագիւ կը հասնի Մարաշ, ուր ժամ մը ետքը
կը մեռնի կաթուածահար: Ծիկեր, հայ իշխանը, իր 300 քաջերով
թշնամին կը հալածէ Չէյթունէն մինչեւ Ծ ժամ հեռու, Իւնկիւթի
կամուրջը, ձիւհանի վրայ Մարաշի 3 ժամ մնացած: Այս կռիւին նշա-
նաւոր հանդիսացող Ծիկեր հայ իշխանը զէյթունցիք, իր 40 ընկե-
րակիցներով կը բերեն, կը բնակեցնեն Չէյթունի Պօզպայի թաղը:
Անոնք կը բազմանան, կը զօրանան եւ կը բաժնուին երկու ճիւղի
եւ կը կոչուին Չախրեան եւ Չալլըեան: Չալլըեան գերդաստանէն
էր նախորդ էջերով մեր յիշած Յարութիւն պատուելին, որուն Չէյ-
թունցիք Չօլախ վարժապետ կ'ըսէին: Հայրս անկէ սորված էր կար-
գալը եւ կարգ մը գիտելիքներ: Չօլախ վարժապետ, ինչպէս յիշած
էինք 1878-79-ի պատերազմին մեծ համբաւ չահած էր եւ մեռաւ
Պուրէշի մէջ 1890-ին: Չալլըեաններու մետաքսի գործարանին մէջ,
որուն մասին խօսեցանք իր տեղին, շինուած առանց կարի, մետաքսեայ
չատ գեղեցիկ շուրջառ մը կը պահուէր Ս. Յովհաննէս եկեղեցին

մէջ: Այի փաշա թուրքերէն կը կոչուէր Հաղրէթի Այի, յաղթուած
տեղը կոչուեցաւ յետոյ Այի դայասը, որ ի վերջոյ աղաւաղուեցաւ եւ
ըսուեցաւ Այա դայասը, Կիւրէտինի բերդ: Ծիկերեաններուն նախկին
բնակավայրը Չէյթունի հարաւ արեւմուտքը, 8 ժամ հեռու հովիտ
մըն է, եւ իրենց անունով կոչուած է Ծիկէր տէրէսի: Մինչեւ վեր-
ջին ժամանակներ տակաւին այն տեղ կը բնակէին քանի մը հայ ըն-
տանիքներ: Այդ վայրը կոչուած է նաեւ Չախրը օղլու:

Մինչեւ 1811, Չախրեանք ճիւղաւորուելով հասած էին 8 ընտանիքներու,
որոնց մէջ աւելի քան 70 այր մարդ կը համրէի: Այդ ընտանիքներն
էին հետեւեալները.- Մեծ Չախրեանք, Հաճի Հաննէր Չախրեանք,
Չախրը իրիցոնք, Գուլբեան Չախրեանք, Զիթլօ Չախրեանք, Մավի
Չախրեանք, Համազասպ Չախրեանք, վարի բողոքական Չախրեանք:

Մեծ Չախրեաններէն իրենց քաջութեամբ նշանաւոր եղան Փանոս,
Էմմանուէլ եւ Արթին: Այժմ այդ բոլորէն ողջ են Արամ Չախրեան՝
Եւրոպա եւ Ռուսիոյ Չախրեան որ Ամերիկա էր. 1819-ին կամաւորական
խումբերուն հետ, որպէս կամաւոր եկած էր Կիլիկիա եւ սակայն
Կիլիկիոյ պարպումէն եւ Մարաշի աղէտէն յուսալքուած վերադարձած
էր Ամերիկա: Այժմ ստոյգ չեմ գիտեր կ'ապրի թէ ոչ: Հրանդ Չա-
խրեան Պէյրութ է: Փանոս, Էմմանուէլ, Յակոբ եւ Յարութիւն Չա-
խրեան Ֆրնտըճախի կռիւին ինկան: Գէորգ Չախրեան Մարաշ, Կի-
րի օճախին մէջ այրեցին թուրքերը ողջ ողջ, իր հինգ զէյթունցի ըն-
կերներով Վարդիվար Չախրեանը կախեցին Մարաշ: Միւսները ի-
րենց ընտանիքներով Տէր-Զօրի անապատները քշուեցան եւ ջարդուեցան:

Իսկ Չալլըեաններէն միայն Վահան Չալլըեան մը կար Չէյթուն:
Չալլըեաններ չէին բազմացած: Իրենց մէկ ընտանիքն ալ վաղուց
հաստատուած էր Կ. Պոլիս, թերեւ Չօլախ վարժապետի ժամանակ:

Գալէնտէր Փաշա.- Էօմէր եւ Այի Փաշաներուն պարտութիւննե-
րէն յետոյ, զէյթունցիք երկար տարիներ խաղաղ, հանգիստ, ներքին
ինքնավար կեանք մը կ'անցընէին: 1808-ին, Մարաշի կառավարիչ Գա-
լէնտէր Փաշա, կեդրոնական կառավարութեան մէկ գաղտնի հրահանգովը,
ստուար բանակով մը կը քալէ Չէյթունի վրայ: Սակայն փոխանակ
կռուելու, Ծ ամիսներ, բանակը իր վրանները կը բանայ կը նստի
Չէյթունի ճամբաներուն եւ այսպէս տնտեսական պաշարման օղակի
մէջ կ'առնէ ժողովուրդը Չէյթունցիք քանի մը կարճ ընդհարումներէ
յետոյ կը յօժարին տարեկան 60 քաակ (մէկ քաակը 500 դահեկան
էր), այսինքն 30000 դահեկանի տուրք վճարել, ինչ որ կը պահան-
ջէր Գալէնտէր: Հաշտութիւն կը գոյանայ եւ բանակը կը հեռանայ:
Սակայն զէյթունցիք ի վիճակի չեն նման գումար մը վճարելու եւ

կը մերժեն: Գալէնտէր երբ կը տեսնէ որ անոնք կոթնած՝ Սուլթան Մուրատի հրովարտակին, կը մերժեն այդքան դրամ մը հարկ տալ, զանոնք որպէս ապստամբ կը ներկայացնէ կեդրոնի մօտ, իսկ Սսոյ մեծանուն Կիրակոս Կաթողիկոս, որ այն ժամանակ Սսոյ վանքին շուրջը բարձր եւ ամուր պարիսպ մը շինել տուած էր, կը նկատէ կասկածելի եւ միեւնոյն ատեն դրդող եւ հովանաւորող Զէյթունի ապստամբութեան: Կը մտածէ խորամանկութեամբ մը, դաւադրութեան ճամբով Կիրակոս Կաթողիկոսը Մարաշ բերել տալ: Յաջողած էր Բ. դռնէն հրաման ձեռք բերել տալով գործադրել այդ հրամանը, որովհետեւ Չատրճօղլու Պէյը, ձորապետը, որ կ'իշխէր Սսոյ, մտերիմն եւ պաշտպանն էր Կաթողիկոսին, ի հարկէ զայն պիտի չյանձնէր Գալէնտէրի ձեռքը: Խորամանկ Գալէնտէր իր մօտը կը կանչէ Մարաշի հայ երեք երեւելիները, կը համոզէ զանոնք որ Կաթողիկոսը Մարաշ հրաւիրեն եւ յետոյ Զէյթուն ղրկեն, որպէսզի երթայ եւ յորդորէ Զէյթունցիները որ չքմբոստանան եւ վճարեն 30000 դահեկանը: Մարաշի հայ մեծամեծները անտեղեակ փաշայի այդ չար դիտաւորութեան, կը համակերպին նոր առաջարկին եւ Ն. Ս. Օծութիւնը կը հրաւիրեն Մարաշ: Կաթողիկոսն ալ առանց մտքէն անցնելու թէ իրեն համար դաւադրութիւն մըն է որ կը նիւթուի, միամտօրէն կը դիմէ Չատրճօղլուի եւ հրաման կը ստանայ եւ Ս. Մննդեան օրերուն կը հասնի Մարաշ: Հազիւ թէ քանի մը օր հանգիստ բրած էր, ահա Մննդեան խթման իրիկունն իսկ փաշայի աղաներէն Թիւֆէնքճի Պաշի Յէյզուլլամ Պէյը, 10 ոստիկանով կու գայ Առաջնորդարան, ուր իջեւանած էր Սրբազան Կաթողիկոսը, ու կը ձերբակալէ զայն ճաշ սեղանին վրայ: Կը հաղորդուի իրեն կառավարութեան հրամանը եւ կ'առաջնորդեն փաշային պալատը: Կը բանտարկեն այն տեղ առանձին խուց մը, առաւօտուն կախաղան պիտի բարձրացնեն:

Խեղճ Կաթողիկոսը, յուզուած, ալլալած, նախախնամութեան կ'ապաւինի եւ կը մըմնջէ. «Տէր լոյս իմ եւ կեանք իմ, ես յումմէ՞» երկեայց» սաղմոսը: Սակայն այս տխուր գոյժը ժամանակ չանցած կը տարածուի քաղաքին մէջ: Հայ ժողովուրդը խոր սուգով կը համակուի: Հայ մեծերը քահանաներով միասին կը դիմեն փաշային, Կաթողիկոսին արձակումը խնդրելու համար: Գալէնտէր, կայսերական հրամանագիրը ցոյց տալով, կը մերժէ ոեւէ միջամտութիւն: Երկար խնդրանքներէ յետոյ, վերջապէս 100000 դահեկան կաշառքով մը կը յաջողին 40 օրուան երաշխաւորութեամբ մը ազատ արձակել տալ Կաթողիկոսը: Այդ գիշերն իսկ կը հանգանակեն 100 000 դահեկանը եւ կը յանձնեն ընչաքաղց փաշային: Սակայն այդ դրամն էր որ ի վերջոյ պատճառ պիտի դառնար իր կործանման:

Վեհափառը անհուն երախտագիտութեամբ լեցուած հանդէպ Աստուծոյ եւ իր սիրելի հօտին, արցունքոտ աչքերով կատարեց Ս. Մննդեան պատարագը եւ սրտաբուլիս մաղթանքներով օրհնեց բոլոր ժողովուրդը, որոնց վիշտը ուրախութեան փոխուելով սկսան այս անգամ կրկնապէս շնորհաւորել զիրար եւ Ս. Մնունդ աւետելով, փառք տալ Աստուծոյ: 1818-ին էր այս եւ Բարի Մնունդ անուանեցին այդ տարուան ծնունդը:

Բայց, անկէ յետոյ առանց ժամանակ անցնելու, 40 օրը չըրացած, Ս. Հաջրապետին վերջնական փրկութեան համար կարելին պէտք էր ընել: Ուստի փութացին եղելութիւնը տեղեկացնել Կ. Պոլսոյ Աբրահամ Ուռալէլեան Պատրիարքին: Սրբազան պատրիարքը անմիջապէս բողոքեց Բ. Դրան, 150 եկեղեցականներով: Քառասուն օրուան պայմանաժամը չըրացած, որպէս անմիջական արդիւնք Պատրիարքարանի բողոքին, ահա Գալէնտէրի պաշտօնականութեան հրամանը կը հասնի Մարաշ: Ստացած 100000 դահեկանի կաշառքը պիտի վերադարձնէր եւ իր ընտանիքովը ցկեանս պիտի աքսորուէր Մալաթիա:

Հայերը երբ ստացան Արքայական այս էմր սամին, բարձր հրամանագիրը, Բամազան Պայրամըի Արեֆէին օրը հաղորդեցին Գալէնտէրի: Այս անակնկալ դժբախտութիւններուն լուրէն շփոթած, առանց ամշնալու, կ'աղաչէր հայ մեծամեծներուն որ միջնորդեն եւ ներում բերել տան իրեն: Սակայն անօգուտ: Հետեւեալ օրն իսկ Հարուն-Յուսուֆ անուն հրեայէն փոխանակութիւն ընելով, պարտաւորուեցաւ վերադարձնել 100000-ը: Իսկ Հարուն Յուսուֆ, փաշային կա՛հ կարասիները աճուրդի հանելով, ծախեց եւ ստացաւ իր պահանջը: Ու Պայրամի երրորդ օրը մեկնեցաւ դէպի Մալաթիա: Երեք օր միայն ապրեցաւ այն տեղ եւ կաթուածահար մեռաւ: Մարաշի թուրքեր սգացին եւ տխուր պայրամ մը անցուցին:

Ն. Ս. Օծութիւն Կիրակոս Կաթողիկոս կախաղանէ ազատուելէ յետոյ, Բ. Դրան պահանջով Կ. Պոլսոյ կ'երթայ 1819-ին Պատրիարքարանի հրաւերով: Այն տեղ իր անմեղութիւնը հաստատելով, մեծ պատիւ կը գտնէ Սուլթան Մահմուտի մօտ, ինչպէս նաեւ մեր ազգայիններուն քով: Այս առիթով, ազգասէր Հայրապետը կը դիմէ Սուլթանին եւ կը յաջողի գէյթունցիներու 30000-ի տուրքը իջեցնել 20000-ի: Այդ տարին վճարուեցաւ 20000-ը, իսկ յաջորդ տարիները ըստ հրովարտակին 15000 սկսան վճարել: Ուղղակի Պոլսոյ կը ղրկէին այդ դրամը յատուկ մարդու մը ձեռքով:

Նոյն տարին, Կիրակոս Կաթողիկոս կը վերադառնայ իր աթոռ՝ Սիս: Երեք տարի յետոյ իր երբեմնի պաշտպան Չատրճօղլուի ձեռքով թունաւորուելով կը վախճանի:

Ձէյթունցիք Չափան Օղլուի հետ.

Հալէպի մէջ, 1810-ի ատենները Հիւլպիւլ Օղլու, թուրք աւատապետ մը կար: Ասիկա թուրքիոյ մէջ գտնուած շատ մը ուրիշ պէյերու պէս ինքնագլուխ կ'իշխէր Հալէպի յիշանին եւ չէր ենթարկուեր Սուլթանի իշխանութեան: Նման ձորապետ մըն էր նաեւ Եօզղատի բռնակալ Չափան Օղլու Մուհամմէտ Փաշան:

Սուլթանը մտածեց զայլը զայլին խեղդել տալ: Ուստի Չափան Օղլուին հրամայեց քալել Հիւլպիւլ օղլուի վրայ եւ զայն ենթարկել կեդրոնի կառավարութեան: Չափան Օղլու 50000 պաշտպօզուգէն (գլխակեր) բաղկացած բանակով մը եկաւ Հալէպ, յարձակեցաւ քաղաքին վրայ եւ կարճ ատենէն նուաճեց զայն: 1819-ին այլեւս կը վերադառնար, երբ Մարաշ կը հասնի, ու պիտի անցնէր երթար, տեղւոյն թուրքերը աղաչեցին որ սա Ձէյթունին հաշիւն ալ մաքրէ եւ յետոյ երթայ: «Շու պիւքտէ պիր թազըմ ուղղուսուզ տօմուզլար վար տըր, քի տայիմա պիդի թաճիզ էթմէքտէ տիրլար, պունլարը տա փաքլայուպ, էօյլէ կիտէսին»: Սա անտառին մէջ կարգ մը անպիտան խոզեր կան, որոնք միշտ անհանգիստ կ'ընեն զմեզ, անոնք ալ մաքրէ ու յետոյ գնա, լսին: Չափան Օղլու կարծելով թէ՝ Ձէյթունն ալ Հալէպի նման դիւրին մարսուելիք որս մըն է, իր անկանոն զօրքով մեծ բռնակալը յարձակեցաւ, արեւելքէն Գըսըզ կոչուած տեղէն, Ձէյթունէն 6 ժամ հեռաւորութենէ մը: Գարուն էր, Ջահան գետը յորդած էր, առանց կամուրջի անկարելի էր անցնիլ գետէն, Էօքսիւզեան վարդապետին վերջէն շինել տուած վարդապետին կէտէրէն տակաւին չկար: Նեղ կամուրջ մը կար, ուրկէ հազիւ 500 զօրք կարելի եղած էր անցընել Ձէյթունի կողմը: Ասոնք սակայն առանց ունէ յաջողութեան 25 հոգի կորուստ տալէն զատ, մնացածներն ալ գերի ինկան Ձէյթունցիներուն ձեռքը: Վեց ամիս կատարեալ կերպով հոգացուեցան անոնք: Իսկ Չափան Օղլու ամօթահար թողուց ու մեկնեցաւ Եօզղատ, եւ այնտեղի հայերուն աղաչեց որ գրեն կիլիկիոյ Կաթողիկոսին, որպէսզի թուրք գերիներուն համար միջնորդէ զէյթունցիներուն մօտ: Կիլիկիոյ կաթողիկոսը միջամտեց եւ գերիները ազատ արձակելով դարձան իրենց տեղերը: Գովեստով խօսեցան Ձէյթունցիներու մասին եւ շնորհակալութեան գիր ուղարկեց Կաթողիկոսին եւ Ձէյթունի իշխաններուն: Իր նամակներով ըսած էր ան թէ՝ «Ձեզի պէս կտրիճներու հետ չէր վայելեր որ ես կոխ ընէի, յանցանք իմա չէր սակայն, այլ մարաշցիներուն, որոնք ինծի թելադրեցին: Ձէյթունցիք բարեկամական նամակով մը պատասխանեցին եւ նամակին հետ տեղական ձեռով շինուած գեղեցիկ հրացան մըն ալ նուէր ղրկեցին Պերսեան Մանուկ աղայի ձեռքով: Իսկ Չափան Օղլու չորս

իշխաններու 4 ձի ղրկեց, որպէս փոխադարձութիւն:

Ու զէյթունցիք կ'երգեն այս դէպքը հետեւեալ տողերով.

Օսմանլը թիւֆէնկի հէփ չաթըր, փաթըր,
Ձէյթուն թիւֆէնկիի սայմատը խաթըր.
Չափան ասկերինի վուրտուգնա եաթըր,
Տօսթում Չափան Օղլու վազ կէչ Ձէյթունտան:

Այսպէս թարգմանուած.

Օսմանեան հրացաններուն խուլ որոտին,
Ձէյթունի հրացաններն արժէք չըտուին.

Չափանի զօրքերը կը փռնն գետին,

Սիրելիս, Չափան Օղլու, ձգէ սա Ձէյթունը:

Քէօսէ Փաշա.— **Կոկիսոնի կոխը.**— Թուրքիոյ հպատակ ազգերու մէջ ծայր տալ սկսած էր անկախութեան ձգտումը: Յունաստան նոր կազմակերպուած էր, Եգիպտոս կը խլրտէր, Եմինիայի մէջ Ալի Փաշա ինքնագլուխ դիրք կը բռնէր: Ձէյթունի կէս անկախ դիրքը հաճելի չէր թուրք կառավարութեան, որ միշտ պատրուակ մը կը փնտռէր զայն ջախջախելու: Մարաշի կառավարիչները եւ Չափան Օղլու այդ ուղղութեամբ ոչինչ կըցած էին ընել: Ուստի Կեսարիոյ Քէօսէ Փաշային պաշտօն կը տրուի որ այս գործը ղլուխ հանէ: 1820-ին բազմաթիւ հեծեալներով կու գայ մինչեւ Կէօկսիւն (Կոկիսոն) ու այն տեղ կը բանակի: Ձէյթունցիք իրենց փոքրաթիւ զուեղովը կը հասնին այն տեղ, որ Ձէյթունէն 12 ժամ հեռու էր: Կոխը կը սկսի Հազիւ թէ տաքցած էր կոխը, ահա Եաղուպեան հաճի Աստուածատուր մէկ գնդակով գետին կը տապալէ Ձէյթաթ անուն դրօշակիրը: Թուրքեր կը փախչին խուճապահար եւ չեն համարձակիր պատերազմը շարունակել:

Ներքին խռովութիւն.— **Միւլէյման Փաշա.**— Ձէյթունցիք ըստ առաջուան եւ համաձայն հրովարտակին կը շարունակէին ամէն տարի 15000 դահեկանը ղրկել Կ. Պոլիս: 1830-ին, Մահմետի Մանուկ Պէրսեան անձամբ Պոլիս կը տանի այդ գումարը եւ կը յանձնէ Այա Սօֆիայի Միւթէվէլլին: Ենորհակալութիւն կը յայտնէ Միւթէվէլլին, կը պատուասիրէ Մանուկ Պէրսեանը եւ կը հարցնէ թէ «Ձէյթունի մէջ տաճիկ կա՞յ» ու երբ Մանուկ աղայէն կը հասկնայ թէ 14 տուն տաճիկ կայ Ձէյթունի մէջ, եւ որոնց հետ բարի դրացիներուն պէս կը վարուին զէյթունցիք, Միւթէվէլլին, չենք գիտեր ինչ խորհուրդով կը թելադրէ որ հեռացնեն զանոնք Ձէյթունէն, ըսելով թէ՝ անոնք օձերու ձագերու նման են, օր մը կը մեծնան եւ ձեր սրբ-

տէն կը խայթեն: Մանուկ Աղա Չէյթուն վերադառնալուն, այս թե-
լադրութիւնը կը հաղորդէ իշխաններուն: Անոնք կը խորհրդակցին եւ
կ'որոշեն հեռացնել այդ 14 տնուոր տաճիկները եւ այդ որոշումին
գործադրութիւնը կը յանձնեն Սուրէնեան իշխանին, համաձայն իր
յղացած ծրագրին: Իշխանը, քահանայի մը ընկերակցութեամբ Հաճի
Խարահիմենց Հասան Աղային տունը կ'երթայ, եւ անոր աղջիկը՝ Ռա-
զիէն իր Մարտիրոս տղուն կնութեան կ'ուզէ ըսելով՝ «Ալլահըն էմրի
իլէ, փէյղամպէրին գավլը իլէ Ռազիէ քէրիմէնեզի մախտումըմ»
Մարտիրոս վէրմէնիզի թալապ խտէրիմ: Հասան Աղա երբ կ'առարկէ
որ իսլամական կրօնքին հակառակ է այդ բանը, Սուրէնեան կ'ըսէ
թէ չաղջիկը կրնայ իսլամութեան մէջ մնալ եւ թէ այդ կերպով ա-
ւելի կ'ամրապնդուի բարեկամութիւնը իրենց մէջ, հակառակ պարագային,
կ'աւելցնէ իշխանը, դուն քու բոլոր ազգակիցներովդ պէտք է որ
ելլէք հեռանաք Չէյթունէն, մինչեւ վաղը առաւօտ: Թուրքերը իրենց
հողերուն եւ կալուածներուն համար կը դժուարանան հեռանալ եւ
սակայն չեն կրնար ընդունիլ նաեւ առաջարկը, որ իրենց կրօնքին
հակառակ է: Նոյն գիշերը 14 տուն թուրքեր Սուրէնեան թաղը թող-
լով կ'ապաստանին Եաղուպեանց թաղը: Թէպէտեւ Եաղուպեան իշխան
նախապէս կը մերժէ ընդունիլ զանոնք, սակայն շատ կը թախանձեն,
որով, կը գիշի իր պաշտպանութեան տակ առնել զիրենք: Միւս օրը
իշխանները իրարու մօտ կու գան եւ բացատրութիւն կը պահանջեն
Եաղուպեանէն: «Շատ աղաչեցին, կ'ըսէ իշխան Եաղուպեան, խոստացան
ինծի եւ ձեզի հաւատարիմ մնալ, քանի մը ամիսէն կը դրկեմ զի-
րենք»: Սուրէնեան կը պնդէ անոնց անյապաղ հեռացումը: Ամիս մը
միջոց կ'ուզէ Եաղուպեան, առարկելով թէ՝ իր ինքնասիրութեան վի-
րաւորանք մըն է հիւրընկալութիւն խոստանալէ ետքը, հիմա ելլել
զիրենք վճռելով: Միւս երկու իշխաններն ալ առարկութիւնը արդար
կը նկատեն եւ կը միջամտեն, սակայն իշխան Սուրէնեան կը մնայ
անդրդուելի եւ Եաղուպեան զայրացած կը գոռայ թուրքերը պաշտ-
պանութեանս տակ առած եմ, ձեռքէդ եկածը ետ մի՛ թողուր: Ու
այսպէս կը բաժնուին իրարմէ:

Սուրէնեանք հետեւեալ օրը պատերազմ կը յայտարարեն Եաղուպեան
թաղի ջաղացքին ջուրը կտրելով: Եաղուպեանք վանք կ'երթան, Ա-
ռաջնորդ Պօթանեան Յակոբ Եպիսկոպոսին, եւ իբրեւ աքսորական,
հոն գտնուող Այնթապի Առաջնորդին՝ Յովհաննէս Եպիսկոպոսին եւ
այն տեղ կը բողոքեն: Միջամտութիւն, յորդոր անօգուտ կը դառ-
նան: Եպիսկոպոսներ ճարահատ, կը դիմեն Եաղուպեանին որ
հետեւեալ օրն իսկ արտաքսէ թուրքերը: Իշխան Եաղուպեան ընթացք
կու տայ անոնց դիմումին եւ կը խոստանայ հետեւեալ օր ճամբու

դնել զանոնք: Սուրէն դարձեալ չ'ընդունիր եւ ուխտադրութ կ'անուանէ
Եաղուպեանը եւ կ'ուզէ զէնքով պատժել զայն: Եաղուպեանի կը
միանայ նաեւ Շովրոյեան, իսկ Սուրէնեանի հետն է Ենիտլենեան
իշխանը: Եւ Չէյթուն կը բաժնուի երկու հակառակորդ ճակատներու:
Կոիւր կը սկսի: Երկու կողմի անասուններն իսկ գնդակահար կը
սպաննուին: Թուրքեր, որպէս անգիտակցօրէն պատճառ այս եղբայրաս-
պան կոիւին, սարսափահար կը փախչին Չէյթունէն 6 ժամ հեռու
Թանըր թուրք գիւղը:

Պատերազմը կը սաստկանայ: Մարաշի կառավարիչ Պայագիտ Զա-
տէ Սիւլէյման Փաշա, այս առիթը չփախցնելու համար, լուր կը դրկէ
Եաղուպեանի թէ՝ քանի որ դուն իմ կրօնակիցներս պաշտպանելու
համար կոիւի ելեր ես, քեզի օգնութեան գամ թշնամին ջախջախելու
համար: Եաղուպեան վեհանձնաբար կը մերժէ, ըսելով թէ՝ օտարին
օգնութեան պէտք չունի, եւ զինքը վատ մը թող չկարծէ: Եւ ե-
թէ, համարձակի Չէյթունի հողը ոտք դնել, զէնքը իր դէմ պիտի
դարձնէ: Նենգաւոր Փաշան սակայն չի յուսահատիր, նոյն առա-
ջարկը կ'ընէ Սուրէնեանի, որ սակայն դժբախտաբար կ'ընդունի ա-
ռաջարկը, կ'երթայ Մարաշ, եւ թուրք ջոկատներ բերելով 1831ին, կը
ընակեցնէ Ս. Աստուածածնայ վանքը: Եաղուպեան ասոր վրայ սոս-
կալի կը նեղուի, կը զայրանայ եւ գիշեր մը, խումբ մը սպառա-
զէն մարդերով, չուանէ սանդուղներու օգնութեամբ Սուրէնեան բեր-
դը կը բարձրանան, ներս կը մտնեն, բացի օրօրոցի մանկիկէ մը,
բոլորն ալ սուրէ կ'անցընեն: Միայն դիպուածով այդ օրը բացակայ
եղողներ՝ Մարտիրոս, Բասիլիս, Աղպաշ եւ Վարդիվար Սուրէնեանները
կ'ազատին: Առտու երբ կը վերադառնան, կը սարսափին, սակայն
փոխանակ կոիւր դադրեցնելու, աւելի սաստկութեամբ կը շարունակեն:
Սիւլէյման Փաշա, եղածը երբ կ'իմանայ, սարսափահար կը փախչի,
ըսելով թէ՝ եթէ Եաղուպեաններ իրենց ազգակիցներուն այսպէս
վարուեցան, մեզ այս վանքին մէջ հում հում կ'ուտեն: Փաշան եւ
իր հետեւորդները կը հեռանան վանքէն: Մինչ թշնամին կ'ուրախանայ,
Չէյթուն արիւն կու լայ: Եկեղեցական դասը խորապէս յուզուած, ե-
պիսկոպոսներու առաջնորդութեամբ կ'երթայ գերեզմանոց, ուր թաղուած
էին սպաննուածներուն մարմինները: Հանդիսաւոր Պատարագ եւ հո-
գեհանգիստ կը կատարեն եւ կը մխիթարեն Սուրէնեանները եւ
դժուարաւ վերջապէս կը յաջողին կոիւր դադրեցնել եւ հաշտեցնել
երկու կողմերը, հետեւեալ պայմաններով.՝ Եաղուպեանք, բոլոր ի-
րենց գերդաստանով երկու տարի Միջին թաղը ոտք պիտի չկոխեն,
Սուրէնեաններուն չերեւալու համար: Իսկ Շովրոյեանք պիտի գաղթեն
ամբողջապէս Չէյթունէն 15 ժամ հեռու Կէօճիկ գիւղը, հարաւ ա-

րեւմուտք: Այս վերջին պայմանը թէեւ Եաղուպեանին ալ կ'առաջարկուի, սակայն չ'ընդունուիր: Այսպէս կը վերջանայ այս կռիւը, որ ամբողջ 7 ամիս տեւած է եւ 400 զոհեր խլած է Ձէյթունէն:

Իպրահիմ Ուշաղըներու եւ Գուռնազներու ջարդը: Միւլէյմանի երկրորդ յարձակումը:

Կ'անցնին 9 ամիսներ, Սուրէնեանք եղբայրասպան կռիւին պատճառ եղողներէն վրէժ լուծելու համար կը յարձակին Թանըր գիւղին վրան, Իպրահիմ Ուշաղըներէն եւ Գուռնազներէն 16 հոգի կը զարնեն եւ կը վերադառնան Ձէյթուն: Թանըրցիք կը բողոքեն Մարաշի Միւլէյման փաշային: Փաշան դէպքը կը հաղորդէ Պոլիս եւ հրաման կը ստանայ Ձէյթունը բնաջնջելու եւ 1832-ին ահագին բանակի մը գլուխն անցած կու գայ Զերմուկի դաշտը կը նստի Վտանգը ըսպառանալից էր: Եպիսկոպոսներ Սուրէնեաններու հաւանութիւնը կ'առնեն Շորվոյեանները կէօճէկէն վերադարձնելու համար: Զորս իշխաններ կ'եղբայրանան, եւ մեծ պատրաստութեամբ կը դիմեն Ղուլօները (մարտկոց), կոռւելու համար Միւլէյմանի դէմ: Փաշան սակայն կը վախճայ կոռւելու եւ նենգութեամբ քովը կը կանչէ Եաղուպեան Մահտեսի Վարդիվար իշխանը, եւ գաղտնապէս կը հաղորդէ թէ՝ զինքը Ձէյթունի իշխան կարգելու եւ բոլոր գերդաստանին արքունի գանձէն թոշակ կապել տալու համար Սուլթանէն հրաման ունի, եթէ իր քաջերով միանայ իրեն եւ Ձէյթուն մտնեն: Եաղուպեան համոզուած կը ձեւացնէ եւ կը խոստանայ փաշային բանակին հրամանատարութիւնը ստանձնել, բայց որպէսզի իր մարդիկը վստահին՝ անհրաժեշտ կը գտնէ զօրքերուն զինամթափ ըլլալը եւ զէնքերուն մարտկոցներու կողմը վրաններուն տակ մթերուիլը իր աչքերուն առջեւ: Միւլէյման կը կասկածի եւ հարկ կը տեսնէ իր սպաներուն հետ խորհրդակցիլ, ուստի, կը խնդրէ իշխանէն յաջորդ գիշեր գալու: Եաղուպեան համակերպիլ կը ձեւացնէ, վառք կը դառնայ եւ իշխաններուն կը հաղորդէ փաշային առաջարկը: Իշխաններն առանց ժամանակ կորսնցնելու, նոյն գիշերն իսկ չորս կէտերէ յանկարծակի յարձակելով, լաւ մը կը ջարդեն թշնամին եւ կը ցրուեն բանակը: Միւլէյման 300 դիակ թողով, շունչը Մարաշ կ'առնէ եւ իրեն այցելողներուն կ'ըսէ թէ՝ «չկրցաւ համոզել Եաղուպեան խոզը, որ կատարեալ խորամանկ աղուէս մըն է եղբր, թէ այդ կեպուղներուն հետ թշնամութիւնը անօգուտ է, պէտք է բարեկամութեամբ վարուիլ անոնց հետ: Այս պատերազմին Ձէյթունցիք կը կորսնցնեն միայն 5 հոգի:

Թօսուն Փաշա, Մարաիրոս Սուրէնեան եւ Մարաշի թուրք երեւելիներուն առեւանգումը:

Միւլէյման փաշայի յաջորդը՝ Թօսուն Փաշա, 1835-ին Սուրէնեան Մարաիրոս իշխանը խարդախութեամբ, իրեւ թէ յանձնարարութեան մը համար Մարաշ կը հրաւիրէ: Իշխանը առանց կասկածելու կ'երթայ Սակայն փաշան զայն բանտարկել կու տայ ըսելով թէ՝ «Ձէյթունի 7 տարուան տուրքը, տարեկան 30000 դահեկանի հաշուով մինչեւ որ ամբողջութեամբ չվճարեն զէյթունցիք, քեզի ազատում չկայ»: Իշխանը կը խոստանայ Ձէյթուն գրել որ այդ անվճար տուրքը ղրկուի: Սակայն փոխանակ փաշային ուզածին պէս գրելու, Ձէյթունի բարբառով կը գրէ թէ՝ բանտարկուած եմ: Քանի մը օրէն թուրք երեւելիներ, Ձէյթունի հարաւ-արեւմուտքը 9 ժամ հեռուն Գազմա ըսուած այգեստանները զբօսանքի պիտի երթան, տեսնեմ զձեզ, յարձակեցէք անոնց վրայ եւ իմ տեղս, անոնց բոլորն ալ ձերբակալելով, տարէք Ձէյթունի բերդը արգելափակեցէ՛ք: Ձէյթունցիք այս նամակը առածնուն պէս, Սուրէնեաններէն 60 կտրիճնր կը հասնին Էմէր-Մահմուտ Օղլու Վէհպի Էֆ-ի այգիին վրայ, ուր խնջոյքի հրաւիրուած էին 9 թուրք մեծամեծները իրենց ընտանիքներով: Ամբողջն ալ առանց դիմադրութեան անձնատուր կ'ըլլան: Այդ թուրքերն էին: Պայագիտ Ահմէտ Պէյ, որ յետոյ փաշայութեան կը բարձրանայ, Պայագիտ Սայիտ Փէյ, Տուլգատր Սայիտ Փէյ, որ նշանաւոր Զիւլ Գատր ցեղէն էր, Տուլ Գատր Միւլէյման Պէյ, Միւտէրիա (ուսուցչապետ) Գանատը Գրորդ Զատէ, Էօմէր Էֆ. Գարաքիւլիւք Զատէ, Մուստաֆա Պէյ, Վէլի Էֆէնտի Օսման, Սօլաղըն Քէլիփի անուն տաճիկ մը եւ այգիին տէրը եւ հրաւիրողը Վիհպի Էֆ:

Ձէյթունցիք կ'ինքնը ազատ, անվնաս թողուցին, միայն թէ՝ որպէս նախատինք իրենց այրերուն, կ'ինքնուն բեհեզեայ ներքնագգեստները ձողերու վրայ անցուցին եւ 9 ձերբակալուածները, գերեզմարներով իրենց կռնակներուն վրայ Զահան գետը կ'անցնին, որովհետեւ դեռ կամուրջ չկար եւ գետը այսպէս անցնելէ յետոյ, ստիպեցին զանոնք որ խոզի կաշիներու վրայ նամազ ընեն: Գերի մարաշցի այս պէյերը, ստիպուեցան կատարել հրամայուածին պէս, փորձով զգալու համար կարծես թէ՝ ինչ դժուար եւ անհաճոյ բան էր խոզի եւ զգացումներու դէմ հրամաններ գործադրել, ինչ որ իրենք դարձեւ է վեր ընել կու տային քրիստոնեաներուն: Ասոնք բերդը արգելափակելով, ստիպեցին զիրենք որ՝ փաշային գրեն, որպէսզի ազատ արձակէ Սուրէնեանը, եթէ ոչ՝ իրենց ազատում չկայ: Թօսուն Փաշային գրեցին եւ խնդրեցին որ՝ Սուրէնեան ապահով Ձէյթուն դարձնեն. մեր մօտ ոչ հաւատ մնաց ո'չ կրօն: Փաշան ակամայ, ստիպուեցաւ թող տալ

Մարտիրոս իշխանը, փառաւոր զգեստ մը հագցնելով եւ ձի մըն ալ ընծայ տալով անոր եւ պատիւներով ղրկեց Զէյթուն: Զէյթունցիք ալ թուրք պէյերը արձակեցին՝ չաբաթ մը խնջոյքներով պատուասիրելով զանոնք եւ խաղաղութեամբ վերադարձնելով Մարաշ: Զէյթունցիք կ'աւազեն:—

Թօսուն Փաշա Սուրէնեանը գալտրտը,
Մահպուս իտիւպ, զընտանտնա էնտիրտի.
Զընտանտան չըգարըպ, աթա պիմտիրտի
Խիլաթլայապ վաթանընա կէնտէրտի:

Տէյի Քէշիշ, Սուլթան Մուրատ Դ-ի հրովարտակին նորոգութիւնը Զէյթունի կոիւններուն, քաղաքական եւ այլ վարչական գործերուն եւ գործունէութեանց մէջ մեծ դեր ունեցած է եկեղեցական դասը: Ուր որ աշխարհական մարդը ընկրկած է, եկեղեցականը օգնութեան հասեր է: Այս եղած է դարերէ ի վեր հայուն ճակատագիրը: Ուր որ սուրը անգոր կը մնար, խաչը իր գորութիւնը ցոյց կու տար: Հայաստանեաց եկեղեցին անբաժան կերպով ընթացեր է հայ պետութեան կողքին, եւ անոր անկումէն յետոյ ալ փոխարինած է զայն եւ վարած հայուն քաղաքական կեանքը: Աշխարհական իշխանին մօտ բազմած է եկեղեցւոյ պաշտօնեան: Թէեւ երբեմն այս դրութիւնը ունեցեր է իր անպատեհութիւնները, սակայն առ հասարակ եղած է օգտակար եւ անհրաժեշտ, միայն թէ իւրաքանչիւրը իր կոչումն ու պարտականութիւնը ըմբռնէ եւ զայն չարաչար չգործածէ: Անձնուէր եկեղեցականներու շարքին մէջ եզական եւ կարեւոր տեղ մը կը բռնէ զէյթունցի Ղափուղը Պէօյիւքեան Տ. Օհան Քահանան, որուն ցեղը յետոյ կոչուեցաւ Ղայ Պէօկիւնք կամ Ղարպէսինք, եւ կամ Օգգօ իրեցոնք: Մինչեւ 1914, այս գերդաստանէն ընտանիքներ կ'աւարէին Ղարդալար թաղը, եւ իրենցմէ կը յիշեմ ուսուցիչներ եւ քահանաներ: Տ. Օհան, իր համարձակ եւ յանդուգն բնաւորութեան համար կոչուած է Տէյի Քէշիշ (խեւ տէրտէր)³²:

Նախորդ էջերով տեսանք որ՝ Սուլթան Մուրատ Դ-ի հրովարտակին համաձայն, Զէյթուն տարեկան 15000 դահեկանի հարկ մը ուղղակի Պոլիս կը ղրկէր: Եւ սակայն ժամանակները եւ վեհապետները փոփոխելով, թէ՛ կեդրոնի կառավարութիւնը եւ թէ՛ Մարաշի տեղական կառավարութիւնը յաճախ ուղեցին ջնջել այդ դրութիւնը: այդ տուրքը բազմապատկել եւ Մարաշու կառավարութեան վճարել: Եւ այս պատճառով շատ անգամներ ալ փաշաներ եկան Զէյթուն բանակներով: Պարտուեցան եւ ամօթահար քաշուեցան: Ուստի այս դժուարութեանց միանգամ ընդ միշտ վերջ տալու համար, զէյթունցիք ուղեցին վե-

րոյիշեալ ծանօթ հրովարտակը, զոր ժամանակին Հէթում քահանան ձեռք բերած էր, նորոգել տալ Սուլթան Մահմուտին:

1833-ին այս տուրքի խնդիրը նորէն թունաւորեց Զէյթունի յարաբերութիւնները Մարաշի հետ եւ խորհուեցաւ դիմել Պոլիս՝ Սուլթանին: Զէյթունցիք Տ. Օհանէն խնդրեցին որ Պոլիս երթայ եւ ինքը անձամբ կարգադրէ հրովարտակին նորոգութեան հարցը: Քաջ հայրենասէր Տ. Օհան սիրայօժար յանձն առաւ երթալ Պոլիս իր հետ տանելով հրովարտակը:

Երբ հասաւ մայրաքաղաք, գնաց Պատրիարքարան, ողջունեց ժամանակին Ստեփան Աղաւնի կոչուած Պատրիարքը: Սակայն այս վերջինը առանց փոխադարձ ողջոյնի կը սկսի յանդիմանել քահանան, որպէս ապստամբապետ, (որովհետեւ Տ. Օհանի ինչ նպատակով եկած ըլլալը պատրիարքարանի ծառաներէն իմացած էր): Բայց, Հայր Սուրբ, կ'ըսէ Տ. Օհան, ես հայ քահանայ մըն եմ, եկած հոս, իմ ժողովուրդիս իրաւունքը պաշտպանելու: Պատրիարքը զայրացած կը պոռայ անոր երեսին. վիրաւորուած մանաւանդ այդ «Հայր սուրբ» որակումէն եւ կ'ըսէ. «Պատրիարքի մը հայր սուրբ կ'ըսեն, անպիտան, դուն բնաւ քաղաքավարութիւն չունիս: Դուն բնաւ քահանայ չես եւ ժողովուրդդ ալ քրիստոնեայ չէ, Քրիստոնէին չի վայելը զէնք կրել եւ սուր գործածել թագաւորին դէմ, որ Աստուծոյ փոխանորդն է»: Վերջ ապստամբ չենք, կ'ըսէ Տէր Քէշիշ, կը պաշտպանենք մեր արդար իրաւունքը Սուլթան Մուրատէն մեզի շնորհուած առանձնաշնորհումը, այժմ մեր ձեռքէն կ'ուզեն խլել բռնի եւ սուրի զօրութեամբ, ասոր համար կը պարտաւորուինք մենք ալ ի հարկէ զէնք կրել, եթէ այսպէս չընէինք, Զէյթունը շատոնց հիմնայատակ կործանած էին, մեր անունն ալ ջնջած՝ երկրիս երեսէն: Իր անձն եւ իրաւունքը պաշտպանելը ապստամբութիւնն է»: Ու կը շարունակէ Տ. Օհան. «Երբ ներս մտայ, ես ողջունեցի զքեզ, դուն, սակայն, առանց իմ ողջոյնս ընդունելու եւ այս երկար ուղեւորութեանս մասին առանց բառ մը հարցնելու, սկսար նախատինքներ թափել զլիսուս, բայց դուն իմ աստիճանին համապատասխան անունն ալ չտուիր, քահանայութիւնս անգամ ուրացար, մինչդեռ գիտես թէ ես Զէյթունի եկեղեցիներուն աւագ քահանան եմ եւ տարիքով քեզմէ ալ երկացոյն, եւ մանաւանդ որ հասարակաց վերաբերող խնդրի մը համար եկած եմ, եթէ այսպէս վերաբերուելով քու պարտականութենէն կ'ուզես խուսափիլ եւ Ֆէրմանի նորոգութեան գործը ջուրը ձգել, ըսէ՛ ինձի որ զլիսուս ճարը նայիմ: Ու ճանչնաս թէ ո՞վ է Տէյի Քէշիշը»:

Տէյի Քէշիշի բարկութիւնը չափ չունէր, մինչ Պատրիարքը բարապաններուն կը հրամայէր որ սենեակի մը մէջ փակեն սա խենթը,

առանց հաց եւ ջուր տալու: Եսասխմիները-բարապանները դժուարութեամբ յաջողեցան Պատրիարքի հրամանը կատարել: Կը մաքառէր ան առիւծի մը պէս, զոր կ'ուզէն գառազեղի մը մէջ փակել: Պոլսոյ ծանօթ ազգայիններէն Թիւթիւնճեանները կ'իմանան եւ կու գան կը հանեն զինքը եւ կը տանին իրենց տունը: Խորհուրդ կու տան Տ. Օհանի որ՝ անձամբ դիմէ Սուլթանին, առանց Պատրիարքարանի միջամտութեան, որովհետեւ Պատրիարքը եթէ նոյնիսկ աշխատելու ալ խոստում տայ, կ'ըսեն իրեն Թիւթիւնճեանները, կրնայ խնդիրը ամիսներով, նոյնիսկ տարիներով ձգձգուիլ եւ Զէյթուն կրնայ մեծ վնասներու ենթարկուիլ: Սակայն անձամբ ներկայանալով, կրնայ ըլլալ որ կեանքդ վրայ տաս կ'ըսեն իրեն: Ժողովուրդին համար պատրաստ եմ կեանքս վրայ տալու կը պատասխանէ Տէյի Քէչի: Թիւթիւնճեանք կ'ուզէին Տ. Օհանի հազուադէպ փոխել եւ Պոլսոյ քահանաներուն պէս հազուեցնել, որովհետեւ ան հազած էր չուխայ չալվար, մէջքը լահորի շալ, ոտքին՝ կիւլ շէֆթէյի կոշուած Այնթապու կարմիր եէմէնի-կօշիկ, գլուխը մեծ Ֆէս մը, փաթթուած թանկագին լահորի շալ մը - փոշու մը: Բայց մերժեց Տէյի Քէչի, ըսելով թէ՝ Աստուած իմ հազուադէպ պիտի չնայի, այլ իմ սրտին, եւ փափաքս պիտի կատարէ: Երեք օր վերջը, աղերսագիր մը ձեռքը, Տ. Օհան կ'երթայ Սուլթան Պայպիտի հրապարակը, ուրկէ Սուլթանը պիտի անցնէր մզկիթ երթալու համար: Քիչ յետոյ, հոն հաւաքուած ահազին բազմութիւնը սկսաւ շարժիլ ծովու ալիքներու նման, պերճազգեստ հեծեալ պաշտօնակալներու ետեւէն երեւցաւ Սուլթան Մահմուտի վեհափառ դէմքը, որ խորին տալանդութիւն կը թողուր բազմութեան վրայ: Տ. Օհան բարձր ձայնով աղաղակեց՝ «Փատիշահըմ նազար գըլ արզուհայրմա»: Ամէն կողմէ «սուս օր» պոռացին, եւ քանի մը ապտակ իջեցուցին քիթին, բերնին: Բայց իր աղաղակը արդէն հասած էր Սուլթանին: Սուլթանը ձին կեցնելով, հրամայեց իր մօտը բերել զինքը: Բազմութիւնը ճամբայ բացաւ, յանդուգն քահանային առջեւ: Տ. Օհան, մօտեցաւ Սուլթանին, համբուրեց անոր թղանցքը, եւ բարձրացուց աղերսագիրը: Կայսրը ստորագրութեան նայելով հարցուց. «Իմզանըզ փափազ տրը, սիզ սահիհէն փափազ մը սընըզ»: Այո, Վեհափառ Տէր, ծառանիդ խենթ Տէրտէր կը կոչուի, «12 տարի շարունակ 1200 ձիաւորներով ծառայած է Տէրութեանս Բերիոյ, Ատանայի, Իկոնիոնի եւ Պաղատաի կողմերը տէլիպաշուիւն ընելով/տեսակ մը զինուորութիւն/»: Այդ միջոցին զինքը տեսնողները թիւրքմէններու ցեղապետ մը կը կարծէին իր հազուատովը եւ կերպարանքովը: Սուլթանը գոհ մնաց Տ. Օհանի խօսքերէն եւ հրամայեց սուսերակիր երեք փաշաներու, որ զայն ձիու վրայ նստեցնելով պա-

տրիարքարան տանին. «Այս մարդը շատ սիրեցի, ըսաւ, իր համարձակախօսութեանը համար»: Խոստացաւ միանգամայն որ իր խնդիրքը պիտի կատարուի: Աղանի Պատրիարք կ'ապշի, երբ Տէր Օհան պատրիարքարան կու գայ փաշաներու առաջնորդութեամբ եւ հետեւորդներու խումն բազմութեամբ մը. «Մեր Վեհափառ տիրոջ կողմէ կը յանձնարարենք որ հիւրասիրէք այս ազնիւ քահանան», ըսին փաշաները: Պատրիարքը ակնածանքով խոնարհեցաւ եւ Տէյի Քէչի ճակատը համբուրելով զայն իրմէ վեր նստեցուց: «Սրբազան Հայր, ըսաւ Տ. Օհան, երբ առաջ Քրիստոսով խօսեցայ քեզի, աւարդեցիր զիս եւ բանտարկեցիր, իսկ հիմա երբ աշխարհական իշխանութեան կողմէ կու գամ, կը համբուրես դիս եւ կը պատուես»: Պատրիարքը կարմրեցաւ իր վարմունքին համար եւ խնդրեց որ ան- յիշաչար ըլլայ: Երեք օր յետոյ Սուլթան Մուրատի նորոգուած հրփարտակը Պատրիարքարան հասաւ յատուկ պաշտօնեայի մը ձեռքով: Սուլթան Մահմուտ ոսկեկուռ խաչ մըն ալ նուիրած էր Տ. Օհանին եւ բարեւները կը ղրկէր Զէյթունի բնակիչներուն:

Այս բոլորէն ոգեւորուած՝ Պոլսոյ հայութիւնն ալ մեծ համակրանք ցոյց տուաւ անոր, դրամական ճոխ նուէրներ ալ ընելով իր եկեղեցւոյ յինութեան համար, ինչպէս նաեւ եկեղեցական զգեստներ եւ իւղաբերից ձեռագիր Աւետարան մը, որուն առջեւ հետեւեալ ձօն- յիշատակ Թիւթիւնճեանց տոհմի Կ. Պոլսեցւոյ, 1833, Սեպտեմբեր 14:

Նորոգուած հրփարտակով եւ ստացած նուէրներով Տ. Օհան վերադարձաւ Զէյթուն, նախկին Ս. Սարգիս մատուռին տեղ կանգնեց գեղեցիկ եկեղեցի մը 1835-ին, Եւթովկիացի ճարտարապետներու ձեռքով:

1838-ին ներկայացաւ Մարաշի մէջ Եգիպտոսի փոխարքայ Իպրահիմ Փաշային, որ ամբողջ Սուրիան նուաճած էր եւ մինչեւ Տաւրոսի լեռները հասած: Փաշան կը համակրի Տէյի Քէչիին եւ իր ձեռքով սուր մը կը կապէ անոր մէջքը եւ զայն կը նշանակէ եւ կ'անուանէ իր ներկայացուցիչը Զէյթունի մէջ:

Տէր Օհան կը վախճանի 1858-ին, յանկարծամահ, 95 ամեայ հասակին: Կը թաղուի մեծ շուքով, իր չինել տուած Ս. Սարգիս եկեղեցիին մէջ, թողլով անբասիր եւ զիւցազն եկեղեցականի մը համբաւը: 60 տարիներ իր կեանքը անցուցած էր պատերազմներու մէջ հայրենիքի սիրոյն: Իր նշանաբանն եղած էր «Հէջ մարգօյ մի վախէք» այսինքն բնաւ մէկէն մի վախնաք: Քարոզի ատեն, փիլոնին տակէն դուրս հանելով ձախ ձեռքը եւ աջ ձեռքին երկար մատները

ձախ դաստակին վրայ զարնելով կ'ըսէր. «Զօր պիլէքտէ», այսինքն ուժը միայն կարեւորութիւն ունի աշխարհի վրայ:

Իր կեանքին մէջ, երբեք ոգելից ըմպելի չէր գործածած եւ շատ մը հանդիսութեանց եւ խնջոյքներու երբ բաժակաճառեր կ'արտասանուէին, գաւաթ մը պաղ ջուր կ'առնէր ձեռքը. «Եկեղեցւոյ պաշտօնեային վայել չէ, կ'ըսէր, օղի կամ գինի գործածելը: Իր մահուան վրայ զմայելի բանաստեղծութիւն մը յորինած է զարապալ Օղլու աշուղը, որ կը պատկերացնէ իր կեանքի գիծերը, որմէ տուն մը մէջ կը բերէ մեր հայրենակիցը՝ Տ. Գէորգեան, որուն թարգմանութիւնն է.

Շրջակայքն ամեն իր անունէն կը պատկառէին,

Կը քաշէր սուրը, խիզախ՝ ընդդէմ բշտամիին,

Ոտքի վրայ աւանդեց Բարձրեալին իր հոգին,

Զէյթունի պաշտպանը հօր ու գոռ Տէլի Բէշիշ:

Տէր Օհան, կամ Տէյի Քէշիշ, Ատանայի մէջ, 1820-ին, Սոյի կիրակոս կաթողիկոսի կոնդակով, հանգանակութիւն մը կ'ուզէ ձեռնարկել իր թաղի Ս. Սարգիս եկեղեցիին չինութեան համար: Այդ գործով կը ներկայանայ Ատանայի ծանօթ ազգայիններէն՝ Պզտիկ Օղլուի եւ տեղւոյն քահանային: Լաւ ընդունելութիւն մը կ'ընեն իրեն եւ եկեղեցւոյ բնէն կոչ կ'ընեն ժողովուրդին, ի նպաստ սկսուելիք հանգանակութեան: Արդիւնքը՝ սակայն երբ 500 զրուշ կը ներկայացնեն Տ. Օհանի, կը դառնանայ, արժանապատուութիւնը վիրաւորուած կը զգայ եւ կը մերժէ այդ խեղճուկ գումարը: Ու կը մտադրէ ինք անձամբ շահիլ պէտք եղած դրամը: Կը լսէ որ Տէյի օճաղըներու համար թուրք կառավարութիւնը կամաւորներ կը գրէ: Աքեմը կը փոխէ. կը զինուորագրուի, խնդրելով որ արձանագրող պաշտօնեան գաղտնի պահէ իր կրօնքը եւ քահանայ մը եղած ըլլալը: Տ. Օհան, Երուսաղէմ ծածկանունով կը մասնակցի կարգ մը մրցումներու եւ յաջող հանդիսանալով կը բարձրանայ հարիւրապետի աստիճանին, յետոյ զանազան քաջագործութիւններով կը ստանայ հազարապետի աստիճան, եւ կը կոչուի Ֆարհատ, այսինքն Պահատուր, դիւցազն, թերեւս զայիմ: Իբրեւ Տէյի-Պաշի, իր զինուորներու գլուխն անցած, կը հպատակեցնէ վայրենի ցեղեր, որոնք մինչեւ այն ատեն անզուսպ, իրենց ոչխարները կը քշեն եղեր գիւղացիներուն արտերը, գոչելով ձեր արտերը վերցուցէք մեր ոչխարներուն առջեւէն: 12 տարի այսպէս կը գործէ Տ. Օհան, Ֆարհատ պին պաշի անունով, իր վրայ կը յորինուին իր քաջութիւնները, արշաւանքները պատմող երգեր, եւ սակայն ոչ ոք կը կասկածի թէ՛ այդ դիւցազնութեանց հեղինակը գէյթուների քահանայ մըն է:

Տէր Օհան, 12 տարի որպէս Գիթախումբի 1200 Եէնիչերիներու

Ֆարհատ անունով հազարապետ Հալէպ, Ատանա, Գոնիա, Պաղատա քաջագործութիւններ ընելէ յետոյ, կը հրաժարի, Սիս կու գայ, կը ներկայանայ Տ. Կիրակոս կաթողիկոսին, կը պատմէ ամէն ինչ եւ անկէ կը ստանայ քահանայական պաշտօնը շարունակելու հետեւեալ կոնդակը.՝ Առ Զէյթունի Առաջն. Տ. Մարտիրոս Եպս.

Սիրելին մեր ի Քրիստոս,

Այսու Հայրապետական կոնդակաւ ազդարարեմք Ձեզ վասն քահանայի սիրելւոյն իմոյ, քաջամարտիկ զօրավարին՝ Տ. Օհան Ղափուղը Պէօլիկէնց, զի ի ժամանիլ առ Ձեզ, սիրով ընկալցէք զնա, որպէս անառակ որդի. «զի կորուսեալ էր գտաւ»: Մի միայն պատուիրեալ է նմա ապաշխարել աւուրս քառասուն, ծոմապահութեամբ եւ սաղմոսիւք: Ի յրումն քառասուն աւուրց, պատարագ մատուցէ ի սրբավայրի վանուցդ: Եւ ապա հրամայեալ է նմա իջանել ի Զէյթուն յեկեղեցին Ս. Սարգսի թաղին իւրոյ, անդ քահանայական պաշտօն կատարեսցէ մինչեւ ցմահ: Սովիմք բաւականանալով ողջ լերուք տերամք ի Քրիստոս:

Գրեցաւ կոնդակս

Ի թուին Հայոց ՌՄԿԴ

Հոռի ամսոյ իՌ.

Հայոց յամի փրկչին 1814 Հոկտ. 1

Խ. սպասաւոր

Ս. Լուսաւորչայ Աջոյ

Կիրակոս Ա. կաթողիկոս

Տանն Կիլիկիոյ

Տ. Օհան Զէյթուն իր հետ կը բերէ իր ընկերներ չնգուցի երկու հայերը Արթին եւ Խաչօ: Արթին ի վերջոյ իր քաղաքը՝ Չնգուշ կը մեկնի, իսկ Խաչօ կը մնայ Զէյթուն, հոն կ'ամուսնանայ: Անոր սերունդը կը բնակէր Պօզպայիլ թաղը: Անոնցմէ Խաչօ անունով շատ կտրիճներ ելած են: Անոնք կոչուեցան Աշնան Պարտիզիք (էշնան պարտէզինք): 1910-ին տակաւին ես կը յիշեմ անոնցմէ ողջ էր էշնոն Պարտիզեք Սարգիսը:

Թէմիր Աղա եւ Տ. Օհանի գործերէն դրուագներ.՝

Զաքարիա Պատրիարքին օրով, Տէյի Քէշիշ, 47 ուխտաւորներով, որոնց 17-ը կիներէ կը բաղկանար, Երուսաղէմ ուխտի գացած ատեն, Դամասկոսի ճամբան 70 հոգինոց էնէզէ արարներու աւազակախումբի մը կը հանդիպի, որ կը փորձէ ուխտաւորները կողոպտել: Տէյի Քէշիշ անոնցմէ 3 հոգի կը սպաննէ, 5 հոգի ալ գերի կը բռնէ, անոնց մէջ ըլլալով իրենց պետը՝ Շէյխ Սէյտի: Տէյի Քէշիշի ձին այս կռիւին մէջ կը ճաթի, կը մեռնի, բայց Դամասկոսի կուսակալը կը վարձատրէ զինքը նոր ձի մը տալով իրեն, ինչպէս նաեւ ոսկեթել զարդերով վերարկու մը: Զէյթունցիք Երուսաղէմի մէջ ալ կռիւ մը կ'ունենան

յոյներուն հետ, Ս. Գերեզմանին շուրջը եւ կը յաղթեն: Զաքարիա Պատրիարք որպէս վարձատրութիւն այս յաղթանակին, կոնդակով ծաղկեայ փխրոն մը կը նուիրէ: 1852-ին ուխտագնացութենէն վերադարձին, Մարաշու մէջ, Միւթէսարըֆ Շքոտրացի Մուսթաֆա Փաշայի հրամանով կը ձերբակալուի եւ բանտարկուի, որովհետեւ գէյթունցիք մերժած էին 150000 դահեկան յետնեալ տուրքը վճարել եւ թիւֆէնք՝ ճի պաշի Հասան Աղան նախատական կերպով մը, պարսպ վերադարձած էր Մարաշ: Զէյթունցիք անոր առջեւը դրամի տեղ, երկաթի կտորներ, պալտ, եւայլն լեցուցած էին եւ ըսած էին թէ՛ մենք դրամ չունինք եւ ահա մեր ունեցածը, ա՛ռ եւ գնա՛: Հասան Աղան բարկացած՝ մեկնած էր Մարաշ: Ատոր վրայ էր որ կառավարիչ Մուսթաֆա Փաշա հրաման հանած էր Մարաշի բոլոր գայմազամութիւններուն որ՝ եասագ հանեն, եւ ուր որ գէյթունցի տեսնեն, գտնեն, բռնեն եւ հսկողութեամբ Մարաշ ղրկեն: Զէյթունցիք այդ մասին Տ. Օհանի լրատար ղրկած էին, որ վերադարձին Մարաշ չհանդիպի: Սակայն փայկը՝ լրատարը ճամբան չէր հանդիպած Տ. Օհանի եւ անիկա ուղղակի ծուղակը ինկած էր:

Յուզումը մեծ եղած էր Զէյթունի մէջ, եւ բողոքներ ղրկուած էին Պոլիս, բայց անօգուտ: Այն ատեն Զէյթունի աղաները տկարութիւն կեղծեցին եւ նամակով մը խնդրեցին Մուսթաֆա Փաշայէն որ՝ այդ ատեն անուն հանած երզնկացի զօրապետ, Թիւֆէնքճի Պաշը Թէմիր Աղայի հրամանատարութեամբ 60 հեզելագօրքէ բաղկացած ոյժ մը, հետն ալ Տէյի Քէշիշը ղրկէ Զէյթուն, որպէսզի քահանան եւ իրենք ալ միասին աշխատին համոզել ժողովուրդը պահանջած տուրքը վճարելու համար: Փաշան՝ իսկոյն Թէմիր աղան, Տէյի Քէշիշին հետ 60 հեծելագօրքով Զէյթուն փութացուց: Իշխանները Թէմիր աղան Զէյթունի Պէրիտ լեռը զօռանքի օգափոխութեան տարին, որպէսզի մինչեւ այդ դրամին հաւաքուիլը այնտեղ զուարճանայ: Զէյթունցիք օրական 5 ոչխար կը մորթէին ի պատիւ իրեն: Վերադարձին ան տեսաւ որ միայն 15000 դրուշ պատրաստեր են, անկէ անդին աւելի բան տալ չեն ուզեր: Բորբոքեցաւ Թէմիր Աղա: Այն ատեն իշխանները կանչեցին Տ. Օհանը եւ խնդրեցին որ՝ ինքը կարգադրէ զօրապետին հաշիւը, քանի որ չ'ուզեր իրենց հետ համաձայնիլ: Տ. Օհան բարեխղճութեամբ կատարեց այդ պարտականութիւնը: Թէմիր աղայի ներկայացաւ եւ ըսաւ.՝ Դուք զիս 3 ամիս բանտարկեցիք Մարաշի մէջ, օրական մէկ ոսկիէն կ'ընէ 90 ոսկի, տոկոսն ալ 10 ոսկի՝ ընդամէնը 100 ոսկի, նոյն չափ մըն ալ ծախս եղած է քեզի եւ քու հետեւորդներուն այս երկու ամսուան ընթացքին ձեր վայելած զբօսանքներուն համար, կ'ըլլայ 188 ոսկի: Այս գումարը վճարելէ յետոյ

կրնաք այս տեղէն մեկնիլ: Այդ երկու ամսուան ընթացքին մինչ Թէմիրը կը պտտոցնէին Զէյթունի ամառանոցները, ժողովուրդը ցեղեկը գիշերին խառնելով՝ Ալպիստանէն, Կէօկսիւնէն, Եարփուղէն, Մարաշէն, մըլիւնի պէս Զէյթուն կրած էր ցորեն, դարի, աղ, օճառ եւ ուրիշ կենսամթերք, ոեւէ պատերազմի մը հաւանականութիւնը ի մտի ունեցած: Թէմիր Աղան իշխաններու առաջարկին վրայ, նախապէս արդէն 40 հեծելագօրքը ղրկած էր: Այժմ Թէմիր Աղան նեղ դրութեան մէջ էր, կը նայէր իր շուրջը, բոլորն ալ յոտից ցզլուխ զինուած էին, սկսաւ դողալ, կարծես լեզուն բռնուած էր, թոթովելով՝ Փափագ էֆէնտի, ըսաւ, ես վրաս միայն 3 ոսկի ունիմ, դեռ նոր Մարաշի մէջ պաշտօն ստացած էի: Վնաս չունի, ըսաւ Տ. Օհան, մենք կը սպասենք՝ փաշային կը գրես, որ այդ դրամը ղրկէ: Թէմիր Աղա բերդը բանտարկուած մնաց մինչեւ որ Մուսթաֆա Փաշան 200 ոսկի ղրկեց: Այդ դրամին կէսը նուիրեցին իշխանները Զէյթունի եկեղեցիներուն, կէսն ալ Տ. Օհանի տունն, որպէս հատուցում: Թէմիր աղան, որ թմբուկով, զուռնայով եկած էր Զէյթուն, այժմ ճամբայ կ'իյնար լուռ ու տխուր, եւ ակնարկ մը ուղղելով իշխաններուն ըսաւ.՝ Ձեր քաղաքը մտայ թմբկահարութեամբ իսկ հիմա կը մեկնիմ լուռ ու մունջ: Եթէ կ'ուզես նորէն զարնել տալ թմբուկը, ըսին իշխանները, ատոր համար արգելք չկայ:

Օր մը Տ. Օհան, իր Տէյի պաշտութեան ատենները, իր 1200 զօրքով երբ Անտըռնի Նիւրփէտ գիւղը զօրք հաւաքելով զբաղած էր, կը տեսնէ որ՝ տեղւոյն թուրք գիւղապետը 100-ի չափ հայ գիւղացիներ հաւաքած է եւ անոնց խոտ հաւաքել կու տայ իր տէլիներուն ձիերուն համար: Տ. Օհան կը մտրակէ գիւղապետը եւ կը հրամայէ որ ազատ թողու այդ խեղճերը, որովհետեւ կենսաւորներուն ժողոված խոտը ընդունելի չէ, իր տէլիները պէտք է հիւրասիրութիւն միւսյիմաններուն կողմէ միայն եւ այդպէս ալ կը կատարուի:

Մարաշի մէջ հայ վարդապետ մը կը տաճկանայ: Հայեր շատ կը խնդրեն որ ետ կենայ այդ միտքէն, սակայն կարելի չ'ըլլար: Ուստի Մարաշու հայ մեծերը կը գրեն եւ կը խնդրեն Զէյթունի Առաջնորդէն, որ ուրացողը վանք բերել տայ եւ ետ դարձնէ այդ չար միտքէն: Անոնք կը գրեն նաեւ թէ՛ երկու օրէն ուրացողը Սու-Չաթըի գծով կեսարիա պիտի մեկնի: Առաջնորդը Տէյի Քէշիշ կը ղրկէ Սու-չաթը, եւ կը պատուիրէ իրեն, որ եթէ իր կրօնքին չգառնայ, անոր կեանքին վերջ տայ: 30 կտրիճներով Սու-Չաթը կը հասնի Տ. Օհան, Զէյթունէն 6 ժամ արեւմուտք: Անդիէն հարիւրներով թուրք բազմութեան մը մէջ է ուրացողը, Տէյի Քէշիշ սուրը կը քաշէ, կը կենայ ճամբուն մէջտեղ, կարաւանին առջեւ: Յոյց տուէք, կ'ըսէ ան, հաւատուրացը,

եթէ պահէք ձեր բոլորն ալ կը սպաննեն: Ժարահատ ցոյց կու տան ուրացողը: Տ. Օհան կ'աղաչէ, ոտքը ձեռքը կ'իյնայ որ ետ կենայ այդ մոլորանքէն, զանազան խոստում եւ նուէրներ առաջարկելով: Ժարը չի գտներ: Չայն կը կապէ մախրոտ մայրի ծառի մը եւ կ'այրէ զայն թուրքերուն ներկայութեան: Զէյթուն կը դառնայ կը պատմէ եղելութիւնը իշխաններուն, ճակատը կը համբուրեն, Տ. Յակոբոս Եպս. Պոստանեան պատարագ մատուցանել կու տայ Տ. Օհանի:

Զէյթունի այն ատենուան առաջնորդը՝ Սարգիս Եպս. Խանդթորեան եւ չորս իշխանները, Տ. Օհանը կը ղրկեն Ֆոնուզ, 1840 Դեկտեմբերին, որ երթայ Ֆոնուզէն տուրք պահանջող, տէրէպէյի՝ Գայիշ Օղլու Սիւլէյման Աղան, որ 30 հեծեալներով արշաւեր էր Ֆոնուզ, բռնէ եւ Զէյթուն բերէ: Տ. Օհան 20 տղաներով կը հասնի եւ Գայիշ Օղլուն եւ հետեւորդները անձնատուր կ'ըլլան: Շղթայակապ կը բերուին Զէյթունի վանքը եւ կը բանտարկուին: Երեք օր վերջը մահմետականի երդումով, կը խոստանան ինք եւ իր մարդիկը թէ անգամ մըն ալ Ֆոնուզ ոտք չէին կոխեր: Թող կը տրուին, իր մարդոց ձիերը կը դրանք զէյթունցիք եւ անոնք հետիտն կը մեկնին, միայն իրենց պետին՝ Գայիշ Օղլուի ձին կու տան իրեն: Այս առթիւ Տէյի Քէշիշ, Զէյթունի վանքը գտնուող Նիկողայոս Եպիսկոպոսին բարձր ձայնով սա խօսքը կ'արտասանէ Ֆէրման տէրման իսթէր: Կը յիշեմ Խրիմեան Հայրիկի երկաթէ շերեփի պատմութիւնը: Զէյթունցիք, իբրեւ առածի կարգ անցած կ'ըսէին. «Ֆէրման տէրման իսթէր, տէրման, տէրման»:

Աղճատաղի պատերազմը--

Հրովարտակը նորոգուած ըլլալով, Զէյթունի վիճակը բաւական բարւոքուած էր: Սակայն այս խաղաղութիւնը չէր կարելի որ երկար տեւեր: Եզիպտական խնդրին լուծումէն յետոյ, թուրք կառավարութիւնը դարձեալ ուշադրութիւնը կը դարձնէր փոքր ազգերու վրայ, գոնէ զանոնք կարենար իր ուժով, իր ձեռքին տակ պահել: 1835-1860 զէյթունցիք կրկին կը ստիպուին քանի մը կարիւր կռիւներ ունենալ, անոնցմէ մէկն է Աղճատաղի պատերազմը, սակայն այս անգամ ոչ թէ թուրքին դէմ, այլ անոր կողքին: Սուլթան Մէհմետ օրով, Զէյթունէն 27 ժամ հեռուն, Աղճատաղի քիւրտերը ապստամբած էին եւ կը նեղէին չրջակայ թուրք գիւղերու բնակիչները: Թուրք գիւղացիները, կը զանգատին Հալէպի կուսակալին եւ 1840-ին, մեծ վէզիր՝ Հաֆըզ Ալի Փաշա, կու գայ Աղճատաղը նուաճելու: Քիւրտերը բերդին մէջ ամրացած էին, եւ թուրք զօրքը՝ չէր համարձակեր յարձակում դրածել: Հաֆըզ Ալի Փաշա Զէյթունի հայերը իրեն օգնութեան կը կան-

չէ, ո'չ միայն անոնց քաջութենէն օգտուելու դիտումով, այլ նաեւ դրացի ժողովուրդներու միջեւ ատելութեան եւ թշնամութեան սերմեր ցանելու չար մտքով: Տէյի Քէշիշ 500-նոց գունդ մը քաջերու գլուխն անցած, իր որդւոյն Սարգիսի հետ, կը յաջողի նուաճել Աղճատաղը: Այն տեղ կ'իյնայ սակայն իր մէկ հատիկ այդ տղան: Հաֆըզ Փաշա, իւրաքանչիւրին երկերկու ոսկի եւ մէկական ձեռք ճերմակեղէն նուիրելով կը վարձատրէ Զէյթունի կռուողները: Եւ տեսնելով անոնց քաջութիւնը կ'ըսէ. «Աւելի լաւ է որ Տէրութիւնը Զէյթունէն 1000 կռուող մարդ ունենայ քան թէ 20000 թուրք զինուոր»:

Խասէքի պահանջումը-- Աղճատաղի դէպքէն հազիւ թէ տարի մը կ'անցնի, 1841-ին, Խասէքի անունով զինուորական պաշտօնեայ մը 500 հեծելազօրքով Զէյթուն կու գայ իբրեւ հիւր: Զէյթունցիք պատուով կ'ընդունին զինքն եւ իր մարդիկը 2-ական հոգի կը բաժնեն տուները: Բայց շատ անցած Խասէքի իր գոյնը դուրս կու տայ, հինգ տարիներու յետեալ, անվճար տուրքը կը պահանջէ, երեք օրուան մէջ: Զէյթունցիք առաջմ անպատեհ կը համարեն հակառակիլ անոր, եւ երեք օրուան մէջ բաւական քանակութեամբ երկաթ, պայտ կը հաւաքեն մէջերնին ու կը բերեն Խասէքի, որպէսզի ընդունի, իրենց ունեցած պարտքին փոխարէն եւ ընկալագիր մը ստորագրէ տայ իրենց, ըսելով թէ՝ դրամ չունին, իրենց ունեցածը այս է: Խասէքի սակայն կը մերժէ եւ միայն հնչուն դրամ կը պահանջէ: Չորս իշխաններ որ այդ պահուն իր քովն էին, ունեցածնիս այս է, ուզես առ, ուզես մի՛ առներ ըսելով կը մեկնին, ազդարարելով միանգամայն իրեն, որ դուրս չելլէ ճորովհետեւ, ըսին, մեր երիտասարդները այս տեղ թուրք չեն տեսած, ծանր պիտի թուի իրենց քու ներկայութիւնդ, եւ առաջին հանդիպողը պիտի սպաննէ քեզ: Թէեւ շատ բարկացաւ Խասէքի, սակայն ոչինչ կարող էին ընել, թէ՛ ինքը եւ թէ՛ իր զօրքը անոնց ձեռքին մէջ էին: Զղջաց որ երկաթները չէր առած, այժմ անոնք ալ ձեռքէ ելած էին: Կը փափաքէր որ՝ իշխանները գային եւ ապահով կերպով զինքը իր տեղը դարձնէին: Բայց անոնք, իրենց տեղ մէկ քանի հրոսակապետներ ղրկեցին՝ Անիթէրէկ, Գարա-Քիւլազ, Մէրկէնեան Աղճապէկ, Ղրանֆիլեան Քէօսէ Փանոս (ապագայ Զէյթունի առաջնորդ՝ Յովհաննէս Մ. Վրդ. Գրանֆէլեանի հայրը), Գափուզբան, Գարա Տիւման, Կիւճիւկ Մնացական եւ Վէզիր Օղլու անուններով: Ասոնք իշխաններուն կողմէ յայտարարեցին եւ ըսին՝ «Մեր չորս իշխաններուն հրամանն այն է որ՝ հիմա իսկ ձիեր հեծնելով, այս տեղէն հեռանաք, մենք ձեզ ապահով կերպով մինչեւ Մարաշու կամուրջը պիտի հասցնենք, իսկ մեզմէ իւրաքանչիւրին

տասական ոսկի պիտի վճարէք որպէս պաշտպան-ուղեկից, որովհետեւ քու մարդիկդ կ'ընդունին ճամբով Մարաշ դրկած էինք, ձեր հրոսակները զանոնք կողոպտած են: Լաւ է որ դուն ալ անոնց վիճակին չենթարկուիս: Մարդը պարտաւորուեցաւ ակամայ տասնական ոսկի վճարել ամէն մէկուն, որպէսզի անոնք ալ զինքը ճամբան չկողոպտեն: Ինք եկած էր Ձէյթունը կողոպտելու, սակայն ինքը կողոպտուած եւ ամօթահար հազիւ գլուխը կրցաւ ազատել եւ շունչը Մարաշ առնել:

ԵՆԼՍՈՒՖ Փաշա եւ Թէճիրլիցիներու կռիւը.— 1842-ին ԵՆԼՍՈՒՖ Փաշա նուաճել կ'ուզէ Թէճիրլի-թիւրքմէնները, որոնք նեղը մնացած, որպէս դրացի, Ձէյթունի օգնութիւնը կը խնդրեն: Ձէյթունցիք թէ-եւ այդ թիւրքմէններուն հետ յաճախ վէճ ու կռիւ ունեցած են, սակայն նեղը մնացած թշնամիին վեհանձնօրէն օգնել պարտք համարելով, երեք իշխաններն եւ Տ. Օհան, 500 քաջերու գլուխն անցած, Ձէյթունէն 8 ժամ հեռու Ղանուրլը ըստած տեղը կը յարձակին ԵՆԼՍՈՒՖի բանակին վրայ եւ կը յաղթեն: Ենդուպեան Մ. Աստուածատուր Աղան, քաջ նշանառու, իր հրացանով կը զարնէ այդ կռիւին մէջ թշնամիին դրօշակիրը, զօրքերը խուճապահար կը փախչին, շատեր կը սպաննուին: Փաշան մազապուրծ կ'ազատի եւ կ'ապաստանի Կէօ-սիւն: Թիւրքմէնները երախտապարտ կ'ըլլան եւ զէյթունցիներուն ընծաներ տալով տեւական բարեկամ մնալու խօսք կու տան:

Ալպիստանցի Հաճի Աղայի արկածախնդրութիւնը.— 1844-ին Ալպիստանցի Հաճի Աղան, Սուլթան Մէհմետի կը ներկայանայ եւ խնդրագիր կու տայ թէ՛ ինքը, կրնայ նուաճել Ձէյթունը: Իրատէն կը շնորհով իրեն: Ան մտադիր է զէյթունցիին առջեւ գոցել Ալպիստանի ճամբան, որպէսզի ցորեն եւ ուրիշ արմտիք չկրնան ներածել Ալպիստանէն Ձէյթուն, յետոյ գրաւել Պէրիտի երկաթահանքերը, որպէսզի գէթունցիին զրկուելով այդ շահադրութեն նեղը մնայ: Անկէ յետոյ, շատ մը պաշտպաններէ բաղկացած բանակով մը պիտի յարձակէր Ձէյթունի վրայ: 1844-ին Հաճի Աղան գործի անցաւ, Ալպիստանէն ցորենի մուտքը արգիլեց Ձէյթուն: Ասոր փոխարէն զէյթունցիք յարձակեցան եւ աւարի տուին չրջակայ թուրք եւ քիւրտ գիւղերը, իսկ Պաշի պօզուգներուն սոսկալի ջարդ մը տուին:

Եվէջը (երգ)

Ալպիստանցի Տէրէ Պէկի Հաճի Աղան,
Սուլթան Մէհմետէն առաւ ֆէրման,
Կռիւի ելաւ Ձէյթունի վրայ, ջարդելու համար,
Ձէյթունցիին սակայն փախցուց զինքն ամօթահար,

Աւարի տուաւ քուրք ու քիւրտ գիւղեր,
Անխնայ ջարդեց իր զօրք գլխաւեր (պաշտպաններ):

Ճիհանը կը բղիթի Ալպիստանէն,
Մեր երկաթը կու գայ մեր լեռ՝ Պէրիտէն,
Երես ճերմկեցնողը Ձէյթունի քաջն է,
Հաճի Աղան յաղթուած է, հարկաւ ամօթ է:

Թօփալ Սաաթ.— Հաճի Աղային ծրագիրը գլուխ հանելու համար, Թօփալ Սաաթ անուն զօրապետ մը, 1847-ին, մեծաթիւ զօրքով կու գայ Ձէյթուն եւ ամէն օր լրբօրէն մուկնտիկ կանչել կու տայ, հետեւեալ խօսքերով

Օն իֆի սիմնիտ գըզ իսքէրիմ Տասներկու տարեկան կոյս
աղջիկ կ'ուզեմ

Վըզվըզ պօզու (պալ) Մեղը կ'ուզեմ
Օսուրմատըզ Խօրղան Մաքուր անկողին կ'ուզեմ:

Ձէյթունցիք կը պատասխանէին, քու այդ պիղծ խորհուրդներուն համար, Աստուած պիտի խայտառակէ քեզ, ու գիւղիդ լեռներուն թռչունները պիտի ուտեն:

Սաաթ իր բանակը բերաւ Ձէյթունի դիմացի դաշտը: Ձէյթունցիք աչք կը գոցեն որ ան իր բանակը լաւ մը մօտեցնէ քաղաքին: Յետոյ 1000 հոգիով, անոր նահանջի գիծերը կը կտրեն, իսկ 2000 հոգի մըն ալ բիրերով, կացիններով, դարանամուտ կ'ըլլան: Սաաթի բանակին վրայ միայն 120 հոգի կը դրկեն կռիւի: Անոնց առջեւը յարդով լեցուած 40 խոշոր հակեր տեղաւորուած էին, որպէս պատնէշ այս հակերուն ետեւն ալ 500 ուրիշ զինուած զէյթունցի տղաք: Փաշան իր վրանին տակ անտեղեակ վերահաս վտանգէն անհոգ կը քնանայ: Կէս գիշերին, չորս եկեղեցիներուն կոչնակները կը դողանջեն, բուռն համազարկ հրաձանաձգութիւն մը կը սկսի զէյթունցիներէն: 40 հակերը, գիշերը անձայն, կամաց կամաց գլորելով թշնամիին մօտեցուցած էին եւ զէյթունցիք անոնց ետեւը դիրք բռնած, մէկէն ի մէկ կը խոյանան: Զարդը կ'ըլլայ ահաւոր: «Գթութիւն, հասէք, կ'աղաղակէին թուրքերը: Կռիւը կը դադրի, ամէն կողմ լեցուն էր, մարդերու եւ կենդանիներու դիակներով, Սաաթն ինքն ալ ինկած էր, վրայի սուրէն կարելի եղած էր ճշգրտել անոր ինքնութիւնը, որովհետեւ սուրին վրայ անունը գրուած էր: Գրպանէն ալ 500 մահմուտիէ ոսկի կ'ելլէ: Ձէյթունցիք այս կռիւին առատ աւարի կը տիրանան:

Հայթաներու ջարդը.— Անտեղեակ Սաաթի բանակի բախտին,

կարգ մը կամաւոր անկանոն զօրքեր՝ Հայթա Օճաղը ըստած առնա-
լուտ-ալպանացիներ, մեծ բազմութեամբ էյէր Պէյլի անցքէն անցնելու
նպատակով Կէօկսիւն կու գան, որ յառաջանան դէպի Զէյթուն,
Սատոյի բանակին օգնութեան հասնելու ծրագրով: Լուրը կը հասնի
Ֆոնուզ եւ անկէ Զէյթուն: Պատերազմի ոգեւորութիւնը տակաւին
անցած չէր, Սատոյի խորտակումէն մէկ շաբաթ անցած էր: Բոլորը
կազմ ու պատրաստ էին արդէն, սպառազէն յառաջացաւ դէպի Աթ
Օլուզու կոչուած վայրը, Թէքիր գետակին միւս ափը, Զէյթունի ա-
րեւմուտքը՝ 7 ժամ հեռու: Երկու ժամ սպասելէ յետոյ, ահա հա-
թաները կ'երեւան, կոտորածի եւ աւարի ախորժակով ոգեւորուած,
բայց իրենց փափաքը փորձերն են կը մնայ: Զէյթունցիք իրենց առջեւ
են արդէն եւ իրենց կը սպասեն: Պատերազմը կը սկսի եւ 2 ժամէն
արդէն կը վերջանայ, 2000 ալպանացիներէն 24 հոգի ողջ կ'ազատի,
միւսները անխնայ կը ջարդուին: Այդ վայրը կոչուեցաւ մինչեւ Հա-
թա-Գրան, կամ Գատը Գրան, որովհետեւ Հայթաներուն Գատը եւս
կ'ըսեն:

Պայագիտ Օղլու Ահմէտ Փաշա— Զէյթունի յաղթութիւնները պատկա-
ռանք ներշնչած էին շատերուն: Հաֆըզ Ալի Փաշա գէյթունցիներու
օգնութեան դիմած էր Աղճատաղի կոխին, թէճիրլիցիները նոյնպէս
գէյթունցիներու օգնութիւնը հայցած էին թուրք բանակին դէմ:
Հիմա ալ մարաշցի Պայագիտ Օղլու Ահմէտ Փաշա, ուզելով Մարաշի
կառավարութիւնը ձեռք անցնել, գէյթունցուց պաշտպանութիւնը խնդրեց:

1853-ին 20 հեծեալներով Զէյթուն եկաւ, Ահմէտ Փաշա իր խոր-
հուրդը յայտնեց Առաջնորդ՝ Էօջախլեան Տ. Յովհաննէս Եպիսկոպոսի
Ս. Աստուածածնայ վանքին 30 ոսկի արծէքով ջորի մը նուէր բերած
էր, Էօջախլեան Եպիսկոպոսին թանկագին մատանի մը, չորս իշխան-
ներուն եւ Տ. Օհանին ալ այլ արժանավայել կարգ մը ընծաներ
տուած էր: Կ'աղաչէր իշխաններուն եւ Տէյի Քէչիշի որ, Զէյթունի
քաջերով զինքը Մարաշ իջեցնեն եւ հոն պաշտօնավարող կառա-
վարիչին տեղ, զինքը հաստատեն, հաւաստիացնելով թէ՛ ինքը՝ որ-
պէս տեղացի՝ աւելի օգտակար պիտի ըլլայ հանրութեան եւ մասնա-
ւորաբար Զէյթունի թերեւս ուրիշ յաւակնութիւններ, փառասիրական
ձգտումներ ալ ունէր, եթէ պարագաները թոյլ տային: Զէյթունցիք
ընդունեցան անոր առաջարկը, պայմանով որ կնիքով եւ ստորագրու-
թեամբ ապահովէ զիրենք այդ մասին ամէն պատասխանատուութիւն
ինք ստանձնելով: Ահմէտ փաշա յանձն առաւ այս պայմանը եւ Ե-
նոնց տուաւ պահանջուած ապահովագիրը:

Իշխաններ 500 կտրիճ կոտուղներ, Տ. Օհանն ալ միասին, առիճ

Ահմէտ Պայագիտի Փաշան (այս տիտղոսը նախապէս ունէր արդէն)
եւ Ախրը Տաղի գազաթէն սկսած, անընդհատ գէնք արձակելով իջան
Մարաշ եւ հոն հաստատեցին Պայագիտի Փաշան կառավարիչի պաշ-
տօնին վրայ, առանց ոեւէ ընդդիմութեան: Շատ գոհ մնաց փաշան,
մեծ ընդունելութիւն ըրաւ անոնց եւ Մարաշի զիշերապահութիւնը,
հսկողութիւնը յանձնեց գէյթունցիներուն: Մեծ վախի մէջ մնացին
Մարաշի թուրքերը, խորհելով թէ Մարաշ գէյթունցիներու ձեռքն
անցած է: Մէկ ամիսէն սակայն գէյթունցիք վերադարձան իրենց
տեղը: Ահմէտ Փաշան 5 ամիս կրցաւ պահել իր պաշտօնը եւ պաշ-
տօնանկ եղաւ:

Առաջին զաղափարական զոհաբերումը— 1835-ին, Պոլսէն Զէյ-
թուն կու գայ Մելիքեան Արծրունի Յովակիմ Աղա, իբրեւ գործիչ,
հին պանդուկը (ղօնախը կամ քարվան սարայը) կը վերածէ կառա-
վարական պալատի, ինքը կառավարիչ կ'ըլլայ, չորս իշխաններն ալ
խորհրդականներ, իսկ Տիրացուեան Տ. Մարտիրոսը՝ դատաւոր կը
նշանակէ: Ու կը սկսի այսպէս Զէյթունը կառավարել կանոնաւոր
կերպով: Տարի մը ետքը կը ձեռնարկէ Կիւրիւտիի բերդին նորոգութեան,
բայց այդ նպատակին համար անհրաժեշտ դրամը կը պակսի, կը
խորհի այդ նպատակով Ռուսիա երթալ: Ռուսո-թուրք, Խրիմի պա-
տերազմին տաք ատեններն է, ճամբաները շատ վտանգաւոր են, իշ-
խանները կ'աշխատին զինքը առ այժմ ետ կեցնել Ռուսիա երթալու
ծրագրէն: Սակայն կը մեկնի, Յովակիմ Արծրունի Կարնոյ մէջ կը
ճանցուի, կը ձերբակալուի, եւ հակառակ Կարնոյ Առաջնորդ՝ Գրիգորիս
Եպիսկոպոսի զայն ազատելու ջանքերուն, կախաղան կը հանուի:

Զէյթունցիներու մէկ ուրիշ թշնամին ալ՝ թուրքմէններուն ճիւղն
էր, Աֆշար-Եիւրիք աշիրէթները: Ասոնք ալ վաշկատուն ցեղերէ կը
բաղկանային ընդհանրապէս եւ բազում անգամներ կոխներ ունեցած
են գէյթունցիներուն հետ: Ամենէն կարեւոր կոխ 1848-ի ընդհարումն
էր: Աֆշարները ուզած էին իրենց ամարանոց ընտրել Կոկիսոնի
բարձրութիւններն եւ հովիտները: Թուրքեր եւ հայեր չէին ուզեր ա-
նոնց մուտքը իրենց երկրին մէջ: Զէյթունցիք միջամտեցին եւ Զէյ-
թունէն 15 ժամ հեռու Զինչին Պողազը (Ճանճի բերդ) կոչուած
կիրճին մէջ, յաղթեցին 1500 տնուոր աֆշարներուն: Անոնց նախկին
Ծուրաղ Սարըզ ըստած եայլան (հովիտն) էր, Կոկիսոնի հիւսիսը, 5
ժամ հեռուն:

Կոկիսոնի հայերուն եւ թուրքերուն խնդրանքը ընթացք տուած
էին գէյթունցիք եւ ձեռնարկած այս կոխին: Սակայն նախ քան կը-
ռիւի սկսիլը, իշխաններ իրենց կողմէ Աֆշարներու ցեղապետը՝ Հազլ

օղլու Սէյֆի Պէյի եւ Ապէտին Օղլու Ձէրֆէզ Պէյի ղրկած էին Ձէյթունի հրոսակապետ հրամանատարներ՝ Վէզիր Օղլու Մամբրէն, Ղրանֆէլ Օղլու Քէօսէ Փանոսը, Սինկիրեան Յարութիւն եւ Աճի Թէո- յէկը: Ասոնք ըսած էին թէ՝ մեր իշխանները բարեւ կ'ընեն ձեզի եւ կը խնդրեն որ Կոկիսոնի կողմերը երթալու միտքէն ետ կենաք եւ ձեր նախկին եուրտը՝ Սարըզ երթաք, հակառակ պարագային հե- տեւանքը գէշ կ'ըլլայ: Պէյերը պատգամաւորներուն պատասխանած է ին թէ՝ Ատանայի վայրն եւ Մարաշու միւթէսարըֆը չկրցան մեզ արգիլել Կոկիսոն երթալէ, հիմա ափ մը գէյթունցիներդ մեզի կը սպառնաք եւ աւելցուցած էին թէ՝ զացէք ըսէք ձեր իշխաններուն որ Ձինչինի կիրճէն հեռանան, հակառակ պարագային կը ջարդենք զիրենք: Այս յայտարարութիւնը կը հասնի իշխաններուն, որոնք չորս թաղերէն 50 ական տղաներով, ընդամենը 200 մարտիկներով ար- դէն կը սպասէին Ճանճի կիրճը: Ասոնք ճամբուն երկու կողմն ալ բռնած էին, չորս կողմերէն յանկարծ համազարկ հրացանածգութիւնը կը սկսի, պոմպ, պոմպ, պոմպ ձայնը մեծ արձագանգ տալով ապա- ռածներուն միջեւ: Աֆշարներուն քանիները թուրի պէս վար կը թա- փին իրենց ձիերէն: Իրենց կէօյը արդէն անցած էր գէյթունցիներու կրակի սահմանէն ներս, Ձէրֆէզ Պէյի ձին զարնուած էր, ինքն ալ ոտքէն գնդակ մը ստացած էր, թէ ձին եւ թէ ինքը գլորած էին: Ձէյթունցիք այն ատեն սկսան կանչել Վէյ աֆշարներ, դուք մեզ ի՞նչ կարծեցիք, ղուլաղը թողը կեալուր, ականջը փոշիոտ կեալուր կարծեցիք, մենք գէյթունցի ենք, արդէն ձեր կէօյը մեր կողմն ան- ցաւ, ուրեմն զինաթափ եղէք: Կէօյը այլեւս մեր գերիներն են, հա- կառակ պարագային բոլորդ ալ կը ջարդենք: Հազ Օղլու Սէյֆի Պէյը երբ կը նայի որ շուրջը ձիաւորներէն հազիւ քանի մը տասնեակ մնացեր է, ամէնքն ալ փախեր են, ճարահատ անձնատուր կ'ըլլայ ճերմակ դրօշակ պարզելով եւ լուր կը ղրկէ մեր մարդիկներուն թէ՝ ահա մեր գէյթերը տասը մարդոց հետ ձեզի կը ղրկենք: Հիմա կը հասկնանք որ այդ երկրին վայրն ալ դուք էք, փաշան ալ պէյն ալ: Երբ գէյթերը կը բերեն, կը յանձնեն, մեր մարտիկները կը սկսին կէօյը յափշտակել-խորրքաշտել: Կէօյին մէջէն թէ կիներ եւ թէ աղջիկներ անձնատուր եղած էին, սակայն գէյթունցիք անոնց ոչ մէ- կուն կեանքին կամ պատուոյն չդպան: Աւար առած էին հազարներով ոշխար, ձի, կով, կապերտ (քիլիմ) (քէչէ) թաղիք, արծաթեղէն եւայլն: Գերիները ողջ ողջ դարձուեցան: 15 դիակ եւ 11 վիրաւոր թողուցած փախած էին աֆշարները: Կոիւի ընթացքին 30-ի չափ թիւրքմէն գե- ղեցկուհիներ փախած, ժալերու խոռոչներու մէջ պահոււրած էին, երեք օր անօթի ծարաւ մնացած էին, յիտոյ, ասոնք ալ անվնաս

դարձուեցան իրենցիներուն՝ Սարըզ:

Այստեղ աչքիս կը պատկերանայ Վիսնասորի արշաւանքը, մազ- րիկները 1897-ին: Աֆշար աշուղը կ'երգէր:--

Աֆշար Ձուզուր օվատամ Խորիւցի վերտի
Կեօֆուրն արգուլայուպ սէշտի իլի իուրտու
Ձէյթունլու Ձինչինտէ աֆշարը վուրտու
Փէրուշան աշրէթին հալը կիւն օլտու:

Աշըխ- Ապտալլահըմ պէն Քենտիմ Խալը,
Պուլունմալտը աշրէթտէ աֆշարը³³ միսլի
Պուրնու խըրըզմալը, Խալպրտագ ֆէսգի
Ճէնկ իչինտէ գալամ գըզլար Գիմ օլտու:

Խափաճա Քիրմէնի համար, Ձէյթունը ոտքի:--

1854-ին, պատերազմ կար Ռուսիոյ դէմ Անգլիոյ եւ իր դաշ- նակիցներուն կողմէ: Անգլիոյ կողմէ Մարաշ ղրկուած էր լիբանանցի մարտնիթ Խափաճա Քիրմէնի, որպէսզի կամաւորներ զինուորագրէ: Կամաւոր զօրքերուն պէտքերուն հոգն ալ ինքն ստանձնած էր եւ մազէ վրաններ հիւսել պիտի տար: Վրաններուն չափն ու ձեւը տուած եւ ապսպրանք ըրած էր մազմաններու թուրք շէյխին: Ա- սիկա սակայն վրաններուն չափը փոքր հանած էր եւ կարգ մը խարդախութիւններ բրած էր: Խափաճա Քիրմէնի եւ թուրք շէյխը վէճի բռնուեցան, չկրցան համաձայնիլ եւ դիմեցին դատարան: Դա- տաւորը սակայն ի նպաստ թուրք շէյխին վճիռ արձակեց: Քիրմէնի սաստիկ զայրացաւ այս անարդարութեան դէմ, մանաւանդ որ ինքը կու գար զօրաւոր Անգլիոյ որպէս գործակաւտար: Իր այս հանգամանքին վստահած, դատաստանին մէջ կ'աղաղակէր:-- Փէզէվէնկ, պէօյլէ՛մի շէրիաթ քէսէրլէր: Մոլեռանդ դատաւորը այս խօսքէն, գլխուն ուռմբ մը պայթածի պէս սոսկալով, իսկոյն շուկան կ'իջնէ, կը գրգռէ խու- ժանը, որ կեալուրի մը բերնէն անարգուած է, մեր կրօնն ու օ- րէնքը ոտքի տակ կ'ըլլայ: Տին խլամ գալմատը՝ մը, կ'աղաղակէ:

Տգէտ եւ կատաղի թուրքերը մեծ բազմութեամբ կրակի կու տան խափաճային տունը, կ'այրեն այնտեղ խափաճան, կիներ եւ մէկ գա- ւակը: Մէկ տղան կ'ազատի Հասան Քէօչէկ անուն թուրքի մը ձեռ- քով:

Ձէյթունցիք կը լսեն այս քստմնելի ոճիրը մարաշցի քանի մը հայ մեծերը կը կանչեն եւ կը պատուիրեն որ՝ Մարաշի թուրք թաղերը բնակող հայ ընտանիքներ քաշուին գան հայաքնակ թաղերը, որ- պէսզի յարձակման ատեն չվնասուին: Բայց մարաշցի հայեր կը

վախճան յետագայի ծանր հետեւանքներէն եւ կ'ողոթին Ձէյթունցիներէն որ ետ կենան նման ծրագրէ մը Ձէյթունցիք շատ դժուարութեամբ կը հանդարտին մտածելով մարաշցի հայերուն կեանքերուն վտանգութեամբ պարագան:

Բայց ողջ ողջ այրուող խավաճային եւ իր ընտանիքին վրէժը կը լուծեն քանի մը թուրքեր սպաննելով, որպէս քաւութեան նոխազ թուրքերու մեղքերուն:

Թշնամութիւն եւ կռիւ թէճիրլիցիներու հետ:— Հինգ տարուան ընթացքին զէյթունցիք՝ թէճիրլիցի թուրքաճէններուն հետ տասը անգամ ընդհարում ունեցած են, հակառակ 1842-ին անոնց տուած խոստման թէ՛ պիտի չկռուին զէյթունցիներուն հետ: Սակայն 1850-էն սկսած մինչեւ 1855-ը ընդհատաբար կռուած են զէյթունցիներուն հետ: Վայրենի ցեղերու համար խօսք եւ խոստում կարեւորութիւն չունին. երախտիք չեն ճանչնար: Անոնք իրենց ճամբուն վրայ հանդիպած զէյթունցի ջորեպանները կը կողոպտէին, կը սպաննէին: Ձէյթունցիք ալ անոնց ամբարանոց երթալու ճամբաններուն տասնապատիկը կը հատուցանէին կողոպտելով, սպաննելով այնպէս որ՝ թէճիրլիցիք, սկիզբէն թէեւ Ձէյթունի շուկաներէն անցնելով մօտակայ ամբարանոցները կ'ելլէին, սակայն թշնամութեան վերսկսելէն եւ այդ դէպքերէն ետքը չկրցան մօտ ճամբաներէ անցնիլ, փոխեցին անոնք իրենց ճամբաները եւ պարտաւորութեան հետզհետէ կանձուտ, անկէ ալ Չուրոխ, Սուլաթը, Մէյրէմչիլ, Քիլիսէճիք ըստուած վայրերէն անցնիլ: Այս վերջինը Ձէյթունէն 20 ժամ հեռու կ'իյնայ: Թէճիրլիցիք, վերջապէս 1855-ի կռիւին վերջնականօրէն կը պարտուին եւ կ'ընդունին իրենց պարտութիւնը: Այդ տարի, դարնան երբ անոնք ամբարանոց երթալու համար Ճահանի վրայ գտնուող Իւնկիլթի կամուրջը կու գան, որ Ձէյթունէն 9 ժամ հեռու է, իսկ Մարաշէն միայն 3 ժամ անդին: Անոնք կը տեսնեն որ կամուրջը բռնուած է զէյթունցիներէ: Իսկ գետը յորդած ըլլալով, անկարելի էր անցնիլ: 15 օր կը մնան, կը սպասեն այն տեղ իրենց կիներով, զաւակներով եւ անասուններով: Ի վերջոյ, կը ստիպուին ցեղապետներ խոնարհիլ, ուսերնուն ճերմակ կտաւ ձգած կու գան մինչեւ կամուրջին մէջտեղ, ըսել ուզելով թէ մեր կեանքը ձեր ձեռքն է, ինչ որ ուզէք ընել, կրնաք: Ձէյթունցի չորս իշխանները կեցած էին կամուրջին վրայ, մէկ կողմ, իսկ Տէլի Քէփը եւ Պալճեան Մըխարը հալորը՝ միւս կողմը գէմ դիմաց: Ցեղապետներ կ'երդնուն յետ այնու այլեւս հանգիստ կենալ եւ ոեւէ վնաս չհասցնել զէյթունցիներուն, եւ հնազանդութիւն յայտնելով կու գան եւ մէկիկ մէկիկ կ'անցնին Տէլի Քէփի սուրին տակէն: Սակայն

տարի միայն կը տեւէ հաշտութեան այս դաշինքը, որովհետեւ Մարաշի թուրքերը կը զրգուէին թէճիրլիցիները, որոնցմէ գոհ չէին որպէս աւագակարարոյ ցեղերու, եւ կ'ուզէին որ զէյթունցիներու հետ կռուելով երկու կողմն ալ տկարանան: Անոնք յաճախ մտած էին Մարաշի շուկան, եւ օր ցերեկով թալանի տուած թուրքերուն իսկ խանութները Ձէյթունցիք այս խնդիրը վերջնականօրէն կարգադրելու համար 1859-ին Կ. Պոլիս կը դրկեն Մեսրոպ Վարդապետը եւ Տ. Մովսէս Քհնյ. Խաչուկենց, որոնք կը յաջողին Սուլթան Մէճիտէն հրաման հանել տալ, այդ վրանաբնակ, վաչկատուն ցեղը Ձէյթունէն 5 օրուան ճամբայով հեռու գտնուող Չուգուր Օվա ըստուած վայրը բնակեցնելու, ուր շատեր կը մեռնին կլիմային տաքին եւ վատառողջութեան չկրնալով դիմանալ:

Խուրշիտ Փաշայի պատերազմը եւ փախուստը:— Թէճիրլիցոց խնդրին համար Կ. Պոլիս գացած Մեսրոպ Վարդապետը եւ Տ. Մովսէս Քահանան կ'աշխատին նաեւ Սուլթան Մուրատ Դ-ի հրովարտակը նորոգել, վերահաստատել տալ Սուլթան Մէճիտէն, սակայն կարելի չ'ըլլար: Ընդհակառակն թուրք կառավարութիւնը կ'որոշէ որ Ձէյթունն ալ միւս քաղաքներուն պէս տուրքի ենթակայ ըլլայ եւ վճարէ պահանջուած դրամը: Այս նպատակով, 1860 Յունիս 8-ին, 12000 կանոնաւոր եւ մեծ թիւով ալ անկանոն ուժերով Մարաշի կառավարիչ Խուրշիտ Փաշան կը դրկուի Ձէյթուն: Փաշան իր բանակով կը հասնի Ճահան գետին եզերքը եւ այն տեղէն լուր կը դրկէ Ձէյթունի իշխաններուն եւ անոնցմէ կը պահանջէ 12 տարուան անվճար յետնեալ տուրքը մէկ անգամէն: Իշխաններ սուլթաններէ տրուած եւ հաստատուած հրովարտակին պատճէնը ցոյց կու տան եւ կ'ըսեն թէ՛ մենք այդ հրովարտակով նշանակուած 30000 դահեկանէն աւելի տուրք չենք ճանչնար, եւ այդ դրամին ալ կէսը մեր եկեղեցիներուն կը պատկանի: Փաշան կարեւորութիւն չի տար այդ հրովարտակին եւ չպէն ֆէրման թանձրմամբ կ'ըսէ: Այն ատեն Հազոր իշխան Շորփոյան, եթէ դուք այդ հրովարտակը չէք յարգեր, կ'ըսէ, մենք կը յարգենք եւ անով մեզի տրուած առանձնաշնորհման պահպանման համար պատրաստ ենք նոյնիսկ մեր արիւնը տալու: Միւս իշխանները նոյնը կը հաստատեն եւ գրաւոր պատասխան կը դրկեն փաշային՝ թիւֆէնճի Պաշի Թօթում Օղլու Այի Էֆէնտիին հետ հետեւեալ քառեակով:—

Շորփոյում տա տէտի սէօյլերիմ գըսա փուսա

Եարտըմըմըզ վար տըր հագըրէի իսա

Պապամ վասիլէի պու ալթըշ քիսէ,

Վերիպ սամա գարշը տուրուր գէյթուլու:

Շորվոդեանն ալ ըսաւ կարճ կը կապեմ ես
Տէր Յիսուս Քրիստոս օգնական է մեզ
Վաթսուն քսակ կտակ եղած է հօրմէս,
Կու տայ քեզի դէմ կը կենայ գէթուցիմ:

Փաշան կարդալով այս յանդուգն պատասխանը սաստիկ կը կատաղի, մեծ սպառնալիքով նոյն Ալի էֆէնտին կը զրկէ պահանջած գումարը՝ զանձելու համար: Մերինները կը պատասխանեն. «Քանի որ ինքը սուլթաններուն հրովարտակը չի ճանչնար, մենք ալ զինքը չենք ճանչնար: Այդ միջոցին իսկ Պոլիս գտնուող մեր երկու եկեղեցականներէն նամակ մը կը հասնի իշխաններուն: Չեն յաջողած հրովարտակը վերահաստատելու, եւ հետեւաբար կը գրեն անոնք այդ նամակով. «Մի վախճե՛ք, կըսպացէ՛ք եւրո բամպոկը ելլէ», այսինքն. «Մի վախճե՛ք, զարկէ՛ք որ բամպակը ելլէ»: Նամակին վրայ գէյթունցիք աւելի ոգեւորուելով կ'արշաւեն դէպի Ճահան դետը, կը յարձակին խուրճատի բանակին վրայ: Փաշան շփոթած կ'ուզէ փախչիլ, բայց ճամբան բռնուած է իր առջեւ: Նեղը կը մնայ եւ կ'աղաչէ որ գէյթունցիք կրակը դադրեցնեն եւ թող տան իրեն որ Ախպուտաղէն Մարաշ դառնայ: Իշխանները վեհանձնօրէն կը թոյլատրեն իրեն որ անցնի երթալ ամօթահար եւ առանց ոեւէ արդիւնքի:

Ազիզ Փաշայի պատերազմը, Լեւոն գաղափարական քարոզիչ եւ դիմում Նափոլէոն Գ.ի

1861-ի ձմեռը Հաճընէն Չէյթուն կու գայ Լեւոն անուն մէկը ինքզինքը իշխան կ'անուանէ ան: Չորս ամիս կը մնայ, հանրագրութիւն մը կը պատրաստէ ներկայացնելու համար զայն, այն ատենուան Յրանսայի վեհապետ՝ Նափոլէոն Գ.ի: Այդ գրութեամբ յայտնելով թէ՛ Տաւրոս լեռներու մէջ 70000 զէնք բռնող հայեր կան, կը փափաքին անոնք որ ինքնավարութիւն տրուի իրենց, կը խնդրուի վեհապետէն որ թուրքոյ կայսեր խօսի որպէսզի շնորհէ գէյթունցիներուն ներքին ինքնավարութիւն մը եւ իր կողմէ ալ հայ իշխան մը կառավարիչ նշանակէ:

Այդ հանրագրութիւնով Լեւոն Փարիզ կ'երթայ եւ կը ներկայանայ Նափոլէոնի, որը իր կարգին նման հրահանգ մը կը զրկէ Կ. Պոլիս Փրանսական դեսպանին: Դեսպանը կը դիմէ մեծ Եպարքոս Ալի փաշային: Աղուէս Ալի փաշա անակնկալի եկած, վեց ամիս ժամանակ կը խնդրէ անհրաժեշտ քննութիւնը կատարելու համար: Անմիջապէս յետոյ, ծպտուած, գաղտնի պաշտօնեաներ կը զրկէ Մարաշ, Չէյթուն, Հաճըն: Այդ մարդիկը, կը տեղեկագրեն Ալի փաշային թէ՛ այդ 70000 մարդերը չտեսան իրենք, հակառակ որ ամէն բան եւ ամէն տեղ ու

շաղրութեամբ քննեցին եւ հետազօտեցին: Չէյթուն 1000 տուն բնակիչ ունի, Մարաշ՝ 3000, իսկ Հաճըն նոյնքան մը, այնպէս որ այս երեք քաղաքներու հայութիւնը անկարող է ակնարկուած թիւով զէնք բռնելու վարժ եւ կարող մարդ հանել: Բայց Չէյթունի մասին կարգ մը ակնարկութիւններ ըրած էին իրենց տեղեկագիրներուն մէջ: Ու խորամանկ եպարքոսը մտադրեց այդ անհանդարտ եւ սակայն փոքրաթիւ ժողովուրդը մէջտեղէն վերցնել: Այդ իսկ նպատակով Մարաշ կը զրկէ մոլեռանդ երիտասարդ զպրոցաւարտ մը Ազիզ Փաշան: Այդ օրերուն Քէթմէնցի երկու թուրքերու միջեւ կռիւ մը տեղի ունեցած էր առեւանգութեան մը պատճառով: Առեւանգիչ Իպրահիմը կը սպաննուի պարտէզը սալոր հաւաքած ատեն իպիչէ: Սպաննուածին տէրերը կու գան որ դիակը տանին, իպիչ կ'ընդդիմանայ եւ կը սպառնայ զիրենք ալ սպաննել, կ'ուզէր որ դիակը գազանները ուտեն: Սպաննուած Իպրահիմին ազգականները ճարահատ կը դիմեն հարեւան եւ թուրք պէյլիսցիներուն, որ միջամտեն, սակայն դարձեալ ապարդիւն: Այս անգամ կը դիմեն Արեգին հայ գիւղի Կարապետ Քէհեային: Այդ օրը, հոն էր Ենիտիմիս Աստուածատուր իշխանին եղբայրը՝ Չիլ Փանոս Փաշան: Ասիկա կը յորդորէ Կարապետ Քէհեային որ օգնէ դիմողներուն: Կարապետ Քէհեա հետը կ'առնէ իր փեսան Վարդանենց՝ Յակոբ Քէհեան, ուրիշ տասը անձերով: Կ'առաջարկեն իպիչին, որ թաղումը թոյլատրէ: Իպիչ կը յամառի, Քէհեան անոր վրայ կը յարձակի, սակայն իպիչ զնդակ մը կ'արձակէ եւ Յակոբ կ'իյնայ անշունչ: Իպիչ կը փախչի: Երկու սպաննուածները կը վերցուին, Յակոբ Քէհեան կը բերեն Փրկչի վանքը կը թաղեն, Այս անգամ Կարապետ Քէհեան Արեգինէն 70 դիմումներով կ'երթայ Քէթման գիւղը իպիչը բռնելու եւ սպաննելու, սակայն հոն ապաստանած ըլլալով, գիւղացիք մէջ տեղ չեն հանել: Կարապետ Քէհեան այդ գիւղի 14 թուրք կը սպաննէ: Այդ օրերուն, մարաշցի թուրք խաղախորդ (տապտաղ)՝ Կիւլ Ալի հոն կը գտնուէր, 14 դիակներուն աւրիւնոտ շապիկները Մարաշ կը տանի եւ կը ներկայացնէ Ազիզ Փաշայի: 1862-ն է, Մարաշի թուրքերը եւ Ազիզ Փաշա պատրուակ մը կը փնտռէին եւ ահա տրուած էր այդ պատրուակը եւ արդէն մեծ եպարքոսը այդ նպատակով զրկած էր զինքը Մարաշ: Ան իսկոյն մուսնաթիկ կը հանէ եւ անոնց կանչել կու տայ քաղաքին փողոցներն ու շուկաները: 40000 կամաւոր եւ անկանոն բանակով մը, որուն կարեւոր մէկ մասը չէրճէզներէ բաղկացած, կ'արշաւէ Չէյթուն: Չէյթունի վերջին ահարկու թշնամիներն էին չէրճէզները, չէչենները: Կովկասեան այս խռովայոյց ցեղերը անվերջ ընդհարումներ ունեցած էին Ռուսիոյ դէմ 19-րդ դարու առաջին կիսուն եւ չէին ուզած

Հայաստակիլ եւ ոմանք այդ պատճառով գաղթած էին եւ եկած թուրքիա, ոմանք ալ Ռուսիա, ինքը Հեռացուցած էր իր սահմաններէն: Թուրք պետութիւնը տկարացնելու համար իր երկրին մէջ քրիստոնեայ տարրը, տեղաւորած է այդ իսլամ չէրքէզները հայաշատ քաղաքներու մէջ եւ շրջակայքը, մանաւանդ այն լեռնային վայրերուն մէջ, ուր հայեր տիրող եւ զօրաւոր դիրքեր ունէին: Թուրք կառավարութիւնը շատ կարեւորութիւն տուած էր չէրքէզներուն եւ երես տուած, չփացուցած էր զանոնք: Զէյթուն զոհը պիտի լլլար չէրքէզներուն: Ազիզ Փաշա խոստացած էր չէրքէզներուն տալ Զէյթունը որպէս բնակավայր, տեղւոյն հայերը բնաջնջելէ յետոյ: Երեք կողմէ յարձակումը պիտի սկսէր Զէյթունի վրայ, Արեւելքէն Ազիզ Փաշայի մեծ բանակը, հիւսիսէն Պայագիտ Օղլու Ահմէտ Փաշան կ'արշաւէր 5000 զօրքով (այս այն ապերախտն էր, զոր զէյթունցիք զինու զօրութեամբ Մարաշու կառավարիչ նշանակեցին), Արեւմուտքէն 12000-ով կու գար Սիւլէյման պէյի որդին՝ Օսման Պէյ, հետն ունենալով 4 քիւրտ պէկ եւ 8 թիւրքմէն ցեղապետներ: Ըստ Հանրի Վիթթոյի այս չորս բանակներու գումարը կը հասնի մինչեւ 87000-ի: Զէյթունէն վեց ժամ դէպի Մարաշ, Բէրթէզ Չայի դիմացը, Արեգինի Չախըր Տէրէի Քէփիւր դաշտը, Շորվոյեան Հագօր եւ Ենի Տիւնիա Աստուածատուր իշխաններու հրամանատարութեամբ մաս մը զէյթունցիք սկիզբը առաջին ընդդիմութիւն մը փորձեցին, բանակին յառաջացումը դանդաղեցնելով ժամանակ չահելու եւ Զէյթունի մէջ պատրաստուելու մտքով: Բայց տեղի անյարմարութեան պատճառով, եւ թշնամին Ղազմա ըսուած տեղէն գիշերանց զաղտուկ, գետէն անցնելով, մերինները անակնկալի բերած իրենց յարձակումովը, կարելի չ'ըլլար դիմադրել մասնակի պարտութիւնով մը կը նահանջեն³⁴, այն տեղ զոհ տալով 30 Արեգինցի եւ 42 զէթունցի կռուողներ, որոնց մէկն ալ իմ մեծ հայրս՝ Սիսեռեան Սարգիսն եղած էր, իսկ Սիմոն հօրեղբայրս ալ ծոծրակէն զարնուած էր, շապիկի ճերմակ թեւոցին-սօլոքին հանգոյցը տաք կապար գնդակէն այրած էր (պատմած էր ինծի հայրս): Թշնամին ունեցած էր 200-ի կորուստ մը: Թէեւ անոր կորուստը աւելի մեծ եղած էր, սակայն որպէս յաղթող՝ այդ օրն իսկ կը յառաջանան եւ կը հասնին Ջերմուկի դաշտը, Զէյթունէն կէս ժամ հեռու: Մերայինք դիրք կը բռնեն Սաղիր (անցք կամ կիրճ կը նշանակէ, որուն սկիզբի ձեւն է շաղեր սեմական բառը եւ որմէ առաջ եկած է շուղր բառը նոյն իմաստով) կէս ժամ հեռու բանակէն: Կացութիւնը ծանր է եւ վրտանգը մեծ: Եւ ահա ամբողջ Զէյթուն ոտքի կ'ելլէ, նոյնիսկ ծերերն ու տղաքը, կիներն անգամ: Չորս իշխաններ վանքին մէջ լրջօրէն կացութիւնը քննելէ ետքը, անհրաժեշտ զինուորական կարգադրութիւններն

ըրին, 5000-ի կը հասնէր մերայիններուն պատերազմողներուն թիւը: Դեռահաս կիներ եւ աղջիկներ պատրաստուեցան եւ կը սպասէին կրօնի ելքին, պարտութեան մը պարագային Շուղրի կամուրջէն վար, անդունդէն գետը պիտի նետուէին թշնամին ձեռքը չիյնալու համար: Անոնք հաւաքուած էին Ղարդալար թաղի Եաղուպեաններուն տուները, Շուղրի մօտ: Ազիզ Փաշա դեռ բուն մեծ կոիւր չսկսած, պատգամաւոր կը դրկէ Զէյթուն կեպուր Տաղի եւ Պուլանըզի Տէրէպէյի՝ Ֆէդուհ Օղլու Ազէ Պէյը եւ Մարաշցի Ղաթըրճի Պաշի Ղարաճա անուն հայր: Անոնք կը յայտարարեն թէ՝ փաշան կը մեղքնայ ժողովուրդին, եւ կ'ուզէ որ գործը խաղաղութեամբ վերջանայ, միայն թէ կարապետ Քեհեան եւ Վարդանենց Չափաուր իրեն յանձնեն: Եւ ինք պիտի քաշուի երթայ: Իշխանները՝ հաւ մըն ալ չենք յանձներ կը պատասխանեն պատգամաւորներուն: Երկրորդ եւ երրորդ անգամ պատգամաւորներ կու գան եւ կ'ըսեն թէ՝ եթէ պահանջուած մարդիկը յանձնել հաճելի չէ ձեզի, ուրիշ երկու անշան մարդիկ յանձնեցէք անոնց տեղ, որպէս փաշային ուզած մարդիկը: Անկարելի է կ'ըսեն իշխանները նման նենգութիւն մը գործել եւ երկու անմեղներ զոհել ուրիշներու տեղ, որոնք նաեւ մեզ համար անմեղներ են³⁵: Պատգամաւորներ կը թելադրեն որ ընթացք տան փաշային պահանջին, որովհետեւ կ'ըսեն անոնք փաշային 40000 կամաւորներէն զատ կան 50 թնդանթաճիզ զինուոր, 12 պէյերուն հետ ալ 12000-նոց բանակ մը: Շորվոյեան Հագօր իշխան ցասումով մը եւ արհամարհանքով կը գոռայ. «Արժէք չունին ձեր այդ 12 պէյերն ալ, Օսման Պէյն ալ եւ Ազիզ Փաշան ալ իրենց բանակներով, գացէք եւ այս պէս բարեւ ըրէք: Մինչեւ հիմա շատ պէյեր եւ փաշաներ ամօթահար եւ խայտառակ ըրած փախցուցած ենք, Աստուծով ասոնք ալ իրենց փառքին կը հասցնենք: Կ'ուզենք որ կոիւր վերսկսի, որ մեր 72 զոհերուն եւ վանքին մէջ սպաննուած երկու եկեղեցականներուն վրէժը լուծենք»: Այդ պահուն էր Զէյթունի մօտակայ թուրք գիւղէն, Թօռուն Օղլու Ահմէտ հեւ ի հեւ կը հասնէր Զէյթուն եւ լուր կը բերէր Պայագիտի Ահմէտ Փաշային, այդ ապերախտին 5000 զօրքով Աւազ Կիտիկիէն յառաջանալը: Թօռուն Օղլու Ահմէտ, ըստ իր խօսքին, որպէս զէյթունցիներուն բարիքը յաճախ տեսած, Ահմէտ Փաշային խօսած եւ զայն համոզած էր որ այն տեղ սպասէ քիչ մը, ուստի ամենէն առաջ այս անպիտանին դասը տարու համար, պատգամաւորները վար կը դնեն եւ 500 զինուածներով գունդ մը կը դրկեն անոր դէմ. իրիկուան մթնշաղին, բանակին կերակուրի պահուն կը յարձակին անոնց վրայ յանկարծակի բերած, բաւական մը կը ջարդեն, շատեր կը փախչին, 15 հոգի ալ գերի կը բռնեն: Կէս գիշերին կը դառնան Զէյթուն յաղթական եր-

գերով: Հայեր ոգեւորուած յաջորդ օրուան մեծ պատերազմին կը պատրաստուէին, իսկ Ահմէտ Փաշայի խուճապահար գունդը կը հասնի մեծ բանակ, սարսափը կը տարածուի բոլոր զօրքերուն մէջ: Քահանաներ այդ գիշեր հսկում կը կատարեն Ս. Աստուածածնի վանքը, ուր ներկայ կ'ըլլան բոլոր մարտիկները եւ կը հաղորդուին Քրիստոսի Ս. Մարմնոյ եւ արեան հետ եւ հոգեպէս ալ կը սպառազինուին: Յետոյ կ'ըլլան բանախօսութիւններ՝ իշխաններուն եւ եկեղեցականներուն կողմէ: Եաղուպեան իշխան 1500 տղաներով պիտի բանակէր Աւազկալ գիւղը, ընդդէմ 12 տէրէ պէյերու 12000 սէկմէններուն: Սուրէնեան եւ Շորվոյեան իշխաններ պիտի բանակէին Ջէյթունի հարաւը, դիմացը Ճեմարանի դարը 1500 մարտիկներով, իսկ Ենիտէնեան իշխան դարանակալ պիտի սպասէր իր 1500-ով Ս. Աստուածածնի վանքին եւ Ջէյթունի միջեւ գտնուող ձորին մէջ: Ատկէ զատ, պարտուած ձեւանալով փախուստ պիտի տային դէպի Ջէյթուն, եւ այսպէսով թշնամին պիտի բերէին ուղղակի դարանակարներուն վրայ: Այդ վայրկեանին Ջէյթունի չորս եկեղեցիներուն տախտակէ եւ պողպատէ կոշնակները միաբերան պիտի հնչէին: Մեր ռազմիկները նոյն գիշերը քիչ մը առաջ վերադարձնէին Սադիքէն, հոն թողլով 20 հողի պահակներ:

1862, Օգոստոս 2-ի առտուն է, Ջէյթունի լեռներն ու ձորերը հրացանի, թնդանօթի որոտներով եւ կոշնակներու ղօղանչով կը լեցուէին, աղաղակ, գոռում, գոչում, կարծես դատաստանի օրն ըլլար, «անա-պապա կիւնիւ», ինչպէս որ կ'ըսեն թուրքերը: Ազիզ Փաշա իր 40000 կամաւորներով սկսած է կռիւի, կը ռմրակոծէ Ջէյթունը, որուն տունները առհասարակ աղիւսէ ըլլալով, շատ չէին մնասուեր: Օսման Պէյի 12000-նոց թիւրքմէնները հասած էին Ձեյթեկի դաշտը եւ կը փորձէին յառաջանալ, Անի ձորէն գալով կը մօտենային Ջէյթունի, կը հասնին անոնք ալ վերջապէս Ճեմարանի մարտկոցին դիմացը, ուստի Եաղուպեան պարսպ կը դառնայ եւ կու գայ կը միանայ Ճեմարանի մեր ուժերուն, եւ այդպէս այդտեղ կ'ունենանք 3000 կռուողներ: Իշխաններ հրաման կ'ընեն որ թշնամին մինչեւ որ շատ չմօտենայ հրացան չպարպել: Այնպէս մը ընել որ մօտենայ թշնամին որ գնդակին հետ վառօդն ալ փորերնին մտնէ: Թիւրքմէն Ղարա Քէհիա մարտիկը³⁶ որ ձիարշաւ կը մօտենայ Ճեմարանին, Եաղուպեան թաղէն խրդրթեան վահէն իշխաններուն թոյլտուութեամբ մէկ գնդակով վար կը գլորէ գայն ձիէն: Ոչ մէկ թիւրքմէն չի համարձակիր տեղէն շարժիլ: Բանակին ձախ թեւը խուճապի կը մատնուի, իսկ աջ թեւը, մեծ մասով ձիաւոր չէրքէզներէ բաղկացած, Պուշախճենց ըլուրէն, Ալեքսանենց մատէն կը խոյանայ դէպի Աստ-

ուածածին վանքը, իր առաջը 4 դրօշակիրներով եւ 200 չէյիներու, տէրվիշներու խումբով, որ Ալյահէն օգնութիւն կը հաքեն թուրքերուն համար «հիւ Ալյահ, հիւ Ալյահ գոռալով, քիւֆէրայը հէլաք էյլէ, խամա գուլէթ վեր» լսելով: Հասած էին անոնք այսպէս Ս. Աստուածածնի վանքը, որուն դրան առջեւ փողոտած էին վարդապետ մը, սակայն չէին յաջողած ներս մտնել: Խումբ մը մարտիկներ ներսը ամրացած էին: Յետոյ իջած էին ձորը եւ կը յառաջանային Ափրնաքարտակի ուղղութեամբ դէպի քաղաքին արեւելեան եզերքի տունները: Ջէրքէզ մը արդէն հասած եւ բռնած էր Մավրը կոչուած գէյթունցի կնոջ մը ձեռքէն «Ես իմ հարսնցուս գտայ ըսելով», մինչդեռ կինը կը պոռար եւ օգնութիւն կը կանչէր, ձորը դարանամուտ գէյթունցիներուն, սպաննեցէք զիս, կ'աղաղակէր ան եւ մի թողուք որ տանին զիս: Այդ ըոպէին էր որ կը սկսին հնչել Ջէյթունի կոշնակները, պողպատէ եւ ընկոյզէ ու կաղնի փայտէ: Դարանակալները դուրս կը ցատկեն իրենց դիրքերէն, եւ կը սկսին կարկուտի պէս տեղատարափ գնդակներ տեղացնել յառաջացող չէրքէզներու գլխուն: Մավրըին փեսան որ դարանակալ կեցողներէն մէկն էր, քարի մը ետեւէն հրացանը կը պարպէ, չէրքէզը վար կը գլորուի ձորը: Մավրըն ազատելով կը հասնի Ջէյթուն: Մեր հայերը, կը պատմէին մեզի թէ՛ չէրքէզը խածած էր Մավրըին մատը եւ Մավրը Ջէյթուն հասնելով, իր մատը միւռնով վերամկրտել տուած էր իրենց քահանային: Դարանակալներուն դուրս խոյանալուն, այնպիսի աղմուկ մը կը բարձրանար որ կարծես երկինք գետին կը գոռային: Հայերը այնպիսի ճշդութեամբ կը կրակէին որ ոչ մէկ գնդակ կը վրիպէր իր նպատակէն եւ թշնամի դիակները կը դիզուէին ձորին մէջ: Թուրք զօրքին այդ գունդը, ինչպէս քիչ առաջ յիշած էինք, մեծամասնութեամբ չէրքէզներէ կը բաղկանար, ԴՅ չէրքէզ եւ իրենց 9 պէյերն ալ միասին ինկած էին հոն: Պէյերուն անունները իրենց սուրերուն վրայ գրուած էին: Այս ջարդը այնքան սոսկում եւ սարսափ ազդած էր ողջ մնալով փախչող չէրքէզներուն վրայ, որ անոնք իրենց կիսատ-պրատ աղքատ թուրքերէնով առած մը քնած էին հետեւեալ կերպով. «Մարաշ տուրաղան, չէրքէզ վարաղան, Ջէյթուն վուրաղան, աման, աման, փէք եաման», այսինքն Մարաշը կեցեր է, չէրքէզը կը յարձակի, գէյթունցին կը զարնէ, վայ մեզ, վայ մեզ, շատ անգուլթ են»: Այդ ձորը կոչուեցաւ «Գրըմ տէրէսի, այսինքն «կոտորածի ձոր»: Մինչդեռ մեր դարանակալները այդ ձորին մէջ չէրքէզները կը ջարդէին եւ ողջերը սարսափահար խուճապի մատնուած կը փախչէին, քահանայից դասը, տասը ըոպէ անդին, մէկ ձեռքերնին զէնք եւ միւսին խաչ ու Աւետարան, Սիմէոն Կաթողիկոսի Տէր Ողորմեայի երգը կ'երգէր

«Արի Աստուած հարցն մերոց, որ ապաւենդ ես նեղելոց, հաս յօգնութիւն ծառայից քոց, լեր օգնական ազգիս հայոց»։ Հոն էր վանքի տիրացու Մկրտիչ Զօփուռեան, ուսին կը պահէր երկար ձողի մը ծալքը գամուած խաչէլէ մը (խաչվաոր), Ս. Աստուածածնայ հրաշագործ մէկ պատկերով, իր քովը Տ. Ղազար ուսեալ քահանան երկխոսութեամբ ձեռքին կը կրէր Գող Վասիլի հոշակաւոր ձեռագիր, մագաղաթեայ Աւետարանը որպէս Տապանակ ուխտի։ Իսկ վանքին դրան կը կենար պատրաստ Ծամեայ Հերոս Մարտիրոսեան Մահտեսի Գրիգոր աղան (մըխսը Մարտիրոսեանց Գուգուր էղէն), որուն յանձնած էին վանքին պաշտպանութիւնը։ Քիչ վերը յիշուած խումբ մը մարտիկներով, որոնք կը բաղկանային 7 հրոսակներէ եւ մի քանի 10-15 տարեկան դպրոցական պատանիներէ, բոլորն ալ գինուած։ Այս տեղ ճշմարիտ հայրենասիրութեան եւ անձնուրացութեան տիպար մը հանդիսացաւ Մարկոս Աղա Թաշճեանը, Շովրոյեան Թաղէն։ Երեւոյթ մը որ սակայն զէյթունցիներուն համար բացառիկ եւ հազուադիւս իրողութիւն մը չէ։ «Տէր հայր, կ'ըսէ Մարկոս աղա, պիտի երթամ Թնդանօթածիղն սպաննեմ» կ'ըսէ ու մէյ մըն ալ կ'անհետանայ։ Մերթ սողալով, մերթ քայլելով, մեծ զգուշութեամբ կը մօտենայ Թնդանօթածիղին, կը քաշէ հրացանին բլթակը եւ Թաւազլոր կը ձգէ զայն Ազիզ Փաշայի ոտքերուն տակ։ Թշնամի գնդակ մըն ալ կու գայ գինքը կը տապալէ։ Բայց ան արդէն հասած էր իր նպատակին։ Փաշան տեսնելով այսքան յանդգնութիւն, սարսափած էր, ամբողջ մարմնովը կը դողար, ձիուն վրայ չէր կրնար կենալ, ծունկին կապելը թուլցեր էին։ Զէրքէզներուն ջարդը եւ մէյ մըն ալ այս վերջին խիզախութիւնը զարհուրած էր փաշան։ Բանակին մէջ հայ ջորեպան մը կար Շաքարեանց Գալուստ անունով, փաշան այդ մարդուն կռնակը դրին եւ փոխադրեցին հեռուն։ Իսկ պետերն եւ զօրքը ի տես փաշային այս վիճակին եւ փախուստին, իրենք ալ կը սկսին անկանոն կերպով փախչիլ։ Տ. Ղազար Քահանան, Թէպէտեւ խօսած եւ արգիլած էր Մարկոս Աղային, որ նման փորձ մը չընէ, ըսելով որ, անպայման քեզ ալ կը զարնեն, բայց Մարկոս Աղան ըսած էր՝ գիտեմ որ ես ալ պիտի սպաննուիմ, բայց հոգ չէ, քանի որ ուրիշներ պիտի ապրին։ Զէյթունցիք երկար ատեն յիշեցին Մարկոս Աղայի այս հերոսութիւնը հետեւեալ բառերով։ «Հէյ կիտի Տէաշճինց Մէարկիւս Աղօ, գեղէն համօր հիգդէն տովով, թօփճին կըպուց, գեղէն հեգդէն խլլասեց այսինքն «Ախ Թաշճեան քաջ Մարկոս Աղան, գեղին համար հոգին տուաւ, Թնդանօթածիղը սպաննեց, Զէյթունի հոգին ազատեց»։

Ազիզի բանակը, բազմաթիւ սպաննուածներով (2000 սպաննուած ու խեղդուած) կը քաշուի, զէյթունցիներու ձեռքը կ'անցնին 3

Թնդանօթ, զէնք, ռազմամթերք եւ ուտելիք։ Զէյթունցիներու կորուստը եղած էր Չախրը Տէրէի կողմին 72 հոգի, իսկ այս տեղ կը նահատակուին 5 հոգի, Գալուստ Վարդապետ, Զօպու Արարդեան, Թորոսեանց Յակոբ, Գուգուրեանց Փանոս եւ Թնդանօթածիղն սպաննող Թաշճեան Մարկոս Աղան։ Ասոնք կը բերուին վանքը եւ այնտեղ կը թաղուին մեծ հանդիսութեամբ։ Ազիզ Փաշայի կորուստը եղած էր աւելի քան 2000։ Փախչողներէն շատեր կը հալածուին եւ Զահան գետը կը խեղդուին։ Թշնամիին այս ահագին կորուստին դէմ ուրեմն 77 հոգի կ'ըլլայ զէյթունցիին տուած զոհը։ Թուրքերու Թնդանօթներու արձակած 41 ռումբերէն միայն սեւ էջ մը կը սատկի, որ կ'արածէր Պոստանեանց արտը եւ անմահացաւ Զէյթունի երգըուն մէջ։

Հազար ութ հարիւր վաթսուս երկուսիս, Յունական Օգոստոս ամսուն երկուսիս, Զերբէգ քարդուեցան Գըրկընի քեօփիւն Դիակաց կայսերը թոչումները վախցուցին։

Ազիզ Փաշան եկաւ Թնդանօթ լարեց, Քառասուն եւ մէկ ռումբ մետեց, էշ մը գլորեց, Թաշճեանը թօփին գարկաւ գետին տապալեց Փաշան ալ սարսափեմ գետին փռուեցաւ։

Փաշային ծունկերուն կապը քակուեցաւ, Շաքարեանց Գալուստին շալակով փախաւ, Զերբէգներուն գլուխները թոչնոց կեր եղաւ, Քառասուն հազար զօրքն իսկոյն ցրուեցաւ։

Մեր նահատակներու թաղման արարողութեան պահուն, խուռն բազմութիւն ժողովուած էր։ Եկեղեցիներու կողնակները կը հնչէին։ Քահանաներ եւ դպիրներ ծնրադիր կ'երգէին ապաշխարութեան եւ Յարութեան շարականները «Փարաւոն հանդերձ կառօքն ընկղմեցան ի հոսանս ջուրց եւ որդիք խորայէլի գնացին ընդ ցամաք ի մէջ ծովուն»։

Թուրք դիակներ, որոնք Զէյթունի եզերքները եւ կոտորածի ձորն էին ինկած, պատերազմը վերջանալէն յետոյ, ինչ որ մնացած էր մէջտեղ, զէյթունցիք ընդարձակ փոս մը փորեցին եւ Մուլլա Մուստաֆաի ձեռքով, խլամական արարողութեամբ թաղել տուին։ Պաճեան Մահտեսի հաւոր դիակի գլուխ 30 փարա վճարեց թաղող թուրքերուն։ Ազիզ Փաշայի բանակին մէջ էին աւելի քան հազարական պաշտպաններով հետեւեալ աշիրէթները։

Զուգալցի, աղմալցի, սինէմէնցի, գըլլըլը քիւրտերը եւ Աֆշար,

Ռէհանը, Նէաիրի, Պէկթաշը, Խուժարը, Քիւրթիւլլի, Պօզտուղան, Ճիրիտ, Թէճիրլի թիւքմէները: Այս բոլորին հրամանատարն էր Մարաշցի Պալաթի Ջատէ Օսման Պէյը, որ Աւագկալի վրայօք եկած էր, այրած էր Աւագկալը եւ յառաջացած դէպի Չէյթուն: Թէպէտեւ այս պատերազմին մասնակցիլ առաջարկուած էր նաեւ Գօգան Տաղը տիրապետող Եուսուֆ Աղային, սակայն ան մերժած էր իր մասնակցութիւնը բերել, նախատեսելով պատերազմին անյաջող վախճանը եւ ըսած էր թէ՝ «Բարեկամի հետ թշնամի չեմ ուզեր ըլլալ»:

Պատերազմէն յետոյ, Կ. Պոլիս որպէս պատգամաւոր կը մեկնին Մնացական Սէմէրճեան եւ Տէյի Քէչիքի գերդաստանէն՝ Տ. Յակոբ Քահանայ, որ ինքն ալ անձամբ մասնակցած էր կռիւին եւ վիրաւորուած էր սրունքէն: Կը Հասնին անոնք Պոլիս, ծանօթացնելու համար Չէյթունի դէպքերը հայ շրջանակներուն: Ըստ Մնացական Սէմէրճեանի պատմածին, իրենց տուած տեղեկութիւններէն է որ Մ. Պէյիկթաշեան ներշնչուած եւ գրած է Չէյթունի մասին իր «Դու զով խնդրես Մայր իմ անուշ» քերթուածը, որ վերջէն երգի վերածուեցաւ: Իսկ ռուսահայ գրագիտուհի Տիկին Ար. Աղեք. Երեցեան՝ քոյրը Պոլսեցի Մարկոս Աղաբեկեանի, կը պատմէ թէ՝ իր մանկութեան օրերուն իրենց տունը հիւր եղած էր Չէյթունի պատգամաւոր Տ. Մովսէս Քահանայ Խաչուկենց, որուն սրտածմլիկ պատմութիւններէն ազդուած՝ յորինած էր բանաստեղծը իր վերոյիշեալ ոտանաւորը: 1882 Սեպտեմբրին Մ. Սէմէրճեան եւ Տ. Յակոբ, Հաճընէն Սիս, հետիոտն քալելով կը Հասնին Կաթողիկոսին, անկէ կը ստանան Հարկ եղած գրութիւններն եւ Մերսինի նաւահանգիստէն կը մեկնին Պոլիս եւ 1882 Սեպտ. 27-ին կ'ելլեն Պոլիս: Մինչ հայ գրագիտուհին կ'ըսէ թէ՝ «1883-ին սկիզբը, ձմեռնային մի ցուրտ երեկոյ էր, Տ. Մովսէսի հետաքրքրական դրուագները գրուած էին իր շուրջը խմբուած երիտասարդներու հետաքրքրութիւնը: Ան կը պատմէր մի սրտածմլիկ անցք, թէ ինչպէս մի յուսահատ մայր, մի խեղճուկ հայ կին գիշերային լուսթեան մէջ, պատերազմի դաշտին վրայ փնտռած է իր միակ որդւոյն դիակը: Նոյն գիշերը հիւրերից մի քանիսը մնացին մեր տունը քնուլ, որոնց թուումն էր նաեւ Մկրտիչ Պէյիկթաշեան: Միւս օրը նախաճաշիկի ժամանակ Պէյիկթաշեան կարդաց մի կտոր թղթի վրայ մատիտով գրուած վերոյիշեալ բանաստեղծութիւնը, զոր գրած էր Տ. Մովսէսի առաջին գիշերուայ առած տխրագին պատմութեան ազդեցութեան ներքոյ»:

Շիտակ է որ Սէմէրճեանի եւ Տ. Յակոբի պատգամաւորութենէն քանի մը ամիս յետոյ Պոլիս կը Հասնի նաեւ երկրորդ պատգամաւորութիւն մը՝ բաղկացած իշխաններ՝ Աստուածատուր Ենիտիւնեանէ եւ

Հազոր Շորվոյեանէ եւ Տ. Մովսէս Քահ. Խաչուկենցէ, որոնց ընկերանալով Կ. Պոլիս կը վերադառնար նաեւ Ներսէր Եպս. Վարժապետեան (Ատանայի մէջ վարդապետութենէն, Սիսի Կիրակոս Կաթողիկոս Բ. էն Եպիսկոպոս կը ձեռնադրուի միջնորդութեամբը Ատանայի երեւելիներն՝ նշանաւոր Մանուկ Պէյ Սամուրզաշեանի): Այս երկրորդ պատգամաւորութիւնը կ'երթար Պոլիս, Չէյթունի իրաւունքները պաշտպանելու համար, որովհետեւ Ազիզ Փաշա պարտուելով հանդերձ, վրէժ լուծելու համար հրաման ղրկած էր ամէն կողմ եւ հրահանգած էր թէ՝ ամէն ինքզինք իսլամ ընդունող անհատ ուր որ գէյթուցիի մը հանդիպի, պէտք է որ կողոպտէ եւ սպաննէ: Եւ այդ պատճառով գէյթուցիք իրենց սահմաններէն հեռանալէ կը զգուշանային եւ սովորի կ'ենթարկուէին: Տրամաբանական է որ՝ առաջին պատգամաւորներէն Տ. Յակոբի պատմածներէն ազդուած ըլլայ բանաստեղծը, եւ գրած ըլլայ իր քերթուածը, քան թէ երեք ամիս յետոյ եկող պատգամաւորներէն Տ. Մովսէս Քահանայի լսածներովը, որովհետեւ Պոլսոյ հայութեան մէջ մեծ հետաքրքրութիւն կար Չէյթունի կռիւներուն մասին եւ բնական էր որ առաջին հանդիպողէն սպասէին լսել, անհամբերութեամբ ունկնդրել պատմութիւններ: Սակայն կայ նաեւ ուրիշ պարագայ մը, որ մեզի իրաւունք կու տայ ենթադրելու թէ՝ երկրորդ պատգամաւորներէն Տ. Մովսէս Քահանայ Խաչուկենցի պատմութիւններուն վրայ է որ գրած կ'ըլլայ Մ. Պէյիկթաշեան «Դու զով խնդրես...»: Այն որ Տ. Մովսէս թէպէտեւ երեք ամիս յետոյ Պոլիս կ'երթայ, սակայն Տ. Մովսէս տան երէցն էր, այն երիտասարդին՝ Մեսրոպ Խասեանին, որուն աղիքները դուրս թափած էին թշնամիի դաշտին, հետեւաբար անոր այս աղեխարշ վիճակին եւ մահուան վրայ շատ մօտէն եւ խորապէս տեղեակ եղած ըլլայ, ազդուած եւ Պոլիս երթալուն շատ յուզուած կերպով ներկայացուցած ըլլայ իրողութիւնը: Բայց որ քահանան ալ եղած ըլլայ՝ Տ. Յակոբ թէ Տ. Մովսէս այդ պատմութիւնը ընողը, մեր պատմութենէն շատ բան չկորսուիր կամ փոխուիր: Իրողութիւնն այն է որ, Շորվոյեան Պօզպայիր թաղէն եւ Տ. Մովսէսի ծուխերէն Մեսրոպ Խասեանն է որ Ազիզ Փաշայի կռիւին դաշունահար կ'ըլլայ թշնամիէն³⁷ աղիքները, փորոտիքը դուրս կը թափին եւ շատ չանցած կը մեռնի: Իր մայրը եւ կինը՝ Ճարդոր, (որ մեր դրացին էր եւ երբ խելքս կը հասնէր, արդէն գառամած պառաւ մը եղած էր), կ'ելլեն եւ դիակներու մէջ կը փնտռեն իրենց տղան եւ ամուսինը, որ մէկ ամսուան փեսայ էր: Ճարդոր, իր մէկ ամսուան ամուսինէն՝ Մեսրոպէն, կ'ունենայ մանչ զաւակ մը եւ կ'անուանեն զայն Համբարձ: Համբարձ, Ս. Յովհաննէս եկեղեցիին կոչնակահարն էր երկար տարիներ: Այս ալ կ'ունենայ

յետոյ մանչ զաւակ մը եւ իր նահատակ հօրը անունով Մեսրոպ կը կոչեն: Այսինքն Մեսրոպի թոռը՝ Մեսրոպ, որ մեծցաւ կտրիճ եւ կրակ ու բոց երիտասարդ մը եղաւ: 1920-ին Չէյթունի նահանջին կը սպաննուի թշնամիներէն Անտրոնի կողմերը:

Պոլիս զրկուած պատգամաւորները դեռ մայրաքաղաք չհասած արդէն Փարիզ զրկուած էր զէյթունցի Գրիգորիս Վարդապետ Ափարթեան, բողոքելու Նափոլէոն կայսեր, թուրք կառավարութեան հայահալած ընթացքին համար: Գրիգորիս Վարդապետ Ափարթեանի կ'ընկերանայ նախապէս Փարիզ գտնուող Կարապետ Վարդապետ Շահնազարեան: Կը յաջողին բողոքը ներկայացնել Նափոլէոն կայսեր, երբ ան կառքով կ'անցնէր եւ կայսրը կ'ապահովցնէ թէ նկատի պիտի առնէ եւ անհրաժեշտ կարգադրութիւնը պիտի թելադրէ առ որ անկ է: Իրաւ ալ Պոլսոյ Ֆրանսական դեսպանը կը միջամտէ Բ. Դրան մօտ, որպէսզի Չէյթունի դէմ թշնամութիւնը դադրեցուի: Սուլթան Ազիզ³⁸, որ Ազիզ Փաշայի պարտութեան վրայ զայրացած 100000-նոց բանակ մը որոշած էր զրկել Չէյթուն, Նափոլէոն կայսեր միջնորդութեամբ ետ կը կենայ իր այդ մտադրութենէն: Զօրքերը ետ կը դառնան, Ազիզ Փաշան ալ պաշտօնանկ կ'ըլլայ եւ կը զրկուի Սիւլէյմանիէ: Անոր տեղ Մարաշի կառավարիչ կը նշանակուի Ափր Փաշա: Եւ Չէյթունի երթեւեկութեան արգելքը կը վերնայ:

Նմանապէս երկրորդ պատգամաւորութիւնը՝ բաղկացած իշխաններ Աստուածատուր Ենիտիւնեանէ, Հազօր Շորվոյեանէ եւ Տ. Մովսէս Քհնյ. Խաչուկնցէ, ընկերակցութեամբ Ներսէս Եպս. Վարժապետեանի դիմած եւ ամէն ինչ մանրամասնօրէն հասկցուցած էր Եպարքոս Ալի Փաշայի եւ պահանջած՝ իրաւունք եւ արդարութիւն: Ալի Փաշա խոստացած էր հարկ եղած քննութիւնը ընել եւ արդարութիւնը գործադրել նոր կազմուելիք յանձնաժողովի մը կողմէ: Առաջին պատգամաւորները՝ Տ. Յակոբ եւ Սէմէրճեան, վերջիններուն Պոլիս հասնելէն 15 օր յետոյ կը մեկնին Պոլսէն Չէյթուն, Ֆրանսական դեսպանի Բ. Թարգման՝ Պ. Ժիւլ-Բոպէրթի հետ: Այս վերջինը աւելի քան երկու շաբաթ կը մնայ Չէյթուն, կը քննէ կացութիւնը, անցուդարձերը եւ կը վերադառնայ Պոլիս: Իսկ երկրորդ պատգամաւորութեան երեք անձերը՝ երկու իշխանները եւ Տ. Մովսէս Քահանան շուրջ տարի մը կը մնան Պոլիս եւ շատ հաւանական է կրկին՝ թէ Տ. Մովսէս Քհնյ. եղած ըլլայ Խասեան Մեսրոպի սրտաճմլիկ մահը պատմողը Պէշկիթաշլեանի³⁹:

Յանձնախումբը Չէյթուն կը զրկուի: Մեծ Եպարքոս Ալի Փաշայ խոստացած յանձնախումբը՝ կազմուած Բ. Դրան կողմէ՝ ներկայացուցիչ Շահին Պէյէ, Պատրիարքարանի ներկայացուցիչ՝ Սարգիս Էֆէնտի Ա-

դարէկեանէ եւ հայ կաթողիկոսներու կողմէ՝ Տափուտ Էֆէնտի, կու գայ Չէյթուն, սակայն առանց հիմնական կարգադրութիւն մը ընելու՝ կը վերադառնայ Պոլիս: Ու կը մնայ կացութիւնը նոյնը: Չէյթունցիներու եւ շրջակայ թիւրքմէն, քիւրտ, չէրքէզ ցեղերու յարաբերութիւնները կը մնան նոյն յարուած վիճակին մէջ: Այս բարբարոսները առիթ կը փնտռէին զէյթունցիներ կողոպտելու եւ սպաննելու: Չէյթունի սահմաններէն դուրս, զէյթունցիք ալ դարանամուտ կ'ըլլային անոնց, կը փոխադարձէին ամէն անգամ որ պատեհութիւնը կը ներկայանար:

Պոյամեանի սպաննութիւնը: 1863-ի Մայիսին, Պոյամեաններու ընտանիքէն մէկը, Եարփուզէն Չէյթուն վերադարձի ատեն, Չափաար Պէյ-կիրճը, ժայռի մը ետեւը դարանակալ չէրքէզէ մը գնդակահար կը սպաննուի: Չէյթունցիք դիակը Չէյթուն կը բերեն, կը թաղեն եւ կ'ուխտեն որ գերեզմանէն տուն առանց դառնալու պիտի երթան վրէժը պիտի լուծեն: Չէյթները իրենց տուններէն բերել տալով, 70 մարդ կը զինուին եւ անմիջապէս ճամբայ կ'իյնան ու կ'երթան Չէրքէզին գիւղը, որ Չէյթունէն 10 ժամ հեռու է, 8 մարդ կը սպաննեն անոնցմէ, գիւղն ալ աւարի կու տան ու կը վերադառնան Չէյթուն:

Չէյթունի առաջին գայմազամը՝ Սալիհ. 1865- Չէյթունցիին պատուախնդրութիւնն ու ազատասիրութիւնը հաճելի չէր թուրք կառավարութեան: Թուրքին համար ահուայի ցաւ մըն էր Չէյթունը, պէտք էր քաշել հանել զայն եւ ազատիլ անկէ: Չէյթունցի պատուիրակներուն դիմումը չնպաստաւորուեցաւ, անանկ որ՝ Սուլթանը կ'ուզէ թուրք պաշտօնեաներու միջոցով իրեն ննթարկել այս լեռնականները: 1865-ին, Բ. Դրան հրահանգովը, Մարաշի գօրքերու հրամանատար՝ Քէյ Հասան Փաշան՝ 1895-ին Չէյթուն արշաւող Ալի Պէյի հաքըր, Չէյթունի իշխաններուն կ'առաջարկէ յօժարակամ ընդունին եւ Մարաշ երթալով իրենք անձամբ տանին զայն հաստատեն իր պաշտօնին: Հակառակ պարագային բռնի պիտի պարտադրէ զայն Չէյթունի իշխանները կը խորհրդակցին կացութեան վրայ եւ նկատի առնելով հետեւեանքը, ամիս մը յետոյ, Տ. Մովսէս Քահանան կը զրկեն Մարաշ որպէս հրաւիրակ նորընտիր գայմազամին: Գայմազամ Սալիհ Էֆէնտիի հետ Չէյթուն կու գան թուրք դատաւոր մը, եւ որպէս բարենորոգիչ պաշտօնեայ հայատեաց երիտասարդ մը՝ հազարապետ Հիւսէյին Ասոնք կը սկսին ժողովուրդը նեղել, ծանր տուրքեր դնել անոնց վրայ, հակառակ Սուլթան Մուրատի եւ յաջորդ երկու սուլթաններու Խաղըր Շէրիֆներով հաստատուած առանձնաշնորհում-

ներուն, որոնք վերջ կը գտնէին այսպէս Սուլթան Ազիզի օրով: Այդ ժամանակները, կառավարութիւնը Պրզ Աբրարայի վերեւ, զառիթափի մը վրայ կը փորձէ դօնախ մը, կառավարական պալատ մը չինել, իսկ նոյն աղբիւրի վարը, դէպի հարաւ տախտակէ մզկիթ մը կանգնել կու տայ Մարաշէն եկող թուրք պաշտօնեաներու եւ Զէյթուն բնակող 30 տնուոր թուրքերու համար: Մարաշէն կու գայ նաեւ մոլեռանդ Ֆախր մը (կրօնաւոր) եւ կը գրգռէ այդ փոքրաթիւ թուրքերը զէյթունցիներու դէմ: Իշխանները առիթի մը կը սպասէին այս ծանր լուծը թօթափելու համար: Բայց Հազարապետ Հիւսէին առանց միջոց տալու, իշխանները խարդախութիւնով մը Մարաշ կը տանի եւ անկէ ալ Հալէպ կը դրկուին, երկու ամիս Հալէպ մնալէ յետոյ կուսակալ Ճէվանթ Փաշա, Պոլիս կը դրկէ զանոնք: Մէկ ու կէս տարի կը մնան այնտեղ: Այն ժամանակին Պոլսոյ Պատրիարքը՝ Թագթագեան Պօղոս Սրբազան յիմարաբար կ'աշխատի համոզել իշխանները, որ թողուն Զէյթունը եւ զաղթեն Ադրիանուպոլիս եւ խօսք կու տար որ Սուլթանէն թոշակ պիտի կրնար ապահովել իրենց գերդաստաններու բոլոր անդամներուն, սկսած օրօրոցի մանուկներէն: Իշխանները կը մերժեն ոեւէ թոշակ եւ շնորհք եւ մենք մեր երկիրը, անոր հողն ու ջուրը կ'ուզենք, կ'ըսեն: Մեր երկրին ցամաք հացը չենք փոխեր ըսին անոնք օտար երկրի կարկանդակին հետ: Մենք կը մեռնինք եւ ուրիշ տեղ չենք գաղթեր: Իշխաններու այս հաստատ որոշումին վրայ, Պոլսոյ մեր ազգային մեծերը կ'աղաչեն Սուլթան Ազիզի, որ արտօնէ անոնց, իրենց տեղը դառնալու: Սուլթան Ազիզ հայ մեծամեծներու խնդրանքին եւ էջմիածնայ նորընտիր Գէորգ Դ. Կաթողիկոսի, նմանապէս ուսաց Պոլսոյ դեսպան Իզնատիւի դիմումներուն վրայ կը թոյլատրէ անոնց դարձը Զէյթուն, էֆէնտիութեան աստիճան եւ միանգամայն ճանապարհի ծախսերու համար անհրաժեշտ դրամը շնորհելով անոնց:

Այդ ատենները, Հալէպի Առաջն. տեղապահ Մկրտիչ Վրդ. Տիգրանեան Զէյթուն կու գայ եւ 7 պատանիներ կը տանի Պոլիս Շահնազարեան վարժարանը ուսանելու համար: Այդ ընտրուածներէն կարեւոր տեղ մը բռնեց յետագային Փիլիպպոս Փիլիպպոսեան, որպէս ուսուցիչ եւ մտաւորական: Ատկէ քիչ յետոյ, այս անգամ Երուսաղէմի միաբաններէն զէյթունցի Աթանաս Վրդ. Ատուրեան, հոգեւոյս Եսայի Պատրիարքի կողմէ կ'այցելէ Զէյթուն, Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանին համար Զէյթունէն 9 աշակերտներ կը տանի, անոնց մէջ արժանաւոր տեղ կը բռնեն յետագային Զգօնեան Մանուկ՝ Պոզպայիր Թաղէն (որ վերջէն յեղափոխական պատճառներով, կառավարութեան հետապնդումներէն ազատելով անցաւ Կիպրոս), Սմբատ Տ. Ղազարեան (Սմբատ

Բիւրատ) Զոնուզի Տ. Կարապետ քահանան եւ Զէյթունի Սահակ քահանայ Եաղուպեան: Մանուկ Զգօնեան երկար տարիներ ապրեցաւ Կիպրոս: Թերեւս հարիւր տարեկան մը կար, երբ վերջերս մեռաւ այնտեղ: Այժմ իր տղան, թոռները եւ անոնց զաւակները կ'ապրին Կիպրոս: 1888-ին է որ Զէյթուն կ'ունենայ առաջին թուրք դայմազամը եւ կ'ենթարկուի թրքական կառավարութեան:

Գօզանի պէյերը.— Այնթապ կը գտնուէին մաղադործ գնչուներ, որոնք «խրզան» այսինքն չինկանէ, փոշա կը կոչուէին: Ասոնցմէ երկու եղբայրներ 1840-ին, կու գան Հայզան-Հաճըն: Ասոնք ատեն մը մաղադործութեամբ զբաղելէ յետոյ, հետեւեալ բախտաւոր պարագան կը ներկայանայ: Հաճընցի հայեր կարգ մը խնդիրներու պատճառով կը պառակտին իրենց մէջ եւ չեն կրնար իրաւախուժութեամբ համաձայնի: Խելացիներէն ոմանք այս վիճակին որպէս դարման հետեւեալ գիւտը կ'ընեն: Այդ եկուոր գնչուները իրենց պետ ճանչնալ, ոեւէ խնդիր անոնց դատաստանին յանձնել: Ասոնք մոլեռանդ թուրքեր չեն կ'ըսեն այդ խեղճ-դաւիթները: Ի հարկին, կրնանք զանոնք ուզած ատեն վրձնել մեր մէջէն, կը խորհին անոնք: Եւ կը հաւանին որ անոնք իրենց իշխանները ըլլան: Շատ չանցած, այդ երկու մաղադործները կը դառնան մէկ մէկ բռնաւոր ու կը սկսին նեղել, կեղեքել, հարստահարել Հաճընի հայերը: Կը մեծնան, կը հարստանան, ի վերջոյ կ'ընդունին նաեւ սիւննի մահմետական աղանդը, եւ թուրքերու մօտ կը ստանան մեծ յարգ ու պատիւ: Խրզան անունը կը փոխուի Գօզան Օղլուի: Ժամանակ մը յետոյ փոքր եղբայրը կ'անցնի Սիս, վրան կը լարէ այնտեղ, կը կոչուի Չատր Օղլու եւ կը սկսի բռնանալ Սսի հայոց եւ մանաւանդ վանքին վրայ: Հաճընցիներ երկար ատեն տուրք վճարած են Գօզան Օղլուի: Հաճընցի հայ մը՝ Գալէնտէրեան Զէյթունի իշխանները կը հրաւիրէ օր մը, Գօզան երթալ՝ Գօզան Օղլու Եուսուֆ Աղային հետ տեսնուելու: Զէյթունի իշխաններուն կողմէ Եաղուպեան իշխանն է որ կ'երթայ, ուր պատիւներու կ'արժանանայ եւ նորանոր նուէրներով մի քանի օր յետոյ կը վերադառնայ Զէյթուն: Այս պարագան հոս միջանկեալ ըլլալով մասնաւորաբար կը յիշենք, հերքելու համար 1894-ին Ս. Բեթերսպուրկ հրատարակուած «Կիլիկիա» խորագրով գրքոյկին մէկ սխալը, որով Զէյթունը հարկատու կը ներկայացնէ Գօզանի պէյերուն: Այդ հարկատուները հաճընցիները եղած են, ինչպէս պատմեցինք քիչ առաջ, ան ալ իրենց խելացութեամբը եւ կամքովը: Իսկ զէյթունցիք ընդհակառակն նուէր ստացած են Գօզան Օղլուէն ինչպէս որ տեսանք: Այս Գօզանեաններուն անունով Կիլիկեան Տաւրոսի մէկ ճիւղը, Սիսի չրջանին մէջ կոչուած է Գօզան

Գայմազամ Տավուտ Նիազի.— Իշխաններու վերադարձն հաջորդական տարիներ խաղաղութիւն կը տրիէ Զէյթունի մէջ: Սակայն 1875-ին, Տավուտ Նիազի Գայմազամին օրով դարձեալ վրդովուեցաւ խաղաղութիւնը, այդ անպիտան միականի (քէօր դայմախամ կ'ըսէին մերոյնք) գայմազամին պատճառով: Այս կաշառակեր պաշտօնեային տունը կը մտնեն գիշեր մը, Զէյթունի ըմբոստ հայերէն մէկ երկու հոգի եւ անոր ոսկիներու սնտուկը կը տանին: Կոյր գայմազամը կը կասկածի, իր քով ծառայող Արթին Թօփուզեան ոստիկանին վրայ կը չարչարէ զայն ամբողջ գիշերը: Մատները իրարու կը կապէ, ասեղներով մարմինը կը ծակծկէ, դանակով կը վիրաւորէ մարմնին մի քանի տեղ ու երբ կը տեսնէ որ որեւէ յայտնութիւն մը չ'ըներ ան, գլխի վրայ կը կախէ զայն, ախոռը յարգանոցի ձեղունէն: Իր քոյրը, Բեթնուկ Եղիսարէթ կ'իմանայ, դրացիներն ալ կը լսեն խռովոցի ձայներ, եւ կը փութան Էօղճենց—Մախուտենց տան ախոռը եւ կը գտնեն Արթինը, որ վերջին վայրկեաններուն մէջ է: Քիչ յետոյ կը մեռնի Արթին, քոյրը կը խենդանայ, կը սկսի քարկոծել Գայմազամին բնակարանը, որ Պաղ Աղբիւրի կամուրջին առջեւ, քիչ մը դէպի արեւմուտք, ձորին նայող Էօղճենց տունն էր: Այդ օրէն յետոյ քոյրը՝ որ Եղիսարէթ կը կոչուէր, կը խենդանայ եւ փողոցները կը պտըտի եւ կը գիշերէ: Խեւ Բեթնուկ կոչեցին զինքը: Զէյթունցիներ կը հաւաքուին, կտոր կտոր պիտի բնեն ոճրագործ գայմազամը, սակայն Աղճապէկեան Ստեփան Վարդապետ հազիւ կը հանդարտեցնէ ժողովուրդը: Լուրը կը հասնի Մարաշ, հազարապետ մը եւ հալազի Տօլէթ Էֆէնտին կու գան Զէյթուն, պաշտօնանկ կ'ընեն կոյր Տավուտ Նիազի գայմազամը եւ կը տանին Մարաշ, հոն պատժելու խոստումով, որ պէսզի ժողովուրդը խռովութիւն չյարուցանէ: Արսլան Պէյ անուն չէրքէզ մը գայմազամի փոխանորդ կը կարգուի: Քանի մը օր յետոյ, զէյթունցիք կ'իմանան թէ Տավուտ Նիազի չէ պատժուած եւ Մարաշ ազատ կը պտըտի: Սաստիկ զայրացած կը խռովեն կառավարական շէնքին վրայ, քար ու քանդ կ'ընեն զայն, իսկ մզկիթը կ'այրեն: Մզկիթին տեղը վերջը Զախրեաններու բանջարանոց եղած էր: Գալով Պաղ Աղբիւրի հոտեր, վերը, զառիթափին, որպէս ղօնախ, փորուելիք վայրին Պօզպալքի ժողովուրդը չի թողուր որ կառավարութիւնը հոն շէնք չիտէ, լսելով թէ՝ աղբիւրին ջուրերը սկսած են պղտորիլ, որովհետեւ հողը փորելով հասած էին ջուրի ստորերկրեայ սահմաններուն եւ այդ տեղը մնաց նաեւ ատանկ: Պօզպալքիներ այդ փորում տեղը կրկին հող լեցուցին եւ գոցեցին: Սակայն տեղը քիչ փոս կը

մնար մինչեւ մեր օրերը եւ յայտնի էր եւ կը կոչէին Ղունաղըն տեղը:

Այս դէպքէն վերջ, երեք տարի շարունակ զէյթունցիք առաջուան պէս ազատ, առանց գայմազամի ապրեցան, Մարաշի կառավարութեան հետ առանց ոեւէ կապ ունենալու:

Վերոյիշեալ մզկիթին նախքան հրդեհուիլը, թուրք պաշտօնեաներ եւ զափթիշներ մզկիթ մտնելէ առաջ, կ'իջնէին Պաղ Աղբիւր եւ երեք խոշոր գուռերուն մէջ կրօնական լողանք կ'ընէին օրիորդներու եւ կիներուն ներկայութեան անվայել եւ անպատշաճ կերպով սոթթուելով: Պօզպալքիք քանի մը անձերէ բաղկացած պատգամաւորութիւն մը կը դրկեն կառավարատուն, բողոքելու համար անոնց պետին, որ կ'երեւի այդ օրերուն առժամեայ կերպով եկած զինուորական հարկաւորապետ մըն էր: Պատգամաւորները իրենց բողոքը կը ներկայացնեն բերանացի կերպով, որքան որ կարելի է քաղաքավարական ձեւերով եւ կ'ըսեն.— Էֆէնտիմ, ազաւարը, պիր դազըմ հիւքմէթ ասքէրլէրի, փունար պաշնտա չիմնէմէյի ատէթ էթմիշ, օլուպ, պուհալ իսէ սուսլան գատընլար իշուն միւնասիպէթսիզ օլտուշունտան... իրիճա օլունուր քի պէօյլէ շէյլիր հասագ էտիսինիզ, այս տեսակ թրքերէնով մը խնդրեցին որ արգիլուին այդ անվայել վերաբերմունքները:

Զինուորական պետը մասամբ մը չհասկնալով չիմնէմէք գաւառական բառին նշանակութիւնը, մասամբ ալ արհամարհելով յաջա իրեն խեղճուկ պատգամաւորները չիմնէմէք նէ տէմէք, չիմնէմէք նէ տէմէք կրկնելով մի քանի անգամ վրանին կը խնդայ: Թրաղենց կամ Աննիկանց Մնացականը, պատգամաւորներէն մին, տեսնելով որ իրենց վրայ կը խնդայ քայլ մը առաջ կ'անցնի եւ հասակը ցոյց տալով եւ սօթթուելով անոր դիմաց կը պողայ: չիմնէմէք, չիմնէմէք տէմէք... կէօթ... աշմաք տէմէք տիր: Թուրք զինուորականը տեսնելով որ անոնք ալ զինքը կ'անարգեն եւ կ'ընայ խնդիրը գէշի հասնի, կը խոստանայ անմիջապէս արգիլել արդ լողանքները (ապտեսթ):

Հաճի Մամրէ եւ Եսաֆօղլու.— Զէյթունցիք կոյր գայմազամը վրանելէ եւ մզկիթն ու ղօնախը այրելէ եւ աւերելէ յետոյ, երեք տարի ապրեցան դարձեալ առաջուան ազատ, անկախ կեանքը: Զէյթունի ծերուկ գալլերը արձակ համարձակ սկսած էին վերստին չրջիլ Զէյթունի չրջակայ լեռները: Լերան այդ ազատ մարտիկներէն մէկն էր Վէլի օղլու Մամրէ ծերուկը՝ որ վառօդի հոտին կարօտը կը քաշէր: 1878-ին, օր մը 30 զինուած տղաներով կ'երթայ Պունտուխ հայ դիւղի լեռը, հրացանաձուլութեամբ, նշանաւորութեամբ պրաղելով գուարճանալու: Անտրուրի աւատապետ, Տէրէպէյին, Եսաֆօղլու, որ

այն կողմերը Ղարդա Չայիր ամառանոցը ելած էր, Վէզիր Օղլուի այս ռազմափորձը իր դէմը որպէս ցոյց մը նկատելով, եւ անոր ընկերներուն փոքր թիւէն օգտուելով, 500-ի մօտ իր համհարզներով կը յարձակի Վէզիր Օղլուի խումբին վրայ, երբ անոնք կերակուրի նստած էին: Զէյթունցիք, սակայն, թէեւ սակաւաթիւ, կը յաջողին զանոնք փախցնել: Լուրը կը հասնի Ֆռնուզ, վանահայր Նիկողոս Եպիսկոպոս, կը փութայ կոխին վայրը, իսկ Մինաս սարկաւազ ապագայ Բարթուղիմէոս Վրդ. վեղարաւոր հերոսը 200-ի չափ տղաք հաւաքելով անոնց գէնքերն եւ ծախսը անձամբ հոգալով, կը հասնի եւ կը միանայ Նիկողայոս Եպիսկոպոսի պատժելու համար Եպիսկոպոսին: Սակայն ան կը զգայ թէ հետեւանք լաւ պիտի չլլայ, կապանի Քէլիա Վարդիվար Գրեգորեանը կը դրկէ Եպիսկոպոսին եւ ներողութիւն կը խնդրէ եւ հաշտութեան համար զայն իր քով կը հրաւիրէ: Սրբազանը քանի մը հոգիներով կ'երթայ, իրեն կը հասնի Մինաս սարկաւազ 100-է աւելի զինուած տղաներով: Եպիսկոպոսը կը վախնայ, ոտքը կ'իյնայ Եպիսկոպոսին եւ կը խնդրէ որ խնայեն իրեն: Երդում կ'ընէ որ անկէ յետոյ հնազանդ պիտի մնայ: Զի մը 100 ռսկի նըւէր կ'ընէ Սրբազանին, Սրբազանը չ'ընդունիր նուէրը եւ կը պատուիրէ որ խելօք կենայ եւ իր երդումին տէրը մնայ ու կը մեկնի:

Դրուագներ Պապիկ Փաշայի քաջագործութիւններէն

Պապիկ Փաշա եւ Պօյրազ Ալի.— 1875-1878, երեք տարիներու ազատ շրջանին, նշանաւոր կը հանդիսանայ Ենի Տիւնիս Աստուածատու իշխանին հօրեղբոր որդի՝ Մարկոս Աղայի տղան՝ Պապիկ, որ իր կեանքին 15 տարիները հերոսութեամբ կ'անցընէ: Սայիտ եւ Քեամիկ փաշաները շատ կ'աշխատին հպատակեցնել այս քաջ լեռնականը եւ չեն յաջողիր: Անոր փաշայութեան տիրոջը թագաւորէն չէր, այլ ինչպէս իր ժողովուրդէն էր, էր նաեւ հարեւան թշնամի թուրքերէն, անոնք ալ զինքը փաշա կը կոչէին եւ այնպէս ալ կը ճանչնային հիացած ըլլալով անոր քաջագործութիւններուն վրայ: Բարձրահասակ ու քաջկազմ զէյթունցի մըն էր Պապիկ Փաշա, 1888 Օգոստ. 21-ին, 40 տարեկան հասակին հիւանդանալով կը մեռնի եւ կը թաղուի Ս. Աստուածածնի բակը: Պօզտօղան Աշիրէթին պէտք Պօյրազ Ալի՝ որպէս տէրէպէյի իրաւունք կը սեպէր, կապանի հայերուն կորեկի ցանքը կերցնել իր անասուններուն: Կապանի Վարդիվար Քէլեան Մարաշ կ'երթայ եւ կը բողոքէ այս անիրաւութիւններուն դէմ: Մարաշի կառավարիչ փաշան՝ «Ես Պօզտօղանցիները չեմ կրնար զսպել, այս տարի ալ կորեկի հաց մի ուտէք» լռելով կը վճռէ Քէլեան, որ կապան կը վերադառնայ եւ կը պատմէ եղելութիւնը գի-

ղաղներուն: Գիւղացիք ճարահատ կը դիմեն Զէյթունի պաշտպանութեան: Պապիկ փաշա սիրալոյսով կ'ընդառնէ խնդրանքին եւ զարնել կու տայ նուիրական թմրուկը, զոր օծած էր Սարգիս Եպս. Կիլիկեան եւ որ կը հնչեցուէր որպէս զօրակոչ: 300-ի չափ կտրիճներ կը ներկայանան, անոնց զլուխը կ'անցնի Պապիկ Փաշա ու կը յառաջանայ դէպի կապան՝ Զէյթունէն 18 ժամ հեռու եւ կը զարնէ Պօյրազ Ալիին, որ իրրեւ նախադրական ելած էր Պապիկ Փաշայի դէմ: Պօյրազ Ալիին իյնալէն յետոյ, Պապիկ Փաշա իր տղաներով կ'արշաւէ Պօզտօղանցիներուն վրանները եւ դէպի Զէյթուն գերի կը վարէ շատ մը կիներ, աղջիկներ, մանուկներ, անոնց հետը բերելով նաեւ անոնց բոլոր անասունները՝ ձի, ուղտ, կով, էջ, ոչխար: Զէյթունցիք չեն դպիր ոչ մէկ գերիի պատիւին, հանդիստ պահելէ ետքը կը վերադարձնեն: Իսկ կենդանիները կը բաժնեն զէյթունցիներուն առատօրէն, այնպէս որ, այն տարին կոչուեցաւ լոգմա սէնէսի, պատառի տարի: Ամէն տուն միսով եւ մսացու կենդանիներով լեցուեցան: Պապիկ Փաշայի այս 300-նոց արշաւախումբին մէջ, Պապիկ Փաշայէն եւ գրագիրը՝ Մերկերիոս Էֆէնտիէն զատ միւսները բոլորը հետիոտն էին, իսկ թշնամին ամբողջօրէն հեծեալներէ կը բաղկանար եւ կոխը տեղի ունեցած էր բաց դաշտին մէջ:

Չատրըը Օղլու.— Եօթը փէչին տարին —Եօթը փաշային տարին.— Պապիկ Փաշայի այդ արշաւանքներուն ատեն տակաւին կը շարունակուէին ռուս-թուրք պատերազմը եւ երբ 1878-ի հաշտութիւնը կնքուեցաւ, Սուլթան Համիտ նորէն սկսաւ հետաքրքրուիլ Զէյթունով, որ երեք տարիէ ի վեր ինքնազուլիս կ'ապրէր: Այդ միջոցին Սիսի տէրէպէյի՝ Չատրըը Օղլու Ահմէտ Պէյ, որ Սուլթանէն փաշայութեան տիրոջն ստացած էր, Պոյսէն փախչելով Հաճըն կու գայ, եւ կ'ուզէ ժողովուրդը կառավարութեան դէմ ապստամբեցնել, լռելով թէ՛ Պէյրիի վեհաժողովին մէջ թուրքիա բաժնուելու վրայ է արդէն, ուրեմն փոխանակ ուրիշները՝ մենք պէտք է տիրենք այս երկրին: Չատրըը Օղլու այս խորհուրդը թէեւ Զէյթուն ալ կը հաղորդէ, սակայն տակաւին պատասխան չտուեցած, Ատանայի կուսակալը, Սիսի կառավարիչը եւ ուրիշ երեք զինուորական փաշաներ մեծ թիւով զօրքերու բանակով մը կը պաշարեն Ահմէտ պէյը իր ուժերով միասին եւ զինքը ձերբակալելով կ'աքսորեն:

Այժմ, կը մտածեն, կարգը Զէյթունին է, քանի որ կազմ ու պատրաստ է բանակը: Սակայն գիտեն թէ դիւրամարս պատառ մը չէ Զէյթունը, վերոյիշեալ հինգ փաշաներուն կու գան կը միանան նաեւ Հալէպի կուսակալը եւ Մարաշի կառավարիչը՝ Վէյսի Փաշա, ո-

րով փաշաներու թիւը կը հասնի եօթիւ Ու ահա այս արդար պատ-
ճառով գէյթունցիք այդ տարին կոչած են եօթը փէշին տարին եւ
եօթը փէշին պատերազմը: Ասով հանդերձ սակայն փաշաներ չեն հա-
մարձակիր յարձակիլ Զէյթունի վրայ, հակառակ իրենց մեծ ուժին:
Ուստի կը համոզեն Հաճընի Առաջնորդ՝ Պետրոս Եպիսկոպոսը, որ
Զէյթուն երթայ, յորդորէ իշխանները եւ երեւելիները որպէսզի հնա-
զանդին պետութեան եւ որպէս ապացոյց իրենց հպատակութեան,
անձամբ ներկայանան հրամանատարներուն եւ ընտրուած զայմագամն
ալ հետերնին տանին Զէյթուն: Պետրոս Եպիսկոպոս կը ստանձնէ եւ
կը գործադրէ այդ պարտականութիւնը, նկատի չառած թէ՝ ժամանակին
ալ, ճիշդ իրեն պէս՝ 1864-ին թուրք կառավարութիւնը համոզած
էր Մարաշի Առաջնորդը՝ Ալապահան Նիկողոս Եպիսկոպոսը⁴⁰, եւ
որը իր կարգին համոզած էր եւ Մարաշ տարած Ենիտիւնիա Փանոս
փաշան, Արեգինի կարապետ Քէհեան եւ Վարդանինց Չափաուր, ո-
րոնք հոն վար դրուելով բանտարկուած են: Փանոս փաշան բանտին
մէջ թունաւորելով մեղացուցած են, իսկ իր երկու ընկերները 3-7
տարի ետքը հազիւ ազատուած են:

Զէյթունցիք կը պատասխանեն թէ իրենք ապստամբներ չեն որ
կուռին բանակին դէմ, թէ եղածները Գայմագամ Տափուտ Նիսիւրի
ոճիւրին արդիւնքն է: Պետրոս Եպիսկոպոսէն համոզուած, երեւելիներ-
րէն 12 հոգի բանակ կ'երթան: Անոնք երբ կը հասնին բանակ, փողը
կը հնչէ եւ զիրենք կալանաւորելով կ'արգելափակեն: Իսկ զօրքը մօ-
տենալով Զէյթունի, կը սկսին հանդիպածնին, այր, կին գերի բռնել:
Այսպէսով բռնուածներուն թիւը կը հասնի 300-ի, որոնց մէջ կը
գտնուէին նաեւ Պապիկ Փաշային մայրն ու կինը: Զէյթունցիք չեն
ուզեր պատերազմիլ չվտանգելու համար բռնուածներուն կեանքը:
Պապիկ Փաշան գացած չէր միւս իշխաններուն հետ յանձնուելու՝ իր
400 համախոհ-համհարգներով կը սկսի կռիւի, իրեն հետ ունենալով
նաեւ Ֆոնուզի վանահայրը Նիկողայոս Եպիսկոպոսը, Աւագիւլ գիւղի
դպրոցին ուսուցիչը Յարութիւն Չազրեանը, Նօխուտեան Փանոսը:
Զէյթունցի հովիտին մէջ տեղի ունեցած ընդհարումին գերի կ'իյնան
Նիկողայոս Եպս. Յարութիւն, Պատուելի (ուսուցիչ) Չազրեան եւ
Նօխուտեան Փանոս, իսկ կը սպաննուին Պետրոս Հասէսեան եւ Խա-
չեր Գէորգեան: Թուրքերէն կը սպաննուին 60 հոգի եւ շատեր ալ
կը վիրաւորուին: Պապիկ Փաշա զայրացած վանք կ'երթայ Պետրոս
Եպիսկոպոսը սպաննելու: Սակայն վանահայր Սահակ Վրդ. (վերջէն
կարապետ Եպս. Քէչէճեան) կը պահէ զայն եւ Պապիկ փաշային կը
հաւատացնէ թէ՝ Պետրոս Եպս. փախած է: Եւ իրօք վրէժխնդիր իշ-
խանին մեկնելէն վերջ կը փախչի, Հաճըն կը հասնի շնչասպառ Գա-

լով Նիկողայոս Եպսկ-ի եւ իր երկու ընկերներուն, թուրքերը խայտա-
ռակ վիճակի մէջ Մարաշ կը տանին: Ամերիկացի հայասէր միսիոնար
Մր. Մօնթկօմըրի տեսնելով անոնց անտանելի վիճակը, կը դիմէ կա-
ռավարութեան որ իր երաշխաւորութեամբ արձակեն զանոնք: Կա-
ռավարութիւնը կը մերժէ լսել զինքը, առարկելով թէ՝ ինքը իրաւունք
չունի քաղաքական խնդիրներուն խառնուելու: Ամերիկացի միսիոնարը,
իրբեւ փոխանորդ նաեւ անգլիական հիւպատոսի, թէպէտ կը պնդէ
իր իրաւունքին վրայ, սակայն դարձեալ անլսելի կը մնայ, խիստ
լեզուով հեռագիր մը կը քաշէ Պոլիս, սակայն հեռագրապետը վար
կը դնէ հեռագիրը: Մօնթկօմըրի ջղայնացած ձին կը նստի եւ 18
ժամուան ճամբան 10 ժամէն կտրելով Այնթապ կը հասնի, որպէսզի
հեռագիրը Այնթապէն տայ, բայց դարձեալ կը մերժուի: Այս անգամ
ուղղակի Հալէպ կը քշէ իր ձին եւ այնքան արագ, որ 120 հնչուն
ոսկինոց իր ձին ճամբան կը ճաթի, շնչասպառ կ'իյնայ: Վերջապէս
կը հասնի Հալէպ, հիւպատոսներուն հետ կը տեսակցի, խնդիրը կը
հեռագրէ Պոլիս՝ Անգլիական դեսպանին, Բ. դրան եւ Հայոց Պատրիար-
քարանը: Դեսպանն ու Պատրիարքը կը դիմեն Բ. Դուռ եւ կը պա-
հանջեն որ եօթը փաշաները եւ բանակը քաշուին Զէյթունէն եւ Նի-
կողոս Եպս-ը իր ընկերներով Պոլիս փոխադրուի: Բ. Դուռը ըն-
թացք կու տայ եւ պէտք եղածը կը հրահանգէ: Զէյթունցիք վեր-
ջէն խմանալով այս արիասիրտ եւ հայասէր միսիոնար՝ Մօնթկօմըրի
հերոսաւայել գործը, չափազանց զգացուած, սրտազին շորհակալութիւն
կը յայտնեն անոր: Նիկողայոս Եպս. Յարութիւն Չազրեանի հետ
շղթայակապ Պոլիս կը տարուի, Գարաքէօփրի կամուրջին գլուխը
կախաղան բարձրացնելու համար: Սակայն Պատրիարք Ներսէս Վար-
ժապետեանի ջանքերով ազատ կ'արձակուի:

Հոս կ'ընդհատենք մենք մեր պատմութեան ընթացքը, խօսքը տա-
լու համար ճիշդ այդ ժամանակներուն ապրած եւ ինքն ալ բանակի
կողմէ պաշարման շղթայի տակ առնուածներուն մէջ գտնուած իմ
քեռայապալիս⁴¹ (մօրս հայրը) Աննիկոնց Մնացականին, որ Դժ տարեկանին
տակաւին առոյգ էր եւ անկէ յետոյ Պուզօխ կոչուած սուտ բժիշկի
մը սխալ դարմանումէն մեռաւ թուրքէն: Քեռայապալս հետեւեալ
կերպով պատմած էր ինծի իմ մանկութեան օրերուն. —

«Եօթը փէշին տարին⁴², թուրք բանակը եկաւ նորէն Զէյթունի
վրայ, իր վրանները լարեց, նստեցաւ ան Ճիմարանի դրարը (գաշտը)
Զէյթունի դիմաց: Օրերով եւ առաւօտէն մինչեւ իրիկուն բանակը կը
հնչեցնէ զինուորական փողը, ալ ձանձրացած էինք անոր ձայնէն:
Հետզհետէ սկսան ձերբակալութիւններ, ամէն կողմ: Մինչ Պապիկ
Փաշա իր ըմբոստներով կը շրջէր լեռները, Ձերբակալուածներուն

մէկ մասը կը լսէինք որ արդէն Մարաշ տարուած են: Օր մըն ալ ահա մուսուլմաններ կը սկսին կանչել փողոցները թէ՛ Սուլթանը Ֆէրման մը ղրկած է գէյթունցւոց, եւ պիտի կարդացուի ժողովուրդին, բանակին առջեւ, ուստի կը հրաւիրուիք բոլորդ որ դաշտը ներկայ ըլլաք եւ լսէք թագաւորին Ֆէրմանը: Ժողովուրդէն բաւական մը թիւով, մէկ երկու հարիւրի հասնող մարդիկ, եւ որոնց մէջ նաեւ ես ալ, խաբուած, կը փութանք Ճեմարանի Դարը, բանակին վրաններուն մէջտեղի բացուածքը: Մինչդեռ մեծերը արդէն ձերբակալուած եւ Զէյթունէն տարուած էին: Երբ կը հասնինք դաշտը, կարգ կարգ կը շարեն մեզ, եւ կը սպասենք որ Ֆէրմանը կարդացուի: Մէյ մըն ալ, յանկարծ սուրիսմանիկ զինուորներ կը պաշարեն մեզ եւ իրենց Ֆլէնթօ՞ կոչուած հարցաններով կ'արգիլեն դուրս ելլել: Զինուորներուն պաշարման շղթան կը կրկնուի, ահա երրորդ մըն ալ: Այն ատեն կը հասկնանք թէ մեզ պիտի գնդակահարեն, պիտի սպաննեն: Տագնապի այդ վայրկեանին, Մատեն Մէրէն ահա սպիտակ ձիաւոր մը սրընթաց կը հասնի Ճեմարանի դաշտը, բանակատեղը: «Փաշանըն չատըրը» կը պոռայ դիմացը ելլող պահակ զինուորին: «Եսասագ» գոչելով պահակը կ'արգիլէ թէեւ զայն, սակայն ձիաւորը մտիկ չ'ընէր զայն եւ մէկ կողմ հրելով առաջ կ'անցնի, կը մտնէ Փաշային վրանը: Բանի մը վայրկեան յետոյ, կը ձայնէ. հրովարտակը այսօր պիտի չկարդանք, այլ վաղը, սուրիսաւոր չըջանակները կը քակուին եւ մենք կը վերադառնանք մեր տունները: Հետեւեալ առտուն կ'արթնանք եւ ինչ տեսնենք, ո՛չ վրան կայ, ոչ ալ բանակ, եօթը փաշաները աներեւոյթ եղած են իրենց զօրքերով: Բանակին հեռանալը արդիւնքն էր միս-իոնար Մօնթկօմըրի Պոլիս կատարած դիմումին եւ Պոլսոյ Անգլիական դեսպանին եւ Պատրիարքարանի Բ. Դրան մօտ տարած ջանքերուն: Այդ սպիտակ ձիաւորը բանակին հեռացման հրահանգն էր որ բերած էր»:

Այդ թուականներուն կը զուգահեռին Պապիկ Փաշայի գործերը: 1878-ին է, դարձեալ, Պապիկ Փաշա լսած ըլլալով թէ՛ բերդեցի, քիւրթիւլցի եւ նէտիրցի թուրքեր գացեր Ղարս-Պազարի Հայոց եկեղեցին կողոպտեր են, Մկրտիչ Կաթողիկոսի թոյլտուութեամբ թէ հրահանգով, իր համհարզ կտրիճներով կ'արշաւէ 2000-ի հասնող քիւրթիւլցի, նէտիրիցի եւ բերդեցի ցեղախումբերու վրայ եւ մեծ ջարդ մը տալով անոնց, ողջ մնացողները կը քայքայուին: Զէյթունի գայմազամութիւնը կը վերցուի, Պապիկ Փաշայի ազդեցութիւնը կը տարածուի Պապիկ Փաշայի քիւրթիւլի ջարդը պատրուակելով, Սուլթանը կը հրահանգէ Տաւրոս ղրկուած թուրք բանակին որ նոր ուժերով յարձակի Զէյթունի վրայ, որովհետեւ Թուրքիա արտաքին ճակատի վրայ

պատերազմ չունէր, ռուս-թուրք հաշտութիւնը կնքուած էր:

Զէյթունցի Պապիկ Փաշա (Ըստ Յովհաննէս Ահարոնեանի)
(Երազան պատկեր Զէյթունի անցեալէն, Ըստ Յովհաննէս Ահարոնեանի)
Առաւօտ մը, արշայոյսը չծագած, մէյ մըն ալ կովերու բառա-ջիւնը, մաքիներու մաքիւնը եւ ուղտերու ղօղիւնը Զէյթունի բնակչութիւնը արթնցուց. արշայոյսին, ի՛նչ տեսնենք ադէկ, Զէյթունի դիմացը՝ ուր հորիզոնը բաց է, լեցուած էր ընտանի կենդանիներով:

Կապան գացող ու յաղթական վերադարձողները կ'որոշեն 10 զուարակներէն 5-ը մատաղ կտրել. մատաղի աղը օրհնելու համար ոչխար մը նուէր եւ ծրար մըն ալ աղ կը ղրկեն Սարգիս Եպս. Գալիկեանի, «մատաղփն աղը կ'օհնուի, սակայն աւարէն մատաղ կ'ըլլա՞յ, ո՛վ է այս գործին մեղաւորը կ'ըսէ ու կ'օրհնէ աղը:

Թուրք, յանուն քրիստոնէութեան, կը պատերազմի թուրքին հետ, մենք ալ իբրեւ քրիստոնեայ ժողովուրդ, պարտինք մեր աշակցութիւնը բերել ռուսին: Հետեւաբար կառավարութեան պաշտօնեաները Զէյթունի չըջանակէն դուրս վտարեցին եւ ապա կրակի տուին կառավարութեան չէնքն ու անոր մօտը գտնուած մզկիթը, որոնք քաղա-քէն դուրս կը գտնուէին:

Նախկին 45 կտրիճներու թիւը ստուարացաւ, եւ սկսաւ յարձակում գործել թուրք գիւղացիներու վրայ, որոնք առանց ընդդիմութեան փախուստ կու տային գիւղերէն, ու գտնուած պարէնն ու կենդանիները Զէյթուն կը փոխադրուէին:

Զէյթուն, անիշխանութեան մատնուեցաւ, խաղաղութիւնը վերահաստատելու հոգը կը մնար նախկին իշխաններուն:

Մինչեւ Ռուս-Թրքական պատերազմի վերջնալը, գէյթունցին չըջակայ թուրք գիւղերը թալլելով ապրեցաւ:

Ռուս-Թրքական հաշտութիւնը կնքուելուն պէս, Պապիկ Փաշան, «Թուրք կը հաշտուի թուրքին հետ, բայց ես չեմ կրնար հաշտուիլ» ըսելով գէնքը ձեռքէն չի ձգեր:

Թուրք կառավարութիւնը անկէ յետոյ սկսաւ Զէյթունի չըջակայ թուրք գիւղացիները տեղաւորել եւ ապահովել: Մերայոց աւարի ախորժակը գրգռուած, սկսան քաղաքի բնակչութեան միջին դասակարգը նեղել, միւս կողմէ, խաղաղ ժողովուրդը տեսնելով որ իր առջեւ ճամբաները գոցուած են եւ ձմրան՝ անսուաղութենէ պիտի ոչնչանան, ուրիշ ելք չգտնելով՝ կ'որոշեն իշխանները Մարաշ ղրկել եւ Զէյթունի մէջ կառավարութեան վերահաստատուիլը խնդրել: Իշխաններու դիմումին վրայ, 7000 կանոնաւոր զինուորներու ոյժ մը կը հասնի Զէյթուն, իսկ Պապիկ Փաշան, իր հետ Կապան գացող 45 զինակիցներով

լեռները կ'ապաստանին:

Թուրք զորքերը շղթայի տակ առին քաղաքը եւ սկսան նեղել Ժողովուրդը 300-է աւելի մարդիկ ձեռնակապերով Բերիա քաղաքան:

Ձէյթունեցոց ոմանց դիմումին վրայ՝ Բերիոյ ռուս հիւպատոսը, չթող ապաստամբին՝ կը պատգամէ: Ֆոնուզի Նիկողայոս Եպիսկոպոսը, Պապիկ Փաշայի մարդիկներով եւ քանի մըն ալ ֆոնուզիներով կը պատրաստուի յարձակումի: Պզտիկ ընդհարումով մը, հայ խումբը փախուստի կը մատնուի, Պապիկ փաշան իր ընկերներով դարձեալ լեռ կը քաշուի, եպիսկոպոսը երկու զինակիցներով կը բռնուի եւ մինչեւ Պոլիս կը ղրկուի, եւ Պոլսոյ կամուրջին վրայ կախաղան բարձրացնելու ֆէրմանը կը կարդացուի: Ներսէս Պատրիարք Վարժապետեան, ճարահատ, Անգլիոյ դեսպանին միջամտութիւնը կը խնդրէ: Եպիսկոպոսը, որ երկու ընկերներով կառափնատ տարուած էր, ներման հրամանով կ'ազատուի:

Եպիսկոպոսը տակաւին Մարաշ չհասած, Պապիկ փաշայի եւ իր վեց գլխաւոր ընկերներու ընտանիքներն ալ Ձէյթունէն քաղաքան մինչեւ Հալէպ:

Ձէյթունի 1896-98-ի մեծ պատերազմին անուն հանած Նազարէթ Զաւուրը, Պապիկ Փաշայի երկրորդ կրտսեր եղբայրն ըլլալով, Պապիկ Փաշայի ընտանիքին հետ Բերիա քաղաքէն էր:

Զօրաց հրամանատարը, զէյթունեցոց ընդհանուր ապստամբութեան հաւանականութեան առաջին առնելու համար կրկին անգամ շղթայի տակ առաւ քաղաքը եւ սկսաւ զինաթափել Ժողովուրդը, խլելով նոյնիսկ կացին, մուրճ, երկաթի կտորներ եւայլն:

Ձէյթունցիք ալ բուրբոսին պարապ չէին, ինչ որ կ'ըլլար, օրը օրին կը տեղեկագրէին Բերիոյ Ռուս հիւպատոսին:

Երբ եպիսկոպոսը եւ ընտանիքները Հալէպ կը հասնին, հիւպատոսները կը բողոքեն, եւ օր մը առաւօտեան, յանկարծակիի կու գանք, տեսնելով թէ բանակատեղը վրան եւ զինուոր մնացած չէ, գիշերանց գացեր են, վազեցինք գէպի բանակատեղը, Ձէյթունէն հաւաքուած զէնքերը տեղ մը դիզուած կը մնար: Իշխանները հասան ու իւրաքանչիւր ապրանքը իրենց տէրերուն յանձնեցին:

Պապիկ փաշան անմիջապէս լեռնէն իջաւ եւ վանք տեղաւորուեցաւ:

Ձէյթուն կառավարութիւն վերահաստատելու համար, բանակի մեկնումէն ութ օր յետոյ, հազարապետ մը 150 ոստիկան զինուորներով վերստին Ձէյթուն եկաւ ու զետեղուեցաւ տան մը մէջ, որովհետեւ պետական չէնքը այրուած էր:

Պապիկ Փաշան 45 ընկերներով պաշարեց ասոնք, կռիւր սկսաւ, հազարապետը որ ազդրէն վիրաւորուած էր, յուսահատուած, իշխանեկո

պաշտպանութեան դիմեց, հազարապետը եւ իր թիկնապահը ազատուեցան, իսկ մնացեալ ժանտարմաները ամբողջութեամբ կոտորուեցան: Պապիկ փաշայի ընկերներէն երկու հոգի միայն մնած էին:

Եւ որովհետեւ Բերիոյ հիւպատոսներու պնդումին վրայ բանակը վերցուած էր, ռուսի Ձէյթունի մէջ իշխանութիւն վերահաստատելու համար, Բերիոյ կուսակալը հիւպատոսներու միջնորդութիւնը խնդրեց:

Կիլիկիոյ Մկրտիչ Կաթողիկոս Քէֆսիզեանի հետ, Բերիոյ կուսակալ Քեամիլ Փաշան (որ յետոյ եպարքոս եղաւ), Անգլ. հիւպատոս Չէմսայտ եւ Պոլսէն Նուրեան Փաշայէ բաղկացած պատուիրակութիւն մը եկաւ Ձէյթուն:

Պատուիրակութիւնը փափաք յայտնած էր, որ Պապիկ Փաշան անձամբ ներկայանայ երես առ երես խօսելու: Պապիկ Փաշայ հաւանութեան եւ որոշումին վրայ պատուիրակութիւնը վանք կ'երթայ, ուր կը ներկայանայ Պապիկ Փաշան, երկայնահասակ, յաղթանդամ, Ձէյթունի ամենագեղեցիկ մարդը:

Վալի Փաշան կ'ըսէ.

— Այդ կեցուածքիդ, Աստուծմէ շնորհուած պարթեւ հասակիդ, արծուի աչքերուդ, գեղեցկութեանդ արժանի կը տեսնեմ լեռներու եւ քարայրներու մէջ անցընել կեանքդ:

Պապիկ փաշան կը պատասխանէ.

— Իրաւունք ունիք փաշա, սակայն կը ձգէ՞ք որ հանգիստ մնանք: Անմեղ մարդիկ եւ ? ընտանիք իրենց պզտիկներով մինչեւ Հալէպ քշեցիք, արդարութիւն է ատիկա: Ինչպէս որ կը տեսնէք, մեր քաղաքը չընկալուած է լեռներով եւ ժայռերով, ցանք չունինք, այգիներով կ'ապրինք, տուրքերը կ'աւելնան, կարծես թշուառութիւնը հայու ժառանգութիւնն ըլլայ, հետեւաբար մեր ընտանիքները անօթի չթողնելու համար ստիպուած կ'ըլլանք ամէն միջոցի դիմելու:

— Նախապէս ինչ տուրք որ կը վճարէինք, այն է զաւակս:

— Երբ 1862-ին Ձէյթուն կառավարութիւն հաստատուեցաւ, կը պատասխանէ Պապիկ Փաշան, ազարակի եւ տան վարձք 20 փարա որոշուեցաւ, իսկ առեւտրականները տարեկան մէկ ու կէս դահեկան կը վճարէին, զինուորական տարիք ունեցողները մարդ գլուխ տարեկան 30 դահեկան, իսկ հիմա տան ու ազարակի տուրքը՝ 2 իսկ առեւտրականը 8 դահեկան պիտի վճարէ, նորածին մանուկներէն եւ 70-ը անց ծերերէն ալ զինուորական տուրք կ'ուզեն, տարեկան 30 դահեկան վճարելու անկարող երիտասարդը, ինչպէս կարելի է վճարել նորածինի եւ աշխատելու անկարող ծեր հօրը համար զինուորական տուրք: Այգիներու տուրքն ալ կրկնապատկուեցաւ:

— Կուտակալը կ'ըսէ, — Զինուորական տուրքը Պոլսոյ Հայ Պատրիարքը

ընդունած է, այս մասին բան մը չեմ կրնար ըսել: Միւս տուրքերը, առաջուան պէս արձանագրելու եւ գանձելու հրաման կու տամ: Իսկ դուք զէնքերը վար դնելով, կառավարութեան հնազանդ գտնուելու երբ խոստում տաք, ձեզ քաղաքապետ կը նշանակեմ, զինակիցներդ, ռէդ փափաքողները ոստիկան թող արձանագրուին ձեզի եւ ընկերներուդ, ինչպէս նաեւ Բերիա բանտարկուածներուն, թաղաւորական ներում պիտի չնորհուի, իսկ զալով աքսորուած ընտանիքներուն, անոնք արդէն ճամբայ ելած են եւ կու գան:

Այս խոստումներուն, կաթողիկոս Էֆէնտին, Ձեմսայիտ եւ Նուրեան փաշաները երաշխաւոր կ'ըլլան ու անոնց դառնալով կը հարցնէ՝ «Այնպէս չէ»:

Պատուիրակներու «այո՛» պատասխանին վրայ, փաշան կ'աւելցնէ, - Դեռ ըսելիքդ մնա՛ց զաւակս:

Պապիկ Փաշան կաթողիկոսին կը նայի, իսկ վերջինս՝ «ուրիշ միջոց եւ ճար չունիմ զաւակս, համակերպէ՛», կը յորդորէ:

Պապիկ Փաշան քիչ մը տատամսոտ, վեհափառին աջը կը համրուրէ եւ միւսներն ալ վեհափառին հետ, Պապիկ Փաշայի ճակատը կը համրուրեն եւ այսպէս Պապիկ Փաշայի պատմութիւնը կը վերջանայ:

Պապիկ Փաշան, վանքին բակը իջնելով, ուր ընկերները իրեն կը սպասէին, եղելութիւնը կը պատմէ:

Անոնց մէջէն ամենէն աչքառու Պարսում Աղա, կը բացազանչէ. «Ձէնքը երբ հնարուեցաւ, քաջութեան կարեւորութիւնն այլեւս չմնաց աշխարհի երեսին:

Հաշտութենէն յետոյ, քաղաքի կեդրոնը շինուեցաւ կառավարական պալատը, իսկ քաղաքին իշխող բլուրին վրայ կառուցուեցաւ առաջին գորանոցը, որուն հիմնարկութեան առաջին քարը դրաւ Քէֆսիզեան կաթողիկոս:

Անկէ յետոյ Պապիկ Փաշան մինչեւ մահ քաղաքապետ եւ ժողովուրդէն սիրուած ու յարգուած առաջին մարդը մնաց:

ՅՈՒՂ. ԱՀԱՐՈՐԱՆԱՆ

Պապիկ Փաշա եւ հայ բանտարկեալներուն ազատ արձակումը- թէպէտեւ թշնամի բանակը հեռացած էր Ձէյթունէն, սակայն Ձէյթունի բանտարկեալները տակաւին կը հեծէին Մարաշի եւ Հալէպի բանտերուն մէջ: Եւ նոր գայմագամ եկած, հաստատուած էր Ձէյթուն: Պապիկ Փաշա իր մարտիկներով կը պտըտէր լեռները, կայան ունենալով Փիսիրը (Ձէյթունի անպատրաստ մէկ ժամանակին, Պէշիկ թուրք պէյերը Աստուածածնի վանքին արեւելքը գտնուող բարձրութեան վրայ երբեմն կու գան իրենց վրանները կը լարեն ու կը նստին

եղեր, եւ զէյթունցիք այդ բարձրութիւնը կոչած են Փիսիր, այսինքն անմաքուրներ, ակնարկելով հոն վրան լարող նստող այդ թուրքերուն): Վերջէն «Փիսիր» կ'ըլլայ կալուածը Պապիկ Փաշայի գերդաստանին: Բանտարկուածներուն մէջ էին նաեւ Պապիկ Փաշայի մայրն ու կինը: Ան կը խորհի բոլոր բանտարկեալները անխնաս կերպով իրենց ընտանիքներուն վերադարձելու մասին: Օր մը, անակնկալ կերպով իր ռազմիկներով կ'իջնէ Ձէյթուն, զգուշութեամբ գայմագամին պաշտօնատեղին պաշարել կու տայ եւ ինքը ներս կը մտնէ գայմագամին հետ տեսնուելու: Մուրճ կը հրամցնեն իրեն եւ երբ ոտքի կ'ելլէ մեկնելու համար, անմիտ գալմագամը անտեղեակ թէ ինքը եւ պաշտօնեաները արդէն պաշարուած են, կը հրամայէ որ տեղէն չարթի, յայտարարելով թէ՝ ձերբակալուած ես. դուն քու ոտքովդ ծուղակը ինկար, դուն որ երկար ատեն անհանգիստ ըրիր պետութեան զօրքն ու երկիրը, մեծամեծ ծախքերու դուռ բացիր, անմեղներու արիւնք մտար, եւ շատերուն ալ բանտարկուելուն պատճառ եղար, քեզ հիմա բանտ պիտի առաջնորդեն: Պապիկ փաշան բարձրաձայն ծիծաղ մը կը փրցնէ եւ կ'ըսէ գայմագամին «Դուն եւ քու բոլոր պաշտօնեաներդ հիմա իմ ձեռքիս մէջն էք. ձեզի համար վանքը յարմար տեղ պատրաստուած է. հրամեցէ՛ք մեկնինք»: Գայմագամը ապուշ դարձած, երբ պատուհանէն դուրս կը նայի, կը տեսնէ չէնքը պաշարուած է Պապիկ փաշայի հրոսակներով: Լեզուն կարկամած, հազիւ քանի մը բառերով «Փաշա՛, թոյլ տուէ՛ք գոնէ ընտանիքս տեսնեմ անգամ մը» ըսելով, աղաչական երեւոյթ մը կը ստանայ: «Այդ մասին անհոգ եղիր, կը պատասխանէ փաշան, ընտանիքդ ալ պիտի միանայ քեզի, եւ արդէն անիկա փոթադրուած է վանքը»: Գայմագամը իր 22 պաշտօնեաներով, զապթիկներով եւ ոստիկաններով, շրջապատուած հրոսախումբէն, շրջապատելով, առօք փառօք վանքը կը տարուին եւ ախոռներու մէջ կը դրուին: Պապիկ Փաշա կը հրամայէ գայմագամին, որ բանտը գտնուող զէյթունցի բանտարկեալներուն ազատ արձակման մասին Մարաշի կառավարիչին գրէ եւ յայտնելով անոնց կացութիւնը, աղաչէ որ իսկոյն արձակուին անոնք, որպէսզի իրենք ալ ազատ արձակուին: Գայմագամը անմիջապէս կը գրէ Մարաշ եւ ահա քանի մը օրէն թէ՛ Մարաշի եւ թէ՛ Հալէպի մէջ բանտարկուածները կ'արձակուին, կու գան: Պապիկ փաշա ալ թոյլ կու տայ գայմագամին եւ իրեններուն, որոնք լուռ եւ գլխիկոր կու գան Ձէյթուն եւ կ'անցնեն իրենց պաշտօններուն:

250 Ձէյթունցիներու ջարդը.՝ Մարաշի կառավարիչը խորհելով թէ՛ Ձէյթունի կառավարական պաշտօնեաներուն նորէն կրնան պատահիլ

վերոյիշեալ դէպքերը, օրական վարձքով Զէյթուն կը ղրկէ 250 չէրքէզ գաղթականներ հազարապետի մը հրամանին տակ: Ասոնք տակաւին քաղաք չմտած, Պապիկ Փաշա իր խումբովը ճամբայ կ'ելլէ եւ կը դիմաւորէ զանոնք, հասկնալու համար անոնց գալուն պատճառը: Ու երբ կ'իմանայ, կ'ապահովէ զանոնք թէ՛ նման դէպքեր այլեւ պիտի չպատահին եւ կրնան իր խօսքին վստահիլ ու ետ դառնալ Մարաշ: Զէրքէզները կը պնդեն երթալ կառավարական պաշտօնատունը, որ այն ատեն Զէյթունի կեդրոնը թօզլեանց տունն էր: Դեռ դոնախը չինուած չէր: Պապիկ Փաշա կ'առաջարկէ զինաթափ ըլլալ, չեն ըլլար, եւ վերջապէս ազաններուն միջամտութեամբ կը թողատրուի իշնել Զէյթուն եւ երթալ պաշտօնատունը: Հազիւ թէ քան մը օր կ'անցնի, կը սկսին իրենց տրուած հրամանին համաձայն տուրք պահանջել, կը կեղեքել անցնող դարձողը, բանտարկել եւ նեղել ժողովուրդը: Ամէն օր կը գինովնան, կ'ինքերու եւ աղջիկներու անպարկեշտ, գէշ խօսքեր կը նետեն լկտի շարժումներով: Կ'ինքրը կը դիմեն Պապիկ Փաշայի եւ կը դանդաւորեն, խնդրելով որ չէրքէզները փախցնէ Զէյթունէն, հակառակ պարագային կը սպառնան իրենք երթալ, կոտորել զանոնք: Պապիկ Փաշա զարնել կու տայ օրհնեալ թմբուկը եւ 300 զինուած հրոսակներու դուին անցած, կ'որոշէ գիշերանց պաշարել պաշտօնատունը եւ չէրքէզները կոտորել: Աղաները կ'աղաչեն, կը միջամտեն, որ գոնէ ցերեկը ձեռնարկէ իր ծրագրին: Առտուն կանուխ կը պաշարէ պաշտօնատունը եւ կ'առաջարկէ զիրենք ազատ թողուլ, եթէ խաղաղութեամբ անցնին երթան: Ասոնք արհամարհանքով մը կը մերժեն, Պապիկ Փաշան կ'առաջարկէ որ անձնատուր ըլլան: Ասոնք փոխանակ անձնատուր ըլլալու եւ դուռը բանալու, մեր օրէնքը թոյլ չի տար, ըսին, որ մենք եթէ կեալուրին հնազանդելու ըլլայինք, մօսկօֆին կը հնազանդէինք: Հրաման մը ունի՞ք կը հարցնէ փաշան, այսպէս գործելու: Մեր հրամանը մեր հրացանին բերանն է, ըսելով ներսէն հրացան մը կը պարպեն: Էօղճեան անուն երիտասարդ մը կը զարնուի Ու ահա, կրակ կ'որոտայ Պապիկ փաշան: Շէնքին ամէն կողմէն զնդակներու տարաքի մը կը սկսի տեղալ: Պաշարողները մէկ կողմէն շէնքին տանիքը կ'ելլեն, կը ծակեն, ուրիշներ դուռը կը կոտորեն, կը սկսին անխնայ կոտորել: Հազարապետը յետոյքէն կը զարնուի եւ «թէսլիմ» կը պոռայ: 250 չէրքէզներէն հազիւ 5 հոգի ողջ կը մնան, որպէսզի երթան եւ պատմեն եղածը Վէյսի Փաշային: Հազարապետը Բասիլոսեան Մ. Կարապետ աղային տունը կը տարով եւ այնտեղ դարմանուելով կ'առողջանայ: Երկու չէրքէզ պաշտօնատունէն՝ թօզլեանց տունէն կը փախչին եւ կը հասնին մինչեւ Պաղ Ադրիւրի կամուրջը եւ սակայն այնտեղ կը սպաննուին:

Քննիչ յանձնախումբ մը.— Վեց հոգիների յանձնախումբ մը կը ղրկուի Մարաշէն Զէյթուն, չէրֆէզներու ջարդէն 3 օր ետքը, քննելու եւ ճշդելու համար պատասխանատուները։ Այդ յանձնաժողովին երկուքը իսլամ էր, երկուքը առաքելական-լուսաւորչականներ, մէկը կաթոլիկ եւ միւսը աւետարանական հայեր էին։ Իրենց հետն էր նա- եւ վիրաւոր թուրք հազարապետը, որուն յայտարարութիւններուն վրայ է որ կը պատրաստեն ճիշդ տեղեկագիր մը։ Մարաշի կառա- վարութիւնը սակայն այդ տեղեկագիրը վար ղնելով, իր ուզածին պէս ուրիշ տեղեկագիր մը կը պատրաստէ, իրականութիւնը խեղաթիւրելով եւ ստորագրել կու տայ քննիչներուն, միայն Բուպեան Սարգիս Էֆէնտի չստորագրեր, քննիչներէն մէկը ըլլալով՝ կը բողո- քէր այս զեղծումին դէմ։ Անհարազատ, խարդախուած տեղեկագիրը Հալէպ եւ Պոլիս ղրկուելով կը վերադարձուի որ Բուպեանն ալ ստորագրէ։ Կառավարութիւնը ասոր վրայ կը պարտաւորուի ճիշդ տեղեկագիր մը ղրկել, որով գէյթունցիք կ'արդարանան, Վէյսի Փաշա պաշտօնանկ ըլլալով կը ղրկուի Կեսարիա, ուր կը մնայ եւ կը մեռ- նի կառավարական շէնքը վրան փլելով, անշուշտ իր հետ տանելով քաղցր յիշատակը գէյթունցիներուն եւ իր պատճառով կոտորուող չէրֆէզներուն ընտանիքներուն սրտաբուխ օրհնութիւնները։

Նոր կարգադրութիւններ. — 1870-ին Սուլթան Համիտ իր հայալինջ ծրագիրները իրագործելու համար հարկ կը տեսնէ ասոնն մը սպասել եւ ժամանակաւորապէս սիրաշահիլ գէյթունցիները, ուստի իրատեղի մը Պոլսէն Զէյթուն կը դրկէ Մազհար փաշային Նուրեան Էֆէնտին, որոնց կը միանան Հալէպի Անգլիական հիւպատոսը Ճեմսայտ եւ Կիլիկիոյ Մկրտիչ Կաթողիկոս Քէֆաղեան: Պատուիրակները կայսերական ներում կը հրատարակեն Պապիկ Փաշայի եւ զինքը կը նշանակեն Զէյթունի քաղաքապետութեան նախագահ: Ժողովուրդին բողոքին ընթացք տալով տուրքերն ալ կը պակսեցնեն եւ խաղողի այգիներէն քմահաճօրէն տուրք գանձելու դրութիւնը ջնջելով, տարեկան միանուազ 9000 դահեկանի տասնորդի (էօյիւր) տուրք մը կը հաստատեն: Մազհար Փաշա ընդհանուր այդ հաւաքօյթին բանախօսելով, պատահած անկարգութիւնները կը վերագրէ նախորդ թուրք պաշտօնեաներու ապիկարութեան, սակայն չի կրնար նոյն ատեն իր մաղձը ներս պահել եւ կ'ըսէ վերջապէս. — «Դուք ալ քիչ աղը (թոյն) չէք, թագաւորը գթասրտութեամբ ձեզ ներեց, բայց չես գիտեր թէ՛ Աստուած ալ պիտի ներէ՛»: Պատուիրակները կը համոզեն գէյթունցիները որ զօրանոց (գրչլա-մանրանոց) մը չիսուի Հիւսնարկութեան հանդէսը տեղի կ'ունենայ, մեծանուն հիւրերը կը մեկնին, նորրոնոր

գայմագամին խոհեմութեան յանձնելով խաղաղութեան պահպանումը: Մկրտիչ Կաթողիկոս զօրանոցին առաջին քարը ինքը կը դնէ եւ կարծես տեսակ մը կանխագգացումով ներշնչուած կ'ըսէ. — «Լա գիտցէք որ այս զօրանոցը իրօք ձեր զօրքերուն համար կը շինուի»: Շինութիւնը կ'աւարտի, 800 կանոնաւոր զօրքեր կը տեղաւորուին այնտեղ: Այնուհետեւ հինգ տարի, առանց կարեւոր միջադէպի, խաղաղ շրջան մը կ'ապրի Ձէյթուն: Զօրքերուն ներկայութիւնը դժբաղդեցած էր գայմագամին հսկելու գործը:

Ձէյթունի 1884-ի հրդեհը.— Այս աղիտալի հրդեհը, որու մասին նախորդ էջերով անցողակի կերպով խօսած էինք, Սուրէնեան թաղի Եզէկիէյեաններու յարդանոցէն է որ ծագում առած է կէս գիշերին, երբ ամէն մարդ խոր քուռի մէջ կ'ըլլայ: Կը մոխրանան Ձէյթունի չորս թաղերը, միայն Շուրոյեան-Պօզպալի թաղի կէսը կ'ազատի: Ձէյթունցիին կ'ենթարկուի մեծ վնասի, կը փճանան իր գոյքերն ու ամբողջ ձմերուան պարէնը իր բնակարաններուն հետ, կ'այլրին նաեւ եկեղեցիներուն թանկագին անօթներն ու գրչադիր-ձեռագիր մատենաները, որոնց կարգին նաեւ Գող Վասիլի Աւետարանը եւ ուրիշ նման հնութիւններ: Ազգային օգնութիւն կը հասնի, կը տրուի նաեւ Տէտէ Փաշայի ձեռքով կառավարական նպաստ: Եւ Ձէյթուն կը վերաշինուի քիչ ատենէն: Կը շինուին նաեւ Ս. Աստուածածին եւ Ս. Լուսաւորիչ եկեղեցիները: Պոլսոյ Հայոց Պատրիարքարնի կողմէն Ձէյթուն կը դրկուի թալասցի Բերովլէ Էֆէնտի Գուլումճեան նպաստաբաշխութեան համար, եւ քաղաքին կեդրոնը, Ս. Յակոբի եկեղեցիին տեղը շինելու տալ փառաւոր վարժարան մը: Նպաստաբաշխ Տէտէ Փաշա, Ձէյթունի այդ վիճակին մէջ, այդ դժուար օրերուն կը սկսի նեղել արեգիկները, կրկնապատիկ տուրք պահանջելով անոնցմէ, այն առարկութեամբ թէ անոնք հրդեհէն չեն վնասուած, մէկ ձեռքով տուածը կարծես միւս ձեռքով ետ առնել կ'ուզէր: Խեղճ գիւղացիք կը պարզեն իրենց աղքատ վիճակը, սակայն ի գուր: Եւ վերջապէս կը ստիպուին ըմբոստանալ Շամքէիչեան Փանոս անուն քաջ երիտասարդի մը գլխաւորութեամբ, որ՝ որպէս յաջորդ Պապիկ Փաշայի, լեռները կը պտտէր իր ընկերներով եւ կ'սպաստակէր թշնամի գիւղերը: Տէտէ Փաշա Մարաշէն 1884 Յունիս 24-ին, զօրք կը դրկէ ապստամբութիւնը զսպելու համար, սակայն զօրքերը կը պարտուին, եւ կը ստիպուին հաշտութիւն կնքել գոհացում տալով արեգիկներուն:

Սալէհ Փաշա եւ լրտես Օսմանի սպաննուիլը.— Ձէյթունի նախորդ գայմագամը՝ Սալէհ Էֆ. Մարաշի նախորդ կառավարիչ Տէտէ

Փաշայի տեղ 1870-ին փաշայութեան աստիճանով եւ կառավարիչի պաշտօնով Մարաշ կը դրկուի, իր հետ բերած Ձէյթունի բոլոր հրոսակներուն կայսերական ներման հրովարտակը, հրոսակապետ Շամքէ - իշեանը եւ անոր խումբն ալ սիրաշահելու համար իւրաքանչիւրին 10-էն 80 մէճխոյէ դրամական նուէրներ կը բաշխէ: Թանձր տաճկաբնակ գիւղը կը յանձնէ անոնց, որպէսզի անոնք հաւաքեն տասանորդի տուրքը իրենց հաշուին: Իսկ նոր գայմագամ Գատիր Զատէ Գատիր պէյին կը պատուիրէ որ՝ զէյթունցիները չնեղէ եւ խոհեմութեամբ վարուի անոնց հետ: Այս կարգադրութիւնները ընելով կը վերադառնայ Մարաշ իր պաշտօնին: Հազիւ թէ 4 ամիս կ'անցնի, նոյն 1880 տարուան Սեպտ. ամսուն Ձէյթուն կը փոթորկի Օսման Զաւուշ անուն թուրք լրտեսի մը սպաննուելովը: Լրտեսութեամբ կը զբաղէր ան եւ նոյն պաշտօնով Հաճըն գացած եւ վերադարձած էր, Զօրանոցէն իր ձիովը, Ձէյթունի մեծ գերեզմանոցի վայրէջքէն Պաղ Աղբիւրի ճամբով Ձէյթուն կու գար ան: Խաչվերացի Մեռելոցի Երկուշաբթին է, յետինքի ատենները կը հասնի ան Պաղ Աղբիւր, այն տեղ իր ապտեսթը կ'առնէ եւ ձին նստած կ'անցնի Պաղ Աղբիւրի կամուրջը մինչդեռ զառկվարէն իջած ատեն ձին չէր հեծած, այլ սանձէն քաշելով հասած էր աղբիւրը: Աչնան այդ օրերուն Պօզպալի թաղի Ժողովուրդը, գրեթէ բոլորը այգիները մեկնած կ'ըլլային իրենց ընտանիքներով, չամիչ չորցնելու եւ պատեղ շինելու համար: Մինչդեռ Շամքէիշեանի հրոսակախումբը, որուն անդամներն էին Քիւփէյեան Մեծ Ղազարը, փոքր Ղազարը եւ Տէճինց Թօփալըն տէազէն Փանոսը, Օսմանը կը հետապնդէին սպաննելու համար: Այդ օրը, Խաչի Մեռելոցի Երկուշաբթին Մուրտենց Էօթմէն (վրան գոց փողոց) կը սպասէին անոնք, Օսմանին՝ կամուրջը անցնելով Էօթմէն մտնելուն, որովհետեւ նախապէս իրենց լուր եկած էր թէ՝ Օսման զօրանոցն է եւ այդ օր Ձէյթուն պիտի գայ: Օսման կ'անցնի կամուրջը, Սիսեռեանց տան քովէն յառաջանալով կը մտնէ Մուրտինց կիսամութ Էօթմէն, հոն է միայն Տէճինց Թուփալն ու տէազէն Փանոսը, ընկերները, իր պնդումին վրայ իրեն կը յանձնեն գործը եւ կը հեռանան: Փանոս իսկոյն ձիէն վար կը ձգէ Օսմանը, քաշելով անոր օձիքէն եւ առաջին դաշոյնի հարուածը կը մխրճէ անոր փորը, եւ զայն Էօթմէնէն, Մարտենց ախոռը կը նետէ, ճիշդ մեր տան ետեւը, միայն աղիւսէ պատ մը կը բաժնէր մեր տունը այդ ախոռէն: Փանոս այնտեղ դաշոյնի 72 հարուածներով կը սպաննէ Օսմանը: Ամէն մէկ դաշոյն մխրճուելուն Օսման համան, Փէանիւս հօռդ հիտոմ ըսելով կը պաղատի, եւ այդ ձայնը մայրս յստակ կերպով կը լսէ մեր տան մէջ, պատին մէջէն ու ձայնին կը յաջորդէ հը-

որնդիւնը եւ կը լուծէ Արեւը չմարած, կու գան ընկերները եւ դիակը քաջաբարեւոյ կ'անցնին ձորակը, տանիլ թաղելու համար թուրքերու փողը դապրլլիւ, Սիւմիւնինց թթենիին մօտ, Պօղոս Պետրոսի կամուր- ջէն անցնող մեծ ճամբուն եզերքը, սակայն զափթիէները կ'իմանան եւ կը հասնին վրան, հրոսակները դիակը կը թողուն ու կը հեռա- նան: Լրտեսին մարմնին վրայ 72 վէրքերէն կարելի էր ենթադրել թէ որքան վրէժխնդրութեամբ լեցուած էր զայն սպաննողը: Սալեհ Փաշա, այս դէպքին վրայ սաստիկ զայրացած կը հասնի Զէյթուն, երեւելիները կանչելով, կը պահանջէ որ հրոսակները յանձնուին: Ի՛նչը գտնել սակայն Շամբէշիշեանն ու իր ընկերները, որոնք ար- ի՛նչը նախապէս զգացած էին թէ իրենց նուէր դրամ բաշխելը պարզ ծուղակ մըն էր, ինչպէս նաեւ թանքը թուրք գիւղը իրենց տրա- մադրութեան տակ դնելը: Եւ գիտէին թէ՝ լրտեսներ ամէն վայրկեան իրենց հետքերուն վրայ էին, եւ անոնց պետը, Օսմանը, որ Զէյթունի հայերէնը կը խօսէր զէյթունցիի մը պէս, վերոյիշեալ պարագաներուն տակ սպաննեցին: Զէյթունի երեւելիները մերժեցին յանձնել Փանոսը, լռելով թէ կառավարութեան ձեռքը երկար է, ան ունի իր պաշտօնեա- ներն ու զինուորականութիւնը, կարող է զանոնք բռնել եւ պատժել: Շամ- քէշիշեան որ արդէն տեսակ մը դառնացած էր Պապիկ Փաշայի թուրք կառավարութեան հետ հաշտուելուն, այլեւս կարելի՞ էր որ ձեռք իյնար: Սալեհ Փաշա տեսնելով որ խորամանկութիւնով չյաջողեցաւ, Զէյթունի զօրանոցը գտնուած զօրքերուն զլուխն անցած, 24 Սեպտեմ- քը քալէ Ս. Յովհաննէս եկեղեցիին վրայ, ուր ապաստանած էին հրոսակները, բայց անոնք այնպիսի համազարկ կրակ մը թափեցին թուրք զօրքին վրայ՝ որ բաւական կորուստ տալով ստիպուեցաւ մեծ գերեզմանոցին քովէն ետ քաշուիլ: Գիշ յետոյ հրոսակները կը յարձակին կառավարական շէնքին՝ դռնախին վրայ եւ այնտեղ գտնուող բոլոր բանտարկուածները ազատ կ'արձակեն: Թուրք կառավարութիւնը աւելի բոլորեցեալ եւ տեսնելով թէ զէյթունցին միտք չունի ընդհանուր կռիւի մը սկսելու, սկսաւ աջ ու ձախ ձերբակալութիւններ ընել ծամբաները որուն որ հանդիպեցաւ, բոնեց ու բանտարկեց: Երեք ժամ տեւած էր Սալեհի եւ հրոսակներուն միջեւ տեղի ունեցած կը- ուրը եւ բանտին գրաւուիլը եւ բանտարկեալներու դուրս հանուիլը Փաշան պարտուած կը զգար ինքզինքը, ուրեմն ինչ պէտք էր Ե- նէր, այդ մասնակի եւ պատահական ձերբակալութիւններէն ալ բան դուրս չէր գար, Մարաշի, Ալպիստանի, Անտրոքնի ընտրիք պահեստե- րէն 3000 հոգիով կը սկսի աւերել Զէյթունի շրջակայ հայ գիւղերը եւ պաշարման վիճակ յայտարարելով մահմետականներուն իրաւունք կու տայ զէյթունցիներուն կեանքին եւ ինչքին վրայ: Այդ ատեններ

էր որ տեղի կ'ունենայ ընկի Այնթապցի եւ Մարաշ հաստատուած բօխիկ Ապուճանի (Տոքթ. Յ. Գալիպագեան) վերագրուած դէպք մը, որուն համաձայն 500 զէյթունցի մանուկներ կը մեռնին ծաղիկի թունաւոր պատուաստէ։ Մական իրազեկներու վկայութեամբ այս կը վերագրուի մանկական համաճարակի մը, որովհետեւ յիշեալ կառավարական բօխիկը հազիւ թէ քանի մը մանուկներ պատուաստած, երբ կը տեսնէ հիւանդութեան ծաւալումը, կը դադրեցնէ պատուաստելը եւ կը վերադառնայ Մարաշ։ Առաջնորդ Կարապետ Եպս. Քէչէճեան կը հեռագրէ Բ. Դուռ եւ Պատրիարքարան ըողոքելով Սալեհի խօղժութեանց դէմ։ Թէպէտեւ Սալեհ Փաշա պաշտօնանկ ըլլալով՝ հրաման կը ստանայ Տէր-Զօր մեկնելու, սակայն կը հեռագրէ Բ. Դրան եւ խոռվարար կը ներկայացնէ Զէյթունի եկեղեցականները, ինչպէս նաեւ Ֆոնուզի Բարթուղիմէոս Վարդապետը, որ հողային խնդրոյ մը դատաւարութեան համար Ատանա կը գտնուէր, ինչ որ փաշան յեղափոխական խնդիրներով կ'ամբաստանէ։ Բ. Դուռը կարեւորութիւն կու տայ խարդախ փաշային զրպարտութիւններուն եւ զրգուլթիւններուն եւ հեռագրին ի պատասխան ձերբակալման հրաման կ'արձակէ եկեղեցականներուն դէմ, եւ կը ձերբակալուին Բարթուղիմէոս հայր սուրբէն զատ, որ արդէն բռնուած եւ բերուած բանտարկուած էր, նաեւ Առաջնորդ Կարապետ Եպս. Քէչէճեանը, Գր. Վրդ. Ոսկերիչեանը, Տ. Նշան Ա. քհնյ. Ղազեանը, Տ. Ղեւոնդ Քհնյ. Զէնանեանը, Մարտիրոս Աղա Անդրէասեանը, Կիլիմանըսեան Մահտեսի Յարութիւնը, Մէրկէնեան Մահտեսի Գէորգը, Պօզողեան Յարութիւնը, Մօզեան Փանոսը, Տիրացուեան Աստուածատուրը եւ Եղիսարէթ անուն օրիորդը, ընդամենը 53 հոգի, որոնք Հալէպ բերուելով կը դատուին, ուստի 5, ուստի ալ 15 տարուան բանտարկութեան կը դատապարտուին, մէկ քանիները մշտնջենական թիապարտութեան եւ Տ. Ղեւոնդ Քհնյ. մահուան կը դատապարտուի։ Հալէպի կուսակալը տեսակցութեան մը պատրուակով եւ ճանապարհածախս ղրկելով Հալէպ կը հրաւիրէ Ֆոնուզի վանքին վանահայրը՝ Նիկողայոս Եպս. եւ կը բանտարկէ Զէյթունի Ա. քհնյ. Տ. Ղազարի որդին Սմբատ-Բիւրատ եւս, որ 3 տարի Սամսոնի իր բացած դպրոցին մէջ պաշտօնավարելէ ետքը, կնոջը եւ 4 տարեկան զուկին՝ Հայկ-Լեւոնի հետ Զէյթուն կը վերադառնար, կը ձերբակալուի Եարփուզի մէջ եւ կը տարուի Մարաշ, իսկ բանտին մէջ կը ծնի իր երկրորդ որդին՝ Վաղինակ։ Սմբատ-Բիւրատ եւս կը տարուի Հալէպ, կը դատուի, թէեւ ոչինչ կարելի չլլար հաստատել վրան, սակայն ընդհանուր դատախազը՝ անոր հայ մը ըլլալը եւ մանաւանդ զէյթունցի եւ ուսուցիչ ըլլալը բաւարար լանցանք մը համարելով, կը յաջողի 5 տարուան բանտարկութեան դա-

տապարտել զայն: Այդ 5 տարին լրացնելով միայն կ'ազատի բանտէն: Իսկ միւս բանտարկեալներէն ոմանք չդիմանալով բանտային չարչարանքներուն, կը մեռնին: Անոնցմէ մէկն էր պոլսեցի Վրթանէս վարժապետ: Սմբատ-Բիւրատ բանտին ներսէն իսկ կը յաջողի գրութիւնով մը մինչեւ Կլատսթոնի ականջը հասցնել բանտարկեալներուն քաշած չարչարանքները: Բանտարկուածներէն 5 մեծաւորներ 500 Օսմ. հնչուն ոսկի կաշառք կերցնելով, տարի ու կէս բանտ պառկելէ յետոյ վերջապէս կը յաջողին գիրենք եւ իրենց հետ նաեւ իրենց ընկերներէն 22 հոգի բանտէն ազատել: Ոմանք ալ ժամանակ մը բանտ մնալէ ետքը, ներման կ'արժանանան ու կ'ազատին 1895-ին:

Զէյթունի այդ տաղնապալի չրջանին, երբ եկեղեցականները, 5 երեւելիները եւ իրենց ընկերները կը տառապէին բանտերու մէջ, խստութիւններն ու հալածանքները կը շարունակուէին: 1893-ին Թէվֆիկ Պէյ անուն գայմազամ մը կը կեղեքէ ժողովուրդը անօրինակ կերպով, սակայն Մկրտիչ Կաթողիկոս Քէֆոզեանի ազդու բողոքներուն վայ ըարերախտաբար պաշտօնանկ կ'ըլլայ:

Տէճինց Թուփալին տղուն Փանոսին սպաննուիլը--

1892-ին նորէն մթադնած էր քաղաքական հորիզոնը: Պապիկ փաշայէն յետոյ Շամբէշիշեան Փանոս տակաւին իր հարազատներով կը շրջէր լեռները: Կառավարութիւնը մտադրած էր զայն մէջտեղէն վերցնել եւ լրտեսներու ցանց մը, հոտ առնող վոհմակի մը նման ետեւէն ինկած էր անոր եւ իր ընկերներուն, մանաւանդ Օսման Զաւուշ լրտեսին սպաննուելէն յետոյ հետեւողականօրէն կը հետապնդուին անոնք: Օր մը գայմազամին լուր կը հասնի թէ՝ Շամբէշիշեանի ընկերներէն Օսմանը սպաննող Տէճինց Թուփալին տղան Փանոս Զէյթուն եկած է եւ նոյն այդ ժամուն տունն է իր մօրը եւ նոր հարս կնոջը մօտն է: Գիշերը ուշ ատեն տուն եկած էր եւ առտուն չէր կրցած արշալոյսէն առաջ ելլել երթալ եւ մնացած էր տունը: Նստած էր ան օճախին շուրջը, մէյ մըն ալ տանիքէն ոտքի ձայներ կու գան ականջին, մայրը դուրս կ'ելլէ բացօդեայ սրահը եւ բան չ'իմանար ու ներս մտնելով տղուն կ'ըսէ թէ մարդ չկայ, վերի դրացիները թարխանա փռած են, եւ թերեւս կատուներ են որ թարխանայի ճաղերուն տակէն փախած ատեն ոտքի ձայներու նման թփրտոց հանեցին: Այս խօսքերը դեռ չլրացուցած պառաւ մայրը, Փանոս գլուխը վեր կ'ընէ եւ ծխնելոյծէն վեր կը նայի ու ահա մէյ մըն ալ պոռժկ հրացան մը կը պայթի ու Փանոս ճակատէն զարնուելով արեան ճապաղիքներու մէջ կ'իյնայ: Ենիտիւնեան Նազարէթ, որ զափթիէ ուտիկան էր, հրացանը երկնցուցած էր այդ վայրկեանին բուխերիկէն վար արձակած: Գնդակը մտած էր մէկ աչքէն եւ ծոծրակէն ելած:

Իմ քեռմայր (այսինքն մօրս մայրը) Թուրֆանտան, որ սպաննուող Փանոսին մօրաքոյրն էր, փութացած այլի քոյր տունը եւ գտած էր զայն եւ իր հարսը Փանոսի անշնչացած եւ արեան մէջ անճանաչելի դարձած մարմինը: Մայրս պատմած է ինծի պատանի տարիներու թէ՝ Փանոս Օսմանը սպաննելէն յետոյ, երբեմն ուշ գիշերները կու գար մեր տունը (որովհետեւ Պաղ Աղբիւրի կամուրջէն ներս մտածիդ պէս առաջին տունը մերն էր, Զէյթունի եզերքը եւ հետեւաբար հետապնդումի մը պահուն դիւրին էր փախչիլ դէպի լեռները): Կը մնար ան կէս ժամու չափ, կերակուր կ'ուտէր եւ պէտք եղած պաշարն ալ մայրս կը պատրաստէր եւ անոր պարկին մէջ դնելէ յետոյ կը հեռանար:

Ենիտիւնեան Նազարէթ Պապիկ Փաշայի եղբայրն էր: Օսմանը սպաննողը սպաննելուն համար Զաւուշի աստիճանին բարձրացաւ, իսկ Սուլթանէն մէճիտիէ եւ սատազաթ պատուանշաններով վարձատրուած էր ըստ Աղասիի: Ժողովուրդը շատ գէշ ազդուած էր հերոսի սպաննուելէն, սակայն չէր ուզած շարունակել եղբայրասպան կոխը: Շորվոյեան Պօզպայիր թաղէն էր ինչպէս Շամբէշիշեանը, նոյնպէս Տէճինց Փանոսը եւ ամբողջ խումբը, Քիւփէշեան մենծ ու փոքր Ղազարները, Մէխայիմենց Թօփալը, Գրլըճ Աւտիքը, Սիսիւնեց Փանոսը, Ղարանճեց Ասրատուրը, որոնք բոլորը մէկ մէկ կատաղի վազրեր էին եւ կրնային շատ բան ընել:

ԿԻԼԻԿՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ՝ ՄԿՐՏԻՉ ԲԷՖՍԻՉԵԱՆԻ
ՉԷՅԹՈՒՆԻ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԾ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Մկրտիչ կաթողիկոսի Զէյթունի բանտարկեալներուն համար տարած աշխատանքներու շուրջ ժամանակին Աղեքսանդրիոյ «Արաբս» թերթով եւ Եարփուզի ուսուցիչ Յարութիւն Գ. Ոսկերիչեանի (վերջէն Հայկազուն Բահամայ) կողմէ լոյս տեսած յօդուածաշարքէն Կիլիկիցի՝ Գր. Հ. Գալուստեանի «Մարաշ» հատորին մէջ ամփոփուած տեղեկութիւններէն, մեր այս գործին մէջ կ'արտագրենք հետեւեալ տողերը, լրտես Օսմանի եւ Զէյթունի բանտարկեալներու ազատուելուն առնչութեամբ:

1890-ին, Զէյթունի գայմազամն էր Մարաշցի Գատիր Զատէ Գատիր Պէյ, որուն նախահայրերը բարեկամութիւն ունէին Զէյթունի իշխաններուն հետ: Այս մոլեռանդ եւ սակայն խորամանկ գայմազամը ինքզինքը շատ ժողովրդական ցոյց տալով, կ'աշխատէր հաճելի երեսնալ գէյթունցիներուն: Օր մը, Զէյթունի Նահատակ կոչուած աղբիւրին գլուխը, մի քանի երիտասարդներ օղի խմելով եւ նուազածութեամբ քէյֆ կ'ընէին, գայմազամ Գատիր Պէյ այնտեղէն անցնելու ատեն կը տեսնէ զիրենք, որոնք զինքն ալ կը հրաւիրեն, ու ինք ալ կը մտնէ անոնց մէջ: Խումբին Պաղլամա նուագող երիտասարդը՝ որ իր տարազով եւ լեզուով ոռնէ տարբերութիւն չունէր միւսներէն, Օսման անունով թուրք մըն էր հայախօս: Մէկը՝ մինչեւ այդ ժամանակները Զէյթուն բնակող քանի մը տնուոր՝ լազ ծագումով թուրքերէն: Երբ գլուխները կը տաքնան, «կեցցէ՛ հնչակեան» կը պոռայ տղաներէն մէկը: Անոր կը ձայնակցին միւսները: Գայմազամն ալ կը ծափահարէ, ինչպէս թամպուրան նուագող Օսմանը, որուն ի պատասխան երիտասարդին մէկն ալ՝ «Օսման տա իաշասըն, թիւրք տիր, ամմա Զէյթինլի օղլու Զէյթինլի տիր» (գէյթունցիք «բն» «թ» եւ «յն» ալ «ը» կը հնչեն յաճախ): Գատիր Պէյ երբ կ'իմանայ թէ՛ պաղլամա նուագողը թուրք մըն է, կ'ուրախանայ, որովհետեւ զայն իբրեւ լրտես պիտի կրնայ գործածել: Քանի մը օր ետքը կը կանչէ զինքը, եւ կ'առաջարկէ անոր լրտեսութեան պաշտօն, եւ խոստանալով վարձատրել: Օսման սկիզբը կը դժկամակի, սակայն ի վերջոյ կը հաւանի: Կ'իմանան գէյթունցիք, լուրը կը հասնի Շամքէշիեան Փանոսին, որ իր երկու ընկերներով՝ Սիսեռնեց Փանոսին եւ Գարաճնեց Ասքատուրին հետ ի բացակայութեան մահուան դատապարտուած էր կառավարութենէն եւ դարձած էին չրջանի թուրքերուն պատուհասը:

Օսման գաղտնի լրտեսելու կ'երթայ Ս. Փրկիչ վանքին շինութիւնները, որ իբր թէ զօրանոցի համար կը շինուի եղեր: Առաջնորդ Սրբազանը կը տեղեկանայ, Օսմանը կը հարցափորձէ եւ Օսման կ'ուրանայ: Կ'ազդարարուի Օսմանի որ ձգէ նման անպատուաբեր գործ եւ հետեւալ օրը ներկայանայ Շամքէշիեանի ներողութիւն եւ զղջում յայտնելու համար: Օսման սակայն օր մը ետքը Մարաշ կ'երթայ, որովհետեւ Գատիր Պէյ հեռագրած էր Մարաշ Սալեհ Փաշային, թէ գէյթունցիք վանքին մէջ զօրանոց կը շինեն: Փաշան չքախումբով մը կու գայ Զէյթուն եւ նախ կ'իջնէ Սուրէնեան իշխանին բնակարանը, յետոյ կ'երթայ կ'այցելէ վանքը, կը տեսնէ շինութիւն չկայ վանքին չրջափակին մէջ: Առաջնորդ Կարապետ Եպիսկոպոս եւ իշխանները կը հիւրասիրեն զինքը եւ փաշայէն խոստում կ'առնեն թէ Շամքէշիեանի եւ ընկերներուն ներում բերել տայ: Շամքէշիեանը կը ներկայացնեն եւ արդարեւ փաշան կը յաջողի 24 ժամէն ներում բերել տալ: Ու յետոյ փաշան կը վերադառնայ Մարաշ եւ Օսմանը վարձատրելով կը ղրկէ Զէյթուն: Եւ Օսման կը դառնայ լրտես: Օսմանի վերադառնալէն ութ օր առաջ, Շամքէշիեան արդէն կը վճռէ անոր մահը:

Օսմանի սպանութեան պարագաները մենք արդէն մանրամասնօրէն ներկայացուցած ենք, ժամանակին իմ մօրմէս եւ ուրիշ ականատեսներու այդ մասին ինծի պատմածներէն:

Սալեհ երբ կը լսէ Օսմանի սպանուելը, կարեւոր թիւով զօրքերով կը ձեռնարկէ գալ Զէյթունի վրայ: Զէյթունի այդ դէպքերուն եւ փաշային բանակ հանելու լուրը կը հասնի Մարաշ ուսուցիչ Յ. Ոսկերիչեանի միջոցով եւ կը հաղորդուի Մկրտիչ Կաթողիկոսին իր ամարանոցը՝ Քէրխան: Անմիջապէս Մարաշ կ'իջնէ Կաթողիկոսը եւ ընկերակցութեամբ Մարաշի երեսկիներէն պետական յանձնառու Տէօփէթ Էֆէնտիի, դատարանի անդամ Գէորգ Էֆ. Մուրատեանի, փաստաբան Արթին Էֆ. Տօլապեանի եւ Կաթ. փոխանորդ Տ. Յովհ. Քենյ. Վարժապետեանի կ'երթայ հեռագրատուն եւ կը հեռագրէ Սատրազամ Սախ փաշայի թէ՛ Սալեհ փաշա անհատական դէպք մը պատրուակ բռնելով, բանակով մը Զէյթունի վրայ ելած է, ինչ որ կայսերական կամքին հակառակ է, ուստի կը պահանջէ Սալեհ Փաշայի պաշտօնակցութիւնը: Հեռագրին օրինակները կը ղրկուին նաեւ Պատրիարք Ներսէս Վարժապետեանի եւ պետական մարդ՝ Յովհ. Էֆ. Նուրեանի: Յաջորդ առտու իսկ Զէյթունի Առաջնորդէն եւ Ֆոնուզի վանահայր՝ Նիկողայոս Եպիսկոպոսէն զիր մը կը հասնի կացութեան լրջութիւնը յայտնող եւ անմիջական դարձան խնդրող:

Սալեհ փաշա Զէյթուն հասնելուն պէս երեք օր պալմանաժամ

15. Գէորգ Ղրճայան, 16. Յովհաննէս Ղրճայան, 17. Կարապետ Պիւպիւլեան, 18. Մկրտիչ Պիւպիւլեան, 19. Սարգիս Հարսնուկեան, 20. Գրիգոր Բարլաքեան, 21. Գալուստ Հայտուտեան, 22. Սարգիս Հաննէսեան, 23. Ասրատուր Քիւփէլեան, 24. Մանուկ Քիւփէլեան, 25. Գրիգոր Քիւփէլեան, 26. Յարութիւն Քիւփէլեան (Հաճի Արթին), 27. Յովհաննէս Քիւփէլեան, 28. Սարգիս Մարտաւուկեան, 29. Կարապետ Ավալտանեան, 30. Պօղոս Դաւթեան, 31. Նազարէթ Վարդանեան, 32. Նազարէթ Գրանֆիլեան, 33. Վարդան Մաթիւսեան, 34. Միքէլ Օղլեան, 35. Թադէոս Մանչեան, 36. Գաբրիէլ Պօստանեան, 37. Ստեփան Բախչեան, 38. Յարութիւն Կանծեան, 39. Գէորգ Զազրեան, 40. Սեդրակ Քիւփէլեան:

Ֆոնուզէն.- (Հին Ուլնի)

41. Նիկողայոս Եպս. Դաւթեան (Սորխառունի), Առաջնորդ-վանահայր Ս. Կարապետ եւ Ս. Ստեփանոս Ուլնեցւոյ վանօրէից, 42. Գրիգոր վրդ. Ոսկերիչեան միաբան Ս. Ստեփանոսի վանքին, 43. Բարթողիմէոս վրդ. Թախաճեան, միաբան Ս. Կարապետի վանքին, 44. Յակոբ Պուղուրեան, 45. Պետրոս Պուղուրեան, 46. Ստեփան Պուղուրեան, 47. Կարապետ Փարթամեան (մարաշցի վանառական), 48. Յարութիւն Պետրոսեան (վանեցի), 49. Յարութիւն Վանէսեան (Լափաճը գիւղէն), 50. Եղիսաբէթ Վանէսեան քոյրը, (Լափաճը գիւղէն):

Բանտին մէջ նահատակեալք.-

1. Վրթանէս վրժպտ. Գրիգորեան Վէթանուրի (Կ. Պոլսեցի), 2. Կարապետ Թօզլեան, 3. Մինաս Պուսուկեան, 4. Օհան Տատուրեան, 5. Իսրայէլ Մինասեան, 6. Խաչուկ Տատուրեան, 7. Յովսէփ Եկանեան, 8. Աւետիս Յովսէփեան:

Բանտին մէջ հաւատուրաց եղած է Յակոբ Մանուկեան եւ կոչուած է Մուհամմէտ Ալի:

Այս է կտակ եւ յիշատակ 50 բանտարկելոցս, որք ի պահու տանջանաց եւ մահուանց, պիտի բեւեռենք ականողիքս յերկնային պսակադիրն ի Տ. մեր Բրիստոս եւ գոհ եւ զուարթ պիտի աւանդենք մեր հոգին, վստահ գորով թէ՛ ազգը պիտի գործադրէ կէտ առ կէտ մեր կտակի պարունակութիւնը, եթէ կը ցաւինք, այսպէս տարածամ մահուամբ հեռանալով աշխարհէն, կ'ուրախանանք սակայն, խորհելով թէ՛ ազգն զմեզ պիտի յիշէ իբրեւ նահատակք արհաւիրաց շրջանի եւ տօնախմբէ մեր յիշատակը:

Բարեմաղթենք առ Թագաւորն Թագաւորաց Հայրն մեր երկնաւոր, որ ընդունի ի մեր կենաց գոհն ի պատարագ ազգի, վասն փրկութեան հալածեալ հայրենեաց:

Մնանք վերջին եւ վսեմ ողջունիւ սիրոյ ամենախոնարհ եւ ամե-

նահաւատարիմ ծառայք ազգիս

Նիկողոս Եպս. Դաւթեան,

ԿՆԻՔ

Գրիգոր վրդ. Ոսկերիչեան

Նշան Բիւյ. Տ. Յովհաննէսեան

Կարապետ Եպս. Քէչեան

ԿՆԻՔ

Բարթողիմէոս վրդ. Թագաճեան

Աւուղ Բիւյ. Ճէնանեան

ԿՆԻՔ

Ամբաստ Տէր Ղազարեան

Բարթողիմէոս վրդ. Հեռագիր մը կը քաշէ Կ. Պոլիս, Սուլթան Համիտին, եւ տեղական կառավարութեան հրահանգ կու գայ Սուլթանէն եւ Նիկողոս Եպիսկոպոսէն եւ մէկ քանի ուրիշներէ զատ, մեծ մասը ազատ կ'արձակուին:

Դարձեալ վարդապետն է որ կը պատմէ.-

1896 Յունուար 1-ին, Կաղանդին օրը, Սասնոյ կոտորածին լուրը մեզի հասաւ, որ տեղի ունեցած էր 1894-ին: Իբրեւ հայ եւ իբրեւ հայ կարգաւոր շատ յուզուեցայ այդ եղեռական լուրերէն: Խորհեցայ որ ժամանակը եկած է վրէժ լուծելու վատ թուրքերէն: Մօտս հրաւիրեցի Ֆոնուզի վիճակին քահանաները եւ խորհուրդ տուի որ ժողովուրդը ոտքի հանեն, քարոզելով թէ՛ թուրքերը Սասունի մէջ մեր եղբայրները ջարդած են, պատրաստ ըլլան կռիւի, ինքզինքնին պաշտպանելու եւ մեր եղբայրներուն վրէժը լուծելու համար: Եւ աւելցուցի որ՝ եթէ մէկը մեր այս գաղտնիքը հրապարակէ, արժանի չլլայ սրբութիւն առնելու, այլ ենթարկուի դժոխքի դատապարտութեան: Կառավարութիւնը իմացեր է թէ՛ Ֆոնուզի մէջ վտանգաւոր խլրտումներ կը պատրաստուին եւ թէ երկու հոգի տեսած են որ վարդապետը լերան մէջ մեծ քանակութեամբ արգիլուած զէնք պահած է եւ շաբաթն անգամ մը կ'երթայ այդ զէնքերն իւղոտելու:

Ես բանէ մը տեղեկութիւն չունէի: Տեսայ որ քանի մը օր վերջը Նազարէթ Զաւուչը դարձեալ վանք եկաւ եւ ըսաւ թէ կառավարութիւնը զիս կ'ուզէ:

— Ի՞նչ կայ ըսի:

Շիտակը ըսելով բան մը չեմ գիտեր, կ'ըսէ Նազարէթ Զաւուչ:

Չէյթուն հասանք Հին գեղի մուխթար Տատուրեան Գրիգորը, Պըսը Աշղեանը, Գարակէօզեան Խաչատուրը եւ ես, բանտ գրին մեզ: Քանի մը օր նեղելէ եւ խիստ հարցաքննութիւններէ յետոյ ազատ արձակեցին մեզ:

Բարթողիմէոս վրդ. Թագաճեան

Մկրտիչ Կաթողիկոսի ջանքերով, այսպէս, պաշտօնանկ կ'ըլլայ Սա-

ու կույթին: Ինտէաս է կըլա՞մնէ՞յ բայը տայըն:

ՄԵՈՒՆԴ, ՄԸԱՆՈՒՆԴ

Դեկտեմբեր 29-էն չիւր նիւյ տայը Ծ Յունուար պօղ կու բառ-
նան, մաս, էդ, մածուն, հաւկիթ, ձոկ չին ուտան: Յունուար Ծ-ին
իյիկոնը ճրագալոյց-խօթում է: Իժոմ կույթին: Հէան մայքայէնուցը
(Ծսայի եւայն) գիյթիւր կու կայթացվուէյ: Էլտիփօ Դանիէլան գիյթը
(Սեդրեք, Միսաք, Աքեդնաքովը) կու կայթայցուէյ: Սոնկրօ պատայոգ
կունէյ: Զոյ կ'ուրհուվէյ, ու ամէն մոյթ էադ ջաքն քիւ մը կու մէյ
ղընթիկ մէ պըատիկ շիչօվ մը տունը կու տանէյ, եուր տունը
կինուղնան ա խումին: Հապօ, չիւր նաւակով (կեավուր բանջարը)
պօքը կու բանին: Զիւյ նամակը էդոր տապկոծ կունէյ, կէօթ
Թիսուս Բեթլէհէման մըատուրը ծընեցով, մէյը, դունտախը տեղ էդ
տիյիւնիյօվը պըալից մանուկը: (Այս նուիկ ըսուած բոյսը լայն
տերեւներով է, կը նմանի իրական բանջարին, միայն թէ վայրի է:
տերեւին բազուկին վերջացած տեղը, տերեւը երկու կողմերուն վրայ
ականջի բլղակներու նման մասեր ունի, Զեւով կը նմանի ճիւղ
բաղեղի տերեւին, բայց անկէ խոշոր կ'ըլլայ եւ աւելի թանձր: Երբ
դպչիս կամ քիւ մը խառնես, ձեռքդ կը մոմոայ, գէյթունցին կ'ընէ
«կո կըածէ: կը բուսնի պարտէզներու եզերքները, ցանկապատերու
տակ, կը բաղկանայ բազուկէ եւ տերեւներէ միայն: Անոր թարմ
տերեւներէն մեծ պահլին, գարնան ուրիշ չորպայ մը կը չինեն Վէ-
լիկ ապուր» անունով: Թթու կ'ըլլայ չորպան, մէջը ծեծած ցորենով:
Օյոկվոն իժամէն ելլելուն ու տուն իյթալով պօքը բանիլէին սօնկրօ
մանրոք, եերքօվ, չիւրսօվ «Աւետիս» կու բալլալվան տնվաքը ու
«Աւետիսի մէկ քանը չէջիտը կո» կու ճովոն ու իյինց փայօ պաղձի
կուտօն: մանրօք կու բիլլին էադ ձիէն ու պաղուն:

«Աւետիսի» քանի մը տեսակներ:

Այսօր տօն է Սուրբ Ժննգեան աւետիս
Տեառն մերոյ եւ յայտնութեան աւետիս
Այսօր արեւն արդարութեան աւետիս
Ցնծա երկիր ցնծա գետին աւետիս:

Այսօր Սուրբ կոյսն անապական
Մնաւ... զանաւ արքայն աւետիս:

ՏԵՐՐԻՆՏԷԱՍ, ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱԶ

Մընունտէն դիչնած, ձրարդա վէ եա արտըն, դամալոխ ծոռ կա

բիբին գեղը, քառասուն էօի կու չիյնօ, Փետրուարն 13-ի իրիկոնը Տէ-
րինտէաս (Տեառնընդառաջ) ժողովոյթը գիղիցէ կույթօն, շօտը կանկը-
տէք, աղլկինտէք ու մանրոնք կունան հոտ մէ նիւյ կայգուվէօդ
տէաղէք: Իժոմ կունայ: Միմ կու գանին, կու վառին: Նիւյ կար-
գուվուղնուն, գիղիցէն միմ կու վառէ կուգոյ կնիյ է գիղիցոն նը-
ւէր կուտոն, փայօ, մէճիտիյօ մը կէս խակի:

Էլտիփօ միմիյը վառելէօվ լապտիբի մէջ դըանելէօվ տուն կու
տանըն, տոնվուցը լրասըրը կու վառին էնինցմէօվ: նիւյ հարսիբը, ու
նիւյ մանրոնք ուցոծ մանիօքը գիղիցէն կույթօն ու քառասունքէն
կեյլին, էկէր դեռ քառասուն էօյ է չէ եղի դեռ իյինց կայգուլիոն վէ
եա մանրոնք ուցնովոն: Տուն իյթալուն, ան ձայդու վէ եա արտընը,
որ մոնր ծոռ կունան, անճոխ մէկ իյկու կավան բանձրութիւնէօվ,
հիտն է չիւյ խիւտ տինիյնին չաթմըչ կէնին իյիկ ոտվէ կիմի ու կու
վասեն չիւյս դակը երտասարդնը ու աշկընտէք կու ցոտկոն, կու
դառնոն կըյաքէն չիւյս դակը, թիւթիւէ բոռնած, կուխաղըն «տէ-
րինտէաս» ճըվալէօվ:

տէրինտէսը հին հեթանոսական ժամանակներէ մնացած տօն մըն
է նուիրուած գրադաշտականներու կողմէ Միհր (mihra) կրակի
չաստուածին, Արեւ-դիք չաստուծոյն: Իսկ բառը՝ Տէրինտէս, բանասէր
Փ. Ֆետրգեան հաւանական կը նկատէ տէր անդաց-ի աղաւաղուած
մէկ ձեւը եւ կ'աւելցնէ, թէ մեր շատ մը բառերուն մէջ
սովորական է «ց»-ին «ա»-ի փոխուիլը, ինչպէս երկուց - երկուս,
կողմանց - կողմանս, հոռոմոց - հոռոմոս, կաղծանդոց - կաղանդոս,
նոյնպէս Տէր անդաց - տէրինտէաս: Այս վերջին բացատրութիւնը
շատ ալ համոզիչ չի թուիր, այսինքն՝ տէր անդաց - անդիրու,
դաշտերու տէր, այն հիմնաւորումով, որ Միհր չաստուածը կ'իշխէր
ընդարձակ արօտներու, դաշտերու: Մեր Առաքելական եկեղեցին այդ
հեթանոսական տօնը վերածած է քրիստոնէական տօնի մը, Քրիստոսի
տաճար ընծայումին: Սակայն պահուած է կրակ, խարոյկ վառելով,
անոր շուրջը դառնալու, պարելու, վրայէն ցատկելու սովորութիւնը:

ՍՈՒՐԲ ՍԱՐԳԻՍ

Ինչպէս հայկական բոլոր գաւառներու, նոյնպէս գէյթունցիներու
համար կարեւոր տօն մըն է Ս. սարգիսի տօնը, ինչպէս նաեւ
կարեւոր սուրբ մըն է ինքը Ս. Սարգիսը գէյթունին, մեծ դժուարութեան
մը ատեն կը կանչէ Ս. սարգիսը համան Սուրբ Սարգէս դոն հասիր»
կ'ըսէ, երբ կը տեսնէ որ, ճամբան, իր ջորին «Ձուլախըն Պայիր»
ըսուած դժուար անցանելի զառիվերի ոտք չըռնող նեղ ճամբէն
անցնելու ատեն պիտի գլորուի:

Ձէյթուն մարդիկ կային, տարիքոտ ծերեր եւ պառւաններ, որոնք Ս. Սարգիսի ամբողջ շաբաթը՝ Երկուշաբթիէն մինչեւ Շաբաթ իրիկուն ծոմ կը պահէին ու Շաբաթ իրիկուն կը բանային ծոմը, ոչխար մը կամ այծ մը մատաղ ընելով եւ աղքատներուն բաժնելով: Իսկ երիտասարդ աղջիկներ, ինչպէս հայկական միւս գաւառներուն մէջ, նոյնպէս Ձէյթունի մէջ ծոմ կը պահէին մինչեւ Զորեքշաբթի կէսօր: Յետոյ ժամ կ'երթային ու կ'աղօթէին, կը խոստովանէին, սրբութիւն առնելով տուն կը դառնային: Եթէ նշանուած են, աղուն ծնողքին կողմէ հրուշակ եւ այլ նուէրներ կը բերուին:

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆ ԵՒ ԲԱՐԿԻՆԴՈՆՔ

Վարդանանցըն միւր չիւրս գիղիցէքը հանդիսաւոր պատարթ կէնան, կը յիշատակըն «Վարդան քաջ զօրավար եւ 1038 վկայից, էլ տիփօ Սուրբ Ակիւքօ վարժատունը հանդէս մը կէնան, հէն կ'երգան «Թէ հայրենեաց պսակադիր»ը, «Լուեց, ամպերը», «Հիմի էլ լուենք» եւ «Իմ հայրենեաց արեւ Վարդան»... երգերը:

Այդ օրը հերիսա կ'եփեն, կ'ուտեն եւ աղքատներուն ալ կը տանին: Բարեկենդանի Զորեքշաբթի Գայլի տօն էր: Կիներ գործ չէին ընել: Բարեկենդանի կիրակին (Բուն Բարեկենդան) գեղացիք՝ զէր թուեցիք, հարուստ, աղքատ, էատ էօյը, չիրք կէնին չէն ինի, մասէօվ ուտիլէք, մէջէօվ քուֆթօ, օռուզ ապուր պիտի իփին, վօղը իրկու շաբթը մինծ պօքն է, աղհոցք, աղցոց պոքը (աղուհացի պահքը):

էատ էօյը կու տան, կու խուման ու տինիյնէն կ'իլլան կու խաղին, մինծ մարդիքը պիւօ կու խաղին հազար տախտան ասուծ խողը: Ուռուցոծ պապան, սէաճ կախէօղը ու հորսը Ըս իրիքը՝ ուռուցոծ պապան, սէաճ կախէօղը ու հորսը մէկ տեղ կու խաղօն: Խօ խողը թուլու խաղիւր կէսվայ: Ուռուցոծ պապան, դէմքը ալիւրոտուած, գլուխը խոշոր գլխանոց մը արտառոց ձեւով մը, կոնակին ապա մը, որուն մէջը լեցուցած են հագուստի կտորներ, անանկ որ խոշոր կուտկէն մը ձեւացած կոնակին, իսկ փորը նոյնպէս ուռեցուած, կրունակէն եւ փորէն ուռած, սապատաւոր մը, տարրօրինակ, ալլանդակ երեւոյթ մը առած, եւ այդ պատճառով յէ որ կոշիւր են զինքը ուռուցոծ պապ, իսկ սէաճ կախէօղը, երեսը մուր քսած, գլուխը գարգմանակի պէս փետուրներ անցուցած, մէջը կախած է մրոտ սեւկ սաճ մը, եւ հաց եփելիք էպլէճէք մը, դաշոյնի տեղ (էպլէճէքը փայտէ չինուած եւ ճիշդ երկու բերնով դաշոյնի նման տնկան առարկայ մըն է, անով բարակ հացը կը դարձնեն արագ արագ, տաք սեճի վրայ, որ չայրի, բոլոր մասերը հաւասար եփին): Սէաճ

կախողը շատ ճարպիկ եւ ճկուն, թեթեւաքայլ մէկը կ'ըլլայ, սէաճը որպէս վահան եւ որպէս թմբուկ կը գործածէր, եւ էպլէճէքով կը զարնէր այդ սէաճին եւ աղմուկ, ժխոր կը հանէր: Գալով հարսին, անիկա հագած կ'ըլլար զէյթունցի կիներու այն ժամանակուան տարազը, մետաքսէ Ղութլու մը տալիս ըսուած մութ կապոյտ կերպասէ երկար հագուստ մը, գլուխը փաթթած բաւական թիւով գլխու թաշկինակ- եագմաներ, իսկ դէմքը ծածկած ուրիշ վարչամակով մը երեքը միասին կը սկսէին մեծ տանիք մը կամ հրապարակ մը խուռն հանդիսականներու ներկայութեան կը խաղան, կը պարեն: Տեսակ մը նախնական պար եւ հարսնիք: Նախ եւ առաջ հարսը իր էրկանը, այսինքն ուռուցած պապային հետ կը պարէ, յանկարծ սէաճ կախէօղը անկիւնէ մը դուրս կ'ելլէ եւ ուռուցած պապան կը փախցնէ ու կը սկսի ինքը պարել հարսին հետ: Մինչեւ որ ուռուցոծ պապան քիչ մը յետոյ սիրտ առած կը հասնի նորէն ու կը փախցնէ սէաճ կախէօղը: Նորէն կը տիրանայ իր հարսին: Այդ պարերու ընթացքին անոնք իրարու հետ կը խօսակցէին, կը կատակէին, կը սպառնային ու վերջ ի վերջոյ սէաճ կախէօղը կը սպաննէ ուռուցոծ պապան եւ կը փախցնէ հարսը: Ուռուցոծ պապան կ'իյնայ մէջտեղ անշունչ, բժիշկ մը կը հասնի եւ բաներ մը կ'ընէ, երեսին պաղ ջուր կը թափէ եւ մէյ մըն ալ անիկա կը կենդանանայ, մանաւանդ որ կ'իմանայ թէ իրեն դեղ պիտի խմցնեն: Ընդոստ կ'ելլէ, կը կանգնի մէջտեղ: Ու այսպէս խաղը վերջ կը գտնէ՝ ուռուցոծ պապային յաղթանակով:

Այդ օրը կը խաղան նաեւ Ղանթարը, Բիւլիւրը, Էօմպէքը, Տիւվարը եւ ուրիշ խաղեր, ինչպէս նաեւ այս բոլորէն վերջ Հազար տախտանը ըսուածը: Տասն տասնհինգ երիտասարդներ քով քովի ուղիղ կեցած, թեւերին իրարու վիզերուն խիտ խիտ անցուցած մարդէ տեսակ մը ամուր պատ կը կազմեն, որուն վրայէն կարգով կ'ելլէ անոնցմէ ամէն մէկը եւ կը քալէ այդ պատին վրայէն, կոխելով եւ անցնելով: Այդ պահուն անոնք բոլորը կ'երգեն ոեւէ բան: Այդ պատը, ուրեմն մէկ ծայրէն կը քակուի եւ միւս ծայրէն նորէն կը կազմուի:

Այս երկու խաղերը՝ ուռուցոծ պապան եւ հազար տախտանը միայն Բարեկենդանին էր որ կը խաղան, իսկ միւսները ուրիշ տոններն ալ կը խաղան կիրակի օրերը:

Աղուհացի պահքին առաջին կիրակին, զէյթունցի ամէն ընտանիք Հատրկ ապուր կը չինէ, Ս. Թորոսի տօնին: Հատրկը կը չինէին աղուոր մաքուր ցորենով, չոր բակլայով, մէջը կը կենար նաեւ սիսեռ, հատ ձաւար, զամպուռ (զահթէր, ծոթրին): Այս կերակուրին զէյթունցիք աղ ալ կը դնէին եւ իրրեւ սովորական ուտելիք մը

կ'ուտէին: Սակայն ուրիշ տեղացիներ առանց աղի կը շինեն, անջուր եւ վրան կը լեցնեն մանր շաքար, չոր նուշ, նկոյզի միջուկ: Առ հասարակ անուան տօն մը, կամ պզտիկի մը ակռայ հանելուն կը շինեն այս տեսակ հատիկը:

Աղցոցը վից շաքօթը, ամէն էօյ, շաքօթ աւուրրնու կիրականաւորէն դոյս, շաքօթովոն հինգ ուլիլը, էօյը իրիք նախը խոմ կ'ուտէր: առաւտովոն, չիւս գիղիցուցը մէջը խոլիսը կու լացվէր «Տէր Ամենակալը, Մանասէ թէաքավիւրէն ապաշխարանքի աղէօթքը լասելու կ'էյզըվէր «Ճգնաւորք, Արեւելից, Լոյս ու Ճանապարհ արեւագալի ժամու իյգիլը: էլտիփօ «Հրաժարիմք»ը ու խուստովանքի «Մեղայ Ամենասուրբ»ը:

Ճաշու ժոմն է եավէ կ'էյզըվին անուշ էյգիլ, սէադմիւսնիլ իյիկոնը կու կայգին «Շնորհեա մեզ Տէր» եւ կ'իսվէր «Զի Աստուած ընդ մեզ է», «Ի քէն հացեմք»ը, «Նայեաց սիրով»ը, «Եկեասցէն», «Նարեկացիի «Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ» եւ «ընկալ Նարեկացիի «Ի խորոց սրտի խօսք ընդ Աստուծոյ» եւ «ընկալ քաղցրութեամբ» հոգեբուխ աղէօթքնան ու «Հաւատով խոստովանիմ» իր 24 համըյէօյը ու ամենէն իտքը «Փառք քեզ Տէր Աստուած»...:

Ամէն մոյթ առաւտովոն խոմէն պէտք է գրատնավէր, «Տէյ ամենակալ»ը լասըլոյ: Շոտ վոխք, մինք մանրոնքս մրցում կէնոնք, տեսնելոյ համար թէ իւր շօտ Տ. Ամենակալ կու լասէ: Ու կու համոյնք: Տէյ Նիշոն, Տ. կայապետ, Տ. Սահակ, Տ. Եզնիկ ու Տ. վաղարշակ քէշիւ քէայիւզ կ'ուտին նաղցոցը՝ «Անառակին», «Տնտեսին», «Դատաւորին» առականուն վիչէն:

ՊԸԱՏՆԻՆԷ, ԾԱՆԿԱԶԱՐԴ

Միզ համոյ Զատրկը դատոյ մինն էօյ, մինն տէօն է: Ամէն մոյթ գիղիցէն պիտի իյթէյ ու պըատղինէ պիտի տանէր, ուրհնուէր: «Որ վերօրհնիս» շայակոնը պիտի էյզըվէր: Իյիկոն «Դուռն բաց» է: կանտէք, աշկընտէք խոմը կու լացվին: Ավոգ իրիքսարթի «Տասը կուտանաց» տէօն կուտէր, էվէ կանկտէք, աշկընտէք գիղիցէն կուտին, տիսնելու համոյ, թը իւր իմաստուն պիտի ելլէ, որովհետեւ վիճոկ կու քայվէյ:

Պըատղընոն նախատեսակի շաքօթ էօյը Ղազարոսի յարութան տէօնն էր: Ավօգ Հինգշաքթի էօյը, հինգ տապօ իրիք կ'ուտէյ, առաւտովոն, ճէշու պատայոգ, Ուտունլուա, ուզնուտվիլօ⁴⁴ ու խաւարման-չարչարանքի գիշեր: Շատիլիս, էնիլ թւր քաղոքը կոն, դոյսիլք չին, էաս ալային խոմմոնն էա կոյթին: Ավօգ Հինգ շաքթըն կիսին «Իյիք Ամենակալ»ը ու կ'իյգին «Այսօր կանգնեցաւ աւագան» գեղեցիկ շայականը եւ Այսօր անճառ» երգը:

Մեծ Պահլի եօթը շաքաթը գէյթունցիք պահք պահելով հանդերձ, շատեր մինչեւ կէսօր, ոմանք ալ մինչեւ իրիկուն ծոմ կը բռնէին, ու ոմանք ալ աղ ու հացով կ'անցընէին մեծ պահլի 48 օրերը: Աղ, չոր փոշի պղպեղը հացով կ'ուտէին: Ատկէ է որ մեծ պահլին Աղհոցք կամ Աղցոց պոք կ'ըսէին:

Աւագ Հինգշաքթին եւ Ուրրաթը կ'ուտեն սոխով ու սխտորով թթու եւ կծու կերակուր եւ քացախով ոսպով չորպայ (էադփիւժիւսպ) աղացուած ոսպով չորպայ, Թիսուսի շարչարանքին եւ լեղի քացախ ճաշակելուն որրպէս յիշատակ: Խաւարման եւ շարչարանքի գիշերը, ժամերգութեան մինչեւ վերջաւորութիւնը, եօթը աւետարան կը կարդացուէր, մեզմէ շատեր մինչեւ ժամուն լրանալը ոտքի կը կենային: Ամէն աւետարան կարդացուելուն, դերձանի մը վրայ հանգոյց մը կ'ընէին, որպէս թէ այդ եօթ հանգոյցով դերձանը կրողը գերծ կը մնար դողցաւէ եւ կարիճի, օձի խայթուածքէ:

Մեծ պահլի մէջ էր որ կը սկսէր գէյթունցի այգւորներուն աշխատանքը: Այգիները կը թափէին անոնք, կը յօտէին որթատունկերը, յետոյ կը սկսէին փորել այգիներուն հողը խոշոր փիտատով մը (փիր, փոր): Իրիկուն տուն դառնալուն մշակ-այգւորները իրենց հետ կը բերէին գարնան առաջին բացուած ծաղիկները՝ խունծուլուն, որուն արմատը նուշի մը մեծութեամբ եւ սրճագոյն ցանցով մը պատած սպիտակ կոճղէզ մըն է, տաք մոխրի մէջ կը թաղէինք, կ'եփէինք եւ կ'ուտէինք, շագանակի համ մը ունէր: Թուրքերէն չիյտէմ կ'ըսեն, իսկ արարները աճուրը ճէպէլ կը կոչեն գայն: Գալով ծաղիկներուն մանր կ'ըլլան անոնք, դեղնորակ, եւ թերթիկներուն երկայնքին սեւ գիծեր, մէկ արմատի վրայ մէկէ աւելի ծաղիկները կը գտնուին, անուշ բոյր մը ունին այս ծաղիկները: Ծաղիկին չորս կողմը դերձան-թելերու բարակութեամբ եւ կանաչ շատ մը տերեւներ կ'ըլլան:

Այգւորը խունծուլուն, նարկիզը եւ նարճէսը (նունուֆար, խուզէմ արար) իր Ֆէսին փաթթուած թաշկինակին անցուցած կու գայ գեղը: Այգւորը կը բերէր նաեւ խամխատոկ ըսուած արմատը, որ ջրոտ տեղը բուսնող տունկի մը արմատն է, ճերմակ է, խաւ խաւ, վրայի առաջին խաւը քերելէն յետոյ կ'ուտուի, ստեպղինի նման է, սակայն քաղցր չէ, պաղ ջուրի համ մը ունի եւ ստեպղինին նման կոնաճեւ չէ, այլ գրեթէ մէկ հաստութիւն ունի վերէն վարը: Կը բերէր քուրէթ ըսուած վայրի տեսակ մը սխտորը, որ սխտորի կամ կանաչ սոխի տեղ կ'ուտէինք կերակուրին հետ: Պրասայի կը նմանի

անիկա, Համայնի մէջ արարները պրասային քուրբաթ կ'ըսեն, թերեւս զէյթունցիներուն ալ տունէն ալ կ'ամ վայրի պրասա է կ'ամ վայրի սխտոր: Այդ օրերուն է նաեւ որ կը բացուին կապոյտ եւ դեղին մանիշակը, բնորոյսը, օշինը (չիրիշ), նուշը: Բնորոյսը քաղցր ծաղիկ մանիշակը, բնորոյսը, օշինը (չիրիշ), նուշը: Բնորոյսը քաղցր ծաղիկ մըն է ճերմակի զարնող կարմորակ եւ թանձր թերթիկներով, եւ կ'ուտուի, իսկ օշինի տերեւները թանձր եւ երկու-երեք սանդղմեթր լայնքով եւ քսան-քսանհինգ սանդղմեթր երկայնքով կ'ըլլան, ձաւարէ եղինձի մէջ կ'եփեն եւ եղինձին (փիլաւ) տարբեր հաճելի համ մը կուտայ: Կը բացուին նաեւ բաղեղը, բրդոտ սինձը (սանձը, եէմիլք), Ասոնք ալ կերակուրներու մէջ կ'եփեն: Գիւղացիներ Ձէյթուն կը բերէին Գարը եւ կը փոխանակէին ալիւրի, մանր պղուրրի հետ: Գարըն ալ իր թթուաշ համովը շատ հաճելի տունկ մըն էր եւ տեսակ մը լուծողական ալ էր:

Աւագ Ուրբաթ օրը, կիները կը ներկէին Ջատկի հաւկիթները, տորոնի կարմիրով, տըզտըպաղուկ ըսուած տունկին գեղեցիկ դեղինով, չոր սոխի տերեւի գեղնորակով:

ՅԱՐՈՒԹԵԱՆ ՉԱՏԻԿ

Աւագ Շաբաթ Ս. Յարութեան խթում-ճրագալոյց է: Ժողովուրդը մեծ ու պզտիկ, ալ ու կին եկեղեցի պիտի երթային, երբ զօղանչէին պողպատէ եւ ընկոյզի տախտակէ զոյգ կոչնակները տենդագին: Այդ օրը շատեր առաւօտէն մինչեւ խթման ժամը, մինչեւ պատարագին վերջանալը եւ նոյնիսկ մինչեւ «Որ օրհնես զայնոսիկ» աղօթքը եւ «Օրհնեալ եղերուքը» ծոմ կը պահէին եւ մաս առնելով տուն կը դառնային ու կը բանային իրենց պահքը եւ ծոմը կարմիր հաւկիթով: Այդ օրը միւս չէին մորթեր եւ միւս չէին ուտեր, ինչպէս միւս նաւակատիք-տաղաւարներուն Շաբաթ օրերը: Նաւակատիք-տաղաւարներն էին Մնունդը, Ջատիկը, Վարդապառը, Վերափոխումն եւ իրաւերացը:

Կիրակի առտուն մեծ տօն է, Յարութեան զատիկն է: Նորէն հանդիսաւոր պատարագ տեղի կ'ունենար եւ աւագ քահանան կը քարոզէր օրուայ պատշաճ քարոզէն յետոյ ժողովուրդը կ'ընէր իր Ջատկի նուէրը, եւ քարոզիչը կը յայտարարէր մէկիկ մէկիկ տրուած դրամին քանակը: Ոսկի մը, հինգ, մինչեւ տասը հնչուն ոսկի տուող կ'ըլլար: Ու ես տակաւին պատանի, իմ քեռպպուս քովը կ'ամ մեռնէին վերջն ալ անոր տեղը կեցած մտքովս կը գումարէի այդ օրուան հասոյթը եկեղեցիին, որ քանի մը հազարը կը գտնէր: Յետոյ, Հաւատամքէն առաջ կը կարդացուէր Յարութեան աւետարանը երեք լեզուներով, զրաբար, Ձէյթունի բարբառով եւ Փրանսերէն կամ թուրքերէն:

Շատ մը բարեպաշտներ, որոնք տակաւին երէկ՝ Շաբաթ իրիկուն չէին կրցած հասնիլ ժամ, դաշտերէն կ'ամ ալգիներէն, ահա անդին, գաւիթը, առանձին անկիւն մը խոստովանանքի են եւ ծնրադիր կը սպասեն քահանայ հօր թողութեան ու կու գան, կը հաղորդուին Յիսուսի արեան եւ մարմնոյն: Մինչ, վարր, դպիրները կ'երգեն Հայօր Անճառ» եւ Տարածեալ» Ն. Շնորհալիի երգերը:

Դուրսը, եկեղեցիին բակը երիտասարդներ, պատանիներ, նոյնիսկ երբեմն ծերեր հաւկիթ կը զարնեն, կը կռուիցնին: Հաւկիթի քանի մը տեսակ խաղեր կային, որոնցմէ կը յիշեմ պարզ՝ մէկ հաւկիթի կռուեցնելը, յետոյ տիւզմէճը, ճանճ-կեցուկը: Վարպետ կռուեցնողներ կային, անոնցմէ միտքս կու գայ Սասունեանց մանուկը, Օգոստիանց Սեդրակը, Սարգիսը, Հասէսինց Արմենակը, որոնց առաջին երկուքը տակաւին կ'ապրին:

Ամէն տուն ուրախութիւն է: Մեծ ու պզտիկ, անպայման նոր հագուստ հագած պէտք է ըլլան: Եթէ ոչ Ջատիկը իր վրան չիգար: Աղքատը նոյնիսկ, գոնէ նոր ոտնաման մը, կ'ամ կօշիկ մը, նոր թաշկինակ մը, էնթարի մը հագած ըլլալու է, որ վրան Ջատիկ գայ: Իսկ կիները, աղջիկները, անխտիր նորոգուած ըլլալու են իրենց կարմիր, կանաչ շրջագեստներով: Գարնան կանաչին, ծառերուն եւ ծաղիկներուն հետ իրենք ալ կը զարդարուէին գոյնզգոյն գգեստներով:

Ջատկի երկրորդ օրը՝ Երկուշաբթի, պատարագէն յետոյ, ժողովուրդը բազմութիւնով կ'երթար մեծ գերեզմանոցը, մեծ թթենիին շուրջը, ու ամէն մարդ կու լար, կ'աղօթէր, կ'ողբէր ու կը յիշէր իր հին ու նոր ննջեցեալները եւ քահանային աղօթել կու տար անոնց վրայ:

Յետոյ կու գար կրկնազատիկը, Ջատկի դիմացի Կիրակին, կանաչ Կիրակին, աշխարհամատրան Կիրակին եւ Աւետումն Ս. Աստուածածինն: Այդ օրը շատեր դաշտերը պիտի երթային, եւ սպասէին որ անձրեւ գար, գոնէ քանի մը կաթիլ իջնէր: Այդ օրուան անձրեւը առաւօթեան եւ բարիքի նշան է կ'ըսէին, որպէս Գարիէլ հրեշտակի Աւետումը Ս. Կոյսին յրութեան, հետեւաբար պտղաբերութի խորհրդանշան էր այդ օրուան անձրեւը: Աղջիկներուն մազերը երբ թրջուէին այդ օրուան անձրեւէն, շատ կ'երկարէին, կ'ըսէին մեծ կիները: Իսկ դաշտի մշակները այդ օրուան անձրեւին ամէն մէկ կաթիլը եղ ու կարագ է կ'ըսէին:

ԻՆՈՒՔ, ՅԻՆԱՆՑ

Ջատկի դիմացի եօթը եօթնօրեակներն են: Այդ եօթը եօթնօրեակներուն Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերը, միւս Չորեքշաբթի եւ Ուրբաթ

օրերուն պէս պաշտ չէին բռնել: Ու Յինանց մէջ պսակ, ամուսնութիւն
արգիլուած կ'ըլլար, ճիշդ Մեծ պաշտի եօթը շաբաթներուն նման:

ԲԱՆԴԵՐԱՆ, ՀԱՄԱՐԱՋՈՒՄ

Թերեւս բախտի ջրիկ ըսել ուզած է գէթունցին, իսկ ուրիշ
տեղեր Մէնթիվար կ'ըսեն: Զորեքշարթի իրիկունէն, աղջիկներ ձեռքեր-
նին սափոր, Եօթն աղբիւրէն ջուր կը բերէին, Հինգշարթի առտու
Ապրիմ-մեռնիմ, իրեցուկ (փաթաթիա) ծաղիկներ եւ ուրիշ կանաչեղէն-
ներ եւ ծաղիկներ կը հաւաքէին դաշտերէն ու կը բերէին սափորի
կամ կախնունկի (սադըլ) ջուրին մէջ կը դնէին: Յետոյ դրացիներ,
կիներ, աղջիկներ, երիտասարդներ մէկ մէկ առարկայ՝ դանակ,
մատանի, մատնոց, մկրատ եւ այլ տեսակի մանր առարկաներ կու
տային եւ այդ բոլորը կը դրուէին ջուրէն հանուած ծաղիկներուն
եւ խոտերուն մէջ: Բախտագուշակ կիներ կամ աղջիկը, առանց
գիտնալու այդ առարկաներուն տէրը, անոնցմէ հատ մը դուրս կը
հանէր, այն վայրկեանին երբ ուրիշ կին մը երգ մը, մանի մը,
անտունի մը կ'երգէր կամ կը խօսէր: Այդ խօսքերորը, բախտը կը
ցուցնէին այդ առարկային տիրոջ, որ երբեմն նոյնիսկ հոն չէր
ըլլար, կամ իր քոյրը, մայրը հոն կ'ըլլար: Դուրս հանողին գլուխը
թաշկինակ մը անցուած կ'ըլլար եւ ան չէր տեսներ իր դուրս բերած
առարկային ինչ ըլլալը կամ որուն պատկանած ըլլալը: Այս երգերը
ընդհանրապէս հայերէն չէին ըլլար:

Նմոյշ մը այդ երգերէն.

Այ, Մէնթիվար, մէնթիվար,
Մէնթիվարն վախտը վար,
Մէնթիվարա կէլէնին,
ձէննէթտէ պէշ թախտըվար:
Թարգմանութիւնը.

Ով Մէնթիվար, Մէնթիվար (վիճակ),
վիճակին ալ օրը կայ,
Ով որ վիճակի կու գայ,
Դրախտին մէջ տեղը կայ:

Այնէ աթտըմ չայլորա,
Շավգը տիւշտիւ պայլորա,
էլլէր նէ տէռէ, տէռին
իչիմ տէճնտիւ խայլորա:

Թարգմանութիւնը.

Հայի դրոյ մարգերուն,
Յուրը զարկաւ սարերուն,
Ով կ'ուզէ ինչ թող խօսի,
Գործըս դարձաւ ի բարի:

Այս տօնին վիճակ ալ կ'ըսեն: Անիկա տեսակ մը յիշատակութիւնն
է այն վիճակին, զոր Յիսուսի առաքեալները քաշեցին, կորսուած
Յուդային տեղ նոր մը ընտրելու համար: Եւ վիճակը ելաւ Մատթիային:
Երգուած երգի իմաստին համաձայն բացատրութիւններ եւ
մեկնութիւններ կ'ընէին վարպետ եւ փորձառու կիներ, առարկային
տիրոջ բախտի, վիճակի մասին, կ'ընէին զուարթ ակնարկութիւններ,
կատակներ: Այդ երգերը կամ մանիները, թէեւ հայերէն չէին,
սակայն բոլորն ալ հայ աշուղներու գործեր էին, հայ ժողովրդական
տաղեր էին: Քանի մը տուն եւս թարգմանենք այդ տաղերէն.

Շահասպրամ (ոահան) տնկեցի, բուսաւ վարդ,
Սոխակը եկաւ երգեց վրան ուրախ զուարթ,
Մերգեր սոխակըս, մ'երգեր,
Սիրականս պանդուխտ է գացեր:

Զարկի սնտուկ բացուեցեւ,
Բուստ, մարգարիտ թափեցաւ,
Աչքը լուսինք իր մօրը,
Աղջկան բախտը բացուեցաւ:

Կեռասին ճիւղը ցած է,
Տակը կանաչ գորգ փռուած է,
Ով Յիսուս, Դուն Քրիստոս,
Դուն չիտակ ճամբան ցոյց տուր:
Այս վերջին տունին թարգմանութեան մէջ Յիսուս Քրիստոսի
անունը եւ անկէ «չիտակ ճամբան» փնտռելը, շատ որոշ ցոյց կու
տայ թէ այդ բոլոր երգերն ալ թէեւ թուրքերէն գրուած, սակայն
հայ աշուղներու գործեր են:

ՀԻԳԳԷ ԳԷԱԼԻԻՑ, ՀՈԳԵԳԱՆՈՒՍՑ

Ատեն մը, այս տօնին նախորդող ութը օրերը պաշտ կը պահէին

մեր մամիկները:

ՎԱՐԴԻՎԱՐ, ՎԱՐԴԱՎԱՌ

Հայ հեթանոսական շրջանին մնացած հանդիսութեան մը, քրիստոնէացումն է այս տօնը, զոր մեր հայրապետները նոյնացուցած են քրիստոսի Այլակերպութեան տօնին, Թաքօր լերան վրայ:

Հայ հեթանոսական շրջանի Նոր տարին էր ան՝ Նաւասարդը, եւ միեւնոյն ատեն ջրհեղեղէն յետոյ, Նոյի հետ Աստուծոյ ուխտը, ծիրանի գօտիին ու խաղաղութեան աղաւնիին, ձիթենիի ճիւղին յիշատակութեան տօնակատարութիւնը (նաւ = նոր, սարդ = տարի): Այդ օրը Հայաստանի ամէն կողմերէն նախարարներ, սեպուհ եւ ազնուական, քուրմ եւ ազատորեարը, զինուորական ու չինական, ու հայոց արքան, բոլորը կ'երթային Բագաւան: Մատաղներ կ'ընէին Վանատուրին, Անահիտին, Վահագնին: Հայ թագաւորին վրանը հեռուէն կը նկատուէր իր մեծութեամբն ու գունաւոր գեղեցկութեամբը, արդուզարդով: Եւ Գողթան երգիչները, գուսանները կ'երգէին ու կը նուագէին հայ քաջերու գործերը, իրենց փանթիւններով: Աղաւնի կը թռչնէին, ջուր կը սրսկէին, որպէս նշան ջրհեղեղին եւ խաղաղութեան աղաւնիին:

Այդ տօնախմբութիւնը այնքան հանդիսաւոր կ'ըլլար, այնքան քաղցր, որ մեծ արքան հայոց Արտաշէս, երբ արեւմուտքի իր արշաւէն կը դառնար ու երբ ճամբան պիտի մեռնէր, իր հոգեկարգի վայրկեանին կարօտով կ'ողբէր Նաւասարդի հանդիսութիւնը:

«Ո՛ր տայր ինձ գծուիմ ծխամի

Եւ գառաւօտն Նաւասարդի...»

Այդ տօնին կը սկսէին քաջութեան մրցումները, ձիարշաւ, մականախաղ, նետաձգութիւն, որսորդութիւն, գօտեմարտ, ըմբշամարտ: Արածանին կը ծածկուէր հազարաւոր երիտասարդներով, Անահիտ աստուածուհիէն մուրազ կը սպասէին: Իսկ հայոց կոյսերը, վարդի փունջեր կը տանէին Անահիտին եւ Վանատուրին:

Ձէյթունի մէջ ալ, Վարդափառի մեռելոցի Երկուշաբթին, մարդիկ կիներ, իրարու վրայ ջուր կը թափեն:

ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ, ՎԵՐԱՓՈՆՈՒՄՆ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Այս տօնը, Օգոստոսի մէջ տեղի կ'ունենար եւ մեծ շուքով, հանդիսութիւնով քան յարութեան գատիկը: Ամէն կողմէ՝ Մարաշէն, Ալպիստանէն, Կոկիսոնի շրջանէն, զէյթունի շրջականերէն, երբեմն

նոյնիսկ Այնթապէն եւ ուրիշ հեռաւոր վայրերէ ուխտի կու գային Ձէյթունի Ս. Աստուածացնայ վանքը եւ Ս. Փրկիչ: Այս տօնին կ'օրհնուէր խաղողը:

Ձէյթունի կիսանկախ վիճակը, առիթ մը կ'ըլլար զէյթունցիներուն եւ դուրսերէն եկած ուխտաւորներուն ազատ շուկա առնելու, գուարճանելու, դարձեալ խաղեր, մրցումները ընելու:

ԽԷԱԶ, ԽԱԶՎԵՐԱՅ

Տարուան վերջին Տաղաւարն էր Խաչը: Այս տօնին խաչը կը զարդարէին թաւածաղիկի տեսակներով (գատիֆէ), որ աշնան կը բացուէր, եւ ռահանով-շահասպրամով: Մաղիկի օրհնութեան աւետարանի ընթերցման ատեն քառասուն «Տէր ողորմեա» կ'ըսէ քահանան:

Յետոյ կու գային խէաչի թելը (Վարագայ Խաչի տօնը), Թէա-քաւուրէն պոքը, Խէատմէտ պոքը Հոկտեմբերի մէջ: Իսնոկը (Յիսնակ) ունի նաեւ իր շաբաթ մը պահքը: Յիսնակը կը սկսի Նոյեմբերի կէսին, անկէ յետոյ մինչեւ ծնունդ եօթը շաբաթ, այսինքն յիսուն օր կայ, ճիշդ մեծ պահքին նման: Հին ատեն կը գտնուէին զէյթունցի բարեպաշտուհիներ, որոնք այդ եօթը շաբաթը պահք կը պահէին: Յիսնակին յաճախ ձիւնը կը սկսէր եւ զէյթունցիներ կ'ըսէր. «Իսնոկն իկիք, ձանն իկիք», այսինքն, «Յիսնակն եկաւ, ձիւնն եկաւ»: Այդ օրերուն կը հանդիպէր Ս. Յակոբայ տօնը (Մծբնայ հայրապետին, Մարուգէ ճգնաւորին, Մեղիստոսի Եպիսկոպոսին եւ Գէորգայ Զօրավարին յիշատակութիւնները կ'ըլլան այդ օրը):

ՉԷՅԹՈՒՆԻ ՊԼՏԵՐԱԶԱՆ (1895-96)

Ինչպէս որ նկատեցինք մեր նախորդ էջերու ընթացքին, 1885-էն, այսինքն առաջին թուրք գայմազամ՝ Սալիհ Պէյէն մինչեւ 1896, Ձէյթուն եկող ու գացող թուրք գայմազամներն ու պաշտօնեաները մէկը միւսէն աւելի հայատեաց եւ խռովարար, աշխատած են Ձէյթունը հանգիստ չձգել, միշտ խնդիրներ հանել, նեղել զէյթունցիին, որ խլրտումներ հանէ եւ առիթ ու պատճառ ստեղծուի պատերազմի մը, որուն հետեւեանքը պիտի ըլլար՝ ըստ իրենց երազին եւ միաժամանակ համոզման՝ Ձէյթունի իսպառ բնաջնջումը։ Ու զէյթունցիին շատ լաւ հասկացած էր անոնց նպատակը՝ Վերջին գայմազամներէն էր Թէվֆիք Պէյը, որ իր գարշելի արարքներուն ու բռնութեանց պատճառով ժողովուրդի միահամուռ բողոքներուն վրայ, հանգուցեալ Մկրտիչ Կաթողիկոսի ազդու դիմումներովը, պաշտօնանկ կ'ըլլայ, կու գայ Հալէպ եւ երկար ժամանակ անգործ կը թափառի քաղաքի փողոցները։ Իրեն կը յաջորդէ Պէյլանի գայմազամը, որուն սակայն տակաւին ինչ ուղղութեան հետեւելիքը յայտնի չեղած, Ձէյթուն հասնելէն տասներկու օր յետոյ կը հիւանդանայ ու կը մեռնի։ Գայմազամութեան պաշտօնը փոխանորդաբար կը տանի շէրիի դատաւորը՝ դատին, որ դամասկոսցի մոլեռանդ երիտասարդ մըն էր Հանի Սիւլէյման անունով, չըջանաւարտ՝ Պոլսոյ պետական վարժարանէն եւ ըստ Աղասիի՝ մտերիմ բարեկամն եղած էր Սուլթան Համիտի խորհրդական Իզզէթ Պէյի։ 1893-ին պաշտօնանկ եղած էր Թէվֆիք եւ այժմ 1896 էր եւ յիշեալ դատին՝ տեսակ մը իր պաշտօնին բարձրացումէն քաջայերուած կը սկսի խորամանկ եւ անգուլթ արարքներով գերազանցել իր բոլոր նախորդները։ Անիկա կը սկսի նորանոր տուրքեր դնել աղքատ ժողովուրդին վրայ։ Իր լրբութեամբը եւ թուրք գինուորներուն ալ նոյն ընթացքին մէջ տեսնելով հանդերձ զանոնք քաջայերելով կ'ուզէր աղարտել զէյթունցիին բարոյականը եւ ընտանեկան պատիւը, որոնք Ձէյթունի մէջ շատ բարձր տեղ մը կը բռնէին։ Օր մը թուրք զապթիէներ եւ հարկահաւաքը կու գան աղքատ գիւղացիի մը տունը տուրք պահանջելու պատրուակով, ու երբ պատրաստ դրամ չեն գտներ, գիւղացիին ամբողջ հարստութիւնը եղող երեք էշերը, 50 գտներ, գիւղացիին ամբողջ հարստութիւնը եղող երեք էշերը, 50 դահեկանի կը ծախեն մարաշցի թուրքի մը։ Մարդը կը բողոքէ կառավարութեան, դատին սակայն ընթացք չի տար։ Կը դիմէ ազգային իշխանութեան։ Ազգային Խառն ժողովը կը նեղուի այդ անիրաւութեան համար, եւ Առաջնորդ Տ. Կարապետ Ա. Քահն. Երկանեանի միջոցով

կը բողոքէ դատին, այդ անգթութեան դէմ, եւ կը պահանջուի որ էշերը վերադարձուին տիրոջ, միանգամայն կը խոստանան գիւղացիին տուրքը՝ 50 դրուշի պարտքը իրենք վճարել։ Ու կը սպառնան դատին թէ՝ հակառակ պարագային հետեւանքը լաւ չ'ըլլար։ «Ես հրահանգ ունիմ իմ թագաւորէն, կը պատասխանէ դատաւորը, այսպէս վարուելու, որպէսզի խլրտում հանէք, եւ Սասնոյ հայերուն վիճակին ենթարկուիք»։ Դատաւոր Սիւլէյման իր այս յայտարարութիւնով կ'ուզէր զրգուել զէյթունցիները, որ ըմբոստանան եւ բանակ գայ Ձէյթուն եւ ջարդուին Սասունի պէս, մէյ մըն ալ միտքն էր վախճնել ժողովուրդը՝ որ աչք գոցէ իր չարագործութիւններուն եւ բռնի։

Կ'անցնի քանի մը օր, ուրիշ դէպք մը Ղարալար թաղեցիներուն պրօսափաջը Ձէյթունէն 20 վալլեան արեւմուտք Ակ կոչուած աղբիւրին մօտ, Ձէյթունի Մալ միւտիւրին (արքայական գանձերու տեսուչ) մեծ տղան, զէյթունցի մանկամարդ հարսի մը խօսք կը նետէ, ափնարկներ կ'ընէ եւ սուլոցներով կ'անարգէ։ Արիասիրտ հարսը կոյտիքը վար դնելով կը սկսի քարկոծել եւ հախոյել թուրքին ըսելով թէ՝ ինչ որ կը բերէք ուրիշ տեղերու մեր քոյրերու գլխուն, կ'ուզէք այստե՞ղ ալ ի գործ դնել, բայց հոս Ձէյթուն է, ձեզի պէս շուներուն երես չենք տար մենք, մարդուս ըսեմ, տես թէ ինչ կը բերէ քու գլխուն։ Հարսը տուն կ'երթայ եւ եղելութիւնը կը պատմէ ամուսնոյն։ Մարդը զէնքն առնելով ուղղակի կ'երթայ Ակ, պատուհասելու սրիկան, սակայն անհետացած էր ան։ Երիտասարդը չի հանգստանար, գիշերը առանձինն, դաղտնի կը մտնէ Մալ միւտիւրին տունէն ներս, պատէն կախուած գէնքերը կ'առնէ, կը տանի, որպէս սպառնալիք տնեցիները ամբողջ սրէ անցնելու։ Այս երկու դէպքերն ալ տեղի կ'ունենան Մայիս ամսուան մէջ, ինչ որ անյարմար ատեն մըն էր զէյթունցիին ընդհանուր շարժումի սկսելու համար, պէտք էր սպասել անցան վերջին ամիսներուն, երբ այլեւս տունները կը լեցուին արտերուն եւ այգիներուն բերքերովը եւ բարիքներովը եւ աղքատները Ալպիստանէն, Կոկիսոնէն, Մարաշէն եւ Եարփուզէն կը բերեն եւ կը դնեն իրենց ձմրան պաշարը։ Այդ վերջին դէպքին համար կառավարութիւնը կը բանտարկէ կարգ մը անմեղ երիտասարդներ։ Հարսին էրիկը կը ներկայանայ կառավարութեան, Մալ միւտիւրին տղուն անբարոյականութիւնը մէջտեղ բերելով, կը յայտարարէ թէ՝ գէնքերը ինք առած տարած է։ Ղատին կը բարկանայ եւ այս անգամ կը բանտարկէ զինքը։ Ազգայիններ կը պահանջեն որ փոխանակ պատուախնդիր ամուսին մը բանտարկելու, պէտք է որ Մալ միւտիւրին տղան պատժուի եւ այստեղէն աքսորուի։ Դատաւորը Սիւլէյման ափանջ չի կախեր, այն ատեն կարգ մը երիտասարդներ անոր ննջա-

սենեակի բուխերիկէն հրացան կը պարպեն, ձիուն պոչը կը կտրեն եւ կը սկսին օր ցերեկով ծաղրել եւ անարգել գինջը: Վախէն շարաթ մը կը հիւանդանայ եւ տունէն դուրս չ'ելլեր: Սակայն խելքի չի գար: Քանի մը շարաթ հագիւ թէ անցած էր, ահա աւելի մեծ խնդիր մը: Շերամեան Պօղոսի տղան, երկրորդ անգամ ամուսնացեր էր մարաշցի մանկամարդ եւ գեղեցիկ կնոջ մը հետ, իր բաց երեսութեամբ այս կինը ծանօթացեր էր քանի մը գինուորներու հետ, որոնք ձու առնելու պատրուակով, ամուսնոյն քաղաք չեղած ժամանակ կը յաճախեն այս կնոջ քով: Հայ երիտասարդներ նախապէս քաղաքավարութեամբ կը բողոքեն դատրին եւ հազարապետին, որ գինուորները զգուշացնեն եւ այդ կինն ալ աքսորեն Մարաշ: Սակայն դատին լրբօրէն կը պատասխանէ. — «Ի՞նչ ընեմ, գինուորներն ալ մարդ չ'են...»: Զէյթունցի տղաք երբ կրկին կը բողոքեն, «Ես ուրիշի կինը չեմ կրնար աքսորել» ըսելով երիտասարդները ճամբու կը դնէ: Քանի մը օր չանցած, ահա երիտասարդները այդ գինուորները այդ տան մէջ իսկ լաւ մը կը ծեծեն, քիթ բերան արիւն ընելով, ու «Գացէ՛ք, կ'ըսեն, պատմեցէ՛ք դատրին եւ հազարապետին: Սակայն անոնք իրենց վախէն չեն համարձակիր ոչ ոքի պատմել: Կ'անցնի քիչ մը ժամանակ, սակայն կը տեսնեն որ նոյն յարաբերութիւնը կը շարունակուի, գիշեր մը կրակ կը ձգեն այդ տունը, ընտանիքը անակնկալի եկած, դուրս կը փախչի, իսկ երեք երիտասարդներ հրդեհ կայ ըսելով կը սկսին տունը քանդել, կրակը շտարածուելու համար դրացի տունները Հետեւեալ օրը, կառավարութիւնը քննութիւն կը բանայ եւ կը տեղեկանայ որ՝ դիտմամբ այրած են այդ տունը, եւ իրեն անարգանք մը կը նկատէ ու 10-12 աշխուռ երիտասարդներ կը բռնէ, կը բանտարկէ: Զէյթունցիք ասոր վրայ կը գրգռուին, կը բողոքեն, ցոյցեր կ'ընեն, այդ թրջաբարոյ կինը Զէյթունէն կը փախցնեն, բայց տղաքը կը մնան բանտ: Զէյթունցիներու եւ կառավարութեան միջեւ ձգտուած այս վիճակը հետզհետէ աւելի ու աւելի կը լարուի, որուն վրայ, հազարապետ Ճէազիմ Էֆ. չենք դիտեր զէյթունցիներու խիստ բողոքներէն եւ լարուածութիւններէն վախճալով, թէ ուրիշ չար դիտաւորութեամբ մը, վերէն եկած հրահանգով մը կը սկսի զօրանոցին բոլորտիքը մեծ խրամներ բանալ տալ: Հայեր ալ աւելի կը գրգռուին եւ խիստ բողոքներ եւ ցոյցեր կ'ընեն: Մարաշի կառավարիչը զէյթունցիները հանդարտեցնելու թէ զանոնք քնացնելու համար դատին, Պաշ Բիւսթիպը եւ Մալ միւսիրին որպէս թէ պաշտօնանկ կ'ընէ եւ պաշտօնի բարձրացումով ուրիշ տեղ կը դրկէ: Այնի Պէյ անուն գայմազամ մը կու գայ Զէյթուն, զէյթունցիք կը յուսան թէ՝ իրենց բողոքը լաւ արդիւնք տուած է, այդ խռովարար պաշտօնեաներուն տեղ նորեր ե-

կած են եւ խաղաղութիւնը վերահաստատուած է: Քանի մը շարաֆ տեւեց տուերեւոյթ խաղաղութիւնը եւ ի վերջոյ նայեցան որ սխալած են: Թուրքը միշտ նոյն հայատեաց թուրքն է, Աւնի Պէյն ալ բունեց նախորդներուն ճամբան, եւ սկսաւ ժողովուրդը նեղել: Զէյթունցիին նորէն կը պարտաւորուէի, համաձայն իր վաղեմի սովորութեան ցոյցեր կազմակերպել, խորտումներ հանել: Յուլիսի վերջերն է, հայ ժողովուրդը գերզրգուած վիճակի մը մէջ է, զէյթունցիին ականջին գաղտնի միջոցներով կու գան կը հասնին Արեւելեան նահանգներուն եւ ալլ բազմահայ քաղաքներուն մէջ կատարուած հայկական ջարդերուն լուրերը: Պոլսոյ մէջ տեղի ունեցած ցոյցերը, էրզրումի մէջ պատահածները, եւ կը հասկնայ որ շատ չանցած նոյն վիճակին պիտի ենթարկուի Զէյթունը: Այդ օրերուն Արեգին հայ գիւղը կը յայտնուին քանի մը հայեր, արտասահմանէն եկած: Մարաշի կառավարութիւնը հոտը կ'առնէ, Գրը-Մէրդար, չըջուն գինուորական չէրքէզ Արսլան Պէկը խումը մը ոստիկաններով կը դրկէ Արեգին, այդ օտարականները հետապնդելու եւ բռնելու համար: Օգոստոս 5-ին կը հասնի Արեգին եւ կը սկսի տուրք պահանջելու պատրուակով նեղել գիւղացիները, որոնք ճառ այժմ մենք դրամ չունինք, կ'ըսեն, երբ որ ունենանք կը վճարենք»: Արսլան Պէկ, կը բարկանայ, ծեծել կ'ուզէ գիւղապետ Խաչեր Քէհեան, տղան նշանաւոր Կարապետ Քէհայի, որ 1862-ի Ազիզ փաշայի պատերազմին Քէթման գիւղի մէջ մեծ անուն հանած էր: Խաչեր Քէհեան ալ մեծ համակրանք կը վայելէր իր գիւղացիներէն, որոնք ոտքի կ'ելլեն, չեն թողուր որ Արսլան Պէկ զայն ծեծել յանդգնի եւ բանտարկէ, եւ անարգանքով կը վռնտեն: Իսկ Արսլան պէկ նեղը մնացած, բաց կերպով կ'ըսէ թէ «այս տեղ օտարներ եկած են, անոնց համար եկած եմ, պէտք է որ ինծի յանձնէք զանոնք»: Մենք ոչ տուրք կը վճարենք կ'ըսեն Արեգիցիք եւ ոչ ալ մեր հիւրերը կը յանձնենք, կը ջարդուինք եւ նման վատութիւն չենք գործեր: Արսլան Պէկ առանց բան մը կարենալ ընելու, իր ոստիկաններով կը քաշուի, կ'երթայ 30 Օգոստոսին, Խաչեր Քէհեան կրկին ընդհարում մը կ'ունենայ Զահան գետի եզերքը Զախայցի քիւրտ աշիրէթին հետ, որոնք Արսլան Պէկի թելադրութեամբ եկած էին հայոց կացութիւնը հասկնալու եւ օտարները ձեռք անցընելու: Մինչդեռ Զախայցիք, անկէ առաջ եւ միշտ հայոց բարեկամ եղած էին եւ Զէյթունի եայլաները ամարանոցները երթալու թոյլտուութեան համար, ձի, կով եւ ալլ ընծաներ կը բերէին զէյթունցիներուն: Բայց Մարաշի կառավարութեան դրդումով այժմ ուզած էին փառք ու պատիւ չահիլ: Դարձեալ Օգոստոսի մէջ, Կոկիսոնի Տաշօլուզ գիւղացի երիտասարդ մը Կարապետ Ղրի Փանոսեան, ձէլյատ անունով ծանօթ, իր քաջա-

գործութիւններուն համար, յարձակման կ'ենթարկուի Կոկիտոնի ոստիկաններէն եւ կռուելով կը փախցնէ զանոնք: Մեպտ. 12-ին, խումբ մը քիւրտեր կը յարձակին արեգիկի Խաչեր Քէհեանին ազարակին վրայ, եւ սակայն երկու մեռեալ ձգելէ յետոյ կ'ըստիպուին փախչիլ, կորսնցնելով այսպէս իրենց երկու ընկերները: Հոկտ. 10-ին, Մարաշի թուրք կառավարութիւնը երկու հայախօս թուրք լրտեսներ կը դրկէ Արեգին, յեղափոխականներուն թագստոցը հետազօտելու համար, անոնք միջոցը կը գտնեն Աղասիին հետ տեսակցելու, որպէս պատգամաւորներ ականաւոր հայերու կողմէ դրկուած: Թէեւ Աղասի չ'ըզգար այս պարագան, սակայն արեգիկի հայ տղաք շուտով վրայ հասնելով, կը ճանչնան այդ լրտեսները, որոնք այլեւս փախչելու վրայ էին, կը բռնեն եւ ծառի մը կապելով ողջ ողջ կ'այրեն: Թուրք կառավարութիւնը երկար ատեն փնտնեց անոնց հետքը, եւ սակայն չկրցաւ գտնել: Հոկտ. 18-ին, մարաշի հարիւրապետ մը, 100-ի չափ թուրքերով կը յարձակի Արեգիկի վրայ, Զահանի կողմէն, բայց բռն ընդդիմութեան մը հանդիպելով ետ կը քաշուի: Հոկտ. 17-ին Ճէլլատ, հետը 10 տղաներ առած, Անարուռն կ'երթար, Եայճըօղլու թիւրքմէն ցեղապետը մէջտեղէն վերցնելու համար: Սակայն իմացաւ որ հազար հոգինոց բանակով մը պաշտպանուած էր անիկա, կը պարտաւորուի առ աթմ յետաձգել իր այդ ծրագրին գործադրութիւնը, սպասելով յարմար առիթի մը: Վերադարձի ատեն Սէկ կոչուած կիրճը դէմը կ'ելլեն խուռիթի մը: Վերադարձի ատեն Սէկ կոչուած կիրճը դէմը կ'ելլեն խուռիթի մը: Հոկտ. 19-ին, Ասլան Աղա նորէն կը յարձակի Արեգիկի վրայ, այս անգամ ուրիշ կողմէ եւ 200 հոգով, եւ կրկին ետ կը մղուի: Հոկտ. 21-ին, Հաճընէն Մարաշ գացող հրամանատար մը սպանալից եւ անարգական լեզու մը կը գործածէ Ֆոնուզին մէջ հայոց դէմ եւ Ֆոնուզիք տեղն ու տեղը կը սպաննեն զինքը իր ընտանիքովը միասին: Դարձեալ Հոկտ. 22-ին, ղումարուցի քիւրտերու սպաննութեան դէպքին քննութեան համար Մարաշէն հազարապետ մը Սէկ կու գայ, այս տեղէն կ'անցնի Ֆոնուզ եւ կը սկսի կարգ մը ձերբակալութիւններ ընել այնտեղ: Կալանաւորները հետն առած կը մեկնի դէպի Մարաշ: Ան փորձած էր նաեւ տեղւոյն հայ միտիւրը եւ ուրիշներ ալ հարցապնդման ենթարկել: Սակայն չէր յաջողած եւ չէր կրցած ոճիրին հետքը գտնել ու երբ կը մեկնի, իր հետ տանելով այն անմեղ ձերբակալուածները, ահա Ֆոնուզցիք Սուլաթը ըստուած տեղը դէմը կ'ելլեն զինքը եւ իր հետ եղող 7 թուրք ոստիկանները չարաչար կը սպաննեն եւ կ'ազատեն ձերբակալուած տղաքը: Վերոյիշեալ դէպքերէն չորսը, ոմանք Գարանլըզ-Տէրէի ժո-

ղովէն ետքը կը դնեն: Այս բոլոր դէպքերն ու ընդհարումները, որոնք տեղի կ'ունենային Զէյթունի մէջ եւ անմիջական իր շուրջը, հայ գիւղերու մէջ եւ անոնց ճամբաներուն վրայ, ահա այս բոլորը հող եւ գետին կը պատրաստէին Զէյթունի 1895-96-ի Մեծ Պատերազմին, ինչպէս արդէն քիչ առաջ ըսինք, գէյթունցիք գաղտնի միջոցներով կը լսեն սկսած հայկական Զարդերուն մասին, եւ գիտէին թէ իրենք Սուլթան Համիտի աչքին փուշն էին, եւ իսպառ պիտի լինայուէր իրենց: Դանակը ոսկորին հասած էր: Պէտք էր կանխել թշնամիին հարուածը: Միջոցաւ վառօթ կը հոտէր, լուցկի մը պիտի բաւէր կրակը բռնկեցնելու համար: Եւ պիտի չուշանար ան: Այլեւս վաղը ուշ պիտի ըլլար:

Գարանլըզ-Տէրէ (Մութ-Ձոր)ի ժողովը.- Թրքական մասնակի յարձակումները սկսած էին արդէն Զէյթունի շրջակայ գիւղերուն շուրջը, իսկ, նախ քան Գարանլըզ-Տէրէի մեծ ժողովը գաղտնի հանդիպումներ տեղի կ'ունենային Արեգին եկող օտար հիւրերու եւ գէյթունցի Պօզպալիթ թաղէն՝ Աւազ Զաքոնանի, Աւետիք Կէսիանեանի, Զարդալար թաղէն Կարապետ Տ. Յակոբեանի՝ (Տէլ-Քէչիլի տոհմէն) միջեւ: Այդ օտար յեղափոխականները կը գլխաւորէր Աղասի, հաճընցի 22 տարեկան երիտասարդ մը, եկած իր 5 ընկերներով Արեգին, Զէյթունի եւ Մարաշի կառավարութիւններէն քիչ մը հեռու այդ մեկուսի անկիւնը: Ընկերներն էին Հրաչեայ, Ապահ, Մլեհ, Նշան, Կարապետ: Հրաչեայ կարեւոր տեղ պիտի բռնէր յետագային կռիւններուն մէջ, քան թէ Աղասի, որ գրեթէ չմասնակցեցաւ կռիւին: Իսկ ըստ ոմանց գրածներուն, այդ գաղտնի հանդիպումներուն ներկայ կ'ըլլային նաեւ Աստուածածնայ թաղէն՝ Առաջնորդական փոխանորդ՝ Տ. Կարապետ Քհնյ. Երկանեան, ինչպէս նաեւ փորձառու կռուող մը Մարկանեան Հաճի՝ Պապիկ Փաշայի հին ընկերներէն մէկը, եւ Պապիկ Փաշայի եղբայրը՝ Նազարէթ Զաւուշը: Սակայն ըստ մեր հայրենակից Տէօվլէթ Գէորգեանի եւ ըստ իս նաեւ Նազարէթ Զաւուշ, որոշ կառավարական պաշտօնեայ եւ Տ. Կարապետ որպէս տեսակ մը կրօնական եւ պաշտօնական ներկայացուցիչը ժողովուրդին, այդ հաւաքովիներուն հաւանական չի թուիր թէ ներկայ եղած ըլլան: Թէեւ մենք, մանուկներս անգամ կը լսէինք թէ Արեգիէն պարոններ եկած են, անոնք գետնախնձորի պէս առարկաներ մը ունին, որոնցմով կարելի էր զօրանոցը օղը հանել: Թուրք կառավարութիւնն ալ թէեւ անտեղեկ չէր անցած դարձածներուն, սակայն առ աթմ կը լրոնէր, մինչեւ որ զօրքերու կեդրոնացումը լրանար, ինչ որ ամիսներէ ի վեր սկսուած էր:

Ձորս իշխաններէն ողջ էր տակաւին միայն Հազոր իշխան, 1862-ի Ազիզ Փաշայի կողմէն վերջը տակաւին ապրող միակ ծերունին, որ պէս տեսակ մը ներկայացուցիչը իր երեք հանգուցեալ ընկերներուն, երբ կը լսէր թէ անծանօթներ եկած են Արեգին, Բարթողիմէոս վարդապետը կը դրկէ Մութ Ձոր, որպէսզի այդ առանձին վայրը, անտառի մը խորը հաւաքէ Արեգինի եւ Աւագկայի գիւղապետները, խորհին, խորհրդակցին՝ իրենց վերջին կացութեան վրայ եւ նաեւ հասկնան թէ՛ ովքեր են այդ եկողները, ինչու եկած են: 1895 Սեպտ. 18-23-ին տեղի կ'ունենայ այդ ժողովը, ուր ներկայ է Փռնուզի վանահայրը՝ Հայր Բարթողիմէոս վանահայրը՝ 40 ֆռնուզցիներով, Արեգին գիւղէն՝ Խաչեր Բեհրա 30 արեգինցիներով: Աւագկայ գիւղէն Յարութիւն Գոճայեան 30 աւագկայցիներով: Կը նախագահէ վարդապետը, իսկ Ատենապետն է Գոճայեան Յարութիւն Աղան: Կը հարցաքննուին խիստ կերպով այդ օտարականները, որովհետեւ անոնք կրնային ըլլալ կասկածելի մարդիկ, խաբեքանք կամ նոյնիսկ լրտեսներ, որոնցմով լեցուն էին այդ ժամանակները ամէն տեղ եւ Ձէյթունի շուրջը: Հնչակեան տղաք էին անոնք, որոնք բաւական մեծախօս եւ շռայլ խոստումներ քրած էին⁴⁵, բայց ժողովը հաւատք չէր ընծայած անոնց այդ խոստումներուն, միայն հասկցած էր թէ՛ անոնք եկած էին կռուելու, ի հարկին զոհուելու եւ յայտնի էր թէ՛ Ձէյթուն ուրիշ ճար չունի եւ պէտք է կռուի, պարտաւորուած է կռուելու եւ նոյնիսկ նախադրեալ ըլլալու: Քանի որ թշնամին իր մասնակի դէպքերովը եւ բխտումներովը, արդէն ձեռնոցը վերցուցած էր: Անոնք իրենց հետ ունէին առ այժմ մաս մը դրամ⁴⁶, քիչ թէ շատ վառօդի այլ պատրաստութեանց համար եւ մէյ մըն ալ գոնէ, հայ գիւղացիներուն նիւթական ծանրութիւն չըլլալու համար: Ժողովին ներկայ էր նաեւ Շամբէշիշեան, որ սերտ յարաբերութիւն ունէր Արեգինի եւ Աւագկայի ժողովուրդին հետ: Թագաճեան Հայր Սուրբ հարցաքննութեան արդիւնքը կը տեղեկագրէ Ձէյթուն՝ Հազոր իշխանին: Ինչպէս հասկնալի է, ժողովին նպատակն էր խորհիլ կացութեան վրայ եւ վճռել գործելու եղանակը, առանց սակայն յոյսը, ուրիշներուն, օտարներուն օժանդակութեան վրայ դնելու եւ անոնցմէ օգնութիւն սպասելու: Նոյնիսկ բան չի սպասեր ժողովը, 5000 տուն հայութիւն ունեցող եւ Ձէյթունէն աւելի հարուստ Հաճընէն՝ որ միայն 24 ժամ հեռու է իրմէ, չի վստահիր անոր օգնութեան փութալուն տեսնելով անոր անհոգութիւնը: Բարթողիմէոս հայր սուրբ՝ պէտք է կռուինք կ'ըսէ, որ արութեան ոգին չմարի մեր մէջ մեղկ կեանքով, յետոյ՝ որպէսզի թուրքը մեզի տիրելու փափաքէն ետ կենայ, եւ ով գիտէ, թերեւ Աստուած հաճի, այս մեր կոխով փրկել Ազգը թուրքին ձեռքէն:

Ձէյթունի բարբառով Հայր Սուրբը կը խօսի.

«Ժողովուրդ մեր գեղացրէ չիւր հումմօ շատ ծծծվածին թուրքին հիտը. չիւր բանըհամար գիտէ. ասիւմ ձիգ պաշխօ բանը համար չէ. իլլէ միլլաթը. ուրիմէ. վէ հէյուն հուղըն ազատութընը համար. ըմմար մեր տուշմօնը օլօմն չի կանցնմ կըաշնացըանի: Էօսիւր համար պետէ ուր միրիկէն ծիծվամմ թուրքին հիտը իրիմց ունախնըն անցընմմ, միմէվիւր թէ պիտի գիտանէ բուր եւ տեօկիւշը առչէ տեօկիւշնուն կիմի չէ եւ շօտ միմծէ. հէմ իտէմիտէմնէ. չիմմիւ պիւթիւն հէյուն ազատութընը համար պիտի ծիծվըմմ. եւ տեպէն ամէն մարդ մեռնըլը ջարդըվըլը մակօտը թուղ առնու մեռնմմնը հէյու համար է. էկեր եւ տեպէն իւծօվ իլլիմմնը պիւթիւն օզըն ազատված կունը. էկեր Ասպոծ չէմէ ջարդըվըմմ նը մահատոկ, մերտիւրիւս կունըմմ. ըմմը պիւթիւն օզըն մուրն իվիւրէն կունա. դօք է իմտէ տեօկիւշիւ մէշ չոց գըտնըվըլ պետէ գիտէ. ուր օզըն չըկկաշնավա, ու ազատութըն գըատնօ. չոց ուր անըթա ապօնը օվը գատնիլօ համար կու բլլըվա ու կու բլլըվա իրեուր գօմնօնը իւծօվմը վիւրէն կու շուէ գիմտէն կիմի պետէ չուէէ տուշմուննան վիւրէն. եւ ըստանտ գիտացէ թուր չըսպանօծ մեռնէօղը նէ մերտիւրիւս կունա նետէ արփալութան կանը իրթօ, նէ օզգ կու հէտէվա. ծըածկալիցէ հօտ մը իվիլ ըսպանմնիւ. չոց ուր ամէն մարդ եւ ասօծիւ կիմի ծիծվանը միմմ միւմերթթ պօզմուշ կէնիմմ տուշմօնը: Էտաիւր համար հիւզ մէմէ:

«Հէմ գիտացօծ նաւ ուր մէկմը գիմտէ տեօկիւշիւ մէշ իւծօվ չէ կանը նը, Քիւրիւստիւսիւ վիւրէն իւղիւրդ հալտտօ չունցնօնը, էօտիւր համար հումմօ ալայուտէ կօսիւմ պետէ օլօմն հալտտօ ունցէ: Էսէ թէմպէ կէնիւմ ձիգ ամմէն մարդ, էրիկ, կըանակ, հէվիւր, պառօպ, տէլիղանը, էրկէն, աղջկին, չիւր մօնտըր մանտըրտէ ալայիտէ պետէ սիւռի շալկէ: Թիֆօնմ անցնէօղը թիֆօնմ, տապանչալու ունցնէօղը տապանչալու, փալադանոկ ունցնէօղը փալադանակ, դամօ ունցնէօղը դամօ, վից դանգուն ունցնէօղը վից դանգուն, եւ բանիւրը չունցնէօղը կիւշիւշօվ մըակաւտօվ, մօնտըր դանկէվ, շամփաւտօվ, փիտէտօվ, մանղըգէվ, հիւտիւցէվ, քէարէվ, փէտէվ, չափուշէվ, սիւաիլանմըշ թուղ նան. իւնչ վոխտ ուր տուշմանըն խառնըվանմ նը հըմմըն չապըն չապըն փիւրիւր խէթիցէ, խէթիցէ, հանիցէ, աղըքը, մաղմըգաքը հանցէթ թափցէթ, հէշ մի վախէթ Քիւրիւստիւս մեր դօհօն է, գաթը գիտէ ուր թուրքը վէխկիւտ կունա, էօտիւր համար հէշ մըատկ մէմէ, իւծօվէ կիլիմմ:

«Հասիկ Անտարօնը Քիւրիւստիւս կօսէ թէ իւվ եուր ինծի համար ինմ գանմ կըաշնացանէ նը էան կապը, իւվ եուր ինմ գանմ պէհէ չի մեռնամ տէյի էան կու կըաշնավա, հումմօ հասկըցէթ Քիւրիւստիւսիւ

շուտիւրը, եօսիւր որ կորհնիմ ըզձեզ ուր՝ Քիւրիւստիւսիւ շուտէմ
դօրս չէք իլլէք, հեմ օզգնէ իր փառքէօլը կու միմծնոյ հէյուն Եւսի-
րուքամն է հիշ չէ մօնօ: Հուսմօ միմծ Թէմպէսիւ ունըմ ճիգ Թիֆօնի
փըասիսիօ ասիմ ըռըմ Եիշօն առէք, մի հատիւրէք գափու փըասիսիօ
կիմի փըասիսիցէք, հեմ խըառուէն մի փըասիսիք, շօտ միւտէն
փըասիսիցէք եուր Թիֆամքիմ մուխը պիւօ փիւրը մօտնօ Էոնիմիմ
հիտը մէկտեղ:

«Մեր կեղեցե տեօկիւշնիմ մեր պապիրուն Էտէքնէ իմտէս էր, էկեր
չէք մառցիմը, իլլէ իլլէ մօտէն փըասիսիցէք: Հը՞ Էասէ Թէմպէս կէնիմ
ճիգ, էս դըարուցաքը եուր մեր աշխօրը իկոծ ին քերէօլ, քերէօլ
իկիրիմ, հեւէպիմք Թէ Աստուծոյ ես սատանիմ դօհոն իկոծ ին պի-
տիմընը Էն կունօ: Մէկ մըատէօլ լըք: Ետսիսնց մըտքնէ քէօթիւ չէ՞»⁴⁷,

Թարգմանութիւնը

«Ժողովուրդ, մեր գեղացիք⁴⁸ մինչեւ Հիմա շատ պատերազմ մղե-
ր են թուրքին դէմ. ինչ բանի համար, գիտէ՞ք... Սա ըսեմ ձեզ՝ ուրիշ
բանի համար չէ, այլ՝ ազգի, օրէնքի, հայու հողի ազատութեան հա-
մար, բայց մեր թշնամին լման մը չկրցանք ջնջել, ատոր համար
պէտք է որ այս պատերազմը անցեալ պատերազմներու չնմանցնենք.
ասիկա շատ մեծ է եւ վերջինն է, վասնզի բոլոր ազգին ազատութեանը
համար պէտք է պատերազմինք. այս անգամ ամէն մարդ մեռնիլը,
ջարդուելը ըլլալը աչքին թող առնէ, ասկէ ետքը մեռնինք հայու
համար, ապրինք հայու համար: Եթէ այս անգամ յաղթանակը մերը
ըլլայ՝ բոլոր ազգը ազատած պիտի ըլլայ, եթէ Աստուած մի արասցէ
յաղթունք (ջարդունք) մարտիրոս կ'ըլլանք, բայց եւ այնպէս ազգը
թշուառ կը մնայ:

«Այսպիսի պատերազմի մէջ ինչպէս գտնուիլ պէտք է գիտէ՞ք,
որպէսզի ազգը չկորսուի ու ազատութիւն գտնայ, ինչպէս անօթի
առիւծ մը կ'ելլէ իրեն որսը գտնելու համար կը պտըտի եւ երբոր
գտնայ ուժով մը վրան կը վազէ, անոր պէս դուք ալ թշնամին
վրայ յարձակելու էք, այս լաւ գիտնաք՝ թուրք չսպաննած մեռնողը
ոչ մարտիրոս կը սեպուի, ոչ ալ արքայութիւն կրնայ երթալ, ոչ ալ
ազգ կը սեպուի: Աշխատեցէ՛ք մի հատ աւելի սպաննելու:

«Եթէ ամէն մարդ իմին ըսածիս պէս կը պատերազմի, մենք ան-
պատճառ կը յաղթենք թշնամին, ատոր համար հոգ մ'ընէք:

«Բայց եւ այնպէս՝ գիտցած ըլլաք, որ մարդ մը այսպիսի պա-
տերազմի մը մէջ յաղթող չկրնար ըլլալ՝ եթէ Քրիստոսի վրայ կա-
տարեալ հաւատք չունենայ, անոր համար է որ ամենուդ ալ ահա
կը խօսիմ, պէտք է լման հաւատք ունենաք:

«Այս ալ կը պատուիրեմ Ձեզ՝ ամէն մարդ, էրիկ մարդ, կնիկ

մարդ, ծեր եւ պառաւ, երիտասարդ թէ օրիորդ, մինչեւ փոքր ման-
կունք, ամէնքդ ալ պէտք է գինուիք, հրացան ունեցողը՝ հրացան,
ատրճանակ, դաշոյն ունեցողը՝ դաշոյն, երկապրի ունեցողը՝ երկապրի,
վեցհարուածեան ունեցողը, վեցհարուածեան, այս վերոյիշեալները
չունեցողը՝ հետեւեալ գործիքներով բաւականանան, հատոցով, կացինով,
մանր դանակով, շամփուրով, փետատով, մանգաղով, մանր հատոցով,
քարով, մինչեւ անգամ մուրճով, գինուեցէ՛ք, որ ժամանակ որ
թշնամին խառնուինք՝ արագ-արագ փորներին խոթեցէ՛ք, թշնամույն
աղիքները դուրս թափուին. ամենեւին մի վախնաք, Քրիստոս մեր
կողմէն է. արդէն գիտէք որ թուրքը վախկոտ կ'ըլլայ, ատոր համար
բնաւ չմտածէք, մենք ուժով կ'ըլլանք:

«Ահա Աւետարանը, Քրիստոս կ'ըսէ. «Ով որ ինք գինք ինծի հա-
մար կը կորսուցնէ, անիկա կ'ապրի, ով որ ինք գինք չմեռնիմ ըսե-
լով պահէ, անիկա կը կորսուի»: Հիմա հասկցա՞ք. Քրիստոսի խօս-
քէն դուրս չէք ելլեր եւ ազգն ալ կը փառաւորուի ու կը մեծնայ,
հայն ալ ստրկութենէ կը խալլուի:

«Հիմա մեծ պատուէր մը ունիմ ձեզի: Հրացանաձգութեան ատեն
լաւ նշան առէ՛ք, մի՛ արտորնաք, կաքաւի որսի նետելու պէս՝ նե-
տեցէ՛ք ու հեռուէն մի նետէք, շատ մօտէն նետեցէ՛ք, որ հրացանի
ծուխը կապարին հետ միատեղ փորը մտնայ: Մեր Զէյթունի կոիւ-
ները այսպէս կ'ըլլային, չէ՞ որ պապենական սովորութիւն է՝ եթէ
մոռացած չէք. ահա ասիկա ստիպեալ կը պատուիրեմ, մօտէն ըլլայ
հրացանաձգութիւննիդ:

«Հա՛, չմոռնամ, այս ալ կը պատուիրեմ ձեզ, այս դուրսէն եկող
հիւրերը որ մեր երկիրը եկեր են⁴⁹՝ բարով, հինգ հազար բարով
եկեր են: Համարինք որ Աստուծոյ կողմէն եկեր են՝ ոչ թէ
սատանայի կողմէն. ինչ որ պիտի ըլլայ՝ այն կ'ըլլայ. միամիտ ե-
ղէք. ասոնց նպատակն ալ գէշ չէ: Ձեր վրայ «Պահպանիչ» մըն ալ
ըսեմ, ըսաւ, ու վերջ տուաւ ժողովին: Ժողովը ծափահարութեամբ
ջողոնջաւ, վասնզի գէջթունցոց համար պատերազմի որոշումը հարսանեաց
հրաւէր կը սեպուէր»:

Հակառակ կարգ մը պահպանողականներու խաղաղ ելք մը գտնելու
տրամադրութեան, ժողովին մեծամասնութիւնը անկարելի կը տեսնէր
նման բան եւ այդ մասին տակաւին մտածել՝ պիտի նշանակէր պա-
տենութիւն տալ թշնամին որ աւելի պատրաստուի, կազմակերպուի,
կեդրոնացնէ իր ուժերը եւ հետեւաբար կորսնցնել՝ յաղթանակը շա-
հելու հաւանականութիւնը եւ իսպառ բնաջնջուի: Կենաց եւ մահու
խնդիրն էր որ մէջտեղ դրուած էր: Ճար չկար պէտք էր կուրի,
կուր արդէն, ինչպէս ըսինք, սկսած էր, մասնակի բախումներու եւ

ընդհարումներու սահմաններու մէջ: Հետզհետէ անշնչելի պիտի դառնար մթնոլորտը: Ժողովը վերջապէս եկած էր եղրակացութեան եւ տուած իր գաղտնի որոշումը, որ ի հարկէ պիտի յայտնուէր իր որոշումին գործադրութեան սկսելովը: Քանի մը օր յետոյ, կառավարութիւնը, ժողովին որոշումը ջուրը ձգելու համար, երեք հոգիներ պատգամաւորութիւն մը կը դրկէ Այապօզեան Փանոս Աղայի ագարակը՝ Զէյթունէն 3 ժամ հեռու: պատգամաւորներն էին Տ. Կարապետ Քհնյ. Երկանեան, Ասքատուր Աղա Եզեկիէլեան եւ տնօրէն Աւետիք Կէսիսանեան: Ասոնք ալ թէեւ համակիրներն էին որոշ չափով կուռեւորողման, սակայն կառավարութեան հրահանգին հնազանդած էին եւ եկած, չվտանգելու համար Զէյթունի ժողովուրդին կացութիւնը եւ թերեւս ալ, ժամանակ չհաշուելով, զէյթունցիին իր պաշարը ամբարեւել, պատրաստելու հեռատեսութենէն մտահոգուած: Այապօզանեց գիւղն էին Տ. Յակոբեան, Շամբէշիեան, Աւագկալի եւ Արեգինի Քէհեաները, Բարթուղիմէոս Վարդապետ, Նազարէթ Զաւուչը եւ Աղասի, վերջապէս ամէն անոնք, որոնք կողմնակից էին թշնամիին հարուածը կանխելով կոխի սկսելու եւ զօրանոցը պաշարելու: Սակայն պատգամաւորները կը դառնան Զէյթուն՝ առանց ոեւէ արդիւնքի, ընդհանրապէս կազդարարուէր անոնց որ երթան կառավարութեան յայտարարին թէ՝ 12 օրէն զօրանոցը պէտք է պարպուի եւ իրենց յանձնուի: Տ. Կարապետ Քհնյ. հեռագիր մըն ալ բերած եւ յանձնած էր Պոլսոյ Պատրիարք Իզմիրլեանէ ստորագրուած, որը կը յորդորէր հանգարուկենալ, որովհետեւ Բ. Դուռը Պատրիարքարանի իմացուցած էր Արեգինի շրջակայքը տեղի ունեցած դէպքերու եւ խռովութեանց մասին: Եւ Իզմիրլեան Պատրիարք այդ հեռագրով կ'աւելցնէ նաեւ թէ՝ «Այս օրերս նորին վեհափառութիւն Սուլթանը ընդունած է գործադրել բարենորոգմանց Մայիսեան ծրագիրը հաւատարիմ հպատակ հայերու համար, եւ քիչ յետոյ պիտի իրագործուին բարենորոգումներ, սակայն եթէ այդ խռովութիւնները շարունակուին, դուք էք որ պատասխանատու պիտի մնաք»: Անշուշտ որ այդ հեռագիրը կամ կեղծ էր եւ կամ պիտի մնար: Անշուշտ որ այդ հեռագիրը կամ կեղծ էր եւ կամ բռնի կերպով ձեռք անցուցած էր Պոլսոյ կառավարութիւնը Պատրիարքէն եւ դրկած Զէյթունի տեղական կառավարութեան միջոցով Տ. Կարապետին, որ Առաջնորդական փոխանորդ էր այդ ժամանակ, որովհետեւ Առաջնորդ Կարապետ Եպս. Քէչէճեան, իր հետ ունենալով Ֆռնուզի Նիկողայոս Եպիսկոպոսը՝ Հալէպ բանտն էին, ուրիշ բարձրաստիճան հայերու հետ:

Եւ սակայն անօգուտ եղաւ եւ այդ հեռագիրը եւ ըսուեցաւ թէ՛ շատ աղէկ, ահա 12 օր միջոց, կը սպասենք, տեսնենք թէ ինչ բարենորոգումներ են որ պիտի սկսին:

Իսկ գործին բնաբանը չմոռնանք: Վերոյիշեալ ժողովոյն մէջ որ տեղի ունեցաւ Գարանլըզ Տէրէ ըսուած տեղը, Զէյթունի Մեծագործ իշխան Շովրոյեան Հազոր Աղան⁵⁰ արդէն յանձնարարած էր Ֆռնուզի վանահայր քաջասիրտ Տ. Բարթուղիմէոս Վարդապետին նորեկ հիւրերը հարցաքննել եւ ըստ այնմ շարժիլ: Հայր Սուրբը՝ ըստ հրամանի պատկառելի իշխանին, պէտք եղած քննութիւնը ի գործ դրաւ, ինչ-ինչ գաղափարներ հասկցաւ, անմիջապէս տեղեկագրեց իշխանին: Իշխանը գրութիւնը կարդաց, շտապով մը հանգուցեալ Պապիկ Փաշայի եղբայր Նազարէթ Զաւուչը⁵¹ քովը կանչեց ու պատուիրեց. «Հրաժարէ, ըսաւ, թուրքին ծառայելէ, այսուհետեւ հայու եւ հայրենեաց համար պէտք է ծառայես, խումբ մը հայ զինուորներով գնա ի Գարանլըզ Տէրէ Բարթուղիմէոս Վարդապետին, անոր աջակցութեամբ պէտք եղածը խորհրդակցեցէք: Նորեկներուն ինչ ըլլալը հասկցուեցաւ: Վարդապետը մեզ չհարցուցած պատերազմի որոշումը տուեր է. արդէն իմ գաղափարս ալ այդ էր, չի մերժենք վարդապետի որոշումը, ես ընդունեցայ, կարծեմ դուք ալ կ'ընդունիք»: Նա ալ, «Այո՛, կ'ընդունիմ» ըսաւ. «Սա թուրքին հետ անգամ մ'ալ չափուինք, գրորդուած եմ թրքաց դէմ՝ որոնք սասունցի⁵² եղբայրներուն քիչ չափքներ չհասցուցին. այս անօրէններէն մի քիչ վրէժ լուծենք, ծերութեանս մէջ թաքուն եւ թորեալ մնացած վառօղներուն անուշահոտ բուրման անգամ մըն ալ եւս արժանանանք, գոնէ երբոր մեռնիմ՝ միւս երեք իշխան եղբայրներուս լուր տանիմ, անոնք անդի շաշխարհը գաղթեցին աշքերնին բաց, աչքի լոյս աւետեմ ու ըսեմ, «Հա՛նուր հայ ազգի համար պատերազմեցանք ու յաղթեցինք, նախախնամութիւնը զմեզ կատարեալ պաշտպանեց, Նորին ամենակարողի շնորհիւ յաղթող հանդիսացանք աշխարհի առջեւ» ըսաւ ու լռեց: Անոր խօսքերուն մէջ մարգարէական շեշտ մը ու հաւատք մը կար: Նազարէթ Զաւուչը պատասխանեց. «Արդէն ես ազգային խնդրոյ համար խմորեալ մարդ մ'եմ, իմին ալ փափաքս նոյնն է, ընդունած եմ ձեր հրամայածը, վաղ առաւօտ անպատճառ կ'երթամ կը գտնեմ Բարթուղիմէոս Վարդապետը. եթէ կ'ուզէք նամակ մ'ալ գրեցէք վարդապետին, անոր հետ աջակցելով պէտք եղածը կը խորհինք եւ ձեզ կը հաղորդենք»: Հազոր Աղան նամակ մը գրեց եւ տուաւ հերոսապետին ձեռքը: Հայրենասէր չաւուչը պատկառելի իշխանին ձեռքը համբուրեց եւ լաւ. «Մնաք բարով»: Նա ալ անոր փայլուն ճակատը համբուրելով՝ «Երթաք բարով» մաղթեց: Միւս օր մի խումբ հայ զինուորներ գնացին հասան ի Գարանլըզ Տէրէ (Մութ ձոր) Զէյթունէն վեց ժամ հեռի վարդապետը եւ Նազարէթ գիրար տեսանուն պէս ողջագուրուեցան մեծ ուրախութեամբ, ցնծալով, հիւրերն ալ նոյնպէս ըրին: Վարդապետը

Նամակը բանալով կարդաց որուն պարունակութիւնը հետեւեալն էր. «Արժանապատիւ Հայր պատուական: Ստացանք ձեր տեղեկագիրը նորեկ պարոններուն մասին, գրածին լիովին տեղեկացանք, որչափ որ ատոնց տուած տեղեկութիւններուն չենք հաւատար՝ հոգ չէ, անոնք ալ չէ՝ որ մերայինք են՝ հայ են, արեւնակից են, հիւրեր են, խաթերնին չդպչիք, իբրեւ սիրելի հիւրեր՝ զիրենք պատուեցէ՛ք, կարծեմ թէ ատոնք պատերազմի համար նորընծայ կը սեպուին, այս ալ վարժութիւն մ'է, թող տուէ՛ք որ սորվին»:

Ասոնց սուտերուն իբրեւ իրաւ հաւատանք ու գործենք, վասնզի միջոց չիկայ, ժամանակը լրացած է, եթէ հոգ մը ունինք՝ այն է՝ որ անպատրաստ ենք, այս հոգն ալ նախախնամութեան ապաւինելով, նորին անհուն ողորմութեան, գթութեան, զօրութեան թողունք, նա կարող է զմեզ փրկել մեր թշնամիներէն: Երբ մեր պապերը եւ մենք կը պատերազմէինք, միթէ մեր օգնութիւնը Լոնտոնէն կու գար, կամ թէ օտարականաց խումբեր կու գային, կ'օգնէին, ո՛չ, ո՛չ, այնպէս չէ. «մեր օգնութիւն ի Տեառնէ եկեացէ որ արար յերկինս եւ զերկիր» այս անգամին գործը ուրիշ օրինակի չեմ կրնար նմանցունել, այն է՝ որ անպատրաստ բառը կ'ուզեմ նմանցունել Հայր Աբրահամու դէպքին՝ երբոր իւր սիրելի զաւակ Իսահակին կ'երթային որպէս թէ մատաղի գնման համար. Սահակ զգացուելով հարցուց հօրը ըսաւ. «Հայր, ահա հուր եւ ահա փայտ, ո՛ւր է ոչխար յողջակէ՞զ» Հայրը պատասխանեց. «Որդեակ, Տէր պատրաստեցէ»: Ըստ հօր Աբրահամու մեր պիտոյքը Աստուծոյ խնամքին կը ձգենք, անիկա հօր Աստուած է, կարող է իրեն հրեշտակներով մեր բանակը պաշտպանել: Այս կտորին վրայ կատարեալ վստահ եմ, դուք ալ վստահ եղիք. Էսուր Տեառն եւ Գէդէօնի» եղաւ Իսրայելացւոց ժամանակ, հիմա ալ սուր Տեառն եւ Զէյթունի պիտի կանչուի, ապահով եղիք: Յաղթութիւնը մերը պիտի ըլլայ, այս յուսով, այս հաւատքով, այս սիրով պէտք է ապրինք ամենքս ալ, որով մնալու եմք առ այս: Ես կը մնամ Զեր Ս. Աղօթքի օժանդակութեան ջերմ փափաքող. Խ. Մ. Հազօր Շովրոյեան»:

Տ. Կարապետ Քհնյ. Զէյթուն հասնելով, իսկոյն ժողով կը գումարէ Զէյթունի սրահներէն՝ Ս. Աստուածածին եկեղեցիին Առաջնորդարանը կը պատմէ այնտեղ Պարոն Աղասիին ըսածները, որու վրայ Ատենապետ Հազօր իշխան Շովրոյեան խօսքը ուղղելով ներկաներուն կ'ըսէ. «Երեք օր առաջ ես լուր դրկած էի այդ պարոնին ալ որ չէնք շնորհք բան խօսի, այնտեղ երթալիք պատուիրականերուն կողմէ ըլլալիք հարցումներուն, ատո՞նք են իր չէնք շնորհք պատասխանները, հազար ափսոս... ինչ պէտք կար նման գոռոզ պահանջներ ընելու, այդ

կերպ խօսիլը ամենագոր տէրութեան մը միայն անկ է, որովհետեւ այդ իր ըսածները «Մօսքոֆ Թէքլիֆի» են, այսինքն մեծ խօսիկներուն կողմէ խօսուած խօսքեր, առաջարկներ, որոնց գործադրութիւնը անկարելի է: Տղայամտութիւն է այդ առաջարկը, եւ չըլլայ թէ այդպիսի բան խօսի, կ'աւելցնէ Հազօր իշխան Տ. Կարապետին, մինչեւ որ մենք մեզի պատրաստ ըլլանք: Ես ալ կողմնակից եմ կըռուելու, եւ ով որ համաձայն է ձեռք վերցնէ. բոլոր ներկաները, իւրաքանչիւրը մէկ ձեռքի տեղ երկու ձեռքերն ալ կը բարձրացնեն:

Ատենապետ Հազօր իշխան հրահանգեց հետեւեալը.՝

Ա. Նախ պէտք է որ Զէյթուն գտնուող թուրք պաշտօնեաները հսկողութեան տակ առնուին, որպէսզի անոնք ժամանակ գտնելով չփախչին եւ երթան հաղորդեն կառավարութեան մեր ընելիքը: Յետոյ պէտք է գրաւել զօրանոցը, եւ Արեգին գտնուող պարոններն ալ կանչենք հոս, հերիք ասդին անդին թափառին:

Բ. Արեգին, Աւազկալ եւ Ֆոնուզ գիւղերը գան հոս մեզի իսկ պատերազմի գործողութեանց ձեռնարկելու համար հարկ է որ ամէն մէկը արթուն եւ չրջահայեաց լինի, որ չփոթութիւն տեղի չունենայ: Ըլլալ խոհեմ եւ ոչ ամբարտաւան կամ յաճապաստան, միշտ ընկերին հսկելով եւ մեծին անսալով: Թէեւ Զէյթունցիներուս համար պատերազմը ազգային հարսնիք է, սակայն պէտք չէ մոռնալ նաեւ մեր պապերուն խոհեմութիւնը ի հարկին:

Երկու օր առաջ Նազարէթ Զաւուչը խումբ մը տղաներով դրկած էի Մութ ձոր, վարդապետին, ուրախ եմ որ համաձայն գտնուած են իրարու եւ իմ գազափարին:

Այս հրահանգէն յետոյ Հազօր իշխան կրկին պատուիրեց Տ. Կարապետի որ Աղասիին աջ անմխտ կերպով լաւած խօսքերը գայմազամին չհաղորդէ: Ետքը սուղի կը նստի մեր վրայ եւ հարկ կ'ըլլայ «ուղտը պոչէն վերցնել»⁵³:

Տ. Կարապետ Զէյթունի ամենաազդեցիկ անձերէն էր այդ միջոցին եւ օժտուած էր դիւանադիտական մեծ կարողութեամբ, խօսած պէտք է ըլլայ տեղակալին այնպէս, ինչպէս որ հարկը կը պահանջէր: Նոյն գիշերն իսկ Հազօր իշխանի հրամանով խումբ առ խումբ մարտիկներ ղրկուեցան Զէյթունի հեռաւոր կիրճերը, թուրք պաշտօնեաներուն փախուստը արգիւելու համար: Այդ պահուն Տ. Կարապետ կը կանչուի Տեղեկալէն, հասկնալու համար իր առաքելութեան արդիւնքը: Տ. Կարապետ, ալլեւ չենք գիտեր Հազօր իշխանի պատուէրը մոռնալով թէ Աղասիին խորխտ խօսքերէն ազդուելով, երբ Գայմազամը չիտակը խօսէ կ'ըսէ Տէր հօր, անիկա տեսակ մը զայրոյթով եւ առանց վերապահութեան ոտքի կ'ելլէ եւ կը խօսի հետեւեալը.՝ Գայ-

մագամ Էֆէնտի, երկար խօսքի տեղի չկայ, տասներկու օր միջոց տրուած է ձեզի, այստեղը պէտք է պարպէք եւ յանձնէք, այս ալ ըսեմ ձեզի որ, այս օրէն սկսած, այս պալատը՝ դօնախը ձերը չէ, այլ ազգին է, աղէկ գիտցէք, ուրիշ ըսելիք չունիմ»:

Տ. Կարապետ երբ այդպէս անվերապահ կերպով պողթկաց, անշուշտ նկատի չառաւ միայն պարոն Աղասիի մը խօսքը, այլ շարժեցաւ ան ամբողջ ժողովականներուն, ժողովուրդին եւ նոյնիսկ Հազօր իշխանին ընդհանուր տրամադրութեան եւ կամքին համաձայն: Այստեղ ալ, քիչ մը սպառնալիք կ'երեւի հարկ էր ընել եւ այդ ալ դիւանագիտութիւն մըն էր այդ օրուան համար: Գայմագամը թէեւ կը սկսի թրքական տեսակ մը նենգ ու փաղաքուշ լեզուով Տ. Կարապետին ողորձել, եւ ապահովութիւն տալ փորձել թէ՛ ինչ որ է ձեր պահանջը, ես կրնամ կեդրոն իմացնել եւ գոհացնել, սակայն քահանան կը հասկնար անոր միտքը, այն է քնացնել ժողովուրդը եւ ժամանակ չահիլ, մինչեւ լուր դրկէ եւ բանակը հասնի: Տ. Հայրը, մենք գիրար կը ճանչնանք կ'ըսէ, եւ ինչէն կարելի է վստահ ըլլալ թէ, իմ մեկնելէս քիչ յետոյ, պիտի չհեռագրես մեզի ի վնաս: Բայց, զգուշացիր, կ'ըսէ նման բան մը ընելէ, որովհետեւ կեանքդ կը վտանգես, ոեւէ անկիւնէ մը գնդակ մը կու գայ եւ քեզ կը ձգէ, վերջապէս բարեկամներ ենք, մեղք ես: Տ. Հայրը այս ազդարարութենէն վերջ, տուն մեկնելով անմիջապէս քանի մը կտրիճներ կը դրկէ զօրանոցի ճամբան, որպէսզի հսկեն գայմագամին ճամբան եւ արգիլեն զօրանոց երթալէ: Գայմագամը քահանային խօսքէն կը վախնայ եւ չի կրնար դուրս ելլել, սակայն փողահար զինուորին կը հրամայէ որ եղելութիւնը փողով իմացնէ վերը՝ զօրանոցը՝ միրալային: Զինուորը կը հնչեցնէ փողը եւ կը հասկցնէ թէ զօրանոցը պիտի գրաւուի ընդհուպ, գիտցած ըլլալ Միրալայը անմիջապէս կը հեռագրէ Մարաշ, ու ահա երեք օր ետքը Բերթէզ Չայ կը լեցուի կանոնաւոր զօրքով: Ու կը պատրաստուին Զէյթունի վրայ քալել: Երբ կը լսուի թէ թշնամին հասած եւ բանակած է Բերթէզ Չայ, Հազօր իշխան կը կանչէ Տ. Կարապետը եւ անկէ կը տեղեկանայ թէ ինքը յայտնած է ամէն բան գայմագամին: Յետոյ Գայմագամը կանչել կու տայ, եւ անկէ կ'իմանայ թէ փողով լուր տուած է զօրանոց Միրալային: Իշխանը բարկացած անոր կը յայտարարէ թէ՛ արգիլուած է իրեն յարաբերուիլ Միրալային հետ եւ թէ յետ այսու հսկողութեան տակ է: Հաղորդելով այս պարագան կը դրկէ զինքը: Շորվոյան իշխան յետոյ ժողով գումարելով կացութիւնը կը տեղեկացնէ ժողովականներուն, կը բարկանայ Աղասիի այն յախուռն խօսքերուն, զորս Տ. Կարապետ Հայրը կ'երեւի կիրքի եկած, ջղայնացած գայմագամին ընթացքէն՝ նոյնու-

թեամբ խօսած է անոր: Եւ ահա հետեւանք՝ թրքական բանակը Բերթէզ Չայ հասած է: Նախ որչափ լաւ պիտի ըլլար որ հեռագրաթիւրը կտրուած ըլլային, ինչպէս որ Տ. Հայրը առաջարկեր էր, գոնէ այսպէսով ժամանակ եւ միջոց կ'ունենալէք աւելի պատրաստուելու: Ինչ օգուտ ուսումը երբ ան չի պատշաճիր պատերազմական ձեռնարկութեանց, աւելի լաւ է փոքրիկ փորձառութիւն մը, քան այսպիսի յիմար գիտութիւնը, իմաստակութիւնը: Ինչ որ է, եղածը եղեր է: Յետոյ կը հրամայէ եկեղեցականներուն որ եկեղեցիները Մեծ Պաճիկ պէս սգաւորուին, աղօթքով եւ ապաշխարութեամբ նախախնամութեան օգնութիւնը հայցեն: Բոլորին քաջաբար կոռուելու յորդոր կը կարդայ: Կը պատուիրէ քահանաներուն, որ թէ՛ աղօթեն եւ թէ ժողովուրդը խրախուսեն: Միրով կ'ընդունին անոնք իշխանին առաջարկը եւ ժողովուրդը օրհնելով կը ցրուին: Ժողովը կը ցրուի, ահա չորս եկեղեցիներուն զանգակները կը հնչեն, ժողովուրդը մեծ ու փոքր, այր ու կին, ծեր եւ երախայ կը փութան եկեղեցիները, բազմութեամբ կը լեցուի եկեղեցիներուն ներսն ու դուրսը: Քահանաները հարկ եղած յորդորը կը կարդան ժողովուրդին եւ ի նշան սգոյ 1805 Հոկտ. 12-էն սկսած, չորս ամսուան համար կը գոցեն սեղաններուն վարագոյրները: Աղջիկներ եւ հարսեր կը մերկանան իրենց զարդերէն եւ քուրճ հագած եկեղեցիները կը պտտին, տարեց կիներ մոխիր կը ցանեն գլուխին եւ կ'աղօթեն ու կ'ըսեն. «Եօթը անուն՝ Սուրբ Յովհաննէս, Սեդրակը, Միսաքը, կրակէն ազատող Աստուած, ազատէ՛ մեզ...»: Իսկ այրեր կը սկսին տենդազին կերպով պատրաստուիլ վաղուան անակնկալին, վաղուան պատերազմին: Դուրսի անցուղարձերէն անտեղեակ՝ առանց գիտնալու թէ Սուլթանը հսկայ բանակ կը պատրաստէր, սկսած իզմիրէն մինչեւ Ատանա, Կիլիկիայէն մինչեւ Էրզնկա՝ զօրք կը հաւաքուէր Զէյթունի վրայ գալու, գէյթունցիներու հետ ինքնապաշտպանութեան գործին: Իսկ սկսած էին հայկական նահանգներէն մինչեւ Պոլիս համիտեան զանգուածային ջարդերը, որոնց թիւը 300000-ի պիտի հասնէր: Ուրեմն դէպքերը կ'ընթանային ինքնին, թուրք զօրքը օրրատօրէ կու գար, կը լեցուէր Բերդուսի տարածութիւնները: Մարաշէն ջարդի լուրեր կը հասնէին: Զէյթունցի հետազօտիչներ կու դան կ'իմացնեն, Բերդուս Չայի զօրքին, հետզհետէ ստուարանալով դէպի Զէյթուն յառաջանալու մասին: Այլ կարելի չէր սպասել եւ դանդաղիլ: Նազարէթ Ենիտլենեան Արեգինի զիւղացիներէն խումբ մը կազմելով Չահան գետի Զէյթունի կողմի եզերքը ամրացնելու եւ պահպանելու կ'երթայ, արգիլելու համար թուրք զօրքին յառաջացումը, իր հետն են Շամքէճիշեան Փանոս, Խաչի Բէհեան, գարձեալ Արեգինէն՝ Փանոս Միքայէլեան, տաշլուզցի

կարապետ Ղրրփանոսեան-ճեղատ, եւ Աղասի իրեններով:

Բերթէզ Չայի ընդհարումը.— Ահա Բերթէզ Չայ հասած է զէյթունցի առաջամարտիկներու խումբը, Չէյթունէն հարաւ արեւելք 7 ժամ հեռու բաց դաշտը, Ջահանի ափը Մ Հոկտեմբեր է: Ինքզինքն իր անյարմար տեղ մըն էր զէյթունցիներուն համար: Պէտք էր անցնիլ Ջահանը, որուն վրայ կամուրջ չկար, գետը խորունկ էր եւ պղտոր, խոշոր գետ էր Ջահանը, հասակ չէր տար, անկարելի էր անցնիլ միւս ափը, յարձակելու համար թշնամիին վրայ: Մինչդեռ բերթէզցի թուրքեր, որոնց գիւղերը կը տարածուէին գետին գրեթէ երկայնքին, վարժ էին, գիտէին թէ որ տեղէն անցք կու տար չայը, գիտէին լողալ ի հարկին եւ գիտէին նաեւ այդ վայրերը անկիւն առ անկիւն եւ քար առ քար առաջնորդելու համար թշնամի բանակը դէպի Չէյթուն: Պէտք էր որ մեր սղաքը մասնաւոր տեղ մը գտնէին, ուր գետին հունը ծանծաղ ըլլար եւ կարենային անցնիլ թշնամիին կողմը: Խումբը արդէն փոքրաթիւ էր եւ անկէ ալ քիչեր կըրցան անցնիլ: Մինչ թշնամին, ինչպէս ըսինք, իր կանոնաւոր բանակէն զատ իր հետն ունէր տեղացի եւ քաջ որսորդ հազարաւոր բերթէզցիներու բազմութիւն մը: Բանակը մասնաւորաբար զէյթունցիին համար շատ աննպաստ տեղ մը գիրք բռնած էր: Սակայն ճար չկար, պէտք էր ընդհարումի փորձ մը ընել: Անխուսափելի էր բախումը: Եւ սկսաւ երկուստեք հրացանաձուլութիւնը, որ երկար չտեւեց: Բանակին կողքին հասաւ տեղացի բերթէզցիին⁵⁴, որուն համար ըսուած է թէ Գող Վասիլի իշխանութեան անկումէն եւ մահէն յետոյ, թիւրքմէններու եւ սելուք-ուսմիներու ժամանակ անոնցմէ ենթարկուած հարածանքներուն հետեւանքով խլամացած եւ հետզհետէ թրքացած են: Ու զէյթունցիներու խումբը սկսաւ կանոնաւոր նահանջով մը ետ քաշուիլ հասնելու համար Չէյթուն, եւ զանգուածային կոխումով, բոլոր զէյթունցի մարտիկներով յարձակիլ եւ զօրանոցը գրաւել: Անպարելու էր: Այդ ընդհարումին զոհ կ'երթան Ճեղատը եւ ուրիշ մէկ երկու տղաներ: Ոտքէն վիրաւորուած էր Նազարէթ Չաւուշը, իսկ Կարապետ Տ. Յակոբեան քաջ լուղորդ ըլլալով գետը նետուած եւ ազատած էր: 150 հոգի էր ամբողջ խումբը, որ երեք ժամ կը ուր ըրած էր ուր թշնամին ունեցած էր 33 սպաննուած եւ 12 վիրաւոր: Ճեղատի գլուխը կտրելով Մարաշ տարած էր թշնամին, որպէս Նազարէթ Չաւուշի գլուխը: Բերթէզ Չայ բանակած թշնամին, որ Մարաշէն կը դրկուէր Չէյթուն զօրանոցին ուժը շատցնելու կանխամտածումով, արդէն ամէն ինչ թողլով փախչելու վրայ էր: Եթէ անմիջական օգնութեան չհասնէր հազարներու բազմութիւն մը, որուն առջեւ կենալ եւ դիմադրել դժուար պիտի ըլլար եւ անխահմութիւն,

հետեւաբար լաւագոյն էր մէկ կողմէն կոխով զբաղցնել թշնամին եւ միւս կողմէն հետզհետէ նահանջել: Մինչ Ջահանի անցքին այդ ընդհարումը տեղի կ'ունենար, Չէյթունի մէջ, իրիկուան ատեններն է, իրարանցում մը ընդոստ ոտքի կը հանէ ժողովուրդը: Մեծ ու պզտիկ տուներէն դուրս փողոցները կը թափին, կը խօսուի թէ՛ կառավարութիւնը ուզած է երկու յայտնի հայեր ձերբակալել, բռնի տանելով զանոնք դէպի պալատին դուռը, բայց անոնք օգնութեան հասէք կը պոռան: Լսողներ զինուած կը հասնին եւ կ'ազատեն, գիրենք բռնող զինուորները սարսափած փակած էին դռնախին դուռը: Իսկ մեր հանգուցեալ հայրենակից Գ. Տէօվլէթ իր գիրքին մէջ, միջանկեալով մը կը պատմէ այս մասին տեղի ունեցածը: Համաձայն Վիթթոյի⁵⁵ «Բերթէզ Չայի ընդհարումին լուրը դեռ չհասած Չէյթուն, առտուան ժամը 10-ի ատենները, երբ ժողովուրդը եկեղեցիէն դուրս ելած էր, տարօրինակ լուր մը տարածուեցաւ քաղաքին մէջ: Գալմազամը պալատ հրաւիրած է հայ մեծերը, բայց երբ անոնք կ'ուզեն դուրս ելլել, դռները կը գոցուին իրենց վրայ, եւ սուրհակուր զինուորներ կը յառաջանան իրենց վրայ: Անոնք ներսէն բարձրադադակ «Օգնութիւն, օգնութիւն» կը կանչեն: Չէյթունցիներ ի լուր այս աղաղակներուն՝ կ'ուղղուին դէպի պալատ, սակայն կը տեսնեն որ գալմազամը ազատ ձգած է զանոնք եւ կը խնդրէ անոնցմէ որ հանդարտեցնեն ժողովուրդը: Վերջէն կը հասկցուի որ գալմազամը եւ զօրանոցին գնդապետը, որոնք լուր ունէին թէ՛ այդ օրը վաշտ մը զօրք պիտի հասնէր Չէյթուն, պալատ հրաւիրած էին հայ մեծամեծները, եւ զանոնք զբաղցուցած էր երկար խօսակցութեամբ մը, ու երբ կ'ենթադրեն թէ վաշտը մօտեցած է արդէն եւ քիչ յետոյ պիտի սկսի ջարդը, ազատ ձգած է զանոնք: Բարեբախտաբար այդ վաշտը չէ հասած, կ'ըսէ Վիթթօ եւ ծրագրուած ջարդն ալ տեղի չէ ունեցած:

Այս առթիւ դարձեալ խօսքը տանք մեր հայրենակից Տէօվլէթին նոյնութեամբ արտագրելով իր անձնական յուշերը: «Իսկ ես կը յիշեմ թէ ինչպէս յուզումը մեծցաւ եւ տարածուեցաւ Չէյթունի մէկ ծայրէն միւսը եւ թէ ինչպէս բազմութիւնը կը հոսէր խիտ առ խիտ Կախսային թաղէն դէպի միջին թաղը, դէպի կառավարական պալատը: Բոլորը զինուած եւ իրենց հրացաններուն փողերը ցցուած, չոճիի անտառի մը տպաւորութիւնը կը ձգէին. նոյն խուժումը վարի թաղերէն ալ դէպի վեր, հրացանը խլողը դռնէն դուրս ցատկած էր: Կառավարութեան մի քանի ծանօթ ոստիկաններ կը պաղատէին բազմութեան առջեւ որպէսզի ցրուին: «Պիր չէյ եօզ, պիր չէյ եօզ» գոչելով: Բայց ո՛վ էր զիրենք մտիկ ընողը: Չէյթունի մեծ շուկան, ինչպէս նաեւ կառավարական շէնքէն մինչեւ Աստուածածնայ եկեղեցին,

զարիվեր լայն պողոտայ մը, ու անկից ալ վեր, Եղեկիէյեանց տունէն մինչեւ Արքիսենց եւ Խուլմունենց տուները, ու ալ աւելի անդին մինչեւ Ենիտիւնեան Թաղին ծալքը, փողոցները լեցուած էին զինուած զէյթունցիներով, որոնք կարծես հրամանի կը սպասէին իրենց ընկիւրը ճշդելու համար»:

Դարձեալ նոյն հայրենակիցէն.—

«Ասոր վրայ է որ Զէյթունի աւագանին, Տ. Կարապետ Քահանայի նախագահութեամբ, ժողով մը կը գումարեն Ս. Աստուածածնայ եկեղեցիին կից նախակրթարանի շէնքին մէջ, եւ մը գտնելու համար կացութեան, ժողովը կը տեւէ մինչեւ առաւօտ, որուն պատմութիւնը լսած եմ կ'ըսէ Տէօփէթ, երիտասարդի մը բերնէն, Թաղէոսեան կամ Սինկիրեան գերդաստանէն: Այդ երիտասարդը զրկուած էր Աստուածածնայ Թաղի քաջամարտիկ զօրագլուխ՝ Մարկանեան Հաճիի կողմէն, որուն դրացին էր եւ պաշտօն տրուած էր իրեն հետեւելու ժողովին ընթացքին եւ տրուած որոշումներուն, որպէսզի ըստ այնմ ճշդէր ան իր բռնելիք ուղղութիւնը: Որովհետեւ Հաճի չէր ուզեր Աւագանիին կամքին դէմ դրոժել: Հաճի արդէն 300 հոգիի գլուխն անցած, հեռացած էր Զէյթունէն, բայց ամբողջ գիշերը իրեններով միասին կը դեգերէր եւ կը վարանէր թէ՛ դէպի ուր պիտի ուղղէր իր քայլերը: Կը սպասէր ժողովին որոշման, պէտք էր երթալ միանալ Աղասիի եւ Նազարէթ Զաւուչի խումբին, թէ պիտի սպասէր ազաններու եզրակացութեան: Ժողովին եկած էին Զէյթունի բոլոր մեծերը, մանաւանդ անոնք, որ անդամ էին Զէյթունի կառավարական ժողովներուն: Հոն էին բերդատէր Սուրէնեաններու ներկայացուցիչը՝ Բասիրոսեան Կարապետ Աղան, որմէ թուրք պաշտօնեաներն անգամ կը պատկառէին եւ կը վախնային, վերի Թաղի ներկայացուցիչ Կիւլվանքեան Նազարէթ աղան, Ղարդալարէն Անդրէասեան Ասքատուր Աղան, Պօզպայիթ Թաղէն թերեւս ծերունին՝ Հազօր իշխան, ինչպէս նաեւ կրօնականներ եւ ազդեցիկ ընտանիքներու անդամներ: Միայն կը բացակայէին բոլոր անոնք որ կը պատկանէին ուղղակի կռուողներու դասին եւ որոնք բռնկած էին յեղափոխութեան բոցով, ժողովին նպատակն էր նախապարձակ չլլալ, պահել պաղարիւնութիւնը, հանդարտ սպասել, մինչեւ հարկ ըլլայ զէնքի դիմել ինքնապաշտպանութեան համար: Սուրէնեան Կարապետ Աղան դէմ էր արկածախնդրութեան, իր աչքին առաջ ունենալով Զէյթունի 50 տարիներու պատմութիւնը: Ծերունին յայտ յանդիման կը տեսնէր ըլլալիքը: Նոյն կարծիքէն էին կարգ մը մեծեր եւ Առաջնորդը Երկանեան Քահանայ: Բայց միւս կողմէ իր հօտին որպէս պատասխանատու կը զգայ թէ շատ ալ դիւրին չէ այդ պայմաններուն մէջ կառավարութեան հետ հաշտ

ապրիլ: Բոլոր այն անգթութիւնները որոնց մասին բողոքած էին, աքսոր, բանտարկութիւն, որոնց համար դիմած էր, անհետեւանք մնացած էին: Արտաքին դէպքերը որոնք քիչ չատ ծանօթ էին իրեն՝ իր պաշտօնին բերումով՝ Սասնոյ կոտորածը, ընդհանուր հալածանքը բոլոր հայերու դէմ, Պապ-Ալիի ցոյցը, որ դեռ նոր՝ գրեթէ ամիս մը առաջ, Սեպտեմբեր 30-ին տեղի ունեցած էր, ընդհանուր ջարդերը, որոնց ընթացքը փոխել եւ կեցնել կարելի բան չէր: Ինքնապաշտպանութենէ զատ ուրիշ ընելիք չկար, նոյնիսկ Զէյթունի շրջակայ թուրք գիւղերու դէմ: Այս բոլորը սակայն ի մտի ունենալով Տ. Կարապետ հետզհետէ կը բարեխառնէր իր պահպանողական մտայնութիւնը, եթէ ուժգին ընդդիմութեամբ մը պաղ ջուր լեցնէին բռնկած բոցին վրայ, եւ քայքայէին ժողովուրդին տրամադրութիւնը, խանդավառութիւնը, հետեւանքը պիտի ըլլար կառավարութեան յանձնել կռուելու համար դուրսէն եկած հիւրերը, որոնք ամիսներէ ի վեր դրամ կը ծախսէին Զէյթունի պաշտպանութեան համար, սակայն այդքանը բաւական պիտի չըլլար, կառավարութիւնը պիտի պահանջէր նաեւ Զէյթունի գլխաւոր ռազմիկները, զէնքերը պիտի յանձնուէին, զինամթափ պիտի ըլլար զէյթունցիին՝ եւ ահա պիտի սկսուէր բանտարկութիւն, աքսոր, բռնութիւններ: Եւ ո՞վ կրնար ապահովել որ իր այդ բոլոր ուժերէն զրկուելէ յետոյ, մնացած ժողովուրդը հանգիստ եւ խաղաղ պիտի ապրէր: Օր մը թերեւս ջղաթափ եւ սպառած, ի զուր պիտի փնտռէր ներկայ տրամադրութիւնը, ներկայ հոգեվիճակը, որ այսօր կ'ուզէր վանել:

Զէյթունի ճակատագիրը այսպէս դժնդակ եղած է դարերէ ի վեր: Լարուած ինքնապաշտպանութիւնով է որ ան կրցեր է ապրիլ եւ իր գոյութիւնը պահել:

Զօրանոցին գրաւումը.— Մինչ, վերոյիշեալ ժողովին մէջ բաւական խորհրդակցութիւններէ յետոյ, կ'որոշուի Բերթէզ Չայէն դարձողները երթալ համոզել, որ առ այժմ ետ կենան զօրանոցը գրաւելու միտքէն եւ պատրաստ ըլլան միայն ինքնապաշտպանութեան: Նախապարձակ չլլան՝ յետագային պատասխանատուութիւնը թշնամիին վրայ ձգելու համար: Սակայն Բերթէզ Չայի կռիւին գիշերն իսկ որոշուած էր գրաւել զօրանոցը, խումբ մը ռազմիկներ կը զրկուին որ երթան զօրանոցի շուրջը պատնէշներ եւ խրամներ պատրաստեն: Բերթէզ Չայէն վերադարձող 150 կռուողներուն մնացած մասը Ալապաչի Օյ-նախ կոչուած վայրը քիչ մը դադար առնելէ եւ պարենաւորուելէ յետոյ, 100-ի չափ Փոնուզցիներով իրենց օգնութեան եկող Բարթուղի-մէոս Վարդապետի ընկերակցութեամբ արշարտին կը հասնին զօրանոցին

մօտը: Եւ կը սկսին պաշարել զօրանոցը, այդ ամրապարիսպ շէնքը չորս կողմերէն, պատնէշներու վրայ խաչանիշ դրօշներ պարզելով: Ահա այդ պահուն իսկ Զէյթունէն կը ղրկուի Տ. Նշան Քահանան քանի մը ընկերներով, յորդորելու որ ետ կենան առ այժմ նման յախուռն ձեռնարկէ մը, սակայն շատ ուշ էր նման փորձ մը, հրացանաձգութիւնը սկսեւ էր: Հոն էին կարապետ Տ. Յակոբեան, Բարթուղիմէոս Հայրը իր հարիւր կտրիճներով, Մարկանեան Հաճին իրեններով, Սարգիս Ենիօրեան իր երկու հարիւր կռուողներով, պաշարողներութիւր, հետզհետէ Զէյթունէն եկողներով կը ստուարանայ եւ կը հասնի 1000-ի: Հեռագրաթիւրը կը կտրեն գէյթունցիք, որպէսզի զօրանոցը, որուն մէջ էր հեռագրատունը, չկարենար Մարաշի հետ յարաբերուիլ: Զօրանոցին ըմպելի ջուրը, իր հիւսիսի Փեսիրի բարձունքներէն էր որ հողէ խողովակներով կու գար ներս, Զէյթունի այդ ջուրը, մեռած եզի մը արիւնով ապականելէ յետոյ, ետքն ալ կը կտրեն, կը մնար զօրանոցի մէջի ջրհորը: Զօրանոցի մէջ գտնուող զինուորներու թիւը 650 էր, իսկ վարը՝ Զէյթուն ղօնախին մէջ կը գտնուէին 50-ի չափ զինուորներ: Հրացանի ձայներ սկսած էին ընդհատ լսուիլ զօրանոցին շուրջը: Զէյթունցիք սովորութիւն չունէին պարապի հրացան պարպել, մինչեւ որ թշնամին որոշ կերպով չերեւար: Իսկ թուրք զօրքը քաշուած էր ներս եւ չէր համարձակիր դուրս ելլել: Թշնամին ունէր առատ ուղղամթերք, երկու թնդանօթ, բազմաթիւ ուռմբեր, բայց կը զգուշանային ուղղելու իրենց զէնքերը Զէյթունի վրայ: Իսկ վարը, Զէյթունի մէջ, ժողովուրդը տանիքները ելած կը դիտէր կռուի: Թշնամին շփոթեցնելու համար, իրենց լուր ղրկուած էր թէ գէյթունցիք չեզոք կը մնան, խաղաղ ժողովուրդը կռուողներուն հետ չէ, որպէսզի թշնամին զէնք եւ ուռմբ չարձակէ քաղաքին վրայ, մինչդեռ հետզհետէ խումբ առ խումբ Զէյթունէն կը բարձրանային Ալեքսանդրի եւ Պուչախճօնց բարձրութիւնները եւ կռուողներու թիւը աւելի եւ աւելի կը շատնար: Քաղաքին ղօնախը, իր 60 զինուորներով եւ պաշտօնեաներով պաշարման տակ առնուած էր: Պահ մը չլուկ մը կը տարածուի թէ՛ այդ զինուորները քաղաքին մէջէն կ'ուզէին անցնիլ եւ հասնիլ միանալու զօրանոցի ուժերուն: Սակայն իրենց կ'ազդարարուի թէ նման փորձ մը չընեն, որովհետեւ իրենցմէ մէկ հատ ողջ պիտի չմնայ նման պարագայի մը: Նոյն իրիկունը այդ զօրքերը անձնատուր կ'ըլլան, երբ դայմագամ Ալին Պէյ արդէն անձնատուր եղած եւ տարուած էր Բասիլոսեան կարապետ Աղաքի ընակարանը: Զօրանոցին պաշարումը երկու օր կը տեւէ: Թշնամին զօրանոցէն 40 ուռմբ կ'արձակէ պաշարողներուն վրայ, իսկ ոչ մէկ ուռմբ կ'արձակուի քաղաքին վրայ: Կռիւր սաստիկ կ'ըլլայ: Զէյ-

թունցիք փորսող կը յառաջանան դէպի զօրանոց, արեւմուտքի փոքր ձորակէն վեր ցից զառիվերն ի վեր եւ կը մօտենային զօրանոցի փոքր դրան, որ կը կոչուէր Զէյթունի դուռ (Զէյթուն գափուսու): Այդ տեղերը սպաններու ընտանիքներուն համար շինուած տնակներ կային, ինչպէս նաեւ բաղնիք մը եւ մզկիթ մը: Շատերու նման, եւ մեր հայրենակից Տ. Գէորգեանի տեսածին պէս, ես ալ տեսայ այն տեղ ծածանող խոշոր դրօշակը զօրանոցի պարիսպին անմիջական ստորոտը, դրօշակին ետեւը, ժայռի մը տակ կծկուած դիրք բռնած էր Պօզպայիր թաղէն Եօղունենց կամ Սերոբեանց Մարտիրոսը: Թուրքերը շարունակ կը կրակէին այդ դրօշակին վրայ, նոյնիսկ քանի մը անգամ կը փորձեն դուրս գալ եւ դրօշակը յափշտակել, սակայն մեր տղոց գնդակներէն կ'իյնան անշունչ: Խոշոր, յաղթանդամ սեւամորթ մը, հաւանաբար Եէմէնէն կամ հարաւային Արաբիայէն կրցաւ մօտենալ եւ վար ծով խլելու համար դրօշակը, բայց Եօղունենց Մարտիրոսը որ դրօշակին գրեթէ ետեւը դարանի կեցած էր, ուժգին կերպով քաշեց անոր ոտքէն ուղեւով անոր մարթինը խլել: Սեւամորթը սահեցաւ, ինկաւ ու Մարտիրոս ալ վրան, իրարու փաթթուեցան եւ սկսան գօտեմարտելով դէպի վար գլորուիլ: Մարտիրոս վրան մնալով, իր դաշոյնով թէ տապանչալով մահացու կերպով վիրաւորած էր զինուորը: Մարտիրոս առած էր վերջապէս անոր զէնքը, զինքը այնտեղ սպաննելէ յետոյ: Ասիկա կռիւին առաջին օրն է, իսկ երկրորդ օրը՝ կռիւը կը սաստկանայ, պաշարման օդակը կը նեղնայ, կը սեղմուի զօրանոցին շուրջը: Այդ օր գէյթունցիք ալ ունեցան քանի մը հոգիի կորուստ, մի քանի ալ վիրաւոր: Թուրքերը կը փորձէին պարիսպէն դուրս ելլելով, ներս քաշել իրենց դիակները, սակայն շատեր դուրս կը մնային: Զօրանոցի զինուորները ներսէն կը դիմադրէին եւ անձնատուր չէին ըլլար: Շարաթներ դիմանալու եւ կռուելու համար ուղղամթերք եւ ուռելիք պաշար ունէին: Թէ-եւ ջուրը կտրուած էր դուրսէն եւ սակայն ներսը ջրամբար պատրաստած էին ժամանակին եւ կրնային ատեն մը եւս դիմանալ եւ կռուիլ, մինչեւ որ դուրսէն նոր ոյժ, նոր բանակ գար օգնութեան: Զէյթունցիք կը մտածէին վարպետ դարբիններ՝ Փասլը Մանուկի Զօլաբեան, Արթին վարպետի եւ Կիւճիւկեան Ստեփանի գործակից աշխատանքով երկաթէ կառք մը պատրաստել, զայն տանիլ կռթնցնել զօրանոցի պարիսպին եւ անոր ծակերէն (մազղաճ) հասած գնդակներէն ապահով, վեր մագլցելով կամ պատը ճեղքելով քարիւղ թափել ներսը եւ հրդեհել զօրանոցը: Միեւնոյն ատեն սպառնալիքներ կը ղրկեն ներսը յանձնուեցէք ըսելով: Սուրէնեան կարապետ Աղաքի տունը գերի գայմագամ Ալին գէյթունցիներու ստիպումին վրայ եւ

միեւնոյն ատեն տեսնելով թէ ոեւէ վնաս եւ նեղութիւն չեն տար իրեն եւ 60 գերիներուն, զինուորական փողի միջոցաւ զօրանոցը կ'իմացնէ թէ մի վախճաք, անձնատուր եղէք: Ձեր կեանքին դէմ ոչ մէկ վտանգ կայ: Իսկ եթէ անձնատուր չըլլաք զօրանոցը պիտի աշխատէ: Հրամանատար զնդապետը արդէն պատրաստ էր յանձնուելու, սակայն կը վախճար իրենց կեանքերուն եւ սպաներու տիկիներուն պատիւին: Բայց երբ Ալֆի պէյէն այդ ապահովութիւնը կը ստանար, անձնատուութեան նշանը կու տար եւ կը խնդրէր որ զէյթունցիներէն մէկը երթայ իր մօտ եւ այդ մասին անհրաժեշտ բանակցութիւնները կատարուին:

Ըստ Տ. Յակոբեանի, 30 Դեկտ. Դժ. օրը, զօրանոցի հրամանատարը՝ Ըֆֆէթ Պէյ զօրանոցի մեծ դրան պատշգամէն գլուխը դուրս հանելով խօսիլ ուզած է, եւ Հրաչեայ որ այդ տեղ է, Տ. Յակոբեանի հետ կը մօտենայ գնդապետին, որ կը յայտնէ թէ կ'ուզէր իրենց հետ երեք սպաներ դրկել Չէյթունի յաղթական պետերուն հետ բանակցելու համար: Որպէս թէ Տ. Յակոբեան՝ ըստ իրեն, վաճառ լուր կը դրկէ Աղասիին (որ միշտ վաճառ կը մնար եւ բնաւ կոխին չէր մասնակցեր) որ ինք իրեն պատկառելի դիրք մը տայ եւ գայ զօրանոցէն քանի մը քարընկեց հեռու տեղ մը, նստի այնտեղ, եւ իրենց հետ թուրք սպաներ պիտի դան բանակցելու: Ինքը անոնց հետ ուղղակի պիտի չխօսի թուրքերէն, իր հետն էին Չազրեան Աւազ եւ Կէսիւրեան Աւետիք: Այս վերջինը պիտի կատարէ թարգմանի դերը Աղասիի եւ սպաներուն միջեւ: Ըստ մեզի սակայն, Տ. Յակոբեանի այս կերպ ներկայացնելը հաշտութեան բանակցութիւնները, ճշմարտութիւն չեն կրնար ըլլալ, որովհետեւ կռուողը եւ յաղթողը զէյթունցիներն է եւ հաշտութեան բանակցութիւնը դուրսէն եկող եւ նոյնիսկ կոխին չմասնակցող Աղասին կատարէ. անարգական է Չէյթունի թէ՛ ռազմիկներուն եւ թէ՛ կոխը վարող բնիկ զօրագլուխներուն: Տ. Յակոբեան, ինքն ալ հնչակեան՝ տարուած է կռուակցութեան ինքնասիրութենէն եւ օտարամոլութեան հիւանդագին զգացումէ եւ միակողմանիօրէն ներկայացուցած է գէպերը եւ անոնց ծնունդ տուող պատճառներն ու հետեւանքները: Մինչդեռ Մ. Սէմէրճեանի գրածին համեմատ յարմար կը դատուի որ Ֆոնուզի վաճառն արիւստ վանահայր՝ Տ. Բարթողիմէոս Վարդապետը երթայ սպաներուն մօտ բանակցութիւններ կատարելու համար, ինչ որ զէյթունցիներէն թէ՛ ժողովուրդին եւ թէ՛ կոխը վարող զօրագլուխներուն ալ փափաքը եւ որոշումը պէտք է եղած ըլլայ: Ու թագաճեան Հայր Սուրբը, սուրը կշտին, խաչը կրծքին, պաշտօնական վեղարն ալ գլխին սպիտակ միու վրայ նստած, անվեհեր եւ համարձակ կ'երթայ թուրք

սպայից մօտ, որոնք արժանավայել յարգանքով կ'ընդունին զինքը: Բանակցութիւնները կը սկսին, գնդապետին առաջարկին (եւ թերեւ խնդրանքին...) համեմատ զօրանոցի ընտանիքները՝ սպաներու կիները, օտորադաս պաշտօնեաները, իրենց գոյքերով անվնաս Մարաշ պիտի դրկուին: Սակայն զօրքերը, գնդապետ հրամանատարը, թնդանօթաձիւղը եւ գայմագամը Չէյթուն պիտի պահուին ապահով ցնոր տնօրինութիւն եւ զօրանոցը իր մէջի մթերքով ու զէնքերով, ռազմանիւթերով անմիջապէս պէտք է յանձնուի: Սպաները կ'երթան այս պայմանները կը հաղորդեն գնդապետին, որ քառորդ ժամ վերջը զօրանոցի փոքր դռնէն երեւնալով, երեք անգամ «Էմնիլթ վա՛ր մը օղլում» կը հարցնէ (ըստ Յակոբեանի գրածին): Տ. Յակոբեանի եւ Հրաչեայի հաստատական պատասխանին վրայ, եւ բանակցութիւնները աւարտելէ յետոյ, հայրենասէր եկեղեցականը կը յառաջանայ եւ սուսերամերկ կը կանգնի զօրանոցի մեծ դրան մէկ կողմը, իսկ քիչ մը հեռուն, դուրսը կեցած են Չէյթունի իշխանագուններն ու կոխը վարող զէյթունցի զօրագլուխներն եւ օտար յեղափոխականները: Գնդապետը ալեւս ապահովուած դուրս կ'ելլէ: Տ. Յակոբեան քաղաքավարութիւնով մը կ'ըսէ որ սուրը իրեն յանձնէ: Գնդապետ Ըֆֆէթ Պէյ սուրը կը յանձնէ: Այնուհետեւ մի առ մի դուրս կ'ելլեն սպաները, զօրքերը եւ կ'անցնին Հայր Սուրբին բարձրացուցած մերկ սուրին տակէն, խոնարհութիւն ընելով հայկական դրօշակին եւ «Էյ վալլահ» ըսելով: Նոյնը ըրին նաեւ զօրանոցի թուրք տիկիները, որոնք եւս սուրին տակէն անցնելով եւ խոնարհելով հայ դրօշին առջեւ «Եւաչաւըն էրմէնի միլլէթի վէ Չէյթուն իկիթլէրը, զիրա ախլազարը թէմիզ տիրլէր, տէյի պիզիմ թիւրքլէր կիպի փօզուզ»: «Կեցցեն հայ ազգը, եւ Չէյթունի քաջերը. անոնք տէր են մաքուր բարոյականի՝ եւ ոչ թէ մեր թուրքերուն պէս ապականած»: Չօրանոցի գրաւումը կը կատարուի Հոկտեմբեր 18-ին, կէսօրէ յետոյ:

Այս տեղ, անձնապէս, ես դեռ մանուկ, կը յիշեմ թէ ինչպէս տեղի ունեցաւ գերի զինուորներու եւ սպաներու զօրանոցէն վար իջնելով Չէյթուն մտնելը: Մանուկներ եւ պատանիներ ենք, տանիքները շարուած ենք, մեր ծնողներու եւ ժողովուրդի բազմութեան հետ ու կը դիտենք. աշնան քիչ մը պաղ եւ գորշ օր մըն էր: Սեւազգեստ եւ կարմիր ֆէսերով աւելի քան 550 պարտուած թուրք զինուորներու գումարտակները, կ'ելլեն զօրանոցի վայրէջքէն, կը հասնին վերի մատն ծէրը, ուր վերջին գումանտան Թահսին Պէյին կողմէ շինուեցաւ: Այնտեղ էր պատերազմի եւ թշնամութեան Պանտարան՝ (եռագոյն ռազմադրօշ, ահա կը վերնայ ան) զօրքը կը յառաջանայ դէպի Չէյթուն, կը հասնի Ճեմարանի դաշտին քովը, մեծ գերեզմանատան

արեւելքի եզերքը երկարող ճամբուն ուղղութեամբ, կու գայ մեծ թթենին, ուրկէ դարձեալ վար կ'իջնէ Պաղ Աղբիւրի գաղիվարէն, այլեւ, որոշ կ'երեւայ անոնց իւրաքանչիւրը, կարելի է համրել, չորսական շարուած, գլուխին վար, առանց գէնքի, տխուր կու գան Պաղ Աղբիւր, կ'անցնին կամուրջէն, կը մտնեն Մուրտենց հօրթմէն, Սաղիր լոռւած հրապարակէն (պօղպայիղցիներուն բացօթեայ հրապարակ մըն է այդ Սաղիր լոռւած վայրը): Հիմա Աղճիպատի շուկան են: Մենք Տէր Նշանենց եւ Արպիւնց իրարու կից երկու մեծ տանիքներուն եզերքը շարուած, կը նայինք վար ահա կ'անցնին զօրքերը, սպաները, անոնց ընտանիքները քողով եւ իզարով ծածկուած: Յանկարծ, Արպենց տանիքի ցուիքէն -տուրնա լոռւած տախտակեայ քիւերու վրայ, Ուսկունենց փանիւր հին ձեւի տապանչա մը պարպեց վար, դէպի Աղճիպատի երկայնքին, ուրկէ կ'անցնէր պարտուած թշնամին եւ պիտի երթար տեղաւորուէր զօնախը, կառավարական պալատը, զօր գրաւած էին արդէն գէյթունցիք: Այդ գէյթունցիներու յատուկ հին ձեւի տապանչան, ատրճանակը, ահագին ձայն մը հանեց, կարծես որոտումի մը արձագանգն էր որ տարածուեցաւ: Զօրքը եւ ընտանիքները դողդողալ սկսան: Սակայն ոչինչ: Տանիքները խռնուած բազմութեան մէջէն, մեծերը, յանդիմանեցին փանոսը եւ տապանչան ձեռքէն առին: Զօրքը զօնախը տեղաւորուեցաւ, հրամանատար Ըֆֆէթ Պէկը տարուեցաւ կիւլվանըսեան Նազարէթ Աղայի բնակարանը: Սպաները եւ իրենց ընտանիքները առաջնորդուեցան գէյթունցի որոշ ընտանիքներու տուները: Օր մը յետոյ, համաձայն գինաթափութեան պայմաններուն, կիները եւ անոնց զաւակները զրկուեցան Մարաշ, մէկ մասն ալ Արպիսթան:

Այս տեղ խօսքը տանք նորէն Տ. Յակոբեանի. «Գնդապետը երբ դուրս կ'ելլէր զօրանոցէն եւ կը յանձնուէր, իրեն կը հետեւէին սպաներու կիները, որոնք կ'աղօթէին ու կու լային որ խնայուի իրենց կեանքին եւ պատիւներուն»: Իսկ Տ. Գէորգեան, այդտեղ, այդ առիթով, իր գրքին մէջ կը խորհրդածէ եւ յուզումով մը ախ կը քաշէ հետեւեալ բառերով. «Ա՛հ, շատ եւ շատ հայուհիներ այդ աղբիւրները ունեցան, բայց որու, ո՞ր ապառաժ սրտերուն...»:

Իսկ մենք ալ նոյնը, նոյն տազնապն ու տառապանքը կը վերագտնենք երբ կը յիշենք 1914-1918-ի, Զէյթունի տարազրուութիւնը Տէր Զօրի անապատներուն մէջ մեր հայրենակիցներու քաշածները, ջարդը, կիներու եւ աղջիկներու աղբիւրները պուտ մը ջուրի համար: Աղբիւրները իրենց կեանքին եւ պատիւին համար... անզգամ թուրք ժանտարմաններու: Եւ սակայն թշնամին անգուլթ է, անզգամ է. պէտք է նիւթաւ ալիքներուն յանձնուիլ...: Բայց այս մասին, առ այժմ

այսքան, ուրիշ տեղ, իր ատենին եւ իր կարգին պիտի գրենք:

Գերիներուն Զէյթուն բերուելէն եւ տեղաւորուելէն յետոյ, կոխի վարիչներէն եւ զօրագլուխներէն, քսանեակ մը գէյթունցիներ մտան զօրանոց, դուռը լաւ մը գոցեցին: Բարթողիմէոս Հայր կը հսկէ որ դուրսի բազմութիւնը դուռը չկոտրէ եւ ներս խուփէ: Զօրանոցի ներս եղողները, գրեթէ Բերթէզ Չայի կոխին խմբապետներն էին եւ անոնց մէջ էր Նազարէթ Չաւուշ, որ նոյն կոխին մէջ աջ ոտքէն վիրաւորուած էր եւ այդ օրը հոն եկած էր ձիով: Զօրանոցին մէջ կար ահագին բան, կենսամթերք եւ ռազմանիւթ, ըստ Աղասիի 18 ջորի, 20 ձի, ըստ ուրիշներու 100-ի չափ ձիեր եւ ջորիներ, իսկ Մէմէրճեան կը գրէ թէ՝ 6 ջորի եւ 3 ձի միայն գտան այնտեղ: Աւելի ճիշդ եղած պիտի ըլլայ Աղասիին ըսածը, այսինքն 100-ի մօտ ձիեր եւ ջորիներ, որովհետեւ զօրանոցի այդ 500-800 զօրքերուն գոնէ մէկ գումարտակը՝ այսինքն 100-ը ձիաւոր, հեծելազօրքեր էին: Զէյթունցիք գրաւեցին մեծագին գորգեր, կապերտներ, փողոց-թաղիքներ, կահ կարասիներ, խսիրներ, սպաներուն պատկանած 20-ի չափ խոշոր եւ կղզուած սնտուկներ, բրինձի եւ լուբիայի 2 ամբար, 40 թօն ալիւր, 30 տակառ ձէթ, 2 ամբար գարի, 1500 զոյգ գուլպայ, 300 զօրքի համազգեստ, 120000 մարթինի փամփուշտ, 600 մարթին հրացան, 2 թնդանօթ գրուսի, 170 ուռմբերով, 2 տակառ վառօդ, 30-ի չափ վառարաններ եւ մէկ դեղարան: Ու տակաւին ինչեր:

Ու դարձեալ, կէս դար յետոյ, աչքիս առջեւ կու գան այս օրուան պէս ինչպէս զօրանոցէն վար տխուր եւ ճակատին ցած, գինաթափ 600 թուրք պարտուած եւ գերուած գինուորներու տողանցքը, անձնատուութիւնը եւ Զէյթուն գալը, նոյնպէս այս օրուան պէս աչքիս առջեւ են զօրանոցի այդ անհատնում գոյքերուն, աւարէն օրերով, գէյթունցիներէն Զէյթուն վար բերելը: Ահա Փոփովենց Զգոնը, մէկը այն հարեւաններէն, բարձրահասակ, տարիքոտ, 60-նոց բայց քաջակազմ եւ հուժկու ծերուկը, կոնակին շալկած է երեք հատ խոշոր հնդկահաւ, երկու թաղար ծաղիկ Պաղ Աղբիւրի գաղիվարէն վար կ'իջնէ: Հայրս՝ Ղազարը եւ մօրս հայրը՝ Մնացականն ալ բաներ մը բերած էին, որոնցմէ կը յիշեմ սուին մը, քանի մը պղինձէ ամաններ: Ուր երբ մեծ բանակին, Րէմզի Փաշայի բանակին հետ տեղի ունեցած մեծ կոխին, Դեկտեմբերին մէջ մեր տան վրայ ալ ուռմբ ինկաւ եւ խորտակեց մեր տանիքի երկու ձողերը՝ ինկաւ տան մէջտեղ, պայթեցաւ եւ ուռմբի կտորները կտոր կտոր ըրին ուռպի կարասիները, պատուեցին ուռպի տիկերը, պէքմէզը գետի պէս հոսեցաւ գնաց մինչեւ վարը, վարի յարկը, ախոռը եւ գնաց մինչեւ փողոց, մեծ մօրս՝ Թուրֆանտային միտքն ինկաւ, մեր տունը մտած

տաքին օգնութեան քաջալերութեան եւ աւելի դէշը, դուրսէն եւ Մարաշէն եկած Վանձնուեցէք-ի յորդորներուն եւ թելադրանքներուն, որոնք կրնային յուսալքում, բարոյալքում յառաջացնել եւ պարտութեան մատնել Ձէյթունը: Թող միանար Հաճընը, Մարաշի հայութիւնը, եւ ահա այն ատեն խնդիրը կրնար բոլորովին այլ երեւոյթ ստանալ եւ հասնիլ Ատանա եւ մինչեւ Հալէպ, եւ հաւանական նոյնիսկ՝ բաւական յուսալից պարագայ մը կրնար ստեղծուիլ Կիլիկիոյ հայութեան համար: Սակայն Պիղատոսները մնացին Պիղատոս ինչպէս միշտ, մանաւանդ 1895-6-ին, 1914-ին եւ 1920-ին, անտարբեր եւ լուռ հանդիսատեսներ՝ իրենց մորթերուն մէջ մտած: Ապագայ պատմաբանը սակայն օր մը անշուշտ նկատի կ'առնէ անոնց մեղաւոր վարմունքը, դարձեալ մարտնչող այս ափ մը լեռնականներուն նկատմամբ:

Այժմ շարունակենք մեր պատմութեան գիծը, որոշ չափով իր ժամանակագրական կարգով եւ ուղիով:

Արշաւանքներ

Գերի զինուորներուն մէկ մասը, գէյթունցի ընտանիքներու տունները տեղաւորուեցան, սակայն, անոնց կիներուն Մարաշ դրկուելէն յետոյ, մնացած այդ գերիներն ալ, զինուոր եւ սպայ, դօնախը բերուեցան: Երբ ղօնախին եզերքի փողոցէն, Կուրճիկի մօտ անցնէինք, գերի զինուորները ղօնախին տանիքը կ'ըլլային յաճախ պատի եզերքներէն, աղիւսի կտորներ կը փրցնէին եւ վարը՝ մեզի կը նետէին, երբեմն ալ իրենց ձեռքերովը մարդ մորթելու նշաններ կ'ընէին երբ մեր անցնիլը տեսնէին:

Գերիներուն տեղաւորումէն եւ զօրանոցը գրաւելով աւարը, գէնք, ռազմամթերք եւ պարենեղէն, պաշար, Ձէյթուն փոխադրելէն եւ բաժնելէն յետոյ կազմուեցաւ առժամեայ տեսակ մը կառավարութիւն՝ վարչութիւն, Ձէյթունի աւազանիին եւ զօրագլուխներէն բաղկացած, այդ վարչութեան կը գործակցէր նաեւ Աղասի, իսկ Հրաչեայ, Շամքէշիշեան Փանոսին հետ 300 մարտիկներով կ'երթայ, կը մասնակցի Ենիճէֆալէի կռիւին:

Զուգուր-Հիսարի գրաւումը.՝ Հոկտ. 31-ին.՝ Զօրանոցի գրաւուելէ յետոյ, լուր կու գայ թէ՝ Զուգուր Հիսարի թուրքերը միացած Կոկիսոնէն եւ Տէյիրմէն Տէրէն եկած թուրքերու եւ չէրքէզներու հետ կ'ուզեն ջարդել Զուգուր-Հիսարի մօտ, Կանչի բերդին⁵⁶ ստորոտը 20-30 տնուոր Ալաճաճեանք⁵⁷ կոչուած հայ գիւղակի բնակչութիւնը: Լուրը կը հասնի Ֆոնուզ, որ 3 ժամ հեռու է այդ գիւղակէն: Ֆոնուզի հայ միւտիրը՝ Գէորգ Պըլտրեան, 150 հոգիով կը փութայ այնտեղ: Պըլտրը Օղլու կը յայտարարէ թէ՝ գէյթունցիներ խաղաղ

թուրք բնակչութեան հետ գործ չունին, անոնք ապստամբած են կառավարութեան դէմ, անոր անիրաւ եւ հայաջինջ վարմունքին համար: Ուրեմն թուրք ժողովուրդն ալ պէտք է որ հաշտ ապրի հայերու հետ, եւ իբրեւ ապահովութիւն թուրքերը պէտք է որ գէնքերնին յանձնեն, ինչպէս որ ըրած էին Թանուր եւ Տէօն-Կէլ թուրք գիւղերուն բնակիչները, Ձէյթունէն 4-5 ժամ հեռու: Զուգուր-Հիսարցի թուրքեր սակայն չեն հանդուրժեր այդ պահանջին, նախատինք կը համարեն կեալուրներուն դէնք յանձնել: Ոչ միայն այդքան, այլ նաեւ ամբարտաւանութեամբ մը կը սպաննեն Ֆոնուզցի մը եւ կը վիրաւորեն ուրիշ մը: Կոիւր կը սկսի: Զորս ժամուան կատաղի ընդհարումէ մը յետոյ, հայերը կը սպաննեն Յի հոգի, եւ կ'այրեն նաեւ գիւղը: Մնացած թուրքերը կը փախչին խուճապահար: Հայերը սակայն կը հալածեն զանոնք, կը հասնին եւ կը կոտորեն մնացածներուն մէկ մասն ալ: Իսկ կիներու եւ մանուկներու ստուար բազմութիւն մը կը քշեն Անտրուուն:

Կոկիսոնի հայ գիւղերուն փախուստը.՝ Կոկիսոնի հարաւը, դաշտին ընդարձակ տարածութեան կը գտնուին Քիրէճ, Կէօլ Փունար, Հէյինք հայ եւ Տէյիրմէն-Տէրէ ու Տաշուլուզ կէս առ կէս հայ եւ թուրք բնակչութեամբ գիւղերը: Երբ Ձէյթունի ապստամբութիւնը ծայր կու տայ, Կոկիսոնի միւտիրը Չէրքէզ Մէհմէտ Պէկ, այդ գիւղերուն հայերուն կը խոստանայ պաշտպանել զիրենք թրքական ոսկէ յարձակումի դէմ, պայմանով որ հայերն ալ պաշտպանեն նոյն գիւղերու թուրքերը, երբ պատահի որ գէյթունցիք գան: Միւտիրը՝ չէրքէզ Մէհմէտ Պէկ եւ Կոկիսոնի թրքութիւնը սակայն իրենց խոստումին վրայ մնալու անհրաժեշտութիւն չեն տեսներ այլեւս, երբ կը տեսնեն բազմաթիւ կանոնաւոր զօրք եւ չէրքէզ ձիւաւորներով կը լեցուին այդ շրջանը, քալելու համար Ձէյթունի վրայ: Կոկիսոնի թուրքեր եւ չէրքէզներ ալ մոռցած իրենց խոստումը, կը միանան զօրքերուն եւ խուճանին եւ կը յարձակին Տաշուլուզ գիւղի հայերուն վրայ, որոնք սակայն իրենց փոքր թիւովը չկրնալով դիմադրել այդ հսկայ բազմութեան, մաս մը կը ջարդուին, իսկ մնացածը կը փախչի: Նոյն վիճակին կ'ենթարկուին նաեւ միւս գիւղերը՝ Հէյիւք, Կէօլ-Փունար, Տէյիրմէն-Տէրէ եւ Քիրէճ գիւղերու հայերը, որոնք առժամապէս կու գան կը մնան Թանուր եւ Տէօնկէլ թուրք գիւղերը, որոնց գէնքերը հաւաքուած էին գէյթունցիներէն: Նոյնմբեր 1-ին է որ տեղի կ'ունենան այս բոլորը:

Շիպելիի դիմադրությունը Նոյմ. 11-12-ին.-

Շիպելի (Շուպյա) կամ Շեվելի հայ գիւղը կը գտնուէր Զէյ-թունի հարաւ արեւմտեան ծայրամասին վրայ, իրեն մօտ ունենալով Տաւուսենք (Թավուսլու) եւ Տրդատենք հայ գիւղերը: Այս գիւղերուն վրայ կ'իշխէին Մարաշի կառավարութեան թոյլտուութեամբ Անտրոնի տէրէպէիները՝ Եայճօղլու, Զէյֆար Օղլու եւ Ապագա թիւրքմէն ցեղապետները: Իսկ թուրք կառավարութեան գոյութիւնը անուանական արժէք միայն ունէր: Զուգուր-Հիսարի դէպքին վրայ, այն ցեղերուն ամենէն վաղրազը՝ Եայճօղլու, ահագին խուժանի մը գլուխն անցած, կ'երթայ կը պաշարէ Շիպելին, ջարդելու համար հայերը, որպէս փոխ վրէժ ջարդուած Զուգուր-Հիսարի թուրքերուն: Շիպելեցիք կը դիմադրեն, երեք օր կատաղի կռիւ մղելով: Կռիւի մէջէն Տ. Յարութիւն Քահանան կը յաջողի խոյս տալ... եւ կ'երթայ Բարթուղի մէոս վարդապետին կ'իմացնէ կացութիւնը: Վարդապետը 200 զէյթունցի եւ ֆոնուզցի ռազմիկներով ճամբայ կ'ելլէ, սակայն ճամբան կ'իմանայ թէ շիպելեցիք յաղթած են արդէն Տավուսենց գիւղէն հասած օգնութեան շնորհիւ: Թուրքերը փախած են մօտակայ Սիսնէ թուրք գիւղը, հայերուն ձգելով կառավարութեան ամբարած մեծաքանակ արմատիքը: Հայր Սուրբը նկատելով, որ այդ շրջանը բաւական հեռու է Զէյթունէն եւ յետագային Զէյթուն զբաղուած ըլլալով, հաւանաբար աւելի մեծ ուժերու դէմ կռուելու ժամանակ առիթ պիտի չունենայ հոն ոյժ դրկելու, այդ տեղի հայերը Ֆոնուզ բերել տուաւ:

Անտրոնի ճակատամարտը.-

Նոյեմբեր 15-ին, տեղի կ'ունենայ Անտրոնի ճակատամարտը Եայճօղլու Շիպելիէն փախչելով կը հասնի Անտրոն, որ Զէյթունէն 18 ժամ հարաւ արեւմուտ կ'իյնայ: 400 տնուոր մեծ գիւղ մըն է Անտրոն, որուն բնակչութեան շատ փոքր մասը միայն հայեր են: Եայճօղլու եւ Փայմազամ միացած, կը բանտարկեն տեղւոյն բոլոր հայերը եւ 11 օր զանոնք կը թողուն առանց սնունդի: Զէյթունցիք կը լսեն Անտրոնի մէջ 150 հայերուն բանտարկուած ըլլալը, եւ անմիջապէս ճամբայ կ'ելլեն 100 ձիաւոր եւ հետեւակ զէյթունցիներ, որոնց մէջ էին Ենիտուսեան Նշան, Չազրեան Փանոս, Թէսմէքեան, Չօլագեան Փանոս, իսկ ֆոնուզցիներէն Ալաճաճեան Մանուէլ, Պըրը, Ալըզ Նշան եւ Հաճի Զինիկէօղեան: Ֆոնուզ երբ կը հասնին զէյթունցիները, իրենց կը միանան Բարթուղիմէոս վարդապետի խումբը, ինչպէս նաեւ Շիպելիէն հասած 100ի չափ քաջեր, որոնց գումարը կը հասնի 400-ի: Եւ ահա կ'ուղղուին դէպի Անտրոն: Թուրքերն ալ Եայճօղլուի նախկին խուժանէն զատ հոն հասցուցած են 3000-է

բաղկացած կանոնաւոր զինուորներու բանակ մը, լաւագոյն կերպով զինուած, որուն գլուխը կը կենային տեղւոյն գայմազամը, դատըն, թիւրքմէն ցեղապետներէն Տուրտու Պէկ, Եայճօղլու, Մուրթագա Ալա, Սիւլլիւ Ալա եւ ուրիշներ: Թշնամին իր այս կազմակերպուած մեծ ուժով Անտրոնի առջեւ, ժամ մը հեռուն, նախապէս պատրաստուած պատնէշներու ետեւ դիրք բռնած կը սպասեն հայերու երեւնալուն: Զէյթունցիք կը մօտենան, թուրքի մը ձեռքով նամակ կը դրկեն գայմազամին եւ կը պահանջեն, որ բանտարկուածները ազատ արձակուին, որպէսզի առանց ոեւէ գնդակ արձակելու ետ դառնան: Սակայն թշնամին պատնէշներու ետեւէն հրացանաձգութիւններով կը պատասխանէ իրենց դրկուած նամակին: Զէյթունցիք իրենց ոյժերը բաժնած էին երեք թեւերու, Բարթուղիմէոս վարդապետ, իր խումբը կ'առաջնորդէր թուրք բանակին աջ կողմին վրայ, առանց նկատուելու թշնամիէն: Հետեւակներու թիւը կը յառաջանար ձախ թեւին վրայ, Ալզի անունով բերդի մը առջեւէն, մացառներու ետեւ թաքնուած, իսկ ձիաւորները՝ Ենիտուսեան Նշանի եւ Չօլագեան Փանոսի հրամանատարութեան տակ դիրք բռնած էին թուրք բանակին դիմացը: Գրոհը կը սկսի վարդապետին խումբին ահռելի աղաղակներովը, որուն կը հետեւին միւս խումբերը: Երկու ժամուան կատաղի կռիւէ մը յետոյ, թուրքերը կը սկսին փախչիլ, բազմաթիւ դիակներ ձգելով պատերազմի դաշտին վրայ: Սպաննուածներուն մէջ էին շատ մը թիւրքմէն ցեղապետներ, որոնցմէ Տուրտու Պէկը եւ Եուսուֆ Չաուշը կ'իյնան վարդապետի զնդակէն: Եայճօղլու սակայն յաջողած էր փախչելով ազատիլ: Հայերը կը հալածեն փախստականները բաւական տեղ, կոտորելով ձեռք անցուածները: Իսկ Տաշուլուզցի Զօդուր օղլու Մարտիրոս Քէհեան, իր գիւղացիներուն ջարդէն սիրտն ալքած, կը կանչէր թշնամիին ետեւէն «Գապագճի տօմուզլար, գաչմայրն, կէլէն օմուզու սալմայր զէյթունլու տրը», այսինքն «դժմակեր խոզեր, մի փախչիք, եկողները ուսերնուն սլաքով զէյթունցիներ են»: Երբ թշնամին ոյժը քայքայուած, խուճապահար կը փախչի, մերիները կը մտնեն Անտրոն եւ կը գրաւեն կառավարական պալատը, բանտին դռները կը խորտակեն եւ կ'ազատեն բանտարկեալները, 150 բանտարկուածներէն 40-ը սակայն արդէն սպաննուած էին եւ կարգը մընացողներուն եկած էր: Ազատուածները ուրախութեամբ լեցուած վարդապետին ձեռքն ու ոտը կը համբուրէին: Իսկ բռնի խաբամացուած եւ Ենիճէ-Փալէ փախցուած ու թուրքերու հետ ամուսնացուած աղջիկներ, 7 ամիս յետոյ, Շիպելեցի Տէօլիթ Մուրսալեան եւ Աղեքսանդր Սանդուրեան փախչելով կը յանձնեն ֆրանսական հիւպատոսին:

Թշնամիին թողուցած ճոխ աւարը, հացը, կը բաժնեն ազատ ար-

ճակուած բանտարկեալներուն, որոնք օրերէ ի վեր անօթի էին: Յետոյ կը կողոպտեն տուները, շուկան, կառավարական պալատը եւ կրակի տալով քաղաքը, կը վերադառնան կապան եւ Ֆոնուզ: Ուժասպառ, յոգնած, կիներուն եւ աղջիկներուն տրամադրած էին իրենց ձիերը, իսկ մանուկները առած էին իրենց ուսերուն վրայ կ'ըսէ Աղասի Այս կոփին թէ եւ բոլոր կոռուողներն ալ մեծ քաջութիւն ցոյց տուին, սակայն նշանաւոր դարձան նամանաւանդ Նշան Ենիտիւեան, Չազըրեան Փանոս, Թէսմէքէրեան, Ալաճաճեան Մանուէլ, Պըտը, Աշըզ Նշան, Զինիկէօզ Հաճի:

Ենիճէ-Գալէի կոփը եւ լատին հայերու ազատումը.— Մինչ Զէյթունի մէջ խողաղութիւն էր, եւ ժողովուրդը տեսակ մը եթէ ուրախ՝ գոնէ առերեսոյթ կերպով գոհունակ օրերու շրջան մը կ'անցընէր, սպասելով սակայն բնագոյարար կարծես մեծ եւ վտանգաւոր անակնկալի մը, որ կը խմորուէր Երլարզի մէջ եւ շատ չանցած ծայր պիտի տար: Իսկ Զէյթունի շրջակայքը բնաւ անդորր եւ ապահով վիճակի մէջ չէին հայ գիւղերը: Ինչպէս քիչ առաջ տեսանք Չուզուր Հիսարի, Կոկիսոնի, Շիպելիի եւ Անտրոնի մէջ տեղի ունեցած ընդհարումները, կոփները: Նոյմ. 15-ին որ Անտրոնը կը գրաւուէր, թշնամին կոփը կը շարունակէր ուրիշ վայրերու մէջ: Խուժանը, ինչպէս նաեւ կանոնաւոր զօրքը կը յարձակէր հայ գիւղերու վրայ, կը հալածէր, կը ջարդէր եւ կը թալանէր, կ'այրէր: Յաճախ սակայն կը պարտուէր թշնամին Զէյթունէն հասած խումբերէն եւ կ'ենթարկուէր նոյն վիճակին: Հայն ալ կը փոխադարձէր, ջարդելով, հալածելով եւ այրելով, աւարելով թուրք գիւղացին եւ նոր տունն ու ունեցածը: Զէյթունի հարաւը, 7 ժամ հեռու Թէլէ-մէլէք (Թէլ էլ մէլէք - Թագաւորի բլուր) հայ փոքր գիւղը պաշարուած էր, 200 նէտիրլիցի եւ քիւրթիւլցի թուրքերով, սկսած 31 Հոկտեմբերին: Թէլէմէլէքի փոքրաթիւ հայութիւնը քաջարար կը դիմադրէր: Շաբաթ մը յետոյ, 10 Նոյմ.-ին կացութիւնը կը ծանրանայ, որովհետեւ թշնամի նոր ոյժեր կու գան կը միանան նախկիններուն: 30 հոգինոց խումբ մը Զէյթունէն Թէլէմէլէքի հայերուն օգնութեան կը փութայ, իսկ դրացի հայ գիւղերէն 200 հոգի Արեգինի կաշի Բէհեայի եւ Շատալախեան հաճի Մարտիրոս՝ Մովսէս գիւղացեալ գլխաւորութիւններով կը հասնին, կը միանան Զէյթունի փոքր խումբին, կը ցրուեն խուժանը, կ'երթան, կ'այրեն Նէտիրլի եւ Բիւթիւլ թուրք գիւղերը, Նոյմ. 17-ին կը գրաւեն Բէօշլուկէ թուրք գիւղը, ուր կեդրոնացած էին թրքական ոյժերը: Իրենց նպատակն էր գրաւել նաեւ այդ մօտերը գտնուող Գալիլի թուրք գիւղը եւ

յառաջանալ դէպի Ենիճէ-Գալէ (Նահիէն) աւանը, ուր վտանգուած էին հայերը, ինչպէս նաեւ լատին վանքերու հայրերը, որոնք մարդ զրկած էին Զէյթուն եւ օգնութիւն խնդրած: Օր մը առաջ սակայն, Նոյմ. 18-ին, հոն հասած Մարաշէն թուրք զնդապետ Մազհար Պէյ, երկու վաշտ զինուորներով բանակ դրած էր Գալիլիի եւ մօտակայ Մուճուզ Տէրէսի (Շուղր անապատ վանք) հայ գիւղի միջեւ, ուր կը գտնուէր լատիններու գլխաւորը՝ Հայր Սալվատոր Լիլի: Լատինները մերձակայ երկու հայ գիւղերուն՝ Տուն-Գալէի եւ Ենիճէ-Գալէի մէջ ունէին նաեւ երկու վանքեր: Ենիճէ-Գալէի վանքին վանահայրը՝ Էմմանուէլ Կարսիա, վտանգը կանխատեսելով, զօրք խնդրած էր Մարաշի կառավարութենէն, զիրենք պաշտպանելու համար թուրք խուժանին դէմ, սակայն մնացած էր անպատասխան: Իսկ Հայր Սալվատոր դիմած էր Գալիլիի թուրք գիւղացեալին որ վճարումով պաշտպանէ զիրենք հաւանական յարձակումներու դէմ: Ցեղապետները սակայն կ'ատէին այդ կրօնաւորները, որոնք արգելք կ'ըլլային իրենց սանձարձակ կեղծումներուն, բռնութեանց եւ բռնարարումներուն: Կառավարութիւնն ալ չէր ախորժեր անոնցմէ եւ միշտ կասկածով եւ վերապահութեամբ կը վերաբերուէր անոնց հետ, եւրոպացիներու ոտնձգութեան նախանշաններն էին անոնք թուրքին համար:

Մազհար Պէյ, Նոյմ. 18-ին, իր բանակէն ջոկատ մը զինուոր առած, կը ներկայանայ Հայր Սալվատորի վանքը, մինչդեռ իր զօրքերը կը պաշարեն գիւղը, որ 30 տունէ կը բաղկանար: Վանահայրը կը խնդրէ որ իր ամբողջ ունեցածը առնեն, միայն թէ իր կեանքին խնայեն: Սակայն անօգուտ: Զինուորները կը յարձակին կրօնաւորին վրայ եւ կը վիրաւորեն զայն: Մինչ գիւղը պաշարող զօրքերը, ջարդի փողը լսելուն, գրոհ կու տան գիւղին վրայ եւ կը սկսին ջարդել հայ գիւղացիները: Միայն քանի մը հոգի կը փախչին, կ'ազատին եւ հասնելով Ենիճէ-Գալէ, միւս վանահայրեր՝ Հայր Թրիկոյին եւ Հայր Կարսիային կը պատմեն թէ՝ իրենց կրօնապետը սպաննուած է եւ միեւնոյն վտանգը կը սպառնայ նաեւ իրենց: Հայր Սալվատոր թէ եւ վիրաւորուած էր, սակայն տակաւին ողջ էր, երբ իր մասին միւս հայրերուն՝ անոր սպաննուած ըլլալուն գուժը կը բերէին գիւղէն փախողները: Սակայն շատ չանցաւ, եւ ահա վիրաւոր Հայր Սալվատոր մի քանի օր յետոյ Մարաշ տարուած ատեն ճամբան կը սպաննուի, սոսկալի տանջանքներէ ետք: Հայր Թրիկօ եւ Կարսիա, գիւղացիներուն հետ կ'ապաստանին ձորի մը մէջ, թուրք խուժանէն պաշարուած: Լուրը կը հասնի Գալիլիի վրայ քաղաքի արեւմտեան խումբին, որ իր ճամբան փոխելով կ'ուղղուի դէպի Ենիճէ-Գալէ: Նախ եւ առաջ կը հասնին այնտեղ 22 զէյթունցիներ, որոնք անմի-

ջապէս կը ցրուեն խուժանք: Մագհար պէյ եւս իր վաշտերով կը հասնի Ենիճէ-Գալէ, Անտրուքնէն վերադարձող զէյթունցիներ եւ ահա իրենց խումբերով, Բարթուղիմէոս վարդապետին հետ կը քայեն եւ կու գան Ենիճէ-Գալէ: Ու ահա կոհուր կը սկսի:

Հայ խումբերը զէյթունցիներ, արեգինցիներ, Փռնուզցիներ, Անտրուքնի յաղթելէ, բանտարկուածները ազատելէ յետոյ, քաղաքը կրակի տալով կը վերադառնային Ֆռնուզ: Բարթուղիմէոս Հայր, Պունտուփ գիւղին մէջ նամակ մը կը ստանայ Ենիճէ-Գալէի լատինաց Մանուէլ-Կարսիա վարդապետին կողմէ, հայերէն գրուած օգնութեան կոչ մը Ան այդ գրութիւնով կ'իմացնէր նաեւ Հայր Սալվատորի եւ ուրիշ 12 անձերու ողջ ողջ ալրուած ըլլալին եւ վանքին աւարի տրուած ըլլալը: Հակառակ պարագային կ'ըսէ Հայր Կարսիա, իրենց ալ սպաննուիլը անխուսափելի է: Բարթուղիմէոս վարդապետ նամակը կարդալուն պէս քովը գտնուողներէն միայն 200 հոգի կը զատէ, մնացածները իրենց յոգնութեան պատճառով հոն թողլով, ճամբայ կ'ելլէ դէպի Ենիճէ-Գալէ, որ իր ծննդավայրն էր, իսկ Ջէյթունէն Շամֆէշիչեան Փանոսի առաջնորդութեամբ 100 հոգի եւս օգնութեան կը փութայ, ասոնց մէջն էր նաեւ Հրաչեայ: Հայերու ուժը կը հասնի 300-ի: Անոնք կը հասնին Ենիճէ-Գալէ եւ կը գիշերեն վանքու թէ գիւղը եւ թէ վանքը, մարդ մարդասանք չէր մնացած, ամայացած էին, ողջ մնացողները փախած եւ պահուելու էին ձորի մը մէջ: Այն տեղ պիտի մորթուէին ոչխարներու պէս, խուժանին կողմէ, եթէ պատահաբար հոն հասնող 20 զէյթունցիներ փախուստի մատնած չըլլային խուժանը: Թուրք զօրքն ալ գիշերը, ինչպէս քիչ առաջ յիշեցինք, Մուհուզ-Տէրէի լատինաց վանքը կը գտնուէր: Այդ երկու վանքերու իրարմէ ունեցած հեռաւորութիւնը 2 ժամ էր եւ իրենց մէջտեղը կը գտնուէր բլուր մը: Հետեւեալ առտուն հայ խումբերը կը բարձրանային բլուրին մէկ զառթափէն, թուրքերուն վրայ յարձակելու համար, մինչ թուրք զօրքը միւս կողմէն կը յառաջանար իր արշաւանքը շարունակելու համար չրջակայ ուրիշ հայ գիւղերու վրայ: Քառորդ ժամ հեռաւորութեան վրայ իրարու կը հանդիպին թշնամի երկու ուժերը, ու կոհուր կը սկսի սաստիկ կատաղութեամբ: Թէպէտեւ թուրքերուն դիրքը աւելի նպաստաւոր էր, սակայն զէյթունցիք եւ Փռնուզցիք էին որ յաղթական կ'ելլեն, առանց կորուստի, նոյնիսկ առանց վիրաւոր մ'ունենալու: Կոհուր կը տեւէ 8 ժամ, թշնամին կը թողու աշտեղ 41 դիակ, 10 վիրաւոր եւ կը փախչի: Մնացական Սէմէրճեան, իր գիրքին մէջ, որմէ կը քաղենք այս տողերը, կ'ըսէ թէ՝ «Եթէ զէյթունցիք բաւականաչափ զէնք եւ ռազմամթերք ունեցած ըլլային այս կոհուր մէջ, յաջող կերպով

կրնային մինչեւ Մարաշ հասնիլ, նոյն պայմաններով նաեւ Անտրուքնը զարնելէն յետոյ Ղարս-պազարը եւս առնելով հասնիլ Սիս: Սակայն, զէնքը եւ ռազմամթերքը կը պակսի, եւ ոչ Մարաշը, ոչ ալ Հաճընը չէին շարժեր իրենց տեղէն: Կոհուր ընթացքին, խումբ մը թշնամիներ լատինաց վանքին գոյքերը կողապտած, ձիերով կը փախչէին: Ջէյթունցիք կը հասնին անոնց ետեւէն, աւարը ետ առնելով, անոնցմէ երեք թուրքեր կը բերեն եւ վանքին դրան առջեւ կը մորթեն: Այս կոհուր, որպէս կողոպուտ 8 ձիեր կ'անցնին հայերու ձեռքը: Կոհուր կը վերջանայ, ձորին մէջ ապաստանած հայերը, եւ լատին վարդապետները հետերին առած ողջ կը հասցնեն Ֆռնուզ: Հայերուն մեկնելէն յետոյ, թշնամին կ'այլի լատիններուն վանքը, հայոց եկեղեցին եւ գիւղը: Հայր Թրիկօ եւ Հայր Կարսիա օր մը յետոյ, իրենց դպրոցական պարագաներով կու գան Ջէյթուն եւ կը տեղաւորուին հայ կաթողիկոսներու եկեղեցիին մէջ: (Ենիճէ Գալէի կոհուր 21 նոյեմբերին):

Կոհուր Կապանի շուրջ:— Ինչպէս բաւական առաջ գրեցինք Կապանի մասին, կարեւոր գիւղ մըն էր Կապան, Ջէյթունէն 15 ժամ հարաւ արեւմուտք, Ֆռնուզի եւ Անտրուքնի միջեւ 400 տուն բնակչութեամբ, որուն մեծամասնութիւնը հայ էր: Մուսթ ձորի ժողովէն յետոյ զինեալ խումբ մը ղրկուած էր Կապան: Այդ խումբին մէջն էր նաեւ Աղասիի ընկերներէն մէկը՝ Մլեհ: Ասոնց գործը պիտի ըլլար վերջերը Կապան հասած քանի մը ռուսականները, որոնք հայերու հանդէպ թշնամական ընթացք մը ցոյց տուած էին, Կապանէն վրանտել: Իսկ 13 Նոյմ.—ին Ջէյթունէն կարեւոր խումբ մը եկած եւ հաւաքած էր Կապանի թուրքերուն զէնքերը, որոնք համակերպած եւ զինաթափ եղած էին առանց դիմադրութեան, փափաքելով նոյնիսկ քրիստոնեայ դառնալ: Իսկ ցեղապետներէն Տուրտու Պէյ եւ Մուրթազա Աղա եւ ուրիշ մի քանիներ փախած էին եւ ինչպէս որ տեսանք շաբաթ մը յետոյ սպաննուեցան Անտրուքնի մէջ:

Ըստ Կիլիկեցիի «Մարաշ կամ Գերմանիկ» գրքին սակայն, Կապանի 300 տնուոր հայերու եւ 100 տնուոր թուրքերու միջեւ նախապէս համաձայնութիւն գոյացած էր եղած, որ զէյթունցիներ Կապան արշաւելուն հայեր պիտի պաշտպանեն թուրքերը, իսկ թուրք բանակ եւ խուժան գալուն ալ թուրքեր պիտի պաշտպանեն Կապանի հայերը: Սակայն այդ համաձայնութիւնը չի յարգուիր: Նոյմ. 18-ին 6000 զօրք կը հասնի այդ կողմերը, Քէլ Հասան Փաշայի որդի Ալի Պէկի հրամանատարութեամբ: Այդ մեծ բանակը կու գար Ատանայէն եւ իր վրանները կը լարէր Կապանի մօտ՝ Սիսնէ թուրք գիւղին եզերքը: Կապանի թուրքերը կը դրժեն իրենց համերաշխութեան խոստումը եւ Ալի Պէկի բանակին կ'իմացնեն թէ յարմար առնեն է Կապանը գրա-

ւելու, որովհետեւ գէյթունցի խումբեր գրադած էին Անտրոնի եւ Ենիճէ-Գալէի կոիւներով: Այի պէկ կը պաշարէ Կապանը եւ կը հրամայէ որ հայեր յանձնուին: Գիւղացիներ, որոնց մէջն է Ապահ, 14 զինուած գէյթունցիներով եւ Տուրտու անուն կապանցի օրիորդ մը, նմանապէս զինուած: Հայեր չեն յանձնուիր, Ապահ լուր կը ղրկէ Ֆոնուզ Ենիճէ-Գալէ եւ Ջէյթուն եւ օգնութիւն կը խնդրէ, մինչդեռ թուրք զօրքը մտած է արդէն: Կապանի հայ թաղերը, անդէն հայեր կը փախչէին խուճապահար: Ապահի փոքրիկ խումբը կիրճի մը մէջ սեղմուած, 4 ժամ կը դիմադրէ, ժամանակ տալու համար փախստականներուն իրենց կեանքն ազատելու: Թուրքերը տասնեակներով կորուստ կու տան եւ չկրնալով անցնիլ կիրճը, անոր շրջանը կ'ընեն լերան ետեւէն, բայց գէյթունցի խումբը գաղտնի կածաններէ փախչելով կ'ազատի: Թշնամին ներս մտնելով կը ջարդէ ծեր, կին, երեխայ, որոնք չէին կրցած փախչիլ, կը կողոպտեն եւ գիւղը կ'այրեն:

Կապանի այդ դէպքերու ընթացքին, գիւղին ճամբուն վրայ կը գտնուէր արդէն Եօթանասուն ռազմիկներէ բաղկացած գէյթունցիներու խումբ մը, որոնք մեծ մասով Ղարալարի թաղէն էին, Թէլէ-Մելիքի հայութեան օգնութեան գացողներ, եւ տեսնելով որ Թէլէ-Մելիքի հայերը Ֆոնուզ բերուա՝ էին, իրենք ալ ետ կը դառնային, բայց Թէլէ-Մելիք գիւղը թողուած երկու հայ պահակներէ կ'իմանան թէ թուրք զօրքերը Պոլնատուխ գիւղի վրայ յարձակել են, Կապանի մօտ կը շարունակեն իրենց ճամբան դէպի Պոլնատուխ: Հոն ալ ամայացած էր, հայերը հեռացել են եւ գիւղը թուրք զինուորներու ձեռքն է անցած: Ջէյթունցիներու այս Եօթանասուն հոգինոց խումբը, լաւ կերպով զինուած, մարթինի հրացաններով կատաղի կռիւ մը կը մղէ թուրք զօրքերուն դէմ, որը կը տեւէ մինչեւ կէս օր: Թուրքերը կը ստիպուին քաշուիլ, գէյթունցիք լուր կը ղրկեն Պոլնատուխի հայերուն որ իրենց տունները վերադառնան, սակայն անոնք չվստահելով այդ ժամանակաւոր յաղթութեան չեն ուզեր վերադառնալ: Մինչ այդ խումբը լուր կ'առնէ թէ՝ Կապան գրաւուած է արդէն եւ մասամբ ջարդուած եւ թէ այդ շրջանի մէջ գործող զօրքին թիւը շատ ստուար է, անօգուտ կը տեսնեն փոքր թիւով ուժով մը կռիւ բռնուիլ, կը ժողովեն ինչ որ թողուցած էին Պոլնատուխի մէջ թուրք զօրքին քաշուելէն յետոյ, 40 բռն պանիր, ջորթան, իւղ, պղնձեղէն, աղ եւայլն:

Անկէ յետոյ Ջէյթունի մէջ կը կազմակերպեն ռազմիկներու փոքր վաշտ մը՝ 450 անձերէ, որոնց գլուխն անցած էին Ջէյթունի իշխանական տուններէն բազմաթիւ երիտասարդներ ինչպէս նաեւ օտարներէն՝ Ապահ եւ Հրաչեայ: Գունդը կը մեկնի 22 Նոյմ-ին դէպի Կա-

պան, երբ Կանչի կը հասնի 1200-ի կը բարձրանայ արդէն անոնց թիւը (Աղասի):

Կապանի թուրքերուն մատնութիւնը եւ Կապանի հայերուն ջարդը շատ ծանր տպաւորութիւն գործած էր գէյթունցիներուն վրայ, պէտք էր պատժել այդ ուխտադրութիւնը եւ փոխադարձաբար ջարդել զանոնք: Շամքէշիշեան Փանոսի հրամանատարութեամբ այս անգամ 1500 հոգիէ բաղկացած բանակով մը Դեկտ. 1-ին գէյթունցիք կը մտնեն Կապան, խորտակելու համար Այի պէկի բանակը (Սէմէրճեան): Սակայն թուրքերը նախատեսելով որ հայեր պիտի յարձակին, բանակը Միսնէ կը քաշեն: Ջէյթունցիք չեն ուզեր ձեռնուռնայն վերադառնալ, յառաջապահ գունդէն միայն 50-ի չափ անձեր կը յարձակին Կապանի թուրք գիւղերու վրայ, կը խորտակեն, կը քանդեն ամէն բան, աւարի կու տան գիւղը, կը ջարդեն 50-ի մօտ թուրքեր, գերի կը վարեն անոնց ընտանիքներն ու զաւակները, կիներ, աղջիկներ, աւելի քան 50 հոգի, որոնք սակայն, քիչ ժամանակ պահելէ ետքը անվնաս կ'արձակեն, որ իրենց տեղերը երթան:

Այս խառնաշփոթութեանց եւ կռիւներու ընթացքին, իրենց կեանքը ապահովելու համար Անտրոնի եւ Ֆոնուզի շրջակայքը գտնուած գիւղերու հայերը կ'ապաստանին Ֆոնուզ:

Կոկիսոնի դաշտէն կու գան՝ Կէօքսիւնի հայերը, Տէյրմէն Տէրէսիի, Կէօփուլնարի, Քիրէճի, Տաշուլգի հայութիւնը, ընդամէնը շուրջ 300 ընտանիք:

Կապանի դաշտէն կու գան Կապանի հայերը 300 տուն, Թավատուի, Անտրոնի կեդրոնը ողջ մնացածները, Շեպելիկի, Պոլնատուխի եւ Միսնէի հայերը 550 ընտանիքներ:

Յետոյ Ենիճէ-Գալէէն Ֆոնուզ կ'ապաստանին Ենիճէ-Գալէի ողջ մնացած հայերը, Զիւրիւք Գօզցիները, Մուճուզ-տէրէցիները եւ Տեքիլ-Թաշցիները:

Այս բոլորին գումարը կը հասնի 1080 ընտանիքի, որուն վրայ պէտք էր աւելցնել 300 տուն ֆոնուզցիները ու ահա 1340-ի կը բարձրանայ Ֆոնուզ ապաստանող ընտանիքներուն թիւը: Այստեղ, Գ. Տէօվլէթի Բ. հատորէն նոյնութեամբ մէջ կը բերենք Տ. Յակոբեանի իր «Յուշիկք Ջէյթունի» մէջ գրածը.

Տէր Յակոբեան հետեւեալ կերպով կը ներկայացնէ կացութիւնը. «Չորս թաղեցիները խորհրդակցելով, անխտհմութիւն կը համարեն սպասել որ թուրք կառավարութիւնը իր ուժերը հաւաքելով, զիրենք անխորտակելի շղթայով մը շրջապատէ, եւ կ'որոշեն նախադրձակ ըլլալ եւ կռուիլ Անտրոնի բանակին դէմ: 500-ի չափ կռուողներ Ջէյթունէն Ֆոնուզ հասնելով գիւղերը հոն կ'անցընեն եւ հետեւեալ

օրն իսկ երբ կը հասնին Չուգուր Հիսարի դաշտը, ֆոնուզցի հայերուն միանալով իրենց թիւը կը հասնի հազարի: Այնտեղ ժողով մը կ'ընեն, կ'որոշեն թէ՛ ինչպէս պիտի յարձակին բանակին վրայ: Չուգուր Հիսարի դաշտը չըջապատուած է մեծ լեռնաշղթայով մը, որուն կողին կը տարածուի Պուշտուխի դաշտը, միացած Կապանի դաշտին, հոն բանակած էին թուրք զօրագունները: Հայ կուուղները թէեւ 1000-ի կը հասնէին, սակայն կէսը անգէն, ոմանք ալ գէշ կերպով զինուած, գրեթէ զարդի համար էին: Խմբապետներն էին Կարապետ Տ. Յակոբեան, Աւագ Աղա Չագըրեան, Աւետիք Կէսիրանեան, Մարկանեան Հաճի եւ Բասիլոսեան Ասատուր Աղա: Տ. Յակոբեանի առաջարկով կ'որոշուի որ խումբին մէկ փոքր մասը յարձակի Կապան գիւղին վրայ, որպէսզի Կապանի թուրքերը բանակին օգնութեան դիմեն եւ բանակը կիսուած ատեն իրենց մեծ մասը որ այդ պահուն դարանի մտած կ'ըլլայ, յարձակի բանակին մնացած մասին վրայ ու գրաւեն բանակատեղին: Թէեւ որոշուած էր որ՝ Կապանի վրայ քալողները 100-է աւելի պիտի չըլլային, բայց երբ կը սկսին շարժիլ, հակառակը կը պատահի, բանակին վրայ յարձակելու պատրաստ հագիւ 100 պատերազմիկ կը բարձրանան լեռան գագաթը եւ կը տեսնեն բանակը որ իրենց ենթադրածէն տասնապատիկ աւելի հոծ բազմութենէ կը բաղկանայ: Միւսները ամբողջութեամբ կը քայն Կապանի վրայ եւ կը սկսին հրացանաձգութիւնները, իսկ բանակէն միայն 200-ի չափ զինուոր կու գայ Կապանի թուրքերուն օգնութեան: Որով մեր մնացած 100-ով բանակին վրայ երթալը եւ յարձակում փորձելը կատարեալ անխելութիւն եղած պիտի ըլլար: Օգնութեան գացած զօրքը, տակաւին Կապան չհասած, գէյթունցիք արդէն Կապանը հուրի եւ սուրի ճարակ ընելով, խոստմնազանց Կապանցի թուրքերը անխնայ ջարդեր եւ գիւղն ալ աւարի տուեր եւ այրեր էին եւ թուրքերուն ձեռքն ինկած 20-ի մօտ հայ աղջիկները եւ որբերը ազատելով հեռացեր էին (մինչդեռ Սէմէրճեան կը գրէ թէ սպաննուածներուն թիւը 50-ի կը հասնէր, նոյնչափ ալ գերի կ'իններն ու աղջիկները կային): Իսկ բանակին վրայ յարձակումի դիտաւորութեամբ, խումբերէն գատուող 100 հոգին, գիշերը լեռան մէկ խողովին մէջ անցընելով, առաւօտուն կ'ուղղուի դէպի Կապան, միանալու իրենց դուռդին, ճամբան զարմանքով կը հանդիպին իրենց ազգականներուն եւ բարեկամներուն, որոնք հեւ ի հեւ կը վագէին լեռներուն գլուխը, լսած ըլլալով թէ՛ բուն բանակին հետ կոխի բռնուած, պաշարուած եւ սպաննուած էին այդ սիրելիները:

Այստեղ մեր հայրենակիցը՝ Գ. Տէօվլէթ նկատել կու տայ հետեւեալը՝ «Այս արշաւանքին մէջ կը գտնուէին շատ մը դէմքեր Զէյթունի

ռազմական պարագլուխներէն, մանաւանդ Մարկանեան Հաճի: Մեծ նշանակութիւն ունէր նաեւ ներկայութիւնը Բասիլոսեան Ասատուր աղայի, որ երէց որդին էր Սուրէնեան Կարապետ Աղային: Այս իրողութիւնը ցոյց կու տայ թէ՛ պատկառելի ծերունին հաշտուած էր վերջապէս յեղափոխութեան, կուսելու գաղափարին հետ:

Զէյթունցիք սակայն, սխալ հաշուած էին Ալի Պէկի բանակին քանակը, խորհած էին որ՝ իրենց առջեւ պիտի գտնեն միայն քանի մը հազար զինուոր, որոնց վրայ կրնար յարձակիլ իրենց խումբը: Բայց Ալի Պէկի բանակին թիւը այդ միջոցին արդէն 10 հազար հոգիէն աւելի եղած ըլլալու էր: Չէր իրականացած նաեւ թուրք բանակը կիսելու իրենց գաղափարը, որուն թերեւս չէին հաւատացած: Այս պարագաներուն տակ անկարելի էր 500 հոգիով այդչափ խոշոր ուժի մը վրայ նետուիլ, բաց դաշտին մէջ, Զէյթունէն հեռու վայր մը (Գ. Տէօվլէթ):

Վերոյիշեալ երկու երկար միջանկեալներէն յետոյ կը վերադառնանք մեր պատմութեան շարունակութեան:—

Ուրեմն 1340 տնուոր բազմութիւն մը կը խճողուի Ֆոնուզի մէջ: Այսքան մեծ բազմութեան մը բռնան տակ ճնշուած Ֆոնուզ, կարելի զոհողութիւնը կ'ընէ ապաստանեալներուն ապահովութեան եւ հանգստութեան համար: Ս. Կարապետի վանքին հետ նաեւ մասնաւորներու տուններն ալ անոնց տրամադրութեան տակ կը դրուին: Սակայն թուրքը հանգիստ չի թողուր զանոնք:

Ֆոնուզի կռիւները.— Կապանի արշաւանքէն 11 օր յետոյ 28 Նոյ-ին իսկ, ըստ Սէմէրճեանի Դեկտ. 12-ին, ֆոնուզցիք 250 հոգինոց խումբ մը կը կազմեն եւ կը մեկնին Նէսիրլիի կողմերը, Մարաշի մօտ, կոխը շարունակելու համար թուրքերուն դէմ: Սակայն օր մը յետոյ լուր կը հասնի թէ՛ Ալի Պէկի բանակը Սիսնէէն ճամբայ ելած է, հասած եւ գրաւած է արդէն Կանչին եւ կը քայլէ Ֆոնուզի վրայ: Ուրիշ զօրագունը մըն ալ հարաւէն կը բարձրանար դէպի Ֆոնուզ, բաղկացած խումբանէ, պաշարօգուղներէ եւ կանոնաւոր զօրքերէ: Լուրին վրայ, անմիջապէս Ֆոնուզ կը դառնայ այդ 250-նոց ֆոնուզցիներու խումբը եւ Զէյթունէն ալ օգնութիւն կը սպասուի: Ապա 45 մարտիկներով կը մեկնի Ֆոնուզի եւ Կապանի միջեւ գտնուած Ղարխ կոչուած կիրճին ուղղութեամբ, իսկ Հրաչեայի խումբը մեկնած էր դէպի Աղալը գիւղի բլուրները կուսելու համար հարաւէն եկող թշնամիին դէմ: Նիտերլիի ուղղութեամբ գացած ֆոնուզցիներու խումբը ետ դառնալով եկած միացած էր արդէն իրենց եւ իրիկուան մօտ կոխը սկսած էր թուրք յառաջապահներուն

հետ:

Ըստ Տ. Յակոբեանի, Շովրոյեան Ղազարոս Իշխան համաձայն չլրացրելով, որ Զէյթուն իր ամբողջ ուժովը օգնութեան երթայ Ֆոնուզի, կը հրահանգէ Տ. Յակոբեանի որ իր թաղէն, այսինքն Ս. Սարգիսի-Ղարդալարի շրջանէն մաս մը տղայներով Ֆոնուզի օգնութեան երթայ ինքը՝ Տ. Յակոբեան: Որովհետեւ Հազոր Իշխան խոհեմութիւն չի նկատեր որ՝ Զէյթունի բոլոր կռուող ուժերը հեռանան Զէյթունէն: Թուրքերուն միտքն էր Ֆոնուզի վրայ յարձակելով տկարացնել Զէյթունի ուժը, անոր կարեւոր մէկ մասը Ֆոնուզի օգնութեան փութալով: Մինչ անդին Մարաշի կողմերը ծովածաւալ բանակ մը կը պատրաստուէր: Թշնամին զօրք կը կեդրոնացնէր Զէյթունի հարաւային սահմաններուն վրայ բացի Ալի Պէկի 30000-էն: Կու գային Հալէպէն, Դամասկոսէն, Նոյնիսկ Եմէնէն, Մէքքէն արաբ եւ ֆելլահներու բազմութիւններ: Ախրատաղի բանակին վրայ կ'աւելնային Կիւրինէն, Ալպիստանէն եկող քիւրտեր եւ թուրքեր: Իսկ Անտրոքնի կողմը կը կեդրոնանային Պոլսէն, Իզմիրէն, Գոնիայէն, Կեսարիայէն, Սեբաստիայէն, Ատանայէն մարախներու պէս թափող թուրքեր, եւ Ուզուն-Եալլայէն վար գտնուող չէքէզներ, չէչեններ, քիւրտեր: Ասոնց բոլորին ի վերջոյ թիրախը պիտի ըլլար Զէյթունը: Ուրեմն ծերունի Շովրոյեանի տեսակէտը շատ չիտակ էր: Եւ Տ. Յակոբեան, Ս. Սարգիսի թաղէն միայն 40 տղաներով եւ իր մեծ եղբոր՝ Յովհաննէսին հետ Ֆոնուզի օգնութեան կը փութայ: Զէյթունէն հազիւ թէ 3 ժամ հեռացած եւ հասած էին Աւագկալի կոնակը՝ Ղուզախ լեռան գագաթը, Ֆոնուզի վանքին ծուխը կ'երեւայ ահա, եւ կը լսուին հրացաններուն եւ թնդանօթներուն ձայները: Ֆոնուզ պաշարուած էր եւ կատաղի կերպով կը դիմադրէր իր 1500 տղաներով: Զէյթունի այդ փոքրիկ խումբը կը հասնի, երկու անգամ կը փորձէ գրոհ տալով ճեղքել թշնամիին պաշարման շղթան եւ մտնել Ֆոնուզ, սակայն երկու անգամին ալ ետ կը մղուի, բաղիւնելով թշնամիին անհատնում շղթաներուն: Օրը կ'իրիկնանայ, փոքրիկ խումբը հետզհետէ կը մեծնայ, հասնող զիւղացիներով, որոնց մէջ էին նաեւ զինուած քահանաներ եւ Ֆոնուզի նախորդ միւսիւրը՝ Պըլտրեան Գէորգ Էֆէնտին: Գիշերը ձորի մը մէջ կ'անցընեն կրակ վառելով, հետեւեալ առաւօտ պաշարման գիծը կրկին կտրել փորձելու նպատակով: Մինչ այդ, երբ տղաքը կը խորհրդակցէին գիշերուան մէջ, ահա արշալոյսին ծագելուն, Զէյթունէն կը հասնի Ղալպէսեան Գէորգ անուն երիտասարդը քրտնաթաթախ, պատգամ կը բերէր ան Ս. Սարգիս թաղի Անդրէասեան Աստուածատուր Իշխանէն: Իշխանին քին աշտանակած էր ան գիշերը եւ հասած էր այդ տեղ: Այդ պատգամով կը հրամայուէր խումբին,

որ իսկոյն Զէյթուն դառնայ, Մարաշի ահեղ բանակը Զէյթունի սահմաններուն հասած է եւ Զէյթուն պէտք ունի յաւելեալ ուժերու:

Հապա Ֆոնուզի քաջերը, գեղանի կոյսերն ու հարսերը, կը խորհրդածէ մեր հայրենակիցը Գ. Տէօվլէթ, այդ խումբին կողմէ՝ պաշարուած թշնամիի ուժերով ինչ պիտի ըլլան, ո՞վ օգնութեան պիտի հասնի անոնց եւ իրենց անմեղ մանուկներուն: Խումբը սակայն համակերպելով պատգամին, կը հարկադրուի վերադառնալ Զէյթուն:

Սակայն պաշարուած Ֆոնուզցիները, թէեւ 1500 կռուողներով, սակայն անոնց մէջ միայն 50 հոգիներ էին որ մարթինի հրացանով կը կռուէին, մնացածներուն զէնքերն էին չախմախը թիւֆէնքներ: Ու 3 օր անընդհատ կռուելով, արիւնահեղ եւ սոսկալի պատերազմ մը կը մղեն, բազմաթիւ թուրքեր, պաշրպօզուզ եւ կանոնաւոր բանակայիններ կ'իյնան թշնամիէն, դաշտ ու հովիտ կը ծածկուին թուրքերու դիակներով: Հայերու ռազմամթերքը կը սպառի, կը պարտաւորուին լեռները քաշուիլ, ոմանք ալ Զէյթուն կ'անցնին: Զէյթուն կ'ապաստանին նաեւ Ֆոնուզցիներէն գատ նախապէս Ֆոնուզ ապաստանողներ, կապանցի, պունտուիցի, չիպելիցի եւ ուրիշ զիւղացիներ: Լեռներն ապաստանող Ֆոնուզցիներէն խումբ մը վար իջնելով, 22 եւ 27 Դեկտ.-ին կը կողոպտեն Սէկի մօտ Աղալը ըսուած տեղը Ատանայէն Ալի Պէկի ղրկուած ուսեստեղէնները: 200 ջորիներու կաբաւան մըն էր անցնողը, որուն 80-ը սակայն, միայն կը յաջողին զրաւել եւ կողոպտել, 4 հոգի ըլլալով միայն այդ յանդուգն գործին ձեռնարկողները: Լեռները քաշուածները ատեն մը ապրեցան: Ֆրոնուզցիք թէեւ կրնային աւելի երկար ատեն դիմադրել թշնամիին, սակայն 3 օր կռիւէ մը յետոյ, իրենց նահանջելուն գլխաւոր մէկ պատճառն ալ, բացի սնունդի եւ ռազմամթերքի չգոյութենէն, կարեւոր մաս մը կռուողներուն Ֆոնուզէն բացակայ եղած ըլլալն էր, անոնք զացած էին նէտիրիցիներուն հետ կռուելու: Կոտորուած զիւղացիներու մասին հետեւեալ կերպով կը գրէ Մ. Սէմէրճեան «Դէպի Զէյթուն տանող ճամբան, որ սկիզբները բաց էր մնացած, փախուստի ժամանակ թուրքերը այն կողմն ալ փակելով կը սկսին ետ մնացող ժողովուրդը, մեծ մասով ծերեր, տղաներ, կիներ ջարդել անխնայ կերպով: Էդու-Ձոր կոչուած տեղը 600 հայեր կը ջարդուին, որոնք բոլորովին անգէն էին եւ զուրկ ինքնապաշտպանութեան ունէ միջոցէ: 800 հոգի ալ գերի կը բռնեն: Ասոնց մէջ էին Կապանի Տ. Թորոս Քհնյ., Եահան Քէշիշեան, Պունտուխի Տ. Յովհաննէս Քահանան, Եմիճէ-Գալէի Թախանեան Տ. Կարապետ՝ Բարթուղիմէոս Վրդ.ի հօրեղբայրը եւ Տ. Գրիգոր Քահանաները, որոնք սպաննելէ յետոյ ծառերէ կը կախն, մի քանիներն ալ որոնց մէջ նաեւ Տ. Ղեւոնդ Քահանայ

Ճէնանեանը վանքին մօտը կը սպաննեն եւ վանքին ետեւի կողմը պատին վրայ խաչաձեւ կը գամեն ի նախատանս քրիստոնէութեան, իսկ շատ մը կիներ եւ աղջիկներ, չուզելով թուրքերու ձեռքը իյնալ, ինքզինքնին բարձր ժայռերէն վար նետելով անձնասպան կ'ըլլան: Գերիներէ զատ թուրքին ձեռքը կ'անցնին բազմաթիւ կենդանիներ, այծ, ոչխար, կով եւ բեռ կրող անասուններ:

Ֆոնուզի հայոց այս նահանջի ատեն երկրորդ անգամ ըլլալով ստոյգ մահէ մը կ'ազատի Բարթուղիմէոս Վարդապետ իր ընկերակից Ապահի եւ Նշանի հետ: Վարդապետն ալ անմիաս կը հասնի ի վերջոյ Զէյթուն: Զէին կրցած անոնք վերստին Ֆոնուզ մտնել եւ բարձրանալ լեռները միանալու համար հոն քաշուողներուն եւ իրենց ձիերը քշելով թուրք զօրքերու կարկտանման տեղացող գնդակներուն մէջէն, յաջողած էին անմիաս հեռանալ եւ Զէյթուն հասնիլ: Մարտիրոս Շատալախեան, գիւղապետը Մովսէս գիւղի, թէեւ կրցած էր իր ձիովը ճեղքել անցնիլ թուրք բանակը, բայց վիրաւորուած էր ծանրօրէն եւ երկու օր յետոյ մեռած: Երկրորդ գիւղացի հերոսն է որ կը կորսնցնէր Զէյթուն ճէլլատէն յետոյ: Հրաչեայ, քանի մը հազար գիւղացիներով կը մնայ Ֆոնուզի լեռները:

Ֆոնուզի կոխէն յետոյ, հոն ապաստանող չրջակայից հայ գիւղացիները որոնց մասին քիչ առաջ խօսած էինք, մաս մը Ֆոնուզցիներու հետ Զէյթուն կը հասնին: Կ'ամայանայ Ֆոնուզ եւ Զէյթուն կը լեցուին 1340 ընտանիքներէ զատ, Աւագկայի (Մխալ) 150 տնուոր հայութիւնը, իր 14 մանր գիւղերու բնակիչներով, Ֆէնկը (Խէպի), Արեգինը իր 300 ընտանիքներով, 44 մանր գիւղերու հայերը, Ղօզնուղազը, Հաճի Տէրէն եւ այս բոլորին վրայ ալ եթէ հաշուենք Զէյթունի 1500 ընտանիքները կ'ունենանք 3250 ընտանիք խճողուած Զէյթունի մէջ, որոնց 1750 ընտանիքները դուրսէն ապաստանածներ էին: Այսչափ բազմութիւն մը պիտի հոգար եւ սնուցանէր Զէյթուն, իսկ զօնախն մէջ կային 800 գերիներ, սնունդը եւս Զէյթուն պիտի հոգար: Զէյթունցիք խորհուրդ տուին գերի գնդապետ Ըֆէթ Պէկի որ՝ Մարաշ գրէ այնտեղի գինուորական հրամանատարին եւ իրենց պաշարակէ: Գնդապետը նամակ մը կը գրէ Մարաշ, սակայն Մարաշի հրամանատարը կը վճռէ նամակաբերը գոչելով անոնց երեսին վերստին ցէք, դուք շատոնց մեռած էք կառավարութեան աչքին»:

ՉԷՅԹՈՒՆԻ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶԱՐ

Բէմզի Փաշայի բանակը— Այի Պէկի եւ Բէմզի Փաշայի բանակները, արեւմուտքէն եւ արեւելքէն գրեթէ միեւնոյն ժամանակ շարժած էին, սակայն Այի Պէկ երեք օր ուշ կը հասնէր Զէյթուն, Ֆոնուզի կոխներու եւ դիմադրութեան պատճառով, որովհետեւ անոնց ուժը խորտակելէ եւ Ֆոնուզը կրակի տալէ յետոյ ալ, տակաւին մէկ երկու օր ստիպուած էր փախտականները հետապնդել լեռներուն մէջ, իսկ Բէմզի Փաշայի բանակը Զահան գետը անցնելով, բանակած էին Զէյթունէն 5 ժամ հեռու, Վարդանյը բլուրին դիմացը: Կը մօտենար վճռական ժամը: Այդ օրերը, Զէյթունի ահարկու պատերազմներու օրերն էին: Սակայն որչափ մեծ էր թշնամիին նիւթական ուժը, նոյնչափ եւ աւելի մեծ էր հայերու բարոյական ուժը: Զէյթունցիներու համոզումով եւ շրջակայ թուրքերու հաստատումներով Զէյթունի վրայ շարժող երկու բանակներուն՝ այսինքն Այի Պէկի եւ Բէմզի Փաշայի զօրքերուն թիւը կը հասնէր 110000-ի, որուն 70000-ը անկանոն պաշարօգուգներէ կը բաղկանար, իսկ մնացած 40000-ը կանոնաւոր զօրքեր էին: Այս 110000-ին 25000 կը սպաննուին պատերազմի մէջ, կը մեռնին թանջքէն (տիգէնթէրի) համաճարակներէ, սաստիկ ցուրտէն եւ թշուառութենէն: Գալով Սէմէրճեան եւ Տ. Յակոբեանի իրենց գործերուն մէջ յիշած թապուր քիաթիպի Մուսթաֆա էֆ-ի մը յայտարարութեան, վերոյիշեալ 110000-ը իրականութիւն էր եւ ոչ մէկ չափազանցութիւն կար այդ թիւին մէջ: Սակայն դեղին տետրակը 50000 մը ցոյց կու տայ այդ թիւը եւ մենք կը տարուինք մտածելու թէ՛ կանոնաւոր զօրքին թիւին մասին է այդ ըսուածը, անիկա նկատի առած ըլլալու չէ անկանոն ուժերուն թիւը: Որովհետեւ վերել ցոյց տրուած 110000-ը չի հերքուիր, ընդհակառակը կը հաստատուի անգամ մը եւս: Ու նոյն դեղին տետրակը կորուստին թիւն ալ 13000 ցոյց կու տայ: Իտալական հիւպատոսը Հանրի Վիթթօ ալ, որ գինադարաբէն մէկ ամիս յետոյ Զէյթուն կու գայ 12000 կանոնաւոր զօրք կը գտնէ տակաւին Զէյթունի շուրջը 10 թնդանօթներով: Ինչ որ ալ ըսած, եւ որքան որ ալ ցոյց տուած ըլլան թշնամիին քանակը, իրականութիւն մը կայ որ չէ կարելի հերքել, այն է, թէ պատերազմի գործողութեան սկզբնական շրջանին բանակը շատ ստուար պէտք է եղած ըլլայ, նախ, որովհետեւ թուրքիա այդ պահուն արտաքին ճակատի վրայ ունէ պատերազմ չունէր եւ շատ դիւրին էր իրեն համար իր բոլոր ուժը շարժման դնել Զէյթունի վրայ, յի-

տոյ՝ Զէյթունի անունը լսող չըջակայ թուրք քաղաքներն եւ գիւղերը դարերէ ի վեր հաշիւ ունէին մաքրելիք Զէյթունի հետ, եւ կառավարութեան կողմէն, գէնքին եւ պաշարին ալ պէտք չունէին, ինքնաբերաբար եւ կամաւոր կերպով հասնելու համար բանակներուն: Թալանելու, աւարելու, այրելու եւ առեւանգելու եւ ջարդելու ախորժակներով փութացած պէտք է ըլլային անոնք դէպի Զէյթուն, որուն պարտութեան մասին կասկած չունէին: Բայց երբ չեն իրականանար իրենց յոյսերը, ցուրտն ու թշուառութիւնը թէեւ կը սպառնար իրենց կեանքին, ինչպէս որ եկած էին, այնպէս անմիջապէս կը հեռանան, առանց որեւէ հրամանի կամ հրահանգի ենթարկուած ըլլալու: Թուրքը երեք բանակաւորի ունէր Զէյթունի արեւելեան կողմը՝ Մուսթաֆա Րէմզի Փաշայի ենթակայ, մէկը Բերթէզի գիւղերուն մէջ, իսկ երկուքը Ղարսի ըստեւ կիրճը, ուր, Ալպիստանի գօրքերն ու քիւրտերը, աւաւները կը համախմբուէին գօրքերու կողքին: Ալի Պէկի հրամանատարութեան տակ էին, արեւմտեան կողմը՝ Անտրոքնի դաշտին մէջ, եւ միւսը Կոկիսոնի մօտերը գտնուող ուժերը:

Զէյթունցիին պիտի մղէր մահու եւ կենաց կռիւը, արհաւիրքի օրեր կ'ապրէին: Բարոյական ուժը կու գար պակասը լրացնել իրենց նիւթական պատրաստութեան պակասին գէնքի, պաշարի եւ ռազմամթերքի երիտասարդութիւն, յեղափոխականներ, Աւագանին, քահանաները, բոլորը մէկ սիրտ, մէկ հոգի, ժամէ ժամ կը սպասէին անխուսափելիին: Բազմական կարելի եւ անհրաժեշտ կարգադրութիւնները կ'ըլլան: Եւ ահա, Դեկտ. 12-24-ին Շաբաթ օր, թշնամի բանակէն ձիաւորներու քանի մը յանդուգներ սպայի մը հրամանատարութեան տակ Եգիւլէր կոչուած հայ գիւղի վրայ կը սկսի քայլել, սակայն գիւղը գտնուող պօզապիրցի եւ դարդալարցի՝ Զէյթունի երկու թաղեցիներու կողմէ գօրաւոր դիմադրութեան մը հանդիպելով, կ'ընկրկի իսկ թշնամին այս անգամ 5000 հետեւակ զինուորներով եւ գրուփի 4 թնդանօթներով յառաջանալով Ս. Փրկչի վանքին կողմը, կը սկսի ռմբակոծել վանքը: Յարձակումը կը կրկնէ թշնամին վանքին վրայ, սակայն երկու անգամին ալ ետ կը մղուի ան, հոն ամրացած հայ աշուղներն սաստիկ դիմադրութիւնով: Սակայն իրիկուն է, երրորդ անգամն է ահա եւ թշնամին դարձեալ յանդուգն սպայի մը առաջնորդութեամբ կը յարձակի վանքին վրայ, բայց Զօլագեան Փանոսին մէկ գնդակով կ'իյնայ սպան եւ իր ետեւէն ալ երկու զինուորական ուրիշ աստիճանաւորներ: Բանակը կը քաշուի, սակայն ահա նոր երկու հազար մը, որ օգնութեան կը հասնի իրեն, նոր ուժի ներկայութենէն ոգեւորուած, աւելի կատաղութեամբ կը սկսին յարձակիլ վանքին վրայ: Ահաւոր կ'ըլլայ կռիւը, որու ընթացքին զէյթունցիք կը կռուին

հերոսական քաջութեամբ, տեղատարափի նման տեղացող գնդակներու մէջ, եւ կը յաջողին թշնամիին շրթան ճեղքելով, հասնիլ Մուրթատլար հայաբնակ գիւղը: Թշնամին 14 Դեկտ.-ին է, վերջապէս կը մտնէ Փրկչավանքը եւ կ'այրէ զայն, յուսալով յաջորդ օրն ալ քայլել Զէյթունի վրայ եւ գրաւելով զայն հրոյ ճարակ դարձնել: Իսկ զէյթունցիք կը սպասէին այդ օրուան 15 Դեկտ.-ին սկսուելիք մեծ պատերազմին: Զէյթունցի պահակներ միշտ լեռներու եւ անտառներու անշմարեկ տեղերէն կը լրտեսէին թշնամիին շարժումները, ուղղութիւնը, ինչպէս որ 9 Դեկտ.-ին իրենց դիտակներով քննած էին Վարդանանց բլուրներէն, ընդարձակ տարածութեան մը վրայ սփռուած հազարաւոր վրանները եւ տեղեկացուցած Զէյթուն, այս անգամ ալ Զահանի կողմը, Պէշէն թուրք գիւղին մօտ, որուն բնակիչները շատոնց փախած էին, հեռուէն կը նշմարեն հինգ ձիաւորներ, ճերմակ դրօշ բացած: Ասոնք Մուսթաֆա Րէմզի փաշայի կողմէն Զէյթուն կու գան, Մարաշցի հայեր են, տեղւոյն մեծամեծներէն: Կը յառաջանան առնոք, կը հասնին մեր ուժերուն, իրենց հետ կը բերէին Րէմզի Փաշային, անթուական եւ անստորագիր ազդարարութեան մէկ թուղթ: Այս տեղ գրուած էին փաշային հրամանները եւ սպանալիքները, հետեւեալ տողերով. —

Կայսերական կառավարութիւնը պիտի ներէ զէյթունցիներուն.

1. Եթէ իրեն յանձնեն յեղափոխականներն եւ ապստամբները.

2. Եթէ յանձնեն իրենց ունեցած գէնքերը.

3. Եթէ վերահաստատեն զօրանոցին մէջ թուրք զինուորները, որոնք զերի առնուած էին, վերադարձնեն նաեւ հոն, ինչ որ գրաւուած է՝ թնդանօթ, պաշար, ռազմամթերք եւայլն:

Հակառակ պարագային բանակը պիտի քայլէ Զէյթունի վրայ:

Այդ պատգամաւորներն էին Տ. Աստուածատուր Բհնյ. Թօրոյլեան (Թօրեան), Պետրոս Սալաթեան, Պետրոս Սէրայտարեան, Յարութիւն Մուրատեան, Յովսէփ Տիչէքէնեան եւ Կոստան Վարժապետեան: Ասոնք քանի մը օր կը բանտարկուին զէյթունցիներուն կողմէ եւ յետոյ առանց ոեւէ արդիւնքի կը զրկուին Մարաշ, որպէս կասկածելիներ, լրտեսներ: Ձեր զրկածները խաբերայ լրտեսներ են կ'ըսէ նամակը, եւ ո՛չ ձեզի ոչ ալ պատգամաւորներուն կարեւորութիւն չենք տար: Փաշան կատղած ինքն ալ կը բանտարկէ զանոնք ըսելով թէ՝ դուք գացիք եւ աւելի քաջալերեցիք զէյթունցիները:

Պատգամաւորները ահաբեկել ուզած էին զէյթունցիները, նկարագրելով Րէմզի Փաշային ահաւելի բանակը, որ պիտի քայլէ Զէյթունի վրայ, եթէ անոր հրամաններուն անսաստէին: Սակայն զէյթունցիներու խօսքն եղաւ «Ասուծու աստծը թուղ նա»: Աստուծոյ ըսածը թող

ըլլայ, իսկ այդ հայ պատգամաւորներուն նեղութիւն չտրուի կառավարութեան կողմէ: Նամակ մը կը դրկուի կառավարութեան 32 թուրք գերիներուն եւ նոյն պատգամաւորներուն հետ, ցոյց կը տրուի թէ՛ այդ ձեր դրկած մարդիկը եկած էին մեր ուժերը, մեր կացութիւնը լրտեսելու, եւ ասոր համար բանտարկած էինք եւ այժմ կը դարձնենք ձեզի: Սակայն փաշան, ինչպէս քիչ վերը ըսինք, դարձեալ զանոնք կը բանտարկէ, որ գործ մը չկրցան տեսնել եւ ընդհակառակն թերեւս ալ աւելի խրախուսած եղան գէյթունցիները:

Փրկչականքի կոխը:-- Մեր հանգուցեալ հայրենակիցը՝ Գ. Տէօփէթ հետեւեալ տողերով կը նկարագրէ Փրկչականքի կոխը իր «Սանտոխ» գիրքին Ա. հատորին մէջ, Սանտոխի կոխը անունով: «1886-ի Դեկտ. 14-ին, Մուսթաֆա-Րէֆի փաշա, իր վրանները կը վերցնէ Ջահան գետի եզերքէն: Պիւլպիւլեան փանոս անուն քաջ երիտասարդը, որ իր երկու ընկերներով լրտես նշանակուած էր թուրք զօրքերուն վրայ, լուրը Ձէյթուն կը հասցնէ կայծակի արագութեամբ, բանակը՝ կը շարժի... Ձէյթունցիք իրենց ուժերը հաւաքելով, խումբ խումբ կը մեկնին դէպի ռազմավայրը, այսինքն դէպի այն դիրքերը, ուր դիմադրութիւն պիտի փորձէին յառաջացող զօրքերուն:

Այդ դիրքերը իրերամերձ բարձունքներու վրայ կիսաշրջանակ մը կը ձեւացնէին, սկսած Ս. Փրկչի վանքէն, Ձէյթունէն երկու ժամ հեռու, անցնելով Աւագենց-Եղիտէր եւ Գալուստենց՝ այսինքն Մուրթաւար հայ գիւղերէն, Ագ-Տաղի սարերէն, Սանտոխ (սանդուխ) կոչուած լեռնամէջէն, որ կ'երկնայ մինչեւ Ձէյթունի արեւելեան ժայռերը, աւելի երկարելով էշէք Մէյտանի կոչուած բլուրներէն եւ հասնելով Սաղիր կոչուած գլխաւոր լեռնանցքը, որ լեռան կողմն վրայ աւազուած գորշ զառիթափ մը կը ներկայացնէ: Մէկ ու կէս ժամուան երկարութիւն մը ունի այդ կիսաշրջանակը իր առջեւը կը տարածուի բաւական ընդարձակութեամբ Ջերմուկի դաշտը, Ճըրմակօնը դըրը, որովհետեւ անոր արեւելեան ծայրը կը գտնուին ծծմբային երկու ջերմուկներ, մեծապէս յանձնարարուած բժշկներու կողմէ իրենց բուժիչ յատկութիւններուն համար: Մանաւանդ մեծը գեղեցիկ քառակուսի շէնք մըն էր, մարդահասակ խորութեամբ աւազանով մը, իսկ միւսը աւելի փոքր էր թէեւ եւ դաշտին գրեթէ ծայրը, ձորակի մը մէջ եւ առանց շինուածքի, սակայն աւելի տաք էր անոր ջուրը:

Այս ջերմուկները, դարերէ ի վեր գէյթունցիները գործածել էին որպէս բաղնիք եւ բուժավայր: Կը սիրէին հոն լողնալ, մաքրուիլ եւ անբիծ մարմնով եւ հոգիով ուխտի երթալ Ս. Փրկչականքը, վերոյիշեալ կիսաշրջանակին ծայրը: Բարձրանալ այնտեղ կատարելու համար իրենց կրօնական պարտականութիւնները տօնական օրերուն: Ջերմուկի

դաշտին հարաւը կը սկսին արդէն Ձէյթունի այգիներէն, Անիճորի, Տափի, Տափընճորի, Սասուլան ձորի եւ Շէհրճուկի այգիները: Այս տեղ Շէհրճուկի վայրը, ուրկէ հին աւերակներու հետքեր, քարեր կ'ելլեն, գիրերով անծանօթ արձանագրութիւններով, կը կարծուի թէ շատ հին քաղաք մը եղած է: Աւելի անդին կ'իյնայ Շէմպէկի բարձրութիւնը, իսկ ասոր հարաւը կը տարածուին այլեւս Արեգինի գիւղերը, արեւմուտքը Խէպի (Ֆէնկ) եւ Զօվորի այգիները եւ Խէպի հայ գիւղը: Վերի բարձունքներու թիկունքին, դէպի երկինք կը սլանայ հսկայ լեռնաշղթայ մը, ծանօթ՝ Աթլըխ, Մավրը, Անկուզօկ անուն ճիւղերով: Հեռուէն դիտողին կ'երեւայ Պէրդիկայի բարձրութիւնը: Աւելի հեռուն, Հիւսիսը կը բարձրանայ Պէրիսը իր յաւերժութեան փնապսակովը:

Կէս օրէն քիչ առաջ, թուրք բանակը կը տեսնուի Ջերմուկի դաշտին հարաւային ծայրը, Ախվախը կոչուած հողաբլուրներուն վրայ, քառակուսի խիտ առ խիտ շարքով եւ կը սկսի լարել իր վրանները: Ձէյթունցիք իրենց դիրքերէն անշարժ կը դիտէին, տեսնելու համար թէ ինչ ուղղութիւն պիտի բռնէ թշնամին, կը կարծուէր թէ՛ զօրքերը պիտի անցնէին ուղղակի Սաղիրէն եւ պիտի յառաջանային ուղղակի դէպի Ձէյթուն: Ամենէն կարծ եւ դիւրին ճամբան էր այս, Ձէյթուն երթալու համար: Ուստի աւելի այդ դիրքին վրայ էր որ գէյթունցիք մեծ թիւով ոյժ մը համախմբած էին: Սակայն բանակը իր ամբողջ զանգուածը մէկ անգամէն չշարժեց: Հինգ հազար ձիաւորներ բանակէն դատուելով կ'անցնին Ջերմուկի դաշտէն եւ կ'ուղղուին դէպի Աւագենց-Եղիտէի գիւղը: Երկու հազար տեղահան թուրքերու բազմութիւն մըն ալ պէշէնցի եւ բերթիզցի ձիաւոր առաջնորդներու ետեւը ինկած, կը բարձրանան դէպի Ս. Փրկչի վանքը: Այսպէսով կը մտադրեն աւելի ապահով կերպով յառաջանալ, նախ խորտակելով գէյթունցիներուն ձախ թելը:

Աւագենց կամ Եղիտենց գիւղը պաշտպանողներն էին մեծ մասով Ղարաբաղ եւ Պօզպաքի թաղի ռազմիկները: Անոնք կը սկսին բուռն հրացանաձգութեան մը եւ կէս ժամուան ընդհարումէ մը յետոյ, թուրք հեծելազօրքը կը սկսի նահանջել: Ս. Փրկչի ուղղութեամբ բարձրացող թուրքերն ալ կը հանդիպին նոյն ուժերին ընդդիմութեան եւ 30-ի մօտ դիակներ ձգելով կը սկսին քաշուիլ, քիչ յետոյ վերստին յարձակելու համար: Վանքը պաշտպանողները թէեւ 200 հոգի էին միայն, սակայն իրենց մէջ ունէին քանի մը ղեկավար զօրապետներ, որոնք գիտէին վճռական բոլորէին վճռական գործ տեսնել: Անոնցմէ մէկն էր Զօլադեան Փանոսը, որ թշնամիին երկրորդ զրոհին, անձամբ կոտորեց այդ հեծելազօրքին թափը, սպաննելով ա-

նոնց հրամանատար սպան եւ ուրիշ մի քանի պետեր: Թշնամին կը նահանջէ կրկին, Փանոսին ձգելով հրամանատարին սպիտակ ձին: Թուրքերը հասկցան թէ՝ պարզ խուժումով չէր կարելի դիրք դրաւել, այս անգամ մեծ քանակութեամբ հետեակ յառաջացուցին եւ սկսան պաշարել Փրկչավանքը եւ ուժակոծել: Կռիւր կը տեւէ մինչեւ իրիկուն, երբ վանքին շրջակայ չէնքերը արդէն փլած էին եւ բուռ մը քաջերու ընդդիմութիւնը կարելի չէր այլեւս երկար տեւել: Հոն մնալ հնարաւոր չէր այլեւս: Ուստի իրենք իսկ կրակի տուին մնացած կիսափուլ չէնքերը, թողլով իրենց սիրելի վանքը, առանց զոյս ալրելու եւ թշնամի գնդակներու տեղատարափին մէջէն գրոհով մը կ'անցնին եւ կը հասնին մօտակայ Գալուստենց կամ Մուրթատենց հայաբնակ գիւղը: Թուրքերը կը խուժեն, վանքը կ'ալրեն այդ հինաւորաց ուխտատեղին, որը գոհարներէն մին էր, իր գեղեցիկ կառուցութեամբովը, զմայլելի դիրքով եւ հին աւանդութիւններով: Զէյթունցիք, աւանդութեամբ մը, վանքին հիմնաւորումը կը հասցնեն մինչեւ Բարթուղիմէոս Առաքեալ, որ Հայաստան գացած ատեն Զէյթունէն կ'անցնի:

Պատրաստութիւններ.— Փրկչավանքի կռիւէն յետոյ, զէյթունցի ռազմիկներուն զօրագլուխները՝ Նազարէթ Ենիտիւնեան, իշխան Եղիա, Մարկանեան Հաճի, Զաքրեան Փանոս, Շամբէճիւեան Փանոս, Զօրագեան Փանոս կը տեսնեն որ մեծ կռիւր մօտալուտ է, հսկայ բանակը Ռէմզի Փաշային եւ անոր կողքին պաշարագուգներու քանի մը տասնեակ հազարներու հանող ուժը կը յառաջանայ դէպի Զէյթուն: Պէտք է դիրք բռնել զօրանոցը եւ անոր անմիջական հիւսիսի բարձունքները եւ դիմադրել թշնամիին: զօրանոցը երկու դուռ ունէր՝ մէկը Մարաշ Գափու ըստածը որ արեւելք կը բացուէր եւ ուրիշ ճամբան կը յառաջանար Զերմուկի դաշտէն դէպի Մարաշ, երկրորդն էր Զէյթուն Գափու, որ կը նայէր հարաւ տասը վայրկեանի ճամբայով մը, զառիվար ճամբան կու գար կը միանար Զէյթունի վերի մեծ ճամբային, ծռելով դէպի արեւմուտք, վերի Մատըն ծէարը: Այդ տեղէն ճամբան դէպի հիւսիս Զէյթուն կը տանէր մեզ, իսկ դէպի հարաւ Մարաշի վերի ճամբան կը գտնէր, անցնելով դարձեալ Զերմուկէն դէպի Ախվախը, Ղըյավուղ եւ Զահան գետը, Վարդապետի կանտարան, Բերթէզի մօտերէն Նալ Զէքէն, Զամ Փունար եւ ի վերջոյ Ախրտաղ: Այս երկու դռներն ալ սակայն ծանօթ էին թշնամիին եւ պաշարման մը պարագային մեծ ապահովութիւն մը չէր ընծայեր զէյթունցիներուն: Պէտք էր բանալ երրորդ դուռ մը, Զէյթունի աւելի մօտ եւ ուղղակի Զէյթուն նայող, ու ահա, զօրանոց արեւմտեան պարիսպէն կը բանան դուռ մը, նախաձեռնութեամբ

մասնաւորաբար մէկ քանի բողոքական հայերու, Զաքրեան Աւագի, Փասլը Մանուկի եւ ուրիշներու: Այս դուռը պիտի ըլլար ի հարկին նահանջի բաց ճամբայ մը դէպի Զէյթուն: Կը հսկեն նաեւ զօրանոցի մեծ պարիսպէն դուռս գտնուող մի քանի չէնքերը, որպէսզի թշնամին դիրք չբռնէ անոնց մէջ: Իսկ Սաղիր լերկ զարիվայրին, ուր բնական ժայռեր չկային եւ շատ հաւանական էր որ թշնամիին կարեւոր ուժը այդ ուղղութեամբ պիտի յառաջանար, զէյթունցիք կը սկսին քարէ պատնէշներ դուլթ բարձրացնել: Այդ դուլթ, տեղական բարձրավանդ, ըստածները թէեւ չէին կրնար դիմանալ նոյնիսկ պարզ գնդակներէ, սակայն կրնային քիչ մը ժամանակ շահիլ տալ մերիկներուն: Ղուլներու պատրաստութեան ատեն նոյնիսկ դպրոցի ուսուցիչներու հետ, աշակերտներն ալ աշխատանքի լծուած էին:

Զօրանոցը գրաւելէ յետոյ, առանց ժամանակ կորսնցնելու եւ տակաին թուրք կառավարութիւնը Թուրքիոյ ամէն կողմերէն զօրք հասցնելէ, եւ հսկայ բանակով մը Զէյթունի վրայ քալելէ առաջ, կ'ընէ Հանրի Վիթթօ, զէյթունցիք կրնային իրենց այդ յաղթանակէն անմիջապէս յետոյ արշաւել Մարաշ, ուր տակաւին զինուորական կարեւոր ուժ չկար, իսկ Մարաշի թուրքը թէեւ ջարդի եւ աւարի մէջ նշանաւոր էր եւ չափազանց ալ ազդամուլ, մոլեռանդ, սակայն պիտի չկրնար դիմադրել Զէյթունի յարձակումներուն: Ինչպէս որ 1853-ին Տէլի Բէշի 500 ռազմիկներով միայն կրցած էր Մարաշ մտնել եւ առանց լուրջ դիմադրութեան մը հանդիպելու Միւթէսարըֆի աթոռին վրայ հաստատած էր Պայագլիտ Օղլու Ահմէտ Փաշան: Սակայն նախ, որ զէյթունցիներուն նպատակը եղած էր իրենց շրջակայ հայ գիւղերով միայն ազատ ապրիլ, հետեւաբար տեսակ մը ինքնապաշտպանութեան ծրագիր էր եւ որ յաջող կերպով ի գլուխ հանուած էր: Երկրորդ՝ իր այդ շարժումը ընդարձակելու եւ նուաճողական արշաւանքի մը սկսելու համար ոչ մէկ քաջալերութիւն, խրախոյս եւ նիւթական ու բարոյական օգնութիւն չգտաւ ոչ Մարաշի հայութենէն, ոչ ալ Հաճընէն, որոնցմէ պէտք էր կարեւոր օգնութիւն, այսինքն կռուողներ, յետոյ զէնք, զինամթերք եւ պաշար հասնէր, եւ սակայն ոչ մէկ բան չըրին, որպէսզի շարժումը ընդհանրանար, խորք եւ ծաւալ ստանար եւ հաւանաբար կիլիկեան աշխարհին մէջ, թուրք կառավարութիւնը եթէ ոչ ինքնավարութեան, գոնէ իրական բարենորոգումներու հրահանգ տար Հայէպի եւ Ատանայի կառավարութեանց եւ անմիջապէս ալ սկսուէին անհրաժեշտ բարենորոգումները: Այս առթիւ եւրոպական դիւանագիտութիւնն ալ լաւ աչքով չնայեցաւ Զէյթունի եւ ընդհակառակն որպէս ապստամբութիւն ներկայացուց:

Դեկտ. 14-ն է: Այդ իրիկունը եւ ամբողջ գիշերը անհանգիստ վիճակի մէջ էր Զէյթունը: Տեսակ մը անհամբեր հոգեվիճակով կը սպասուէր մեծ դէպքերու: Ռազմաճակատէն հասնողներ կը պատմէին այդ օրուան անցուղարձերը, թուրք բանակին յառաջացումը, հայ տղոց կոիւններն ու մարտնչումները, Փրկչականքին այրուիլը: Այդ գիշեր մեծ ժողով մը տեղի կ'ունենայ եւ կ'որոշուի որ վաղը առտու իսկ զէյթունցիք այլեւս պաշտօնապէս եւ զանգուածօրէն պատերազմի մտնէին պատերազմի դաշտը, ըլլան եկեղեցական արարողութիւններ, ժողովուրդը զինուի նաեւ հոգիով, շարժումը դառնայ ժողովրդային:

Յաջորդ առաւօտ ամբողջ քաղաքը ոտքի է: Թէեւ զուարթ խանդավառութիւն չկայ, չկայ սակայն նաեւ ոչ խուճապ, ոչ վախ եւ շուարում: Կայ ներքին, խոր տեսակ մը յուզում: Իւրաքանչիւր թաղերու ալրերը, 20-էն մինչեւ 60 տարեկանները խճողուած են իրենց չորս եկեղեցիներու բակն ու գաւիթը, հրացանները ուսերնուն՝ Ս. Հաղորդութեան կը մօտենան: Ու ահա մեծ թափօրը, չորս թաղերու ժողովուրդը, մեծ ու փոքր նոյնիսկ կիներ եւ աղջիկներ: Թափօրին առջեւէն կ'ընթանայ խաչէլէմը, խաչվառը, Ս. աստուածածնի մեծ նկարով, որպէս տեսակ մը տապանակ ուխտի: Թափօրը մեծ ճամբայէն մեծ գերեզմանատան քովէն կ'ընթանայ, կը բարձրանայ դէպի զօրանոց: Գերեզմանատան մեծ թթենիին քով են, կիներ, յուզումով մը կը մօտենան ու կը խոնարհին պահ մը, չիւմաքարերու եւ կոգեկոչեն հերոս նախնեաց յիշատակները: Այրեր, ուսերնուն տեղական հրացանները, որոնց արծաթէ ու ոսկիէ ապարանջանները⁵⁸ կը շողային պայծառ արեւի ճառագայթներէն: Ուրիշներ զինուած զօրանոցէն գրաւուած պետական մարթիններով: Ասոնք, ահա վերջապէս կը հասնին զօրանոց: Հոն էին զէյթունցի զինուորական պետերը, նաեւ Աղասին: Զօրանոցին դուռը կը բացուի, դուրս կ'ելլեն կարգ մը ձիավորներ: Հոն են նաեւ, այն հինգ կարեւոր մարթինակիր տղաքը, անոնք գիշերն ալ հոն անցուցած էին: Ընտրուած կռուողներ էին անոնք, հոն էին թնդանօթաձիւները Շամքէշիւեան Փանոսը եւ Փասը Մանուկը: Պատերազմի թափօրը զօրանոցն էր հասած: Կիներուն եւ ծերերուն, անչափահասներուն կը յորդորուէր վերադառնալ Զէյթուն: Ահա բաժանման ողջագուրումներ, կիներ եւ մանուկներ հրաժեշտ կու տային իրենց այրերուն եւ հայրերուն եւ կ'իջնէին քաղաք: Իսկ կարգ մը կիներ եւ մանուկներ, որոնք բաւական յառաջացած էին եւ տակաւին կը սպասէին ահա կ'իջնեն քաղաքը, երբ կը սկսի հրացանաձգութիւնը, մեր տղաներէն որպէս տեսակ մը ռազմափորձ:

Սանտոխի կոիւր--

13-25 Դեկտ. Կիրակին, այսինքն վերոյիշեալ անցուղարձերէն օր մը առաջ, հայկական ուժերը, 1500-ի չափ ռազմիկներով Սանտոխ կոչուած արեւելեան լեռան վրայ քինած էին մարտկոցներ, որոնք զէյթունցիք զուլթ կը կոչէին եւ ինչ որ քիչ վերը յիշեցինք թէ այդ պատրաստութեան մասնակցած էին նաեւ ուսուցիչներ եւ նոյնիսկ զայրոցի աշակերտութիւնը: Գիտէին թէ շատ չանցած նոր մեծ ճակատամարտ մը տեղի պիտի ունենար այնտեղ եւ մեծ կատաղութեամբ: 20000-ի ոյժ մը բերած է այնտեղ թշնամին: Կը սկսի բուռն ու կատաղի կոիւր: Այդ տեղ, զէյթունցիք 4 ժամ կռուելէ ետք, կը սկսին նահանջել դէպի Աստուածածնայ վանքը եւ զօրանոցը: Եւ ահա ծեր առիւծը՝ Բասիլոսեան Կարապետ Աղան, 70 տարեկան պատկառելի ծերունին, չհանդուրժելով այդ նահանջին, իբրեւ տիպար, ճշմարիտ զէյթունցի մը, որ իր կեանքին մէջ երբեք կռնակ չէր դարձուցած թշնամիին, բարձրաձայն եւ ցասումով մը կ'աղաղակէ. «Մէր կը փախչիք տէաղէք, ձեր կրնկտոցը քէօվը պիտի մեռնաք նէ, հէօս միռէք, մի՛ քէաչվէք»: Այս խիստ խրախոյսին վրայ, այս սաստէն անմիջապէս յետոյ կը վերադառնան դիրքերը, ու կը վերսկսին կռուիլ: Թշնամին 400-է աւելի դիակ եւ մէկ թնդանօթ թողելով այնտեղ, կը սկսի նահանջել: Բայց թշնամիին մէկ թեւը Պէրդինկային գագաթէն յարձակման անցնելով, հայերու դիրքերը կը վտանգուին, պաշարման շղթայի մը մէջ, երկու կրակի միջեւ իսպառ ջնջուելու սպառնալիքին տակ կը մնան: Իրիկուան ժամը 10-ին, կը քաշուին զօրանոց եւ վանքը: Այդ կոիւրին կը նահատակուին Պապիկ Փաշային տղան՝ Աւետիքը, Տ. Կարապետ Քահանայի տղան՝ Վարդիվարը եւ ուրիշ 4-5 անձեր: Սակայն կոիւրը կատաղի կերպով կը շարունակուի, Սանտոխէն անդին նաեւ Աթլըխ, Ուզօր, Աւագ-Կէտիկի, Ախ-Տաղ, Էշէք-Մէյտանի եւ այլ վայրերու մէջ, ընդմէջ թշնամի բանակին 60000-ի եւ մեր ուժերուն: Այդ օրն իսկ Ֆոնուզէն Զէյթուն կը հասնին Բարթուղիմէոս Հայր Սուրբը եւ Ապահ: Իսկ Հրաչեայ կը մնայ Ֆոնուզի լեռները, գրեթէ մինչեւ պատերազմին վերջը եւ Յունուար 7-ին կը դառնայ Զէյթուն:

Դեկտ. 15-ին տեղի կ'ունենայ Քէարթէօզ քարի կոիւր: Կրկին սաստկութեամբ: Սանտոխի ճակատամարտին մէջ Ենիտունեան տոհմն է որ տիրական դիրք ունեցած է: Նազարէթ Չաւուշը, Բերթէզ Չալի կոիւրին վիրաւորուած ըլլալով, չէր կրցած Սանտոխի ճակատամարտին մասնակցիլ, սակայն իր պակասը զգալի չէր եղած իրեններուն ներկայութիւնովը եւ խիզախումներովը:

Բէմգի Փաշայի պահանջումները:— Բէմգի փաշա Սանտոխի կարեւոր դիրքը գրաւելով, Զէյթունի գրաւումը եւս ապահովուած կը կարծէր, ուստի բանակատեղին՝ Ճարտինենց Աղբորը, Ճէարմակոնը դառնալով կը հրաւիրէ Զէյթունի գլխաւորները, նոյն պատերազմի հետեւեալ Երկուշաբթին, անոնց հաղորդելու համար Սուլթանի իրատէն: Մերինները պատեհութիւն մը կը փնտռէին արդէն լրտեսելու համար թշնամիին դիրքը, բանակին մեծութիւնն ու վիճակը, սիրայօժար քանի մը պատգամաւորներ գացին բանակատեղին, Բէմգի փաշային մօտ: Անիկա ցոյց տալով Սուլթանի պատգամագիրը, կ'ըսէ:— «Վաղը Զէյթուն պիտի մտնեմ եւ 15 տարեկանէն վեր ու 60-էն վար եղողները, ժողովուրդը սուրէ պիտի անցընեմ, համաձայն բարձրագոյն հրամանի, իսկ ողջ թողուածները պիտի ղրկեմ Պաշարճը»⁵⁹ եւ հոն պիտի բնակեցնեմ, ուրեմն այս աղէտէն ազատելու համար:

Ա.— Նազարէթ Չաւուշը եւ դրսէն եկած, օտար յեղափոխականները եւ բոլոր պարագլուխները կռուողներուն ինծի պէտք է յանձնէք:

Բ.— Այն օտարականներուն գործակցողները, նոյնպէս ինծի պէտք է որ յանձնէք:

Գ.— Զօրանոցը, մէջի եղած ամբողջ ռազմամթերքովը, նոյնպէս եւ վանքը եւ գերի ինկած զօրքերը ինծի պիտի վերադարձնէք:

Դ.— Ձեր բոլոր ունեցած զէնքերը, ստացուածքները, կաշ-կարասիները եւ անասունները Զէյթուն թողլով, մի միայն ձեր կիներով եւ զաւակներով բանակատեղին կու գաք եւ անձնատուր կ'ըլլաք:

Մերինները առ երես յանձն կ'առնեն այդ պայմանները եւ թողալու թիւն կը խնդրեն մեկնելու: Հրամանատար փաշան թէեւ կը զգայ անոնց հոգեբանութիւնը եւ դժկամութեամբ կը թողու գիրենք, սակայն բանակէն բաւական հեռանելէ յետոյ, զէնք արձակել կու տայ անոնց ետեւը, ոմանց ալ ժամացոյցը եւ դրամը կողոպտել կու տայ, անարգական խօսքերով: Գնդակներէն կը վիրաւորուին պատգամաւորներէն բանակ գացող մարաշցի հայ կաթողիկ վարդապետը՝ Թեւէն, իսկ բողոքականաց պատուելին՝ ոտքէն, եւ առանց ուրիշ վնասի կը վերադառնան Զէյթուն:

Կոխը կը վերսկսի:— Զէյթունցի պատգամաւորները կը հասնին Զէյթուն եւ Բէմգի Փաշային այդ ծանր եւ անպատուաբեր պայմանները կը ներկայացնեն: Զէյթունցիք չափազանց խիստ եւ անմարդկային գտնելով այդ առաջարկները, ցասումով կը լեցուին եւ կը վճռեն վերսկսիլ կռիւին աւելի մեծ զանգուածով մը, մինչեւ իրենց վերջին շունչը եւ արեան վերջին կաթիլը: Նորէն կը սկսին նոր կարգադրութիւններ, անգամ մը եւս խրախուսուելով Կարապետ իշխան Բասիլոսեանի

եւ միւս մեծամեծներու քաջալերիչ խօսքերէն: Անոնք կը գոչէին «Հէյ մի վախէք, տէաղէք, չիք պիտի նանէ, ան կուսայ, կըսպացէք իւր բամպոկը ելլէ»: Այսինքն «Բնաւ մի վախնաք տղաք, ինչ որ պիտի ըլլայ ան կ'ըլլայ, զարկէք, թող բամպակը ելլէ»:

Մինչ անդին, բանակատեղին, Բէմգի Փաշան երբ կը տեսնէ որ անգործադրելի կը մնան իր պայմանները, անձնատուութեան ոչ մէկ շարժում չկայ զէյթունցիներու կողմէ, կը վճռէ վերսկսիլ կռիւը եւ քալել այս անգամ ուղղակի զօրանոցին վրայ, որ հայոց ձեռքը անցնելէ յետոյ, ռազմագիտական կարեւոր փոփոխութիւններու ենթարկուած էր եւ պիտի ծառայէր որպէս մարտկոց: Չէին վերջացած սակայն անդին Աւագ-Կէտուկի կռիւը Ագ-Տաղի ստորոտը: Զէյթունցիներու կռուողներուն մէկ մասը հաւաքուած էր Սաղիրի զառթօնքին վրայ եւ քիչ մ'աւելի վերը էչէք-Մէյտանրի անցքը Չուլախըն ըստեւ տեղը:

16 Դեկտեմբերի առտուան ժամը 8-ին Ագ-Տաղի լեռներէն կոխը կը վերսկսի Զէյթունցի ռազմիկներ հոն անցուցած էին գիշերը: Հինգ մասերու կը բաժնուին բոլոր կռուողները, իւրաքանչիւրը դիրք բռնելով թշնամիին դէմ, Աւագ-Կէտուկի, էչէք-Մէյտանի, Սաղիր-Չալախըն պալիրի անցքին: Թշնամի զօրքերու երեք սիւներ կը բարձրանան Փրկչավանքի ետեւէն, անոնց երկուքը կանգ կ'առնէ Աւագ-Կէտուկի դիրքին առջեւ, երրորդը կ'անցնի Աթլըխ բլուրներուն ետեւը, միանալու համար էրէճէք թուրք գիւղէն եւ շրջականերէն հաւաքուելով նոր հասած 8000 պաշտպաններուն: Քիչ յետոյ կը հասնին ուրիշ զօրագուններ ու կը յառաջանան նոյն ճամբով, շեղելով դէպի հիւսիս-արեւմուտք Սանտոխի կիրճին ուղղութեամբ: Երրորդ ստուար սիւն մը, անցնելով Ս. Փրկչի առջեւէն կը հասնի Գալուստենց գիւղին վրայ: Ժամը 11-ին փողերը կը սկսին հնչել, թշնամին ամէն կողմ, բոլոր դիրքերու վրայ միաժամանակ կը յառաջանայ: Անոր նպատակն էր նաեւ գրաւել լեռները, բարձունքները, կիրճերը եւ յետոյ քալել Ճէարմակոնը դաշտէն ուղղակի այլեւս զօրանոցին վրայ, ուր հաւաքուած էին 400-ի մօտ ռազմիկներ եւ իրենց զօրագլուխները: Այնտեղ կը հասնէին ու հետզհետէ կու գային իրենց գիրքերէն քաշուած ուրիշ կռուողներ:

Աւագ-Կէտուկի տղաքը մէկ ու կէս ժամ կը կռուին եւ երկու անգամ ետ կը մղեն յարձակող թշնամին, ահագին կորուստ պատճառելով անոր: Սանտոխի կիրճին մէջ, ամրացած, դարանամուտ մեր փոքրիկ խումբերը Լեւոնդասեան կռիւ մղելով, նոր թէքմոպիլէ մը կ'արձանագրեն ու թշնամին երեք անգամ ետ կը մղեն: 10000-նոց թշնամին դէմ Գալուստենց գիւղը պաշտպանողները մէկ ժամ կռիւէ

յետոյ, կրակ կու տան տուններուն եւ կու գան, կը միանան իրենց ընկերներուն: Աւագ-Կէտուկի մեր կռուողները որ երկու անգամ ետ մղած էին յարձակող թշնամին, եւ իրենք իսկ կը պատրաստուէին յարձակման անցնելու, յանկարծ կը նշմարեն որ՝ պաշարուած են իրենց թիկունքէն: Քէրթմէնցի թուրքերն էին, որոնք էրէճէքէն հասնող 8000-ին միացած իրենց վրայ կը քայլեն: Հայերը կը դիմադրեն պաշտպանողական կոխույժ մը, բայց ահա 2000-ի հասնող թշնամի նոր ոյժ մըն ալ կը հասնի, 10000-ի բարձարցող յարձակողներուն դէմ 400 հայ ռազմիկներ կը քաշուին դէպի Պէրզինկա լեռը եւ Ուզորի անցքը:

Թշնամին այլեւս Աւագ-Կէտուկի դիրքը գրաւելէ յետոյ երկու մասի կը բաժնուի. մէկը կը հետապնդէ 400 մեր ռազմիկներու նահանջը, միւսը վար կ'իջնէ դէպի Սանտոխի կիրճը, զայն պաշարելու համար հիւսիսէն: Նոյն ատեն Գայուստենց գիւղը գրաւող զօրագունդն ալ հարաւէն կը բարձրանայ դէպի Սանտոխ: Զէյթունցիք այնտեղ 1500 հոգիէ կը բաղկանային, սակայն թշնամին տասնապատիկ աւելի էր: Թուրքերը չորրորդ անգամ ետ կը մղուին: Հինգերորդ յարձակումի մը դիմաց հայերը կը նահանջեն: Անոնց մէկ մասը կը բարձրանայ վերստին Ագ-Տաղ, իսկ միւս մասը վար կ'իջնէ միանալու էշէք-Մէյտանիի դիրքին:

Բէմզի Փաշա տեսնելով իր ուժերուն այս յաջողութիւնները, կը շարժէ բանակին մէկ թեւը դարձեալ դէպի Ագ-Տաղ եւ էշէք-Մէյտանը, այն մասը որ «Ախ-վախը»-ի վրայ, Զերմուկի դաշտին հարաւը կը սպասէր: Վերջնականապէս Սանտոխը գրաւելէն յետոյ, թշնամին կ'ուղղուի դէպի Ուզորի անցքը եւ Պէրզինկա լեռը: Հայեր այնտեղ կը դիմադրեն ժամ մը եւս եւ ի վերջոյ կը քաշուին Պապիկ Փաշայի քարայրները: Թշնամին մէկ մասը կը հետապնդէ զանոնք, միւս մասը կը յարձակի Ագտաղի մեր տղոց վրայ: Հայ ռազմիկներ հոն ալ մէկ ժամ կրնան դիմադրել եւ կը ստիպուին նահանջել դէպի հարաւ ու կու գան կը միանան էշէք-Մէյտանի անցքը: Այնտեղ 4000-ի կը բարձրանայ զէյթունցի կռուողներու թիւը: Իսկ թուրքերուն թիւը կ'անցնի 20000-ը միայն այդ տեղ: Այդ միակ անցքը կը մնար զէյթունցիներուն ձեռքը, ուր ամրացած էին, եւ թուրքերը զայն ալ գրաւելէ յետոյ կրնային այլեւս հասնիլ Զէյթունի հիւսիս-արեւելեան ալպինները: Հայոց դիրքը թէպէտեւ շատ զօրաւոր էր, սակայն երեք կողմէն պաշարուած էին: Իրենց ձեռքը անցած թնդանօթը չէին կրնար գործածել այդ ապառաժուտ տեղւոյն վրայ եւ մանաւանդ չէին գիտեր անոր գործածութիւնը: Այստեղ ալ կոխը կը տեւէ կէսօրուան ժամը 2-էն մինչեւ 4: Հարիւրներով թուրքեր կը տապալին

մեր տղոց գնդակներէն, սակայն թշնամին չ'ընկրկիր, որովհետեւ իրենց ետեւը գտնուող վերջապահները հրահանգ ունէին կրակելու նահանջող զօրքին վրայ: Կը յամառին անոնք կոխը շարունակել: Երկու ժամուան կոխէ յետոյ, զէյթունցի կռուողները կը քաշուին դէպի զօրանոց: Սաղիրի եւ Անի-ձորի ռազմիկներն ալ ետ կը քաշուին եւ կու գան, կը գոցեն «Ճապկի-Չայիր» անցքը, զօրանոցին ստորոտը: Անդին, Պապիկ Փաշայի քարայրներուն շուրջը, ուր 100-ի մօտ տղաք ապաստանած էին, արիւնհանդ ընդհարում մը տեղի ունեցաւ: Թուրքեր կը յարձակին եւ կը ջանան պաշարել զանոնք: Իրենց սպառնացող այդ անխուսափելի վտանգը երբ կը տեսնեն Զէյթունէն, իշխանները կոչ կ'ընեն ժողովուրդին անոնց օգնութեան հասնելու: Իշխանները, իրենք ալ կը հասնին այնտեղ, քանի մը հազար կռուողներու զլուխն անցած եւ ուժեղ դիմադրութիւնով մը կը ստիպեն թշնամին ետ քաշուելու:

Օրը կը տարաժամի եւ զէյթունցիք զինուորական շղթայով մը կը գոցեն թշնամիին ճամբան դէպի Զէյթուն, շղթայ մը, որ կ'երկարէր Պէրզինկայի ստորոտէն կէս ժամ հեռավորութեամբ Զէյթունէն մինչեւ Զէյթունի արեւելեան «Ձոր» կոչուած գետակի վերի մասը, անկէ մինչեւ Ս. Աստուածածնայ վանքը, զօրանոցը եւ հարաւ՝ Ճապկի-Չայիր: Ենի-Տիւնիա թաղին տղաքը կ'ամրանան Քարքէօշ քոր: Վանքին մէջ կային 700 կռուողներ, իշխան Նազարէթի, Եղիայի, Մլենի հետ: Մէկ քանի հարիւր հոգի կը սպասէր Պուշուխուսնց-Ալեքսաննեց բարձունքներուն վրայ, իսկ զօրանոցին մէջ կը գտնուին այդ ատեն միայն 300-400 հոգի, որոնց մէջն էին Մարկանեան Հաճի, Պօպայիրի իշխանները, Շամքէյիւհան Փանոս, եւ Ապահ: Մնացած զէյթունցի կռուողները դիրք բռնած էին Ճապկի-Չայիրի մուտքը:

Բէմզի Փաշայի գլխաւոր նպատակն էր արդէն, ինչպէս ըսինք նախապէս զօրանոցը գրաւելու: Վերոյիշեալ վայրերուն ճակատամարտներէն յետոյ, զէյթունցիք հետզհետէ եւ կանոնաւոր նահանջներով կ'ամփոփուին Զէյթունի անմիջական բոլորտիքը, Ս. Աստուածածնայ վանքը, զօրանոցը: Իսկ թուրք բանակին կեդրոնն է Ճօրմուկոնը դարձրել, եւ հոն է որ կու գային կը հասնէին Սանտոխի, Ագտաղի, Աւագ-Կէտուկի, էշէք-Մէյտանի, Սաղիրի թեւերը եւս, բոլորը միասին եւ միաժամանակ քայլելու եւ գրոհ տալու համար զօրանոցի մեր ուժերուն վրայ: Զերմուկի դաշտէն յառաջանալով հսկայ բանակը 80000-նոց, կը քայլէր հիւսիս արեւմուտքի ուղղութեամբ դէպի զօրանոց, դէպի Զէյթուն, բանակին մէկ ծայրը կը հասնի Զէյթունի հիւսիս արեւելքը՝ Պէրզինկայի ստորոտը ու այնտեղ դիրք կը բռնէ, Զէյթունէն մէկ ժամ հեռու, այնտեղէն կրնան տիրել վանքին եւ ուրա-

կոծել գայն, իսկ հարաւային ծայրը հասած էր Չանաղայը, Անի ձոր, Հէլվիւկօնը կէօլը, մինչեւ Չէյթիքի դաշտը, Մեծ Սօսին, Շուղը գետակին եզերքը, Ուրեմն Պէգինկայէն մինչեւ Չէյթիկի դաշտը, Չէյթիկէն մէկ ու կէս ժամ հեռաւորութեամբ երկար կիսաշրջանակ մը կը կազմեն բանակին յառաջապահի ուժերը, մինչ թիկունքը դարձնալ կը հասնի Ճօրմօկոնը դաշտը, Ախ-վախը, Գայմախամին աղբիւրը, Չէյթիկի արեւմուտքէն, Աւագկայէն, Սօլագ-Տէտէի լեռներէն, Չաթուքարի կողմէն կու գար Այի Պէկի 30000-ի կանոնաւոր եւ անկանոն բանակը, կը հասնէր Հարօմ-աղբըրը, Ղարղալարի ուղղութեամբ, Օկը (Ակը), Սուս աղբըրը (Սօսիի աղբիւր)։ Չէյթիկի հիւսիսը միայն թշնամին չէր կրնար դիրք բռնել։ Այնտեղ, 6 ժամ հեռու Պէրիտի անմատչելի եւ ձիւնապատ բարձունքները կային, իսկ անմիջական Չէյթիկի թիկունքին էր Քէր ծէր (քար ծայր) դժուարամատոյց սարը։ Կար նաեւ հիւսիս արեւմուտք՝ Օզգայասիի ճամբան, ուրկէ կրնար թշնամին յառաջանալ, մանաւանդ էրիճլիցի, Չարտախցի եւ այդ շրջանի թուրք եւ չերքէզ գիւղացիներն ու հաճիլէրցի թուրքերը։ Այնպէս որ Չէյթիկն երեք կողմէ հետզհետէ օղակի մէջ կ'առնուէր եւ այդ օղակը հետզհետէ պիտի նեղնար, մանաւանդ եթէ զօրանոցն ալ գրաւէր թշնամին։

Ահա կռուի ազգանշանը կու տայ թշնամին, Պէրգինկայի ստորոտը, Ղաթ ըսուած դիրքէն արձակելով իր թնդանօթի առաջին ռումբը Ս. Աստուածածնի վանքին վրայ։ Վանքն է կը ուժակոծուի։ Դեկտ-ի առեւտտ պայծառ օր մըն է. կէսօրէն առաջ ռումբը կ'որոտայ։ Վանքին անմիջական հիւսիսը, փոքր գիւղակ մը կայ, Վանոց ուպէ առնուն, կամ էյլէնճէլիք։ Վանքի գիւղի տղաք են, քարայրի մը մէջ ամրացած էին կանխաւ։ Իրենց այդ ծածուկ թագստոցէն գնդակահար կը տապալեն վրաններէն դուրս ելլող զօրքը։ Անոնք երբ կը տեսնեն վանքին ուժակոծուիլը Ղաթի դիրքէն, կը կրակեն թնդանօթաձիգին ուղղութեամբ եւ կը ձգեն զայն, պահ մը կը լռէ թնդանօթը, վախ մը կ'իյնայ թշնամիին մէջ, թնդանօթը կը թողուն տեղւոյն վրայ եւ կը քաշուին դէպի Ղաթի աւելի բարձր դիրքը։ Վանքին ուժակոծման ատեն եւ նախքան այդ էյլէնճէլիցի հայ տղոց կողմէ թնդանօթաձիգին լռելը, վանքը ապաստանող հայերէն ոմանք կը մտածէին վանքը կրակի տալ, որ թշնամիին ձեռքը չանցնի։ Սակայն Ենիտիւնեան Աւետիս Աղային տղան, Եղիա, կը հակառակի եւ կ'արգիլէ վանքը այլեւ ու վանքը կը մնայ կանգուն, մինչեւ 1915-ի Չէյթիկի տարագրութիւնը եւ վանքին կռիւը բուռ մը քաջերու կողմէ։ Ղաթի ուժակոծումը կը դադրի վանքին վրայ, ու շատ չանցած, Փիսիւրի բարձունքէն, Սանտիսի մեծ բարտի ծառին կողմէն թնդանօթը կ'որոտայ, առաջին

ռումբը կ'իյնայ Չախրընց թէրլէն, սեւ հողով դաշտը, որ այն տարին ցանուած չէր, հերկ էր։ Ռումբը թաղուեցաւ հերկուած բուխ հողին մէջ։ Երկրորդ ռումբը ինկաւ Մարկանենց թարլան (արտը) ու պայթեցաւ։ Չէյթիկի տուններուն տանիքները, այդ արեւոտ օրը կիներ, մանուկներ կեցած կը դիտէին։ Կապանցի, Ֆոնուզցի Չէյթիկն ապաստանածներ տանիքները ցորեն փռած էին։ Ռումբերու այդ ազդանշաններուն վրայ, տանիքները մարդ չմնաց, ցորեն եւայլն հաւաքելով բոլորն ալ տունները մտան։ Ու կռիւը սկսաւ ամէն ուղղութեամբ։ Թշնամիին շղթային ուժեղ կէտը սակայն կեդրոնն է, զօրանոցին ճիշդ արեւելքը, եւ անմիջական մօտը։ Յարձակումը կը սկսի։ Սակայն առաջին անգամ մեծ կորուստով մը ետ կը մղուի թշնամին։ Քիչ յետոյ կը շարունակէ ան իր յարձակումները ամէն օր եւ տարբեր ժամանակներու մէջ, երբեմն առատուները, յաճախ իրիկուան մօտ եւ նոյնիսկ քանի մը անգամ գիշերները։ Բայց ամէն անգամ ալ ետ կը դառնար մեծ կորուստով։ Աւելի քան երկու շաբաթ նոյն ոգորումը զօրանոցը գրաւելու համար, եւ կատաղի դիմադրութիւն զօրանոցի մէջի կտրիճներուն կողմէ, իրենց դիրքերէն, զօրանոցի պարսպի ծակերէն եւ անկիւններէն։ Հոն են Մարկանեան Հաճին, Շամբէշիւհան Փանոսը, Չախրեան Փանոսը, վարպետ Մանուկը, Ենիտիւնեաններէն, Պաճեաններէն, Սուրէնեաններէն, Անդրէասեաններէն եւ հայ գիւղերէն եկածներ։

Վերջապէս, օր մը, մշուշոտ իրիկուն մը, թշնամին օգտուելով մառախուղէն եւ մուկէն, լուելայն եւ գաղտուկ, առաջնորդութեամբ քէրթմէնցի, հաճեւարցի եւ բերթէզի թուրքերու, մեծ թիւով մը ուղղակի կը մտնէ զօրանոցին անմիջական մօտը գտնուող երկու շէնքերուն եւ մզկիթին մէջ։ Ջօրանոցի մերինները երբ կը տեսնեն որ այլեւս անկարելի է իրենց հոն մնալ եւ դիմադրել հսկայ բանակին, որուն մէկ մասը գրեթէ ներս մտեր է, կրակի կու տան զօրանոցը, թշնամին ներս կը մտնէ հարաւ արեւելեան դռնէն, զէյթիկնցիք դուրս կ'ելլեն արեւմուտքի դռնէն, զոր վերջէն բացած էին, նահանջի մը պարագային դուրս գալու համար։ Ու գիշերը հասան Չէյթիկ։ Թշնամին տակաւին կասկածելով թէ ծուղակ մը լարուած է իրեն, երբ մերիններուն զէնքերը կը լռեն, եւ խորհելով թէ զէյթիկնցիք դարանի մտած իրենց կը սպասեն, իրենք ալ դուրսէն կրակը կու տան զօրանոցին։ Ջօրանոցը ամբողջ երկուքուկէս ամիս մնացած էր զէյթիկնցիներուն ձեռքը։ Այժմ կռուող մեր 400 տղաքը իջած էին Չէյթիկն, այլեւս Չէյթիկի ներսէն պիտի շարունակէին ինքնապաշտպանութեան կռիւը։

Դեռ այսօրուան պէս կը յիշեմ, այն գիշերը, ես դեռ 7 տարեկան

տղայ մը, երբ զօրանոցը կ'այրէր: Կը դիտէի այն մուֆ գիշերին մէջէն, զօրանոցէն բարձացող կարմիր կանաչ բոցերը:

Այդ օրերուն է, ձմրան ձիւնոտ իրիկուն մը, Նոյա Աղա Ենթոխնեան, գիշերուան մէջ 50 տղաներով Պէրզինկայի մէկ անցքէն, «Ով սուրբ Փրկիչ» ըսելով կը յարձակի թշնամի բանակին հիւսիսը բռնած մէկ թեւին վրայ, սուսերամերկ կը մտնէ իր ընկերներով անոնց մէջ եւ կը սկսին սուրերով եւ դաշոյններով ջարդել զօրքը: Այն գիշերը աւելի քանի 400 թշնամիի դիակ կը փռուի գետինը: 20 մարթին հրացան եւ մէկ վրան կ'անցնի իրենց ձեռքը, 3 հոգի զոհ կ'երթայ: Երեսները իր ընկերներէն ու իրենք կը դառնան վանքին դիրքերը: Թշնամին այն գիշեր, այդ մուֆին մէջ, չփոթած խուճապահար կը սկսի դիրար ջարդել, կարծելով թէ թշնամիին հետ է որ կը կռուի: Այն գիշեր, մինչեւ ուշ ատեն լսեցինք մենք անոնց մարթիներուն շարկիւնները: Առտուն ըսուեցաւ թէ՛ իրարու հետ կռուած եւ ջարդած են դիրար:

Ղօնախի մէջ թուրք գերի զօրքերու ջարդը եւ զէյթունցիներուն ինքնապաշտպանութեան կռիւը

Մինչ զէյթունցի կռուողները տակաւին Չէյթունէն դուրս Սանտոփ, Ագտադի, Էշէք-Մէյտանի դիրքերուն մէջ կը կռուէին թշնամիին դէմ, հոս Չէյթունի մէջ, Ղօնախը գտնուող թուրք գերի գինուորները փորձած էին իրենց բնական շէնքը, այսինքն կառավարական պալատը, (սէրայ) հրդեհել եւ իրենք անցք մը քանալով այն գիշերն իսկ փախչիլ եւ երթալ միանալ բանակին: Կիրակի կէսօր մըն է: Ձէթունցի կիներ, տարիքոտ մամիկներ ու կռուելու երթալու անկարող ծեր ալրեր, որոնք Չէյթուն կը մնային, գինուած դանակներով, մի ծեծելու սակրերով, հասան Ղօնախը ու սկսան ջարդել զանոնք: Մնեք փոքրիկ մանուկներ, կեցած էինք Տ. Նշաննեց տանիքին ցուրեքները, տուրնան եւ կը դիտէինք այդ կիներու գրոհը, դանակով ու սակրով դէպի սէրայ: Անոնց մէջն էր, ծագումով մարաշցի եւ կէօկսիւն բնակելով Չէյթուն ապաստանած Գալաթի Արթին, տարիքն առած հայ մը, այնքան գերի սպաննած էր, որ տարիներ յետոյ տակաւին տեսակ մը անբնականոն վիճակ ունէր: Խօսելու ատեն յաճախ դիմագիծը, շրթունքները տարօրինակ կծկումներ կը ստանային: Դիակները չուաններով քաշեցին, ոմանք կիսամեռ եւ բերին թափեցին Շուղթի կամուրջին վրայ, 30 մեթր խոր անդունդը, դեռ գետը չհասած: Մի մեծնալէն յետոյ, տակաւին տարիներ, այդ անդունդի քարերուն ճեղքերուն կը տեսնէինք անոնց ոսկորները, ճերմկած դանկերը: Զինուոր մը, ահա, վիրաւոր, կը քաշկուտեն ղօնախէն վար, ոտքերուն չուած

մը անցուցած: Կը տանին Շուղթի կամուրջը: Անիկա, այնտեղ, իր քէմէր գօտիէն կը հանէ իր դեղին ոսկիները եւ ոսկիներով միասին գետը կը նետէ ինքզինքը, գիտէ որ զինք պիտի նետեն գետը, գոնէ ոսկիները հայերուն չմնայ: Սակայն մաս մը գերիներ, վիրաւորներ եւ մաս մըն ալ առաջուրնէ, մի քանի աղաներու, մանաւանդ Բասիլոսեան Արթին Աղային տունը պահուած էին: Պատերազմը վերջանալուն, անոնք կառավարութեան տրուեցան եւ ղրկուեցան իրենց երկիրները: Անոնցմէ մէկը, տակաւին մինչեւ 1940 թուականը ողջ էր Հալէպ, Ճիւտէյտի շուկան նպարավաճառ մըն էր: Կը պատմէր գլխուն եւ կածը եւ իր վէրքերուն բուժուած տեղը: Այժմ մեռած է:

Ինքնապաշտպանութեան պատրաստութիւններ. Կռուող տղաքը գիշերը որ Չէյթուն իջան, ահա անմիջապէս, Պաղ Աղբիւրի կամուրջը, Ս. Պօղոս-Պետրոսի եւ Աբընաքարտակի կամուրջներուն մէջտեղէն քարէ պատեր բարձրացուցին: Մեր տունը Պաղ Աղբիւրի կամուրջին բերանը առաջին տունն է: Շատ լաւ կը յիշեմ այն քարէ պատնէյը, զոր բարձրացուցին մեր պօզպախիցի կռուողները կամուրջին մէջտեղը, զայն երկու մասի բաժնելով: Հաճի Փէանխախնց (որոնք այժերու հօտ պահող ընտանիք մըն էին մեզի դրացի) երկու խոշոր շուններ կապեցին կամուրջին մէջտեղը, պատերուն առջեւ: Շունները, այդ մուֆին կ'ոռնային, տեսակ մը սոսկալի տպաւորութիւն ձգելով այդ մուֆ գիշերներուն մէջ: Չէյթունի արեւելքի, հարաւի եւ արեւմուտքի եզերեայ տունները դիրքեր չիւնուեցան: Պատերուն շատ մը ծակեր, (մազղած, մէթէրիս) բացին, զէնքերուն փողերուն համար: Իսկ Չէյթունի բոլոր տուններուն պատերէն մարդ անցնելու չափ խոշոր բացուածքներ քակեցին ու այդպէսով ժողովուրդը առանց նկատուելու թշնամիէն, կրնար տունէ տուն երթալ, իրարու հետ յարաբերուիլ առանց փողոցը, բացը ելլելու:

Ղարալարի կողմը Ալի Պէկի բանակը կը հասնէր Քէրէր-Տինէր (Քարալը-տանիք), Անդրիասեանք պատած էին նոյն ձեւով նաեւ Շուղթի կանտարան: Շամքէճիւան Փանոսը թնդանօթաձիւներէն մէկն էր, եւ որ տակաւին զօրանոցը չպարպած, այնտեղէն թնդանօթը կը լարէ եւ նշան կ'առնէ Քէրէր-Տինէր, Ալի Պէկի բանակին մէկ խումբին վրայ: Ռումըր ուղղակի կ'իյնայ խումբին մէջտեղը եւ ջարդ ու փշուր կ'ընէ թշնամիին: Սակայն ինքն ալ զօրանոցի կռիւին, երեք տեղէ կը վիրաւորուի եւ Չէյթուն իջնելէ յետոյ, շատ չանցած կը մեռնի, այդ լեռներու առիւծը, զոր իր կենդանութեան, կռիւի երթալուն շատ անգամ կը տեսնէին իր ճերմակ ձիուն վրայ, թանձր, միջահասակ, պրոնցի գոյն մարմնով ասպետական տիպար մըն էր:

ան, կը կրէր գլխուն կլոր, առանց կաղապարի ֆէս մը, թիւթմէն-ներու ֆէսերուն վրայի ծոպերուն պէս խոշոր ծոպ մը իր ֆէսին եւ վրան փաթթած մետաքսէ խոշոր փոշու մը: Մօրս կնքահայրն եղած էր ան: Մենք փոխադրուած էինք Պօզպայիր թաղի վերի մասը, մօրս կողմէ՝ մեծ հօրս, Աննիկոնց Մնացականին տունը, որուն անմիջապէս տանիքին վերեւը եւ գրեթէ կից էր Շամբէշիշեանի տունը, զոր 1906-ին ազգը գնեց իր հիւսիսը գտնուող Քէչենց տուններուն հետ, քանդեցին այդ տունները եւ ազգային հոյակապ բաղնիք մը շինուեցաւ տեղը, բարերար Խէրեանի կտակով եւ Սահակ Կաթողիկոսի կարգադրութեամբ: Շամբէշիշեան ունէր երկու մանչ զաւակներ, մեծը Նշան, որ կաղ էր, իսկ փոքրը Սեդրակ, որ կրնար հօրը տեղը բռնել եթէ ապրէր: Այժմ իրենցմէ ոչ ոք ողջ է:

Բէմգի Փաշային բանակը զօրանոցը գրաւելէ եւ այրելէ յետոյ իր թնդանօթները եւ մարթին հրացանները կ'ուղղէ այլեւս չիտակ Ձէյթունի վրայ: Դարձեալ միտքս կու գան այն գիշերները, երբ հայրս Ղազար իր (չախմախը) կաթնքարէ կրակուող թիւֆէնքովը կ'երթար Պաղ Աղբիւրի կամուրջին եզերք մեր տունը, երբեմն ալ Մուրատեանց կամ Միքայիլենց տուններուն դիրքերը: Ծակուած պատերուն ետեւը կը կենար մինչեւ առաւօտ եւ այսպէս օրեր, մինչեւ որ կոիւր կը վերջանայ: Երկու երեք օրն անգամ մը կու գար տունը, մեր տունը, հետը կը բերէր ֆիշէք մը աղ, զոր հայթայթած էր դիրքերուն սպասող իր ընկերներէն: Բան մը կ'ուտէր, հետն ալ հաց ու չամիչ կ'ուտէր ու նորէն կը դառնար դիրքերը: Եւ հօրս նման՝ բոլոր կռուողները կը սպասէին իրենց դիրքերուն մէջ: Երբեմն ալ մեծ հայրս, քեռ պապս, Մնացականը իր 75 տարեկան հասակին մէջ, տակաւին առոյգ, իր կարճ թիւֆէնքովը կ'երթար դիրքերը: Գիշեր մը, շունը կ'ոռնար կամուրջին վրայ, մութ, խաւար գիշեր է, հայրս իր գտնուած դիրքէն դէպի վեր, հորիզոնը երբ աչքերը կը վերցնէ, Պաղ Աղբիւրի ետեւը «դօնախընտեղը» ըսուած բարձունքին վերը, օգին եկած տեղը կը նկատէ սեւ ուրուականներու պէս բաներ մը կը շարժին: Թշնամին քանի մը զինուորներ դրկած է այդ մութին, հետերին քարիւղի մէջ թաթխուած խոշոր քուրջերով, որպէսզի նետն տուններուն վրայ, Ձէյթունը հրդեհեն: Դիրքերէն անմիջապէս կը սկսի հրացաններու համազարկը: Այդ ստուերները կ'անհետանան Դեկտ-ի առաջին շաբաթէն մինչեւ Յունուար 7-ը, 24 օրուան մէջ Բէմգի Փաշայի եւ Այի Պէկի բանակները 3800 ռումբ տեղացուցնէին Ձէյթունի տուններուն վրայ, անոնցմէ 170-ը չէր պայթած: 4 Յունուարին, Հինգշաբթի իրկիկունէն մինչեւ Ուրբաթ առաւ 867 ռումբ տեղացած էր Ձէյթունի վրայ: Այդ գիշեր ռումբերը եւ մար-

թիւներու գնդակները վայրկեան մը դադար չտուին: Կը կարծուէր թէ՝ այս գիշեր բանակը Ձէյթուն պիտի մտնէր: Իսկ Լէյլ Կարապետ, որ պատերազմի սկիզբները, երբ դեռ թշնամի բանակը ձիւհան հասած էր, փողոցներու եւ հրապարակներու անկիւններէն, մուկետիկ դարձած գոչած էր «օրտուն Ջահոն հասեր է, ծունկը բռնէօղը, թիֆոնը թուղ առնու, ճամբոնք ելլէ» այսինքն «Օրտուն ձիւհան հասեր է, ծունկը բռնողը հրացանն առնէ ու ճամբայ ելլէ», իսկ այդ գէշ գիշերը, գնդակի եւ ռումբի տեղատարափին դարձեալ մութ գիշերին մէջ կը կանչէր, կը լսէինք մենք իր խրախուսող ազադակը «Օրտուն դարձով, հա դարձով» բանակը դարձաւ հա դարձաւ: Երբեմն ալ եօրդանինց Նազարէթը նոյնպէս կը կանչէր «Տուշմանը քէշուեցաւ, հա քէշուեցաւ», թշնամին քաշուեցաւ հա քաշուեցաւ: Բէմգի Փաշան իմացած էր թէ՝ զէյթունցիներ ցերեկը իրենց տուններուն վարի յարկերը, գետնաշարկերը կ'իջնեն, իսկ գիշերը վերի յարկերը կ'իջնեն, սակայն առանց ոեւէ լոյս վառելու: Հրաման կու տայ բանակին որ ամբողջ գիշերը թնդանօթներն եւ մարթին հրացանները անդադար գործին, որպէսզի զէյթունցիք պարտաւորուին այլեւս անձնատուր ըլլալ: Վերջին յուսահատ փորձ մըն էր ըրածը: Խաւարին մէջ կը տեսնէինք բոցափայլ խաւարը ու կ'իյնար մեր տուններուն, մեր տանիքներուն վրայ: Ինք մըն ալ ինկաւ մեր տան վրայ, խորտակեց տանիքի երկու գերանները, ծակեց տանիքը եւ ինկաւ ներսը, ջարդուփշուր ըրաւ բուպի կարասները եւ տիկերը ու բուպը հոսեցաւ մինչեւ վարերը եւ փողոցը: Հայրս եւ քեռպապս հրաշքով ազատեցան այդ ինկած ռումբէն: Մարաշցի հաճի Ծասին հարիւրապետը, այդ օր, այդ բուռն ուժակոծումէն եւ հրացաններու տեղատարափէն յետոյ, եւ չէրքէզ պէկեր կը յայտարարեն փաշային թէ՝ «Կարելի չէ Ձէյթուն մտնել, զէյթունցիք թէպէտ նահանջեցին եւ Ձէյթուն քաշուեցան, սակայն ռազմական նահանջ մըն է իրենց այդ քաշուիլը, անոնք իրենց դիրքերուն մէջ ամրացած են եւ կրնան բանակը ծուղակի մէջ ձգել, ինչպէս որ ըրին 1862-ի պատերազմին եւ ջարդեցին մեր 758 չէրքէզները: Ասոր վրայ փաշան հաշիւ մը կ'ընէ որ՝ զօրանոցէն մինչեւ Ձէյթուն 20 վայրկեանի տեղ է, եթէ զօրքը քալէ Ձէյթունի վրայ, մինչեւ հասնիլը այնտեղ, եթէ 6000 կռուող զէյթունցիները, իրաքանչիւրը 20 վայրկեանի մէջ 10 անգամ գէնք պարպէ, իր բանակին կէսէն աւելի կը ջարդուի, որովհետեւ իրեն ըսուած էր հայրու կռուողներու թիւը 6000 է եւ անոնց ամէնն ալ լաւ նշանառու են, անոնց գնդակը պարապի չ'երթար: Հետեւաբար, ըստ իրեն, իր այդ հաշիւը ճիշդ էր: Այո, թէեւ զէյթունցիին լաւ նշանառու էր, եւ 6000-ի հասնող կռուող ոյժ մը կրնար հանել, սակայն անոնց

2000-ի մօտ կայծքարով հրացան եւ 700 կամ 800 մարթին հրացան ունեցողներ կային, մնացած քանի հազար մարտիկներու գէնքերն էին ատրճանակը, տապանչալուն, փալաղանոկը, դաշոյնը, բիրը, գորս պիտի կրնային գործածել գիրկընդխառն կոփւի ատեն, երբ թշնամին մտնէր քաղաքը: Զէյթունցի 17 տարեկանէն մինչեւ 75 տարեկանը, իր շրջակայ հայ գիւղացիներով կուտողներն էին, եւ գիրկընդխառն կոփւի մը թերեւս 6000-ն ալ անցնէր անոնց թիւը:

Արեւմտեան ճակատը.— Ալի Պէկի բանակը.— Քիչ առաջ անուղղակի խօսեցանք արեւմտեան ճակատի Ալի Պէկի մասին: Անիկա Կապանը, շրջակայ հայ գիւղերը այրելէ, աւերելէ յետոյ Յոնուզն ալ կրակի տուած էր, եկած էր Աւագկալ ու աթմ Տըզուրզի վրայօք հասած էր Սօլազ Տէրէ, Զաթօլ Քոր եւ պիտի յառաջանար դէպի Ղարղալարի այգիները, Սուսաղբըր (սօսի աղբիւր) Հարօմ աղբըր, Հէօճիւնց բարտին: Սակայն մեր տղաքը, գլխաւորութեամբ Մարկանինց պապային, Ղեւուկոնը, Ղահրամանինց Խամսին Փէանիւսին, կը դիմադրեն Ալի Պէկի ուժերուն, որոնց օգնութեան եկած էին Հաճիլէրի թուրքերը, եւ Կիւճիւկի Մէհմէտ Պէկի չէրքէզները: Սաստիկ կոփւ մը տեղի կ'ունենայ այնտեղ, Զաթօլ Քարի առջեւ, այնտեղ կ'իյնայ Մարկանինց Պապան (Մալը Տօնլուին ամուսինը): Թշնամին դժուարութեամբ եւ դանդաղօրէն, քայլ առ քայլ կը յառաջանայ, սակայն հարիւրներ զո՛ւ տալով իր ուժերէն: Հէօճիւնց բարտիին առջեւ կը սպաննուի Մէհմէտ Պէկը եւ իր հետ 25 չէրքէզներ ու մնացածները կը փախան: Հայեր կ'ունենան նաեւ 3 զոհ, Մարկանեան Պապան, Ոսկանեան Խաչերը եւ Տ. Յովակիմի տղան:

Դարձեալ աչքերուս առջեւ կու գայ մշուշոտ, անձրեւոտ օրը: Մեր տան բացօդեայ սրահէն կը դիտենք Ղարղալարի կողմը, Քէրէր Տինէր: Կրակն ու հրացաններու ծուխը իրարու կը խառնուին այնտեղ: Ահա Շամքէշիւեան Փանոս Թնդանօթը կ'ուղղէ Ալի Պէկի ուժերուն մէկ խմբակին վրայ: Ռումբը կ'իյնայ ուղղակի խումբին վրայ, եւ իր ուժաճիգովը միասին ջարդուփշուր կ'ըլլայ խումբը: Արեւմտեան ճակատի կուտողներու մեր թիւը կը հասնէր 1000-ի, իսկ թշնամին ունէր 30000-ի ոյժ մը, գինուոր, պաշրպօզուգ, չէրքէզ եւ հաճիլէրի թուրքեր: Բարթուղիմէոս Հայր Սուրբ պահպանիչ մը ըսած էր ուրբաճիգ Շամքէշիւեանի վրայ եւ հրամայած էր որ ումբը արձակէ: Թշնամին չիփթութեան կը մատնուի, մինչդեռ իր ուժերուն մէկ մասը կը հասնէր Սօլազ-Տէրէէն, Զաթօլ Քար եւ կը տարածուէր Քէրէր Տինէր: Այնտեղ ալ արիւնայի պատերազմ մը տեղի կ'ունենայ 4 ժամ անընդհատ: 150-ի չափ հայ տղաք, առջեւին ձգած քանի մը

հազարէ բաղկացած արծերու հօտ մը կը յառաջանան դէպի Ալի Պէկի ուժերը: Թշնամին անտեղեակ այս խաղին, ուրախութեամբ կը խուժեն կենդանիներուն վրայ առնել տանելու ախորժակով, մեր տղաքը քարերու եւ խրամներու մէջէն համազարկ մը կը բանան, ու թշնամին թուփի պէս գետին կը թափի: Մառախուղի մէջ թշնամին խուճապահար ետ կը քաշուի, ու դիրք բռնած կը կենայ: Տասնեւօթ օր կոփւ տեղի կ'ունենայ նաեւ արեւմտեան ճակատի վրայ եւ թշնամին չի կրնար Շուղրի եւ Կարսի կամուրջներուն մօտենալ եւ Զէյթուն մտնել, ինչպէս որ Բէմզիի բանակը չկրցաւ մտնել Պաղ Աղբիւրի կամ Քէարթէօքօր եւ Ափրնաքարտակի կողմէն Զէյթուն եւ ոչ ալ Աստուածածնայ վանքը: Ալի Պէկ, Բէմզի Փաշայէն օգնութիւն կ'ուղէ, օգնական ուժեր կը հասնին, սակայն օրը տարածամած է եւ ահա երկու կողմէ այդ գիշեր դադար մը տեղի կ'ունենայ: Ու կը սպասէ Ըոծակ քար ըստած տեղը ու չի կրնար յառաջանալ, որովհետեւ յաջորդ առտու կրկին կը սկսի կոփուր ու հայերու դիմադրութիւնը կ'ըլլայ սաստիկ:

Հրամանատար Էտհէմ Փաշան.—

Բէմզի Փաշա յուսակտուր թէ կրնայ Զէյթունի յաղթել, հարիւրապետ Հաճի Եասինի կը խօսի: Հաճի Եասին երեք անգամ նամակ կը գրէ փաշային թելադրանքով Զէյթուն եւ հաշտութիւն կը խնդրէ: Բայց անպատասխանի կը մնայ: Մուստաֆա Բէմզի Փաշա, այլեւս ճարահատ կը հեռագրէ Սուլթան Համիտի թէ 11000-ի ուժով կարելի չէ Զէյթունը ընկճել, 50000-ի օգնութեան մը պէտք կայ: Սուլթանը չափազանց նեղուած պաշտօնանկ ընելով գինքը, Պոլիս կը կանչէ եւ իր տեղը կը դրկուի Էտհէմ Փաշա: Այս վերջինն ալ քանի մը անյաջող ընդհարումներէ ետքը կը խոստովանի օսմանեան բանակին տկարութիւնն ու անկազմակերպ վիճակը:

1895-ը վերջացած էր, Յունուարի մէջ էինք, թանձր ձիւնը ծածկած էր Զէյթունի լեռներն ու դաշտերը: Կռիւները ընդհատ ընդհատ տակաւին տեղի կ'ունենային երկու ճակատներուն վրայ: Զէյթունցիներ իրենց դիրքերուն մէջ էին եւ կը պատասխանէին թշնամիին: Ղարղալարի կողմէն, թշնամի բանակէն Զէյթունի բարձրավանդակէն կը կանչէր, առտու կանուխ արշալոյսին «Կարապիտ Աղօ, Կարապիտ Աղօ, թէլ-կօրոֆ եկեր է ձեզ, Եւրոփէն, ճերմօկ, պայեախէօվ մէկը ճամբեցէք, թուղ զօ առնու» «Կարապետ Աղա, Կարապետ Աղա, ձեզի հեռադիր մը կայ Եւրոպայէն եկած, ճերմակ դրօշակով մէկը թող գայ առնէ»: Կը ստուգուի, իրաւ որ եւրոպական վեց մեծ պետութեանց Հալէպի հիւպատոսներէն հեռագիր մը եկած է:

Հիւպատոսները Մարաշ եկած եւ այդ հեռագիրը քաշած էին Ձէյթուն: Յարութիւն անուն զէյթունցի մը ճերմակ դրօշով կը ղրկուի բանակատեղին, հեռագիրը կ'առնէ եւ կը վերադառնայ Ձէյթուն: Հեռագիրին թուականն է 1896 Յունուար 18, ստորագրած էին

Ռուս հիւպատոս՝ Յակիմանսկի Միխայիլ Իվանովիչ

Ֆրանսական փոխ հիւպատոս՝ Պարթէյըմի

Աւստրիական հիւպատոս՝ Պարնէրոն

Անգլիական հիւպատոս՝ Պարնհայմ

Իտալական հիւպատոս՝ Հանրի Վիթթօ

Գերմանական հիւպատոս՝ Ջօլինկէր

Անոնք այդ հեռագրով կ'ուզէին հաշտութիւն կայացնել թուրք կառավարութեան եւ Ձէյթունի միջեւ: Եւ ակեցնելով կ'ըսէին թէ եթէ կը փափաքէք պատրաստ ենք Ձէյթուն գալու եւ միջամտելու:

Ձէյթունցիք այդ հեռագրին վրայ երկար բարակ, թեր ու դժ վիճաբանելէ եւ խորհրդակցելէ յետոյ, առաջնորդական փոխանորդ Տ. Սարգիս Քահանան կը ղրկուի հեռագրին պատասխանը տալու: Մինչեւ այդ թուականը սակայն կոխը կը շարունակուի երկու ճակատներուն վրայ, սակայն ոչ առաջուան սաստկութիւնով: Ղարդալարի գերեզմանէն, եւ արեւելեան կողմէ Ալեքսաննեց մատեն եւ Պուչարճենց բարձունքէն թուրք զօրքերը ընդհատ ընդհատ կը կրակէին իրենց մարթին հրացանները, թնդանօթը սակայն այլեւս լռած էր: Հեռագրի պատասխանէն յետոյ, մինչեւ հիւպատոսներու Ձէյթուն հասնիլը գինադար կը կնքուի երկու կողմերուն միջեւ: Հիւպատոսները Ձէյթուն կը հասնին 11-23 Յունուարին, եւ կը հիւրընկալուին զօրանոցին կից անվնաս մնացած տուն մը: Բանակցութիւնը կը սկսի 1896-ի 16-27 Յունուարին: Ձէյթունի պատգամաւոր-ներկայացուցիչներն էին Ս. Սարգիս-Ղարդալար թաղէն՝ Աստուածատուր Աղա Անդրէասեան եւ Կարապետ Տ. Յակոբեան, Ս. Յովհաննէս-Պօպայիր թաղէն՝ Ժերունի Ղազարոս (Հազօր Աղա) իշխան Շորփոյեան եւ Պետրոս Աղա Չազրեան, Ս. Աստուածածին-Սուրէնեան թաղէն՝ Կարապետ Աղա Բասիլոսեան, Տ. Կարապետ Քահանայ Երկանեան եւ Ս. Լուսաւորիչ-Վերթ թաղէն՝ Կիւլվանդսեան Նազարէթ Աղա եւ Ենիտիւնեան Նազարէթ իշխան: Հաշտութեան այդ ժողովին կը նախագահէր իտալական հիւպատոսը՝ Հանրի Վիթթօ, որ անոնցմէ ամենէն ծերն էր, երկճիւղ փառաւոր մօրուք մը ունէր: Ձէյթունցիք Չաթօլ մուրուք կ'ըսէին: Անիկա դիւրութեամբ չէր կրնար քալել: Ձէյթունցի չորս կտրիճներ, պատգարակի վրայ կը պտըտցնէին վերջէն Ձէյթունի թաղերը: Մտաւէն ալ պատգարակով բերած էին գինքը:

Նախագահ Վիթթօ ժողովը բանալով, ֆրանսական թարգմանի միջոցով

կ'ըսէ թէ՝ «Հայկական խնդիրը մեծ պետութեանց սեղանին վրայ է, իրենք եկած են յատկապէս Ձէյթունի համար, եթէ իրենց առաջարկները կ'ընդունուին, պիտի միջամտեն, պատերազմը պիտի վերջանայ եւ բանակները պիտի վերադառնան իրենց տեղերը: Ձէյթունցի ներկայացուցիչներուն դիմաց կը կենար էտհէմ Փաշա, իսկ Մարաշի կառավարիչը թէեւ ներկայ էր, սակայն բանակցութեանց չէր մասնակցեր: Առաջին նիստին հիւպատոսները կ'առաջարկէին զէյթունցիներուն որ՝

1. Այրուած զօրանոցը զէյթունցիք իրենց ծախսով վերաջինեն.

2. Պատերազմի վնասները հատուցանեն.

3. Գրաւուած գէնքերն եւ մթերքը վերադարձնեն.

4. Դուրսէն եկած օտար յեղափոխականները յանձնեն կառավարութեան.

5. Տեղական կառավարութեան նախորդ վարչաձեւը վերահաստատուի, այսինքն թուրք գայմազամ մը եւ թուրք պաշտօնէութիւն մը, պահուի Ձէյթուն եւ յետեւալ տուրքերը հատուցուին:

Ձէյթունցի պատգամաւորները չափազանց ծանր կը գտնեն այս պայմանները եւ հարկ կը տեսնեն վերադառնալ Ձէյթուն, եւ ժողովուրդին հաղորդել: Երկրորդ նիստին կու գան անոնք հետեւեալ պատասխանները բերած.՝

Ա. Գրաւուած գէնքերէն պատրաստ գտնուածը կը յանձնենք.

Բ. Զօրանոցը վերաջինելու եւ վնասները տուժելու կարողութիւն չունինք.

Գ. Յեղափոխականներ չունինք, որ յանձնենք, միմիայն մեր անձնական ինքնապաշտպանութեան համար, բոլորս նոյնիսկ մեր կիները գինուած էին.

Դ. Ձէյթունի կրած վնասին համար 7 տարի ի վիճակի չենք տուրք վճարելու: Յետոյ ալ տուրքերը պէտք է կրճատուին: (Բէմգի Փաշա Ձէյթունի բոլոր այգիներն ու պարտէզները կտրել տուած էր բանակին, ինչ որ Ձէյթունի համար ահագին կորուստ մըն էր եւ իրենց ապրուստին միակ միջոցը): Եթէ ոչ՝ Ձէյթուն պատրաստ է կրփուր շարունակելու:

Հիւպատոսնարը այս բանակցութիւնները Կ. Պոլիս կը հաղորդէին իրենց դեսպաններուն, իսկ թուրք Փաշան էտհէմ ալ Բ. Դուան Սուլթանին: Բանակցութիւնները այսպէս օրեր շարունակուեցան եւ տեւեցին մինչեւ Յունուարի վերջերը: 9 Փետրուարին հաշտութիւն կը կնքուի ու կոխը կը վերջանայ:

Յետ երկար բանակցութիւններու հաշտութիւնը կը կնքուի հետեւեալ պայմաններով.՝

1. Կատարեալ ներում գէյթունցիներու եւ հոն ապաստանած օտարականներուն, գիւղացիներու, ճամբորդներու եւ հրոսակներու:

2. Հաստատում՝ քրիստոնեայ գայմազամ, տեղակալի մը ընտրուած եւրոպական պետութեանց հաւանութեամբ:

3. Զէյթունցիները իրենցմէ պիտի ընտրեն եւ նշանակեն Զէյթունի կառավարական պաշտօնէութիւնը, ոստիկան-գինուոր, հարկահաւաք եւ միթարները:

4. Յետեւալ տուրքը որ կը հասնէր 70-100000 Օսմ. ոսկիի, (որուն 7000-ը օսմանեան դրամատունէն փոխառութիւնով առնուած էր) հինգ տարի յետոյ պիտի սկսին փճարել համեմատական կերպով բաշխելով, անկէ զեղչուելիք գումարը:

5. Եւրոպական պետութեանց կողմէ պիտի երաշխաւորուի գէյթունցիներուն կեանքը, ինչքը եւ պատիւը:

6. Զէյթուն ապաստանած օտարականները, բոլոր հայ գիւղացիները, հիւպատոսներու հսկողութեամբ պիտի վերադարձուին իրենց վայրերը, ինչպէս նաեւ օտարական կռուողները՝ Աղասի, Հրաչեայ եւ Ապահ կերպով պիտի ղրկուին արտասահման:

7. Զէյթունցիները գրաւուած պետական գէնքերը պիտի վերադարձնէին կառավարութեան, պայմանով որ շրջակայ թուրք եւ չէրքէզ գիւղացիներն ալ գինաթափուին: Իսկ գէյթունցիներու տեղական գէնքերը պիտի մնան իրենց քովը:

8. Այրուած զօրանոցը թուրք կառավարութիւնը, ինքը պիտի վերադնէ:

9. Բանակը պիտի հեռանայ Զէյթունէն, միայն ապահովութեան համար գունդ մը զօրք պիտի մնայ զօրանոցը, առանց սակայն միջամտելու Զէյթունի ներքին գործերուն:

10. Բանակցող հիւպատոսներ չմեկնին Զէյթունէն, մինչեւ այդ պայմաններու գործադրութեան սկսիլը: Միջազգային պայմանի մը արձանագրութեամբ պիտի երաշխաւորուի նոր ըէֆիմի պահպանումը թուրք ոսնձգութեանց դիմաց:

11. Եւրոպական պետութիւններ Մարաշի մէջ հիւպատոս մը պիտի ունենան իրենց բոլորին կողմէ ըէֆիմի պահպանութեան հսկելու համար:

12. Վերջապէս հաշտութեան վերոյիշեալ պայմանները կ'երաշխաւորուին վեց պետութեանց դեսպաններուն եւ Բ. Դուան միջեւ կնքուած պայմանագրով մը:

Վերոյիշեալ պայմանները Սուլթան Համիտ Բ-ի կողմէ պաշտօնապէս կ'ընդունուի եւ կը վաւերացուի: Սակայն վերջէն, եւրոպական պետութեանց զանցաւորութեամբ թէ դիւանագիտական խաղերուն պատճառով,

ռով, այդ պայմանները մասամբ միայն ի գործ դրուեցան: Ընդհանուր ներումը չնորհուեցաւ, տուրքերը զեղջուեցան եւ յետաձգուեցան: Քրիստոնեայ գայմազամ մը եւ Զէյթունի ոստիկան եւ պաշտօնէութիւն ունեցաւ Զէյթունի կառավարութիւնը բաւական երկար ատեն: Օտարականներ եւ գիւղացիներ ապահով կերպով վերադարձուեցան իրենց տեղերը: Վերոյիշեալ դաշնագրի պայմաններու տրամադրութիւնները կը հաղորդուին Զէյթունի եւ շրջակայ 100-ի մօտ հայ գիւղերուն եւ ժողովուրդին, ինչպէս նաեւ այդ 100 գիւղերուն մէջ գտնուող 10-ի չափ թուրք գիւղերուն, որոնք Անտրուքի եւ Իջնակիէի (Ենիճէ Գաւէ) կը պատկանին:

1895-96-ի Կոնստանտնուպոլիսի նախաձեռնումները

(Կրկնութիւն ըստ Բարթոլոմէոս Հայր Սուրբին)

Տ. Մարտիրոս Մալախեանէն, որ տեղեկատու էր, իմացայ որ եւրոպացիներ եկած են Մարաշ՝ ծպտուած: Ասոնք հնչակեաններ էին, որ Սուլթանի մէջ լաւ ընդունելութիւն չգտնելով, ձէլլատ կարապետին հետ Զէյթուն գալու համար ճամբայ ելած էին: Ասոնք Նազարէթ Զաւուլին հետ կը տեսնուին եւ Նազարէթ Զաւուլ ինծի կու գայ եւ կ'ըսէ. «Այ ձեռքէդ պիտի ազատիմ: Ասանկ ըսաւ ան ինծի, որովհետեւ միշտ ես իրեն կ'ըսէի թէ՝ «Դուն հայ չես, տաճիկ ես, երկու հայեր սպաննեցիր եւ այդ պաշտօնին տիրացար»: Ու ինքը յաճախ կը հարցնէր թէ՝ «Ի՞նչ ընեմ նորէն հայ ըլլալու համար: Այդ երկու հայուն տեղ 200 թուրք սպաննելու ես, կը պատասխանէի ես: Նազարէթ Զաւուլ շարունակեց խօսիլ եւ ըսաւ թէ՝ ալ ձեռքէդ պիտի ազատիմ, որովհետեւ եւրոպացիներ եկած են եւ կ'ըսեն թէ երբ քիչ ատենէն մեր եւ թուրքի մէջ պատերազմ բացուի բոլոր հայերը մեր կողքին պիտի կռուին թուրքերուն դէմ եւ մենք պիտի ազատենք զանոնք:

— Կ'ուզեն գան, կ'ուզեն երթան, մենք անոնց հետ գործ չունինք ըսի: Ասոր վրայ, Ֆռնուզի բոլոր վիճակները այցելեցի հովուական աջակցութեամբ, քարոզեցի որ ժամանակները անստոյգ են եւ վտանգաւոր, գինուին եւ պատրաստ ըլլան գալիք ծանր օրերուն: Ունեցած տաւարներն եւ պաշարներն ծախեն եւ պատրաստուին, գէնք գնեն: Պաշարին մնացած մասն ալ Զէյթունի վանքը փոխադրեն, ըսելով թէ վանքին տուրքերը վճարելու համար նպաստ կը տանին: Եւ աւելցուցի թէ երբ խառնակութիւն պատահի, թուրքերը ձեր վրայ պիտի յարձակին եւ դուք պիտի ստիպուիք Զէյթուն ապաստանիլ:

Կոկիսոն, անկէ ալ Կապան այցելեցի եւ վանք դարձաւ: Հոն իմացայ որ հնչակեանները Զէյթունի մօտեցեր են եւ ձորի մը մէջ

դադար առեր են...

Գացի հասայ Մութ Ձոր (Գարանլըզ Տէրէ), հետս առած քառասուն զինուած կտրիճներ: Ընկերներէս առաջ հասայ հոն, որովհետեւ ձիս իրենցմէ արագ կ'ընթանար: Տեսայ որ խարոյկի մը շուրջը, վէճի բռնուած էին: Յարուսթիւն Խոճայեան կ'ընդդիմաբանէր եւ կը յուսահատեցնէր ներկաները: Բաւական վիճաբանութիւններէ, թեր ու դէմ խօսքերէ յետոյ, ապստամբելու, պատերազմելու որոշում տուինք եւ իմ մարդոց հետ Ֆոնուզի վանքը դարձայ:

Զօրանոցի պաշարումը, գրաւումը եւ հաշտութիւն (Ըստ Հայր Սուրբին)

Զէյթունի զօրանոցը պաշարեցինք... 12 Հոկտ.-ին: Հինգ օր վերջ, հաշտութեան համար զօրանոցէն պատգամաւոր ուղեցին զէյթունցիներէն: Որովհետեւ թշնամին զօրանոցէն ներս նեղ դրութեան մէջ էր եւ պիտի յանձնուէր: Հաշտութեան բանակցութեան համար Զէյթունէն մարդ կ'ուղէին: Զիս յարմար տեսան ղրկել: Զէյթունի վանքէն վեղարս եւ ձիս բերին եւ գացի զօրանոցը, սուրս քովէս կը կախուէր: Մտայ, դիմաւորեցին զիս մեծ յարգանքներով: Բանակցութիւններու սկսանք, վերջապէս համաձայնեցանք որ զիրենք անվնաս ազատ թողունք: Զինաթափ ընելէ վերջը, եւ մնան մեր մօտ իրենց պատանդ մինչեւ որ կառավարութեան հետ կարենայինք հասկացողութեան գալ: Որոշուած էր որ թուրք զինուորները իրենց զէնքերը պիտի թողէին զօրանոցը եւ առանց զէնքի դուրս պիտի գալին: Դրան առջեւ ձիուս վրայ կեցած, սուրս մերկացուցած եւ բարձրացուցած, կուրծքէս ալ խաչը կախուած, զօրքերը մէկիկ մէկիկ անցան սուրիս տակէն, խոնարհութիւն ընելով խաչին: Զօրանոցը գրաւելէ վերջ դարձայ Ֆոնուզի վանքը, հոն իմացայ որ Անտրուրնի գայմազամը, չերքէզները եւ քիւրտները հաւաքելով, յարձակեր է Շիվիլիի վրայ Գիւղացիք: Աւետարանն ու խաչը առջեւնին բռնած իրենք զիրենք պաշտպաններ են երեք օր շարունակ: Տ. Յարուսթիւնը ինծի լուր ղրկեր էր օգնութեան հասնելու, հոն գացի իմ մարդիկը առած, պաշարման դօտին խորտակեցի եւ բովանդակ ժողովուրդը առնելով Պոնտոսի բերի: Գայմազամը Շիվիլիի վրէժը Անտրուրնի հայրէն առնել կ'ուզէ: Կը բռնէ այդ խեղճերը եւ բանտ կը նետէ, լուր եկա ինծի, գացի եւ յաջողեցայ, առանց մեծ կորուստի 150 բանտարկեալներ ազատել բանտէն: Այրեցի կառավարչատունը:

Ասկէ մտադրեցի Սիս եւ Ատանա իջնել, բոլոր կիլիկիան ոտք հանել եւ ազատել գայն թուրքերու իշխանութենէն: Զէյթունի իշխանները համաձայն չգտնուեցան, չափազանց յախուռն տեսան այդ ծրագիրը:

Ըսելով որ խոհեմութիւն պիտի չըլլայ մեզի համար հեռանալ մեր ամուր լեռներէն եւ մեր ուժերը բաժնել: Այս փառաւոր յաջողութիւնները սակայն, ինծի մեծ քաջալերութիւն մը եղած էին: Թուրքերը անուս լսելով լեղապատառ կը փախչէին, երբ լուր առնէին թէ Տէյի վարդապետը կու գայ զիրենք ջարդելու:

Այս մտադրութիւնս գործի չվերածուեցաւ, բայց թուրքերը այնքան սարսափի մատնուած էին, որ իրենցմէ պատգամաւորութիւն մը Սիս կ'երթայ, Նիկողոս Եպիսկոպոսին, որ Պոլսէն վտարուած էր, Սիս մտալու արտօնութեամբ եւ կաղաչեն որ զիրենք ազատէ զէյթունցիներու եւ իմ ձեռքերէն: Զէյթունի իշխանները համաձայն չգտնուեցան իմ այս որոշումին, այս գործը մնաց առանց իրականացումի: Վանք դարձայ ստիպուած՝ Անտրուրնի արշաւանքէս, հագիւ քիչ մը հանգիստ առած էի, Հօրեղբօրս թողը՝ Մանուկ, որ կարգալը ինձմէ սորված էր եւ իբր տիրացու կը ծառայէր Ենիճէ-Գալէյի եկեղեցիին մէջ, որուն վրայ տարիներ վերջ քահանայ օծուեցաւ, նամակ մը գրած էր ինծի, ըսելով. «Հօրեղբայր, հասիր, Մարաշէն զօրքեր եկած կը պատրաստուին մեզ ջարդելու»: Այդ նամակին մէջ նոյն խնդրանքը կ'ընէր նաեւ Հայր Մանուէլ՝ կաթոլիկ քահանայ: Գիշերը 60 հոգի ղրկեցի, առտուն ալ քանի մը հարիւր հոգիով ճամբայ ելայ դէպի Ենիճէ-Գալէ: Կուուեցանք Մարաշէն եկած զօրքերուն դէմ, որ մեր կորովի դիմադրութեան չտոկայով նահանջեցին, իսկ մեր փամփուշտները սպառած ըլլալուն, առանց յայտնի ընելու, գիշերով ետ դարձանք Ֆոնուզ:

Իգմիրէն Ալի Պէկը եկաւ Ֆոնուզի վրայ: Այր մարդիկ իրենց տուններէն բացակայ էին: Երեսուն հոգիով օր մը ամրոց դիմադրեցինք հազարաւորներու հասնող բանակին: Կարելի չըլլալով այս անհաւասար կռիւր շարունակել, փախանք ժողովուրդին հետ Զէյթուն: Թուրքերը մեր մեկնելէն վերջ կ'այրեն վանքը:

Զէյթուն հասանք, հոն ալ կռիւր ծայր տուած էր, միացանք Զէյթունի պատերազմիկներուն: Ես ցերեկը կը կուռէի, իսկ գիշերը բերդին տանիքին վրայ ժամերգութիւն եւ պաշտամունք կ'ընէի (սակայն առանց լոյս, մոմ վառելու անշուշտ եւ առանց բարձր ձայն հանելու (Մ. Սիսեռեան): Վանքին տանիքը պարզեցինք դրօշակ մը, մեզ չէին տեսներ թուրքերը, երբ դրօշակին վրայ զէնք պարպէին, մենք վանքի սենեակներու ծակերէն ու ծերպերէն կը պատասխանէինք անոնց կրակին: Անգամ մը մեր դրօշակը հովէն վար ինկաւ, թուրքերը սկսան ուրախանալ, արժանապատուութիւնս վիրաւորուած զգացի, տանիք բարձրացայ եւ թշնամիներու զնդակներու տարափին տակ, առանց որեւէ վնասի իր տեղը հաստատեցի գայն:

Վանքը Մեղրոն անուն ճգնաւոր մը կար, առաւուն կանուխ կ'ելէր տաճարին բոլոր պատկերներուն առջեւ կ'աղօթէր, կը խնկարկէր եւ կ'երթար Հանգչելու: Օր մը մրափած ատենը, կողին մշտելով արթնցուցի եւ ըսի. եթէ Զէյթունը յաղթուի, քեզ ձեռքովս պիտի մորթեմ, որ թշնամիին ձեռքը չիյնաս:

— Զէյթունը չի յաղթուիր, Հայր Սուրբ, պատասխանեց, քու Հաւատքը կը բաւէ եւ այդ Հաւատքդ մեր մարդիկ առիւծներու կը փոխէ կռիւի ատեն, դուն մի վախնար: Հետը իյնալու համար կ'ըսէի. Ես մեղաւոր եմ, ամէն օր մարդ կը սպաննեմ, Աստուած զիս չի օրեր:

— Ո՛հ, դուն մեղաւոր չես, ինքզինքդ եւ ժողովուրդդ կը պաշտպանես, թշնամի սպաննելը մեղք չէ. Աստուած խորայնացիներուն հրամայեց ջարդել իրենց թշնամիները: Հոն էր նաեւ քահանայ մը Տ. Գէորգ անուն, որ կը ճգնէր եւ կ'աղօթէր: Օր մը ան վազելով ինծի եկաւ, ուրախ լուր մը ունեցողի պէս.

— Ի՛նչ կայ, ի՛նչ ունիս, հարցուցի:

— Այս գիշեր երազ մը տեսայ, Հայր Սուրբ, եկայ որ քեզի պատմեմ, ըսաւ, տեսայ որ՝ բոլոր սուրբերը եկած էին Զէյթունի շուրջը պարիսպ քաշելու: Ես հարցուցի իրենց «Ինչո՞ւ Զէյթուն կու գաք», «Մենք Զէյթունի պահապան գործերն ենք» ըսին անոնք, «Որքան տեսն որ հոս ենք մենք, թուրքերը չեն կրնար Զէյթուն մտնել»: Եւ իրաւ ալ թշնամին չկրցաւ Զէյթուն մտնել, մինչեւ որ մեր եւ իրենց միջեւ հաշտութիւն կնքուեցաւ:

Զէյթունի դիմադրութեան յաջողութիւնը մեր ուժին արդիւնքը չէր, այլ մեր հաւատքին, այդ հաւատքով էր որ ափ մը զէյթունցիներ արքան հրաշքներ կրցաւ գործել: Մեզի եկող Հնչակեանները անհաւատ են եղեր, բայց գայթակղութիւն չպատճառելու համար մեզի հետ ծով ու պահէ կը բռնէին, կ'ապաշխարէին, կ'աղօթէին եւ միասին կը կռուէին: Ես շատ վերջն էր որ իմացայ իրենց անհաւատ եղած ըլլալը, բայց օրհնեցի զիրենք, իրենց եղբայրներուն, այսինքն մեր ժողովուրդին գայթակղութեան պատճառ չըլլալու համար: Կռիւր կը շարունակուէր դեռ, երբ վեց մեծ պետութեանց Հայկապոսները եկան մեզ հաշտեցնելու թուրքերուն հետ: Զէյթունցիք պատգամաւոր զրկեցին զիս, Տ. Կարապետ Երկանեան Աւագ երէցը եւ միեւնոյն տեն Առաջնորդական Փոխանորդը, Զէյթունի հայ կաթողիկոսներու վարդապետը, բողոքականներու պատուելին եւ Սուրէնեան Կարապետ Աղան եւ ուրիշ երեք անձեր:

Հիւպատոսներու տարեցն էր խալապան հիւպատոսը՝ Հանթի

Վիթթօ: Ան էր որ կը խօսէր ընկերներուն անունով: Ան ըսաւ մեզի. «Պոլսոյ Սուլթանը կանչեր է մեր դեսպանները եւ անոնց հաղորդեր է որ կը ներէ զէյթունցիներուն եւ կը փափաքի, որ խաղաղութիւն եւ հաշտութիւն ըլլայ հայերու եւ թուրքերու միջեւ: Կ. Պոլսոյ մեր դեսպանները պաշտօն տուած են մեզի որ գանք եւ ձեզի հետ բանակցինք: Կ'ուզէ՞ք հաշտուիլ թուրքերուն հետ»:

— Յարգելի հիւպատոս, խաղաղութիւնը անուշ բան է, պատասխանեցինք եւ հաշտ ապրիլ մեր դրացիներու հետ քրիստոնեաներուս համար Աստուծոյ հաճելի ընթացք մըն է: Բայց բոլոր թուրքերը եւ Սուլթանը ուժէն միայն կը հասկնան, ուժին առջեւ կը խոնարհին:

— Ատանկ բաներ մի ըսէք, ըսաւ խալապան հիւպատոսը, թուրքերը կը գրգռուին, մենք կռիւր գրգռելու չենք եկած, այլ հաշտութիւն կնքելու:

— Բայց մենք ալ կը գրգռուինք, ըսի ես, երբ մեզ իբր հպատակներ կը չարչարեն մեր խաղաղ աշխատանքներուն մէջ, տուրքեր դրած են, զորս չենք կրնար վճարել, կը սպաննեն ու կը կողոպտեն հանգիստ հայերը, մեզի հող ու մոխիր կը ձգեն միայն, մեր արդար վաստակէն եւ աշխատանքէն, հողինիս բերանիս եկած է, ալ չենք դիմանար, որոշած ենք ամէն օր մէյ մէկ քիչ մեռնելու տեղ, մէկ անգամէն մեռնիլ, ամէնքս մէկ, կիներով, աղջիկներով եւ մանուկներով:

— Սուլթանը պատրաստ է ամէն կերպով հոգալ ձեր ապահովութիւնը, պատասխանեց հիւպատոսը եւ թոյլ չտալ ասկէ յետոյ, որ նման չարիքներ պատահին:

— Իբրեւ խաղաղարարներ յարգելի էք դուք մեզի, պատասխանեցինք, սակայն վստահութիւն չունինք թուրքերուն վրայ, մենք չենք կրնար թողուլ մեր գէնքերը, անոնք են որ մեզ կը պաշտպանեն եւ ես առանձինն հարցուցի. «Կը վստահի՞ք թուրքերու խօսքին»: Հիւպատոսը կը կենայ, կը վարանի այս հարցումին վրայ եւ քիչ մը յետոյ, քիչ մը շփոթած. «Պէտք է վստահիլ, ըսաւ ան, նոյնիսկ պէտք է փորձել, այս վիճակը օգտակար չէ ո՛չ ձեզի եւ ոչ ալ իրենց»:

Այն ատեն Տ. Կարապետ Քահանան միջամտեց եւ ըսաւ. «Յարգելի հիւպատոսներ, մենք թուրքերու խօսքին չենք վստահիր, բայց կը վստահինք միայն ձեր խօսքերուն եւ կը համակերպինք ձեր թելադրութիւններուն, որովհետեւ ալ սպառած ենք, ժողովուրդին վիճակը շատ խեղճ է եւ անտանելի կացութիւն մը ստեղծուած է մեզի համար:

Գէշ մը նայեցայ Տ. Կարապետին, մեր գաղտնիքը միամտութեամբ կը հրապարակէր եւ մեր դատը կը տկարացնէր: Այլ անկարելի եղաւ խտապահանջ ըլլալ: Որոշեցինք որ Երկուշաբթի օրը հաւաքուինք եւ

Համաձայնինք Հաշտութեան պայմաններուն վրայ:

Հիւպատոսը այն ատեն Հարցուց: «Ձեր մէջ դուրսէն եկողներ կան եղեր, ատոնք Հոս տուն տեղ ունին»:

— Ո՛հ, պատասխանեցինք:

— Ատոնք խռովարարներ են, ըսաւ, պէտք է հեռացուին եւ Պոլիս ղրկուին:

— Ինչո՞ւ, Հարցուցի եւ զայրացած երեւոյթով. մենք պատերազմելու որոշում տուած էինք արդէն, ատոնք ալ իբրեւ Հայեր մեր մէջ գտնուեցան եւ իբրեւ Հայրենակից եղբայրներ միացան մեզի, սխալ ըրած են: Երբ մէկը Հարսանիք ունենայ եկող Հիւրը կը մերժէ:

— Ո՛ւր պիտի երթան Հապա, Հարցուց Վիթթօ:

— Ուրկից որ եկան Հոն, ըսինք մենք, Եգիպտոս:

— Շատ լաւ, ըսաւ Հիւպատոսը:

Բայց ձեր պաշտպանութեան եւ ապահովութեան տակ պէտք է որ անցնին երկրէն եւ Եգիպտոս երթալու Համար նաւ նստին:

— Շատ լաւ, ըսին Հիւպատոսները:

Երկուշաբթի օրը դարձեալ Հաւաքուեցանք, Համաձայնեցանք Հաշտութեան պայմաններուն վրայ, որոնցմէ.

ա. կայսերական ներում ընդհանուր, բոլոր անոնց որոնք զէնք առած եւ կռուած էին: Մեր միւս պայմաններն էին.—

բ. Տարիներէ ի վեր անվճար մնացած կառավարական յետնեալ (պաքիյէ) տուրքերը ջնջել:

գ. Տասը տարի շարունակ Ձէյթունը ազատ ընել տուրքերէ:

դ. Ձէյթունի գայմագամը քրիստոնեայ պէտք է ըլլայ:

Այս Համաձայնեցանք թուրքերուն հետ երկուստեք, Հիւպատոսներու երաշխաւորութեամբ եւ Հաշտութիւնը կնքուելէ յետոյ Հիւպատոսները մեկնեցան Հալէպ, իսկ օտարականներն ալ անցան արտասահման:

Բարթոլոմէոս Վրդ. Թագաճեան

ԶԷՅԹՈՒՆ 1895-96-Ի ԿՈՒԻՆԵՐԷՆ ԱՆՄԻՋԱՊԷՍ ՅԵՏՈՅ

Այս կոիւններուն մէջ թէպէտեւ Ձէյթուն միշտ ալ հերոսաբար կռուեցաւ, ոչ մէկ ճակատի վրայ պարտութիւն եւ տկարութիւն ցոյց չտուաւ եւ պատուաւոր Հաշտութիւն մը կնքուեցաւ իր եւ Օսմ. կառավարութեան միջեւ, եւրոպական վեց մեծ պետութեանց Հիւպատոսներու միջամտութեամբ եւ երաշխաւորութեամբ, սակայն պատերազմէն յետոյ, թշուառութեան, աղի չգոյութեան, սնունդի պակասութեան հետեւանքով 500 զէյթունցիներ եւ 3000 գիւղացի ապաստանեալներ զոհ գացին վարակիչ Համաճարակ հիւանդութիւններու, թանջքը, ժանտատենդը մեծ աւեր գործեցին այնտեղ: Մինչդեռ 45 օր տեւող այս մեծ պատերազմի ամբողջ տեւողութեան կոիւնն մէջ ծնողներուն թիւը 150-ը չէր անցած: Մինչդեռ ըստ դեղին տետրակի արձանագրութեան, թուրքերուն կորուստը հասած է 20000-ի (13000 կանոնաւոր եւ 7000 անկանոն), իսկ թալուր քիւթիւի Մուստաֆա Էֆ-ի վկայութեամբ բանակը կը բաղկանար 40000 կանոնաւոր զօրքերէ եւ 70000 պաշտօնագրուներէ, այսինքն 110000-ի թշնամի ուժ մըն էր որ եկած էր Ձէյթունի վրայ, թշնամիին իսկ Հաստատումով: Այդ 110000-ին մէջէն 25000-ի կորուստ ունեցած է թուրքը, պատերազմին մէջ ինկած եւ ձմրան ձիւնին ու ցուրտին մէջ վրաններու տակ ծալք տուած Համաճարակներէ, թանջէ եւ թիֆոյէ, այս ալ դարձեալ իրենց վկայութիւնով:

Ձէյթունի կռուողներուն գործնապէս օգնեցին բացի հնչակեան Աղաթի եւ իր ընկերներէն, նաեւ մարաշի ծանօթ կարաւանապետ Քէ-ժի Օղլու երկու եղբայրները, որոնք Կեսարիայէն Մարաշ դառնալու ատեն ստիպուած էին Ձէյթուն ապաստանիլ, անոնցմէ մէկը կը դիւին մէջ նահատակուեցաւ, ինչպէս նաեւ Այնթապցի Յակոբ անուն քաջ մը ինկած էր կոիւնն մէջ:

Պատերազմի մէջտեղերը, հնչակեան յեղափոխականներէն Աւագ Չազրեան, Ստեփան Բուսթուսեան, դպրոցի տնօրէն Աւետիք Կէս- իւանեան, Նշան եւ Մլեհ, խաբուելով Շանլիւեան Աւետիս աղայի քով պահուած գերի զինուորներէն մէկուն կողմէ միամտօրէն հնչեցուած անձնատուութեան փողի ձայնէն, Ձէյթունէն դուրս կ'ելլեն, Ալպիստանի ճամբով Կիւրին անցնելու Համար, սակայն Ձէյթունէն 1-2 ժամ ան- դին, Քիթէզ թուրք գիւղը երբ կը հասնին, գիւղացիներ կը սպաննեն ամէնքն ար:

Ձէյթունի պատմութեան մէջ 1780-էն մինչեւ 1896-ը 41 պատերազմ եւ 16 մասնակի դէպքեր տեղի ունեցած են, ըստ զանազան պատմագիրներու եւ ի մասնաւորի Հայրենակից Սէմէրճեանի «Ձէյթունի անցեալէն եւ ներկայէն» երկու հատորներու արձանագրութեան, սակայն այս վերջինը կոչեր է Մինծ Տէնկիւշ, այսինքն Մեծ Պատերազմ:

խակապէս որ 45 օր 110000-ի հասնող բանակի մը դիմանալ, դիմադրել եւ չյաղթուիլ, բացառիկ երեւոյթ է եւ կոխին այնքան մեծ եւ կարեւոր տարողութիւնը նկատի առած եւ ի վերջոյ առաջ գալիք ամօթալի պարտութիւնը ի մտի ունեցած Սուլթան Ապտիլ Համիտ կը դիմէ եւ եւրոպական դեսպաններու միջամտութիւնը կը խնդրէ։ Հիւպատոսներ երբ զօրանոցը կը հասնին, անգլիական հիւպատոսը զօրանոցի մօտակայ բարձունքին ելած, Զէյթունի տեղը կը փնտռէ եւ Փաշային կը հարցնէ թէ՝ ո՞ւր է Զէյթունը ըստաւոր՝ Փաշան վարը, դիմացը երեք լեռներուն մէջ սեղմուած եւ Քարծայր լեռան կողմէն ամփիթատրոնաձեւ շարուած տունները ցոյց տալով, ահաւասիկ կ'ըսէ Զէյթունը։ Հիւպատոսը մէկ ձեռքով աչքին մէկը կը գոցէ ու կ'ըսէ Զէյթունը։ Հիւպատոսը մէկ ձեռքով աչքին մէկը կը գոցէ ու կ'ըսէ Զէյթունը։ Զէյթունը այլեւս չերեւար աչքին, մէկ ձեռքը կը աչքովը կը նայի, Զէյթունը միւս ձեռքով Փաշային, «Ամօթ ձեզի, կ'ըսէ, որ նման հակայ բանակով մը այսքան երկար ատեն կ'ուռնելէ յետոյ չկրցիք գրաւել այս փոքրիկ գիւղը»։ Անգլիոյ ժամանակուան պետական մեծ դէմքը «Արթիւններու բոյն» կոչել է Զէյթունը։ Իսկ Քիւստանսո եւ ուրիշներ զայն նամանցուցած են Մօնթէնէկոյի (Գարատաղի) Բարթոլոմէոս Վարդապետին կը հարցնեն հիւպատոսները թէ լինելու ծառայեցիք որ այս օտար Յ հիւրերուն համոզուեցաք եւ Տէրութեանը դէմ ապստամբեցաք։ Հայր Սուրբը, նեղուած, կը բողոքէ եւ կ'ըսէ. «Ո՛հ, այս հիւրերը ոչ մէկ յանցանք չունին, մեր Զէյթունի օրոգիութեանը ալ ձանձրացած էր թուրք կառավարութեան անարդարութիւններէն, անիրաւութիւններէն եւ դանակը ոսկորին հասած էր ու մենք պարզապէս մեր քաղաքին ինքնապաշտպանութեան համար կ'ուռնեցանք, մեր կեանքը, մեր պատիւը եւ ինչքը պաշտպանելը, մեր պապերէն աւանդուած պարտականութիւն է մեր վրայ եւ առաքելութիւն։ Իսկ այդ պարտքները, ազգին ազատութեան սիրոյն եկած էին, մեզի օգնելու, մասնակցելու մեր կոխին եւ ի հարկին զօրութեան, հակառակ իրենց անփորձութեան եւ կարգ մը տկար եւ թերի կողմերուն, անոր համար ձեզմէ պահանջեցինք, որ անոնց արտասահման զրկուելը ապահովուի ձեր կողմէ։

Այս կոխը անխուսափելի էր, տեղի պիտի ունենար անպարտ, որովհետեւ սպասել՝ ժամանակ կորսնցնել պիտի ըլլար եւ զէյթունցիներ եւս պիտի վիճակուէր Սասունի եւ միւս հայկական գաւառներուն վիճակը, ջարդ, առեւանգում, բռնաբարում, թալան եւ հալածանք։ Այդ կոխին մէջ Զէյթունի կիներն անգամ կ'ուռնեցան, անոնք զլեռները եկեղեցիները գացին աղօթեցին, ուխտեր ըրին, մոմեր վառեցին, մոխիր ցանցին իրենց գլուխները, քուրձ հագան ու յետոյ

վազեցին տեղացող ռուսներուն դիմաց, թաց թաղիքներով եւ իրենց թրուած փէշերով նոր ինկած ու տակաւին չպայթած ռուսներուն վրայ խոյացան նոր ամազոններու նման, Արեւմտեաններու, Փառանձեմներու նման, թոյլ չտուին որ անոնք պայթին։ Տարին այդ չպայթած ռուսները եւ անոնց վառօղն եւ կապարը օգտագործեցին մեր կ'ուռնողները։ Դաւիթեան Գէորգ վարպետը, ոսկերիչ Զօլաքեան Արթին վարպետը, Վարդիվարը, Փաւսեան վարպետ Մանուկը, թէնէֆէի Պարստամենց Մրխը հրացաններու գնդակ թափեցին եկեղեցիներուն մէջ։ Ու մենք մանուկներս գիշերները, եւ երբեմն նոյնիսկ ցերեկները մեր տանիքներուն վրայ տեղացող կապար գնդակները հաւաքեցինք մեր գոգերուն մէջ ու տարինք վարպետներուն, որ չախմախներուն եւ իրենց մարթիներուն գնդակ ձուլեն։

Ու այսպէս Զէյթուն իր այդ պատերազմով պատմութեան մէջ մնաց փառքի պատուանդանին վրայ։

Եւ երկար հանգստութեան մը պէտք ունէր։ Սպառած էին անոր նիւթական միջոցները, գիւղերը այրած, աւեր, քարուքանդ եղած էին, այգիները եւ պարտէզները կտրուած, ջարդուած, արտերը խոպանացած, անասունները, հօտերը ջարդուած։ Երկար ատենի խաղաղութիւն մը անհրաժեշտ էր Զէյթունի եւ իր շրջակայ հայ գիւղերուն, ինքզինքը գտնելու համար։

Հիւպատոսներէն Չաթալ Մօրուք Վիթօ պատգարակով կը պտըտէր Զէյթունի թաղերը, հաստատութիւնները եւ նպաստ ու դեղորայք կը բաժնէր ժողովուրդին։ Պատերազմի վերջաւորութեան հայրս եւ ես ալ ժամատանդի (թիթօ) բռնուեցանք, տաքութեան մէջ կը զառանցէինք, մեր աչքերուն առջեւ սեւ ուրուականներ երեւցան։ Սակայն չմեռանք, անցան այդ բոլորը։ Պատերազմէն քիչ ետքը մեռաւ մօրս մայրը՝ իմ քեռմայրս՝ Թուրվանտը, իսկ անկէ յետոյ տակաւին երկու տարի ապրեցաւ մեծ պապաս՝ Մնացականը ու մեռաւ 76 տարեկան հասակին։ Անիկա մասնակցած էր ժամանակին 1862-ի Ազիզ Փաշայի եւ 1878-ի Եօթը Փէշի կոխներուն եւ նաեւ 1895-96 պատերազմին։ Անիկեան եւ խաչուկենց Մնացական կը կոչուէր ան։ Արհեստով կլայագործ վարպետ էր։ Ազիզ Փաշայի ժամանակէն իր ձեռքն անցած երեք բերան եւ երեք փոս սուրինին մէջ կլայկը կը հալեցնէր ու կը ձուլէր լէհիմ։ Պահած էր նաեւ մեծ եւ կլոր ձմերուկի նմանող ռուս մը, Ազիզ Փաշայի արձակած դումպարաներէն եւ կը գործածէր որպէս լիտր մը ծանրութիւն կշիռքի համար։ Շատ մը զէյթունցիներ ունէին անկէ, ինչպէս նաեւ վերջին՝ 1896-ի կոխի ռուսներէն, որոնք երկար ձեւ մը ունէին։ 1896 Յունիսի վերջերը մեռաւ Շովրոյեան Ղազար իշխան (Հազօր Աղօ), 76 տարեկան,

անոր մահը մեծ եւ անդարձանելի կորուստ մը եղաւ Զէյթունի համար, ան հայոց նեստորին նմանցուցած է Սէմէրճեան, իսկ Գ. Տէօվլէթ «Բասիլոսեան կարապետ Աղան, իր գրքով կը նմանցնէ յոյն-հելլէն հին գիւցագներէն Աքամեմնոնի, երբ ան Տրոփադացոց պատերազմին ծանր խօսքեր կ'ուղղէր իր ամենօրեայ ընկերներէն՝ Մինիսթեւսի եւ Ողիսեւսի, պախարակելով անոնց վարանոտ եւ սպասողական ընթացքը եւ հետեւեալ պատասխանը կը ստանար իր բարեկամէն. «Աքամեմնոն, խնդր կորսնցուցիր եւ Տէլէմաքի հայրն է որ կ'ամբաստանես իբրեւ վատ, Ողիսեւս»։ Նոյն կծու յանդիմանութիւնն ըրած էր կարապետ Աղան, այդ ութսունամեայ ծերունին իր ապետական շեշտով գոչելով. «Մէր կը փախչիք, ո՛ւր, թուրքն է որ կու գայ ձեր ետեւէն, ձեր կիներն ու զաւակները փոշոտելու, այն թուրքն է, որուն դէմ կուրի կ'ուզէիք։ Խօսք մտիկ չէք ընել, պատերազմը խաղ կամ կատակ կը կարծէք։ Երբ խաղաղութիւն էր, ամէն մէկդ առիւծ կը կտրէիք, ձեր ոտքերուն աղմուկովը ամբոխներ կը հալածէիք, հիմա է քաջութեան ժամանակը, Հոգինիդ ազատելու ջնախք, պիտի երթաք ձեր կիներուն փէշերուն ապաւինիք եւ թշնամիէն գութ հացէք, ո՛ւր կը փախչիք, դարձէք եւ կուրծք տուէք թշնամիին»։ Ինչպէս քիչ մը առաջ արդէն յիշած էինք, կարապետ Աղայի այս սաստը Սանտոխի ճակատամարտին ամբողջ յաղթանակ մը կ'արժէր։ Ան նստած իր ձիուն վրայ վար իջած էր բերդէն, հասած էր ռազմադաշտ, իր նախնեաց արիւնը դեռ կ'եռար անոր երակներուն մէջ։ Անոր այդ խօսքերը անգամ մը եւս յառաջ նետած էր Սանտոխէն նահանջող տղաքը եւ կուրծք տալով թշնամիին, հարիւրներ հնձած էին անոնք թուրքերէն։

Հայրենակիցս Գ. Տէօվլէթ իր գիրքին մէջ դարձեալ կարապետ Աղայի մասին հետեւեալ տողերը կ'աւելցնէ, հիւպատոս Վիթթոքի գրքէն քաղած. «Բասիլոսի տղան՝ կարապետ Աղան, պատկառելի էր բոլոր Զէյթունի մեծամեծներուն թէ հասարակ ժողովուրդին, իր խելացութեամբը, ազգասիրութեամբը եւ մանաւանդ իր դիպած հարստութեամբը, շատ մը թուրք գիւղեր հարկատու էին իրեն»։ Իր երկու զաւակներն էին Ասատուր եւ Մացակ Աղաները։ Տարուան 365 օրուան իւրաքանչիւրին համար արտ մը ունէր, կ'ըսէին անոր համար։

Այս մեծ պատերազմին մէջ իրենց քաջութիւններով նշանաւոր եղած են Նազարէթ Իշխան, Բարթողիմէոս Վարդապետ, Եղիա Ենիտէնեան եւ իր գերդաստանը, Շամքէյի Փանոս, Չախրեան Փանոս, Զօլագեան Փանոս, Մարկանեան Հաճի, Թէսմէքէրեանը, Մարկանեաց պապան, Փասլը Մանուկը, Պազճեան Սարգիս Աղան, Ամբրենց Հաճի Արթինը, Բիւփէյեան երկու Ղազարները, Պապըթուր Աւետիսը, Ան-

դրէասեանները եւ ուրիշ բազմաթիւ անանուն, անծանօթ հերոսներ։ Մերունի Հազեր Իշխան Շորվոյեան եւ Կարապետ Աղա Բասիլոսեան եղած էին այդ կռուողներուն խորհրդատուն եւ առաջնորդը։ Ասոնցմէ զատ պէտք է յիշատակել նաեւ Պալճեանը, Կիւլանըսեանը, Բասիլոսեանը, Մէրկէնեանը, Չագրեանը, Անդրէասեանը եւ ուրիշ հարուստ եւ հայրենասէր ընտանիքներու եղբայրասիրական, ազգասիրական առատաձեռնութիւնները, օգնութիւնները։ Անոնք իրենց ունեցածները, դրամ, պաշար, աղ, վառօդ, կապար, մրգեղէն, առատօրէն բաժնեցին կռուողներուն եւ աղքատներուն։ Սէմերճեան «Զէ կարելի մոռնալ, կ'ըսէ, մանաւանդ Պազճեանց առատաձեռնութիւնը, անոնք իրենց մեծ հօր, Մըխսի Հալուրի ժամանակէն մնացած (Մըխսը Մանուկ Հալուր իրենց մեծ հայրն էր եւ նշանաւոր եղած է անոր զոհողութիւնը նախորդ 1860, 1862 եւ 1878-ի կռիւներուն) աւանդութեամբ մը արժանացած են Զէյթունցիներու երախտագիտութեան, ինչպէս թէ՛ ճիւղիցիներու, թուրքիտ եւ Ագիզ Փաշաներու կռիւներուն, այս անգամ ալ 1895-ի այս պատերազմին հոգացին կռուողներու պէտքերը, աւելին ըլլալով օգնութեան հասան նաեւ անոնց կարօտ ընտանիքներուն, դիրքերուն հասցուցին վառօդ, կապար, աղ, միս, չամիչ, միջով քէօֆթէ, պաստեղ, սուճուխ եւ քաղցրեղէններ»։

1895 Սեպտ. 18-ին (ն.տ.) կը գումարուի Մութ Չորի (Գարանլըզ Տէրէի) ժողովը։ Կը պատահին քանի մը սպաննութիւններ։ 18 Հոկտ. -ին տեղի կ'ունենայ Մարաշէն ղրկուած հազարապետին⁶⁰ սպաննութիւնը ֆռնուցիներու կողմէ։ Հոկտ. 11-ին Բերթէզ Չալի կռիւը, 12-ին գօրանոցին պաշարումը, իսկ 17-ին վերջնական կերպով գրաւումը տեղի կ'ունենայ, Նոյմ-ի սկիզբը Չուգուր-Հիսարի, 8-ին՝ Անտրոնի, 18-ին Կապանի կռիւները եւ գրաւումները տեղի կ'ունենան։ 1 Դեկտ. -ին գնդապետ Ալի Պէկին բանակը Ֆռնուզ կը հասնի, 12-ին Մուստաֆա Բէմզի Փաշայի բանակը առաջին ընդհարումը կ'ունենայ Եզգիտլէր հայաբնակ գիւղին մէջ, 13-ին տեղի կ'ունենայ Սանտոխի կռիւը եւ Զէյթունցի կիներ կը ջարդեն թուրք գերի գինուորները։ Դեկտ. 14, 15, 16-ին տեղի կ'ունենան սոսկալի եւ վճռական կռիւները։ 17-ին կը հասնի Մարաշի հայ պատգամաւորութիւնը, 18-ին կրկին սոսկալի կռիւ եւ ռմբակոծում։ Մուստաֆա Բէմզի Փաշա, իր անյաջողութեան պատճառով պաշտօնանկ կ'ըլլայ եւ Ընդհանուր Հրամանատար Էսհէմ Փաշա կը յաջորդէ իրեն։ 21-ին Ալի Պէկի բանակին դէմ կռիւ Զէյթունի արեւմուտքը, Սօլագ-Տէրէի, Չաթօլ Բարի առջեւ, Քէրէր Տինէր։ 1896 Յունուար 5-ին Հալէպի օտար հիւպատոսներու հեռագիրը կը հասնի Զէյթուն։ Զինադադար։ Յունուար 13-ին կը հասնին հիւպատոսները, 15-28 կը սկսին բանակցութիւնները ու կը վերջանան հաշտութեան պայմաններով։ Եւ դուրսէն եկած Հնչակեանները Մարաշի ճամբով, հիւպատոսներու ապահովութեան տակ կը մեկնին։

ՉԷՅԹՈՒՆ 1896-Ի ՊԼՏԵՐԱԶՄԷՆ ՄԻՆՉԵՒ 1908-Ի ԿԻԼԻԿԵԱՆ ԱՂԷՏԻ ՕՐԵՐԸ ԵՒ ՄԻՆՉԵՒ 1914

Ինչպէս ըսինք, 1896-ի պատերազմները, մանաւանդ վերջին 45 օրերուն կռիւները 110000-նոց թուրք բանակներու դիմաց խորապէս ցնցած էին Զէյթունը: Պատերազմին յաջորդեցին համաճարակները, տնտեսական նեղութիւնները, կեանքի սղութիւնը, սնունդի չգոյութիւնը, սովը: Յոգնած էր ժողովուրդը մեծով, պզտիկով, երկար հանգիստի խաղաղութեան պէտք ունէիր գէյթունցիին եւ իր չըջակայ հայ գիւղերը: Պէտք ունէր նաեւ արտաքին օգնութեան: Ամբողջ արեւելեան հայկական նահանգներու հայութիւնը համիտեան ջարդերէն ճղակոտոր, համիտիէ միւթէղայէպներէն կարկտահար, ջարդուած, թալանուած, իր ցաւին մէջ ամփոփուած, լուռ ու վերաւոր սրտով աշխատանքի կը լծուէր, շինարար գործի ու նաեւ գէյթունցիին ապրիլ կ'ուզէր, իր վէրքերը դարմանել կը մտածէր: Ինքնապաշտպանութեան, գոյատեւելու առողջ բնագոյր ի յայտ կու գար: Ան պիտի վերաշինէր իր քաղաքալուած տնտեսութիւնը, իր աւերուած գիւղերը, պէտք էր վերամշակէր իր դաշտերն ու կտրուած, քանդուած այգիները, պարտէզները: (Միծեռնակը բոյն կը չինէր եւ կը չինէր եւ կ'երգէր...):

Մշակը եւ այգւորը գարնան առաջին օրերուն ահա դաշտերն են, այգիներն են, կը հերկեն, կը մշակեն հողը, կը յօտեն ու կը փորեն կտրուած այգիները, արմատները կը բանան, նոր ընծիւղներ ելլելու համար, արեւին առաջին ջերմութենէն անմիջապէս յետոյ: Արհեստաւորները վերսկսած են իրենց գործերուն: Դուրսի, դրացի հայ եւ թուրք գիւղացիներու հետ սկսած են առեւտուրի, փոխանակութեան եւ բարեկամական յարաբերութիւնները: Դպրոցները կը վերաբացուին հետզհետէ, թէեւ հազիւ մէկ-երկու տարի յետոյ: Սակայն ահա կ'անցնին հինգ-վեց տարիներ, դպրոցական ցանցը կը տարածուի մինչեւ հեռաւոր հայ գիւղերը, Արեգինի գիւղերը, Աւագկալ, Ֆոնուզ, Տաշօլուզ, Կէօկսիւն, Քիրէն, Կէօլ-Փունար, Շիպլիկի, Կապան: Ու շատ չանցած, քիչ շատ կարդալ գրել սորված նոր սերունդ մը, պատանիներ, երիտասարդներ կը լեցնեն Զէյթունն ու իր գիւղերը: Կը վերակազմուին միութիւններ, շրջանաւարտից միութիւնը:

Քրիստոնեայ գալմազամ մը, յոյն Անասթաս անունով, եկած է Զէյթուն, նշանակուած են հայ պաշտօնեաներ եւ ոստիկաններ կառավարութեան մէջ: Հետզհետէ Զէյթուն կը վերադառնայ ինքզինքը տնտեսապէս, կրթական տեսակէտով եւ հոգեպէս: Քանի մը տարին

արդէն բաւական եղան գէյթունցիին կազդուրուելու եւ սակայն իր արտակարգ ջանքերովը եւ յամառ աշխատանքին շնորհիւ:

1908-ի գարնան վերջերուն է, կառավարութեան դուռը սպառնալից գրութիւն մը փակցուած էր գիւշեր մը: Այդ տարին թուրք դաշմագամ մը կը զրկուի Զէյթուն, ան սկսած էր դարձեալ տուրքի եւ այլ պատճառներով նեղել ժողովուրդը: Կառավարութիւնը կը մտնէ մեր դպրոցներէն ներս, կը սկսի մեր գիւղերը քննել, գտնելու համար ախ սպառնալիքը (հաֆթան) գրողը: Կը փնտռէ ազգային, յեղափոխական երգեր: Կը բանտարկէ ըստ իրեն կասկածելի, վնասակար մարդեր: Ժանտարմաներ կը սպաննուին, գէյթունցի հրոսակներ՝ Յովնանը, Տէօվէթը, Զօլազեան Փանոսը, Վառլաուը, Շէֆթէյին դարձեալ կը ստիպուին լեռները բարձրանալ, ճամբաները բռնել, անցնող դարձող թուրք կարաւանները կողոպտել, գարներ: Կը ձերբակալեն եւ Մարաշ ու մէկ մասն ալ Հալէպ կը զրկեն մեր Կեդրոնական վարժարանի Տնօրէնը, Պրն. Յովհաննէս Ահարոնեանը եւ ուսուցիչները, Պ. Խաչիկ Գասպեանը եւ ուրիշներ, Ասատուր Էֆ. Խըրրոքեանը, Առաջնորդը՝ Արտաւազդ Վարդապետ, Նազարէթ Զաւուշը:

Յուլիսի առաջին օրերուն է: Դպրոցական տարին լրանալուն, ես եւ ընկերներս աւարտած ենք Կեդրոնական վարժարանի ընթացքը, շրջանաւարտ ելած ենք ու ստացած մեր վկայականները: Եւ սակայն ամսվերջի հանդիսութիւնները տեղի չեն ունենար, որովհետեւ խաղաղութիւնը վրդովուած է, ուսուցչութիւնը ճամբայ հանուած է դէպի Մարաշ: Դարձեալ կը մթազնի Զէյթունի քաղաքական հորիզոնը: Մըռայ օրերը կ'իջնեն մեր լեռներուն վրայ: Մտահոգ է Զէյթուն վաղուան համար, միտքը կու գան 1895-96-ի թուականները: Թուրք կառավարութիւնը օգտուելով եւրոպական մեծ տէրութեանց հակամարտութիւններէն, անոնց երաշխաւորութիւնը այլեւս մոռցաւ եւ չկատարեց դաշինքով իր ընդունած պայմանները, որոնց մէկն է նաեւ քրիստոնեայ գալմազամով եւ գէյթունցի կառավարական պաշտօնէութիւնով մը կառավարել Զէյթունը: Ոստիկաններ առաւ ու կանուխ կը պաշարեն Անդրէասեան տունը, կը ձերբակալեն Անդրէասեան Ասրատուր աղան եւ կը տանին կառավարչատուն, քիչ յետոյ սուրինաւոր զինուորներով կը հանեն վերը՝ զօրանոցը: Թուրքերը թէեւ առ երես համակերպած էին կնքուած դաշնագրին, սակայն ներքնապէս որոշած էին պարագլուխները նենգ միջոցներով, դաւադրութիւններով, տեւէ պատրուակով մէջտեղէն վերցնել: Անդրէասեան Ասրատուրը, հոյակապ անձ մը, տարիքը առած եւ սակայն քաջ եւ փորձառու, անվախ գէյթունցի մը, շատ կարեւոր դեր կատարած էր 95-96-ի պատերազմին, Ալի Պէ-կի բանակին ղէմ, իր թաղեցի ռազմիկներով: Ժողովուրդը կը լսէ

անոր զօրանոց տարուիլը, կը յուզուի, փողոցները կը լեցուի, ոմանք կը մտածեն զինուիլ եւ բարձրանալ դէպի զօրանոց: Առաջնորդը՝ Տ. Կարապետ ԲՀՆյ. Երկանեան, կը զգայ թէ այս ձերբակալութիւնը գէշ նշան է, մանաւանդ որ կառավարչատուն իսկ թողուած չէ, անմիջապէս զօրանոց հանուած է: Թուրք կառավարութիւնը ասկէ առաջ ալ շատ անգամ այսպէս ըրած է: Անակնկալ կերպով ձերբակալած է նման դէմքեր, անմիջապէս Զէյթունէն հեռացուցած, զօրանոցը տարած է եւ գիշերանց ալ Մարաշ ղրկած, իսկ երբեմն Մարաշ ալ թողուցած չէ, Հալէպ փոխադրած է, քանի մը անգամներ ալ մինչեւ Պոլիս ղրկած է, ուր արգելքի տակ կամ բանտ մնացած են երկար ժամանակ եւ դժուարութեամբ ազատ արձակուած են Պատրիարքարանի եւ այլ ազգային ազդեցիկ դէմքերու դիմումներով եւ նոյնիսկ օտարներու միջամտութիւններով: Տ. Կարապետ ԲՀՆյ. կը մտածէ թէ՝ զայնապէս մօտ պաշտօնական դիմում մը անմիջական արդիւնք պիտի չունենայ, մանաւանդ կը տեսնէ որ ժողովուրդը զրգուռած է եւ կրնայ վայրկեանէ վայրկեան մեծ խնդրի մը, դէպքի մը պատճառ դառնալ ոեւէ ուշացում, ու նկատելով միաժամանակ որ, եթէ այս առաջին ձերբակալութեան համար վճարական քաջ շահուի, կարգը պիտի գայ ուրիշ ձերբակալութիւններուն ու պիտի վրդովուի Զէյթունի խաղաղութիւնը:

Ուստի, առանց կառավարչատուն հանդիպելու, ձին կը նստի եւ ուղղակի կը բարձրանայ զօրանոց՝ Զէյթունէն կէս ժամ դուրսը կը ներկայանայ զինուորական հրամանատարին: Այս առաւօտ, ոստիկաններ Զէյթունի կարեւոր անձերէն մէկը բռնած եւ հոս՝ զօրանոցը բերած են, կ'ըսէ, եւ այժմ ձեր հրամանին տակ կը գտնուի այդ անձը: Կը պահանջեմ որ անմիջապէս ազատ արձակէք զինքը, կանխելու համար ոեւէ անպատեհութիւն եւ առիթ ու պատճառ չդառնալու համար զինուած ապստամբութեան մը, որ կրնայ վայրկեանէ վայրկեան պայթիլ: Զէյթունի ներկայացուցիչն (միւրախիսս վէջիլի) եմ, պարտաւոր եմ ուշադրութիւն եւ հոգ տանիլ ժողովուրդի անդորրութեանը: Ազատ ձգեցէք այդ անձը եւ ես կ'երաշխաւորեմ որ կառավարութեան համար ոեւէ անախորժ դէպք չի պատահիր, ո'չ այդ անձին կողմէ եւ ոչ ալ ժողովուրդին կողմէ: Իսկ եթէ թող չտաք այդ անձը, արիւն կը հոսի եւ այդ պարագային միակ պատասխանատուն դուք կ'ըլլաք կայսեր եւ ժողովուրդին առջեւ: Հրամանատարը նեղը կը մնայ, կը մտածէ թէ՝ իսկապէս ծանր պատասխանատուութեան տակ պիտի իյնայ ոեւէ ապստամբութեան եւ արիւնահեղութեան պարագայ, եւ կրնայ գէշ կերպով պատժուիլ ինքը, կ'ըմբռնէ կացութեան լրջութիւնը, դեռ նոր վերահաստատուած խաղաղութիւնը, զօրանոցի մէջ

պատրաստ ոյժը, «Լա՛ւ, կ'ըսէ, թող ազատ արձակուի»: Զօրանոց հասնելէ ժամ մը յետոյ, ազատ կը թողուի Ասքատուր աղան ու ժողովուրդը կը հանդարտի եւ ամէն մարդ կը մեկնի իր գործին:

Ուրիշ օր մը, Մարկանեց Կարապետ Աղան (Բէլ Գազովը) այսպէս կը հանեն զօրանոց, սակայն չեն համարձակիր այնտեղ պահել կամ Մարաշ ղրկել, նկատի ունենալով գէյթունցիներուն զրգուռած վիճակը եւ թող կը տրուի Այս Մարկանեանները զօրանոցի մասին յանձնառուներն էին, Կարապետ Աղա եւ եղբայրը՝ Տէօվլէթ, եւ երբեմն խնդիր կ'ունենային կառավարութեան զինուորական իշխանութեան հետ: Ծամբաները հետզհետէ կը դառնային անապահով: Զինուորական փախստականներ փնտռելու պատրուակով ոստիկաններ կը կոխէին հայ գիւղերը եւ նեղութիւններ կու տային: Ու կը շատնային հրոսակները, որոնք կը բռնէին Սուլայթը ըսուած կիրճը: Մտաւորականներ, որոնք տակաւին Զէյթուն ազատ կը մնային, կասկածելի դարձած էին, կը զգուշանային ոեւէ անպատեհ դէպքի առիթ տալէ:

Նոյն տարին, 1908-ի Յուլիսին է, Կայսակի արագութեամբ լուրը կը տարածուի Օսմանեան սահմանադրութիւն յայտարարուած է: Ու մենք, տղաներ, չէինք գիտեր թէ ի՞նչ է սահմանադրութիւն ըսուածը: Զորս եկեղեցիներու պողպատէ եւ ընկոյզի տախտակէ զոյգ կոշնակները սկսան զօղանջել: Ժողովուրդը փողոցները, ճամբաները, եկեղեցիին բակը կը խռնուի: Ու կը խօսին թէ վերջացած է բռնապետական կառավարութիւնը Սուլթան Համիտի Այլեւս խտրութիւն պիտի չըլլայ խլամի եւ քրիստոնեայի, թուրքի եւ հայու: Կը խօսին թէ «հաւասարութիւնը, արդարութիւնը, եղբայրութիւնը, ազատութիւնը» պիտի տիրեն օսմանեան հպատակներու մէջ, կը խօսին թէ Մարաշ եւ Հալէպ տարուած բանտարկուածները ազատ արձակուած են, ճամբայ ելած են ու կու գան:

Երիտասարդութիւնը թափօրներով կը բարձրանայ վանքը, կ'երթայ զօրանոցը: Ամէնքս ալ մեր ուսերուն եւ կուրծքերուն ժապաւէններ եւ «հաւասարութիւնը, եղբայրութիւնը» խորհրդանշող նշանակներ անցուցած կ'երթանք, կու գանք: Կը բացուին մեր բերանները ու ահա ազգային, յեղափոխական երգերով կը լեցուին տուններն ու հրապարակները: Զէյթունցիին կ'երգէ իր քայլերդ «Քանի թմրինք բաւ է եղբայր...» եւ «ի գէն ի սուր եւ ի հրացան» երգերը: Շաբաթներով զինուած երիտասարդներ հրացանաձուլութիւնով, նշանառութիւնով օդը կը թնդացնէին: Ատրճանակներու գնդակներէ մեծ շուկայի եւ Աղճիպատի վարի շուկային արիւններու (կախ որթատունկներուն) վրայ տերեւ չմնաց: Լրտեսներ, մուխպիրներ սկսան հալածուիլ: Դաւաճաններ եւ անոնց կարգին նաեւ ոստիկանապետ Մուհամմէտ

էֆ-ին խոշտանգուեցան շուկաներուն եւ հրապարակներուն մէջ:

Եկան բանտարկուած մեր ուսուցիչները: Մեր ուրախութիւնը սահման չունէր: Լսարանը վերաբացուեցաւ: Շրջանաւարտից միութիւնը իր քօղը վրայէն նետեց եւ դուրս եկաւ հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը: Հնչակեաններ ալ սկսան աշխատանքներ տանիլ, Փանոս Չազրեանի գլխաւորութեամբ: Իսկ դաշնակցութեան ղեկավարներն էին ուսուցիչ Խաչիկ Եղուպեան եւ եղբայրը՝ Յարութիւնը, հօրեղբոր որդին Քերովբէ Եղուպեանը: Կազմուեցաւ Հ.Յ.Դաշնակցութեան կոմիտէութիւն մը, որուն մէջ էին բացի վերի երեքէն նաեւ ընկերներ Խչ. Քարուկեան, Յարութիւն Գառապեան, Վարդիվար Խուրմունեան, Լեւոն եւ Գէորգ Անտոնեաններ, Միսաք Սիւնեան, Կարապետ Պէրպէրեան, Յակոբ Քէսիկեան, Ասատուր Ղուկասեան, Խորէն Գուլումեան, Ստեփան Գերմանիկեան, Վարդիվար Սինկիրեան եւ ուրիշներ:

Այնթապէն եկաւ փրոֆ. Յակոբ Չէլթունցեան (բնիկ զէյթունցի) Պալքաններէն հայրենիք դարձաւ առոյգ ծերունի մը Մնացական Սէմէրճեան՝ հեղինակը «Չէլթունի անցեալէն եւ ներկայէն» պատմութեան երկու հատորներուն: Հին յեղափոխական մը, որ բռնապետութեան ըէֆմի տարիներուն փախած էր արտասահման: Եկաւ Սմբատ Բերատ, որ Եգիպտոս էր, վերջէն Պոլիս եկած էր սահմանադրութեան հռչակումէն յետոյ: Չէլթուն եկան նաեւ «Ժէօն-թիւրք» երիտասարդ թուրքերու երկու սպաներ. «Իթթիհատ ու թէրրազը» կուսակցական չէֆեր: Լսարանի մէջ խօսեցան փրոֆ. Չէլթունցեան եւ թուրք սպաներ, բանախօսեցին սահմանադրութեան եւ հաւասարութեան սկզբունքներու շուրջ, ողջադուրուեցան: Ժողովուրդը խանդով օրեր կ'ապրէր: Սակայն հին զէյթունցի մտածել սկսաւ, չհաւատաց ո՛չ մէկուն: Թուրքը մեզ նոր դաւադրութիւն կը լարէ ըսաւ ան, նոր ծուղակ մը կը բացուի հայերու առջեւ: Ու իսկապէս շատ չանցաւ, 1890-ի Մարտ ամիսն ենք, Յարութեան Չատիկ օրն է: Զարադուշակ շուկաներ կը շրջէին ասդին անդին, Մարաշի հայութիւնը կը ջարդեն ըսելով: Ատանայի մէջ կոտորած տեղի կ'ունենայ: Դաշնակցութեան պատգամաւորը ընկեր Քերովբէ Եղուպեան, Ատանա՝ Շրջանային Ժողովին չհասած, Պաղչէ Օսմանէի ճամբան կը սպաննեն թուրք խուժանները: Օսմանիէ մէկ եկեղեցիին մէջ կ'այրեն քանի մը տասնեակ հայ բողոքական պատուելիները, որոնք միութեան Ժողովին կ'երթային: Զատիկ օր է, կը ցնցուի զէյթունցիին, ամբողջ շաբաթ մը մեր հազուստով եւ կօշկը՝ փոսթալը ոտքերուս կը սպասենք ոտք վրայ փողոցներուն եւ Չէլթունի եզերքի ճամբաներուն: Առաջնորդ Վաղարշակ Վարդապետ եւ աղաներ, Մարաշ հեռագիր կը քաշեն եւ

հեռագրի գլուխը կը կանչեն Մարաշի հայութեան մի քանի ծանօթ մեծերը, հասկնալու համար հայերու կացութիւնը: Մարաշի կառավարիչը կը պատրաստուի գոհացում տալ զէյթունցիներու սպանական հեռագիրներուն եւ հեռագրի գլուխ բերել կու տայ Խրլագեանը, Հազարապետեանը, Զօրպանեանը եւ ուրիշներ, որոնք կը պատասխանեն հեռագրով Չէլթուն թէ իրենց ոեւէ բան չէ պատահած: Չէլթունէն կը հարցնեն կրկին կրկին անոնց անդամներուն թիւերը եւ անունները ստուգելու համար թէ ոեւէ մէկը սպաննուած կա՞յ անոնցմէ: Նոյնպէս կը հեռագրեն Սիս՝ Կաթողիկոսին, հասկնալու համար անոր վիճակը...

Ատանայի ջարդին զոհ կ'երթան Ատանայի մէջ Յարութիւն Սիւնեանը, Ստեփան Գերմանիկեանը, Կարապետ Պէրպէրեանը: Իսկ Տէօրթեօլի մէջ ինքնապաշտպանութեան կռիւին կը զարնուի Խոշուպեան Համբարձ երիտասարդը: Զարդէն մէկուկէս ամիս ետք Չէլթուն կը վերադառնան Ատանա աշխատելու գացող մեր քանակ մը երիտասարդները ողջ առողջ: Անկէ յետոյ, այլեւս զէյթունցիներ անգամ մը եւս կը հասկնան թէ կեղծ էր եղած այդ սահմանադրութիւն ըսուածը եւ կարելի չէր թուրքիոյ վստահիլ: Եւ սկսաւ լուռ ու անշուշտ իր գործին թուիլ եւ պատրաստուիլ, ապագայ գալիք գէշ օրերը դիմագրաւելու: Սակայն պայթեցաւ 1914-ի համաշխարհային պատերազմը եւ թուրքը կանխեց մեզ: Չէլթուն տակաւին պատրաստ չէր: Գէշ ժամանակ էր, դժուար տարիներ էին: Տնտեսական նեղութիւն կար: Ու տակաւին զէյթունցիին իր այգին ու արտը քաղելու, հնձելու, ամբարելու համար ժամանակի պէտք ունէր: Իսկ ռազմամթերքի պատրաստութեան համար տակաւին քանի մը տարիներու կը կարօտէր:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ՝ ՀԱՅ ԼԵՁՈՒԻ ԵՒ ԲԱՐԲԱՒՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Ձեռք կարծեր թէ լեզուապատմագէտները արձանագրած ըլլան ցարդ ոեւէ ազգի անուն, որ անխառն եղած ըլլայ, զուտ մէկ տարրէ բաղկացած ըլլայ ան, եւ ունենայ իր լեզուն, առանց օտարամուտ տարրերու: Գրեթէ ամէն ազգի ենթագիտակցութեան, ինչպէս նաեւ իր արեան, իր ֆիզիքական կազմութեան մէջ այլեւապէս ցեղերու, առհաւական՝ հոգեկան եւ մարմնական ազդեցութեանց հետքերը անպայման որ պահուած են, որոնք երբեմն կը դրսեւորուին երբ հարկը պահանջէ: Մենք գիտենք թէ՛ մենք հայ ենք եւ մեր լեզուն հայերէն է: Ինչպէս որ անգլիացին ինքզինք կը ճանչնայ անգլիացի, ֆրանսացին՝ ֆրանսացի, անգլիացիին մէջ սկզբնականները, անոնց մէջ խառնուած են բրիտները, կիլտները, իրլանդացիները, սաքսոնները եւ ուրիշներ իրենց արիւններով, հոգեկան եւ ֆիզիքական իրենց բոլոր առհաւորութիւններով: Ֆրանսացիին մէջ են ֆրանքները, կոլուացիները, նորմանացիները, կիլտները, պասքերը եւ այլն, տարրեր իրենց ամէն ինչով: Հոգեբնախօսական եւ մարմնակազմական ժառանգութեանց համադրութիւն մը, ժամանակի երկար տեւողութեան՝ մէկ յայտարարի տակ բերած է զանոնք հոգեպէս եւ գրեթէ նաեւ մարմնապէս: Այս օրուան թուրքին մէջ, հին մոնկոլ-թաթար հիմքի վրայ եկեր աւելցեր, շաղախուեր են քիւրտին, լազին, չէչէնին, չքքէզին, պարսիկին, յոյնին, հրեային, ալպանին, արաբին եւ հայոյն: Հոգեբնախօսական եւ ֆիզիքական բոլոր մասնախառնութիւնները Սակայն, այսօր ան գիտէ եւ կը ճանչնայ ինքզինք թուրք օղլու թուրքը հոգեբնախօսական եւ արեան թաքուն յատկութիւնները անցած են իր ենթագիտակցութեան:

Ձէ կարելի ուրեմն որ տարբեր եղած ըլլայ լեզուներու ծագման եւ կազմութեան պարագան: Անխառն, միատարր լեզու կարելի չէ Երեւակայել, իր ծագման եւ հոլովոյթի ընթացքին: Թուրքերէն լեզուն համար ըսողներ կան թէ՛ բնիկ, հին թաթար-թուրք բառերու թիւը 500-էն աւելի չէ, աւելին քան երեք չորրորդը իր բառերուն արաբերէն եւ պարսկերէն է: Թէեւ վերջին քառորդ դարուն, երբ լատին տառերը որդեգրեց, սկսաւ մեծ ճիգ թափել թուրքը, իր լեզուն դուրս ընելու համար պարսիկ եւ արաբ բառերը եւ սակայն դժուար գործ է սա: Եւրոպական լեզուներուն հիմքը, աղբիւրը ըսին հին յունարէն-դասական հելլեներէնն եւ լատիներէնն են, որոնք ծերացած ու մեռած են եւ ծնունդ տուած նոր լեզուներու: Բնականաբար

պարագան չի կրնար տարբեր եղած ըլլար հայերէնին համար: Կարելի չէ ըսել թէ հայ լեզուն, որպէս աստուածատուր բարբառ մը իր ծագման, կազմութեան անյիշատակ դարերու ընթացքին որպէս զուտ լեզու, որպէս առանց օտարամուտ տարրերու մնացած է նոյնը: Գիտենք որ հայը կար գրերու գիւտէն շատ առաջ, ունեցեր է իր լեզուն, իր բարբառները, որոնք մէկ եւ միեւնոյն հիմքը ունենալով հանդերձ, սկիզբի ժամանակներէն իսկ ունեցած են իրարմէ որոշ տարբերութիւններ: Հայկական աշխարհը, լեռնաշխարհ մը, իւրաքանչիւր նահանգ բաժնուած իրարմէ բարձր լեռներով, խոր հովիտներով՝ երկար եւ խիստ ձմեռներով, իւրաքանչիւրը անոնցմէ երկար ատեն փակուած ինքն իր մէջ, եղած են անոնց յարաբերութիւնները դժուար եւ ցանցաւ, անոնք որոշ չափով ինչպէս որ տարբերած են բարձրերով, բնութիւնով եւ բնակողութիւնով, տարբեր եղած են նաեւ բարբառներով: Հայաստանի մէկ ծայրէն միւսը երբեք միատարր չէ եղած իրենց լեզուն, գոյութիւն ունեցած են հինէն իսկ բարբառները: Հնդեւրոպական լեզուախումբին մէկ առանձին ճիւղը նկատած են գիտունները հայ լեզուն: Ինչպէս մէկ ուրիշ ճիւղն է իրանական-արիական լեզուն հին ու նոր պարսկերէնները, սակայն հնդեւրոպական այդ սկզբնախառնին վրայ դարերու ընթացքին եկած աւելցած են ոչ միայն իրանական հին ու նոր պարսկերէն, պահլաւերէն լեզուներէն տարրեր, բառեր, այլ ան իր մէջ թերեւս ունի ուրարտական, խալթեան, բաելա-սումերական, սեմական, արամէական հին լեզուներէն տարրեր, ու նաեւ չենք գիտեր թէ հաթիւրէն ինչքան բան կայ մեր լեզուն մէջ, եկուոր արմէնները ինչքան բերին հայ լեզուն, հայասանները, սուբարիները ու խարթի-միտանիները որքան բան ունին հոն, ինչպէս նաեւ գասքանները, դայախիք եւ այլն:

Լուսահոգի Նիկոլ Աղբալեան, մեր հայերէն լեզուի բառերուն թիւը կը հաշուէ 1000 մը, եւ անոր հինգ վեց անգամը օտար բառեր են ըսելով, իր հայ գրականութեան գեղեցիկ գործին ներածականին մէջ հայ լեզուի մասին հետեւեալ տեսութիւնները կ'ընէ, որ նոյնութեամբ կարողազրեմք, զանց ընելով օտարներէն, իրանական, պարսկերէն լեզուէն փոխ առնուած բառերու երկար շարքը:

«Հայոց լեզուն մի առեղծուած է, այսպիսով գիտութեան համար եւ իր ծագման խնդիրը չէ կարելի լուծուած համարել: Մեկնուած են մեր լեզուի հնդեւրոպական տարրը միայն, բայց ոչ բովանդակ մեր լեզուն եւ իր ծագումը:

Գիտունները ճշդած են թէ՛ օրինակ գերման լեզուների բառամթերքի երեսուն առ հարիւրը անմեկնելի են հնդեւրոպական լեզուաբանութեան ընձեռած միջոցներով ու տեսանք թէ հայ լեզուի

բառամթերքի գերակշիռ մեծամասնութիւնը նոյն վիճակի մէջ է։ Այդ չմեկնուած զանգուածի մասին գոհանում ենք ըսել թէ՝ Հնդեւրոպական չէ եւ փոխառութիւն են Համարում նախաբնիկների լեզուից։ Ինչպէս գերման լեզուի, նոյնպէս եւ մեր լեզուի մասին այսպէս են վերաբերում, չմեկնուած բառամթերքը եւ ձեւը Համարելով փոքր-ասիական եւ ուրարտական լեզուների ժառանգութիւն։

Ուրեմն, ինչպէս տեսնում ենք, ոչ միայն Հայոց լեզուի ծագումըն առեղծուած է այլ եւ նրա ներքին կազմութիւնը։

Ու կը շարունակէ Աղբալեան։— «Ինչ ա՛յնպէս թւում է թէ՝ Հայաստանի հին բնիկները, եկամուտ Հայերը եւ ուրարտացիք շատ աւելի երկար ժամանակ ապրած են իրար քով եւ ոչ թէ Քրիստոսէ առաջ է։ դարուն միայն, Հայերը երեւցած են մեր երկրին մէջ։ Այս դարաւոր կենակցութեան մէջ է, որ կազմակերպուած է մեր լեզուն։ Երբ Հայերը երկրի տէրը դարձան, ուրարտացիները ստորադաս վիճակ ստացան եւ անոնք լեզուապէս ենթարկուեցան Հայերին։ Հայերը ազատների դասը կազմեցին։ Այդ դասի մաս կազմեց եւ ուրարտական այս աւագանին, որ մնաց մեր երկրի մէջ եւ դարձաւ խաղաղ կենակից Հայերին։ Այդ կենակցութեամբ Հայաստանի հին բնիկը եւ ուրարտացին Հնդեւրոպական տարրեր պատուաստեցին իրենց բնիկ լեզուին։ Փոխադարձաբար Հայերը երբ ստորադաս էին ուրարտացիներէն, սրանց փառքի եւ յաղթութեանց օրերին, նրանց լեզուից բաւական բառ ու ձեւ սեփականացրեցին անշուշտ։ Եւ այսպէսով առաջացաւ մի լեզու, որ Հնդեւրոպական եւ տեղական տարրի խառնուրդ էր։ Տեղացին աղճատեց Հնդեւրոպական Հայերէնը իր բերնին մէջ եւ յարմարեցրեց իր մտածութեան, իսկ Հայը՝ ճոխացաւ բնիկ տարրերու բառամթերքով եւ ձեւաբանական ինչ որ տարրերով։ Այսպէսով Հայերէնը կարող ենք ըսել մի ասիանիք լեզու, որ Հնդեւրոպական է, բայց ոչ այն իմաստով, որ կարծում է Ն. Մառ, այսինքն բնաբոյս աճումով, այլ Հնդեւրոպական Հայերէնի զօրաւոր ազդեցութեան ենթարկուելով, եւ իր բառամթերքը մեծ մասամբ նրա կաղապարների մէջ ձուլելով։

«Տիրապետող դասակարգն էր որ խօսում էր Հնդեւրոպական Հայերէն եւ ուրեմն նախնական շրջանին՝ բովանդակ Հայ ժողովուրդը նոյն լեզուն էր որ սեփականացրեց եւ բնիկ տարրի աւագանին։ Սակայն բնիկ տարրի շինականը նուազ կրեց Հնդեւրոպական Հայերէնի ազդեցութիւնը։ Եւ երբ ընկերային կեանքի հոլովոյթի հետեւանքով տիրապետող Հայ տարրը քայքայուեց, եւ մի մասը դարձաւ ազատ շինական, նրա այս երկու շինական դասերը-բնիկ շինականը եւ Հայածին շինականը- ինչպէս կացութեամբ, այնպէս եւ լեզուով մօտեցած

իրար եւ բնիկի Հայերէնն էր որ գերիշխեց։ Ահա այդ լեզուն էր մեր ռամկերէնը, որ շատ աւելի ոչ-Հնդեւրոպական տարրեր ունի քան զրաբար լեզուն, տարրեր ոչ միայն բառական, այլեւ ձեւաբանական։ Հայոց լեզուի հոլովոյթի այս ծիրն ու բնոյթը շատ աւելի պաթառ կերեւան երբ զատուին եւ հետազօտուին մայր լեզուի այդ բառական եւ ձեւաբանական տարրերը։ Դրան մեծապէս կը նպաստէ նաեւ աղճատումների հետազօտութիւնը, որին ենթարկուած է Հնդեւրոպական Հայերէնը, մեր միջավայրի մէջ՝ անշուշտ ոչ Հայ բնիկների բերանում։ Աղճատումի բնոյթն իսկ մի գաղափար կը տայ աղճատող բերանի եւ իմացութեան մասին։

«Հայերը իրենց Հնդեւրոպական լեզուի մէջ փոխառաբար ընդունած են վեց եօթը անգամ բառ աւելի քան բերած են ժառանգաբար ինչպէս եւ ձեւեր... Համարել բնիկ ժողովուրդ, որ պատուաստած են իրենց բնիկ լեզուին մօտ մի հազար Հնդեւրոպական բառ եւ մի որոշ քանակութեամբ բառաձեւ։ Լիովին անհիմն չ'երեւիր այս մտածումը, եթէ նկատի առնենք որ մեր հոլովներից մի երկուսը (ուղղական, Հաջական) եւ բայերի ներկայ ժամանակն է որ որոշապէս Հնդեւրոպական են, մնացածը այնքան տարբեր է եւ խորապէս այլափոխուած, որ մինչեւ այսօր դեռ կարելի չէ եղած մեր ունեցած ձեւերը օրինական կապով կցել ենթանդրական նախաձեւերին, իսկ գալով բառամթերքին, տեսանք թէ անոր վեցեօթերորդը օտար է Հնդեւրոպական լեզուին։ Եթէ այդպէս մտածենք, մենք գործ կ'ունենանք մի փոքր ասիական հին լեզուի հետ, միակ վերապրածն ու կենդանի շառաւիղը փոքր ասիական հին լեզուախոսմբի, որոշ չափով Հնդեւրոպական, բայց մեծադոյն մասով բնիկ եւ նախաւոր, քան Հնդեւրոպական նախալեզուն։

«Նոր պարսկերէնի բառամթերքին մօտ վաթսուն տոկոսը արաբերէն է եւ որդեգրած է բաւական ձեւեր արաբ լեզուից։ Ինչպէս ըսինք քիչ վերը՝ թուրք լեզուի մասին թէ միայն 500 բնիկ բառ ունի, մնացածը պարսկերէն եւ արաբերէն է, ուստի պէտք չէ զարմանալ որ հազար բնիկ բառ ունեցող Հայերէնը, վեց անգամ օտար բառ փոխ առած է։ Բայց ո՞րն է այն լեզուն, որից փոխ առած է այդ բառերի զանգուածն ու ձեւերը։ Ուրարտերէնը, որքան ծանօթ է-համարեա ոչ մէկ նմանութիւն ունի մեր լեզուի հետ, հիթիթներից հազիւ մի քանի փոխառութիւն, իսկ կովկասեան լեզուները կարելի է ասել թէ բան չեն տուած մեզի։

Ներհուն բանասէրի այս երկար տեսութիւնը նոյնութեամբ արտադրեցինք այստեղ անգամ մը եւս հիմնաւորելու համար թէ՝ զուտ անխառն լեզու չկայ, թէ՝ լեզուներու ծագման եւ կազմութեան խնդիր-

ները առեղծուածներ են, յետոյ հաստատելով հանդերձ թէ հայ լեզուին հիմքը հնդեւրոպական է, սակայն Փոքր Ասիա ամենահին բնիկներէն, սկսած հիթիթներէն, հայասաններէն, սուրարիներէն, խարրի-միտանիներէն եւ ուրիշ ժողովուրդներէ փոխ առած են հնդեւրոպական արմէնները հայերէն լեզուին վեց եօթներորդը, վերջապէս ցոյց տալու համար թէ ինչպէս յառաջ եկած են բարբառները, որոնց մէջ գրաբարը, որ աւելի հնդեւրոպական է իր բառամթերքով եւ ձեւերով, եւ հնդեւրոպական եւ ուրարտացի աւագանիներուն բարբառն է Ե-դած եւ վերջէն դարձած է գիրի լեզուն, մեր ոսկեդարուն, իսկ միւս ռամկօրէնները, գաւառաբարբառները եղած են լեզուն ուրարտացի շինականին եւ հնդեւրոպական արմէն շինականին լեզուն, որը ժամանակի երկար տեւողութեան ներքին եւ արտաքին ազդեցութիւններու տակ աղճատուեր, ճիւղաւորուեր է, պարսկական, արաբական թրքական տիրապետութիւններու դարերուն:

Փրօֆ. Հ. Աճառեան աւելի քան 1400 արմատ բառեր շարած է կ'ըսէ Աղբալեան Պահլաւ-իրանական եւ գուցէ դրա մի քառորդի չափ ցանկի մէջ չեն առնուած, թէեւ իրենց կազմութեամբ ու տեսքով իրանական դրոշմ ունին, բայց որովհետեւ ո'չ մէկ իրանական լեզուի մէջ չեն երեւում, նրանց համարժէքները, ուստի ցանկէն դուրս են մնացած:

Միասնական լեզուն, մեր Գրաբարը, հայացած պահլաւի լեզուն կը թուի ըլլալ եւ ոչ իբր հայազգի շինականի լեզու: Իրանական բառերի փոխառութիւնները տեղի ունեցած են մեր գրերի գիւտէն շատ առաջ սկսած դարեւներու ժամանակներուն եւ թերեւս ալ աւելի առաջ:

Ոսկի, արծաթ բառերը սումեր բառեր են: Մեր ուհի իգական մասնիկը սեմական է, որը արաբները հի, հէ կը հնչեն, օրինակ մենք կ'ըսենք՝ Տիգրանուհի, Զարուհի, արաբները կ'ըսեն, Աֆիֆէ, Զամիլէ Նազիրա, իսկ խօսելու ատեն երբ այլ մարդուն ըսեն վէյն ըսէ՛, կնոջ կ'ըսեն վէյն ըսէ՛, Փատտալ, Փատտալի: Իսկ դուքս մասնիկը պարսկերէն բառն է դուխթէդ, դուստր-աղջիկ իմաստով, եւ մենք հայացուցած ենք եւ շինած ենք բարդ բառեր՝ Սանդուխտ, Տիգրանադուխտ, Խոսրովդուխտ: Իրանական փոխառութիւններու քանակը երկու անգամ աւելի է քան մեր բնիկ բառերը: Ուրեմն կը տեսնենք որ շատ խոր եւ լայն եղած է իրանի ազդեցութիւնը մեր կեանքին եւ հետեւաբար մեր լեզուին վրայ: Պարսիկ Աքամենեաններու 10րդ սատրապութիւնը եղաւ Հայաստան երկու հարիւր տարի, եւ այս կացութեան արդիւնքը խորունկ եղած եւ լուրջ ազդեցութիւն ունեցած է հայոց կրօնական, ընկերային եւ լեզուական մարզերուն վրայ: Աւելի քան 300 տարի Հայաստանի մէջ պարսկերէնը տարածուած

էր եւ կը գործածուէր ոչ միայն բարձր դասակարգէն, այլեւ ժողովուրդէն, ինչ որ Քսենոփոն կը վկայէ թէ ինք եւ իր զօրքերը պարսկերէն խօսած էին հայերուն հետ:

Արտաշէս Աշխարհակալ, Մեծն Տիգրանի հօրը մեծ հայրը, լեզուական բարեկարգութեան իր հռչակաւոր հրովարտակը կը հանէ եւ անով պարտադիր կը դառնայ հայերէնը ամենուն եւ պէտք էր հայերէնը գործածուէր բոլոր միւս լեզուներուն եւ գաւառաբարբառներուն տեղ: (Ուրեմն Ազնուականին, Աւագանիին, Թագաւորական տոհմին լեզուն էր որ նկատուած բուն հայերէնը եւ ոչ թէ միւս օտար լեզուները կամ նոյնիսկ գաւառաբարբառները): Աւագանիին-Թագաւորական գերդաստանին լեզուն՝ հնդեւրոպական աւելի իր բառամթերքով եւ ձեւերով, դարձած էր վերջէն դասական հայերէնը եւ գիրերու գիւտէն յետոյ՝ գիրի, գիրքի բարբառը՝ գրաբարը, իսկ գաւառաբարբառները մնացած են ժողովուրդի մեծամասնութեան բերանը եւ դարերու ընթացքին անոնք ալ ներքին եւ արտաքին պատճառներով աղճատուեր ու ճիւղաւորուեր են:

Ազգերու կեանքին մէջ, ազգերու նման լեզուներն ալ ենթակայ են բնութեան օրէքներուն: Անոնք ալ կը կազմակերպուին դարերու ընթացքին, կ'ապրին, կ'աճին եւ օր մըն ալ հետզհետէ կը սկսին հինալ, մաշիլ, ծերանալ եւ նոյնիսկ մեռնիլ: Մեռած լեզուներն են հելլեներէնը, լատիներէնը եւ մեր գրաբարը, Գրաբարը, ինչպէս վերը քանիցս անդրադարձանք, հնդեւրոպական արմէններու, արքայական ընտանիքին, ազնուականին եւ ուրարտական Աւագանիին բարբառը եղած է, որ հետզհետէ զարգանալով, գիրերու գիւտէն յետոյ դարձած է գիրի բարբառը, գրաբարը եւ ոչ թէ միայն խօսաբարը: Սակայն գրաբարին չափ եւ թերեւս իրմէ աւելի հին են գաւառաբարբառները, ընդհանուր հասարակ ժողովուրդին խօսակցական լեզուն՝ ըսենք ասոր դարձեալ ռամկօրէն, գրաբարը եւ միւս բարբառները, բոլորն ալ կարելի է նկատել իրարու քոյրեր իսկ գրաբարը իրենց երէց քոյրը, որ վերջը դարձած է մեր հին գիրքերուն եւ աղօթքի բարբառը, որ այժմ կը մնայ մեր եկեղեցիներուն մէջ եւ մեր հին դասական գրականութեան՝ Ոսկեդարուն գրուած գիրքերու էջերուն եւ յաճախ ուսումնասիրութեան նիւթ է դարձեր ու կը դառնայ հայ թէ օտար բանասէրներու: Գրաբարը ժամանակի ընթացքին ազդուած Հայաստան արշաւող եւ նուաճող ցեղերէ, ազդուած նաեւ հին յունարէնէն եւ հայ այլեւայլ գաւառաբարբառներէ, կրած է զգալի փոփոխութիւնն աւելի Զ. եւ Է. դարերուն: Մինչդեռ երէց Թարգմանիչներուն ժամանակ տակաւին ան կը պահէր իր դասական մաքրութիւնն եւ անխառն բարձրութիւնը, գեղեցկութիւնը, կրտսերներու շրջանին որոշ

տարրեր վրայ տուաւ իր գեղեցկութենէն: Գալով գաւառաբարբառներուն, եւ անոնց մէջէն մասնաւորաբար կիլիկեան ռամկօրէնը դարձաւ կիլիկեան-Ռուբինեան իշխանութեան պետական լեզուն, գրուեցան աւելի հրոմարտականներ, օրէնքներ, մուրհակներ, դաշնագրեր եւ հետզհետէ առաջ եկաւ աշխարհաբար մը, ժողովուրդին խօսած լեզուն մօտ եւ ժողովուրդէն դիւրահասկեալի լեզու մը, որ կրցաւ ժողովուրդը ինքն ալ գործածել եւ խօսիլ: Համաձայն Հ. Աճառեանի կիլիկեան ռամկօրէնը հաւանաբար ծնունդ տուած ըլլայ Պոլսոյ աշխարհաբարին: Դարուն բաւական ջանքեր թափուեցան եւ նոյնիսկ գրաբարի եւ աշխարհաբարի սուր պայքարներ տեղի ունեցան կ. Պոլսոյ մեր մտաւորականներուն, գրողներուն միջեւ: Ոմանք ուզեցին գրաբարը մտաւորականներուն, գրողներուն միջեւ: Ոմանք ուզեցին գրաբարը կեանքի վերակոչել, սակայն չյաջողեցան, ժամանակները իրենց չօգնեցին: Ընդհակառակն, աշխարհաբարը օգտուելով գրաբարի շատ մը ձեւերէն եւ բառամթերքէն հետզհետէ գեղեցկացաւ, նրբացաւ, ճկունցաւ եւ դարձաւ գրականութեան, գիրքի եւ դպրոցներու լեզու: Նոյն երեսօթը պարզուեցաւ կովկասի մէջ, Թիֆլիս, Երեւան եւ Մոսկուա եւ հոն ալ առաջ եկաւ արեւելահայ աշխարհաբարը:

Արդ, մենք ունինք այժմ մեր գրաբարը, մեր երկու աշխարհաբարները եւ շատ մը գաւառաբարբառները, ըստ Հ. Աճառեանի 40-ի մօտ է անոնց թիւը:

Սփիւռքը սակայն հետզհետէ, այս գնացքով այդ գաւառաբարբառները հաւանաբար վրայ տայ, բոլոր այդ այլազան բարբառները իրենց ոճերով, գեղեցիկ բառերով, ասոյթներով պիտի մաշին, մոռցուին, այդ բոլորը որ մեր լեզուն տեւականացման տարրեր, անըստ հանքերն էին եւ բարեղէպ պարագաներուն տակ եւ եթէ արտաքին ազդակներ եւ դժուարութիւններ չելլեն մեր առջեւ, այդ բոլորէն չաղախուած նոր եւ մէկ տեսակ բարբառ մը առաջ պիտի գայ մեր լեզուներուն տակ, անկախ մեր գրական լեզուէն՝ աշխարհաբարէն եւ մեր աղօթքի բարբառէն՝ գրաբարէն: Այդ նոր գաւառաբարբառին մէջ կամաց կամաց պիտի աղօտին եւ անհետանան մեր գաւառներէն իւրաքանչիւրին բերած շեշտը, երանգը: Խարբերոյցի գաւառներէն իւրաքանչիւրին բարբառին, վանեցիկին՝ հաճախակի բարբառը պիտի խառնուի գէթուցիկի բարբառին, վանեցիկին՝ հաճախակի բարբառը պիտի խառնուի իսկ միջավայրի տեղական լեզուն, արաբերէնը արաբական աշխարհի մէջ գտնուող մեր հայերուն, Ֆրանսերէնը Ֆրանսա գտնուողներուն, անգլերէնը Ամերիկա եւ ալլուր բնակողներուն պիտի գան իրենց ծանր եւ անջնջելի դրոշմը դնել մեր հայերէնին, մեր բարբառներուն վրայ եւ ասիկա նուազագոյն դժբախտութիւնը պիտի ըլլայ գոնէ ատեն մը հայերուս, իսկ անկէ յետո՛ւ որոշ է ըլլալիքը, եթէ ուշանանք օտար հորիզոններու տակ:

ՉԷՅԹՈՒՆԻ ԲԱՐԲԱՐԸ

Մեր կարգին մենք ալ, շատերուն պէս, մտահոգութիւնով մը յաճախուած, որքան որ հնարաւոր է մեզի, պիտի փորձենք մեր ծննդավայրին՝ Զէյթունի բարբառը - եթէ չենք կրնար տեւականացնել զայն մեր ապագայ հայրենակիցներուն լեզուներուն մէջ - արձանացնել, պահել գոնէ համեստ հատորի մը էջերուն, որպէսզի, եթէ հեռաւոր օր մը ո՛չ մէկ գէթուցի գտնուի զայն խօսող կամ հասկցող, գէթ հայ կամ օտար լանսաշէրներու հետաքրքրութեան եւ ուսումնասիրութեան առարկան դառնայ անիկա:

Կիլիկիոյ մէջ էր առաւելապէս որ մշակուեցաւ Միջնադարեան հայ գրականութիւնը, Միջին հայերէն կոչուած կամ կիլիկեան ռամկօրէն որակուած ռամկախառն լեզուով մը: Այդ ժամանակուան աշխարհաբարն էր այդ, լեզուն օտար եւ ռամիկ բառերով: Այս եղաւ Միջնադարի արեւմտահայերէնը, որ սակայն ծաւալեցաւ Միջերկրականի ափերէն, մինչեւ Մեծ Հայք, մինչեւ Անի: Այս աշխարհաբարը հետզհետէ ժամանակի ընթացքին եւ դէպքերու բերումով սկսաւ երկու գլխաւոր ճիւղերու բաժնուիլ, որոնց երկուքն ալ օգտուեցան գրաբարէն:

Կիլիկիեան գաւառաբարբառը, թէպէտեւ ի վերջոյ թօթափելով իր վրայէն այն ինչ որ պատճառ եղած էր զայն կոչելու ռամկօրէն ու հետզհետէ դարձած էր Ռուբինեան իշխանապետութեան եւ թագաւորութեան պետական լեզուն, օր մըն ալ, բայց անշուշտ բաւական ուշ, եղած էր արեւմտահայերէն գրական եւ խօսակցական բարբառը՝ արեւմտեան աշխարհաբարը, որուն կեդրոնը կ'ըլլար ամենէն առաջ կ. Պոլսը, սակայն Կիլիկիոյ լեռնային շրջաններուն՝ քարային Կիլիկիոյ քաղաքներուն եւ գիւղերուն մէջ, ուր հայր մեծամասնութիւն էր, եւ տեղ տեղ ալ բոլորովին հայաբնակ էր եւ շատ ալ յարաբերութիւն չունէր դուրսի օտար ժողովուրդներուն հետ, այդ տեղերը Կիլիկեան գաւառաբարբառը մնաց որպէս գաւառաբարբառ, իր նախնական տարրերով եւ ձեւերով եւ բաւական ժամանակ յետոյ իր մէջ մտան թուրքերէն բառեր, նախադասութեան, շարադասութեան ձեւեր: Կիլիկիոյ այդ հայաբնակ եւ իրենց բարբառը պահող վայրերն են Զէյթունի, իր հայ գիւղերով, Հաճըն, Մարաշ, Քիրէճ գիւղ, Եօղուն Օլուզ, Հաճի Հապիպի, Խտրը Պէկ, Վազըֆ, Քէպուսիէ եւ Կասիոսի ստորոտը՝ Քեսապ իր մէկ քանի հայ գիւղերով: Ասոնց բարբառները փոքր տարբերութիւններով Կիլիկեան գաւառաբարբառին ճիւղաւորումներն եւ շարունակութիւններն են: Զէյթունի բարբառը ամենէն քիչ ազդուածն

է եղած օտար տարրերէ: Շատ քիչ թրքերէն բառեր մուտք գործած են հոն, շատ հինէն ունի իր մէջ քանի մը արաբերէն բառեր, յոյներու եւ խաչակիրներու ժամանակէն մի քանի յունարէն եւ ֆրանսերէն բառեր, մնացեալը զուտ, անխառն հայերէն բառեր են: Սակայն բայերու խոնարհման ժամանակներու մէջ զգալի է օտարի ազդեցութիւնը: Մարաշի հայ բարբառը կիսովին դարձաւ թրքերէնէ խառն լեզու մը, ժողովուրդին մեծագոյն տոկոսը մոռցաւ հայ բարբառը ու տեղի տուաւ թրքերէնի: Տարեց ալրերու եւ կիներու բերանը մնաց հայ բարբառին մէկ տկար, անկատար մնացողը, թեւատ ու փետրաթափ թռչունի մը նման, ճիշդ միագէմ եւ պակասաւոր բայերու տպաւորութիւնը կը թողու ան, զինքը ունկնդրողին վրայ: Այնթապ գրեթէ բոլորովին կորսնցուց իր բարբառը, դարձաւ թրքախօս:

Այս երկու քաղաքներու հայութիւնը, վերջէն, 1908-ի Օսմանեան սահմանադրութենէն յետոյ է որ զարկ տալով կրթական-գաղտնական գործին, յառաջ եկաւ սերունդ մը որ հայերէն-աշխարհաբար սկսաւ խօսիլ եւ գրել: Իսկ 1915-ի ընդհանուր տարազրուցենէն վերապրողներուն մէջ աւելի տեղ գտաւ հայերէնը, դպրոցներու աշխարհաբար եւ ոչ թէ գաւառաբարբառի ձեւին տակ, այլ աշխարհաբարի սովորական տարազներով:

Զէյթունի, Հաճընի, Մարաշի, Փայասի, Պէյլանի, Սուէտիոյ հայ գիւղերուն եւ Քեսապի բարբառները, յառաջ եկած ըլլաով Կիլիկեան միջնադարու գաւառաբարբառէն, Հր. Աճառեան «Կարելի է զանոնք կոչել, կ'ըսէ, Կիլիկեան գաւառաբարբառին ենթաբարբառները: Ասոնք թէեւ իրենց մէջ կը ներկայացնեն բաւական տարբերութիւններ, սակայն անոնց ընդհանուր յատկանիշները, նմանութիւնները շատ մեծ են եւ հասարակաց: Ասոնց բոլորին աղբիւրը մէկ է՝ Կիլիկեան ռամկօրէնը կամ միջին հայերէնը: Զէյթունի բարբառին ամենէն մօտն է Հաճընի բարբառը: Թէպէտեւ այս բարբառներէն ոեւէ մէկը ունեցող հայ մը կրնայ լսելով հասկնալ միւսները: Օրինակ, զէյթունցի կրնայ հասկնալ հաճընցիին խօսածը եւ փոխադարձաբար: Միայն թէ քանի հեռանանք այդ շրջանէն եւ իջնենք հարաւ, Սուէտիա, Քեսապ, կը դժուարանայ հասկնալ այդ տեղերը խօսուած բարբառները, որոնք աւելի ազդուած են արաբ եւ թուրք լեզուներէ: Քեսապցիք իրենց բարբառին «քիստինէկ» կ'ըսեն, այսինքն Քրիստոնեայ լեզու: Իսկ անդին, դաշտային Կիլիկիոյ մէջ, սկսած Միսէն, Ատանայի, Տարսուսի, Մերսինի, Տէօրթ Եօլի եւ միւս քաղաքներուն հայերը կորսնցուցին հայ բարբառը եւ դարձան թրքախօս:

Ձայնագիտական եւ բառագիտական ծանօթութիւններ
Զէյթունի բարբառին ձայնաւոր եւ բաղաձայն տառերը:—

Հայերէն աշխարհաբարի եւ գրաբարի մէջ ձայնաւոր տառերը 7 հաւ են, Ա, Ե, Ի, Ը, Ի, Ո, Օ: Կիսաձայն են Յ եւ Խ տառերը: Ու երբ ւ տառը ո տառէն եւ ի էն վերջ գալով հանէ ֆրանսերէն ու եւ օս ձայները, առաջ կու գան երկու բաղադրեալ ձայնաւորներ՝ իւ, ու: Այս երկու գիրերը յ եւ ւ, կը դառնան նաեւ բաղաձայն, երբ յ հնչուի հի նման եւ ւ ը վի ձայնը հանէ: Հայերէնի երկբարբառներն են այ, եա, եայ, եօ, օյ:

Զէյթունի բարբառին մէջ ե եւ է ձայնաւոր գիրերը բառերուն մէջ նոյն ձայնը ունին, գրեթէ չէ կարելի զանազանել անոնց ձայնը իրարմէ, բառերուն սկիզբը ե ի ձայն չունինք, աշխարհաբարի մէջի սկիզբի Ե-երը է ի նման կը հնչենք, ինչպէս Երեմիա-էրեմիա, Եղիա-էղիա, Եղիշէ-էղիշէ, Երգ-էյգ, Եղիսաբէթ-էյսաբէթ, Եղբայր-էյգբէր, Երդում-Օրդում եւայլն: Ուստի այս երկու գիրերը Զէյթունի բարբառին մէջ նկատուած չեն որպէս առանձին ձայնաւորներ: Նոյն պարագան կը ներկայանայ գրեթէ ո-ին եւ օ-ին համար: Բառերուն սկիզբը աշխարհաբարի մէջ, բացի Ովսաննա, ովկիանոս, ով եւ ուրիշ մէկ երկու բառերէ, որոնց մէջ օ-ի հնչումը ունի, միւս բոլոր բառերուն սկիզբը վ-ի ձայն կը հանէ, ինչպէս որդի, ոսկի, ոսկոր, իսկ բառերուն մէջ չի կրնար զանազանուիլ օ-ի ձայնէն, մինչդեռ Զէյթունի բարբառին մէջ, սկիզբի ո գրեթէ չկայ, աշխարհաբարն ոսկին, ոսկորը մենք կը հնչենք իսկի, իւսկիւր, ողջոյնը՝ օղջոյն: Եւ այս պատճառով ալ նմանապէս այս երկու գիրերը Զէյթունի բարբառին մէջ նկատուած չեն որպէս առանձին ձայնաւորներ:

Այս տեղ կը դնենք մեր հայրենակից լուսահոգի Գ. Տէօվլէթի պատրաստած բաղդատական մէկ ցուցակը հայ եւ օտար ձայնաւոր տառերուն:—

Հայ. ա, ե-է, ը, ի, ո-օ, իւ, ու, 7 ձայնաւոր.

Զէյթ. ա, է, ը, ի, իւ, ու, էօ, օ, էա, ըա 10 ձայնաւոր.

Թրք. ա, է, ը, ի, իւ, ու, էօ, օ, 8 ձայնաւոր.

Ֆրնս. ա, է, ը, ի, իւ, ու, էօ, օ, 8 ձայնաւոր.

Հայերէնի մէջ ամենէն շատ գործածուած ձայնաւորը Ա. տառն է: Ա, Ե, Ի, Օ ձայնաւորները Զէյթունի բարբառին մէջ հնչումի դժուարութիւն չեն ներկայացներ:

Ա. Ձայնաւորներ

1. Զէյթունի բարբառին մէջ հնչուած «Ա»ը աշխարհաբարի մէջ ալ նոյն «ա» կը հնչուի, սակայն աշխարհաբարի մէջի «ա»ը մեր բարբառին մէջ միշտ եւ ամէն տեղ «ա» չէ. միավանկ բառերու մէջի «ա»ը եւ բաղմավանկերու վերջին վանկի «ա» «ո» կը փոխուին Զէյթունի բարբառին մէջ:

Օրինակ. հաց, հօց, հաւ-հօվ, տանձ-տընձ, պապ-պօպ, վարդ-վօրդ, Սահակ-Սահոկ, ճակատ-ճակոտ, նապաստակ-լափրստօկ, դերձան-դեյձօն, աշխարհ-աշխօյ, Հայաստան-Հայաստօն, շուշան-շուշօն, վահան-վահօն, պատարագ-պատալօգ եւ այլն:

2. Ա. Աշխարհաբարի մէջ, սկիզբի «ա» Զէյթունի բարբառին մէջ «Օ» կը փոխուի, ինչպէս. աղտ-օղտ, ամպ-օմպ, այ (դեռ)-օյ, աղ-օղ, ակ-օկ: Կարգ մը բառերուն մէջ ալ էա-ի կը փոխուի Զէյթունի բարբառին մէջ, օրինակ. աղտոտ-էաղտիւտ, ճանճ-ճէանճ, խաչ-խէաչ, արջ-էարջ, աղուոր-էաղվիւր: Երբեմն ալ կը փոխուի է-ի, օրինակ. ալիւր-էլիւր, անել-էնել, աչք-էչքէ, արիւն-էյրիւն: Տեղ ալ կայ որ բառերուն մէջ կ'անհետանայ «ա» օրինակ. մատանի-մատնը, պարտական-պարտկան, անագան-անգոն, բաժնուիլ-բէաժնիլ:

3. Ե. ինչպէս քիչ առաջ ըսինք, Զէյթունի բարբառին մէջ «ի» ձայնը առանձինն գոյութիւն չունի: Աշխարհաբարի սկիզբի Ե-երը էի ձայն ունին մեր մօտ, ինչպէս. երգ-էյգ, եղբայր-էյղբեր, Եղիա-էյղիա: Բացառութիւն են այն բառերը, որոնց մէջ Ե-ին կը յաջորդէ դ, ո, ի. այդ պարագային Ե-ը կը պահէ մեր բարբառին մէջ աշխարհաբարի յատուկ ձայնը. օրինակ. տեղ, լեռ, նեղ: Բառերուն մէջի Ե-երը առ հասարակ կը փոխուին ի. օրինակ. գիշեր-գիշիր, տես-տիս, լեզու-լիզօ, անձրեւ-անձիւ, արեւ-այիւ, գրել-գըլիլ, ըսել-ասիլ, աւել-ալիլ, աղնել-աղնիլ. բառերու սկիզբը՝ եկաւ-իկիւք, երագ-իյոժ, ինտիյօժ, երկինք-իյկէնք, երկու-իյկու, երկաթ-իյկօթ, երէց-իյէց, ես-իս, երես-իյիւ, երկամ-իյկոմ, երէկ-իյէկ: Ե-ը կարգ մը բառերու մէջ է-ի մօտ հընչում մը ունի, օրինակ՝ դեղին-դէղան, լեղի-լէղա, մեղայ-մէղայ, սեղան-սէղոն, ձմեռ-ձըամէռ: Տեղ տեղ ալ Ե-ը բառերուն մէջ սուղ ըի կը վերածուի, երբեմն ալ կ'անհետանայ, օրինակ. երեսուն-էրսուն, կեղեւել-կեղիւիլ, աւելել-ալիլ, աւերել-ալիլ, երենալ-օրվոնոլ, խեղդել-խըղդիլ, ճեղքել-ճըղքիլ, երզնուլ-օրգօնսօլ, հրեշտակ-հրիշտօկ, յոգնի եր-իր, օրինակ՝ լաթեր-լաթիր):

4. Ե. է ձայնաւորով սկսող Զէյթունի բարբառին մէջ ունինք է հակառակ բայը, էչ, էվէլք (աւաչք երգ խմաստով), էվէ (նորէն), էլտիվօ-յետոյ խմաստով, էնճոր-չատկեկ խմաստով: Բառերուն վարջաւորութեան դասնուող ի տառը կը փոխուի է-ի, ինչպէս՝ գինի-գինէ, ալի-էլի: Հայ բառը կը հնչենք հէյ, հէ: Զէյթունի է-ն աշխարհաբարի մէջ ալ է է, օրինակ. օրէնք, ուրէնք:

5. Զէյթունի⁵ բարբառին ը-ն աշխարհաբարի մէջ ալ ը է, օրինակ՝ մարդը, մորդը, տեղ ալ կայ որ ը է-ի կը փոխուի, օրինակ. հացըն-հացին, շոնը-շունին, ջրարըն-ջուրին, Զատրկ-Զատիկ, հատրկ-հատիկ, հակըթա-հակիթի եւ այլն: Ը. բառերուն սկիզբը շատ տեղ ըս կ'ըլլայ

օրինակ. ընկեր-ըանկեր, ստեպղին-րաստպղան:

6. Զէյթունի ի. աշխարհաբարին մէջ կ'ըլլայ նորէն ի, ինչպէս գիշոր-գիշեր, կ'ըլլայ է, գիշոր-գիշեր, բիրիւ-բիրիւ, ուտիլ-ուտել, սիրիլ-սիրել: Ի. բառերուն սկիզբը կը հնչուի ի, օրինակ. իշխան-իշխոն, իրաւ-իրօվ, ինք-ինք, իր-իր, նաեւ բառերու առաջին վանկին մէջ՝ օրինակ հինգ-հինգ, յիսուն-իսսոն, Յիսուս-Յիսուս, յիշել-իշիլ, ելլել-իլլիլ. դարձեալ ի տառը շատ մը բառերու մէջ. ծիծ-ծած, միս-մաս, ձի-ձա, սիրտ-սարտ, միտք-մատք, լեղի-լէղա, տարի-տարը, բարի-բարը, չամիչ-չամիչ, պանիր-պանրը: Դժուար կ'ըլլայ-դիժոր, կշտանայ-կիշլանայ:

«ի» մեր բարբառի սա բառերուն մէջ կ'ըլլայ է՝ գին-գէն, գիր-գէյ, հոգի-հեգգէ, այգի-էգէ, գինի-գինէ, ջորի-ջիրէ:

7. Ո. Զէյթունի բարբառին մէջ կ'ըլլայ իւ, ու, ի, էօ,

ա. ինչպէս՝ խնձոր-խէօնձիր, սալոր-սէալլոր, ազոխ-էաժիւխ, ոսպ-իւսպ, ոսկոր-իւսկիր, ո՛վ-իւվ, ձոր-ձիր, փողք-փիւլք, հոս-հիւս, չորս-չիւրս, խտտ-խիւտ, չնորհք-չէօնիւք, խոշոր-խիւշիւր, կտոր-կոտիր, սխտորսէօխտիր, սոխ-սիւխ, խաղող-խէաղիւղ, գող-գիւղ, դող-գիւղ:

բ. Գողնալ-գոլղոնոլ, դողալ-դոլղոլ, լողալ-լոլղոլ, սողալ-սոլղոլ, թողալ-թոլղոլ, ողորմիլ-ոլղոլմիլ, դողցընել-դոլղցընել, գովել-գոլվիլ:

գ. Գործել-գիրծիլ, ոսկի-իւսկի, որորել-իրիլ, փորել-փիրիլ, չորս-չիւրս:

դ. Հով-հէօվ, կով-կէօվ, քով-քէօվ, բիրող-բիյէօղ, ուտող-ուտէօղ, լող-լէօղ, ձող-ձիւղ, հոս-հէօս, հող-հէօտ, հոն-հէօն, հացով-հացէօվ:

8. Օ-էօ: Օձ-էօձ, օր-էօր, օղ-էօղ (հին աւ-օ) արօր-հէարէօր:

Օ-ու: Օղակ-ուղակ, օրհնել-ուշնիլ, օգտել-ուլթիլ, օրինակ-ուրնոկ,

թօթվել-թոթվիլ, խօսիլ-խուսալ:

8. Իւ. Հայերէնի մէջ «իւ» վերացական գոյականներուն վերջաւորութեան ետ կը կարդացուի, ինչպէս՝ մեծութիւն, մեր բարբառին մէջ՝ մինծութան, ողորմութիւն-ուլղոլմութան, իսկ ուրիշ տեղեր՝ ձիւն-ձիւան, ձիւթ-ձիւթ, երբեմն ալ իւ=ի, արիւն=էրին, ալիւր=էլիր (մող), հարիւր=հէրիր: Իւ կ'ըլլայ նաեւ ու՝ հիւղ=հուղ, չիւղ=չուղ, ճիւղ=ճուղ:

Բ. Երկբարբառներ

1. Այ=էա. ալի-էաժ, գալլ-գէալ, փայտ-փէատ, ծալր-ծէար, մայր-մէայ, սալլ-սէալ (պզտիկը քալեցնելու առարկայ մը անիւով, փոքր սայլի նմանող) բառերուն մէջ: Խայթել, խէթիլ, խայտել-խէտվիլ, ճայթել-ճէթիլ, այրել-էյալ (այրիլ), հայել-հէյիլ, հայիլ-հիլլէ, քայլել-քէլլիլ:

2. Այ=ոյ. բառերուն վերջի յ-ն երբ անձայն է աշխարհաբարի մէջ ի, մեր բարբառին մէջ այ կը դառնայ ոյ. ինչպէս. տղայ-տողոյ, կու

գայ-կոպոյ, վկայ-վոկոյ, քահանայ-քահանոյ, սատանայ-սատանոյ, կերթայ-կութոյ

3. Աւ=օ. Մեր գրաբարի աւ-այթմ օ է, ինչպէս՝ աւրինակ-օրինակ, աւձ-օձ-էօձ, աւր-օր-էօր, աւրհնել-օրհնել-ուշնիլ:

4. Աւ=ը. այթմ բառերուն սկիզբը սակայն կը հնչուի-ավ, ինչպէս՝ աւանակ-ավանոկ, աւել-ավիլ. բառամէջին. աւագ-աւոգ, հանել-հանել, հաւատալ-աւտոյ:

5. Եա=ե, է. բարեաւ-բարիւ:

6. Եանք=ինք. Կօչկակարեանք-կուշկուրինք, Ահարոնեանք-Հէարինինք, Պուլումինք, Սրասաոնինք:

7. Ոյ=ա. լոյս-լաս, թոյլ-թալ, զոյցք-զըրացք:

8. Ոյ=ի. ընկոյզ-խնկէզ, կոյզ-կիզ, (ողկոյզ), քոյր-քիյ.

9. Ու-է=իւ-ը. ուղեզ-էղէղ (գլուխ, ուղեղ), ուղորդ-իւղիւրդ, ուխտաւոր-ըխտէավիւր:

10. Ու=ո. դուն-դոն, դուռ-դոռ, ջուր-ջոյ, դոռմ-դոդոմ, գլուխ-գոլոխ

11. Վ=Պ Աստուած-Ասպոծ, աստուածատուր-Ասպանտուր:

12. Ըա կը համապատասխանէ ի, իւ ձայնաւորներուն եւ Ոյ երկրաբառին. օրինակ. միս-մրաս, գիս-գրաս, սիրտ-սրարտ, ձիւն-ձրան, խիւս-խրաս, նեղութիւն-նեղութրան, ծիծ-ծրած, ձիւթ-ձրաթ: (Այս բառերը քիչ առաջ արդէն երկու տեղ եւս յիշեցինք տարբեր պարագաներու տակ, ի եւ իւ ձայնաւորներուն Ա. Ըա. Եու ձայններուն փոխուիլը ցոյց տալու համար) ուրեմն ասոնք կը հնչուին նաեւ հետեւեալ կերպով

Նախ.

Միս-մաս-մրաս. գիս-գաս-գրաս. սիրտ-սարտ-սրարտ. ձիւն-ձան-ձրան խիւս-խաս-խրաս. նեղութիւն-նեղութան-նեղութրան. ծիծ-ծած-ծրած ձիւթ-ձաթ-ձրաթ:

Գ. Բաղաձայններ

Ձէյթունի բարբառին մէջ, աշարհաբարի եւ գրաբարի հետ բաղդատելով, բաղաձայններու տարբերութիւն գրեթէ գոյութիւն չունի, ո՛չ քանակով, ոչ որակով: Անոնք արեւմտահայերէն գրական լեզուի, այսինքն աշխարհաբարի մէջ հնչուածին նման ձայն ունին: Հայերէն բաղաձայններէն ոմանք ձայնական արժէքով երեք աստիճանի կը բաժնուին Լերկ կամ Նուրբ, Միջակ, Թաւ:

Լերկ. պ-պար, կ-կար, տ-տարի, ծ-ծիտ, ճ-ճայ, ս-սիրտ
Միջակ. բ-բարի, գ-գարի, դ-դարի, ձ-ձի, ջ-ջայլ, զ-զիստ
Թաւ. փ-փարի, ք-քար, թ-թառ, ց-ցին, չ-չար

Երբեք իրարու հետ չեն շփոթուիր Ձէյթունի բարբառին մէջ պ.բ.փ, կ.գ.ք, տ.դ.թ, ծ.ձ.ց, ճ.ջ.չ, ս.զ լերկ, միջակ եւ Թաւ տառերը, անոնց իւրաքանչիւրը իր առանձին հնչումն ունի Ձէյթունի բարբառին սէջ: Ուսուցչին արտասանութիւնը բաւական է որ աշակերտը անխալ կերպով գրէ այդ ձայները պարունակող բառերը, առանց յիշողութեան դիմելու: Մինչդեռ քիչ առաջ յատուկ կերպով նկատեցինք մեծ տարբերութիւն ձայնաւոր տառերուն թիւին եւ որակին մէջ աշխարհաբարի եւ Ձէյթունի բարբառին միջեւ: Բաղաձայններէն իւրաքանչիւրը իր յատուկ արժէքը եւ առանձին հնչումը ունի եւ անոնց ոչ մէկը միւսին հետ կը շփոթուի. պատը պ-ով կը գրէ, բաղը՝ բ-ով, փայտը՝ փ-ով, գարին՝ գ-ով, քարը՝ ք-ով, կարի՝ կ-ով եւայլն:

Աշխարհաբար

Ձէյթունի բարբառ

բարի,	բարի
բարեկամ	բարիկամ
գիշեր	գիշիր
գոյ	գիւլ
դոյ	դիւլ
գայլ	գէալ
գիւլ	գեղ
Գրիգոր	Գյիգոր
դուռ	դոռ
դգալ	դոգոլ
ձեռք	ձեառք
ձի	ձայ
ձիւն	ձան
ձմեռ	ձրամեռ
ջուր	ջոր
ջաղացք	ջաղոցք
ջարի	ջիրէ
ջարդիլ	ջայդիլ
բամպակ	բամպակ
բաժնի	բիժնիլ
բաց	բոց
բարձ	փորձ եւ այսպէս...

Աշխարհ.	Ձէյթուն	Մարաշ	Հաճըն	Ավետիա Ջեսսապ
հաց	հոց	հոց	հոց	հուց
ջուր	ջոյ	ճոր	ճույ	ջէօր

Աշխարհ.	Ձեյթուն	Մարաշ	Հաճըն	Սվետիա Քեսապ
ապուր	ապույ	ապուր	ապույ	ուպետր
զգեստ	լաթիյ	լաթիր	լաթէյ	ըրրուիս
խօսք	խէօսք	ծրածք	զըլըց	զըրէօց
		զըլացք	զըլըց	զըրէօց
եկեղեցի	գիղեցէ,			
	իծամ	իծամ	իծամ	կիղիցա
հայր	տատա	պատա	պօպ	տուտ, պուպ
	պօպ	պօպ	հայրիկ	պէօպ
մայր	մէյ	մէր	մայրիկ	մէար
մանր	պուլուզ, պուլգտէկ	պուլգտէկ	պըլըգտէկ	տըղէն
տղաք	մանրոնք			
աղջիկ	աշկէն	ախնին	աջկին	էշկէն
	աշկին		աջկընտէք	
աղէկ	ըառանտ	ըոընտ	ըոինտ	աղվիւր
աժան	օոօտ	ըոօտ	ըոօտ	ըոոուտ
անլի	անլը, անլա	ալլա	անլի	ալլա
երկու	իյկուք	իրկուք	իյկուք	իրկէք
երեք	իյիք	իրիք	յէք	ըրք
չորս	չիւս	չիւքս	չուէյս	չիւք
յիսուն	իսսուն	իսսուն	իսսուն	իսսուն
հարիւր	հէյիյ	հեքիր	հէյիյ	հէրէք
ես	իս	իս	ես	իս
դուն	դուն	դուն	դուն	դէուն
ան	էան	էն	ան	ան
ինձամով	ինձամէօվ	իծմէօվ	ընծիկինէօվ	իրմէյնս
քեզմով	քիզմէօվ	քիզմէվ	քիմմէք	քիմի
անով	էնիկէօվ	ինիկէօվ	ինօհիտ	անէօց
ուտել	ուտիլ	ուտիլ	ուտիլ	ուտիլ
կերայ	կիյօ	կիրօ	կիյօ	կիրօ
դնել	դըլանիլ	դնիլ	դըմիլ	դնիլ
դրի	դըլայա	դըրայ	դըլի	դրօզ
երթալ	իյթուլ	ըրթիլ	իյթուլ	ուրթիլ
գացի	գացի	կացայ	գացի	գացա
պիտի				
երթամ	պիյթում	պիտի ըրթում	պիյթում	պըր ըրթում
ըսել, ըսի	ասիլ, ասը	ըսել, ըսայ	ասել, ասի	ասիլ, ասա

Աշխարհ.	Ձեյթուն	Մարաշ	Հաճըն	Սվետիա Քեսապ
պիտի ըսեմ	պըտասիմ	պիտի ըսեմ	պասիմ	պըր ասիմ
վրան	վիյէն	իվրէն	վիյան	իրվան
նքրքել	նիյքիվը,	տուկը		
	տօքը	նիրքիվը	նիյքելը, տօքը	վըրքը
քովը	քէօվը, իտէլը	քէօվը	քէվը	քէօվը
հիմա	հոււմօ,			
	հոււմիկ	հըմօ	հոււմօ	համու
հերու	հիյու	հիրու	հիյու	հիրէուվ
առտու	առաւտումը	առաւտ	սապահտան	սապահտան
իրիկուն	իյկուն	իրկուն	իյկավօն	իրիկուն
ինչպէ՞ս ես	չո՞ցիս	չո՞ցիս	ինչո՞ցիս	չո՞ւցիս
աղէկ եմ	ըռանտ իմ	ըրրտիմ	ըռինտիմ	աղվիւրիմ
բարի լոյս	բայլաս	պարա լաս	բայի լիս	բարըլայս
գիշեր				
բարի	ճիզ գիշիյ բայը	ճիզ կիշիր բայը	...	գիշիր բարա
լոյս բարի	լաս բայը	ճիզ լաս բայը	...	գլայս բարա
մնաս բարով	կիցիյ քէայէօվ	կիցեր պարէվ	մնացիր բայէվ	բարու մնաք
երթաս բարով	իյթու քէայէօվ	ըրթու պարէվ	իշթու բայէվ	բարու համքօնք
շատ ապրիս	շօտ ապըլս	շօտ ապրաս	շօտ ապիս	շիտ ապրէս
մուր	գլիտուզ մուլը	գուլսոզ մուրը	կլիտիզ	...
աչքի լոյս	էչվէզ լուս	էչքիզ լուս	էչքիզ լիս	էչքիզ լաս
շնորհաւոր	իշնէիվիւր	իշնէվիւր	իսայըրը	շիւնէիվիւր
տարի	տայը	տայա	տայի	տարա
Աստուած պահէ	Ասպոծ պէհէ	Ասվոծ պէհէ	Ասվոծ պէհէ	Աստուծ պէհէ
հայ ազգը	հէյ օզգը	հէյ օզգը	հէ օզգը	
տունը	տունը	տունը	տունը	ի տուն
լեռը	լեռը	լեառը	լեռը	լիրը
իմշո՞ւ	չուրո՞ւ	չուրո՞ւ	է՞ր	չըվա՞

Ծանօթ. Այս բաղդատական ցուցակին աշխարհաբար, Ձեյթունի, Մարաշի եւ Հաճընի բարբառներուն մեծագոյն մասը կիլիկեցիին «Մարաշ» հատորէն առած եմ, Ձեյթունի մասին կարգ մը ճշգրտմաներով, իսկ Սուէտիոյ սիւնակը ես աւելցուցած եմ:

Հայերէնէն թուրք լեզուին մէջ անցած բառեր եւ փոխադարձաբար

Հայերէն	Թրքերէն
Այր	Այր (Ձէյթ. Ալուճ)
Անաճ	Անաճ
(Աման աղիւս. հողէ գոյգ աղիւս կը շիւնեն գէթունցիք, կաղապարիմ մէկ աչքը աւելի մեծ կ'ըլլայ, ամոր կ'ըսեն աման, իսկ փոքր կողմին, որ փոքր աղիւսը կու տայ՝ Ղուզու)	
Ակիշ	էմիշ
Այր	էր
Առու(ք)	Արըզ
Անարատ իւղ	Անարատ եաղ
Առաստաղ	Առըսթազ
Աւանակ	Ավանէք
Ափեղ-ցփեղ	Ափրզ-սափրզ
Բանջար	Փանճնար
Պանիր	Փէնիր, փէնտիր
Բոյն	Փին
Բրինձ (պրսկ)	Փիրինճ
Գափանք	Գափազ (Ձէյթ. գափօնք, քէփէնք)
Դարակ	Տէրէկ, Թէրէք (օճախ)
Ծտեկ (Ծտեւէն եկող, պահեստի)	Ծէտէկ
Իւղ, եղ	Ծաղ (Ֆրնս. huile)
Չամբիւղ	Չէմպիլ
Չմրուխտ	Չիւմրիթ
Էշ	էշէք
Չոսլ	Չուլամազ
Թոնիր	Թանտրր
Թոռ	Թօռուն
Լողքար	Լող, տամըն լողը
Լական	Լէյէն
Խախուտ	Խարիդր
Խարբալ	Խարպրր
Խմոր	Խամըր
Խսիր	Հասըր
Խտիլք	Ղուրլիս, խտղըտիլիս
Ծիլ	Ջիլ, ծիլ-զիլլէմէք

Կոնրթ
Կութու
Կիճ
Կոտակ
Կամնել
Կլկլ
Կապալ
Կոլինճ
Ծրչիկ
Երանգ
Դիրտ
Բաժ

Ժաժիկ
Բախտ
Ճախարակ
Բամպակ
Մասաս
Կօշկակար
Գօշ
Թշնամի

Նամ
Մափ
Կամար
Կապալ
Կարկաճ
Կապան
Կնճիթ
Հայիկ
Հեծան
Հիմն
Հազար

Հերիսա
Հատիկ
Հատիկ
Հնար

Ղուրխ
Խթա, մեծ վարունգ
Կիճ, արընըն կիճի, կճել
Կիւտիւկ
Կէօմ տէօյմէք
Կիլիլ
Ղապալ, ղապալա
Խուլունճ
Իրիշկիտ (պրսկ.)
Րէնկ
Թորթ
Փան (ճամբու տուրք
ապրանքը անցընելու
համար)

Ճանըզ
Պախտ
Չըզրըզ, ջահր
Փամպըզ
Մէսէս
Քէօշկէր
Քէօսէ
Տիւշմէն (Դժ ժխտական
մասնիկ)

Անուն, վատանուն
Չեփէք
Քէմէր
Քէպէ
Քէրքէթ
Կէպէն
Քիւնճիւ
Հէօյիւկ, հալեակ
Հէզէն
Հիմ
Խաս, Մարըլ, Գազար

Հերեսէ
Հէթիթ, (խաղողի)
Հէտիկ (ցորենի)
Հիւնէր

Ճոռակ թռչունը
Մագոգ
Մամուխ (սալոր մը)

Մագման

Շիւկիրոր
Մարդակ
Մանուշակ
Մոդուկ, մոնդ
Մագտաքի
Ճրագ
Նազելի
Նշան
Նշանել
Նարգէս
Նուռ

Շղարշ
Շալակ
Շալակել
Շըրէշ (պրսկ.)

Չաման
Չեշ
Չըհուն
Չուհակ
Չուխտ
Պաստեղ
Պատրուսել, պատուաստել
Պատրոյգ

Պատըրգէշ
Պոշ
Ռահան
Պրտու
Մնտուկ
Սահանք
Սատափ
Սարգինա
Սմբուլ

Ճուրայ գուշու
Մէքիք (մակոյկ)
Մամըխ, տօնուզ էրեկի
(սալոր)

Մագման, մագէ չուան՝
պարկ չինոդ
Շնավարունգ (Չէյթ.)

Մէրդէկ
Մէնէվշէ (պրսկ.)
Մուճուգ
Մէզտէքի
Չըրա
Նազլը
Նիշան
Նիշան լամագ
Նէրկիզ
Նառ

Շէշ
Շէլէկ
Շէյէկլէմէք
Չիրիշ, շողգամ, շալղամ
Չէմէն
Չէշ (խաղողի չեշը)
Ճըռըն
Ճուրֆա
Չիթթ
Պաստըգ
Պէտրիսլէմէք
Պէտրեք (քամակի
ոլորուածք)

Պէտրիկ չպըղը
Փէօճ, պըշիկ
Ռէհան
Պէրտի (եղէգ)
Սանտըգ (արար.)
Սավագ
Սէտէֆ
Սէրփէնէ
Սիւմպիւլ

Սոխ
Յրամ, տօյոմ
Յրէզ
Յուխք
Փոդ
Փողրակ
Փեթակ
Քոս
Քսակ
Քէրթուք
Քերթել
Քիւշնէ
Քարման

Քէն
Փուռ

Թուրքերէն

Ալ
Աթար

Ալաշուխ
Էշկերէ
Փալուտ
Փուխար
Թօրպա
Թաս
Թասել
Թախտ
Թալա
Թել
Թափան
Թափալմագ
Թաս
Թէփսի
Թըլըսըմ
Թելթիկ

Սողան
Դըրըմ Թոփրաղը
Տիրէզին
Սիւիւք, քիւ (տանիքի)
Պօղազ
Փէօհրէնկ
Փէթէկ
Քիս (վէրքին սպին)
Քիսէ
Քէրթիկ,
Քէրթմէք
Քուշնա
Քէրմէն, բուրդ մանելու
գործիք

Քէն
Ֆըռըն (four ֆրանս.)

Հայերէն

Չար ոգի, (Չէյթ. Օլ)
Աստոր (Չէյթ.)

Փոքր վրան
Աշկարա (պրսկ.)
Խոզկաղին
Բուխերիկ
Տուրակ
Հոգ
Հոգնել
Տախտակ
Տապակ
Թել, դերձան
Տափան
Թափառնել
Գաւաթ
Թափծու աման, պնակ
Թալիսման
Հրացանի բլթակ

Թարախ
Իպիպիկ Գուշու
Խուղ
Համայի
Ճէրէ
Մում
Մնըր
Նախըր
Նէրկիդ
Շիրիկ
Տէնկսիդ
Թօսախ (ծառ)
Պուղանադ

Իրին
Ծոպուպ Թոշուն
Հիւղ
Հմայիկ, Հմայիակ
Ճարայ
Մում
Մոծիր (ածուխի)
Նախիր
Նարգէս
Շիրիկ
Տէգ
Տոսախ
Պուղանօխ (անձրեւի
տեղատարափ)

Ձէյթունի Բարբառին Այբ ու Բենը

Ձայնաւորներ

Ա- ածիլ, ածիլի (հաւկիթ)
Ե- Եկոն (տկ- եկէն, եթիմ, որբ)
Է- էյիկ (երէկ)
Ը- ըլլմոն (լման)
Ի- Իյկոն, Իյկէնք
Օ- Հօց, Հօլ
Ո- Քօսոն, վաչցոն

Բաղադրեալ ձայնաւորներ եւ Երկբարբառներ

Էա- էած (այծ), Հէաս (հայս)
Խէած (խայծ)
Եօ- եօթը
Էօ- էօր (օր)
Իւ- Ի՞նչ, (ո՞րք, Ի՞նչը)
Ու- Ուտիլ (Ուտեիլ) Ուսնօլ (սորվիլ, ուսանիլ)
Էալ- Մէայ (մայր)
Ըա- Ըրաս (լոյս) Ըատըը (լիտր)

Բաղաձայնները նոյնն են աշխարհաբար բոլոր բաղաձայններուն հետ

Հետեւեալ Ածանցները նաեւ Ձէյթունի բարբառին մէջ (օգտուած՝ Գ. Գալուստեանէ)

1. Ուան - Վօն - Առաջուան - առէջվօն, Իրկիուան - Իյիկվօն
2. Ուան - Վու - Հերուան - Հերվու, Հիմակուան - Հումմակու
3. Ենք - Ինք - մարկոսենք - մէարկիւսինք, Գուգուրենք - Գուգուրինք
4. Իոր - Վիւր - Մոցուր - Միւցվիւր, Ձիււր - Ձիւվիւր
5. Իկ - Իկ, Ըկ, Օկ - Պարտիկ - Պրագտիկ, Հացիկ - Հացրկ, Խնձորիկ - Խէանձիւրօկ, Այեւորիկ - Հէալվիւրօկ
6. Ու - իւ - խլու - Խլայիւ, Լակու - լէակիւ
7. Կակ - կէկ - մեծկակ - Մինցկէկ նաեւ մինծկօկ
8. Կան - Կօն - Մծկան - Մծկօն, Տղաձան - Տղացիօն
9. Ող - Էօղ - Լսող - լասէօղ, Խօսող - Խուսէօղ
10. Ենք - Օնք - Մայրենք - մերօնք, Եղբայրենք - Էախրէրօնք
11. Ուք - Քամուք - քամուք, Փսխուք - Շրարջուք
12. Տուք - Ուք - Ալլուտուք - Ալլուք
13. Ուածք - խօսուածք - խուսվածք, նստուածք - նըաստավածք

Դարձեալ բաղաձայններու մասին

Թէեւ նախորդ էջերուն մէջ խօսած էինք բաղաձայններու մասին թէ՛ անոնք գրեթէ ձայնական-հնչական տարբերութիւն չունին գրաբարի եւ արեւմտահայ աշխարհաբարի մէջ իրենց ունեցած արժէքէն, սակայն այստեղ կ'ուզենք յիշել քանի մը պզտիկ բացառութիւններ Ձէյթունի բարբառին մէջ։-

Գ - Կ - Յարգել- Յարկիլ

Դ կարգ մը բառերու վերջաւորութեան Տ- կը հնչուի, օրինակ- Բաղդ - Բախտ, Պինդ - Պրանտ, Փոխինդ - Փէախանտ եւ դիմորոշ յոգ՝ Դ օրինակ- Աչքդ - Էչվէտ, Ուտդ - ուտվէտ։

Չ - Ճ զարդարել - Ճարդրիլ, զարդար - Ճարդօր

Մ - Ձ Մագիլ կամ ծաթիլ - Ձէթիլ

Հ երբեմն բոլորովին կը կորսուի- Պահք - Պօք, շնորհք - Շէօնիւք, երբեմն ալ աւելորդ Հ- մը մէջտեղ կու գայ- արբենալ - հարբինօլ, Արբած - հարբօծ, Ապա - հապօ

Հ - Խ Օրհնել - Ուխնիլ կամ երբեմն ալ Հ - Ղ օրինակ մահտեսի - Մըաղախի

Ձ - Մ Խնձոր - Խէօնծիւր, Տանձ - Տօնծ, Խանձիլ - Խանծիլ, Խանձող - Խէանծիւղ, Պապանծիլ - Պապանծըալ (Բառամէջի Վն)

տառէն ետքը միայն այս փոփոխութիւնը:

Ղ - Խ երբեմն բառերու մէջ - Եղբայր - Էխրէր, Աղբիւր - Ախբրը, Ողջոյն - Օխջոյն, Աղքատ - Ախկոտ, Թուղթ - Թուխթ, Սեղմել - Սըախմիլ, Խեղդել - Խըախտիլ

Յ Բառերու սկիզբը երբեմն կ'անհետանայ, օրինակ. Յիսնակ - Իսնոկ, Յստակ - Իստոկ, Յինունք - Ինօնք, Յարդ - Էրդ

Ն. Երբեմն բառերու մէջ - Լ, օրինակ. Բանալի - Բալլնք, Կնիլ - Կօլլօլ, Թէեւ գէլթունցին Կօնօլ ալ կ'ըսէ: Մեծ բառին մէջ աւելորդ «ն» մը՝ Մինծ

Ջ մէկ քանի բառերու մէջ «Ճ» նման կը հնչուի. Ականջ - Անկէճ, Բանջար - Բէնճոր

Ռ. Բառերուն սկիզբը «ը» մը կ'առնէ. Ռուբէն - Ըռուբէն, Ռուպ - Օռուպ, ըռահօն հազիւ քանի մը բառեր ունինք «Ռ»-ով սկսող

Ս - Մ եւ Յ ձայն ունին վաթսուն եւ սաղմոս բառերուն մէջ. վաթծօն, սէաղմիւց

Տ-էն ետքը եկող Բ «Ռ»-ի պէս՝ Կտրիճ - Կըատուաճ, Ընտրել - Հըանտորիլ, երբեմն ալ կ'անհետանայ «Տ»-ն, Աստղ - Օսղը, Աստուած - Ասպոճ: Բ կը կորսուի կարգ մը տեղեր, Հրամմէ - Համմէ, Ե՛րբ - Իբ, Սուրբ - Սուբ

Բ - Ռ. Արջ - Էառջ

Յ - Ջ. Ցատկել - Ջէթկիլ

Ք երբեմն բառերու վերջաւորութեան կը դրուի, որպէս անեզականի մասնիկ. երկին(ք) - Իրկէնք, Գետին-Գիտէնք, Կշիռ - Կըաշիռք, Բարեկենդան - Բարկինտօնք

Ինչպէս վերի օրինակներէն նկատեցինք, բաղաձայններէն 15 տառ եր երբեմն պարագաներու մէջ կարգ մը ձայնային փոփոխութեան կենթարկուին, ինչ որ ընդհանուր երեւոյթ չէ, իսկ Բ. Թ. Ժ. Լ. Խ. Կ. Ճ. Մ. Շ. Ջ. Պ. Վ. Փ. տառերը միշտ կը պահեն իրենց յատուկ ձայնը, ուր որ ալ գտնուին մեր բարբառին մէջ:

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Հոլովում (Գոյականներու)

Կանոնաւոր Հոլովուող բառերէն վարդ, Հաց, Ծառ

	Եզակի	Յոգնակի
Ուղղ.	Վարդ	Վարդի
Հայց.	Վարդը	Վարդիլը

Սեռ.	Վարդ	Վարդիյուն
Տրկ.	Վարդն	„
Բցո.	Վարդէն	Վարդիյէն
Գրծ.	Վարդէօվ	Վարդիյէօվ

	Եզակի	Յոգնակի
Ուղղ.	Հաց	Հացեր
Հայց.	Հացը	Հացելը
Սեռ.	Հացը	Հացիյուն
Տրկ.	Հացըն	„
Բցո.	Հացէն	Հացիյէն
Գրծ.	Հացիէօվ	Հացերէօվ

	Եզակի	Յոգնակի
Ուղղ.	Ժօռ	Ժառիյ
Հայց.	Ժօռը	Ժառիլը
Սեռ.	Ժառը	Ժառերուն
Տրկ.	Ժառը	„
Բցո.	Ժառէն	Ժառերէն
Գրծ.	Ժառէօվ	Ժառերէօվ

Ջարտուղիներ՝ Հայ, Խըլանութան, Օր (Էօր), Ջմեռ

	Եզակի	Յոգնակի
Ուղղ.	Հէ (Հայ)	Հէյի
Հայց.	Հէն (Հայը)	Հէյիլը
Սեռ.	Հէյու	Հէյիյուն
Տրկ.	Հէյուն	„
Բցո.	Հէյէն	Հէյիյէն
Գրծ.	Հէյէօվ	Հէյիյէօվ

	Եզակի	Յոգնակի
Ուղղ.	խրյանութան	խրյանութնիյ
Հայց.	"	"
Սեռ.	խրյանութօն	խրյանութնուն
Տրկ.	"	"
Բցո.	խրյանութէն	խրյանութնություննէ
Գրծ.	խրյանութնէօվ	խրյանութնություննէօվ

	Եզակի	Յոգնակի
Ուղղ.	էօր	ուրիւր
Հայց.	էօրը	"
Սեռ.	աւուր	ուրիւրու
Տրկ.	"	"
Բցո.	ուրէ	ուրիւրէ
Գրծ.	ուրէօվ	ուրիւրէօվ

	Եզակի	Յոգնակի
Ուղղ.	ձրամեռ	զարօն
Հայց.	"	"
Սեռ.	ձրամոռն	զարնօն
Տրկ.	ձրամուռ	"
Բցո.	ձրամոռվրնէ	զարնուինէ
Գրծ.	ձրամեռէօվ	զարունէօվ

Ամիս՝ ամսութօն, էջօնք՝ էջօնքօն, էշնութօն, թամուզ՝ թամուզօն, թամզութլրնէ, գիւիյ՝ գիւիյօն, գիւիւրվրնէ, ցերեկ՝ ցերիկօն, ցերիկվուրնէ, իրիկոն՝ օյօկօն, օյօկվանէ, Հերու (անցեալ տարի)՝ Հիյու, Հիյուց, առաւտուն՝ առաւտօն, առաւտութլրնէ, վազվրնէ, հումակվրնէ, առա՛լ էռէջ, էռէջուց, էռիջվրնէ, իյէկ (երէկ)՝ իյէկուց, իյիկվրնէ:

Մարդ (մօյդ)

	Եզակի	Յոգնակի
Ուղղ.	մօյդ	մայդըք
Հայց.	մօյդ	"

	մայդօ	մայդօց
Սեռ.	"	"
Տրկ.	մայդէ	մայդոցմէ
Բցո.	մայդէօվ	մայդօցէօվ

Կով (կէօվ)

	Եզակի	Յոգնակի
Ուղղ.	կէօվ	կումիյ
Հայց.	"	"
Սեռ.	կումու	կումիյու
Տրկ.	"	"
Բցո.	կումէ	կումիյէ
Գրծ.	կումէօվ	կումիյէօվ

Տուն՝ տօն, շուն՝ շօն, կօրօք (կրակ)՝ կըրաքը, կրաքէ, (յգ. կրաքնուն), դօմօկ (դմակ)՝ դըմակը, դըմակէ, դըմակնը, դըմակնուն:

Անկանոն Հոլովումներ Մայր (մէար), Տէր, Աղջիկ (աշկին)

	Եզակի	Յոգնակի
Ուղղ.	մէար	մէրեր
Հայց.	մէարը	"
Սեռ.	մէօրը	մէրիւրու
Տրկ.	"	"
Բցո.	մէօրէ	մէրիւրէ
Գրծ.	մէօրէօվ	մէրիւրէօվ

	Եզակի	Յոգնակի
Ուղղ.	Տէր	տէրեր
Հայց.	տէրը	"
Սեռ.	տիւրուջ	տիւրիւրուն
Տրկ.	"	"
Բցո.	տիւրուջմէ	տիւրուրուննէ

Գրծ. տիրուջմէօվ տիրուռննէօվ

Գոյր՝ քիյ, քէօյ կամ քիրուջ (յգ.) քրայվատաք, քրայվատօց, տղայ՝ տօղօ, տաղու

Աշկին (աղջիկ)

	Եզակի	Յոգնակի
Ուղղ.	աշկին	աշկրնտէք
Հայց.	աշկինը	„
Սեռ.	աշկրնա	աշկրնտօց
Տրկ.	աշկրնան	„
Բցո.	աշկրնէն	աշկրնտօցմէ
Գրծ.	աշկրնէօվ	աշկրնտօցմէօվ

Ասպօծ (Աստուած)

	Եզակի
Ուղղ.	Ասպօծ
Հայց.	„
Սեռ.	Ասուծու
Տրկ.	„
Բցո.	Աստուծմէ
Գրծ.	Աստուծմէօվ

Կրանակ՝ կրնկօն, կրանկօնմէ, կրանկէօվ, տէադր՝ տիադրիւջ, աօլ (տալ)՝ տալիւջ, աներ՝ աներիւջ, լանկեր՝ լանկերիւջ

Դերանուններ

1.- Անձնական դերանուն.-

Ես (իս), դուն (դօն), ան (էն, ինք)

	Եզակի	Յոգնակի
Ուղղ.	իս	մինք

Հայց.	դրաս, դրասակ	մեզ
Սեռ.	իմ	միր
Տրկ.	ինծէ	միր
Բցո.	իմնէ	միզմէ
Գրծ.	ինձմէօվ	միզմէօվ

	Եզակի	Յոգնակի
Ուղղ.	դօն	դօք
Հայց.	զքիզ	զձեզ
Սեռ.	քու	ձիր
Տրկ.	քիզ	ձիր
Բցո.	քիննէ	ձիննէ
Գրծ.	քիննէց	ձիննէց

	Եզակի	Յոգնակի
Ուղղ.	էան	էանիւնք
Հայց.	զէան	զէանիւնք
Սեռ.	էանիւր	էանիւնց
Տրկ.	էանիւր	էանիւնց
Բցո.	էանիւվէ	էանիւնցմէ
Գրծ.	էանիւվէօք	էանիւնցմէօվ

Ինք, զանք, իր, իրնէ, իրմէօվ
իրինք, զիրինք, իրինց, իրինց, իրինցմէ, իրինցմէօվ

2.- Ծուցական դերանուն

աս - էաս - էաս, իւր, այն-էան, էնիւր, այդ - էադ, էաիւր

3.- Ստացական Դերանուն

իմը, քինը, էնիւրը, (իրը) միրը, ձիրը, էանիւնցը, (իրինցը)։

4.- Յարաբերական դերանուն

Որ - եուր (ուղղ.)։

Անորոշ դերանուն

Մէկը, ամէնքը, ամէն մէկը, ի՛նչ մէկը, միկէայլը, իո՛վ եուր, ի՛նչը, չիրգիւրը, չիքթօն եւայլն:

Գոյականներու եւ ածականներու մասին չուզեցինք առանձին գրել, Զէյթունի յատուկ բառերու ցանկ մը ունինք քանի մը էջ անդին, ուր պիտի հանդիպինք նաեւ գոյականներու եւ ածականներու Զէյթունի բարբառով տառադարձուած: Միայն թէ դասական թուական ածական չենք գործածեր հայերէնով, բացի առաջին դասական ածականէն, իսկ բացարձակ թուականները բոլորը հայերէն բարբառով են:

ԲԱՅԵՐՈՒ ԽՈՆԱՐՀՈՒՄ

Ա. Լծորդութիւն Սիրել (սիրել), (սիրելոյրմ (թրք.)
Սահմանական անմիջական (հիմա) Ներկայ

կօ սիրիմ	«կը սիրեմ կայ» կ'ըսէ կիւրիւնցին
կօ սիրիս	«կը սիրեմ կոր» կ'ըսէ Պոլսոյ Բարբառը
կօ սիյէ	«Սիրում եմ» կ'ըսէ արեւելահայը:
կօ սիրինք	
կօ սիյէք	
կօ սիրին	

Թուրք լեզու ազդեցութիւն, բայերու ժամանակներու մէջ, ներկաք եւ Անցեալ անկատարի ընթացքին, որմէ զերծ է արեւելահայերէնը, սիրում եմ, կը նշանակէ հիմա եւ միշտ, սիրում էի, Անց. անկատար եւ անմիջական Անց. անկատար:

Սահմանական ներկայ (միշտ եւ հիմա)

կու սիրիմ սէվէրիմ (թրք.)

կու սիրիս
կու սիյէ
կու սիրինք
կու սիյէք
կու սիրին

Տեւողական կը կոչէ Գր. Գալուստեան «կօ սիրիմ ձեւը, մինչդեռ «տեւողական» պէտք է կոչել «կու սիրիմ» ձեւը, իսկ Մարաշի բարբառին մէջ կայ «կօ կանըմ սիրի» ձեւ մը, որուն կուտայ «կարողական-տեւողական անունը: Զէյթուն նման ձեւ մը չունի: Տեւողական կամ շարունակական կարելի է ըսել «կու սիրիմ, կու խուսամ, կու կայդըմ» ձեւերուն:

Անցեալ անմիջական անկատար
կօ սիյա սէվիյօր տըմ (թրք.)
կօ սիյար
կօ սիյէի
կօ սիյօնք
կօ սիյաք
կօ սիյան

կը սիրէի (եւ դուն տեսար, սիրելիս, բայց հիմա ալ չեմ սիրեր, չօ սիրիմ) (տեւողական անցեալ անկատար):

Անցեալ անկատար
կու սիյա սէվէր իտիմ (թրք.)
կու սիյար
կու սիյէր
կու սիյօնք
կու սիյաք
կու սիյան

կը սիրէի, բայց դուն չտեսար սիրելիս, բայց ա՛լ պիտի չսիրեմ, էալ չիմ սիյի (պատմողական անցեալ անկատար):

Անցեալ կատարեալ

սիրեցի
սիրեցիր
սիրրեց
սիրեցօնք
սիրիցիք
սիրիցին
Աշխարհաբարի իմաստն ու արժէքը ունի:

Բայերու ժխտական ձեւով խոնարհումը

Սիրիլ (սիրել)

Ներկայ	չօ խուսամ	չօ կայդօմ
Ձօ սիրիմ	"	"
չօ սիրիս	"	"
չօ սիրէ	"	"
չօ սիրինք	"	"
չօ սիրէք	"	"
չօ սիրին	"	"

Ներկայ շարունակական

Ձու սիրիմ	չու խուսամ	չու կայդօմ
չումս սիրիս	"	"
չու սիրէ	"	"
չու սիրինք	"	"
չու սիրէք	"	"
չու սիրին	"	"

Անկատար անցեալ

Ձօ սիրյա	չօ խուսի	չօ կայդի
չօ սիրյար	"	"
չօ սիրէր	"	"
չօ սիրօնք	"	"
չօ սիրէաք	"	"
չօ սիրյան	"	"

Անկատար, տեւողական շարունակական

չու սիրյա եւայլն	չու խուսի եւայլն	չու կայդի եւայլն
---------------------	---------------------	---------------------

Բացարձակ Ապառնի

պըտը սիրիմ կամ պիսիրիմ
պըտը սիրիս եւայլն

Ստորադասական ներկայ
սիրիմ, սիրիս

Ըղձական ներկայ թուղ սիրիմ, թուղ սիրիս

Ստորադասական անկատար
սիրյա, սիրյար

Ըղձական անկատար
թուղ սիրյա
թուղ սիրյար

Անկատար ապառնի
պըտը սիրյա
պըտը սիրյար

Հրամայական եղանակ
սիրէ
սիրեցէք
մի՛ սիրի
մի՛ սիրէք

Անորոշ եղանակ Անհրեւոյթ՝ սիրիլ

Ներկայ ընդունելութիւն՝ սիրէօղ

Անցեալ ընդունելութիւն՝ սիրօծ

Ապառնի ընդունելութիւն սիրիլէք, սիրիլօ

Բ. Լծորդութիւն խօսիլ (խուսար)

Սահմն. անմիջական ներկայ (հիմա)
կօ խուսամ

Սահմն. ներկայ (տեւողական կամ շարունակական)
կու խուսամ

Անց. անկատար
կօ խուսի

Անց. անկտ.

կու խուսի

Անց. կատարեալ

խուսիցո

խուսիցոր

խուսիցով

խուսիցօնք

խուսիցէք

խուսիցօն

Ապառնի

պըսը խուսամ

Ստորադասական ներկայ

խուսամ

Ստորադասական անկ.

խուսի

Ըղձական ներկայ

թուղ խուսամ

Ըղձական անկտ.

թուղ խուսի

Հրամայական

խուսէ

խուսիցէք

մի՛ խուսա

մի՛ խուսաք

Աներեւոյթ

խուսալ

Ներկայ ընդունելութիւն՝ խուսէօղ

Անցեալ ընդունելութիւն խուսօծ

Ապառնի ընդունելութիւն՝ խուսիլէք, խուսիլք

Մարաշի բարբառին մէջ կայ «կ'ուզիմ» կամ «կ'իզիմ սիյի» ձեւ
մը, մենք նման ձեւ մը չունինք: Պրն. Գալուստեան այդ ձեւը
կ'անուանէ՝ ապառնի ներկայ:

Գ. Ըծորդութիւն

Կարդալ (կայդօլ)

Սահմն. ներկայ անմիջական

կօ կայդօմ (հիմա)

Սահմն. ներկայ միշտ եւ հիմա՝ տեւողական

կու կայդօմ

Անց. անկատար անմիջական

կօ կայդի

Անցեալ անկատար

կու կայդի

Ապառնիները, ստորադասականները, ըղձականները այնու զանց
կ'ընենք, որովհետեւ Ա. եւ Բ. ըծորդութեան նման են, ինչպէս եւ
անորոշ եղանակներն ու դերբայները:

Եմ խական բայը

Սահմն. ներկայ

իս իմ

դօն իս

էան է

մինք ինք

դօք էք

էնիր եին

Անցեալ անկատար

իս ա

դօն ալ

էան էլ

մինք օնք

դօք ըաք
էնիր երան

Անցեալ կատարեալ
իս էղօ
դօն էղօյ
էան էղօվ
մինք էղօնք
դօք էղէաք
էնիր էղօն

Բացարձակ ապառնի
պըտը նամ (պինամ)
պըտը նաս (պինաս)
պըտը նայ „
պըտը նանք „
պըտը նաք „
պըտը նան „

Անկատար ապառնի
պըտը նի
պըտը նիր
պըտը նէր
պըտը նինք
պըտը նիք
պըտը նին

Ստորագասական ներկայ
նամ
նաս
նա
նանք
նաք
նան

Ստորագասական անկատար
նի
նիր
նէր

նինք
նիք
նին

Ըղձական ներկայ
թուղ նամ

Ըղձական անկատար
թուղ նի

Հրամայական
լար,
էղէր,
էղէք

Անորոշ եղանակ
Աներեւոյթ
նալ (ըլլալ)

Ներկայ ընդունելութիւն՝ նէօղ (եղող)

Անցեալ ընդունելութիւն՝ նօծ (եղած)

Ապառնի ընդունելութիւն՝ նալէք, նալօ

Ծրթալ (իյթօլ) Գալ (իգօլ)

կ'օյթօմ կօ գօմ

կ'ուլթօմ կու գօմ

կօթի կօ գի

կուլթի կու գի

գացը իկի
գացրր իկիր
գօնօց իկիք
գացօնք իկին

գացըք գացըն	իկէք իկոն
պիլթօմ	պիզօմ
պիլթի	պիզի
գօնօ գացէք	այկօ այկէք
իլթօմ իլթի	իզօմ իզի
թուղ իլթօմ	թուղ իզօմ
թուղ իլթի	թուղ իզի
իլթօլ	իզօլ
գացէօղ	իզէօղ
գացօծ	իզօծ
իլթալէք	իզալէք
իլթալօ	իզալօ

Զարառուղի բայեր

1. Գտնիլ

կը գտնեմ, կու գտնեմ, կօ գտնի
պըտը գտնեմ, գըտտէր եւայլն:

2. Մտնիլ

մօտոյ (անց. կտր.)
մըտտիր, մըտտէք (հրմ.)

3. Իջնօլ

իջնօ, իջէր, իջէք

4. Հեծնօլ

հէծօ, հէծեր, հէծէք

5. Առնուլ

առի, օռ, առէք

6. Խածնիլ

խածօ, խած, խածէք

7. Պազնիլ

պաջօ, պօք, պաջէք

8. Տխնուլ

տխօ, տիս, տխէք

9. Իլիլ (Ելիլ)

իլօ, իլ, իլէք

10. Ասիլ (Ըսիլ)

ասը (ըսի) ասօ, ասէք

11. Բիրիլ (Բերիլ)

բիյա, բիյ, բիյէք

12. Հարցընիլ

հարցըցա, հարցուր

13. Նօլ (Էցնիլ)

ըրացա, լոցուր, լրացէք

14. Կորսնցնիլ

կըշնացնիլ, կըշնացացայ, կըշնացուր

15. Հասնիլ (Հասնիլ)

հասօ, հասէր, հասէք

16. Մեռնալ

մէռօ, մէռէր, մէռէք

17. Անցնել

անցո, անցիր, անցէք

18. Հագնել, հագնիլ

հագո, հագէր, հագէք

19. Թրառչիլ

թռո, թրառէք, թրառէլ

20. Դիպնել (դպչիլ)

դիպո, դիպիր, դիպէք

21. Սկսիլ (դեշնիլ)

դիշնեցի, դէշնէ, դէշնիցէք

22. Նստալ (նստիլ)

նստեցոյ, նստէ, նստիցէք, նստէք

Դարձեալ Անկանոն բայեր

Ըլլալ Զէյթ. նալ. կօ նամ, կու նամ, կօնի, կունի, լուր (եղիր),
լա՛ք (եղէք)

Դնել Զէյթ. դանիլ

Ընել Զէյթ. էնիլ. կօ կինիմ, կենիմ, կօ կենայ, կենայ, էրու, է
րէք

Զարնել Զէյթ. կրապցրանիլ. կրապցանիմ

Տալ Զէյթ. տօլ. կօ տօմ, կու տօմ, կօտի, կու տի

Իյնալ Զէյթ. լանկնալ. կօ կրանկնամ, կ'ըլանկնամ, կօ կրանկնի,
կըլանկնի, լանկեր, լանկէք, պիտ լանկնամ, պիտ լանկնի

Թողուլ

Զէյթ. թուղուլ. կօ թուղում, կու թուղում, կը թուղի, կու
թուղի, պիտի կամ պը թուղում, պը թուղի, թուղ, թուղէք, գացօ
է կը նշանակէ գացած են, այսինքն Վէճով յոգնակի, իսկ գացիր է
կը նշանակէ գացած է, այսինքն Վէճով եղակի: Սակայն կ'ըստի
նաեւ գացօ են, ըսելու համար գացած են եւ հաւասարապէս: Ու
րեմն բարդ ժամանակի մէջ անցեալ ընդունելութեան շարժ վեր-
ջաւորութեան հետ՝ օրինակ կիրօծ է, կերած են ըսել է, իսկ Վեր-
ջաւորութեան հետ՝ օրինակ կիրիր է եւ կիրիր են, կերած են,
ըսել է:

Ինչպէս բայերու ներկան եւ անցեալ անկատարը ազդուելով օտար
լեզուէ, անմիջական եւ տեւական ներկայի, անմիջական անցեալ ան-
կատարի եւ պարզ անկատարի ստորաբաժանումներ ունեցած է, ճիշդ
բացատրելու համար կատարուած գործողութեան պահը, նոյնպէս եւ
նախադասութեան շարադրութեան ատեն ալ, ինչպէս մեր աշխարհաբար՝
գրական հայերէնը, Զէյթունի բարբառն ալ դրաբար նախադասութեան
ընթացքով ձեւը կը գործածէ առհասարակ: Օրինակ.

Գրաբար.՝ Ասէ ցաշակերտսն իւր

Զէյթ. Զէյ իմ խրիճէն թուղ մուտն քու առջեւը

Աշխարհաբար.՝ Իր աշակերտներուն կ'ըսէ

Գրաբար.՝ Արարի իրաւունս եւ արդարութիւն

Զէյթ. Հօխ ու արդարութեան էյա

Աշխարհ. Իրաւունք եւ արդարութիւն ըրի

Գրաբար.՝ Մերձեցի՛ն խնդրուածք իմ առաջի քո Տէր

Զէյթ. Տէյ իմ խրիճէն թուղ մուտն քու առջեւը

Աշխարհ.՝ Տէր իմ խնդրուածքը թող մօտենայ քու առջեւը

Աշխարհաբարի յոգնակերտ մասնիկը, Զէյթունի բարբառին մէջ
յաճախ Վերձ կամ Վնի է օրինակ, ակո, էկոէնի (ակառայ, ակառ-
ներ), էչվէ, էչվէնը (աչուի, աչուներ) եւ մեր հանգուցեալ հայրենակից՝
Գ. Տէօվէթ այս Վնի կամ Վնը մասնիկը կը նկատէ ուրարտական
«ինի» մասնիկը եւ գրաբարի «ունի» մասնիկն ալ նոյն ծագումն ու-
նի կ'ըսէ. Օրինակ Արշակունի, Ռշտունի, այսինքն Արշակունեանք,
Ռշտունեանք: (Ըստ Մարգարէի, Արեւմտեան հայերն են, որոնք Հա-
րատան հասնելէ առաջ բնակած են Կիլիկիա: Խիլլակու եւ Աքամենեանք
գործածած են Արմինիյա բառը հայ բառին տեղ, որուն վերջին մասը
համապատասխան է վերոյիշեալ «ինի» մասնիկին, գործածուած ու-
րարտացիներէն: Եւ դարձեալ նոյն Տօքթ. Մարգարէի Արմ բառին
վրայ աւելցուած է «ինի» մասնիկը: Իսկ երբայերէնի մէջ Արիմ բա-
ռը յոգնակի է արդէն քաղաքներ խմաստով: Բայց Հոմերոսի մէջ
գործածուած է որպէս ժողովուրդի մը անունը (Գ. Տէօվէթ)

Վերջին ձայնաւորի ազդեցութիւնը առաջին վանկին վրայ, Զէյ-
թունի բարբառին մէջ, օրինակ.

Աշխարհաբար աղուոր, Զէյթունի բարբառով պիտի ըլլար աղվիւր,
սակայն կ'ըլլայ էաղվիւր, վերջին ձայնաւոր «իւ» կ'ազդէ եւ առաջին

վանկին «ա» կը վերածէ «էա»։ Նոյնպէս աշխարհաբար կտոր՝ Հա-
մապատասխանը պիտի ըլլար կտիւր մեր բարբառով, սակայն եղած
է կէօտիւր։ Հոս ալ վերջին վանկի «իւ» առաջին վանկին մէջ յա-
ռաջ բերած է «էօ» մը, նոյնպէս՝ փորել, փիւրիլ, փիրել, տնակ
պիտի ըլլար տնօկ, եղած է տօնօկ, ոսկի, իսկի։

Ուրիշ փոփոխութիւններ
Բոլորել - բոլրել - բիլիլ, խոլորել - խոլրել - խիլիլ, ոլորել
- ոլրել - իլլիլ

Բայերու խոնարհման ժխտական ձեւը, ներկայի, անկատարի եւ
կատարեալի

Ձէյթ. բարբառ	Աշխարհաբար
կօ սիյիմ - չօ սիյիմ	կը սիրեմ - չեմ սիրեր (հիմա)
կու սիյիմ - չիմ սիյի	կը սիրեմ, չեսիրեր (միշտ)
կօ սիյա - չօ սիյա	կը սիրէի (սիրելիս տեսար)
կու սիյա - չի սիյա	կը սիրէի (այսինքն սիրելիս չէիր գիտեր)
չու սիրեցի	սիրեցի - չսիրեցի

Եւ այսպէս միւս երեք լծորդութիւններն մէջ ալ։
Ա. լծ. աներեւոյթը՝ դրել-գըայիլ, Բ. լծ.՝ խօսիլ, խուսալ, Գ. լծ.
կարդալ, Դ. լծ.՝ թողուլ, թուղուլ

«Որ» յարաբերական դերանունը - «եուր»
Տեսայ մարդ մը որ կը փախչէր
Մօյդ մը տխոյ եուր կօ փախչէր
Միայն ուղղական հոլովը

«Մը» անորոշ դերանուն
Ի՛ւնչը, ո՛րը կ'ուզես, ի՛նչ կ'ուզիս

«Մ՛վ որ» - ի՛նչ եուր
Ով որ կ'երթայ
Ինչ եուր կ'ուրթայ

«Որ» անորոշ դերանուն
Ինչ որ ցանես

Ձիրք եուր ցանիս

«Որ» շաղկապը, եու
Ուր որ շարժում կայ
Ծօր եու երվերաօլ կօյ

«Մինչեւ որ», Չուր եու
Մինչեւ որ եկաւ
Ձիւր եու իկիք

Ձէյթունի բարբառին որոշիչ եւ դիմորոշ յօդերը նոյնն են, ինչ որ
են աշխարհաբարի մէջ, օրինակ՝ մարդը - մօյդը, ձիւն - ձրան,
դիմորոշները՝ Ս Դ Ն Ը, օրինակ՝ իմ էգէս - իմ այգիս, քու տունդ
- քու տունդ, էնիւր տէաղէն - էսիւր աշկինը։

Փոյականներու յոգնակերտ մասնիկը «իր», ինչպէս հոց - հացիր,
տուն - տունիր, նաեւ տըանվայ կով - կէօվ - կովեր - կուվիր։
Ս եւ Դ յօդերուն առջեւ՝ ուղղ. հոլով ձեառքս - ձեառքիս, ձը-
առքդ, ձեառքը, ձեառքիրը, ուրեմն Ս Դ յօդերէն առաջ ի կու գայ,
եզակի ուղղական հոլովի մէջ, իսկ սեռական, տրական հոլովներու
մէջ Ս եւ Դ դիմորոշ յօդերէն առաջ՝ սրտիս - սըարտաս, գլուխիս
- գօլխօս, սըարտադ, գօլխօդ կ'ըլլայ ա եւ օ նախորդելով Ս Դ յօ-
դերուն, համաձայն բառին առաջին վանկին ձայնաւորին. սըարտաս,
գօլխօդ։

Թիւերը

1. մէկ, 2. իկուք, 3. իյիք, 4. չիւս, 5. հինկ(գ) 6. վից, 7. եօթը,
8. ութը, 9. ինը 10. տօսը, 11. տասնմէկ, 20. քօսոն, 21. քսանը-
մէկ, 30. էոսուն, 40. քաոսուն, 50. իսսոն, 60. վացցոն, 70. եէթմիշ,
80. սէքսէն, 90. տողսոն, 100. հէյիր, 1000. հազոր։

ՋԷՅԹՈՒՆՑԻՆԵՐԷՆ ԲԱՌԵՐ

(Մէկ մասը գրաբար է եւ աշխարհաբար է տառադարձուած, աղաւաղուելով անցած, իսկ մնացեալը տակաւին կարօտ է Յիշդ ստուգաբանութեան, յայտնի չէ անոնց ծագումը):

Ա

Աբիթ - արիդ, դիւրավառ սունկ
 Ագրումէջ - այգին փորելու ատեն սահմանուած տեղ մը, չափ մը
 Ագռաւուկ - սեւ խաղող մը
 Աջաւանիկ - անցընել (դերձանը ասեղին ծակէն)
 Աղձիւծիսպ - աղացուած ոսպով ապուր մը, աղձիւցիսպ
 Ակնուռ - Որթատունկի արմատի մօտի ուռ, ճիւղ, ոստ
 Աղտիւր - Աղտոր, աղտորենին պտուղը, որ թթու կ'ըլլայ
 Աղնիկ - Բամպակը աղեղով գզել, բանալ, լպուտը կամ գզրուցը կ'աղնէ բուրդը եւ բամպակը
 Աղնէօղ - լպուտ, գզրայր
 Ածկիկ - Հանգոյցը քակել
 Ածիւխիւր - չորցած ազոխ, դեռ խաղող չեղած՝ չորցած
 Աղվօ - Փամբուշտի ետեւը, բռնկցնելիք քափսիւ
 Աղվալու - հրացան մը, որ աղվոյով կը կրակուի
 Աղվիս - մեծ գերան, հեծան, որուն վրայ կը շարունին ձողերը եւ մարդակները
 Ակօնէօր - տօն օր, ականաւոր օր
 Ասէ կօսէ - ըսի ըսաւ
 Ասկավալ - մաքրուիլ, ստկուիլ
 Ակնուց - տապկած հաւկիթ թթու վրան
 Աղօծք - աղ ու հաց
 Անկուտ - անխելք
 Անպաշօր - անճարակ
 Անճօր - առանց իւղի, անթուր
 Ավճօր - չոր լուրիս
 Անրծ - անիծ
 Անթիւ - գրկել
 Աղընծիւ - աղանձել
 Անտը - անդի
 Աստը - ասդի
 Արմօր - դարակ (Ֆրնս-)
 Ասպիւ - ասպել, ջուլհակը կ'ասպէ մանածը

Արիւիրդիկ - արեւածաղիկ
 Արիւջիւր - արեւջեր տեղ, արեւի կողմ
 Արկընիւ - անձրեւ տեղալ, արկանել
 Աւչի - տաղ կանչել
 Արիչի - բարձրացուած որթ, ծառի մը վրայ հանուած կամ մասնաւոր տեղ ջինելով վրան հանուած (արար-)
 Այսկու - արթուն, հսկող
 Ափկից - երկու ափերու միացուելով գոյացած փոսը, օրինակ՝ ափկից մը չամիչ
 Ափկըցիւ - երկու ափով ճանկել
 Ափլիփիւ - պրպտել
 Ալախիւ - մէկ ոտքով ցատկելով քալել
 Ապրուիւ - ձողէ մը կամ պատէ մը վեր ամուր բռնելով ելլել, մագլցիլ
 Ալըկ - իշուն, ջորիին, ձիուն կերը, կերի տապրակը (արար-)
 Աչպաղը - կերակուրի դղում, աչ դապաղը
 Անթըվալ - գրկուիլ, փաթթուիլ կռուելու ատեն
 Ազապ պաչի - փեսային խաչը բռնողը
 Ազատը - ազատիլ
 Ալուն - ալուն
 Անլը - առանց աղի, քիչ աղով
 Ալաշուխ - փոքր վրան
 Ածուք - պարտէզի, բանջարանոցի մաս մը
 Ակիւ - տճկ. էկիւ, կայծ հանելու գործիք, երկաթէ թիակ
 Աղըք - աղիք
 Ամոն - աման, ամրնտէք
 Անրթայ - անթի
 Անգօն - անազան
 Անթեղիւ - կրակը մոխիրով ծածկել
 Անծիկ - անիծի չափ փոքր
 Անկրծակէ - յանկարծակի, անկրծակէ բօն իզոյ գոլոխիւ
 Անկընիւ - գաղտուկ ականջ տալ, մախկ ընել
 Անծիւ - անձրեւ
 Անշու - անշահ, անօգուտ, անպէտ
 Անուխ - անանուխ բոյսը
 Անրդիւ - անարգել, հայհոյել
 Աչկարոյ - տճկ. յայտնի, աչիքէն (պարսկ-)
 Ապօ - տճկ. ապա, բրդէ վերարկու մը, պէօղ ապօ, մէջը ապօ, քիւրքիտ ապօ

Գուլիս - հիւղ, դուղ (արաբ.)

Դ

Դրանգ - դուրգ. ցորեն ծեծելու աղածքի քար, բրուտի անիւ
Դրանգ ծիծիլ - գլուխը ծռել-շտկել նստած տեղը երբ քունը գայ
Դրադմառած - դդումի պէս դեղնած, ուռած, երբ հիւանդ է կամ
չատ քնացած է

Դէշնիլ - սկսիլ

Դիւրդիւշիւն - մեծ տաշտ, պղինձէ մեծ լական

Դրամբաջ - փայտէ մեծ թակ մը, երկաթէ մեծ մուրճ մը,
կրճան

Դէագէտվիւր - տեսակ մը խոշոր ճերմակ խաղող, թագաւոր
խաղող

Դոնգուն - ատրճանակ, վից դոնգուն, վեցհարուածեան գէնք

Դրանգիլ - գէնքը կրակել

Դահ - կողմ, դի

Դէհ - չորցած խաղող թուփին վրայ, ինքնիրեն չորցած

Դահնո - ամանները մոխրելու քուրջ, կտաւի ծրարին ծալքի
մասէն կը չինեն, որ ծոպաւոր կ'ըլլայ

Դրադմանակ - վայրի անուխի պէս բոյս մը, կ'ուտուի, դադճ

Դարվիւր - զառիվեր

Դիրվիւր - զառիվար

Դահ - դահ, տարիքոտ

Դահ ծոռ - տարիքոտ ծառ, կենդանի

Ե

Եմէնի - տեսակ մը ոտնաման, սանտալ, մուճակ

Ետէկ - ետքէն եկող, պահեստի

Եքո - աղնուած, բամպակի քուլայ մը

Եօր - ուր

Եօթնեղբէր - մեծ արջ համաստեղութիւնը, եօթը աստղերով

Զ

Զապօն - նիհար, անիւղ (տճկ.)

Զահար - կ'երեւի թէ, կը թուի թէ, հարկաւ (տճկ.)

Զավուր - սպառնալիք, ցոյց

Զէրգամպուլ - ախոռին տակը

Զամպուռ - ծոթրին բոյսը, զահթէր (արաբ.) նաեւ հայերէն
«թիւմ» կ'ըսեն

Զէնիլ - մորթել, դենուլ (գրբ.)

Զէօր էնիլ - զօրել, ստիպել

Զրափարթ - կտրիճ, զրափարթ տօղոյ մէ

Զրքըմէր - գոքանչ մայր

Զրքըպօպ - աներ

Զ

Զնարա - իշուն, ջորիին պոչին տակէն կապուած լայն փոկ մը,
որ համետին կը կցուի

Զիւիւց - ակնոց, աջնոց

Զառմիւռուկ - փէրփէր բոյսը, անմեռուկ, սէմիդ օթու

Զնօր - շատկեկ

Զաշիւնիւրք - տգեղ, անշնորհք

Զպլէճէք - բարակ հացը սաճին տանելիք փայտը, որով
կը դարձնեն հացը

Զնտիք մը - ուրեմն

Զագիւղք - այգուց, հոգինոց

Զլտիվօ - յետոյ, ետքը

Զճէոիլ - ձեռքով ճղմել, ճմլել

Զովէնուօ - շարժիլ

Զթէկու - ալիւրի աւելցուքը դնելու լաթ մը, այդ ալիւրը, որուն
«խրաս» կ'ըսեն եւ զոր կը գործածեն
հացը բանալու (տճկ. ուրվա)

Զչօնք - աշուն

Զգէ - այգի

Զօռ - ոռ, յետոյք

Զօք - տակ, ամանին տակը

Զակուէօգէօշ - ակումները դուրս ելած

Զնճրկէկ - շատկեկ

Զա - ալ, դօն էա, դուն ալ

Զիլ - արածել

Զլէր - ալիւր, էլիւր մօղ, ալիւրի մաղ

Զլլէհէմ - Ասպօծ գիտէ, Ալլահ ալիմ

Զած - աթ

Զղ - իւղ, էղլա, իւղոտ

Իոնոմուոն - իւղով հաց, վրան շաքար կամ ուռալ
 Ինիլ - ընել
 Իադտիւտ - ադտոտ
 Իոնիճ - կապար, արճիճ
 Իշկիրտ - աշկերտ
 Իշնահատակ - պարապ տեղը նահատակուիլ
 Իս - այս
 Իրալ - այրիլ, էրօծ, այրած
 Իրին - արիւն
 Էրիկ - այր
 Էվէր - նորէն
 Էօճ - օճ
 Էօղ - օղ
 Էօր - օր
 Էշնէվիւր - շնորհաւոր
 Էօֆր - խաշուելիք մսին անպէտք փրփուրը
 Էրընկոտու - յորանջել
 Էօփ - ջուրը բռնելու համար շինուած մեծ փոս, պարտէզը
 ջրելու համար

Ը

Ըսակավալ - մաքրուիլ, թերեւս ստկուիլ, Տես ասկավալ
 Ըռամցանիլ - լրմնցնել
 Ըշխիլ - աշխել, հոտիլ, տաքէն ապականիլ, նեխիլ
 Ըշնահալը - շնորհալին
 Ընծօն - հնձան
 Ըշպաղը - խոշոր դգում, աշպապաղը, տես աշպաղը
 Ըխտավիւր - ուխտաւոր
 Ըալավալ - անցնիլ, տես ալավալ
 Ըձգիլ - ձգել
 Ընկնալ - ինալ, ըանկօ, ինկայ
 Ընքէմէր - կնքամայր
 Ընքապօպ - կնքահայր
 Ընքվայ - յօնքեր
 Ըարկիր - օտար, ուրիշ
 Ըրմանիլ - նմանիլ
 Ըարկարա - ուրիշին, օտարին
 Ըարվանօլ - երեւնալ
 Ըովալնօլ - աւելնալ

Թ

Թէրիք - օճախի մէջ տեղ մը, անկիւն մը
 Թաղլակ - ճերմակ կտակէ գլխանոց, քրտինքը առնող,
 տճկ. Թէղլիք
 Թախամինիւմ - կարծեմ
 Թէքիրկօ - տախտակէ տաշտ մը, ուր խաղողի քաղցուն
 կը յտականայ
 Թամուր - գլխուն մէջտեղը մազերու փունջ մը, չորս
 կողմը ածիլուած
 Թրանծկօլ - շանը թընծկալը
 Թուրթ - բարակ խոտ մը
 Թօլօքէնիլ - ծաղրել
 Թընծօկ - Թնջուկ
 Թաղացի էնիլ - ատել, վերջացնել
 Թիւրքիլ - աքաղաղը կը թիրքէ հաւը, վրան ելլել, զուգաւորուիլ
 Թան - կենդանիներու բուկոցը, ծննդեան գործարանին արտաքին
 մասը
 Թարկիլ - թողուլ, ձգել, արձակել
 Թաթիլ - թաթով զարնել, դպիլ
 Թաման - հապա
 Թէս - անձայն փուք
 Թափօրն - պնակ
 Թէզէք - քոկոր, կովի աթար
 Թէռ - հաստ դերձան բուրդէ
 Թէօրթ - դիրտ, տակ
 Թէօռ - թոռ, նաեւ համրակ, անվարժ
 Թիւթիլ - քթին գալ, հոտիլ
 Թալիսմայ - թըլլարմ (տճկ.)
 Թա - թի
 Թնդիլ - շարժիլ, թնդել
 Թօնտալ - շարժիլ, արթննալ
 Թընտացընիլ - լուսնոտները կը թնտացնեն, չէօր բառիլ
 Թօնօր - թանձր
 Թուլթիլ - թօթափել
 Թօշմիլ - թոռմիլ
 Թոռվօուլ - աղաչել
 Թոքուց - թոք

Թըասիւ - Թսիւ
Թըայատիւ - կոխկուտել

ժ

ժէաժ - շարժ, ժէաժ, երկրաշարժ
ժանկոս - ժանդ
ժօրժօրօլ - կամաց կամաց շարժիլ հիւանդի մը կամ
աղքատի մը ժամանակ անցընելը
ժամօց - քահանային նուէր

Ի

Ի՞բ - ե՞րբ
Իկի - եկայ
Իզատիւ - զատել
Իզիր - եզեր
Իւրիւնկ - փշոտ վայրի տունկ մը, հաստ, լայն տերեւներով
Իզոտ - զատ
Իժոմ - ժամ
Իլլիլ - ելլել
Ինտէս - այսպէս, ինտէն, այնպէս, դիտէտ, այդպէս
Ինտիրկոց - յետինք (ընդ երեկոյս)
Իշիլ - յիշել
Իշխիլ - իշխել
Իռնօկ - յռնակ
Իո՞տիկէ - ո՞ւրկէ
Իվիլ - աւելի
Իտ - ետ
Իրէց - երէց, քահանայ
Իրիցկին - Երէցկին
Իրիս - երես
Իրկէնք - երկինք
Իրկօնք - երկանաքար
Իրկուք - երկու
Իրօծ - երազ, ինտիրօծ
Իրիլ - օրօրել
Իւրիւցք - օրօրոց
Իրք - բան

Իւսպ - ոսպ
Իրով - իրաւ
Ինձիկ - այսպէս, ինձօ, այսպէս
Իւնչը - ո՞րը
Իբլոխ - ածելի (արաբ. իհլազ)
Իմնոլ - իմանալ
Իւղիւրդ - ղորդ, ուղղորդ, շիտակ
Իլլիլ - ոլորել
Իւսկիւր - ոսկոր
Իրկոմ - երկկամ

Լ

Լարմնջիլ - ընդարմանալ, թմբիլ
Լէյիկ - լայն տերեւով վայրի բոյս մը, որ կ'այրէ երբ խառնես,
անով կերկուր մը կը չինն
Լէչէկ - բանդակ, դդումով քաղցր
Լրամիլ - չրթներով, լինտերով ճզմել
Լուսընտրվինէ - ծառ մը, որ խոշոր տերեւներ կ'ունենայ, կլոր
լուսնկայի ձեւով, ատկէ առած է նաեւ իր
անունը, ունի ողկուզաձեւ մանր ծաղիկներ,
քաղցր են եւ կ'ուտուին, մեղու եւ մրջյուն ունին
երբեմն ծաղիկներուն մէջ
Լրանդկառիլ - արիւնը թանձրանալ, լրճկիլ, արգանակը կը պաղի
եւ կը լրանդկառի
Լիսպ - շերտ
Լարէօձ - իժ օձ
Լուսան - պայտ
Լուսնել - պայտել, պայտ գամել կենդանիին ոտքը
Լա, լու - ծօ, տօ (արաբերէն հարֆը թարիֆ՝ յօդին եւ
ֆրանսերէն le, la յօդերուն նման բառերու
առջեւը կը դրուի, կարծես որոշելու համար,
օրինակ. լու տուզօ, լաշկին)
Լաթիր - հագուստ
Լակիլ - լակել
Լօկ - շան կերակուր
Լակամոն - լակի աման
Լաս - լոյս
Լատրը - լիտր

Լըմլամիլ - շրթունքով ծամել
 Լարօն - լար մը որ ջահրը կը դարձնէ
 Լափօ - բարակ ապուր մը, խիւս
 Լէօղ - քար լող
 Լէօռ - լոռ, կտրած կաթ
 Լախկալ - լըխկիլ
 Լոցք - լուծք
 Լովլու - լուբիա
 Լանչօ - կօշիկի երկաթ, տնկ. նալչա
 Լուսանալոտ - օճախին պատին դրուած քար մը, ուր մախր
 կը դնեն վառելու

Խ
 Խարըստ - խարխախ, սիւնի տակի քարը
 Խուլա - սիւն
 Խիւրէշ - ճերմակ, կլոր, ջրոտ խաղող մը, որմէ ուռալ կը քննն,
 դապարճը

Խըրամանկիլ - կռահել, կարծել
 Խարկիլ - խարկել, բոհել
 Խանծիլ - կէս ալքով
 Խանծըլ - քերուիլ
 Խէպի - Ձէլթուն գիւղ մը կայ այս անունով եւ այգեպտան մը
 Խէտվալա - խառուտիկ
 Խիւ - խենթ
 Խէծ - խայծ
 Խէլթիւղ - խելքը թողած
 Խիզէթ - վայրի թուփի մը փշոտ սերմը
 Խըապալիկ - փոթորիկ
 Խըազդարթ - աղածուած դմակի, ճարպի մնացորդը
 Խորասանտ - տօրինակ
 Խէօլիւլիւն - խիւղենջին խեցին եւ մողէզին ալ կ'ըսենք
 Խըաս - ալիւրին հաստը, որ հաց բանալու կը գործածեն
 Խէաղ - խէաղիւղ - խաղող
 Խունծուլու - գարնան վալրի ծաղիկ մը, արմատը կ'ուտուի
 Խանդօր - յեսան
 Խուրում խիւտ - ազատքեղի նման խոտ մը
 Խոկտրիլ - խոտկել աղիքը
 Խուստուկ - փորի ցաւ, խիթ՝ թանչի ատեն
 Խամխատուկ - բոյսի մը արմատը, ստեպղինին պէս, ճերմակ, խու
 խաւ, կ'ուտուի

Խանուտիլ - խառնել
 Խատասէր - շատ սիրելի (ծաղրական եւ փաղաքական
 Խըլասիլ - ազատել
 Խըաճիպ - կեղեւ
 Խանծըխոմոծ - կաթը քիչ այրած մածուն
 Խառվակիլ - մրմռալ
 Խեղվալ - ծաղրել, դիմադծի շարժումով լեզուն հանելով
 Խըալ - գեղձ, խոյլ
 Խելլիլ - խոլորիլ, աչքերը դարձնել, ծուռ նայիլ վախցնելու
 համար

Խէշ - քովը
 Խողք - խախք, խայտառակ
 Խէանծիւղ - խանձող
 Խանգըրըլ - աղսոր մէջը անցնիլ
 Խերճիլ - ծախսել, (տնկ.)
 Խէտիվ - նախշ, խայտ
 Խզոր - մեծ սղոց
 Խըազտիլ - պատուել, խզել
 Խէթիլ - խալթել, մտցնել
 Խըաչիլ - խաշուած խմոր, ջուլհակը մանածը խըաչիլ կ'ընէ
 Խատօխատիլ - խտխտեցնել
 Խըախտալ - մսիլ, մսելով մեռնիլ
 Խըաղդավալ - խեղդուիլ
 Խօթնօլ - պահքը բանալ
 Խիւզ - խոզ
 Խէօճիւտ - մէջը դիւրին չելլող ընկոյզ
 Խըլանը - խելացի
 Խըաղաբաշտիլ - յափշտակել, խլել
 Խունծօն փէտ - խոնջան անցընելիք փայտ
 Խըաչիտ - կեղեւը չհանած բամպակ
 Խուխ - հիւղ
 Խուրու - խորունկ
 Խօրու - հեռու
 Խուփ - կափարիչ
 Խօփնոլ - խպնիլ
 Խըուղմօ - քիթն անցուած արծաթէ օղակ, չինկաները կ'ունենան

Մ

Մըած - ծիծ
 Մուծ - ծուծ
 Միտուկ - ծիտուկ, ճանճի սերմ
 Մըապղ - ցախէ միջնորմ ախոռի մէջ
 Մալլովալ - ծալլապատիկ նստիլ
 Մըվիլ - Յորենը քարերէն մաքրել մեծ մաղով մը
 Միւցվիւր - յղի, ծանր
 Մըածիկ - նոր բուսած ծիծ, ստինք
 Մըածմէր - ստնտու
 Մըաոխաթ - ծղրիթ
 Մինծղէք - ծնծղայ
 Մափծափուկ - լեփլեցուն, զեղուն մինչեւ բերանը

Կ

Կըասպալ - կըսպիլ, թեթեւ ալրիլ
 Կըանտիլ - մազերը կտրել, գերծել
 Կէօնծիւն - ծառին բունը մէկ անգամէն կտրել
 Կիծիպէհ - կրծպահ, կրծկալ, ծծպահ
 Կախնօնկ - կախունկ, սաթրլ (տնկ-)
 Կէօրէշ - կրեայ
 Կիրիշուկոսնօկ - գետնադիւծ
 Կիւշիւղ - յօտոցի նման կարող գործիք մը, որով մախր կը ճեղքեն
 Կիւրկիւտ - կորկոտ
 Կէախնիւրիւցք - կախօրրան
 Կակա - մանկական բառ՝ պտուղ
 Կաղունտաս - կաղանդչէք
 Կաղանտիլ - կաղանդել
 Կանրլ - կայնիլ, կենալ
 Կենու - կենալ
 Կանտարոյ - կամուրջ
 Կարգիլ - ամուսնացնել
 Կարգուկ - ամուսնացած
 Կըազկոպ - կոյզ կապ ողկոյզի
 Կէժլատ - կարժելու, մանածը փաթթելու անուակ
 Կաժլոտ - հինցած աւել, կրճատ աւել
 Կըլյաճ - լակաման

Կեխիլ - կոխել
 Կէօպիւց - բամպակի կապոց, ծրար
 Կիճ - մեղուի խայթոց, կից
 Կիշտանու - կշտանալ
 Կիշնիլ - կորսնցնել
 Կիպչիլ - թակել, բուրդ, լաթ
 Կիր - կոյր
 Կիւր - կարիճ
 Կըածկըտալ - կծկտիլ
 Կըանակ - կնիկ
 Կիշէօք - կշիտք
 Կոշէօր - կրակի վրայ եփած հում քուֆթօ, ճանկիկ, կեպիցիկ
 Կուճկիլ - կոճկել
 Կուշիլ - չուել
 Կուշնոկ - կոշնակ
 Կուտօղ - աքաղաղ
 Կապցանիլ - զարնել
 Կորոնճկոտու - յօրանջել, իրնճկտալ
 Կործուն - կրծօն, կաշառք
 Կըարտիլ - կենդանին կրտել, որճատել
 Կայկաթ - չորցած հաց եւայլն

Հ

Հաղկից - գործընկեր,
 Հայտիլ - աճապարել, արտորալ
 Հէվէնք - կլոր, կարմիր բաց գոյն եւ ջրոտ խաղող մը, կեռասի նման
 Հափուսօ - ոռպով եւ նշայով խապիսա (արար-)
 Հէաղիւրդ - հաղորդութիւն
 Համայլի - հմայել
 Համարսիլ - համը տեսնել
 Համոր - դաս, համար
 Հապը - հապա
 Հաարկ - հատիկ
 Հատպողլուր - ձաւարէ եղինճ
 Հատրուղ - բրինճէ եղինճ
 Հորկ - հարսնիք, ուրախութիւն
 Հարկաւոր - պետքարան, ճեմիշ

Հարկիլ - մեծարել
 Հացբորդ - իւղի մէջ բրդուած հաց, վրան ուռա կամ շաքար
 Հաշար տախտան - բարեկենդանի խաղ մը
 Հաւէճ - պղպեղ, խրլաք հաւէճ, սեւ պղպեղ
 Հաֆթիլ - հաւաքել
 Հէյիլ - նայիլ, հայիլ
 Հիլլէ - հայելի
 Հէնկիւց - հանգոյց
 Հէկնուց - արգիլուած կերակուր հիւանդի
 Հէս - հայս, խմոր
 Հերիսէ - հերիսա
 Հէրիւր - հարիւր
 Հէօս - հոդ, հէօս - հոս, հէօն - հոն
 Հումմօ - հիմա
 Հընտրիլ - ընտրել
 Հուսօ, հուսօ, հունօ - հոս, հոդ, հոն
 Հուենիկ, հուսիկ, հուտիկ - հոս, հոդ, հոն
 Հինօ - հինա, զընա, բոյս մը կը չորցնեն եւ կիները շաղկուն
 մազերուն կը դնեն
 Հինիլ - օրհնակը առէջը կու հինէ, հէնքը կը չինէ
 Հիյու - հերու, անցած տարի
 Հիւգ - հոգ
 Հիւյիւկ - արուեստական հողաբլուր
 Հիլու - արծաթէ գարդ մը կիներու վզի
 Հիւր - օրհնակի հոր, փոս
 Հէփփէղօ - խաղողի չբացուած ծաղիկը, կոկոնը

Ձ

Ձրան - ձիւն
 Ձրանծոխ - ձիւնախառն անձրեւ
 Ձրատկուլ - ցատկել (մարդու, տղու)
 Ձէթկիլ - ցատկել փայտի կտորի մը
 Ձէգմէր - համայր, որ ձագեր ունի
 Ձըարդի - ձրդի, գիհի ծառ

Ղ

Ղէօվ - գէշ լուր, սուտ լուր, վտանգաւոր խօսք
 Ղընթիկ մը - քիչ մը, դանթարիկ մը
 Ղութլու - մետաքսէ կերպաս մը
 Ղուրխ - թուխս
 Ղուֆօ - կողով, քուֆա խաղողի

Ճ

Ճէակոխտ - աղտոտ, ժանգոտ
 Ճապղիլ - ճապաղիլ, լայն բանալ
 Ճուա - սրունք
 Ճուճուհուլ - դժգոհիլ
 Ճինճիլ - շղթայ (արարւ.)
 Ճէպօ - վզի մանեակ ուլունքով
 Ճօկուռ - կացին
 Ճէկրօ - դեղին ներկի հունտ մը, թուփ մը, ալաժարի-գահրի
 Ճաճըխ - ժաժիկ, մածունով եւ վարունգով
 Ճաշօկ - Սրբութիւն, հաղորդութիւն
 Ճարդըրիլ - զարդարել
 Ճարօ - կարաս
 Ճըւլալուկ - ճպուռ, ժիժի
 Ճըալօլ - կանչել
 Ճըվճալօլ - կանչվումել
 Ճինչիլ - պոռալ, ճչալ
 Ճիւթ - ծայր, ճոթ
 Ճըամիլ - ճգմել
 Ճէօփ - հաստ դաւազան
 Ճոյմօյուլ - Հաւը, որ հաւկիթ անելու օրը կը ճոյմուայ
 Ճունճուղնուլ - երկննալ, պառկիլ
 Ճուղօլ - ծորիլ

Մ

Մազմըզօկ - ծառի արմատի բարակ մազմզուկը
 Մազմոն - մազէ չուան եւ չուլ, քուրճ գործող արհեստաւոր
 Մախթ - շատ հաստ ասեղ մը պարկ կարելու
 Մաղմող - տաք մոխիր, ուր դեռ մանր կաթեր կ'ըլլան

Մամբխ - վայրի սալոր մը, արջի սալոր
 Մայիս - կովու թրիք, կտաւ ճերմկցնելու կը գործածեն
 Մանր - ջահրակի դարձնելիք փայտէ թելը
 Մանտրգ - երկու աչքով պարկ (բակեղէթ)
 Մանրոնք - մանր մանուկներ
 Մաս - միս
 Մօս - եկեղեցիի բաղարջ հացը՝ մասը (բաժին)
 Մարդօկ - մարդուկ
 Մզլիլ - այրածի հոտ ելլել
 Մոճղուլ - միտք, հոգ, հնհնուկ
 Մէքիւք - կկոց, մաքոք
 Մեղդիրիլ - մեղադրել
 Մեղէօք - մեղօք, (ամուսնութեան համար) ապօրէն
 Մըաղրամ - մանր, դեղին մըջիւն մը
 Միննօկ - հիմակուց, անպատճառ
 Մինէվիւր - մենաւոր, առանձին
 Միրէղիլ - մարիլ (տուն, օճախ)
 Մնացական - մնայուն
 Ման - մանր ոջիլ
 Մուստրով - պղծել
 Մըաժալ - շուարիլ
 Մէլլիւս - փայտէ ցպիկով խաշ մը
 Մըաղալ - գէշ հոտով միջատ մը, մլուկի նման, որ խաղողին վրայ կը պտտի
 Մէարք - ճերմակ հող մը, զոր կը դնեն ճգմուկիք խաղողին մէջը, քացախն ու թթուն առնելու համար
 Մաքինի - ոչխարի մորթ, կաշի

Յ

Յէօտ - որթատունկին յօտուած ճիւղերը
 Յուտիլ - յօտել որթին ճիւղեր
 Մասկոն - անուշ բաղնիք, անուշ լոգանք

Ն

Նազօկ - ջուլհակի գործիք, որուն վրայ թելը կը փաթթեն
 Նաչօր - անճար, կարօտ
 Նիչօն - նշան

Նուկի - ծանրութեան չափ մը
 Նիքսէ - մառան

Շ

Շամփուր - երկաթէ ցպիկ, միս խորովելու
 Շարլոխ - մեծ ապտակ
 Շանքոր - շաքար
 Շէռ - մէզ
 Շիտ - բշտիկ մորթի վրայ
 Շիրօ - քաղցրեղէն
 Շօհ - խմորէ խիւս, մանածը կարծրացնելու համար
 Շըապղան - բարակ ճիպոտ մը
 Շըանթաւիլ - քնանալ, շան պէս քնանալ
 Շոշ - շլակն, չիլ, տճկ. շաշ
 Շէօռ - խօսք, (արար. մէշվէրթ-ին արմատը)
 Շուրվօ - ջրոտ ապուր տճկ. չորպա
 Շէօթիւն - մանր դդուժ լիցքի համար (տոլմայի)
 Շուլլիլ - խոշոր կար կարել
 Շուլլօլ - խոշոր կար
 Շուլլուվալ - բանի մը փաթթուիլ, մէջը մտնել
 Շուխօր - շողար, քրտինք խաշ
 Շիւղ - տաք
 Շուղրը - կապան, կիրճ
 Շուղնուլ - տաքնալ
 Շուղրալ - տաք զգալ
 Շըառօն - շուան
 Շինկիթօր - շնավարունգ, խոշոր տեսակ մը կուլթա
 Շիվ - խաղողին հանուած կեղեւը, տճկ. խիրա
 Շողմողուլ - բարակ անձրեւ մը մաղել
 Շըարէշ - ոչին, տճկ. չիրիշ, արմատ եւ փոշի որ փակցնելու կը ծառայեն իսկ թարմ արմատը՝ կերակուր կ'ըլլայ

Ո

Ուզմիւր - փորձել եւ ձեւել
 Ուծիլ - օծել
 Ուզնիլ - զէնքը, գործիքը ձէթով, իւղով օծել, մաքրել ժանդը
 Ուզընկան - անկողին, վերմակ

Ումաշ էնիլ - յուսալ, սպասանել, ախորժակը քաշել
 Ուջիլ - ոջիլ
 Ուշնիլ - օրհնել (խաղող)
 Ուխնիլ - օրհնել
 Ուշնոծ, ուխնոծ - օրհնած
 Ուտաք - ուտիք
 Ութկիլ - բաւել, օգտել
 Ուրունոկ - օրինակ
 Ուրէնք - օրէնք
 Ուրրոծ - մատաղցու ոչխարին կամ երինջին, զուարակին կուրծքը
 Ունկըմալ - տեսակ մը վայրի պտուղ, դեղին եւ թթուաշ

Չ

Չախըլտոխ - ջաղացքի ջախջախը
 Չէ - ոչ, (ոչէ)
 Չէլթուք - կեղեւը չհանուած բրինձ
 Չէօւ - հարբուխ, լուսնուտի նուալ (չէօւր բռնից)
 Չուքալք - չորցած թան, թուրմ
 Չիրթոն - չորցած, ամուր թան
 Չըաղար - ոտքի հետք ձիւնի վրայ, անցք, նեղ կածան
 Չըրչըր - բամպակը խճիճէն, կեղեւէն զատելէ ետքը,
 կուտը հանող մեքենայ

Չիլ - դէմքը ցանոտ
 Չօպուխ - որթի ուղէչը՝ ծխամորճ
 Չիլօ - կտակին հէնքին առաջներու թիւը
 Չիլօ - նոր օծուած քահանային քառասուն օրերը
 Չիր - չոր ծիրան, սալոր
 Չիրնու - տաքնալ, չորնալ
 Չիւշ - հը կեցընելու ձայնարկութիւն
 Չոց - ինչպէս
 Չիրք - ինչ բան
 Չօ - հը քշելու ձայնարկութիւն
 Չիւր եուր - մինչեւ որ
 Չանթին - եռտանի փայտով խաղ մը
 Չուրուտուկ - չոր ուտող, պաշք պահող: Որպէս թէ Բարեկենդանին
 դիշերը չուրուտուկը տրեխները կը թրջէ, կը
 հագնի եւ երկուշաբթի առտու դիւղ կը մտնէ:
 Այսինքն պաշքը կու գար Չուրուտուկը երեւակա-

յական անձնաւորութիւն մը կը նկատեն Չէյ-
 թունի մէջ, որուն հակառակն է ուզնուտուկը,
 այսինքն պաշքը փախցնող երեւակայական է-
 ակը, որ խթման իրիկունը գիւղ կը մտնէր եւ
 մենք մեր պաշքը կը բռնէինք: Երբ մենք մանուկ
 էինք, այսպէս կը պատմէին մեր մեծերը մեզի

Պ

Պաղրիլ - այգին ճուքաղ ընել
 Պաղտուք - ճիւղ, ճուքաղ խաղող
 Պիրիսիմ - մետաքս, էպրիւշիմ
 Պայլուզ - հարուստ, պալեօզ
 Պաղչիլ - հովանալ, զովանալ
 Պանիկ - մանկական բառ՝ պառկել
 Պրանտ - պինդ
 Պատրըսիլ - ծառ պատուաստել, մանածը կցել իրարու
 Պարտապանաց - ալլանդակ, խոշոր
 Պէզօր - շուկայ
 Պէտեղվիւր - յղի, պտուղով
 Պէտիւհիւն - պատուհան, լուսամուտ, փոքր դարակ
 Պըալիլ - փաթթել դերձան
 Պըաղանծ - մեծ կաթնայ, պղինձ
 Պոպ, քերպոպ - մօրը հայրը
 Պօրուզ - մանուկ, պըալըզտէք
 Պրաւազ - պուլպ, օժիտ
 Պըատեղ մը - պտղունց մը
 Պատիխ - սեխ,
 Պըատիլէ - ձիթենի
 Պըատուզ - ձիթապտուղ
 Պոտուկ - ծիծի պտուկ, ծաղիկի կոկոն
 Պարտըղիալ - բոյսին արմատը կտրող միջատ մը

Ջ

Ջըանջըղիլ - ջնջել
 Ջիրտուկ - մերկ, միրկիկ ջիրտուկ
 Ջոհր - ջահ
 Ջուխտուկ - պաստեղ

Ռ

Ռահոն - ծաղիկ, չահասպրամ, ըռահան
Ռավանտո հատ - հասունցած խաղողին հոյզը

Ս

Սալիւրոկ - խոց մը, սալորի պէս
Սալիսիլ - տեղ մը բացատրել
Սըսըբանուլ - ինքզինքը սուրբ ընել
Սալլ - մանուկը լացը դադարեցնել, սալլընիլ, լացը կեցնել
Սարբինայ - խիչակ, փայտ մը որուն վրայ որթը կը փաթթեն
Սատըր - ծաղկի չիթիլ, ռէհանի, պղպեղի թուփին չիթիլը
(արաբ. մէշտէլ, չիթիլի վալը)

Սատըրիլ - սատըր տնկել
Սապալոխ - քէօֆթէի կտոր մը, ափի մը չափով
Սիմինտր - ձաւարին տակի շատ մանրը
Սիւխ - սոխ
Սէօխտիւր - սխտոր
Սրանծ - խոտ մը, որ կ'ուտուի
Սիւուց - լեարդ
Սըաղկիլ - ծեծելով փոշի պէս ընել (աղը եւայլն)
Սուխրօծ - իւղը հալեցնելով մէջը սոխ մը կարմրցուած
Սիկ - աթի խաղախորդուած մորթը, կաշին, որով փոստալին
երեսը կը չինն

Սուլուխ - պէտքարան, ճէմիչ, արտաքնոց
Սըլիլ - պեխը սրել, շտկել

Վ

Վազ - վիզ
Վաստուկ - վաստակ, շահ
Վէլիլ - վայելիլ
Վէյէ - եղջերու, երէ
Վըլանուլ - լուանալ
Վիրնիկ - փոստալ ոտնամանին դեռ չկարուածը
Վէար - ախոռ, վար

Տ

Տապուկ - տապակ
Տապուս - կարմրախտ մը, մորթի
Տապօ - անգամ
Տառօս - ամուսնութեան մաղթանք
Տաստ - սատ, փոքր կաթնայ
Տատա - հայր
Տավար - դուար
Տէմրունիլ - երգողին դէմ ձայն բռնել
Տէօկճիւր - տիկ (տնկ.)
Տէռ - ձայն, փուք, տտուել, փուք հանել
Տէրընտես - Տեառնընդառաջ
Տիզ - տէգ
Տինէր - տանիք
Տակիլ - երկուքի ծալլել
Տղաձոն - տղան ձգող, վիժող
Տու - տալ, էրկան քոյրը
Տէազր - ամուսնոյն եղբայրը
Տուլուչօկ - փոքրիկին տակի շորերը
Տիւվար - խաղ մը
Տըաստուկ քարվուկ - աղջիկներու նստուկ եւ ցատկելով խաղ մը
Տուռնօ - տանիքի ցուխին տախտակէ լայն եւ շեղ քիւ,
տնկ. տուրնա

Տորոմ - դեղին, ամուր հող մը
Տօրտէօփ - թույլ հաւկիթ, կարմիր ալոճ, վիժած սաղմ

Ծ

Ծըանկնալ - ցկնիլ
Ծիվիրծէք - ցուիք, քիւ տնկ. սիւքիւք
Ծըառիլ - փորը քշել
Ծըառօն - փորը քշող
Ծից - ցեց, ուտիճ
Ծըաց - ցից, սուր փայտ
Ծըարպատուկ - տեսակ մը վարդ, կեռաս մանր եւ դեղնորակ
Ծալիլ - խրփիլ, ցնդիլ

Փ

Փէլի - փայլիլ
Փէխանտ - փոխինդ, բոհրուած ալիւրով, ռուպով եւ իւղով
ուտելիք

Փէշ - քղանցք
Փէտվիւր - վարոցաւոր, զարթիւ
Փէտ - ջաղացքի տակի փայտէ անիւին թեւերը
Փէօհրէնկ - փողրակ, կոյուղի
Փիւրնիւց - երախային օրոցքին վրայ, փորը ծածկող փոքր
վերմակ

Փալախով - ոտքը գայթիլ, բանի մը դպնալով իյնալ
Փիւր - փոր
Փիւր - փոր, ալգիին փորելը
Փիւրիչ - փոքր փետաւ, բրիչ
Փէտոտ - փետաւ, որով հողը կը փորեն
Փիւթ - փոթ, ծալ, կտաւի խորշոմ
Փիւթ - տտիպ, սերկեւիլը փոթ կ'ըլլայ երբեմն, բերանդ կը
կծկէ: Սեւ գիւնին, սեւ խաղողը կը փոթեն

Փիւղք - փողք, կոկորդ
Փոմփուլ - փափուկ
Փըարցանիլ - փրցնել, կնիկը արձակել
Փուստուլ - ոտնաման մը
Փըաշիլոյ - ալիւրով, ռուպով եւ վրան անցուած քաղցր ուտելիք
մը (պուլուման)

Փուլ - մայրի, եղեւնի, շոճի տերեւը
Փըաթարիլ - գործէն հանել, խաղը ձգել
Փաքուլ - այծի չոր հազալը, աղուէսին փաքուլը
Փըրափաւընք - փորոտիք

Ք

Քաղըրթ - աղիք, քաղիթ
Քարիլ - նետել, քար նետել
Քիրուք - քիրուք, սանին տակի քիրուքը, ծեծուած մսին քիրուք
Քացիլիլ - թթուիլ, քացախի փոխուիլ
Քաղցինուլ - անօթենալ, քաղցենալ
Քարծրծիլ - քարկոծել
Քալաթօ - փոքր կալ մը ցորեն, փոքր աղօն մը
Քէլիկ - երախայի կակուղ ոտնաման

Քէարիւզ - քարոզ
Քեռմէր - մօրը մայրը
Քէրթէօշ - քարաթոշ
Քընգմիզաղկընա - մենէ աղէկները (ճինները)
Քըլա - կին կամ աղջիկ կանչելու բացագանչութիւն
Քըաթվիլ - ոջիլը քթուել, մաքրել, ոջիլը հանել, սպաննել
Քիւր - քոյր
Քերթիլ - մորթել, քերթել
Քարմոն - բուրդով հաստ թել մանելու գործիք
Քիւս - քոս, սպի վէրքի
Քալաբորդ - խաղասարտ տնկ. դապարճը (խաղող մը)
Քուշ - օճախ
Քէյնոպ - դռումէ աման մը կոթով, ջուր փոխադրելու
Քըաշվիլ - յանդիմանել, կշտամբել

Օ

Օռուպ - ոռուպ
Օռուպ - բրինձ (արար.)
Օզգ - ազգ
Օլ - չար ոգի (տնկ. ալ, ալ պատրը)
Օկ - ակն, մատնիթ, աղբիւրի
Օղտ - աղտ, օղտ կորուս, աղտկորոյս
Օմպ - ամպ
Օնթ - գիրկ, անթ
Օնկ - կախնուկին անկը, սաթլին բռնելիքը
Օսղ - աստղ
Օոօֆ - դարակ
Օսո, օտօնօ, օնօ - այս, այդ, այն
Օլվանուլ - երեւնալ

Ֆ

Ֆօլոն - առնանդամ, (phallus)
Ֆալաթօ - աշակերտը հին ատեն այդ գործիքով կը պատժէին
ծանր յանցանքի մը ատեն
Ֆըարֆարուշ - պտուտակ խաղալիք
Ֆօշուլ - ֆշալ

Աւելի քան 700 բառեր Ձէյթունի բարբառին յատուկ, որուն մէջ 100է աւելի բառեր կարօտ են ստուգաբանութեան:

Իսկ այս ցանկին մէջ չենք առած այն բառերը, որոնք աշխարհաբարի հնչումը կը պահեն: Օրինակ. քաղոք - քաղաք, հոց - հաց:

Յաւելուած

Կոյկոզոնց էնիլ - կարօտով սպասել, աչքը թրջել

Քէչիկ - իշուն, ջորիին գօտին

Տօրոպուք - պղտոր ոռւակ, ջուր

Յօրպօտուկ - տեսակ մը վայրի մանր կեռաս, դեղին

Տրազտազիլ - լպուտին աղեղին ձայնը

Լամլամիլ - ակուայ չունեցողին ծամելը

Թալրզ անցնրլ - շատ անօթենալ

Սըալվալիլ - սուլել

Խօշխօլլ - վրադ լալ, մեռելին վրան լալ

Ձէօզիւց - տան յարկի մէկ մասը

Թըթապը - տխմար (տէնկսուզ)

Կութկութ - տխմար

Դիարձկիտիլ - յոգնիլ

Ակկամոն - աման, անհեթեթ, իր

Փըատուկ - փափաք, կարօտ, փրատուկը փիւլը մօնոց

Մըալարիլ - ծառին նոր պտուկ հանել սկսիլը

Նիքսէ - տան ետեւի մասը, ուր պաշարը կը դնեն, մառան

Մոնճու - փոքր տաշտ, փոքր հնձան

Ջաթըլ - մարիլ, տկարանալ

Մըականվալ - քիչ մը հանգստանալ

Դըանտաղօլ, թըանաթըպիլ - տնտնալ

Խալխնճուկ - ջորիին վզին բոժոժ

Տալոպ - շատ ցանկացող, ալրող

Լըանտիլ - տանձին շատ հասուննալը

Ինտէլ խուռալ - գառանցիլ

Մըանդ - խելքը չձած, թմրած

Շափթօ - բարակ ձող չոճիի, բարտիի

Էկիւզիւն - կաշիէ գօտիի եւ կօշիկներու վրայ երկաթ օղակ (քիլթէ)

Ջըսմըալ - շատ մսիլ

Լապուտ - լօպուտ, հաստ բիր

Խըաշփրտիլ - շատ կսպիլ, ալրիլ

Ամպիլ - մշակիլ, մոայլիլ, շատ տխրիլ

Թունիլ - անձրեւել

Մուլոտ - տիղմ, ցեխ

Ջըանարիլ - ձիւն կտրել, ձիւն դառնալ

Մօզմօզուք - բարակ ջուր մը որ ժայռի ճեղքէն կ'ելլէ

Փըասղատվալ - բնական պէտք ունենալ = սըխմըվիլ

Փըաթկարտիլ - պատուտիլ

Փըաթդանիլ - փոյթ տանիլ (սխմուիլ)

Լափլըփիլ - խարխափել

Պոն - մեղրի կտոր, խորխախ

Կըանկըտիլ - կլթիկ ընել

Գոր - աղբիւրի գուր, ընկոյզի լման միջուկը երբ հանենք կեղեւը

գոռը կը մնայ

Կէյ - աղտորին ձգած ներկը, ընկոյզի կեղեւին, նուռի կեղեւին

ձգած ներկը

Ղավուզ - մէջը պարպուած ընկոյզ, եւ ուրիշ պտուղ

Մըալլիլ - շուարիլ

Թըանարիլ - պէխը նոր կը բուսնի, քրտնիլ

Ղապիշ - գլուխը գերօ մեքենայով կնտուած, առանց եղջիւրի այծ,

ոչխար

Էմփէլ - միամիտ

Մաթուխ - պարզամիտ, ապուշ

Փըալթամալէ - թափթփած, փրթած

Շուշուլթ - շոշորդ, մաս, նշան

Փալվոնտ - կօշկակարի ասեղին վրայի կարճ թիւր, թիւր ասեղին անցընել

Պըատեղ - պտղունց

Փայփայտիլ - փորփորել, քրքրել

Տիւտէօշ - չրթունք

Լամպուք - պէպէքներու գլխարկի տակի կապը

Ուլուլուկ - օճախի շուրջի քարերը

Պատըճ - լուքիայի պարկը, պատիճը

Չուկըոնկ - քարքրուտ, դժուար ճամբայ, տեղ

Շիրէք - միակտուր սարի առլիփ կողը, ուրկէ իջնել կամ ելլել անկարելի է

Խուլուեօնկ - այգիի մէջ նեղ արահետ, քիչ մը բարձր եւ

թուփերու մէջ, գետնէն քիչ մը ցած

Էօզ - շատ պզտիկ ձորակ
 Ճլղայ - շատ բարակ շաւիղ
 Տէարդ - տաշտ, կոճղէ փորուած տաշտ
 Կուճ - կօշկակարի կոճղ
 Մէցմէց - դէմքի մորթը պիսակաւոր
 Խէտմէտ - խայտ, խայտուտիկ
 Ձէնձէնիլ - կամաց մը լուր տալ, ձայն տալ
 Նուխտիլ - ծանր կերպով կշտամբել
 Կամկըմիլ - չըսել սպուպել
 Թըրյատիլ - ոտքի տակ առնել, կոխկրտել
 Շուխրիլ - կացինը յետանին վրայ ջուրով սրել, կամ խարտոցով
 սրել

Հոտուկուտ - հատ ու կտոր
 Խըրխտիլ - խեղդիլ, մսելով մեռնիլ
 Քուրէթ - վայրի սխտոր մը եւ հաւուն փորէն ելած չկազմուած
 հաւկիթ

Քըրթիլ - ջուլթակ, նուազ ածել
 Գալըզ - Աստուած զիս քու գալըզը չթողու, քու ձեռքը...
 Դըրանդըմանզ - մէկ այս, մէկ այն կողմ, խաղի փայտ մըն է
 Կզկզիլ - ցորենէն հողը գատել, տակը եղիցնել, աղին խոշորը
 գատել, աղը շարժելով մանրը վրան, խոշորը տակը
 իջեցնել

Իյկէն Նանա - երկար խօսք, չվերջացող խօսք, գլուխ ցաւցնող
 Ճղյատիլճ - երկուքի ճեղքել փայտը
 Խէածառիլ - խայծ իյնալ խաղողին մէջ, մօրուքին մէջ ճերմակ
 երեւնալ

Խողք ու ծողք - ծաղր ու ծանակ
 Խարխուր - պատշգամի բազրիք
 Մըաղնըպըատատը իրթոս - դժոխքէն անդին երթառ
 Պըատատը - դժոխք
 Սուճպոք - մէկ կտոր քար
 Գազըճիլ - կարկաչել, հաւը հաւկիթ ածելէն յետոյ կը գազըճէ
 Սըափարտալ - ոտքը սահիլ, գայթիլ
 Պուղիլ - տանիքէն ձիւնը թիով վար նետել, պեղել
 Ջըանկզանկիլ - ետեւէն հասնելու համար վազել, վազցնել
 Ջընգրտիլ - գուլ դանակով հաւուն կամ ոչխարին վիզը կտրել
 եւ չկրնալ կտրել

Ջազըրիլ - վէրքի խոցը Թարախտիլ, ձագ հանելու պէս
 Սըալախվալ - զարդարուիլ

Հըանտկառիլ - հունտ կապել, ծերանալ
 Փանախիլ - բանթողել, դպրոցէն աշակերտները արձակել, դրկել
 Կօծուք - կծիկ
 Ղուպուլ - տեսակ մը գօտիի պէս մէջքի զարդ, մէջը բաներ մը՝
 դրամ, ժամացոյց, ծխախոտի տուփ, կաշիէ կ'ըլլայ
 Ճիլ - խօսք փնտռել, չար փնտռել, կոխ փնտռել
 Տըալծալուք - ցորէնի տակը
 Քալարորդ - խաղաւարտ, ասկէ առաջ եկած ըլլալու է
 կը կարծեմ մեր «խիւրէշ խաղողին» գապարճը իւզիւմի
 կոչելը Թըքախօսներուն մէջ

(112 բառեր յաւելուածին մէջ)։

ԱՌԱՄՆԵՐ

Անթուրհո կիւտէօղ, անատին խուտէօղ:
Գուլտուրվիր է տաստակը, գրատի խրափակը:
Ագուրմնուն անէծքը բրաունավա նէ պէյկիյ չէ մօնօյ կու սատկի:
Լու ղօյպօն նամ քիս Ասպօծ, դանկին էա կիւթ խաղիղծիրիս:
Գիղիցօն միմն ուտէօղ մօկօնը էչվէն կու կոյնօ:
Ձիւր շուշօնը ճարդրովա, պատալօզը կ'ածկըվա:
Խէւն ասուց, խըլանըն աւտօծ:
Ասպօծ ախքօտը ույախցընէնը, էչը կու կըաշնացանէ, սօնկրօ յէ
կու գըատնացանէ:
Գէալը ամպիւտ էօրը կու սիյէ:
Էս մուրուքը շոտ պատարոք տիսիր է:
Աչկին քիզ կ'ոսիմ, հարսնօկ դոն լրասէ:
Ուտիմ ճուճ է, չուտիմ մատող է:
Սիւխը սըախտիւրէն հիտ կարգոծ ին, քառաուն տարը հուտիրը չի
իլի:
Դոն մը հատիյօ, բոնիդ թուղ հատիյօ
Օնթիս նատիր է, մուրուքիս կօ փիտէ:
Հոստ ու բարոկ մէկ է, վայ բարոկ մանուղան:
Ձաղոցքը ղոյն է տայի, ջաջախը կօ փնտոփ:
Գէալը էածիւխ կիլի է, հուրթան էակուէն է աւլիս:
Էչն էչով իշխոն, քոքն իղով չիրթոն:

ԱՆԷԾՔՆԵՐ

Օճոխդ անցնը, քուչդ միյէղա:
Անկըրծակէ բոն իգօ գոլոխիդ, անտէր, սոյխօ պօթոմպոլ մօնո:
Քըաթէդ բիյնէդ իգօ:
Քըաթէդ փրանչէդ իգօ:
Էվէտ իլլէ:
Փըանծ ու կոտիւր լար:
Ասպօծ հախէդ իգօ:
Մուրը պատէ հիգգէդ:
Մուրն ի վրէդ:
Գիտինը մըատնուս, տունդ աւրը:
Մարիվը (իմ արեւը) իրդուժ մըն է:
Ջըհաննումը իրթոս:
Նաթը պէլէքիմ սիվ ղոյ իշնօ էչվէդ:

Լէշփէտը իլլիս (դազաղը ելլես):
Լէշփէտը դըանիմ գթիդ, (Լէշի փայտ - դազաղ)
Մուր ղոյը վիյէդ:
Մուրը պատէ հիգգէդ:
Ճուռիդ կըատրա:
Թիւիդ կըատրա:
Ղօրոն մօտնու մէջիդ:
Մըաթարսուն Աւտայօն վօկօ (երդում մը):
Բիւրբիւր աւխտարան վկայ:
Խըաշիմ իգօ գազօղիդ:
Կօտիւր կօտիւր լար:
Հիգգէդ խըառավա:
Մէխդէյուղան գազթըկն իգօ:
Էօճը խէթէ լիգոդ:
Տունիդ տեղիդ խարապը:
Շունն ուտէ ճիկէյիդ:

ՕՐՀՆԷՆՔՆԵՐ ԵՒ ԱՍՈՅԹՆԵՐ

Ուճոխիդ վառը-- չէն կեցիր:
Տունիդ չէն մօնօ:
Բոնիդ գիւրծիդ օռոստ իգօ:
Ասպօծ սըարտադ կուրօ տօ:
Ասպօծ մուրօղիդ, մուրազըկըդ տօ:
Հիւղ ճանկիս, իսկի դառնօ:
Ասպօծ խթիդ բիյէ:
Ասպօծ ուտոց, ճիւտոց չըաճգէ:
Ասպօծ խիլք-չէնիւրք տօ:
Քէսիդ պայաքօ:
Մուխանէթան մէօհթէն չէնէ Ասպօծ:
Ասպօծ հիտիդ նա:
Լաս ճօռօ հիգգէն:
Շէն կեցիր:
Սող լար:
Պէրէքէնը մէջը Ասպօծ բիրնէ համէօվ կըայցանէ:
Ասպօծ պէթէյէն խըլասէ:
Մէկ բայցը վիյօ վէլէք:
Խէլը տեսնուս:
Ասպօծ մէյէօվ պապէօվ մըանծցանէ:

Գօրխիդ սօղ մօնօ:

Լուս ճօռօ քու պապուն հէգգէն

Ասպօծ սիյոծիդ պէհէ:

Էս հին, հազոյը նիւր:

Ուխտիդ դապուլ նա:

Տէառէօսը վիյէդ, մանտրկընոյնուդ վիյէն:

Օղունկ ունաս նը գօրխիդ քիյէ:

Ասպօծ ետքդ բիյէ:

Ասպօծ դուվօթ տօ:

Ուտվէդ ուղուր նա:

Ասպօծ շէյէն խոռու պէհէ:

Մասկօն (բաղնիքէն ելլողին անուշ բաղնիք ըսելու համար):

Բէարէօվ-շէահէօվ իկիր:

Հինգ հազոր բարր:

Ուղուրմի Ասպօծ:

Ուղուրմի հոգգօդ:

Արեւըդ սիյիմ:

Հիգգէդ սիյիմ:

Ղրատէդ առնում:

Համմէ, շաքօր ծամէ:

Էօճը խէթէօղը քընացիր է, անըթուն չի քնացի:

Տանծը կէս (մէկուն վրայ խնդալու համար):

Փէտէ գէհիւրք, կրանակ վարդոն (թոյլ, անառնական մարդիկ):

Տանդալիս (տխմար, ապուշ):

Բեկիդ (ծաղրական):

ԱՌԱԾՆԵՐ, ԱՍԱՑՈՒԱԾՔՆԵՐ

1. Մօյդ մայդօյ սատանայ, մօյդ մայդօ քահանայ:

Մարդ մարդու սատանայ, մարդ մարդու քահանայ:

2. Մօյդ կոյ ըարկարա տուն կու չինէ, իյը կ'աւյէ, մօյդ էա կոյ եու իր տունը կու չինէ, աղքատան տունը կ'աւյէ:

Մարդ կայ ուրիշին տունը կը չինէ, իրենը կ'աւրէ, մարդ ալ կայ իր տունը կը չինէ, աղքատին տունը կը քանդէ:

3. Խօռու կօյօքը չօհ չունայ:

Հեռաւոր կրակը օգուտ չունի:

4. Պօպը տըաղան էգէ մէ տըավի, տէաղան կիւ մը խէաղ չէ

տըավի:

Հայրը տղուն այգի մէ տունը, տղան հօրը կոյդ մը խաղող չէ տունը:

5. Էշն իշուն խէյը կապիս, իա էառէօցը կ'առնու, իա փէառէօցը էյը էշուն քովը կապես, կամ առոցը կ'առնէ, կամ փառոցը:

6. Ըայկաթէ դօռը փէատէ դօռօնը մէօյթէճ կու նայ:

Երկաթ դուռը, փայտէ դրան կարօտ կ'ըլլայ:

7. Քիմինը ջոյ չէ կանը գոտնոյ խումիւ, քիմինն է կէչիս չէ կանը գոտնոյ:

Ոմանք ջուր չեն գտներ խմելու, ոմանք ալ անցք անցնելու:

8. Կէչիւտը գօնօ, հապօ շավոյիդ հանէ:

Գետի անցքին գնա, յետոյ սոթթուիր:

9. Սիվ էօն ու ճիմակ էօռը կէչիտը պէյլու կունոյ:

Սեւ ուն ու ճերմակ ուր ջուրի անցքին յայտնի կ'ըլլան:

10. Կիյ գէլօն դօսմօթը Ասպօծ կու տոյ:

Կոյր գայլին հացը Աստուած կու տայ:

11. Ծոկ պիւղէօղը անըթայ չէ մօնոյ:

Ծակ կոկորդը անօթի չի մնար:

12. Խելը հայսնըգօ ին տայուծ, հէօս գէնա մէյ տունը ըառանտ է ասիյէ:

Խենթը հարսնիքի են տարած, հոս մեր տունէն աղէկ է, ըսեր է:

13. Ասպօծ խելք բէմիլ նիքէն, դոն դոռոնն իտիւն իս կիցի:

Աստուած խելք բաժնած ատենը, դուն դրան ետեւն ես կեցեր:

14. Պիլպիլը թէաքէավիւրէն սէյէն իսկիվէ դաֆօսն ին դօյոծ, ա'խ վէյթօն ասի, լացի է: Փոյցոցոծ ին թը տիւնունք իո'յ է էսիւր վէյթօնը: Գացի է տէնկիզին իղիյը, տալիօն մը վիյէն բըան է դըայի, մէյը մըատի է: Տէալդէն ի գօնը, դայվի կօ ճոտկօ, չը դաժա տէ, յի, տէալդէն ըալաւանէ էվէն բըանը կօ մտնու:

Սոխակը թագաւորին պալատը, ոսկի վանդակին դրած, ա'խ,

հայրենիք, ըսած է եւ լացեր: Թող տուեր են, տեսնելու համար թէ ուր է անոր հայրենիքը: Գացեր ծովի ափին, ճիւղիկի մը վրան բոյն դրեր ու մտեր է մէջը: Երբ ալիքը գայ, վեր կը ցատկէ որ չթրջուի, երբ ալիքը անցնի, դարձեալ բոյնը կը մտնէ:

15. Հովը հով է նը, ջոյ խումիւն իբէն իյկէնքը կու հէյէ:
Հաւը որ հաւ է, ջուր խմելու ատեն երկինք կը նայի:

16. Էօճը էօճ է նը, հիւղը դրատէօվ կ'ուտէ:
Օճը որ օճ է, հողը խնայողութեամբ կ'ուտէ:

17. Ճէնճղօկը ասիյ է թը, ամէն էօր դանթօր մը մասիս կօ պակսի: — Չուղդիկ, ասած է, դօն չի'րք իս եուր քու պակսած մասիդ չի'րք պինա, — իմ դանթիւրէօվըն, ասիյ է:

Ճնճղուկը ըսեր է թէ ամէն օր միսս դանթար մը կը պակսի, — Խըլէզ, ըսած են, դուն ինչ ես, որ քու դանթարդ ինչ ըլլայ, — իմ դանթարովս, ըսած է ան:

18. Գէյօն հարցուցո՞ծ ին թը՝ չուրու վագիդ հօստ է, — իմ բօնը իմ ձեռքէօվը կու տեսնում, էնիւր համոյ, ասիյ է:

Գայլին հարցուցած են թէ ինչո՞ւ վիզդ հօստ է, — իմ գործը ես իմ ձեռքովս կը տեսնեմ, անոր համար, ըսեր է:

19. Շօնն ուռուն քօղցը թէո չեյլի (գէշ մարդէն լաւ բան չ'եկեր):

20. Շօնը փրաշան վիյէն դօյօծ է (մէկը անարգելու ատեն):

21. Քու օխպօլը շօնը ուռէն կ'եյլէ (Բախտաւորին համար):²²
(Այս երեքը ալլաբանական իմաստ ունին)

22. Մօկ հըալլիւյը գետին չէ մօնօյ:
Մակ ուլունքը գետին չի մնար:

23. Պարտկօնը չէ միռնա, իյիսը կու դեղնայ:
Պարտականը չի մեռնիր, բայց երեսը կը դեղնի:

24. Մաքին փալախիյ է, դօմօկըն է կալվիյ, էծիյը ծիծացօծ է,
թը իտիվը բացվիցօվ: — Ձիր իտիվը ամէն էօր բօց է, ասիյ է:

Մաքինն ոտքն է սահեր, գայթեր է, դմակը վեր բարձրացեր է:
Այծերը վրան խնդացեր են, թէ ետհեւը բացուեցաւ: — Ձեր ետեւը

ամէն օր բաց է, ըսեր է:

25. Աղվիսը տարօծ ին թը կըաթին, ասիյ է, — Իյիսիս հէյիցէք, խնէց կօթ կ'եյլէ:

Աղուէսը կթելու տարեր են, ըսեր է, — Երեսիս նայեցէք մէյ մը, ինձմէ կաթ կ'եյլէ:

26. Խեվը հասիր է մուրազըն, խրլանըն դրարիյ է թէ պը հասնըմ:
Խենթն իր փափաքին հասեր է, խելացին սպասեր է, որ հասնի:

27. Հէյունն իտէ խիլքն իմը նէր:
Հայուն վերջին խեւքն իմս ըլլար:

ՅԱԽԵԼՈՒԱԾ

Մանօթութիւններ Զէյթունի պատմութեան առնչութեամբ

● 1808-ին, Մարաշի մէջ տեղի կ'ունենայ մեծ սով մը, զոր զէյթունցի Յակոբ Դպիր, Շարակնոց մը ընդօրինակելու առթիւ հեռեւաւ կերպով կը յիշատակէ: — «Ղարիպ էի (Սերաստիայի մէջ) եւ սրտիկս տրտում... լսէի գլխեղձ ձայն քաղաքին մերոյ Գերմանիկէ, որ է Մարաշ, որ էր սով եւ սուղ. Զ. (վեց) տրէմ հացն ի փարա մի. եւ էին որդիքն իմ անդ, ո՛չ եկող կայր եւ ոչ գնացող. այսպիսի տառապանօք գրեցի զյիշատակարանս» (թ. 208 Շարակնոցէ մը. Տաշեան ցուցակ):

● Զէյթունի Ս. Լուսաւորիչ եկեղեցին կը գտնուէր գրչագիր հին Յայմաւուրք մը, որուն յիշատակարանին մէջ գրուած է թէ Ժամանակին թաթարները Մարաշի վրայ կը յարձակին, քաղաքը կը մտնեն ու թալանի կու տան տունները ու կը ջարդեն բնակչութիւնը: Նոյն պահուն յանկարծ օգը կ'ամպոտի եւ տեղատարափ անձրեւ մը կը սկսի հեղեղել բոլոր փողոցները: Թաթարներ անպատսպար մնացած, շուարումի կը մատնուին, որմէ օգտուելով մարաշցիները փոխադարձ խորդի կը սկսին ու թաթարները քաղաքէն դուրս կը վտարեն:

Զէյթունցի ուխտաւորներ Ժամանակին կեսարիոյ Ս. Կարապետի վանքը ուխտի կ'երթան: Հոն, իրենցմէ անձ գլուխ 60 դահեկան խաւով տուրք կը պահանջուի: Զէյթունցիք կ'առարկեն թէ Սուլթան Մուրատէն Փէրման ունին չտալու: Սակայն բռնութեամբ կը գանձէ կռուականութիւնը այդ տուրքը: Սակայն զէյթունցիք կը սպառնան

Թէ այդ տուրքին կրկինը պիտի գանձեն իրենք ալ թուրքերէն... եւ իրաւ ալ ճամբան իրենց հանդիպած թուրքերէն կրկինը կը գանձեն: Այդ առթիւ գէյթունցի Շղիա Խուլմուկեան, որ այդ ուխտաւորներէն մէկն էր եւ մասնակցած չէր այդ դործին, եւ սակայն իր ընկերները երբ կը բանտարկուին, իսկ ինքը դուրսն է, կը հիւրասիրուի կեսարացի մեծահարուստ նոյն տունը: Շղիա ցաւ կը յայտնէ որ կեսարացի հարուստ հայեր թոյլ տուին որ գէյթունցի ուխտաւորներ բանտարկուին: Կեսարացի այդ մեծահարուստը իր ցաւը կը թափէ ըսելով թէ իրենք հակառակ իրենց հարստութեան, ազատ չեն, միշտ թուրքին բռնութեան անարգանքին տակն են, իսկ գէյթունցիք իրենց լեռներուն մէջ ազատ են, թէ իրենք կ'ապրին ստրուկի կեանք մը, հարսնիքներն անգամ գիշերը գաղտնի կը կատարուին, իսկ թաղումները նախատալից արտօնագրով մը տեղի կ'ունենան: Հայ մեռնեցիները թաղելու այդ արտօնագիրը ստացուած է Շէյխ Իւլ իսլամէն: Զէյթունցիք անկէ օրինակ մը քաղելով հետերնին կը բերեն: Հետաքրքրութեան համար այստեղ կը դնենք մենք ալ անոր թուրք լեզուով գրուածը եւ Զէյթունի լեզուով թարգմանուածը նախ, յետագայ հայ սերունդներուն ցոյց տալու համար թէ ինչ ժամանակներ է ապրեր հայը անցեալին թուրքիոյ մէջ:

Բնագիրը:

«Ապախի լիպսըր գաղրանի, դիւլահը շէյթանի, մահրումը տէր-կիահըր րապպանի, պէտ էսաս գօճափափազ:— ինհա օլունուր քի, կիրուհի քէֆէրի մէքրուհէնիզտէն (ֆիլան քիւֆէրանըն օղլու ֆիլան), քէֆէրէ միւրտ օլմուշ օլտուղումտան, լաշէի մէքրուհէսինի թիւրապ գապուլ էթմէզ իսիտէ, նէ չարէ, նէ չարէ, նէ չարէ քի թէաֆիւնի միւհլիքէսի օրթալըգտան գարլմասնը իչուն, շէհրին տիշարըընէին կէօթիրրիւպ պիր խէնտէկ գազուպ, իչինէ պրազուպ, իւզերինի թարրազլալուպ, չըյնալուպ կէլէսին, գօճա փափազ:

Միւֆթի էֆէնտի

Թարգմանութիւն Զէյթունի բարբառով:

Ղաթրանը ընկ լաթերով, գօլոխը սատանի թագը, Աստու կէցո՛ տեղոցը դուռնո՛՛՛ գրկոված, քէօթիւ – փոս էսասը տէր խորֆո՛՛՛ հիւր երէց: անհաւոտ մուտոռ խալխըն մըջէն ֆօլոն անհաւոտ քէ-ֆիր չըյնատըրրան տէաղէն, ֆօլոն անհաւոտը սէատկիրոն համոյ, է օնիւր փիս լէշը հիւղը պիւօ չընդունա իսէ տէ, չիլքէնիմ, չիլքէնիմ, եոսս, մուտոռ փիս հիւտը մէյ մըջէն հուլփիլոյ համոյ, քաղքէն դոբ հանէք, խանտոկ մը բանէք ու մէջը ըաճէք, վիլէն հիւղնալթօ՛ ծածկէք, կէափ կըռտէք, թըպաստէք ու իւէք, հէլվիւր խորֆո՛՛՛ իրէք

Միւֆթի էֆէնտի

Աշխարհաբար թարգմանութիւնը

Ղաթրանի պէս սեւ տարագով, սատանային թագը գլուխը, Աստու՛ոյ ապարանքի դռնէն գրկուած, անարժան, վատ սկզբունքով զառամեալ երէց (քէշիշ):

Կը ծանուցուի թէ ձեր հայրոյսբան գարշելի ժողովուրդէն այսինչ հայրոյսին տղան այսինչ անհաւատը սատկած լլլալով թէեւ անոր պիղծ, գարշելի դիակը հողն անգամ չ'ընդունիր, սակայն ինչ օգուտ-ինչ ընեմ որ, այս գարշահոտութիւնը մէջտեղէն վերցուելու համար, քաղաքէն դուրս կը հանէք, խորունկ փոս մը փորել, բանալ կու տաք, մէջը կը ձգէք, վրան հող կը քաշէք ու կը ծածկէք, լաւ մը կը տրորէք, կը կոխկուտէք ու կու գաք, զառամեալ երէց:

(կնիք) միւֆթիսի

Յետոյ սակայն Կ. Պոլսոյ Պատրիարքարանը այդպիսի չափազանց անարգական հրամանագրի մը մասին կը դիմէ Եւրոպական դեսպաններուն, այդ արտօնագրէն օրինակ մը թարգմանաբար ներկայացնելով անոնց: Սարգիս պարտրիարքի այդ դիմումին վրայ մեծ տէրութեանց դեսպանները կը յաջողին ժամանակին, մեծ Եպարքոսէն Մարաշ եւ հայկական ուրիշ շրջաններ հրամանագիր մը դրկել: Այդ հրամանագրով կը ջնջուի թաղման վերաբերեալ այն անարգական արտօնագիրը: Ուրիշներ կ'ըսեն Յարութիւն Ամիրա Պէզեհեանի դիմումով այդ թուղթը կ'արգիւրուի:

• Ըստ ոմանց յայտարարութիւններուն, բիւզանդական հայազգի կայսրը Լեւոն Իսաւրացի, բնիկ մարաշցի է, իսկ ոմանք կ'ընդունին թէ՛ անիկա Մարաշէ քիւ մը աւելի դէպի ետեւ լեռնագաւառէն էր: Հետաքրքրական իրողութիւն մըն է թէ՛ այդ լեռնագաւառին հայերը ռազմական յատկութիւններ եւ ցեղին ուրիշ որեւէ մասէն աւելի իրերհասկացողութեան եւ միութեան ընդունակութիւն ունին, եւ այդպէս ալ եղած է միշտ: Զէյթունի եւ Հաճընի այդ կողմերէն էր որ հայ կուտողներ ելան եւ հաստատեցին փոքր Հայաստանի թագաւորութիւնը: Զէյթուն այն գաւառն է, ուր այդ ոգին պահած էր երկար տուն:

• 1814ին նախ Զէյթունը կը տեղահանէ թուրք կառավարութիւնը, ամէն տեսակ նախապնդներ եւ վայրագութիւններ գործադրելով: Առաջին խուճբէն 500-ի այլ չափ մարդիկը կը բանտարկեն: Մերերը, կիները, մանուկները կը տարագրեն բարբարոսական տառապանքներով: Այդ 500-ին 150-ը իրարու սեղմօրէն կապելով չուկաները կը պտըտցնեն

Մարաշի մէջ: Նազարէթ Զաւուշը սոսկալի գանակոծելէ եւ մահամերձ վիճակի հասցնելէ հտքը, թուրքեր զինքը պատգարակի վրայ դրած, քանիցս, որպէս թէ արկածով, գետին կը ձգեն ու կը վերցնեն կրկին, յետոյ քաղաքէն դուրս հանելով, այդ վիճակին մէջ կը լուսանկարեն ու վերստին կը բերեն բանտ, ուր իթթիհատական պետ դեղագործ Լութֆիի տուած թունաւոր դեղով թունաւորելով կը մեռցնեն այդ գիշեր, Սեպտ. 5-ին եւ այնպէս խօսք կը հանեն թէ բնական մահով մեռած է: Բանտարկուածներէն մօտաւորապէս 100 մը իրարու կապած, Մարաշի արեւմուտքը, ձորի մը մէջ կը գնդակահարեն: Մնացածներուն համար տարբեր թուրք թաղերէ սուա վկաներ հալթալթելով, զինուորական ատեանի առջեւ իբր թէ կը դատեն եւ կախաղան կը հանեն: Ուրիշներ ողջ ողջ կիրի հնոցներու մէջ կ'այրեն:

● Դոկտ. (փրոֆէսոր) Յակոբ Զէյթունցեան ծնած է Մարաշ 1884-ին, Ս. Յակոբի տօնին օրերը, Գարամանլը թաղը: Հայրը Խաչիւր, բնիկ զէյթունցի հաստատուած էր Մարաշ: Յակոբ կ'ուսանի Մարաշի Աւետարանականաց նախակրթարաններուն մէջ, 1901-ին կը մտնէ Տարսոնի Ամերիկեան Գոլէժը, կ'աւարտէ 1905-ին: Յետոյ կը յաճախէ Մարաշի Աստուածաբանական Ճեմարանը, ուրիշ շրջանաւարտիէ հտքը, կը մեկնի Ամերիկա, ուր կը մտնէ Գոլդրատոյի մէջ Տէնզիի համալսարանը եւ կը ստանայ փիլիսոփայութեան Դոկտորի աստիճանը: Մտաւոր կարողութիւններուն հետ ունէր նաեւ պերճախօս լեզու մը, ունէր ազգայնական գործունէութեան մեծ եռանդ, շուրջը ստեղծելով համակրութեան լայն շրջանակ: Շրջանաւարտած համալսարանին հրաւէրը մերժելով, ծառայելու համար կը դառնայ հայրենիք: Այնթապի Ադինական վարժարանին մէջ կարեւոր պաշտօն մը պիտի ստանձնէր, սակայն վրայ կը հասնի մեծ պատերազմը, աքսորը: Լուսաւորութեան այս զինուորը կը ճաշակէ բռնազաղթի բոլոր դառնութիւնները եւ 1917-ին, Տէր Զօրի մէջ կը նահատակուի խաչահան: 1908-ին, Օսմ. Սահմանադրութեան, անիկա այցելեց Զէյթուն իր հօր ծննդավայրը եւ Զէյթունի կեդրոնական վարժարանին մէջ բացուած լսարանի բեմէն քանի անգամներ Սահմանադրութեան, Ազատութեան, Հաւասարութեան, Յղբայրութեան սկզբունքներուն վրայ ըրաւ իր կրակ ու բոց բանախօսութիւնները:

● Զէյթունի մէջ չէկ մագերով եւ կապոյտ աչքերով հայեր կը գտնուէին բաւական թիւով: Ըստ Գր. Գալուստեանի եւ Տքթ. Յարութիւն Տ. Ղազարեանի կարծիքներուն, անոնք կիլիկիա եկած խա-

չակիրներէն են, որոնք չեն վերադարձած եւ մնացած են Զէյթուն:

● Կանչիի, Ֆունուզի, Հին Բերդուսի եւ Զէյթունի պէս հայաշատ կեդրոններ ցոյց կու տան Մարաշի շրջանակին մէջ բազմաթիւ հայերու գոյութիւնը: Մանաւանդ լեռնային շրջաններու մէջ պահուած դաւառաբարբառներն ալ ցոյց կու տան հայերու հին ծագումը այդ վայրերուն մէջ:

ՊԵՐԻՏ ՍԱՐԻՆ

Հայրենի սար, մեր թիկունքին դուռն հսկայ,
Արթուն պահակ մ'եղած էիր ճիգ դարեր.
Գու սառ, վընիտ աղբիւրներդ յարակայ,
Զիւնդ անբիծ մեզի էին կեանք տուեր:

Եղնիկներդ, սմբուլդ ու մուշկ, պայթարան,
Միսով, բոյրով, կախաւներդ երգերով
Ամբողջ դարեր ապրեցուցին, արդ չկան..
Բայց դուռ, Պերիտ, կը մնաս միշտ անվրդով:

Մեր պապերը, քու խորերու երկաթէն
Կըռեցին խոփ, քահ, սուր, գէմքեր, հրացան.
Հերկեցին դաշտ ու հովիտներ, որ ցանցն
Ցորեն, տնկեն պարտէզ, բերրի այգեստան:

Աջ թելիդ էր Խօթնեղբայր սարն, իսկ հեռուն
Վեհ Մասիսներն թեւ կու տային քեզ Պերիտ..
Արգէտսը, մօտ եղբայրդ, քու գլխուն
Պակաս չէին բուքն ու մրրիկն անժըպիտ:

Շատ հին եւ դուռն, տարիքդ ոչ ոք գիտէ
Աղամէն եւ Նոյէն առաջ դուռն կայիր
Ու հիմա ալ, կաս, կը մնաս, բարձր, վեհ,
Ու կը սպասես որդիներուդ տարագիր:

Դարեր ամբողջ մեր քաջ նախնիք կռուեցան,
Ազատ կեանքի եւ պատիւի ի խնդիր,
Ու ապրեցան հպարտ, անկախ քեզ նման
Պերիտ, որդիքդ այժմ էիւծին տարագիր:

ԷՕՄԷՐ ՓԱՇԱՅԻ ՍՊԱՆՈՒԻԼԸ

Էօմէր փաշան դեռ կ'աղօթէր երկար,
Երբ Խոյ Յակոբին հրացանէն հին,
Գնդակ մը թռած՝ կեանքին վերջ կու տար,
Ձէյթունցիք Յակոբն իշխան կարգեցին:

ԱԼԻ ՓԱՇԱՅԻՆ ՓԱԽՈՒՍՏԸ

Ալի փաշան է, Կուրիտին հասած,
Ձէյթունցիք իսկայն ոտքի են արդէն,
Մէկ մեծ գրոհով անոր կը յաղթեն,
Փախչելով փաշան կը մեռնի կաթուած:

ԳԱԼԷՆՏԷՐ ՓԱՇԱՅԻՆ ՀԱՇՏՈՒԻԼԸ

Գալէնտէր փաշան կ'արշաւէ Ձէյթուն
Տուրք հաւաքելու Սուլթանին անուան,
Հաց կը կարծէ մեր չամիչն ու ջուրն
Յետոյ իր գործով դիմէ հաշտութեան:

Ձէյթունցիք չի տար ոչ խարան ոչ հարկ
Ինչ ընէ փաշան, կը զոյջայ, արդէն
Կաթողիկոսին կը դիմէ, անարգ
Ու կը խնդրէ որ զինքն հաշտեցնեն:

ԹԷԺԻՐՑՈՑ ՕԳՆՈՒԹԵԱՆ ԿՆՐԹԱՆ

Խենթ տէրտէրն ելաւ կոխի ահեղ
Անգղեր, ագռաները կշտացան դիէ,
Սուսուֆ փաշան է, զոյջաց խելայեղ,
Ձէյթունցոց աղօթքն Աստուծոյ հետ է:

Սաղուպեանն ըսաւ. չե՞ս հանչնար զիս դուն,
Առիւծներ ունիմ ինծի ընկերներ,

Աչքերս արիւն կայ, մահն՝ ուրախութիւն,
Կռիւն հարսնիք է, դուն այդ չես գիտեր:

Իշխան Սուրէնեան կ'ըսէ -- Պատրաստ եմք
Կը հասնինք ձեզի շուտով օգնութեան
Ո՛վ թէմիքցիներ, մի վախճաք երբեք,
Սուսուֆին զօրքերն փախչիլ սկսան:

Կռիւր իմս է, դուք հանգիստ եղէք
Մեծ Նորաշխարհեան գոչեց անվեհեր
Ու իր քաջերով, որպէս թէ եղէզ
Ջարդեց թշնամին, քազում հարիւրներ:

Բայց Շորլոյեանը Սուսուֆ փաշային
Վրան խնդալով,-- խայտառակ եղար,
Կ'ըսէ, այժմ հանչեցա՞ր դուն մեր զէյթունցին,
Շատ կորանք ձեզի, անեղ աղուէս թշուառ::

ՎԷՅՍԻ ՓԱՇԱՆ ԿՆՐՇԱԻԷ ԶԷՅԹՈՒՆ

Մեծ փաշան Վէյսի, բանակով հսկայ,
Կը քալէ յօխորտ Ձէյթունի վրայ,
Հուրով ու սուրով աւերելու զայն,
Իր ջանքերը բայց կը դառնան ունայն:

Քաջ Պապիկ փաշան, անոր հազարին
Արժէք իսկ չի տար ու կ'ըսէ,-- Վալին
Հալէպի թէ գայ, մեզ քնաւ հոգ չէ..
Ասպարէզ ձեզի, տեսնենք քաջն ով է:

Վէյսին կը սպառնայ, երդումով յիմար,
Թէ իր ռումբերով գետնին հաւասար
Պիտ' ընէ Ձէյթունն լեռներովն հսկայ,
Քարի պիտ' ցանէ մեր հողին վրայ:

Երդումդ մի՛ մոռնար, դուն ամբարտաւան,
Կը կանչէ Պապիկ, ձեր դատաւորն ան
Ինչո՞ւ չես յիշեր, երբ օր մը դըրինք

Աղբի տռաքակը, ձեզ իբր նախատիմք:

Կը կատղի վէյսին, ու իր բերանէն
Կրակ է կ'ելլէ, փողեր կը փչեն
Գրոհ շեփոր, սակայն ապարդիւն
Մեր հող կը թրջէ թշնամի արիւն:

Վէյսին կը փախչի, նահանջ բանակի...
Մինչ Պապիկ փաշան Բիրթիւ կը հասնի
Իր ընկերներով, Բերթիգ ու Նէտիր
Ցեղը Պողոտուղան կ'ընէ ցամ ու ցիր:

ՎԵՐԱՊՐՈՒՄԻ ՊԱՀԵՐ ԵՒ ՈԳԵԿՈՉՈՒՄՆԵՐ 1895 — 96-ի ԶԷՅԹՈՒՆԻ ԿՌԻԻԸ

Հազար ութ հարիւր իննսուն հինգ էր,
Հոկտեմբեր ամիս, աշխարհը հայոց
Հուրի, սուրի մէջ, հայկական ջարդեր,
Մարաշի հայը կը ֆաշէր հոգոց:

Կարմիր գիւաղը Զէյթունի վրայ,
Հարիւր հազարի բանակ կը դրկէր,
Մուստաֆա Ռէմզի եւ ձիւհէտ փաշա
Դէպի Բերթիգ չայ ուղղութիւն առեր:

Պօզալայի թաղի ծերունին Հազար
Դէպի մութ ձորը ֆաշ վարդապետին
Նազարէթ իշխանն եւ հեծելագոր
Կը դրկէր փութով: Հոն է Աղասին:

Աւագանին է ժողովի նստաւ,
Ընդհուպ որոշեց կռիւն սկսի,
Ընկրկելու չէ գէյթունցին բնաւ,
Թուրքին խոնարհիլ, մեռնիլ է մեզի:

Ժողովէն յետոյ մարտիկ վեց հազար,
Եւ հարիւր յիսուն ֆաշ հեծելագոր
Զիւրուն նստած եւ արագաբար

Կը նետուին մարտի: Զի Տէրն է հըզօր:
Կը ֆալէ գօրքը, թուրքը գլխաւոր (պաշըպօզուգ)
ձիւհանի ափին, ահա գէյթունցին
Իր տղաներով կըռուի է ելեր:
Թուրքին թնդանօթն կը գոռայ ուժգին:

Կը կռուին այնտեղ Նազարէթ իշխան,
Շամֆէշիշ Փանոս, Մարկանեան Հանին,
Փանոս Զագըրեան, Խաչեր Քէփեան
Միխայիլեանն եւ ձեյլատ միասին:

Շատ թուրք գօրք կ'իյնայ, բախումն է ուժգին
Բայց հարիւր հազարն հատնելիք չունի,
Ահեղ կռիւ է, հայերն կը ֆաշուին,
Թշնամին արդէն ափն է ձահանի:

Ու մէկ օր յետոյ, մարտիկները հայ,
Թուրք գօրանոցին առջեւ են ահա,
Կը պաշարեն գայն ու կռիւ կ'ըլլայ
Կը յուսահատին զինուոր եւ սպայ::

Զագըրեան Աւագն էր իր հընարօվ,
Գրաւել տուաւ Ղըշլան թշնամի,
Մի նոր Ողիսես էր ան անվրդով
Աւագանիէն Պօզալայի թաղի:

Զօրանոցն ինկած, թշնամին նըկուն,
Պարտուած այլեւս, ան կը յանձնուի
Ընտանիքներով, զէնքով հայերուն,
Գերի բերուելով, տակն են արգելի:

Բարթուղիմէոսն է ան Ֆոնուզի
Աւետարանն ու Մաշտոցն իր ծոցին,
Կըռիւի մէջն է, խիզախ եւ արի,
Ցորդոր կը կարդայ, որ գարնեն, գարնուին:

Սպիտակաճի վարդապետն այս ֆաշ
Վեղարը գլխին, դուռն գօրանոցին
Իր սուրի տակէն, ձեռքը բռնած խաչ

Գերի կ'անցընէ պարտուած թշնամին:
Վեց հարիւր զինուոր, չորս հարիւր մարթին
Ու չորս թնդանօթ, հազար ռումբերով,
Բերուած են Զէյթուն եւ աւար անգին
Գերիները քայց, գոհ են, ապահով:

Պետութեան մը պէս հոգաց զէյթունցի
Սընունդը անոնց, ու ամէն պէտքեր
Մինչեւ այն ատեն, անոնք տակաւին
Երբ հանգիստ, խաղաղ, անվտանգ կեցեր:

Իրենց մեծերով, տղաքն յաղթական
Արշաւի ելան դէպ Զուգուր Հիսար,
Ենիքէ գալէ ու դէպի Կապան
Թուրք գիւղեր եղան գետնի հաւասար:

Ու դարձան անոնք Ֆռնուզէն Զէյթուն
Ահա Ռէմզին է, պատգամ կ'արտայ...
Յանձնուեցէ՛ք շուտ զէյթունցիք համբայն
Թէ ոչ կը չարդեմ ես ձեզ անխնայ:

Կրակի կու տամ ես Զէյթունը ձեր
Տեղը կը վարեմ, կը ցանեմ գարի,
Ձեր մեծ ու փոքրը, հարս ու աղջիկներ
Կը տանիմ Հալէպ, կ'ընեմ այլազգի:

Պատանիները ձեր, մեր հարէմներուն
Զարդերը կ'ըլլան, թուրքերուն կրփն
Կը մնան ձգուած, որպէս բուրջ ճկուն
Իսկ ձեր կտրիճներ կը չարդեմ կրկին:

Բայց զէյթունցիներ իշխան ու մարտիկ,
Վնռական շեշտով կը մերժեն Ռէմզին,
Կը հեզեն, ո՛՛շ, ո՛՛շ, կը կանչեն հերիք
Մեծ մեծ որոտաս, Տոմփիշտ վերջին:

Երկար կը տեւէ ռազմը տակաւին
Եզիտլէր, Սանտոխ, Էշէֆ Մէյտանի
Աթլիս եւ Ուզոր, Աւագ Կէտիկին

Ախտաղի ձորերն արին կը հոսի:
Քաջ Նորաշխարհեան իշխան Եղիա,
Այն ցուրտ ձմեռուան գիշերը մթին,
Ձիւնին, բուֆին մէջ, հետն յիսուն տղայ
Պերզինկա սարէն զարկաւ թշնամին:

Արիւնն հոսեցաւ վատ թշնամիին,
Ու ներկեց կարմիր կրկին ձոր ու դաշտ,
Շուարած մնաց մեծխօսիկ Ռէմզին
Ասոնց հետն ըսաւ, պէտք է ապրիլ հաշտ:

Ֆերիֆ փաշային կ'ըսէ զէյթունցի
- Դուք սուլթան ունիք, Աստուած է մեր յոյս,
Սուրբ Սարգիս մեզի, իր բազկով ուժգին
Օգնական կ'ըլլայ, կու տայ խրախոյս:

Քեզ պէս ֆերիֆներ եւ Ազիզ փաշա
Շատ ենք տեսեր մենք կ'ըսէ Շարվոյեան
Մեր խոր ձորերը թող ըլլան վկայ
Ինչպէս չէրքէզներ այնտեղ նիսեցան:

Ու դեռ կռիւը կը տեսէ ուժգին,
Մարտիկ եւ իշխան եւ աւագանի
Ամէնն իր կարգին գործի են կրկին,
Լուռ խորհուրդ ունին, վնիռ կռիւի:

Դաշտեր ու ձորեր, ձիւնն համատարած,
Ծածկեր է ամբողջ, երկինքն է մռայլ,
Թշնամի գորքեր, խիստ ցուրտէն սառած՝
Հագարով կ'իյնան առանց այլ եւ այլ:

Կ'իյնան դիտապաստ, թուրքեր անկենդան,
Հայ կընոջ կարօտն իրենց սրտերուն,
Բայց իրենց կիներն այրի կը մնան
Իրենց դիակն իսկ անոնցմէ հեռուն:

Իշխանք Սուրէնեան, Լեւոն Ծաղուպեան
- Մահըդ կը փնտռես դուն անխեղ փաշա,
Էօմէրն ու Թուրշիտ դեռ ձեզ դաս չեղա՞ն

Շուտ դարձիր, կ'ըսեն, բանակդ առ գնա:
Իսկ Նորաշխարհեան, իշխան Շորվոյեան,
- Հեռացիր, կ'ըսեն դուն մեր սահմանէն,
Վերջը վայ կ'ըլլայ, մեր Աւետարան
է մեզ ապաւեն, ով դու անօրէն:

Ծանր գիշեր է, քաջեր գէյթունցի
Զօրանոցէն ներս դեռ կը դիմադրեն,
Հսկայ բանակին փաշային Ռէմզի,
Բայց Ռէմզին կ'ըլլար պաշտօնանկ արդէն:

Այդ ծանր գիշերն, կրակի կու տան
Մեր տղաք շրջան ու կ'իջնեն տուններ
Նոր դիրք կը շինեն ինքնապաշտպանման
Ու երկու ամիս կռիւ անվեհեր:

Կարապետ աղա, Մեծն Սուրենեան,
Թորոք ու սաստով խրախոյս կու տայ,
Ընկրկողներուն, կ'ըսէ բարձրաձայն
Կռուեցէք տղաք, թող բամպակն ելլայ:

Ջերմուկի ամբողջ դաշտը ընդարձակ,
Մինչեւ Ախ Վախը, ու մինչեւ Զահուն
Վրան է լարեր թշնամի բանակ
Սաստիկ ճմեռ է ու ձիւն հոգեհան:

Պարոն Աղասի, Հրաչեայ, Ապահ,
Զօլագեան Փանոս ու Տէր Յակոբեան
Թէսմէքէր Փանոս, Մարկանեան Պապա
Քաջ քաջ կը կռուին, կրա՛կ կը գոռան:

Մունետիկները ուշ գիշերներուն
Ճամբաներն ելած, տխուր ձայն ձգեր,
- Հաւար, կը կանչեն, ամէն տեղ ու տուն,
Գնդակ կը տեղայ, շիկացած ումարեր:

Լէլէ Կարապետ ու Պերպէր Նազար
- Բանակը դարձաւ, դարձաւ կը գոչեն,
- Ոտէն բռնողը, պէտք էր որ երթար

Դէպի դիրքերը, մարտկոցներն ամէն:

Այի պէկն ահա, Զոնուզն անբրաց
Երսուն հազարով Սօլուզ Տէրէէն
Կուգայ Զաթոր Քոր, յոխորտ եւ ուռած,
Կը յառաջանայ յամր երերալէն:

Քերէր Տինէր է իր զօրքը հասեր,
Ռըմբաճիգ Փանոս, Շամբէշիշ հերոս
Ռումրը կ'արձակեն, ցիրուցան կ'ընեն
Այիէն խումբ մը փշրած հոս ու հոն:

Մեծն Անդրէասեան Ասատուր Աղան,
Սպառնալիքով կ'ըսէ.- Թշնամի՛
Քու զօրքն ու ումարեր, որքան ալ տեղան
Ռազմը, կռիւը հարսնիք է մեզի:

Էտիէմը Ֆերիք - Զէյթունի լեռներ
Ծառ մը չեմ ձգեր
Կ'ընեմ անապատ, ձեր մանուկ ու ծեր
Կը ջարդեմ, կ'այրեմ, ինծի չէ՞ք լսեր:

Կիւլվանըսեան ալ մեծ ազնուական,
Տեղդ հանգիստ կեցիր, Ֆերիք փաշա դուն,
Շատ առաջ կ'երթաս, կ'ըսէ, անպայման
Լքսէ խրատը իմաստուն մարդուն:

Ու Տէր Կարապետ երէցն իմաստուն,
Բանագնացով Էտիէմ փաշայի
Խորհուրդ ու խրատ կը դրկէ, շուտ տուն
Բանակըդ քաշէ ու գնա մէկդի:

Շատ մութ գիշեր մ'է չորս կամուրջներուն,
Պատնէշ են կանգնած, պահակ են դրեր,
Գամբռեր կը հաչեն, խուլ ու կողկողուն
Աղօթքի մէջ են կիներ, աղջիկներ:

Հարսներ, աղջիկներ նման փակփկասուն
Տիկնանց Վարդանաց, հսկումով, պահով,
Վրէժ կուրծքերուն, մոխիր գլուխնուն
Սեւ բուրձներ հագած սրտով անխռով,

Կ'ըսեն - Ո՛վ Ֆերիֆ, խելփոյ ապուրին
Դըզալ մի ձգեր, վերջը գէշ կ'ըլլայ,
Ձեր գերիները թող մեր տապարին
Տակը զոհ չերթան, իյնան ախնայ:

Ֆերիֆ փաշան է ցասումով ահեղ
- Թող տաս թնդանօթ համագարկ ընեն,
Ծուխն ու բոց պատեն, ըլլան հրեհողեղ
Ձէյթունի լեռներ ու դաշտեր ամեն:

Կարապետը, Տեօկէթ անվախ Մերկէնեան,
Աամըն Համ Արթին կռիւի մէջ են,
Իսկ մըխսի մանուկ-Հալուրը Պալեան
Ու Սարգիս աղան պաշար կը դրկեն.-

Հաց, մէջով ֆեօֆթէ, ընկոյզ ու պատտեղ
Ռուպ, չամիչ, վառօդ ռազմիկներուն ֆաջ
«Ու կ'ըսեն. տըղա՛ք զարկէք դուք ահեղ
Կրակ տեղացէք, զարկէք ձախ ու աջ:

Մըխալ ու Ֆոնուզ եւ արեգիւնցիֆ,
Ձէյթունույ կողփին կը կռուին ֆաջ ֆաջ,
Ձոյզ Քիւփէլեաններ, Տէնեանք ֆաջարիֆ
Անվրեպ զարկով կը ֆալեն առաջ:

Նորաշխարհեաններ Նշան, Եղիա,
Նազարէթ չաւուշ դիրքերուն վանփի,
Կը կենան պատրաստ, որպէսզի չըլլայ
Թշնամին վանքը մտնել յանդգմի:

Պօզպայիրցիներ, ռազմիկներ արի
Շորվոյեան Նեստոր Հագոր իշխանին
Թաղեցիֆ պինտ աչք, ֆաջավարժ մարտի
Կրակ կը տեղան, դուլ դադար չունին:

Բարթուղիմէոս, վեղարով հերոս,
Կ'երգէ Վարդանի երգը դարերուն,
Եւ «Նորահրաշն» անուշ ֆաղցրահոս
Արձագանգ կու տայ մինչեւ շատ հեռուն:

Թշնամին պարտուած, ամօթով, մկուն,
Հաշտութեան խնդրանք կ'ընէ Ձէյթունին,
Դեսպաններ օտար կը փութան Ձէյթուն,
Ու խաղաղ կեանքը կը սկսի կրկին:

Ֆերիֆ ու Միւշիւր, էտեւմն ու Բեմզին
Ցուսաբեկ եղած եւ ամօթահար,
Երդում կ'ընեն մեծ, իրենց սեղանին
Ձէթ, ճիթապտուղ⁶³ ուտել ալ չ'ըլլար:

Նահանջի փողեր, տխուր կը հնչեն,
Կը ֆաշուի բանակ, խուժան գլխաւեր,
Ու գերիներն հաշմ, պրծած տապարեն
Ծեր մամիկներուն ու հարսներուն մեր:

Կը ծաղկին նորէն արտ ու անդաստան,
Խաղաղ գործի են կտրիւնները մեր,
Մշակ ու այգւոր, կ'երգեն, կը ցնծան,
Ազատ ու անկախ կ'ապրին մանուկ, ծեր:

ԶԱՓԱՆ ՕՂԼՈՒՆ

Թուրքին զենքերուն անմիտ ժխորին
Ձէյթունցիք բնաւ արժէք չտուին,
Զափան Օղլուի զօրքը անխնայ
Զախմալըներէն դիտապաստ կ'իյնայ:

ԿՈԿԻՍՈՒՆԻ ԿՈՒԻԷԸ

Ձէյթունցի ֆաջեր Կոկիսոն մտան,

Թուրք դրօշակիրն էր իրենց յանդիման,
Իշխան Նաղուպեան առաւ ճիշդ նշան,
Դրօշակիրն ինկաւ ձիւն անկենդան,
Թշմամի ուժերն եղան ցիր ու ցան:

ՍԻՒԼԵՑՄԱՆ ՓԱՇԱ

Սիւլեյման փաշան Պայագիտ տռհմէն,
Կոուելով երբ որ չի հասկնար բան,
Կ'ըսէ. Ջէյթունցիք, ես ձեր բոլորէն
Ներում կը խնդրեմ, բողէք իմ նամբան:

Տինկլէյին աղալար տեսքան սեօյլէյիմ,
Պաշըմա կէլէնի իլան էյլէյիմ,
Գըրըլան ասփերին հայիֆինի ալայըմ
Օսմանլը գահրիմանը գօր Ֆերիք փաշա:

Իլիֆէ հագըսը գափ գարա օլտու
Օսմանլը ասփերի փրկիչէ տօլտու,
Սնտըֆի Ջէյթունցու պէլայի պուլտա,
Պէլայը պուլմատան տէօն Ֆերիք փաշա:

Ջէյթուն արսլանլարը գարշըտեա վարտը
Գարշըտեա գարշը տէօկիւշը գուտու
Պունա էսկի Ջէյթուն տէօլեր, երիմտէ գալըր,
Ալաման Ջէյթունը տէօն Ֆերիք փաշա:

Նիզպին օսմանը ասփեր թօփլանտը,
Նագլաշտը Ջէյթունա ալըրըմ սանտը
Մէվլանըն հիֆմէթի տերհալ եթիշտի
Հագգըն միւնիւզէսի կէօր Ֆերիք փաշա:

Օն իֆի թօփու գուտտան համանա
Ջէյթուն աղալարը չըգտը թամաշա,
Ջէյթուն արսլանլարը, պուրտա տուրուննա
Ալաման Ջէյթունը տէօն Ֆերիք փաշա:

Օնիֆի թօփ, օնիֆի իկիտէն աթըլեր,
Թօփուն տիւմանընտան այկիւն տուրուտու
Իւզպին կիւլլէ աթտըն, մուքա սաթըլտը
Աթտըլան կիւլլերեր էյ Ֆերիք փաշա:

Փաշա տիւքպին ելէ եերտէն պագարտը
Կէօնկլիւննէգ Ջէյթունու կէօֆտէն հագարտը
Թէմնի տէօրթ ֆիշի թէսլիմ սեօյլէտի
Ինանմա պուլլարա, տէօն Ֆերիք փաշա:

Զագըր օղու Պետրոս նէ փէք գաշանտը,
Գըշլանըն մալընը էվէ տաշըտը
Ասփերի կէօրիմնէ ագընը դալըրտը
Պէֆլէ էննամընը, տուք Ֆերիք փաշա:

Սանա տէտիմ սանա, էյ Ֆերիք փաշա,
Էօլիմին հագլաշտը, ալ պիր կիւն հաշա,
Պունա խօնա Ջէյթուն տերլի ետիմտէ գալըր
Ալաման Ջէյթունու տէօն Ֆերիք փաշա:

Ջէյթունըն իւսթիւնէ գօրլայուպ կէլմէ,
Բահա օլ եթիմտէ մուք եերէ էօլմէ,
Ջէյթունա հագլատըմ տէլու, դաչ օլուպ կիւլմէ,
Գըրըն տերէսիմէ վարմատըն տահա:

Ջէյթունուն էրաֆը թաշտէկիլ տէմիր,
Նէ գատար թօփ աթար սան ֆեր էրմէգ էմիր,
Պիգէ տէօկիւշ՝ դավղա, սայֆի պիր էօմիր
Աթստըգ գուրշումնը, տագմագ ֆերմանը:

Ջէյթունըն տէօկիւշի ունունտա օլուր,
Գըրըշան ասփերին եերիմտէ գալըր
Ագան չայլար կիպի գանլար տէօֆիլիթ
Ալաման Ջէյթունը սէն Ֆերիք փաշա:

Պունա Ջէյթուն տերլեր ֆէմսիյի տագմագ,
Օսմանլը տէօվլէթին աղգընա պագմագ
Գըրար ասփերին իչերի պըրագմագ

Այսման գէթունու տեօն Ծերիք փաշա:
Այլահ, այլահ տէյիմնէ խըտըր ուլուշտը,
Զէքիմնէ գըշըմը տիլին տօլաշտը,
Շիմտի ասէրիմնէ արսլան գարըշտը
Շաշան, կիլին ամանա:

Այլահ գուրմուշ պու Զէթունուն պինասը,
Ան գուրտ կիպի տալար հերպիրտանէսի
Մէվլամըն հիքմէթի անիտէ յէթիշիր
տուլմատըն մը սէն սապիլերին ֆիդանը:

Զէթուն եթէքսինտէ ետի իւշ քիշի,
Կիւրլէյուպ, օթուրու արսլանլար պաշը,
Նազարէթ Զապուշ պուլանմագ էշի,
Պունուն շահպաշլըշը կէօր Ծերիք փաշա:

Բերթիգ չայընտա տէօկիւշին գուրտու,
Պինտի գըր աթընա օրտույու փոզտու
Պարոն Աղասի տէ
.....

Ենիւտիւնեան Ծղիա պիր գօլա պաստը,
Այլահ, այլահ, տէյիմնէգ եիւզ ասէր քէտտի
Տահա պունուն կիպի նէշեսի աստը,
Մարթինի պրագան գուլատան գաշտը:

Մերկէն օղու հաճի գըշլատա օթուրտու,
Պէշիւիւզ եիկիտէ ազըլ եթիշտէրտի
Գըրտը օսմանլընըն քէօքնիւ պաթըրտը
Եագտը, չգտը օսմանլընըն իմանը:

Անդրէաս օղու տա տէրքի քիմսէյի տագմամ
Քէպիմ օլան օլա, աղընա պագմամ
Սէքիգ իւզ արսլանըմ վար, ասէր պրագմամ,
Արշ էտիպ տէ գրար կէշերիմ:

ՄԱՍՆԱԿԻ ԴԵՊՔԵՐ

Զէյթունցի Պատուելի (վարժապետ) Սարգիս, որ յետոյ եղած է Դաւիթ Վարդապետ:

Էօքսիւզեան Յովհաննէս Եպս. զէյթունցի Վարդիվար Տարագճեանի որդեգիրը, Առաքելի որդի՝ Տղայ Սարգիսը Զէյթուն բերել կու տայ, որպէս գործիչ: Անանիա Առաքելի տօնին, Պատուելի Սարգիս խուռն բազմութեան մը առջեւ սրտառուչ, ոգեւորիչ քարոզ մը կը խօսի: Բոլորը կը խանդավառուին եւ գոհ կը մնան եւ զինքը ուսուցչութեան կը հրաւիրեն Զէյթունի վարժարանին, որ բացուած էր առաջին անգամ Գառնեցի Յովհաննէս Վարդապետի նախաձեռնութեամբ: Իսկ Յովհ. Եպս. Էօքսիւզեան շատ հաւանելով անոր պերճախօսութիւնը, հակառակ հայ եկեղեցւոյ օրէնքին, ըստ որում կաղ մը, կամ մարմնական որեւէ պակասութիւն ունեցող մը չի կրնար կրօնական ըլլալ, Պատուելի Սարգիս կաղ ըլլալով հանդերձ, Էօքսիւզեան Եպս. այդ մեղքն եւ օրինազանցութեան պատասխանատուութիւնը իր վրայ առնելով, Սարգիսը Վարդապետ կը ձեռնադրէ եւ կը կոչէ Դաւիթ Վարդապետ: Նորընծայ Դաւիթ Վրդ. իր առաջին քարոզը կու տայ Ս. Լուսաւորիչ եկեղեցիին մէջ «Բոլունք յափշտակին արքայութիւն երկնից» բնարանով: Իր խօսքերով կը խրախուսէ զէյթունցիները եւ կ'ըսէ. «Հայրենակիցներ, քաջերն են որ պիտի ժառանգեն երկնից արքայութիւնը եթէ պաշտպանէք կրօնք, ազգութիւն, հայրենիք, ապահով եղէք որ Աստուծոյ արքայութիւնը ձերը պիտի ըլլայ: Իսկ եթէ դասալիք ըլլաք, թշնամին, անհաւատը կուգայ ոտնակոխ կ'ընէ մեր հայրենիքը, կը քանդէ, կը կործանէ մեր եկեղեցիները, կը ջնջէ մեր կրօնն ու ազգութիւնը»: Պատմութենէն օրինակներ, զէպքեր մէջ կը բերէ թէ՛ ազգ մը պահպանող գլխաւոր միջոցներէն մէկն ալ զէնքն է, ոյժն է: Ուրեմն տէր եղէք ձեր զէնքերուն կ'ըսէ ան: Եւ կը շարունակէ իր խօսքը աւելցնելով թէ՛ «Մի կասկածիք որ ձեր կրօնքը, ձեր ազգութիւնը անարգող, ձեզ սպաննել սպառնացող մէկը եթէ սպաննէք դժոխք կ'երթաք. բնաւ երբեք: Թշնամին ձեզ նախատելով, նախաձեռն կ'ըլլայ Աստուծոյ պատուէրները եւ ինքն նոյնիսկ Արարիչը: Ուրեմն ձեր կրօնքը, ազգը, հայրենիքը եւ Արարիչը սպաննողներ սպաննելը մեղք չունի: Եթէ կողոպտել ուզեցին ձեզ, դուք կողոպտեցէք զիրենք, երբ փորձին ձեզ սպաննել, դուք սպաննեցէք զիրենք»: Դաւիթ Վրդ. կը դառնայ տեսակ մը ազգային, կրօնական գործիչ եւ ամէն շաբաթ Զէյթունի մէկ եկեղեցին կը քարոզէ մեծ բազմութեան:

Յետոյ կը սկսի ելլել Ձէյթունի չրջակայ հայ գիւղերը եւ կը քարոզէ: Կ'երթայ մինչեւ իսկ ուրիշ քաղաքներ: Յոգնիլ չէր գիտեր ան Ձէյթունի Ս. Աստուածածնայ վանքը մէկ քանի տարի մնալէ յետոյ, տասնեակ տարիներ կը պտըտի ան Կիլիկիոյ քաղաքները՝ Փայաս, Պէյլան, Անտիոք, Սուէտիա, Քիլիս, Այնթապ, Ուրֆա, կու գայ Հալէպ, ի վերջոյ Սեբաստիոյ կարգ մը շրջանները եւ կը քարոզէ, կ'ոգեւորէ հայութիւնը:

Հալէպցի յայտնի քահանայ մը Դաւիթ Վարդապետի մասին հետեւեալը պատմած է իր ժամանակին մեր հայրենակիցներէն մէկուն. Ձէյթունցի Դաւիթ Վարդապետ Հալէպ կու գայ, Հալէպի հայոց Առաջնորդ Ուրֆացի Յակոբ Եպիսկոպոսի արտօնութեամբ եւ Քառասնից Մանկանց եկեղեցիին մէջ կը քարոզէ եւ կ'ըսէ. «Նախ ձեզ եւ մեզ մեծ աւետիս, Քրիստոս յարեաւ ի մեռելոց: Հազար ութ հարիւր աւելի տարիներէ ի վեր ամբողջ քրիստոնեայ ազգերը քրիստոսի յորութեան տօն կը կատարեն: Բայց ձեզի եւ մեզի ինչ: Քրիստոս Աստուծոյ զօրութիւնով յարութիւն առաւ: Մենք հայերս, հինգ հարիւր եւ աւելի տարիներէ ի վեր կը քնանանք Յովնանու քունը, որպէս կենդանի մեռեալներ: Մենք ե՛րբ յարութիւն պիտի առնենք: Մեր բազկի ոյժով յարութիւն պիտի առնենք մենք: Եւ Քրիստոս պիտի ուրախանայ երբ տեսնէ թէ՛ մենք յարութիւն առնը ենք»: Այս քով եւ հայրենասէր եկեղեցականը կը վախճանի 1876-ին Սեբաստիոյ Վէզիր Քէօփրիւ գիւղաքաղաքին մէջ եւ կը թաղուի նոյն Վէզիր Քէօփրիւի եկեղեցիին մէջ, 47 տարեկան հասակին մէջ: Օրհնեալ ըլլայ անոր յիշատակը եւ անունը մնայ անմահ մեր նոր սերունդին մէջ:

Կեսարիոյ Ս. Կարապետ Վանքը Գացող Ձէյթունցի Ուխտաւորներու Մէկ Դէպքը

Անգամ մը տասնըհինգ հայրենակից զէյթունցիներ Կեսարիոյ Ս. Կարապետի վանքը ուխտի գացած էին: Թուրք կառավարութիւնը իրենցմէ խարած (գլխահարկ) կը պահանջէ: Ուխտաւորները կը մերժեն վճարել, առարկելով թէ Սուլթան Մուրատէն Ֆէրման ունին եւ անով տուրքէ զերծ են: Կառավարութիւնը սակայն լսել չ'ուզեր անոնց պատճառաբանութիւնները ըսելով թէ՛ հոս Ձէյթուն չէ, դուք հոն եղաւ էք. բայց հոս պարտաւոր էք տուրք տալ եւ կը գանձէ անոնցմէ իւրաքանչիւրէն 60-ական փարա: Շէյթան Ձէքիշեան Մըլլի Եփրեմ Աղան, Աստուած ողորմած է կ'ըսէ. մենք եթէ մեր այդ տուածին կրկինը չկրնանք առնել, մեր զէյթունցի ըլլալը թող հարած ըլլայ մեզի: Կեսարիոյ կառավարիչը այս խօսքերէն նախատուած կը

զգայ ինքզինքը եւ թուրք կառավարութիւնը եւ բանտարկել կու տայ գանձեք: Անոնցմէ Եղիա Աղա Խուլմունեան դուրս կը մնայ ու հիւր կ'ըլլայ կեսարացի բարեսիրտ հայու մը տունը: Եղիա Աղա կը նայի այդ տան մէջի հարստութեան, գոյքերուն, գորգերուն եւ կը հիանայ: Բարեսիրտ կեսարացի հայը կը հասկնայ Եղիայի հիացումը: Քիչ մը կը մտածէ եւ կ'ըսէ. «Գիտեմ կը զարմանաս մեր հարստութեան վրայ: Սակայն ասոնք բոլորը մեզի պիղծ-հարամ են: Ասոնք բոլորը, նոյնիսկ մեր պատիւը, միշտ վտանգի տակ են. մէկ օրէն միւսը կրնան մեր ձեռքէն ելլել: Մեր հարսնիքներն անգամ գիշերը, գաղտնի կը կատարենք: Ձեր աղքատութիւնը հազար անգամ նախամեծար է մեզի համար, քան մեր այս հարստութիւնը: Դուք ազատ էք ձեր քաղաքին մէջ: Մեր ննջեցեալներն անգամ 1895-էն մինչեւ 1898, մինչեւ Սուլթան Մահմուտ Բ-ի ժամանակ կը թաղուէին նախատինքով, Շէյխ Իւլ Իսլամի կողմէ հրատարակուած դարչեթի ֆէթվայով, զոր տեղւոյն միւլֆին կը հաղորդէր մեր քահանային: Յարութիւն Ամիրա Պէյ-ճեանի միջոցով Սուլթան Մահմուտ Բ. այդ ֆէթվան ջնջել հրամայեց 1898-ին: Սակայն մինչեւ հիմա ալ թուրքեր կը շարունակեն ծաղրել, անարգել մեր մեռելները, հայհոյել մեզի, քարկոծել մեր քահանաները քէ՛ճի քէ՛ճի կանչելով: մեր մեռելները կը կոչեն «կեափուր կէպէրի-կի»:

Այդ հայը ի վերջոյ կ'ազատէ ուխտաւորները եւ անոնք ճամբայ կ'ելլեն դէպի Ձէյթուն: Կեսարիայէն դուրս ելլելուն, կը հանդիպին 50-ի մօտ թուրք խումբի մը, որոնք քաղաք կու գան: Իրենց 60 փարանոց ստացազիրները անոնց կու տան եւ կ'ըսեն որ մենք թուրքերէն կարդալ չենք գիտեր, դուք առէք կարդացէք: Անոնցմէ այդ թուղթերուն փոխարէն ամէն մէկէն 120 փարա կը պահանջեն: Ձեր կառավարութիւնը ձեզի պիտի վճարէ: Անոնք սակայն իրենց ունեցած դրամով զարի գնած էին եւ վրանին դրամ չունէին: Ուխտաւոր զէյթունցիք երբ կը տեսնեն որ իրաւ դրամ չունին, անոնցմէ զեղեցիկ մէկ ջորին իր զարիի բեռովը կ'առնեն Ձէյթուն կը բերեն եւ 20 Օսմ. հնչիւն ոսկիի կը ծախեն անուրդով: Այդ դրամը 15 հոգին իրենց մէջ կը բաժնեն: Ատկէ յետոյ ուխտի գացող զէյթունցիներէ Կեսարիոյ կառավարութիւնը ոչ տուրք կը պահանջէ եւ ոչ ալ անցազիր կը հարցնէ: Թուրք կարաւանը կ'երթայ այդ թուղթերը կը ներկայացնէ կառավարութեան եւ կառավարութիւնը կը վճարէ անոնց վնասը:

Երկար ատեն Կեսարիոյ թուրքերը կ'ըսէին. «Այս կեափուրներուն հետ քիչ մը ետվալ-մեղմ վարուելու է, քանի որ մեր գործը միշտ Հալէպի հետ է եւ Հալէպի ճամբան Ձէյթունի մօտերէն կ'անցնի»:

Ուրիշ անգամ մը, գէթունցի ջորեպան մը՝ Քիթիշեան Իսէփ (Յովսէփ) Այնթապ գաղափ էր եւ ջորիին օճառ բեռցուցած Ջէյթուն զառնալու ատեն, Կեալուր Մէյսանը կողուած տեղը (Այնթապի մէկ հրապարակը) չորս թուրք ոստիկաններ կ'ուզեն Իսէփը իր ջորիով (սուխրա) տարապարհակ Հալէպ ղրկել, կառավարութեան կարգ մը իրեղէնները փոխադրելու համար: Իսէփ կ'ըսէ որ ընտանիքի եւ զաւակներու տէր մարդ է ինքը: Մինչեւ Հալէպ երթալ գալը ամիս մը կը տեւէ եւ ինք շատ պիտի վնասուի: Ոստիկանները ականջ չեն դնել, այստեղ Ջէյթուն չէ կ'ըսեն եւ կը ստիպեն որ կառավարութեան հրամանին հնազանդի: Իսէփ կը տեսնէ որ ճարը չկայ, կը հանէ իր փալա դանակը եւ «էր երկիտէ տար եէր օլմազ» արի մարդուն նեղ տեղ չ'ըլլար» բռնելով, ալ խոշոր փալաքին ետեւի կողմով ոստիկաններուն գլխուն կ'իջեցնէ: Անոնց չորսն ալ գետին կ'իյնան ուշակորոյս: Եւ Իսէփ ջորին առջեւ ձգած քաղաքէն կը մեկնի: Ոչ մէկ թուրք կը համարձակի միջամտել եւ Իսէփը բռնել: Քիչ յետոյ զինուորները թէ-եւ ուշքի կու գան, սակայն Իսէփ հեռացած էր, կը սկսին փրնառել: Չեն կրնար հասնիլ անոր: Կ'երթան լուր կու տան կառավարութեան: Գալմագամը ձիաւոր զօրքեր կը ղրկէ Իսէփին ետեւը: Կը հասնին, կը բռնեն Սամ Բէօփ մօտը կը դարձնեն Այնթապ: Գալմագամը կը կանչէ գատին, միւֆթին, թուրք եւ հայ երեւելիները: Կանչել կու տայ ծեծ կերած ոստիկանները եւ Իսէփը — Դո՛ւն ծեծեցիր այս ոստիկանները, կը հարցնէ գալմագամը Իսէփին: «Չէ ես չէի ծեծողը, կը պատասխանէ Իսէփ, մէջքիս փալան էր: Գալմագամը եւ ժողովականներ կը խնդան: Գալմագամը կրկին կը հարցնէ:— Իրենք իրենց գասաթուրայով չ'փոխադարձեցին, չ'զարկին քեզի: Այս մէկ հարուածով զիրենք չ'ըրախ հանցի, կ'ըսէ Իսէփ, ինչպէ՞ս կրնային դիմադրել Եթէ դիմադրէին, այս անգամ դանակին բերնովը պիտի զարնէի եւ այլեւս իրենց մեռած օրը պիտի ըլլար»: Ու երբ գալմագամը կը հարցնէ թէ՛ ինչո՞ւ առաջին անգամ սուր բերնովը չ'զարկիր, — Մենք կոխի ատեն, կ'ըսէ Իսէփ, դանակին բերնովը զարնելը քաջ մարդու գործ չենք նկատել, այլ երկչոտութիւն: Գալմագամը ափէրիմ գէթունցի հայ կ'ըսէ եւ անոր ոսկի մըն ալ նուէր տալով կը թողու, երթաւ բարի կ'ըսէ: Իսկ ոստիկաններուն հագուստը հանել տալով պաշտօնանկ կ'ընէ զիրենք: Գալմագամը Սատրգ Էֆէնտի կը կոչուէր: Իսէփի այս «էր երկիտէ տար եէր օլմազ» խօսքը երկար ատեն կը խօսուէր:

Օր մըն ալ դարաթուրքի չորս թուրք աւագակներ, Ջէյթունէն Եարփուզ տանող ճամբան դէմը կ'ելլեն ջորեպան կտրիճ խղղղթ

վանէսին եւ «Բէյսլիմ օյ» կ'ըսեն: Մըղսը վանէս, քաջ նշանառու, իր հրացանին մէկ գնդակովը անոնց մէկուն գլխէն քիւլահը կը թոցնէ եւ կ'ըսէ. «Ինծի խղղղթթին Քէլը կ'ըսեն»: Չորս աւագակները սրտապատառ կը փախչին:

Շորվոյեան Թաղէն Մալախենց Փանոս Աղան, օր մը Պէրիտ լեռը կ'երթար, երկաթի հանքի մէջ աշխատող իր բանուորներուն այցելելու համար: Անոնց կը տանէր պաշար, չամիչ, պաստեղ, շարոց: Չափտարի կիրճը դէմը երեք աւագակներ կ'ելլեն, ճամբան կը բռնեն որ յանձնելի եւ կողոպտեն զինքը: Փանոս Աղա, ձիէն իջնելով, ջորիներուն վրայէն վար կ'իջեցնէ ուտելիքները եւ անոնց առջեւը բանալով պատեղը եւ միւս ուտելիքները:— Հրամեցէք, կ'ըսէ, բախտը ձերն է եղեր, կերէք: Աւագակները կը նստին, ինքն ալ հետերնին, կ'ուտեն, կը զուարճանան: Աւագակները կը գովեն Փանոս Աղային խաշմուխներ, որ առանց ընդդիմութեան անձնատուր եղաւ: Մըղսը Փանոս կը սկսի Բէօթօղլուի հեքիաթը պատմել անոնց եւ կը պատուիրէ որ իրենք ուտեն եւ քէֆերնուն նային: Մէջէ մէջ խաղեր ալ կը կանչէր Փանոս Աղա: Աւագակները միամտօրէն ափէրիմ չորպաճի կ'ըսէին: Սակայն Մըղսը Փանոս յարմար վայրկեանին կը սպասէր անոնց դասը տալու համար: Մըղսըն ինքզինքը լաւ մը կ'ընելով, իր բազուկներով, յանկարծ այնպէս ոյժով երկու աւագակներուն ճակատները իրարու կը զարնէ եւ զանոնք ուժաթափ կը ձգէ: Մինչ երրորդը կը փորձէր փախչիլ, Փանոս Աղա իր տապանչայի մէկ գնդակով անշունչ գետին կը տապալէ, եւ տեղն ի տեղը սպաննելէ յետոյ գայն, ուշաթափ եղող երկուքը սատկեցնելու աստիճան կը ծեծէ: «Աման չորպաճի» ըսելով կ'աղաչեն որ խնայէ իրենց: Հիմա կարգը կողոպտելուն, Մըղսը Փանոսին է: Ինչ կը գտնէ անոնց վրայ, կը կողոպտէ, թէ-եւ չ'ըսպաններ, սակայն երկուքին մէյ մէկ ականջները կը կտրէ եւ կ'ըսէ որ երթան իրենց գիւղը եւ պատմեն եղածը, որպէսզի ուրիշներ ալ անկէ յետոյ գէթունցի կողոպտելու փորձեր չ'ընեն, ինծի Մալախօղլու Փանոս Աղա կ'ըսեն, գացէք եւ պատմեցէք: Փանոս Աղան կ'առնէ անոնց գէնքերը, հագուստը, կը բեռնէ իր ձիուն վրայ եւ ջորիները առջեւը ձգած կը շարունակէ իր ճամբան: Այդ ատեն Փանոս Աղա 60 տարեկան թէեւ, սակայն առողջ եւ ուժեղ էր տակաին, մօրուքին մէջ ոչ մէկ ճերմակ թել մազ չ'ուներ կը պատմէին զինքը ճանչցող մեր հայրերը: Անիկա մասնակցած է 1862-ի Աղի Փաշայի պատերազմին եւ մեռած է Յի տարեկանին: Մենք կը ճաննայինք իր տղաներէն Գուգուրը, որ մեր մանուկ եղած ատենը,

ան արդէն յիսուսը անցած մարդ մըն էր եւ կը զբաղէր էշ, ջորի եւ ուրիշ կենդանիներու առ ու ծախով կը հասկնար նաեւ կենդանիներու հիւանդութիւններէն եւ կը դարմանէր ճիստովը եղած, ոտքը բռնու դպած կամ ուրիշ հիւանդութիւններէ բռնուած կենդանիները:

1840-ին, Պօզպայիր թաղի Ս. Յովհաննէս եկեղեցիի քահանաներէն Շամբէշիշեան Տ. Մարգար, Զէյթունէն հիւսիս՝ Եարփուզ-Արքուս գացած կ'ըլլայ Այդ օրերուն, կը պատահի որ տեղւոյն թուրք հաճախներուն մէկուն հարսնիքը տեղի կ'ունենայ եւ Տ. Մարգար ալ որպէս պատուական հիւր հարսնիքին կը հրաւիրուի: Ահագին բազմութեան մը ներկայութեան տեղի կ'ունենայ նաեւ ըմբշամարտութիւն: Տէր Հայրը մեծ հաճախներուն քովը նստած.՝ Աղաներ կ'ըսէ, եթէ ամօթ չէք համարեր, ես ալ կ'ուզեմ ըմբշամարտին մասնակցիլ: Աղաները սիրով կ'ընդունին անոր առաջարկը, զբաղութիւնը, կ'ըսեն, միշտ ալ յարգելու է: Եւ կ'առաջարկեն Տէր Մարգարին, որ իւղով օծուած կաշիէ հագուստը հագնի, ինչ որ ըմբիշներուն յատուկ է եւ իր ապան հանէ: Տէր Հայրը առանց իր վրայի հագուստը հանելու համբաւաւոր փեհլիվան Զօրալիին Օղլու Մէհմէմէտին դէմը կ'ելլէ: Մէհմէմէտ հագած իր կաշիէ լաթերը, կը մօտենայ տէրտէրին եւ ծափ զարնելով, Քէշիշ էֆէնտի, կ'ըսէ, պտրտէ նայիմ: Տէր Հայրը.՝ տօլան տօլան կէլ եանըմա կ'ըսէ: Թուրք ըմբիշը հագիւ թէ կը մօտենայ իրեն, տէրտէրը.՝ Եա սուրը Փրկիշ ըսելով Մէհմէմէտին ոտքէն բռնելուն պէս կրպակներուն տանիքէն վեր կը նետէ: Թուրք հանդիսականները ամէն կողմէ եաշա եաշա՝ կեցցես կը պոռան: Հարսնիքին տէրը 20 օսմ. ոսկինոց բահվան ձի մը եւ ձեռք մըն ալ նոր զգեստ կը նուրէրէ: Մերեր Զէյթունի մէջ կը պատմէին թէ այս քահանան Շուղուր գետի 35 մեթր բարձր կամուրջի վերաշինութեան ատեն, գերանի մը վրայէն, առանձինն, հողաթափով կամուրջին մէկ կողմէն միւսը անցեր է: Տէր Մարգար վախճանած է 111 տարեկան հասակին մէջ:

1845-ին է. գէթունցի թաշնը Օղլը Մըղըսը Ադոմը, Մէաթիւս Օդլու Մըղըսը Գէօհլուրգը, դատէմ Սարգէս եւ դարավասլինց Վակիմը չորսը միասին իրենց ջորիներով, ձմեռ եղանակին Ատանաքի Զուգուր-Օվա (խորանիստ դաշտը) կ'երթան առեւտուրի համար: Զուգուր Օվան, որ կ'իլիկիտոյ դաշտային մասին մէջ կ'իյնայ, Զէյթունէն հին գնացքով չորս օրուան ճամբայ է: Զէյթունէն ելլելով, երկրորդ օրը կը հասնին եւ կ'իջեւանին Հովսոս լեռան վերջաւորութեան, թէճիւրլի վրանա-

քանկներուն էյօղլուի թիւրքմէն Տէրէ Պէյ Գարամուհամմէտ Օղլու Ռուստէմ Աղային օպան: Ռուստէմ Աղան թէեւ հոն չըլլար այդ օրերը, սակայն Աղային խաթունը կը հիւրասիրէ զիրենք իրենց վրանին մէջ: Մեր գէթունցիները այնտեղ արդէն կը լրացնեն իրենց առեւտուրը եւ պիտի վերադառնան Զէյթուն: Կը բեռցնեն ջորիները եւ կ'երթան Աղային խաթունին շնորհակալութիւն յայտնելու եւ մնաս բարով ըսելու: Մէկ ալ եղէգէ հիւղին մէջ, զինուած տասը անծանօթ թիւրքմէններ կը նշմարեն: Ռուստէմ Աղային խաթունը կը հասկնայ անոնց նպատակը եւ գէթունցիներուն կ'ըսէ թէ՝ ասոնք աւազակներ են, հասկցեր են ձեր գէթունցի եղած ըլլալը եւ եկեր են ձեզ կողոպտելու, միտքերնին ձեր մէկուն զոր ջորին առնելն է: Այդ ժամանակները այդ ջորին 12 օսմ. հնչիւն ոսկի կ'արժէր եւ ես խաբեցի զիրենք եւ ըսի թէ ասոնք գէթունցի չեն, հաճընցիներ են: Մեր չորս գէթունցիները կը նեղուին եւ ամէնքը մէկէն եւ բարձր ձայնով կ'ըսեն որ չորր դաթըրը տա կէտէր սէ գէթունցուրդ՝ զոր ջորին ալ երթայ, մենք գէթունցու օղլու գէթունցի ենք: Եւ խաթունին առջը կերպով մը կ'իմացնեն թէ մեզ ազատելու համար մեր ինքնութիւնը պահել չենք ընդունիր եւ կ'աւելցնեն ըսելով թէ «Այլընը ինքեար էտէտ հարամգատէ տիր», այսինքն իր ինքնութիւնը ուրացողը վատ է եւ պիղծ: Կը դառնան յետոյ այդ տասը աւազակներուն եւ կը հարցնեն թէ ի՞նչ իրաւունքով մեր ճերմակ ջորին առնել կ'ուզէք: Աւազակները կը պատասխանեն թէ անցած տարի մենք եայլա (զովոց) լոնները ելլելու ժամանակ գէթունցու Ղորանֆիլ Օղլու Քէօսէ Փանոս (Ղորանֆիլինց Քէօսէն, Յովհ. Վարդապետի հայրը) մեր 20 ոսկի արծող ուղտը, Հայթա Ղորան կողուած տեղը, բռնի կերպով առաւ տալա: Դուք ո՞ր օպայէն էք կը հարցնեն գէթունցիք, որոնց այդ աւազակները կը պատասխանեն թէ «Մենք Գուրտ (գայլեր) օպայէն ենք»: Շատ բարի, կ'ըսեն գէթունցիները, մենք ալ սակայն ասլաններու գիւղէն ենք, ինչպէ՞ս գայլերը պիտի համարձակին առիւծներու դէմ կռուիլ: Միայն թէ որպէսզի Ռուստէմ Աղային խաթունին արժանապատուութեան վիրաւորական չըլլայ, այստեղէն հեռանանք, վաղը ճամբայ կ'ելլենք, հրամեցէք, ճամբան մեր դէմը ելլել, կողոպտել եւ ջորին ալ ձեզի հէլալ ըլլայ: Թիւրքմէն աւազակները նայելով գէթունցիներու կեցուածքին, եւ խօսքերուն. «Ենամուրներ, ձեր աչքերէն շէր-չարիք կը հոսի, մենք հրաժարեցանք մեր մտադրութենէն: Երթաք բարի» կ'ըսեն:

Զէյթունցիք հետեւեալ օրը ճամբայ կ'ելլեն, հագիւ թէ Ռուստէմ Աղայի օպայէն վեց ժամ հեռացած էին, այդ տասը աւազակները այս անգամ աւելի զինուած եւ ձիերու վրայ նստած, դաշտի մը մէջ ա-

նոնց առջեւ կ'ելլեն, որ ճամբան կտրեն: Հկեալուրներ, կ'ըսեն աւազակները գէյթունցիներուն, երէկ խաթունին քով մեծ մեծ կը ջարդէիք, հոս, հիմա Աստուծոյ լալն տեղը, եւ մարդուն նեղ տեղը, չուտ կողոպտուեցէք, ինչ որ ունիք մեզի յանձնեցէք ջորիներով մէկ տեղ: Շատ աղէկ, կ'ըսեն գէյթունցիք, սպասեցէք, խոզի կաշի, մեր բեռները վար առնենք, որովհետեւ դուք միւսլիման էք եւ անոնք ձեզի պիղծ են, այդ բեռները քակենք որ ջորիները ձեզի յանձնենք: Շատ լաւ կ'ըսեն աւազակները եւ կը սպասեն որ անոնք խոզի կաշի բեռները քակեն եւ ջորիները իրենց յանձնեն: Զէյթունցիք կաշիները քակելուն պէս, իրարու վրայ կը դիզեն եւ անմիջապէս դիւր կը բռնեն այդ թանձր կաշիներուն ետեւը: Ու կը սկսին կրակ բանալ իրենց հրացաններով: Թիւրքմէն աւազակներուն ութը տեղւոյն վրայ կը սպաննուին իսկ երկուքը վիրաւոր՝ կը փախչին: Միայն թէ գէյթունցիներէն Ղարափասլենց Վակիմին մէկ աչքը կը վիրաւորուի աւազակներու գնդակէն: Թէեւ կ'առողջանայ վերջէն, սակայն այդ աչքը չի տեսներ: Զէյթունցիք այդ աւազակներուն տասը ձիերը եւ գէնքերը առած Զէյթուն կը դառնան: Այն խօսքը թէ չղրղաթորն կիտէրսէ գէյթունցի ողջ գէյթունցի ողջ ընդհանրացած է եւ Հաստ շատ տեղեր:

1844-ին, Քիլիսի մէջ, կիւրինցի Սէֆէր անուն հայ մը կը թրքանայ, Թորոս անուն տղան՝ Թօլօ, իսկ Յակոբն ալ Ակօ կ'անուանեն թուրքերը: Սէֆէր նայիպ (դատաւոր) իր պաշտօնին կարգելէ յետոյ կառավարութիւնը, զինքն ալ կ'ամուսնացնէ Փաթմա անուն թուրք աղջկայ մը հետ: Այս դէպքը Քիլիսի հայ աղաներէն Պայրամեան եւ Միւսահեան, նամակով մը կ'իմացնեն Զէյթուն, Զէյթունի Առաջնորդ Տէր Սարգիս Եպս. Խանդօրեանի եւ կը խնդրեն որ հինգ Հոգինոց այս ընտանիքը ազատեն: Խանդօրեան Եպս. եւ չորս իշխանները Զէյթունի, Տէյի Քէշիշ Տէր Օհան եւ Մահմետի Պալճեան հալորը, իսկոյն ժողով կ'ընեն եւ կ'որոշեն որ այդ հաւատուրացները Զէյթուն բերեն: Տասը գէյթունցի կտրիճներ, քսան ջորիներով, երկաթ եւ պաշտ բեռնուցած Քիլիս կը դրկուին: Անոնք պայտը եւ երկաթը կը ծախեն, դրամը կ'առնեն, պանդոկի հաշիւները կը մաքրեն եւ Քիլիսէն ճամբայ կ'ելլեն, այնպէս ձեւացնելով թէ կը մեկնին, մինչդեռ քաղաք երաւ առնեն լաւ մը կը սորվին Սէֆէրին տունը, պատը եւ ալ պարագաները: Կէս գիշերին, երբ քաղաքը խոր քունի մէջ է, կը դառնան անոնք, կու գան Սէֆէրի տան պատը կ'ելլեն իրարու վրայ բարձրանալով եւ դուրսը մնացողներն ալ սանդուխով մը ներս առ-

նելով: Կը մօտենան տան դրան եւ թրքերէն լեզուով. - Հրդեհ կայ, չուտ դուրս ելէք, կ'ըսեն, մենք ձեզ ազատելու եկեր ենք: Դուռը կը բանան, ճրագ կը վառեն, Փաթման կը տեսնէ որ անոնք զինուած կեալուրներ են, կը փորձէ պողալ: Իսկոյն լաթով մը բերանը կը գոցեն եւ կը սպառնան սպաննել զինքը եթէ ձայն հանէ: Փաթման եւ մնացած հինգ Հոգինոց ընտանիքը անմիջապէս, առանց ձայն ձուլն հանել տալու, իրենց կահկարասիներով միասին ջորիներուն վրայ դրած Քիլիսէն դուրս կը հանեն եւ առանց Այնթապ եւ Մարաշ հանդիպելու, փախստական ճամբաներով Զէյթուն կը հասցնեն: Այսպէս, տասներհինգ օրէն այդ ընտանիքը ողջ առողջ Զէյթուն կը բերուի: Խանդօրեան Եպս. կը վերամկրտէ զանոնք եւ Փաթման ալ կ'անուանէ Մարիամ: Մարիամ կը դառնայ բարեպաշտ քրիստոնեայ հայ մը: Այս ընտանիքը կը հաստատուի Զէյթունի Ղարափար թաղը եւ կը կոչուի Քիւրքճեան, որուն յաջորդ սերունդը կ'ունենայ կարգ մը կտրիճներ Թերզեան անունով:

1847-ին, գէյթունցի կիւրինցեան Մնացական տասնեակ մը ընկերներով Զէյթունէն 36 ժամ հեռու Պէհլանի քաղաքը երկաթ եւ պայտ ծախելու կ'երթան: Կը ծախեն իրենց ապրանքը եւ պիտի վերադառնան Զէյթուն: Մնացական կիւրինցեան, զայիւրնը (չիպուխ) ծխամորճը բերանը, ծխելով շուկայէն անցած ատեն, մէկը ետեւէն, անակնկալ կերպով ծոծրակին ուժեղ բռունցք մը կ'իջեցնէ եւ ձեռքին չիպուխը գետին կը ցատկէ: Մնացական վայրկեան մը յետոյ, այս անակնկալ հարուածէն երբ ուշքի կու գայ, ասդին անդին կը նայի, կը փնտռէ եւ կը հարցնէ թէ ով էր իրեն զարնողը: Թուրքեր գիտնալով թէ կեալուրը իրենց մէջ, այդ թրքութիւն Հոսող տեղը ոչինչ կ'ընայ ընել, կը ցուցնեն իրեն զարնողը՝ Աչըղըն Օղլու Մէհմէտն է: Մնացական կը մօտենայ անոր եւ ծանր ապտակ մը կ'իջեցնէ: Մինչ այդ թուրքեր կատաճ կը յարձակին եւ կը ծեծեն զինքը ըսելով թէ Բամազանը Շէրիֆի օրով, երբ մենք ծոմ ենք, կը վայելէ՝ որ այդ խնդրը կեալուրը զայիւրն ծխէ: Մնացականին ընկերները կ'իմանան եւ օգնութեան կը հասնին: Շուկային մէջ լաւ կու գտնուի մըն է կը սկսի: Երեք թուրքի զուլա կը պատուի, երկու գէյթունցի ալ կը վիրաւորուին: Ոստիկաններ վրայ կը հասնին եւ ընդհարումը կը վերջանայ: Զէյթունցիք ճամբայ կ'ելլեն, հազիւ թէ չորս հինգ ժամ հեռացած կ'ըլլան, ահա իրենց կը հանդիպին խումբ մը պէհլանցի թուրքեր, որոնք իրենց կենդանիներուն փայտ բեռնուցած Պէհլանի կ'երթան: Զէյթունցիք անոնց մէկ լաւ ջորին կը գրաւեն եւ տիրոջը կ'ըսեն թէ,

կերթաս, Զորին գինը Ալըղըն Օղլու Մէհմէմէտէն կը պահանջես: Զորին տէրը՝ Հիւսէյն կ'ընդիմանայ եւ չուզեր տալ Զորին: Լաւ մը գինը ծեծելէ յետոյ, Թեւերը կապելով քաշքշելով կը բերեն հետերնին տասներկու ժամուան տեղ եւ հոն կ'արձակեն: Հիւսէյն երբ Պէհլանի կը հասնի կ'երթայ յիտակ Ալըղ Մէհմէմէտին ախոռը եւ անոր Զորին կ'առնէ եւ իր տունը կը տանի: Հիւսէյն եւ Մէհմէմէտ կովի կը բռնուին: Գործը դատըյին կ'իյնայ, եւ դատաւորը Հիւսէյնին իրաւունք կու տայ: Կ'անցնի շուրջ հինգ տարի: Կիւճիւքեան Մնացական դարձեալ Պէհլանի կ'երթայ, երկաթ կը տանի ծախելու (որովհետեւ տակաւին Եւրոպայի երկաթը չէր հասներ այն տեղեր եւ մանաւանդ որ Զէյթունի երկաթը որակով աւելի ընտիր է): Ալըղ Մէհմէմէտ կ'երթայ պանդոկ, կը գտնէ մնացականը եւ իր տասներեք ընկերներով իր տունը ճաշի կը հրաւիրէ, ճոխ սեղան կը շտկէ: Զէյթունցիք կը կասկածին թէ այդտեղ դաւադրութիւնը մը կայ, թերեւս ալ կերակուրով գիրենք պիտի թունաւորեն: Մէհմէմէտ կը հասկընայ անոնց կասկածը եւ առաջին անգամ ինք կ'ուտէ բոլոր կերակուրներէն եւ յետոյ զէյթունցիներն ալ կ'ուտեն: Թէեւ սուրճ ալ կը հրամցուի, սակայն չեն խմեր, ըսելով թէ սովորութիւն չունինք սուրճ խմելու: Եւ իրաւ ալ այդ ատենները Զէյթունի մէջ սուրճ խմելու սովորութիւն չկար: Մէհմէմէտ այսպէս կը հաշտուի Մնացականին եւ ընկերներուն հետ: Մնացական 105 տարեկան հասակին մէջ կը մեռնի:

Ձինչին Պօղազի (Ճանճի բերդ-կիրճ) մէջ զէյթունցիներուն կռիւն աֆշարներու հետ

Աֆշար մեծ ցեղախումբը 1848-ին կ'ուզէ իր նախկին եայլան, Սարըզ Հովիտը, իր հօտերուն նեղ տեսնելով, Կոկիսոնի շրջանը նուաճել եւ հոն հաստատել իր վրանները (եուրտը): Իսկ ամէն ձմեռ իրենց մնայուն եուրտն էր Կիլիկիոյ խորանիստ դաշտի Չուզուր Օվայի հովիտները: Սարըզ կը գտնուէր Կոկիսոնի դէպի հիւսիս հինգ ժամ հեռուն, եւ անբաւարար էր այն աշիրէթին համար, որ հետզհետէ կը բազմանար: Կոկիսոնի բնակիչները, մեծամասնութիւնը թուրք, փոքր թիւով հայութիւնն ալ իրենց հետ դէմ էին աֆշարներու այս շարժումին, ինչ որ չափազանց փաստակար պիտի ըլլար Կոկիսոնցիներուն: Թուրք եւ հայ կէօկսիւնցիներ խնդիրը կ'իմացնեն Կոկիսոնի շրջանը հովանաւորող աւատապետներ՝ Պայազլու Օղլուներուն, կը դիմեն անոնց եւ կ'ըսեն որ Ճէրիտ եւ Պօղաուղան երկու աշիրէթները արդէն փորձանք եղած են մեզի եւ հիմա չենք ուզեր որ այս պատուհաս եէօրիւքներն ալ բռնեն մեր արօտավայրերը ու մենք եւ մեր

հօտերը նեղուին: Մարաշցի Տէրէ Պէյի (ձորապետ, հովտապետ) Պայազլու Օղլու Ահմէտ Պէյը, որ յետոյ փաշա եղաւ, կը դիմէ Մարաշի միւթէսարըֆին, որ արգիլէ աֆշարներուն Կոկիսոնի շրջանը բռնելը: Մարաշի կառավարիչը, նկատելով որ անկարող է նման դիմումի մը ընթացք տալու, կը մերժէ, առարկելով թէ՝ աֆշարները Չուզուր Օվայի են, այնտեղէն կու գան, Չուզուր Օվայի Ատանայի կը վերաբերի, հետեւաբար Ատանայի կուսակալին (վայի) պէտք է որ դիմէ: Ատանայի կուսակալին կը բողոքեն Կոկիսոնցիք եւ անկէ ալ կը մերժուին: Իմ գործս չէ այդ բանը, կ'ըսէ կուսակալը, Պոլիս՝ կեդրոնը, Սուլթանին դիմեցէք: Իմ կարողութենէս վեր է այդ մեծ աշիրէթին հետ կռուիլ կամ գործ ունենալ: Կոկիսոնցիք եւ Տէրէ Պէյի Պայազլու Օղլու ճարահատ դիմում կ'ընեն զէյթունցիներուն, որոնք չեն մերժեր եղած խնդրանքը եւ սիրով ընթացք կու տան: Չորս իշխաններ խորհուրդ կ'ընեն եւ կը վճռեն արգիլել աֆշարներուն Կոկիսոն ոտք կոխել եւ ի հարկին կռուիլ անոնց հետ: Զէյթունի չորս թաղերէն 50-ական տղաներէ 200 կտրիճ մարտիկներ, իշխանագուններու առաջնորդութեամբ ճամբայ կ'ելլեն դէպի Ձինչին-Ճանճի կիրճը: Այնտեղ դիրք կը բռնեն, Զէյթունէն 15 ժամ հեռուն, դէպի հիւսիս արեւմուտք եւ կը սպասեն: Եղանակը գարուն է: Աֆշար աշիրէթը 1500 վրաններով, իրենց հօտերով, արջառներով, ուղտերով Չուզուր Օվայէն շարժեր են դէպի հիւսիս, եկեր հասեր են Կապանի Յէյրէմշի բերդին մօտ Պէլ ըսուած տեղը եւ զարկած իրենց վրանները:

Զէյթունցի հրոսապետներ ղրրանֆիլ Քէօսէ Փանոս, Վէզիր Օղլու Մամրէ, Աճիթէյէկ Մըղսի Սարգիս եւ Սինկիր Օղլու Արթին, որպէս պատգամաւորներ կը ղրկուին Աֆշար պետերուն, որպէսզի հրաժարին Կոկիսոնի շրջանը գալու իրենց մտադրութենէն եւ զուր տեղը պատճառ չըլլան արիւն թափուելու: Աֆշար պետերէն Հալիլ Օղլու Սէյիթի Պէյ եւ Ապէտին Պէյ, զէյթունցի պատգամաւորներուն կը պատասխանեն ըսելով «Ատանացի վային եւ Մարաշի միւթէսարըֆը չկրցան արգիլել մեզ, հիմա դուք ափ մը զէյթունցիներ ինչ պիտի կրնաք ընել մեզի: Դուք եթէ քաջ էք, հոս Զէյթուն չէ, ձեր քաջութիւնը դացէք ձեր երկրին մէջ ցոյց տուէք, ու սպառնալով կ'աւելցնեն նաեւ հետեւեալը: «Գացէք ձեր իշխանագուններուն լուծք որ Ձիչինու կիրճէն թող հեռանան, եթէ ոչ իրենց դիակները ազաւներուն կեր կ'ընենք: Հոս Ձինչին Պօղազը է, խելքերնին գլուխնին հաւաքեն եւ քաշուին երթան, իրենց քաջ անուններուն որպէսզի արտա մը չզայ: Մենք 1500 տնուոր աշիրէթ մըն ենք, ձեր այս յանդիմութեանը կը զարմանանք»: Արդարեւ Պէլ եւ Ղօճա թիւրքմէն

կոչուած դաշտը լեցուած է վրաններով, եւ կատարեալ բանակի մը կերպարանք է առեր: Զէյթունցի այդ չորս հրոսապետ պատգամաւորները լսելէ յետոյ անոնց այդ սպառնալից եւ ամբարտաւան խօսքերը, (Աթրնա դալանըն ճանը չրգսըն, տէօքիւլէն դանլարըն կիւնահը վէ պապալը պոյնունուզա օլտուն), այսինքն տակը մնացողին հոգին թող ելլէ, եւ թափուելիք արիւնին մեղքը վիզերնիդ ըլլայ, ըսելով դարձան:

Մայիս ամսուն է: Օրերը գեղեցիկ են: Հետեւեալ առտու, կանուխ, վրանները կը փլցնեն, աֆշարները⁶⁴ ուղտերը կը բեռցնեն եւ իրենց մեծ հօտերով եւ արջառներով կը շարժին, կը յառաջանան թիւրք-մէն Ղօճ վայրէն Կոկիսոնի ուղղութեամբ: Ուղտերուն բեռցուած են թանկագին նախշուն քուրճերով իրեղէններ, կապերտներ, գորգեր, կարաւանը երկար բռներ է դաշտ ու հովիտ: Փէշէնկ գացող (մայ) ուղտին վրայ կախուած են գոյնզգոյն ծոպիկներ (փիւսկիլ-սաչազ) եւ վզէն ալ զանգակներու շարք մը: Այդ գեղեցիկ զարդարուած ուղտին վրան նստեր է գեղեցիկ երիտասարդ աֆշարուհի մը, ձեռքը բուրդի քարման⁶⁵ մը եւ ձգեր է իր ձայնը եւ կ'երգէ իր լօլօն, որուն արձագանգը կը հասնի մինչեւ զէյթունցիներուն դիրքերը: Աֆշարներուն կոչը հետզհետէ կը յառաջանայ, կը բարձրանայ, կը հասնի Ձինչինի կիրճը, ուրկէ պիտի անցնին ընտանիքներու կարաւանը, կիներ, աղջիկներ, մանուկներ: Ու ահա անոնցմէ 1000 ձիւները զինուած, բռներ են Ձինչինի բարձունքը: Բաց զէյթունցիք չեն երեւնար: Անոնք Ձինչինի երկու կողմը, չորս տեղ դարանի մօտ, պահուրտած են լուռ ու մունջ: Աֆշարներ իրենց մէջ ունին նաեւ ապաւիններ, որոնց տափուլի եւ զուռնայի ձայնը կը տարածուի մինչեւ հեռաւոր լեռները: Աֆշար ձիւները կը պողան, կը կանչեն, ո՛ւր էք դէր թունցի կեանքներ, հոս Ձինչին կը կոչուի, ձեր լեռները չեն այս տեղերը: Զէյթունցիք ձայն չեն հաներ: Ուրեմն փախեր են անոնք, կը կարծեն աֆշարները եւ Կէօչերնին առաջ կը քշեն եւ իրենք, զինուած ձիւները ետեւ կը մնան: Կը ծրագրեն անոնք անխնայ ջարդել ձեռք անցած զէյթունցիները, եթէ անոնք խորամանկութեամբ մը դարանի կեցած կը սպասեն: Միայն երկու զէյթունցի ողջ թողուլ կ'որոշեն, որպէսզի երթան Զէյթուն պատմեն եղածը: Կոչը անվտանգ կ'անցնի կիրճէն եւ կ'ելլէ բաց դաշտը եւ հանդարտօրէն կը շարունակէ ճամբան: Ձիւները կը տեսնեն որ կոչը անվտանգ եւ խաղաղութեամբ անցաւ, իրենք ալ կը մտնեն կիրճը եւ կը սկսին շարունակել: Չորս տեղերէն յանկարծ համազարկ հրացանաձգութիւնը ծայր կու տայ քարերուն, ապառաժներուն ետեւէն: Ձիւներ աֆշարներ իրենց ձիւրէն թուրի պէս վար կը թափին: Ապէտին Պէյի ձին ալ կը զարնոփ իսկ իր ոտքին ալ գնդակ մը կը մտնէ եւ երկուքը միասին գետին

կը տապալին: Աֆշարները իրենք ալ կը սկսին պատասխանել, հայերը գնդակները բնաւ պարապ չէին անցրեր, իսկ աֆշարներուն գնդակները ապառաժ քարերուն կը հանդիպէին: Ու զէյթունցիք դիրքերուն մէջէն կը կանչեն. «էյ աֆշարներ, մեզ դուք գուլաղը թողլու կեանք ո՛ւր կը կարծէիք: Եկէք զինաթափ եղէք, ձեր կոչը, ընտանիքները արդէն մեր կողմը անցած են եւ գերի են մեր ձեռքը, եթէ դուք զինաթափ չըլլաք, անոնց բոլորն ալ պիտի ջարդենք: Մէյֆի Պէյ երբ կը տեսնէ որ հազար ձիւներէն հազիւ հարիւրը մնացեր է, ոմանք զարնուեր ինկեր են, միւսները փախեր են, կը ստիպուի ամանի գալ եւ զինաթափ ըլլալ: Մնացողները ճերմակ դրօշ կը բանան, զէնքերը կը յանձնեն, որպէսզի կոչին եւ կիներուն, ընտանիքներուն, մանուկներուն խնայեն եւ իրենց դարձնեն: Հիմա կը հասկնանք, կ'ըսեն, որ այս երկրին վայրն ալ դուք էք, փաշան ալ, պէյն ալ: Երբ անոնք զինաթափ եղան եւ զէնքերը յանձնեցին, զէյթունցիք սկսան արջառները յափշտակել եւ տանիլ: Ձի, արջառ, հազարաւոր ոչխարներ, կով, կապերտ, թաղիք, արծաթէ զարդեր, բոլորն ալ առին մեր կուռողները: Կիներն ու աղջիկները նոյնութեամբ դարձուցին, ոչ մէկուն որեւէ արատ կամ անպատուութիւն չհասցուցին: Գալով կողոպուտին, բերին Զէյթուն: Աֆշարները խօսք տուին որ իրենց նախկին եւրոտը՝ Սաբըզ պիտի քաշուին եւ խնդրեցին որ իրենց սպաննուածներու դիակները վերցնելու համար միջոց տան իրենց: Այս կոկիւն, Տէյի Բէշի ընտանիքէն Գուգուրը միայն սրունքէն վիրաւորուած է, սակայն վերջէն առողջացեր է: Այդ մարդը վերջը քահանայ կ'ըլլայ եւ կը կոչուի Տէր Մարգար: Կոկիւն ընթացին, 25-30 աֆշար-թիւրքմէն գեղեցիկ կիներ, աղջիկներ կը փախչին եւ ժայռերու խոռոչներուն մէջ կը պահուրտին անօթի ծարաւ: Երեք օր յետոյ, Կոչին հետքը գտնելով կը հասնին Սարըզ: Աֆշարներուն աշուղը՝ Ապտուլլահ այդ կոկիւն երգած է: Այդ երգին միայն երկու տունները թարգմանելով իր գիրքին մէջ առած էր Մնացական Սէմերճեան, ու մենք այդ տողերը թիւ մը բարեփոխելով կը դնենք այստեղ:

Աֆշարը քալեց Զուգուր Օվայէն,
Հասաւ Զաննի կիրճ, գէյթունցիք հոմ են:
Կոկիւն սկսաւ, դժուար վիճակ է,
Կէօֆուիւն ո՛ւր մնաց, ով Ապէտին Պէյ:

Աշուղ Ապտուլլահին եմ ես, սո՛ւգ անմխիթար,
Աֆշար ցեղին պէս կտրիւն լոկ գէյթունցիք կան,
Ֆէտով աղջիկներուն քերքին գինդ կար
Կոկիւն մնացող աղջիկներն ի՞նչ եղան:

Թրֆերեմը

Աֆշար չուգուր-Օվատամ եօրիւրիւ վերտի,
Կեօֆուսն արգուլայուպ սէկտի իլֆ եուրտու,
Ջէյթունլու Զիչինտէ աֆշարը վուրտու
Փէրուշան աշիրէթին հալը կիւն օլտու:

Աշըխ Ապուլլահմ պէն փինտիմ եասլը,
Պուլունմագուր աշրէթտէ աֆշարըմ միսլի,
Պուրմու խըրըզմալը, եալպըրտագ ֆէսլի
Ճէնկ իչինտէ գալան գըզլար միմ օլտու:

Այս կոիւին վրայ կոկիսոնի թուրքերը եւ Պայազըտ օղլունքը խորին շնորհակալութիւն յայտնեցին գէյթունցիներուն եւ Ջէյթունի քաջերը հրաւիրեցին կոկիսոն, կռուողներուն մէյ մէկ ոսկի նուէր տուին, իսկ չորս իշխաններու տղոց մէյ մէկ նոյնք ձի նուիրեցին եւ երդում ըրին որ հաւատարիմ պիտի մնան Ջէյթունի: Ազիզ Փաշայի 1862-ի կոիւին սակայն Պայազըտ Օղլու Օսման Պէյ Ջէյթունի Աւագ-Կալ հայ գիւղը կրակի տուաւ, իր հօրեղբայրը՝ Ահմէտ Փաշան (նոյն Ահմէտ Պէյը) 5000 պաշրպօղուզներով Աւագ-Կէտիկի կիրճէն փորձեց յարձակիլ Ջէյթունի վրայ, սակայն չյաջողեցաւ: Ահմէտի սէկմէնները ցիրուցան եղան, անոնցմէ գերի ինկոզներ եղան գէյթունցիներու ձեռքը եւ այդ գերիներէն 15-ը կոկիսոնցի ապերախս թուրքեր էին: Անոնց պետն էր Ղուշ-Պէքիր: Այդ գերիները վախցան թէ գէյթունցիք կը սպաննեն, մենք հայ կ'ըլլանք, ըսին, սակայն Ջէյթունի իշխանները չընդունեցին եւ ըսին, ձեզ պէս ապերախսներ արժանի չեն հայ անունը կրելու: Եւ ի վերջոյ ողջ առողջ դրկեցին իրենց տունները:

Մարաշի թուրքերը կ'իմանան որ գէյթունցիք Մարաշէն անցնելով, Երուսաղէմ ուխտի պիտի երթան: Այն ատենուան Մարաշի կառավարիչ-միւթէսարըմ Միւնիք Մուհամէտ Փաշային կը դիմեն, որպէսզի գէյթունցի ուխտաւորները նեղէ եւ կողոպտէ: Միւնիք Մուհամէտ Փաշա, զոր ժամանակին գէյթունցիք Մարաշի միւթասարըմթեան աթոռէն վար առած եւ տեղը նստեցուցած էին վերոյիշեալ Պայազըտ Զատէ Ահմէտ Փաշան, ուզեց առիթը չփախցնել եւ իր վրէժը լուծել գէյթունցի ուխտաւորներէն, որոնք նիւթուած դաւադրութե-

նէն ոչ մէկ լուր ունէին եւ Մարաշ կը հասնէին: Զէյթունցի ուխտաւորները հիւր կ'ըլլան մարաշցի հայերուն տունները: Մարաշցի հայերն ալ տեղեակ չէին թուրքերուն ծրագրէն: Ուխտաւորներուն մէջ էին Ենիտիւնեան Աստուածատուր իշխանը եւ ուրիշ շատ մը հարուստ եւ յայտնի ընտանիքներ ու նաեւ Ջէյթունի Աւագորդը՝ Յովհաննէս Եպիսկոպոս: Անոնք Ջէյթունէն ճամբայ հանուած էին առօք-փառօք եւ «Ճանապարհ բարի Քրիստոս» երգով եւ շարականներով, ըստ գէյթունցիներու սովորութեան: Բայց երբ Մարաշ կը հասնին եւ հիւր կ'ըլլան Մարաշի հայ ընտանիքներուն տունները, Մարաշի թուրք կառավարութիւնը յանձին Միւնիք Մուհամէտին զանոնք հայ տուններէն մէկիկ մէկիկ բռնել տալով կողոպտել կու տայ անոնց ունեցածը, մօտաւորապէս 1000 հնչուն ոսկի եւ զիրենք բանտարկել կու տայ ամիս մը: Ու երբ բանտէն կ'արձակուին գէյթունցիք, ուխտի երթալու ժամանակը արդէն անցած ըլլալով կը վերադառնան Ջէյթուն: Զէյթունցիք չափազանց վրդոված թուրքերուն այս անորակելի արարքէն, յարմար առիթի կը սպասեն: Եւ այդ առիթը չ'ուշանար: Կ'իմանան որ մարաշցի ամենէն հայատեաց եւ մոլեռանդ դասակարգերուն՝ թամբազորներուն եւ խաղախորդներուն (սարրաճ եւ թապպախ) կարաւանը այդ օրերուն Կեսարիայէն Մարաշ պիտի դառնար, հրոսակներու խումբ մը կը դրկեն գէյթունցիք Սուլաթը ըսուած վայրը, ուրիշ պիտի անցնէր այդ հարուստ կարաւանը: Կը բռնեն կարաւանին 28 հոգին, կը կողոպտեն անոնց 2000 օսմ. ոսկին եւ զիրենք կը բռնեն Ջէյթուն ու կը բանտարկեն: Յետոյ բանտարկուած թուրքերուն կը հրամայուի որ Մարաշ գրեն եւ իմացնեն Միւնիք փաշային իրենց վիճակը եւ ըսեն թէ ուխտաւորները կողոպտելուն հատուցումն է այս: Մարաշի թուրք մեծաւորներէն՝ Պէյգատեններէն Ղըսաթիւր Օղլու Նէհրպ էֆէնտի Ջէյթուն կու գայ խնդիրը անուշի կապելու համար: Անիկա կը դիմէ Ջէյթունի մեծերուն, կը խնդրէ, կ'աղաչէ, որ բանտարկուածները ազատ արձակեն: Զէյթունցիք թէեւ թող կու տան այդ գերիները, սակայն 2000 ոսկին չեն դարձներ եւ կ'ըսեն թէ մեր 1000 ոսկիին փոխարէնը այդ դրամը ետ չենք տար, որովհետեւ մեր հազարը աւելի կ'արժէ քան ձեր երկու հազարը: Գացէք ձեր դրամը Միւնիք Մուհամէտէն առէք: Կողոպտողները կ'երթան Մարաշ եւ փաշայէն բռնութեամբ կը զանձեն:

Զէյթունի չրջակայքը բաւական չէրճէզ եւ չէէն գիւղեր հաստատուած էին Սուլթան Համիտի եւ իր նախորդներու ժամանակներէն, սկսած ուսում-թրքական պատերազմի վերջաւորութենէն մինչեւ որոշ ատեն մը: Թուրքիա, երբ պարտուած էր, Ռուսիա, իր սահմանէն, կովկասէն, Տաղիստանէն բաւական չէրճէզ եւ չէէն, ապազա եւ այլ մահմետական ցեղեր դուրս հանեց: Անոնք եկան Թուրքիա եւ Թուրք կառավարութիւնը անոնք որպէս մուհաճիր հոգաց եւ Թուրքիոյ գանազան կողմերը անոնց հող եւ տեղ տուաւ: Զէրքէզները, որպէս լեռնական մահմետականներ եւ կռուող, աւագակ կովկասցիներ, Թուրք կառավարութիւնը մասնաւոր ծրագրով մը տեղաւորեց անանկ չրջաններ, ուր ըմբոստ, կռուող հայ քաղաքներ կամ գիւղեր կային: Եւ այդ հաշիւով նաեւ Զէյթունի չրջակայքը հաստատեց կարգ մը չէրքէզ, չէէն գիւղեր: Զէյթունի շուրջը գտնուող չէրքէզ գիւղերն էին Ֆետրգ, Կիւճիւկ, Չարտախ, Սովուճագ, Ղուզուտէփէ, Ղամըճըզ, Ղապրիտէփէ:

Այս չէրքէզները Կեսարիայէն Մարաշ գացող եկող կարաւաններուն առջեւը կ'ելլէին յաճախ, հայերը կը կողոպտէին իսկ Թուրքերը ազատ թող կու տային: Զէյթունցին չկրցաւ հանդուրժել ասոնց շահատակութիւններուն: Իշխաններու խորհուրդով, եւ Չագրեան Արթին՝ այլ անունով Չօլագ վարժապետի գլխաւորութեամբ հրոսակաւոր մը կազմուեցաւ: Այս հրոսակաւորը կը ղրկուի Ղապրիդ Պէլը, լեռան մը գագաթը կը բռնէ, որպէսզի իրենք ալ չէրքէզներու օրինակին հետեւին, միայն թէ հակառակ ուղղութեամբ: Կեսարիայէն եկող կարաւանը կը կողոպտեն առաջին անգամ ըլլալով հայերը գտնելով Թուրքերէն: Սակայն մի գուցէ թիւրիմացութեամբ հայեր ալ կողոպտուին եւ հակառակը՝ պատահելով նաեւ որ Թուրքերէն չկողոպտուողներ ըլլան, Չագրեան վարժապետ կարաւանի մարդոց խաչակնքել կու տար: Բայց ժամանակ մը յետոյ կիւրինցի Թուրքեր ալ սորված ըլլալով խաչակնքել, կ'ազատուէին կողոպտուելէ: Այս անպատեհութեան առաջը առնելու համար, Չօլագ վարժապետ այլեւս չէր գոհանար ճամբորդներուն խաչակնքելու գործողութեամբ եւ կը պահանջէր որ այն որ հայ է պէտք է որ Հայր Մեր Տէրունական աղօթքն ալ գոց գիտնար: Կը պատահի որ օր մը, կարաւանին մէջ, քրիստոնեաներէն մէկը թէեւ Հայր Մերը կ'ըսէ սակայն չի խաչակնքեր: Հրոսակներ կը հարցնեն թէ ինչու չի խաչակնքեր, կը պատասխանէ թէ ինքը բողոքական է եւ բողոքականները չեն խաչակնքեր: Սակայն հրոսակները կ'ըսեն թէ այստեղ ժողովարան չէ, այս լեռան մէջ, մեր ներկայութեան

կը խաչակնքես, վերջը նորէն բողոքական մնացիր: Սակայն բողոքականը, որ բժիշկ Գարեգին Սիւնին էր եւ իր հետն էր նաեւ բժիշկ Աստուածատուր Ալթունեան, այն ատեն տակաւին ուսանող Այնթապի դոկէճին, կը յամառի եւ չի խաչակնքեր: Թուրքերուն բաժնին մէջ կ'անցընեն զինքը իր տիկնոջ հետ միասին եւ կը կողոպտեն ապա կը ղրկեն:

Տքթ. Գարեգին Սիւնի Մարաշ կու գայ, կը պատմէ եղածը: Մարաշ բողոքականներու հովիւը Ռուպիան Էֆ. հետն առնելով Տքթ. Սիւնին Զէյթուն կու գան այս խնդրին կարգադրութեան համար: Զէյթունի իշխանները ի պատիւ Ռուպեան Էֆէնտիի կողոպտուած իրենցները նոյնութեամբ վերադարձնել կու տան: Այստեղ միջանկեալ կարելի է մեր կողմէ յիշել թէ՛ այդ նոյն դէպքը հանգուցեալ բժշկապետ Աստուածատուր Ալթունեան անձամբ եւս ինձի պատմած է օր մը Հալէպ, իր հիւանդանոցին մէջ:

Հրոսակները եւ իշխանները անոնց գոյքը յանձնելով հանդերձ, կը զարմանան սակայն որ այնքան խելացի, բժիշկ մարդ մը՝ Գարեգին Սիւնի, իրենց ներկայութեան խաչակնքելը ամօթ համարեր է, խորհելով թէ դժոխք կ'երթայ: Ի՞նչ անմտութիւն, կ'ըսեն իշխանները, ժամանակին մեր նախահայրերը արքայութեան արժանի ըլլալու համար նահատակմարտիրոս կ'ըլլային եւ կը սպաննուէին: Մեր գէյթունցիներուն հանգանակն է՝ Սպաննէ՛ մի՛ սպաննուիր, կ'ողոպտէ՛ եւ մի՛ կողոպտուիր, ծեծէ՛, զարկ եւ մի՛ ծեծուիր եւ դարձեալ արքայութեան մէջ տեղ ունիս: Գրիստոս բնաւ չէ ըսած թէ վախկոտ եղիր եւ քաջ մի ըլլար: Բժիշկ Սիւնի հաւատաւորութեամբ չեշտով մը, իրաւունք ունիք, կ'ըսէ:

1886-ի Զէյթունի պատերազմէն յետոյ, նոյն տարուայ Մայիսին Հալէպի բանտը կը գտնուէին Գալուստ Հայտուտեան, Մկրտիչ Պիւլպիւեան, Պօղոս Դաւիթեան, Կարապետ Չագրեան եւ Գաբրիէլ Պոսթան Երէցեան անուն գէյթունցիները: Այդ օրերը եւրոպական գլխարկով կարգ մը ամերիկահայտակ հայերն եւս բանտ կը բերուին, որոնք կառավարութեան յանձնուած էին, որպէս Հնչակեաններ սուէտացի քանի մը մարդոց սպառնալիքին եւ ստիպման տակ: Այս գլխարկաւորները բանտ մտցուած ատեն տաճիկներ կը սկսին սուլել եւ չիլ-չիլ պողալով անարգել զանոնք: Զէյթունցի վերոյիշեալ բանտարկեալները լին հանդուրժեր եւ սուլողներուն կը սկսին հաճոյի: Տաճիկ խուժանը կը յարձակի գէյթունցիներուն վրայ, բայց մերիները իրենց վրայ պահուած դանակներ ունէին, իրենք ալ կը սկսին զարնել: Բանապազ մը կուրծքէն կը վիրաւորուի, ինչպէս նաեւ ուրիշ

Թուրքեր լաւ ծեծ ուտելէ եւ վիրաւորուելէ յետոյ Ալայ Պէկը եւ ուսիկանութիւնը վրայ կը հասնին եւ կը գատեն կռուողները: Սակայն այդ խորտումին վրայ, Ալայ Պէկ զէյթունցիները երեք շաբաթ գնտանի մէջ նետել կու տայ (շատ Բըթլս. Վըդ-ի ինքնակենսագրութեան):

Զէյթունի հետ գործ ունեցող Տէրէպէյիներ (աւատակածներ)

Մարաշ կը գտնուէին հին (Այաններ) մեծամեծներ, ինչպէս Տուլ Գատրը Օղլուներ կամ Զիւլպատրեանք: Այս տոհմը ինքզինք թագաւորական շառաւիղէ մը սերած կը համարէր: Եւ ատեն մը տիրած է Մարաշի եւ շրջականերուն, մասամբ նաեւ Զէյթունի: Երկրորդ տեղը կը բռնեն Պայազըտ Օղլուները, Վէյի Զատէները եւ Ղատը Զատէները:

Ապիստանի մէջ կային Հաճ Աղա Զատէները, Սալթ Օղլուները եւ Նախըպ Օղլուները: Արաբիստ (Եարփուզ) կը բնակէին Հալ Աղալար ձորապետները: Կիլիկիոյ, Ռուբինեանց Նախկին մայրաքաղաք եւ միեւնոյն ատեն կաթողիկոսանիստ Սիւ (Յլալիա) կը բնակէին չատըճօղլուները: Ասոնք կ'իշխէին Սիւի, Ղարս Պազարի եւ Չուզուր Օվափ թիւրքմէններու մէկ մասին: Զատըրճօղլուն է որ նշանաւոր Կիրակոս կաթողիկոսը թունաւորելով մեռցնել կու տայ: Սիւի քանի քանի կաթողիկոսներ այդ Զատըրճօղլուի հրամանով կաթողիկոսական Աթոռ բարձրացած են եւ դարձեալ գրեթէ իր հրամանով ալ վար առնուած կամ... սպաննուած:

Գօզան Օղլուները տիրած էին նաեւ Սսոյ, Հաճընի շրջանին, Ֆէքէի (Վահկայ) Ուռուժլուի, Ֆարսախի, Եար Տէրէի (Կիլիկիոյ հայոց թագաւորներուն ամարանոցը): 1863-4-ին, Սուլթան Ալիդի հրամանով կը ջնջուին Զատըրճօղլու եւ Գօզանօղլու տէրէպէյիները:

Կիւլդիւ Հալլօղլուները, Հաճի Էօմէրօղլուները, Ալիպէթիօղլուները եւ Ֆէդզահօղլուները իշխած են կեափուր տաղի (Հայոց լեռ) շրջանին, Պուլանըզ Պահճէի, Հոփտու լեռան վերջաւորութենէն մինչեւ Փայաս, Իսկէնտէրուն (Հայոց ծոց) որ հին գնացքով Զէյթունէն 45 ժամ էր:

Ֆէդզահօղլու Աղա Պէկ իշխած է նաեւ Պահճէի, որուն բնակչութիւնը մասամբ հայերէ կը բաղկանար, ինչպէս նաեւ գոլտ հայաբնակ Հասան Պէկլիի, Լափաշըլի եւ Խառնըլի (Հարունիէ), Ալիպէթի իշխած է Էսպէզ հայ գիւղին եւ շրջաններուն, Հաճի Էօմէր Օղլու Տէյի Խալի իշխած է Թէյէկ հայ գիւղին եւ շրջաններու, երբեմն մինչեւ Բիլիս քաղաքին:

Հալէպի կուսակալ (վայի) Ճէվտէթ փաշայի ժամանակ Երզնկայի չորրորդ բանակին հրամանատար Տէվրիշ փաշային օգնականը՝ Գուր

Իսմայիլ Փաշան կը նուաճէ Կեափուր Տաղըն եւ կը բնաջնջէ Գօզան Օղլու եւ Զատըրճօղլու տէրիպէյիները:

Փայասի Տէրէ Պէյի Կիւլդիւ Հալլօղլու Մըստըի իշխած է նաեւ Զորք-Մարգուան (Տէօրթեօլ) Օճազլը, Էօզէրլի, եւ Զայ հայ շրջաններուն եւ մէկ քանի թուրք գիւղերու:

Անտըռնի շրջանին կ'իշխէ Ապապզ օղլուն՝ Կապանի, Պունտուխի, Տէյիմէն Տէրէի, Թաշուլուքի, Կէօլ Փունարի հայ գիւղերուն, որոնց ջերմ պաշտպանն էր Ֆոնուզի Նիկողայոս Եպիսկոպոսը: Անտըռնի տէրիպէյիներէն այս Ապապզօղլուն եւ Եաթ Օղլուն շատ կը վախնային Նիկողայոս Եպիսկոպոսին: Եպիսկոպոսին գործն ալ միշտ այդ կողմերը ըլլալով, յաճախ կը հանդիպէր անոնց, որոնք թէեւ անոր երեսը տեսնել չէին ուզեր, սակայն երբ Եպիսկոպոսը եւ իր փոքրաւորը՝ Բարթոլոմէոս Վարդապետ այցելութեան ելլէին գէպի այդ կողմերը, տէրէպէյիները մեծ յարգանքով դիմաւորելու կու գային եւ բարի գալուստ կը մաղթէին եւ կ'ըսէին. «Պունար սալկըլը ֆուրթունա տըրլար, պունարլա խօշ կէչինմելի, ալիքն, ասոնք հաշուի առնելիք փոթորիկներ են, հետերնին լաւ վարուելու է»:

Եացօղլուն իշխած է Աճէմլի (պարսկահայ) Տրդատը եւ Թափուսլու հայ եւ մէկ քանի թուրք գիւղերուն: Զիլֆար Օղլուն իշխած է Շիպիհի հայ մեծ գիւղին: Իսկ Կէօլ Ահմէտ Օղլուները տիրած են մինչեւ 1860 թուականը Նիւրփէտ (Նորփայտ) Անըճըի (Անիցիք), Վարի Զօխաի եւ Վերի Զօխաի հայ եւ քանի մը թուրք գիւղերուն:

Այս շրջանները եւ իրենց աւատապետները յիշեցինք այստեղ անգամ մը եւս, այն առնչութեամբ գոր ունեցած է Ֆոնուզն եւ Զէյթունը, իրենց կոխներովը, արշաւանքներովը եւ այլ տեսակի յարաբերութիւններովը:

Շուզուր Անապատ

Թուրքերը իչ Նահիյէ կոչեր են Շուզուր անապատը, ուր կար Անապատ Վանքը, Զէյթունէն հարաւ արեւմուտք, հին գնացքով 20 ժամ հեռու: Թուրքերը զայն գոմի վերածեր են: 1849-ին, գառնեցի Յովհաննէս Վարդապետ շատ աշխատեալ է շէնցնել այդ վանքը, նորիսկ իր քսակէն բաւական դրամ կը վատնէ, բայց չի յաջողիր, որովհետեւ Սսոյ Միքայէլ կաթողիկոսը եւ Պուսոյ Պատրիարքարանը չեն աջակցիր իրեն եւ իր ջանքերը, ծախսերը պարապի կ'երթան: Այս Նահիյէին կեդրոնը Եէնիճէ Գալէ գիւղն է, որուն մօտերը կը գտնուի Մուճուզտէրէսի, ուր լատին կրօնականներ վանք մը շինած

անպաշտօն թողութիւնք, կը բաւէ այդքան ապաշխարանք, ան ալ միւսկիման է, մեղք է, խղճի դէմ է, նայէ, դուռն ալ այդ քու ծերուն-
թեանդ մէջ ժողովուրդիդ սիրոյն մինչեւ Պոլիս գացիր, այս մարդն
ալ մեր մարգարէին ուղղափառ կրօնքին պատկանող մէկն է, չենք
կրնար կեամբունելու համար երեսի վրայ թողուլ, պիտի ապրի՝ կա-
ռավարիչը այս թրքաբոյր խօսքերէն յետոյ լրբութեամբ կ'աւելցնէ
նահւ հետեւեալը.- Իշխէկին գագաննը աթ իջուն, այսինքն՝ իշուն
վաստակը ձիուն համար է։ Եպիսկոպոսը այս անարգանքին վրայ,
այդ կառավարիչ Մուսթաֆա Փաշային, ձեր օրով, կ'ըսէ, կ'երեւի թէ
հայերուս համար ապրիլ աւելորդ է։ Կու գայ Ջէյթուն 1840-ին
զէյթունցիք լաւ մը պատժեցին Գալիշ Օղլուն, ինչ որ մեր նախորդ
էջերով ընդարձակ պատմած ենք, այնպէս որ խածնելու կարողութիւն
չմնաց այլեւս վրան։

Հմնաց այլեւս վրանս։
1877-8-ին, Զէյթունի Եօթը Փէյին պատերազմին վերջաւորութեան, յաղթուող փաշաներուն եւ Մարաշի պէյերուն բողոքի Հանրազրութիւնովը նենգութեամբ Պոլիս կը կանչուի, եւ կը ներկայացուի Սուլթան Համիտի Այդ Հանրազրութիւնով Մարաշի թրքութիւնը կը պահանջէ որ թուրք պետութեան մղձաւանջը եղող այս Տէյի մահաասան պէտք է վերցնել, որ այս շրջանը խաղաղութիւն ըլլայ։ Զէյթունը ապստամբեցնողը անիկա է։ Ապտիւլ Համիտ անձամբ տեսնել կ'ուզէ Նիկողայոս Եփեսոսկոպոսը։ Երբ անիկա կը ներկայանայ իրեն.՝ Նիկողայոս, կ'ըսէ, ինչո՞ւ իմ զինուորները ջարդեցիր, Տէր Թագաւոր, անհաւատ արիւնարբու աւագակներն էին որ կոտորեցինք, որովհետեւ անոնք կը կողոպտէին, կը սպաննէին մեր ժողովուրդը, կը փախցնէին մեր աղջիկները եւ կ'ըսէին թէ մեր Թագաւորին հրամաններն էին, որ կը կատարէինք։ Զեմ կարծեր որ Թագաւոր մը իր հպատակներուն համար այսպիսի հրամաններ կ'արձակէ։ Սուլթան Ապտիւլ Համիտ,՝ Հերիք, կ'ըսէ, հասկցայ, հասկցայ, ասկէ ետքը խելացի կեցիր, եթէ ոչ քեզ ձուկերու վերակացու կը կարգեմ, հասկցա՞ր։ Ու կ'աքտրէ զինքը։ Զէյթունցիք Գայիշ Օղլու տէրէպէյին թէեւ մոխրիի նստեցուցին, իր իսկ տանը վառելիք փայտը բեռցնելիք էչէ մը նոյնիսկ զուրկ մնալով, չալակովը կ'երթար փայտ կը բերէր։ Սակայն Սուլթան Մէհմետ տուած Ֆէրմանն մեծ օգուտ մը չունեցաւ, որովհետեւ Զէյթունի եւ Ֆոնուզի 1895-96 մեծ կոիւին Ֆոնուզը իր վանքովը եւ տասնչորս գիւղերովը հոյ ճարակ եւ քար ու քանդ եղան։ Բոլոր Տէրէպէյները շնորհիւ Սուլթան Ազիզի բնաջինջ եղան։

Տ. Օհան Ղազարը Պէթլիկինցի համառօտ կենսագրական դիմելը
Տ. Օհան ծնած է 1763 Մայիս 13-ին, հօրը անունն էր Ուհոն (0-

հան) իսկ մայրը կը կոչուէր Գուհոր (Գուհար): Կը մկրտուի Յ. Յովհաննէս ԲՆՆՅԻ ձեռքով եւ կը կոչուի Պրոքորոն (Փիւրիսիւրիւն): Տիրացու անուն ջուհակի մը քով առաւ իր ուսումը, կարդալով Սաղմոս, Նարեկ, Ժամագիրք: Կ'ամուսնանայ 1780-ին Միւսեղեմիեց Անաղոնին հետ. 1793-ին քահանայ կը ձեռնադրուի Սոյ Աջապահեան Թէոդորոս Կաթողիկոսէն. 1802-ին կ'երթայ Ատանա եւ 12 տարի օսմանեան գիժախումը (ենիչէրիներու) 1200 զինուորի վրայ Ֆարհատ հազարապետ անունով քաջազորութիւններ կ'ընէ: 1814-ին կը դառնայ հայրենիքը՝ Զէյթուն: 1830-ին հաւատուրաց վարդապետը ալրելով սպաննել կու տայ Սուլաթըս վայրին մէջ. 1833-ին Կ. Պոլիս կը ներկայանայ Սուլթան Մահմուտի: 1835-ին վերաջինել կու տայ Ս. Սարգիս եկեղեցին: 1838-ին կը ներկայանայ Եգիպտոսի յաղթական Իպրահիմ փաշային Մարաշ եւ որպէս միւսէյլիմ՝ ներկայացուցիչը կը նշանակուի Զէյթունի մէջ Իպրահիմ փաշային կողմէ: 1838-ին Երուսաղէմի ճամբուն վրայ Դամասկոսի մօտ կը կուռի արաբ ցեղախումբի մը հետ եւ կը յաղթէ. նոյն տարին «Լուսաւորեա»-ի օրն ալ Ս. Գերեզմանին շուրջ, կուռի մէջ կը յաղթէ յոյներուն եւ Զաքարիա պատրիարքէն կը ստանայ թանկագին ծաղկեայ փիլոն: 1842-ին կը մասնակցի Եռուստֆ ֆաշայի դէմ զէյթունցիներուն մղած կռիւին: 1849-ին Գալիշ Օղլու Տէրէպէյին Ֆռնուզէն Զէյթուն կը բերէ: 1852-ին Մարաշի մէջ երեք ամիս բանտ կը մնայ Շքոտրացի Մուստաֆա ֆաշայի ձեռքով: 1853-ին կը հիւրընկալուի Մելիքեան Յովակիմ Աղայէն. 1853-ին Իւնկիւթի կամուրջին վրայ Թէճիրլիցի աշիրեթներուն աւատականները կ'անցընէ իր սուրին տակէն:

Կեանքին մէջ ինն անգամ Երուսաղէմ կ'երթայ, ցամաքի ճամբով, Աղբատ ընտանիքներ քանի մը տասնեակ մարդեր իր ծախքովը Երուսաղէմ կը տանի: Դարձեալ իր ծախքով կ'ամուսնացնէ վեց երիտասարդներ: 1858-ին, Մաղկազարդի օրը, պատարագ կը մատուցանէ: Աւագ Երեքշաբթի Տասն Կուսանաց Անտարանը կը կարդայ: Աւագ Չորեքշաբթի առտուն եկեղեցիին մէջ կ'երգէ Մանկունք շարականը: Նոյն օրը ժամը 4-ին յանկարծամահ կ'ըլլայ:

Տոնուդի մէջ պատահած դէպքեր եւ Միեռոս Սարկաւազ

1882-ին Ֆոնուզի Յովակիմ Քաչանան կը վախճանի, թաղման պատահաբար ներկայ կը գտնուի ղուժարարացի թուրք մը: Այդ անպիտանը կը սկսի ծաղրել հայ եկեղեցւոյ թաղման արարողութիւնները: Կտրիճ մը՝ Տէլի Խաչեր, կորսուէ ասկէ անհաւատ կ'ըսէ, հիմա գնդակով մը քեզ չըրախ կը հանիմ: Կեալուրին կապարը թուրքին մարմնոյն չ'անցնիր կ'ըսէ արհամարհանքով մը եւ կը հեռանայ: Այս

խօսքը, Տէյի Խաչերին դժուարին կուգայ: Զինուելով, Ղօսուխ ըստւած կիրճը թուրքին հտուէն կը հասնի եւ կը կանչէ, կեցիր նայի՛մ անցնիր կ'կեապուրին գնդակը կ'անցնի թէ ոչ. այս ըսելն եւ հրացանը կրակելը մէկ կ'ըլլայ: Թուրքը անշունչ գետին կը տապալի: Ասոր վրայ Զուգուր Հիսարի եւ Ղուճարուրուի թուրքերը միացած, կոկիխոնի ճամբան կը բռնեն, կը գոցեն Փռնուզցիներու առջեւ, որոնք իրենց ցորենը եւ պաշարը կոկիխոնի շրջանէն պիտի բերէին: Այս արգելքը կը տեւէ ամիսներ: Մինաս Սարկաւազ՝ Յովհաննէս Վրդ. Թագաճեանի եղբորորդին եւ վերջը ինքն ալ Բարթուղիմէոս Վրդ. յիսուս տղաներով կը ճեղքէ թուրքերու այդ շղթան երեք տարբեր կէտերու վրայ եւ կ'անցնի կոկիխոն եւ նոյն ճամբով ալ կը վերադառնայ: Թուրքերը կը վախճան եւ կու գան Մինաս Սարկաւազին եւ ներողութիւն կը խնդրեն: Մինաս սարկաւազ անոնց սպառնալով կը պատուիրէ որ Փռնուզցի ոեւէ ջորեպանի մագին չդպչիք, եթէ չէք ուզեր որ ձեր գիւղերը քարուքանդ ընենք: Թուրքերը խօսք կու տան, կը հաշտուին, եւ թող կու տան որ Տէյի Խաչեր անդի աշխարհը իր պատիժը գտնէ:

Ինչպէս ըսինք, Մինաս Սարկաւազ կը ձեռնադրուի եւ կը կոչուի Բարթուղիմէոս Վրդ. եւ գիտենք թէ Զէյթունի 1895-98-ի կռիւներուն մեծ քաջագործութիւններ ըրած էր ան։ Այդ ժամանակները Այտընէն, Ատանայէն բանակ կու գայ եւ Ս. Կարապետի վանքը կ'աւերէ։ Հաշտութեան բանակցութիւններուն, թուրք կառավարութիւնը կը խոստանայ 500 Օսմ. հնչուն ոսկի յատկացնել վանքի վերաջինութեան, թէպէտեւ վանքին վնասը 5000 ոսկին կ'անցնի, որովհետեւ անոր բոլոր հնութիւններն եւ թանկագին անօթները տարուած էին։ Շատ չանցած, Հայր Բարթուղիմէոս, այդ դրամը կը պահանջէ կառավարութենէն։ Ատոր ի պատասխան օր մը, Մարաշէն Հայր Սուրբին հետեւեալ նամակը կու գայ։

«Րաւհիւս Էֆէնտի,

Շուտով այս ոստիկանին հետ Մարաշ գաս, Կ. Պոլսոյ կեդրոնական կառավարութենէն վանքիդ շինութեան համար դրամ եկաւ, կ'ուզէիք որ ուղղակի քեզի յանձնենք եւ տեղւոյն վարպետ որմնագիրներ ալ հետդ տանելով սկսիք վանքիդ վերաշինութեան:

Կառավարիչ Մարաշի

Հայր Սուրբը ուրախութեամբ եւ առանց կասկածելու հաղի թէ Մարաշ կը հասնի, զինքը ուղղակի բանտ կ'առաջնորդեն: Բանտին մէջ, առիւծի պէս կը սկսի մոնչել ան եւ Միւթէսարաֆին այդ վա-

տութեան համար, անոր երեսին, ստախօս, ցած, վատ անպիտան ըսելով կ'անարգէ զայն: Դանի մը ամիս ետքը Հայէպի եւրոպական հիւպատոսներու միջամտութիւններով ազատ կ'արձակուի: Յետոյ Զէյթունէն կը թելադրուի որ վանքը, պատրիարքարանը հարուստ են, դիմում ընէ Երուսաղէմի պատրիարքին: Բարթողիմէոս Հայր Սուրբը կը ծախէ իր սեփական նոյժը եւ ճամբայ կ'ելլէ դէպի Երուսաղէմ: Զրի անցադիր մը կը ստանայ, կը շարունակէ Մարաշէն իր ճամբան: Մարաշի ֆրանսական փոխ հիւպատոսը՝ Պ. Բարթէլէմի որ զինքը շատ կը սիրէր իր քաջութեանը համար, իրեն անուանակից Հայր Սուրբին խորհուրդ կու տայ որ Հռոմի Պապին դիմէ, յոյս տալով որ վանքին վերաջինտութեան համար անպայման հազար ոսկի մը կու տայ, իսկ պակսածն ալ կը խոստանայ ինքը ամբողջացնել: Սակայն վարդապետը երթալ, դիմել չուզեց, նկատելով որ Հռոմի մէջ դաւանական հարց կը ստեղծուի թերեւս եւ առաջարկուի իրեն պապականութիւնը ընդունիլ: Այդ մասին հիւպատոսը չի կրնար հաստատ ըան մը ըսել եւ Բարթողիմէոս Հայրը Զէյթունի իշխաններուն յանձնարարութեան համեմատ Երուսաղէմ կ'երթայ: Հիւպատոսը նուէրներով ճամբայ կը դնէ զինքը:

Հայր Բարթոլղիմէոս Երուսաղէմ հասնելուն, Ձէյթունի իշխաննե-
րու հետը բերած յանձնարարական թուղթերով կը ներկայանայ Ե-
րուսաղէմ այն ատենուան պատրիարքին: Այդ ժամանակները Ձէյ-
թունի Առաջնորդ Կարապետ Եպս. Քէչէճեանն ալ հոն կը գտնուէր եւ
հարկ եղածը խօսեցաւ ան իր կողմէ պատրիարքին: Սակայն Յա-
րութիւն Պատրիարք մերժեց Հայր Սուրբին խնդրանքը եւ յայտնեց թէ
Երուսաղէմ նպաստ տալու օրէնք եւ սովորութիւն մը չունի: Հայր
Բարթոլղիմէոս, Ձեր այդ օրէնքը Աստուածային պատգամ է միթէ, չէ
որ մարդու շինածը եւ տնօրինածն է, կ'ըսէ արդեօք վանքին շինու-
թեան եթէ օժանդակէք Ս. Յակոբեանները եւ Յիսուս-Քրիստոս պիտի
նեղուէի՞ն: Պատրիարքը անզգայ կը մնայ եւ ընթացք չի տար այս
գիմումին եւ կ'ըսէ թէ՝ ուխտաւոր եկեղեցական մը ըստ մեր ա-
ւանդական սովորութեան, այս տեղ պատարագ մը կրնայ մատուցանել
եւ կէս մէճիտ մը ժամուց ստանալ: Հայր Բարթոլղիմէոս նեղուած
«Ես ոչ ուխտաւոր եմ, կ'ըսէ, ոչ ալ կէս մէճիտի համար պատարագ
մատուցանելու եկած եմ: Հիմա կը հասկնամ որ ձեր կանոնին մէջ
տալ չկայ, այլ միշտ առնել կայ: Շիտակը լաւ կանոն է: Հայր
Սուրբը երբ վրդովուած պիտի մեկնէր, Յարութիւն Պատրիարք կը
թելադրէր որ Պոլսոյ պատրիարքարանին դիմէ: Վերջէն վարդապետը
թէեւ խնդրագրով մը կը դիմէ նաեւ Պոլսոյ Պատրիարքարանը եւ
պատասխանով մը կը յուսադրուի համբերել, սակայն ի վերջոյ յու-

սախար կ'ըլլայ եւ առանց Երուսաղէմի պատրիարքին Աջր Համբուրեռ կը մեկնի Եգիպտոսի Աղեքսանդրիա քաղաքը, ուր հայ գաղութ մը գոյութիւն ունէր: Թաղականութիւնն եւ ազգային մեծերը լսեց ըլլալով անոր քաջ անցեալը, սիրալիր ընդունելութիւն կ'ընեն իրեն եւ յանձն կ'առնեն հոգալ անոր պէտքերը: Մինչեւ 1897 Հայր Բարթոլոմէ մէոս կը սպասէ այդ քաղաքը եւ կը սպասէ որ բարերար ազգայիններ ընթացք տան իր այս խնդրանքին: Սակայն ի վերջոյ ձեռնունայն կը հեռանայ Եգիպտոսէն:

Զէյթունի մէջ, երիտասարդներու պատկազրութենէն յետոյ պատկոշ քահանային կողմէ եղած պատուէրներ եւ խրատներ

Պսակէն ութ օր ետքը, պսակիչ քահանան կու գայ եւ ըստ կանոնի ամուսնացեալներու վրայէն ուրարը եւ խաչը վերցնելով, նախքան առադաստ մտնելին, նորապսակներուն, որոնք ծնկաչոք եւ պատկառանքով կը նստին քահանային առջեւը, հետեւեալ խրատները կու տայ, այսինքն աղջիկը փեսին կը յանձնեն:

— Զաւակներս, կ'ըսէ Տէր Հայրը, հիմա դուք գրեթէ նոր աշխարհ մտաք: Ասկէ առաջ երախաներ կը համարուէիք, իսկ այժմ խելահաս մարդոց կարգն անցաք: Ինչպէս Աստուած ըսեր է «Աճեցէ եւ բազմացարուք եւ լցէք գերկիր», այնպէս ալ դուք պիտի աճիք եւ բազմանաք, գաւակներ պիտի ունենաք, որոնք հոգւով, մարմնով առաքինութեամբ պիտի կրթէք, անոնց համար իրրեւ ծնողներ, Աստուծոյ առջեւ պատասխանատու էք դուք: Զեր գաւակները հոգեւոր գինուորներ պիտի ըլլան եկեղեցիին համար, իսկ ազգին եւ հայրենիքին համար ալ մարմնաւոր գինուորներ պիտի հանդիսանաք: Պսակադրութեան ատեն խօսած խրատներն համառօտելով այստեղ, կը կրկնեմ, որ Աստուծոյ առջեւ երկուքդ ալ հաւասար մարդիկ էք, այնպէս որ՝ մէկդ միւսիդ պիտի չիշխէք, մասնաւորապէս դուք՝ փեսաներդ ձեր կողակիցն իրրեւ սարուկ կամ ծառայ պիտի չնկատէք: Այժմ խօսիմ ձեր մերձաւորութեան պայմաններու մասին, եւ իրրեւ խոստովանահալ, հոգեւոր հայր, մի քանի անհրաժեշտ խրատներ եւս տամ այդ մասին, որոնք մինչեւ հիմա ձեզի գաղտնիք էին, եւ որոնք սակայն այժմ պէտք է որ գիտնաք իրրեւ ճշմարիտ հետեւողներ մեր եկեղեցիի Ս. օրէնքներուն:

Առաքեալի հրամանով՝ ամուսնութիւնը սուրբ է, սակայն ոչ սանձարձակ ու արտակարգ հեշտասէր ամուսնութիւնը, մեր Հայաստանեայց եկեղեցին արգելքներ դնելով արտակարգ հեշտասիրութեան դէմ, իր հաւատացեալները կը մղէ դէպի առաքինութիւն: Եւ մերձաւորութեան այդ արգելքները հետեւեալներն են.—

Մէկ շաբթուան մէջ երեք օր՝ Չորեքշաբթի, Ուրբաթ եւ Կիրակմուտք օրը պէտք է որ ժուժկալութեամբ անցնէք եւ չմերձենաք: Ինչպէս նաեւ ժուժկալութեամբ պիտի անցընէք շաբաթապահքերուն, մեծ պահքին, Յինանց եւ այլ Տէրունական օրերուն: Արգելք մը եւս, որը անհրաժեշտ է որ գիտնաք: Երբ յղութեան յայտարար նշաններ տեսնուին, պէտք է նոյնպէս անպայման կերպով դադրեցնէք ձեր յարաբերութիւնները, յղութեան երեւան գալուն օրէն սկսած մինչեւ ծննդաբերութեան օրէն քառասուն ութ օր յետոյ: Ահա ասոնք են ծննդաբերութեան օրէն քառասուն ութ օր յետոյ: Ահա ասոնք են մեր եկեղեցիի օրէնքները, որոնք եթէ չյարգէք, թէ՛ եկեղեցիի եւ թէ՛ Աստուծոյ առջեւ մեղանշած կ'ըլլաք եւ եւ եթէ գաւակներ ունենաք, փոխանակ բախտաւոր ըլլալու, ախտաւոր կ'ըլլան, ապուշ, դժբախտ, անյաջող, փորձանքոտ, ջլախտաւոր կ'ըլլան, քաջասիրտ չեն ըլլար, այլ վախկոտ, թուլամորթ, վերջապէս ճաղատ, կաղ, կուզ, կոյր, գոսացեալ եւ արտակարգ խենդ կ'ըլլան: Ահա հաղորդելով այս խրատները, կատարեցի իմ պարտականութիւնս, որով անպարտ եմ առաջի Աստուծոյ, դուք եւս ինչ որ արժանի է խորհեցէք:

Քահանան այսպէս վերջացնելով իր խրատները, կը շնորհաւորէ նորապսակները եւ «Պահպանիչ» մըն ալ ըսելով կը մեկնի: Պսակադիր քահանային խրատ տալու սովորութիւնը երկար ատեն գոյութիւն ունէր Զէյթունի մէջ, սակայն հետաքրքրութեան համար, աւելորդ չի համարեր մեր հայրենակիցը Սէմէրճեան իր «Զէյթունի անցեալէն եւ ներկայէն» հատորին մէջ, պատմել, այդ սովորութեան հետեւանք եղող իրողութիւն մը, զոր նոյնութեամբ ինչպէս վերոյիշեալ խրատականը, նոյնպէս եւ այդ իրողութիւնը յարմար նկատեցինք մենք ալ մեր կարգին մեր այս գործին մէջ բերել:

Բողոքականութիւնը Այնթապ եւ Մարաշ նոր մուտք գտած ատենները, Զէյթունի մէջ քահանայ մը նորապսակ երիտասարդի իր սովորական վերոյիշեալ խրատները տալով մեկնիլ կ'ուզէ, երիտասարդ փեսան Տէր Հօր քղանցքէն պինդ մը բռնելով կը կեցնէ եւ կ'ըսէ «Տէր Հայր, ո՛ւր կ'երթաս, խնդրեմ նստիր, եթէ հրաման կու տաս մի քանի խօսք ալ ես ունիս խօսելիք»: Խօսէ՛ գաւակս, կը պատասխանէ քահանան: — Զեր խրատներն ուշի ուշով մտիկ ընելով, կը շարունակէ երիտասարդը խօսիլ, մի բան յղացաւ միտքս: Կ'ուզեմ նախքան մեկնելիդ, հաջիւներս վերջացնել ձեզի հետ: Տ. Հայրը այլայլած, — Ի՞նչ հաջիւ, գաւակս, ըսէ կ'ըսէ անոր: «Ահա թէ ինչ հաջիւ կը պատասխանէ երիտասարդը, հարսանիքը, պսակը 5000 ղրշ. նստեցաւ մեր տան վրայ, այդ փողերը տուր, հարսն ալ առ եւ ուր կ'ուզես այնտեղ տար: Մեր եկեղեցին այդքան խստապահանջ է եղեր ամուսնացողներու նկատմամբ, ես կը կարծէի որ՝ երբ ամուսնանան, կ'աշխատին կարե-

լի եղած չափ շատ զաւակներ ունենալ, իսկ ձեր ըսածները մեզ որդեծնութենէ զրկելու խրատներ են, նոյն եկեղեցին իր ժողովուրդին թշնամին է եղեր: Բան մը, որուն խելքս չհասաւ: Երբ եկեղեցին մէջ ժողովուրդ չըլլայ, այդ սրբավայրին խերը տես: Ի՞նչ է այս, այս օր Չորեքշաբթի, միւս օր Ուրբաթ, օր մը յետոյ Կիրակմուս, Շաբաթապահ, Մեծ Պահ, Երեքշաբթի եւ Տէրունական օրեր եւայլն: Առաջիններուն համակերպինք, իսկ սա Մեծ Պահ եւ Երեքշաբթի ի՞նչ ըսենք Տէր Հայր, Կուգէք որ ատոնց հաշիւը տամ ձեզ ահա: Երեքշաբթի օր Մեծ Պահ, յետոյ օր Երեքշաբթի, եղաւ հարիւր, մօտ երեք ու կէս ամիս, ասիկա կը տարուի՝ թէ փեսին եւ թէ հարսին համար, միանգամայն անտանելի է այդ արգելքը: Եղութեան մասին բան մը չեմ ըսեր, տասը ամիս տասն օր ամենասրբութեամբ կը պահեմ այդ պատուէրը, անասուններն անգամ յղութեան ատեն չեն մերձենար միմիանց, օրինակ. ձին երբ յղի է, ո՛չ արուն կը մօտենայ ոչ ալ էգը թոյլ կու տայ որ իր մօտ արու ձի երթայ: Եթէ մենք յղութեան ատեն օրինազանց ըլլանք, անասուններէն ալ վարնոց կը սեպուինք: Ետտ լաւ կ'ըսէ Տ. Հայրը, զաւակս, բայց մեր եկեղեցին օրէնքը այսպէս է եւ մեր Ունիոյ ժողովուրդը բոլորն ալ եկեղեցին օրէնքը յարգելով ամուսնացել են, չէ՞ որ քու հայրդ ալ այդ սովորութիւնները յարգելով ամուսնացել է եւ դուք եօթը եղբայրներ էք, եօթը ալ կտրիճ երիտասարդներ, բայց այդ Յակոբ Նահապետի նման 12 եղբայրներ ունեցողներ ալ կան, այնպէս որ եթէ մեր եկեղեցին սանձարձակ եւ հետաքրքիր ամուսնութեան դէմ արգելքներ դրած է, այդպիսով մեր Ունիոյ ժողովուրդը աւելի օգտուելու է քան թէ վնասելու, ասկէ զատ մեր երկրի կիները ընդհանրապէս քաջառողջ եւ արու զաւակներ կը ծնին: Իզական սեռը նուազ է Զէյթունի մէջ, շատեր հարսերը գուրսերէն կը բերեն եւ այդ քաջ սերունդի շնորհիւ է, որ աղքատիկ լեռնոտ երկրին մէջ, մենք՝ ափ մը զէմ-թունցիներ կըրցած ենք մեր ազատութիւնը պահել: Փեսան դեռ չհամոզուելով Տ. Հօր ըսածներուն, «Լսեցի որ, կ'ըսէ ան, թէ Այնթապ, Մարաշ տեսակ մը (միլլէթ) ազգ եկած է, շատ հայեր անոնց կրօնքին կը յարին եղեր: Այդ միլլէթը փրօթէսթանդ կ'ըսուի, անոնք ո՛չ պահք ունին, ոչ Տէրունական օր, ոչ պատարագ, ոչ ալ առտուն կանուխ ելնել երթալ եկեղեցի, ոչ ալ երեկոյեան ժամերգութիւն, Կիրակիէ Կիրակի նախաճաշելէ յետոյ ժողովարան ըստած տեղ մը կը հաւաքուին եւ մէկը ելնելով Աւետարան կը քարոզէ եղեր, կարդացածին ալ Աւետարան է կ'ըսուի Ուրիշ շարական, մեղեդի կամ ներդաշնակ բաներ չունի, ժողովուրդին ասանկ ծանր պատուէրներ, յղութեան օրերուն պահեցողութեան արգելք եւ այլ նման բաներ չկան եղեր:

Ես եղբայրներէս կը զատուիմ Մարաշ կ'երթամ եւ փրօթէսթանդ կ'ըլլամ: Տակաւին ըսելիք մը ունի՞ք ինծի:

Քահանան երբ փրօթէսթանդ անունը կը լսէ, կը թուլնայ եւ գրեթէ բոլորովին գունաթափ եղած կ'ըսէ. — Զաւակս, կ'ափսոսամ վրադ: Կրօնդ եթէ փոխես, ազգութիւնդ ալ մէկտեղ կը կորսուի, գոնէ կրօնքդ մի փոխեր, եկեղեցիի պատուէրները քու կամքիդ կը ձգեմ «Արիւն քո ի գլուխ քո», ես անպարտ եմ յաւուրն դատաստանի: Միայն սա խօսքն ալ ըսեմ ու երթամ, երեսուն տարի է որ քահանայութիւն կ'ընեմ, այսպիսի դժուարութեան չէի հանդիպած: Այդ միջոցին երիտասարդը ոտքի ելլելով, Տ. Հօր ձեռքը կը բռնէ, կը նստեցնէ եւ լալով կ'ըսէ. «Տէր Հայր, ներողութիւն, երբ ազգութիւնդ ալ կրօնքին հետ կը կորսուի, ըսիք, նպատակս փոխեցի, ի՞նչ ըսել է, հաճոյքիս համար ազգութիւնս եւ կրօնքս փոխեմ, երբեք, թոյլ եւ անժուժկալ մարդ մը եղած պիտի ըլլամ: Տէր Հայր, ասկէ յետոյ ապահով եղիր ճորաստեղծեալ մեր երգին հետ չեմ փոխեր բոլոր փրօթէսթանդութիւնը, հապա մեր եկեղեցիին «Այսօր անճա՛ռը»: Խնդրեմ Տէր Հայր, ձեզ շատ ձանձրոյթ պատճառեցի, «ողորմեացի» մը ըսէք ինծի եւ գացէք: Տէր Հայրը անհուն ուրախանալով Հայաստանեայց Եկեղեցիի հաւատացեալի մը չկորսուելուն, կը սկսի բողոքականութեան մասին մի քանի տեղեկութիւններ տալ իր կողմէ: «Զաւակս, դեռ դուք ի՞նչ գիտէք, ատոնց բողոքական ալ կ'ըսենք մեր լեզուով, լուսերական ալ կ'ըսուին: Հռոմէն Լուսեր անուն կաթողիկ վարդապետ մը փրօթէսթանդ ըստած կրօնքը հնարեց: Մեր Մատթէոս Պատրիարքը «Բարի մարդ, բարի քրիստոնեայ» անուն գիրք մը գրեց, անոր մէջ բողոքականներու բոլոր արարքները գրուած են. թէեւ անոնք ալ մեր հաւատացած Քրիստոսին կը հաւատան, բայց մեր եկեղեցին անոնց եկեղեցիէն տարբեր է: Աւետարանը արդէն ըսած է թէ՛ սուտ քրիստոսներ պիտի դան, հրաշքներ պիտի գործեն, բայց չհաւատաք անոնց, աւելի սոսկալին ըսեմ, օր պիտի գայ որ մեր հաւատացած իրաւ Քրիստոսին ալ չհաւատացողներ պիտի ըլլան, մինչեւ անգամ Աստուծոյ գոյութիւնը ուրացողներ պիտի ըլլան, ո՛չ թէ ռամիկները, այլ բարձր ուսում ունեցողներն անգամ: Այդ մասին Ս. Գրքին մէջ մարգարէութիւններ կան: Պէտք է որ մենք հաստատ կամքի տէր մարդիկ ըլլանք, ուրիշ կրօնքի չհետեւինք: Մենք հին ժամանակ հեթանոս էինք կրօնքով: Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետը մեզ Քրիստոսի կրօնքը բերաւ եւ սորվեցուց: Պէտք է այդ շաւիղէն քալինք եւ չչեղինք: Գրիգոր Լուսաւորիչը բոլոր ազգերն ալ կը ճանչնան եւ կը յարգեն: Մենք պէտք է մեր եկեղեցիի օրէնքներուն հաւատարիմ եւ նախանձախնդիր ըլլանք որպէսզի թէ՛ այս աշխարհի

վրայ եւ թէ հանդերձեալին վայելենք նախախնամութեան բարիքները, Քահանան վերջացնելով իր յորդորները Վոլոդմեցին կու տայ երկ-տասարդին եւ տեսնելով նորապսակ փեսային Հայաստանեայց Եկեղեցիին հանդէպ հաւատարիմ մնալու ուխտը, շնորհակալութիւն կը յայտնէ եւ գոհ սրտով կը մեկնի:

Այս դրուիւր, ինչպէս քիչ առաջ անուղղակի յիշեցինք, նոյնութեամբ գրեթէ արտագրեցինք Սէմէրճեանի «Ջէյթունի անցեալէն եւ ներկայէն» հատորէն:

ՇԱԽՐՕ (Մկրտիչ Միտաքեան) Ջէյթունցի հօրմէ

Բնիկ կարսեցի էր Շաւրոն, իսկական անունն էր Մկրտիչ Միտաքեան: Ջէյթունցի Յակոբ Աղայի տղան էր: Մանկութեան կը դրկուի ձեմարան եւ բոլոր կարգի ուսանողներուն նման, կ'արտաքսուի ձեմարանէն իր ըմբոստութեան պատճառով: Ներսէսեան վարժարանին մէջ կը շարունակէ իր ուսումը եւ աւարտելէ ետք կը վերադառնայ իր ծննդավայրը՝ Կարս եւ ուսական դատարանի մէջ կը ստանայ գրագրի պաշտօն: Իր գրագրութեան շրջանին Հնարաւորութիւն կ'ունենայ շատ կարեւոր պետական «զաղտնի հրահանգներ» մերոնց ձեռքը հասցնել: Բայց այս գաղտնի հրահանգներուն բացայայտ դառնալը առաջ կը բերէ կասկածներ, եւ օձիքը ձեռք չտուած, Շաւրօ կ'անցնի Պարսկաստան, այլեւս Ղարս մնալը Հնարաւոր չլինելով: Ան, որպէս թէ Խոյ պիտի մնար, բայց Կուտի (Համբարձումեան) Հոն երթալով, Շաւրոն կ'անցնի Մենաւոր (Թադէոս առաքեալի վանք) Ընծայրին օգնելու: Բնաւորութեամբ շատ եղանդուն, քիչ մըն ալ քէլէկէօզ, չբաւականանալով Մենաւորի աշխատանքով, փոխադրական գործին աւելի մեծ մղում տալու ցանկութեամբ, կ'անցնի Ապաղայի շրջանը, հակառակ Ընծայրի ընդդիմութեան: Հոն, սակայն փոխանակ տեղացիներու միջոցով աշխատելու, կը ծանօթանայ հայտարանցի Կոր Մէհմէտ Պէկի Ղօլամ Ֆախլիին եւ անոր հետ, որպէս թէ եղբայրացած կ'աշխատի վանքի ապրանքը (զէնքերը) փոխադրելու միջոցներ գտնել: Օր մը սակայն Ֆախլիի հետ ճամբորդած ատեն, աղբիւրի մը թով, երբ Շաւրօ կը ծոխ ջուր խմելու, նամարդ «եղբայրը» գնդակով մը կը մահացնէ այդ պատուական երիտասարդը, հազիւ քսան չորս տարեկան կը լինէր այն ժամանակ: Բարձրահասակ, թխորակ, սիրուն երիտասարդ մըն էր Շաւրոն, կենդանի եւ ոգեւորող բնաւորութեամբ: Ուժեղ ղեկավարի մը ձեռքին տակ, անկասկած որ շատ օգտակար ոյժ մը կարող էր դառնալ, մինչ իր բախտին ձգտած, այդպէս ան-

ժամանակ նահատակուեցաւ: Դեռ Թաւրիզ եղած ժամանակները, ան գրեց երեք տարեկան իր զաւկին շատ յուզիչ նամակ մը... Այդ նամակը իսկական պատկերացումն է Շաւրոյի բոմանթիք եռացող հոգիին:

Նամակը

Սիրելի եւ պաշտելի Յակոբիկս,

Վերջին անգամ քեզ իմ սրբազան կտակն եմ անում: Դու միշտ աչքի առաջ ունեցիր, որ ես քեզ՝ Ջէյթունցի պապի՝ իմ հօր՝ Յակոբի անունն եմ տուել: Բո պապը եւ քո հայրը գնացին միեւնոյն ճանապարհով, եւ դու, իբրեւ արժանի յաջորդ՝ պարտաւոր ես նոյն ճանապարհով գնալ: Այդ ճանապարհը փչոտ է եւ դառն, այնտեղ երբեք վարդեր չեն բուսնում: Բո պապը եւ հայրը երբեք վարդերի վրայով չեն անցել, այնպէս որ դու էլ չես անցնի:

Իբրեւ նովորական յիշատակ՝ քեզ ուղարկում եմ, որպէսզի անպատճառ հազնիս այս չէրքէզկին, կապես հօրդ գօտին եւ այս մահացու սուրն էլ վրադ կրես: Թո՛ղ իմ հայրական օրհնութիւնը քեզ վրայ լինի, թող այս սրբազան դաշոյնը քո բողոքի վրէժխնդրութեան ազատարար թոյնը, որ դուն կարողանաս քո հօր վրէժը առնել: Ես գնում եմ մեռնելու եւ կտակում եմ քեզ, անգին զաւակս, որ դուն նոյնպէս գնաս արիւնի եւ արտասուքի երկիրը, վրէժխնդիր լինես քո հօր, սպաննուած մայրերի, բռնաբարուած անհամար քույրերի պատուի համար:

Եթէ ես մեռնիմ, եւ այլեւս չկարողանամ քեզ, սիրելի Յակոբիկս տեսնել, այս երկտողս կարծում եմ բաւական է, որ դու ըմբռնես այս գործի սրբութիւնը, ազատութեան այն ջերմ ու սուրբ փափաքը, որին դու գիտակից կերպով պէտք է վերաբերուիս եւ հօրդ վերջին կամքը կատարես: Իսկ եթէ դու իմ արժանաւոր զաւակը պիտի լինես, եւ քո բարօրութեան եւ եսի մասին խորհիս, հենց այժմից առնի՛մ եմ քեզ, թող յաւիտենական ամօթը միայն դրոշմուի անարժան որդու ճակատին, որ չլսեց իր հօր խրատը:

Ես գնում եմ մեռնելու, վրէժ առնելու, արտասուքներ սրբելու, թող իմ սրբազան պատգամը քո մանկական հոգուն թափանցէ հենց այժմեանց: Ես յոյս ունիմ, որ իմ թանկագին զաւակը կը լինի այնպէս, ինչպէս որ եղել է իր հայրը եւ պապը:

Էյ սիրելի եւ պատուական ամուսինս, քեզ վրայ այնպէս պարտականութիւն եմ դնում, քո որդին կրթել այնպէս, ինչպէս եմ պատգամել: Չէ՞ որ ես քեզ սիրում եմ, եթէ դու էլ ինձ սիրում ես (եւ դրան հաւատում եմ), վրիժառու արալան առիւծ դարձրու իմ Յակոբիկին:

Մնաք բարով, թող Աստուած օրհնի ձեզ եւ թող իմ ցանկութիւնները միայն ցանկութիւն չմնան: Համբուրում եմ բոլորիդ: Իսկ կը ցանկանայի որ Այծեմնիկը լինէր այնպիսի հերոսուհի, որպիսին էր Անիի պարիսպների վրայից պատերազմող Այծեմնիկը: Մնաք բարով: Համբուրում եմ խորին կարօտով բոլորիդ:

Ձեր Մ. Միսաքեան
(Գուրգէն Չանանդեցի)

24 Յունուար 1904

Թաւրիզ-Պարսկաստան

Մայիսի Ապրումներ Ա. Հատոր, էջ 225-228-էն արտագրուած նոյնութեամբ (հոն է նաեւ Շաւրոյի գեղեցիկ նկարը)

Հայդուկի մը յուշերէն
ՋԵՅՈՒՆՑԻ ՍՈՒՐԷՆԸ

1903 Սեպտ.ի գեղեցիկ օրերէն, մի աստղայից երեկոյ մեր բակի դրանը մուտքը զարկեցին: Դուռը բացի: Անծանօթ ձիաւոր մըն էր եկողը: Բարեւելէ ետք, հարցրեց.- «Ամի Խերոյենց (Հայրիկիս անունն էր) տունն ասի՞ է»:

«Ներս հրամանեցէք, սիրելիս, ճիշդ հասցէին եկած էք»:

Նախ քան նստիլը, անծանօթ բարեկամը գոց պահարանով նամակ մը երկնցուց ըսելով.- «Երեւանի Կ. Կոմիտէի կողմէ ուղարկուած է, ձեզ յանձնելու»:

Բացի ծրարը: Հետեւեալը կը պարունակէր իր մէջ.-

Ընկեր Ղազար,

Շրջանդ է գալիս Ջէյթունցի Սուրէնը, մէկը մեր լաւագոյն մտաւորական գործիչներէն: Որպէս գործակից միասնաբար, ձեռք ձեռքի տուած աշխատեցէք զարկ տալու կուսակցական գործերու: Ընկերական բարեւներով

ԿՆԻՔ

Ինչպէս վերը յիշեցի, 1903 Սեպտ.էն մինչեւ 1904 Յուլիս, այսինքն Մօսուէն-Ջօդի արշաւախումբերու մեկնելուն օրը, Սուրէնը ապրեց մեզ մօտ, որպէս մեր ընտանիքի մէկ անդամը: Տունէն մեր բաժնուելուն օրը բարի երթի եկած էր նաեւ ծերունի Հայրս: Երկուսիս ալ հաւասար կերպով իր օրհնութիւնը տալէ վերջ, մեր ճակատները համբուրելով, ըսաւ.- «Գերի չիմաք եւ ձեր կոնակէն դնդակ չընդունիք: Դէ գնացէք գաւազներս: Մինչ այդ Մրգաստանի (Երեւան) Կ. Կոմիտէն ձեռնարկած էր եւ մեծ պատրաստութիւն կը տեսնէր քանի մը խումբերու մէջ, զանազան գծերով եւ յաջորդաբար զանոնք եր-

կիր մտցնելու: Ասոնց թուումն էին դէպի Մօսուէն Ջօդ գնացող զոյգ արշաւախումբերը:

Այդ օրերուն Հ.Յ.Դաշնակցութիւնը փոթորկալից պայքարի հնոց էր դարձած: Խմբապետ, գործիչ, նոյնիսկ հայ գիւղացիութեան որոշ մէկ տոկոսը՝ ամբողջովին կյանուած էին կուսակցական աշխատանքներով: Ոգեւորութիւնը ամենուրեք իր դազաթնակէտին հասած էր: Սուրէնի հետ միասին, մեր սեփական ձիերը նստած գիշեր ու ցերեկ կը թափառէինք շրջանների զանազան գիւղերում, եւ տեղւոյն վրայ Կ.Ի անդամներուն հետ համախորհուրդ՝ զինուորներ կը պատրաստէինք եւ կը մարզէինք զանոնք ապագայի զինատար կամ արշաւախումբերուն համար: Սուրէնը անուրանալի աշխատանք կատարեց «Արտաւազդ» եւ «Մասիս» խումբերու սարքաւորումի ընթացքին:

ՈՎ Է ՍՈՒՐԷՆԸ

Բարի, ազնիւ, համակրելի, միջակէն բարձր հասակով եւ հայդուկի գտնմ գզացումներով օժտուած մի երիտասարդ էր: Մնած 1877-ին Ջէյթուն, Ջէյթունի չորս իշխանական ընտանիքներուն մէկուն շառաւիղներէն: Աւարտած է քաղաքին նշանաւոր Ս. Յակոբ Կեդրոնական վարժարանը:

Դպրոցական, արդէն կ'անդամակցի կուսակցական աշակերտական խումբերուն, եւ յետագային կը դառնայ անոր անձնագործ մարտիկներէն մէկը: Երբ կազմուեցան «Արտաւազդ» եւ «Մասիս» արշաւախումբերը 1904-ին, Սուրէնը արձանագրուեցաւ «Մասիս» խումբին մէջ, ստանձնելով անոր առաջին տասնեակի ղեկավարութիւնը: Ամբողջ խումբի, ի մասնաւորի իր տասնեակի տղաները անսահմանօրէն կը սիրէին ու կը յարգէին զինքը: «Մասիս» խումբին վրայ պարտականութիւն դրուած էր, արշաւելու սահմանի միւս երեսին վրայ եղող Ջօդի գօրանոցի եւ անոր յարակից 100-է աւելի քրտական վրաններուն վրայ եւ հարաւ: Յիշեալ պահակատունը եւ վրանները կը գտնուէին Ջինկ-լի լեռան եւ Ջօդա Կետուկ կոչուած բարձունքներու լեռնաշղթայի պարագօտիում եղող մի ընդարձակ ու տափարակ դաշտի վրայ: Ջօդուն եւ Մօսուէն հայ գիւղերէն դէպի Հիւսիս, մօտաւորապէս 30-35 քմթր. հեռաւորութեան վրայ: Այս տեղի մուտքը եւ ելքը, սահմանափակ եւ նեղ կիրճով էր կատարուած: Ծիշդ Ռէսի Գոմեր կոչուած սարի ստորոտով է անցնում անոնց ճանապարհը: Մատնանշուած սարը մեր վերջին կայանն ըլլալով, անոր կատարին ցերեկը անցրնելէ ետք, մաքրամուտին խումբերը վրայ իջնելով լեռան ստորոտում էլ կատարեցինք խումբերու բաժանումը: «Արտաւազդ» խումբը բունց դէպի Մօսուէն գնացող ճանապարհը: Իսկ «Մասիս»ը շեղելով ուղին, դէպի Հիւսիս

գնաց, իր նպատակակէտի Սուրէնի տասնեակը հասնելով կիրճի բերանը, աննկատ եւ անշուկ կը մտնեն, առանց մի որեւէ միջադէպի կը յաջողին գրաւել ռազմական կարեւոր բոլոր դիրքերը եւ շրջապատելով զօրանոցն ու վրանները կիրճին ելքի եւ մուտքի պաշտպանութիւնը կը ստանձնէ Սուրէնը, իր տասնեակով միասին: Չմոռնամ ըսելու, որ այդ օրը աշիրէթապետ Ուսուսուփ Պէկը բացակայ կ'ըլլայ վրաններէն: Զինուորական փողի միջոցով, յարձակումի ազդանշանը տրուեցաւ եւ լուսաբացի ատենները մերոնց նախաշարժակումովը կոխը սկսուեց ու տեւեց ամբողջ օրը, մինչեւ մութը պատեց գետինը: Ստուար թիւով զինուորներ եւ քիւրտեր, գրոհելով կիրճի վրայ, կը փորձէին ներսէն դուրս գալու: Բայց, բախելով մերոնց անեղ կրակին, մեծ զոհեր տալով նահանջեցին իրենց տեղերը: Կոխը օրհասական է: Այդ նեղ պարագային, դուրսէն կու գայ ցեղապետը, 100-է աւելի ճիւղերով, ու կը փորձէ կիրճէն ներս մտնելու: Դարձեալ մերոնց հերոսական կրակի տակն ինչալով, պահ մը չփոթած, կանգնած կը մնան մուտքին առաջ: Սակայն դուրսէն եւ ներսէն շրջապատուած են տղաքը, ոչ մէկ փրկութեան յոյս կայ: Եւ գնալով թշնամին օղակը սեղմում է: Պաշարուածներէն մազապուրծ ազատուող մարդիկը կը պատմէին. «Տասնապետ Սուրէնը եւ ցեղապետը, դէմ դիմաց քարերուն ետեւը չոքած՝ կը կռուէին: Հինգ փամփուշտ կրակելէ վերջ, սառնարին կերպով հրացանը վար կը դնէր ու կը սկսէր ծխել Սուրէնը, եւ այսպէս շարունակաբար: Միւս կողմէ քիւրտերը կը կանչէին. Ե, Ե, Ուսուսուփ Պէկ, դուն որ գնդակով հակիթը գետնէն կը վերցնէիր, այսօր ի՞նչ է պատահեր, չե՞ս կարողանում հայու մը կեանքին վերջ տալու:»

— «Մայիսարաբանոյ (աւեր տուններ), կեանքիս մէջ այսպիսի նշանառու եւ գնդակ նետողի չէի հանդիպած, նա ինձմէ ուժեղ է, ասում է պէկը: Խօսքը ցեղապետի բերնին մէջ էր, երբ դիպեալ գետին գլորուեց ան Սուրէնի անշուկ գնդակից:»

Հ.Յ.Դաշնակցութեան ակնաւոր նահատակներու շարքին են պատկանում յաւէտ, անմոռանալի զէյթունցի հերոս Սուրէնը եւ իր տասնեակի տղաքը, որոնք զոհուեցան հայ ազգի ազատագրութեան ճամբան, Յուլիսի 24-ին, 1904 թուին, Զօրակետուկի կիրճի պաշտպանութեան ճակատամարտի միջոցին: Փառք, յաւէտ փառք, իր անմահ յիշատակին

ՀԱՅԴՈՒԿ ՂԱԶԱՐ

(Առնուած Արեւիք օրաթերթէն

12 Յուլիս, 1960)

Զէյթունի անմիջական շրջակայքը

Զէյթունի աղբիւրները

Պըղ աղբը (պաղ աղբիւր)

Նահատակ աղբիւր

Մուրուք աղբիւր

Պէզիրէն աղբը

Փալթինց աղբը

Ինիկոնց աղբը

Օկ

Թիւթիւ աղբը

Խեւ աղբը

Սիւ աղբը

Ըսկանտոր աղբը

Ս. Գէորգ աղբը

Սաղտալոր

Մըխլ աղբը

Սուսաղբը

Տէօզք

Վանոցն աղբը

Ս. Փրկչի աղբիւր

Ծրկու ջերմուկները

Զաթու աղբը

Տամպը աղբը

Հայրում աղբը

Պայախտանըն աղբը

Մըղարենց աղբը

Ատուրենց աղբը

Գրըմաղբիւր (Զերմ...)

Ճարտընից աղբը

Շըարչարը

Վալլեր

Տօղ

Էլ

Էրէֆէ

Քէրծէր

Զորեր, պարտէզներ, այգիներ

Ճապկիչայի

Աւալայի

Պախլման ձոր

Տալախըն ձոր

Ձազուկանը ձոր

Ճրագոն

Շուղը

Կարմարտեր (Կարմիր արտեր)

Սասուլան ձոր

Տէվիլին ձոր

Անի ձոր

Գանձոր

Տափ

Փափըն ձոր

Բամբկի ձոր

Զովու (ուխտատեղի)

(զոռ=զուար)

Խէպի, ֆէնկ

Շէնպէք

Թոխլու

Շէհիճուկ

Բուր

Շիպիկոնը մօտ

Քէլալէ մօտ

Զելթուկ

Ղարօղլօն

Թօխլու

Շէնպէկ

Հէվիւրկոնկէօլ

Ձանաղայը

Խէխմէ

Քաքնոն

Անտուկ

Տըազտավ

Քէրէրտիներ
Ափրնաքարտոկ
Խէաչոր
Տափոկ քոր
Ֆօշան քոր
Օրթանըն տէրք
Օգդղայասը
Չուլուխընպայըը
Էրոն (այրած)
Կոռնոկ քոր
Տափոկ քոր
Ճեմարանի դարը
Ախ վախը
Ղըլպուզ
Ղարաչալթը
Բարոկ սող
Փխիր
Ղուրա
Կիւրիւտին

Կանկրոտ
Սախօր էգէ
Անտառուն
Վերի ուռան
Պըլախնիւնց մօտ
Ախթսանինց մօտ
Թըլլինց քարեր

Կամուրջներ
Շուղրի կամուրջ
Պաղաղբիւրի կամուրջ
Պօղոս Պետրոսի

Մագէ կանտարօ
Քարէ քանտարիկ
Կարսի կամուրջ

Լեռներու անուններ
Պէրիտ
Սաղաւը
Պէրզինկա
Մաւըլը-Մանկաղ
Սօլագտէտէ
Ղուզախ
Շէնպէք
Աթըլի
Սանտոխ
Հուպօք
Ղանտիլ

ԶԵԹԹՈՒՆԻ ՎԵՐՁԻՆ ԻՆԸ ԱՄԻՄԵՆՐԸ

(10 Օգոստոս 1914-էն 14 Մարտ 1915)

Թուրքիոյ ընդհ. զօրաշարժը սէֆէր պէրլինք Զէյթուն զինուորական կեդրոն. առաջին անախորժ կացութիւնը Զէյթունի մէջ. Զէյթունցիին չուզեր զինուոր երթալ. Մարաշի, Անտըրնի եւ չըջակայ թուրք զիւզերուն բողոքը Զէյթունի մասին Կ. Պոլիս. Բ. Դուռ. Ալի Հաջ-տար Զէյթուն կու գայ վաշտ մը զօրքով եւ մարաշցի երկու երեւի Հայեր Հեան առած. անոր դիւային մեքենայութիւններն ու բարբարոսութիւնները Զէյթունի եւ Մարաշի մէջ Նազարէթ Չաւուշի, աղանկուն եւ բոլոր կալանաւորներու Հանդէպ. դաւազանի Հարիւրաւոր Հարուածներու տակ զէնք կը Հաւաքէ, լմբոստները կը պահանջէ. Առաջնորդ Գրանֆիլեան Վրդ., Թղ. Սաղուպեան, Նշան Սգեկիէլեան Հալէպ կը ղրկուին դատուելու. Նազարէթ Չաւուշ զաւազանի Հարիւրաւոր Հարուածներէն յետոյ, վէրքերէն թունաւորելով կը սպաննուի բանտին մէջ. Սահակ Կաթողիկոսի գիծումը, կեդրոնական կառավարութեան՝ Պոլիս, նախարարութեանց, յետոյ Ճէմալ Փաշայի, Հալէպի կուսակալին, կալանաւորներու մէկ մասին ազատ արձակումը

1914-ի ամառն է: 10 Օգոստոս: Այս ամիսը գէյթունցիներուն Համար ուրախութեան, խրախճանքի, տօներու Հանդիսաւոր օրերու շարք մը կ'ըլլար ամէն տարի: Պարտէզներն ու այգիները դրախտի տեսարաններ կը պարզէին: Վերափոխման Տաղաւար, Նաւակատիք Աստուածածնայ: Ս. Աստուածածնայ վանքը եւ Զէյթունի չորս եկեղեցիներուն մէջ պատարագ եւ խաղողօրհնէք: Ամէն կողմերէ, Մարաշէն, Այնթապէն եւ երբեմն նոյնիսկ Հեռաւոր քաղաքներէ ուխտաւորներու բազմութիւններ մատաղներով եւ նուէրներով կու գային Զէյթուն, Ս. Աստուածածնայ եւ Ս. Փրկիչի վանքերը: Այդ Հանդիսութիւններէն անմիջապէս յետոյ գէյթունցիին եւ առաւելապէս Պօղ-Պալիւր թաղի ժողովուրդը գրեթէ ամբողջութեամբ, ընտանիքներով կ'ելլէին այգիները չամիչձէգիւ Անի ձորի, Տէվիլին ձորի, Հալւորի լճի, Խախաքի, Խէպիի, Տափի այգեստանները կը լեցուէին աղուորներով, մշակներով եւ ընտանիքներով: Աշխատանքն ու երգը իրար կը լրացնէին: Ահա այդ գեղեցիկ օրերէն մէկն է: Թուրքիոյ մէջ ընդհանուր զօրաշարժ-սէֆէրպէրլիք կը յայտարարուի: Կնքուած-գոցուած կարմիր պահարանները բացուած են ամէն կողմ: 45 տարիքը չըրացուած ամէն թրքահպատակ զինուոր է եւ պարտաւոր է ժամանակին ներկայանալ իր չըջանի զինուորագրութեան կեդրոնին, արձանագրուիլ ազդ-ապէր շէպէի մէջ եւ ստանալ Համապատասխան վաւերաթուղթերը, վերադառնալ: Անսաստողները մահուամբ կը պատժուին: Զէյթունի զօրանոցը

կը նշանակուի կեդրոն զինուորագրութեան բաւական ընդարձակ շրջանի մը: Այնպէս որ Զէյթուն կու գային եւ պիտի գային ո՛չ միայն Զէյթունի շրջանակին հայ եւ թուրք բնակչութիւնը, այլ, սկսած էին Զէյթուն գալ Կոկիսոնի, Ալպիստանի, Արբիուսի (Եփեսոսի-Եսարփուզի) ինչպէս նաեւ Անտրոնի շրջանի զինուորական տարիք ունեցող բոլոր թրքահայատակները, թուրք, հայ, քիւրտ, չէրքէզ: Ահա ամէն օր կու գային անոնք հարիւրներով, հազարով: Ոեւէ իջեւան, պանդոկ կամ հասարակաց տուն ոեւէ ընդարձակ վայր չկար Զէյթունի մէջ, հազարաւոր զինուորները օրերով պատսպարելու համար: Զէյթուն, տուներու մէջ, օրերով հիւր պահուեցան եւ կերակրուեցան անոնցմէ շատեր: Եղաւ երբեմն որ մէկ տունի մէջ 15-20 հոգի պահուեցան: Սակայն դարձեալ շատեր մնացին դուրս անպատսպար, ծառերուն տակ, ճամբաներու երկայնքին եւ փողոցներու անկիւններու: Այսպէսով, Զէյթուն օրէ օր կը լեցուէր ու կը վիստար թուրքերով: Անախորժ եւ սգեղ կացութիւն մը կը ստեղծուէր Զէյթունի մէջ: Սակայն զէյթունցիներ չէր կորսնցներ իր պաղարիւնութիւնը: Ընդհակառակն, զէյթունցի կիներ մարադասիրական եւ գթութեան զգացումէ տարուած, հանգանակութեան կ'ելլէին տուները, կը հաւաքէին հաց, ձաւար, դրամ եւ ընդեղէններ, ուրիշ սննդեղէններ: Չորս կամրիագլուխներուն հաստատելով պղինձէ խոշոր կաթսաներ, կը սկսէին անոնք տաք կերակուր, չորպա, եղինձ պատրաստել, հաց թխել եւ կերակրել անօթի զինուորացուները: Այս գործը կը շարունակուի աւելի քան երեք շաբաթ: Բայց հետզհետէ կու գային զինուորացու թուրքեր, կը լեցուէին Զէյթունի ներսն ու դուրսը, կը ծանրանար անախորժ կացութիւնը, որովհետեւ գրեթէ Զէյթունի հայութեան չափ թուրքերով կը լեցուէր Զէյթուն, եւ յետագային անկարելի կը դարձնէր զանգուածային ըմբոստութեան ոեւէ փորձ զէյթունցիներու կողմէ: Իսկ դուրսէն, զինուորագրութեան համար եկող եւ Զէյթուն լեցուող թուրքերը, Զէյթուն գալ մտնելը արգիլելու, օրինական եւ իրաւական ոչ մէկ պատճառ կարելի էր ներկայացնել կառավարութեան: Նման արգելք մը պատճառ պիտի ըլլար թրքութիւնը գրգռելու եւ խնդիր ստեղծելու: Համաձայն զօրակոչի տրամադրութեան, զինուոր տարու պատրաստ էր նաեւ զէյթունցիներ: Ան թէեւ դարեր կուրեր, պատերազմեր էր թուրքին դէմ, պարտութեան մատնած էր թուրքիս եւ Ազիզ փաշաներու բանակները, Բէմզի եւ Էտհէմ փաշաներու եւ Ալի Պէկի հարիւր տասը հազարներու հասնող զօրքերու եւ խուժան պաշտպանութեան, զօրագունդերն ու բանակները, սակայն թուրքին զինուոր ըլլալ չէր ուզեր զէյթունցիներ: Ան լաւ գիտէր թէ՛ որպէս զինուոր թուրքին ծառայելը անիմաստ ըլլալէ զատ, վտանգաւոր, աղիտաբեր

պիտի ըլլար հայութեան եւ նոյնիսկ մարդկութեան: Թուրքին զինուոր ըլլալ, կուրի երթալ անոր հաշուոյն, կը նշանակէր թշնամի դառնալ քաղաքակրթութեան, զօրացնել թշնամին եւ ետ բերել բարբարոսութեան դարերը: Նման ընթացքով մը, զէյթունցիներ գիտէր, թէ իր իսկ ձեռքով աւելի կ'ամրացնէր ու կը նեղցնէր իր շուրջի շրջան: Այս նկատումներով չէր ուզեր զէյթունցիներ զինուոր երթալ, նախապէս զացողներն ալ կը փախչէին: Ուրեմն Զէյթուն կը գտնուէին բաւական թիւով զինուորական փախստականներ եւ զինուորական տարիք ունեցող ստուար թիւով երիտասարդութիւն մը, որոնք չէին դիմեր զօրանոց արձանագրուելու: Այդ օրերուն էր, Անտրոնի, Կապանի վրայով ճամբայ կ'ելլեն դէպի Զէյթուն, երկու հարիւր հոգիներ թուրքեր գալու եւ զինուորագրուելու համար: Զէյթունցի քանի մը հայ տղաք, Թէօպենց Խաչերի գլխաւորութեամբ, Զօլոր կոչուած այգեստանի հարաւը, Բամակի-ձորի անցքին, անոնց առջեւ կ'ելլեն եւ իրենցմէ կը պահանջեն Թէք-Պըլըղ կոչուած աւազակապետը եւ իր ընկերները, որոնք իրենց մէջ ըլլալ կը կարծուին եւ որ այդ աւազակապետը կողոպտած էր հաճոյցի շրջուն փերեզակ հայերը: Թէօպենց Խաչեր իր հինգ ընկերներով, երբ կը տեսնէ որ Թէք Պըլըղը չեն ցոյց տար եւ չեն յանձնել, կը սկսի խոշտանգել անոնցմէ մէկ քանին, իր ընկերներուն կը հրամայէ որ անոնց մօրուքները ածիլեն, որպէս նախատինք եւ պատիժ անոնց ընթացքին: Թէեւ նախապէս Սողոմոն Թովանտեանի գլխաւորութեամբ եւ Ֆոնուզցի Ռուբէն Քէնտիպեանի ընկերակցութեամբ չորս տղաներու խումբ մը փութացած էր Կապանի կողմերը փնտրելու եւ պատժելու համար այդ աւազակապետը՝ Թէք Պըլըղը, սակայն չէին կրցած գտնել զինքը եւ այրած էին անոր բնակարանը: Անտրոնցի, այս երկու հարիւր թուրքերու ընդդիմութեան վրայ, Խաչերի խումբը անոնց մէկ քանիներուն կէս մօրուքները ածիլելով, կը կողոպտէ զիրենք եւ իրենց կ'ըսուի որ բարեւ տանին Մարաշի միւթէսարըֆին, որովհետեւ անոր հրահանգով էր որ ժանտարմաները շարունակ կը հետապնդեն զիրենք եւ Զէյթունի զինուորական փախստականներն ու հրոսակները: Անտրոնցիք կը դիմեն Մարաշ եւ կը բողոքեն միւթէսարըֆին: Ասոր վրայ Մարաշի թուրք մեծերը, անտրոնցիները, ինչպէս նաեւ Զէյթունի շրջակայ թուրք գիւղացիները կ'օգտագործեն այս առիթը եւ իրենց երիտասարդութիւնը զինուորութենէ ազատելու համար հանրագրութիւնով կը բուռնեն Պոլիս, կեդրոնական կառավարութեան, դիտել տալով թէ քանի զէյթունցիներ զինուոր չի տար, քանի անոնց հրոսակները ազատ կը մնան եւ քանի զէյթունցիներ զինաթափ չէ եղած, իրենք չեն կրնար իրենց ընտանիքները, իրենց պատիւը, ինչքը թողուլ եւ զինուորութեան

երթալ: Ասիկա թելադրուած է նոյնինքն Մարաշի կառավարութենէն: Քանի որ ընդհանուր զօրակոչ յայտարարուած էր, հետեւաբար զինուորութենէ խուսափիլը ծանր յանցանք էր: Ու զէյթունցիին համար կը ստեղծուէր անգամ մը եւս վատ դրութիւն: Ահա կը վրդովուի զէյթունցիին խաղաղութիւնը: Հակառակ Չէյթունի մեծամասնութեան զգոյշ, խոհեմ, օրինապահ ընթացքին, թուրք կառավարութիւնը յատկապէս եւ դիտումնաւոր կերպով ամէն փորձ կ'ընէր մէկ կողմէ գէթ թունցին ըմբոստութեան ստիպելու եւ միւս կողմէ ալ աղաներու եւ դեկավար տարրերու մօտ ոգեկան գէշ վիճակ մը, յուսահատութիւն յառաջացնելով քանդել այս արժուերոյնը եւ բնաջնջել զէյթունցիները: Թշնամին, վերջապէս ո՛չ մէկ միջոցի առջեւ կանգ կ'առնէր յաջողցնելու համար իր ճիւղաշին ծրագիրը: Ամէն տեսակի վատ, տմարդի, նենգամիտ կերպերով կ'աշխատէր ան: Թուրքը, թէեւ տակաւին պատերազմի մտած չէր, սակայն քանի որ 45 տարիքը չհասած ամէն թրքահպատակ ենթակայ էր զօրակոչին, զէյթունցին չէր կրնար բացառութիւն ըլլալ: Ահա լաւագոյն պատեհութիւնը Չէյթունը քանդելու: Չէյթունցիին կամ պիտի ըմբոստանար եւ առիթ պիտի տար թուրք բանակներուն որ քալէին Չէյթունի վրայ եւ ջարդէին այդ հայկական բոյնը, որ դարեր զբաղեցուցած էր Սուլթաններ եւ կամ պիտի հնազանդէր՝ զինուոր պիտի տար իր երիտասարդութիւնը, իսկ մնացածը տեղահան պիտի ընէր, պիտի պարպէր քաղաքը, վերջապէս կռուով կամ խաբէութեամբ: Այս եղած էր իթթիհատի հիմնական, արմատական ծրագիրը: Չայն իրագործելու առիթը կը ներկայանար, քանի որ եւրոպացի մեծ պետութիւնները իրար ինկած էին, պատերազմի մէջ էին: Ու զէյթունցիին այդ բոլորէն շատ բան չէր գիտեր: Միայն գէթ թունցին չէր որ կը խուսափէր զինուորութենէ, ո՛չ ալ միայն հայր: Ամբողջ Թուրքիան կը վիստար զինուորական փախստականներով, որոնց մեծ մասը թուրքեր էին: Ժանտարմաները սկսած էին շարունակ հետապնդել զինուորական դասալիքները, փախստականները եւ ըմբոստները Չէյթունի եւ շրջակայ հայ գիւղերու: Փախստականները ձեռք չէին անցներ սակայն եւ ժանտարմաները իրենց թոյնը կը թափէին հայ գիւղերու խաղաղ, անզէն ժողովուրդին վրայ: Կը չարէարէին, կը խոշտանգէին ընտանիքները, կը ծեծէին անմեղները, նոյնիսկ կիները: Այդ պատճառով էր որ փախստական տղաք ալ, փոխ վրէժով լեցուած, որ իրենց համար անմեղ ժողովուրդին նեղութիւն կու տային, կիներ եւ ընտանիքներ կը ծեծէին, կը խոշտանգէին, Թէք Պըլքը բռնելու պատրուակով գացած էին Անարուրնէն եկող զինուորացիներուն դէմ եւ խոշտանգած զանոնք: Չէյթունի կառավարութիւնը Սեպտեմբերի սկիզբները, մէկ քանի էջըլյաներ հետապնդելու պատրուակին սակ,

Պօզ Պայիր թաղը զինուորական շրջայի տակ կ'առնէ, ապաստանի տունը հրացանի կը բռնուի եւ անմեղ մէկը կը զարնուի: Ընդհանուր լուզման տեղի չտալու համար Առաջ. փոխանորդ՝ Յովհաննէս Վրդ. Գրանֆիլեան կը խնդրէ գայմազամէն զինուորները ետ քաշել: Այս գէպին հետեւանքով կեդրոնական իշխանութեան տրուած սխալ կամ չափազանցուած տեղեկութիւններուն վրայ, Ատլիէի նախարարութիւնը հրաման հեռագրով կը պահանջէ կիլիկիոյ կաթողիկոսէն որ անմիջապէս դադրեցնէ Յովհ. Վրդ.-ը որպէս կառավարական գործերու միջամտող եւ ուրիշ մը նշանակէ անոր տեղը: Այս առիթով Ս. Կաթողիկոսը, Հալէպէն 25 Սեպտ. 1914-ին կը գրէ Գիւտ Եպիսկոպոսին. «Չէյթունի ծանօթ խնդիրը առ այժմ եւ առերեւոյթ կարգադրուած կը համարուի, սակայն հետեւանքը բաւական մթին է, ճամբուն վրայ ինկած ապառաժը շատ կարծր է, փշրելու համար շատ դժուարութեանց տանիլ պէտք է, եթէ չյաջողինք, բնական միջոցն է սաստկապէս ընդհարիլ եւ փշրուիլ: Սահակ Զորափորեցին Հայաստանը բնաջնջել մտադրող, բայց գթոտ զօրավարի մը հանդիպեցաւ, այժմ անցած են այդ երանելի ժամանակները եւ դէմքերը: Ս. Կաթողիկոսը նկատի ունենալով զէյթունցիներու մասնակի համակրութիւնը Յովհաննէս Վրդ.-ի հանդէպ, եւ միեւնոյն ատեն յարմարագոյն առաջնորդի մը պակասը, կը պատասխանէ Ատլիէին պաշտպանելով Գրանֆիլեան Վրդ.-ի հաւատարմութիւնը: Ատլիէն կը կրկնէ նոյն հրահանգը, որուն կը պատասխանուի թէ՛ քննութենէ ետքը, արժանը կը տնօրինուի Սահակ Կաթողիկոս, միեւնոյն ատեն կը հեռագրէ Չէյթուն, Յովհաննէս Վրդ.-ին, թէ կարճ ժամանակի մը համար Առանա եկուր, եկեղեցական, դպրոցական կարգ մը խնդիրներ կան կարգադրելիք: Յովհ. Վրդ. այս փափկանկատ հրամանին փոխանակ անմիջապէս եւ անձամբ պատասխանելու, տկարութիւն եւ եղանակի ու ճանապարհի դժուարութիւնները նկատի ունենալով, ժամանակ վաստկել կ'ուզէ: Իսկ ժողովուրդը, կեդրոնական իշխանութեան հեռագրելով, Յովհ. Վրդ.-ի պէտքը կը չեւոյէ: Ատլիէն աւելի կը զայրանայ եւ իր երրորդ հրահանգով մը եւ Կ. Պոլսոյ Պատրիարքարանի ցոյց տուած անմիջական թեաղութեան վրայ, Վեհափառը Տ. Խաչատուր Մ. Վրդ. Ղազարեանը Չէյթունի Առաջնորդական Փոխանորդ կը կարգէ եւ Յովհ. Վրդ. Գրանֆիլեանին կը հաղորդէ, թէ ինքը պաշտօնէ դադրած է: Կեդրոնի կառավարութիւնը, Մարաշի կառավարիչ կը նշանակէ իթթիհատական հայտանաց թուրք մը, ազգայնամոլ Ալի Հայտար Պէյ, որուն համար խնցած եմ թէ՛ հայերէն ալ գիտէր, ան կու գար Մուսուլի շրջանէն, ուր Տք. Գր. Աստարճեանի հետ ատեն մը որպէս զինուորական միասին գտնուած էր: Մարաշ կը բերուէր ան, Չէյթունը քանդելու

համար, բնաջնջելու մաքով: Այլի Հայտար Ծգոստոսի սկիզբները ե-
կած էր Մարաշ: Ժողովի կը կանչէ Մարաշի թուրք եւ հայ երե-
ւելիները, կը խօսի Պոլիս ղրկուած հանրագրութեան մասին, եւ կը
խնդրէ անոնց աջակցութիւնը իրեն: Խաչատուր Վրդ. հազիւ թէ կը
հասնի Ձէյթուն, որպէս առաջնորդական փոխանորդ, Հայտար անձամբ
Ձէյթուն կու գայ 800 զօրքով: Իր հետն են Մարաշի Առաջնորդարանին
կողմէ մարաշցի պատուաւոր ազգայիներէն՝ Մեքոն Աղա Հազարապետ-
եան եւ Կարապետ Էֆ. Նալչանեան: Մարաշի Ազգ. Առաջնորդարանը
միաժամանակ Ձէյթունի Առաջնորդարանին կը տեղեկացնէ Այլի Հայտար
Պէյի այցելութիւնը Ձէյթուն, եւ զայն կը ներկայացնէ եւ կը յանձ-
նարարէ որպէս հայասէր մը եւ կը թելադրէ որ պէտք եղած յար-
գանքն ու պատիւը չխնայեն անոր:

Զիշդ այդ օրերուն, Գայմազամի փոխանորդ եւ նոյն ատեն ու-
տիկաններու հարիւրապետ-քոմսէր Մուխթար Պէյի տեղ Ձէյթուն ե-
կած էր բնիկ Թրակիացի թուրք հրէշ մը՝ Հիւսէյին Հիւսնի, իսկ ա-
ռանձին ոստիկանապետ նշանակուած էր հարիւրապետ Միւհաթի Ձէյ-
թունցիք տեղեկանալով Այլի Հայտարի դէպի Ձէյթուն ճամբայ ելած
ըլլալը, երեւելիներ խորհրդակցութեան իրարու մօտ կու գան Հայտարը
դիմաւորելու համար: Եղիա Ենիտիւնեան, իր հօրեղբօր որդւոյն՝ Նա-
զարէթ Զաւուչի խորհուրդ կու տայ, փոխանակ Հայտարը դիմաւորելու
երթալու, հինգ-վեց հարիւր զինուած տղաներով, անոր դէմը ելլել,
կանխել զինքը եւ տակաւին Ձէյթուն չհասած զարնել, ջախջախել ա-
նոր զօրագունդը: Որովհետեւ, կ'ըսէ Եղիա, փաշան անպայման որ
բարի նպատակով չէ որ կու գայ, ուստի պէտք է զարնել զայն ա-
նակնկալ կերպով: Նազարէթ Զաւուչ, տեղեակ իրերու կացութեան,
ժողովուրդին հոգեմկնակին եւ անպատրաստ դրութեան, ժամանակները
մեզի աննպաստ են կ'ըսէ: Քաղաքական ժողովի ատենապետ՝ Բասիլոսեան
Պապ Աղա, Յովհաննէս Ծ. Վրդ. Գարանֆիլեան⁶⁶, Նազարէթ Զաւուչ
եւ ուրիշ երեւելիներ եւ աղաներ, մօտաւորապէս քառասուն զինուորներով
Ազգ. Առաջնորդարանէն դուրս գալով ճամբայ կ'ելլեն դիմաւորելու
համար Այլի Հայտարը: Երբ կը հասնին Զերմուկին դաշտը, Սալաթեան
Յովնանը առաջ կը ղրկեն, տեղեկացնելու համար Հայտարին զէյ-
թունցի պաշտօնական դէմքերուն եւ երեւելիներուն իրեն դիմաւորելու
եկած ըլլալը: Սալաթեան հազիւ թէ կը հասնի Այլի վախը ըսուած
տեղը, յանկարծակիի կու գայ: Ինչ տեսնէ, ճամբաներու երկու կող-
մը, թփուտներու ետեւ զէնքերնին ձեռքերնին պատրաստ զինուորներ
կը շարժեն, դարանի մտածներու պէս: Քիչ վերջը Այլի Հայտար իր
ձիուն վրայ, ու ահա իր զօրքը, թնդանօթներ, ռազմամթերքով
բեռցուած ջորիներ ու երկու մարաշցի հայ երեւելիներ, Մեքոն Ա-

ղա Հազարապետեան եւ Նալչանեան Էֆ. որ փաստափան մըն էր եւ
անդամ Մէնլիսի խաարէի: Շատ չանցած դիմաւորութեան եկած զէյ-
թունցի երեւելիները եւ Այլի Հայտար իրարու կը հանդիպին: Ձէյ-
թունցիք վար կ'իջնեն իրենց ձիերէն եւ կը բարեւեն Այլի Հայտարը:
Անիկա պաղ եւ խիստ դէմք մը ցոյց կու տայ: Ոչ ոքի հետ դրեթէ
չի խօսիր, շատ կարճ քանի մը բառեր, շնական ու նենդ ժպիտ մը,
ու յետոյ ճիւղալին լուռիւն: Քիչ մը կը հանգչի այնտեղ, նստած
գետինը, աղաներուն հետ, եւ իր ձեռքի փոքրիկ ճիպոտով հողը կը
փորփրէ, աչքերը գետինը յառած: Աղաներէն ոմանք եւ Յովնան Սա-
լաթեան համ չեն առներ անոր այդ վերաբերմունքէն, կը հասկնան
անոր ինչ մարդ ըլլալը, ոմանք կը զոյջան դիմաւորութեան եկած
ըլլալուն, շատ գէշ կ'ըլլան: Կը կասկածին անոր դիւային նպատակին
մասին: Բանակին ընկերացող հայ ջորեպաններ եւ հայ զինուորներ
զաղտնի կ'իմացնեն Հայտարի դիմաւորութիւնները: Այլի Հայտար
հասած էր իր զինուորներով Ձէյթուն եւ քաշուած է զօրանոցը: Ոչ
մէկ տեսակցութիւն եւ այցելութիւն չ'ընդունիր: Իր հետը եկած եր-
կու մարաշցի հայերը կ'իջնեն Ձէյթուն եւ կը հիւրասիրուին աղաներուն
մօտ: Իսկ զօրքը Ձէյթունը կ'առնէ պաշարման շղթայի տակ: Մեքոն
Աղա եւ Նալչանեան Էֆ. կ'աշխատին համոզել Ձէյթունի մեծերը, որ
հրոսակները-էջըիւները յանձնեն: Փաշան արդէն շատ բան մը պա-
հանջած չունէր: Այս երկու բանագնացները ամէն օր կ'ելլեն վերը՝
զօրանոցը, Հայտարի տեղեկացնելու համար տարուած բանակցութեան
եւ աշխատանքներուն արդիւնքները: Անոնք կը յաջողին վերջապէս ե-
րեւելիներէն մէկ մասը համոզել, ըսելով թէ՝ կառավարութիւնը ընդ-
հանուր ներում պիտի շնորհէ դատապարտուածներուն, երիտասարդներ
զերծ պիտի մնան զինուորութենէ եւ փաշան խօսք է տուեր, որպէս
թէ, ի հարկին զէյթունցի երիտասարդներէ մասնաւոր զօրագունդ մը
պիտի կազմէ զէյթունցի հրամանատարներով: Այլի Հայտար ըմ-
բոստները կ'ուզէ միայն: Բոլոր մեծերը մտահոգութեան մէջ էին:
Մարաշէն մասնաւոր կերպով բերուած երկու հայ երեւելիներուն
տարած աշխատանքները, կառավարութեան խոստումները յանձնուելիք
ըմբոստներու նկատմամբ, միւս կողմէ յաջողական հեռագիրները,
հազանդութեան եւ օրինապահութեան յորդորները Ազգ. վերին իշ-
խանութեան, Վեհափառ Սահակ Կաթողիկոսի եւ Կ. Պոլսոյ Պատրիարքու-
թեան եւ վերջապէս զէյթունցիներու անպատրաստ վիճակը եւ տրամադ-
րութիւնները երկար մտածել կու տային Առաջնորդին, աղաներուն,
քաղաքապետ՝ Նազարէթ Զաւուչին: Այստեղ կար ապագայի ծանր
դատաստանատուութեան հարցը Պատճառ ըլլալու դժուարին պարագան:
Վեհափառ Սահակ Կաթողիկոս Հալէպ կու գար եւ զէյթունցիներու

Հնազանդութեան յորդորներ եւ խրատներ ղրկելով Հանդերձ, պաշտօնական դիմումներ կը կատարէր, յատուկ պաշտօնագիրներով Կ. Պոլս Բ. Դուռ, ներքին գործոց նախարարութեան, (Ատլիյէի) Արդարութեան դատարանի տեսչութեան, իսլամ բարձր կրօնապետութեան, Մարաֆ միւթէսարըֆութեան, չորրորդ զօրաբանակի եւ ծովային նախարար Ահմէտ Ճէմալ Փաշային եւ նաեւ Կ. Պոլսոյ Զաւէն Պատրիարքին, (Մենք շատ վերջէն, գինադադարէն յետոյ, 1928-ին տեսանք «Կիլիկեան կսկիծներ» անուն գրքոյը մը, հրատարակուած Պ. Զաքարիա Պզտիկեանի կողմէ, այնտեղ ուրիշ շատ մը նամակներու, դիմումագրերու պատճէններու կարգին, տեսանք նաեւ Զէյթունի մասին եղած այդ դիմումագրերուն օրինակները) որոնց մասին եթէ Հարկ տեսնուի, թերեւս անդրադառնանք տեղ մը մեր այս գործին մէջ։ Իրատեսներ, լաւ խորհելով, կը տեսնէին որ դիմադրել եւ յաջող դուրս գալ անկարելի էր, որովհետեւ թուրքը զօրաշարժի մէջ էր, կազմ ու պարաստ հսկայ բանակներ ունէր, արդիական զէնքերով զինուած եւ տակաւին մտած չէր Համաշխարհային պատերազմին։ Զէյթուն ո՛չ ծովեզերք ունէր, ոչ ալ ուրիշ պետութեան մը սահմանակից էր։ Չունէր 1895-ի մթերքն անգամ եւ ոչ ալ պատրաստութիւնը եւ ուտելիք պաշարը։ Արտերուն եւ այգիներու բերքերը տակաւին քաղուած, ամբարուած չէին, տունները գրեթէ դատարկուած էին։ Իսկ որպէս զէնք զէյթունցիներու ունեցած 150 գուռփի հին ձեւով մարթին մէկնոց հրացան էր եւ քանի մը հինգնոց մաւգէր, որը ղրկուած էր Հալէպէն Դանիէլեան Ներսէս Եպիսկոպոսի եւ Դաշնակցական Մկրտիչ Եօթնադրերեանի կողմէ։ Մնացածը կայծքարով որսի հրացաններ էին։ Դիմադրելու մէջ ո՛չ մէկ յոյս կար ապրելու։ Դիմադրութիւնը ստոյգ փճացումը պիտի ըլլար բոլորին։ Երկար խորհրդակցութիւններէ յետոյ, դարձեալ կը մնային շփոթ եւ ծանր կացութեան եւ մտահոգութեան մէջ։ Հայտարին ուզածը սակայն մեծ բան մը չէր կը մտածէին ումանք, այլ ըմբոստները յանձնելու Համաձայն էին որ յանձնուէին անոնք։ Թէպէտ աւելի փորձառուները գիտէին, թէ անով պիտի չվերջանար ամէն ինչ։ Սակայն գիտէին, թէ ապստամբին ալ այդ պարմաններուն մէջ, ամբողջ ժողովուրդին ու թերեւս ամբողջ Կիլիկիոյ Հայութեան բնաջնջման պատճառ պիտի ըլլայ։ Հակառակ Կաթողիկոսարանի եւ Պոլսոյ Պատրիարքութեան Հնազանդութեան խրատ եւ յորդորներուն, երիտասարդութիւնը եւ զանոնք գլխաւորողները դէմ էին Հնազանդութեան եւ չէին ուզեր խաբուիլ թուրքին խոստումներէն։ Հետեւաբար Նազարէթ Զաւուշ, իրենց պահանջին գոհացում տուած ըլլալու համար պէտք է ձգեր քաղաքապետի իր պաշտօնը եւ ապրտարութեան գործը կազմակերպէր։ ԳրանՖիլեան Վրդ-ի նախագ-

հովիտմբ, կրօնական եւ քաղաքական ժողովի անդամներ առաջնորդարանի մէջ խորհրդակցութիւն մը կ'ունենան, եզրակացութիւնը կ'ըլլայ ենթարկուիլ Ազգ. վերին իշխանութեանց՝ Պատրիարքարանի եւ Վեհափառ Կաթողիկոսի հեռագիրներով Հնազանդութիւն թելադրող յորդորներուն եւ առիթ չտալ ոեւէ ըմբոստութեան շարժումի։ Այս ժողովին կը մասնակցին նաեւ հայ կաթողիկներու կողմէ Հայր Յովսէփ Ազրէպեան, իսկ հայ բողոքականներու կողմէ պատուելի Տիգրան Անդրէասեան։ Առաքելական համայնքի քաղաքական ժողովի նախագահն էր Բասիլոսեան Պապ Աղա, Կարապետ Էֆ. Պալճեան, Հայկ Ամբնեան, ուսուցիչ Խաչիկ Եաղուպեան, Նազարէթ Զաւուշ, Նշան Նորաշխարհեան, Կարապետ Աղա Մարկանեան։ Մանր էր Հնազանդութեան այս որոշումը։ Այս որոշումէն առաջ քաղաքապետ՝ Նազարէթ Զաւուշ հանգամանօրէն պարզած էր կացութիւնը, յիշած էր Ալի Հայտարի 600-նոց բանակով մը զօրանոց սպասելը, Ազգ. իշխանութեանց Հնազանդութեան յորդորները, մեծ պետութեանց պատերազմով զբաղուած ըլլալը, ժողովուրդին անպատրաստ վիճակը, եւ Հնազանդելու պարագային զէյթունցիին դաւաճան կոչուիլը եւ թերեւս ամբողջ Հայութեան վտանգուիլը, այս բոլորէն վերջ սակայն վերջին խօսքը կը թողուր ժողովականներուն, խուսափելու համար դալիք ոեւէ պատասխանատուութենէ։ (Որովհետեւ ան կը յիշէր թէ 1895-ի պատերազմին ալ զինքը պատասխանատու նկատած էին զէյթունցիներ, ըսելով թէ թուրք կառավարութիւնը զինքը ուզած էր ձեռք անցընել, ու ինքը ձեռք չիյնալու համար գացեր Պէրթիզ Զայը կոխեր էր իր համախոհներով եւ պատճառ եղած էր 1895-ի պատերազմին, որը սակայն բարեբախտաբար ի նպաստ Զէյթունի վերջացած էր)։ Նազարէթ Զաւուշ թէպէտ ինքն ալ անձամբ համաձայն չէր Հնազանդելու դադափարին, որովհետեւ կը ճանչնար թուրքը, սակայն մէկ կողմէն ժողովականներուն որոշումը, միւս կողմէն ընդհանուր ժողովուրդին արամադրութիւնը իրեն ծանօթ էր, սա պարագան եւս աւելցնենք մեր կողմէ թէ ինքը, որպէս քաղաքապետ եւ հետեւաբար որպէս կառավարութեան մարդ, կը յուսար թէ՝ Հայտարի հետ կրնար հասկացողութեան գալ կարգ մը փոքր զիջումներով եւ ըմբոստները, փախտականները յանձնելով։ Ասիկա բաւական յուսալի հաւանականութիւն մըն էր։ Հետեւեալ առտու, Նազարէթ Զաւուշ, հակառակ Եղիա Ենիտիւնեանի պնդումին եւ բարկանալուն, ըմբոստօրէն, իր Պապիկ Փաշա եղբօր որդին՝ Մարկեանց Աւետիսը կը յանձնէ կառավարութեան, որպէսզի անիկա օրինակ ըլլայ եւ երթան յանձնուին բոլոր ըմբոստները եւ փախտականները։ Ժողովուրդի խաղաղ կեանքը փախտականներու պատճառով որպէսզի չվտանգուի, մէկ շարժումն

մէջ ըմբոստները, փախստականները պինաթափ կ'ըլլան եւ կ'երթան կը յանձնուին: Յանձնուողները կը մնան Զէյթունի մէջ, կառավարութեան բանտը, ուր իրենց լաւ վերաբերում ցոյց կը տրուի ուստիականապէս՝ Սիւլէյմանի կողմէ, որ ալպանացի մըն էր: Պատահած էր նոյնիսկ որ ոստիկան չաւուշ (վարոցաւորներ) սպասարկած էին անոնց: Թուրք քաղաքականութիւն, չխրտչեցներու համար թէ յանձնուած կալանաւորները եւ թէ տակաւին չյանձնուած դուրսը մնացած փախստականները, եւ միաժամանակ որպէսզի խաղաղ ժողովուրդը լսէ, իմանայ կառավարութեան յարգանքը, եւ չկասկածի յետագայ ծրագիրներուն մասին: Ինչ օգուտ սակայն, նենգամիտ Հայտար, աղուէսի պէս կը գործէր եւ իր ծրագիրը կը շարունակէր իրագործել, առանց խրտչեցնելու եւ կամաց-կամաց: Թէեւ ենթարկուելու որոշումը տուած էր վերոյիշեալ ժողովը, եւ մասամբ ալ գործադրուած ըմբոստներու մէկ մասին յանձնուելով, սակայն կը նախազգային թէ Ալի Հայտար այսքանով պիտի չբաւականանար: Ուստի Գրանֆիլեան Վարդապետ, քաղաքապետ՝ Նազարէթ Զաւուշ եւ քաղաքական ժողովի նախագահը՝ Պապ Աղա Բասիլոսեան կը մտածեն եւ ժողովուրդէն ու ժողովի միջանդամներէն գաղտնի նամակ մը կը ղրկեն Սիս՝ Վեհափառ Սահակ Կաթողիկոսին եւ կը խնդրեն որ՝ Վեհափառ իր վերջին խօսքը ըսէ՝ Նամակատարը՝ Հէարիւնենց Պիծիկը՝ Աւետիսն էր, թեթեւաբայ, անվախ եւ գաղտնի սուրհանդակութեան գործերու մէջ վարժ ու փորձառու գէյթունցի մը: Հէարիւնենց Աւետիս կը հասցնէ նամակը Սիս եւ չորս օրէն ապահով կերպով կը վերադառնայ Զէյթուն, իր հետը բերելով հետեւեալ բովանդակութեամբ նամակ մը Վեհափառէն:

Սիրելի Գրանֆիլեան, կը հասկնամ Հայտարի դիտաւորութիւնները եւ ձեր կացութիւնը, պատերազմի ժամանակ նման դժուարութիւններ բնական է որ պատահին: պէտք է համբերել եւ տոկար: Կառավարութիւնը բարեհաջակամ է, Էրդ գորաբանակն ընդհ. հրամանատար Ճեմալ Փաշա անձամբ խոստացած է ինծի, որ անմեղ եւ հնազանդ ժողովուրդին պիտի խնայուի: Հետեւաբար ջանացէ՛ք համակերպիլ եւ գոհացում տալ պետութեան պահանջներուն: Ոեւէ խլրտում, ոեւէ աննշան միջադէպ կրնայ ամբողջ ազգին եւ մանաւանդ Կիլիկիոյ հայութեան տապանաքարը կնքել: Զէյթուն թող մնայ իր փառքն մէջ, որովհետեւ ոեւէ դէպքի կամ ըմբոստութեան շարժումի մը պարագային, ապագայ պատմութիւնը դաւաճան պիտի որակէ պատմական Զէյթունը եւ պատճառ Կիլիկիոյ հայութեան բնաջնջման: Կ'օրհնեմ սիրելի ժողովուրդս եւ ձեզ՝ ժողովը:

Սահակ Կթղ.

Վերոյիշեալ նամակը, կ'արտագրենք այստեղ նոյնինքն Նազարէթ

Զաւուշի որդւոյն՝ մեր հայրենակից Պ. Լ. Նորաշխարհեանի «Մուսլ Օրեր» խորագրուած թերթօնէն: Կը խորհնք թէ՛ մեր հայրենակիցը վերջիւսմով մըն է որ խմբագրած է այդ երկտողը, նկատի ունենալով ընդհանուր ժողովի պարունակութիւնը եւ այն օրերու կացութիւնը: Այո, այդ նամակով ընդհանուր ժողովի հնազանդութեան որոշման զուգընթաց կայ նաեւ հնազանդութեան յորդորը Վեհափառին: Այդ նամակը մէջտեղ բերելով մեր հայրենակիցը, անուղղակի կերպով, պատասխանատուութեան որոշ բաժին մը կը հանէ Վեհափառին, յետագային պատահելիք հաւանական դէպքերու մէջէն: Թէեւ կը զգուշանայ Կաթողիկոսի մասին իր մտածումները ուղղակի եւ բացէ ի բաց յայտնելու եւ ընթերցողներուն կը թողու, որպէսզի ազատ մտածողութեան մէջ ընեն իրենց դատումները այդ մասին եւ անկախ իր համոզումներէն, որոնք սակայն հասկնալի են: Վեհափառը Զէյթունի օրինապահութեան յորդորներ, հնազանդութեան խրատներ տալով հանդերձ, ամէն օր, Սիսէն, Ատանայէն, Հալպէն պաշտօնական դիմումներով, հեռագիրներով եւ տեսակցութիւններով իր կարելին ըրած է Զէյթունի մասին: Բայց իրօք իթթիհատը իր ծրագիրը կը հետազօտէր: Տկար եւ անտրամաբան փորձեր են այդ անուղղակի վերադրումները, ապագայ պատասխանատուութիւնը ժողովուրդին, ժողովին եւ Կաթողիկոսին վրայ ձգելու, մէկ երկու անհատներ արդարացնելու համար: Մինչդեռ գէյթունցիք ինչ որ ալ ընէին, ինչ որ ալ որոշէին, ժողով եւ ժողովուրդ ըմբոստանային, զարնէին եւ կամ հնազանդէին եւ յանձնուէին, ըլլայի՞ր անխուսափելի էր: Ըլլայի՞ր պիտի ըլլար: Ու թերեւս եղածները դարձեալ նուազագոյն չարիքը եղան Զէյթունի համար: Խաղաղ եւ անմեղ, անպատրաստ ժողովուրդը ուզէր չուզէր պիտի ենթարկուէր, նաեւ բնազդօրէն այդ էր ճամբան, իսկ ըմբոստը, փախստականը, յանցաւորը՝ ըստ կառավարութեան, պէտք էր լեռը բարձրանար, զարնէր զինքը հալածող, հետապնդող թշնամին, ի գին իր կեանքին իյնար իր հայրենի հողին վրայ եւ վերջէն տեսանք որ այդպէս ալ եղաւ: Այս մասին, իր կարգին, թերեւս դարձեալ անդրադառնանք հետզհետէ մեր յետագայ էջերու ընթացքին: Վերջին անգամ մը եւս իրարու քով կու գան աղաներ, գլխաւորութեամբ Պապ Աղայի, Նազարէթ Զաւուշի եւ Գրանֆիլեան Վարդապետի եւ կարճ խորհրդակցութիւն մը կ'ունենան Վեհափառի նամակին մասին եւ ծանր եւ տխուր կացութեան մը մէջ դուրս կ'ելլեն ու կը բաժնուին իրարմէ: Այս կ'ըլլայ իրենց վերջին հանդիպումը եւ միաժամանակ բաժանումը: Պապ Աղա կը քաշուի իր բնակարանը՝ Սուրէնեանց պապենական ամրոցը՝ բերդը: Նազարէթ Զաւուշ իր երկու աղաներովը՝ Յակոբի եւ Ռուբէնի հետ կը բարձրանայ Ս. Աստ-

ուածանայ վանքը, այնտեղ կը տեսակցի Եղիայի հետ: Եղիա թէեւ վաթսուներ անցած, սակայն տակաւին առոյգ եւ կորովի հերոս մըն էր: Ան 1896-ի պատերազմին նշանաւոր եղած էր իր խիզախութեամբ, 80 կտրիճներով, գիշեր մը անցնելով Պէրզինկայի առջեւէն մտած էր թուրք բանակին մէջ եւ փառաւոր ջարդ մը տուած էին թշնամիին: Ինքն էր նաեւ որ պաշտպանած էր Ս. Աստուածածնայ վանքը եւ զայն ազատած էր: Նազարէթ Չափուշ, Եղիայի մօտ կը գտնէ Զաւազեան Փանոսը, Մարկանեան Հաճին, Փանոս Չազրեանը, Ասատուր Աղա Բասիրոսեանը, Ասատուր Եաղուպեանը, վանքին քահանան Տ. Սահակը եւ ուրիշներ: Այնտեղ գտնուողներ դէմ են հնազանդութեան: Անոնք կը յիշեն անցեալի կարգ մը խնդիրները, 1896-ին Մարաշի հնչակեան կոստակցութեան խոստմնադրութիւնէ վարմունքը, Տ. Ղեւոնդ Քահանայ Նահապետեանի այն մէկ խօսքը թէ՛ «Զէյթուն թող կուրի, եթէ յաղթէ, լաւ, բոլոր ազգը կ'օգտուի, իսկ եթէ պարտուի, արդէն խեղճ ու թշուառ ժողովուրդ մը կ'ազատի տառապանքէն»: Ղեւոնդ քահանայ հնչակեան այն ժողովին նախագահը կ'ըլլայ, ուրտեղ 800 մարաշցի երիտասարդ զրկել կը խոստանան Զէյթուն 1896-ին: Եւ ի վերջոյ այդ ուժը չղրկելէ զատ, նման արտայայտութիւն մը կ'ունենայ Տ. Ղեւոնդ: Այս վերջիշումները կ'ընեն ներկաները, ըսելով թէ՛ Մարաշէն եկած պատուիրակները շահասէր մարդիկ են, դաւաճաններ են անոնք եւ իրենց մօրթը կը մտածեն: Հետեւաբար ամէնքն ալ միակամ էին եւ զարնելու կողմնակից, եթէ դուրսէն եղած խրատներուն ականջ տանք, չարաչար սխալած կ'ըլլանք կ'ըսեն անոնք, ուրեմն տակաւին ուշ չէ եւ սխալին որ կէտէն որ դառնանք շահ է մեզի: Թէեւ մեր տղաներէն մաս մը յանձնուեցան: Մեր յոյսը դնենք, կ'ըսեն ներկաները, Աստուծոյ եւ մեր բազուկներուն վրայ: Նազարէթ Չաւուշ թէպէտեւ համաձայն էր անոնց, սակայն շփոթ վիճակ մը, վարանում մը հետզհետէ մարմին կ'առնէր իր ներսը եւ երթալով կը մեծնար այդ տատամսոտ վիճակը: Դժուար էր այդ հոգեկան վիճակէն դուրս գար: Լինել չլինելու խնդիր էր, որ զինքը կը չարաչարէր Ապագայ պատասխանատուութեան մղձաւանջը կ'ապրէր ան: Այդ գիշեր կարելի չեղաւ վերջնական եզրակացութեան մը գալ: Մտածուեցաւ, ժամանակ չանցած մէկ երկու օրէն ուրիշ ժողով մը եւս ունենալ, այնտեղ ճշդելու համար իրենց գիրքը: Ուշ գիշեր էր արդէն եւ ժողովը ցրուեցաւ: Ու Նազարէթ Չաւուշ իր տղոց հետ կ'ելլէ իր եղբոր Պապիկ Փաշայի քարայրը:

Վարը, Զէյթունի մէջ կը տիրէր անորոշ մտահոգութիւն մը, չարագուշակ բան մը կը թեւածէր քաղաքին վրայ: Իսկ երիտասարդներ կը սպասէին վճռական հրամանին: Նազարէթ Չաւուշ իր քարաքի

մէջ շատ վատ դրութեան մէջ էր: Կը մտածէր ելք մը գտնել: Ոչ ոքի հետ խօսելու սիրտ չունէր ան: Թէպէտ կարգ մը տղաք յանձնուած էին, սակայն կարեւորութիւն չունէր: Երեւոյսաբարութեան մեծագոյն մասը, գրեթէ ամբողջը, քաղաքն է եւ ազատ: Սեպտ. 8 էր. Նազարէթ Չաւուշ քաղաք պիտի իջնէր: Տիրութիւն մը յայտնի էր անոր դէմքին վրայ: Ետ դարձաւ, մտաւ քարայրը, զէնքը թողուց այնտեղ ու մին նստած քաղաք պիտի իջնէր: Եւ որովհետեւ իր միւս երկու տղաքը արդէն Զէյթուն էին, կը պատուիրէ իր Լեւոն որդւոյն, որ իրեն լուր դրկէ, պահուած զէնքերը տայ զէնք չունեցողներուն: Կ'իջնէ վանք, կը հանդիպի Եղիային, անոր հետ կը կարգադրեն որ քաղաքը պահուած վառօդը եւ ռազմամթերքը Եղիա վանքը բերել տայ այդ օրն իսկ: Թետոյ Եղիա պիտի երթայ Արեգին, ժողովուրդը պիտի կազմակերպէ եւ իրիկուան պիտի վերադառնայ վանք պատրաստ վիճակի մէջ: (Արեգինի ժողովուրդը անցեալի մէջ, ինչպէս նախորդ էջերուն յիշած էինք, միշտ լաւ կռուող եղած է: Աւայալ ըսուած է իրենց, որպէս յառաջապահներ: Արեգին մինակ գիւղ մը չէ, այլ տասնեակ մը գիւղերու ամբողջութիւն մըն էր 45 ազարակներով եւ 300 անուոր զուտ հայ բնակչութիւնով):

Եղիա դարձեալ կը հակառակի Նազարէթ Չաւուշի քաղաք իջնելուն, կը բարկանայ, կը սպառնայ: Սակայն Նազարէթ Չաւուշ կու գայ Զէյթուն: Իսկ ինքը, Եղիա կը պատրաստուի մեկնելու Արեգինի շրջանը: Մինչ այդ սակայն, այդ օրերուն, իր հիւրը եղող Հաճի Փանոս Ղարափանքեան, որ աւելի քան տասնեակ տարիներ առաջ Տէօրթեօյ հաստատուած էր, եւ այդ ամառ Զէյթուն եկած էր օդափոխութեան, կերպով մը կ'իմանայ Եղիայի ծրագիրը: Ատի՛թն էր իրեն համար, որ կառավարութեան դէմ իր մէկ անկարգապահ ընթացքին մեղքը կիսով մը քաւէր, ներուէր իրեն այդ յանցանքը: Կը փութայ զօրանոց, Ալի Հայտարին կ'իմացնէ Եղիային եւ Նազարէթ Չաւուշին ծրագիրները: Հաճի Փանոսի այս վատութիւնը, ստորին մասնութիւնը իրազեկ կը պահէ թուրք կառավարութիւնը, տեսնուելիք պատրաստութիւններու եւ անոնց նպատակներու մասին: Ու Հայտար միջոցներ կ'ուռճայ, կը կանխէ ըլլալիքները եւ հետեւաբար դէպքերը այլ ուղղութեամբ ընթացք կ'առնեն:

Մարաշէն, Ալի Հայտարի հետ Զէյթուն եկած երկու հայերը շատ լաւ գիտէին Զէյթունի կացութիւնը եւ միաժամանակ գիտէին թէ՛ Նազարէթ Չաւուշը ձեռք անցընելու ամենէն յարմար ատենը Շարաթ օրն էր, որովհետեւ Զէյթունի ժողովուրդը այդ օրը առհասարակ այգիները, պարտէզներ կ'ըլլայ եւ քաղաքը շատ մարդ չ'ըլլար, մանաւանդ

երիտասարդութիւնը դուրսերը կ'ըլլայ: Այս երկու պատուիրակները ըստայնմ ալ տեղեկացուցած էին Հայտարին: Նազարէթ Չաւուշ քաղաք իջած էր արդէն: Այի Հայտար, Զէյթունի չորս կամուրջները յաջողած էր զինուոր տեղաւորել գիշերն իսկ եւ առանց զգացնելու իսկ ոստիկանապետ՝ Միտհատի հրահանգած էր որ Չաւուշը ձերբակալել եւ զօրանոցը հանէ: Նազարէթ Չաւուշ հազիւ թէ կը հասնի Զէյթուն, իր տան առջեւ, թուրք զապթիէ մը առջեւ կ'ելլէ եւ կ'ըսէ որ՝ Գայմազամը խորհրդակցութեան մը համար զձեզ իր մօտը կ'ուզէ: Նազարէթ Չաւուշ, որպէս քաղաքապետ, կ'ընկերանայ ոստիկանին եւ կ'ուղղուի դէպի Մէրայ: Ծամբան իր մեծ տղան կը հանդիպի եւ կը յայտնէ հօրը թէ՝ Գայմազամը հրահանգեց ինծի որ յետնալ տուրքերու գանձումը փութացնեմ: Եւ հօրը կ'ըսէ եւ կ'աղաչէ որ Գայմազամին չերթայ, որովհետեւ բաներ մը իմացած էր եւ գայմազամին վերաբերմունքէն ալ կը կասկածէր թէ ծուղակ մըն էր որ կը լարուէր: Տղան, Յակոբ կու լայ, կը խնդրէ որ ետ դառնայ: Այի Հայտար քեզ պիտի կախէ: Դուն հիմա տուն գնա կ'ըսէ իր տղուն, երկու օր յետոյ եկուր, եւ կ'աւելցնէ, տեսնենք ո՞վ զով կը կախէ: Ու Յակոբ դատարանի անդամ՝ Ասատուր էֆ. կ'ըլլանէսեանի հետ վանքը կ'ելլէ:

Նազարէթ Չաւուշ կը հասնի կառավարչատուն, կը տեսակցի Գայմազամին հետ զինուորական պէտքերու մասին ու դուրս կ'ելլէ: Այս անգամ ուրիշ ոստիկան մը կը հասնի իրեն եւ ետ կը կանչէ զինքը: Այնտեղ, դրան առջեւ կը հանդիպի քիլիսցի եւ գայմազամի նախորդ փոխանորդ Մուխթար Պէկին, որ իրեն կը հասկցնէ թէ՝ «Քեզ ձերբակալելու հրաման տրուեցաւ, գլխուդ ճաղը նայէ»: Ոստիկանապետ Միտհատն է որ սուինաւոր զինուորներով դէմը կ'ելլէ եւ ձերբակալելու տայ զինքը, ըսելով որ քեզ զօրանոցէն կ'ուզեն: Ան կ'ուզէ որ ձի նստի անանկ զօրանոց երթայ, սակայն չեն թողուր եւ հետիտն կը քալեցնեն եւ կը հանեն վերը՝ զօրանոցը, ու կը նետեն բանտը, որ մութ նկուղ մըն էր:

Գրանֆրիեան Վարդապետ եւ Պապ Աղա Բասիլոսեան կը լսեն Չաւուշին տարուիլը եւ հիւանդ ձեւանալով կը քաշուին իրենց բնակարանները: Իսկ քանի մը ուրիշ աղաներ Մարաշի հայ պատուիրակներուն հետ զօրանոց կ'երթան, Այի Հայտարէն իմանալու համար քաղաքապետին բանտարկուելու պատճառը:

Այի Հայտար սպառնացայտ շեշտով մը կը յայտարարէ թէ՝ ձեզի բացատրութիւն տալու պէտք չունիմ: Զեր վստահած մարդը ա՛յժ բանտն է եւ քաղաքը ամբողջ պաշարուած է, ոչ մէկ յարաբերութիւն կ'ընաք ընել դուրսի հետ: Ոչ ոք դուրսէն ներս կ'ընայ մտնել, ոչ ոք

ալ կ'ընայ դուրս ելլել: 12 ժամէն եթէ ձեր բոլոր զէնքերը չյանձնէք, քաղաքը պիտի ուժակոծեմ: Ետ կը դառնան աղաները տրտում եւ յուսարեկ, եւ չէին գիտեր թէ՝ ինչ պիտի ըսեն ժողովուրդին, զոր յուսադրած էին թէ ելք մը կը գտնեն: Պատուիրակները այլեւս քաղաք չէին կրնար իջնել: Իրենց գործը լրացած էր: Առանց անգամ մըն ալ Զէյթուն իջած ըլլալու, անմիջապէս կը մեկնին Մարաշ: Հայտարի քովէն վերադարձողները կը պարտաւորուին խորհրդակցութեան կանչել քաղաքի յայտնի դէմքերը: Կը պատմեն Այի Հայտարի խիստ դէշ վերաբերմունքը, սպառնալիքը եւ զէնքերը յանձնելու հրամանը: Լուրը անմիջապէս կը տարածուի ժողովուրդին մէջ: Բայց այլեւս ճառ չկար: Զօրանոցէն դարձողները նկատի ունենալով իրենց եղած սպառնալիքը, քաղաքը ուժակոծելու, տուն առ տուն կը պտտին խումբերով եւ կը խօսին որ ուրիշ միջոց չկայ, պէտք է համարկերպիլ եւ զէնքերը հաւաքել եւ յանձնել, եթէ ոչ՝ քաղաքը վտանգի տակ է: Կառավարութիւնը կը սկսի իր խստութիւններուն: Այի Հայտար երկու հայ երեւելիները Մարաշ զրկելէ ետք, զէնքերը հաւաքելու համար քաղաքը զինուորական շրջայի տակ առնելով անլուր խոշտանգումներով, բարբարոսութիւններով կը սկսի իր շահատակութիւններուն: Կը կանչէ աղաները իր մօտ, եւ ամէն օր, ամէն ժամ զէնք ունեցողներու նոր անուանացանկեր կը ներկայացնէ եւ կը ստիպէ որ այդ զէնքերը յանձնուին: Արգելքի տակ կ'առնուին անոնք, եւ գաւազաններու հարուածները կ'իջնեն ու կ'իջնեն անդադար: Ամէն գնով զէնքերը պէտք էր յանձնէին: Զէնք չունեցողներն իսկ տեղէ մը պիտի հայթայթէին, ի հարկէ դուրսերէն, նոյնիսկ Ղուզու Տէփէի չէրէզներէն եւ թուրքերէն սուղ սուղ պիտի գնէին ու բերէին:

Եղիա, համաձայն եղած կարգադրութեան եւ որոշման ճամբայ կ'ելլէ, սակայն հազիւ թէ կը հասնի Զերմուկի գաշտը, գումարտակ մը հեծելազօրք կը հասնի ետեւէն: Եղիա թէեւ ձեռք չ'անցնիր եւ իրիկունը կը վերադառնայ իր այգին՝ Փիսիր, Նորաշխարհեաններու ամարանոցը, սակայն չի կրնար Արեգին երթալ: Կը լսէ Նազարէթ Չաւուշի ձերբակալուած ըլլալը, քաղաքին շրջայի տակ առնուիլը, զէնքերը յանձնելու համար խիստ հրամանը, սպառնալիքը քաղաքը ուժակոծելու, գաւազանի հարուածները: Կը մտածէր թէ՝ ի՞նչ կարելի էր ընել: Բայց յաջողած էր Արեգինի գոնէ 16 զիւղերուն լուր մը հասցնել, որպէսզի գիշերն իսկ հասնին Պապիկ Փաշայի քարայրը, ափտեղ վերջնական քայլը առնելու համար: Գիշեր է, ճամբայ կ'ելլէ, նոյն ժամուն, Նազարէթ Չաւուշի փեսան, Հայկ Ամմընեան, որ թէ՛ քաղաքական ժողովի ատենապետն էր եւ թէ՛ քաղաքապետարանի անդամ, իր ձիով Զէյթունէն ելած էր իրենց այգին՝ Շէհիրճոկ եր-

Թալու: Իրարու կը հանդիպին անոնք: Մտահոգ եւ տրտում վիճակի մէջ էր Հայկ Ասմընեան, Եղիային կը պատմէ վերջին երկու օրերուն Զէյթունի մէջ տեղի ունեցած անցուղարձերուն մասին: Եղիա Հայկին կը տեղեկացնէ իր նպատակի մասին: Արեգինցիներուն կը սպասէր ան, զօրանոցը պաշարելու մասին վճռական որոշման մը գալու համար: Հայկին յայտնած էր ան իր այս յանդուգն ծրագիրը: Ու դարձեալ ձի նստած, անոնք, գիշերը կը բաժնուին իրարմէ: Իսկապէս յախուռն փորձ մը պիտի ըլլար իր ընելիքը: Եղիային հետ էր, Նորաշխարհեաններու մէկ ճիւղէն, Միխայիլեց խաչերը: Կը հասնէ քարայրը, հոն է Նազարէթ Զաւուչի կիներ՝ կատար եւ երկու տղաք՝ Յակոբն ու Ռուբէնը: Այլ Հայտար զօրանոցին մէջ, սպալակոյտին հետ գործի վրայ է, կանխելու համար ոեւէ ապստամբական շարժում: Զակատագրական օր էր: Հայկ Ասմընեան Եղիայէն բաժնուելէն յետոյ, չենք գիտեր ինչ հրէշային մտքէ թելադրուած, թերեւս կառավարութեան վստահութիւնը ձեռք բերելով աւելի բարձր դիրքի մը հասնելու կոյր մոլուցքէն տարուած, փոխանակ այգին երթալու, ճամբուն ուղղութիւնը կը փոխէ, եւ կը հասնի զօրանոց, Այլ Հայտարի կը հաղորդէ ապստամբութեան մը ծրագիրը: Ասոր հետեւանքը, զինուորական պաշարման շղթան, որ արդէն Զէյթուն իր մէջն առած էր, աւելի կը նեղնայ, նոր ուժեր կը հասնին, զինուած, սուր նամերկ զինուորներ շարժման կը դրուին: Բոլոր կասկածելիները ձերբակալելով շղթայակապ բանտ կ'առաջնորդուին: Անոնց մէջ է նոյնինքն Եղիան: Իր հօրեղբորորդիներէն Նշանը, Նազարէթ Զաւուչի տղաքը, Զագրեան Փանոսը, Եզեկիէլեան Նշանը, Զօլագեան Փանոսը, Պատանեան Աւետիսը, Մարկանեան Հաճին, Եղուպեան Խաչիկը եւ Յովհաննէս Վրդ. Գրանֆիլեանը: Ամբողջ Զէյթուն ահաւոր օրեր կ'ապրէր: Թուրք զինուորը այլեւս առանց արգելքի կրնար ամէն դուռ մտնել, նախատել, հայհոյել, խոշտանգել, ծեծել, կողոպտել անգէն, անպատրաստ եւ անգլուխ ժողովուրդը: Ոչ ժողով մնացած էր, ոչ ալ ժողովական: Կար միայն Պապա Աղա Բասիլոսեանը՝ որպէս քաղաքականի ատենապետ ենթարկուած Ասմընեանի եւ Ահարոնեանի: Ու այսպէս հազիւ կրցած էր գերծ մնալ գաւազանի հարուածներէն: Անդին զօրանոցի մէջ բանտարկուածներուն վիճակը անառնելի էր: Գաւազանի հարուածներէն, ոտքերը այնքան կ'ուռէին, որ ծեծուողները շարաթներով ոտքի չէին կրնար կենալ: Եատեր, հարուածներուն տակ կը մարէին: Ալպիստանէն, Մարաշէն, Զէյթունի չրկակայ թուրք զիւղերէն մասնաւոր կերպով եկած էին կրօնամուլ, սիւնիկ թուրքեր, շէյխեր, դիւանու, հաճոյանալու համար: Կը հրամայէր Այլ Հայտար, ու ահա կարանաւորները շղթայակապ կը հանուէին դուռս, կը գտ-

կեցնէին, բերնին վրայ կը դնէին բարձ մը, վրան կը նստեցնէին ամենէն ծանր մարմնով, մոլեռանդ վայրագ թուրք մը: Մուսետիկն է որ ահա բարձր ձայնով կու տայ պառկածին անունը: Թմբուկն ու զուռնան կը սկսէին գաւազանի հարուածներուն հետ, որպէսզի ենթակային աղաղակն ու գաւազաններուն ձայները չսուրին: Իսկ ճիւղը՝ Հայտար վերն է, զօրանոցին պատշգամբ իր արբանեակներով: Կը դիտէ, կը զուարճանայ: Թուրք խուժանը անոնց շուրջը հաւաքուած կը հայհոյէ եւ մոլեռանդական բաներ մը կ'երգէ (եթէ ներելի է այստեղ «երգել» բառը գործածել): Զինուորներ կը բերեն նաեւ Եղիան, երկու կողմը կատաղի ամբողջը կը սպասէ: Անոր աչքին հրէշներ կ'երեւան անոնք: Բայց ինչ օգուտ: Այս մարդը որ, իր կեանքին մէջ վհատութիւնն ինչ էր չէր գիտցած, այժմ ընկճուած է: Մուսետիկը անոր անունը բարձրաձայն կը յայտարարէ եւ զինք ծաղրելու համար կը յիշէ 1896-ի պատերազմին անոր քաջագործութիւնները պատմող հին մէկ տէսթանին հետեւեալ տողերը. «Ենի Տիւնիա Եղիա, պիր զօլա պաստը, ալլահ, ալլահ տէյիննէ պին ասքէր վուրտը»: Ու ահա դարձեալ նախատինք, հայհոյանք: Կը պառկեցնեն զինքը, բերնին կը դնեն բարձր ու վրան կը նստի Ալպիստանցի Մուհամմէտ Զէքի Գասրն: Գաւազանը կ'իջնէ ու կ'ելլէ, ու տալուը կը թնդայ: Հարկըներով գաւազանի հարուածներ: Օր մը, շատ վերջերը, Այլ Հայտար շնականօրէն ըսած է Եղիայի մասին թէ՛ «Զարմացայ այս «էշ» մարդուն վրայ, վեց հարիւր գաւազանի հարուած կերաւ եւ օֆ մը կամ աս մը չըսաւ»: Նոյն հարուածին կ'ենթարկուին նաեւ Յակոբ եւ Նշան Նորաշխարհեաններ, Աւետիս Պատանեան, Փանոս Զօլագեան, Փանոս Զագրեան, Հաճի Մարկանեան, Նշան Եզեկիէլեան եւ ուրիշներ: Այլ Հայտար հրէշը, այս անմարդկային խստութիւններով եւ վայրագութիւններով կը հաւաքէր զէնքերը: Հայէպէն գերման հիւպատոսը եւ Մարաշէն հրամանատար Ֆախրի փաշա շարունակ սպառնալիքներ կը տեղացնէին, թէ՛ զէյթունցիք իրենց զէնքերը պէտք է յանձնեն եւ ենթարկուին Հայտար փաշայի հրահանգներուն:

Այդ միջոցին Յովհաննէս Վրդ. Գրանֆիլեանէն հեռագիր կը հասնի Վեհափառ Սահակ Կաթողիկոսին թէ՛ ինքը զօրանոցը բանտարկուած է եւ ընդ հսկողութեամբ Հայէպ պիտի դրկուի: Այս հեռագիրը եւ Զէյթունի մասին լսուած ջուկները կ'արձագանգեն բովանդակ կիլիկիոյ մէջ, իրենց ցաւառիթ ազդեցութիւններով: Ատանայի հայոց քաղաքական ժողովը յատուկ մարդ կը դրկէ Սիս՝ Վեհափառին, խնդրելու համար իրմէ, որ անպատճառ Հայէպ երթայ եւ առաջը առնէ խնդիրներուն: Սահակ Կաթողիկոս ընդհանուր վտանգի հաւանականութիւնը աչքին առաջ ունենալով կը մեկնի Հայէպ, ու

կը սկսի այն տեղէն ընել իր պաշտօնական դիմումները Կ. Պոլիս, կեդրոնական կառավարութեան նախարարներուն, Կ. Պոլսոյ Պատրիարքին եւ կը տեսակցի Հալէպի կուսակալին՝ ինչպէս նաեւ Ճէմալ փաշային կը գրէ։ Հալէպի վալիին կը խօսի Մարաշի միւթէսարըֆ Ալի Հայտարի բարբարոս եւ ապօրինի արարքներուն վրայ՝ դառն ու կծու դիտողութիւններով արտայայտուելով։ Կը յիշէ տեղի ունեցած ծեծերն ու խոշտանգումներ, նոյնիսկ հաւատարիմ եւ խաղաղ գէյթուցիներուն։ Ամէն տեղ, կ'ըսէ Վեհափառը, սովորական գողեր եւ աւազակներ կրնան գտնուիլ որոնց համար գիւղացիները չեն պատժուած։ Վալին սակայն մերթ համամտութիւնը կը յայտնէ, մերթ ալ գիտցած էլլայր։ Վեհափառը այս վերոյիշեալ պարագաները 27 Մեպտ. 1914 թուակիր ընդարձակ նամակով մը տեղեկագրելով Կ. Պոլիս՝ Զաւէն Պատրիարքի փրշած է իր տեղեկագրութեան մէջ՝ թէ ինքը փստահութիւն չունի Մարաշի մէջ տեղի ունենալիք դատավարութեան վրայ, քանի որ միւթէսարըֆ Ալի Հայտար Զէյթունէն վերադարձը Մարաշ՝ իբրեւ յաղթական եւ բանակներու, զօրավարներու, վալիներու չկրցած ըրածը ինքը ըրած ըլլալով, Մարաշի թուրք ազգաբնակչութենէն դիմաւորուած է եւ թունաւոր եւ չափազանցուած ճառերով գրգռած է իսլամ ամբողջը։ Կալանաւորները ցուցադրել տուած է Հայտար, կառավարական պաշտօնէութեանը եւ օր մը վերջը՝ զինուորական տեփոյի առջեւ։ Մունետիկներով հրաւիրած է Մարաշի թրքութիւնը որ գան տեսնեն Զէյթունի էտէպսիզները, խայիները, ալլաքները ձերբակալուած եւ բանտարկուած, եւ ով իր դատ դատաստան ունի, թող գայ եւ իր ամբաստանութիւնը ընէ, իր դատախազեալը տեսնէ եւ ցոյց տայ։ Եւ ինքը անոնց մէջ կեցած լուսանկարուեր է։ Վեհափառը ասոնք Հալէպի վալիին խօսելէ յետոյ, կը գրէ Զաւէն Պատրիարքին նոյն մանրամասնութիւններով։ Ու կը շարունակէ Կաթողիկոսը ըսելով թէ՝ վալիին առաջարկեցինք որ բանտարկեալները Հալէպ փոխադրուին եւ դատավարութիւնը հոս տեղի ունենայ, Գրանֆիլեան վարդապետը յանձնուի այստեղի Առաջնորդարանը իր հոգեւորականի հանգամանքին համար, մինչեւ անոր դատավարութեան վերջնալը։ Եւ որովհետեւ վալին հեղինակօրէն գործելու տրամադիր պիտի չկրնայ ըլլալ, եւ կամ կաշկանդուած է եւ մենք, կը շարունակէ տեղեկագրել Վեհափառը Պատրիարքարան - ստիպուեցանք հեռագրել Տաթլիլի, Ատլիլի եւ մեր հեռագիրներուն օրինակները ղրկեցինք Պատրիարքարան...։ Կը գրէ Վեհափառը նոյնպէս Նազարէթ Զաւուչը մեռցնելու աստիճան ծեծուած ըլլալը, յետոյ թոյն քսելով վէրքերուն զայն սպաննել տուած ըլլալը եւ առանց եկեղեցիին յանձնելու քահանայ մը եւ չորս բռնակիրով թաղել տուած ըլլալը։ Իր վերոյիշեալ նամակով կը գրէ

թէ՝ Զէյթուն եւ չրջակայ հայ գիւղերը կողոպտուած են, թէպէտեւ դրամ չունէին, բայց ձմեռնային պաշարին 25 օր 1800 զօրքերու կերցուցած են բռնութեամբ։ Այսպէս ըրած է Ալի Հայտար, անպայման ժողովուրդին համբերութիւնը սպառելով ապստամբութեան մղելու համար, եւ ի վերջոյ որպէս ապստամբներ՝ զինուորական նուաճումներու ձեռնարկելու հայրենադաւ միտումներով։ Միւթէսարըֆ Ալի Հայտարի ժանդակ է ալպանացի Զէյթունի գայմազամը Հիւսնի Եթէ չյաջողինք այս ճիւղը եւ իր օգնականը պաշտօնանկ ընել տալ, դուք եթէ ամէն ջանք ի գործ չդնէք զինքը պաշտօնանկ ընել տալու համար, լաւագոյն է որ հրաժարինք եւ պատրիարքութենէ եւ Կաթողիկոսութենէ քան թէ՝ թողունք որ իր եղբայրներուն կենաց ապահովութեան համար պարզապէս հանդուրժել հարկադրուող Զէյթունը նուաճուի։

Այս տողերը մենք ամփոփելով կը քաղենք Վեհափառին Զաւէն Պատրիարքի ուղղած վերոյիշեալ 27 Մեպտ. 1914 թուակիր տեղեկագիր նամակէն, ուրտեղ տակաւին կը յիշէ Հալէպի կուսակալին իրեն ըսածը Գրանֆիլեան վարդապետի մասին։ Հալէպի կուսակալը վարդապետին ազատ արձակելուն համար դիմած կ'ըլլայ Պոլիս դատական նախարարութեան, որ իրեն կը հրահանգէ վարդապետը ինքը իսթիլամ ընէ, այսինքն յանձն առնէ Հալէպ բերել տալ, եւ եթէ ապացուցուած յանցանք մը չունի, անմիջապէս ազատ արձակէ, հակառակ պարագային կալանաւորել։ Եւ սակայն Մարաշի միւթասարըֆէն վաւերական ապացոյցներով կասկածելի եւ ամբաստանուած ըլլալուն, հարկ եղած է զինքն ալ միւս բանտարկեալներուն հետ փոխադրել Մարաշ եւ հոն բանտարկել։

Մինչ, այս եւ նման դիմումներով եւ տեսակցութիւններով, բողոքներով Վեհափառ Սահակ Կաթողիկոս Հալէպէն ամէն ջանք կը թափէ Զէյթունի բանտարկեալներուն համար, Զէյթունի մէջ բարբարոսութիւնն ու անմարդկային արարքները, խստութիւնները կը շարունակուին։ Ծեծը, խոշտանգումը, հետզհետէ աւելի ու աւելի կը սաստկանայ։ Նոյն խստութիւնները, գաւազանները կը շարունակուին այս անգամ հայ գիւղերու մէջ։ Ամէն հայ տուն կը թալանուի, ոստիկան զինուորները կը մտնեն տուները գէնք կը պահանջեն, զինուորական փախստական կը փնտռեն։ Ահա ուրիշ երկու ճիւղերը՝ Հիւսէյն Հիւսնի եւ Պալքանեան 1912-ի պատերազմին հոգին հագիւ ազատած նմանապէս դարձեալ ալպանացի Սիւլէյման, այժմ ժանտարմաներու որպէս հրամանատար, Ալի Հայտարի պակաս թողուցածը կը շարունակեն։ Հրէշածին Սիւլէյման, 300 ժանտարմաներով կ'ելլէ գիւղերը, ահ ու սարսափ կը տարածէ իր դազանութիւններովը եւ կը սկսի գէնքերը հաւաքել։ Ցաւով կ'արձանագրենք այստեղ որ՝ վատագի Հայկ Ամբնեան,

որուն դաւաճանութիւնը քիչ առաջ յիշեցինք մեր տողերով, այս անգամ ալ զէնքերու հաւաքման եւ փախստականներու հետապնդումին մէջ կատարեց նոյնպէս շատ վատ եւ տխուր դեր եւ վարձատրուեցաւ ու եղաւ քաղաքապետ, անշուշտ աւերակ Զէյթունի վրայ ընելու համար իր քաղաքապետութիւնը։ Սակայն շատ կարճ տեւեցին իր այդ օրերը։ Այս երկու հրէշները Հիւսէյին Հիւսնի եւ Սիւլէյման գիւղերուն մէջ երբ չեն գտներ զինուորական փախստականները եւ ձեռք չեն կրնար անցընել զէնքերը, նոյնիսկ կը գանակոծեն փախստականներուն կիները անգթօրէն։ Ու վերջապէս կը հասնին Ֆոնուզ, որպէսզի այս մեծ գիւղը, որ նշանաւոր եղած է իր կտրիճներով, նոյնպէս գինաթափ ընեն։ Ֆոնուզի երիտասարդները կ'ուրանան իրենց զէնք ունեցած ըլլալը, ղեկավարները՝ Ալաճաճեան Փանոս, Եփրեմ եւ Մանուէլ Աղաները, Պրլորբեան Առաքել Աղա, Չինիկէօզ Գէորգ եւ Հաճի, Մարգարիկեան Գէորգ եւ Կուչէօղլի Գարակէօզեան Համբարձում տասնեակ մը չափմախլը հրացաններ կը յանձնեն Սիւլէյմանի եւ կարեւոր գումարով մը կաշառելով զայն կը դրկեն։ Ան իր հետը կը տանի Ռուբէն Քէնտիպէյեան երիտասարդը, որուն մասին նախապէս խօսած ենք մեր պատմութեան մէջ։

Զէյթուն եւ հայ գիւղերը զինաթափ կ'ըլլան այս անօրինակ խստութիւններուն տակ։ Երիտասարդութեան կարեւոր մէկ մասը ձերբակալուած է։ Տակաւին Սեպտեմբերի մէջ է։ Պաշարման վիճակը նոյն սաստկութեամբ կը շարունակուի ամէն կողմ։ Ժամը Ե-ին յետոյ ոչ ոք կրնայ դուրս ելլել իրիկունները։ Այի Հայտար, օր մը յետոյ, այսինքն 11 Սեպտեմբերին, Նազարէթ Չաւուշի մեծ տղան Յակոբը, որ գաւազանի հարուածներէն հագիւ թէ կրնար ոտքի կենալ, Զէյթունի բանտէն հանել տալով իր ներկայութեան բերել կու տայ եւ սպառնացայտ շեշտով մը կը պոռայ երեսին ու կ'ըսէ. «Հօրդ զնա՛ խօսէ, իրեն բան մը պիտի հարցնեմ, պէտք է որ չխտակը խօսի, այլապէս ազատում չկայ իրեն, զինքը կախելու հրաման ունիմ արդէն»։ Յակոբ կը տատամսի, կը դժկամակի երթալ հօրը ըսելու Հայտարին ըսածը, աքացիի հարուած մը կ'իջնէ վրան, ու զինուոր մը զինքը կը տանի հօր գտնուած գետնի լուսամուտին։ Նազարէթ Չաւուշ կը տեսնէ տղուն վիճակը ընկճուած, արցունքը աչքերուն, ոտքի կենալու անկարող, կը մթազնին իր աչքերը, խեղճէն կ'ելլէ առեւ բարկութեամբ մը կը պոռայ տղան բերող զինուորին ու կ'ըսէ. «Տղայէս ի՞նչ կ'ուզէ փաշան, եթէ ըսելիք մը ունի, թող ինծի ըսէ»։ Յետոյ կը դառնայ տղուն ու կ'ըսէ. «Տղայս, այլեւս որոշ է որ զիս պիտի կախեն, հոգ չէ, մի՛ մտածէք»։ Յիսնապետ զինուորը տղուն հետ կը վերադառնայ ու կը պատմէ Այի Հայտարի նոյնութեամբ,

ինչ որ ըսած էր Նազարէթ Չաւուշ։ Մինչեւ այդ օր մէջտեղ չէր հանուած Նազարէթ Չաւուշ եւ ո՛չ մէկ խօսք կամ հարցում չէր եղած անոր։ Ընդհակառակը Այի Հայտար անոր տղուն ըսած էր թէ՛ հայրդ եթէ ճիշդը խօսի, ազատ պիտի ձգեմ զինքը։ Չաւուշ սակայն շատ լաւ դիտէր թուրքին խօսքին եւ խոստումին արժէքը եւ գիտէր թէ՛ կարելի չէր վստահիլ այդ նենգ աղուէսի խօսքին։ Այդ իրիկունն իսկ զնտանէն դուրս կը բերուի Նազարէթ Չաւուշ, կառավարութեան պաշտօնէութիւնը գլխավորութեամբ գայմազամ հրէշ Հիւսէյին Հիւսնիի, կը հասնի զօրանոց։ Մոլեռանդ խուժանը չըջապատած է Նազարէթ Չաւուշը։ Զինուորական փողը կ'իմացնէ զինուորներու ընթրիքին վերջացած ըլլալը։ Ոստիկաններ եւ զինուորներ պատրաստ կարգի կեցած կը սպասեն։ Թմրուկը կը վերսկսի։ Կը պառկեցնեն Նազարէթ Չաւուշը, բարձր կը դնեն անոր բերնին, Այի Հայտարի թոյլութեամբ հայտնեց Հիւսէյն Հիւսնի կը նստի բարձին վրայ։ Ու ահա գաւազանները կ'իջնեն, տասը, քսան, հարիւր։ Այ թուք ու մուր, ծաղր ու անարգանք խուժանին մէջ, կը նախատեն, կը հայհոյեն, «հայոց թագաւոր, առիժներու պետ» ըսելով։ Ուշակորոյս եղած էր ան հարիւրաւոր գաւազանի հարուածներուն տակ։ Ան այլեւս ոչինչ կը զգար, ոչ մէկ բան չէր լսեր։ Ու ոտքէն քաշկուտելով, կը տանին, կը նետեն նորէն զնտանը, ուր կը գտնուէր արդէն ուսուցիչ Խաչիկ Եաղուպեան, Դաշնակցական եւ Եաղուպեան տուճէն։ Այի Հայտար այս անմարդկային խստութիւններով զէնքերը հաւաքել եւ անոնցմէ հանդարտ կենալու խօսք առնելէ յետոյ կալանաւորներէն բաւական մեծ թիւով ազատ կ'արձակէ, որոնց մէջ էին Եղիա Ենիտիւնեան, Նշան Ենիտիւնեան, Փանոս Չազրեան, Հաճի Մարկանեան, Աւետիս Պատանեան։ Այս խստութիւնները եւ ծեծն ու խոշտանգումները ի դորձ դնելէ յետոյ, Այի Հայտար կը կարծուի ու մանց կողմէ թէ մասնաւորաբար ազատ կ'արձակէ վերոյիշեալները, որպէսզի երթան Զէյթունի մէջ ապստամբութեան շարժում մը հանեն եւ ինքը այս անգամ աւելի իրաւունքով եւ միաժամանակ անգէն ժողովուրդ մը աւելի դիւրութեամբ բնաջնջէ։ Նազարէթ Չաւուշ բնակարանէն կը գտնուի քանի մը մովզէր-հրացան, որոնք Հալէպի ան ժամանակուան Առաջնորդ Եարփուզցի Ներսէս Եպսկ. Դանիէլեան ղրկած էր Հալէպէն։ Դաշնակցական ուրֆացի Մկրտիչ Եօթնեղբայրեանի Հալէպի բերդէն հանած եւ փախուցած զէնքերէն էին անոնք, որոնցմէ բաւական թիւով մըն ալ Ուրֆա ղրկած է Եօթնեղբայրեան։ Դանիէլեան Ներսէս Եպս. որ 1914-ին Հալէպի Հայոց Առաջնորդն էր, ի վերջոյ կը ղրկուի Եօզղատ եւ այնտեղ կախաղան կը բարձրացուի։ Այդ զէնքերը Ներսէս Եպիս. Զէյթուն ղրկած էր

Մարկանեան Հաճիի միջոցաւ, որոնցմէ մէկը Հաճիին տրուած էր, իսկ ինքը՝ Հաճի ալ գայն նուիրած էր Նշան Եղեկիէլեանի, որ մտաւորական եւ Դաշնակցական ուսուցիչ մըն էր: Այս պարագան ծանօթ էր Հայկ Ամբնեանի: Անիկա կ'իմացնէ կառավարութեան թէ՛ Մարկանեան Հաճիին քով գէնք կայ: Մարկանեան Հաճի գաւազանի հարուածներու տակը կը ստիպուի ըսել թէ՛ Մովզէր ունէր եւ ան ալ Նշան Եղեկիէլեանի տուած է: Կը խուզարկեն Եղեկիէլեանի տունը, կը գտնեն այդ գէնքը, որուն վրայի թիւէն կը հասկցուի թէ Հալէպի բերդէն փախուած գէնքերէն է: Ու խուզարկութիւնները կը վերջանան այս խատուութիւններով: Սեպտեմբերի վերջերուն է, բանտարկուածները դուրս կը հանեն զնոսաններէն, շղթաներով կապուած ճամբայ կը հանեն: Յուզարկաւորութիւններու թափօրէ մը աւելի տխուր էր այդ պատկերը: Մահուան կարաւանը կը շարժի անուրներու հեծքին եւ ծանրութեան տակ, վերի ճամբէն: Ծամբու երկայնքին զինուորական պահակներ լեցուած են: Կարաւանը կալանաւորներու կ'ընթանայ Համր, տխուր, ընկճուած, անճանաչելի դարձած: Նազարէթ Զաւուշ Համր, տխուր, ընկճուած, անճանաչելի դարձած էին, որ ոտքերը ուռած էին եւ վէրքեր բացուած էին: Կիսամեռ վիճակի մէջ, հին կապերսի մը մէջ զնեւով գինքը դուրս կը հանեն եւ իշու մը կը բեռցնեն: Կալանաւորներուն մէջ էին Յովհաննէս Վրդ. Գրանֆիլեան, Խաչիկ Եւդուպեան, Յակոբ Նորաշխարհեան, Նշան Եղեկիէլեան, Փանոս Զօրագեան, որ իր երկու որդիներուն՝ Յովսէփի եւ Աբրահամի հետ, հետիոտն կը քայլէր: Ասոնց ետեւէն դարձեալ շղթայակապ կու դալին ուրիշ վաթսուն ձերբակալուածներ: Իսկ ամենէն վերջը 250 զինուորացու երեսասարդներ: Գրաւուած գէնքերը բեռցուած էին կենդանիներու վրայ: Այի Հայտար յոխորտանքով, շնական ժպիտը երեսին, յաղթանակ մը տարած ըլլալու գոհացումով, իր ձիուն վրայ նստած կը մտնէ Մարաշ: Ծակատէ ճակատ շահուած յաղթանակ մը չէր այս, այլ դաւադրութեամբ, վատութեամբ եւ կարգ մը դաւաճան-լրտես մատնիչներու օգնութեամբ եւ Մարաշէն բերուած երկու պատուիրակ հայ երեւելիներու միջոցներով ձեռք բերուած անփառունակ, տխուր եւ տգեղ յաջողութիւն մը: Սակայն, թուրքը միջոցի մէջ խտրութիւն չի դնէր, ինչպէս որ ժամանակին կեդրոնի թուրք կառավարութիւնը Պոլսոյ Լօզանի մէջ ի նպաստ թուրք դատին, Եւրոպայի դահլիճները լեցուց իր ամենէն գեղեցիկ եւ տոհմիկ թրքուհիները, անոնց միտն ու մարմինը ի սպաս դրաւ Եւրոպայի դիւանագէտներուն եւ պետական մարդոց եւ շահագործող Լօզանը: Այի Հայտար առանց ամչնալու կը յայտարարէ թէ՛ զինուորութեամբ ձերբակալած էր ըմբոստները եւ հաւաքած էր գէնքերը: Այդ 300-ի մօտ զինուորացուները պիտի ղրկուէին Պաղեստինի, Նապլուսի,

Արարիոյ անապատները, որպէս ամէնէն թաղուրը, ճամբաներ շինելու, մէկ մասը ի վերջոյ պիտի հասնէին մինչեւ Պիրսապա (Բերսաբէ) ճամբաները քար կտրտելու եւ զինուորական ամբարներու մէջ բռնակրութիւն ընելու: Կարաւանը ճամբու կէտին, տեղատարափ անձրեւի տակ մինչեւ առտու թրջուելով կը շարունակէ ճամբան: Կալանաւորները տակաւին Մարաշ չհասած, ուրախադիմ լուրը կը հասնի Մարաշի թուրքերուն: Շատեր անոնցմէ կ'ելլեն մինչեւ Ախրրտաղի վերելքը, ուրիշներ լեցուած են ճամբաները դիտելու համար դարեր Մարաշի թուրքերուն սարսափն ու մղձաւանջն եղող գէյթունցիներուն այդ վիճակը: Քաղաքի մուտքին առաջ, զօրանոցին մօտերը, կալանաւորները թուրք ամբօխին կողմէ ծաղրի եւ նախատինքի առարկայ կը դառնան: Մասնաւորաբար լուտանքի, թուրքի եւ հաշոյութեան կենթարկուի Նազարէթ Զաւուշ: Խուժանը իր պարտականութիւնը կատարողի գոհունակութեամբ կը շարունակէ իր անարգական բացազանչութիւնները:

Այի Հայտար, Զէյթունի զօրանոցին բակը, առաջին անգամ, եւ վեհափառի ղրկած հրահանգներուն եւ յորդորին վրայ եկած յանձնուածներուն հետ խմբանկար մը լուսանկարել կու տայ: Այդ խմբանկարին ձախ եւ վերի անկիւնը կեցած է ինքը: Այնտեղ են Եղիա եւ Նշան Ենիտիւնեանը, Զազրեան Փանոսը, Պատանեան Աւետիսը, Թէօպիւնց Խաչերը, Մէարկիւսենց Աւետիսը, Շէֆթէլին, Տէլիուսթեան Լեւոնը, Զօրագեան Փանոսը եւ Յովսէփի եւ Աբրահամ գաւակներով եւ ուրիշներով:

Այի Հայտար երբ Մարաշ կը հասնի կալանաւորներով, զանոնք զինուորական տէփոյին առջեւ շարել տալով դարձեալ շղթայակապ, ինքն ալ նոյնպէս ձախ անկիւնը կեցած լուսանկար մը եւս հանել կու տայ: Այդ խմբանկարին մէջ են ի միջի այլոց Հաճի եւ Վանէս Մարկանեանները, Տէվէտիկ Կարապետը, Զինիկ Ստեփանը, Շէֆթէլին, Վառվորը, Քուսքուսենց Թազուրը, Ղարիպենց Մանուէլը, Խէօտիւնց Փարթամը, Մէարկիւսենց Աւետիսը, Թէօպիւնց Խաչերը, իրենց ետեւը սուրխամերկ զինուորներով:

Իսկ Մարաշի կառավարչատան բակը երկու շարքի վրայ մեծ թիւով թուրք զինուորականներու, պաշտօնեաներու եւ մոլեռանդ թուրքերու հետ, ինքն ալ անոնց մէջ եւ իր առջեւ կալանաւոր գէյթունցի ուսուցիչ Խաչիկ Եւդուպեան, անոր քովը քիչ մը ետեւ Գրանֆիլեան Վարդապետ կեցած են քարէ պատշգամի մը վրայ: Իրենց վարը դարձեալ ոստիկաններով եւ զինուորներով, ժանտարմաներով պաշարուած գէյթունցի կալանաւորներ: Խոշոր խմբանկար մըն ալ այստեղ. հոն են Նազարէթ Զաւուշ, սաստիկ ծեծուելէ վերջ, ընկճուած եւ ոտքի կենալու անկարող վիճակի մը մէջ. հոն են նաեւ Մարկանեան

Հաճին, Ղարիպեան Մանուէլը, Զօրագեան Փանոսը, Մէարկիւսեան Աւետիսը եւ ուրիշներ:

Այս երեք խմբանկարները, որպէս սիրազորութեան եւ շահատակութիւններու մէկ տիտուր յիշատակը անպայման պահեց եւ հետը պտուղացուց ցոյց տալու համար իր կառավարութեան եւ օր մըն ալ իր հետը թաղուեցան անոնք:

Լուսանկարի արարողութենէն յետոյ, անոնք կրկին կ'առաջնորդուին Մարաշի բանտը:

Թաջորդ առաւօտ մուկեալիկը կը կանչէ «Զէյթունի կեաւորները պիտի պտուղացուին քաղաքի փողոցները, թուրք հաւատացեալները թող լուր ունենան եւ ելլեն դիտեն: Եթէ ոեւէ դատ, կամ խնդիր ունին անոնց ոեւէ մէկուն հետ, թող ցոյց տան եւ ամբաստանեն:

Գիշերը սաստիկ ծեծուելէ յետոյ, առտուն դուրս կը հանեն բանտարկուածները: Ահա Գրանֆիլեան Հայր Սուրբը, յետոյ չորս թուրքեր Նազարէթ Զաւուչի կիսամեռ մարմինը հին կապերտի մը մէջ դրած, կապերտին ծայրերէն բռնած կը քաշկուտեն փողոցներէն: Թուրքեր կը մօտենան, կը թքեն ու կը հայհոյեն: Ոմանք ալ չէին գոհանար թքելով եւ հայհոյելով, ու ոտքերով կից կու տային կապերտին, մէկ կողմէն միւսը կը գլորէին, անոր անզգայ մարմինը: Ղարա Պինպաշին «Ահա, կ'ըսէր, Զէյթունի գլխաւորը Նէֆրէթ Զաւուչը, քեանֆիրը»:

Բանտին ներսը, կալանաւորներու սենեակները դժոխային, խուժուժ տեսարաններ կը պարզէին: Ամէն սենեակէ, ամէն անկիւնէ ցաւի ու կոտորանքի աղեկատուր ախեր եւ օֆեր, ճիւղեր եւ հոնդիւններ կու գային, կը հասնէին բանտին մինչեւ դուրսները: Գաւազանը կը գործէր տակաւին օրերով: Նազարէթ Զաւուչի ոտքերուն եւ սրունքներուն բացուած վէրքերը, որպէս թէ՛ դարմանելու համար, Ալի Հայտարի կարգադրութեամբ, մարաշցի թուրք Տօթթոր Մուստաֆայի եղբոր՝ Լուիֆիի կը պատուիրուի որ գիշերը գայ, եւ անոր վէրքերուն թուրք շաւոր դեղ մը քսէ: Քանի մը օր ետքը, Լուիֆի կը մտնէ, ու զինքն իր բանտը, բացուած վէրքերուն թոյն մը կը քսէ: Նազարէթ Զաւուչ, ժամ մը չանցած, կը հոնդայ ու աչքերը կը գոցէ ընդմիջ: Մեռելը օր մը բանտը պահելէ յետոյ, դուրս կը հանեն Տ. Յակոբ Քահանան եւ չորս բռնակիրներ, տասնեակ մը զինուորներու հսկողութեամբ կը տանին մեռելը հայոց գերեզմանատունը եւ կը թաղեն:

Վեհափառ Սահակ Կաթողիկոս Պոլիս Պատրիարքարան ղրկած նամակով եւ ներքին գործոց, դատական եւ կրօնական նախարարութեանց մօտ բողոքած էր որ՝ Նազարէթ Զաւուչը սաստիկ ծեծէ վերջ կտրածն ի կերպով մը մեռցուած է եւ ի վերջոյ ըսուած է թէ՛ ընական

մահով մեռած է, եւ հակառակ մեր կրօնական տրամադրութիւններուն եւ պահանջներուն, առանց մեր եկեղեցիին յանձնուելու, անոր մեռելը, քահանայ մը կանչուած եւ չորս բռնակիրներով թաղել տրուած է: Նոյնպէս բողոքած է որ Յովհաննէս Վրդ.ը կրօնական մը ըլլալով, մինչեւ անոր դատաւարութեան արդիւնքը, Հայէպի Առաջնորդարան պէտք է մնար: Բողոքած է նոյնպէս Ճէմալ Փաշային եւ վերոյիշեալ նախարարութեանց որ հնազանդ եւ անմեղ Աղաները եւ ինքնաբերաբար եկող յանձնուող բանտարկուածները, ազատ արձակուին եւ դասալիքները Հայէպ ղրկուին, անոնց դատաւարութիւնը հոս տեղի ունենալու համար: Ամիս մը ետքը, այդ դիմումներուն որպէս հետեւանք, Աղաները, անոնց մէջ նաեւ Նշան եւ Եղիա Ենիտիւնեան, Փանոս Զաքրեան, Աւետիս Պատանեան ինչպէս նաեւ 75-80 ինքնաբերաբար յանձնուածներ Մարաշի բանտէն ազատ կ'արձակուին: Գրանֆիլեան Վրդ., Նշան Եգեկիչեան եւ Խաչիկ Եղուպեան Հայէպ կը ղրկուին դատուելու համար: Մարաշի բանտէն ազատ կ'արձակուին նաեւ Նազարէթ Զաւուչի Յակոբ եւ Ռուբէն տղաքը: Իսկ մնացածները 22 հոգի կապուած կը տարուին Օսմանէի բանտը, սակայն տակաւին մեծագոյն մասը կը մնար Մարաշի բանտը, գնդակահարուելու, կիր հնոցներուն մէջ ողջ ողջ այրելու եւ մէկ մասն ալ կախաղան բարձրացնելու համար:

Այլ Հայտար իր այս ճիւղաղային ծրագիրը իրագործելէ յետոյ պիտի ղրկուէր Ուրֆա, նոյն տխրահոգակ պաշտօնով, քանդելու, կրակի տալու համար նաեւ այդ հայաշատ քաղաքը:

Զէյթունի մէջ պաշարման վիճակը չէր վերջացած: Ծեծն ու խոշտանգումը կը շարունակուի, վերստին խուզարկութիւն եւ հետապնդում նաեւ շրջակայ հայ գիւղերու եւ Զէյթունի մէջ: Օրուան կացութեան մասին ոչ ոք կը համարձակի նոյնիսկ բերան բանալու եւ բան մը ըսելու: Երեկոյեան ժամը հինգէն յետոյ ամէն մարդ ստիպուած է քաշուիլ իր տունը: Ծամբաները, փողոցները կ'ամայանան: «Խաւարին հետ, ամէն օր կ'իջնէ սարսափը հայ տուներուն վրայ, վիշտը կը մտնէ դռներէն ներս» կ'ըսէ մեր հայրենակիցը՝ Պ. Լեւոն Նորաշխարհեան՝ Նազարէթ Զաւուչի տղան իր «Մույլ օրեր»ուն մէջ, որ Զէյթունի 1914-1915-ի վերջին անցքերուն մէկ նկարագրութիւնն է, յուզիչ-բոժանալիք էջերով տրուած են այնտեղ ամէն ինչ եւ յաճախ տեղ տեղ չափազանցուած եւ վիպական հատուածներով: Փողոցները մնացողները, ճամբաները ուղացողները, կը շարունակէ ան, կը ձերբակալուէին եւ ծեծի տակ բանտ կը տարուէին: Տ. Խաչատուր Վրդ. Տ. Ղազարեան, որուն մասին նախապէս ըսած ենք թէ, Գրանֆիլեան Վրդ.ի տեղ Զէյթուն ղրկուած էր որպէս Առաջնորդ, ականատես կ'ըլլայ տիրող

Թուրքիա պատերազմի մէջ կը մտնէ Գերմանիոյ-Աւստրո-Հունգարիոյ եւ Պուլկարիոյ կողքին, ընդդէմ համաձայնականներու: Հալէպէն եւ Մարաշէն մեր կալանաւորները ազատուած են ու կը դառնան Զէյթուն, որպէս արդիւնք Վեհափառի դիմումներուն: Սակայն վերջէն կարգ մը հայրենակից իրազեկներ մեզի ըսին թէ, Թուրք կառավարութեան այդ ներման մէջ, ուրիշ միտք մը եւս կար նաեւ: Ի հարկէ անուրանալի են եւ իրենց մեծ եւ բարերար ազդեցութիւնը ունեցած են Սահակ Կաթողիկոսի շարունակական եւ ազդու դիմումներն ու բողոքները, կալանաւորներու ազատ արձակուելուն մէջ, սակայն եւ այնպէս միւս պարագան ալ նկատի առնուելիք կարեւոր կէտ մըն է: Եղիա եւ Նշան Ենիտուրեանները, Խաչիկ Ետզուպեանը, Պազուան Փանոսը, Նազարէթ Չաւուշին տղաքը եւ ուրիշ կարգ մը պարագութիւններ, սոսկալի ծեծուելէն եւ խոչտանգուելէն յետոյ, երբ ազատ կ'արձակուին, կարելի՞ բան էր որ վերստին կանչուելու պարագային այլեւս գային եւ յանձնուէին: Կ'ըսեն թէ կառավարութիւնը դիտմամբ կ'արձակէր եւ արձակեց զանոնք, որպէսզի երթան Զէյթուն եւ նոր խլրտումներ հանեն: Անոնք Զէյթունի զօրանոցին եւ Մարաշի մէջ տեսած էին, համա առած էին Թուրքին ըրածներուն եւ եթէ պատահէր որ օր մը վերստին կանչուէին, պիտի նախընտրէին մեր լեռներու մէջ կոտուելով մեռնիլ, քան թէ երթալ գաւազանի հարկւրաւոր հարուածներու տակ պառկիլ եւ ենթարկուիլ լուտանքներու, անարգանքներու: Թուրքը նախապէս ծրագրած էր, Զէյթունը պիտի քարուքանդ ընէր եւ անոր ժողովուրդը պիտի բնաջնջէր: Ասիկա իր հիմնական ծրագիրն ու նպատակն էր, առիթը ներկայացած էր, սակայն ապագային, իր այդ դիւալին արարքին համար ինքզինքը արդարացնելու պատճառ մը պէտք էր ունենար, օր մը երբ պատերազմը վերջանար եւ խաղաղութեան սեղանի մը շուրջ երբ նստէին համաձայնականները եւ հաշիւ պահանջէին իրմէ: Ուրեմն մասնաւոր կերպով արձակած էր կարգ մը մարդիկ, որ խնդիր ստեղծեն, ըմբոստանան ոեւէ նոր հրամանի դէմ: Թուրքին փնտրածն ալ այդ պատրուակն էր: Անոնք այլեւս հանդիստ պիտի չլինային, ո՛չ ալ պիտի յանձնուէին եւ իթիբաթ ջոկերը լաւագոյն պատճառը պիտի ունենային ջարդելու ամբողջ ժողովուրդը Զէյթունի: Եւ ասիկա լոկ ենթադրութիւն չէ: օրինակ մը դովուրդը Զէյթունի: Եւ ասիկա լոկ ենթադրութիւն չէ: օրինակ մը փաստելու համար մեր վերոյիշեալ պարագան: Այլի Հայտար Նազարէթ Չաւուշը իր մօտը կը կանչէ: Եղիա կ'ընդդիմանայ Նազարէթ Չաւուշին եւ կ'ըսէ թէ՝ վերստին երթալ գաւազանի տակ պառկիլ եւ 600 գաւազան ուտելու, լուտանքի ենթարկուելու տեղ, կը միանք մեր լեռները, կը ջարդենք թշնամին, կը պաշարենք զօրանոցը, ուր տակաւին հազիւ թէ հազար զինուորի ոյժ մը կար, որուն 600-ը

Հայտար հետը բերած էր: Նազարէթ Չաւուշի հետ կ'որոշեն այլեւս չերթալ, չենթարկուիլ, այլ պատրաստուին, Արեգինի գիւղերը մարդ կը դրկեն, որ զան արեգինցիները եւ սկսին գործի: Նազարէթ Չաւուշ կրկին ձին նստելով ետ կը դառնայ իր քարայրը եւ կը սպասէ արեգինցիներուն գալուն: Գիշերը շատ գէշ երազ մը կը տեսնէ, նոյն երազը կը կրկնուի երեք անգամ: Կը տեսնէ, որ Զէյթունի հիւսիսային թիկունքը գտնուած Վերի ուռավերի ուռենի ըտուած հսկայ ծառը կը կտարի, կը փրթի եւ սահելով կ'իջնէ Զէյթունի վրայ հսկայ ձիւնի հիւսի մը նման, ու քաղաքը տակը կը կքի, կը կործանի: Միեւնոյն երազը երեք անգամ տեսնելէ յետոյ, մէյ մըն ալ կը տեսնէ երազին մէջ որ սեւ ձիււորներ կ'անցնին քարայրի դիմացի ճամբայէն: Ընդոստ կ'արթննայ քրտինքի մէջ: Կը պատմէ երազը եւ կ'ըսէ թէ՝ Այս անգամ Զէյթուն պիտի կորսուի, գոնէ ես պատճառ չըլլամ անոր կործանելուն: 1895-ին ալ, պատերազմին պատճառը դիւ բռնելով, ինծի եւ իմ նախորդիս հայհոյեցին, բարեբախտաբար Զէյթուն չյաղթուեցաւ: Զիս պիտի կախեն եղբր, Թող կախեն ու առանց վանքի ճամբով Զէյթուն իջնելու, որպէսզի Եղիան չտեսնէ, վանքի ուպին գառիվարէն կ'իջնէ: Սակայն Եղիան վանքին բարձրութենէն կը նշմարէ զինքը, կը կանչէ, կը պոռայ որ ետ դառնայ, Զէյթուն չիջնէ: Նազարէթ Չաւուշ ձայն չի տար ու կ'իջնէ Զէյթուն: «Արիւնք բռնուեր է Չաւուշին, ճար չկայ» կ'ըսէ Եղիա: Զէյթուն հասնելուն արդէն կը ձերբակալուի, ինչպէս որ իր կարգին պատմեցինք: Եւ այդ ժամանակէն քիչ առաջ, Ղարափանքեան Փանոս եւ Ասմընեան Հայկ Հայտարի գացած իմացուցած էին Եղիայի եւ Չաւուշի ծրագիրը: Այս բաւական երկար մէջբերումէն յետոյ վերագտնենք մեր պատմութեան թելը: Մարաշի բանտը կը մնային տակաւին հարիւրներով կալանաւորներ մեր տղաներէն: Հետզհետէ, ամէն օր, եւ շարաքներով շարունակելու պայմանով, կը հանէին զանոնք բանտէն, առտուները, կանուխ, կը տանէին Գանլը Տէրէի եւ Պողազէտէնի կողմերը կը կախէին, կը գնդակահարէին եւ կիրի փուռերու մէջ ողջ ողջ կ'այրէին: Կախուածներու եւ գնդակահարուածներու մասին Մարաշի Պէշալէմի մէջ աշխատող զէյթունցի հացագործ մը՝ Կարապետ Գրաճեան, 1916-ին Համայնի մէջ կը պատմէ մեզի: Ազատ արձակուածները Զէյթուն հասնելէ յետոյ, շատ չանցած, սարսափը կը վերսկսի: Թուրքիոյ ամէն կողմը կը բացուին զինուորական ատեաններ: Կառավարութեան մասին ոեւէ խօսք կամ ակնարկութիւն ունիւր էր, ենթական կը պատժուէր շատ խիստ կերպով: Զէյթունի մէջ կեանքը դժոխք էր դարձեր, ամէն տուն արիւն եւ արցունք: Խաչատուր Վարդապետ եկեղեցիէն եւ ժողովներու ընթացքին հնազան-

դուժեան յորդոր կը կարդար ժողովուրդին: Նազարէթ Չաւուշի տեղ քաղաքապետ՝ Ասմընեան Հայկ, գայմազամ Հիւսէյին Հիւսնիի եւ ոստիկանապետ Սիւլէյմանի հետ վերստին գործի էին, կը շարունակէին անոնք Զէյթունը քանդելու: Ազատ արձակուածները տակաւին սպասման մէջ էին եւ չէին ուզեր խնդիր ստեղծել: Նոր տարիին, 1915-ին, Եղիա եւ Նշան Ենիտիւնեան, Փանոս Չազրեան եւ Խաչիկ Եաղուպեան, միմեքեւ զմեքեւ համար կու գան Նազարէթ Չաւուշ ընտանիքին քով: Հոն կը խորհրդակցին կացութեան մասին: Կը մտածուի մարդ ղրկել Մարաշ, Տէօրթ-Եօլ եւ Հաճըն: Խաչեր Նորաշխարհեանը կը ղրկեն Տէօրթ-Եօլ, Հաճըն կը ղրկուի Ղարիպեան Մանուէլ, իսկ Մարաշ կ'երթայ Գրիգոր Նորաշխարհեան: Անոնք կ'երթան զէնքի եւ օգնութեան համար, որովհետեւ Զէյթունի զէնքերը հաւաքուած էին: Կ'անցնի շուրջ մէկ ու կէս ամիս, եւ ո'չ մէկ տեղէ գործակցութեան ոչ մէկ լուր, ոչ մէկ հաւաստիք այդ երեք հայաշատ քաղաքներէն:

Ու ահա, խօսք մը կ'ելլէ թէ՛ կառավարչատուն գտնուող եւ ոստիկաններու եւ ժանտարմաներու պատկանող պատերազմական զէնքերը՝ մովզէրները պատերազմական ճակատ պիտի ղրկուին եւ անոնց փոխարէն աւստրիական զէնքեր պիտի տրուին ոստիկաններու եւ ժանտարմաներու: Կառավարչատան մէջ 300-է աւելի զէնք կար: Պատեհութիւն մըն էր այդ զէնքերը գրաւելու, տակաւին քաղաքէն դուրս չելած: Ուստի կ'որոշուի յարձակիլ կառավարչատան վրայ, դիմադրողները սպաննել եւ զէնքերը գրաւել: Այս միտքը յղացած էր Պօղ-Պայիր-Աղծիպատի Չազրեաններէն Փանոս Չազրեան, որուն տունը կառավարչատան մօտն էր: Խորհրդակցութիւնը տեղի կ'ունենայ եւ որոշումը կը տրուի անոր տան մէջ Մեսրոպ Չօլազեանի եւ Խաչիկ Եաղուպեանի հետ: Հազիւ թէ ժողովէն դուրս կու գան եւ անհրաժեշտ պատրաստութիւնը տեսնելով, յարձակելու վրայ էին, քանի մը վայրկեան առաջ, Ղարալար թաղէն, Երջանիկ Տիրացուեան, կը կասկածի նման փորձի մը մասին, կը վազէ Յովհաննէս Ահարոնեանի մօտ եւ երկուքը միասին կը փութեան երթալ լուր տալ բերդը Քաղաքականի Ատինապետ՝ Բասիլոսեան Պապ Աղային: Պապ Աղա, որ մէ շատեր կը պատկառին, բացարձակ անխոհեմութիւն է կ'ըսէ նման յախուռն քայլ մը առնել, եւ իսկոյն Ս. Աստուածածնայ եկեղեցիին վերնատունը ժողով կը գումարէ: Հոն են Առաջնորդ Խաչատուր Վարդապետ եւ աշխարհական կարգ մը պետեր: Ու անմիջապէս լուր կը ղրկեն Չազրեան Փանոսի, Մեսրոպ Չօլազեանի որ այդպիսի վտանգաւոր եւ ապաժաման շարժում մը չընեն: Հետեւեալ օրը կ'իմանայ կառավարութիւնը անցած դարձածը, ու տակաւին արշալոյսը

չբացուած, զօրանոցէն աւելի քան 200 ոստիկան-զինուոր կ'իջեցնէ Զէյթուն եւ կը լեցնէ կառավարչատունը, ոստիկանապետ Սիւլէյմանի հրամանին տակ: Ոչ ոք կրնար իր տունէն դուրս ելլել եւ դրացիին տունը երթալ: Կառավարչատուն կը կանչուին Փանոս Չազրեանը եւ Մեսրոպ Չօլազեանը, սակայն անոնք անմիջապէս կը հեռանան քաղաքէն: Լուր կը ղրկուի նաեւ վանքը եւ Եղիան ու Նշան Ենիտիւնեանները կ'ուզուին, սա կարելի ըսն չէր այլեւս որ ներկայանային: Հիւսէյին Հիւսնիի կարգադրութեամբ ոստիկանապետ Սիւլէյման իր զինուորներով կը մտնէ տուները եւ այդ շարժումին կասկածելիներէն մաս մը կը ձերբակալեն, իսկ 25 խորխտ երիտասարդներ ձեռք չեն անցնիր եւ լեռ կը բարձրանան: Այս լեռ բարձրացողները, զլիաւորութեամբ Չազրեան Փանոսի եւ Մեսրոպի, Զէյթունէն երեք ժամ հարաւ Ալապօզան (Անդրէասեան) Փանոս Աղայի գիւղը կը հանդիպին ու այնտեղ կը լսեն թէ այդ գիւղը Մարաշէն, Կիւրիւտիի ճամբով տասնհինգ-քսան թուրք զինուորներ, եկած պառկած են Ալապօզան գիւղը, խոշտանգած են մարդիկը եւ նոյնիսկ յանդգնած էին ընտանիքներու պատիւին դաշերու փորձ ընել: Այդ օրեր զինուորական նոր նոր փախստականներ հետզհետէ կու գային, կը լեցուէին Զէյթունի լեռները: Լեռ բարձրացողներուն մէջ կային նաեւ Հայտարի որպէս զինուորացու, Մարաշ տարած եւ անկէ դէպի հարաւ պատերազմի ճամբաներուն իրրեւ ամէլէ, գործաւոր ղրկուածներ ալ, որոնք փախած եկած եւ միացած էին նախապէս լեռ քաշուածներուն: Անոնք, ապինքն լեռ բարձրացողները, ղեկավարութեամբ Մեսրոպի եւ Չազրեան Փանոսի կը փութան դէպի Զէյթուն, հասնելու համար, Ալապօզանէնց գիւղը եկած եւ գիւղի մէջ գտնուողները խոշտանգող այն հրէշ զինուորներուն: Անի ձորի մօտ, Զէյթիք ըսուած այգիներու սահմանին, Տ. Նշանենց այգիի եզերքը, կոխի կը բռնուին անոնց հետ: Հրացանները կը գործեն երկուստեք: Զինուորներուն ինը կը սպաննուին, երեք հատը Շուղրի գետակի հոսանքին մէջ կը խեղդուին, երեքը միայն կը փախչին ու շուկներին Մարաշ կ'առնեն: Տղաքը կ'առնեն անոնց մաուզէրները եւ կը հեռանան, լուծելով վրէժը Ալապօզան գիւղին: Սպաննուողներուն մէջ կ'ըլլայ նաեւ հայ զինուոր մը, որուն մէկ հայ ընկերը մեր տղոց ձեռքը կ'իյնայ եւ կ'ըսէ թէ այնինչ զինուորը հայ է: Հակառակ մերիկներէն իրեն եղած ազդարարութեան, որ զէնքը վար դնէ եւ յանձնուի, ականջ չի դնել ան, եւ բուռն կերպով կը կռուի ու կ'իյնայ: Մեր տղաքը իր վրայէն 30 ոսկի կը գտնեն: Եղիա կը լսէ այս պարագան, օգնութեան կը կանչէ Նշան եւ Խաչեր հօրեղբորորդիները եւ իր մեծ տղան՝ Պապիկը: Անոնք սակայն տակաւին չհասած կոխին վայրը, ընդհարումը արդէն վերջացած

է. Փանոս Զաքրեան, Մեսրոպ եւ իրենց ընկերները կը բարձրանան Շէնպէք ըսուած բարձունքը, ուր կը հանդիպին Յովհայի, որուն հետն էին նաեւ Զաւուշի տղաքը Կորոշին հեռագրաթիւերը կտրել եւ դառնալ Աստուածածնայ վանքը, այնտեղ ամփոփուել, այնտեղէն դիմադրելու համար թշնամիին հաւանական, մօտայուտ յարձակումներուն:

Հայկ Ամբնեան մահափորձի կենթարկուի Խաչեր Միխայէլեանի կողմէ, սակայն մահափորձը կը վրիպի, եւ Ամբնեան կ'ազատի Անմիջապէս կը փոխէ իր ընթացքը: Եւ նոյնիսկ ամենէն փոքր եղբայրը՝ Փարթոսը գէնքով վանք կը ղրկէ որ երթայ միանայ ըմբոստներուն: Բայց, օգուտը ի՞նչ: Ամբնեան իր տխուր դերը կատարած, վերջացուցած, քանդելով քանի քանի օճախներ, ջուրը ձգելով ամէն ծրագիր եւ շարժումի ունէ փորձ կարճ տեւեցին իր այդ օրերը, ինչպէս որ ասկէ առաջ ըսինք, գինքն ալ քչեցին անպատ եւ սպաննեցին, իբր վարձատրութիւն իր դաւաճանութեան: Զինուորական փախստականները կը շատնային հետզհետէ եւ կը լեցուէին քաղաքին շրջակայքը: Կառավարութիւնը կը վերսկսի իր հետապնդումներուն: Նոյնիսկ փախստականներու կիները եւ մայրերը կը ծեծեն անգութ կերպով: Այս կացութեան պատճառով, աղաները եւ երեք յարանուանութեանց հոգեւոր պետերը կը ներկայանան գաղմագմին, Խաչատուր Վրդ. հազիւ թէ կը պարզէ խնդիրը, կրակ եւ բոց կը կտրի գայմագամ: Անոնց երեսին բարկութեամբ պոռալով կ'ըսէ. — «Այ կը բաւէ ձեր ժողովուրդին ըրածը, մեր այս ըրածները ձեր ժողովուրդին տակաւին շատ քիչ են: Եթէ Օսմանեան կառավարութիւնը գթասիրտ չլլար, մինչեւ հիմա Զէյթունը քար ու քանդ կ'ընէինք»: Վերապատուելի Տիգրան Անդրէասեան խօսք առնելով. «Պէ՛յ էֆէնտի, կ'ըսէ, կը զարմանամ ձեր այս յայտարարութեան, մենք ալ աշխարհէն բոլորովին անտեղեակ չենք, մէկ երկու տասնեակ յանցաւորներու կամ զինուորական փախստականներու համար ո՞ր կառավարութիւնն է որ ամբողջ քաղաք մը պիտի պատժէր, քար ու քանդ ընէր, միթէ Փրանսացի՞ն, անգլիացի՞ն թէ գերմանը նման բան մը պիտի ընէին: Եթէ դուք Զէյթունը օտար քաղաք մը կը նկատէք, այդ տարբեր է, այդ աստեղ իրաւունք ունիք այդպէս ըսելու եւ ընելու: Բայց Զէյթուն Օսմանեան քաղաք մըն է: Գայմագամ Հիւսնի պատասխան չունէր տալիք: Սակայն անդրդուելի կը մնայ իր խօսքին մէջ եւ կ'ըսէ. — «Գացէք, խօսեցէք ժողովուրդին որ առանց աչեւայի ենթարկուի, եթէ ոչ, աւելի գէշ պիտի ըլլայ իրենց վիճակը: Եղած էին ծնողներ, որոնք իրենց զաւակները անձամբ կառավարութեան տանիլ յանձնելէ ետքն ալ գերծ չմնացին ծեծէ եւ խոշտանգումներէ: Պատճառ, որովհետեւ իրենց տղաքը կրկին փախած էին եւ ի-

րենք չէին գիտեր անոնց փախած ըլլալը, ո՛չ ալ գիտէին թէ՛ ուր կը գտնուին: Փախստականներու նոյնիսկ դրացիներն եւ ազգականները կը խոշտանգէին: Զօրանոցի առաջին կոչին ներկայացողներն անգամ գէշ կերպով եւ անարգանքով ընդունուեցան, իսկ ձերբակալուածները մինչեւ զօրանոց տարուիլը ճամբան ծեծով եւ նոյնիսկ հաշոյանքով հասցուցին զօրանոց: Կարգ մը գիւղերու մէջ փախստականներ հետապնդող ժանտարմաները փորձած էին նոյնիսկ անոնց ընտանիքները բռնաբարել: Այդ կը պատմէին գիւղերէն եկողներ: Այսքանէն ետքը, ինչ կ'ուզէ, ան թող ըլլայ կ'ըսեն ըմբոստները: Դաւաճաններուն երեսէն երբ կը ձախողի կառավարչատան վրայ յարձակելով, հոն գտնուող գէնքերը գրաւելու գործը, Ամբնեան Հայկը ահաբեկելու փորձէն յետոյ, տղաքը կ'իմանան, թէ՛ ժանտարմաներու խումբ մը Զէյթունի զօրանոցէն Մարաշ կ'երթայ, առանց ժամանակ անցընելու անոնց աղջեւր կ'եղեն, վրէժ լուծելու համար: Գիւղերուն մէջ անոնց ըրած անգթութիւններուն, ծեծի, խոշտանգումի եւ նոյնիսկ կիները եւ աղջիկներ բռնաբարելու փորձերուն համար: Ժանտարմաներէն տասնեակ մը կը սպաննուին եւ միւսները կը փախչին: Ըմբոստները վանք կու գան եւ կը մտածեն այլեւս պատրաստ ըլլալ ինքնապաշտպանութեան կոխներու: Որովհետեւ գիտէին թէ՛ կառավարութիւնը հանգիստ պիտի չթողուր գիրենք, իրենց վրայ զօրք պիտի գար, իրենք ինչպէս որ մինչեւ հիմա չյանձնուեցան, յետ այսու ալ պիտի չյանձնուին: Հետեւաբար պիտի կոտլին, սուղ ծախելու համար իրենց կեանքը, գիտնալով թէ՛ այլեւս մահը անխուսափելի է իրենց համար: Միայն թէ՛ պիտի ջանային վարը, ամբողջ քաղաքը, Զէյթունի ժողովուրդը, մանաւանդ երիտասարդութիւնը եւս ոտքի հանել, կոխը կ'ըլլայ զանդուածային, սակայն Զէյթունի երիտասարդութիւնը ինչո՞վ կոտլէր: Հայտար գէնքերը հաւաքած տարած էր, դանակ մը անգամ չէր թողուցած ժողովուրդին քով: Վանք քաշուածներու թիւը հասած էր 80, միայն ասոնք է որ գէշ աղէկ զինուած էին, ինչ որ Զէյթուն մնացած երիտասարդներուն հարիւրին միայն 95-ը գէնք չունէր եւ ունեցողն ալ վանքը եղած էր: Որովհետեւ ինչպէս գիտենք, Հայտար 300 երիտասարդներ որպէս զինուորացու եւ գրեթէ 150-է աւելի ալ որպէս ըմբոստներ, փախստականներ տարած էր Զէյթունէն Մարաշ: Երկու ճիւղերը՝ Հիւսէյին Հիւսնի եւ ոստիկանապետ Սիւլէյման բերով Ամբնեանի վրայ կատարուած մահափորձը ճամբան սպաննուած ժանտարմաներու խնդիրը, եւ ըմբոստներու վանք քաշուած ըլլալով կոտլելու պատրաստութիւնը, կը զգան թէ՛ այս ընթացքով իրենց կեանքը կրնայ վտանգուիլ: Կը սկսին այս անգամ ասոր անոր դիմել, մեղմանալ: «Ես գէյթունցիները մինչեւ հիմա լաւ հասկցած

չէի, կ'ըսէ գայմագամ Հիւսէյին Հիւսնի, ու ես ալ գէշ մարդ չեմ, կ'աւելցնէ ան, Աստուած եթէ կեանք տայ (ասով անշուշտ հասկցնել կ'ուզէ թէ՛ եթէ զիս չսպաննէք, ես զէյթունցիներուն բարիք պիտի ընեմ): Այսպէս խօսելով, կը խոստանայ հեռագրատուն երթալ, անկէ դուրս չգալ մինչեւ որ բոլոր ըմբոստներուն ներումի հրամանը չընէ: Ինքը եւ իր պաշտօնեաները, այլեւ աղաներուն կ'ապաստանին: Կը հեռագրէ գայմագամ Հիւսնի Կ. Պոլիս, Բ. Դրան, ըմբոստներուն եւ Օսմանիէի բանտը գտնուող 22-ին ներում շնորհելու համար:

Սուրէնեան թաղի Ս. Աստուածածին եկեղեցիին մէջ ժողով կայ կրկին: Հոն են կրօնական պետերը եւ կարգ մը աշխարհական երեւելիներ: Կը մտածեն կացութեան ելք մը գտնելու մասին: Կան կռուելու կողմնակիցներ, աւելի իրատեսները, խոհեմները սակայն փտանգաւոր կը նկատէին ապստամբութիւնը: Ուրիշներ շուարած կը տարուբերէին անորոշ դրութեան մը մէջ, որովհետեւ ինչպէս պիտի կռուէին առանց զէնքի: Անկարելի էր յաջող դուրս գալ նման կացութենէ մը: Թուրք կառավարութիւնը ընդհանուր զօրաշարժի մէջ էր, 300 վաշտէն աւելի զինուորներ պատրաստ կը սպասեն Դամասկոսի, Հալէպի, Ատանայի նահանգներուն մէջ:

Միայն թէ՛ այս երկար խորհրդակցութեան վերջաւորութեան, ներկաները խօսք եւ խոստում կու տան Ս. Խորանին առջեւ, որ նիւթապէս եւ բարոյապէս պիտի օժանդակեն առնուելիք շարժումին, որ լոկ ինքնապաշտպանութեան սահմանին մէջ պիտի մնար, թշնամիէն յարձակումի պարագային:

Վանք քաշուածները գլխաւորութեամբ Մեսրոպ Զօլազեան եւ Զազրեան Փանոսի, որոնք ժանտարմաները սպաննած էին, իրիկուն մը վանքէն իջան, արեւելքի կողմէն քաղաքը մտան, գրաւելու համար դօնախորհրդատուները, գոնէ հոն մնացած ժանտարմաները սպաննելով անոնց զէնքերը առնելու եւ միաժամանակ ամբողջ ժողովուրդը միացնելու իրենց: Մինչեւ կէս գիշեր կռիւ մղեցին ժանտարմաներու դէմ, սակայն ապարդիւն. կը սպաննուին քանի մը ժանտարմաներ եւ երկու չեզոք զէյթունցիներ: Վարէն ոչ ոք այլեւս կրցու վանք բարձրանալ եւ միանալ կռուողներուն:

21 Փետրուարին, Մարաշի կառավարիչը՝ Մուստաֆա Միւսթաֆա արդէն հասած է զօրանոց քանի մը հազար զինուորներով, վանք քաշուածները, ուղեցին զօրքը տակաւին զօրանոց չմտած, դէմ ելլեն ու զարնեն, աղաները, Առաջնորդը՝ Խաչատուր Վարդապետ կ'ընդդիմանան, կ'աղաչեն, ձեռք ոտք կ'իյնան որ նման անխելութիւն չեմանն, Յաջորդ առաւօտ Մուստաֆա Միւսթաֆա 500 զինուոր իջեցուցած է Զէյթուն եւ տեղաւորուած կառավարչատուն: Մէջտեղ են դարձեալ

դաւադիրները եւ գործի վրայ են օգնելու համար զինուորներուն. աղաներուն եւ ըմբոստներու միջեւ կը սկսի վէճը անհասկացողութեան պատճառով, անհամաձայնութիւն եւ երկպառակութիւն: Թուրք զօրքերուն հետ միասին քաղաքին բոլոր անցքերը եւ անկիւնները կը տեղաւորուին նաեւ ժողովուրդի պահակները, որպէսզի ազատականները՝ էջըրյաները քաղաք չմտնեն, ժողովուրդին կացութիւնը չփտանգեն: Իսկ միւս կողմէն ամէն օր նոր զօրք կու գայ, կը հասնի եւ կը լեցուի զօրանոցը: Մինչեւ այդ ատեն, զօրքին թիւը կ'անցնի 1000-ը: Ժողովուրդի մեծերը չեն կրնար այլեւս կատարել օգնելու իրենց խոստումը եւ կը յորդորեն քաղաքի խաղաղ եւ անզէն ժողովուրդը որ չեզոք մնայ, չխառնուի, յիշեցնելով իրենց անզէն, անպատրաստ վիճակը եւ Պատրիարքարանի ու Վեհափառ Կաթողիկոսի հնազանդութեան հրահանգները: Վանք կեցողները երբ կը տեսնեն որ հակառակ իրենց սպասումին եւ տրուած խոստումին, ոչ ոք վեր կու գայ իրենց միանալու, այս անգամ կը վճռեն իջնել Զէյթուն եւ այլեւս ուղղակի քաղաքին մէջէն սկսիլ կռիւ, որպէսզի ժողովուրդը այլեւս ուզէ չուզէ պարտաւորուի ինքն ալ մասնակցելու կռիւին: Զէյթունի անցքերուն եւ անկիւններուն տեղաւորուած թուրք զօրքերու հետ դրուած զէյթունցի անզէն պահակներուն ծածուկ պատուիրուած էր որ երբ Զէյթունի չորս եկեղեցիներուն տախտակէ եւ պողպատէ կոշնակները զարնուելուն պէս անմիջապէս յարձակին իրենց քովը գտնուած զինուորներուն վրայ, անոնց ձեռքէն զէնքերը խլեն: Գիշերը լուսնալու մօտ է, տակաւին սակայն կոշնակի ոչ մէկ ղողանջ: Վանք կեցողները ճամբայ ելլելու վրայ են քաղաք իջնելու եւ կոշնակներու ղողանջին հետ Զէյթուն մտնելու: Ահա վանքէն մէկը քաղաք կը փութայ եւ իր մէկ ազգականին կ'իմացնէ թէ վանք կեցողները ճամբայ ելած, քաղաք կու գան, Զէյթունը խառնելու եւ կոշնակները քիչ վերջը պիտի զարնուին, որպէս կռուի առաջին ազգանշան: Այս վերջինը վաղկեանապէս կը հասնի Առաջնորդարան: Գիշերն իսկ Առաջնորդարանի մէջ կը հաւաքուին երեք յարանուանութեանց կրօնական պետերը, Պապ Աղան եւ ուրիշ մի քանիներ եւ լուր կը ղրկեն եկեղեցիներուն որ չըլլայ չըլլայ որ կոշնակները զարնելու փորձ ընեն: Կարգիլեն նման փորձ մը: Եւ կ'որոշեն նաեւ որ կառավարութիւնը առաջին առնէ այսպիսի շարժումի մը: Վանք կեցողները ոտքի վրայ, իսկ Զէյթուն գտնուող հայ պահակները անհամբեր կը սպասեն կոշնակներու հնչելուն: Ժողովուրդը նաեւ այն գիշեր ամբողջ ոտքի է: Բոլոր անցքերն ու ճամբաները լեցուած են զինուորներով: Ղօնախին դրան առջեւէն մինչեւ վերի Սուրէնեան թաղի մեծ շուկան, մինչեւ վարը՝ Աղճիպատի շուկային վերջաւորութեան, սուրհամերկ զինուորներ կը

սպասեն: Առաջնորդներ, աղաներ, ջահերով, լապտերներով, մախրի խարոյկներով եւ իրենց հետ կարգ մը հետեւորդներով կը քայեն, դէպի Ափրնաքարտակի ճամբան, դէպի Քէշիկի մօտը, վաճառարճարանալու, երթալ խնդրելու, աղաչելու ըմբոստներուն, արգիւելու համար իրենց մտադրութիւնը: Այդ բազմութենէն, որպէս ներկայացուցիչներ կը գատուին Կարապետ Նորաշխարհեան՝ Եղիայի հօրեղբօր որդիներէն մէկը, Վարդիվառ Զօլագեան՝ Մեսրոպի հօրեղբայրը, Պետրոս Զազրեան, Էմմանուէլ Զաւուշի (որ Մարաշէն իր քանապետի պաշտօնը թողլով, փախած եկած էր վաճառ, խառնուելու համար կոռուորներուն եւ որը յետոյ Ֆնտըճագի կոխին ինկաւ իր հօրեղբայրներուն Փանոսի եւ Յակոբի հետ) հայրը եւ նոյն ատեն եղբայրը՝ վաճառ գտնուող Փանոս Զազրեանի, կը հասնին անոնք վաճառ եւ կ'իմացնեն ժողովուրդին եւ ժողովականներուն խնդրանքը եւ ընդհանուր տրամադրութիւնը: Սակայն վաճառի տղաքը այլեւս յուսահատ առանց այլեւս գիրար լսելու եւ հասկնալու, ճամբայ կ'ելլեն դէպի քաղաք: Վերջէն, ականատեսներ պատմեցին մեզի, թէ Պապ Աղա եւ ուրիշ մեծեր, քաղաք կոռուորներուն առջեւ գետին պակեցան եւ աղաչեցին որ իրենց դիակներուն վրայ կոխեն, յետոյ մտնեն Զէյթուն եւ սկսին նման փորձի, պատճառ դառնալով անմեղ, անզէն եւ խաղաղ ժողովուրդին ջարդուելուն: Այդ խառնակութեանց մէջ, քէրծերցի երիտասարդ մը՝ Գէորգ, իր դաշոյնովը կը խոյանայ վերի թաղի պահականոցին վրայ, եւ կը սպաննէ քանի մը զինուորներ ու երբ տակաւին կը շարունակէ իր այդ խիզախ յարձակումը, դաշոյնը կը խորտակուի ու կը ստիպուի վերջին պահակ զինուորին քիթը խածնել եւ իր ակռաներովը փրցնել ինքն ալ սակայն կ'իյնայ այնտեղ, քիթը փրթած զինուորին զնդակէն ու կը մեռնի: Այնտեղ կը զարնուի նաեւ Յակոբ Պեազկիւտիւրեան: Վիրաւորուողներ ալ կ'ըլլան, իսկ պահակ զինուորներէն կ'իյնան 15 հոգի, որոնց դիակները անմիջապէս կ'անհետացնեն զէյթունցի կիներ, որ կառավարութիւնը չիմանայ:

Համաձայն Պ. Լ. Նորաշխարհեանի «Մուսլ օրեր»-ու մէջ յիշուածին՝ 5-րդ զօրաբանակի ընդհ. հրամանատար Խուրշիտ Պէյ 7000-8000-նոց բանակի մը գլուխը անցած Դամասկոսէն կը հասնի Զէյթուն, Ատանայէն ալ Ղալիպ Պէյ՝ նոյնքան ուժով մը ճամբայ ելած կու գայ կը միանայ նախապէս եղած բանակին եւ այս հաշուով միեւն Մարտ 10-ը, զօրքերուն թիւը կը հասնի 19-էն մինչեւ 25000-ի:

Այս հսկայ ուժին դէմ կը կենար անզէն ժողովուրդ մը, ձեռք դանակ միակ չունեցող եւ միայն 40-էն 60 զինուած կտրիճներ:

Մարտ 24-ին, գերման միսիոնար Հէր Պլանքի գլխաւորութեամբ Մարաշի հայ երեւելիներէն, որպէս պատուիրակութիւն Զէյթուն կը

հասնին Տ. Սահակ Քէշի. եւ Կոստան Վարժապետեան, հայ կաթողիկէ համայնքէն՝ Խորէն Վարդապետ Գաբաթեան, եւ Պատուելի Ահարոն Շիրաճեան: Ասոնք տակաւին կոխը չսկսած, առանց ժամանակ անցընելու, որովհետեւ մէկ ժամէն միւսը կրնար կոխը պայթիլ, ժողովի կը կանչեն Զէյթունի հոգեւոր պետերը եւ աշխարհական պետերը: Կը խօսին, կը պարզեն անոնք ժամանակներուն շատ փափուկ վիճակը, Զէյթունի սպառնացող վտանգը, կ'առաջարկեն հնազանդիլ եւ ըմբոստներուն խօսք հասկցնել: պատուիրակները ուղղակի կրնան երթալ իրենց մօտ, զիրենք տեսնել եւ համոզել: Պատուիրակները կրկին կը խօսին եւ կ'ըսեն, թէ չեզոք եւ հանգիստ կեցողին կառավարութիւնը կը խոստանայ կեանքը, պատիւը եւ ինչքը ապահովել, հակառակ պարագային, ոչ միայն Զէյթունի գոյութիւնը պիտի վտանգուի, այլ նոյնիսկ Կիլիկիոյ հայութեան կեանքը խնդրոյ առարկայ ըլլալով, կրնայ ընդհանուր ջարդ մը տեղի ունենալ: Հետեւեալ առտուն, պատուիրակութիւնը գերմանացի Հէր Պլանքն ալ հետեւին, քաղաքապետարանի բժիշկ՝ Երուանդ Էլմաճեանի ընկերակցութեամբ, հրամանատար Խուրշիտ Պէյի արտօնութիւնով վաճառ կը բարձրանայ: Այնտեղ կը խօսին, կը վիճին, առանց արդիւնքի սակայն: Նշան Ենի-տիւնեան եւ Մեսրոպ Զօլագեան կը յատարարեն թէ՛ հայերուն դժբախտութեան եւ այս կացութեան պատճառը նոյնինքն քրիստոնեայ գերմանացին է, որ կը գործակցի թուրքին եւ կը քաջալերէ անոր ոճրագործութիւնները:

Այդ ժամանակ կրկին կը հասնի Կիլիկիոյ կաթողիկոսին հնազանդութեան յորդոր-հեռագիրը: Պատուիրակներուն յայտնած ընդհանուր ջարդի մտահոգութիւնը կը զգացուէր Վեհափառի հեռագրէն: Աղաներու մեծ մասը եւ ժողովուրդը նկատի առած վերոյիշեալ պարագաները, առինքն ընդհ. Կիլիկիոյ հայութեան ջարդուելու վտանգը, Վեհափառին յորդորը, ժողովուրդին անզէն վիճակը, կողմնակից էր, համակերպելու, լաւ գիտնալով հանդերձ թէ՛ թուրքին չէ կարելի վստահիլ, միայն երկու չարեաց փոքրագոյնը նկատի ունէր ժողովուրդը: Ուրիշ միջոց չկար: Խաղաղ ժողովուրդի համակերպելու տրամադրութիւնը պատուիրակներու միջոցով հաղորդուեցաւ կառավարութեան, իսկ վաճառ գտնուողներուն իրենք ի վիճակի չեն խօսք հասկցնելու, եւ պատասխանատու չեն անոնց համար: Կառավարութեան ձեռքը երկար է, բանակներ ունի ան, կարող է ինքը անոնց խօսք հասկցնել: Մենք չենք խառնուիր անոնց գործին: Իսկ ձեռքի տակէ ուտելիք եւ այլ մթերք հասցնողներ կ'ըլլային անոնց Զէյթունէն ոմանց կողմէ: Նոյնիսկ կարգ մը երիտասարդներ կը յաջողին Զէյթունէն վաճառ ելլել եւ միանալ հոն եղողներուն: Ուրեմն վաճառ տղաքը բացարձակապէս

մերժած էին իրենց ներկայացող պատուիրակներու առաջարկները և ըսած էին թէ «Մենք թուրքը շատ լաւ կը ճանչնանք, անոր խոստումները մոռցած չենք տակաւին, Մելքոն Աղա Հազարապետեանի եւ Նալչաճեանի միջոցով տրուած հաւաստիքները դեռ մեր միտքն են, Հայտարի գաւազանի հարուածներու բացած վէրքերը գոցուած չեն տակաւին: Թուրքը մեր դիակներն իսկ պիտի չկրնայ ձեռք անցընել եւ ոչ թէ մեզ ողջ ողջ բռնել (Լ. Նորաշխարհեան «Մուսլ օրեր»էն մէջընտրուած): Անոնք այսպէս ըսած էին, որովհետեւ լսած էին թէ՝ Խուրչիտ Պէյ յայտարարած է այդ օրը Զէյթունի զօրանոցին մէջ, Մարաշի կառավարիչ Միւսթաֆա Պէյի որ՝ «Վանքը պաշարման տակ առնելու հարկ չկայ, այլ ըմբոստները եւ երկու ժամէն ողջ կամ մեռած ձեռք պիտի ձգեմ»: Հրամանատար Խուրչիտ, երբ վանքէն ապարդիւն դարձող պատուիրակներու խօսքերէն կը հասկնայ ըմբոստներու վճռակամութիւնը, կը ջղայնանայ, կը մերժէ Միւսթաֆա Պէյի պաշարման առաջարկը եւ յոխորտանքով խօսք կու տայ յարձակիլ անոնց վրայ եւ երկու ժամը չանցած զանոնք ողջ բռնել կամ դիակները բերել: Պատուիրակները վանքի տղոց խնդրանքներուն վրայ անմիջապէս կը հեռանան եւ կը հասնին զօրանոց: Խուրչիտի արտօնութեամբ կ'իջնեն Զէյթուն, առանց ժամանակ անցընելու իրենց իրեղէնները առնելու: Զէյթունէն երբ պիտի հեռանան, ժողովականներէն իրենց եղած հարցումներուն ո'չ մէկ պատասխան, միայն կոստան Վարժապետեանն է որ ձին նստած եւ բաժնուելու պահուն «Փաշային բարկութիւնը չկրցանք մեղմել կ'ըսէ, Աստուած հետերնիդ ըլլայ»: Ու իր ընկերներով քաղաքէն դուրս կ'ելլէ:

ՎԱՆՔԻՆ ԿՌԻԻԸ

Հրամանատար Հազարապետ Սիւլէյման կը սպաննուի, իր հետ ալ հարիւրէ աւելի զինուորներ. մեր աղաքը գրոհով մը կը ճեղքին յարձակող թշնամիին շղթան եւ կը քաշուին լեռ. Խուրչիտ ալ կու տայ վանքը. վարը ժողովուրդը կը բողոքէ, կ'անիծէ պատճառ եղողները. վանքի գիւղացիները եւ Եղիային ընտանիքը Զէյթուն կ'իջնեն. կուտողներու վերջին տեսակցութիւնը իրենց ընտանիքներուն եւ զաւակներուն հետ եւ անոնց բաժանումը. Խուրչիտի հրամանագիրը եւ ճէմալ Փաշայի հեռագիրը Վեհ. Սահակ Կաթողիկոսի միջոցով զինուորական փախստականներու, զինուորներու մասին. Զինուորական փախստականներ եւ զինուորացուներ կը ներկայանան զինուորական իշխանութեան եւ կը ղրկուին Մարաշ. Կաթողիկոսարանի եւ Պատրիարքարանի հնազանդութեան յորդորները:

Այդ օրն իսկ, վանքին արեւելքը Փիսիր ըսուած բարձունքը ռազմափորձի կ'ելլէ վաշտ մը զինուոր: Վանքի տղաքն ալ իրենց կարգին կը սկսին վանքի շրջափակին մէջ զինուորական մարզանք ընել: Իսկ ջոկատ մը զինուոր իջած է վարը՝ քաղաքը եւ կառավարչատունէն պետական դանձր, դոյքը եւ պաշտօնէութիւնը կը փոխադրէ: Քաղաքի անգէն ժողովուրդն անգամ պահ մը մտքէն կ'անցնէր գրոհ տալ քաղաք իջած այդ 300 զօրքին եւ գրաւել ամէն ինչ: Բայց ինչո՞վ:

Յաջորդ օրը, մեռելային լուսթիւն մը կը տիրէր ամբողջ քաղաքին մէջ: Ամէն վայրկեան յղի էր անակնկալներով: Վերը, վանքին մէջ, Եղիա եւ Նշան Ենիտիւնեան, Փանոս Զագրեան, Մեսրոպ Զօլագեան զբաղած էին վերջին կարգադրութիւններով: Սահակ Քհնյ. Գալայճեան, վերջին հաղորդութիւնը կը սպասարկէր: Խուրչիտ կը մտածէր վանքը առանց պաշարելու, ուղղակի զօրքը վանքին վրայ քալեցնել, որովհետեւ եթէ վանքը՝ զինուորական շղթայի մէջ առնէր, վանքի արեւմուտքը, իր զօրքին կարելոր մէկ մասը պիտի մնար վանքին եւ Զէյթունի միջեւ, աքցանի մը մէջ բռնուածի պէս, երկու կրակներու միջեւ եւ պիտի փճանար: Իսկ վանքին հիւսիսն էր բարձր լեռ, ուրկէ եւս փառնգ կար:

Մեսրոպ եւ Եղիայի մեծ տղան Պապիկ 15 մարտիկներով վանքէն դուրս ելլելով, վանքին հիւսիս արեւմուտքը՝ Քէարթէօղ Քօրի բարձունքը վանքին պաշտպանութեան համար դիրք կը բռնեն: Վանքին գիւղը (վանոնցն ուպէն կամ էյլէնճէնք) կը ղրկուին Եղիային Խաչեր եւ Տիգրան տղաքը, իսկ Եղիա, Նշան եւ Զագրեան Փանոս կը մնան վանք եւ իրենց հետ գտնուող մարտիկներով կը ստանձնեն վանքին պաշտպանութիւնը: Զօրանոցն ալ շարժման մէջ դրած էր ստուար թիւով զօրք, կ'երթային, կը բարձրանային թշնամի զինուորները եւ դիրք կը բռնէին վանքին շրջակայ բարձունքներուն վրայ, Պուշախճիւնց եւ Ալեքսանեանց քարքարուտ ժայռոտ բլուրներուն վրայ: Ու ահա կարճակուի թշնամիին թնդանօթի առաջին ռումբը: Կռիւն յայտարարութիւնն էր ատիկա: Թուրքը կ'իյնայ վանքին բակը: Կռիւր ծայր տուած է այլեւս: Թնդանօթը կ'որոտայ, ռումբ եւ զնդակ կը տեղան վանքին վրայ անընդհատ: Ներսէն սակայն տակաւին ո'չ մէկ զէնք կ'արձակուի, ո'չ մէկ փոխադարձութիւն տեղի կ'ունենայ: Երեք հազար զինուորներ կռիւի մէջ դրած է Խուրչիտ, ինչպէս քիչ առաջ ըսինք, վանքին տղաներէն երկու թեւեր ղրկուեցան վանքէն դուրս, հեռուէն պաշտպանելու համար վանքը: Զինուորները կը յառաջանան դէպի վանք, տակաւին ոչ մէկ զէնքի ձայն ներսէն, պէտք է խնայողութեամբ գործածել: Վանքը արեւելեան զինուորներու դիակները խրարու ետեւ կը զլորուէին բլուրներէն վար: Կռիւր տաքցած է:

Թշնամին իր կարելի ճիգը կը թափէ, մինչ վանքին ներսիները սփորական անտարբերութեամբ մը միայն կը շարունակեն պատահական, ընդհատ ընդհատ նոյնիսկ երբեմն բոլորովին կը դադարեցնէ կրակը, սակայն երեք հազար զինուորները նոյն թափով կը կրակէին, սպառելով անհատնում թիւով փամփուշտ: Վանքի տղոց պաղարիւնութենէն կը կատղի խուրչիտ եւ կը հրամայէ այլեւս ուղղակի քարկ վանքին վրայ: Զօրքը արդէն բաւական մօտեցած էր վանքին ու տղաքը համազարկ մը կը բանան: Հարիւրներով թուրք զինուորներ կը տապալին անշուշտ: Միւլէյման հազարապետի առաջնորդութեամբ տակաւ կը մօտենայ, վանքին դրան առջեւն է: Իրիկունն է: Անոնցմէ խումբ մը, հետերին թիթեղով քարիւղ, աւելի կը մօտենայ թշնամին, վանքը պիտի այլեն: Մարտիկներու կացութիւնը ճշմարտամային է: Ռազմամթերքը սպառելու վրայ է: Վանքին շրջափակի պատերը ռումբերը կը ծեծեն, անոնց մեծ մասը փլած է: Ու թնդանօթը հրացանին չի դադարիր: Ծակատագրական պահն էր որ կ'ապրէր վանքը: Օրհասական կոխ էր, որ կը մղուէր հայ մարտիկներու կողմէ: Վանքի մեծ դուռը յանկարծ կը բացուի, էմմանուէլ Զազրեան եւ Տէվէտիկ կարապետ կը նետուին թշնամի զինուորներուն վրայ: Անոնց ետեւ են Եղիան, Նշան Ենիտիւնեանը, Փանոս Զարգեանը: Ահա դուռս ելլելով կը խոյանան տակաւին ներսը մնացողները՝ Արամ Զօլազեան, Մեսրոպի եղբայրը, էմմանուէլ Ղարիպեան, Արթին Շէֆթալեան, Համբարձում Մկրեան եւ Պետրոս Ենիտիւնեան: Զօրքը անակնկալի եկած՝ կը փորձէ ետ քաշուիլ: Այնտեղ անշուշտ կ'իյնայ իրենց հրամանատարը՝ հազարապետ Միւլէյման, ինչպէս նաեւ իր հետ կ'իյնան բաւական թիւով զինուորներ: Կոխի այդ տաք պահուն, Պուշպեղեանց բլուրէն թշնամիէն արձակուած ռումբ մը կ'իյնայ զինուորներուն մէջ ու ահա նոր խուճապ մըն է կը սկսի թշնամի ուժերուն մէջ: Տասներկու ժամ կը տեւէ կոխը եւ սակայն խուրչիտ Պէյ չի կրնար իր նպատակին հասնիլ: Վրայ կը հասնի գիշերը ու տղաքը կը բարձրանան լեռ: Վարէն ժողովուրդը դիտած էր թուրքերուն այդ ընկրկումը եւ նահանջը: Մարտիկներէն մի քանի հոգի թեթեւ վէրքեր ստացած էին, իսկ համաձայն Միւլէյմանի՝ վերջէն Զէյթունի աղաներու ըրած յայտարարութեան, թշնամին ունեցած է հարիւր մէկ սպաննուած եւ հարիւր տասը վիրաւոր: Վանքին պատերը խորտակուած, փլած էին տեղացող ռումբերէն: Վարը՝ Զէյթունի մէջ, կարգ մը երիտասարդներ մթնելուն սպասած էին, իրենք ալ վանք բարձրանալու համար: Բայց, երթայ ի՞նչ ընելու, վանքին պատերը գետնին հաւասար եղած էին եւ մարտիկները արդէն հեռացած եւ լեռները ելած էին, վերջին գրոհով մը անհաւասար ուժի դէմ գիրկընդխառն կռիւէ մը յետոյ,

ծուխի եւ հողի փոշիներուն մէջ անճանաչելի դարձած էին այդ մարտիկները:

Մեր հայրենակից Պ. Լ. Նորաշխարհեան դարձեալ իր «Մուսլ օրեր»ուն մէջ, պանծացնելով մեր հայ տղոց հերոսութիւնները այսպէս կը գրէ. «Ալպանացի ոստիկանապետ Միւլէյման ի տես այս գերմարդկային մաքառումներուն կը յայտարարէ. «Ամբողջ Պալքանեան պատերազմին, այս տեսակ կոխի չեմ հանդիպած»: Մուլթին հետ, պաշարման շրջան վերցած է, եւ զօրքը քաշուած զօրանոց: Ծամբաներու արգելքը կը վերնայ: Վանքին դեկամարները Սահակ Քհնյ. Գալաթեանի օրհնութիւնովը բաժնուած էին վանքէն, իրենց հետ տանելով վանքին սուրբ անօթները, զորս ի վերջոյ դրկած են վարը՝ Զէյթունի Առաջնորդարանը: Եղիան կը քաշուի վանքին գիւղը՝ իր բնակարանը: Հոն գտնուողներուն կը պատուիրէ, որ քաղաք իջնեն այլեւս, ու ինք առանձին կը դառնայ գիշերը վանքը, կը մտնէ տաճարէն ներս, հոն մօմի լոյսին տակ կը գտնէ Սահակ Քահանան, որ կ'աղօթէր: Իր վերջին աղօթքը կ'ընէ այնտեղ նաեւ ինքը՝ Եղիա... ու կը հեռանայ: Խօսքը տանք այստեղ այլեւս ուղղակի մեր հայրենակից «Մուսլ օրեր»ու հեղինակին: Վերջին անգամ Եղիա հրաժեշտ կու տայ վանքի գիւղի հայրենակիցներուն, կը խօսի, իր ընտանիքին, կնոջը, հարսերուն, կը յորդորէ որ այլեւս հոն չմնան, Զէյթուն իջնեն իրենք ալ եւ ազատ թողուն զինքը եւ իր տղաքը: Դժուար կ'ըլլայ այս բաժանումը երկու կողմին համար ալ: Կինն ու հարսները զատուիլ չեն ուզեր իրենց ամուսիններէն: Եղիային խօսքը սակայն վճռական էր: Իր չորս տղաքը կը մնան հոն, իր հետը կինը, հարսները, ընտանիքի մնացած անդամներուն հետ կ'իջնեն Զէյթուն: Ու Եղիա, իր տղաքը եւ ընկերները կը համբուրեն վանքին քարը ու կը հեռանան»:

Կէս գիշերը անցած է արդէն, վանքի գիւղացիները, վանոց ու պեղիները, Եղիային ընտանիքն ու պարագաները կը հասնին քաղաք, մարտիկներու հսկողութեան տակ: Անոնք հեռուէն կը հետեւին իրենց որպէսզի ապահով հասնին քաղաք: Նոյնպէս կարապետ եւ Նշան Նորաշխարհեաններ կը տեսնուին իրենց ընտանիքներուն եւ զաւակներուն հետ եւ կը բաժնուին քաջալերական խօսքերով: Զազրեան եղբայրները Փանոս, Յարութիւն եւ Յակոբ կ'իջնեն քաղաքը, կը տեսնուին գիշերանց իրենց ընտանիքներուն հետ ու կը հեռանան, Մեսրոպ եւ Արամ Զօլազեաններ կը համբուրեն իրենց հայրիկին՝ վարպետ Արթինին եւ մօր ձեռքերը եւ անոնք ալ դուրս կ'ելլեն Զէյթունէն: Համաձայն նախապէս եղած ժամադրութեան, գիրար կը գտնեն Ղոյս, ու անկից՝ քաղաքը Պապիկ Փաշայի:

Լուսթիւն է ամէն կողմ, դադրած են արդէն թնդանօթի որոտն

ու գէնքերու շկահիւնները: Խաչատուր Վրդ. եւ քաղաքապետ Հայկ Ասմընեան ժողովի կը կանչեն իրենց համախոհները: Ժողովին մէջ կ'որոշեն իմացնել կառավարութեան թէ՛ վանքը այլեւս պարպուած է: Սակայն հետեւեալ օրը դարձեալ զօրանոցէն շարժման կը դրուին զինուորներ գէպի վանքը: Թնդանօթները կը վերսկսին գործել, վախճալով եւ կասկածելով թէ՛ մարտիկները հոն դիրք բռնած են, այս անգամ ուղղակի վանքին, տաճարին ներսը: Հակառակ որ Առաքնորդը եւ քաղաքապետը պաշտօնապէս հաղորդած էին թէ՛ վանքը մարդ մնացած չէ, սակայն մտիկ ըրած էր Խուրչիտ եւ զինուորները լուռ ու աւեր հողին հետ շարունակած էին կոխել: Այդ պահուն էր, մինչ Աստուածածնայ մայր եկեղեցիին վերնատունը ժողովի էին հոգեւոր պետերն ու աղաները ստեղծուած կացութեան եւ հաւանական պատահելիքներու մասին խորհելու համար, իրարանցում մըն է որ կը սկսի փողոցները խռնուած ժողովուրդին մէջ: Սեւ ու թանձր մուխը ամպի պէս կը բարձրանայ վանքին վերեւ: Թշնամին վանքը կ'այրէ: Ժողովուրդը կը խուժէ Աստուածածնայ եկեղեցին, կը բողոքէ, կը հայհոյէ մեծերուն, աղաներուն, առաջնորդին, կառավարութեան եւ բոլոր այս կացութեան պատճառ եղողներուն: Ժողովականները սակայն վերստին կշռելով կացութեան լրջութիւնը, յարմար կը տեսնեն որ հոգեւոր երեք պետերը երթան գայմազամին եւ բողոքեն: Գայմազամը սակայն իր կեանքէն վախճալով, արդէն փախած է կառավարչատունէն: Հոն է փոխանորդը՝ Գատըն: Կառավարչատունէն հեռաձայնով բողոքը կը հաղորդուի վերը՝ զօրանոց՝ Խուրչիտ Պէյի: Անիկա կ'ուրանայ, ատանկ բան չկայ կ'ըսէ: Բիշ ետքը ծուխը բոցի կը վերածուի: Կրկին բողոք Խուրչիտի: Այլեւս անօգուտ էր ուրանալը: Խաչատուր Վրդ. երբ վանքէն բարձրացող ծուխը եւ բոցը ցոյց կու տայ Գատընին, անիկա շնականօրէն կը պատասխանէ թէ՛ անպայման ձեր հրոսակներուն գործն ըլլալու է, կրակի տուած, փախած են: Իսկ Խուրչիտ կը սկսի կեղծ բարկութիւնով մը հրամաններ ղրկել, որ կրակը շուտ մարեն: Շատ ուշ էր սակայն, վանքը ամբողջովին կրակի մէջ էր արդէն: Խուրչիտ գիտակցաբար գործած էր այս վանտալութիւնը: Երկար չի տևեր հրդեհը, ժամ մը յետոյ, մոխիրներու եւ աւերակի կոյտի մը վերածուած էր վանքը, դարերու այդ հնութիւնն ու ուխտատեղին: Զէյթուն կը հասնի Ֆոնուզէն Բարթոլդի-մէոս Վրդ. Թադանեան, կը տեղեկանայ, կը տեսնէ որ՝ Թշնամին վանքը այրած է, կ'ափսոսայ, անէծք կը կարդայ պատճառ եղողներուն, աղաներուն, որոնք կը կարծէին թէ՛ այսքանով ամէն ինչ վերջացած կ'ըլլար: Բայց, ո՛չ, այս տակաւին սկիզբն էր երկանց: Զէյթունցի տեսնելիք ի՞նչ գէշ օրեր ունէր... օրեր, որոնք պատմութեան մէջ ի-

րենց նմանը չեն ունեցած, Շահ Աբասներու, Աղա Ահմէտներու ժամանակներէն աւելի դժուար օրեր ու տարիներ...

Քանի մը օր յետոյ, Խուրչիտ հրամանագիր մը կը հանէ, Զէյթունի մնացած զինուորական փախստականները եւ դասալիքները անձնատուութեան կը կանչէ: Մինչ այդ, Օսմ. բանակի 5-րդ զօրաբանակի ընդհ. հրամանատար եւ ծովային նախարար Ահմէտ Ճէմալ փաշա, վեհ. Սահակ Կաթողիկոսի ղիմումներուն պատասխանելով, եւ անոր միջոցով հետեւեալ կերպով կը հեռագրէ Զէյթունի հայութեան, ըստ մեր հայրենակից Պ. Լ. Նորաշխարհեանի «Մոսլ օրեր»ուն, որուն թարգմանութիւնը կու տանք ստորեւ. «Անմեղ եւ յանցանք չունեցող ժողովուրդին հալածանք եւ ունէ թշնամական վերաբերմունք պիտի չունենայ. հեռագրած եմ զինուորական հրամանատարութեան, ժողովուրդին կեանքին եւ պատուին պաշտպանութեան համար: Թող ամէն մարդ իր տունը եւ իր գիւղը վերադառնայ եւ զբաղի իր անձնական գործով: Ժողովուրդը թող ապահով ըլլայ եւ հանգիստ ապրի»:

Խուրչիտի հրամանագրին եւ Ճէմալ փաշայի վերագրեալ հեռագրին ընթացք տալու համար, զինուորացուները, զինուորական փախստականները պէտք է երթային եւ ներկայանային կառավարութեան: Ըմբոստներ, ապստամբներ արդէն մահուան դատապարտուած են: Եւ այն զինուորական փախստականները եւ զինուորացուները որ չեն ներկայանար, անոնք ալ պիտի նկատուին ապստամբներ, ըմբոստներ եւ անոնց ալ պատիժը իրաւ է: Տասնեւհինգ օրուան ընթացքին զինուորացուներ եւ զինուորական փախստականներ, համաձայն պատրաստուած ցանկերու եւ ցուցմունքներու կ'երթան, կը ներկայանան: Այդ բոլոր տղաքը, ու զինուորական փախստականները կապուած կը ապրուին Մարաշ եւ յետոյ ո՛ւր տարուեցան կամ ի՞նչ եղան, ոչ ոք գիտցաւ: Շատ վերջէն իմացուեցաւ թէ անոնցմէ շատեր գնդակահար եղած են եւ ոմանք ալ կախաղան հանուած են: Պ. Լ. Նորաշխարհեանի «Մոսլ օրեր»ուն մէջ 450-ի մօտ ցոյց տրուած է անոնց թիւը:

Զէյթունի մէջ մեռելային լուսթիւն մըն է որ կը տիրէ: Գիւղացիները վերադարձեր են իրենց տեղերը: Ոչ ոքի ձեռքը գործի չ'երթար: Այդ լուսթեան մէջ ամէն մարդ կը նախըզայ թէ՛ չարաշուք բան մը կը պատրաստուի իրենց համար: Օրերը յդի են: Ոչ ոք կրնայ քաղաքէն դուրս ելլել առանց արտօնութեան: Ամէն յարաբերութիւն դադարած եւ արգիլուած է Զէյթունի եւ իր գիւղերուն միջեւ: Կաթողիկոս եւ Պատրիարքարան, այսքանէն յետոյ, կրկին ու կրկին լուր կը ղրկեն Զէյթուն, որ ենթարկուի, թէ Սուլթանը ներում շնորհած է:

**ԳԱՂԹ ԵՒ ԱՔՍՈՐ. ՎԵՐՍՏԻՆ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԻՒՆՆԵՐ. ԿՐԿԻՆ
ՀԵՇՈՒԹԻՒՆՔ. ՏԱՐԱԳԻՐՆԵՐՈՒ ԿԱՐԱՒԱՆ ԴԷՊԻ ԳՈՆԻԱ.**

Վանի կոիւն շատ առաջ, 8 Ապրիլին, կը սկսի Զէյթունի կռիւը եւ գաղթը, այնպէս որ՝ մինչ 20 Ապրիլին տեղի կ'ունենայ Վանի ապստամբութիւնը, գէթունցիներու տարագիրներուն մէկ խումբը 19 Ապրիլին արդէն հասած է Սուրիա, ուրեմն հաւանաբար շատ առաջ, Մարտի մէջ կարգադրուած ըլլալու է Զէյթունի տարագրութեան որոշումը, թերեւս ալ աւելի կանուխ:

1915 Ապրիլ 9 է, (հին տոմարով 26 Մարտ): Առտուան կոչնակները կը հնչեն եւ ժողովուրդը եկեղեցի կը հրաւիրեն. Փողոցները եւ հրապարակները եկած, լեցուած են զինուորներ, այս անգամ աւելի ստուար թիւով. Զապթիէ Ասատուր Ղուկասեան (Թահսիլտար Մագմըզուկ Վակիմին տղան) կը մտնէ տունները, ձեռքը անուանացանկ մը, մէջի անուններուն տէրերը կառավարչատուն կ'առաջնորդէ: Այդ առաջին ցանկը կը բաղկանար 27 անձերէ: Հիւսէյին Հիւսնի պաշտօնանկ եղած ըլլալով, փոխ գալմագամ նշանակուած էր ալպիստանցի Գաթն Մուհամմէտ Զէքի⁶⁷. Անիկա իր մօտ կանչած էր վերոյիշեալ 27 հոգիները, որպէս թէ՛ խորհրդակցութեան մը համար: Մինչդեռ առանց խօսեցնելու, անմիջապէս զօրանոց ղրկած էր զանոնք, հրամանատարը զիրենք տեսնել կ'ուզէ եղեր վերջին խորհրդակցութեան մը համար: Ժողովուրդին մէջ նորէն սկսած էր յուզումն ու վրդովումը. անձկութեամբ զօրանոց ղրկուածներուն վերադարձին կը սպասէին: Կէսօրուան մօտերը, անոնցմէ մէկ քանին կը վերադառնան քաղաք: Շատ չանցած, ոստիկանը կու գայ Նազարէթ Զաւուչի Լեւոն եւ Ռուբէն երկու տղաքը կը տանի ոստիկանապետին, իսկ մեծ տղան արդէն 27-ին մէջն էր զօրանոցը: Հոն էին նաեւ Նշան Եզեկիէեան եւ Միսաք Խլրօրդեան: Հակառակ Ռուբէնի խնդրանքին թէ՛ այսօր անհանգիստ եմ եթէ կարելի է վաղուան յետաձգուէր իր երթալը, ոստիկանապետը կարեւորութիւն չի տար եւ քիչ յետոյ պիտի դառնաս կ'ըսէ, հրամանատարին աղաներուն հետ տեսակցութիւն մը պիտի ունենայ: Ես Աղա չեմ կ'ըսէ, Ռուբէն եղբայրս դնաց, կը բաւ, ըսելիքը թող անոր ըսէ: Ոստիկանապետը այլեւս առիթ չի տար անոր խօսելու, եւ չորսը միասին ճամբայ կը հանուին Պօզ Պալլը թաղի մէջէն, Պաղ Աղբիւրի կամուրջի վերեւէն դէպի մեծ գերեզմանատունը եւ անկէ դէպի զօրանոց: Անոնք տակաւին զօրանոց չհասած, գերեզմանի մեծ թթենիին մօտ, Ռուբէն կ'ըսէ թէ՛ Զէյթուն մեզ լքեց, դիւղերը երթանք, մեզի այլեւս ազատում չկայ, մահը մահ է, ուրեմն փոխանակ թուրքին նախատինքին տակ անարգօրէն մեռ-

նելու, կ'երթանք Արեգին, հոն տակաւին կը գտնուին մեզի պէս մտածողներ, կը միանանք անոնց, վերջը ինչ կ'ուզէ ան թող ըլլայ: Զուր էին սակայն այդ խօսքերը, եւ անկարելի էր նման բան, սուրհամեղի զինուորներով կը տարուէին անոնք զօրանոց եւ իրենք բոլորովին անզէն էին: Կը հասնին զօրանոց ու կը միանան նախապէս բերուածներուն: Սպայ մը կը խուզարկէ անոնց վրան, ու կը տարուին զօրանոցի հեռագրատունը: Հոն իրենց կը հասնին եւ կը միանան Շէօլենց Լեւոնը եւ Եաղուպեան Յարութիւնը:

Ամէն կողմ, զէնքերնին ձեռքերը պատրաստ զինուորներ, ոտքի վրայ, կը շարժէին: Զօրանոց բերուածները կը հանեն Խուրջիտ Պէկի առջեւ: Երկարահասակ, թիաղէմ եւ խոշոր պեխերով զինուորական մըն էր ան: Յանկ մը կայ ձեռքը: Եւ կը սկսի բարձրաձայն կարգալ.՝ Սահակ Քահանայ Մարկանեան, Հայր Յովսէփ (կաթոլիկ վարդապետ) Ադրէպեան, բօխլի էլմաճեան, Խաչեր Մրիայէլեան, Նշան Եզեկիէլեան, Կարապետ Պալճեան, Յակոբ Թաշճեան, Կարապետ Զփուրեան, Յովհաննէս Տ. Նշանեան: Այս ինը հոգիները մէկ կողմ կը զատեն: Ահա ուրիշ 14 հոգիներու անուններ եւս, որոնք են.՝ Տ. Եզնիկ քահանայ Տ. Վահանեան, Սարգիս Տիրացուեան, Տէօվէթ եւ Ագար Մարկանեաններ, Լեւոն, Ստեփան եւ Գրիգոր Շէօլեան (Շիլ Փանոսեան կամ Ենիտիւնեան մէկ ճիւղը), Մնացական եւ Հաճի Կիւլվանըսեաններ, Վարդիվար Նօխուտեան, Խաչիկ եւ Յարութիւն Եաղուպեաններ, Աւետիս Խլրօրդեան եւ Յովհաննէս Ահարոնեան: Ասոնք ալ մէկ կողմ ընելէ յետոյ, Խուրջիտ Պէկ, ներսը, իր սենեակը կը կանչէ Բասիլոսեան Մացակ Աղան, որպէս անգամ Մէճլիսի Իտարէի, քաղաքապետ Հայկ Ամրնեան, Ասատուր Կիւլվանըսեան, որպէս կառավարական պատասխանատու պաշտօնեայ, Լեւոն Եզեկիէլեանը, Գէորգ Անդրէասեանը, Վարդան Վարդանեանը, Միսաք Խլրօրդեան որպէս պէլէտիէի անդամներ ու Նազարէթ Զաւուչի երեք տղաքը: Ի վերջոյ սակայն Զաւուչի տղաքը կը ղրկէ ուրիշ սենեակ մը, քիչ յետոյ իրենց կու գայ կը միանայ նաեւ Միսաք Խլրօրդեանը: Ինը հոգինոց առաջին խումբը, զինուորներու հսկողութեան տակ ճամբայ կը հանուի: Քիչ յետոյ քանի մը զինուորներ Զաւուչի տղաքը եւ Միսաք Խլրօրդեանը կը տանին մուկ ու խոնաւ նկուղ (ղօվուղ) մը, ոչ նստելու տեղ կար հոն, ոչ ալ կենալու կ'ըսէ ինքը Լեւոն Նուրախարհեան իր Վուայլ օրերձու նկարագրութեան մէջ, որպէս չորսերէն մէկն ալ ինքը: Ու կը շարունակէ հետեւեալ կերպով պատկերացնել այդ նկուղը եւ իրենց վիճակը.՝ Ախոռ մըն էր այդ վայրը, ջորիներ կային այնտեղ իրենց հետ, երեք եղբայրներու ամբողջ հարստութիւնը այդ տեղ, այդ պահուն միայն 12 սեւ միթալիք, այսինքն չորս ղրուշ

էր: Լեւոն, երբ իրենց այն ատեն ունեցած հոգեկան վիճակը կը մըտաբերէ, այլեւս չի կրնար յիշել թէ որքան ժամանակ մնացած են այդ ախոռին մէջ: Ուշ ատեն, վերջապէս կրկին դուրս կը հանուին իրենք ու կը տարուին Նէզարէթի բանտը, ուր կը գտնեն իրենց տասն չորս ընկերները:

Դուրս կը հանուին այս անգամ բոլորը միասին եւ հրամանատար խուրճիտ Պէյ, որուն յանձնուած էր Զէյթունի տեղահանութիւնը գլուխ հանելու գործը, կը յայտարարէ. — Ձեր՝ Զէյթուն մնալը կառավարութեան կողմէ յարմար չի նկատուիր, ժամ մը յետոյ, այսինքն մայրամուտէն առաջ ճամբայ պիտի ելլէք, ձեր ընտանիքները ձեր ետեւը կը հասցնենք: Երբ կը խնդրեն որ՝ իրենց ժամանակ տրուի, քաղաք իջնելու եւ պատրաստուելու, «Տըրրիթը տիկլէմէկէ վազթըմ եօզ տըր» կը պատասխանէ խուրճիտ պէյ: Ո՛հ մէկ խօսք, ո՛չ մէկ խնդրանք կարելի եղած էր ողոքելու խուրճիտը:

Քիչ յետոյ, ահա ընտանիքներու շարանը, մեծ ու պզտիկով, իրենց ընտանիքներն էին անոնք կու գային զօրանոցի առջեւի ձորակէն Հարիւրներով զինուորներ կու գան, կարգով կը կենան բանտարկուածներու սենեակի դրան: Կը բացուի դուռը: Ոստիկանապետը կը կարգայ անոնց անուները ու անոնք մէկիկ մէկիկ դուրս ելլելով, կը տարուին կը միացուին իրենց ընտանիքներուն: 22 ընտանիքներ էին անոնք: Կարաւանին մէջ էին Եղիայի ընտանիքը, Մարգիս, Նշան եւ Կարապետ Ենիօղլուներու պարագաները, Չաքրեան Պետրոսը, Արթինը ընտանիքներով, ինչպէս նաեւ իրենց փոքր եղբոր՝ Յակոբի եւ հօրեղբորորդի Նազարէթի կիներն եւ փոքր տղաքը, իսկ մեծը՝ Գալուստ՝ Մարաշ կախած էին, հոն էին նաեւ Մեսրոպի ծնողքը, կիներ, Վարդիվար Խօճան իրեններով, Պարսուճեան Գէորգը եւ Մաստափուլեան Գէորգը (Լ. Նորաշխարհեան): Հագիւ թէ իրարու կը միանան անոնք, ահա ճամբայ ելլելու փողը կը հնչէ: Յետագարձ ակնարկ մը կը նետէ կարաւանը եւ ճամբայ կ'ելլէ: Արդէն ուշ է: Կը շարժի կարաւանը, յետմիջօրէն անցեր է: Ծամբաները ամէն կողմ լեցուն է թուրք զինուորներով, մինչեւ Սիւմպիւլ Ղայա, մինչեւ Շէմպէթ բարձունքները: Շատ դանդաղ կ'ընթանայ կարաւանը, կիներ, ծերեր, մանուկներ կան, չեն կրնար քայլել, չեն կրնար հասնիլ առաջ գտնուողներուն: Կ'անցնին Սաղիւրէն, կ'իջնեն Զերմուկի դաշտը, իրիկնամուտին կը հասնին Ղըլափուզի ձորը, կէս գիշեր է, Վարդապետի կամուրջն են: Զիհանի եզերքը:

Ընդհատենք այստեղ մեր պատմութիւնը եւ թողունք որ ինքը մեր հայրենակիցը՝ Լ. Նորաշխարհեան խօսի «Մուսլ օրեր»ուն մէջէն, որպէս ենթականերէն մին այդ կարաւանին մէջ իբրեւ ապրող

աղանատես մը:

«Վարդապետի կամ Համիտիյէ կամուրջին վրայ կը կենար տակաւին այն պատը, որ թուրքերու կողմէ շինուած էր Զէյթունի յարձակումին դիմադրելու ծրագրով: Զինուորներ մէկ ժամ աշխատելով հագիւ կրցան փլցնել այդ պատը: Անկէ առաջնորդուեցանք զինուորական կայան մը Կարաւանին ընկերացող Հարիւրապետ Ֆէվզիի կարգադրութեամբ այրերը տարուեցան ախոռ-բանտ մը, իսկ կիները տարին տուն մը: Մեր խումբին կ'ընկերանար Փանոս Չաքրեանի մեծ եղբայրը՝ Պետրոս Աղա եւ իր երկու տղաքը՝ Վարդիվար եւ Մարտիրոս, (իր միջին տղան, ինչպէս յիշած ենք նախապէս, Վանքի կոռուդներուն մէջ էր եւ վերջէն պիտի տեսնենք մեր պատմութեան ընթացքին Ֆնտաճագի կոռուին մէջ, եւ այնտեղ քաջաբար կոռուելով իշնալը: Պետրոս Աղայի տունը կոխած, խուզարկած էին եւ արիւնոտ չապիկ մը գտած էին անոր տունը, անոր համար գինքը կապուած կը տանէին եւ Մարաշ կախեցին գինքը եւ Վարդիվարը՝ մեծ տղան): Մարտիրոս յաջորդ օրը Զիհանի յորձանքին մէջ նետուելով փախաւ ազատեցաւ: Հետեւեալ օրը մեզ կրկին հաւաքեցին եւ շղթայակապ ձեռքերով անցանք 1895-ի, Թուրքո-Զէյթուն առաջին բախումի վայրէն՝ Բերթէզ-Չայէն, յետոյ մագլցեցանք Գարուսամի վերելքը ու կէս օրուան մօտ հասանք Ախրը Տաղի բարձունքը:

«Ոստիկան Մէվլուտ ձիարշաւ հասաւ մեր կարաւանին եւ նամակ մը բերաւ յանձնեց Հարիւրապետ Ֆէվզիին: Այս վերջինը հրամայեց անմիջապէս ղէնքերը լեցնել: Մարաշ Տէփուլին ետեւն էինք հասած, երբ մեզի մօտեցան Մարաշի թուրքեր եւ պահանջեցին որ գաղթականները իրենց յանձնեն: Կառավարութիւնը խիստ միջոցներու դիմելով ցրուեց ամբողջ եւ յետոյ մեզ առաջնորդեցին թրքական զօրանոցի ետեւի կողմը, ներկայութեանը հսկայ ձիաւոր զինուորականի մը, մարդկային հրէշի մը, վայրագութեան օրինակ մը՝ Գարա Պինպաչին: Բացաւ անկա մեզ առաջնորդող Հարիւրապետին իրեն յանձնած նամակը եւ սկսաւ կարդալ հեղձաքնով մը. — Տէօլէ՛ (Տէօլլէթ ըսել կ'ուզէ) Մարկանեան, հրամայեցէք... իջիր վար վարնոց, կառավարութեան հացը աչքդ կուրցնէ (Տէօլլէթ եւ իր մեծ եղբայրը Կարապետ Աղա Զէյթունի զօրանոցի զինուորներուն միսի եւ ալ ուտեստեղէնի յանձնառուներն եղած էին):

«Բոլորս վար իջանք մեր կենդանիներէն: Այրերը կրկին զատեցին եւ տարուեցանք Թաշխան:

Փողոցներու մէջ եւ պատշգամներէն ժողովուրդը թուրք ու մուր եւ հազար ու մէկ նախատինք կը թափէ իրենց վրայ: Քիչ յետոյ կիներն ալ կը բերեն Թաշխան... Պետրոս Չաքրեանի ընկերները բանտ

կը տարուին: Արտաքին աշխարհէն բոլորովին կտրուած, ոչ ոք կրնար իրենց հետ յարաբերուիլ եւ ոչ ալ իրենցմէ ոեւէ մէկը կրնար դուրս ելլել: Կիրակի օր մը, գերմանուհիներու խումբի մը աքցելութիւնը կ'ընդունին եամայրխլը խանութի գլխաւորութեամբ: Անոնք կ'ուզեն Զէյթունի մասին տեղեկութիւն առնել, սակայն գաղտնի ոստիկաններ կը վստահ իրենց շուրջը եւ գերմանուհիները բան մը չկրցան իմանալ: Երկուշաբթի է: Մարտ 30-ին, նոր թուականով 12 Ապրիլ, արեւածագին ճամբայ կ'իյնան: Շրջափակ թրջական գերեզմանատան մօտ ահագին բազմութիւն մը կ'ելլէ իրենց դէմ, թմբուկին ձայնը կը կորսուէր այդ ամբոխին աղմուկներուն մէջ: Ամենէն աղտոտ հայ հոյութիւնները կրկին, նախատինքները ծայր կու տան: Մէյ մըն ալ, ահա ծանօթ ճիւղաղը, Գարա Պինպաշին կ'երեւնայ: Անկա կը համրէ տարագիրները ու կը յանձնէ դարձեալ կարաւանին ընկերացող հարիւրապետին եւ կ'ըսէ. «Ինծի նայէ, ասոնք Զէյթունի ծանօթ բնակիչներն են, ասոնց մէջ են նաեւ Նազարէթ Զաւուլի տղաքը: Ասոնք Զէյթունի լեռները պիտի փախչին եղեր... Հէյ կիտի հէյ, հօկի չամլար պարտազ օրտու, կէշտի օ վագրթ: Ահա ընդի կը յանձնեմ ասոնք, կ'ըսէ Գարա Պինպաշին հարիւրապետ Քեազիմ էֆէնտին:

Հարիւրապետը կը հրամայէ կապել Զաւուլի տղաքը ձիու պախուրձով եւ ձիերու պոչերուն: Մայրը ի տես իր զաւակներուն այս վիճակին, շատ գէշ կերպով կը փղձկի, սակայն սիրտ կ'առնէ եւ կը փորձէ սիրտ տալ իր տղոցը: Գրեթէ երկու ժամ այսպէս ձիերու պոչերուն կապուած կը քայնէ: Տ. Եզնիկ Քհնյ. Տ. Վահանեանի, Գրիգոր Կիւրճեանի եւ Յովհաննէս Ահարոնեանի աղաչանքներուն վրայ, կը թոյլատրուի, կապուած վիճակով ձիերու վրայ նստիլ: Գաղթականներու այս կարաւանը կը հասնի էլ Օղլու, որ կը գտնուի Մարաշի հարաւարեւմտեան կողմը, Զուգուր-Օվա-Օսմանիէ երկարող ճամբուն վրայ: Խան մը կը լեցնեն զիրենք, մէյ մըն ալ զինուորներ Վարդիպառ Նախուտեանը կը բերեն, ոտքով, գաւազանով, հրացանի կոթով կը սկսին գէշ կերպով ծեծել զինքը, որպէս թէ փորձած ըլլայ զինուոր մը կաշառել, որպէսզի կարենայ փախչիլ: Մարմնին ամէն կողմէն արիւնը կը հոսէր: Զգայազիր կը գառանցէ եւ օգնութիւն կը խնդրէ: Դարձեալ Տ. Եզնիկ Քհնյ. կը միջամտէ եւ կը խնդրէ որ իրեն յանձնեն Վարդիպառը: Կիսամեռ եւ արիւններու մէջ, անճանաչելի վիճակով կը տանին զինքը խանին մէկ անկիւնը:

Տեղւոյն ոստիկանապետ, Համիտիէ (վարդապետի) կամուրջի ոստիկանատունը գտնուած է եւ Նազարէթ Զաւուլի տղաքը, որպէս թէ տի տեղէն ճանչցած է եւ անոնց մասին չարախօսութիւններ մը կ'ընէ խռնուած ամբոխին, հարիւրապետ Քեազիմ այս զրպարտութիւններով

ընթացք չի տար եւ կ'ազատէ զիրենք ամբոխէն, միայն թէ իրենց ոտքերուն բթամատները չղթալով իրարու կապել կու տայ: Յակոբին մասները կ'ուռին եւ կը սկսին անտանելի կերպով ցաւիլ: Յաջորդ առաւօտ կարաւանը կը հասնի Պաղչէ Պուլանը: Տեղւոյն հայերը ուտելիք կը հասցնեն իրենց: Յետոյ կու գան Օսմանիէ: Տէօրթ-Ծօցի հայ երիտասարդներ ճամբաներու վրայ քար կը կտրէին, որպէս Ամէյէ թաղուրը: Կարաւանը կը տեղաւորուի տեղւոյն Ազգ. Վարժարանի շէնքին մէջ:

Ապրիլ 2-15 է, Զէյթունէն ահա երկու նոր կարաւաններ եւս կը հասնին եւ կը միանան իրենց: Անոնց մէջ էին Պապ Աղան, եղբայրը՝ Սարգիս էֆէնտին, Ս. Ենիտիւնեան, Գր. Գասապեանը, Յարութիւն Գասապեանը, Պոյաճեան Արթին Զաւուլը, Եզնիկիւնիւն Լեւոն Աղան, բոլորն ալ իրենց ընտանիքներով:

Օսմանիէ բանտը կը տեսնեն այն 22 կարաւանոր տղաքը, որ ամիսներ առաջ չղթալակապ եւ քայնցնելով բերուած էին Մարաշէն: Մանր եւ անտանելի էր անոնց վիճակը: Վիզերին եւ ձեռքերին չղթալ, կը սպասէին իրենց տխուր ճակատագրին: Անոնք վերստին պիտի տարուէին Մարաշ դատուելու համար, ինչպէս որ նախորդ էֆէնուն մէջ իրենց մասին աւելի լայն կերպով խօսած եմ: Ու տակաւին այս երեք կարաւանները Օսմանիէն չհանուած, այդ 22 տղաքը կը դրկուին Մարաշ: 18 Ապրիլ 1915-ին, երկաթուղիով կարաւանները երեքը միացուած ճամբայ կը հանուին ու կը հասնին Տարսոն: Կը տեղաւորուին հայոց դպրոցի շէնքին մէջ: Տեղւոյն հայութիւնը իրենց կարելի նիւթական օգնութիւնը չի խնայեր: Հայրենակից եւ Տարսոնի Գոյէճին ուսանողներ, Խորէն Գուլամճեան, Յակոբ Կանիճեան նոյնպէս օգնութեան կը հասնին, ուտելիք, դրամ հայթայթելով: Սահակ Կաթողիկոս Հալէպէն Տարսոն կը դրկէ Տ. Յարութիւն Քահանայ Ծախանը, տեղեկանալու համար զէյթունցի գաղթականներու վիճակին եւ տեղահանութեան պարագաներուն մասին: Տ. Յարութիւն Քհնյ. Ծախան ծանօթ հոգեւորական մըն էր, անվախ, յանդուգն, վարպետ եւ միաժամանակ փորձառու, ազգայնական տիպարով քահանայ մը, ձեռքէն գործ ելլող եւ 1915-ի համաշխարհային պատերազմին շատ օգտակար եղած է հայ ժողովուրդին: Բանտարկուած է եւ մահուան դատապարտուած, սակայն զինադադարին ազատ արձակուած է (իր մային, պատմութեան ընթացքին պիտի անդրադառնամ աւելի ընդարձակ կերպով): Զէյթունցիք մերժած էին սակայն Վեհափառին կողմէ դրկուած սփոփանքի խօսքերը եւ դրկած նպաստը: Կարաւանը կ'անցնի Պոզանթին ու հետզհետէ իրենց ետեւէն կը հասնին նոր կարաւաններ: Արեւիկի գիւղերուն բոլոր հայութիւնը, աւագկապիները, արաբօղանեանք,

դուրացիները, խէպէցիք, ղօսճուղագրիները, հաճի տէրէցիները, կու-
չէօղցիները, քէօմէսէօ կիւտցիները, եաստը փուկարցիները, սիսնէցի-
ները, ասոնք բոլորը իրարու ետեւ ճամբայ կը հանուին, կը միանան
եւ կը կազմեն կարաւան մը, մօտ 500 հոգիի եւ կը հասնին Պօ-
զանթի առաջիններուն ետեւ: Իսկ Ֆոնուզէն Բարթոլոմէոս Վարդապետ,
կարգ մը ծանօթ ազգայիններ՝ Ալաճաճեանք, Մարգարիկեանք, Քէ-
լիեան, Պլտըր Օղլու եւ Քէօլէրեաններ Ֆոնուզէն գատելով, առան-
ձին ղրկած էին այս կարաւաններուն հետ: Կ'անցնին Ուլու գլխաւ, Է-
րէյլի, Գարաման ու կը հասնին Գոնիա, մոլեռանդ թուրքերու այս
քաղաքը, ժամանակին սելճուզ սուլթաններու մայրաքաղաքը: Մտրակով,
գաւազանով կը տարուին գաղթականները Ոստիկաններու գաւազաններու
տակ այնտեղ, ճամբան կը մեռնի Կարապետ Գասապեանը, որ տա-
րիներով, Զէյթունի մէջ ծառայած է որպէս թահսիլտար, ելեւտական
պաշտօնեայ: Զամբան ձիերու սմբակներուն տակ կը մեռնի նաեւ
Ղազար Թրֆանտեան, Ալապօզանեան Փանոս Աղան, ու դիակը կը
մնայ ճամբան: Գոնիա հասնելէն յետոյ գաղթականները երկու մասի
կը բաժնուին եւ կը տեղաւորուին իրարմէ հեռու երկու շէնքերու
մէջ: Մայրերը կը գատեն իրենց գաւակներէն, այրերը՝ իրենց կիներէն:
Կ'արգիլուի հայերէն խօսիլ, լկտի, սրկիայ թուրքեր կու գան
դուրսի դուռը կը բխեն, հարս ու աղջիկ նուէր կը պահանջեն, կը
գրէ Լ. Նորաշխարհեան: Զէյթունի ծանօթ երկու անվախ կտրիճ եզ-
բայրներ՝ Կարապետ եւ Միսաք Թէսմէքէրեան չեն հանդուրժեր այդ
լրբութեան, դուրս կը նետուին այդ լկտիներուն վրայ, սակայն ա-
րիւններու մէջ ետ կը դառնան ու ներս կը մտնեն: Մինչեւ Մայիսի
վերջին շաբաթը կը մնան այնտեղ, ենթակայ հալածանքի, նախատիքի
Մայիս 20-ին, շատերը հետիոտն, ուրիշներ եզան եւ բռնի սայլերու
մէջ լեցուած, մտրակի հարուածներու տակ ճամբայ կը հանուին: Եւ
մնացողները կը ծեծէին զինուորները: Զիաւոր զինուորներ կը վազ-
ցնէին իրենց ձիերը, գաղթականները պէտք էր որ հասնէին անոնց,
յոգնած, անօթի, հիւժած գաղթականները: Հասնիլ չկրցողը մտրակի
հարուածներու եւ ձիերու ոտքերուն տակ կը մեռնէր, ինչպէս քի
առաջ յիշեցինք անոնցմէ Ալապօզանեան Փանոս Աղան եւ Ղազար
Թրֆանտեանը: Կարաւանէն մաս մը գաղթականներ կը տարուին
գիւղ մը, հոն ալ ոստիկաններ հարսեր եւ աղջիկներ տանիլ կը փոր-
ձեն, սակայն չեն յաջողիր: Մայիսի վերջն է, Սուլթանիէ գիւղը կը
ղրկուին, քանի մը օր յետոյ հոն ալ կու գան եւ նախորդ
գաղթականներուն կը հասնին նաեւ Ասատուր Կիւլվանըսեան, Մաթօ
եւ Արթին Աղա Բասիլոսեաններ եւ Հայկ Ասմընեան:

Զէյթունէն է որ կը սկսի թուրքը առաջին անգամ հայ ժողովուրդին

տարագրութիւնը: Ուրիշ տեղ տակաւին նման բան չկար, դուրսէն,
արտաքին աշխարհէն ի սպառ կտրուած է զէյթունցին, ու չես հաս-
կընար եղածին էութիւնն եւ ըլլալիքը յետագայի: Շատեր խորհած է-
ին թէ՝ ժամանակին ալ այսպիսի բաներ, աքսորներ տեղի ունեցած
էին: Մինչեւ Հալէպ եւ Նոյնիսկ մինչեւ Կ. Պոլիս քշուողներ եղած
էին եւ ամիսներ յետոյ վերադարձած: Զամբայ հանուածները եւ ոչ
ալ տակաւին Զէյթուն մնացողները կը հասկնային թուրքին հրէշային
միտքը: Ուրիշ հայ քաղաքի բռնագաղթի օրինակը չկար տակաւին ի-
րենց առջեւ: Նոյնիսկ չըջակայ հայ գիւղերու պարպումին մասին ոչ
մէկ բան լսած կամ գիտցած էին Զէյթունի մէջ, որովհետեւ, ինչ-
պէս քանիցս յիշեցինք, պաշարման խիստ շղթայի տակ առնուած էին
թէ՛ Զէյթունը եւ թէ՛ հայ գիւղը: Զէյթունի առաջին կարաւանէն շա-
բաթ մը յետոյ հանուած էին, դարձեալ ծանօթ ընտանիքներէ բաղ-
կացած ուրիշ կարաւան մը, երկու երեք օր ետքը պարպուած է բո-
լորովին վանքին գիւղը: Վերջը, ահա երկու շաբաթ լուծիւն: Ամէն
ինչ տեղի կ'ուսննար լուռ եւ առանց զգացուելու: Այս բոլոր կարա-
ւանները զիրար կը գտնեն Գոնիայի նահանգին մէջ, Սուլթանիէ եւ
իր շրջակայ մասամբ անապատ եւ մասամբ ճահճային հողերուն վրայ:

Մենք, մեր վերոյիշեալ էջերով տուինք իրենց գրեթէ մանրամասնու-
թեան մէջ եւ ականատես ու միաժամանակ ինքն ալ ենթակայ Լ.
Նորաշխարհեանի պատմածներուն, որպէսզի վերջէն հանուած կարաւաններու
մասին այլեւս առանց խօսած ըլլալու, մեր ընթերցողները, մանաւանդ
նոր սերունդի տղաքը, վերապրողները, լսեն եւ հասկնան, թէ ինչեր
տեսաւ այս ժողովուրդը, ինչեր քաշեց, ֆիզիքական, հոգեկան եւ
բարոյական այնպիսի անձկութիւններ, զորս նկարագրել գրչի գործ
չէ: Շատ անգամ մահը անուշ երազ մը թուեցաւ իրեն, գայն փնտ-
ռեց կարօտով, ու մահը խուսափեցաւ իրմէ: Մեռնիլ փափաքեցաւ
քանի քանի անգամներ ու չկրցաւ մեռնիլ, ցեղը պիտի տառապէր,
երկար պիտի տառապէր ու տառապեցաւ, տաճնապներ ունեցաւ,
անայգ, անառաւօտ գիշերներու մէջ, դարերու ծանրութիւնն ու
երկարութիւնն ունեցող գիշերներու ամբողջութիւն մը եղաւ ամբողջ
իր կեանքը: Ու օր մը վերջապէս անապատի տարածութեան տակաւին
ողջ մնացածներուն վրայ եկաւ համատարած ջարդերու մանգաղը, եւ
հնձեց, հնձեց հարիւր հազարները, միլիոնը:

Շարունակենք սակայն, Կիրակի օր մըն է, այլեւս Զէյթունի մէջ
ամէն ինչ վերջացած կը նկատուէր, տարուելիքները տարուած էին,
մնացածները որպէս թէ այլեւս կրնային հանգիստ ըլլալ, իրենք պի-
տի շտարագրուէին, Լուսաւորչի թաղի 400 ընտանիք ճամբայ կը
հանուէր, 50 ընտանիք կը մնար: Սակայն այլեւս կը հասկցուէր թէ,

սպաննուած Հազարապետ Սիւլէյման Պէկի անունով կ'անուանուի «Սիւլէյմանը»:

Մարաշի Հայրենակցական Միութեան Կեդրոնական Վարչութեան Հրատարակութիւնը եւ Գր. Գալուստեանի (Կիլիկեցի) կողմէ պատրաստուած «Մարաշ կամ Գերմանիկ» եւ «Հերոս Զէյթուն» ընդարձակածաւալ հատորէն կը քաղենք Տոքթ. Ե. Լեփսիուսի «Հայաստանի ջարդերը» անունով գաղտնի տեղեկագրին այս մասերը, որոնք կը ներկայացնեն Զէյթունի 1914-1915-ի դէպքերը Պ. Կիլիկեցին իր այդ գրքին մէջ վերստին յիշեալ տեղակագրէն արձանագրելով Զէյթունի վանք ապաստանողներուն կոխը, Զէյթունի պաշարումը, պաշարուածներուն լեռները բարձրանալը, Գերման մերձաւոր արեւելքի առաջնութեան նախագահին՝ Տոքթ. Ե. Լեփսիուսի կու տայ խօսքը, զոր հետեւեալ կերպով կը շարունակէ հայասէր գերմանացին.

— Յաջորդ առաւօտ, ժամը 9-ի ատենները, նոյնիսկ իրենց փախուստը քաղաքին գիտցուելէ առաջ, Հրամանատարը կանչել տուաւ քաղաքին առաջաւորներէն 300 հոգի, բանակատեղիին մէջ, իրենց հետ տեսակցութիւն մը ունենալու համար, եւ որովհետեւ մինչեւ այն ատենները կառավարութեան հետ յարաբերութիւնները բարեկամական էին, այս մարդիկը առանց կասկածի ստուերի, գացին որոշուած տեղը: Անոնց մէկ մասը լեռներէն, իրենց հօտերուն քովէն կու գար: Երբ բանակատեղը հասան, քիչ չեղաւ անոնց զարմանքը, տեսնելով թէ՛ այլեւս քաղաք չեն կրնար դառնալ եւ պիտի փոխադուին: Ար պատճառով ճամբորդութեան անհրաժեշտ պիտոյքներ չկրցան հալածալիք Միայն մի քանիներուն թոյլատրուեցաւ, որ գրաստներ բերել տան, մեծ մասը զնաց ոտքով: Զէյն գիտեր թէ ո՛ւր կ'երթային:

Քիչ ատենէն սկսաւ Զէյթունի ամբողջ հայութեան տարագրութիւնը, իրարու յաջորդող շատ մը կարաւաններով: Շուրջ 20000 հոգի էին անոնք, չորս թաղերու բնակիչներն էին, կ'երթային շատ անգամ կիներն ու մանուկները այրերէն զատուած, առանձին: Շաբաթներ տեւեց բռնագաղթը, Մայիսի վերջին կէսին, Զէյթուն պարպուած էր ամբողջովին: 6-800-ը անոնց, ղրկուեցան Գոնիայի եւ Էրէջլիի միջև տարածուած Գարափունարի եւ Սուլթանիէի վատառողջ ճախճախտները: Իսկ 15-16000 հոգի տարուեցան Եփրատի ուղղութեամբ դէպի Տէր-Զօր, Միջագետքի տափաստանը: Անվերջ կարաւաններ անցան Մարաշէն, Ատանայէն, Հալէպէն: Կարելի չեղաւ զանոնք տեղ մը կեցնել, հաստատել, բան մը հնարաւոր չեղաւ նոյնիսկ զիրենք իրենց սահմանաւ որոշ վայր մը հասցնելու համար:

Տոքթ. Ե. Լեփսիուս իր տեղեկագրին մէջ դրած է նաեւ Մարաշէն ականատեսի մը 10, 14 եւ 21 Մայիս, 1915 թուակիր հետեւեալ

երեք նամակները.— (Կեդուն, բառերը նոյնը պահելով).

10 Մայիս, 1915

..... «Զանոնք տեսայ ճամբան... ամբողջ թափօր մը, ժանտարմաներու ընկերակցութեամբ, որոնք զանոնք յառաջ կը քշեն գաւազանի հարուածներով: Հազիւ թէ հագուստ կը կրեն: Տկարացած են: Աւելի ինքզինքնին կը քաշկուտեն ասոնք, քան կը քայնեն: Մեր կիներ կը կքին եւ երբ զափթիէն գաւազանը բարձրացուցած կը մօտենայ, վախերնուն ոտքի կ'ելլեն անոնք: Ուրիշ կիներ առաջ կը քշուին էգ էշերու խումբի մը պէս: Տեսայ երիտասարդ կին մը, որ կ'ընցաւ, պիտի իյնայ, զափթիէն երկու երեք հարուած տուաւ անոր եւ ան տաժանագին ոտքի ելաւ: Իր առջեւէն կ'երթար, իր ամուսինը, երկու երեք տարեկան մանուկ մը գիրկը առած: Քիչ մը անդին ծեր կին մը սահեցաւ եւ ցեխի մէջ ինկաւ: Ժանտարման երկու երեք անգամ զարկաւ իր բիրովը: Կինը շարժում չէր ընէր: Այն ատեն ոտքի քանի մը հարուած տուաւ, սակայն կինը շարժած չունէր: Թուրքը աւելի ուժգին ոտքի հարուած մը տուաւ, եւ կինը փոսին մէջ գլորուեցաւ: Կարծեմ թէ՛ արդէն մեռած էր: Այն մարդիկը, որոնք, հոս, քաղաքը հասած են, երկու օրէ ի վեր բան մը չեն կերած: Թուրքերը թոյլ չտուին իրենց հետ բան մը առնելու, բացի վերմակէ մը, ջորիէ մը եւ այժմ մը: Բայց այստեղ բոլոր ունեցածնին գրեթէ ոչինչ գնով ծախեցին, մէկ այժմ 6 դրուշ, մէկ ջորին կէս ոսկի, որպէսզի ասով հաց գնեն: Անոնք որ դրամ ունէին եւ կրնային հաց գնել, աղքատներուն հետ բաժնեցին, մինչեւ որ իրենց դրամն ալ հատաւ: Իրենց ունեցածին մէկ մասը ճամբան արդէն կողոպտուած էր: Երիտասարդ կին մը, որ ութ օր առաջ գաւակ մը ունեցած էր, ճամբորդութեան առաջին գիշերը էջը գողցուց: Տարագրուածներու ստիպելին իրենց բոլոր ունեցածները Զէյթուն թողուլ, որպէսզի պոսնացի խումբ գաղթական թուրքերը, զորս կ'ուզէին անոնց տեղը հաստատել, կարենան այդ բաները իրենց պէտքերուն գործածել...

Շուրջ 25000-ին 15-էն 18 հազարը Հալէպի ճամբով տարուեցան, բայց պէտք է աւելի հեռուն երթան, դէպի Արաբիայի անապատը: Անոնք արդեօք այնտեղը անօթութենէ մեղցնել կ'ուզեն: Անոնք որ այնտեղէն անցան, Գոնիայի Վիլէյէթը կ'երթան: Այնտեղ ալ անապատներ կան: Երկու, երեք շաբաթ կեցան Անատոլիի երկաթուղիին վերջացած տեղոյն վրայ՝ Բոզանթի, որովհետեւ գիծը զինուորական փոխադրութիւններով զրաւուած էր: Երբ աքսորուածները Գոնիա հասան, ոչինչ կերած էին երեք օրերէ ի վեր: Քաղաքին յոյները եւ հայերը միացուցին իրենց ջանքերը, անոնց դրամ եւ ուտելիք հալածալիքու համար: Գոնիայի Վալին սակայն արգիլեց աքսորուածներու ոսկէ բան

տալ, անոնք բոլորը պէտք եղածը ունին յայտարարելով: Ուրեմն, ուրիշ երեք օրեր ալ առանց սնունդի մնացին խեղճեր: Ասկէ ետքն է որ Վալին վերցուց իր արգելքը եւ զափթիէներու հակողութեան տակ կարելի եղաւ ուտելիք բաժնել իրենց: Ան, ուրկէ այս տեղեկութիւնները քաղած եմ, ինծի պատմեց թէ՝ Գոնիայէն Գարափունար ճամբուն վրայ, երիտասարդ հայուհի մը իր նորածին զաւակը հոր մը նետեց, որովհետեւ այլեւս չէր կրնար զայն սնուցանել: Ուրիշ մայր մըն ալ ինքզինք թռէնին դռնէն վար նետեց:

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ

(Նոյն ակնհատեսի վկայէն)

21 Մայիս, 1915

Ձէյթունցիներու երրորդ եւ վերջին կարաւանը մեր քաղաքէն անցաւ, անոնցմէ մէկ քանիին հետ, իրենց իջած խանին մէջ կրցայ խօսիլ: Ամէնքն ալ երկու ոտքով քայած էին տեղատարափ անձրեւին տակ: Բան մը կերած չէին: Խեղճ աղջիկ մը տեսայ որ շարաթէն աւելի բոպիկ ոտքով քայած էր, իր ամբողջական հագուստը, միայն պատառատուն գոգնոց մը ունենալով, ցուրտէն եւ անօթութենէն կը դողար եւ ոսկորները տառաջօրէն մարմնէն դուրս կ'ելլէին: Երկտասնեակ մը մանուկներ պարտաւորուեցան ճամբան թողուլ, որովհետեւ անկարող էին քայելու: Արդեօք անօթութենէն՝ մեռան անոնք, հաւանաբար: Բայց այդ մասին երբեք բան մը պիտի չգիտնանք: Տեսայ նաեւ զէյթունցի երկու խեղճ տարիքոտ աղջիկներ: Հարուստ ընտանիքի մը կը պատկանէին, բայց հետերնին հագած հագուստներէն զատ բան մը չկրցան առնել: Յաջորդած էին իրենց մագերուն մէջ հինգ վեց ուկի պահել: Դժբախտութիւն մը իրենց համար, որ ճամբան քայած ուտենին, արեւը փայլեցուց մետաղը, եւ անոր փայլը զափթիէի մը ուշադրութիւնը գրաւեց: Անիկա ժամանակ չկորսնցուց հանել տալու համար ոսկիները, աւելի կարճ միջոց մը ընտրեց, խեղճերուն ամբողջ մագերը քաշեց, փրցուց: Իմ սեփական աչքերովս տեսայ ուրիշ խիստ յատկանշական, ցաւալի պարագայ մը: Ձէյթունցի քաղաքացի մը, երբեմն շատ հարուստ, իրբեւ խլեակ մը իր հարստութեան երկու աթ կը քշէր: Վրայ հասաւ ժանտարմա մը, բռնեց երկու անասունները: Հայր խնդրեց որ աթերը իրեն ձգէ, աւելցնելով թէ՝ ապրելու ուրիշ բան չունէր: Իբրեւ միակ պատասխան, սկսաւ հարուածներ իջցնել անոր գլխուն, մինչեւ որ խեղճը փոշիին մէջ գլորեցաւ, փոշին ալ տրիւնով շաղախ ցեխի մը վերածուեցաւ: Այն ատեն, ոտքի հարուած մըն ալ տուաւ հայուն, եւ երկու աթերը առաւ ու գնաց: Ուրիշ երկու թուրքեր կը դիտէին այս բանը, առանց զարմանքի ամենագոյն

նշանի: Երկուքէն ո՛չ մէկը միտքէն անցուց միջամտել:

Իսկ Գարափունար աքսորուածներու մասին, 14 մայիս թուականով նամակ մը, դարձեալ այդ տեղեկագրին մէջ: Այդ նամակը Գարափունարէն ստացայ կ'ըսէ Լեփսիուս եւ կ'աւելցնէ թէ անոր ստուգութիւնը չի կրնար կասկածի տակ դրուիլ, որովհետեւ գրողը ինծի ծանօթ է: Եւ այդ նամակը կը հաստատէ թէ՝ Գարափունար Վիլայէթին ամենէն վատառողջ վայրերէն մէկն է, ուր աքսորուած են Թէն 8000 զէյթունցիներ, եւ ուր օրական կը մեռնին 150-200 հոգի: Ճախճախտանքը մեծ աւեր կը գործեն անոնց մէջ, որովհետեւ ամբողջովին զրկուած են սնունդէ եւ ապաստանէ: Ինչ անգութ հեգնութիւն, կ'ըսէ, երբ կառավարութիւնը կը յաւակնի զանոնք հոն դրկած ըլլալ, նոյն տեղը գաղթականութիւն մը (գաղութ մը) հիմնելու համար: Անոնք ոչ աւոր ունին, ո՛չ ցանելու հունտ, ո՛չ հաց ուտելու, ոչ ալ ապաստան: Ձեռքերնին բացարձակապէս պարապ տարագրուած են:

Կիլիկիցիին՝ Գր. Գալուստեան, իր վերոյիշեալ ստուար հատորին մէջ արտագրել է յետոյ Լեփսիուսի գաղտնի տեղեկագրէն վերոյիշեալ նամակները, իր կողմէ կ'ընէ հետեւեալ խորհրդածութիւնները:— «Արգէն ըսել իսկ հարկ չէ թէ՝ ինչ կրնան եղած ըլլալ արարական անպատեհները տարագրուողները: Երբ երկրին աւելի չէն կողմերը այսպէս՝ խոշտանգումի, բռնութեան, կողոպուտի, անօթութեան ու հիւանդութեան զոհ գացին հարիւրներով եւ հազարներով: Անոնք ալ իմեցին դառնութեան եւ մահուան միեւնոյն բաժակը:

«Ահա, այսպէս, տարագրութեան առաջին մոլուցքին զոհ կ'երթար երբեմնի չէն Ձէյթունը, հակառակ բողոքներուն, աղերսանքներուն: Սակայն արդէն չուշացան տեղահանութեան ուրիշ չարաշուք ծրագիրներ, բոլոր Անատոլիան եւ Կիլիկիան դատարկելով իրենց հոծ հայ բնակչութենէն: Հայութեան կործանման գինով կ'անցնին 1915-ի, 1916-ի, 1917-ի եւ 1918-ի տարիները»:

Դատարկուած է այլեւս Ձէյթուն իր չրջակայ հայ գիւղերով: Վանքի մարտիկները քաշուած են չրջակայ լեռները: Արեգինի գիւղերուն հայութիւնն ալ թէեւ իրենց գիւղապետին հետ մտածել են լեռ քաշուիլ Կիլիկիոյնի բերդը, որ Ձէյթունէն հարաւ 4 ժամ հեռու բնական ամրութիւն մըն էր, Արեգինի արեւմուտքը, սակայն Ձէյթունէն զրկուած մարդիկ համոզած էին որ ենթարկուին կառավարութեան հրամաններուն: Կը պարպուին ուրեմն այսպէս նաեւ Արեգինը ու Ֆոնուզը, որուն խիզախ երիտասարդներէն խումբ մը արգէն որպէս զինուոր տարուած, հեռացուած էր, մէկ մասը Մարաշի եւ Օսմանիէի բանտերուն մէջ էին, իսկ ժողովուրդը բռնած էր

գաղթի ճամբան: Կուչեօղ հայ գիւղի պետն է միայն, Համբարձում Գարակէօզեան եւ իր հետ նոյն գիւղէն Պետրոս Աշրգեան, որոնք ընտանիքներով կը մնան իրենց լեռները:

Կը դժուարանայ լեռ մնացողներուն՝ Եղիայի, Մեսրոպի, Փանոսի խումբերուն գործը սնունդ ճարելու համար: Հետեւեալ տողերով կը խօսի Լ. Նորաշխարհեան. «Անոնք, ըսել կ'ուզէ լեռ քաշուածները, բախումներ կ'ունենան թուրք ուժերուն հետ Շըրշըրի եւ Շէնպէք լեռան վրայ: Ու կը քաշուին ծանր կորուստներ պատճառելով թշնամիին: Կը մտադրեն հեռանալ այդ վայրերէն եւ Մեսրոպի առաջնորդութեամբ հասնիլ ծով եւ անկէ ալ՝ արտասահման: Ծիհանէն անցնելու ատեն, թուրք գիշերապահ զինուորներ կը նկատեն, վրայ կը հասնին ու իրենք կը ստիպուին ուղղութիւննին փոխել: Մարաշի հարաւ արեւմուտքը Ծիհանի վրայ, Իւնկիւթի կամուրջի վրայէն կ'ուզեն անցնիլ գետը եւ հասնիլ դիմացը՝ Տավշան Տաղը (Եավշան Տաղը), կրկին չեն յաջողիր ու կը վերադառնան մեր լեռները, Սօլազ-Տէտէ, Չաթուր, որ Սօլազ-Տէտէի շարունակութիւնն է դէպի հարաւ: Հոն ալ կը հանդիպին թուրք զինուորներու, կը զարնեն, կը զարնուին, այնտեղ կը զարնուին, կը մեռնին Ասատուր Սաաթեանն ու Աբէլ Ավալտանեանը: Հացի եւ ծխախոտի գացող երկու խումբերը զիրար կը կորսնցնեն: Ի վերջոյ չորս հոգինոց երկրորդ խումբը, Աւալտանեան Աբէլը ճամբան կոխին զոհ տալով, կու գայ կը հասնի կեդրոն մեծամասնութեան ապաստանած վայրը: Եղիայի Ծ հոգինոց խումբը մէջտեղ չկայ: Եղիա կը փնտռէ իր երկու տղաքը եւ այդ պատճառով կը մնայ Զէյթունի լեռները, իր հետն են իր միւս երկու տղաքը՝ Պապիկ եւ Խաչեր, նոյնպէս Խաչեր Մըխայէլեանը, Գրիգոր եւ Տաճատ Նորաշխարհեանները: Իսկ յայտնի չէ թէ՛ ուր կը մնան Նշան, Յակոբ, Յարութիւն եւ Մկրտիչ: Մեսրոպի եւ Չազրեան Փանոսի խումբը կը բռնէ Ֆնտըճազի ճամբան: Իսկ Եղիա խօսք կու տայ անոնց, հասնիլ իրենց, երբ իր երկու տղաքը եւ իր խումբի միւս ընկերները գտնէ: Սակայն շատ ալ միտք չունէր ան Զէյթունի լեռները ձգելով հեռանալու: Յակոբ Հանթիթ-յէկեան եւ Արթին Չազրեան կը գատուին ու ճամբայ կը բռնեն դէպի Մարաշ: Հագիւ թէ կը հասնին քաղաքը, կը ձերբակալուին ու կը տարուին, կախաղան կը հանուին:

ՏՆՈՒՐ ՀԱՇՈՒԵՑԱՐԴԱՐ ՄԸ

Մարաշի Գանլը-Տէրէ ըսուած (Արիւնի ձոր) տեղը՝ որ այդպէս կոչուած է 1895-ին, Մարաշի մաս մը հայերուն սպանդանոցը եղած ըլլալուն համար, կախաղան կը բարձրացուին 138 զէյթունցիներ, ո-

րոնց մէկ մասը, պարզապէս հոգեւոր միութեան մը անդամներն էին եւ օր մը՝ Զէյթունի մէջ Պօղոսեաններու բնակարանը աղօթելու գացած էին: Այնտեղ կը ձերբակալուին եւ որպէս քաղաքական կազմակերպութեան մը անդամներ բանտ կը տարուին: Անոնցմէ յիշենք Ասատուր Սէթեան (Չավուկոնց), Լեւոն Ատուրեան, Նշան, Հայկ եւ Ստեփան Պօղոսեաններ, Խաչեր Մօրուսեան, Գալուստ Տ. Մեսրոպեան: Կախաղան կը բարձրացուին Նազարէթ Պօսթանեան, Գէորգ Քաջախեան, Նշան Պարութեան, Զինիկ Ստեփան, Կարապետ Ղապիչեան, Մացոկ Պէշարդունեան, Փանոս Չօլազեան, երկու տղաքը՝ Յովսէփ եւ Աբրահամ, Աւետիս Մարկոսեան-Ծնիտիւնեան, Միքայէլ, Փանոս եւ Վարդան Ծնիտիւնեան, Պետրոս Չազրեան եւ մեծ տղան՝ Վարդիվար, Գալուստ եւ Սեդրակ Չազրեաններ, Խաչեր Թէօպէեան, Փարթամ Խէտեան, Թագուր Քուս-քուսեան, Արթին եւ Գրիգոր Քէթեան կամ Գալաճեան, Սողոմուն Թրվանտեան, Հայկ Վարդանեան, Ասատուր Աթալարեան, Եղիա Քիթեան, Աթան եւ Յակոբ Առաքելեան, Վանէս Թօմպուլեան, Ռուբէն Քէնտիպէյեան, Գէորգ Մարտավուլեան, Արմենակ Հաճի Փանոսեան, Էմմանուէլ Ղարիպեան, Յովհաննէս Պարութեան, Նշան Եզեկիէյեան, որ մտաւորական, ուսուցիչ մըն էր, կախաղանի չուանին առջեւ կը խօսի ու կ'ըսէ. «Թուրք հայրենակիցներ, արգեօք հարսանեկան հանգէ՛ս մը դիտելու եկած էք: Զեղի հետ դարեր միասին ապրած, այս երկրին լոյս եւ քաղաքակրթութիւն տուած ու բերած ազգի մը թաղմանական տխուր հանդիսութիւնն է այսօր որ տեղի կ'ունենայ, արիւնը չի կորսուիր, թուրքը ինքն իր ձեռքովը իր երկիրը վրայ պիտի տայ: Կտոր կտոր պիտի ըլլայ կ'ըսէ այս հողը: Մենք պատրաստ ենք մահուան, մենք կատարեցինք մեր մարդկային պարտականութիւնը մեր ազգին եւ նոյնիսկ թուրք կառավարութեան հանդէպ, միայն կը ցաւիմ որ տգէտ ու վայրագ ժողովուրդի մը մոլեռանդութեան զոհ կ'երթանք: Այս խօսքերը չվերջացուցած, կը լռեցնեն զինքը, չուանը կ'անցնեն վզին, կը հրեն աթոռը ոտքին տակէն, ու ահա կը վերջանայ 1915-ի զոհեր:

Իրենց ընտանիքներէն զատելով կ'աքսորեն Հալէպ Կարապետ Պալեան, Յակոբ Թաշեան, Խ. Նորաշխարհեան, Կարապետ Չփուրեան, Յովհաննէս Տ. Նշանեան եւ յետոյ Տիգրանակերտի ճամբաները տանելով, կախաղան կը բարձրացնեն բոլորն ալ:

Տ. Զօրի մէջ կը սպաննուին Սահակ Քհնյ. Մարկանեան, Վաղարշակ Քհնյ. Ծէրրահեան, Յովսէփ Վրդ. Ագրէպեան, Փրօֆ. Յակոբ Զէյթունցեան: Ընդհանուր ջարդին զոհ կ'երթան Յովհաննէս Ալեքսանեան, Լեւոն Ահարոնեան, Վարդիվար Խուլմանեան: Բազմաթիւ մէջ, անլուր

չարչարանքներէ եւ թշուառութեան մէջ կը մեռնի ուսուցիչ Գրիգոր Գասապեան, իսկ ուսուցիչ Խաչիկ Եղղուպեան չտոկայով ալլելս տեսած եւ կրած տառապանքներուն, Հայէպի հոգեւորական մէջ կը հիւանդանայ, կը մեռնի իսկ Մարաշ գնդակահարուածներուն եւ կիրի օճախներուն մէջ ողջ ողջ այրածներուն թիւը 300 հոգիէն աւելի է, որոնց անունները առանձին յիշել կարելի չէ: Անյիշատակ նահատակներ, որոնց համար անհնարին, անպատում է մեր ցաւը եւ ահաւոր՝ ատելութիւնը թշնամիին հանդէպ:

Զէյթուն եւ իր շրջակայ հայ գիւղերը տեղահան եղած են եւ պարպուած: Ֆնտրճագ⁶⁸ իր տարազրուութեան վաղորդայնին մէջ է: Երիտասարդութիւնը կը խորհի, բռնագաղթի փորձի մը պահուն, գէնքով դիմադրել, մինչդեռ տարեցները խորհուրդ կու տային նման պարագայի մը, ենթարկուիլ ընդհանուր հայութեան ճակատագրին: 1914-ի աշնան, թուրքեր առիթէն օգտուելով, հոն ալ հայերէն գէնք կը պահանջեն եւ այդ նպատակով Օմար Պէյ անուն արիւնարբու, հայատեաց հարիւրապետ մը 125 ժանտարմաներով Ֆնտրճագ կու գայ:

1915 Յուլիս

Ֆնտրճագի ուղղութեամբ իրենց ճամբան կը շարունակեն Նշան, Կարապետ եւ Պետրոս Նորաշխարհեաններ, Փանոս, Յակոբ եւ Էմմանուէլ Զագրեաններ, Մեսրոպ, Արամ եւ Գարեգին Զօլագեաններ, Յովհաննէս Ղարիպեան, Խաչօ Աղզլալէօյլեան, Տէվէտիկ Կարապետ, Լեւոն Խուլմուսեան, Արթին Աթալարեան, Յարութիւն Շէֆթալեան, Թորոս Տուռնայեան, Ստեփան Պէարիւնեան, Լեւոն Թրվանտեան, Նազարէթ Ֆէլլահեան, Փանոս եւ Անտոն Հաճընեաններ, Համբարձում Մկրեան եւ Աւետիս Պալուշեան: Քսան երեք հոգիներ էինք անոնք, կը թողուն մեր հայրենի լեռները եւ անդարձօրէն կը հեռանային, առանց գիտնալու իրենց սպասող ճակատագրի մասին ոեւէ բան: Կը հասնին Ֆնտրճագ հայ գիւղը, որ կառավարութեան հրահանգին ենթարկուած, կը պատրաստուէր գիւղը ձգելով գաղթի ճամբան բռնելու: Զէյթունցի տղոց հասնելովը, նոր յոյս, նոր ոգեւորութիւն մը կը ծնէր բոլորին սրտերուն մէջ: Չեն ուզեր որ զէյթունցի աղաք ձգեն գիրենք եւ հեռանան, կ'աղաչեն որ մնան իրենց մօտ, ու միասին կռուին, դիմադրեն թշնամիին: Զուգուր-Օվայէն վերադարձող կարգ մը Ֆնտրճագցիներ, որպէս ականատեսներ կը պատմէին զէյթունցի գաղթականներու ճամբուն կրած չարչարանքները եւ քաշած անլուր նեղութիւնները: Թէեւ զէյթունցի տղաքը մտադիր չէին Ֆնտրճագ մնալ, ըսելով թէ՛ այս պայմաններու տակ կարելի չէ դիմադրել թշնամիին, ի վերջոյ սակայն տեղի կու տան Ֆնտրճագցիներու խնդրանքին ու կը մնան հոն: Կը սկսին պատրաստուիլ կռիւին, ի

հարկին, այնտեղ ժողովուրդին հետ մեռնելու որոշումով եւ գիտակցութեամբ: Կը խորհին Մարաշի հայերուն մէջ գտնել մարդիկ, որոնք գործակցին իրենց՝ Մարաշի բանտը գտնուող 200-ի մօտ գէյթունցի տղաքը ազատելով Ֆնտրճագ հասցնելու: Այս նպատակով Ֆնտրճագի գիւղապետը՝ Մինաս Քէհեան Մարաշ կը դրկուի: Մինաս Քէհեան Մարաշի մէջ կը գտնէ բաւական թիւով համախոհներ, որոնք խօսք կու տան օգնել Ֆնտրճագցիներուն, երբ Մարաշի վրայ բարձակելու ըլլան: Կառավարութիւնը կ'իմանայ ծրագիրը, ջոկատ մը զօրք կը դրկէ Ֆնտրճագ 1915 Յուլիս 2-ին, որ հայութիւնը գիւղէն հանելով տարագրէ: Երբ գիւղ կը հասնին զինուորները, անոնց գէնքերը կը գրաւուին հայերէն: Լուրը կը հասնի Մարաշ: Մարաշի կառավարիչը՝ Միւսթաֆա Պէյ, բողոքական Կարապետ Էֆ. Պէլէգլե-ճեանի գլխավորութեամբ պատուիրակութիւն մը կը դրկէ Ֆնտրճագ եւ կը հրահանգէ որ ըմբոստները կառավարութեան յանձնուին իսկ ժողովուրդը պատրաստուի գաղթի ճամբան բռնելու: Պատուիրակութիւնը չի յաջողիր իր առաքելութեան մէջ, հանդիպելով ժողովուրդին միահամուռ ընդդիմութեան եւ կը դառնայ Մարաշ, հետեւին տանելով նաեւ Մինաս Քէհեան, ուրիշ ճար մը մտածելու համար: Այս ծանրակիւ խնդիրը կ'իմանան Մարաշի հայերը, Ֆնտրճագցիներու ընթացքը եւ արարքը կը գտնեն պարզապէս արկածախնդրութիւն եւ աղիտաբեր ոչ միայն իրենց, այլեւ Մարաշի հայութեան համար: Գիւղ կը դարձնեն Քէհեան, որ ժողովուրդին խօսք հասկցնէ, համոզէ որ ենթարկուին Մինաս Քէհեան սակայն գիւղ հասնելուն, կաշխատի համոզել ժողովուրդը եւ կը սպաննուի: Կառավարութիւնը որոշած է անպայման պարպել Ֆնտրճագը: Իսկ Ֆնտրճագցիք եւ հոն հասած զէյթունցիներ կը մտածեն Մարաշի հայ բանտարկեալները ազատել կրակի տալով քաղաքին մէկ քանի տեղերը, որպէսզի թուրք ժողովուրդին մէջ խուճապ ստեղծուի եւ իրենք օգտուելով այդ շփոթութենէն եւ իրարանցումէն բանտին վրայ յարձակին, բանան, կոտրեն դռները եւ դուրս հանեն բանտարկուածները, որոնք պիտի գան ու միանալով իրենց, հարաւոր պիտի ըլլայ դիմադրել բանակին: Վանքի գիւղէն, Անտոն Փանոս, Թիթեղ մը քարիւղով կը մտնէ Մարաշ, նախըր Էօնիւի Թաղին մէջ զինուորներ կը ձերբակալեն, օր մը յետոյ կախաղան կը հանուի: Թուրք լրտեսներ իմացած են թէ Զէյթունի էջըրյաներ եկած են Ֆնտրճագ: Հարիւրապետ Օմար Պէյ նեղը կը դնէ գիւղացիները, որ զէյթունցիները յանձնեն: Սակայն Ֆնտրճագցիներ կը դիմանան խտուրթիւններուն եւ չեն դաւաճաներ հիւրերուն: Օմար Պէյ 200-է աւելի ուժով մը կը մտադրէ էջըրյաններուն վրայ երթալ, սակայն չի համարձակիր: 28 Յուլիս, 1915-ին, Այնթապի եւ Մարաշի թուրքեր

խած ըլլալով թէ՛ Ֆնտրճագը պիտի տեղահանուի, փութացած էին հոն, ծախու հանուած գոյքերը, որպէս թէ աժան գնելու, մինչդեռ իրենց նպատակը կողոպուտ ընել էր, որովհետեւ ապրանքի մը մէկ քառորդ արժէքը չէին վճարեր: Մայրամուտին գէնքերու խուլ որոտ մը ազդանշանը կու տայ կողոպուտի: Այդ գիշխանձ թուրքերը գործի վրայ են: Զէյթունցիներ դիրք բռնած են տան մէջ: Օմար Պէյ իր ուժերով կը փորձէ պաշարել անոնց գտնուած տունը: Շատ կարճ ժամանակի մը մէջ, Օմարի ուժերը կը բնաջնջուին: Կողոպուտի եկողներէն շատեր գերի կը բռնուին, որոնք սակայն կը փորձեն ներքին դժուարութիւններ հանել, փտանգաւոր դառնալ, եւ այդ պատճառով հայ մարտիկներ կը ստիպուին գնդակահարել զանոնք: Յետոյ կ'արշաւեն չրջակայ մեծ ու փոքր վեց թուրք գիւղերու վրայ, կը յաղթեն անոնց եւ կրակի տալով այդ գիւղերը, կալերը, կը մտադրեն արշաւանքի սահմանը ընդարձակել: Մարաշի կառավարութիւնը մտահոգուած, կրկին պատուիրակութիւն մը կը դրկէ Ֆնտրճագ: Պատուիրակութեան անդամներն են Տ. Սահակ Քահանայ Տ. Պետրոսեան, Արսէն Բհնյ, Վերապատուելի Արարհամ Յարութիւնեան, Վարդիվառ Գասպարեան, Ատանայի կուսակալը, հրամանատար Ալի Պէյ եւ երկու սպա: Հակառակ պատուիրակութեան տարած ջանքերուն, ձեռնուռնայն կը դառնան Մարաշ: Ֆնտրճագ կը հասնի հրամանատար Ղալիպ Պէյ: Հայ կռուողները երեք թեւերու կը բաժնուին: Ֆնտրճագ եկած էին նաեւ Տէրէքէօյի եւ Քէշիքիի հայերը, որոնք որոշած էին միասնաբար դիմադրել մինչեւ իրենց վերջին շունչը: Զէյթունցիներ կը պաշտպանեն հարաւակողմը՝ էշէք Մէյտանըն, զօրքին եւ խուժանի կը գիւղ մտնելիք անցըր: Յուլիս 31-ին, գնդապետ Ղալիպ Պէյ, իր 8000-նոց բանակով Տէրէքէօյի մօտ, Ավշարը թուրք գիւղին մէջ կը բանակի: Գիշերը վրայ կը հասնի: Մասնակի ընդհարումներուն, որոնք ամբողջ գիշերը տեւած էին, ահա վճռական ճակատամարտ էր որ պիտի յաջորդէր: Այլեւս անխուսափելի էր ատիկա:

Յաջորդ առաւօտ, Օգոստոս 1, Կիրակի օրը, թուրքին թնդանօթները կը սկսին զոռալ: Անոնց ծուխը բռներ է հորիզոնը: Բանակը յարձակումի անցեր է: Հազարներով հրացաններ մէկէն կը պայթին: Հաճախ իրենց փամփուշտները խնայողութեամբ կը գործածեն: Նշան, Փանոս, Մեսրոպ վճռած են դիմադրել, ուրիշ ճար չկայ: Նշանի եւ Չազրեան Փանոսի ղեկավարութեամբ առաջին խումբը կը բռնէ եկեղեցին եւ դպրոցը: Երկրորդ խումբը կը գլխաւորէր Մեսրոպ Այդ խումբին մէջ էին Ֆնտրճագէն՝ Նազարէթ, Յովսէփ եւ Քէհեմի միակ որդին՝ Նազար:

Հարիւրներ կ'իյնային թշնամիէն: Անհաւասար եւ ահաւոր կռիւ:

Սարսափի տեսարան մը կը պարզուի: Սակայն հայ կռուողները կը շարունակեն դիմադրել, առանց տկարութեան նշան ցոյց տալու ամբողջ օրը: Անընդհատ կը զարնեն ու կը զարնուին: Իրիկուն է, թշնամին գնդացիներով եւ թնդանօթներով կը ծեծէ հայոց դիրքերը: Քարէ շինուած են դիրքերը եւ ումարբէն կը խորտակուին, գետնին կը հաւասարին ու կռուողները բացը կը մնան: Կռիւը կը սաստկանայ, գնդապետ հրամանատար Ղալիպ Պէյ կը կատարէ, հայ կռուողներու յամառ դիմադրութենէն եւ կը հրամայէ գիրկընդխառն կռիւի: Սուրներ իրարու կը խառնուին: Ոչ մէկ յոյս փրկութեան: Կռիւը իր ծայրագոյն աստիճանին հասած է: Գերման սպաններ են որ կը վարեն յարձակողական: Հայ մարտիկներու խումբերը տուններու մէջէն տակաւին կը շարունակեն կռիւը նոր թափով: Ժողովուրդը շուարած է: Մանուկներ կու լան, կը ճշան, պատանի երիտասարդ ասդին, անդին կը վազվզեն: Քանի մը ժամ այսպէս եւ վերջապէս այդ հսկայ ուժին առջեւ ընկրկում: 8000-ի դէմ կռուողներու թիւը 500-ի հազիւ կը հասնէր, եւ անոնց մէջէն միայն 250-ը զինուած էին մարթիրով: Չորս ժամ այսպէս անընդհատ գնդաձիրներ եւ թնդանօթներ կը գործեն: Նահանջէն առաջ գիւղացի կիներ, մանուկներ, ծերեր կը հաւաքուին եկեղեցին եւ անոր յարակից տունները: Հոն կը հասնի նաեւ կռուողներէն մաս մը: Թշնամին աւելի կը ծանրանայ այս դիրքին վրայ: Տեղատարափ ումարբէն կրակ կ'առնեն շէնքերը, կը բռնկին: Կրակը կը հասնի եկեղեցի, հարիւրներ կը հրկիզուին: Գիւղը բոցերու մէջ, ժողովուրդը կը բռնէ նահանջի ճամբան, ու կ'երթայ Ղալիպ Պէյի ուժերուն ձեռքը: Կը պաշարուին կռուող տղաքը, որոնց թիւը հարիւրը չ'անցնիր այլեւս: Անոնք կը շարունակեն կռիւը: Գիշերը վրայ կը հասնի: Կռուողները, խաւարին մէջ գիրար կը կորսնցնեն: Մեսրոպ Չօլագեան կ'իյնայ կոստան Վարժապետեանի Պազարճըզի քիւրտ պահակներուն ձեռքը եւ կը սպաննուի: Մեսրոպի գլուխը կը կտրեն անոնք ու կը տանին Մարաշ: Պէյտիւնեան Ստեփան Մարաշի մօտ կը բռնուի ու կը գնդակահարուի: Գարեգին Չօլագեան կ'անցնի զօրանոց, չի գիտցուիր թէ ուր եւ ինչպէս կը սպաննուի: Մեսրոպի եղբայրը Գեղամ եւ Լեւոն Խուլմանեան կը մտնեն Մարաշ, կը խառնուին գաղթականներու կարաւանին եւ իրենց հետքը կը կորսնցնեն:

Թուրք զօրքը եւ խուժանը կը գրաւեն գիւղը, կը յարձակին Ս. Առտուածածին եկեղեցիին եւ դպրոցին վրայ: Այնտեղ է Նշանի եւ Փանոսի խումբը, օրհասական այդ ժամերուն քանիցս կը փախցնեն թշնամիին խուժանը, հարիւրներով դիակներ փռելով գետինները: Բայց, ի վերջոյ, անխուսափելի է նաեւ իրենց մահը: Հոս կարելի է

յիշել «Արջ օրհասականը հզորագոյնս կոուին»: Տէվէտէկ Կարապետ ծանր կերպով կը վիրաւորուի: Թշնամիին ձեռքը չիյնալու համար կը խնդրէ ընկերներէն որ զինքը սպաննեն: Անոնք սակայն կը մերժեն, թշնամի գնդակները չեն հանդիպիր իրեն: Ան իր դաշոյնը կը խրէ սրտին ու կ'իյնայ անշունչ: Ընկերները ի տես այս խուժողութեան ակերին, կը մոլեգնին, դիրքէ դիրք կը ցատկին Նշան եւ Փանոս, կը խրախուսեն ողջ մնացող ընկերները: Հարիւրներ կ'իյնան վերստին խուժանէն եւ զօրքերէն: Սակայն փրկութեան ոչ մէկ միջոց մնացել էր այլեւս իրենց: Դպրոց եւ եկեղեցի քարուքանդ կ'ըլլան ուղիղօրէն: Թշնամին, երկար գաւազաններու ծայրը, քարիւղով թրջուած քուրջերով քարիւղ կը սրսկէ տախտակէ պատերուն եւ առաստաղներուն ու կրակի կու տայ նաեւ այս երկու շէնքերն ալ: Բոցը կը գոցէ ամէն դուռ եւ պատուհան: Անկարելի է դուրս գալ:

Գազաններու պէս դուրս պիտի խոյանան, սակայն բոցը բռնել է դուռ ու պատուհան: Եկեղեցւոյ խորանին առջեւ են, բոցը կը հասնի իրենց ու կը մոխրացնէ բոլորը: Այս վերջին ճակատամարտը տեւած է քսանչորս ժամ: Հայերու ընդհանուր կորուստը՝ մեծ ու փոքր 2000 եղած է, ըստ կիլիկեցիի «Մարաշ եւ Գերմանիկ» հատորին, որպէս ականատեսի պատմութիւն, իսկ թշնամիին կորուստը եղած է մօտաւորապէս 8000 հոգի, որուն 2000-ը բանակէն է: Քսանչորս ժամ տեւող այս ահաւոր ճակատամարտը վերջ կը գտնէ, երբ լեռ կը քաշուին Փնտրճագցի, քիշիֆլեցի եւ տէրիքէյցի հազիւ ութ տաս մարտիկներ եւ գիւղը կ'ընկճուի եւ կը բռնէ բռնագողթի ճամբան: Թշնամին կը մտնէ գիւղը, կ'այրէ եկեղեցի, ժողովարան, դպրոց, ինչպէս նաեւ գրեթէ բոլոր տուները: Դուրս փախչողները անխափ ծեր թէ մանուկ, այր թէ կին կը գնդակահարուին: Հետեւեալ առաւօտ գնդակահարութեամբ եւ անյուր չարչարանքներով սպաննուածներուն թիւը կը հասնի 91 հոգիի, իսկ 100-է աւելի ուրիշ երիտասարդներ Մարաշ կը տարուին եւ ողջ ողջ կ'այրին կիրի փուռերուն մէջ: Մարաշ կը տարուին նաեւ 100-ի մօտ վիրաւորներ երկու սեռէ եւ տեն մը կեղրոնական վարժարանին մօտ շէնքի մը մէջ դարձանէ յետոյ, Մարաշի գաղթականներուն հետ կը տարագրեն: Մաս մը հայ կիներ եւ մանուկներ ալ ծեծի եւ անարգանքի տակ գիւղէն ուղղակի կ'աքորուին դէպի Սուրիոյ եւ Արաբիոյ անապատները: Ֆնտրճագի կորուստը կը հասնի 1200 հոգիի, իսկ Տէրէ Բէօյի եւ Բիշեֆլի սպաննուածներուն թիւը 450-ի մօտ: Ասոնց մեծագոյն մասը կը սպաննուին, յանձնուելէն ետքը, երբ այլեւս անգէն էին բոլորովին: Այսպէս կը մոխրանան այս երեք հայ գիւղերը եւ ժողովուրդը կ'սէն աւելի տեղւոյն վրայ կը սպաննուի, կը ջարդուի, ողջ մնացողները կը տարագրուին:

ԵՂԻԱՅԻ ԵՒ ԻՐ ԽՈՒՄԲԻՆ ՄԱՐՏՆՉՈՒՄՆԵՐԸ

Եղիան իր տղաներովը եւ ընկերներովը 1915-1917 կը մնայ Զէյթունի շրջակայքը, կը մարտնչի թշնամիին դէմ: Այս խուժին մղած կռիւները կարեւոր եւ յատկանշական են ոչ թէ իրենց ընդարձակ շրջանովը, տարածութիւնովը, այլ ժամանակի երկար տեւողութիւնովը:

Արշաւանքի մը կամ շահուած յաղթանակի մը նկարագիրը չունին այդ ոգորումները, այլ աւելի քան երեք տարիներ, գիշեր ու ցերեկ, անընդհատ, ձմրան ցուրտին ու ձիւնին, ամառուան տաքին, յաճախ անօթի եւ անհնարին պայմաններու տակ գոյութեան պայքարն է, որ տարին Եղիան եւ իր ընկերները, յաճախ Նեմեսիսեան ոգիով վրէժ բռնելով տմարդի թշնամիէն, ըլլալով անիկա կառավարութեան կանոնաւոր զինուորը թէ դասալիք, զինուորական փախստականը, արձակագէնը եւ շատ անգամ խուժանը, թուրքը:

Եղիա, 1914-ի դէպքերէն եւ խստութիւններէն առաջ, ինչպէս որ յիշած ենք նախորդ էջերով, կը փորձէ ըմբոստութեան դրօշ պարզել, կանխել Հայտար Փաշայի շահատակութիւնները, սակայն ժառանգելով կը բանտարկուի: Յետոյ ազատ կ'արձակուի: Ան տեսած էր բանտին մէջ եղած խժոժութիւնները, խոշտանգումներն ու հարիւրաւոր գաւազաններու հարուածները, բռնութիւններն ու անարգանքները եւ կը թուի կրկին ապստամբութեան գործին: Կը ղեկավարէ վանքին կռիւը, ընկերակցութեամբ Զագրեան Փանոսի, Զոյազեան Մեսրոպի եւ խումբ մը կտրիճներու: Թշնամիին ուժերէն, թնդանօթներէն վանքին քանդուելով, աւերուելէն եւ հրդեհի տրուելէն յետոյ իր չորս տղաներ՝ Պապիկի, Տիգրանի, Նշանի եւ Խաչերի հետ կը հեռանայ Զէյթունի անմիջական շրջանակէն: Իրենց կը միանան անտրուրնցի Արթին, պիթիսցի Մանուկ եւ Յակոբ, Փնտրճագցի Արթին եւ Ս. Սարգիսեան: 1915-էն 1917 կը կուրին, կ'ասպատակեն թշնամի շրջանները:

1916-ի Ալմալը կէտիկի ընդհարումին կը սպաննուի Գարեգին Նորաշխարհեան, Փամպուճագի մէջ, ինքզինքը ժայռէ մը վար կը նետէ եւ կը մեռնի Զմրուխտ, Եղիայի հարսերէն մէկը, թշնամիին ձեռքը չիյնալու համար: 1917-ին Սուլաթլըյի կռիւին կ'իյնան Պապիկ Շէֆթարեան, Սարգիս Սուրէնեան, Պէճէսիլեան, մշեցի երկու եղբայրներ Յակոբ եւ Գուրգէն, Թրանապի տակի սաստիկ բախումին կ'իյնան Վանէս Գասպարեան, Ա. Իթիշեան: 1917-ին դարձեալ, Գարալաթլըյի կռիւին հերոսաբար կուռելէ յետոյ ծանր կերպով կը վիրաւորուի Եղիա: Հակառակ թշնամիին կողմէ եղած անձնատուութեան առաջարկին, եւ առանց զլիաւորի եղող, հրոսակապետ թուրք՝ Ղըվրախին կողմէ իրեն եղած կեանքի ապահովութեան խոստումին, վիրաւոր

վիճակին մէջ տակաւին կը կռուի եւ ի վերջոյ, երբ այլեւս ոյժ չի մնար վրան, երբ ալ չեն գործեր իր հրացանն ու դաշոյնը, Գաւազաթը ըստե՛ս տեղը, չորցած թփուտի մը մէջ, ըստ «Մուսլ օրերու» մէջ ըստե՛սին, լուցկիով մը կրակ կու տայ թփուտի չոր տերեւներուն եւ ինքզինքը կ'այրէ, չիյնալու համար թշնամիին ձեռքը իսկ Ղըվրախին պատմածով ալ թշնամին է որ կրակ կու տայ այդ մացառուտին ու կ'այրէ Եղիան: 1918-ին, Գավգըրտի⁶⁹ մէջ կը վիրաւորուի Խաչեր Նորաշխարհեան, Եղիայի տղաներէն մէկը: Այս Զալիւրի մէջ կը սպաննուին Արթին Հանրսեան եւ Դանիէլ Ղապիշեան, Փիսիրը, Տաճատը եւ Գրիգոր Նորաշխարհեան: Դարձեալ 1918-ին, Գարապըյըզը կը սպաննուին Ստեփան Նորաշխարհեան, Համբարձում Գարակէօզեան, Պետրոս Ալըգեան: 1918-ին Զէյթունի անմիջական հիւսիս-արեւելքը՝ Բուխերիկ քար կը սպաննուին Եղիայի երկու տղաքը՝ Նշան եւ Տիգրան, Շէնպէկ լեւան մօտ կը զարնուին Գրիգոր եւ Անդրանիկ Ենիտիւնեաններ եւ Սարգիս Գալաճեան:

Վերջին ընդհարումը տեղի կ'ունենայ էլ Օղլուի մէջ: Այնտեղ կ'իյնան Եղիայի մեծ տղան՝ Պապիկ, եւ իր հետը՝ Յակոբ եւ Արթին Քէփիտիրեան (Ղարդալար թաղէն), Կարապետ Հաճի Կարապետեան, Ասատուր Նորաշխարհեան, Արթին Ճաբոնեան, Ասատուր Սարգիսեան, Համբարձում Գատէմեան:

Էջօղլուէն յետոյ կը մնան Խաչեր Միխայէլեան, Մանուկ Ճէլլատեան, Յակոբ Սատանիկեան, Թորոս Ալապաշեան, Մանուկ-Արթին Պատանեան:

1922-ին էր, Մանուկ Ճէլլատեան, Գրըգիսանի մէջ մալարիայէ եւ թանջէ բռնուելով, Հալէպ կու գայ եւ հոն կը մեռնի, իսկ Մանուկ-Արթին Պատանեան թոքախտէ կը մեռնի Հալէպ: Իր երկու մանչ տղաքը Հալէպ են: Հալէպէն, երիտասարդներ՝ Հայկ Պոյաճեան, Օննիկ Մուրատեան, Գուրգէն Սէրայտարեան, Իսա-Քէմալ Ժածկանունով ուրիշ հայ մը եւ կարգ մը սասունցի հայեր կ'որոշեն Սուէտիա եւ Զէյթուն գէնք եւ օգնութիւն փութացնել: Եիկիտ Ժածկանունով տալուրիկցի երիտասարդի խմբապետութեամբ 23 երիտասարդներ ճամբայ կը դրուին դէպի Զէյթուն: Անոնց մէջ էին նաեւ զէյթունցիներ՝ Սեդրակ Զօլագեան՝ Զօլագեան Փանոսին մէկ տղան, Դանիէլ Ղապիշեան, Սարգիս Մէլիտոնեան, Մանուկ Ճէլլատեան, Լեւոն Խուլմունեան եւ կարգ մը մշեցի եւ սասունցի տղաներ: Այնթապի լեռները կոխի կը բռնուին թուրք զինուորներուն եւ պաշտպանութեան հետ: Մշեցի Տիգրան գերի կ'իյնայ: զէյթունցիներ կը կռուին եւ յետոյ կը շարունակեն իրենց ճամբան դէպի Զէյթուն: Տիգրան ծեծի տակ կը խոստովանի ամէն բան: Այդ պատճառով Հալէպի մէջ կը ձերբակալեն

Տ. Յարութիւն ՔՇՆ, Եսայան, Վահան Գալաֆեան, Շաւարշ Շիշմանեան, Օննիկ Մուրատեան, Իսա-Քէմալ, Գուրգէն Սէրայտարեան եւ կարգ մը սասունցիներ: Իսա-Քէմալ կը դաւաճանէ եւ կը խոստովանի եղբորութիւնը պատերազմական ատեանին: Բանտարկուածներէն շատեր մահուան կը դատապարտուին: Բանտի հիւանդապահուհին՝ Արշալոյս Տէտէեանի միջոցով եւ դեղագործ Միհրան Նաճարեանի օգնութեամբ կը թուաւորեն Իսա-Քէմալը եւ զաղտնիքը դուրս չ'ելլեր, որովհետեւ Տքթ. Վահան Ամիրխանեան կը յաջողի Իսա-Քէմալի թուաւորումը ծածկել, սրտի կաթուածէ մեռած է ըսելով: Եւ այսպէս մահուան դատապարտուածները կ'ազատին կախաղանէն եւ կը մնան բանտ մինչեւ զինադադար: Այդ ժամանակ բանտն էր նաեւ զէյթունցի վարդիվար Գրանֆիլեան, նոյն մեղսակցութեամբ: Զէյթուն հասած վեց տղաներ կը փնտռեն Եղիան եւ իր խումբը: Այսպիսի մէջ կը սպաննուի Դանիէլ Ղապիշեան, ինչպէս որ քիչ առաջ յիշեցինք: Միւսները ժամանակ մը թափառելէ յետոյ կը գտնեն Գրիգոր եւ Տաճատ Նորաշխարհեանները, որոնք Խաչերէն դատուած եւ առանձին մնացած էին: Գրիգոր եւ Տաճատ, ինչպէս ըսինք, անդին կը սպաննուին Փիսիրը: Ամիս մը յետոյ մնացածները կը հանդիպին Եղիայի խումբին եւ կը միանան անոր: Տասնհինգ օր կը մնան, սակայն առջեւ ձմեռ ըլլալուն, կեանքը կը դառնայ անտանելի եւ կը վերադառնան Հալէպ: Իսկ Եղիային խումբը կը մնայ Ֆունուզի մօտ Խանոս անտառի լեռները, պաշարները հետերին: Թէ ինչ կոխներ մղեց Եղիա իր խումբով եւ ինչքան ժամանակ եւ ինչ եղաւ իր եւ իրեններուն վախճանը, արդէն քիչ առաջ յիշած էինք:

ԶԵԹՈՒՆԸ ԿՐԱԿԻ ԿՈՒ ՏԱՅ ԹՇՆԱՄԻՆ

Մահտեսի Միխայէլի թուր, քաջ մարտիկ Խաչեր, որ մինչեւ վերջը կը կռուի Եղիային եւ անոր ընկերներուն հետ թշնամիին դէմ, որպէս ականատես վկայ Զէյթունի ամբողջական հրդեհումին, հետեւեալ կերպով կը նկարագրէ քաղաքին այրիլը, որը տեղի կ'ունենայ 1915, 13 Օգոստոսին Զորեքշարթի օրը:

«Զէյթուն դատարկուած է, եւ ամայի, ո՛չ մէկ կենդանի շունչ մնացր է իր հայ բնակչութենէն: Զորեքշարթի օր է. մենք կը դրոնէինք խումբով Պէրզինկայի կատարը բացուած ծանօթ քարայրը Պապիկ Փաշայի: Կէսօրուան մօտ, օդին մէջ հրդեհի ծուխեր սկսան երեւնալ. մենք հետաքրքրութենէ մղուած, քարայրէն դուրս ելանք եւ վազելով հասանք Պէրզինկա լեւան այն մասը, որ կը բացուի հայոց վանքին դիմաց, ուրկէ կ'երեւար քաղաքին մեծ մասը: Սուրէնեան թաղէն, Եղեկիէլենց տունը կրակի բոցերու մէջ է: Մութ ու սեւ

մուխի թանձր ալիքներ կը բարձրանան դէպի վեր: Մեզի համար անբացատրելի էր այս հրդեհին պատճառը: Ահա, կէս ժամ յետոյ Շորվոյեան-Պոզպայիր թաղէն եւս սկսաւ նոր հրդեհ մը: Մուկը հակայ ամպերու պէս կը բարձրանար եւ կը տարածուէր: Հրդեհը անմիջապէս տարածուեցաւ ամբողջ թաղին մէջ: Քարացած կը դիտէինք այս տխուր պատկերը հրդեհին, որը կ'ընդարձակուէր եւ իր մէջը կ'առնէր ամբողջ Ձէյթուն քաղաքը, տակաւին ժամ մը չեղած: Քաղաքէն դուրս հաւաքուած էին թուրք-նորեկ զաղթականներ, որոնք ի տես այս պատմական Ձէյթունի հրկիզումին ուրախութեան ցոյցեր կ'ընէին: Քանի մը ժամէն Ձէյթունի աւելի քան 1500 տախտակաշէն տուններէն միայն մոխիր կը մնար իբրեւ տխուր յիշատակ Ձէյթունի փառաւոր անցեալին: Կրակը լափած էր նաեւ եկեղեցիներն եւ դպրոցները եւ հայ իշխաններուն դարաւոր ապարանքները: Հրդեհի բոցերուն հետ, կը լսուէին յաճախ խուլ պայթիւններ, որոնք վստահօրէն պահուած պայթուցիկ նիւթեր էին եւ կրակին հետ կը բռնկէին եւ պայթելով մեծ աղմուկ կը հանէին: Մայրամուտ է, Ձէյթուն ոչ եւս է: Նոյն գիշերուան լուսնի լոյսին տակ քաղաքի մը այրեացաւեր աւերակը կը նիրհէր մահուան քունի մէջ:

ՅԵՏԸՃԱԳԻ ԿՌԻԻԷՆ ՅԵՏՈՅ ԱՐԱՄ ՉՕԼԱԳԵԱՆ

Արամ Չօլագեան Յնտընագի կռիւին մէջէն ազատուելով կը յաջողի Մարաշ հասնիլ եւ ապաստանիլ Յովսէփ Խօճա Վեհուների քով: Յովսէփ Վեհուների, արաբկիրցի անվեհեր մտաւորական մը, Մարաշ հայ գաղթականներուն մէջ, ծպտուած վիճակով իր հետը կ'առնէ Արամը եւ իր հօրեղբոր որդին Գարեգին Չօլագեանը եւ կը հասնի Համա: Յովսէփ Վեհուների եւ Արամ յետոյ կ'որոշեն ետ դառնալ եւ երթալ Իյնթիլի: Կը հասնին այնտեղ, Վեհուների որպէս գերմաներէնի թարգման գործ կը գտնէ այնտեղ գերմաններուն մօտ, իսկ Արամ որպէս երկաթագործ կ'աշխատի փապուղիին մօտ: Արամ այնտեղ կը տեղեկանայ Մինաս Քէհեայի տղուն՝ Նազարի խումբի մասին եւ ինչպէս նաեւ կը լսէ թէ՝ զէյթունցի Յովհաննէս Սիմոնեան այնտեղ շոգեկառքի մէջ որպէս կարտը Փրէն գործի է եւ վակոններէն մաուզէր եւ սնտուկներով փամփուշտ կը փախցնէ կռուող հայ տղոց համար: Քիլէրցի հայդուկ թօփալ Յակոբի կը գործակցի Սիմոնեանի եւ Նազարի եւ թօփալ Յակոբի խումբին տղոց զէնք կը նետէ: Յովհաննէս Սիմոնեան ինքն ալ կը միանայ այդ մարտիկներուն: Իսկ Յովսէփ Վեհուների կախուելէն յետոյ Արամ եւս կը միանայ տղոց: Բաղխումի մը ընթացքին թօփալ Յակոբ կը բռնուի եւ կը սպաննուի: Մարտիկներու ղեկավարութիւնը ձեռք կ'առնէ հասանալէցի Աւետի

Չաւուշ: Չանազ Գալէն, բանակին հետ Սուէզ կը զրկուին Կարապետ Տէմիրճեան, Մանուկ Աւագեան, Համբարձում Մուճուզեան, ասոնք ալ կ'իմանան խնդիրը եւ կը միանան անոնց: Հինգի կը հասնի զէյթունցիներուն թիւը: Արամ խմբապետ կ'ընտրուի: Էօրտէկ թուրք զիւղը կը գրաւեն, կը ջարդեն: Այնտեղ Արամ կը վիրաւորուի գիտէն: Քիւրտի մը մօտ ամիս մը կը դարմանուի Սապրի Պէյ անունով: Յետոյ կրկին կը միանայ տղոց եւ մինչեւ 1918-ի գինադադարը իր ընկերներով Ամանուսի շրջանը կ'ասպատակէ, կը կռուի, որպէս արդար վրէժխնդրութիւն իր դատարկուած, աւերուած Ձէյթունին եւ կախաղան բարձրացուած, գնդակահար եղած, ողջ ողջ այրած հայրենակից քանի մը հարիւր տղոց եւ տարագրուած տասնեակ հազար զէյթունցիներուն: 1918, Արամ եւ Սիմոնեան իրենց 27 ընկերներով գինուած եւ ձիերու վրայ կը հասնին Հալէպ, որ դաշնակից անգլիական եւ ֆրանսական բանակները արդէն գրաւած էին: Արամ եւ Սիմոնեան, խիզախ, յանդուգն նկարագրով ղեկավարներ էին:

ԹԷ ԻՆՉՈՐԻ ՁԷՅԹՈՒՆ ՉԿՌՈՒԵՑԱԻ ԵՒ ԲՈՆԵՑ ՏԱՐԱԳՐԻ ՃԱՊԱՆ

Վերապրող հայերէն շատերուն մտքերէն անպայման անցաւ, եւ իրենք իրենց նոյնիսկ թերեւ իրարու ալ ըսին թէ՝ Ձէյթուն 1914-1915-ի հազանդութեամբը, իր չապստամբելովը աղարտած եղաւ իր հերոսական անցեալը, ստուեր մը ձգեց իր փառքի օրերու պատմութեան էջերուն: Մեղադրեցին թերեւս եւ ըսին, թէ Ձէյթուն պէտք էր ապստամբէր, ինչպէս Շապին-Գարահիսարը, Վանը, Ուրֆան, Սուէտիան: Մեր այս աշխատանքի ընթացքին, նախորդ էջերուն մէջ, անցուդարձերը ներկայացուցած ատեն, երբ պարագան հարկադրեց մեզ, երբեմն մէջ ընդ մէջ եւ միայն հպանցիկ կերպով խօսեցանք այդ մասին:

Սակայն այստեղ, այս գլուխով, առանձին առած կացութիւնը եւ պատմութենէն բոլորովին անջատ եւ առանց ենթակայական ըլլալու, այլ անաչառ կերպով, առարկայօրէն վերցուցած իրերը, պիտի ըսենք եւ հաստատենք թէ՝ բոլորովին տարբեր էր Ձէյթունի պարագան:

1. Նախ որ՝ Ձէյթուն ո'չ ծովեզերք էր, ոչ ալ նաւահանգիստի մը մօտ էր, իսկ ուսական սահմանի վրայ ալ չէր: Ձէնք եւ ռազմամթերք գրեթէ չունէր, դարնան եղանակին էր եւ իր կենսամթերքը, մեղուան դրած պարէնը, պաշարը սպառելու վրայ էր:

2. Ամենէն առաջ Ձէյթունէն կը սկսէր բռնագաղթը՝ ուրիշ հայ վաքի մէջ նման նախընթաց մը չկար եւ Ձէյթուն նման շարժումէ մը թուր չունէր: Այո, ժամանակին անհատներ եւ մի քանի ընտանիքներ ալ աքսորուած էին Հալէպ, Պոլիս եւ այլուր: Եւ կարճ ժամանակէն

վերադարձած էին: Ձեյթունցին բնականաբար պիտի խորհէր թէ՛ այս անգամ ալ ատանկ կ'ըլլայ: Ես այդ ընդհանուր տարազրութեան ընթացքին, անձնապէս կը յիշեմ, թէ շատ մը քաղաքներու հայութիւնը, իրենց տարազրութեան կէս ճամբաներուն, վերադարձի չուկներէն, զրոյցներէ տարուած, օրօրուեցան, եւ օրէ օր նման բարի լուրի մը սպասեցին: Ոմանք ալ, Տէր-Ջօրի, Համայի, Դամասկոսի մէջ իրարու աչք լուսեցին թէ՛ հրաման եկեր է հայրենիք դառնալու: Հայութեան համար, այս անգամ եղածը, այս ընդհանուր բռնադաղթը անսխալաբան էր: Ինչ կ'ուզեն թող ըսեն բոլոր ուշացած մարդարէներն եւ քննադատող կանխաձայն քաղաքագէտները: Իրերը պէտք է առնել այն օրերու լոյսին տակ:

3. Ձեյթուն նշանակուած էր զինուորահաւաքման կեդրոն - շէօպէ-արձանագրութեան վայր որոշած էր թուրք կառավարութիւնը Ձեյթունի զօրանոցը: Ու Ձեյթունի մէջ ոեւէ իջեւան կամ պանդոկ գոյութիւն չուներ, դուրսէն, Ձեյթունի անմիջական շրջանակներէն եւ իր վիճակին պատկանող նոյնիսկ հեռաւոր շրջաններէն եկած թուրք զինուորացուները Ձեյթուն իջնելու եւ արձանագրութեան համար, օրեր եւ շաբաթներ մնալու են հոն: Եւ թուրք կառավարութիւնը զանոնք, որպէս հիւրեր կը տեղաւորէր զեյթունցիներուն տուները, պարագայ մը, որուն համար չէր կարելի առարկել, որովհետեւ զեյթունցիներուն եւ կառավարութեան միջեւ յարաբերութիւնները բարեկամական էին: Սակայն այս կարգադրութիւնը տեսակ մը տկարացում կը յառաջացնէր Ձեյթունի մէջ, բարոյական ուժի, հոգեկան կորուսի վնաս մըն էր այս: Ուրեմն տակաւին խաղաղ օրերուն սկսած էին վիտալ Ձեյթունի մէջ թուրք զինուորացուներ, սպասելով արձանագրուելու:

4. Ձեյթունցի զինուորները, մեծագոյն մասով, օրինապահ ընթացք ունեցած եւ առաջին կոչին ներկայացած էին (Ախզ ասքէր շէօպէյի) զինուորական արձանագրութեան ճիւղը եւ զինուորագրուելով զրկուած էին բանակ, որպէս հպատակ քաղաքացիներ: Այստեղ կը յիշենք էրզրումի մէջ Դաշնակցութեան Պատգամաւորական Ժողովի որոշումները, հայ Ժողովուրդի զինուորութեան մասին: Արեւմտահայը, որպէս օրինապահ քաղաքացիներ պէտք էր զինուոր տար: Իսկ այս պարագային անկախ կար նաեւ Ձեյթունի շրջակայ թուրք գիւղերու եւ քաղաքներու, Մարաշի, Ալպիստանի, Կէօկսիւնի թուրքութեան բողոքը թէ՛ եթէ Ձեյթուն զինուոր չտայ, մենք ալ մեր զինուորացուները չենք տար: Այս մասին մինչեւ Կ. Պոլիս աղբսագիրով դիմում կատարած էին, ըսելով թէ մեր կիներն ու աղջիկները վտանգուած կը տեսնենք, քանի զեյթունցիները զինուոր չեն երթար եւ քանի անոնց ունեցած գէնքերը չեն հաւաքուիր: Ասիկա կրնայ եւ իրենց թելադրուած ըլլալ

նոյնիսկ կառավարութենէն, կրնայ նաեւ եւ ինքնաբերաբար եղած ըլլալ թուրք գիւղացիներէն, բայց ինչպէս որ ալ եղած ըլլար, իրականութենէն բան չէր փոխուեր:

5. Մեծի, բռնութեան եւ խստութիւններու տակ, գէնքերը հաւաքուած էին, տեղական կայքքարով հրացաններ եւ աննշան քանակութեամբ պատերազմական գէնքեր (մէկնոց, մարթին-հրացան եւ քանի մը հինգնոց մաուզէր): Եղած չեղածը այդ էր զեյթունցիներուն ունեցած գէնքերուն: Առաջին կարաւանին Ձեյթունէն հանեցին, հեռացուցին մեծերը, ազդեցիկները, ղեկավարները, Մարաշ տարին բանտարկեցին: Նազարէթ Զաուլը, Մարաշի մէջ սպաննեցին անլուր տանջանքներու տակ: Ժողովուրդին բարոյական ուժը անգամ մը եւս կը խորտակուէր: Բայց կառավարութիւնը շատ փափուկ, քաղաքավար կերպով կը վարուէր հասարակ Ժողովուրդին հետ, խաբեպատիր խոստումներով եւ նենգութիւններով կը յուսադէր հանդարտ սպասող Ժողովուրդը, թէ ձեզի բան չկայ: Կառավարութիւնը միայն ըմբոստները կ'ուզէ, վնասակար տարրերը կը պահանջէ, դուք միայն գէնքերը տուէք, զինուորացուները տուէք:

6. Կային վեհափառ Հայրապետին եւ Պոլսոյ Պատրիարքութեան հազանդութեան հրահանգները, նամակները, հեռագիրները, Կիլիկիոյ ամբողջ հայութեան կեանքի ապահովութիւնովը մտահոգուած եւ թուրք կառավարութեան եւ Ճէմալ Փաշայի խոստումները Կիլիկիոյ վեհափառ Կաթողիկոսին, թէ Ձեյթունի խաղաղ Ժողովուրդին բան չկայ: Ու նոյնը կը հաղորդէ վեհափառ զեյթունցիներուն:

7. Մարաշէն զրկուած կարգ մը երեւելի հայերու յորդորները կու գային աւելնալու վերոյիշեալ պատճառներուն վրայ: Անոնք կը զգացնէին թէ՛ Ձեյթունի ապստամբութիւնը կրնայ պատճառ դառնալ Կիլիկիոյ մէջ հայկական ընդհանուր ջարդի մը:

8. Թուրք գիւղերէն եկած թուրք զինուորացուները հայ տունները տեղաւորուելէ յետոյ, կառավարութիւնը քաղաքին կարեւոր անցքերուն վրայ կեդրոնացուցած էր իր ուժերը եւ կը հսկէր պատրաստ:

Ու այս տրուած պայմաններուն տակ ապստամբի, հսկայ բանակներու դիմադրել, որովհետեւ Թուրքիա ընդհանուր զօրաշարժ յայտարարեր էր եւ տակաւին պատերազմի մտած չէր, - շատ յախուռն, անմիտ բան մը պիտի ըլլար: Հնազանդութեան մէջ յոյս կար ապրելու, իսկ ապստամբութեան մէջ ոչ մէկ յոյս: Տեղի ունենալիքը յուսահատական կոխ մը եղած պիտի ըլլար, եւ իսպառ բնաջնջումը անխուսափելի էր: Ոչ միայն զեյթունցիներ, այլ ամբողջ հայութիւնը լրիւ տեղեակ չէր ամբողջ հայութիւնը տեղահանելով բնաջնջելու թրջական ծրագրին: Պոլս գտնուող մեր մտաւորական ընտրանին, մեր հայ երեսփոխաններն

անգամ, Զոհրապը, Վարդգէսը եւ ուրիշներ, իրենց մտքէն չանցուցին նման հաւանականութիւն մը:

Համաթուրանական ծրագրին եւ այդ ուղղութեամբ ժամանակին տրուած գաղտնի որոշման մասին ոչ ոք ոչինչ գիտէր: Զէյթուն, շատ շատ նման հաւանականութիւն մը կրնար իր մտքէն անցընել մի միայն իրեն հաշտին, եւ ո՛չ թէ ամբողջ հայութիւնը բնաջնջելու մասին: Կարգ մը ժամանակավրէպ իմաստուններ ըսէին թերեւ թէ Զէյթուն պէտք էր սպասէր եւ Թուրքիա պատերազմի մտնելէ ետքը պէտք էր որ ապստամբէր: Սակայն մինչ այդ արդեօք Թուրքիա հանգիստ պիտի թողո՞ւր Զէյթունը, ոեւէ մարդ պիտի ձգէ՞ր այն տեղ, ինչպէս որ չթողուց եւ տեղահանեց նոյնիսկ հանդարտ կեցող այլ տեղերու հայութիւնը: Յետոյ, որքան ալ որ Թուրքիա պատերազմի մէջ մտած ըլլար, իրեն համար դժուար չէր, որ անմիջապէս հարկը հազարնոց բանակ մը, պատրաստուած արդիական զէնքերով, բերէր Զէյթունի վրայ, եւ կարճ ժամանակի մը մէջ ընկճէր զայն: Մինչդեռ այդ առաջին համաշխարհային պատերազմը չորս տարի տեւեց: Թուրք կառավարութիւնը, նոյնիսկ առանց կռիւի, այլ սոսկ ամենէն շատը եթէ վեց ամիս միայն պաշարման տակ առնէր Զէյթունը, անսուսկ կը փճանար, որովհետեւ իր գրեթէ ամբողջ պաշարը, պարէնը, արմատիքը, աղը դուրսէն կու գար:

Ուրիշներ ալ գինուորական փախստականները եւ կարգ մը լմբոստները կը գտնեն պատճառ Զէյթունի բնաջնջուելուն: Անտեղի եւ ինքնին մեղաւոր վերագրում մըն ալ ասոնցը: Որովհետեւ զէյթունցին ինչպէս ալ ընէր, ինչ դիրք որ ալ բռնէր, պիտի բնաջնջէր Թուրք կառավարութիւնը, որովհետեւ առիթը ներկայացած էր, եթէ ընաւ խկ պատճառ մը չըլլար, ինքը պիտի ստեղծէր պատրուակը եւ գործադրէր իր ծրագիրը: Զակատագրականօրէն անխուսափելի էր աղէտը

Եթէ զէյթունցի գինուորացու հայ տղաքը կը լքէին բանակը եւ կը փախչէին կու գային, պատճառն ան էր որ Թուրք գինուորական իշխանութիւնը սկսած էր կասկածով վերաբերուիլ քրիստոնեայ գինուորներուն հետ, խտրութիւն դնել Թուրք գինուորին եւ հայ գինուորին միջեւ, նեղել, գէշ տեղեր զրկել զէնքերը առնելով անոնցմէ, որպէս Ամէյէ թապուրը աշխատեցնել ճամբաները, անապատները, քար կոտրել տալով, ճամբայ չինել տալով, անօթի եւ թշուառ: Ու բնականաբար պիտի փախչէր հայ գինուորը, ինչպէս որ աւելի մեծ թիւով կը փախչէր Թուրք գինուորը: Ամբողջ Թուրքիա կը վիտար Թուրք գինուորական դասալիքներով եւ արձակագէտներով, փախստականներով: Գալով կարգ մը յեղափոխական լմբոստ մարտիկներու, անոնք գիտէին որ, հնազանդելով եւ յանձնուելով իրենց համար ըլլալիքը

նոյնն էր: Անարգանքով եւ չարչարանքով պիտի սպաննուէին, կախաղան բարձրացնելով կամ գնդակահարելով գիրենք: Ուրեմն լաւ էր չենթարկուիլ, կռուիլ, ի հարկին մեռնիլ լեռներուն վրայ: Միայն պէտք է ցաւի այն քանի մը հարիւր կտրիճներու, յեղափոխական լմբոստներու, որոնք մատնութիւններու, դաւադրութիւններու զոհ գացին եւ բռնուելով Մարաշ տարուեցան եւ հոն հրացանի բռնուեցան, ոմանք կախաղան հանուեցան եւ ուրիշներ ալ ողջ ողջ այրուեցան:

Վերապատուելի Տիգրան Անդրէասեան ալ, իր գրքոյկին մէջ, մեզի պէս մտածելով «Պատմութեան լոյսին տակ հարկադրուած ենք, կ'ըսէ, ընդունիլ թէ՛ Զէյթուն եւ բոլոր հայութիւնը, ինչ դիրք որ ալ բռնէր կառավարութեան նկատմամբ, հնազանդէր թէ ապստամբէր, հետեւեանք շատ տարբեր եւ աւելի նպաստաւոր պիտի չըլլար գրեթէ»: Օրինապահ ընթացքով աւելի հայեր վերապրեցան քան ապստամբելով: Պէտք պիտի ըլլար ապստամբիլ երբ ապրելու համար այլեւս ո՛չ մէկ յոյս կը մնար: Ու այս բոլոր պատճառներէն ետքը, եւ զանոնք նկատի չառնելով, տարիներ յետոյ ըսել թէ՛ պէտք է դիմադրէին (առնուազն տոնքիդոթութիւն է), ինչպէս որ ըսած է Վերապատուելի Անդրէասեան «Պատմութիւնը ետ կարդալ պիտի ըլլար»: Յետոյ ոմանք իրենց մտքէն անցուցին, թէ հայութիւնը ամբողջ եւ միաժամանակ ապստամբելու էր, որ Թուրքը դժուարութեան մատնուէր օտար մեծ պետութիւններէն - համաձայնականներէն - անոնք՝ Թուրքին թշնամի գաշակիցները՝ Անգլիա, Ֆրանսա, Իտալիա, Ռուսիա եւ ուրիշներ օգտուէին Թուրքին այդ ներքին տկարութենէն եւ կիլիկիոյ մէջ Թուրքին դէմ թշնամի ճակատ մըն ալ բացուէր այն ժամանակները: Անկարելի ցնորք մըն ալ այդ պիտի ըլլար, որովհետեւ ամբողջ հայութիւնը եւ անոր հետ նաեւ Զէյթունը, ինչպէ՞ս կարելի էր միաժամանակ եւ ամէն տեղ ապստամբէր անպատրաստ, անկազմակերպ վիճակով: Ոչ հաղորդակցութեան միջոց ունէր հաջ, ո՛չ պատրաստութիւն եւ ո՛չ ալ հայ ղեկավարութիւնը իր որոշումները ժողովուրդին պարտադրելու կարողութեան ոյժն ու կարողութիւնը: Նման ոյժ եւ հեղինակութիւն յատուկ է միայն պետութիւններու:

Հակառակ իրենց քաշած տառապանքներուն եւ տեսած դժոխային օրերուն, տեղահանուած քաղաքներու հայութենէն աւելի հայ ողջ մնաց, իսկ ապստամբներէն գրեթէ ոչ ոք կրցաւ ազատիլ, բացի անոնցմէ, որոնք այդ օրերուն կամ իրենց քաղաքը չէին եւ կամ հրաշքով մը, պատահմամբ, ծովէն օգնութիւն հասաւ իրենց եւ կամ ռուսական պարսկական սահմանը կրցան անցնիլ: Այստեղ յիշենք, սաղմոսերգուին այն մէկ խօսքը թէ՛ «Մարդու մը շնորհիւ ամբողջ քաղաք մը ազատեցաւ եւ այդ մարդուն անունը անծանօթ մնաց, ո՛չ

մէկ տեղ չլիշուեցաւ:

Այսպէս եղած էր Սուէտիոյ ազատութիւնն պարագան:

Թէպէտեւ մէկ օր ազատ ապրիլը, կռուիլը եւ կռուելով, մահը արհամարհելով թշնամիին դիմադրելով մեռնիլը աւելի կ'արժէ, ու պատմութեան մէջ փառաւոր էջ կ'արձանագրուի, սակայն քիչ մաւելի հայ ողջ մնալն ալ ո'չ նուազ կարեւոր եւ էական էր ապագային հայ դատին համար, որովհետեւ համրանքը, թիւը վերջի վերջոյ անհրաժեշտ է հայ ժողովուրդին հեռաւոր ծրագիրներուն համար: Ողջ մնալ՝ ապրիլ, սակայն օրինապահ եւ պատուաւոր հնազանդութեան մը, հպատակութեան մը պայմաններուն տակ, եւ ո'չ թէ ապրիլ ստրկօրէն, հանդուրժելով ամէն անարգանքի, նման պարագայի մը մահը շատ աւելի գեղեցիկ է քան ապրիլը:

1. Կառավարութեան ենթարկուիլ եւ գինուոր տալ, օրինական պահանջ էր, չէր կարելի առարկել:

2. Զէնքերը պահանջել, նոյնպէս իրաւունքն է ոեւէ պետութեան մը, որ իր ժողովուրդին քով գէնք չթողու, պայմանով որ սակայն թուրք կառավարութիւնը հաւաքէր նաեւ թուրք ժողովուրդին քով գէնքերը եւ վերստին չգինէր զայն: Խտիր չդնէր հայի եւ թուրքի միջեւ:

3. Հրոսակներու տեղերը իմացնել: Ասիկա, սակայն պատրուակ մըն էր, ինքը՝ կառավարութիւնը արդէն գիտէր եւ կրնար հետապնդել, զէյթունցիին այդ բանը յանձն չէր առներ, եւ հարկ ալ չկար, այդ ըմբոստները ոչ ոք իրաւունք ունէր ցոյց տալու եւ յանձնելու: Այս պահանջը սոսկ ձեւական իմաստ մը ունէր: Թուրք կառավարութիւնը կը սպասէր որ ընթացք չտրուէր իր պահանջին եւ խնդիր հանէր, եւ բոլոր ժողովուրդը որպէս ըմբոստ ներկայացնելով Զէյթունը թրեղանօթի բռնէր: Սակայն խաղաղ ժողովուրդը կը պատասխանէր այդ վերջին պահանջին հետեւեալ կերպով. «Կառավարութեան ձեռքը երկար է, եւ կարող է ինքը նուաճել իր այդ ըմբոստ կոչածները»:

Եւ ըմբոստները շատ լաւ ըրին որ չյանձնուեցան եւ ինկան վանքի կոիւին, Ֆնտըճագի ընդհարումին եւ այլ զանազան բախումներու մէջ, լեռներուն վրայ, իսկ խաղաղ ժողովուրդը, յանցանք չունեցող հետեւեցաւ իր առողջ բնագոյին եւ բռնեց տարագրի ճամբան ու թէ եւ իրմէ շատ քիչերը վերապրեցան, սակայն վերապրողները շահ մըն են այսօր հայութեան:

ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ՎԵՐԱՊՐՈՂ ԶԷՅԹՈՒՆՑԻՆԵՐՈՒ ՎԵՐԱԴԱՐՁ ԶԷՅԹՈՒՆ

1914-1918-ի համաշխարհային պատերազմին, հայկական բռնագաղթին, առաջին անգամ կը տարագրուի Զէյթունը իր չրջակայ հայ գիւղերու բնակչութեամբը, որուն 5000-է աւելին փճացաւ անապատներու տարածքին, այդ չորս-հինգ տարիներու ընթացքին ջարդուելով թուրք կառավարութեան կարգադրութեամբ թուրք ժողովուրդին, ոստիկաններուն, վարձկան չէչէններու եւ ուրիշ տարրերու ձեռքով Տէր զօրի, Սիւլարի, Շէտտատիէի, Պուսէյրայի, Բաս իւլ Այնի, Անէի, Շամաթայի անապատներուն մէջ: Զարդէն պատահաբար վրիպուածներէն շատերն ալ մեռան թշուառութեան, անօթութեան, յոգնութեան եւ ամէն տեսակի հալածանքներու եւ տառապանքներու ալիւս դիմանալ չկրնալով: Զէյթուն, ուրիշ դժուարութիւն մը ունէր, ինքզինքը չկարենալ ծածկելու որպէս զէյթունցի, անոր հագուստ, կապուստը, տարազը եւ լիզուն կը յայտնէր, կը մատնէր գինքը: Զէյթունցիին մեծ մասով նախ որ թուրքերէն խօսիլ չէր գիտեր, հազիւ այրերն էին, որոնք կրնային խօսիլ թրքերէն, եւ այն ալ զէյթունցիի յատուկ շեշտով մը եւ հնչումով մը (զէյթունցիին օտար կամ թուրք լիզուն ալ պիտի հնչէր առանց ր-ի. օրինակ պիտի ըսէր «նէյէ կէտիոյսըն», փոխանակ լսելու «ներիէ կէտէյոսըն»): Մէկ երկու բառ ասանկ, բաւական էր որ մատնէր իր զէյթունցի ըլլալը, եւ որովհետեւ Զէյթուն դարերէ ի վեր թուրք պետութեան եւ ժողովուրդին մօտ շատ գէշ եւ վտանգաւոր նկատուած էր, տրուած ըլլալով որ իւրաքանչիւր քաղաքի թրքութեան անցնային, անպայման իր զոհը ունեցած էր Զէյթունի դարաւոր պատերազմներուն մէջ, բնականաբար յայտնուելու որպէս զէյթունցի գիտցուելու պարագային ոեւէ անհատ կամ հաւաքականութիւն, պիտի ենթարկուէր բացառաբար ամենէն գէշ վերաբերումին եւ հալածանքին: Ու այս պատճառներով անոր վիճակեցաւ ճակատագրի ամենէն սոսկալին, ու գինադադարին, պատերազմը վերջանալուն, շատ քիչ զէյթունցիներ միայն ողջ մնացին: Ան կոտորուեցաւ նախ որպէս զէյթունցի եւ յետոյ որպէս հայ: Զէյթունի մօտիկ Ֆնտըգի, Կիւնիկի, Ղուզու Տէփէի, Զարտախի չէչէններ բերած էր թուրք կառավարութիւնը օրավարձով ու անոնց ձեռքով ջարդել տուած էր զէյթունցիները: Բաս էլ Այն եւ Շէտտատիէ: Զարդէն հրաշքով ազատուած մէկ երկու զէյթունցիներ, այդ չէչէններէն շատերը ճանցած էին: Պատերազմի վերջին տարին, երբ ալիւս ջարդն ու հալածանքը

դադրեցուցած էր թուրքը, եւ կը պատրաստուէր այլեւս որպէս պարտուած՝ նահանջի ճամբան բռնելու, այդ ժամանակէն հագիւ ա- միս մը առաջ, Զէյթունի կողմերէն բռնած խումը մը գէյթունցի տղամարդեր եւ կիներ տաժանելի ճամբորդութիւնով մը Հալէպի բանտը բերուելէ ետքը՝ մահուամբ պատժուած էին: Ասիկա տեղի կ'ունենայ 1918 Օգոստոսին: Հրամանը կ'ըլլայ առանց հարցաքննութեան եւ անմիջական, հերիք է որ գէյթունցիներ էին անոնք:

1918 Հոկտեմբեր 25-ին համաձայնական բանակները կը մտնեն Հալէպ: Ու ահա, ինչպէս բոլոր ողջ մնացած, վերապրող հայերը նոյնպէս ազատուած փոքր թիւով գէյթունցիներ, սկսած Պաղեստինէն, Քէրէքէն, Ամաննէն, Դամասկոսի մօտ ու հեռու շրջաններէն, Քէրէքէն, Մուսուլէն կու գան Հալէպ, որ մը երկու հագիւ կը մնան մեծ գորանոցը ու ահա, երբ դաշնակից ուժերը կը գրաւեն Մարաշը, գէյթունցիք, հակառակ սպասելու յորդորներուն, Հայրենիքի կարօտը այնքան մեծ է իրենց մէջ, որ օր առաջ կ'ուզեն ճամբայ ելլել: Անգլիական զինուորական իշխանութիւնը մի՛ երթաք, կ'ըսէ, տակաւին Զէյթունը գրաւուած չէ, այնտեղ դեռ թուրքեր կան: Սակայն գէյթունցիին համար կը բաւէ որ թուրքը պարտուած է, դաշ- նակից համաձայնականները յաղթական են, անոնց բանակները հառած են կիլիկիա, Ատանա, Այնթապ, Մարաշ: Ու ճամբայ կ'ելլեն գէյ- թունցիք մեծ խանդավառութեամբ, 1918-ի Օգոստոսի սկիզբը: Չէ՞ որ անգլիացին, Ֆրանսացին՝ մեր յաղթական դաշնակիցները՝ համաձայն Արարալի հերոսամարտէն առաջ եւ վերջը, զօրավար Ալէմպիի, Ծորճ Փիլոսի, Պրէմոնի եւ ուրիշ պետական ղեմքերու յայտարարութեան, ուրեմն հայը կատարեալ իր իրաւունքին մէջ էր վերադառնալու իր երկիրը: Սակայն անգլիական եւ Ֆրանսական դիւանագիտական խա- ղերը, հակամարտութիւնները գէյթունցիին ծանօթ չէին: Մենդավալիի սէրն ու կարօտը, խանդավառած էր ամէն հայ որոնց կարգին նսեւ գէյթունցին, ալ երկար բարակ մտածելու, տնտնալու ինչ հարկ կար: Անոնց զինուորական իշխանութիւնները թերեւս իրենք ալ չէին գի- տեր թէ պարտուած թուրքիան, շատ չանցած, համաձայնականներու օգնութեամբ, թելադրութիւնովը պիտի կենդանանայ, ոտքի պիտի ել- լէ եւ փախչի գիրենք կիլիկիայէն: Անոնց որձեւէզ քաղաքականութիւնը պատճառ պիտի ըլլար որ Հաճընը տարի մը թուրքին դիմադրելէ ետքը անկէ պաշարուելով Զարդուի, Մարաշը հրդեհի պիտի տրուի եւ Ֆրանսական ուժերը, վերէն եկած հրամանով մը, ձմրան ձիւնին ու բուրբին պիտի լքեն Մարաշ հաւաքուած հայութիւնը եւ պիտի քաշ- ուին, պիտի պարպեն Մարաշը, այնպիսի աստն մը, երբ թուրքերը Մարաշի մէջ, յուսահատ օր մը կ'ապրէին, պիտի յանձնուէին, թուրք

հրոսակները բարոյալքուած էին: Պատմութեան մէջ չմոռցուելիք տը- խուր եւ անպատուաբեր նահանջ մըն էր այս եւ որուն զոհ գացին տասնեակ հազար մը մարաշցի եւ Մարաշ գտնուող ուրիշ հայեր: Ու թուրքը հարսնիքի մէջ էր: Ի վերջոյ, Այնթապը պիտի ձգուէր իր բախտին եւ օր մըն ալ Ատանան, ամբողջ կիլիկիան դարձեալ պիտի պարպուէր ու հայը պիտի ձեռք առնէր վերստին գաղթականի ցուպը ու պիտի հեռանար իր «Անցեալի կիլիկիայ»էն: Պիտի յաղթանակէր Քըրզընի, Դլոտ Ֆարէրի, Ֆրանքլին Պուլսոնի եւ Լոդիի քաղաքակա- նութիւնը: Զէյթունցին ու նսեւ ամբողջ հայութիւնը այս բաները միաբէն չէր անցըներ: Զէյթունցին կու գար նախ Մարաշ ու յետոյ կ'անցնէր իր ծննդավայրը՝ Զէյթուն: Զէյթուն աւերակ էր: Թշնամին հրդեհի տուած էր քաղաքը, բնակչութիւնը տեղահան ընելէ յետոյ: Հագիւ քառասուն տուներ կը մնային կիսափուլ վիճակի մէջ տակաւին կանգուն: Իսկ Զէյթունէն 20 վայրկեան վերը, արեւելքը, մէկ բար- ձունքին վրայ կար թուրք զօրանոցը, որ համիտեան շրջանին կա- ռուցուած էր ան եւ որուն ամբողջութեամբ եւ անառիկ դիրքովը թուրքիոյ մէջ քիչ կը գտնուէր ուրիշ զօրանոց: Պատերազմի տարի- ներուն ռումիլիցի թուրք պօշնագներ բերած էր թուրք կառավարութիւնը եւ բնակեցուցած Զէյթունի այդ տակաւին կանգուն մնացած տուններուն եւ Զէյթունի անմիջական շուրջը գտնուող պարտէզներուն մէջ: Ա- նոնք Զէյթունի բնակչութեան տեղահանութեան օրերուն իսկ արդէն բերուած էին Զէյթունի եւ առանց փոխերէնը գոնէ աժան կերպով վճարելու, ալ ձրիօրէն տէր եղած էին հայու գոյքերուն, ամանեղէն, առն կահ կարասի, աթերու հօտերը, եւ վերջէն ալ անոնց եւ Զէյ- թունի շրջակայ թուրք դիւլերուն՝ Հաճըլարի, Քէրթմէնի, Տէօնիւքնց, Հաճի Իպրահիմ ուշադր թուրքերուն միջեւ բաժնուած էին Զէյթունի այգիները՝ Խէպի, Խախմէ, Տէվիչի ձիւր, Անի ձիւր, Տափը ձիւր եւ միւս բոլոր այգեստանները եւ հարիւրներով արտերն ու մրգաստանները, պարտէզները: Երբ գէյթունցիք կը հասնէին Զէյթուն, այդ թուրքերը տակաւին բաւական ընտանիքներ հոն էին եւ մինչեւ զինադադարի օրերը մնացին անոնք: Շատեր արդէն հեռացած էին, եւ ոմանք կը դժկամակէին թողուլ իրենց ձրի տիրացած հողերը, այգիները: Սակայն կարելի ալ չէր այլեւս մնալ: Ու առանց այլեւայլի սկսան այդ մնա- ցածներն ալ խոյս տալ, հեռանալ Զէյթունէն, քանի գէյթունցիներ կու գային կը լեցուէին Զէյթուն: Իսկ շրջակայ բնիկ թրքութիւնը, Հաճի Իպրահիմ ուշադները եւ միւսները հեռանալով Զէյթունի այգի- ներէն եւ արտերէն սկսած էին շատեր բարեկամական վերաբերմունք մը ցոյց տալ եկող գէյթունցիներու հանդէպ, որպէս նախկին բարի դրացիներ: Թուրքիոյ պարտութիւնով անոնք բարոյալքուած էին եւ

կը վախճային թէ գէյթունցիներն պիտի վերյիշէր իրենց գործած չարիքները տարագրութեան ժամանակ, եւ վրէժխնդրութեան պահուած կրակը վերստին պիտի բորբոքէր վերապրող գէյթունցիներուն արեան մէջ: Պէտք էր կեղծել, սուտ բարեկամ, բարի դրացի ձեւանալ եւ քաղաքականութիւն ընել, քանի յաղթական դաշնակիցները կիլիկիա էին, Մարաշ կը գտնուէին:

1919 Մայիսէն մինչեւ Սեպտ. Զէյթուն հասնող վերապրող գէյթունցիներուն թիւը կը հասնի 1080-ի, որոնցմէ մօտաւորապէս միայն 500-ը այրեր էին, իսկ մնացած մեծամասնութիւնը կը բաղկանար կիլիկիայէ եւ մանուկներէ: Սուրիոյ, Իրաքի եւ այլ շրջաններէն ուշ մնացած գէյթունցիներ Հալէպ կը հասնէին եւ կ'երթային դաշտային կիլիկիա՝ Ատանա եւ կը սպասէին գարնան որ երթան Զէյթուն: Ու ձմեռը անցնելէն յետոյ մաս մաս անոնք ալ կ'երթան հայրենիք: Զէյթուն 1919-ին եւ 1920-ին, այսինքն երկու տարի կ'ապրի անկախ, ինքնիշխան կեանք մը ու ժողովուրդը դառնալով իր ստացուածքներուն, կը սկսի շէնցնել իր այգիները, մշակել իր հողերը:

ԶԷՅԹՈՒՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՆՊԱՍՏԻ ՅԱՆՁՆԱՆՈՒՄԻՒՆ ԱՅԾԸ

Ընդառաջելով ժողովուրդին փափաքին, ընդհանուր քուէարկութեամբ կ'ընտրուի եւ կը կազմուի Ազգ. միութիւն մը, վարելու համար տեղական գործերը: Ազգ. Միութիւնը կառավարութիւնն էր Զէյթունի, իսկ զինուորականութիւնն էր իր երիտասարդութիւնը: Այս, տեսակ մը ինքնօրէն, ինքնավար վիճակը առիթ կու տար որ հետզհետէ իրենց ծննդավայրը դան հաւաքուին ողջ մնացող բոլոր հայրենակիցները: Ազգ. միութեան ատենապետն էր՝ Արամ Զօրագեան, երկրորդ Ատենապետ՝ Յովհաննէս Սիմոնեան, Ատենադպիրներն էին Նազարէթ Զէյթունցեան եւ Վարդան Գասապեան, գանձապահն էր Ասատուր Կիւլանքեան եւ խորհրդական անդամներ էին Լեւոն Եզեկիէլեան, Եզեկիէլ Պարութեան, Լեւոն Նորաշխարհեան, Սեդրակ Մարկանեան, Պաղտատար Սալաթեան եւ Վարդավար Պալեան: Բիշ ժամանակ ետքը Պ. Սալաթեան գործով կը մեկնի Զէյթունէն եւ միութեան վրայ կ'աւելան նաեւ որպէս խորհրդականներ՝ Յարութիւն Եաղուպեան, Յարութիւն Գասապեան եւ Սեդրակ Զօրագեան: Արամ Զօրագեան, Յովհաննէս Սիմոնեան, Յարութիւն Եաղուպեան նահանջի երկար եւ դժուարին ոգորումներու ընթացքին, կ'իյնան հերոսաբար, Եզեկիէլ Պարութեան կը սպաննուի Զէյթունի մօտերը դարանակալ թշնամիէն, Վարդավար Պալեան թշնամիի ձեռքն անցնելով հրացանի կը բռնուի, Վարդան Գասապեան ցաւալի անհասկացողութիւնով մը Ֆոնուզի լեռը կը

սպաննուի իր նահանջող ընկերներէն մէկէն. Յարութիւն Գասապեան Մարաշ, կիրի հնոցի մէջ ուրիշ վեց ընկերներով, գիշեր մը, ողջ ողջ կ'այրին Մարաշի թուրքերուն կողմէ: Յարութիւն Գասապեանի հետ ողակիզուող գէյթունցիներն են՝ Խմանուէլ Պարութեան, Գէորգ Ղարեան, Գէորգ Զագրեան, Պրատիկ Զօրեան եւ ուրիշ մը: Հետզհետէ կու գան տակաւին դուրսը մնացած գէյթունցիներ եւ կը սկսին իրենց շինարարական աշխատանքներուն: Այդ ժամանակ, յաճախ Զէյթուն կու գան կ'այցելեն հինէն ծանօթ դրացի թուրք գիւղացիներ, կու գան նաեւ Ալպիստանէն եւ Մարաշէն: Ազգ. միութիւնը եւ ժողովուրդը անոնց հետ կը վերաբերէին սիրով: Այդպէս ալ կը յորդորէր Ազգային Միութիւնը ժողովուրդին, նկատի ունենալով վերաշինուելիք Զէյթունի շահը: Մանաւանդ որ գէյթունցիներ իր ցորենը, իր պաշարը այդ թուրք գիւղացիներէն պիտի հոգար: Պիտի երթար, գար, եւ յարաբերէր անոնց հետ: Բաւական ատեն տեւեց այս վիճակը: 1 Սեպտ. 1919-ին Հալէպէն Զէյթուն կու գար Պոլսոյ Ազգ. Խնամակալութեան լիազօր ներկայացուցիչը՝ Տարէնտէ-ալպիստանցի Տէք. Վարդան Թօփալեան, այլ անունով՝ Տոքթ. Վ. Քալբերունի եւ Հ.Բ.Լ.Միութեան ներկայացուցիչ՝ Ռուբէն Ենգաճեան: Անոնք Ազգային Խնամատարութեան եւ Հ.Բ.Լ.Միութեան կողմէ 500-ական Օսմ. հնչուն ոսկի տրամադրելով, Մարաշի մէջ եւ մասնակցութեամբ Մերձաւոր Արեւելքի Ամերիկեան Նպաստամատոցի եւ Անգլիական իշխանութեան, Զէյթունի համար նպաստի Ֆոնտ մը դոյացուցած եկած էին Զէյթուն բաժնելու համար այդ նպաստը: Այդ գումարէն իւրաքանչիւր գէյթունցի անհատի տրուեցաւ 125 Օսմ. ոսկեղրամ դահեկան, որպէս փոխառութիւն սակայն եւ երկու տարիէն ետ դարձնելու ստորագրուած ժուրհակներով: Այդ դրամը պիտի գործածուէր վերաշինութեան գործին եւ ժողովուրդին ապրուստին: Զէյթունցիներ եւ անմիջական շրջակայի գիւղացիները անձամբ կու գան կը ստորագրեն համապատասխան մուրհակը եւ կը ստանան իրենց բաժինը, իսկ հեռաւոր շրջաններու հայերուն բաժինները բաշխելու համար, Ամերիկեան Նպաստամատոցի միսիոնար՝ Մր. Լայմէն, որ Զէյթուն եկած էր անձամբ բաշխումի գործին հսկելու, ընկերակցութեամբ Հայ Ազգ. Խնամատարութեան բարոտղար Միհրան Հերարդեանի եւ Զէյթունի Ազգ. Միութեան Ատենապետ Նազարէթ Զէյթունցեանի, կ'այցելէ այդ հեռաւոր հայ գիւղերը եւ կը հսկէ բաշխումի գործին: Հոս տեղին է յիշել Տոքթ. Քալբերունիի մէկ շահեկան թելադրութիւնը Զէյթունի Ազգ. Միութեան: Տոքթորը նկատի ունենալով ապագայի դժուարութիւնները եւ օր մը թրեւս գէյթունցիներուն նահանջելու հաւանականութիւնը, ամէն բանէ առաջ կը թելադրէ որ՝ Անտուլ գետակին վրայի քանդուած

ՍԱԿԱՑՆ ԹՈՒՐԲ ԽՄՈՐՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՍԿՍԻՆ

Զէյթունի շրջակայ թուրք գիւղերու մէջ, սեւ ձեռքեր կը սկսին դիւային ծրագիրներ կազմել, այս վերապրող ափ մը զէյթունցիները ջարդել եւ կամ այս անգամ վերջնականապէս փախցնել իրենց բոյներէն: Զէյթուն կրկին տխուր անակնկալներու ժամանակներ կ'ապրէր: Թշնամին դարանակալ բորենիի մը նման կը սպասէր յարմար առիթին, ան ուշի ուշով կը հետեւէր յաղթական համաձայնականներու օրըստօրէ փոխուող եւ փոփոխելի քաղաքականութեան: Մարաշի Անգլ. զինուորական իշխանութիւնը պիտի հեռանար Մարաշէն եւ անոր պիտի յաջորդէր Ծրանսական զինուորական իշխանութիւն մը: Թուրքը մութին մէջ կ'աշխատէր: Զէյթունցիներէն թէեւ ոմանք որպէս լաւատեսներ, այլեւս ոեւէ վտանգ չէին տեսներ, սակայն կային իրատեսներ եւ ի մասնաւորի Ազգ. Միութիւնը, որ կը զգար մօտալուտ հաւանականութիւններ թուրքին հետ վերստին գործ ունենալու համար: Հոսը կու գար արդէն նման հաւանականութիւններուն ժողովուրդը իր հացէն կը կտրէ, իր անկարելին կ'ընէ, ապրուստին համար տրուած դրամին մնացածովը զէնք կը հայթայթէ: Շրջակայ գիւղերու հայութիւնը չի կրնար կենալ իր գիւղերը, իր հողերուն վրայ, Զէյթունէն ուղարկուած խումբի մը միջոցով կը յաջողին փախչելով ապաստանիլ Զէյթուն: Ասդին անդին թուրք խումբներ, թուրք հրոսակները հանգիստ չէին կենար: Մարաշ եւ թուրք գիւղերը ցորեն, արմտիք բերելու գացող զէյթունցի տղոցը ճամբաները կը սպասէին դարանակալ: Հոս հոն տեղի կ'ունենային սպաննութիւններ: Ու քէմալական քարոզչութիւնը առաջ կը տարուէր թուրք ազգայնամոլ գործիչներու ձեռքով: Մինչ զէյթունցիին սկսած էր արդէն իր խաղաղ աշխատանքին: Գիշերը ցերեկին խառնելով, ժրաջան մեղուներու պէս լծուած էր ծննդավայրը վերաջինելու գործին: Միտքն էր սակայն ինքնապաշտպանութեան խնդիրը, քանի որ հորիզոնին վրայ սկսած էին արդէն երեւնալ վտանգաւոր ամպեր: Գիտէր, կը զգար թէ օր մը նորէն պիտի պարտաւորուէր գործ ունենալ իր դարաւոր թշնամիին հետ: 1918 Օգոստոս 14-ին Զէյթունէն եօթը ժամ հեռու, Զուռուզ Մարաշ ճամբուն վրայ Գալգըրթ, Սու Չաթըլի մօտ, Բիրադ տէրէսի ըսուած տեղը, չարաչար կը սպաննուին ջորեպան՝ զէյթունցի տասնեւհինգ տարեկան Եզեկիէլ Պօյաճեանը եւ մարաշցի Աբրահամ Բէլպաշեան անուն հայը, դարանակալ քէմալականներու կողմէ խկ իրենց ընկերացող Ֆուռուզ հաստատուած Յակոբ Զուլումեան անուն երիտասարդը վիրաւոր վիճակի մէջ հազիւ կ'ազատի, ժայռէն վաթ

նետելով ինքզինքը: Անիկա կու գայ կը պատմէ եղելութիւնը: Սպաննուածները կը տարուին Մարաշ եւ Անգլիական զինուորական իշխանութեան կողմէ քննութեան կ'ենթարկուին անոնց դիակները:

Օգոստոսի վերջերը Մարաշի թուրք Միւթէսարըֆը հեռագրով կը տեղեկացնէ Զէյթունի Ազգ. Միութեան, թէ Անգլիական քաղաքական պաշտօնեայ, հարիւրապետ զինուորական մը կու գայ ձեր մօտ: Մէկ օր յետոյ ան արդէն Զէյթուն է: Անոր կը խօսուի օրուան կացութեան վրայ եւ տեղի ունեցած պաննութեանց, ինչպէս նաեւ նիւթուող դաւերու մասին Անգլ. զինուորական ուշադրութիւնը կը խնդրուի եւ միաժամանակ կը խնդրուի որ Զէյթունի շրջանը մաս մը անգլիացի զինուոր դրկուի եւ կամ ինքնապաշտպանութեան համար զէնք տրամադրուի Զէյթունի: Անգլիացի հարիւրապետը կը վստահեցնէ Ազգ. Միութիւնը թէ՛ անտեղի են ձեր մտահոգութիւնները եւ կրնան հանգիստ ապրիլ... Սակայն կացութիւնը հետզհետէ աւելի կը վատթարանայ: Մինչ անգլիացի այդ պաշտօնեան իր տիկնոջ հետ արդէն հեռացած էր Զէյթունէն եւ գացած Անատոլուի ներսերը:

ՅՐԱՆՍԱՅԻՔ ԿԸ ՄՏՆԵՆ ՍԱՐԱՇ, ԱԶԳԱՑՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԿԸ ՍԿՍԻ

1919 Հոկտ. 20-ին, Մարաշի Անգլ. զինուորական իշխանութեան կը թշնորդէր Ծրանս. զինուորական իշխանութիւնը: Զէյթունի Ազգ. Միութիւնը քանի մը օր վերջ ապրելութիւնները կ'ընդունի հարիւրապետ Ֆուրքէրի եւ տեղակալ Միւթթիէրի, որոնց կ'ընկերանային խումբ մը զինուորներ: Ազգ. Միութիւնը նոյն խնդիրները կը ներկայացնէ նաեւ այս վերջիններուն, եւ դարձան կը խնդրուի անմիջական խոստումներ շատ, սակայն ոչ մէկ արդիւնք եւ գործադրութիւն, ու զէյթունցիին կը մնայ ինքն իր գլխուն, այդ անբաղձալի եւ օրըստօրէ վտանգաւոր դարձող կացութեան մէջ: Այն իրիկունն իսկ, անշուշտ ոչ առանց նպատակի, Զէյթուն կը հասնի Զարտաղի գայմագամը՝ Խալի Շահապ, որ սուրիացի էր, եւ ժամանակ մը Կ. Պոլսոյ «էլ վաթան» թերթին խմբագրութիւնը վարած էր ու գիտէր նաեւ ֆրանսերէն (Նազարէթ Զէյթունցեան «Զէյթունի վերջին դէպքերը»): Զէյթունի գայմագամութիւնը վերցուած տարուած էր եօթը ժամ հեռու, հիւսիս արեւմուտք գտնուող չէրքէզ-մահմետական Զարտաղ գիւղը, իսկ Զէյթուն վերածուած էր միւսիւրիթեան (նահիյէ) եւ կոչուած «Ֆուռուզ միւսիւրիթիկի» անունով:

Ազգ. Միութիւնը բողոքած էր թէ՛ թուրք գիւղացիներ եւ մասնաւորաբար Տէօնիւքինց գիւղի թուրքերը, քէմալական գործիչներու թիւադրութիւններով եւ գրգռութիւններով վար ու ցանը կիսատ եւ

երեսի վրայ թողուցած, փախեր, հեռացեր են գիւղէն եւ ապաստանած ուրիշ թուրք գիւղ մը, հրոսակային գործունէութեանց սկսելու համար Զէյթունի դէմ: Գայմագամին Զէյթուն գալէն օր մը ետքը, իրեն, այսինքն գայմագամ խալիլ Շահապի հետ, ընկերակցութեամբ որպէս հիւր գտնուող երկու ֆրանսացի սպաներու, Ազգ. Միութեան մէկ քանի անդամներ կացութիւնը քննելու կ'երթան յիշեալ Տէօնիւքինց գիւղը, որ կը պատկանէր զէյթունցիներուն: Միութեան անդամները իրողութիւնը երբ կը ջանային հաստատել, ցոյց տալով գիւղի ամալի վիճակը եւ վարուցանքին երեսի վրայ թողուած ըլլալը, գայմագամ խալիլ Շահապ, որ լաւ ալ ֆրանսերէն գիտէր, ֆրանսացիներուն հետ խօսակցելով, զանոնք կը համոզէր, թէ ահաւասիկ գիւղը թուրքեր կան, ներկայացնելով երկու երեք թուրքեր, որոնք գիւղը մնացած էին, թերեւս որպէս անկարողներ, ծերեր կամ ուրիշ թաքուն նպատակով մը: Ֆրանսացի այդ զինուորականները տեղւոյն վրայ գայմագամին քով իսկ կ'ամբաստանեն զէյթունցիները, անիրաւ կը հանեն եւ «զրպարտիչներ էք դուք» կ'ըսեն, ամէն մարդ իր գործին վրայ է: Ու բողբոջ կը մնայ առանց հետեւանքի: Յաջորդ օրը, գայմագամ եւ ֆրանսացի զինուորականներ կը մեկնին Չարտաղ, քէմալական շարժումը կը սկսի ծայր տալ: Ալպիստանցի իթթիհատական, Ճէմիլ էֆ., որ տարագրութեան տարին Ֆոնուզի միւտիւր եղած էր եւ զէյթունցիներ գայն լաւ կը ճանչնային «խուլ միւտիւր» անունով եւ մարաշցի Օսման Չաւուշ, ժամանակին Ֆոնուզի եւ Զէյթունի ժանտարմա թաղըմ գօմանտան եղած էր եւ որոնք այն ատեն իրենց վալապարութիւններովը անուանի եղած էին, ասոնք սկսած էին գաղտնի աշխատանքի, պատրաստութեան, որպէսզի առիթը ներկայանալուն՝ անցնին գործի: Օսման, իր ստացած գաղտնի հրահանգներուն համաձայն, իր տասներկու համախոհներով, որպէս թէ կառավարութեան դէմ ըմբոստացողներ՝ լեռ կը բարձրանայ: Ներքին իրականութիւնը սակայն բոլորովին հակառակն էր: Կառավարութիւնը ինքը թելադրած էր, որ Օսման Չաւուշ կազմակերպէ հրոսակային (չէթէական) գործը թուրք գիւղերու մէջ: Թանրը թուրք գիւղը կը դառնայ կեդրոնը չէթէական կազմակերպութեան: Միւտիւրը իրենց այս աշխատանքները զէյթունցիներէն տակաւին ծածուկ պահելու համար, Օսման Չաւուշի հետ յարաբերուող Սեդրակ Չօլագեանէն կը խնդրէ որ երթայ Օսմանը համոզել որ վերադառնայ իր պաշտօնին: Սեդրակ կը մերժէ այդ բանը, որով որ հետեւ Ազգ. Միութիւնը ամէն ինչէ տեղեակ էր արդէն: Գիտէր որ այդ խնդրանքը կ'ընէր միւտիւրը, իր մօտիկութիւնը ցոյց տալու համար զէյթունցիներուն, սակայն կեղծ էր ան, եւ միւտիւրին նպատակն էր զէյթունցիները միամիտ պահել: Սակայն ան գիտցաւ որ զէյ-

թունցին հասկացած է իրենց ծրագիրը եւ ինքը այլեւս մտահոգ էր իր կեանքի մասին: Ու կ'ուզէր որ պատճառ մը ստեղծուէր եւ իր պաշտօնը այլուր փոխադրուէր: Հետեւաբար կը սկսէր խնդիրներ հանել, իրաւասութեան հարց յուզել, լսելով թէ քանի որ Զէյթունի Միութիւնը վարչական ամէն գործ ինքը կ'ընէ արդէն, ինչ հարկ կայ այստեղ միւտիւր պահելու: Սակայն իր բողբոջները կը մնային առանց հետեւանքի: Խորամանկ թուրք մըն էր ան, զէյթունցիներուն մտերիմ եւ զանոնք հոգացող բարեկամի մը պէս կը մօտենար շատ անգամ տեղեակ ըլլալու համար անոնց թիւին, նիւթական վիճակին, անոնց ուժին: Օր մը նոյնիսկ կառավարութեան մէկ պաշտօնական հրահանգը կը ներկայացնէ Ազգ. Միութեան եւ զէյթունցիներուն մէկ վերջին անուանացանկը կը պահանջէ, լսելով թէ, մէկ ամսուան համար պաշար պիտի տրուի այդ ցանկին նայելով: Ազգ. Միութիւնը կը հասկընայ եւ «լաւ, պատրաստենք եւ տանք» լսելով կը ձգձգէ: Ասոր վրայ, Ազգ. Միութիւնը մարդիկ կը դրկէ խոր ձորի ճամբան բռնելու համար Մարաշ դրկուած թուրք թղթատարը: Ահա մէջտեղ կ'ելլէ միւտիւրին գրութիւնը, ուր հետեւեալ տեղեկութիւնները կը հաղորդէ ան Մարաշի կառավարութեան. «Երեք հազարէն աւելի զէյթունցի ըմբոստութեան կը պատրաստուին, գիշերները հրաձանաձգութիւն տեղի կ'ունենայ կառավարատան առջեւ եւ փողոցներուն մէջ, զէյթունցին հազար հինգ հարիւրէն աւելի զէյթունցի, զինուած է գերմանական, ֆրանսական, անգլիական, թրքական եւ ռուսական զէյթերով, եւ ասոր համար պատշաճը տնօրինել... եւայլն»: (Ն. Զէյթունցեանի «Զէյթունի վերջին դէպքերը» էջ 24):

Ձմեռը մօտ էր. բնակավայրի նեղութիւն կար: Ազգ. Միութեան Ատենապետը՝ Արամ Չօլագեան տեսնելով, որ կառավարութեան գրաւած տունները իրենց տէրերուն վերադարձնելու համար եղած դիմումները արդիւնք չեն տար, կը հարկադրուի հեռագրատան միւտիւրին հետ անձամբ տեսնուելու, որովհետեւ չէնքին մէկ սենեակն ալ անոր ձեռքն էր, որպէս պաշտօնատաղի: Տեսակցութիւնը ստեղծեց ձգտուած կացութիւն զէյթունցիներու եւ թուրք պաշտօնէութեան միջեւ: Արամ Չօլագեան արդարօրէն խիստ կերպով կը խօսի միւտիւրին: Թուրք կառավարութեան գոյութիւնը ալ չէր կրնար հանդուրժել զէյթունցին, որովհետեւ գիտէր թէ, ան առիթի մը կը սպասէր, իր արիւնոտ ծրագիրը գործադրելու համար: Միւտիւրը եւ իր պաշտօնէութիւնն ալ գիտէին այս, եւ իրենց համար ալ Զէյթուն մնալը այլեւս անխելութիւն էր եւ արկածախնդրութիւն: Թուրքը կը սպասէր որ զաշնակիցները հեռանային եւ ինքը հաշիւը մաքրէր զէյթունցիներուն: Ֆրանսացին Մարաշ էր, Զէյթունէն մէկ օր անդին, առ այժմ սպա-

սել պէտք էր եւ գաղտնի պատրաստութիւն տեսնել, թուրք ժողովուրդին մէջ գրգռութիւններ յառաջացնել: Զէյթունցիին ալ գիտէր ըլլալիքը եւ ինքն ալ պէտք էր պատրաստուիլ, միջոցը գտնել Ատանա լուր դրկելու, հոն գտնուող Զէյթունցիներու Միութեան, Վեհափառ Սահակ Բ. Կաթողիկոսին եւ Ազգային Պատուիրակութեան յազօր ներկայացուցիչ Միհրան Տամատեանի:

ԱԶԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ՄԷՎ ԺՈՂՈՎԸ. ԹՈՒՐԲ ՄԻՒՏԻՒՐՆԵՐՈՒ ՀԵՌԱՆԱԼԸ

Ազգ. Միութիւնը բացառիկ ժողով կը գումարէ, կացութեան շուրջ խորհրդակցելու եւ կարելին ի գործ դնելու համար: Համաձայն ժողովի մէկ որոշման, կը ստիպեն հեռագրատան պաշտօնեան, որ Ատանա գտնուող Պ. Մ. Տամատեանը հեռագրական մեքենային գլուխը հրակիրէ: Ու ժողովը տակաւին չէր վերջացեր եւ կը սպասէին, սակայն հեռագրատան պաշտօնեան կ'իմացնէր, թէ տակաւին լուր մը չէ ստացած, մինչդեռ վերջէն Օսմանիէէն, տեղւոյն հեռագրատան տնօրէն, Հայրենակից Պ. Արամ Սալաթեանի, Ազգ. Միութեան ղրկած նամակէն կը պարզուի, որ Պ. Տամատեան, իր ատենին իսկ պատասխանած է Զէյթունի հեռագրատան թուրք պաշտօնեային, թէ նոյն օրն իսկ եւ ժամը քսանմէկին պատրաստ կ'ըլլայ մեքենային գլուխը, զէյթունցիները լսելու համար: Հետեւեալ օրը, արդէն կը հեռանար հեռագրատան միւտիւրը Զէյթունէն, տակաւին իր այդ վատութիւնը մէջտեղ չելած: Ասոր վրայ, միւտիւր ճէմիլ էֆ. եւս մօտակայ թուրք գիւղերը չրջան մը ընելու պատրուակով կը փախչի վերջնականապէս լքելով իր պաշտօնը:

Ազգ. Միութիւնը թէեւ գոհ է որ հեռացան անոնք, սակայն միւս կողմէ կը զգայ թէ կացութիւնը աւելի պիտի վատթարանայ:

Այդ օրերուն Ատանայէն Զէյթուն կու գան Հայրենակից եւ Անդրանիկի գունդերուն մէջ կուռած հարիւրապետ Յովնան Քէրիկեան եւ վերակազմեալ Հնչակեան Պետրոս Ախիկեան, այս վերջինը սակայն այդ տազնապալի օրերուն, երբ Զէյթուն արտաքին աշխարհէն ճար մը կը սպասէր, կը սկսի Հնչակեան կուսակցութեան քարոզչութիւն ընել, որուն հետեւանքն այն կ'ըլլայ, որ Ազգ. Միութեան ենթակայ միջկուսակցական մարմին մը կը կազմուի, կարծես թէ՝ Ազգ. Միութիւնը չէր բաւեր գործելու համար: Պրն. Ախիկեան 300 թրք. թղթադրամ մը կը յանձնէ այդ մարմնին, ինքնապաշտպանութեան պատրաստութեան համար: Այդ դրամը, նոյն մարմնոյ գանձապահը՝ Յովհաննէս Սիմոնեան հետն առնելով Մարաշ կ'երթայ գէնք եւ ռազմամթերք գնելու համար: Այնտեղ Տքթ. Քաջբերունի այդ 300 թղթադրամը կ'առնէ եւ 200 Օսմ. հնչուն ոսկի կու տայ, ըսելով թէ՝ Զէյթուն դարձին այդ դրամն ալ հետը կը բերէ: Սիմոնեան ութը մաուզեր հրացան եւ բաւականաչափ փամբուշտ կը գնէ այդ դրամներով, սակայն կարելի չ'ըլլար գէնքերը Զէյթուն հասցնել, միայն փամփուշտները կրնայ անցընել, որովհետեւ չափազանց խիստ հսկողութիւն եւ դուարութիւն կայ ճամբաները: Ազգ. Միութիւնը Մարաշի Ֆրանսական

իշխանութեան, Մարաշի Հայ Ազգային Միութեան եւ Յիսուսեան Միաբանութեան առանձին նամակներ կը դրկէ Վարդան Գասապեանի եւ Սարգիս Սանկիկեանի հետ եւ կացութիւնը, իրարու յաջորդող կարգ մը դէպքերը տեղեկացնելով, օգնութիւն կը խնդրէ։ Յրանաական գինուորական իշխանութիւնը, որպէս դարման, քանապէս մը գլխաւորութեամբ խումբ մը արճերիացի գինուոր կը դրկէ Զէյթուն, որոնք մէկ գիշեր Զէյթուն մնալէ յետոյ, կը վերադառնան Մարաշ։

ՆԱՄԱԿ ՊՐ. ՄԻՀՐԱՆ ՏԱՄԱՏԵԱՆԻ

Այդ ժամանակները, Զէյթունի Ազգ. Միութիւնը, Ատանա, Պ. Մ. Տամատեանի հետեւեալ նամակը կը դրկէ։ Մենք այդ գրութեան արտագրութիւնը շատ վերջէն եւ պատահաբար կը գտնենք, դարձեալ Զէյթունի մասին գրուած ուրիշ քանի մը նամակներու արտագրութիւններուն հետ, 1952 տարուան «Զարթօնք» օրաթերթի Նոյեմբեր ամսուան թիւերով, Պ. Միք. Նաթանեանի կողմէ երեւցած յօդուածաշարքին մէջ։ Պրն. Նաթանեան զանոնք ինչպէս որ նոյնութեամբ թերթին տուած է, արտագրելով Պ. Մ. Տամատեանի թղթածրարէն, մենք եւս, առանց որեւէ փոփոխութեան կը բերենք մեր այս գործին մէջ, ցոյց տալու համար անտարբերութիւնը, զորս ցոյց տուած են Զէյթունի այդ դժուարին օրերուն, տագնապալի ատենները ազատ գօտիի եւ արտասահմանի մէջ գտնուող Ազգ. իշխանութիւնները, Հ. Բ. Ը. Միութեան կեդրոնը եւ Փարիզի Ազգ. Պատուիրակութիւնը։ Նոյն անհոգութիւնը ցոյց տուին նաեւ Հաճընի, Շարի եւ այլ նման վայրերու հայերը։ Իսկ միւս նամակները, իրենց կարգին պիտի դնենք մեր էջերու ընթացքին, երբ առիթը ներկայանայ։

5 յուլիս, 1919

Մեծայարդ

Տիար Միհրան Տամատեան,

Ներկայացուցիչ Հայ Ազգ. Պատուիրակութեան

Ատանա

Ազնիւ Տիար,

«Ըստ մեր հրահանգին, աչքառու մէկ երկու կենսական շտապարեւոր դէպքեր յիշել կ'ուզենք։ Ինչպէս մեր տեսութեան պահուն յիշեցինք թէ՛ եղելութիւնները ինչ որ պիտի տեղեկագրէինք, ճշգրիտ եւ ոչ չափազանցեալ ըլլալուն, ստուգութիւն եւ իրականութիւն ըլլան։

«Յուլիս 27-ին, Ուրբաթ, տեղս հասանք։ Դեռ չհասած, Իսլահիէ խումբ մը հայ գաղթական ճամբորդներու հանդիպեցանք, որոնք Մարաշէն կու գային, - «Մէջ գոհացուցիչ եւ ո՛չ վստահելի քաղաքականութիւնը հանդէպ հայերուն շատ կսկծեցուցիչ է։ Հալածանքը, նախատինքը, շատ հասարակ բան է», - պատասխանը ստիպեց մեզ իսլահիէէն երկտողով մը ձեր հասցէին դրկել, որպէսզի անձամբ ունկնդրէք։ Յուսամ հանդիպեցաք եւ լսեցիք։

Յուլիս 1-ին, Հինգ պազարճըզցի թուրքեր, ժանտարմայի հսկողութեամբ, հարիւր մուստտալ մատուցէր-կառավարական հրացան գիւղերը փոխադրած պահուն, որ իր տեսակին մէջ առաջինը չէր, ցուցմունքի մը վրայ, հնդիկ գինուորի մը միջոցով ձերբակալուեցան։ Արդիւնք, այսքան զէնքերը անգլիական իշխանութեան միջոցով այլուր փոխադրուեցան։

«Յուլիս 5, Շաբաթ առտու, մարդ ինչ ըլլալը, ինչպէս ընելիքը չգիտցած եւ մտածած պահուն, երկու ժանտարմա, երկու երեք թուրք ընկերներով, մէկուն ցուցմունքին վրայ, 13 զէյթունցի՝ չորս երկար տարիներ հազիւ երկար տառապանքներէ վերջ, գինադադարէն ետք լեռնէն կ'իջնեն եւ կ'ուղուին դէպի Հալէպ, դէպի ազատարար բանակը, ճամբան էյօղլուի մօտ, դիտումնաւոր եւ մասնաւոր թուրք գինուորներու կողմէ կը պաշարուին, որովհետեւ գինադադարի առիթով քիչ մը համարձակուել են եղեր եւ կը խօսին պաշարողներուն թէ՛ գինադադար է։ Կոխը կը սկսի երկուստեք։ Մերիններուն տեղը ոչ նպաստաւոր, տասներկու ժամ գոյապայքարէ մը վերջ, միայն չորս հոգի, մէկը վիրաւոր, կ'ազատուին եւ կ'իյնան Հալէպ։ Վիրաւորն ալ ստացած վէրքէն չ'ազատուիր, կը մնան երեք հոգի։ Այս երեքէն մէկը իրրեւ թէ լեռը ապաստանած ըլլալու ամբաստանութեամբ ձերբակալեցին, մինչդեռ այս խումբին մնացածները եւ ուրիշ խումբի տղաք, արտօնուած են Անգլիական իշխանութեան կողմէ իրենց զէնքերը կրել։ Այսպէս ըլլալով մէկտեղ, այսօր այս վայրկեանին ձերբակալուելու վտանգին մէջ կը գտնուին։ Անձնատուր ըլլալ բնաւ չեն կրնար, զէնքի պիտի դիմեն։ Մեր, ըլլայ հոս, ըլլայ Զէյթուն կեանքը թուրքերուն չենք կրնար վստահիլ։ Վստահութիւն չկայ, մարդիկը մեզ փճացնելու ծրագիրը գիշեր ցերեկ կը դարձնեն։ Զէնքի պիտի դիմենք հազար հոգի։ Հասէք մեզ։ Վերջէն պատասխանատուութիւն չենք ընդունիր։ Հասէք մեզ։ Այս եղած նախատինքէն, անյուր չարաչարանքէն, արար աշխարհ թող լսէ, ազատեցէք մեզ։ Այսօր իսկ, դարձեալ, թուրքեր զէնք կը փոխադրեն գիւղերը, անգլիական իշխանութեանց լուր տրուեցաւ, ուրիշ ոչինչ։

«Զէյթունցիներ, հարիւր յիսուն հոգի, եւ չրջականներէն երեք հա-

րիւր յիսունի չափ գացին, բայց ո՛չ հսկողութիւն կայ, ոչ ալ գէնք ինքնապաշտպանութեան համար:

«Օսմանիէի կառավարիչը մերիններուն շատ պնդած է թէ՛ հիմա ստորագրութիւն տուէ՛ք, ձեզի հետ երկու երեք հարիւր Ֆրանսացի զինուոր տամ գացէ՛ք, բայց մեր մեծ փափաքը ազգին քաղաքականութիւնը հետապնդել է: Ազգին փափաքը ինչ որ է ան, այն ըլլար Անոր համար ձեր շատ շուտ հրահանգին կը սպասենք:

«Ձեր վերջին խօսքը մեզի համար մեծ կշիռ ունի: Հասէ՛ք մեզի, ազատեցէ՛ք մեզ այս նեղ կացութենէն:

Խեղճութիւնն եւ թշուառութիւնը մոռցանք, կեանքի շատ թանկ կեանքի մասին կը մտածենք: Տքթ. Քաջբերունի դեռ չեկաւ, կը սպասենք:

Սիրալիւր յարգանքներով

Ի դիմաց Ձէյթունի Գաղթ. Յանձնախումբի

Ատենադպիր

Նազարէթ Ձէյթունցեան

Ատենապետ

Արամ Զօլազեան

Այս նամակը իր բոլոր թոյլ, մութ եւ անհասկնալի կողմերով հանդերձ, ցոյց կու տայ թէ իրենց կացութիւնը շատ նեղ է, ապահովութիւն չկայ, վստահութիւն չկայ, գէնք չկայ, անձնատուր ալ չեն ըլլար թուրքին, օգնութիւն կը սպասեն, գէնք ղրկելով եւ կամ որեւէ կերպով, հաւանաբար նաեւ զիրենք ազատ դօտի անցընելու միջոց մը գտնելով: Օսմանիէի կառավարիչը (անշուշտ Ֆրանսացի ըլլալու է) թէպէտեւ իրենց պնդած է որ՝ ստորագրութիւն տան, եւ ինքը 300 Ֆրանսացի զինուոր տայ եւ երթան, սակայն իրենք չեն յօժարած, հետեւողական մնալու համար մեր ազգային քաղաքականութեան իրենց համար մեծ կշիռ ունի ազգին փափաքը եւ հրահանգը եւ անոր կը սպասեն, ըստ այնմ ուղղութիւն ճշդելու համար: Թէպէտեւ Պրն. Նաթանեան իր յօդուածով ցաւալի կը գտնէ որ Ձէյթունի մասին Տամատեանի ուղղուած այս կարեւոր տեղեկագիրը աւելի յստակ եւ հասկնալի չէ, սակայն մենք կը կարծենք թէ՛ կարեւորը կը հասկցուէր արդէն, այդքանը կը բաւէր, ինչպէս քիչ առաջ այդ նամակին տակ աւելցուցինք եւ ըսինք թէ այդ նամակը իր բոլոր մութ կողմերով հանդերձ, ցոյց տուած է կացութեան վտանգաւոր ըլլալը, օգնութիւն սպասելը եւ զէյթունցիներուն միայն Ազգ. Քաղաքականութեան հետեւողական մնալ ուղեւոր փափաքը: Այլ ինչ պիտի փնտենէք: Ու Նաթանեան անմիջապէս կ'աւելցնէ միաժամանակ թէ «ինչպէս կ'երեւի, մէկ կողմէն քեմալական հրոսակներուն սեղմումները եւ բուռն հետապնդումները եւ միւս կողմէ այդ օրերուն այդ շրջանները գրա-

ւող Անգլ. իշխանութիւնները իրենց անտարբեր կեցուածքովը գէշ կացութեան մը մատնած են բռնագաղթէն հազիւ նոր վերադարձած զէյթունցիները»: Այլ ինչ տեսակ նամակ եւ տեղեկագիր կը սպասէր Պ. Նաթանեան այդ տազնապալի օրերուն մէջ, երբ արդէն էականը հասկնալի է: Սակայն Պ. Նաթանեան կարծես թէ այդպիսով Ազգ. Պատուիրակութեան (անշուշտ ոչ յանձին Տամատեանի) այլ կեդրոնի անտարբեր վերաբերումը կ'ուզէ պարտել:

Իսկ վերոյիշեալ նամակէն յետոյ, 1 Սեպտ. 1919-ին, Հ. Բ. Ը. Միութեան ներկայացուցիչ Ռուբէն Էնզաճեան, Ձէյթունի մասին շահեկան տեղեկագիր մը յղած է Հ. Բ. Ը. Միութեան Գահիրէի Կեդր. Վարչութեան, որուն արդիւնքը անծանօթ մնացած է զէյթունցիներուն, ինչ որ պէտք է ըսել, որ անհետեւանք մնացած է:

Այս նամակին եւ անոր մասին մեր ըրած միջանկեալներէն յետոյ, կը վերսկսինք դէպքերու ընթացքին:

Վերոյիշեալ նամակին, որպէս յետ գրութիւն հետեւեալը կայ նաեւ. «Նամակիս մէջ, ձերբակալուիլը ծանուցուած երկու զէյթունցիները Անգլիական զինուորական իշխանութեանց միջնորդութեան վրայ ազատ արձակուեցան»:

ՕՍՄԱՆ ԶԱՒՈՒՇԻ ԾԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ. ԶԷԹՈՒՆՑԻ ՎԵՑ ԶՈՐԵՊԱՆՆԵՐՈՒ ՄՊԱՆՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՈՒՐԻՇ ԹԱՐԱԿԻՑ ԴԷՊՔԵՐ. ՆՈՐ ՄԻՒՏԻՐՆԵՐ ԿՈՒ ԳԱՆ ԶԷԹՈՒՆ

1919 Դեկտ. 19-ին, Յովհ. Սիմոնեան, իր հետն ունենալով Հ.Բ.Ը.Միութեան եւ Ամերիկեան Մերձ. Արեւելքի Նպաստամատոյցի կողմէ վեց ամսուան համար Ձէյթունի եւ չրջակայից որպէս չրջուն բօխչի նշանակուած Տքթ. Է. Էլմաճեանը, կը դառնայ Ձէյթուն: 24 Դեկտեմբերին, Մարաշ գացող Ձէյթունցի ջորեպաններ, վերադարձին, Իւսկիւթի կամուրջը՝ ձիւնի եղերքը, վեց հոգի՝ կը սպաննուին Օսման Զաւուչի եւ ընկերներուն կողմէ եւ կամուրջի ոստիկանութեան գործակցութեամբ: Շատ չանցած Օսման կը բարձրացուի Պաշ Զաւուչի աստիճանին, որպէս վարձատրութիւն իր շահատակութեան: Այստեղ կը յիշենք այդ սպաննուող ջորեպաններուն անունները.՝ Աւետիս Քիթիշեան, Գէորգ Մուճոզեան, Միհրան Աղապաշեան, Միսաք Մուճօղլեան, Միսաք Փարթամեան եւ Փանոս Պօտուվեան:

Այդ օրերուն, պէրթիզի հրոսակներ, ձիւնի եղերքը դէմը կ'երթն Փարթոս Պուտազեանի եւ Աւետիս Պոյամեանի, որոնց հետն էին երկու չէրքէզներ, որոնք բարեկամներ էին Աւետիս Պոյամեանի: Հրոսակները կը խուզարկեն զիրենք եւ Ֆրանսական գէնք մը եւ

քանի մը հարիւր փամփուշտ կը գրաւեն: Չէրքէզները երբ կը հասկնան հրոսակներուն այս երկու գէյթունցիները սպաննելու միտքը, կ'ընդդիմանան, ըսելով թէ սուղի պիտի նստի նման արարք մը, զէյթունցիներ աւելիով պիտի լուծեն ասոնց վրէժը: Հրոսակներ թող կու տան այդ երկու տղաքը, որոնք կը հասնին Չէյթուն:

Միւտիւրի փոխանորդ կը ղրկուի Չէյթուն, յիսնապետ մը՝ Ահմէտ Հիւմի անուն, քառասուն հեծեալ ոստիկան զինուորներով, որոնք նախ քան Չէյթուն հասնիլը, Ահմէտ Հիւմի ղրկած էր թուրք զիւղերը, թշնամին կազմակերպելու համար: Իսկ Չէյթուն հասնելէ յետոյ կը սկսի վարպետութեամբ, սուտ քաղաքավարութեամբ մը բարեկամ ձեւանալ զէյթունցիներուն, որպէսզի անոնք չկասկածին եւ անտեղեակ մնան դուրսը տարուած աշխատանքներէն եւ անցուղարձարէն: Սակայն Չէյթուն կը հասկնար թէ ինչ կ'անցնի կը դառնայ եւ ըստ այնմ կը վարուի իր հետը: Ու ինք եւս իր նախորդ միւտիւր ձէմիլ էֆ-ին պէս կը փախչի, քանի մը օր միայն մնալով Չէյթուն: Հակառակ Ազգ. Միութեան յորդորին թէ տակաւին ատենը չէ եւ կանուխ է սպաննուածներուն փոխ-վրէժը լուծելու համար, պէտք է սպասել, գտնուեցան տաք զլուխ քանի մը երիտասարդներ, որոնք անսաստելով վերէն եղած համբերութեան հրահանգին, իւնկիւթի կամուրջի մօտ սպաննուած վեց ջորեպաններուն վրէժը լուծեցին: Եւհիա անուն մէկը՝ Չարտաղի գայմազամութեան քարտուղարը, հակառակ իր կամքին, այս անգամ որպէս փոխ միւտիւր կը ղրկուի Չէյթուն, Ահմէտ Հիւմի տեղ: Փոխ միւտիւր Եւհիա, Չէյթուն եկած օրէն, յաճախ դիմում կ'ընէ, որ ինքը իր նախկին պաշտօնին վերադարձուի կառավարութեան կողմէ: Կարծես բնագոյով մը կը նախագար ի վերջոյ իր գլխուն գալիքը: Մինչ այդ Ազգ. Միութիւնը իր գործը կը շարունակէր ու կանոնաւոր յարաբերութեան մէջ էր Ֆռնուզի եւ այլ հայ զիւղերու հայութեան հետ եւ զանոնք տեղեակ կը պահէր օրէ օր փոխուող կացութեան մասին եւ փոխադարձաբար ինչպէս նաեւ պարբերաբար շրջուն խումբեր կ'այցելէին շրջաններ, գօտեպնդելու համար հայ զիւղացիները:

Այդ օրերուն, անակնկալ կերպով, իրիկուն մը Չէյթուն կու գայ կրկին Չարտաղի գայմազամը՝ Խալիլ Շահապ: Անոր հետն է ոստիկանութեան հարիւրապետ վատանուն Օսման Ազմին, որ տարագրութեան օրերուն չորածը չէր մնացած զէյթունցիներուն: Ան կու գար տառնեհինգ հեծեալ ոստիկաններով: Վերապրող զէյթունցիներ կը ճանախ այդ հրէշը ու կը գիտնան որ անիկա անպայման եկած է գէշ նպատակով մը: Ժողովուրդը կը խռնուի զօրանոցին բակը, գայմազամին առաջ բողոքի ցոյցով մը կը պահանջէ որ անմիջապէս հեռանայ Օս-

ման Ազմին իր ոստիկաններով, հակառակ պարագային անոր կեանքը վտանգի տակ է: Ու Օսման Ազմի, ճիւղաղը, առանց այլեւս կենալու, իր ոստիկաններով կը մեկնի իսկ հետեւեալ օրը կը մեկնի նաեւ Խալիլ Շահապ: Չէրքէզներուն հետ լաւ էին սակայն զէյթունցիներու յարաբերութիւնները: Անոնք յաճախ կու գային, Չէյթուն կը բերէին եւ կը ծախէին իրենց բերքերէն ցորեն, իւղ եւ այլ կենսամթերք եւ փոխարէնը կ'առնէին ռուպ, չամիչ:

Ձմեռ օր մըն է, 1920 Յունուար 10, Չէյթուն գտնուող թուրք կառավարութեան կողմէն հարկահաւաքը՝ Մանթըզա Թազըմ գոմանտանը՝ Մուստաֆա Չաուուշ իր ենթակայ ժանտարմաներով, զէյթունցիներէն գողտնի, կ'ուզեն փախչիլ Չարտաղ, Ջերմուկի ճամբով, որովհետեւ Չաւաարի անցքը ձիւնով փակուած եւ անանցանելի է: Ազգ. Միութիւնը տեսնելով որ անոնց փախուստին նպատակը խնդիր հանել եւ կացութիւնը վտանգելու համար է, Ազգ. Միութենէն Յովհաննէս Սիմոնեան խումբ մը տղաներով կը հասնի անոնց ետեւը եւ ետ կը բերէ, որովհետեւ որեւէ պատճառ չկար կառավարատունը լքելով փախչելու: Արգելքի եւ հսկողութեան տակ կ'առնուին անոնք, զէնքերն ալ կը գրաւուին: Ու նոյն գիշերը կրկին կը փախչին, սակայն միւտիւրը՝ Եւհիա էֆ- չի կրնար փախչիլ ու կը մնայ Չէյթուն:

ԿՈՒՉԷՕՂԻ ՀԱՅՈՒԹԵԱՆ ՋԱՐԴԸ, ՖՐՆՈՒՉՑԻՆԵՐՈՒ ԵՒ ԱՐԵՎԻՆՑԻՆԵՐՈՒ ՁԵՑՔՈՒՆ ԱՊԱՍՏԱՆԻԸ

Ֆռնուզէն Չէյթուն կու գան ֆռնուզցի կուչեօղ հայ զիւղէն Գր. Գարակէօզեան եւ բուն Ֆռնուզէն Մինաս Աղա Մարգարիկեան, հետերին քանի մը տղաք: Անոնք տեղեկութիւն կը բերեն Ֆռնուզի եւ չրակայից վիճակի մասին, կը յանձնուի իրենց Ամերիկեան Նպաստամատոյցէն իրենց բաժին ինկած 30 Օսմ. հնչուն ոսկին եւ կը տեղեկանան նաեւ Չէյթունի մէջ տիրող կացութեան ու կը վերադառնան Ֆռնուզ ստանալէ յետոյ Ազգ. Միութեան անհրաժեշտ հրահանգները:

Հազիւ քանի մը օր կ'անցնի, 24 Յունուար 1920-ին, երբ ձմեռը եւ ձիւնը պատեր է լիւռ ու դաշտ, գոցեր է ճամբաները, առտուն, ժամը 9-ին, Տաղտապախ Յարութիւն Աղբարը կը հասնի Չէյթուն շնառապառ եւ կը հաղորդէ կուչեօղի պաշարուած ըլլալը Տէօնկէյէ թուրք զիւղի ոստիկանական Մանդըզային եւ տէօնկէյցի թուրք խումբին կողմէ: Խաչեր Միքայէլեան-Յնիտիւնեանի եւ Եզեկիէլ Պարութեանի գլխաւորութեամբ խումբ մը տղաք անմիջապէս ճամբայ կ'ելլեն: Ձիւնը կանգունով լեցուցեր է ճամբաները եւ անցքերը՝ սակայն

պէտք է հասնիլ, կուչէօղը կը ջարդեն: Սակայն կը հասնին ճամբայ ելլող տասներկու տղաքը: Ոստիկանութիւն եւ թուրք խուժան ձեռք ձեռքի տուած, 60 հոգի, մանուկներ, կիներ եւ անգէն այրեր տարեր եւ ջարդեր են գիւղէն դուրս եւ այժմ կը շարունակեն տակաւին կողոպուտը: Զէյթունցիք կը հասնին, սակայն կուչէօղէն Զէյթուն 8 ժամ է, ու վերադարձը նոյնքան, մանաւանդ երբ ճամբաները ձիւնով ծածկուած են: Թշնամին 16-20 ժամուան մէջ արդէն կրնար բոլոր գիւղը տակն ու վրայ ընել եւ մէկ հատիկ հայ իսկ ողջ չթողուլ: Տղաքը կը սկսին կրակել թշնամիին վրայ, թուրքը խուճապահար կը փախչի: Շատեր անշուշտ կը գլորուին զէյթունցիներու գնդակներէն: Խաչեր Միքայէլեան կը վարնուի ոտքէն, սակայն ընկերները շարժած կը տանին Հին Գեղ⁷⁰ ֆունուզի մէկ հայ գիւղակի: Ի վերջոյ, շրջակայ հայ գիւղերու՝ Հին Գեղի, Գարաթուփի, Պուղուրենց եւ Թէյէմեյիքի ժողովուրդը կը բերուին Ֆունուզ: Իսկ անոնցմէ 120 հոգի՝ Զէյթուն: Այդ օրերուն կը ջարդեն Ենիճէ Գալէի հայութիւնը: Ենիճէ Գալէ Զէյթունէն 14 ժամ հեռու էր եւ կ'իյնար աւելի՝ Մարաշի մօտ: Կոկիսոնի եւ իր շուրջի՝ Տաշուլուզ, Քիրէճ, Կէօլ Փունար, Տէյիւմէն Տէրէի հայութիւնը, տեղւոյն հեռաւորութեան եւ ճամբաներուն դժուարութեան պատճառով կը մնան իրենց տեղերը: Հազիւ 8-10 հոգի կը փախչին եւ կը հասնին Զէյթուն: Իսկ մնացածները թուրք կառավարութիւնը Մուստաֆա Քեմալի, տեղահան կ'ընէ եւ կը զրկէ Ալպիստանի կողմերը:

Արեգինի հայութիւնն ալ 20 հոգի Զէյթուն կը բերուի Ազգ. Միութեան կողմէ, այն օրերուն երբ կը փոխադրուէին Ֆունուզ ապաստանածները: Արեգին, որուն մասին յաճախ խօսած ենք մեր նախորդ էջերուն մէջ, Զէյթունէն 6 ժամ հարաւ կը գտնուէր եւ կը բաղկանար 32 գիւղակներէ եւ ազարակներէ: Այդ գիւղերէն նշանաւոր եղած են Ալպօզանինք⁷¹, Սիւինք, Զիլինք, Վարդանինք, Գարաքութուլցաք:

ՔԵՄԱԼԱԿԱՆ ԾԱՐԺՈՒՄԸ ԿԸ ՏԱՐԱԾՈՒԻ. ԶՐԱՆՍԱԿԱՆ ԿԸ ՆԱՀԱՆՁԵՆ ՄԱՐԱԾԵՆ. ՄԻԻՏԻՈՒՐ ԵԱՀԻԱ ԷՖ. ԿԸ ՍՊԱՆՆՈՒԻ

1920-ի Յունուարի վերջերը թուրք հրոսակներու ըմբոստութիւնը ծայր կու տայ Փրանսական գինուորական իշխանութեան դէմ: Մարաշ քաղաքը եւ իր շրջակայքը արիւն կը հոսի, Փրանսական թնդանօթները կը գոռան, քաղաքը հրոյ ճարակ կը դառնայ: Թնդանօթի որոտները անընդհատ, կը հասնին մինչեւ Զէյթուն: 11 հազարէ ա-

ւելի հայեր թշնամիին կողմէ կը ջարդուին: Այնտեղ հայը եւ հայ կամաւորները քաջաբար կը կռուին, սակայն Փրանսացիին քաշուիլը առիթ կու տայ թուրքերուն, որ անխնայ կերպով ջարդեն անգէն ժողովուրդը:

Մարաշի այդ օրերուն, ու տակաւին նախ քան թնդանօթներուն խօսիլը, զէյթունցիին կանխատեսելով մօտաւորու վտանգը, գիւղերու հայութիւնը եւ ասդին անդին ցրուած, Զէյթուն բնակողներն իսկ կը հաւաքուին ու կու դան զօրանոց: Զէյթունի Ազգ. Միութիւնը 9 հոգինոց խումբ մը տղաներ Մարաշ կը զրկէ Յունուար 28-ին գաղտնի, լեռնային ճամբաներով: Եղանակը խիստ է, սաստիկ ձիւն ծմեռ, իսկ ճամբաները լեցուն են հրոսակներով: Մարաշը իր լայն շրջակայքով պաշարուած է Երեսուն հազարէ աւելի չէթէներով: Սակայն տղաքը կը հասնին եւ կը մտնեն Մարաշ, անոնք իրենց յանձնուած նամակները Զէյթունի Ազգ. Միութեան կողմէ, կը հասցնեն իրենց հասցէներուն, Յիսուսեան կրօնաւորներու պետին, Ամերիկեան Միսիոնարութեան եւ Մարաշի Ազգ. Միութեան: Այդ նամակներով Զէյթունի Ազգ. Միութիւնը կը պարզէր Զէյթունի կացութիւնը, կը շեշտէր գինուորական ոյժի ներկայութեան անհրաժեշտութիւնը եւ առնուազն գոնէ զէնք զրկէին իրենց, յարձակումի պարագային ինքնապաշտպանութեան գիւղերու համար:

Կռիւր կը շարունակուի սակայն Մարաշի մէջ առանց դադարի: Խումբի տղաքը կը մասնակցին կռիւին: Նախապէս Մարաշ գտնուող կամաւորներ յիսնապետ մշեցի Գէորգ, Զէյթունի Աւագկալ գիւղացի Յարութիւն, Ափախ եւ զէյթունցի Փանոս Ահարոնեան թուրք գինամթերքի վալլէն (տէփօ) Զէյթուն դառնալիք տղաներուն բերել կու տան 4 հրացան, 10 պոմպա եւ 9000-ի չափ փամփուշտ: Կը դառնային տղաք եւ իրենց տարած նամակներուն պատասխանները եւս կը բերէին Զէյթուն, Ազգ. Միութեան, անոնց եւ ոչ մէկէն սակայն ոեւէ տեսակի յոյս կար: Ընդհակառակը, Փրանսական ընդհ. հրամանատարը իր նամակով կը յայտնէր թէ դժբախտաբար պիտի չկրնար դժհացում տալ զէյթունցիներու խնդրանքին եւ կը խնդրէր որ ներփակ ծածկագիր նամակը, անոր կցուած քարտէսով մը Հաճընի վրայօք հասցնէին Փրանսական հրամանատարութեան: Մարաշ քաղաքի քարտէսն էր ան, երեք գոյներով, ցոյց տալու համար թուրքերուն գրաւած վայրերը, հայերուն գտնուած թաղերը եւ Փրանսացիներուն դիրքերը: Ամերիկեան Միսիոնարութեան նամակն ալ 20 Օսմ. հնչուն ոսկինոց փոխանակագիր մը կը պարունակէր, որը պիտի վճարուէր Միսիոնարութենէն: Քիրէճ գիւղէն երկու տղաք այդ նամակները կը հասցնեն Հաճըն: Տղաներէն մէկը Հաճընի կռիւներուն մէջ կը սպաննուի: Գա-

լով Մարաշի Ազգ. Միութեան, ան կազմալուծուած է եւ Ատենապետը՝ Պ. Արամ Պաղտիկեան կը խնդրէ, որ եթէ կարելի է հարիւրէն հարիւր յիսուն տղաք իրենց օգնութեան հասնին:

Թնդանօթի որոտը տակաւին կը հասնի Զէյթուն, Մարաշի մէջ կոխը կը շարունակուի: Զէյթունցիք մտահոգ օրեր կ'ապրին, մինչ եռագոյնը, զոր զէյթունցիք ներգաղթի օրերուն Դամասկոսէն բերած էին, կը ծածանի զօրանոցի ճակատը: Ամէն օր, ամէն վայրկեան կը սպասուի թշնամիի անակնկալ յարձակումին: Փետր. 10-ն է ու տակաւին Մարաշի մէջ կոխը կը շարունակուի կատաղի թափով մը:

Ազգ. Միութիւնը խորհրդակցական ժողովի մը մէջ կ'որոշէ յարձակիլ Զէյթունի անմիջական մօտերը գտնուող թուրք գիւղերուն վրայ եւ փախցնել զիրենք, որպէսզի ամէն օր անհանգիստ չընեն Զէյթունը իրենց լրտեսութիւնով: Սակայն վերջէն կը յետաձգեն նման քայլ մը առնելը, նոր բարդութիւններու առիթ չտալու համար: Ու լրաբեր խումբ մը եւս կը զրկեն կրկին Մարաշ, տեղւոյն կացութիւնը հասկընալու համար:

Այս խումբը, որ առաջնորդուած էր Թորոս Մարկանեանէ, Ալպտաղի կռնակը գտնուող Տամլաճըզ ըսուած անցքը կը պաշարուի 50 հոգինոց չէթէներու խումբէ մը: Զէյթունցի տղաքը 17 հոգի էին, որոնց միայն 12-ը զէնք ունէին: Թշնամի ոստիկան մը կը սպաննեն տղաքը ու ահա չէթէները կը փախչին: Փետր. 13-ին, խումբը կը վերադառնայ Զէյթուն:

— Զրանսացին լքեր է Մարաշը եւ մեկնել է. թուրք դրօշը զօրանոցին վրայ պարզուած է: Հայերու մէկ մասը Ֆրանսացիներուն ետեւը ինկած, փախած է: Մնացածները սարսափի ժամեր կ'ապրին: Զրանսացին հայերէն գաղտնի փախեր է, իրեն օգնութեան հասնի Ֆրանսական զօրասիւն մը, որպէս հետեւանքը քրտէնցի երկու սուրհանդակ տղոց Հաճըն հասցուցած թղթածրարին: Զրանսացին չէր ուզած հասկցնել իր փախուստը հայերուն: Օգնութեան հասնող զօրասիւնը կռնակէն հարուածելով թշնամին, կրցեր էր Մարաշի մէջ գտնուող Ֆրանսական ոյժը առնել տանի: Մարաշի հայերէն կաթողիկ եւ Օսմ. երեսփոխան Յակոբ Աղա Խրլազեան ճամբայ ելեր է Ֆրանսացիներուն ետեւը հասնելու համար: Մարաշի եզերքը թուրքերէն կը պաշարուի եւ կը սպաննուի թշնամին անոր գլուխը կը կտրէ, կը տանի Մարաշ եւ փողոցները կը պտըտցնէ: Զրանսացին անանկ տան մը Մարաշը կը լքէր, երբ թուրքը այլեւս յուսալքուած օր մը կ'ապրէր, ինչպէս նախապէս ալ յիշեցի նախորդ էջերուն մէջ տեղ մը: Թուրքը տեսնելով Մարաշ քաղաքին հրոյ ճարակ եւ քարոքանդ ըլլալը, զղջալով իր ըրածին, հանրագրութիւնով մը իր անձնատուր

ըլլալը կը յայտնէ, որուն սակայն Ֆրանսացի հրամանատարը կը պատասխանէ, թէ իրենք վաղը արդէն քաղաքը պիտի լքեն ու մեկնին:

Մարաշի վիճակի մասին այս յուսահատական տեղեկութիւնները պատճառ կ'ըլլան, որ Միւսուր Եահիան սպաննուի ժողովի անդամներէն Յովհաննէս Սիմոնեան, կարապետ Տէմիրճեան, Մանուկ Գալաֆեան, Յակոբ Աղա Խրլազեանի որպէս հատուցում, Զէյթունի մէջ բանտարկուած Միւսուր Եահիա էֆէնտին կը սպաննեն: Այս երեք տղաքը համաշխարհային պատերազմի չորս տարիներուն, Հայ Լեւոն, Քիւրտ Տաղրի, Ամանոսի եւ Օսմանիէի փապուղիի շրջանները թրջութեան սարսափն եղած էին:

Մարաշ բոցերու եւ ծուխերու մէջ էր երեք շաբաթներէ ի վեր: Մարաշի այդ վիճակը, Ֆրանսական ուժերուն քաշուիլը մտահոգել կու տար Զէյթունի Ազգ. Միութիւնը: Իր կացութիւնը կը դառնար աւելի դժուար եւ վտանգաւոր: Կը մտածէ սակայն ժամանակ շահելու համար խոհեմ եւ զգոյշ ընթացք մը ունենալ, այն յոյսով թէ այդ տագնապալի կացութիւնը կը մեղմանայ: Ան թէեւ իր կարելի միջոցներով կը պատրաստէ ժողովուրդը, սակայն չ'ուզեր նախադրեալ ըլլալ, համբերել ու պատասխանել այն ատեն միայն, երբ այլեւս դանակը ոսկորին հասնի եւ թշնամին ինքը ձեռնոցը նետէ: Պէտք է վերցնել այն ատեն արիւնոտ ձեռնոցը:

ԶԱՐՏԱՂԻ ԳԱՅՄԱԳԱՄ ԽԱԼԻԼ ՇԱՀԱՊԻ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

2 Մարտ 1920-ին, Խալիլ Շահապի կողմէ Զէյթուն կու գայ Տէօնիքինց գիւղէն թուրք մը, որպէս բանագնաց: Գաւազանի մը ծայրը ճերմակ կտուրի կտոր մը անցուցած կը մտնէ Զէյթունի սահմանը: Հետը կը բերէր գայմազամի մէկ գրութիւնը: Խալիլ Շահապ այդ գիրով կ'առաջարկէր որ Ազգ. Միութիւնը պատուիրակութիւն մը զրկէր Զերմուկ, վաղն իսկ, տեսակցութեան մը համար: Թուրք բանագնացը ճամբայ կը դրուի պատասխան գիրով մը, ուր կը յայտնուէր, թէ առաջարկը ընդունուած է: Ու Ազգ. Միութիւնը խառն ժողով մը կ'ունենայ: Այնտեղ կը դրուի թուրքերուն եւ զէյթունցիներուն խզուած յարաբերութիւնը նորոգելու հարցը, ինչպէս նաեւ զէնքերը եւ զօրանոցը յանձնելու հաւանական պահանջը: Խառն խորհրդակցական ժողովին մէջն է Զոնուգի աւերակ Ս. կարապետ վանքին ծերունազարդ վանահայրը՝ Բարթողիմէոս Հայր Սուրբը:

— Չըլլայ թէ զէնքերը յանձնելու ոեւէ առաջարկ ընդունիք, կ'ըսէ Հայր Սուրբը, որուն հետ արդէն թէ՛ Ազգ. Միութեան անդամները եւ թէ՛ միւս խորհրդակցանները համաձայն էին: Նման առաջարկ մը ընդունիլ, զէյթունցիին համար մահուան համարժէք խնդիր է: Ու ժողովը միաձայնութեամբ որոշեց ո'չ զէնք յանձնել եւ ո'չ ալ զօ-

րանոցը պարպել: Ինչպէս ուրիշ անգամներ, նման կարեւոր խնդիրներու համար Ազգ. Միութիւնը ուզած էր լսել ժողովուրդին կարծիքը: Ահա այս անգամ ալ փողի ձայնով կը կանչուէր զօրանոցին բակը եւ անոնց կը հաղորդուէր ժողովին որոշումը գէնքերու եւ զօրանոցի մասին, առնելու համար անոնց հաւանութիւնը: Ու ժողովուրդը բոլորովին համաձայն էր խառն ժողովի այդ որոշումներուն:

Հետեւեալ օրը, Ազգ. Միութեան կողմէ, Զերմուկ՝ որոշուած վարը կը ղրկուին ժողովի անդամներէն Ասատուր Կիւլվանքեան, Լեւոն Եղեկիէյեան, Յարութիւն Գասապեան, Եղեկիէյ Պարութեան եւ Սարգիս Սանկիկեան: Որեւէ անակնկալ կանխելու համար, քանի մը զինուած խումբեր գիշերանց, նախքան պատուիրակութեան ճամբայ ելլելը, կը ղրկուին Զերմուկի շրջականները:

Պատուիրակութիւնը կը հասնի որոշուած ժամադրապարտ Խալիլ Շահապ քանի մը յառաջաբան խօսքերէ յետոյ, գրութիւնով մը գէթ թուցիներէն կը պահանջէ. Ա. Զօրանոցին պարպումը, Բ. Զէնքերուն յանձնումը, Գ. Ժամանակին Զէյթունի զօրանոցը մեռած եւ զօրանոցի վարը, բլուրի մը վրայ թաղուած թուրք հրամանատար Թահսին Պէյին⁷² գերեզմանին նորոգութիւնը, Դ. Զինուորական Գապրըլզին վերաշինուիլը, եւ Ե. Զօրանոցին մէջ որպէս գերի պահուած հանձնարքի Հանը Աղային, իր ընտանիքին, երկու քիւրտ չափահաս աղջիկներուն եւ Միւսիւր Եահիա Էֆէնտիին ազատ արձակուիլը: Կարճ խորհրդակցութենէ մը յետոյ, պատուիրակութիւնը՝ մենք գէնք չունինք կըլէ, մեր տղոց ոմանց քով քանի մը մաուզէր հրացան կը գտնուի, որոնց թիւը 12-ը չ'անցնիր եւ որոնց գործածութիւնը արտօնուած է Հալէպի Անգլ. զինուորական իշխանութիւնէն: Գալով զօրանոցը պարպելու ձեռք պահանջին, շատ օրինաւոր պահանջ է, որովհետեւ ան չ'իյնուած է զօրքերու համար, բայց ուր բնակինք, կառավարութիւնը մեր բոլոր բնակարանները աւերակոյտի եւ մոխիրի վերածեց, վերաշինեցէք մեր տունները եւ պարպենք զօրանոցը: Հաճի Աղան իր ընտանիքովք, ինչպէս նաեւ իր երկու քիւրտ աղջիկները մեր մօտն են, շատ հանգիստ եւ գոհ մեզմէ, իսկ եթէ կը փափաքին երթալ, ազատ են: Հոս միջանկեալով մը ըսենք, որ չէինք կրնար զանոնք ազատ ձգել, որովհետեւ մեր գաղտնիքները, մեր անպատրաստ վիճակը, մեր տկարութիւնները գիտէին անոնք: Միւսիւր Եահիա Էֆէնտին վեց տղաներու հետ, շատոնց է որ Մարաշ ղրկեցինք: Անպայման մինչեւ հիմա հասած ըլլալու է: Գայմազամ Խալիլ Շահապ հասկցաւ թէ ինչ ըսել կ'ուզեն: Ի պատասխան Գայմազամի խիստ հարցումին՝ թէ Թահսին Պէյի գերեզմանին երկաթները ինչո՞ւ քակեցիք, անոնք մեր վանքին երկաթներն էին, դուք մեր սրբավայրը քանդեցիք, այրեցիք, երկաթները

տարիք, անոնցմով ձեր հրամանատարին գերեզմանը շինեցիք, մենք պարզապէս մեր վանքին երկաթները առինք տարինք: Ու երբ վերջին անգամ Խալիլ Շահապ կ'ըսէ թէ մեր սրբավայրը՝ զինուորական գերեզմանը (գապրըլզ) ինչո՞ւ պղծուել է, քաղաքակիրթ ժողովուրդները այդ վայրերուն յարգանքով կը նային, անեղծ կը պահեն ու ի հարկին կը հսկեն որ չքանդեն: — Հապա մեր հազարաւորներուն գերեզմաննոցը, եկեղեցիները ո՞վ պղծեց, քանդեց, այրեց, տեղերն անգամ անյայտ ըրին ձերինները, արդեօք քաղաքակիրթ ժողովուրդի գո՞րծ էր իրենց ըրածը:

Պատուիրակութիւնը այսպէս պատասխաններ էր Խալիլ Շահապի, որ նեղուած հեռացեր էր, իսկ մերինները վերադարձած զօրանոց: Անմիջապէս խորհրդակցական խառն ժողով մը կը գումարուի, այնտեղ պատգամաւորները վերոյիշեալ խնդիրներու մասին զեկուցում կ'ընեն ու ժողովը անոնց տուած պատասխաններուն իր կատարեալ հաւանութիւնը տալով, կ'որոշեն այլեւս աւելի քան երեք պատրաստ եւ արթուն ըլլալ, որովհետեւ անակնկալներ կրնան տեղի ունենալ:

Երկու օր յետոյ, գէյթունցի քանի մը ջորեպաններ Զերմուկի դաշտը գացած էին, Տէօնիքինց թուրք գիւղացիներէն յարդ բերելու, Պէյին թուրք գիւղէն թուրք հրոսակներու խումբ մը կը սկսի կրակել տղոց վրայ: Զորեպանները կը պատասխանեն: Թշնամին հինգ-վեց անգամն էր մերիններուն թիւին: Լուրը կը հասնի Զէյթուն, անմիջապէս օգնական ոյժ կը ղրկէ Ազգ. Միութիւնը: Կէս օր է, առաւօտէն մինչեւ այդ ատեն ընդհարումը կը շարունակուի: արեւը կը թեքուի, յետինք է: Զէյթունցիք կէս պաշարուած շղթայի մը մէջ կ'առնեն հրոսախումբը, անոնք խուճապահար կը փախչին: Ասիկա կ'ըլլայ ազդանշանը Զէյթունի եւ թուրքին միջեւ սկսուելիք պատերազմին: Խալիլ Շահապ արդէն վրէժնդրական ոգիով լեցուած, բարկացած բաժնուած էր գէյթունցի պատգամաւորներէն: Եւ սկսած էր տենդոտ գործունէութեան: Այդ օր, այս ընդհարումէն քիչ առաջ երեք հոգի-նոց թղթատար մը ճամբայ կը հանէ Ազգ. Միութիւնը: Թղթատար տղաք՝ Կարապետ Սաղաթիկեան, Պապա Ասմընեան եւ Նուրի Գրեան կ'երթային Ղարս-Պազար, տեղւոյն Հայ Ազգ. Միութեան, անկէ պիտի անցնէին Սիս, հետեւին զարձեալ նամակներ Ազգ. Միութեան, Վեափառ Սահակ Բ. Կաթողիկոսին, Սիսի Ծրանս. հրամանատարութեան, Առանայի Ազգ. Միութեան եւ Ազգ. Պատուիրակութեան յիշգոր ներկայացուցիչ՝ Միհրան Տամատեանի ուղղուած: Այդ նամակներով կացութեան մասին կը գրուէր, կը տեղեկագրուէր, օգնութեան կը պատուէր, անկարելի պարագային, կը խնդրուէր որ իմացնեն թէ այս կացութեան մէջ Զէյթուն ի՞նչ ուղղութիւն պէտք է բռնէ:

Ղարս-Պազար կը հասնին անոնք, սակայն հոն ո՛չ Փրանսացի կայ եւ ոչ ալ հայ: Միլիականներէն կը ձերբակալուին, կը բանտարկուին, նամակները Մարաշի կառավարութեան կը դրկուին թարգմանել տալու համար: Սակայն տակաւին Միսը ձգած չէր Փրանսացիին: Սիսէն եւ Կարսի շրջանակէն յայտնի քեմալական եօթը թուրքեր Միսի մէջ բանտն էին: Անոնց ընտանիքներուն դիմումին վրայ միլիական կառավարութեան եւ Փրանսական զինուորական իշխանութեան միջեւ գոյացած համաձայնութեամբ մը փոխանակուելով ազատ կ'արձակուին զէյթունցիները եօթը թուրքերուն հետ: Տղաքը Ատանա կը հասնին առանց որեւէ գրութեան ու հարկ եղածը կը պատմեն ու կը տեղեկացնեն:

Տղաքը սակայն Միս կը հանդիպին, հոն Պատ. Յարութիւն Նոխուտեան 15 Մարտ 1920 թուակիր նամակ մը կը դրկէ Ատանա, Վեր. Կարապետ Յարութիւնեանի: Այստեղ կը կցենք անոր մէկ տպագիր օրինակը:

ՄԱՐԱՇԷՆ ԵԿՈՂ ԽԱՌՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Մարտ 7-ին, Մարաշի կառավարութեան կառավարիչի փոխանորդ՝ զինուորական իւրֆան Պէկ, առանձին գրութիւնով, ուղղուած զէյթունցիներուն, Քեմալական յեղափոխութեան Մարաշի գլխաւորներէն Հաճի Էֆէնտիին հետ խառն պատուիրակութիւն մը ճամբայ կը հանէ դէպի Չէյթուն: Այդ պատուիրակութեան անդամներն էին Մաթր Լայմըն, Վերապատուելի Աբրահամ Յարութիւնեան, Յովնան Էֆ. Վարժապետեան եւ Յակոբեան Էֆ. Տիշէքէնեան, երեք յարանուանութեանց պետերը: Անոնք կը հասնին Ջերմուկ եւ լուր կը դրկուի Չէյթուն զօրանոց, որ Ազգ. Միութիւնը մարմին մը դրկէ, տեսակցելու համար Մարաշէն հասած խառն պատուիրակութեան հետ: Աստուր Էֆ. Կիւլվանըսեան եւ բոլիշ Ե. Էլմաճեան, ժողովին որոշումով կը մեկնին Պէշէն: Պատուիրակութեան կ'ընկերանար Պայազիս Ջատէ ոստիկան Սիւլէյման Չաւուշ, որպէս միւսիւրի փոխանորդ Չէյթունի: Հասան Գատը Ջատէ Հաճի Էֆ. որպէս նախկին բարեկամ Կիւլվանըսեան գերդաստանին, եւ հետեւաբար մեծ վստահութիւն ունենալով Ասատուր Էֆ.ի վրայ, անոր պնդումով պատուիրակութեան հետ Չէյթուն կու գայ: Վարը, Չէյթուն, կառավարական տակաւին կանգուն մնացած շէնքի մը մէջ կը հիւրասիրուին պատուիրակութեան անդամները Հաճի Էֆ. եւ պատգամաւորութեան անդամները, յարանուանութեանց պետերը կը խնդրեն որ հաշտարար ընթացք մը ցոյց տան զէյթունցիք, յարաբերութիւնները վերսկսին: Իւրֆան Պէկ ալ իր ղեկած գրութիւնով կը յորդորէ որ զէյթունցիք կատարեալ վստահութիւն

ունենան կառավարութեան վրայ, հնազանդութիւն ցոյց տան եւ բարեւոք յարաբերութիւն մշակեն կառավարութեան հետ: Եւ ասիկա՝ կը պահանջէր նաեւ Չէյթունի շահը: Բաւական թեր ու դէմ խօսքերէ ետք համաձայնութիւն մը կը գոյանայ: Պատուիրակութիւնը հետեւեալ դաշինքը կը կնքէ, որ զինեալ դաշինքի մը արժէքը ունէր եւ հետեւաբար ալ այնպէս կոչուեցաւ ըստ Չէյթունցեանց:

1.- Ծանձնել վերջին անգամ ոստիկաններէն առնուած երեք ուսական մօսիւնները եւ մէկ տեղական զէնքը: Իսկ իրենց զէնքերը պիտի մնան իրենց:

2.- Ծանձնել նաեւ հաճըլարցի Հաճի Աղան իր ընտանիքով եւ կամ ազատ թողուլ զինքը, ուզած ատենը մեկնելու համար: (Նախապէս հրահանգուած էր Հաճի Աղային, որ չըլլայ թէ մեկնիլ ուզէ):

3.- Երկու քրտուհիները, եթէ կ'ուզեն ծնողաց քով երթալ, ազատ են (իսկ աղջիկները երբեք սիրտ չունէին երթալու) Հաճի Էֆ.ի պընդումով թոյլ տրուեցաւ որ մեկնին անոնք: Բաց բռնական քննութեան կ'ենթարկուին, որովհետեւ զիրենք տանող ժանտարմային վրայ կարելի չէր վստահութիւն ունենալ:

4.- Ընդունիլ թուրք կառավարութիւնը որպէս կառավարութիւն Չէյթունի մէջ: (Ն. Չէյթունցեան «Չէյթունի վերջին դէպքերը» էջ 71):

Այս դաշնագիրը երեք օրինակով կը պատրաստուի եւ ստորագրուելէ յետոյ մէկ օրինակը կը տրուի Չէյթունի Ազգ. Միութեան: Յաջորդ օրը պատուիրակութիւնը կը մեկնի Մարաշ: Եւ Սիւլէյման Չաւուշ որպէս փոխ միւսիւր իր հետ քանի մը ոստիկան-զինուորներով կը հաստատուի Քէրթմէն թուրք գիւղը, Չէյթունէն 3 ժամ հիւսիս արեւելք: Քէրթմէնցիք 1915-ին, լեռ ապաստանող զէյթունցի տղաքը հետապնդելու պարտականութիւն ստանձնեցին թուրք ոստիկան զինուորներով, որպէս զէյթունցիէն յաճախ ապստակ կերած եւ անոր ենթակայ եղած էին:

1820-ին, Սահակ Պոյամեան, քէրթմէնցիներէն, իր մէկ ընկերով սպաննուելուն որպէս հատուցում, իր ընկերներով Քէրթմէնը կը պաշարէ եւ բոլոր քէրթմէնցիները կը ջարդէ անխնայ, հազիւ քանի մը հոգի կը փախչին եւ կ'ազատին: Այս դէպքը պատճառ կ'ըլլայ պատերազմի մը:

Շատ չանցած, Սիւլէյման Չաւուշ, որպէս միւսիւր, Մարաշի կառավարութեան գիտակցութեամբ կու գայ Խալաւուխ, Չէյթունէն երկուրուկէս ժամ արեւելք փոքր գիւղը:

ՓՈՆԱԿԱՐՁ ԱՅՑԸ ԵՒ ՎԵՐԱԴԱՐՁԸ. ՄԻՒՏԻՒՐՆԵՐ ԿԸ ՓՈՆՈՒԻՆ Հասան Գատը Ջատէ Հաճի Էֆ. եւ պատուիրակութեան միւս ան-

դամները վերոյիշեալ դաշնագրի ստորագրուելէն եւ փոխանակուելէն յետոյ, զէյթունցիներէն բաժնուելու ատեն փափաքած են որ զէյթունցիներ ալ իրենց այցելեն Մարաշ եւ այսպէս փոխադարձ այցելութեամբ բարւոյ յարաբերութիւն մը մշակուի եւ Զէյթունի ժողովուրդն ալ իր պէտքերը կը հոգայ Մարաշէն: Կար նաեւ Մարաշի փոխ կառավարիչ Իւրֆան Պէյի նամակը, ուրեմն պատուիրակութեան հրաւերին եւ Իւրֆան Պէյի գրութեամբ յայտնուած տրամադրութենէն քաջախելուած, ժողովուրդին հաւանութեամբ չորս հոգի՝ Լեւոն Նզեկիշեան, Ասատուր Կիւլվանքեան, Յարութիւն Գասապեան Ազգ. Միութեան անդամներէն եւ Սարգիս Սանկիկեան, որպէս փոխադարձ այցելուներ կը դրկուին Մարաշ: 1920 մարտի 11-ին, այս յանձնարարքը ճամբայ կ'ելլէ դէպի Մարաշ:

Մարաշի թուրք մեծերը, հայ յարանուանութեանց ներկայացուցիչները փոխ կառավարիչի նախագահութեամբ ժողովի մը կը կանչեն նաեւ Զէյթունի հիւրերը:

Հոս խօսքը տանք մեր հայրենակից Ն. Զէյթունցեանի, իր «Զէյթունի վերջին անցքերը» հատորէն քաղելով.—

«Նախորդ կառավարիչ Իւրֆան Պէյ հայամերձ քաղաքականութեան համար պաշտօնէ հեռացուած էր. իրեն յաջորդած էր թահրիրադ քիաթիպի Միւսթաֆա Պէյ, որ կը նախագահէր այդ ժողովին, իսկ Իւրֆան Պէյ, թէեւ պաշտօնէ դադարած էր, բայց որպէս թուրք երեւելի անձնաւորութիւն մը, անպաշտօն կերպով ժողովին ներկայ էր:

«Փոխ կառավարիչ՝ Միւսթաֆա, որպէս նախագահ, ժողովը կը բանայ եւ առաջին առիթով իսկ չ'ուզեր մոռնալ եւ կը յիշէ Միւսթաֆա Եահիա Էֆէնտին ու կ'ըսէ. «Ի՞նչ ըրիք այն երիտասարդ երեք ամսը ան միւսիւրը Եահիա Էֆ.» ու կը սկսի բերնէն թոյն ժայթքեցնել թէպէտեւ զէյթունցի հիւրերը կը պատրաստուէին իբր պատասխան յիշել Կուչէօղլի 69 զոհերը, Իւնկիւթի կամուրջին 6 տղաքը, բայց ահա, Չարտաղցի չէրքէզ Ասլան Պէյ, չէթէական կառավարութեան աջ բազուկը, որ ներկայ էր ժողովին, կանխատեսելով զէյթունցիներուն լռելիքը, կ'ընդմիջէ նախագահը լռելով. «Անոնք անցեալին կը պատկանէին մեզի ցանկալի է այժմ համերաշխութիւնն ու բարւոյ յարաբերութիւնը, անհրաժեշտն այդ է: Մենք ըրինք, իրենք ալ ըրին փոխաբէնը, ասոնք ըստ իր պատմութեան կը վերաբերին արդէն, զորս պէտք չէ յիշել Արսլան Պէյի ձայնակցելով, բոլոր ներկաները համամիտ կը գտնուին անոր ու այսպէս խնդիրը կը փակուի:

Մեր բանադնացիները քանի մը օրէն ողջամբ կը դառնան Զէյթուն, իրենց հետ բերելով Մարաշ գտնուող քանի մը զէյթունցիները եւ Սարգիս Քհնյ. Արաբխանեանը:

Միւլէյման Չաւուշ, իբրեւ միւսիւր՝ խալաուիս կը նստէր եւ անոր հետ զէյթունցիք լաւ յարաբերութիւն սկսած էին մշակել, անիկա օգտակար ըլլալու տրամադրութիւններ ցոյց կու տար, մօտակայ թուրք գիւղացիներ, այս բանը չմարսեցին, զինքը ամբաստանող հանրագրութիւններով սկսան բողոքել Մարաշի կառավարութեան: Միւլէյման Չաւուշ պաշտօնանկ եղաւ: Մարաշ երթալէ վերջ, սրճարաններու մէջ իբրեւ հարսէր սուլեյման զինքը իր պաշտօնավարութեան երեք ամիսներուն զէյթունցիք կըցան քանի մը անգամ Մարաշ, Չարտաղ, Փնտըղ, Էրճէք եւ ուրիշ թուրք գիւղեր երթալ արմատիք եւ այլ նման պէտքեր հոգալու համար: Միւլէյմանի նախորդը՝ Եահիա Էֆէնտին սպաննեց զէյթունցիին, սակայն Միւլէյմանի պէտք եղած յարգանքը չզլացաւ: Իրեն կը յաջորդէ 1920-ի Յունիսիին գամըշեզցի չէրքէզ Մաստէտտին անուն խորամանկ միւսիւրը: Արտաքնապէս անաչառ, սակայն ներքնապէս կատարեալ թուրք մը հայատեաց, կաշառակեր, զեղծարար: Այս պաշտօնեան կաշառք ուտելով հանդերձ, իր գիտցածէն չէր շնորհ: Եթէ իր նախորդին պէս վարուէր զէյթունցիներուն հետ, տարիներով զէյթունցիին կրնար հանդարտ մնալ իր տեղը, կ'ըսէ Ն. Զէյթունցեան իր գրքոյկին մէջ: Բայց զէյթունցիին համբերութեամբ հանդուժեց այս չար միւսիւրը, եթէ ոչ, հարկ էր Եահիա Էֆէնտին ճամբան դրկել, բայց գիտէր, կը լսէր թէ արտաքին կացութիւնը ձեռնառու չէր իրենց: Մարաշ արդէն թուրքերուն ձեռքն է, Ֆրանսացիին հեռացած է եւ հայութիւնը ջարդուած, Հաճըն եւ Շար-Տէրէ պաշարուած եւ ինկած ու հրոյ ճարակ եղած են: Այս սեւ լուրերը կու գային իրենց չէրքէզ եւ քիւրտ բարեկամներու միջոցաւ: Ու սկսաւ զէյթունցիին իր հողին, այգիին ու արտին աշխատանք տանիլ, անօթի չմեռնելու համար, որովհետեւ կը զգար թէ հետզհետէ պաշարման շղթան իր շուրջն ալ պիտի պատէր, օր մը ճամբաները պիտի գոցուէին: Ուրեմն պէտք էր ոյժ տալ իր բազուկին եւ իր հողին բերքովը պիտի ապրէր: Զէյթունցիին գիտէր թէ կացութիւնը հետեզհետէ աւելի պիտի վատթարանար: Շրջակայ թուրք գիւղացիներու ոխն ու ատելութիւնը թոյլ պիտի չտար որ բարւոյ յարաբերութիւն մը շարունակուի թուրք կառավարութեան եւ Զէյթունի միջեւ: Անոնք որ տիրացած էին զէյթունցիներուն արտերուն եւ այգիներուն եւ հիմա, զէյթունցիք եկած առած էին իրենցմէ, Զէյթունը պատրուակ բռնելով, գինուր պիտի չերթային, ինչպէս 1915-ին ըրած էին նման առարկութիւն, թէ քանի զէյթունցիին կայ, մենք մեր ընտանիքները չենք կրնար թողուլ եւ գինուր երթալ:

ԵՐԵՎԱՆԻ ԶԷԹՈՒՆՑԻՆԵՐ ԿԸ ՍՊԱՆՆՈՒԻՆ ԶԱՐԲԱՂԻ ՃԱՄԲԱՆ.
ԶԻՆԸ ԿԸ ԳՈՑԷ ՃԱՄԲԱՆԵՐԸ. ՊԱՇԱՐՄԱՆ ԵՂԹԱՆ ԿԸ ՆԵՂՆԱՑ

Նոյն տարուայ Օգոստոս 1-ին է, գէթունցին խոր վրդովումի մէջ է: Երեք օր առաջ, Եղեկիէլ Պարութեան, որուն սպաննութիւնը նախորդ էջերով յարմար առիթով մը յիշած էինք, իր հետը նաեւ Սարգիս Սանկիկեան եւ Արամ Արապխանեան, Զարտաղ կ'երթան գործով, արմտիք գնելու եւ պարտքեր գանձելու: Զէրքէզ միւսիւր Սաստէատին, որուն մասին քիչ առաջ ըսած էինք թէ ինչ ճիւղ մըն էր, այնտեղ անոնց կը հանդիպի: Եղեկիէլ իր երկու ընկերներով ճամբայ կ'ելլէ դէպի Զէյթուն. ճամբան էրէճէք թուրք գիւղը կը մտնեն, այնտեղ գանձելիքներ ունին էրէճէքիներէն: Կը հասնին եւ կը պահանջեն իրենց իրաւունքը: Այս պարագան պատճառ կ'ըլլայ որ էրէճէքի թուրքեր գրգռուին: Էրէճէքէն ճամբայ կ'ելլեն դէպի Զէյթուն: Տղաքը կ'ուշանան, Զէյթուն իրենց ընտանիքները կը սպասեն անոնց վերադարձին: Զարտաղէն աւելի ուշ ճամբայ ելած Յարութիւն Գշպուտեան եւ ընկերները Զէյթուն կը հասնին: Անոնք կը պատմեն թէ Եղեկիէլ եւ իր երկու ընկերները իրենցմէ առաջ ճամբայ ինկած են եւ ճամբան ալ ունէ տեղ իրենց հանդիպած չեն, ոչ ալ էրէճէքի մէջ, որովհետեւ ճամբան էրէճէքէն կ'անցնի:

Այստեղ խօսքը տանք, որպէս ականատեսի, Պ. Ն. Զէյթունցեանի, որ հետեւեալ կերպով կը պատմէ իր գիրքի 85-րդ էջին մէջ, միւսիւր Սաստէատինի հետ ունեցած տեսակցութիւնը, երեք տղաներուն առնչութեամբ:

«1920, օգոստոս 1-ի կիրակին, յետինքի ատեն էր, Ղարսի կամուրջը բանի մը ընկերներով նստած էի, միւսիւր Սաստէատին եւ հետը ուսիկան մը, եկաւ, առ ի քաղաքավարութիւն հրամցուցի որ նստի քիչ մը եւ հանգստանայ: Դժուարաւ հաճութիւն տուաւ, առարկելով որ օրը կը տարաժամի եւ դեռ երկար ճամբայ մ'ունի մինչեւ Խալաւուղի մանթրզան:

«Յանցաւոր մարդու մը երեւոյթով դէմս նստաւ, սովորական խօսքերէ վերջ, երբ յիշեցի թէ մեզմէ ծանօթ երեք անձեր պիտի գաին, չեկան, ուշացան, արդեօք միւսիւր էֆէնտին չտեսա՞ւ, չհանդիպեցա՞ւ ճամբան անոնց: Պատասխանը ժխտական եղաւ: Ու մէկէն գոյժը փոխուեցաւ եւ խօսակցութեան նիւթը փոխելու փորձ մը ըրաւ, սկսաւ աճապարել մեկնելու: Հագիւ մէկ մէկ սիկար կըցնէր էինք ծխել միասին, հրաման ըրաւ ժանտարմային որ ձին պատրաստէ: Հեծաւ ու մտրակեց, որպէսզի վայրկեան մ'առաջ հեռանայ, անցի Զէյթունի սահմանէն»:

Սպանութենէն երեք օր յետոյ կը գտնուին տղոց դիակները Խէս

(Նախադրիւր) աղբիւրի մօտերը: Շատ չանցած, պարզուեցաւ որ էրէճէքի թուրքերը եւ Սաստէատինի ժանտարման, անշուշտ իր հաւանութեամբ չարաչար սպաննած էին: Եղեկիէլ Պարութեանը, Արամ Արապխանեանը եւ Սարգիս Սանկիկեանը Ոճիրին տեղն ու իրողութիւնը հասկցուած օրը, Մարաշէն Զէյթունի ճամբով 18 թուրք գիւղացիներ, այլեր ու կիներ իրենց տեղերը երթալու համար այդ գիւղերը Զէյթուն կ'անցընեն եւ հետեւեալ առաւօտ Ազգ. Միութիւնը, մեր երեք սպաննուածներուն մարմինները փոխադրող տղոց հետ կը դրկէ իրենց գիւղերը, ժողովուրդին փոխ վրէժին չենթարկուելու համար: Ու խախտ կը պատուիրուի տանողներուն որ ողջ առողջ տանին եւ Զէյթունի սահմանէն դուրս հանեն: Բարդութիւն ստեղծելու ատենը չէ: Գիտեն որ Մարաշ արդէն թուրքին ձեռքն է, պաշարման չղթան հետզհետէ կը նեղնայ, արմտիքի ու այլ կենսանիւթերու համար դուրսերը երթալ կը դժուարանայ եւ վտանգաւոր կը դառնայ: Հեռուէն արդէն պաշարումը սկսուած է, նեղ սահմանի մը մէջ, ինքն իր միջոցներով պիտի ապրի գէյթունցին: Գարնան ցանքը լաւ չէ եղած, իսկ ամառուան ցանքն ընելու հնարաւորութիւն չէ ունեցած: Գալիքը ձմեռն է 1921-ի: Արդէն իսկ քաղաքական պատճառներով դժուարացած երթեւեկը, յարաբերութիւնը, անգամ մը եւս պիտի դժուարանայ, ձիւնը պիտի գոցէ մօտիկ ճամբաներն ու անցքերը: Ժողովուրդը լաւ հագուած չէ, պատսպարուած չէ տաք հագուստով, կիսամերկ վիճակ մը ունի, ինչպէս պիտի դիմադրէ խառաշունչ հովին ու ցուրտին: Արտաքին օգնութիւնը դադրած է, թէեւ Մաթրը Լայմըն՝ Ամերիկացի միսիոնար եւ Մերձ. Արեւելքի Նպաստամատոյցի տնօրէնը իր կարելին կը փորձէ օգնութիւն հասցնելու, հագուստ եւ անդեղէն ղրկելու, սակայն արգելքները հետզհետէ աւելի անկարելի կը դարձնեն նման բան: Թոյլտուութիւն չկայ Մարաշէն դուրս ելլելու եւ որեւէ բան տանելու: Արգելքէն առաջ, կոկիսոնի եւ Ալպիստանի միջեւ, կողոպտել տուին անոր տարած դրամները: Օր մը Մարաշի մէջ, անոր դրան առջեւ, գէնքը կ'արձակեն իր վրայ, զայն կ'ահաբեկեն, որ Զէյթուն օգնութիւն չհասցնէ: Հիմա, որ այդ Ամերիկայէն միլիոններով, միլիարդներով օգնութիւն կը ստանայ, անով կը հարստանայ, կը զօրնանայ, բանակ կը պահէ, արդիական զէնքերով կը զինուի, զրեթէ անոր շնորհիւ կ'ապրի: Ո՞վ գիտէ թէ օր մը պիտի չմոռնայ այդ բոլորը եւ անոր դէմ գէնք պիտի չբարձրացնէ, անոր տուած զէնքը Այս է թուրքին նկարագիրը: Դժուար օրեր էին, սակայն գէյթունցին ապրեցաւ, անցուց եւ այդ ձմեռը գէշ աղէկ պարենաւորուելով եւ իր մերկութիւնը ծածկելով: Յոյս ունէին թէ նեղ օրերու կեանքը կարճ պիտի ըլլար, դարձեալ գարուն պիտի գար, պիտի բացուէին

համբաները ու իրենք պիտի սկսէին դաշտերու իրենց աշխատանքը։ Լուռ եւ համբերութեամբ սպասումի եւ ինքնամփոփումի շրջան մըն էր, զոր գէյթունցին ստիպուած էր տանիլ, անցընել, չէր գիտեր վաղը եւ վաղերը ինչ անակնկալներ պահած են իրենց։ Չորս ամիս ինքն իր մէջ փակուած կը մնայ իր յոյսը դնելով յաջորդ գարունին։

1921-ի ԳԱՐՈՒՆԸ ԿՈՒ ԳԱՅ. ՅԱՆՔԸ ԵՒ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԿԸ ՍԿՍՈՒ

Ծանօթ կը սկսի գէյթունցին, ինքը քաղելու յոյսով կը մշակէ ագիներն ու պարտէզները, ապրելու համար։ Պէտք է տեղական բերքերով իր պէտքերը հոգալ, որովհետեւ թշնամին նաեւ տնտեսապէս նեղելով կ'ուզէր պարտութեան մատնել Զէյթունը։ Ինչպէս յաճախ յիշեցինք, Ֆրանսացիները Մարաշի լեռին եւ քաղաքը թուրքին ձեռքը անցնելէ յետոյ, թուրքը իր ուղղութիւնը բոլորովին փոխած էր Զէյթունի հանդէպ։ Պաշարուած էր ան գրեթէ։ Նախորդ տարուան բերքի անբաւականութիւնը պատճառ եղաւ որ գարնան սկիզբն իսկ շատերուն պաշարը, հացն ու ալիւրը հատնի։ Ունեցողը չունեցողին պիտի օգնէ։ Ոյժ կը տրուի կանաչեղէններու, բանջարեղէններու մշակումի գործին, որովհետեւ անոնք աւելի շուտ մէջտեղ կու գան, եւ որոշ չափով կրնան սնունդի տեղ բռնել։ 1921 Փետրուարէն սկսած աշխատանք կը ստեղծէ Ազգ. Միութիւնը, չքաւոր, անօթի եւ անգործ եղողներուն, որոնք նպաստի կարօտ էին։ Կ'աշխատեցուէին այդպիսիները եւ կը վճարուէր իրենց յոգնութիւնը, որպէսզի ապրին, մինչեւ ամառը դայ եւ հունձքը սկսի։ Չորանոցի մաքրութեան կը նայէին անոնք, ինքնապաշտպանութեան խրամներ կը բանային եւ պատնէշ կը քնէին։ Բիշ անգամներ եւ հազարումէկ դժուարութիւններով, գաղտնի միջոցներով Ամերիկեան Մերձ. Արեւելքի Նպաստամատուցէն ստացուած նպաստին մեծագոյն մասը արմախքի կը յատկացուէր, չէր քէզներու եւ քիւրտերու միջոցով։

Զէյթ. ՈՒՆԵՆԱԼՈՒ ՄՏԱՀՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ, ԴԻՄՈՒՄՆԵՐ, ՊԱՐԱՊ ԽՕՍՔԵՐ ՈՒ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ, ՆԱՄԱԿՆԵՐ ԱՆՕԳՈՒՏ

Ազգ. Միութիւն եւ ժողովուրդ, Մարաշի անկումէն, Հաճընի ջարէ գէն եւ հրկիզումէն յետոյ, այլեւս որոշ կը հասկնային թէ կարգը Զէյթունին է, թշնամին յարմար ատենին կը սպասէ եւ օր մը դաւադրօրէն ներս պիտի սողոսկի Զէյթունի սահմանէն։ Հետեւաբար գէնք եւ ռազմամթերք պէտք է։ Գարնան ձիւնհալը սկսած է եւ վերջանալու վրայ է։ Ծանօթ լաւ է եւ առատ բերք պիտի ունենայ ժողովուրդը, ուրեմն տնտեսապէս պիտի չնեղուի գոնէ տարի մը։ Կը մնայ ուրեմն, գէնքի համար դիմումներ կատարել դուրսը, սակայն շատ դժուար է այդ բանը ու պիտի փորձէ՝ իր անկարելին կարելի ընելու համար։ 100-ի մօտ կանոնաւոր գէնք հայթաթուած էր մինչեւ այդ ատենները, ան ալ անհատական միջոցներով գրեթէ։

1921 տարուայ մայիս 17-ին, Հալէպ գտնուող գէյթունցիներու Հայրենակցական Միութեան վարչութիւնը Ատանա՝ ՎԵՀ. Սահակ Կաթողիկոսին գրած իր նամակին, հետեւեալ պատասխանը կ'առնէ ՎԵՀափառէն, 19 Մայիս 1921-ին։

Ծարգելի ատենապետ

Հայրենակցական Միութեան Զէյթունի, Հալէպ

Ընդունեցինք Միութեանդ թ. 10 եւ Մայիս 17 գրութիւնը։ Շատ կանուխէն արձագանգ գտան այստեղ Զէյթունի մասին սարսափեցուցիչ տարածայնութիւններ, անմիջապէս Ազգ. Խորհրդոյ որոշումով, երեք յարանուանութեանց հոգեւոր ներկայացուցիչները ժենեւալ Տիւֆիէօյի ներկայանալով բանիւ բերանոյ պարզեցին դժբախտ Զէյթունի սպառնացող ահաւոր վտանգը եւ գլխաւորապէս խնդրեցին ասպետական Ֆրանսայի աջակցութիւնը։ Ժենեւալը խոստացաւ Ն. Բոմիսէրուիեան փոխանցել տրուած գրութիւնը։

Այնուհետեւ Զէյթունի մասին քաղուած տեղեկութիւնք հակասական ձեւ մը առին, մերթ վտանգը չեղտող, մերթ որեւէ վտանգի գոյութիւն չունենալը հաստատող, մինչեւ այսօր Զէյթունի վիճակը միութեամբ մը պարուրուած է։ Թերեւս Միութեանդ ալ քաղած տեղեկութիւնք շատ տարբեր չըլլան այս տեղիներէն։

Վստահ եղէք, ո՛չ միայն դուք, ամբողջ վերապրող հայութիւնը Զէյթունով կը շահագորգուի եւ անոր պատահելիք որեւէ անախորժ գէպք ամենուրեւ սիրտը կը յոշոտէ։

Ողջունիւ հայրական սիրոյ եւ մաղթելով ամէն բարութիւն Զէյթունի բովանդակ հայութեան

Մնամք աղօթարար

Սահակ Բ. Կթղկ. Կիլիկիոյ

Բայց չէ՞ որ Զէյթուն գրեթէ պաշարուած վիճակի մէջ էր այդ թուականներուն, ուրկէ՞ կարելի ըլլար ստոյգ տեղեկութիւններ ստանալ անոր կացութեան մասին: Մէկ բան սակայն որոշ չէ՞ր միթէ. այն է՝ թուրքին Զէյթունի հանդէպ ունեցած դարաւոր վերաբերումը, մանաւանդ Հաճընի եւ Մարաշի անկումներէն յետոյ, դժուար պիտի չըլլար հասկնալ թէ ի՞նչ պիտի եղած ըլլար Զէյթունի վիճակը: Մարգարէ ըլլալու պէտք չկար այս բանը հասկնալու համար: Պաշտօնական շահագրգռութիւնը ամբողջ հայութեան, ոչինչ արժեք Զէյթունի համար: Մաղթանքն ու փափաքը առանց գործնական աշխատանքի ո՛չ մէկ օգուտ ունեցան Զէյթունի ժեներալ Տիւֆիէօ Պէյրուֆ՝ Փրանս. Բոմիսերութեան կը խոստանայ զրկել ներկայացուած գրութիւնը... զաւեշտ մըն ալ այս, որ ամբողջ ողբերգութիւն մըն է, քաղաք մը ջարդի, հրդեհի սարսափը կ'ապրի, ու խոստում՝ նամակ մը, գրութիւն մը, վերին իշխանութեան՝ Պէյրուֆ փոխանցելու: Իսկ մեր նախորդ եւ ներկայ էջերուն մէջ երեւցած վեց-եօթը նամակները, Զէյթունէն, Սիսէն, Հալէպէն գրուած, բաւական էին Զէյթունի համար ուժեղ դիմումներ ընելու պատճառներ ունենալու: Եթէ ռազմամթերք, զէնք եւ նիւթական օգնութիւն զրկել, կամ զինուոր հասցնել դժուար էր, Փրանս. իշխանութիւնը եթէ ուզէր կրնար ճամբայ մը, ազատ անցք մը պահանջել թուրք կառավարութենէն զէյթունցիները Ատանա փոխադրելու, տակաւին թուրքերու եւ զէյթունցիներու միջեւ կոխը չսկսած: Թուրքը դիւրութեամբ այդ ճամբան պիտի տար մերիններուն, որպէսզի հեռանային եւ անոնց հողերը, շէնցուցած արտերն ու այգիները մնային վերստին իրեն: Սակայն այդքան բան ալ չըրաւ Փրանսացին կամ ընել չկրցաւ տալ մեր Ազգ. պատուիրակութիւնը:

1921 տարւոյ «Ապազայ» չաքաթաթերթի 23 թիւով, 21 Յունիսին, կը կարդանք Ազգ. Պատուիրակութեան մէկ ծանուցագիրը, ուղղուած Փրանսական կառավարութեան.

ԶԵՅԹՈՒՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ

«Շարժուայ ընթացքին, Փրանսական մամուլը անգլիական թերթերէն առնելով գրեց թէ՝ Զէյթունի հայութիւնը մերժած ըլլալով զիստորադրուիլ եւ յանձնել իր զէնքերը քեմալական իշխանութեան, պաշարուած է Միլլի ուժերու կողմէ:

«Այս լուրին վրայ, հայկական շրջանակներու մէջ, լուրջ մտահոգութիւն կը տիրէ: Ազգ. Պատուիրակութիւնը անմիջապէս առանձինն ծանօթագրով մը դիմեց Փրանսայի արտաքին գործերու նախարարութեան, խնդրելով

որ Կիլիկիոյ Փրանսական իշխանութիւնները անմիջական միջոցներ ձեռք առնեն փրկելու համար Զէյթունի քաղաքի հայութիւնը եւ խնայելու անոր այն ճակատագիրը, որուն ենթարկուեցաւ Հաճըն:

«Պատուիրակութիւնը շեշտեց մասնաւորապէս, որ Զէյթուն, 1860-էն ի վեր հոգածութեան առարկայ եղած է Փրանս. կառավարութեան կողմէ:

«Հարկ չկայ ըսելու թէ՝ Զէյթուն անտարբեր չմնաց այս հոգածութեան եւ 1870-ի Փրանսո-Գերման պատերազմին ուղարկեց մօտ 300 հոգինոց կամաւորներու գումարտակ մը, որ կոուեցաւ Փրանսայի համար:

«Մեր անգլիացի բարեկամները այս անգամ ալ մտահոգ՝ Զէյթունի սպառնացող վտանգին համար, դիմում կատարած են Անգլ. կառավարութեան: Անգլ. եւ հայկ. Բոմիթէի նախագահը եւ երեսփոխան Մր. Անիւրին Ուէյլերմա, խորհրդարանին մէջ հարցում ուղղեց արտաքին գործոց նախարարութեան, տեղեկանալու համար թէ ի՞նչ վիճակի մէջ է հայութիւնը: Մր. Հր. յանուն արտաքին գործերու նախարարութեան, պատասխանեց որ, Անգլ. կառավարութիւնը տեղւոյն վրայ չունենալով ներկայացուցիչներ, միջոցներ ձեռք պիտի առնէ գրութիւնը հասկնալու, որպէսզի ըստ այնմ կարգադրութիւն մը ընէ: (Վարդ Մեխակի «Զէյթունի նահանջը» գիրքէն):

Կատակ մըն ալ այս մէկը, հեգնանք մը: Ամբողջ խօսքեր, խօսքեր ուրիշ ոչինչ: Ու Զէյթուն ջարդի սարսափին ենթակայ, կ'մ պիտի յանձնուի, ինչ որ անկարելի է, կամ պիտի դիմադրէ, զարնէ, զարնուի մինչեւ որ կոուելով ինչայ վերջանայ: Իսկ անդին խօսքերու, խոստումներու տարափ մը, փոխանցումներ, բարեխօսութիւններ, շահագրգռութիւններ:

Յղան նոյնիսկ մարդիկ, ազգային գործիչներ, պաշտօնական մարմիններ, որոնք նկատի չառին զէյթունցիներու դիմումները զէնքի համար, պէտքը չտեսան այլեւս զինուելու: Հալէպի Ազգ. իշխանութենէն խնդրուեցաւ որ գաղթականներու յատկացուելիք նպաստը, որպէս հացի դրամ, մէկ ամսուանը մէկ անգամէն տրուի, որպէսզի այդ գումարով գոնէ զէնք հալթայթէ զէյթունցին: Այս իսկ կարեւորութեան չառնուեցաւ: Ուրիշ ճար չկար, իւրաքանչիւր զէյթունցի տղամարդ իր անձնական միջոցներով, իր հացէն եւ սնունդէն կտրելով պէտք էր զինուէր: Իսկ զէնք գտնելու եւ գնելու դժուարութիւններն ալ մէկ կողմէն կը մտահոգէին Ազգ. Միութեան նշանակած յանձնախումբը: Զէրֆէզներ, քիւրտեր պիտի ըլլային, որոնք պիտի հալթայթէին եւ զէյթունցիները պիտի գնէին կրկնապատիկ եւ աւելի գիններով:

ՔԵՄԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԶԵՅՈՒՆԷՆ ԶԻՆՈՒՈՐ ԿՈՒԶԻ

Թուրքը ուզեց որ գէթունցին իր արտերուն եւ այգիներուն բերքը չքաղած, հարուածէ: Որովհետեւ տարին լաւ էր, հունձը առատ պիտի ըլլար եւ գէթունցին որ անգամ մը իր պաշարը լեցնէ, դժուար պիտի ըլլայ նեղը դնել եւ գլուխ ելլել անոր հետ: Ուրեմն պէտք էր անապարել: Պատրուակ մը պէտք էր ստեղծել եւ պատրաստ էր այդ պատրուակը: 1894-1900-ի ծնունդները գինուոր պահանջեց: Որոշ էր թուրքին դիտաւորութիւնը Ազգ. Միութիւնը ժամանակ չահելու համար, ժողովուրդին հետ համաձայնած, սկսաւ ձգձգման քաղաքականութեան հետեւիլ, որովհետեւ մէկէն ի մէկ մերժել չէր կրնար, չէ՞ որ՝ ըստ թուրք կառավարութեան թուրքոյ Հողին վրայ էր, թրքահպատակ էր, կարելի չէր մերժել, ուրեմն պէտք էր ձգձգէր այն յուսով, որ քաղաքական փոփոխութիւն մը տեղի կ'ունենայ եւ կամ արտասահմանէն-կիլիկիայէն օգնութիւն մը, գօտեպնդիլ լուր մը, հրահանգ մը կը հասնի: Բայց ի գուր սպասեց գէթունցին, ոչ օգնութիւն եկաւ, ոչ բարի հրահանգ մը, իսկ քաղաքականութիւնը օրըստօրէ աւելի դէպի գէշը փոխուեցաւ: Թուրքի թեւով գէթունցին դուրսէն, իր հայրենակիցներէն օգնութիւն սպասեց ամբողջ երկու տարի, գոնէ բարի լուր մը, ուղղութիւն տուող հրահանգ մը, կարօտով սպասեց իր եղբայրներուն խրախուսիչ ձայնին, ու չհասաւ իրեն այդ ձայնը: Ու հոգեկան այդ վիճակին մէջ, գէթունցին, աչքերը դէպի ճամբաները, դէպի հեռաւոր լեռները, ուզեց ժամանակ չահիլ, օրօրել թուրքին գինուորագրութեան պահանջը, օր մը աքալէս, օր մը այնպէս ու շարաթներ կ'անցնէին, իսկ թուրք կառավարութիւնը հետեւողական էր իր որոշումին, կը համբերէր ան եւ սակայն կը հետապնդէր Զէյթունը բնաջնջելու իր նպատակը:

Անուանացանկ մը մէջտեղ դրած է ան, 350 գինուորներ կը պահանջէ Զէյթունէն, 1894-1900-ի ծնունդները, որոնցմէ հազիւ 50 հոգի ողջ մնացած է եւ անոնց ալ մէկ մասը Զէյթուն չէ եկած տակաւին: Անգիտանալ կ'ուզէ ան իր գործած ոճիւրը 1915-1918-ի: Շատ լաւ գիտէ մինչդեռ, թէ այդ գինուորացու երիտասարդներուն մէկ մասը Տէր-Զօր սպանդին ջարդել տուաւ ինքը: մէկ մասն ալ որպէս գինուոր մինչեւ Պիր-Սապա, մինչեւ Արարիոյ անապատները, Սուէզ եւ Աքապա գրկուեցան ու ալ ետ չդարձան, այնտեղերը փճացան: Ու ահա, իր իսկ կողմէ բնաջնջուած երիտասարդութիւն մը կը պահանջէ Զէյթունէն, որպէս գինուորացու: Ու գէթունցին, կ'ըսէ թէ այդ տղաները ժամանակին տարագրուեցան անապատ, մէկ մասն ալ արդէն գինուոր դնաց ու չդարձաւ: ու եթէ տակաւին կը գտնուին անոնցմէ,

փնտռենք, հասկնանք եւ յանձնենք: Թուրք կառավարութիւնը կը հասկնար թէ իրաւունք ունէր գէթունցին այնպէս ընելու: Մէկ կողմ կը թողուր գինուորացուներու խնդիրը, այս անգամ ալ ուրիշ խնդիր մը: Զէյթունցիք, Զէյթունի շրջականները, անցնող դարձող թուրքեր կը սպաննեն, նոյնիսկ երբեմն մինչեւ հեռուները կ'երթան, կ'ասպատակեն, կը կողոպտեն, կը սպաննեն: Շիտակ է որ կը պատահէին երբեմն նման դէպքեր, սակայն ատոր մէջ Ազգ. Միութիւն եւ ժողովուրդ ոչ մէկ յանցանք ունէին: Ատիկա մի քանի ըմբոստներու գործն է եւ պատասխանատու չեն Միութիւն եւ ժողովուրդ: Նոյնիսկ շատ յաճախ խիստ եղած է նմաններու համար, յարգած է 15 Ապրիլի 1920-ի յանձնառութիւնն եւ կնքուած որոշումին՝ դաշինքին հաւատարմ կը մնայ Ազգ. Միութիւնը, յանուն բոլոր գէթունցիներուն: Հակառակ որ թուրքը չարագեց իր խօսքը, խոստումը, Զէյթունի սահմաններուն մէջ երեք անգամ ծրագրուած կերպով գէթունցիներ սպաննել տուաւ: Իսկ կուէչօղի 80 հայերու ջարդը, իւնիկիթի կամուրջին մօտ գէթունցի վեց ջորեպաններու եւ Խէտ աղբիւրի մօտ տեղի ունեցած սպանութիւնները:

Մէյ մը նոր հունձը ներս առնէր գէթունցին, սակայն թուրքը խնդիրը խնդրի վրայ կը հանէ, կ'երեւի պիտի կանխէ եւ չթողու որ գէթունցին իր ամբարները լեցնէ: Մեր եւ թուրք կառավարութեան յարաբերութիւնները պաշտօնական են միայն, մինչդեռ Զէյթուն անպաշտօն կերպով պաշարուած է գրեթէ, այն օրէն իվեր, երբ Ֆրանսացին թողուց զնաց Մարաշը: Զէյթունցիներու եւ թուրք կառավարութեան միջեւ եղած յարաբերութիւնները տեղի կ'ունենային մէկ երկու տեղացի մօտիկ թուրք ժանտարմաններուն տարած կամ բերած երկտող գրութիւններով, որոնց կը յաջորդէր երբեմն թուրք դաժմագամին կամ կառավարական պաշտօնեայի մը, մերթ ալ պատուիրակութեան մը ացելութիւնը եւ ան ալ պահանջի մը, խնդրի մը համար:

Ահա ուրիշ, երրորդ պահանջ մը, ոչխարներու, ալծերու գլխահարկը (աղնամ վէրկիւսի), որ փոքր ի շատէ վճարուելով այդ հարցը կը փակուի:

Հազարապետ Իսմայիլ Հազըր Պէյ Զէյթուն կու գայ Քէօմէ Սէօկիւտէն. նամակ կը դրկեն գէթունցիք Մարաշ եւ Ատանա, չէքէզներու միջոցաւ թուրք կառավարութիւնը կը խստացնէ տնտեսական պաշարումը Զէյթունի շուրջ: Մուճազեան երկու կտրիճներու սպանութիւնները Խէտ Աղբիւրի մօտ:

Մայիս 7-ին, Մարաշի պատերազմական աստանի նախագահը՝

Պրուսացի հազարապետ Իսմայիլ Հազգը Պէյ Ջէյթուն կու գայ Ջէյթունցիք կնքուած դաշինքին ընթացք տուած լլլայու համար կ'ընդունին զինքը, սակայն զօրանոցէն դուրս, հեռագրատան մէջ կը հիւրասիրուի Ան կու գայ Ջէյթունի կացութիւնը քննելու, ուսումնասիրելու համար: Լայնօրէն մտիկ կ'ընեն զինքը եւ կը պատասխանեն իր հարցումներուն: Յիսունը անցուցած, առոյգ, փորձառու աղուէս մըն էր այս զինուորականը: Ժպտուն դիմագծով, կիրթ շարժումներով ու խօսուածքով, որուն տակ կը պահէր իր բուն իսկ նպատակը: Սակայն կը խօսի շարունակ, ժամերով, ուրախ ու համարձակ շեշտով մը (Ն. Ջէյթունցեան): Ինքզինքը կը ներկայացնէ զէյթունցիներուն որպէս մէկ սրտցաւ եւ անկեղծ բարեկամը: Ոչ մէկ խօսք իր կողմէ քաղաքական կացութեան մասին: Իր հարցումները կը դառնան Ջէյթունի առողջական, տնտեսական, տեղագրական խնդիրներու շուրջ: Ազգ. Միութիւնը կը հասկնայ սակայն անոր դերը եւ թաքուն պաշտօնը: Անիկա իր մօտ կ'արձանագրէ զէյթունցիներու տնտեսական վիճակը, քանի ամսուան բաւելիք պարէնը, իր հետը կը տանի զէյթունցիներու մէկ տեղեկագրութիւնը, ուր յիշուած է կռուողներու թիւը, զէնքերու քանակը, անոնց անհրաժեշտ պէտքերը: Իրեն կը յիշեցուի թէ Խալափուզի միւստիւրը եւ ոստիկանութիւնը չեն յարգեր 1920-ին զէյթունցիներու եւ քննարկական կառավարութեան միջեւ կնքուած դաշինքը եւ թշնամական վերաբերմունք ցոյց կու տան, մինչդեռ զէյթունցիք բարի դրացի կ'ուզեն մնալ թուրք գիւղացիութեան հետ եւ լաւ տրամադրուած են կառավարութեան հանդէպ: Այդ ժամին ոչ մէկ բան չի խօսիր սակայն: Մեկնելէ առաջ իր ձիուն վրայէն ուշի ուշով կը դիտէ, կը քննէ աւերակ Ջէյթունը: Ոչ մէկ բան չի խօսիր զօրանոցի պարպումի, կամ զէնք յանձնելու խնդիրներուն շուրջ, հակառակ որ մեծ փափաք ունի խօսելու: Դժգոհութիւնները, պէտքերը զէյթունցիներուն կ'արձանագրէ տեսրակի մը մէջ: Ու ապա կալին չմեկնած, զէյթունցիներու փափաքին գոհացում տալու վարպետութեամբ Մարաշ երկու կենդանի կը դրկէ եւ աղ բերել կու տայ Ջէյթուն: Առատ խոստումներով կը յուսադրէ Ազգ. Միութիւնը եւ կը մեկնի: Ճամբան, տեսնողներ եղած են, որ Ճարտունից կոչուած աղբիւրին (Գայմագամի աղբիւրը) երբ կը հասնի, հեռադիտակով կը դիտէ Ջէյթունի լեռները:

Թուրք կառավարութիւնը կը շարունակէ իր տնտեսական պաշարումը եւ հետզհետէ աւելի կը խստացնէ: Կ'ուզէ այդպիսով անօթի թողու եւ ընկճել զէյթունցին: Իսկ զէյթունցին կը հանդուրժէ ամէն նեղութիւն, մինչեւ որ քաղը սկսի, կալերը եւ այգիներուն բերքը ներս առնէ: Սակայն թուրքն ալ այդ հաշիւը գիտէ եւ պիտի չհասցնէ աղ

օրուան: Իսմայիլ Հազգրի մեկնելէն քանի մը օր ետքը, Ազգ. Միութեան Դիւանը՝ Ատենապետ Արամ Զօլագեան, Ատենադպիր Նազարէթ Ջէյթունցեան, Սեդրակ Մարկանեան, 30 երիտասարդներով Ջէյթունի հիւսիս արեւմուտքը, 7 ժամ հեռու, Քէօմէսէօկիւտ գիւղը կ'երթան: Այս գիւղը զէյթունցիներուն կը պատկանէր 1915-էն առաջ: Ջէյթունցիներու բարեկամ Կիւճիկ չէրքէզ գիւղը մարդ կը դրկեն, Զօլօ Աղա կոչուած չէրքէզին: Զօլօ Օղլու Եուսուֆ Աղա, իր եղբոր՝ Իպրահիմի հետ կու գան Քէօմէսէօկիւտ: Անոնց կը յայտնուի թէ Մարաշ Մաթրը Լայմընի եւ երկրորդ Ատանա՝ Ազգ. եւ Հայրենակցական Միութիւններուն նամակ պիտի դրկէ Ազգ. միութիւնը: Պիտի խնդրենք որ այս ծառայութիւնը ընէք մեզի: Եուսուֆ Աղա եւ Իպրահիմ յանձն կ'առնեն Ազգ. Միութեան նամակները հասցնել իրենց հասցէներուն: Նամակները կը խմբագրուին Ատենապետին կողմէ եւ կը յանձնուին երկու չէրքէզներուն, ի հարկէ դրամական կարեւոր վարձատրութիւնով մը: Օգնութիւն կ'ուզուի Մաթրը Լայմընէն իսկ Ատանա դրկուած նամակներով կոչ կ'ուղղուի Ազգ. եւ Հայրենակցական Միութիւններուն, որ Ջէյթուն նեղ կացութեան մէջ է, դուրսէն ոնէ լուր չունի, օգնութիւն եւ տեղեկութիւն հասցնեն իրենց եւ ցոյց տան թէ ինչ ուղղութիւն բռնեն, ինչ գործելակերպ ստանձնեն, ի հարկին կռուին թէ ենթարկուին:

Ջարտադի գայմագամութիւնը Ջէյթունի շրջակայ թուրք, չէրքէզ եւ քիւրտ գիւղացիներուն մասնաւոր հրահանգ եւ ոստիկաններ կը դրկէ եւ անոնց կ'ազդարարէ որ զէյթունցիներուն արմատք չծախեն, զանոնք չպարենաւորեն: Այս արգելքին հակառակ շարժողը կամ այն որ համարձակի գաղտնի կերպով ցորեն եւ այլ հացահատիկ տալ, մահուամբ պիտի պատժուի: Թուրքեր ենթարկուելով այդ խիստ հրահանգին, կը դադրեցնեն այլեւս յարաբերութիւն պահել զէյթունցիներուն եւ ոչ մէկ կենսամթերք չեն ծախեր անոնց: Մանաւանդ որ անոնց մեծ մասը համաձայն է արդէն կառավարութեան, զէյթունցին նեղը դնելու եւ ի վերջոյ Ջէյթունէն փախցնելու եւ կամ իսպառ բնաջնջելու ծրագրին, որպէսզի վերստին իրենց մնան անոնց հողերը, արտերը, պարտէզները, այգիները, զորս շահագործած էին չորս տարիներ 1915-1918 եւ տիրացած էին անոնց:

Ճամբաները շատցած են թուրք հրոսակները եւ կը վխտան զինուորական փախստականները, դասալիքները: Խալափուզի թուրք պաշտօնէութենէն կը հրահանգուի նաեւ զէյթունցիներուն, որ միայն արեւելքի ճամբան բաց է իրենց առջեւ, չլլայ որ հիւսիսի, արեւմուտքի եւ հարաւի կողմերը երթան ու արեւելքն ալ առանձին չերթան, եթէ

այս ազդարարութիւնը նկատի չառնեն եւ որեւէ գէյթունցի սպաննուի ճամբաները, կառավարութիւնը ինքը պատասխանատու չէ, այլ ինքը՝ ենթական: Մինչդեռ արեւելքի կողմի գիւղերը որեւէ օգտակարութիւն չեն ներկայացնել գէյթունցիին պարենաւորման տեսակէտով: Գալով Զէյթունի մօտիկ չէրֆէզ եւ քիւրտ գիւղացիներուն, անոնք երբեմն կը յարաբերին եւ արմատիք կը ծախեն, որպէսզի բարեկամ մնան եւ օր մը մի գուցէ գէյթունցիներէն իրենց մնաս մը չգայ: Այս պատճառով հարկադրուած են ցորեն, գարի եւ այլ հատիկներ ծախել գաղտնի միջոցներով:

Այդ օրերուն, Չախրեան Ասատուրը, որուն գէյթունցիք Չախրենց Խեւը կ'ըսէին, մէկ գէնքով, ջորիներով Ֆնտըզ չէրֆէզ գիւղը կ'երթայ ու ցորեն բեռցած վերադարձած ատեն, Խէտ աղբիւրի մօտերը թուրք գիւղացիներու եւ ոստիկաններու հետ կռիւի կը բռնուի: Կենդանիները ընկերներուն կը ձգէ եւ ինքը առանձին կը մնայ ու կը կռուի անոնց դէմ: Չորս ժամ կը դիմադրէ եւ ի վերջոյ փախուստի կը մատնէ զանոնք: Զէյթունցի միւս ընկերները, որոնք իրմէ առաջ Զէյթուն կը հասնին, կ'ըսեն թէ Ասատուրի դէմը թուրք ոստիկաններ ելան եւ կռիւի բռնուեցան: Խումբ մը տղաք զինուած, օգնութեան կը փութան Ասատուրին ու ճամբան կը հանդիպին անոր, որջ առ որջ եւ ուրախութեամբ կը վերադառնան Զէյթուն:

Դարձեալ, քանի մը օր ետքը, խումբ մը տղաք, Ֆնտըզ կ'երթան ցորեն բերելու: Իրենց վերադարձին, երկու հօրեղբոր որդիներ՝ Մուճուզեան Փարթոս եւ Համբարձում կը զատուին ընկերներէն եւ իրենց նախկին գիւղը՝ Խընրխէօզի ճամբան կը բռնեն, այդ ատեն այլեւս թուրքեր կը բնակին այդ գիւղը: 17 Յունիս 1921-ին, թուրք կառավարութիւնը խումբ մը ոստիկաններ կը ղրկէ նորէն Ֆնտըզի ճամբաները: Անոնք խումբով եկող տղոց վրայ չեն յարձակիր, այլ դարանակալ կը սպասեն: Ու առանձին մնացած Մուճուզեաններու վրայ կը կրակեն եւ կը սպաննեն զանոնք: Համբարձում ազնիւ եւ պարկեշտ երիտասարդ մըն էր, 1915-էն մինչեւ 1918, համաշխարհային պատերազմի տարիներուն, Արամ Չօլազեանի, Յովհաննէս Սիմոնեանի եւ ուրիշ տղաներու հետ գտնուած է Հայ Լեռ (Կեաւուր Տաղը) եւ սարսափն եղած է այդ շրջանի թուրք բնակչութեան եւ անհանգիստ ըրած է կառավարութիւնը: Կ'ուշանան այս երկուքը, կասկածելով անոնց մասին, դարձեալ խումբ մը տղաք կը զինուին եւ անմիջապէս ճամբայ կ'ելլեն դէպի Խէտ աղբիւր, անոնց դիակները կը գտնեն ու կը բերեն Զէյթուն: Զէյթունցի կը ստիպուի այլեւս աւելիով հատուցանել թշնամիին:

ՎԵՐՋԻՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ ՈՐ ԿԸ ՂՐԿՈՒԻ ՄԱՐԱՇ. ԿՈՒԻԻ ՆԱԽՕՐԵԱԿԸ. ՎԵՐՋՆԱԳԻՐ ԵՒ ԽԶՈՒՄ

Ամառը եկած է: Յունիսի առաջին օրերուն է: Մէկ երկու շաբաթ եւս եւ ահա հունձը կը սկսի: Զէյթունցին հաւատքով եւ յոյսով կը սպասէ հասկաքաղի գեղեցիկ վաղուան: Քանի մը օրէն պիտի մտնեն դարին փետտելու: Ու ահա, օր մը, Խալափուզէն գրութիւն մը կու գայ զօրանոց՝ Ազգ. Միութեան: Այդ գրութիւնով կը հրամայուի անմիջապէս պարպել զօրանոցը եւ իջնել վարը՝ Զէյթուն եւ բնակութիւն հաստատել այդ փլատակներուն մէջ, երկրորդը՝ գէնքերը յանձնել կառավարութեան: Ահա դժուարին երկու պահանջներ, որոնք կու գան ցնցել գէյթունցիին մեծն ու մանուկը: Ժողովուրդը կը յուզուի, կը շուարի: Պաշարի կողմէ, ամենէն անպատրաստ ժամանակն է: Յայտնի է թէ այդ պահանջներուն տակ թուրք կառավարութիւնը մտադիր է կրկնել 1915 թուականը: Զէնքերը յանձնել, զինաթափ ըլլալ, դիրքերը պարպել կը նշանակէ բռնել վերստին տարագրութեան ճամբան եւ երթալ դէպի ստոյգ փնացում: Դժուար էր մերժել այդ պահանջները, նոյնքան եւ աւելի դժուար էր սակայն յանձնել գէնք եւ զօրանոց: Կը մնայ նորէն ժամանակ շահելու միջոց մը գտնել: Օրօրել քիչ մը եւս: Նոյն պահանջը կը կրկնուի Մարաշէն, 18-ին Խալափուզ հասած երեք հոգիներ յանձնախումբի մը կողմէ, որուն անդամներն են ժանտարմըրիի հրամանատար Թէֆիք Պէյ, Գօլօրտունէն՝ Ահմէտ Էտիպ Էֆ. եւ զրաւթ միւսիւրի՝ Համտի Էֆ.: Անոնք 15 Յունիս թուակիր պաշտօնագրով մը կը կրկնեն վերոյիշեալ պահանջները, կ'աւելցնեն նաեւ զինուորագրուելու պահանջ մը, զոր ասկէ առաջ ըրած եւ թողուցած էին Ազգ. Միութեան պատճառաբանուած բացատրութիւններուն վրայ: Ու այդ մարմինը անվերապահօրէն կը յայտնէ թէ Միլլիական կառավարութիւն մը չի կրնար հանդուրժել որ Լեռնային Կիլիկիոյ մէջ, իր կառավարութիւնը չճանչցող, կիսանկախ ժողովուրդ մը գոյութիւն ունենայ, նման իրողութիւն մը կրնայ յետագային հայկական անկախ Կիլիկիա մը մէջտեղ բերել: Թուրքը այս բաները կը խորհի այնպիսի ատեն մը, երբ յունական բանակները Արեւմտեան Անատոլիոյ հասած են եւ երկիրը վերաւոր է: Այդ մարմինը, Մարաշէն իր հետը բերած պաշտօնագրով կը հրահանգէ նաեւ, որ զօրանոցը եւ գէնքերը յանձնուին Խալափուզի մանդըզան, միւսիւր զամըճըզցի Սաատէտտինի: Երկու օր լուրջ խորհրդակցութիւն մը կ'ուզուի Ազգ. Միութեան կողմէ, ելք մը գտնելու համար այս դժնդակ կացութեան: Թուրքը վճռած է այլեւս իր ընկեղը: Եկող ու գացող որեւէ պատուիրակութիւն որեւէ օգուտ պիտի չունենայ,

միայն քիչ մը ժամանակ եւս պիտի անցնի, ու եկողներէն ստոյգ տեղեկութիւն մը կարելի պիտի ըլլայ ձեռք բերել դուրսի կացութեան մասին: Թէ ինչ կ'անցնի կը դառնայ ազատուած գօտիին մէջ, թէ՛ ինչ է դուրսի Հայ Ազգ. Մարմիններուն միտքը Զէյթունի բռնելիք ուղղութեան նկատմամբ: Որովհետեւ ո՛չ մէկ ստոյգ բան կը կը լսէ զէյթունցիին արտասահմանէն, այսինքն թուրք տիրապետութեան սահմանէն դուրս գտնուող հայութենէն: Հասած լուրերն ալ թուրքերէն, չէրքէզներէն խեղաթիւրուած, խարդախուած, չափազանցուած տեղեկութիւններ են շատ անգամ: Երկու օրուան ընթացքին տեղի ունեցած բանակցութիւնները վերոյիշեալ երեք հոգիներէ մարմնոյ հետ, կ'անցնի ապարդիւն: Յիշեալ էտիպ էֆ. կ'ուղղարկուի Զէյթուն, հետը գրութիւն մը, թէ զէյթունցիք առանց ժամանակ կորսնցնելու իրենց կողմէ պատգամաւորութիւն մը ղրկեն Մարաշ: Թուրք կառավարութիւնը կ'աճապարէ, քանի Մարաշի մէջ համախմբուած ոյժ մը ունի, որ յունական ճակատ պիտի ղրկուի մօտ ատենէն, ուրիմն Զէյթունի հաշիւը մաքրել տայ բանակին, յետոյ Անատոլիոս ուղարկուի:

Երկար խորհրդակցութենէ մը յետոյ, Ազգ. Միութիւն եւ Ժողովուրդ ճարահատ եւ համախորհուրդ կ'որոշեն պահանջուած պատուիրակութիւնը ղրկել Մարաշ, որպէս վերջին փորձ մը: Բաւական դժուար կ'ըլլայ այդ ընտրութիւնը ընել: Որովհետեւ այլեւս դժուար է վստահիլ եւ մարդ ղրկել Մարաշ:

Վերջապէս կ'ընտրուի երեք հոգիներէ այդ բանադնաց Մարմինը, որուն անդամներն են. Ասատուր Կիւլվանըսեան, Յարութիւն Գասապեան եւ Վարդիվար Պալեան: 20 Յունիսին ճամբայ կ'ելլեն անոնք, Մարաշ հասածնուն պէս արգելքի տակ կ'առնուին ոստիկանութեան կողմէ: Թուրք կառավարութիւնը եթէ ասոնք տեսակ մը պատանդ չէ որ կը տանի, գոնէ, Զէյթուն գտնուող Ժողովուրդին միտքը համաձայնութեան մը յոյսով օրօրելու համար Մարաշ կը կանչէ: Եւ իրաւ ալ Ժողովուրդը այդ սպասումսով ոեւէ տարբեր քայլ չ'առնելու լինելէ քեմալական կառավարութեան ներկայացուցիչներու հետ բանակցութեան ընթացքին որեւէ համաձայնութիւն չ'ոյսացած, յարաբերութիւնները խզուէին, տակաւին Մարաշէն բանակը ճամբայ չելած, կարելի էր Վարդապետին կամուրջը քանդել եւ բռնել Զէյթունի բոլոր անցքերը, որով զօրանոցի պատերուն առջեւ զօրք հասցնելը ո՛չ թէ մէկ օրուան կամ մէկ շաբթուան գործ պիտի ըլլար, թերեւ ալ ամիսներու պիտի կարօտէր» (Վարդ Մեխակ «Զէյթունի նահանջը»):

Պատուիրակութիւնը կը տեսնէ որ այս անգամ կացութիւնը բոլորովին թշնամական է եւ անարգական իրենց համար: Ո՛չ ոքի հետ չի թոյլատրուիր յարաբերիլ: Անոնք կ'առարկեն թէ իրենք իրենց ա-

զատ կամքովը եւ կառավարութեան փափաքովը եկած են, իսկ որպէս փախստականներ վար կը դրուին. ստիկա անվայել է թէ՛ իրենց, թէ կառավարութեան: Լսողը ո՛վ է սակայն: Միայն Ասատուր Կիւլվանըսեանի կ'արտօնուի դուրս ելլել եւ քաղաքը պտտիլ: Որովհետեւ Հասան Գատը Զատէ Հաճի էֆ., որ Մարաշու Միլլի յեղափոխութեան պետերէն էր, իր բարեխօսութիւնովը եւ երաշխաւորութեամբը դուրս հանել տուեր էր Կիւլվանըսեանը: Միւս երկուքը կը մնան արգելքի տակ:

Մաթրը Լայմըն երբ կու գայ տեսնուիլ անոնց հետ, թոյլ չի տրուիր անոր այդ բանը: Աստուր վրայ վեր. Աբրահամ Յարութիւնեանի արտօնութիւն կը տրուի երթալ տեսնուիլ անոնց հետ եւ այն ալ անպայման որպէսզի խորհուրդ տայ անոնց ենթարկուելու, համոզէ որ զէյթունցիին յանձնուի: Եւ արդարեւ ալ վեր. Յարութիւնեան կը թելադրէ որ զէյթուրը եւ զօրանոցը յանձնեն, որովհետեւ կ'ըսէ. «Թուրք կառավարութիւնը միմիայն Մարաշի մէջ 12 հազար կանոնաւոր զօրք ունի, մեծ քանակութեամբ ռազմամթերք եւ թնդանօթ ունի, չէք կրնար դիմանալ, դուք գիտէք, հետեւաբար լաւ խորհեցէք: Անխոհեմ ընթացքով մը պատճառ մի դառնաք ձեր ընտանիքներուն եւ մանուկներուն փճացման: Փոքրագոյն չարիքը ընտրեցէք, կ'ըսէ վերապատուելին Զէյթունի այդ երեք բանադնացիներուն» (Ն. Զէյթունցեան):

Վերապատուելին ի մօտ ունէր անշուշտ Մարաշի ողջ մնացած հայութիւնը, անոնց վտանգուելու հաւանականութիւնը, թերեւ ալ մասամբ իրաւունք ունէր ու հաւանաբար անիկա ղրկուած էր Մարաշի հայութեան կողմէ: Նման դժուարութիւններու ատեն Մարաշի հայութիւնը, իր սեփական կաշիին համար յաճախ նոյն ընթացքը ունեցած է, աշխատած է համոզել զէյթունցիին որ անձնատուր ըլլայ: Հակառակ որ Զէյթունի գոյութիւնով իր գոյութիւնը պահած է Մարաշի հայութիւնը, յաճախ սակայն աշխատած է պատճառ ըլլալ անոր փճացման: Գոնէ ո՛չ մէկ խորհուրդ կամ թելադրութիւն իր կողմէ, այլ չեզոք դիրք մը բռնելու էր Մարաշի հայութիւնը նման պարագաներու տակ: «Մենք չենք խառնուիր, զէյթունցիին մեզ չի լսեր» ըսելով:

Երեք բանադնացիները երեք օր արգելքի տակ պահուելէ յետոյ 25 Յունիսին, երկու վաշտ զօրքով, թնդանօթներով ճամբայ կը հանուին: Հետեւեալ օրը կը հասնին Խալափուղ ու 27-ին ազատ կը թողուին որ երթան Զէյթուն: Իսկ զօրքը կը յառաջանայ կու գայ Ջերմուկի դաշտը՝ Գաթազամին աղբիւրը (Ճարտընինց), զօրանոցէն ժամ մը դէպի արեւելք: Պատուիրակութեան կ'ընկերանայ Մարաշի զինուորական իշխանութեան կողմէ յատուկ պաշտօնով Ռափայէլ Խալափեան: Ան

կը զրկուի Զէյթուն, համոզելու համար Ազգ. Միութիւնը եւ վստահեցնելու համար ժողովուրդը հրամանատարի խոստումներուն, իր հետ կը բերէ նաեւ թուրք զինուորական հրամանատարութեան մէկ վերջնագիրը, անով վերջին անգամ ըլլալով կը պահանջուէր կրկին զէնքերու յանձնումը եւ զօրանոցը:

Այդ պաշտօնագրով զինուորական իշխանութիւնը կը խոստանայ յարգել իր խօսքը եւ խոստումները, իսկ հակառակ պարագային, նոյն օրն իսկ ճիշդ կէսօրուան ժամը 12-ին պատերազմ պիտի յայտարարուի եւ զօրանոցը թնդանօթի պիտի բռնուի, մինչ բանակը արդէն կամաց կամաց կը մօտենայ զօրանոցին: Եկող բանակը կը բաղկանար երկու վաշտ կանոնաւոր զինուորներէ լաւագոյն, արդիական զէնքերով եւ թնդանօթներով եւ նոյնքան եւս հրոսակներէ, այսինքն Զէյթունէն 5-10 ժամ հեռաւորութեան վրայ գտնուող թուրք զիւղերու կռուելու տարիքը ունեցող այրերէ: Կային նաեւ չէչէններ, լեզգիներ, պէօքլիներ (զէյթունցին չէրքէզին Պէօքլի կ'ըսէ, գլխուն փափախին համար):

Իրարանցումը կը սկսի ժողովուրդին մէջ, ինչ որ բնական է նրման կացութեան մը մէջ: Պատուիրակները կը պատմեն անցած դարձածները, կը տեղեկացնեն Ազգ. Միութեան եւ ժողովուրդին, Մարտի մէջ իրենց հանդէպ ցոյց տրուած անարգական, թշնամական վերաբերմունքին մասին:

ՎԵՅ ՀԱՐԻՐԻ ՄՕՏ ԱՆԿԱՐՆԵՐ, ԿԻՆԵՐ, ԾԵՐԵՐ ԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐ ՄԱՐԱՇ ԿԸ ՂՐԿՈՒԻՆ

25 Յունիս 1921, կէս օր չեղած տակաւին, զօրքը շատ մօտէն կը սկսի պաշարել զօրանոցը Ազգ. Միութիւնը կ'ազդարարէ ժողովուրդին, որ զէյթունցին ըլլայ նախադրեալը, ապագայ պատասխանատուութենէ զերծ մնալու համար: Ազգ. Միութիւնը դարձեալ զերծ մնալու համար յետագայ պատասխանատուութենէ եւ պատճառ չդառնալու համար շատերու կեանքին, ժողովուրդին կ'ազդարարէ, որ անոնք որ յանձնուի կ'ուզեն, ազատ են: Կռուելու յարմարութիւն չունեցողներ, անկարներ, ծերեր, որքեւայրիներ, փոքրիկներու տէր եղողներ, փրկութեան փոքր յոյսով մը յարմար կը տեսնեն անձնատուր ըլլալ: Մանաւանդ որ կռուելու համար ուտելիք չկար, ռազմամթերք պէտք էր, բաւարար թիւով զէնք չկար, ժողովուրդը յոգնած էր, անօթի էր: Ու զէյթունցիներու տանելիք այս պատերազմը սոսկալի պիտի ըլլար, որովհետեւ թուրքը բերած էր այնքան ոյժ, որքան բերած պիտի ըլլար ժամանակին ամբողջ Հին-Նախկին Զէյթունի գոյութեան պարագային: Զօրքը կը բռնէ զօրանոցին հարաւը ու արեւելքը, հիւսիսը կը բռնէ պաշարագող խուժանը, իսկ արեւմուտքին են հեծելազօրքերը: Իրարանցումն ու եռուզեռը ծայր աստիճանի կը հասնին, ոմանք կը պատրաստուին երթալ յանձնուիլ, ուրիշներ պատնէշ կը բարձրացնեն, խրամներ կը քաշուին զէնքերնին գրկած, կ'ըսէ Ն. Զէյթունցեան իր գրքոյկին մէջ: Մայրը իր զաւակէն, կիներ իր ամուսինէն պիտի զատուէին, պիտի բաժնուէին անգամ մըն ալ զիրար չտեսնելու սարսափով: Սոսկալի էր այդ պահը: Լինել չլինելու ժամն էր: Վերջին հրաժեշտի ողջագոլորումներ, արցունքներ, յուսահատ հեծեծանքներ իրար կը խառնուէին: Կռուելու տրամադիր եւ պատրաստ երիտասարդութիւնը կ'ոգեւորեն զիրար ու կ'ըսեն՝ վերջին ժամը հնչեր է: Ինչ որ պիտի ըլլայ, թող ըլլայ: Անոնք պիտի պատասխանեն թուրքին, երբ նախադրեալ ըլլայ ու պիտի կռուի, պիտի շարունակէ կռիւը մինչեւ իր արեան վերջին կաթիլը: Ուրիշ միջոց եւ ճար չկայ: Իսկ անձնատուր ըլլալիքներուն համար, ընդհանուր զինուորական հրամանատարութեան կողմէ պատուիրակներուն բերնով խոստացուած է ոչ մէկ վնաս հասցնել եւ այդ խոստումը եղած է Մերձ. Արեւելքի Նպաստամատուցի ներկայացուցիչ՝ Մսթր Լայմընի երաշխաւորութեամբ: Անոնք անվտանգ պիտի տարուէին Մարաշ եւ հոն, ամերիկացիներու խնամքին տակ պիտի տեղաւորուէին: 150-է աւելի ընտանիքներ, շուրջ 600 հոգի պիտի երթային յանձնուէին թշնամիի «պատուոյ խօսքին», որովհետեւ Ազգ. Միութեան համար անոնց մասին, անոնց կեանքի ա-

պահովութեան մասին պատասխանատուութիւն ստանձնել անկարելի էր: Պ. Ռ. Խուլագեան պիտի հսկէ յանձնուողներուն: Զօրանոց մնացած մասը այլեւս բուն կռուող տարրը պիտի ըլլայ, որ թուրքին յանձնուելու տեղ, կ'որոշէ պատուով մեռնել: 740 հոգին կ'ըլլէ զօրանոցէն եւ կ'ուղղուի դէպի բանակ: Այնտեղ հրամանատարութեան կողմէ հրաման կ'ըլլայ, որ յանձնուողները, որոնց այրերը, եղբայրները զօրանոց կը մնան կռուելու համար, չընդունուին եւ ետ դարձուին: Ու 15-է աւելի կիներ, տղաներ կը դարձուին զօրանոց, որպէս ընտանիքները զօրանոց մնացող ապստամբներու: Անոնց կ'ըսուի, որ երթան իրենց ամուսիններն ու եղբայրները եւս համոզեն ու բերեն: Հազիւ թէ զօրանոց կը հասնին ետ դարձածները, ահա առաջին թնդանօթը կը նետուի զօրանոցին վրայ: Զօրանոցէն մերիկները կը պատասխանեն պաղարիւն կերպով: Վարանումի, չփոթութեան պահը կ'անցնի, տեսակ մը գինովութեան, ոգեւորումի ժամն է որ կը սկսի կռիւը սկսեալէն մէկ ժամ հազիւ թէ կ'անցնի, ընդհանուր հրամանատարին մէկ գրութիւնովը բժիշկ Ե. Էլմանեան եւ Ա. Կիւլվանըսեան զօրանոց կը ղրկուին, որպէսզի անգամ մը եւս յորդորեն կռուողներուն, որ զուր տեղը արիւն չթափուի, անձնատուր ըլլան եւ իրենց բան մըն ալ պիտի չընէ կառավարութիւնը եւ թէ յանձնուածները հանգիստ են: Երկու բանագնացները ետ կը դառնան, առանց դրական արդիւնքի կրակը կը վերսկսի, այս անգամ աւելի կատաղի կերպով: Թնդանօթները կը գոռան, բուռն կերպով կը ուժակոծեն 28 Յունիսին խորտակելու համար մերիկներուն դիրքերը: Այդ կէսօրուան մօտ, զօրանոցի կարգ մը մասերը կը սկսին կքիլ: Թնդանօթները կ'որոտան եւ ուռմբերը կը ծնեն զօրանոցը, որուն պատերը պիտի չկարենան երկար դիմանալ: Այս անգամ թշնամի գնդացիները կը սկսին գործել տենդօրէն: Համազարկ կրակով կը պատասխանեն ներսէն տղաքը: Կռիւր կը շարունակուի: Օրը կը տարածամի: Զէնքերը կը լռեն պահ մը: Այդ կարճ պահուն, կը մտածուի ընդհանուր խորհրդակցութիւն մը ընել վաղուան ձեռնարկուելիքներուն մասին: Առտուն, լոյսը բացուելուն, թշնամին կը վերսկսի կրակել ուժգին կերպով, ու տղաքը կը վերսկսին պատասխանել իրենց դիրքերէն: Ուտելիքի չգոյութիւնը կը ստիպէ գիրենք, որ մորթեն իրենց կենդանիները, որոնց աղբը եւ աղտոնութիւնները իրենց գարշահատութիւններով կ'ապականեն ներքո: Մէկ ջրհոր կայ ներքը, որուն ջուրը հազիւ խմելու կ'օգտէ, իսկ մաքրութեան չի հասնիր: Կռուողներու մեծ մասը, նկատի ունենալով մէկէ աւելի աննպաստ պայմանները, կ'որոշէ թողուլ զօրանոցը եւ նահանջել դէպի Դաշտային Կիլիկիա: Թուրք բանակը գիշեր մը եւ ցերեկ մը անընդհատ կրակելէ եւ զօրանոցը ուժակոծելէ յետոյ, կը

կը տեսնէ թէ կռիւը պիտի երկարի, զօրանոցը դրակելը ժամանակ եւ զոհողութիւն ու արիւն կը պահանջէ, քանի մը ժամ կատաղի համազարկներէ յետոյ, Զէյթունէն դէպի Մարաշ վեց ժամ յառաջացող յանձնուողներու կառուանէն Բարթուղիմէոս Վարդապետը ետ բերել տալով, զօրանոց կը ղրկէ, որպէսզի վերջին անգամ մըն ալ անոր միջոցով փորձ մը եւս ընէ կռուողները զինաթափ ընելու եւ անձնատուր ըլլալու: Ահա ճերմակ դրօշակով մէկը կը յառաջանայ ճամբայէն դէպի զօրանոց: Կռիւր կը դադրի պահ մը: Կը մօտենայ ան, 70 ձմեռներ եւ փոթորիկներ անցուցած Թազաճեան Հայր Սուրբն է: Կը մօտենայ ան զօրանոցի պատին եւ դուրսէն անգամ մըն ալ կը խօսի, կը խօսակցի ներսի մարտիկներուն հետ եւ կերպով մըն ալ կը հասկցնէ որ չյանձնուին: Արդէն, երկու օր առաջ դժուարաւ կարելի եղած էր համոզել զինք, որ որպէս 600 յանձնուող ժողովուրդին հոգեւոր հայր ընկերանայ անոնց: Ու վարդապետը իր հետ եկող զինուորներով կը դառնայ այնպէս, ինչպէս եկած էր, առանց որեւէ դրական արդիւնքի, ինչպէս որ կը նախատեսուէր: Անիկա թէեւ հոգիով քաջ, անվախ եկեղեցական մըն էր, անցեալի մէջ եւ 1806-ին նշանաւոր եղած էր Զէյթունի պատերազմին եւ անկէ առաջ ալ, սակայն այլեւս ուժէ ինկած էր, տկար էր, պիտի չկարենար հետեւիլ կռուողներուն: Որովհետեւ զօրանոցի կռուողներուն հոն մնալիքը յայտնի չէր, անոնք երկար ատեն պիտի չկրնային ներքո փակուած, պաշարուած մնալ եւ կռուիլ, ուտելիքը եւ ռազմամթերքը կը հատնին եւ այն ատեն ինչ պիտի ընեն եւ ինչով պիտի կռուին:

Այս դժուարին եւ յուզիչ վայրկեաններուն վրայ մեր հայրենակիցը՝ Ն. Զէյթունցեան հետեւեալ խորհրդածութիւնները կ'ընէ իր գիրքին մէջ: Այստեղ ընդհատելով մեր պատմութեան ընթացքը, պահ մը խօսքը կու տանք անոր. «Մարդիկ կան, որոնք, ճգնաժամային, դժոխակ վայրկեաններուն, այնպիսի հապճեպ եւ կենսական որոշումներ կու տան, որ մարդ իրապէս կը հիանար Բոլոր ո՞րն ու կարողութիւնը, միտքի դատողութիւնները վայրկեանապէս կ'ամփոփուին, ինքզինքնին կը լարեն, կը մտածեն, կ'որոշեն եւ վճիռ կու տան, այնպէս որ՝ իրենք ալ կը զարմանան թէ՛ իրենք էին գործողները եւ ի՞նչպէս կրցան այնքան շուտ գործել: Մարդ էակը մեծ է իսկապէս, մարդը այնպիսի ձիրքերով օժտուած է բնութենէն, որ կարելի չէ հիանալ անոր յատկութիւններուն վրայ, եւ զսպել որեւէ սքանչացում: Մէկ մտածում կ'անցնի անոր միտքէն թէ՛ նախախնամութիւնը զիս բարձր ստեղծեր է»:

Ու կը շարունակէ տակաւին Պրն. Զէյթունցեան այս խորհրդածութիւնները ու կ'ըսէ. «Տեղն է ընել այս խորհրդածութիւնները,

մինչեւ իսկ այն պահուն, երբ արիւնը կը հոսի ուղիսօրէն եւ իզուր արդարութեան ձայնը կ'աղաղակէ, աշխարհիս հզօրները մատնեմքին անգամ շարժել չեն հաճիր, ափ մը ժողովուրդը կամովին դատապարտած են մահուան:

Հիմա, մնացորդ ըմբոստ ափ մը ժողովուրդին ճակատագիրն է որ պիտի վճռուի, կրակի մէջ, հապճեպ ինքնամփոփումով մը... Մերունի Հայր Բարթողիմէոս բերանացի պիտի յայտնէ իր կամքը կրկին: Անձնատուութեան առաջարկն է որ բերե՛ր էր ան: Ազատութեան սիրահար, բռնութեան դէմ ընդվզող բարի եւ քաջարի եկեղեցական մը, թուրքին գործած անիրաւութիւններուն աններող հոգի մը, այդ օր իսկ ձեռքովը կը բերէր այդ յորդորը անոնց՝ որոնք իրմէ իսկ ուսած էին ազատ ապրելու գաղափարը, անձնագոհութեան ոգին, անձնատուութեան սեւ-դաժան հրահանգը հաղորդելու հարկին տակ կը գտնուէր:

Ալեգարդ Հայրենասէրին կեանքն ու այս վերջին գործը անհաշ էին իրարու: Թշնամին փափաքելով շահագործել իր ներկայութիւնը անձնատուր եղողներու խումբին մէջ, առաջարկած էր անձամբ վերադառնալ զօրանոց, եւ կռուողներուն վրայ իր ունեցած հեղինակութեամբը յորդորել զանոնք որ անձնատուր ըլլան: Ան՝ հակառակ որ եղած առաջարկութիւնը բոլորովին ներհակ էր իր զգացումներուն եւ տեսակէտներուն, ընդունած էր այդ պաշտօնը, պարզապէս անգամ մը ալ կարենալ տեսնելու համար իր սիրելի զաւակները, անոնք, որ ուխտած էին իր գործը շարունակել անպայման եւ կռուիլ մինչեւ իրենց արեան վերջին կաթիլը: Ու ան փոխանակ գործադրելու իր ստանձնած պաշտօնը, անգամ մըն ալ կը յորդորէր ու կը քաջաբերէր, վերջին անգամ մըն ալ կը ներշնչէր իր բարձր հայրենասէրի եւ քաջամարտիկի ոգիովը, որ մեր պապերուն յիշատակն էր եւ որուն անգամ մը եւս կ'ուխտէինք հաւատարիմ մնալ, կռուիլ հայրենի լեռներուն վրայ ու իյնալ պատուով այնտեղ:

Մերունին թէեւ բաժնուիլ չ'ուզեր, բայց պայմանաժամը լրացած ըլլալով, բաժնուելու դժուարին պահը զինքը կը նեղէր, ինքն ալ կ'ուզէր միանալ ներսը, կռուողներուն, եկած վայրկեանէն իսկ: Խօսակցութեան պահուն նիւթէն կը շեղի եւ եղած հարցումներուն պատասխանելէ կը դադրի, կռուողի մը՝ դրան առջեւ կեցած մեր պահակին խօսքեր կ'ուղղէ: Ինքը կը սկսի հասկնալ թէ՛ կոխը լա՛ւ վճակի մէջ է, լաւ կը ղեկավարուի:

Կտրիճ ծերունի, անբախտ վարդապետ, քու տարիքիդ բերումով կը զրկուիս վերջին կռիւէն ու կորիւններդ դրօշիդ տակ հաւաքելէն, զանոնք անցեալի քու փորձ խօսքերովդ գօտեպնդելու եւ այդ

արիամարտն ալ վարելու փափաքէդ կը զրկուիս: Ու թշնամին, մինչեւ իսկ համարձակած է քեզի պէս մեծ հայրենասէր հերոս մը ծառայեցնել իր նպատակին: Թուրքը ինչ որ ալ ըրած եւ եղած ըլլայ, քու հոգիիդ խորը թափանցելու ուժն ու կարողութիւնը չունի: Ան չի կրնար ըմբռնել հայրենասէր հօր մը սրտին խորը թագնուած ազատատենչ աղաղակը: Ուր որ ալ երթան անոնք, անվերջ աւեր ու արիւն կը սփռեն, չէն գիւղեր ու քաղաքներ բուերու վայրցներու կը վերածեն: Անոնց անցած տեղը խոտ ու կանաչ չի բուսնիր: Իրենց ծնած օրէն իբրեւ ցեղ, կարծես քաղաքակրթութեան թշնամի եղած են:

Հէ՛յր, անոնք քեզ լաւ կը ճանչնան, անբասիր, պարզուկ եւ անկեղծ եկեղեցական մը: 1895-ին, թուրք եւ սուրբ խաչը ձեռքերուդ, զօրանոցի այդ դրան առջեւ գերի թուրք զինուորներուն, թուրք պաշտօնեաներուն շարան շարան խաչիդ եւ սուրիդ տակէն խոնարհելով անցնիլդ դիտեցիր: Այն օրը, փառքիդ գաղաթը հասած հրճուեցար: Ու հիմա, նոյն դրան առջեւ այսպէս... մեզ անձնատուր եղէք առաջարկը կը բերես: Դուն մեզ կը ճանչնաս ու մենք գիտենք դուն ինչ կ'ըսես, քու հոգիդ ինչ կը խօսի ու մենք այդ բոլորը գիտենք:

Ու Հայր Սուրբը, աչքերը հրաժեշտի արցունքովը լեցուած, յուզուած եւ դողդոջուն քայլերով կը հեռանայ դէպի թուրք բանակատեղին: Կ'երթայ ան կռուողներուն անձնատուր չըլլալու վճիռը հետը տարած: Ակամայ կը հեռանայ ան, սակայն սիրտն ու հոգին մեր հետն է:

Հազիւ թէ բանակատեղին կը հասնի ան, կրակը կը վերսկսի աւերի բուռն, աւերի ուժգին: Ի վերջոյ կը տանին զինքը եւ կը հասցնեն ու կը միացնեն տակաւին Մարաշի կէս ճամբան սպասող կարաւանին:

Հայր Սուրբին մեկնելէն յետոյ, մարտիկները կացութեան հետզհետէ աւերի վատթարանալը նկատի առած, կը խորհրդակցին եւ կ'որոշեն լքել զօրանոցը, սակայն անձնատուր եղող 600 հոգինոց կարաւանէն զատ տակաւին զօրանոց կը մնային կռուողներուն մէջ քանի մը հարիւրէ բաղկացած կիներ, կռուելու անկարողներ, որոնք չէին կրնար ոչ կռուիլ, ոչ ալ իրենց հետ ճամբայ ելլել: Ու կռուողները, շուրջ 350 հոգի պիտի զատուէին անոնցմէ, դուրս պիտի գային զօրանոցէն եւ կռուելով պիտի քաշուէին, նահանջէին թրջական սահմանէն դուրս: Իսկ 110 կիներ, մանուկներ, անկարներ պիտի մնային ներսը: 1821-ի Յունիսի 28-ն է: Երկուստեք կրակը կը շարունակուի: Թողանթի ուռմբերը կը սկսին զօրանոցին մէջ մէկ քանի բնակարաններու պատերը փլցնել: Քանի մը կիներ եւ տղամարդեր կը

վիրաւորութիւն: Զէնքերու ձայները եւ թնդանօթներու որոտը կ'արձագանգեն մինչեւ Սուլապտէտէ, Պէրզինկա եւ Շէմպէքի լեռները: Այլեւ տակաւին ներս մնալ եւ սպասել անկարելի կը դառնայ: Պէտք է պաշարուամի շղթան խորտակել, դուրս խոյանալ եւ հեռանալ: Այլեւ պատրաստութեան մէջ են: Թէ՛ կռիւը կը շարունակուի եւ թէ իրիկուան մեկնումին համար կը պատրաստուին: Ո՛չ մէկ յոյս եւ հրահանգ դուրսէն, ազատ գոտիէն: Եթէ արտաքին աշխարհի հայրենակից Միռօթիւններէ, Ազգ. պաշտօնական մարմիններէ կամ իշխանութենէ մը որեւէ հրահանգ գար հասնէր, թէ հոգ պէտք է մնաք եւ կռուիք ու ի հարկին կռիւի մէջ սպառիք, հատիւք զօրանոցին մէջ եւ կամ չուրջը, Կիլիկիոյ փրկութեան կամ հայ դատին ի նպաստ, Զէյթունի տղաքը պիտի մնային հոն ու պիտի կռուէին մինչեւ իրենց վերջին մարդը եւ վերջին գնդակը: Սակայն չեկաւ ու չեկաւ ոչ մէկ հրահանգ, չհասաւ ոչ մէկ ձայն: Կարօտով սպասեցին անոնք այդ լերան ծայրը սոսկալի ճակատագրին ձգուած, եղբայրական ձեռքի մը, եթէ ոչ, գոնէ գօտեպնդիչ լուրի մը: Կէս ժամ վերջը պիտի ճեղքէին պաշարման գիծը եւ դուրս գային, ի հարկին զարնելով ու զարնուելով թշնամի բանակին հետ, այս էր իրենց վերջին եւ կարճ ծրագիրը: Զօրանոցին մէջ մնացած կիներ եւ մանուկներ իրենց պարագաներուն կողքին, կ'ուզեն քալել հեռանալ մարտիկներուն հետ, չիյնալու համար թշնամիին ձեռքը, սակայն անոնցմէ շատեր անկարող են: Մերեր, հիւանդներ, կիներ եւ երեխաներ ինչպէս ընկերանան, քալեն օրեր ու շաբաթներ լեռներու մէջէն, թշնամիին կրակին եւ հետապնդումներուն ենթակայ: Իսկ բաժնուիլ անոնցմէ, իրենց սիրելիներէն ու ահա ժամ մը յետոյ գլուխ ծռել բարբարոս թշնամիին, ոչ նուազ սոսկալի էր: Այդպիսիներուն լացն ու կոծը, աղաղակը եւ ողբը քարերը, ժայռերը կը շարժեն: «Ո՛ր կ'երթաք, կ'ըսեն անոնք, ձեր հրացաններով, ձեր սուրերով սպաննեցէք մեզ յետոյ գացէք ու մի թողուք թուրքին ձեռքը: Յանկարծ զօրանոցին մէջ, շատ մօտէն գէնքի ձայն մը կը լսուի: Այդ բոպէի իրարանցումին մէջ, հայրենակից մը՝ Յովհաննէս Գարագուշեան, իր քսան տարեկան կնոջ, այդ գեղեցիկ նոր հարսին թախանձանքին թէ «Ո՛ր կ'երթաս ամուսինս, դիսպաննէ ու մի թողուր հոս», որովհետեւ հիւանդ էր եւ պիտի չկրնար հետեւիլ նահանջողներուն: Իր հրացանի մէկ գնդակով Յովհաննէս սպաննած էր իր կինը նորատի, որ զօրանոցին բակը անթաղ մնաց, գերեզման մ'իսկ չունեցաւ: Այդպիսի աղաղակներ, աղերսանքներ այնքան սարսուռով կը պատմեն ականատեսներ, որ մարդ չի կրնար չլալ, չհեծեծել: Ու այդ նոր հարսը հրեշտակի մը գոհունակ ու ժպտուն դէմքովը, իր պայծառ ճակատովը յաւիտեան կը քնանայ:

կ'ըսէ ն. Զէյթունցեան ու կ'աւելցնէ. «Օրհնեալ ըլլայ յիշատակդ ով հարս, քու յիշատակդ պիտի խօսի յաւիտ հայ կոյսերուն, հայ մայրերուն, հայ կտրիճներուն: Դուն արհամարհեցիր ստրուկի մը կեանքը ապրիլ եւ ընտրեցիր հերոսուհիի մը մահով մեռնիլ, թերեւս ամբողջ մարմինդ ափ մը հողէ ալ զուրկ մնաց: Քու յիշատակդ թարմ թող մնայ զէյթունցի մայրերու սրտերուն մէջ»: Թնդանօթը կը գոռայ մինչեւ իրիկուն, կը ծեծէ զօրանոցին պատերն ու ներսի խեղճուկ բնակարաններուն տանիքները: Պատերագմը կատաղի կերպով կը շարունակուի: Կին մը եւ երկու ուրիշներ կը վիրաւորուին: Իրիկուան կը սպասեն մարտիկները, դիշերուան գրոհին համար: Զէնքին ձայնը բնաւ դադրած չունի, հրացանաձգութիւնը կը շարունակուի ներսէն ու դուրսէն: Իրիկուն կ'ըլլայ ու դարձեալ արշալոյսը կը բացուի: Այդ օրն ալ զօրանոց կը մնան մարտիկները ու կը շարունակեն կռուիլ մինչեւ մութը կոխելը: Քաջուկ նորաշխարհեան, այդ օրը, թշնամի կարծուելով իր ընկերներէն կը զարնուի զօրանոցին մէջ եւ կը մեռնի: Ուրիշ կորուստ չկայ: Իսկ թէ թշնամիին կորուստը որքան է, մարդ չի գիտեր: Այդ օր ալ վերջին օրն է, տեղւոր շարժում մը սկսած է զօրանոցին մէջ: Ամէն մարդ իրիկուան համար կազմ ու պատրաստ պէտք է ըլլայ: Ոմանք իրենց գէնքերը կը մաքրեն, պակասները կը լրացնեն, փամբշտակները կը նորոգեն, ուրիշներ իրենց կօշիկները կը կարկտեն: Իրիկունը կը մօտենայ, մութը կ'իջնէ ու կը պատէ ամէն կողմ: Ու տակաւին գէնքերու ձայնը կ'արձագանգէ մինչեւ հեռուները: Ընտանիքներու մէջ, սիրելիներէն ոմանք, կիներ եւ նոյնիսկ անչափահաս պատանիներ պիտի հետեւին մարտիկներուն, իսկ ուրիշներ իրենց մանկիկները չեն կրնար թողուլ եւ բաժնուիլ անոնցմէ: Յունիս 30 է: Գիշերուան ժամը 10-ը: Բոլոր ներսիները ոտքի են: Անոնք որ պիտի մեկնին, պիտի բաժնուին իրենց սիրելիներէն, յուզուած են այդ վայրկեանին, պիտի ելլեն դուրս զօրանոցէն, բաց դժուար է բաժնուիլ իրենց պարագաներէն եւ թողուլ գիրենք: Սակայն ուրիշ ճար չկայ, իրենց ինչ ըլլալը, ուր մնալը եւս յայտնի չէ, կրակին մէջ պիտի նետուին, ով գիտէ թէ իրենցմէ քանի՞ն ողջ պիտի մնան: Իսկ ներս մնացողերը գիտեն թէ վերջին բաժանումն է որ տեղի կ'ունենայ եւ իրենց ալ կեանքը ժամերու խնդիր է: Ու վերջին համբոյրներ, լաց ու կոծեր, ողբ ու հեծկտուքներ իրար կը խոռոնուին: Արցունքները կը հոսին, աղերսանքներ խաւարին մէջ մարդու մարմինը կը փշաքաղեն: Վերջապէս գրոհի ժամը հասած է: Թշնամին այդ պահուն, չենք գիտեր ինչ հաջուով, ինչ կանխատեսութեամբ տեղի կու տայ, կ'ընկրկի ու ահա խոյացող մարտիկները զօրանոցի փոքր դռնէն, այն դռնէն, ուրկէ 1896-ին դուրս կ'ելլեն այն հին

մարտիկները՝ Շամբէշիշեան, Չագրեան, Մարկանեան եւ անանուն մեր հերոսները, կը խուժեն զօրանոցէն դուրս: Կը յառաջանան հարաւ արեւմուտքին վայրէջքէն, Ճապկի Չայիրէն վար, Շուղրի գետեզրը ու կ'անցնին Հէլվիւրկօնը լիճէն: Այնտեղ կը հանդիպին թշնամի ուժերու, ընդհարումէ մը յետոյ կը յառաջանան այլեւս, դարձեալ դէպի հարաւ արեւմուտք: Ծրագրուած է, երկու մասերու կը բաժնուին անոնք, մէկ մասը թշնամիին հետ չփման մէջ, իր կռիւը շարունակելով պիտի յառաջանայ իսկ միւսը որ չունէր անհրաժեշտ զէնքերն ու ռազմամթերքը, թշնամիին առանց հանդիպելու, զգոյշ քար լերով կ'ընթանայ գետի հեռուէն, կու գայ կ'անցնի ան Անի ձորէն, Քէլ Ալէ Մատէն, Խախմայէն, Պայրազտարի աղբիւրի հանդիպակաց կողմէն, Շանլեանց տեղերէն Աւագկալի առջեւէն: Ամենուն հասնելից կայանը պիտի ըլլայ Ղալաճուխ, Ճանավորինք ըսուած երբեմնի հայ գիւղին մօտակայ բլուրը: Ճապկի Չայիրէն մինչեւ Հէլվիւրկօնը կէօլը, մինչեւ Անի ձորի մեծ սօսին կը մնան եւ կը սպաննուին 30 նահանջողներ, որոնցմէ էին Չօլագեան վարպետ Արթինը⁷³ իր կնոջ հետ, Արամի ծնողքը եւ ուրիշ կիներ եւ քալելու անկարող ծերեր եւ տկարներ: Ղալաճուխ կը հասնին 318 հոգիներ: Անոնցմէ 72-ը կիներ եւ անչափահաս աղջիկներ ու մանչեր եղած են նահանջէն առաջ, 26-ին, զօրանոցի զէյթունցիներուն ընդհանուր թիւը 1058 է, որոնցմէ 600-ը անձնատուր եղած են, իսկ 110-էն աւելի կիներ, մայրեր, մանուկներ չկրնալով հետեւիլ եւ ընկերանալ նահանջողներուն, զօրանոցի կիսաքանդ պատերուն տակ կը սպասեն իրենց անհնարին կերպով ահաւոր ճակատագրին: Քիչ վերջը թշնամին պիտի գար, պիտի խոշտանգէր, ամէն տեսակի չարչարանքներէ յետոյ, սուրերով ու բիւրերով պիտի սպաննէր զանոնք, զօրանոցը թնդանօթի կրակին տակ պիտի առնէր: Ու այդպէս ալ եղած էր: Մայրեր, աղջիկներ, փոքրիկներ հուրի եւ սուրի տակ ջարդուած էին: Նահանջողները, առտուն, արեւածագին, հեռուէն իրենց ճամբու ընթացքին կը տեսնեն զօրանոցին վրայէն բարձրացող թանձր ծուխը եւ կը լսեն թնդանօթի որոտը: Ողջ մնացողներս չենք կրնար մոռնալ մեծ եղեռնի մեր զոհերը, մեր ջարդուած ծնողները, եղբայրները, քոյրերը, իսկ զօրանոցի մէջ այդ խեղճ կիներու, մայրերու եւ իրենց աղջիկներու, մանկիկներու այդպէս սպաննուիլը, մեր հոգին կը մորմոքէ ու մեղի պահ մը մառնել կու տայ թէ անոնք տակաւին այդ վայրկեաններուն մէջն են, դեռ կը սպասեն ոմանք կիսամեռ, ոմանք խոշտանգումի բռնակէն, լլկանքի ահռելի վայրկեանին: Անոնք արդեօք այդ օրուան համար ծնած էին: Ու հոս միտքս կու գայ Թուխ Արամազդի՝ Ա. Ահարոնեանի, մեր մեծ ցաւի երգիչին սա տողերը...

Այսքան չարիք Թէ մոռաման մեր որդիք
Թո՛ղ ողջ աշխարհ հայիմ կարգայ մախատիմ
Ու յետոյ՝
Թէ անգոր է սրբել արցումք աշխարհում,
Գահ էլ պէտք չէ, եւ ո՛չ Աստուած երկմնում:

Թուրք բանակէն զատուելով, նահանջողները հետապնդող ուժերը կը հասնին Բամկի ձոր ու այլեւս կ'անհետանան: Արեւը ծագելէն յետոյ, զէյթունցի մարտիկներու յետսապահ տղաքը կը նշմարեն դարձեալ նահանջողները հետապնդող ջոկատներ: Եւ յայտնի է, թէ Թուրք զինուորական իշխանութիւնը չէ ձգած նահանջողները իրենք իրենց: Ու իրաւ ալ, հետզհետէ կանոնաւոր զօրքին հետ ոտքի պիտի ելլէ այդ չրջանի ժողովուրդը, բոլոր գիւղացիները, մինչեւ Անտրոլնի, մինչեւ Ազատ գօտիի սահմանները, մինչեւ Օսմանիէ, Պաղչէ եւ անանկ ալ եղած էր: Թշնամին պիտի հալածէր ու պիտի աշխատէր բնաջնջել զէյթունցին, մէկ հոգի իսկ ողջ պիտի չձգէր:

Խուճը մը տղաք կը մնան Ղալաճուխի մօտ, որպէսզի ի հարկին կուրին թշնամիին հետ, մինչեւ որ միւսները հեռանան եւ Ֆոնուզի մօտերէն անցնելով իջնեն Անտրոլնի չրջանը, դէպի դաշտային կիլիկիա: Այդտեղ կը հանդիպի լրտես զինուոր մը եւ կը սպաննուի: Մինչեւ յետինք նորէն թշնամին մէջտեղ չէ: Հեռագիտակով Արամ Չօլագեան եւ ուրիշներ միշտ կը քննեն չրջակայ ճամբաները, բարձրութիւնները: Յետինք է՝ Ճամբայ կ'ելլեն նահանջողները Ֆոնուզի ուղղութեամբ: Յետինքէն մինչեւ լուսածագ կը քայլեն եւ կը հասնին Աղալու ըսուած լեռը: Այդ օրը, մինչեւ յետինք կը մնան Աղալու, կը հանգստանան ու ժամանակ կ'ունենան կարճ խորհրդակցութիւն մը ընելու, բռնելիք ուղղութեան մասին: Այդտեղ կը մտածուի երկու ճամբաներով յառաջանալ, մէկը Անտրոլնի ուղղութեամբ, իսկ միւսը Ֆնտրճագի վրայօք Պաղչէ, սակայն այս երկու ճամբաներն ալ պիտի տանէին նահանջողները Օսմանիէ: Ֆնտրճագի մօտէն, Ճիհանի վրայի կէնէի Քէօփրիւ կոչուած կամուրջէն անցնելով աւելի կարճ ճամբայ պիտի կտրէին Օսմանիէ հասնելու համար: Սակայն լսած էին թէ դէպի արեւմուտք, Անտրոլնի ճամբով աւելի ապահով էր յառաջանալ: Անտրոլնի կողմը բանակ չկար, մինչդեռ Ֆնտրճագի ճամբան Մարափ մօտ էր եւ Թուրքը մեծ ոյժ ունէր այդ չրջանը: Բայց պէտք էր նկատի ունենալ թէ Զէյթունի կռիւը եւ նահանջը արդէն մինչեւ հեռունքը լսուել էր եւ Թուրքը կանոնաւոր բանակէն զատ, ինչպէս ըսինք քիչ առաջ, ամբողջ չրջանի թրջութիւնը զանգուածային հետապնդման ելած էր ու լեռնային անցքերը անմիջապէս բռնուած էին: Ու տակաւին Աղալու են, Զէյթունէն Ծ ժամ հեռու: Ու Ճիհանը

գտնելու համար փոխանակ Ֆնտրճագի ճամբով շարժելու, ինչ որ չենք կարծեր թէ տարբերութիւն մը ընէր, կը բռնեն դարձեալ հարաւ արեւմուտք, կ'ուղղուին դէպի Պոլստուզ, Շէպիլկի ու կ'անցնին գիշերանց լեռները, նեղ արահետներէ: Կէս գիշերին Սու Պաթան կոչուած վայրը երկու լեռներու մէջէն պիտի անցնին ու ահա թշնամին կը կրակէ: Յուլիս 2-էն 3 լուսնայիք գիշերն է: Նահանջող խումբերը կը պատասխանեն, սակայն հոն կենալ չ'ըլլար, որովհետեւ թշնամին ամուր դիրքերու ետեւն է, իսկ մեր մարտիկները բացն են: Կարճ հրացանաձգութենէ մը յետոյ, իրենք ալ բարձր դիրքեր գրաւելով, այս անգամ կը սկսին աւելի ուժգին կրակել թշնամիին վրայ, որ վերջ ի վերջոյ կը լռէ: Սակայն գէյթունցիներէն երեք հոգի պակսած են: Կին մը մեռած է, Պայենց գիւղի Մեղրիկեան Յովսէփ Բահանան անհետացած է, մէկ ուրիշը վիրաւորուած է: Մէկի եւ Զէքի ճէքի երեք չորս ժամուան կռիւէն ետքը մարտիկներ Պոլստուզի առջեւէն կ'անցնին ու կը հասնին էլմա Տաղը: Կը յառաջանան անցնելով կածաններէ, գիշերուան ժամը 8-ին ատեններուն Աղճէ Գալէի մօտ կը պաշարուին կանոնաւոր զինուորներէ, որոնք այնտեղ դիրք բռնած կը սպասեն: Վիրաւոր կէնը անկարող հետեւելու մարտիկներուն, եւ սակայն թշնամիին ձեռքը անցնելով, որպէսզի չհարցաքնեն եւ ի վերջոյ, ինչ ինչ չարչարանքներով չսպաննեն, իր խնդրանքին վրայ իսկ տեղւոյն վրայ մերինները կը սպաննեն: Այդ շրջանը այլեւ դուրս կը մնար Զէյթունի սահմաններէն ու բոլորովին անձանթ են ճամբաները նահանջողներուն: Ուրեմն նահանջողները խումբ խումբ, մաս առ մաս կ'անցնին այդ վայրերէն գգուչութեամբ: Դեռ արեւը չծագած Կապանի գետակէն անդին կռիւը կը վերսկսի: Յուլիսի 3-4-ին գիշերանց կը շարունակեն յառաջանալ ու դեռ լոյր չբացուած կը հասնին Աղղոտի բերդին մօտերը: Չորս օրուան ճամբու տաժանքէն եւ յոգնութենէն յետոյ, երկու օրուան կռիւէն դժուարութեամբ, քաշքռտուելով կը քալեն տակաւին ցերեկ չեղած ամուր դիրք մը բռնելու համար: Դժուար է թէ՛ կռուիլ եւ թէ՛ նահանջել այդ անձանթ եւ թրքարնակ վայրերուն մէջէն: Սակայն դեռ չլուսցած, ահա թուրքերէն լեզուով լուրջօր էք դուք, ի՞նչ է ձեր նշանը՝ ըսելով, խիտ անտառին մէջէն ձայն մը կը բարձրանայ: Մերինները չեն պատասխաներ, ձայնը կը կրկնուի, տղաքը դարձեալ լուռ են ու երբ երրորդ անգամ ձայն չեն հաներ մերինները, ձայնին կողմէն հրացան մը կը պայթի, որուն կը հետեւի ուժգին համազարկ մը անտառէն նահանջողներուն կողմը: Մերոնք, երբ զէնքերու ձայններէն եւ հանած կայծերէն կը ճշդեն թշնամիին տեղը, իրենք ալ կը պատասխանեն փոխադարձաբար: Կռիւը կը տեւէ աւելի քան երեք

ժամ, լուսածագը մօտ է: Թշնամիին ոյժը շատ մեծ է: Բայց մարտիկները արիօրէն կը կռուին թշնամի անհաւասար ուժերուն դէմ: Կռիւը թէեւ հետզհետէ կը դանդաղի, կը կենայ, սակայն գէյթունցիք կը տեսնեն, որ դէպի ազատ գօտին ճամբան շարունակել այլեւս անկարելի է, կը մտածեն ետ դառնալ, որովհետեւ թուրքը շատ մեծ պատրաստութիւն ունի այդտեղ, մինչեւ Ճիհան, Ֆրանսացիներուն գտնուած սահմանը տակաւին երկար է, եւ թշնամին կեդրոնացուցած է այդ վայրերը մեծ քանակութեամբ զօրք, թնդանօթ, զնդացիք եւ հետեւողականօրէն զինքը կը հետապնդէ, ուրիշ ճար չկայ, կամ կռուելով պիտի հասնիլ եւ կամ ետ դառնալ, դէպի Զէյթունի լեռները եւ հրոսակային կռիւներով ահաբեկել թշնամին, ուր որ ալ ըլլայ Փոքր-փոքր խումբերու կը բաժնուին եւ ետ կը դառնան: Այդ վայրերը ամբողջ թրքութիւնը խմացեր է, որ գէյթունցիներ կ'անցնին եւ ընդհանուր շարժում մը սկսած է ծայր տալ: Անոնց ամէնը, 15 տարեկանէն մինչեւ 80-ը զինած է կառավարութիւնը: Ետ դարձի ճամբու երկայնքին, երկու կողմերու վրայ չիման մէջ են մերինները թուրքերու հետ: անընդհատ կը կռուին: Թշնամին կ'ենթարկուէր մեծ կորուստներու: Նահանջողները կը բաժնուին երկու գլխաւոր թեւերու, որոնց մէկուն պետն է Զօլաքեան Արամ, իսկ միւսը կը գլխաւորէ Կարապետ Տէմիրճեան: Արամի խումբին մէջ էր նաեւ Լեւոն Նորաշխարհեան, Նազարէթ Զաւուչի մէկ տղան: Այս խումբը չորս ժամ քայլելով կը հանդիպի Գարապօղազի կիրճը թշնամիին: Այնտեղ կ'ընդհարին անոր եւ հոն կ'իյնան Լեւոն Մայեան, Արմենակ Գուլուկեան, Նազարէթ Աշուկեան: Կարելի չէ յառաջանալ: դէպի ետ, կը վերադառնան Շիրակիի եւ հոն կը գտնեն Եաղուպեան Յարութիւնը, ձուկալուշեան Նազարէթը եւ Մուճուխեան Նիկան: Այս խումբը պիտի սպասէր եւ քիչ մը շեղելով դարձեալ պիտի շարունակէր իր ճամբան դէպի Զէյթունի լեռները: Իսկ 32 հոգինոց փոքր խումբ մը, Կարապետ Տէմիրճեանի եւ Թորոս Մարկանեանի առաջնորդութեամբ, առաջինէն հեռու, տարբեր ճամբաներով կը հարկադրուի իր նահանջը շարունակել դէպի Ճիհան-Օսմանիէ: Խումբերը այսպէս այլեւս իրար կը կորսնցնեն: Մինչդեռ այս խմբակը կը կարծէ թէ միւս խումբերը իրենց ետեւէն կու գան: Այս խումբին մէջ էին միայն 15 կռուողներ 8 կանոնաւոր զէնքերով: Իրենց հետն էին 11 կիներ եւ 6 պատանիներ, 13-14 տարեկան: Ասոնք առաջին օրը կը հասնին Անտճրդի դիմացի լեռ եւ ջուր փնտռելու համար կ'իջնեն ձոր մը: Թշնամին սակայն դադարի կը հետապնդէ զիրենք, մինչեւ ջուրին վայրը, այնտեղ դէմ առ դէմ կու գան մեր տղաքը եւ կանոնաւոր զինուորներ, կը զարնեն ու կը զարնուին: 15 զինուորներ կը սպաննուին, որոնցմէ երկու

մատուցէր եւ մէկ չախմախի հրացան կ'անցնէր նահանջողներուն ձեռքը ու տեսնելով որ թշնամիին ոյժը անգնահատելիօրէն մեծ է, դիւշերը վրայ կը հասնէր, մօտակայ անտառը կը մտնէն եւ իրենց հետքը կը կորսնցնեն։ Այդ ամայի անտառին մէջ 12 օր անօթի մնալէ յետոյ, երկու հոգիի Օսմ. հնչուն ոսկի մը կու տան որ երթան վարը, վարունգի արտ մը, զոր նշմարած էին, այնտեղի պահապանէն վարունգ գնեն։ Կ'երթան այս երկու տղաքը, պահապանը կը գտնեն, ոսկին կու տան որ իրենց վարունգ տար։ Պահապանը ոսկին կ'առնէ եւ անմիջապէս հաւար կը փրցնէ, կը պոռայ «Զէյթունցի կեանքները եկան»։ Մօտի թուրք գիւղացիները կը հասնին, այդ երկու տղաներէն Նշան Թօզլիկեանը կը խեղդեն վայրկեանապէս, իսկ միւսը փախչելով կը հասնի բնկերներուն եւ կը պատմէ եղածը։ Թուրքերը սակայն հետքը չեն ձգեր փախչողին ու վարպետօրէն, դաղտազողի կը հետապնդեն ու կը գտնեն մերիններուն ապաստանած վայրը։ Խուժան եւ գինուոր կը հասնին, կոխը կը վերսկսի եւ կը տեւէ 3 ժամ։ Սակայն կարելի չէ աւելի դիմանալ ու կը յաջողին խուսափիլ եւ քաշուիլ մէկ կողմ, որովհետեւ թշնամին այնքան սեղմած է պաշարման շրջան, որ երկու հակառակորդ կողմերը շատ անգամ իրարու գէնքերուն ծայրերը կը բռնեն ու կը կռուին, իրարու գլուխ քարեր կը տեղացնեն։ Այս կռիւին զոհ կու տան Սեդրակ Տէճեան երիտասարդը, իսկ Շորվոլեան Արշակ ժայռի գաղաթէն սահելով կը գլորուի անգունդը եւ ջարդ ու փշուր կ'ըլլայ։ Այնտեղ կը կորսուի նաեւ իր կինը։ Մնացածները մերթ հեռուէն, մերթ մօտէն Քէյքլ Սուի եզերքն ի վար կը յառաջանան Ճիհան հասնելու համար։

Խումբի տղաքը գիշերանց գետին կը մօտենան, ջուր կը լեցնեն իրենց ջրամանները, կը յառաջանան դարձեալ դէպի Ճիհան։ Ծամբան կը հանդիպին թուրք գիւղ մը, կը պաշարեն դայն, սակայն ոչ ոք կայ։ Մեղունքու փեթակներ կը գտնեն, բաւական մը մեղր կը հանեն ու կը մեկնին։ Պաշարնին շատոնց էր որ սպառած է եւ աթ տասնեակ օրերը խոտերով եւ վայրի բոյսերով անցուցած են։ Ուտելիք հայթայթելու համար ժամանակ չեն կրցած գտնել կռիւին եւ գիշերը ըրած իրենց նահանջի ընթացքին։ Անօթի, ծարաւ, շարունակ կռիւ թուրք կանոնաւոր զօրքին եւ պաշտպօղուղներու հետ, իսկ դիւշերը նահանջել անծանօթ, քարքարուտ, դժուարին տեղերէ, դիւրին գործ չէ։ Ու կը շարունակեն ճամբան գիշերը, մոլորած եւ անտեղեկ տեղերուն եւ ճամբաներուն։ Լոյսը կը բացուի, եւ ինչ տեսնեն, թուրք բանակատեղիին շատ մօտ են։ Թշնամին, որ միշտ գաղտնի կը հետեւէր իրենց, չէր ձգեր իրենց հետքը, ահա արդէն իրենց մօտ է։ Կոխը կը սկսի անմիջապէս եւ ամբողջ օրը գրեթէ անընդհատ կռիւ։ Մեծ գետի մը ափն են հասած, Ճիհանն է ահ, զոր չեն ճանաչ-

նար մերինները։ Կոխը կը շարունակուի։ 17 տղաներ կը յաջողին Ճիհանը անցնիլ թշնամի մատուցէրներու եւ գնդացիներու կրակին տակ։ Կիներ եւ ուրիշներ գետը կը նետուին, անոնցմէ ոմանք թշնամի կապարին տակ գետամոյն կ'ըլլան, ուրիշներ լողալ չգիտնալով կը խեղդուին եւ հոսանքը կը տանի գիրենք։ Կիներ ուզած էին գետին մէջ հեղձամահ ըլլալ, քան թէ թշնամիին ձեռքն իյնալ։ Գէորգ Անապատեան 15 տարեկան պատանին, առանց նշմարուելու գետին եզերքը ծառ մը կը բարձրանայ եւ այնտեղ կը պահուրտի խիտ ճիւղերու մէջ։ Ուրիշ երկու քաջ լուղորդներ գետը կը նետուին, ինքզինքնին մեռել ձեւացնելով, ալիքներէն կը քշուին։ Ոչ ոք կը հետապնդէ գիրենք եւ շատ վարը, անծանօթ եզերք մը դուրս կ'ելլեն։ Անդրանիկ Զազրեան այծեմորթի ջրատիկը (ղալագ) օգով լեցնելով, վրան նստած, կ'անցնի գետը եւ կ'ազատի Անապատեան Գէորգ ծառին վրայ կը լսէ թշնամիին սա խօսակցութիւնը։ «Երանի թէ մեր պետը՝ Ալի Աղան չմեռնէր եւ թող այս կեանքները անցնէին երթալին»։ Իսկ քանի մը կիներ ալ գերի կ'իյնան։ Հոսանքն ի վար լողալով Օսմանիէ կը հասնին ողջամբ Թորոս Մարկանեան եւ Քիրէճ գիւղէն Հայկ Ծօթառեան։ Նախապէս գետը անցնող 15 տղաքը գետին մէջ լողալով եւ թշնամիին դէմ կոխը շարունակելով անցած էին միւս ափը։ Այդ կռիւի վայրը, Ճիհանի ափին Արագլը ըսուած տեղն է։ Մինչեւ այդտեղ թէեւ իրենց կորուստը եղած էր 3 հոգի, սակայն այս վերջին կռիւին, Ճիհանի ափը, իրենց կորուստը կ'ըլլայ 12 հոգի, տղամարդ, կին եւ անչափահաս պատանիներ։

Այս փոքր խումբին մէջ էին Կարապետ Տէմիրճեանի եւ Թորոս Մարկանեանի գլխաւորութեամբ Նշան Թօզլիկեան, Յակոբ Պօզոլեան, Մարգիս Հաշարեան, Տիգրան Ղըզլալեան եւ իր տղան Անդրանիկ, Անդրանիկ Զազրեան, Մեսրոպ Խասեան, Մանուկ Պալեան, Մարկոս Նորաշխարհեան, Սեդրակ Տէճեան, Արշակ Շորվոլեան, Դանիէլ Դանիէլեան (Մարաշի, որ Քիրէճ գիւղը կը բնակէր եւ այնտեղէն Զէյթուն եկած է), Արթին Քէօրէեան, Երջանիկ Խուլմանեան, Գրիգոր Քիրէճլեան, Յակոբ Շանըլեան, Արթին Զուլուեան, Միսաք Մարգարեան, Օհանէս Ալեքսանեան, Եղիսարէթ Մ. Պալեան, Մարթա Խուլմունեան, Հայկանուշ Պատիկեան, Սառա Զարդեան եւ ուրիշ երկու կիներ։ Անոնցմէ կ'ազատին դարձեալ Մանուկ Պալեան, Եղիսարէթ Պալեան, Միսաք Մարգարեան։ Գէորգ Անապատեան ծառին վրայ բաւական տան պահուած մնալէ յետոյ, երբ այլեւս ապահով կը զգայ ինքզինքը, 11 Յուլիսին գիշերը թափառումներէ յետոյ կը հասնի Օսմանիէ եւ կ'երթայ, կը յանձնուի Օսմանիէի Ֆրանսական պահակազօրքին։ Յաջորդ օրը Ազգ. Միութեան իմաց կը տրուի եւ Գէորգը կը յանձնեն

պատեանի ընկերներն են: Ասոնց խումբը ընդամենը 32 հոգի են եղեր: Ինչպէս գրեցի առաջին նամակներուս մէջ, նոյնը կը պատմեն անոնք ալ: Միւս ընկերներուն բաժնուած տեղը շատ հեռու չըլլալով, ճիշդ Հարունիէի դիմացը, Ճիւան գետին անդիի կողմը, ամբողջ թուրք գիւղացիութեան եւ զինուորներուն առջեւ պատերազմը կը շարունակուի կ'ըսեն, կը սպասեն միշտ օգնութեան: (Իրենց հետ ունին հայկական մեծ դրօշակ մը, որ բերած էին Դամասկոսէն, ու Արամ Զաւուշի խումբին քովն է):

Հիմա լսեցինք որ վեց հոգի զէյթունցիներ եւս հասած են Մամուրէ կայարանը:

Մնամ յարգանքներով՝ ձերդ

Ն. Թ. Տէյիրմէնճեան

Ուրիշ նամակ մը եւս:

15 Յուլիս, 1921, Օսմանիէ.

Վսեմաշուք Տիար Մ. Տամատեան

Ատանա

Երէկ տեղս ժամանող թուրքէ մը քաղեցինք հետեւեալ տեղեկութիւնները:— Զէյթունցիներու մեծ խումբ մը, կը պատմէ այդ թուրքը, Հարունիէէն ասդի կողմը անցած ատեն, թուրքերը իրենց ճամբան կապեցին, Արամ Զաւուշ լուր մը դրկեց:— Գիւղացիներ, մենք ձեզի հետ բան մը չունինք, ճամբայ տուէք որ անցնինք, երթանք, հակառակ պարագային մինչեւ մեր արեան վերջին կաթիլը կը կոտինք եւ ձեզ ամբողջ փճացնելէ առաջ ասկէ չենք երթար: Ու նոյն թուրքը կը շարունակէ պատմել:— Անոնք մտիկ չըրին, շարունակեցին իրենց կոխը: Զէյթունցիները Ալվալըզ գիւղը պաշարելով, ամբողջ գիւղը եւ գիւղացիութիւնը փճացուցին եւ անկէ անցան, գացին:

Ալվալըզ գիւղը Ղըզըլ Աղաճի դիմացը եւ Խաչ-Պէլի միւս կողմը կը գտնուի:

Դարձեալ երէկ կէսօրէն վերջ, տեղս հասաւ Խալահէի Գապագլար գիւղէն զըզըլպաշ Նէպի անուն մարդ մը (քիւրտ): Ան կ'ըսէ. «Զէյթունցիներու 120 հոգիէ բաղկացած խումբ մը Շէրի-Գանլը գիւղը պաշարելով, ամբողջ գիւղը տակն ու վրայ ըրին: Միմիայն մարդիկը չսպաննեցին եւ պատիւի չդպան եւ անկէ անցան գացին Խասսա»:

Շէրի-Գանլը գիւղը Մէյտան էկպէզէն հեռու է կէս ժամ լեռներու մէջ, իսկ Խալահէէն երկու ժամ հեռաւորութիւն ունի:

Մնամ յարգանքներով

Ն. Թ. Տէյիրմէնճեան

Նահանջէն Նորէն Դէպի Զէյթուն

Այդպէս, դժուարին եւ տխուր պարագաներու տակ փճանալէ ետքը, դէպի Ճիւան նահանջող 32 հոգինոց փոքր խումբը, որուն պատմութիւնը ըրինք վերի էջերով, մարտիկներու ստուար մեծամասնութիւնը կը բաժնուի երկու խումբերու եւ տարբեր ճամբաներով, սակայն գրեթէ իրարու զուգահեռաբար կը յառաջանան լեռներու եւ անտառներու մէջէն, ճարահատ դարձեալ դէպի Զէյթունի լեռները, շարունակ զարնելով ու պատուհասելով ճամբան հանդիպած թշնամի ուժերը, անոնք ըլլան կանոնաւոր զինուոր կամ հասարակ թուրք գիւղացի: Զօրանոցէն ելլելէն Ծ օր յետոյ, իրարմէ անջատ եւ տարբեր ճամբաներով կը յառաջանան վերստին դէպի հայրենի ամրութիւնները, հարկադրաբար մղելու համար յուսահատ գոյապայքար մը, որպէս «Արջ օրհասական» հզօրագոյնս կ'ուրին»:

Այս երկու մեծ խումբերը սակայն ճամբաները վերստին կը ստորաբաժնուին աւելի մանր եւ քանի մը խմբակներու 10, 20, 50-ական մարտիկներով, որովհետեւ համոզուած են թէ այժմ, Օսմանիէ կամ Ատանա հասնիլ եթէ ոչ անկարելի, գոնէ վտանգաւոր էր եւ ստոյգ փճացման ճամբան էր բոլորին համար: Այս բաժնուածներուն մէջ մեծագոյնը Արամ Զօլագեանի խումբն էր: Այս խումբն էր, որ 32 հոգինոց եւ դէպի Ճիւան յառաջանալով խումբին ետեւէն, կռուի վայրէն մինչեւ չորս ժամ յառաջանալէ յետոյ, քանի մը կորուստներէ վերջ կը դառնայ Շիպլիկի եւ հոն ապաստանած զէյթունցիներ եւս գտնելով, ինչպէս նախորդ էջերով անունները յիշած էինք, կը սկսի քալել դէպի Զէյթուն: Յուլիսի առաջին կէսին, կը հասնի Քէօրսուլու: Անկէ այս խումբը եւ միւս մանր խմբակները տարբեր ժամանակներու մէջ կը հասնին Աղալու: Այնտեղ հասնող ամէն խումբ, իւրաքանչիւրը մէկական օր կ'ընդհարին թշնամիին, սակայն առանց իրարմէ լուր ունենալու եւ առանց նոյն օրուան մէջ հանդիպելու թշնամիին: Այնպէս որ Աղալու հասնող բոլոր խումբերն ալ ցերեկ մը կատաղի կոխ մղելէ վերջ, գիշերները իրենց հետքը անհետացնելով, կ'ուղղուին դէպի Զէյթուն: Սակայն որեւէ խումբի կիսատ թողուցածը կը լրացնէ յաջորդ խումբը Աղալուի այդ ընդհարումներուն, մեծ վտանգ սպասեցնելով թշնամիին: Այդ մեծ խումբէն, փոքր հատուած մը Քէօրսուլուն կ'անցնի ու կ'ապաստանի Քէօշլուրկէի դիմացը: Երկու օր հանգիստ կ'ընէ Քէօշլուրկէի լեռը: Երեք օր յետոյ ետ մնացող մեծ մասը, Արամի խումբին, կը հասնի Աղալու, հոն որ օրերէ ի վեր կոխի մարզ մը դարձած էր: Այս խումբն ալ կը զարնէ ու կը զարնուի նախորդներուն պէս մինչեւ իրիկուն: Այդտեղ կը կորսուին Արահամ Արաբխանեան, Փարթոս Պարտազեան, Պօղոս Աշուկեանի,

Տանապաղ Մանուկի եւ խառնան Մեսրոպի կիները: Կը վիրաւորուի Քիրէճեան Տէօվէթ: Այսպէս ուրեմն բոլոր խումբերը շարունակ կը-
ւելլով եւ ընդհարելով կանոնաւոր եւ ոչ կանոնաւոր թշնամի ուժերու
հետ, կը յառաջանան, անոնցմէ յափշտակելով պաշար, մինչեւ անգամ
տասնեակներով մսացու կենդանիներ, կով, եզ: Եւ սակայն կորուստներ
ալ կ'ունենան իրենց մէջէն: Այդ վայրերը, շարունակական կռիւներէ
յոգնած, ուժասպառ բաւական թիւով կիներ եւ անոնց հետ Ազարեան
Յակոբ կը մնան ճամբաները, ետ մնալով կռուելով յառաջացողնե-
րէն, չի գիտցուիր թէ ինչ կ'ըլլան այդ կիները: Իսկ կարգ մը կիներ,
այլեւս անկարող կռուողներուն հետ յառաջանալու, իրենց ամուսիննե-
րէն եւ եղբայրներէն կը խնդրեն որ դիրենք սպաննեն իրենց ձեռ-
քերով, իրենց դաշոյններով եւ դանակներով մորթելով, առանց հրա-
ցանի ձայն հանելու եւ առանց գնդակ սպառելու: Եւ քանի քանի
կիներ այսպէս սպաննուած են թշնամիին ձեռքը չիմալու համար:
Այդ վիճակը, այդ կացութիւնը այստեղ չիշելն իսկ կը փշաքաղէ մեր
մարմինը, մեր արիւնը կը սառեցնէ մեր երակներուն մէջ: Իսկ զայն
կրելը, անոր մէջ ըլլալը, անոր ենթարկուիլը ուրիշ բան է քան մա-
հը: Սոսկալի եղաւ անոնց եւ բոլոր այդ մարտիկներուն ճակատագիրը
Արդեօք այդ օրուան, այսպիսի վախճանի՞ մը համար աշխարհ եկած
էին անոնք, եւ իրենց ծնած օրը ուրախացած էին իրենց ծնողները:
Թշնամին ալ թէեւ ունեցած է անհամեմատօրէն մեծ կորուստ, թե-
րեւս չորս հինգ անգամը, սակայն մեր սիրելիներուն ճակատագիրը
շատ դժնդակ եղաւ, տխուր ու ահաւոր: Թշնամիին ինկածներուն
տեղ, շարքերը շուտ շուտ կը լեցուէին, սակայն մերիներուն տեղը
ուրիշը չէր գար, անոնց տեղը նորեր ծնող, հասցնող ծնողներ
չկային, անոնք անապատներու մէջ ջարդուեցան, անօթի մեռան: Մեր
մէկ սպաննուածը այս նահանջի ճամբուն վրայ, անփոխարինելի էր
մեզի համար, հայութեան համար: Թշնամիին հարիւրին հետ չէր կա-
րելի հաշուել կամ փոխել: Յոգնութիւն, անօթութիւն, կռիւ անընդհատ,
դիւրին չէ, ըսել, դրել ու անցնել: Կռիւներէ յետոյ պէտք է ան-
համբեր սպասել դիշերուան գալուն, սեւ խաւարին, սեւ ու մութ
անտառներուն, հետքը անհետացնելու եւ կռիւէն խուսափելու համար,
որովհետեւ այլեւս այդ վիճակին մէջ կարելի պիտի չըլլար թշնամիին
հետ բռնուիլ: Անտրուրէն Աղալու, Փռնուզ ու անկէ դէպի Չէյթուն
պէտք է քաշուիլ, ցերեկը կռուելով, գիշերը քալելով, անցնելով
«Սեւա ու մթին լեռներու խիտ, անթափանցելի անտառներու, քարքարոտ
կիրճերու, անապատներու մէջէն եւ առանց սակայն փրկութեան յոյ-
սի: Որովհետեւ չէ՞ որ արդէն լքած էին այդ հայրենի բարձունքները:
Հեռացած էին Չէյթունէն, անկարելի ըլլալով հոն մնալ ու հիմա

դարձեալ դէպի հոն, դէպի թշնամին, բանակին ու խուժանին երթալ,
ի՞նչ տրամաբանութեամբ, ի՞նչ յոյսով, եթէ ոչ, հայրենի հողերուն
վրայ իմալու կարօտով, գոնէ հոն մեռնելու փափաքով: Ու այսպէս
ալ պիտի ըլլար եւ եղաւ շատերուն բախտը: Անոնց մարմինները չոր
կմախք դարձած կը քալեն անոյժ եւ անյոյս: Անոնցմէ մաս մը կը
հասնի Փռնուզ, կը սկսի քիչ մը շունչ առնել, վայրի, ինքնաբոյս
պտուղներով իր քաղցը մեղմել ու առանց օր անցընելու ճամբայ
կ'ելլէ դարձեալ, ետեւէն կը հասնին հետզհետէ ուրիշ խմբակներ ու
կը մեծնայ դարձողներուն թիւը: Անոնց բոլորին կեդրոնանալիք վայ-
րը պիտի ըլլար Չէյթունի անմիջական սահմանէն ներս ու օրստօրէ
անոնք զիրար կը գտնեն ու կը միանան: Որովհետեւ հասկցած են,
թէ այդ պայմաններուն մէջ Չէյթունի սահմաններէն դուրս եւ այդ-
պէս բաժան բաժան, յոգնած, անօթի եւ թշնամիներով պաշարուած
ամէն կողմէ, անկարելի էր մնալ: Ուրեմն ետդարձ դէպի Չէյթուն
եւ եթէ պատահի որ ողջ մնան օր մը, երբ պայմանները թոյլատու
ըլլան, վերստին նահանջել եւ անցնիլ ազատ գօտին: Բան մը, որ ա-
նոնց շատերուն համար մնաց երազ ու մեր լեռներուն վրայ փակե-
ցին իրենց աչքերը: Մէկ մասը կու գայ Ղուրա ըսուած վայրը, Կու-
սիսին-Չէյթունի Շուղը գետակի մօտը (դաշտային տեղ մը, ուր
հայրենակ գիւղակ մը կար 1914-էն առաջ Ղուրա անուամբ): Ուրիշներ
կը հասնին կրկին իրենց ու կը յառաջանան Պէհեսիլիք, Արեգին, Ա-
լապաղի գիւղերէն մին, հազիւ մէկ օր կը մնան Պէհեսիլիք ու
կ'ուղղուին Ղալապոյուն: Այդ տեղը հասնողներու թիւը 50-ի կը մօ-
տենայ: Ատոնցմէ 8 տղաք, իրենց գէնքերով, Ճահանը կ'անցնին, գի-
շերանց, զաղտնի եւ զգոյշ Մարաշի մօտէն, Պազարճըզի քովէն կը
բռնեն Այնթապի ուղղութիւնը, լեռնային արահետներէ ողջամբ կը
հասնին Այնթապ: Ազատուելով Այնթապ հասնողներն են.- Կարապետ
Թաշճեան (Սիվ քէլլէն), Հայկ Պաշայեանը, Նշան Սանկիկեանը, Եղ-
իա եւ Լեւոն Մուճուզեանները, Մանուէլ եւ Մանուկ Պալճեանները
եւ Սերոբ Սերոբեանը: Իսկ մնացածները կ'ուղեւորին դէպի Չէյ-
թուն, կը հասնին ուրիշներուն եւ իրենց թիւը 100-ը կ'անցնի:

Այնթապ ազատ գօտի մէջ է: Հոն են դաշնակից ուժերը: Այն-
թապի Ազգային Միութիւնը անհրաժեշտ ընդունելութիւնը եւ խնամքը
տալով, տասը օր յետոյ զանոնք կը դրկէ Հալէպ: 318 նահանջողնե-
րէն մօտաւորապէս 150 մարտիկներ կը յառաջանան ուրեմն դէպի
Չէյթուն: Փռնուզցիներ կը բաժնուին եւ կը քաշուին Փռնուզի լե-
ռը, ատեն մը կազդուրուելէ յետոյ երթալ միանալու համար դէպի
Չէյթուն ուղղուած ստուար խումբին: Բաւական ժամանակ յետոյ,
երկրորդ խումբ մը Արեգինէն կը հասնի Չէյթունի մօտերը գտնուող

վերոյիշեալ խոշոր խումբին: Ուրիշ խմբակ մը, որ ինչպիսի հայ գիւղը ապաստանած է, կրկին կը նահանջէ Յակոբ Միքայէլեանի առաջնորդութեամբ եւ Յուլիսի վերջերը կը հասնի Օսմանիէ: Այդ խմբակը 9 հոգիներէ կը բաղկանար եւ որոնցմէ մէկը 13 տարեկան տղայ մըն էր, իսկ 3-ը կիներ էին:

Օսմանիէ, Ատանա եւ Այնթապ հասնող ազատուածները իրարմէ ոչ մէկ տեղեկութիւն ունէին: Ու չէին գիտեր թէ դէպի Զէյթուն դարձողները ինչ եղան: Հալէպ հասնող վերոյիշեալ 8 հոգիները խումբէն կարելի եղաւ որոշ տեղեկութիւն ստանալ տեղի ունեցած կոլուներուն, նահանջին եւ նահանջի ընթացքին բախումներուն, ընդհարումներուն մասին:

Ինչպիսի եկած էին նաեւ Պէհսնիյիքէն ուրիշ մարտիկներ, անոնք ճամբու ընթացքին կը հանդիպին նոր նոր ետ դարձողներու, որոնց ամէն մէկը իր առանձին պատմութիւնն ունի: Ատոնցմէ մաս մը եւս կը զատուի, կ'երթայ դէպի Զէյթուն եւ քանի մը դարձողներ կու գան Միսլ, ճամբան ասոնք կը տեսնեն թշնամի հետազօտիչներու խումբ մը եւ առանց զիրենք նկատելու իրենց քովէն կ'անցնին: Քիչ մը անդին թշնամին Միսլի (Աւագկալ) պարտէզներուն մէջ կը հանդիպի երեք տղոց, որոնք թթենիի մը վրայ ելած էին եւ թութ կ'ուտէին: Թշնամին անակնկալի կը բերէ զանոնք եւ հրացանազարկ կ'ընէ: Այդտեղ ինկող այդ երեք քաջ տղաքն էին Անդրանիկ Պապրթուքեան, Գալուստ Միսեռեան եւ Յովհաննէս Աւանեան: Միսլի շրջակայքը ապաստանողներ, ալ չեն մնար ու ճամբայ կ'ելլեն միացիներու ամարանոցը՝ Շուղուրլու եւ անկէ ալ Մուլք՝ գէյթունցիներու դովոցը: Այնտեղ կը միանան ուրիշ խումբի մը եւս, որոնց ղեկավարներն էին Սեդրակ Մարկանեան եւ Զօլագեան: Միացման ծրագիրը, եթէ կարելի է, այդպէս ատեն մը ծրագիր ունենալ, այդքանով կը վերջանայ: Այս ընդհանուր համախմբումներէն, հոս ու հոն դուրս կը մնային տակաւին խաչեր Նորաշխարհեանի եւ աւագկացիներու խումբերը՝ խաչերի խումբը՝ Աւագկալի արեւմտեան թիկունքի Ղուզախ Սարը, իսկ աւագկացիները խանոս անտառը քաշուած էին: Ֆունդիկներն ալ տակաւին կը մնային իրենց լեռը: Զէյթունի անմիջական մօտերը հասած այս ցիրուցան խումբերը հեռուէն կը նկատեն որ զօրանոցը թուրք զինուորներ կան, կը մտնեն, կ'ելլեն, թէեւ զօրանոցին մէկ մասը այրած, աւերակ էր դարձած, սակայն միւս մասին մէջ զինուորներ կը սպասեն, որպէսզի չլլայ թէ նահանջողներէն դարձողներ լլայն եւ գան գրաւեն զօրանոցի գիրքը: Զօրանոցի զինուորներէն մաս մըն ալ պարբերաբար որպէս հետազօտիչ խումբեր կ'ելլեն, կը պտըտին այդ շրջականները, մարդկային որսեր փնտռելու շահատակու-

թեամբ: Ու յաճախ ընդհարումներ, կռիւներ տեղի կ'ունենան ցիրուցան խմբակներու եւ հետազօտող զօրքերու եւ պաշտպօզուզներու միջեւ: Թշնամին կ'ունենայ լուրջ կորուստներ, սակայն մեր տղաքն ալ անգնաս չեն մնար: Ինչպէս գիտենք սկիզբէն իսկ, որ նահանջողներու մէջ բաւական թիւով կիներ ալ եղած են, եւ ատոնցմէ ոմանք ինչ պարագաներու տակ կը սպաննուին, ոմանք ճամբաները կը մնան, ուրիշներ ինքզինքնին գետը կը նետեն, լեռներէն վար կը ցատկեն ու կը ջախջախուին: Կը մնան սակայն վերապրողներու մէջ տասնեակ մը կիներ, որոնք տոկալով անօթութեան, ճամբու տափանքներուն եւ յոգնութիւններուն ընկերացած են կռուող եւ կռուելով նահանջող կամ ետ դարձող իրենց այրերուն, իրենց եղբայրներուն: Անոնք այլեւս չափազանց յոգնած են, ընկճուած ու պէտք ունին հանգիստի: Մինչդեռ այրերը նոյն հանգիստին պէտք ունենալով հանդերձ, ճարը չկար, միշտ պատրաստ պէտք է լլլային կռուելու, որեւէ անակնկալ դիմազրակելու: Մտահոգ են անոնք այդ կիներով, պէտք էր անոնց ապահով թաքստոց մը գտնել, հոն տեղաւորել զանոնք, ազատ լլլալ անոնց հոգէն եւ ի հարկին կռուի: Այդ, բոլոր խումբերը Զէյթունի մօտերը հասնելէն յետոյ, լեռներու անցքերու ամուր վայրերու մէջ կը տեղաւորեն այդ կիները, որ կազդուութիւն, ի հարկին օր մը կրկին իրենց հետ կարենալ քայլելու համար: Իսկ տղամարդիկ այլեւս անառիկ բարձունքներու գագաթը կը մնան, պատրաստ որեւէ անակնկալ պատահարի: Թէեւ, ինչպէս ըսինք, թէ՛ նահանջի եւ թէ՛ վերադարձի ընթացքին քանի մը կիներ նախընտրած են իրենց այրերուն ձեռքով սպաննուիլ, թշնամիին ձեռքը չիյնալու համար: Զէյթունցի կիներ հինէն ի վեր եղած է կրօնասէր եւ հայրենասէր եւ այս երկու առաքինութիւնները զինքը քրած էին պատուախնդիր եւ պահած բարոյական մաքուր, ամբասիր բարձրութեան մը վրայ: Միշտ, ի հարկին ան կռուած է գէն ի ձեռին, նոյնիսկ քարերով ու եղունգներով իր ամուսնոյն կողքին՝ թշնամիին դէմ, պաշտպանելու համար իր պատիւը: Հազուադիւս դարտուղութիւններ մատի վրայ համրուող, քանի մը տասնեակ հազարներու մէջ, բնական է որ գտնուին ամէն տեղ: Եղած էր երբեմն, որ լեռ բարձրացած մարտիկներ զանգատած էին կիներու մասին: Մինչդեռ անոնք իրենց պարտականութիւնները լրիւ կատարած են ամէն տուն, նահանջի եւ վերադարձի ընթացքին:

Գալով այրերուն, շատ մը խմբակներ կը միանան եւ կը ձեւացնեն ստուարագոյն խմբաւորում մը: Ըստ ծրագրի կ'ընթանայ գործը, կարգապահութիւնը կատարեալ է: Ամէն անհատ իր գործը ունի, աշխատանքը բաժնուած է ըստ յարմարութեան եւ վարժութեան: Մեծի, առաջնորդողի հովեր չկան: Ի հարկին ղեկավար առաջնորդը

կը լսէ անոնց ամենէն համեստը: Ամէն կռուող գիտէ իր գործի բաժինը:

Ինչպէս քիչ առաջ յիշեցինք, Խաչեր Նորաշխարհեանի խումբը կանգ կ'առնէր Ղուգախ, որպէս հանգստանալու վայր մը: Յից, առ անձին, կոնաձեւ լեռ մըն է Ղուգախը, մայրիի, կաղնիի եւ այլ անտառային խիտ ծառերով, եւ առուույտի խոտերով ծածկուած: Հոն է «Սոփի աղբիւրը»: Ամայի է վարը՝ Աւագկայր Ղուգախի հարաւ արեւմուտքը աւերակ է Խէրէղէճ (Գառաղաճ) հայ գիւղը: Աւելի հեռուն կ'երեւան Տ. Մովսէսեանց Ծուրտը, Սիւնէի աւերակները, քովը Տօլաղըն: Ոչ մէկ հայ շունչ այս տեղերը: Վայրի գազաններ եւ կէօչէփէի թիւթմէն եօրիւքներ կու գան ու կ'անցնին դէպի Ջէյթունի եայլաները իրենց հօտերով, ուղտերու երամակներով, նախիրներով եւ ձիերու, կովերու վրայ բեռնաւորուած գոյքերով եւ ընտանիքներով: Ու լեռ քաշուածները կը դիտեն անոնց կարաւանները, առանց անոնցմէ նկատուելու: 1921 Յուլիսի 21-ին, քաջ մարտիկ Խաչեր Միքայէլեան չորս ընկերներով Գրազալ էօզ կ'երթայ խումբին ուտելիք բերելու Հաճի Իպրահիմ ուշաղըներէն: Անոնցմէ 40 ոչխար վերցնելով կը վերադառնայ: Սակայն, ճամբան Խանոս երբ կը հասնի, կը լուսնայ: Տերեկը հոն կ'անցընէ թշնամիներէն չնկատուելու համար, ու մութը սկսելուն՝ ճանբայ կ'ելլէ: Հաճըրարցիք կը հասնին իրեն ու ահա կոխը կը սկսի Խաչերի հինգ հոգինոց խմբակին եւ 30 հաճըրարցիներուն միջեւ: Չորս տղաներ եւս օգնութեան կը հասնին Խաչերի խմբակին: Կոխը կը շարունակուի մինչեւ իրիկուն: Իրիկունս դէմ թուրքերը փախուստի կը մատնուին: Ոչխարները կը բերուին Ղուգախ: Քիչ վերջը իրենց կու գան կը միանան Արեգինէն խումբ մը եւս: Աւարը առատօրէն կը բաժնուին, մինչեւ Յուլիս 25 այնտեղ կ'ուտեն, կը հանգստանան, կը կազդուրուին եւ ձեռք անցուածներով կը պատրաստուի խումբին պարէնը:

Իսկ Մովսէս հասնող տղաքը 5 օր Մովսէս եւ Տօզ կոչուած երկու բարձունքներու վրայ ժամանակ անցընելէ յետոյ, կը խորհէին ուտելիքի համար: Կիւճիկ՝ չէրքէզ գիւղը երթալ: Յուլիս 13-ին կը հասնին Ղօզլու Թարլա ըստած վայրը: Այդտեղէն Ջէյթա Մանուկը, քանի մը ընկերներով կը դրկեն Սիւլիւքլի կէօլի քիւրտերուն: Օր մը յետոյ Մանուկ այդ գիւղէն կարգ մը անհրաժեշտ ուտեստեղէն եւ աղ առնելով կը դառնան խումբին: Տղաքը բաւական ատենէ ի վեր առանց աղի կ'ուտէին ձեռքերնին անցած որեւէ ուտելիք: Եստոր Փունար նստող այսրնցի վրանաբանկները բնաջնջելու համար ճամբայ կ'ելլեն, 16 Յուլիսին կը հասնին Քէօմէ Սէօկիւտ: Այս երկու վայրերն ալ զէյթունցիներուն էին 1914-էն առաջ: Այնտեղէն յառաջապահներու

խմբակ մը կը դրկուի Եստոր Փունար: Մինչ այդ նորանոր եկողներով միասին, թիւը կը բարձրանայ 109 հոգիի: Յառաջապահներու խումբը կ'երթայ կը քննէ վրաններու դիրքը, ու կը դառնայ առանց որեւէ բախումի ու կը հասնի Ծար-Ծար եւ յետոյ էջը: Ջէյթունի ամենամօտիկ ամուր վայր մըն է էջը, ուր պահած էին խումբին մէջ գտնուող կիները քանի մը օր առաջ:

Խաչեր Նորաշխարհեանի խումբէն որպէս լրարբեր կը հասնին Տիգրան Տ. Մովսէսեան եւ Գէորգ Ղաչարեան: Յուլիս 18-ին խումբը դարձեալ ետ կը դառնայ դէպի Մովսէս, միանալու համար Ղուգախէն եկող խումբին: Կառավարութիւնը եւ չրջակայ թուրք գիւղացիները արդէն իմացած են թէ զէյթունցի նահանջողներ վերադարձած են եւ կը պտտտին լեռները: Պաշտպօզուզ թշնամին նորէն ոտքի է, ամէն կողմ կը հետապնդեն զանոնք որպէսզի փնտցնեն: Ուրեմն մեր խումբերը, որեւէ յառաջացումի համար չափազանց զգոյշ են, միշտ յառաջապահներ կը դրկեն, հետազօտելու համար ճամբաները: Այդտեղ, խումբը կ'առաջնորդեն Արամ Տօլագեան, Յովհաննէս Միմոնեան եւ Խուրէն Նորաշխարհեան: Մովսէս լեռնահովիտն են, Սօլագտէտէի հիւսիսը: Ու ահա խումբը կը հանդիպի թշնամիին: Կոխը ծայր կու տայ: Երկու ժամ անընդհատ հրացանները կը գոռան երկու կողմերէն ու վերջապէս խուժանը կը քաշուի, կը հեռանայ եւ մերիները ճամբայ կ'ելլեն տարբեր ուղղութեամբ: Գրեթէ բոլոր խմբակները եւ ասդին անդին առանձին ինկած տղաքը 25 Յուլիսին Աւագ կայի ետեւը՝ Ղուգախ լեռը եւ Աւագ կայի չրջակայքը չրջելէ յետոյ, իրար կը գտնեն, կը միանան ու կ'իջնեն վերստին Ղուրա: Այստեղէն 30 հոգինոց խումբ մը կը դրկուի դէպի Քիւրթիւ կոչուած թուրք գիւղը, որ Ջէյթունէն 9 ժամ, իսկ Մարաշէն 3 ու կէս ժամ հեռու է: Անոնք պիտի երթան խումբին համար ուտելիք ճարելու, իսկ մնացածները դիրք կը բռնեն Ազարիկոնց ձորը, Ջէյթունի հարաւային կողմը 5 ժամ հեռու, Զոնուզ-Թէքի միացեալ զոյգ գետակներու հիւսիսային եզերքին շատ մօտը: Այս վերջինները մէկ օր այնտեղ մնալէ յետոյ, անոնցմէ եւս մաս մը կտրիճներ իրենց խմբապետներով Ղալիլորթ ըստած վայրը կ'երթան: Ղալիլորթ չորս ճամբաներու իրարու հանդիպած տեղն է: Մարաշէն Կոկիսուն, Անտրոլն գացող կորաւաններ այդ տեղէն պիտի անցնին: Անցեալի մէջ, յաճախ այդ անցքի վրայ զէյթունցի հրոսակներ ընդհարումներ ունեցած են թուրք պաշտպօզուզներու կարաւաններու հետ եւ երբեմն ալ կառավարական ոյժերու հետ: Ուրեմն զէյթունցիներուն այդտեղ դիրք բռնելը անպայման որ շատ չանցած առիթ պիտի տար ընդհարումի մը: Ահա, տակաւին օրը իրիկուն չեղած, կառավարական կարաւան

մը կը մօտենայ ու պիտի անցնի: Խոշոր կարաւան մըն է, ամբողջութեամբ բանակի վերաբերեալ պարէն եւ ռազմամթերք կը փոխադրէ Մարաշ: Կու գար ան 90 բեռնաւորուած զրաաստներով, ձիերով եւ անոր հակողութեան եւ ապահովութեան համար զինուորներ, ժանտարմանք կ'ընկերանային բանակէն, ունէին նաեւ զինուորական բժիշկ մը կարաւանը կը յառաջանայ: Մինչ այդ դէպի Քիւրթիւլ գացող 30 հոգինոց խումբը եւս ետ կը դառնայ, որովհետեւ այդ գիւղը իւնկիւթի կամուրջին մօտը ըլլալուն, այնտեղէն անմիջապէս օգնական ուժեր կրնան հասնիլ եւ միանալ քիւրթիւլցիներուն, որոնք աւելի քան 150 տունէ կը բաղկանան եւ խրաքանչիւր տունէ առնուազն երկու կռուող կ'ելլէ, զիտեն որ ամէնն ալ զինուած են եւ լաւ կռուողներ: Հետեւաբար բացարձակ անխոհեմութիւն պիտի ըլլար նման փորձ մը եւ չարաչար պիտի ձախողէին: Մօտեցած էին Քիւրթիւլի, հետազօտիչները քննած էին տեղը, պարագաները եւ վերոյիշեալ կերպով ներկայացուցած ըլլալով իրողութիւնը, խումբը ետ դարձած է դէպի Ղափխըթ: Ուրեմն երկու խումբերը վերատին կը միանան եւ կը յառաջանան Սուլաթը-Ղափխըթ անցքը, ուրկէ պիտի անցնի կարաւանը, յառաջանալու համար դէպի Մարաշ, Այնթապ: Պիտի բռնել այդ ճամբան եւ կարաւանը զարնել, կողոպտել ուտելիքի եւ ռազմամթերքի համար: Սակայն այս վտանգաւոր գործը ապահով կերպով զլուխ հանելու համար, գոնէ մէկ ժամ հեռաւորութեան մը վրայ պէտք է հսկել, դուրսէն գալիք ոեւէ թշնամի ոյժ արգիլելու համար: Տղաները կ'ազդարարեն կարաւանին մարդոց, որ անմիջապէս եւ անպայման անձնատուր ըլլան: Անոնք ո'չ մէկ կարեւորութիւն կու տան իրենց եղած այս ազդարարութեան եւ նոյնիսկ կը զարմանան անոնք, թէ ինչ համարձակութեամբ այդ ժամանակները, այդտեղերը կը գտնուին թշնամիներ եւ իրենց այսպիսի ազդարարութիւն կ'ընեն, ի հարկին սպառնալով իրենց: Ազդարարութիւնը կը կրկնուի, ականջ դնող չկայ: Կ'երրորդեն մերինները իրենց ազդարարութիւնը: Ու երբ դարձեալ մտիկ չեն ընել եւ անձնատուր չեն ըլլար զինուորները, ահա, տղաքը համազարկ մը կը բանան: Կարաւանի զինուորներն ալ կը պատասխանեն: Կէս ժամէն աւելի կը տեսէ կռիւը: Մերինները ոչ մէկ կորուստ կ'ունենան:

Կարաւանը ամբողջութեամբ կ'անցնի տղոց ձեռքը: Թշնամին կ'ունենայ սպաննուած զինուորներ, իսկ երկու հոգի ալ վիրաւոր, որոնք կը փախչին եւ կ'ազատին: Կարաւանէն կը գրաւեն 400 մէճիս դրամ, 32 սնտուկ՝ այսինքն 35 հազար փամբուշտ, մեծ քանակութեամբ հագուստ, երկու բեռ աղ, երկու բեռ սիսեռ եւ 40 կենդանի, սակայն կենդանիները այնտեղ կը թողուն եւ վերոյիշեալ աւարով կը

հեռանան ու կը դառնան դէպի իրենց ընկերները: Չորս-հինգ օր այդ վայրերը պտրտելէ ետքը, դարձեալ խմբակները իրար կը գտնեն, կը միանան, կու գան Ֆոնուզի կողքին՝ Գարաթութ, ուր իրենց կը միանան մինչեւ այդ ատեն այդ տեղերը առանձին մնացած Ֆոնուզցիներու 32 հոգինոց խումբը: Այստեղ չմոռնանք ըսել, թէ ճոխ աւարը իրենց մէջ կը բաժնեն եւ այդ աւարէն մաս մը իրենց հետ առնելով, իսկ մնացածը անտառներու մէջ պահելով, երկու օր հանգիստ ընելէ եւ աւարէն ուտելիք պատրաստելէ յետոյ քաշուած են Գարաթութ: Եւ խորհելով թէ կարաւանին այս դէպքը, Քեմալի կառավարութիւնը աննկատ չի թողուր, անպայման որ նոր ոյժ պիտի դրկէ իրենց վրայ, Մարաշէն գալիք զինուորներու կը սպասեն միշտ պատրաստ: Սակայն ոչ ոք չեկաւ իրենց վրայ:

Խումբերը թէեւ առատօրէն ունին միս, աղ, ինչպէս նաեւ ռազմամթերք, սակայն հաց չունին, քանի օրերէ ի վեր առանց հացի են, հաց, ալիւր, ցորեն հայթայթեն գոնէ ատենուան մը համար: 55 հոգինոց խումբ մը կը զատուի եւ ճամբայ կ'ելլէ դէպի Քրտեր կամ Քէօջիւրկէ թուրք գիւղը, որ կը բաղկանայ 50-80 ընտանիքներէ: 25-թուէն 13 ժամ իսկ խումբին գտնուած տեղէն 3 ժամ հեռու է այդ գիւղը եւ Մարաշի շատ մօտը: Խումբը կը հանի Քէօջիւրկէ, առանց ժամանակ անցընելու կը յարձակի գիւղին վրայ եւ կը պաշարէ զայն: Քէօջիւրկեցիք զէյթունցիներու նահանջին ձիւհանի ուղղութեամբ նահանջելու ատեն եւ Անտրուրէն խմբակներով վերադարձի ժամանակ խիստ կերպով հալածել եւ հետապնդել էին խումբը եւ ամէն ջանք թափած էին ոչնչացնելու զէյթունցիները: Ուրեմն թէ՛ այս պատճառով եւ թէ՛ պաշար ճարելու համար, զէյթունցիք որոշած են այս գիւղը կոխել, առանց սակայն մարդ սպաննելու, այդ տեղէն իրենց պէտք եղածը առնել եւ հեռանալ, նկատի ունենալով անշուշտ Մարաշի մօտիկութիւնը: Գիւղացիներու մեծ մասը գրեթէ առանց դիմադրութեան, գիւղէն կը փախչի, գաղտնի անցքերէ եւ գիւղը կը մնայ խումբին ձեռքը: Արեւը դեռ մարը չմտած, ընդհարումը սկսած է եւ կէս ժամէն գիւղը դատարկուած է: Այդ տեղ կը վիրաւորուի Ղապիշեան Միսաք, որուն 17 տարեկան տղան ալ արդէն Անտրուրի ճամբան կը զարնուի: Միսաք ոտքէն վիրաւորուած է եւ չի կրնար հետելիլ խումբին, թշնամիին ձեռքը չիյնալու համար իր մարթին հրացանը սրտին ուղղելով կը կրակէ, սակայն իր անապարանքին մէջ թէպէտեւ կը վիրաւորուի կրկին եւ ծանրօրէն, սակայն չի մեռնիր: Կ'ազալէ ընկերներուն որ զինքը սպաննեն: Ընկերները ժամ մը տեղ զինքը շալկելով հետերին կը տանին, սակայն, առողջ մնալու յոյս չկայ, լմնցած է անոր գործը: Անկարելի է զայն հոն առանձին

Թողուլ, ոտք ձեռք կ'իյնայ, կը թախանձէ որ զինք սպաննեն, յետոյ երթան: Ղաչար Գէորգին հրացանին կը կառչի, հրացանին փողին բերանը ամուր բռնած իր բերանը կը դնէ, եւ կ'աղաչէ Գէորգին, որ բլթակը քաշէ: Վերջապէս իր պնդումին վրայ խնդրանքը կը կատարուի: Իսկ Քէօշուրկէն նիւթական մեծ կորուստէն զատ կ'ունենայ նաեւ անձի կորուստներ: Խումբը բաւական պարէնով կը վերադառնայ իրենց տեղը, հետերնին քշել տանելով գիւղի կենդանիներէն 300 ուլ, 34 կով, 19 ոչխար, ինչպէս նաեւ կը գտնեն իւղ, պղնձեղէն եւ երեք-չորս հրացան եւ ասոնք բոլորը առած կ'երթան: Այս աւարներով կու գան Աղալու: Հոն՝ Անտրոնէն դառնալու, բոլոր խումբերն ալ իրենց կոխները ունեցած էին: Այնտեղ կը հանգստանան, կը մորթեն կենդանիները, պաշար կը պատրաստեն: Քանի մը օր հոն մնալէ յետոյ, Օգոստոսի սկիզբը Աղալուէն կ'իջնեն Ֆոնուզ, Օգոստոս 5-ին կը քաշուին Դրախտիկ, որ իսկական դրախտի մը գեղեցկութիւնը կը պարզէ իր բնական տեսարաններով, կանաչութիւններով: Օդը, ջուրը, բուսականութիւնը նոր կեանք եւ կազդոյր կու տան սողոց, Ֆոնուզէն մինչեւ Դրախտիկի գագաթը վերելքը կը տեւէ ամբողջ 4 ժամ: Մէկ օր ետքը, 8 Օգոստոսին կ'իջնեն վերստին Ղուրա եւ հոն կը գիշերեն: Ղուրա Կուրիտինի բնական բերդին հիւսիս արեւմուտքը, Զէյթունի եւ Ֆոնուզի (Սուշաթը) գետակներուն խառնուած տեղը գեղեցիկ եւ կանաչ դաշտագետին մըն է, ուր յաճախ ցորեն, կորեկ կը ցանեն գիւղացիք: Ղուրա չհասած, ճամբան կը հանդիպին Ղափխորթի այն կէտը, ուր կարաւանը զարկած էին: Հոն են եւ կը պտտին տակաւին կարաւանին թողլուած զրաստները: Կը գտնեն նաեւ փամբուշտ, աղ եւ ուրիշ իրեղէններ: Առանց այնտեղ մնալու խումբը ճամբայ կ'ելլէ վերստին դէպի Զէյթուն, յաջորդ օրը Սէր-Ալթը ըստած տեղէն, անցնելով Ղարա չալթը եւ անկէ ալ Պալապատի աղբիւրը չհասած, Բամկի ձորի բերանը կը բարձրանայ Բոլոր ըստած բարձունքը, որուն ստորոտը կը տարածուին Տէվիջին ձիւրի եւ Խախմայի ընդարձակ այգեստանները եւ դարձեալ Բոլորէն կ'երեւան Զէյթունի աւերակները: (Զէյթունէն մէկուկէս ժամ, քիչ մը աւելի ոտքի գնացքով հեռու է Բոլորը): Բոլորի բարձունքին մօտերը երեք հօգիններ եւս կը գտնեն, Օգոստոս 9-10-ին, կ'անցնին Սօլազ-Տէտէ լեռան Տօզ ըստած բարձունքը, հոն եւս կը գտնեն դարձեալ 7-8 հօգինոց խումբ մը նահանջող սղաններէն: Խումբին Ղարա Չալթը եղած ատենը, իրենց ականջին կը հասնին Խէպիի կողմէն հրացաններու ձայներ, փոքր խումբ մը այդ ամբողջ օրը կը կռուի Խէպի թուրքերուն դէմ: Բոլորէն տակաւին չմեկնած, երկու սղաններ կը զրկուին Խէպի, մինչդեռ հոն կոխը կը շարունակուի Այնտեղ կռուող այդ

փոքրիկ խմբակին կ'իմացուի թէ միրինք Տօզը կ'ելլենք, հոն թող գան գտնեն զիրենք: Ինչպէս ըսինք, Օգոստոս 9-ին, գիշերանց կ'ուղղուին Դէպի Տօզ: Գիշերը պէտք է դժուար, քարքարուտ եւ ցախուտ արահետներէ ճամբորդել, զգոյշ, չըջհալաց քայլերով, թշնամիին չհանդիպելու համար, իսկ ցերեկը եւ շատ անգամ ալ առաւօտէն մինչեւ իրիկուան մթնշաղը պէտք է կռուիլ, քնատ, յոգնած եւ յաճախ անօթի: Եւ այսպէս օրեր, շաբաթներ:

Խումբերը իրար գտած միացած են Տօզ, Սօլազ-Տէտէի վերելք⁷⁵, ուր իրենց լուր կը հասնի Կիւճիւկ չէրէզ գիւղէն, թէ Ատանայի Ճիւհան քաղաքէն Պատուելի Յարութիւն Նոխուտեան նամակ եւ 90 Օսմ. ոսկի դրկած է, եկէք առէք: Կրնայ եւ այս լուրը թուրքերը յարմարեցած ըլլան, զէյթունցիները ծուղակը ձգելու համար: Թէպէտեւ չիտակ էր որ ժամանակին Զէյթունէն նամակ դրկուած էր նաեւ Պատ. Նոխուտեանին եւ Պատուելին ալ պատասխանած եւ կարծեմ մաս մըն ալ դրամ դրկած, սակայն չենք գիտեր թէ նամակը եւ դրամը հասցուցած են մեր սողոց: Յամենայնդէպս այս խնդիրը ստուգելէ եւ հետապնդելէ զատ, աւելի ճիշդը, խումբերը իրենց ձեռք անցուցած պաշարին եւ ռազմանիւթին վստահած, Արամ Զօլազեանի առաջնորդութեամբ կը մտածեն քայլել այդ ուղղութեամբ եւ իրենց՝ Զէյթուն վերադարձի ամբողջ երկու տարիներուն եւ նոյն-իսկ նահանջի այդ ժամանակներուն, խառօրէն իրենց ետեւը ինկող, զիրենք հետապնդող Հաճըլարի, Թանըրի եւ Քիթիզի թուրք եւ չէրէզ թշնամիներու վրայ քայլել եւ զանոնք պատուհասել որ իրենց օճիքը թող տան այլեւս: Այս կրկնակ նպատակներով բոլոր խումբերը ի մի կու գան:

Երեք օր Սօլազ-Տէտէի բարձունքը՝ Թընապի, սոճիներու այդ առողջարար մթնոլորտին տակ հանգստանալէ յետոյ, այդ բարձունքէն, Զէյթունի աւերակներու մոխրակոյտը եւ զօրանոցի մէջ մնացած իրենց սիրելիներուն, զաւակներու եւ ընտանիքներու քիչատակը սրտերնուն, ահա կրկին հրահանգ կը տրուի ճամբայ ելլել դէպի Կարմիր Լեռ, Պալինց գերեզմանատունը, Զէյթունէն 5 ժամ դէպի հիւսիս արեւմուտք: Բոլորը ոտքի են, ու ճամբայ պիտի ելլեն, մէյ մըն ալ, ահա պահակ դէտերը լուր կը բերեն, թէ զօրանոցէն զինուորներու մեծ խումբ մը վար կ'իջնեն եւ կը յառաջանան Զէյթունի աւերակներուն մէջէն դէպի Կարսի կամուրջը: Դէտերը հեռադիտակով կը քննեն անոնց բռնելիք ուղղութիւնը, որպէսզի ամէն վայրկեան տեղեակ պահեն աղաքը անոնց շարժումներուն մասին: Իսկ մարտիկներուն կը հրահանգուի կազմ եւ պատրաստ սպասել կոխի ազդանշանին: Պահակները կը տեղեկացնեն, թէ թշնամին կամուրջը անցաւ եւ այնտեղ կը հա-

մախմբուի: Ու տակաւին տղաքը ոտքի են, կը սպասեն եւ դէտին կը հրահանգուի որ թշնամիին հետքը չկորսնցնէ եւ նայի թէ ի վերջոյ դէպի որ կողմ պիտի շարժին: Կ'որոշուի կանխել թշնամին, երբ յայտնի ըլլայ թէ անիկա դէպի իրենց կողմը կը սկսի շարժի: Պէտք է կանխել, իջնել անոր դիմաց եւ անակնկալի բերելով ահաբեկել զայն:

Տղաքը Սօլազ-Տէտէի գաղաթն են, իսկ զօրքը անոր ստորոտը, Կարսի կամուրջէն դուրս, երեք ժամուան հեռաւորութիւն մը կայ երկու հակառակ ուժերու միջեւ: Արեւը տակաւին մարը մտած չէ, կախուած է Սօլազ-Տէտէի, Չաթու քարի վրայ: Վարը սակայն շուքը արդէն երկնցած է, Սուսաղբըրը, Ակը, Կարսի կամուրջը, Սօլուզ Տէտէի արեւելեան ցախուտ ամբողջ վայրէջքը, զառիթափը կը մթննայ հեռզհեռէ, ու այլեւս կարելի չէ նշմարել թէ ինչ տեղի կ'ունենայ վարը: Դէտը այլեւս չի կրնար ճշդել թէ ուր մնաց թշնամին: Անոր հետքը կորսնցուցած են մեր տղաքը, ուրեմն կը մնայ նախապէս տրուած հրահանգը կրկնել եւ ճամբայ ելլել դէպի Կարմիր Լեռ, Պալենց գերեզմանատունը, նախ, ինչպէս քիչ առաջ յիշած էինք, քիւրտի մը միջոցաւ այն լուրը թէ Վատանայէն, Ճիհանէն ձեռքի նամակ եւ դրամ բերած է կիւճիկցի չէչէն Ծուսուպ Աղա, ձեր ղեկավար մարդիկը թող գան եւ առնեն, հոն երթալու եւ հասկնալու համար թէ ինչ է իրականութիւնը եւ յետոյ պատուհասել Հաճըլարը, Թանըրը, Տէօնկէլը, Քիթիզը: Այս կրկնակ ծրագիրներով պէտք էր ճամբայ ելլել: Քիւրտերու եւ չէրքէզներու մէջ զէջթունցիներուն բարեկամ վրատակի անհատներ կային, որոնք շատ անգամ օգտակար եղած էին թէ արմտիքի եւ թէ նամակ եւ լուր հասցնելու համար:

11 Օգոստոսին, իրիկունը ժամը 7-ին երբ այլեւս կարելի չ'ըլլար որոշել թշնամիին ուղղութիւնը, խումբերը միացած ճամբայ կ'ելլեն դէպի Քէօմէսէօկիւտ (ուռիներու կոյտ), անկէ կ'անցնին Ղըզըլ-Էօզ, ամենէն առաջ երթալ չէրքէզներուն եւ քիւրտ բարեկամներու հետ տեսնուիլ, եկած նամակը առնել, անոնցմէ տեղեկութիւն ստանալ նաեւ ազատ դօտին գտնուող հայրենակիցներու մասին, տեղեկանալ թէ ինչ է կացութիւնը Կիլիկիոյ մէջ եւ Հ. Հանրապետութիւնը ինչ վիճակի մէջ է: Մեծ կարօտով պիտի մտիկ ընէին անոնք այդ բոլորին մասին: Անկէ յետոյ անոնք պիտի ճշդէին իրենց բռնելիք ճամբան, պիտի երթային Հաճըլարը պիտի ալլէին, քար ու քանդ ընէին, որ իրենց օձիքը թող տայ այլեւս: Կէս դիշերը անցած է, առտուան հագիւ երեք ժամ կայ, որովհետեւ Օգոստոս է եւ ամենէն կարճ գիշերներու մէջ է որ կ'ընեն այդ ճամբորդութիւնները: Ու իրենց առջեւ տակաւին երեք ժամէն աւելի ճամբայ կայ կտրելիք: Դեռ չլու-

ցած կը հասնին Պալենց գերեզմանատունը: Ամենէն յարմար վայրն է այդ տեղը դիրք բռնելու համար, եթէ ոչ տակաւին կարելի է քիչ մը եւս յառաջանալ եւ մօտենալ Հաճըլարի: Եւ պիտի լուսնայ ու հաճըլարցիներէն պիտի նկատուին տղաքը, ուրեմն հոն պէտք է մնալ: Այդ տեղը, հիւսիսէն եւ հարաւէն պաշտպանուած է երկու հսկայ ժայռերով: Այդ ժայռերուն մէկուն հտեւը դիրք կը բռնէ խումբը: Այնտեղ, այդ բլրաշարքի քարքարոտներուն մէջ, բարձր մայրիներու եւ շոճիներու խիտ անտառին մէջ, ծառերուն տակ կ'անցընեն ամբողջ ցերեկը եւ կ'աշխատին շնշմարուիլ թշնամիին: Կը հանգչին այդտեղ, ամէն մէկը շոճի մը տակ: Խումբին մտահոգութիւններէն մէկը նաեւ կ'ըլլայ, ուր որ ալ հասնին, նախ բարձր, անոռիկ դիրքեր փնտռել եւ այդ վայրը յարմարագոյնն է իրենց համար, երկրորդ անհրաժեշտութիւնը՝ ուր որ ալ հասնին, իրենց առջեւն եւ կողմնակի ուղղութեամբ հետախոյզ-պահակներ հանել, որ պէսզի քննեն, հսկեն:

Գիշերը վրայ կը հասնի Յոգնած, անքուն տղաքը կը քնանան մինչեւ լոյսին բացուիլը: Այստեղ ընդհատելով մեր պատմութեան ընթացքը, խօսքը կու տանք Ն. Զէյթունցեանին, որ իր գրքովով նկարագրէ այդ պահերը, որպէս անձամբ ապրողի մը, եւ տայ իսկական պատկերները կարգ մը հերոս մարտիկներու:

Ու Չէյթունցեան կը պատմէ-

«Արշալոյսը դեռ նոր բացուելու էր: Դիտակը տակաւին չէր կրնար լաւ գործել: Խումբին պահապան հրեշտակը, փոքր տարիքէն, իրեն բան գործ ըրած, 50 տարեկան կուլէօղջի Մանուկ Դրանգիկեան, որ ջերմ հաւատացող մըն է իր լեռներուն պաշտպան Աստուծոյն, տա-
րագրութեան մէջ կորսնցուցած է իր բոլոր զաւակները եւ ընտանիքը, իսկ կուլէօղի վերջին ջարդին վերստին զոհ տուած էր իր երկրորդ կինն ու միակ զաւակը: Ան կուլէօղի ջարդին Մարաշ գտնուած էր եւ Մարաշի պատերազմին մեծ դեր կատարած էր, երկար օրեր օր-
հասական կռիւներու մէջ մտած էր եւ շատ զոհեր խլած թշնա-
միէն, իր գտնուած ոեւէ դիրքի մէջ կռիւն ճակատագիրը փոխելով միշտ հերոսաբար: Այս քաջ մարդը, Դրանգիկ Մանուկ, բնաւ քուն չուներ, գիշեր ցերեկ արթուն պիտի հսկէր: Յերեկը երբ կռիւ չկայ, ամէն վայրկեան պիտի քննէր չորս կողմը: Միշտ ոտքի էր ինքը դիրքէ դիրք, տեղէ տեղ շարունակ պիտի ցատկէր, երթար գար: Ան կանխաւ խումբին ջուրի աղբիւրը եւ երթալիք ճամբան պիտի քննէր, եւ ցոյց պիտի տար: Նման անձնուէր գործերու համար ստեղծուած մարդ մըն էր ան: Ինքը, իր պարտականութենէն դուրս, ինքնաբերաբար կ'ընէր այս աշխատանքները, որպէս պարտականութիւն եւ առանց յոգնելու: Մարաշի կռիւներուն իբրեւ փորձառու կռուող, իբրեւ ա-
րիասիրտ քաջ զէյթունցի մը, թշնամին շատ անգամներ պարտութեան մատնելով, փախցուցած է: Մանուկ ո՛չ միայն հայերէն, այլ նաեւ ֆրանսական զինուորականութենէն գնահատուած է: Ան միշտ աններող գտնուած է թուրքին - անշուշտ յիշելով իր զաւակները, իր երկու ընտանիքներուն երկու անգամ անխնայ կերպով ջարդուիլը թուրքէն, եւ անշուշտ նկատելով թուրքին անսահման չարիքը, զոր գործնց ամբողջ հայութեան հանդէպ: Աննուաճ կամք ունէր Մանուկ: Յոգնիլ չգիտցող ոգիով մը, տքնած էր եւ իր արարքներով լաւ հակառա-
կորդի մը վայել ընթացքով մը յարգանք պարտադրած էր նոյնիսկ թշնամիին»:

Դրանգիկ Մանուկ, այդ առաւօտ հագիւ թէ լուսցած, ահա կը նշմարէ դիմացը, հեռու բարձր լեռան գագաթը, Տաղի վրայ, հազիւ նշմարելի երկու մարդ: Կու գայ խումբին կ'իմացնէ թէ՛ անոնք թշնամիներ են, ուրիշներ եղնիկներ են կ'ըսեն, սակայն քիչ յետոյ, երբ լոյսը լաւ մը կը բացուի, յայտնի կ'ըլլայ որ իսկապէս թշն-
ամիներ են այդ երեւցող ստուերները: Զօրանոցէն Կարսի կամուրջը անցնող թշնամին որ իրիկուան պահուն Սօլազ-Տէտէի շուքին մէջ կորսուած էր, շարունակած է հետապնդել զէյթունցի խումբերը: Դրանգիկ Մանուկի նշմարած սեւ կէտերը անոնք էին: Բարձրացած

են Սօլազ-Տէտէ գիշերով, եկած հասած են հոն եւ տեսած որ այն-
տեղ տակաւին չմարած կրակ կայ, կը հասկնան թէ՛ խումբերը հոն եղած են եւ նոր մեկնած: Հետեւաբար պէտք է հետապնդել գիրենք հեռաւոր բարձունքներէն: Ինչ որ լուսնալուսն յայտնի եղաւ իրականու-
թիւնը, թշնամին օրերով լրտեսեր է տղաքը, ըստ այնմ հետապնդեր եւ ահա կարեւոր ուժով մը այժմ կը հասնի, կը գտնէ գիրենք: Նա-
խօք գորանոցէն ելնող խումբը չէ միայն, այլ անոր վրայ եկած ա-
ւելցած են նոր զօրախումբեր եւ անոնց կրկինը զինուած թուրք գիւղացիներ Հաճըլարէն, Թանըրէն եւ նոյնիսկ արեւելքի կողմերէն քէրթմէնցիներ եւ ուրիշներ: Քանի մը ուղղութիւններով կը յառա-
ջանայ թշնամին, պաշարման շղթայի մէջ առնելով բնաջնջելու հա-
մար հայ խումբերը: Խումբերուն ղեկավարները ընդհանրապէս Ազգ-
Միութեան անդամներ էին, ինչպէս դէպի Անտրուշ իրենց նահանջին, նմանապէս եւ հիմա, այստեղ: Բոլոր մարտիկներուն ընդհանուր հրամայողը, Արամ Զօլազեանն էր: Այդ անվախ, խիզախ երիտասարդը, որու մասին խօսքը պիտի տանք դարձեալ իր հետ միասին գտնուող եւ միասին կռուող մեր հայրենակից Պ. Ն. Չէյթունցեանի, որպէս նաեւ Ազգ-Միութեան Ատենապետը. քանի մը վաքկեանի խորհրդակցու-
թենէ մը յետոյ, կը հրահանգէ տղոց որ առանց ժամանակ կորսնցնելու պատնէշներ բարձրացնեն եւ ետեւը անցնին: Ու Պ. Ն. Չէյթունցեան իր գրքին մէջ կը պատմէ:-

«Այսատանքի բաժանման դրութիւնով մարդիկ կամ խմբակներ ի-
րենց ցոյց տրուած դիրքերը բռնեցին բարձրացուած պատնէշներու եւ բնական ամրութիւններու ետեւը: Մեր՝ կռուի պատրաստութեան մի-
ջոցին, դիմացի լեռան վրայ, ուր նախապէս դիտակով մարդեր նըշ-
մարուած էին, այդ կողմէն ձեռք մը գէնք կ'արձակուի, իրենց հե-
ռաւոր ընկերներուն, որ նշան է թէ՛ մենք թշնամին գտանք, հոս են, փութացէք: Հապճեպով կը բարձրացուէին տակաւին պատնէշները եւ քիչ կը մնար աւարտելու, ահա թուրք զօրքերն որ պաշտպանութեան յարձակումով մը կը խուժեն, կու գան ու կը մօտենան մեզի: Ա-
ռաւօտ է: Թշնամիին դիրքերը աւելի բարձր եւ ապահով են մեր գտնուած վայրէն: Ահագին բազմութիւն, հրացաններու որոտումով մը թշնամիին կողմէ կռիւի ազդարարութիւնը կը տրուի: Մեր խումբերը պաղարիւն կերպով կը պատասխանեն թշնամիի կրակին: Հետզհետէ կը սաստկանայ կռիւը, թուրքերը առանց վարանումի կը յառաջանան ու կը սկսին պաշարման նեղ օղակի մէջ առնել խում-
բերը երեք կողմէ, միայն հարաւը թէեւ բաց է, սակայն անանցանելի է, որովհետեւ այդ կողմը կը բարձրանար ժայռ մը, որ պարիսպի մը պէս կը փակէր նահանջի որեւէ անցք մեր տղոց առջեւ: Պէտք

է կենալ իրենց դիրքերուն վրայ եւ լրջօրէն դիմադրել թշնամիի գրոհին, ի հարկին գիրկընդխառն կռիւներով: Թշնամին քանի մը քայլերով միայն հեռու է մերիններէն: Սովորական ձայնով տեղի ունեցած խօսակցութիւնները փոխադարձաբար կը լսուին: Արամ Զօլագեան ա'լ չի կրնար հանգուրժել, կը սկսի դողդողալ եւ բարձր ձայնով լուսանքներ եւ կարգ մը սպառնալիքներ տեղացնել թշնամիին կողմը, որ ետ քաշուի: Սպառնալիքները կը պատասխանուին թշնամիէն: Արամ եւ իր ընկերները կը վերսկսին բռնուն կերպով կրակել: Այնքան սաստիկ էր հրացանաձգութիւնը, որոնց արձագանգները մեր շուրջի բոլոր լեռներն ու բարձրութիւնները իրար կը խառնէին: Թէպէտեւ, որոշուած էր որ թշնամիին թող տանք որ մեզի շատ մօտենայ, մեր մէջ մտնէ, եւ մենք զիրենք մեր ներսը առնելով, յանկարծական ուժգին հարուածով մը զայն անակնկալի բերելով լաւ դաս մը տանք անոր: Սակայն թշնամին կանխեց ու մենք հարկադրուեցանք պատասխանել տակաւին գինքը մեր ներսը չառած: Վտանգաւոր վայրկեաններ էին: Առաջին դիրքերուն վրայ գտնուող 14 մարտիկներ կրնային մէկ վայրկեանէն միւսը լուրթեան դատապարտուիլ: Պէտք էր առիթ չտալ թշնամիին իր այդ ծրագրին հասնելու: Տղաքը տաքցած են ու կը կռուին կատաղի կերպով, անոնցմէ ոմանք ուրախութեան աղաղակներ կ'արձակեն, ուրիշներ կը հայհոյեն թշնամիին ու կը պոռան. «Ձարկէք տղաք» մի քանի տղաք կ'երգեն՝

Կռուեցէ՛մ տղերք, կռուեցէ՛մ քաջ քաջ,
Անվեհեր կանգնած քշմամուն առաջ,
Ցանկալի էր մեզ միշտ ազնիւ մահը,
Հեռու մեզանից սառնիմ ահը:

Ու գէնքերու ձայնը կը խառնուին երգերուն կոխը կը շարունակուի ահա կէս ժամէն աւելի է եւ հետզհետէ աւելի ուժգին, աւելի կատաղի, խելակորոյս թափով մը: Անուշադիր, ձախող քայլ մը կրնայ սակայն շատերուն կեանքին պատճառ ըլլալ: Չափէն աւելի զգուշութիւն պէտք էր: Նոր պատնէշներ պէտք էր շինել հապճեպով: Նոր դիրքերու ետին ահա կոխը կը վերսկսի: Թշնամին թուփ պէս կը թափի գետինը:

Ինչպէս Ն. Զէյթունցեան կը յիշէ, իրենց խմբակն ալ կը գտնուի առաջին գծին: Թշնամին կը շարունակէ իր յարձակումները, կացութիւնը դժուար է եւ նեղ դրութեան մէջ կը գտնուին: Իրենց ետեւը, հորաւային կողմի քարէ բլուրը եթէ թշնամին կանխէր եւ գրաւէր, տղոց գործը լրացած կրնար ըլլալ: Այդ վտանգը կանխատեսելով, Յովհաննէս Միմոնեանի հետ քանի մը տղաներ կը փութան դրակ այդ քարէ բլուրը, մինչ թշնամին եւս դէպի հոն կը շարժի եւ կ'ուզէ

կանխել մերինները: Կոխը կը շարունակուի մեծ թափով, սակայն թշնամիէն հինգ վայրկեան առաջ Միմոնեան եւ ընկերները կը դրական այդ բլուրը: Թշնամին սակայն մեր տղաներու բացած մահացու կրակին տակ յամառօրէն կը յառաջանայ դէպի բլուր, առանց լուր ունենալու թէ՛ ան արդէն մեր տղոց ձեռքն անցած է:

Այստեղ թող խօսի նորէն ինքը՝ մեր հայրենակիցը Ն. Զէյթունցեան. —

«Թշնամին մեր վրայ բռնուն յարձակում գործած միջոցին, մեր շուսացած մէկ կէտէն, Արամ Զօլագեան դժբախտաբար թշնամիէն մահացու հարուած մը ընդունեցաւ: Անոր ընդունած հարուածին ազդեցութենէն իր վրայի փամփշտակալ միակտուր բաճկոնէն երեք շարք (Chargeur) փամփուշտներ կրակ առին եւ անոնց բոլորին կապարները մարմինին ետեւի մասը հանդիպեցան: «Կլափանվեցօ, կլափանվեցօ...» աման ըսաւ ան ու ինկաւ: Վայրկեանապէս մեռած էր Արամ: Այս կորուստը ամենամեծ ցաւը եղաւ, սակայն կոխը շարունակուեցաւ առանց ընկրկելու: Բիշ առաջ առիւծի պէս մոնչելով կռուող հերոսը, վայրկեանապէս հոգին փչեց քովէս անդին քանի մը մեթր միայն «Կլափանվեցօ» զարնուեցայ լսելով: Արամը մեզմէ անդարձ բաժնուած էր այլեւս: Ան լուռ կեցած մեզ աւելի կը խրախուսէր ու կը գրգռէր աւելի եւս: Օրուան մղուած կռիւին աւելի եւս շնոր մը կը դնէր ան: Իր սիրելի խումբէն եւ հաւատարիմ ընկերներէն անդարձօրէն բաժնուած էր այլեւս: Խումբին հոգին եւ Զէյթունի Ազգ. Միութեան անդուգական Ատենապետը, ազնիւ, վարպետ զինագործ Արամը, անձայն կը դիտէր եւ կը հետեւէր իր հոգիովը մղուած հերոսամարտին: Անմահ հերոսի մը կոյս արեւը մարը կը մանէր, աւաղ, շատ վաղ... Ան դեռ շատ կատարելիք գործեր ունէր...»

Թշնամին նախկին թափով կը շարունակէ կրակը եւ Զէյթունցի խումբերը նոյն ուժգնութեամբ կը պատասխանեն անոր: Թշնամին անտեղեակ Արամի իյնալուն, յամառօրէն կը շարունակէ տակաւին յառաջանալ: Խումբերը բոլորը անօթի, ծարաւ, Օգոստոսի ալրող արեւին տակ, մինչեւ իրիկուն՝ 14 ժամեր շարունակ կը կռուին չլինել չլինելու պայքարը կը մղեն: Մինչեւ իրիկուն Արամի մասին ոչ մէկ բան չի խօսուիր միւս խումբերուն: Իրիկունը միայն լսեցին անոր ինչպէս Բոլոր մարտիկները չափազանց կը տխրին այս անփութարիւնի կորուստին վրայ: Անոր անշնչացած մարմինը ժայռի մը ճեղքին խորը կ'իջեցնեն եւ վրան կը ծածկեն ծառի ճիւղերով: Արամին իյնալէն մէկ ժամ վերջ կոխը դեռ կը շարունակուի նախկին թափով, Թշնամին, ինչպէս քիչ առաջ ըսինք ճիշդ կը թափէր կարեւոր դիրք

մը՝ քարաբլուր մը ձեռք անցընել, մինչդեռ Յովհաննէս Սիմոնեան քանի մը տղաներով արդէն գրաւած էր գայն: Այդտեղէն բացած կրակին տակ կուրծքէն կը զարնուի նաեւ թշնամի մէկ խումբին պետը՝ քէրթմէնցի Գրվրազ Իսրահիմը, քեմալական շարժումին, Մարաշի եւ Այնթապի մէջ մեծ շահատակութիւններով ծանօթ այդ աւագակը: Անիկա չէթէական կոիւններուն հայերուն եւ ֆրանսացիներուն մեծ դժուարութիւններ տուած էր: Ու այժմ ինքն ալ կ'իյնայ դիտապաստ ու թշնամին կը սկսի նահանջել: Թշնամին այդ նահանջի պահուն, ֆունդիստ երտասարդ մը՝ Յովհաննէս Պէտրեան կրակին գետին մէջ նետուելով, ինկող Գրվրազին ռուսական մօսին հրացանը խելով կու գայ կը միանայ իր ընկերներուն: Գրվրազը, թուրքի մը սպաննութեան համար Մարաշի կառավարութիւնը 101 տարուան դատապարտած էր 1915-ի ընդհ. պատերազմէն առաջ: 1915-ին բանտէն հանած էր կառավարութիւնը որպէսզի Զէյթունի տեղեկանութեան ատեն լեռ բարձրացող զէյթունցի մարտիկները հետապնդէ իրեն համախոհ կարգ մը թուրք ոճրագործներով: Մարդասպանին զէնք տուած էր թուրք կառավարութիւնը, եւ մեր այդ տղոց հետ շատ անգամներ բախումներ ունեցեր էր Գրվրազ: Անգամ մը մեր այդ ատենուան ըմբոստները ընդհարումի մը մէջ ծունկէն վիրաւորած էին զինքը, սակայն դժբախտաբար չէր սպաննուած: Ու այս անգամ իր արժանի պատիժը կը գտնէ ան: Գրվրազին եւս ինկած ըլլալուն լուրը թէպէտեւ մեծ ուրախութիւն եւ խանդավառութիւն կը ստեղծէ մեր տղոց մօտ, սակայն Արամի կորուստը շատ զէշ կ'ազդէ հետզհետէ անոնց վրայ: Արամ մեռնելու չէր, թող տասը Գրվրազներ ողջ մնային, օր մը անոնց հաշիւը կարելի էր մաքրել: Բայց դժբախտ ճակատագիր մը ունեցաւ այդ աննման տղան՝ Արամը: Բարի եւ համեստ ու բարեպաշտ Զօլագեան Արթին վարպետին կրտսեր տղան էր ան, եղբայրը՝ Ֆնտըճագի կոիւն զոհ գացող քոյ Մեսրոպին: Զօլագեանները մեծ գերդաստան էին, եւ բոլորին արհեստը երկաթագործութիւնն էր: Կը չինէին նաեւ կտրող զէնքեր, դաշոյն, սուր, եւ նոյնիսկ պետական մարթին, հրացանի նման մարթին, թէ եւ շատ դժուարութեամբ, որովհետեւ համապատասխան մեքենաներ եւ գործիքներ չկային: Բայց շինուած զէնքը կը նմանէր ճիշդ պէկլիք մարթին հրացանին:

Արթին վարպետի եղբայրներն էին Գալուստ վարպետ եւ վարդիվար, իսկ եղբորորդին էր Փանոս Զօլագեան, որ իր քաջութիւններովը նշանաւոր եղած է Զէյթունի 1895-ի պատերազմին եւ ուրիշ շատ մը կոիւններու մէջ: 1915-ին, Մարաշի բանտին մէջ անլուր տանջանքներու ենթարկուելէ յետոյ, իր տղոցը՝ Գրիգորի, Յովսէփի հետ կախաղան

կը հանուի Մարաշի մէջ: 25 տարի որպէս ըմբոստ փախստական ապրած է ան Զէյթունի լեռներուն մէջ, եւ պատուհասը դարձած անիրաւ թուրքին:

Պալենց գերեզմանի այս կոիւնն մէջ մեծ կորուստի կը մատնուի թշնամի զօրքը եւ պաշտպանողը, սակայն Արամին կորուստը մեր տղոց համար մեծ բաց կը ձգէր, ամբողջ մարտիկներուն հրամանատարն էր որ ինկած էր: Շիտակ է որ երկուստեք մեծ կորուստի ենթարկուած էին մերիկները եւ թշնամին, բայց թշնամին չիմացաւ հայ մարտիկներու պետին կորուստը:

Արամ բարեձեւ մարմնով, միջակէն քիչ մը բարձրահասակ երիտասարդ մըն էր, սեւ եւ խոշոր աչքերով, սեւ եւ գեղեցիկ յօնքերով, քիչ մը թուի վրայ, թաւ եւ վեր ցցուած սեւ պեխերով, լայն ճակատով եւ համակրելի դիմագծով: Դեռ Զէյթուն չներգաղթած Հայէպէն կը յիշեմ զինքը եւ դէմքը, ինքը այսօրուան պէս աչքիս կը պատկերանայ: Հայէպ ծանր թոքատապի մը բռնուեցաւ, սակայն շատ չանցած, ապաքինեցաւ եւ զնաց Զէյթուն: Այդ երթալն եղաւ, ու հայրենի հողին վրայ ինկաւ: Իսկ շատ կանուխէն, 1901-10-ի տարիներուն, երբ ես ալ տակաւին Զէյթուն էի, պատանի մըն էր ան, 11-13 տարեկան, սեւ էնթարի մը վրան երկաթագործի, իր հայրիկին եւ եղբորը հետ կ'աշխատէր: Իր մասին դարձեալ Ն. Զէյթունցեանն է որ կը գրէ.

«Երբ կոիւն սկսէր, եւ զէնքերը խօսիլ սկսէին, իրեն համար հարսանիքն սկսած էր: Անոր ուրախութիւնը չափ չունէր եւ աւելի ջլապինդ կը կառչէր ան իր զէնքին: Ահա այսպիսի դիւցազնի մը կեանքն էր որ կը վերջանար: Անոր պաղած մարմինը հողին ալ չէր յանձնուեր, այլ քարի մը ճեղքին կ'իջեցուէր ոտքի վրայ, վերջին բարձանքի, արտասուախառն հրաժեշտի լուռ մրմունջներով, որոնց կու գային խառնուիլ արձակուող զէնքերուն ձայները որպէս թաղմանական արարողութեան երգերու: Շատ յարգանք, անգին Արամ քու անկեղծ յիշատակիդ, դուն ապրեցար որպէս ճշմարիտ եւ հայրենասէր հայ մը, իրական զէյթունցի մը: Ամէն տեղ առաջնութիւնը շահելու բախտը ունեցար: Դուն երկար ատեն կոյս քոյրերուդ եւ երիտասարդ հայ մայրերու վրէժխնդիր բազուկը եղար, քու անգին ընկերներով միասին, սկսած 1914-1921, Զէյթունէն մինչեւ Ֆնտըճագ, Ինթիլի, Օսմանիէ, Հայ Լեռ: Զէյթունցին վառ պիտի պահէ քու յիշատակդ:

Այժմ հանգիստ ոսկորներուդ հայ տղայ:

Վերստին նահանջ՝ դէպի Արեգին-Կիւրիտինի բերդը:

Իրիկուն է. թշնամին կը քաշուի Պայենց գերեզմանի կոխի դիրքերէն: Մուրը կոխելուն, զէյթունցիներ դուրս կ'ելլեն իրենց պանէշներէն, կը միանան ամէնը մէկ տեղ: Կան խումբեր որոնք առկաւին չեն գիտեր տխուր իրականութիւնը՝ Արամի ինչպէս ըսել իրենց: Սակայն կարելի է միթէ ծածկել, երբ ան մէջտեղ չէ իր թիկնեղ մարմնովը: Ու ահա շատ չանցած ամենուն ալ կը պարզուի այս մեծ կորուստը: Տխրութիւնը կը դառնայ ընդհանուր, ծանր, չփոթ պահ մըն է, ոչ ոքի բերանը կը բացուի, մահուան մը մեծ լուրջութիւնը իջած է բոլորին վրայ, ո՛չ ոք կը շարժի տեղէն: Դրանգիկ Մանուկը, վերջապէս կը խզէ այդ ծանր լուրջութիւնը Վասուած խումբը պահէ եւ չար փորձանքներէ ազատէ՝ մաղթանքով, որուն միաբերան կը ձայնակցին բոլորը: Կարելի չէ այլեւս շարունակել ճամբան դէպի Հաճըյար եւ դէպի Կիւճիւկ: Քանի գիշեր է պէտք է հեռանալ այդ վայրերէն եւ քալել անցնիլ, վաղուան կրակներէն փրկելու համար խումբերը: Յոտընկայս կ'որոշուի ետ դառնալ դէպի Կիւրիտինի ամրութիւնը: Տասն եւ չորս ժամուան անընդհատ կոխէ մը յետոյ, յոգնած, անօթի, Արամին ցաւը իրենց կուրծքերուն՝ ճամբայ կ'ելլեն, լուռ ու սրտաբեկ: Արշալոյսին կը հասնին Չաղարու ըստած ցած եւ սակայն երկար հաստամեստը, ահագին զառիթափը, Անտուլ գետակի խնոս անտառին ետեւը: Օգոստ. 13-ին օրը հոն կ'անցընեն տղաքը, կը հանգչին քիչ մը, մուրը կոխելուն կրկին ճամբայ ինչպիսի համար: Իրիկունը կ'ելլեն ճամբայ եւ կէս գիշերէն յետոյ կը հասնին Ղուրա, որուն քանի անգամներ հանդիպած էին: Կը շարունակեն ճամբան, ու այդ տեղերը, ուր գետին եզերքի թուփերուն եւ աւազուտքին մէջ, պահած էին Միլլի կարաւանի աւարներուն մէկ մասը, փամփուշտ եւ ուրիշ իրեղէններ, անոնցմէ իրենց պէտք եղածները առնելէ եւ քիչ մը հանգչելէ յետոյ դարձեալ ճամբայ կու գան կը հասնին Կիւրիտինի բերդը (Կիւրիտին դալասը): Այս բնական բերդը, Զէյթունի հարաւը 3 ժամ հեռու, Մարաշի վարի ճամբուն եզերքը կը գտնուի: Անոր արեւելեան եզերքէն, որը միակտուր վեր բարձրացած առլեփ սար մըն է, կարծես մէկ դանակի հարուածով վերէն վար կտրուած, շատ վարը, նեղուելով եւ ահագին Փշոց մը հանելով կու գայ կ'անցնի Զէյթունի Շուղրի գետակը, որ արդէն բաւական մեծցած է, իր մէջ առնելով Անի Չորի գետակը, Անտուլը, Բամպակի ձորի վտակը, Թէքիրի, Փոնուզի (Մուշաթէյի) գետակները: Այդտեղ այլեւս Կիւրիտինի գետ կը կոչուի Սեղմուելով կ'անցնի ան, դէպի հարաւ, ուր կամուրջ մը ձգուած է եւ որ իրարու կը միացնէ Արեգինի հայ գիւղերը: Այդ բերդին արեւելքն է Ալա Ղալասը ը-

ուածը, որ այնքան ամուր դիրք մը չունի: Հօրեղբօրս կինը, որ Արեգինի Գարաքիւթիւկէն էր, Տիկին Էղսա, Քէօմպէճենց աղջիկը, այս բերդերու մասին շատ բան կը պատմէր իմ մանկութեանս օրերուն: Այդ բերդերը ունեցած են իրենց բերդատէրերը, որոնք յաճախ պատերազմներ մղած են իրարու դէմ: Ու յետոյ հաշտուելու: Այդ բարձունքներուն վրայ ժայռերուն մէջը փորած, աւազաններ են շինած եւ նոյնիսկ ձուկ ապրեցուցած եւ հաշտութեան ատեն նուէր ղրկած: Կիւրիտինի բերդին այդ միակտուր կողմը, մարդ կը սոսկայ նայելու: Թերեւս օձերն անգամ չեն կրնար սողալով անցնիլ անոր վրայէն: Շատ վերը, կ'երեւան ճերմակ կէտեր մը, ուր վայրի աղաւնիներ բոյն կը դնեն, իսկ կատարին բազէներ եւ արծիւներ կը սաւառնին յաճախ: Բերդին կատարէն դէպի արեւմուտք աստիճանաբար կը ցածնայ խիտ թաւտաններու, մացառուտաններու ընդարձակ տարածութիւն մը ձեւացնելով գրեթէ մինչեւ Ղուրայի սահմանը: Այս թփուտաններուն մէջ եւս նեղ անցքեր կան որ կը տանին բերդին: Բերդը ունի ջուր եւ ինչպէս ըսինք լայն տարածութեան մը վրայ, իր արեւմուտքին կանաչութիւն: Բերդին արեւմուտքի խիտ անտառներէն դժուարութեամբ կը յառաջանան նահանջողները, ամէն մէկը 20-30 օխա ծանրութիւն իրենց շալակին: Ամէն անհատ պէտք էր ունենալ այդքան ծանրութիւն: Զէնք ունեցողները իրենց զէնքերէն զատ քանի մը շարք փամփուշտ, ինչպէս նաեւ այլ պիտոյքներ, ինչպէս ջուրի տիկ (ղալազ կամ մաթրա), ուտելիք, ոտնամանի համար մորթ, հագուստի կարկտան, նոյնիսկ ասեղ ու դերձան հերիւն պէտք էր ունենար, իսկ յաւելեալ փամփուշտները եւ այլ պիտոյքները, ուտելիք, աման եւայլն կը շարկեն անգէնները: Ուրեմն իւրաքանչիւր ոք ստիպուած է իր կոնակը ունենալ բազմաթիւ պիտոյքներ, որոնք անհրաժեշտ են իրեն առանձին ապրելու համար: Ասեղ մը, կամ թիւ մը դերձան չունեցողը շատ դժուարութիւն կը քաշէ: Այդ խիտ մացառուտանները եւ քարքարուտանները ո՛չ հագուստ կը թողուն վրադ, ոչ ալ ոտնաման: Քանի մը օրէն կտոր կտոր կ'ըլլան հագուստներդ, ոտնամանդ կը ծակի: Մերկ ու բողբկ քալել պէտք կ'ըլլայ կիզիչ արեւին տակ, փուշերու քէսմէի մացառուտաններու մէջջէն, սուր սուր քարերու վրայ, ու ամէնքը այդ պէտքերը ունին: Սակայն բռններու տակ կը տքան, յոգնած, ուժասպառ, ծարաւ: Հերիւն մը չունեցողը, կտոր մը կաշի չունեցողը չի կրնար նորոգել իր փօսթալը կամ տրեխը, կը մնայ բոպիկ: Երեք չորս օրն անգամ մը, անպայման պէտք է կարկտնել, նորոգել հագուստ եւ ոտնաման: Այժմ հասած են բոլորը բերդին արեւմուտքը՝ Ղովարդ-Արեգին-Կիւրիտինի կատարը: Բերդին արեւմուտքի անցքէն խումբերը կը մտնեն ներս: Միասին հաշուելով ասդին անդին ծանօթ

տեղեր թողուած կիները, ամբողջին թիւը կը հասնի 153 հոգի: Հազիւ թէ կը հասնին ջուրին քով, ահա կը սկսին կերակուր պատրաստել իրենց ունեցածը միս է եւ ցորեն, որ կը ծեծեն քարով, կը մանրեն եւ միսին հետ կ'եփեն: Եւ դիւրին չէ այդտեղ, երբ ոչ մէկ բարեկամ, ձեռնառու տարր կայ օգնութեան հասնելու, մնալ եւ ապրիլ Մանաւանդ Արամի կորուստէն յետոյ ծանր վիճակ մը ծայր կուտայ: Անոր նպատակն եղած էր որ զինուած խումբերը, ձմեռը մնան եւ անցընեն Ձէյթունի լեռներուն մէկ ապահով անկիւնը: Հոն բաւական ատեն հանգստանալ եւ գարնան անցնին ազատ գօտի, ի հարկին դարձեալ կուտելով ճեղքելով այդ ազատ գօտիէն զիրենք բաժնող տարածութիւնը: Իսկ կիներն ու անգէնները պիտի թողուն իրենց ճակատագրին: Սակայն անոր մահէն յետոյ, խումբերու ընդհանուր հրամանատարութիւնը կը յանձնուի Յովհաննէս Սիմոնեանի, որ տարիներ Արամի գէնքի ընկերը եղած է, յաճախ 80 ընկերներով Հայ Լեռան վրայ եւ շրջակայքը: Սիմոնեան ընդհանուր փափաքին վրայ, կը մտածէ կարելին ընել փորձել զանոնք անցընելու համար ազատ գօտի: Կը գտնուին սակայն Ձէյթունի լեռները մնալու կողմնակից տղաք: Մեծամասնութիւնը սակայն նկատի ունենալով որ նահանջի սկիզբէն ի վեր իրենց թիւը կէսի իջած է, 318 էին, այժմ 150, արդ մնացածն ալ կրնայ փճանալ ընդհարումներու, կռիւներու մէջ, թուրքի կանոնաւոր զօրքերուն եւ հրոսակներուն դէմ, կ'որոշեն լքել արհողերը եւ վերջնականապէս հեռանալ: Պէտք էր վերջին ճիգ մըն ալ փորձել անցնելու համար ֆրանսական զբաւման մարզէն ներս: Որքան որ կարելի է առանց որեւէ բախումի կամ թշնամիի հանդիպելու, այլ զգոյշ եւ լուռ:

Արամի սպաննուելէն յետոյ, ինչպէս յիշեցինք, Յ. Սիմոնեան, ընդհանուր փափաքին ընդառաջելով, ստանձնեց Արամի կէս թողուցած գործը: Իրմէ յետոյ խումբերուն քաջ խմբապետներն էին Սեդրակ Մարկանեան, Դրանգիկ Մանուկ, Խաչեր Միքայէլեան, Սեդրակ Զօրագեան, Լեւոն Նորաշխարհեան, Նազարէթ Պոյամեան, Յովսէփ Փապրիքանեան: Կը մնան սակայն քանի մը օրեր եւս այդտեղ: «Օգոստ. 14-ի յետինքին, կը գրէ մեր հայրենակից՝ Պ. Ն. Ձէյթունցեան, երբ օրը կը տարածամէր, Արեգինի քնական բերդին պարիսպին ծայրը համախառն նստեր էինք: Երկար խօսեցանք, հոգեկան յուզումով մը, յորդառու դառն արցունքի հետ խառն ուղիւստէն վազող հայ անմեղ զոհերուն արեան եւ յանիրաւի անոր քաջած անսահման տառապանքին վրայ այս անբարոյ աշխարհին մէջ: Վերջին հաւաքոյթ մը եւս տեղի կ'ունենայ, ուր յարմար կը տեսնուի որ՝ մինչեւ ութ օր տղաք պատրաստուին, հանգստանան, իրենց պակասները որքան որ հնարաւոր

է լրացնեն, որովհետեւ ձմեռը շատ դժուար պիտի ըլլայ մնալ այս տեղերը առանց պաշարի եւ խիստ ցուրտի դէմ անպատրաստ, իսկ նմանապէս եւս դժուար պիտի ըլլայ մեկնիլ, գետերը պիտի շատնան, ճամբաները պիտի դժուարանան: Ու այս դժուարութիւններէն զատ կար նաեւ քաղաքական չփոթ եւ անորոշ վիճակը: Այդ քանի մը օրերուն կը գտնեն մէկ երկու օրուան բաւելու չափ ցորեն, կը շինեն հաց: Մարդիկ կը դրկեն, որոնք կ'երթան Ծոնուզի եւ Ձէյթունի լեռները պահուած կիները կը բերեն: Բերդին մէջ ամէն մարդ տենդոտ աշխատանքի մը մէջ է: Ոմանք գացեր են իրենց պահած ուտելիքները բերելու, ուրիշներ Արեգինի արտերը, անտէր մնացած ցանքերէն գարի, ցորեն հաւաքելու: Կարգ մը տղամարդեր գացած են մինչեւ Ձէյթունի թագստոցները, իրենց կիները եւ անչափահաս աղաքը բերելու: Վերջապէս, ժամանակ չկայ, պէտք է անապարիւ Օգոստ. 14, 15, 16-ի օրերը պատրաստութեան օրեր են, ասդին անդին գացողները 18-ի առտուն այլեւս պէտք է վերադառնան բերդ, միասին ճամբայ ելլելու համար: Իսկ այդ օրերուն բերդ մնացողներն ալ ուրիշ աշխատանք կը տանին, կարկտուք, մաքրութիւն, նորոգութիւն: Խոտացուած օրը, արդէն բոլորը կը վերադառնան կու գան բերդը: Այստեղ դարձեալ հետեւեալ կերպով կը նկարագրէ այդ օրը. «Վերադարձի վայրկեանէն սկսած, բերդին մէջ տեսարանը բոլորովին փոխուած էր, բացի պահակներէն, ամէն մարդ ճամբու պաշարի պատրաստութիւնով զբաղած է: Տղոցմէ ոմանք ցորենը՝ խոշոր տափակ քարի մը վրայ կը սղկեն (փշրել, մանրել) կորկոտէն ոչ-աւելի մանր փշրելով, եւ զայն այլերի վերածելու կ'աշխատին, ճամբու ընթացքին զոնէ հաց ունենալու մեծ յոյսով: Ոմանք ձաւար կը պատրաստէին, զայն չորցնելէ վերջ քարի մը վրայ սղկելով մանր վիճակի մէջ: Ուրիշներ ցորեն կը խարկէին կրակին վրայ խաւիծ կը պատրաստէին: Անդին մի քանիներ չորցած միսերը կը ջարդէին խորոված շինելու համար: Բերդին մէջ, անտառի ծառերուն շուքերուն, եռուզերին մէջ, խումբին զործատեղին, հեռուէն դիտողի մը աչքերուն, երբորդ, չորրորդ եւ հինգերորդ դարերու մէջ կեդրոնական Եւրոպայի անտառաքնակ վանտառներուն եւ կօթերուն ապրելակերպ մէկ տեսարանն ու պատկերը կը ներկայնար կարծես: Ժամանակը սուղ էր եւ տակուն սպասելը վտանգաւոր, հոգն ու քարը կրնային դաւաճանել: Այդտեղէն մինչեւ ազատ գօտի չորս օրուայ ճամբայ կայ, սակայն իրենց համար, որոնք գիշերները մութին մէջ, մացառներու, թփուտներու, լեռներու քարքարոտներու մէջէն, անծանօթ վայրերէ ճամբորդել, կիներով եւ փոքր տղաներով, դժուար գործ էր եւ թերեւս ամբողջ շաբաթ մը պէտք պիտի ըլլար եթէ անակնկալներ չպատահէին, եթէ

Թշնամին իրենց առջև չելլէր: Օգոստ. 20-ին խումբերը պատրաստ են ճամբայ ելլելու, եւ Զէյթունի լեռներէն յաւէտ բաժնուելու համար: Գիտենք որ 20 հոգի Օսմանիյէ նահանջին կորսնցուցած էին, Անտըռնի անտառներուն եւ Թաւուսներուն մէջ կարեւոր մաս մը զոհ գացած էին, 50-ի չափ անգէններ, կիներ եւ շիրթածներ Անտըռնի նահանջէն դարձին, պինուած տղաքը կորսնցուցած ըլլալով գացած են դէպի Մարաշ եւ ճամբաները ջարդուած Թշնամիէն ու 21 Օգոստ.-ին խումբերը իրենց ամբողջութեամբ 153 հոգիէ կը բաղկանային, բաժնուած 15 ական հոգինոց խմբակներու: Ու ահա այդ օր ճամբայ կ'ելլեն Կիւրթիսիէն եւ կը գիշերեն Տուշից Բլուր ըստած վայրը, յաջորդ օրը կը հասնին Արեգինի «Իսլում» (խլամ փունարը) կոչուած այգեստանները, ուր տանձենիներ հասունցած են, կը հանգչին քիչ մը այնտեղ, կը քաղեն պտուղները ու կ'ուղղուին դէպի Քիւրթիւր Թուրքերը այդտեղեր կը զգան իրենց ներկայութիւնը, որովհետեւ իրենց անցած տեղերը ո'չ մէկ հունձք, բերք չեն թողուր, քանի որ իրենց մշակածն ու ցանածն է եւ քանի որ իրենց պիտի չմնայ, ուրեմն ինչո՞ւ Թշնամիին թողուն: Կը հասկնան թէ բերդն են, սակայն չվատահելով իրենց յաջողութեան, Թուրքերը չեն քալեր բերդին վրայ, ու մանաւանդ գիտեն թէ, հայեր հոն պիտի չմնան, պիտի հեռանան: Մերիններուն ուղղութիւնը պիտի ըլլար դարձեալ Օսմանիյէ, սակայն Տնտրճագի վրայով Պաղչէ: Քիւրթիւրէն եւ Տէրպէնտէն անցնելէ յետոյ նահանջողները պիտի գան Զիհանի վրայի վարի կամուրջը ինկիւթի կամուրջին միւս ծայրը Թուրք պահականոց կայ, այս պարագան արդէն գիտէին: Կը մտածուի անոր չհանդիպիլ ընդհարումի մը առաջը առնելու համար: Խումբը ճամբայ ելլելէ երկու օր առաջ Մովսէս Մարաշեան քաջ երիտասարդը, որ միեւնոյն ատեն քով ալ լուղորդ էր, հետը ուրիշ երկու տղաներ եւս կը զրկուին Զիհանի անցքը քննելու: Անոնք պիտի հասկնան թէ՝ գետը ո՞ր տեղէն կարելի է անցնիլ, եւ թէ միւս եզերքին մօտերը Թշնամի կա՞յ: Գիշեր է, մութ ու խաւար գէյթունցի Մովսէս, գետին կարգ մը տեղերը կը մտնէ, կը փորձէ թէ ո՞ր տեղէն գետը անցը կու տայ, կ'անցնի միւս ափը նայելու համար թէ Թուրքեր կը պահեն այն կողմը: Օր մը յետոյ տղաքը կը դառնան եւ կու գան կը տեղեկացնեն թէ՝ քանի մը անցքեր գտած են, երկու եզերքներու մօտերը ո'չ մէկ Թշնամի պահակ չկայ, հետեւաբար ո'չ մէկ վտանգ եւ արգելք չկայ միւս կողմը անցնելու: Սակայն դարձեալ նահանջողները զգոյշ եւ չըջահայտ են: Կամուրջէն մէկ երկու ժամ գետին հոսանքէն վար, Օգոստ. 22-ի իրիկունը խումբերը կը հասնին Արեգինի Պէհնիլիք ըստած վայրը, ասիկա Արեգինի մեծ գիւղերէն է: Խումբերը իրենց մէջ ունէին 17

կիներ, չափահաս աղջիկ մը եւ 13 տարեկան պատանի մը: Տեղատարափ անձրեւի մը տակ բոլորը խիստ դարձած գիշերը կ'անցընեն Պէհնիլիքի աւերակներուն մէջ, վրայ գլուխ հագուստ չորցնելու համար կրակ վառել վտանգաւոր է: Թշնամին կրնայ հեռուէն իսկ նշմարել եւ յանկարծ պաշարել: Առաւօտեան լոյսէն առաջ կը քաշուին խիտ անտառը եւ ցերեկը հոն կ'անցընեն: Իրիկունը դէմ ճամբայ կ'ելլեն դէպի Զիհան, մինչեւ լոյս քալելէ յետոյ, երբ կը լուսնայ, նորէն ցերեկը կը ստիպուին քաշուիլ անտառ: Ամայութիւն է շրջակայքը՝ Զիհանը կ'երեւայ այլեւս, բարձր բլուրի մը գագաթէն ուր ապաստանած էին ցերեկը: Օգոստ. 23-ի իրիկունը կ'ուղղուին դէպի Զիհան գետին անցքը՝ Տէրին Կէչէտ, որ ինկիւթի կամուրջէն մէկ ժամ գետին հոսանքէն վարն է: Երբ ճամբան, Քիւրթիւրի մօտէն կ'անցնէին, ճամբուն մօտերը գէնքի ձայն մը կը լսուի, մինչդեռ իրիկունը տղաքը անձայն եւ շուտ շուտ կ'ընթանան: Ահա գէնքի երկրորդ հարուած մը եւս, եւ աւելի մօտէն: Հաւանաբար Թշնամին կը հետապնդէ գիւրենք: Քիչ յետոյ ինկիւթի պահականոցէն գէնքի հարուած մը եւս կը տրուի:

ԴԵՊԻ ՕՍՄԱՆԻՅԷ

Բարեբախտաբար չիրականանար խումբերուն կասկածը: Գիշերուան մութին եւ խոր լուսթեան մէջ, առանց իրենց ոտքերուն ձայնը հանելու, կը քալեն, կ'իջնեն աւելի վար գետեզերքը բլուրներուն քովն ի վեր, կ'անցնին Տէրին Կէչէտ ըստած եզերքը, Մովսէս Մարաշեան եւ Գէորգ Պուղուրեան անվախ եւ անձնուէր տղաքը, անմիջապէս գէնքերը ուսերնուն, գետը կը նետուին, կ'անցնին միւս ափը, հասկընալու համար թէ՝ Թշնամի չկայ, ինչպէս որ նախապէս ալ այս տղաքը զրկուած էին Արեգինէն, այդ տեղերը հետազօտելու համար: Տղաքը լողալով կ'անցնին միւս կողմը կը քննեն ու կը վերադառնան եւ լուր կը բերեն թէ՝ անցքին անմիջապէս բերանը վրան մը կայ: Վրանին մէջ եղողները նկատեր են զիրենք, վախցեր են եւ ձայն տուեր են թէ՝ ովքե՞ր էք դուք, եւ ի՞նչ կ'ուզէք, ի՞նչ կը փնտռէք, այս տեղերը, գիշերուան այդ ուշ ատենը: Մովսէս եւ Գէորգ առանց ձայն տալու կը մտնեն գետը վերստին եւ կու գան կը միանան խումբերուն եւ կը պատմեն: Բոլորը լուռ եւ անհամբեր կը սպասեն: Այս տեղեկութեան վրայ կը թողուն այդ անցքը (Կէչիտ) եւ կը հեռանան: Կը փոխեն ճամբան, դարձեալ գետին հոսանքն ի վեր, դէպի կամուրջ կը քալեն աւելի քան քառորդ ժամ, այնտեղ ուր Թշնամին արթուն կը հակէ: Բոլորովին անձանօթ անցք մըն է այդ վերելքը, որուն կը մօտենան նահանջողները: Մովսէս, Գէորգ եւ քանի մը

արեգիկնցի տղաք, իրենք իրենց նախապէս եկած դարձեալ քննած են նաեւ այդ անցքը, նկատի առնելով որեւէ չարադէպ անակնկալ կը հասնին անցքը եւ բոլորը խումբ-խումբ կը լեցունին գետը Անցքը անծանօթ եւ քարքարոտ, դժուարանցներէ է: Գիշերը կարճ է, ամառնային գիշեր, եւ լուսնալու մօտ է: Առանց կորուստի կ'անցնին բոլորը միւս ափը: Այդ եղանակին, լաւ որ ձիւհանի ջուրը բաւական նուազած կ'ըլլայ: Հիմա նահանջողները կը գտնուին ձիւհանի եւ իր գետակից Ագսու-էրքէնէզ գետերուն միջեւ տարածուող դաշտին մէջ: Տակաւին չլուսցած, շատ արագ, այլ սակայն զգոյշ քայլերով պէտք է անցնիլ այդ փորձանքոտ վայրերէն, եւ հասնիլ լերան մը կողքին, հոն ապաստանիլ, լոյսը բացուելով թշնամիին չհանդիպելու համար: Կէս գիշերը անցնելու վրայ է: Հինգ վեց ժամուան ճամբայ կայ կտրելիք: Արագ, զգոյշ կ'անցնին չէրքէզ գիւղի մը մօտէն: Ահա կամուրջ մը եւս իրենց առջեւը, Ագսու-էրքէնէզի վրայ: Այնտեղէն պիտի անցնին, սակայն կրնայ ըլլալ որ՝ թշնամի պահականոց կեցած ըլլայ նաեւ այդտեղ: Սակայն կ'անցնին առանց թշնամիի հանդիպելու ու կը յառաջանան, կը բարձրանան Եավչան լեռներու բլուրներէն մէկուն՝ Էօնսէնի մօտը: Օգոստ. 24, 25, 26-ին կը հասնին Ջիարէթ ըսուած վայրը, անկէ կու գան Գասթալ եւ 27-ին կը բարձրանան Չագըր Օղլուի բարձունքը: Մօտ են այլեւ Պաղչէ-Պուլանըզի, որ ճամբան է Օսմանիյէի Մէկ գիշերուան մէջ 12 ժամուան ճամբայ կտրել, ծանր շաւկներու տակ յոգնած, յուսարեկ, անօթի եւ միշտ զգոյշ թշնամիին չհանդիպելու, անոր հետ գործ չունենալու մտահոգութիւնով, գիւրին գործ չէ: Այդ երկու երեք օրուան մէջ, ցերեկները պահուելով, գիշերը ճամբորդելով անցած են Քիլիֆի, ձիւհիւլի գիւղերու մօտերէն, չէրքէզ գիւղի մը եզերքէն, հանդիպած են թուրք զինուորներու խրճիթի մը, ուր 7 զինուորներ կը հսկեն, առանց անոնցմէ նկատուելու եւ առանց անոնց որեւէ չարիք հասցնելու Էօնսէն թուրք գիւղի մօտէն, վերջապէս հասած են Չագըր Օղլու, Թախթալը-Գապըր կոչուած տեղէն: Դիմացը, իրենց առջեւն է բարձր լեռ մը՝ Հովտու: Թէպէտեւ Պաղչէ քաղաքը Հովտու լերան ստորոտն է, եւ որ դէպի Օսմանիյէ ամենէն կարճ ճամբան է, սակայն Պաղչէն թուրքերուն ձեռքն է: Պաղչէն 4 ժամ միայն հեռու է իրենցմէ, բայց կարելի չէ այդ ուղղութեամբ յառաջանալ: Չագըր Օղլուի ետեւի լեռնէն վար կ'իջնեն, գիւղին արեւելեան կողմէն կ'անցնին, առանց նշմարուելու Չագըր Օղլուի թուրք նոր բնակչութենէն: Կը կտրեն Էլ-Օղլու-Պաղչէ ճամբան ու կը մտնեն Հովտու լերան կողմ կ'ուզեն Ամանուսի Կէօյճէ Տաղը հասնիլ, որուն մէջէն կ'անցնի մե-

փապուղին երկաթուղագծի Գիշերը կը շարունակեն ճամբան լուս-թեամբ, իրենց անցքին կը հանդիպին վրանաբնակ թուրքմէններու: Անոնցմէ չնկատուելու համար դարձեալ կը ծոխն դէպի Կեապուր-Կէօյի կողմը: Մինչ այդ կը լուսնայ, կը քաշուին մօտակայ անտա-ռը: Չագըր Օղլուէն յետոյ, այդտեղ խումբերը կը մատնուին նորէն թշնամիին: Նահանջողները վերջին ծայր անօթի են: Խումբին մէջ ով որ ափ մը ցորեն ունէր, պիտի բաժնէր իր գէնքի ընկերներուն: Այդ պահուն, տղաք անտառը պտրտած ատենը կը հանդիպին կինճերու երամակի մը: Միմոնեան, առանց անդրադառնալու թէ՛ կրնայ անպատե-հութիւն մը առաջ գալ իր մաուզէրը կը պարպէ եւ անոնցմէ խոզ մը կը սպաննէ: Այդ իրենց անօթի վիճակին մէջ շատ բան կ'արժէր նման որս մը: Անիկա անմիջապէս կը բաժնուի հաւասարապէս բո-լորին, իւրաքանչիւրին 100 տրամ ոսկորով միս կ'իյնայ: Միան ու կաշին կ'առնեն եւ չեն կենար, ճամբան կը շարունակեն: Երկու թուրք հովիւներ կը լսեն գէնքի ձայնը անտառէն, կը փախչին: Ա-նոնք հեռանալով կը սկսին օգնութեան աղաղակներ արձակել: Թշնամին արթուն է, անոր կողմէն հրաքաններ կը սկսին պարպուիլ: Նահանջողները կը ստիպուին պատասխանել: Մինչեւ իրիկուն երկու կողմէ անդադար կրակ կը տեղայ: Այդտեղ կը զարնուին Ռուբէն Նորաշխարհեան՝ Նազարէթ Չաուլի մէկ տղան եւ Լեւոն Պազնեան: Այդ կոխին մէջ կ'անհետանայ Յովսէփ Ֆապրիքանեան եւ կը կարծուի թէ ան ալ սպաննուեցաւ կոխին մէջ, սակայն շատ վերջէն կը լսուի որ՝ Յով-սէփ միս մինակ կրկին կը դառնայ եւ կը հասնի Ջէյթու, բաւական ատեն առանձին այն տեղերը պտրտելէ յետոյ, կու գայ Այնթապ եւ անկէ ալ կ'անցնի Հալէպ:

Չագըր Օղլուի կոխէն խոյս կու տան 28 նահանջողներ եւ կը հասնին Շէքէր Օպայի ետեւը, սակայն թշնամի մէկ թեւը կը հե-տապնդէ զիրենք կրկին եւ այդ օր եւս կը ստիպուին կռուիլ նա-խորդ օրուան պէս, մինչեւ իրիկուն դիմադրելով թշնամիին անողոր յարձակումներուն: Այդտեղ խումբը կը կորսնցնէ իր ընկերներէն Չարդեան Տէօլլէթը, Մաթոսեան Յակոբը, Քէօչէկեան Յովհաննէսը, Եղուպեան Յարութիւնը եւ Վարդան Հաճի Կարապետեանը: Մուրթ կ'իջնէ եւ խումբը կրկին օգտուելով գիշերէն, կը շարունակէ ճամբան, իսկ իրենց ետեւն է եւ կը հետապնդէ զիրենք 500-է աւելի զինուած հրոսախումբը, զիրենք իսպառ փճացնելու համար: Օգոստ. 28-ին, դեռ չլուսցած խումբէն քանի մը տղաք կը բաժնուին Շէքէր Օպայի ստորոտը, եւ ճամբայ կ'իջնեն դէպի Օսմանիյէ: Քիչ մը անդին, ճամ-բան երկու տղաք ալ կը պակսին խումբէն: Վերջապէս 11 հոգի ճամբան մոլորելով 1921 Սեպտ. 3-ին կը հասնին Օսմանիյէ: Այդ 11

ընկերներէն մէկը կ'ըլլայ Զէյթունի Ազգային միութեան Աստեղագետը Պ. Նազարեթ Զէյթունցեան, որուն «Զէյթունի վերջին դէպքերը 1919-1921» գրքովէն լայնօրէն օգտուեցանք մեր այս աշխատութեան մէջ մինչեւ այստեղ: Իսկ ասկէ անդին դարձեալ մեր հայրենակիցներէն եւ ազատ գօտի հասնող Պ. Լեւոն Նորաշխարհանի Եգիպտոսի «Արեւ» օրաթերթին թղթակիցէն որպէս ապրողի եւ ականատեսի հաղորդած տեղեկութիւններէն Պրն. Զէյթունցեան քաղած էր եւ մենք այստեղ կ'ամփոփենք նաեւ այդ քանի մը էջերը, օգտագործելով նաեւ մեր հանգուցեալ հայրենակից՝ Վարդապար Գարանձիւեանի «Զէյթունի նահանջը» գրքովը:

«Թշնամին ստուար ուժերով կը հետապնդէր նահանջողները. 28 Օգոստոսի կոիւէն երկու օր յետոյ, արդէն կարեւոր կեդրոններ հաղորդագրութիւններ եղած են նահանջողներու մասին: Մարաշի եւ Պաղչէի կառավարութիւնները՝ նոյնիսկ Մարաշի միւթէսարըժը եւ Պաղչէի գայմազամը իրենք անձամբ եւ բաւականաչափ զօրքով կը հասնին, արգիլելու համար նահանջողներու յառաջանալը դէպի ազատ գօտի, կ'ուզեն այդ մնացածներն ալ ոչնչացնել:

Օգոստ. 28-ի կոիւէն վերջ, կէս գիշերին հագիւ կրնան պաշարման սեղմ գիծը խզել եւ յառաջանալ երկու ուղղութիւնով: Դժուար է այլեւս որ անոնք իրար գտնեն եւ միանան, ինչպէս վերը յիշեցինք 11 Հոգիներ կորոնցուցած են բացի կոիւին ինկած 7 զոհերէն: Կէս գիշերն անցած է, խումբին մէկը, օրուան տաժանելի եւ երկար կրփուններէն յոգնած, երբ լեռներու մէջէն կ'անցնի, աննպատակ, մարդոց ոտնաձայներ կը լսուին: Տրուած կարգախօսէն կը հասկցուի թէ բաժնուած տղաներն են անոնք: Կը միանան ու կը սկսին քալել կրկին. առաւօտը բացուելու մօտ է: Քիչ ետքը կրկին պիտի պաշարուին տղաքը, որովհետեւ չեն կրցած շատ հեռանալ Թշնամի ուժերէն: Անծանօթ վայրեր, իրենց համար չգիտցուած ճամբաներ են, եւ այդպիսի տեղերէ պիտի անցնին: Կենալ չ'ըլլար սակայն, պէտք է քալել, ի հարկին ցերեկն անգամ եւ հասնիլ ինչալ իսլահիէի արեւելեան կողմը եւ ապաստանիլ իսլահիէի դաշտին մէկ ընդարձակ եղէգնուտը, հոն դիրք բռնել որեւէ չարադէպ անակնկալի պարագային եւ հոն գտնէ ատեն մը, թերեւս մէկ երկու օր հանգիստ ընելու Այդ շամբուտը (սաղլըխ) երկու ժամուան տարածութեամբ վայր մըն է: Եթէ պատահի որ Թշնամին շարունակէ գիւրենք հետապնդել, բաւական դժուար գործի մը ձեռնարկած պիտի ըլլայ Սակայն Շէքէր-Օպաթն մինչեւ այդ եղէգնուտը տակաւին երեք ժամէն աւելի քալելիք ճամբայ ունին նահանջողները: Իսկ արեւը ծագելու վրայ է: Նահանջողներու առաջնորդը՝ Յ. Սիմոնեանն է, այդ լեռներուն քաջածանօթ միակ

զէյթունցին: Անիկա կ'առաջնորդէ տղաքը դէպի այնտեղ, դէպի եղէգնուտը: Այդ օրը եւ այդ տեղէն էր որ, դեռ եղէգնուտը չհասած, Շէքէր-Օպաթի եւ սաղի միջեւ, 29 Օգոստոսին, դեռ չլուսցած, ինչպէս քիչ անդին յիշած ենք արդէն, կը բաժնուին 5 տղաք, որոնց վրայ կ'աւելնան նաեւ ուրիշներ եւ 11 Հոգի կը հեռանան դէպի Հասանպէյլի կողմը, դէպի Օսմանիյէ, անոնց մէջ եղած են Ն. Զէյթունցեանէն զատ նաեւ Ճէլլաթ Մանուկ եւ Սատանիկ Յակոբ եւ ուրիշներ: Սիմոնեան կը հասցընէ նահանջողները եղէգնուտ Սակայն Թշնամին կը հասկնայ եւ հետեւեալ օրը սաղը ամբողջութեամբ կը պաշարուի: Թշնամին թէպէտեւ ներս չի կրնար մտնել, սակայն անընդհատ կը կրակէ տղոց վրայ: Խումբի տղաքը սակայն օգտուելով գիւրէն, սաղի մօտը գտնուող կլկլի կալերէն մեծ քանակութեամբ կլկլ (ճերմակ տեսակ մը խոշոր կորեկ) կը բերեն, որպէս ուտելիք, որովհետեւ քանի օրերէ ի վեր անօթի էին: Երբ Թշնամին կը տեսնէ որ այդպէս դրսէն ներս հրացանաձգութիւնով բան դուրս առաջ պիտի չգայ, եղէգնուտը ամէն կողմէ հրդեհի կու տայ: Հով մըն ալ կը նպաստէ կրակի տարածուելուն եւ ահա սաղը կը բռնկի ամբողջութեամբ: Քիչ կը մնայ որ բոլորը հոյ ճարակ դառնան: Սաղին մէջտեղը առանց եղէգնուտ, լերկ բացատը կը հաւաքուին եւ հոն աւազը կը փորէ ամէն մարդ եւ մէջը կը պառկի, կրակը իրենց վրայէն կ'անցնի առանց իրենց վնասելու: Մէկ երկու ժամ սակայն անոնք ծածկուած կ'ըլլան մոխիրներու տակ: Եղէգնուտի շուրջը Թշնամի հետեւակներ եւ ձիաւորներ շղթայաձել կը պաշարեն ու երբ կը տեսնեն սաղին այլիք, մասամբ կը համոզուին թէ՝ զէյթունցիներն ալ այլեցան, եւ պաշարման շղթան կը թուլնայ: Երեք օր խումբը կը մնայ եղէգնուտին մէջ, մինչեւ Սեպտ. 1. վերջապէս տաք մոխիրներու վրայէն քալելով դուրս կ'ելլէ: Շատերուն կաշիէ ոտնամանները տակաւին չմարած մոխիրներուն վրայ կ'ոխելն անգործածելի կը դառնան: Եղէգնուտէն ելլելէն յետոյ նկատելով որ՝ դէպի Օսմանիէ կրնան Թշնամիին հանդիպիլ, ուղղութիւն կ'առնեն դէպի Քիլիս, առաջնորդութեամբ Յովհ. Սիմոնեանի, որ մինչեւ 1918-ի վերջերը 80-ի մօտ ընկերներով Անգլ. գրաւման սահմանը անցնելու համար նահանջ մը ըրած է քիւրտի մը օգնութիւնով: Երբ կը հասնին Սապուն Սուլու լաւած տեղը, Սիմոնեան խումբէն զատուելով կ'երթայ այդ քիւրտին գիւղը, որը միանգամայն ծանօթ չէթէպաքա մըն է: Կ'առնէ եւ կը բերէ խումբին մօտ: Այդ գիշեր նահանջողները այլեւս ապահով կերպով Քիլիսի ուղղութեամբ ճամբայ կ'ելլեն: Խմբապետներէն, Սեդրակ Զօլաքեանի խումբը տակաւին սաղը չմտած, խումբին հետքը կը կորսնցնէ եւ առանձին մնալով թուրքերէ կը

դէպի Այնթապ, իսկ կինը՝ Հայկուհի կը շարունակէ իր ճամբան նահանջողներուն հետ եւ կը հասնի Քիլիս: Նահանջողները քիւրտ առաջնորդով կը շարունակեն ճամբան դէպի Քիլիս, անցնելով շատ մը թուրք գիւղերու առջեւէն: Սեպտ. 2-ին հասած են տղաքը Փրանս. պահակազօրքին շատ մօտերը եւ քիւրտը եւ իր տղան այլեւս կը մերժեն յառաջանալ զգուշանալով Փրանսացիներէն, եւ հեռուն քանի մը բլուրներ ցոյց տալով կ'ըսեն. «Ահա ձեր ճամբան, գացէք, այլեւս վտանգ չկայ, երբ այդ բլուրները անցնիք, այնտեղ Փրանսացիներ կան»: Խումբին յառաջապահներ կը պնդեն որ՝ քիւրտը շարունակէ առաջնորդել գիրենք, որովհետեւ կը կասկածին տակաւին ապահովութեան մասին, սակայն կը խնդրէ որ գինքը թող տան, նկատելով որ՝ իրեն համար այլեւս վտանգաւոր է յառաջանալ: Թող կու տան զանիկա եւ անոր կը վճարեն 6 օսմ. հնչուէն ոսկի եւ մէկ հատ ալ մատուցէր հրացան, համաձայն տրուած խոստումին: Թէպէտեւ զէյթունցիին համար ոճիւրի համարժէք էր թշնամիի մը զէնք տալ, սակայն քիւրտը այդ պայմանով ճամբայ ելած էր: Եւ այդ խօսքը մերժել, չարգել, ապերախտութիւն եղած պիտի ըլլար: Ու խումբը կը յառաջանայ դէպի Քիլիս, համոզուած այլեւս թէ՝ այդ տեղերը այլեւս չէթէ դոյութիւն չունի, եւ նահանջողները այլեւս առանց զգուշութեան պիտի շարունակէին ճամբան:

Ըստ. Պ. Լեւոն Նորայիսարհեանի հաղորդած տեղեկութեան, Սարըլարի լեռնային ճամբով Գազան Ալիի ազգիներէն Իսլահիյէի (սազը) եղէգնուտը կ'ապաստանին: Պաշար չունի, կորեկ-կլկլի կայերէն Ե-7 հարիւր օխա կլկլ կը տանին սազը: Երեք օր յետոյ թշնամիին կը գտնէ իրենց հետքը, կռիւէ մը յետոյ, տեսնելով որ բան մը չեն հասկնար, կրակի կու տան սազը, հովը կը փչէ եւ կրակը կը ծաւալի ամբողջ եղէգնուտին վրայ: Գիշերանց պաշարման շղթան կտրելով կրակին մէջէն, տաք մոխիրներուն վրայէն անցնելով դուրս կ'ելլեն եղէգնուտէն եւ իրենց կորեկի պաշարները կոնակնին կ'ուղղուին դէպի Հէօքէշիյէ, իրենցմէ կը պակսին 23 հոգի: Այնտեղէն կ'անցնին Ջամլուգ: Մինչեւ այդտեղ նահանջողները կ'առաջնորդէ Յովհ. Սիմոնեան, իսկ անկէ դէպի Քիլիս Սիմոնեանի ծանօթ մէկ քիւրտը եւ իր զուակը: Անձնուէր ընկերներէն Սիմոնեան լիուլի կատարած էր իր պարտականութիւնը մինչեւ այդտեղ: Կը հասնին Աֆրին, հոն կը տեղեկանան թէ՝ Ճէնկիւնի մէջ Միլլի ուժեր կը գտնուին, որոնք սակայն թոյլ կու տան որ նահանջողները շարունակեն իրենց ճամբան: Ճէնկիւնէ դէպի Քիլիս կը հանդիպին գիւղի մը, ուր ոստիկան մը, հօն մը եւ կարգ մը թուրքեր կը մօտենան եւ կ'ուզեն նահանջողներէն բաներ մը հասկնալ, սակայն խումբը ո'չ մէկ բան չի յայտնար: Ար

տեղէն դարձեալ կը շարունակեն ճամբան դէպի Քիլիս, ջաղացքի մը կը մօտենան, հոն հայ գիւղացի մը իրենց կը հասկցնէ որ զգուշ ըլլան, ամենէն վտանգաւոր տեղերն են այս վայրերը եւ ցոյց կու տայ բլուր մը եւ կ'ըսէ թէ՝ երբ այդ բլուրը անցնիք, այլեւս ազատուած կ'ըլլաք, որովհետեւ այլեւս այնտեղ Փրանսական զինուորականութեան զրաւման տակ կը գտնուի: Քիլիս հասնելու տակաւին 2 ժամ մնացած, Սիւլիւքիւ Տէրէ ըսուած վայրը, վերոյիշեալ ջաղացքէն հազիւ տասը վայրկեան անդին, բլուրի մը վրայէն ծառաստաններու մէջէն նահանջողներու վրայ քանի մը հրազէն կը պարպուի եւ հրացանաձգութեան հետ միաժամանակ ձայն մը կու գայ: Մարդիկ կը պոռան. «Մի յառաջանաք, ետ քաշուեցէք, իրարու մօտ հաւաքուեցէք եւ անձնատուր եղէք մեզի, մենք Փրանսական միլիսներ ենք, Քիլիսէն հրահանգի կը սպասենք, որ ըստ այնմ շարժինք»: Ջէյթունցիք այս ձայներէն եւ բլուրի վրայի մարդերէն կը կասկածին եւ սակայն կը զգուշանան զէնքով պատասխանելէ, Փրանսական ուժերու դէմ զէնք գործածած ըլլալու սխալ մը չգործելու համար: Խումբէն կը պատասխանեն թէ՝ «Եթէ դուք Փրանսական պահակազօրքեր էք, վար իջէք, եւ մենք ձեզի յանձնուած ենք»: Վերէն սակայն այդ անձանօթ մարդիկը նոյն խօսքերը կը կրկնեն, ճերմակ դրօշակով երիտասարդ մը կը զրկեն տղաքը դէպի այդ մարդիկը, որպէսզի երթայ կացութիւնը հասկնայ: Սակայն դժբախտաբար զրկուած անձը այդ գործին յարմար մէկը չէ: Ան երբ կը հասնի անձանօթներուն մօտ, ու երբ կը լսէ որ անոնց մէջ հայերէն խօսողներ ալ կան, միամիտ տղան չխորհելով թէ՝ անոնք մասնաւոր կերպով քանի մը խօսքեր կը խօսին, գինքը խաբելով, ամբողջ տղաքը ծուղակը ձգելու համար, կը խանդավառուի եւ կը սկսի պոռալ: «Եկէք տղաք, ասոնք իրաւ Փրանսացի զինուորներ են, իրենց մէջ հայեր ալ կան, հայերէն կը խօսին, դարձէք, յանձնուեցէք»: Խումբը այս խօսքերուն ալ կարեւորութիւն չտալով կը շարունակէ իր ճամբան դէպի Քիլիս: Յովհաննէս Սիմոնեան որ խումբին վերջերը մնացողներէն էր, առաջ գացողներուն կը սկսի կանչել որ կենան եւ պահակազօրքին հրահանգին ենթարկուին: Շատեր սակայն արդէն բաւական յառաջացած են եւ մօիկ չեն ըներ: Այդ ատեն Սիմոնեանի շուրջի 11 այրերը եւ 4 կիները կը հետեւին Սիմոնեանի եւ կը յառաջանան դէպի վերը՝ բլուրը, դէպի անձանօթ մարդիկը: Սիմոնեան ամենէն առաջ ինքը կը բարձրանայ դէպի այդ սուտ միլիսները, հակառակ իրեն եղած խնդրանքներուն որ չերթայ: Հոն հասածին պէս, անոր վզին եւ ձեռքերուն կը փաթթուին, ինչ որ վարէն տղաքը կը տեսնեն եւ կը կարծեն թէ՝ միլիսները Սիմոնեանի ծանօթներ են եւ կ'ողջագուրուին:

Այստեղ չմոռանաք ըսելու որ, առաջին անգամ երբ ճերմակ դրօշակով այդ երիտասարդը ղրկած են, ըստ իս, որ ձեր պետը թող դայ, որ անոր հետ խօսինք եւ կարգադրենք մեր ընելիքը: Հետեւաբար Սիմոնեան, որ մինչեւ այդ ատեն խումբի ղեկավարներէն եղած էր, յարմար կը տեսնէ որ ինք երթայ եւ տեսնուի մարդոց հետ: Ու այդ երիտասարդը երբ կը տեսնէ անոնց ողջագուրուիլը, կրկին կը սկսի կանչել վարը եղողներուն «Մի՛ վախնաք, ասոնք Սիմոնեանի ծանօթներ են»: Այս խօսքերէն սիրտ առած Սիմոնեանի ետեւը, տակաւին քիչ մը վարը, շփոթ վիճակի մը մէջ սպասող 15 հոգին եւս կը փութան դէպի բլուր: Ու ահա վերէն վար խուժող խումբ մը հրոսակներ անխնայ կը սկսին հրացանաձգութեան: Այդտեղ յառաջացող 15 հոգիներէն 3-ը միայն ետ փախչելով կ'ազատին, իսկ ամենէն առաջ, վերը Սիմոնեանի վրայ յարձակելով, ողջագուրման ձեւին տակ զինքը գինաթափ ըրած են եւ սպաննած: Սպաննուող միւս տասներկու անուններն են.— Եզեկիէլեան Յակոբ, Հաշարեան Յովհաննէս, Հաճիթէյիկեան Մնացական, Հայաստան Մրիսրվարդանեան, Ասատուր Ղրմաճոյեան, Տանաճեան Սեդրակ, Տօնապաշեան Մանուկ, Յովհաննէս Ղըշպուղեան, Յովհաննէս Գարագուշեան, որ զօրանոցին մէջ, իր կիներ սպաննեց անոր խնդրանքին վրայ, Նուարդ Զազրեան, Մարիամ Տնտեսեան եւ Թագուհի Պարթեան: Հրոսակներու վար իջած ատեն անոնցմէ մէկուն ձեռքը կը տեսնեն Սիմոնեանի գէնքը: Այն ատեն խումբի տղաքը կը հասկնան, թէ անոնք թշնամի հրոսակներ եղած են, սակայն ինչ օգուտ: Սիմոնեանը սպաննուած էր իր նախկին բարեկամներուն ձեռքով, ու մնացած տղաքը երբ կը հասկնան իրականութիւնը, խումբին յետսպաշները կը սկսին կրակել չէթէներուն վրայ, բայց անոնք հեռացած են արդէն եւ ծառաստաններուն մէջ աներեւոյթ եղած: Այս ընդհարումի ընթացքին, արագաշարժ երկու երիտասարդներ խումբէն զատուելով կը փութան Քիլիս եւ կը հաղորդեն եղելութիւնը: Յրանսական իշխանութիւնը խումբ մը զինուոր կը ղրկէ տղոց օգնութեան: Սակայն տղաքը Քիլիսի մօտը հասած են երբ Յրանսական զօրքը ճամբան իրենց կը հանդիպի: Կռիւէն 2 ժամ ետքը նահանջողները կը հասնին Քիլիս, ուր Քիլիսի թուրք քաղաքական իշխանութիւնը ռստիկաններու հսկողութեամբ մզկիթ մը կը տանի, այս տեսնելով կը սկսին կրկին կասկածիլ թէ արդե՞ք դարձեալ թաղարդն ինկած են: Մանաւանդ արգելքի տակ դրուիլը եւ գէնքերուն առնուիլը իրենց մտածել կու տայ երբ թուրք կառավարութիւնը կը սկսի նաեւ անոնցմէ ոմանք հարցաքննութեան կանչել, ճամբու ընթացքին պատահած գէպքերու շուրջ:

Քիլիսի հայութիւնը տեղեկացած ըլլալով եղելութեան, տեղւոյն հայ Ազգ. Միութիւնը կը փութայ տեղեկագրել տեղական Ֆրանսական ուժերու հրամանատարութեան: Հրամանատարը կը փութայ խնդրին վայրը եւ կը հրամայէ որ՝ գէնքներուն գէնքերը անմիջապէս դարձուին իրենց տէրերուն: Զէնքերը կը վերադարձուին եւ տղաքը մզկիթէն կը փոխադրուին հայոց եկեղեցին մեծ ուրախութեամբ եւ շուքով: Յրանսական իշխանութիւնը 2000 Ֆր.—ի գումար մը կը տրամադրէ ազատագրութեան: Զէնքերը Քիլիսի Ազգ. Միութեան տրամադրութեան տակ կը պահուին եկեղեցիին կից սենեակները: Քիլիսի հայութիւնը մեծ զուրգուրանք ցոյց կու տայ գէնքներուն եւ իր կարելին չի խնայել անոնց սնունդի եւ այլ պէտքերուն հոգացման համար մինչեւ անոնց Քիլիսէն Հալէպ մեկնիլը: Քիլիսի Ազգ. Միութիւնը իր ձեռքէն եկած կարգադրութիւնները տեղւոյն վրայ կատարելէ ետքը, գէնքներուն Քիլիս հասած ըլլալը կը հաղորդէ Հալէպի Ազգ. Միութեան: Քիլիս հասնող գէնքներուն ընդհ. թիւը կը հասնի 118-ի, որոնցմէ 20-ը կիներ են, իսկ մնացածները ալքեր, որոնց անունները առանձին առանձին չարձանագրել մեր այս աշխատանքին մէջ, մեծ անիրաւութիւն պիտի ըլլար, ինչպէս նոյնը շեշտած է մեր լուսահոգի հաջնակիցը՝ Վարդ. Գարանֆիլտան իր «Զէնքերի նահանջը» գրքոյկին մէջ: Հետեւաբար մէկ մէկ կ'արձանագրենք անունները այս աննախընթաց նահանջին եւ անհնարին ազատամարտին մասնակցած հերոսներուն, որոնք Քիլիս հասան.— Սեդրակ Մարկանեան 34 տարեկան, Կարապետ Մարկանեան 18 տարեկան, Մկրտիչ Պօղոսեան՝ 35, Արթին Գայայեան՝ 35, Ստեփան Կէօկճեան՝ 35, Հայկուհի Զօլաքեան՝ 25, Անդրանիկ Պօթանեան՝ 18, Անդրանիկ Խուրմուշեան՝ 30, Պայծառ Խուրմուշեան՝ 25, Նազարէթ Պոյամեան՝ 30, Սահակ Պոյամեան՝ 25, Փանոս Պոյամեան՝ 20, Յարութիւն Պոյամեան՝ 30, Մացակ Պալեան՝ 25, Յովհաննէս Աղզաշեան՝ 30, Նշան Սօլաքեան՝ 30, Ասատուր Ատոյեան՝ 45, Արթին Ալամանուկեան՝ 45, Նազարէթ Քեքիշեան՝ 20, Ասատուր Վարդանեան՝ 20, Խաչեր Զամարեան՝ 40, Թուրվանտ Զամարեան՝ 35, Ասատուր Զամարեան՝ 20, Նազարէթ Թագուրեան՝ 40, Մանուկ Վանէսեան՝ 30, Պետրոս Մղալեան՝ 40, Սարգիս Մխիթարեան՝ 45, Գէորգ Մխիթարեան՝ 30, Կարապետ Սաղաթեան՝ 30, Գրիգոր Զարդեան՝ 25, Սեդրակ Տ. Մովսէսեան՝ 40, Տիգրան Տ. Մովսէսեան՝ 50 Արտաշէս Փալասեան՝ 20, Դաւիթ Ալեքսանեան՝ 35, Կատար Ալեքսանեան՝ 30, Յակոբ Քէօթիկիւլեան՝ 40, Մարիամ Քէօթիկիւլեան՝ 30, Գրիգոր Զումալեան՝ 40, Գէորգ Ղազարեան՝ 30, Սառա Ղազարեան՝ 25, Եղիա Տանտանեան՝ 50, Մինաս Մարգարեան՝ 45, Միսաք Մարգարեան՝ 35, Եղիա Ալա-

ճաճեան՝ 25, Գոհար Ալաճաճեան՝ 25, Մարտիրոս Աթարեան՝ 35, Եղիաբէթ Աթարեան՝ 30, Կարապետ Պօզեան՝ 22, Յովհաննէս Պուղարեան՝ 36, Մարիամ Պուղարեան՝ 30, Յակոբ Թոմասեան՝ 40, Սառա Թոմասեան՝ 35, Յովսէփ Թոմասեան՝ 25, Մարիամ Թոմասեան՝ 35, Համբարձում Սէբէթեան՝ 36, Պետրոս Խաչատուրեան՝ 40, Միքայէլ Կէօկճեան՝ 45, Մարիամ Կէօկճեան՝ 35, Թորոս Մազլումեան՝ 60, Սարգիս Մազլումեան՝ 25, Սառա Աշրգեան՝ 18, Մանուկ Գափշանեան՝ 40, Համբարձում Թրվանտեան՝ 25, Համբարձում Զատիկեան՝ 20, Գրիգոր Զալլիսեան՝ 30, Փանոս Զալլիսեան՝ 25, Արթին Մկրեան՝ 35, Յովհաննէս Կէճէճեան՝ 35, Մինաս Կուճուգեան՝ 30, Յովհաննէս Սատանիկեան՝ 25, Խաչեր Նորաշխարհեան՝ 45, Մարիամ Նորաշխարհեան՝ 30, Մովսէս Մարաշեան՝ 28, Սրբուհի Մարաշեան՝ 18, Նշան Սալպաշեան՝ 15, Յովսէփ Պատիկեան՝ 14, Նշան Զախրրեան՝ 15, Խաչեր Զուլլուեան՝ 15, Լեւոն Միսիթարեան՝ 14, Կարապետ Աշրգեան՝ 14, Էմմանուէլ Վարդանեան՝ 16, Տէօփլէթ Պուղուրեան՝ 15, Տրդատ Թոմասեան՝ 15, Յարութիւն Արարխանեան՝ 15, Լեւոն Նորաշխարհեան՝ 30, Նազարէթ Ծոճուկեան՝ 40, Ստեփան Հաճիկիւրեան՝ 20, Սեդրակ Գաւլիսեան՝ 35, Մանուկ Զէյլաթեան՝ 35, Հոփիսիմէ Պոյամեան՝ 20, Լեւոն Եղեկիէլեան՝ 50, Ասատուր Զախրրեան՝ 30, Մանուկ Դրանգիկեան՝ 50, Գրիգոր Պալարեան՝ 7, Պօղոս Մինասեան՝ 40, Գէորգ Մեխտոնեան՝ 30, Նշան Առաքելեան՝ 40, Եսայի Առաքելեան՝ 50, Փանոս Պուճատուգեան՝ 30, Եղեկիէլ Բաղարեան՝ 30, Լուսին Բաղարեան՝ 25, Լեւոն Նօթուտեան՝ 40, Աւետիս Ղաղեան՝ 40, Լեւոն Խուլմունեան՝ 40, Մարիամ Կէօկճեան՝ 25, Յարութիւն Եղեկիէլեան՝ 28, Լեւոն Կէյիկեան՝ 30, Տէօփլէթ Պարսումեան՝ 25, Յակոբ Բորտօղլեան՝ 30, Մինաս Անապատեան՝ 18, Ասատուր Շատալախեան՝ 30, Արթին Ավանեան՝ 35, Սարգիս Յակոբեան՝ 50 (1921 թուականը նկատի առած, ճշդուած են վերոյիշեալ տարիքները):

Ֆրանսական պաշտօնական զեկոյց մը հետեւեալ հաղորդագրութիւնը կ'ընէ ազատագրուածներու մասին, բոլոր հայ եւ օտար թերթեր արձագանգ կ'ըլլան: Պաշտօնական այս զեկոյցին պատճէնը պաշտօնապէս կը հաղորդուի Կիլիկիոյ Վեհ. Սահակ Բ. Կաթողիկոսին:

Ա. Զօրաբանակի հրամանատար եւ բարձր գոմիսէրութեան Կիլիկիոյ պատուիրակ Տիւֆիէօյի կողմէ Կիլիկիոյ Վեհ. Կաթողիկոսին գրուած պաշտօնագիր մը՝

«Ֆրանսական զօրաբանակի հրամանատարութեան կողմէ պաշտօնապէս կը յայտնուի թէ՛ հարիւր քսան զէյթունցիներ հասած են Քիլիս: Քիլիսի մօտերը այս խումբը կոփուի բռնուած է աւազակներու հետ: Քիլիսի ֆրանսական պահակազօրքը օգնութեան հասած եւ ցրուած է

յարձակողները: Զէյթունցիք իրենց հետ բերած են նաեւ իրենց 10 նահատակները, որոնք Քիլիսի մօտ տեղի ունեցած վերջին կոփուի ինկած էին: Խումբը այժմ կը գտնուի Քիլիսի հայոց եկեղեցին:

Այստեղ կը վերջանայ զէյթունցիներու 1919-1921 երկու տարիներու պատմութիւնը իր ոգորումներովը, իր կոփուներովը, որոնց հետեւեցանք մենք քայլ առ քայլ իրենց մանրամասնութիւններովը, հետեւեցանք կ'ըսենք, սակայն մեր հոգիովը, մեր սրտովը, օգտուելով ազատագրուածներու պատմածներէն եւ լայնօրէն օգտագործելով Պ. Ն. Զէյթունցեանի հատորը, հանգուցեալ Վարդ. Գարանֆիլեանի գրքովը եւ դարձեալ հայրենակից Պ. Լեւոն Նորաշխարհեանի տուած տեղեկութիւնները, որոնց բոլորին ալ իմ անկեղծ շնորհալիքը պարտիմ յայտնել: Քանի քանի անգամներ ամբողջ էութեամբս բաղձացեր եմ որ այդ դժուար երկու ամիսներուն այդ տղոց հետ ըլլայի, ապրէի իրենց հետ, անօթի, ծարաւ եւ կոփուներու մէջ: Բայց անկարելի էր ատիկա:

1- Ատանա՝ ըստ յունաց առասպելներու երկնից եւ երկրի որդի Ատանա եւ Սարոս շինքը են այս քաղաքը: Իսկ ըստ ուրիշներու՝ Ատան, որ փիւմի-կեցիներու լեզուով կը նշանակէ ուրի ծառ. Սարոսի եզերքը շատ ուրիշներ կը գտնուին եւ անոնցմէ քաղաքը ստացեր է Ատանա անունը:

2- Տարսոն մամապէս շատ հին քաղաք է, քրիստոսի ժամանակէն յայտնի էր որպէս կարեւոր կեդրոն եւ փիլիսոփայութեամբ: Ս. Պօղոս առաքեալ Տարսոնէն էր: Նայպէս հռչակաւոր եղած են ստոյիկեան փիլիսոփայ Կրիսիպոս (Chrysippe) եւ Արագոս քանաստեղծը:

3- Պերիտ սարը՝ հաւանաբար Պերիթոս չաստուած, Ողիսիւս՝ գլխնեղաց զսիդնիս սատակելով եւ կամ զլապիթեանցն եւ զյուշկապարկացն կոխն ի վերայ Պերիթեայ հարստեացն.... (Խորենացի): Գերման գիտնական Hausskhecht 200 տեսակ բոյսեր հաշուած է Պերիտի վրայ, որոնք կոչուած են Պրիտեան կամ գիտնականին անունով, 1865-ին, կամ գաւառին անունով՝ Կատաւանեան բոյսեր:

4- Լարիսա, այժմ Լորշուն, որուն մօտ են Թաւրուր եւ Հոնի:

5- Տուհաց գաւառը ըստ Մ. Օրմանեանի եւ ուրիշներու, կը նկատուի Կապադովկիան, սապէս տրոսեելով. «Կապա-տուվկա», Տուհա

6- Ուլնիա = Ջէթուն (թեւ անշի առաջ Ուլնիան Ֆոնուզի Հին Գեղն էր)

Ռոմանուպոլիս = Բալու

Ֆլուիսա = Սիս

Պաթիւն = Հարգան = Հանքն

Հոնի = Խունի

Լարիսա = Լորշուն

Մամնթա = Թամարգա

Կամանա = Շարտերի (Կապադովկիա)

Մամեստիա = Միսիս

7- Հաւանաբար քաղաքն ալ կոչեցին Նոր Անի, որ ի վերջոյ թուրքեր անուանած ըլլան Շէիրմիս:

8- Մօրիկ Հայկազն, առաջին հայն է որ քիզանդական գահը կը բարձրանայ:

9- Ուլնեցի Ս. Ստեփանոս յատուկ շարական մը ունի: Եղիական պահոց յաջորդող Կիրակին, կրօնական պաշտօն կը կատարեն այնտեղ: «Սուրբ Փէանիսէն պոքը իկիք» կ'ըսէին զէթունցիներ Եղիական պահոց համար: Հայրս կը պատմէր հետեւեալը. «Անգամ մը Զուխրա Սուրէն կ'անցնէինք Զգօնեցի Փանոսին հետ: Փանոս սկսաւ աներակ ուխտատեղիին պատերը ծծել գաւազանով, ըսելով թէ ո՞րն ես սրբոք Փէանիս: Դիչ ետէր մէջ մըն

ալ աւազակներ ելան մեր առջեւ, Փանոսը բռնեցին ու տարին»:

10- Արկա, այժմ Կերկերը:

11- Ըստ Մնացական Մեմբրեանի «Ջէթունի անցեալէն եւ ներկայէն» հատորին, Ջէթունի նախկին գաղթականներուն մէջ կային նաեւ կարսեցիներ, որոնցմէ մնացած է կամուրջ անունը:

12- Այս քաղաքը տուն հայերը որպէս թէ եկած ըլլան Եդեսիայէն Ջէթուն:

13- Շէիրմիսի նախկին անունը ցարդ ծանօթ չէ. իր նախկին բնակիչները կը կարծուի թէ կոպաշունք եղած են: Շէիրմիսի հարաւը կը գտնուի ձոր մը, փոքր գետակով մը կոչած են Անի ձոր: Եւ սա հնթադրել կու տայ թէ Անիէն հայեր գաղթած եւ հաստատուած են Շէիրմիս:

14- Կապանի Արքեպիսկոպոսական Աթոռ՝ Արեգինի վանքին Գրիգորիս Արքեպիսկոպոսը ներկայ կ'ըլլայ Մեծն Լեւոնի քաղաւորական օժման հանդիսութեան, ուրիշ եպիսկոպոսներու կարգին: Ջէթունի հարաւը երկուսուկէս ժամ հեռու Շէնպէ կ'ընտան մօտակայ լեռնոտ մէկ ձորին մէջ, Վերի Խէպի այգեստանի անմիջական սահմանին կար Ս. Գեորգ ուխտավայրը, իր խաչքարով եւ աղբիւրով: Ս. Գեորգ անուն հին վանքի մը վայրն է այս: Այդ վանքին անունով թուրքերը ֆէնկ կոչած են նաեւ Խէպի այգեստանները:

15- Գրմաղըրցի Գրիգոր վրդ. ներկայ կ'ըլլայ Սալ ժողովին («Ագ-գապատում», Օրմանեան, էջ 1786):

16- Ըստ ոմանց Ջէթուն հիմնուած է 1306 թուին:

17- Աստուածաշէն բարձր լեռ մըն է Կիլիկիոյ Կապան գաւառին մէջ:

18- Այս վերջին անունը սակայն կը հակասէ վերի ծանօթութիւնը, որուն համաձայն ոչ թէ Թաղէս, այլ Բարթուղիմէոս առաքեալն է որ եկած պէտք է ըլլայ:

19- Խորենացի կը պատմէ, որ Ս. Կոյսին մահուան օրը, Բարթուղիմէոս Երուսաղէմ չէր գտնուիր, «զի ընդ Թովմայի ի հնդիկս էր երթեալ»: Ըստ Խորենացիի, Ս. Կոյսը մեռած է Գրիստոսի 45 թուին, վաթսուամեայ հասակին: Ուրեմն Բարթուղիմէոսի Ջէթունէն անցնի ալ այդ թուականին կամ թէ քանի մը տարի յետոյ տեղի ունեցած ըլլալու է, կ'ըսէ մեր հայրենակիցը՝ Տեօկլէ Գեորգեան, այսինքն փոխանակ ի ճառասուն եւ հիմն թուոյ փրկավանքի, վերայիշեալ երգին հեղինակը առանց բարակին երթալու ըսած է քօթանասուն հինգ թուոյն, - ի գալ Սրբոյ Առաքելոյն, եւայն:

20- Յանդուած եւ ուղեւորութիւն (Սիսուան Հ. Ղ. Ալիշան) Սահմանք Բարձր Բերդոյ - ըստ 1307-ի Յուլիսի, Մարտիրոս վրդպէ՛ (Գեորգ Ալեւոս-ցիի աշակերտ) գրուած յիշատակարանի մը մէջ, գետ մը ախորժալուր հայկական անուամբ. «գրեցաւ սա ի թուականիս 904 = 1304 յերկրին Կիլիկիոյ, մերձ ի բերդն-բարձր, յԱնապատ Խաչատուրոյ ի վերայ գետոյս Շորկայ (Շուղուր), ի քաղաքնաւ եւ ի նեղ տեղիս: Նկարագիր բնութեան անդեացս, ի դէպ գայ եւ մերձաւորութեան Անդրեանեանց ուխտ, որ եւ

կ'երեւի տեղագրութեամբ:

Արդ, այս Բարձր Բերդը մեր Զէյթուն բն'րդն է, թէ Կուռիտիմի բերդը, որոնց երկուքն ալ Շուրդ գետի եզերքն են, իսկ Կուռիտիմինը աւելի մօտ է Անդրէասեանց (Ալապոզան): Իսկ Շուրդակ կը բուի մեր Զէյթունի գետակն է, որուն վրայ է Շուրդի Կանտարանը (կամուրջ) եւ ոչ թէ վանք մը: Մ. Ս.: Զեմք խորհիր թէ այս Բարձր Բերդը՝ Բիլամեոյ ըստած վայրին մէջ յիշուած ըլլայ. Գօզան օղլուներու բնակութիւն հաստատած տեղը, Կոռմազալի, Կոպիտասի եւ Վահկայի հետ միաժամանակ յիշուած: Խորին վանքի մօտ՝ Բարձր Բերդ: Ինչպէս որ Բարձր Բերդի գաւառին մէջ էր Գոմեր վանքը: Շուրդ կամ Շուրդուր, Շուխուր, արամերէն կամ հին ասորերէն, սեմական քառ մըն է, կը նշանակէ ժայռերու մեղ մեղճուածք, անցք, ուրկէ կ'անցնի գետակ մը կամ գետ մը: Իսկ ըստ միւսնց Շուրդ քառը սեմական սաղիր քառն է, ան տառադարձուած է «Շաղիր»ի, յետոյ «շուրդ»ի եւ կը նշանակէ դարձեալ մեղ անցք, կիրն, ժայռերու մէջ (պօղազ), դրումք, ինչպէս «դրումք Կիլիկիոյ, դրումք Կուկլակայ, դրումք Ասորաց: Զէյթունի արեւելքը, Սանտափ մօտ կայ «Սաղիր» անուն վայր մը, ինչպէս նաեւ Զէյթունի Պօզպայիր քաղին մէջ կար «Սաղիր» անունով տեղ մը, ուր պօզպայիրցիներ կիրակիները կը հաւաքուէին ժամանակ անցընելու:

21- 1107-ին, Կամսարական իշխան՝ Գոդ Վասիլ, համաձայն Պատ. Եղիա Քասունիի «Փիլարտոս Հայ» պատմական ուսումնասիրութեան, կը տիրանայ լեռնային Կիլիկիոյ արեւելքը, Մարաշի հիւս. արեւելքը՝ Ընկուզէկ = Ընկուզիկ լեռան մօտերը գտնուած Բէսուն ամրոցին. (ըստ Ազգ. Պատմ. Քէտուն): Գոդ Վասիլ ժամանակի ընթացքին կը զօրանայ եւ իր իշխանութիւնը կը տարածէ: Ատեն մը մոյնիսկ Վահկայ բերդին տէրը՝ Ռուբէն իշխան անոր օժանդակութիւնքը կը խնդրէ: Քաղաքական վատ պայմաններուն բերումով 1116-ին Գոդ Վասիլ կը մեռնի անժառանգ ու կը թաղուի Ընկուզիկ: Իր որդիները՝ ի մօրէ Կամսարական, իսկ եօրը կողմէ Պալաւ, Տղայ Գ. Վասիլ կամ Փոքր Վասիլ, կ'ամուսնանայ Թորոս իշխանի եղբոր՝ Լեւոնի դստեր հետ: Թորոս իշխան մախանձեւ մըտած, կը ձեռնարկէ երիտասարդ Վասիլը, կը յանձնէ Եղեւսիոյ խաչակիրներու կամսին: Տղայ Վասիլ կը մնայ 10 տարրի այնտեղ քանուր: Բիւզանդիոնի միջամտութեամբ ազատ կ'արձակուի եւ կը մեկնի Կ. Պոլիս: 1135-ին կը վերադառնայ եւ կը տիրանայ Բարձր բերդին: Վասիլեան տան Զէյթունի շրջանը գաղթելու մասին հետեւեալ ծանօթութիւնները կարդացած ենք.՝ Արեգիմի հայ եկեղեցիին մէջ գտնուած է ձեռագիր անտարան մը, որ գրուած է 12-րդ դարուն Գոդ Վասիլի երա- հանգով: Այս անտարանը, ինչպէս մախապէս ալ յիշեցինք, Հագօր (Ղագօր) ազա Շորվոյեան Խուրշիտ փաշային դէմ ունեցած կռիւն մահանջելուն, իր հետ կը բերէ եւ կը յանձնէ Ս. Յովհաննէս եկեղեցիին: Նախ քան 1884-ի Զէյթունի մեծ հրդեհին մէջ այդ թանկագին անտարանն հրոյճարակ ըլլալը:

Անոր լուսանցքին մէջէն հետեւեալ արձանագրութիւնը ընդօրինակուած է. «Մի ոմն՝ Վահրամ, ի տանն Վասիլեան, իշխանական տեմէ, ձգեաց ամրոց իւր՝ Բէսուն, անց գգեսն Զահան, Էհաս Արեգին, ապա գրեորդն՝ Կապան: Պատմութեան հետեւելով, կը կարծուի թէ՝ Կապանի բերդը երթալով, Վահրամ հիւրընկալուած է բերդատէր Ատոմ Պայլէն: Այլ վկայութիւն մը եւս այս մասին.՝ Ծովուզի Ս. Կարապետ վանքը գոյութիւն ունեցած է յիշատակարան արձանագրութիւն մը, որ գրուած է Կանչիի ժողովրդապետ Կիրակոս վարդապետէ, այդ ձեռագրէն ընդօրինակուած են այս տողերը: ՝ «Մի ոմն Գեորգի, տեմէն Վասիլեանց, ի թուին 1375, եղբայր՝ ի թիկունքն սպարապետ Գեորգի»: Կը պատմուի թէ՝ Վահրամ Վասիլեան Կապանի մէջ սիրուած եւ իրաւունքներու արժանացած է, 1312-ին, Իկոնիոյ Սուլթանը կը պաշարէ Կապանի բերդը, քայց չի կրնար գրաւել: Վահրամ կը մեռնի խոր ծերութեան մէջ, թողալով երկու տղայ՝ Ստեփան եւ Լեւոն անուններով: Ստեփան կը մեռնի տակաւին երիտասարդ, իսկ Լեւոն երկու գաւակ հասցնելէ յետոյ, որոմք կը կոչուին Գեորգ եւ Վասիլ: 1375-ին, Մեմլուքներու արշաւանքէն խուսափելով, Հեթում սպարապետ Վասիլեան, Գեորգ իշխանին հետ կ'անցնի Կապանի լեռները: Հեթում կը սպաննուի եւ իրեն կը յաջորդէ որդին՝ Գեորգ եւ կինը՝ Զարմանուհի: Մայր ու տղայ հինգ տարի Կոկիստնաի եւ Ուլմիոյ լեռները պտըտելէ յետոյ, կը յաջողին 300 քաջ լեռնականներ հաւաքել եւ անոնց գլուխն անցնելով Զարմանուհի իր ձեռքով կը սպաննէ թուրք զօրապետներ՝ Էօմէրը Ատանայի դաշտին մէջ եւ Ալին՝ Սիսի դաշտը: Յետոյ կը յարձակին տանիկներուն վրայ: Գեորգ կը յաղթէ անոնց եւ 65 տարի կը տիրէ Կապանի: Իր գերեզմանը թեւեւ անյայտ է, տեղացիք սակայն աւանդութեամբ կը պատմեն թէ՝ Զէյթունի տէրն է եղեր ան եւ առանց կերակուրի, լոկ մրգեղեններով եւ անուշեղեններով կերակրեր է մահա իրեն հիւր եղող 50 տանիկ ծառայողներ: Ի սէր եւ ի յիշատակ այս քաջարի կնոջ՝ շատեր գէյթունցիներէն Զարման կոչած են իրենց աղջիկները եւ այդ անունով շատ մը կիներ կային Զէյթունի մէջ: Ասոր Գեորգ որդիին սերունդէն էր Հեթում ուսեալ եւ արիասիրտ Բահանան, որ պաշտօնավարած է Զէյթունի Միջին թաղը: Աւանդութիւն մը կ'ըսէ թէ՝ ան է որ Կ. Պոլիս գացած է եւ յաջողած է ձեռք բերել Սուլթան Մուրատի նշանաւոր հրովարտակը, որ այրած է 1884-ի մեծ հրդեհին, շատ մը անգին հնութիւններու հետ:

Իսկ քիչ մը տարբեր աւանդութեան մը համեմատ՝ մայր ու տղայ կը հաստատուին Զէյթուն, կը տիրանան մահա Արեգիմի գիւղերուն: 1400-ին, թիւրքէն Զուլ Գատր կամ Տուլ Գատր ընտանիքէն Հասան կը տիրանայ հիւս. արեւելքը Կիլիկիոյ եւ Մարաշը կը դարձնէ իրեն կեդրոն: Այս վերջինը սարսափ կը ձգէ այդ շրջանը եւ միայն Կապան բերդը ազատ կը մնայ: 1435-ին, Հասանի յաջորդ Շահ Ասուր ձիհանի վրայէն կը յարձակի

և կը պաշարէր Կապան բերդը: Իշխան Գեորգ թէն կը կոռուի, սակայն պաշարումին չդիմանալով, իր ընտանիքովը և բերդի բնակիչներով կ'ապաստանի Կապանի լեռները: 1466-ին, Շահ Ասուր (Ասատուր), կը նախաձեռնէ լուծման գործը, կը պարտուի, կը ձերբակալուի և կը տարաւ Եգիպտոս և հոն կը սպաննուի: Գեորգ կ'օգնէ մեմլուկներու քիթիկային և առ ի վարձատրութիւն, վերստին տէր կը դառնայ իր բերդին: Գեորգ կը մեռնի մոյն տարին և կը թաղուի բերդին մէջ: Մինչև 1914-ի ընդհ. պատերազմը Կապանի հայերը իբրեւ սրբատեղի կ'այցելէին այս իշխանին գերեզմանը: Գեորգէն կը մնան Սարգիս և Ղազար անուն երկու զաւակներ: Շահ Ասուրի յաջորդը՝ Ալա էտ Տեօվէ կ'ուզէ իր հօր վրէժը լուծել Գեորգի որդիներէն: Կը գրաւէ Կապանը: Միեւնոյն ժամանակաշրջանին Սուլթան Սելիմ Ծափուզ կը մտաւ Սուրիան և կը հասնի Եգիպտոս: Իր զօրապետներէն Սիման փաշա կը յարձակի Ալա էտ Տեօվէի վրայ, Վասիլեան իշխան կը գործակցի Սիման փաշայի:

Ալա էտ Տեօվէ կը պարտուի, անոր գլուխը նուէր կը դրկուի Եգիպտոս: Զուլ Գատրներու տունը սակայն կը համաձայնի և իշխանութիւնը կը պահէ իր ճեղքը, ենթարկուելով Սուլթան Սելիմ Ծափուզի երամաններուն, որմէ մեծապէս կը դժբախտանայ Վասիլեան ընտանիքը, և դժնդակ կեանք մը կ'ապրի: Սարգիս և Ղազար կը մեռնին և կը թաղուին Կապանի հայոց եկեղեցին: Սարգիսի որդին՝ Փանոս, իսկ Ղազարի որդիքը՝ Գեորգ, Փանոս և աղջիկը Մարիամ, կ'ենթարկուին հալածանքի և Զուլ Գատր Պէֆր պէ Մարիամը կնութեան կ'ուզէ: Վասիլեաններ կը մերժեն, տեսակցութիւններ տեղի կ'ունենան: Վասիլեանք կը յամառին: Պէֆր որ Զուլ գատրը օրէն Զէթուն կը բնակէր, և ըստ պատմութեան մը Զէթունի բերձերէն փրթած հսկայ ապառաժի մը վրայ էր իր բնակարանը (այդ ապառաժը որ բերձերէն ինկած էր ժամանակին, 300 տուններու հայութիւն թաղած էր իր տակ): Պէֆր դարձած էր բռնաւոր մը և հաւաքած հարկը Մարաշ չէր դրկեր և կ'ապրէր գիտ և անպիտան կեանք մը: Պէֆր անակնկալ այցելութեան մը պահուն, կը խոյանայ և կը բռնաբարէ Մարիամը: Վասիլեան երիտասարդներ կը սպաննեն զազան Պէֆրը, ինչպէս նաեւ մայրն ու քոյրը և կ'ապաստանին լեռները: Յետոյ կ'որոշեն ապաստանիլ Զէթուն, որ այդ ժամանակները, որպէս ծանօթ մեծ աւան մը, ապաստանարանն էր եղած շատ մը փախստականներու: Ասումք Բերձերի ստորոտը Ափարտեան իշխանի հովանաւորութեան տակ կը հաստատուին: Հոն ապաստանած էր նաեւ Ատանայի մէջ բռնապետ մը սպաննող Պոյամեան ընտանիքը (Պոյանեան): Այդ ժամանակներէն է որ Հայ լեռէն (Կեափուր տատը, Ամանոս) փախստական մեծ ընտանիք մը կ'ապաստանի Զէթուն և կը հաստատուի Պօզպայի թաղը: Այդ ընտանիքին ճիւղաւորումներն են Մարկարտսեաններ, Դրնեան, Բուսֆուսեանք, Սիսեանք, Էօֆսիւզեանք: Ինչպէս նաեւ Զիկերեանք, որ կոչուեցան Զագրեանք

և Զալգեանք:

Վասիլեան Գեորգ կը սիրուի, մոյնիսկ Զէթունի մէջ ժողովի անդամ կ'ընտրուի: Գեորգ, որդին Վահրամ և Փանոսի զաւակները՝ Թորոս և Ղազար ուշադրութիւն կը գրաւեն, Ափարտեան ընտանիքը կը նախանձի և զանոնք կը զրկէ կարգ մը իրաւունքներէ: Ասկէ դժգոհ Մահտեսի Մարտիրոս Նազլեան կը գանգատի, բայց ծանրօրէն կը խոշտանգուի, որմէ կատաղած, Վասիլեանք և Պոյամեանք կը գնդակահարեն Ափարտեանը և կը փախչին: Վերջինին զինակիցները կը հետապնդեն զանոնք, իրարու կը բախին, հոն կը մեռնին Վասիլեան Թորոս, Փանոս և Պոյամեան Սարգիս:

Դրացի բերդատէր Գօգան (Գորաճ) օղլուն (կրօնուրաց հայ մը) կը պաշտպանէ այս երկու ընտանիքները և իր մօտ կը տանի: Սակայն, անոնք կը շարունակեն իրենց ասպատակութիւնները երեք տարի: Զէթունցիք դժգոհ այս եղածներէն, կրկին թոյլ կու տան փախստականներուն, որ գան Զէթուն իրենց ընտանիքներուն մօտ և տիրանան իրենց իրաւունքներուն: 1698-ին Գեորգ կը մեռնի խոր ծերութեան մէջ, Զէթուն: Իրեն կը յաջորդէ որդին՝ Վահրամ: Վահրամ և եղբայրը՝ Ղազար, ժողովուրդէն կը սիրուին, որմէ կը մեղուին Զէթունի միւս իշխանները և կը բողոքեն Մարաշի Սիւնուքեան պետին և այսպէս, պատճառ կը դառնան անոնց Եգիպտոս աքսորուելուն:

Վկայութեան այս մասը հայրենակիցս Պ. Լեւոն Նորաշխարհեան բաղած է 1861-ին մեռած Մահտեսի Սարգիս Ենիտիւնեանի ձգած մէկ արձանագրութեան: Մահտեսի Սարգիս մեռած է 110 տարեկանին: Անիկա նախ քան իր մահը այդ ծանօթութիւնը արձանագրել տուած է իր որդիին՝ Մահտեսի Փանոսին, որ իր կարգին փոխանցած է ընտանիքին:

Վասիլեանք 42 տարի կը մնան Եգիպտոս: Անոնցմէ ողջ մնացողներէն Վահրամ և իր մայրը, օգտուելով Սուլթանի ներումէն, 1744-ին կը վերադառնան Զէթուն: Զէթունցիներ գիրենք կը կոչեն «Յնի Տիւնիա կէլեկեր»: Վահրամ կը յիշատակուի Այլզ = Արթուն մակդիրով, իր ուշիմութեան համար: Իր սերունդը կը շարունակեն իր երեք տղաքը՝ Ղազար, Գեորգ, Սարգիս: 1748-ին, Սուլթան Մահմուտի շրջանին կը յաջողին ձեռք անցընել Ափարտեան տան իշխանութիւնը: 1770-ին կը մեռնի Վահրամ Այլզ և կը թաղուի Ս. Աստուածածնայ վանքը, Զէթուն:

(Վասիլեանց մասին այս երկար ծանօթագրութեան մենք թէն լայն տեղ տուինք, սակայն վերապահութեամբ կ'ընդունինք անոր իսկութիւնը):

22- Հեթում քահանայի Պոլիս երթալուն շարժառիթը կ'ըլլայ Պէշնի պէկերէն կրած մէկ ծանր անարգանքը: Այդ պէկը փոխանակ Հեթում ըսելու, Կեթիւմ ըսած էր իրեն:

23- Այդ հողը, Զէթունի հարաւը 10 վայրկեան հեռու դաշտ մըն էր,

ուր կը տեսնուին տակաւին անբակները «ձեմարանին»: Եւ մեր ժամանակները տակաւին այդ դաշտը կը կոչուէր նեմարանի դըարը (դաշտը):

24- Դուքուն մեռախէ կերպաս մըն էր, կարմիր յատակի վրայ մեղուագոյն է, մեղուածու նախշերով, կիներու ծանր հագուստ կը շինեն անով:

25- Եղիա Չագրեան, բանաստեղծական խառնուածքով ուսուցիչ մըն էր, Պօզայիր քաղէն, մեծ Չագրեան ընտանիքէն, ամուսնացած էր մարաշցի ուսնալ օրիորդի մը՝ Ռահէլի հետ: Երիտասարդ տարիքի մէջ մեռաւ Եղիա Չագրեան: Ունէր քանի մը անտիպ ոտամաւորներ, որոնցմէ մէկը կը յիշեմ, Ս. Յակոբայ պատշգամբի ելքի դրան վերեւ, քարի մը վրայ փորագրուած էր: Բառերը մոտէս ելած են:

26- Այս յօդուածը գրողը եւ Ձէյթունի ու շրջակայից տնօրէնութիւնը տանակ տարիներ վարող Պ. Յովհաննէս Ահարոնեանը (զէյթունցի) որ եղած է նաեւ իմ ուսուցիչս, ինքը անձամբ կը պատմէր մեզի, թէ իր ուսուցչութեան առաջին տարին, բուրդէ ներմակ շալվար մը կը հագնէր եւ բոսիկ ոտով, այսինքն առանց ոտնամանի դպրոց կու գար, կը պաշտօնավարէր: Եւ մենք կը սկսէինք խնդալ եւ գարմանալ:

27- Լպուտ, աղեղով քամակ գգող:

28- Կապանը արդեօք Դարաքաղի Դափանի հետ որեւէ պատմական կապ ունի: Արդեօք իր ժողովուրդը անկէ՞ եկած է: Կապան կը նշանակէ նաեւ կիրն, եւ երկու Կապաններն ալ՝ Կապան եւ Դափան միմէն լեռնային վայրեր են, մեղ անցնելով:

29- Կէօկսիւն Սու, Տեղացիները կ'անուանեն զայն Թէլալուզէլ:

30- Քիլէ, գրիւ, չէլիկ, որ կը կշռէ ... կամ քիլօ:

31- Դալանուխ կը կոչուէր նաեւ ձանապըրինք:

32- Տէլի քուրքերէն է, հայերէնը՝ խենթ. զէյթունցիք կ'ըսեն՝ խիւ: Ըստ մեր լուսահոգի հայրենակից Տ. Գեորգեանի քացատութեան, Տէլի քաղը Տէ = դեւ արմատ բառէն եւ լի մասնիկէն բաղկացած է: Տէ արմատ քաղը մեր դեւ բառն է, յայնքը ունին՝ տէմոն, պարսիկները՝ տիւ, նոյն իմաստով: Իսկ լի մասնիկը կը համապատասխանէ աւար եւ եղ մասնիկներուն, ինչպէս՝ աքլը = ձիւտը, սապըզալը = անցնալ ունեցող, գափալը = գլխաւոր, գօրլը = ուծեղ, պաղլը = քաղեղ: Գիտենք որ հիմները կը հաւատային չար եւ քարի ոգիներու գոյութեան: Չար ոգին մարդուն մէջ մտնելով, կ'այլասերէր զայն եւ կը մթագնէր անոր իմացականութիւնը, մինչդեռ քարի ոգին, պահապան երեշտակի դերը կը կատարէր մարդոց եւ վայրերու համար: Ոգիները իրենց ենթակային կու տային նախ ֆիզիքական գերմարդկային ոյժ, «վասն բագում անգամ կապելոյ եւ խզելոյ ի նմանէ զշողայսն, ոչ ոք կարէր պարտել զնա» կամ հոգեկան բարձր յատկութիւններ եւ մտաւորական իմաստութիւն, որով օժտուած անձներուն հաւաքոյթը կը կոչուէր դիւան: Կարգ մը լեզուներու մէջ դեւ քաղը ունի նաեւ ուրիշ հոմանիշ մը՝ միւ,

լատիներէն *genius*, որմէ ծագած է ֆրանսերէն *genie* քաղը՝ համեարի իմաստով: Արդ, Տէլի քաղը իր ժողովրդական նշանակութենէն զատ ունի նաեւ միւս իմաստները, այսինքն՝ քաղ, ուծեղ, գերմարդկային, համեարեղ՝ ըստ պարագային: Երբեմն պատահած է որ այս տէլի կամ խենթ քաղը տրուած է տիրող իշխանութիւններէն այնպիսի անհատներու, որոնք եղած են անկախ նկարագրի տէր մարդեր, իրենց պարտականութեան ծայնին միայն անսացող անհատներ, արհամարհելով ամէն բռնութիւն: «Տէլի քէշիշ որակումը կարելի է ուրեմն մեկնաբանել վերայիշեալ բոլոր իմաստներով՝ մարմնով ուծեղ, հոգիով քաղ, նկարագրով անքիծ, խառնուածքով յանդուգն, խելով սրտես: Բայց կայ նաեւ ուրիշ պարագայ մը որ պաշտօնական հանգամանք կու տայ այդ «վերայիշ»ին, այն է՝ Տ. Օհանի կեանքին կարեւոր մէկ մասը անցած էր պետական ծառայութեան մէջ: Իր հօրեղոր քոռան՝ Կարապետ Տ. Յակոբեանի «Յուշիկի Ձէյթունի» հատորով եւ ծերունի Մ. Սեմերեանի «Ձէյթունի անցեալէն եւ ներկայէն» գիրքով տրուած Տ. Օհանի կենսագրութենէն այստեղ կը բերեմք հետեւեալ քանի մը համառօտ գիծերը: Թուրքիայ Սուլթանները ունէին քանի մը տեսակ գօրք՝ Ենիշէրի, Հայթաօմաղը, Տէլիօմաղը եւայլն: Առեմք թէն ըստ օրինի առեւտրակ մահմետականներէ կազմուած կ'ըլլային, սակայն կ'ընդունուէին նաեւ քրիստոնեաներ, իբրեւ կամաւոր: Տ. Օհան, 12 տարի ծառայած է Տէլի Օմաղը գունդին մէջ ֆարհատ, այսինքն դիւցազն անունով եւ հազարապետի աստիճանով: 1200 ձիաւորներէ կազմած գունդի մը պետը կը դառնայ: Եւ այս զինուորական ասպարէզը կը մտնէ եւ կը մնայ սոսկ հայ եկեղեցւոյ հանդէպ իր տածած գերագոյն սէրէն մղուած: 12 տարի յետոյ կը յաջողի հարկը հագար դուշի գումար մը ունենալ: Ու երբ կը տեսնէ թէ այդ դրամը բաւարար է իր Ս. Սարգիս եկեղեցիին շինութեան համար, բաւ կը համարէ իր առաքելութիւնը եւ կը դառնայ հայրենիք: Կանչել կու տայ հայ բահանայ մը, կը խօստովանի, կը հաղորդուի կրկնելով. «Ես մեղաւոր բահանայ եմ»: 40 օր ապաշխարամբ կը բաշէ Ձէյթուն, Ս. Աստուածածին եկեղեցիին մէջ: Սակայն իր հաւաքած դրամը եպիսկոպոսը չ'ընդունիր եկեղեցիի շինութեան համար եւ ինքը զայն կը բաժնէ աղէատներուն եւ այլ բարեգործութեանց: Սոյ կաթողիկոսը կ'արտօնէ իրեն կրկին բահանայա-գործել:

33- Աֆշարները, Արշակունի հայերու մնացորդները ենթադրած են կորգ մը հնապատմագետները:

34- Այդ օրը թշնամիներ այրած էին Արեգիմը եւ խուժած Ս. Փրկչի վանքը, սպաննած էին Մամբրէ Վրդ.ը, արեգիմցի Կարապետ երիտասարդը, շուն մըն ալ սպաննելով վարդապետին ինչ երկնցուցած էին, շան բերանը՝ տնոր բերնին դրած: Սեմերեան ծամ առաջ սրբազան անօթները կրցած էր Ձէյթուն փախցնել:

35- Ու կ'անկցնեն «Փաշան բող Իսկիշը պատժե, մենք ալ մեր մարդիկը կը պատժենք: Փաշան սկիզբը 70 Մարդիկ ուզած էր, վերջը այդ երկուսով զոհանալ ուզած:

36- Գնդակը մէկ թուշէն կը մտնէ, միւսէն դուրս կ'ելլէ: Ակոսաները կը թափին: Երկար կ'ապրի Օսմանիէ ֆաղաբը, թուշերուն վերքերուն տեղ ցայց տալով Ջէթունը հատիկարն է կ'ըսէ:

37- Զուխըր Տերէի կոսիւն դաշունահար՝ աղիքները թափած, փորը բռնած կը հասնի Ս. Փրկիչի լեռը: Մայրն ու կիներ երբ կը տեսնեն որ ողջ դարձողներու մէջ չկայ Մեսրոպ, փնտռելու կ'ելլեն եւ կիսակենդան կը գտնեն զինքը, որ փչ գետոյ կը մեռնի:

38- Սուլթան Ազիզ մասնաւորաբար կը պաշտպանէր չերքեզները, որովհետեւ իր կիներ ալ կոպկասցի չերքեզուհի մըն մէր: Ինչպէս որ ուրիշ շատ մը հարեւներու մէջ կը գտնուէին չերքեզ գեղուհիներ, որոնք մեծ ազդեցութիւն ունէին Թուրքիոյ ֆաղափական կեանքին մէջ: Մեր հայրենակից Գ. Տեօվլէթ կը յիշէ չերքեզներու մասին չերքեզներու կողմէ շինուած հետեւեալ առածը. Զերքեզները կը պարծենան եղբր, որ Թուրքիոյ մէջ անընկնելի բերդեր կանգնած են իրենց կիներուն գիտներովը: Կարգ մը բարձրաստիճան թուրքեր դժգոհ Սուլթան Ազիզի այս ընթացքէն, դաւադրութեամբ սպաննեցին զինք, սակայն ի վերջոյ իրենք ալ իրենց կարգին սպաննուեցան պալատական չերքեզներու կողմէ:

39- Բանաստեղծ Մկրտիչ Պէշկէթաշիան Ջէթունի վրայ գրած է «Հայ ֆաշորդի», «Բաջորդույն թաղումը» «Հայ ֆաշուհի» երեք բերթումները:

40- Ըստ Գ. Հ. Գալուստեանի՝ Մարաշի Առաջնորդ Նիկողոս Եպս. Կիւլէտէնեանն է այդ անխելութիւնը գործողը, ոչ թէ Աջապահեան Եպս., որ յետոյ ինքնաօժ կաթողիկոս կ'ըլլայ Սաւյ Աթափն:

41- Ջէթունցիի մօր կողմէ եղող մեծ հօր ֆեռպապա կ'ըսեն, այսինքն՝ ֆեռիի հայր:

42- Նոյնը պատմած է կ'երեւի մեր հայրենակից Գ. Տեօվլէթի հայրը Իրեն:

43- Սուին մը եւ փլինթը մը Եօթը Փէշին տարիին կոխէն, մեծ հօրս՝ Մնացականին ձեռքն անցած էր: Ինչպէս նաեւ սուին մը, որուն մէջ կոյնկ կը հալեցնէր, լեհիւ ընելու համար, ինքը կ'այագարծէր: Կ'որ ձմեռակի պէս եւ մէկ լիտր, այսինքն երեք ֆիլօ ծանրութեամբ ալ սուր մը, որ կը շիռֆի կը գործածէինք:

44- Ջէթունցիին, Ռոմլուային «ուղնուտիլօ» կ'ըսէր, եւ միշտ ալ, եղածը Ռոմլուայ չէ, այլ ռոֆը իւղով օծել է: Ջէթունցիին օծելուն կ'ըսէ ուզել: Դպիրները իրենց ռոֆերը տունը կը մաքրէին, կը լուային ու յետոյ ծամ կու գային իւղով օծուելու համար:

45- Ժողովին Ատենապետը՝ Յարութիւն աղա Գոնմանեան, զարմացած էր

անոնց ինքզինքնին «հերոս» կոչելուն եւ ըսած. «այս օրումս պըրաւզներդ ունենալ հերոսի անուն, դուք որ թշնամիի դէմ ելած չէք, տակաւին, զնդակի կուրծք տուած չէք, միմի զէթունցիին կոխի մէջ ծնած, սնած եւ մեծցած է եւ այդ անունը չունի»:

46- 200 ռսկի մը բերած էին, որուն կէտը՝ բորակի (կէօյլիչելէ) եւ 100 ռսկին ալ ցորենի յատկացուցած էին Արեգինի մէջ:

47- Բարթաղիւմեոս Հայր Սուրբ իր այդ զէթունցիներէն երկար մտնէ յետոյ «Պահպանիչով» մը փակած է ժողովը:

48- Ջէթունի անունը զէթունցիի գեղ կ'արտասանեն իրարու հետ խօսած ատենին:

49- Ջէթունցու սովորութիւն է որ մարդ բարեւելու համար մէկէն՝ հագար բարով եկար, կամ թէ հինգ հագար բարով եկար, կ'ըսեն: Հայր սուրբն ալ նոյն սովորական լեզուն գործածած է:

50- Այս իշխանը եին 4 իշխանաց մին էր եւ կը կոչուէր Հագոր (Հագար) աղա, միւս 3 իշխանք մեռած էին, ու պատկանող ծերունին 75 տարեկան հասակին դեռ ողջ էր ներկայիս:

51- Նազարէթ չաւուշ (վարոցաւոր) Եմի Տիւմիա Աստուածատուր աղայի հօրեղոր թողը՝ Մարկոս աղայի տղան ու Պապիկ փաշայի եղբայրն է. Մինչ ցարդ այս ֆաշարի երիտասարդը թուրք կառավարութեան ձիաւոր չաւուշն էր. բայց ներքնապէս հայրենեաց նուիրուած մի հերոս էր եւ չորս թաղեցոց ալ միամզամայն սիրելի:

52- Այն ժամանակ Սասունէն գաս կոտորած եղած չէր, ասոր համար իշխանը Սասուն անունը կու տայ միայն:

53- Գործը դժուարութեան մատնել ըսել է:

54- Բերթիգ կամ Բերթուգ նշանաւոր էր եղած Ռուքիմեանց ժամանակ, իրեն իշխանանիստ ֆաղափ: 1107-ին գտնուած է Գող Վասիլի ձեռքը, որուն մահէն յետոյ, 1157-ին, Թորոս Բ. կու տայ գայմ Գլըն Ասլանին, իրեն երաշխիք խաղաղութեան: Ասոր բնակիչները, որոնք նախապէս հայ էին, ինչպէս վերը միջանկեալով մը յիշեցինք, բռնութեան եւ հալածանքի երեսէն իսլամացած եւ թրքացած են:

55- Վիթթօ, իտալական փոխ հիւպատոս:

56- Ըստ աւանդութեան այդտեղ է որ Լեւոն Ե. Կիլիկիոյ մեր վերջին բագաւորը յանձնուած է արաբներուն, Բէն իրական պատմութիւնը անոր անձնատուութիւնը Սիսի մէջ տեղի ունեցած է, կ'ըսէ:

57- Այանանիւնի հայ գիւղի բնակչութիւնը Զոնուզէն գաղթած են ժամանակին:

58- Ջէթունցիներու չախմախը հրացաններուն երկաթէ փողերը, փայտէ մասին՝ դուռնախին հետ կապուած կ'ըլլային, երբեմն արծաթէ եւ նոյնիսկ ռսկիէ տեսակ մը ապարանջաններով: Իսկ պետական մարքինին սեւ, հաստ

փաղը մման զարդ չուներ:

59- Պալանդ Մարաշի հարաւը, 7 ժամ հեռու գաւառակ մըն է, տեմդի, մալարիայի վատառողջ վայր մը:

60- Հագարապետ՝ Հանի էֆ. 10 ռստիկան զինուորներով:

61- Ըր, ըդ, ըն սուղ վանկերում մէջ, երբ տ տառը կայ, կը ջնջուի եւ սուղ ը կը գրուի, ինչպէս. սանտր՝ սանրը, աստղ՝ ուղը, ծանր՝ կ'ըլլայ ծանրը, բարձր՝ բորձրը, մեղր՝ մեղրը:

62- Այս երեք առածները այլաբանօրէն ըսուած խօսքեր են եւ չուզեցինք աշխարհաբարի թարգմանել:

63- Զէյթունի անունին համար ձեք եւ ձիթապտուղ կ'երդնուն չուտել եւ իրենց սեղաններում չտեսնել:

64- Աֆշարները հայ Արշակունեաց մնացորդներէն կ'ենթադրուին ումաց կողմէ:

65.- Գարմա, բարդէն հաստ թել (թեռ) մանելու խաչածել, փայտէ գործիք մը, որուն թուրքերն ալ ֆերմէն կ'ըսեն:

66.- Յովհ. Մ. Վրդ. Գարանփիլեան, Գրանփիլեան Քեօսէ Փանոս անուն նշանաւոր հերոս եւ հրոսակապետ Զէյթունցիին տղան էր: Աշխարհական անունը Տէօվլէք էր: Վիեննայի Մուրատ Ռաֆայելեան վարժարանէն շրջանաւարտ՝ կաթօլիկ եկեղեցական մըն էր, 1911-1912, Սիս երթալով, կը ձգէ կաթօլիկութիւնը եւ կը դառնայ Առաքելական Մայր եկեղեցւոյ ծոցը: Անկախ քաջ հմուտ էր լատիններէն, ֆրանսերէն, թուրքերէն, հայերէն՝ գրաբար եւ աշխարհաբար լեզուներում: Օրէնսգէտ եւ պերճախօս, ինչպէս նաեւ քաջ եւ յանդուգն վարդապետ մըն էր, Պօզապիլ թաղէն էր: Տարիներ եղած է կաթօլիկ յարանաւանդեան առաջնորդ Հանըմի, Քիլիսի, Պերէնիկի մէջ, իսկ 1912-ին Վեհափառ Սահակ Կաթողիկոսէն կարգուած է Առաջնորդ Զէյթունի Առաքելական ժողովուրդի Ազգ. Առաջնորդարանին:

67- Ժամանակ մը կ'ըսէին թէ՝ Թուրքիոյ գատըները (դատաւոր) մեծ մասով Ալաիսքանէն կ'ելլէին:

68- Յետընթաց Մարաշէն դէպի հարաւ արեւմուտք 22 ֆլմ. հեռու է:

69- Գավգըրտի: Վերայիշեալ թուրք աւագակապետը Ղըվրագ Իպրահիմ, հպարտանալով կը յիշէ իր կուսիլը Նդիայի հետ եւ պատիւ կը համարէ անոր մօխրանալը. վերջէն մեզի պատմած են Գըվտագի հետ տեսնուող հայրենակիցներ: Ինչպէս նաեւ ռստիկան Սիւլէյման պատմած է Պապիկի կռիւներն ու մահը, իսկ Սարը Կեօզէլցի թուրք մը Ահմէտ ակամատես եղած է Զմրուխտի մարտիրոսութեան:

70- Հին Գեդ եւս Ֆոնուզի մէկ հայ գիւղակն է:

71- Ալապօզաննեց համար կը պատմուի թէ՝ իրենց Յակոբ Աղային մեծ հայրը ինքը՝ մինակը թուրք բանակէն զուռն մը փախուստի մատնած է եւ ըսուած է իրեն «Ալայ Պօզան» ինչպէս նաեւ նոյն եւ մման պարագաներում

տակ Արեգինը կոչուած է «Ալայ Պաշի», այսինքն «Յառաջապահներ»:

72- Հրամանատար Թահսին Պէյ Զէյթուն գտնուած է 1904-1905-ին: Ուժեղ եւ վճռական կամքով հրամանատար մը եղաւ ան: Այդ տարիներում, Զէյթունի շրջականները ոչ մէկ աւագակութիւն, գաղութիւն տեղի չունեցաւ: Հագուագիւտ կարողութեամբ զինուորական մըն էր: Սակայն Համիտի գործակալներէն մէկն էր եւ Զէյթունի համար գաղտնի ծրագիրներ ունէր: Կ'ուզէր ինքզինքը ուղղամիտ, անաչառ մարդ մը ճանչցնել զէյթունցիին, խտիր չդնելով թուրքի եւ հայի միջեւ. եւ օր մըն ալ ջուր մը լեցնել Զէյթունի գլխուն: Սակայն բանակին մէջ տարածուած քծաւոր ժամատեսներէ կը վարակուի (ոչլախտ, թիֆուս) եւ 24 ժամուան մէջ կը մեռնի զօրանցի մէջ, ու կը թաղուի Վիրէ մատըն Մէրը կոչուած տեղը, զօրանց եւ ջերմուկ երթալիք համբուն եզերքը: Ոչլախտէ վարակուած զինուորներում դարմանումին ինք անձամբ կը հսկէր եւ վարակուեցաւ ինքն ալ: Թահսին Պէյի գերեզմանին երկաթները Ս. Աստուածածնայ վանքին դուռէն եւ Կիւլվանէսեան Նազարէթ աղային գերեզմանէն հանուած էին:

73- Վերջէն ուրիշներ պատմեցին թէ Արամին հայրը, մայրը, եղբոր աղջիկը, Մարաշի կամուրջը կը բռնուին, կը ճանչցուին եւ կը սպաննուին. Վարպետ Արթինի փորել կու տան իր փառը, յետոյ կը սպաննեն եւ հռն կը թաղեն, Արամ կ'իմանայ ասիկա:

74- Սօլագ Տէտէի կատարին երկար եւ խորունկ քարանձաւ մը կայ, ուր կը պատմուի, թէ ժամանակին Ս. Վանվառ անուն կոյս ճգնաւորուի մը ապրած է: Այդ ճգնաւորուիին անուան տօնին եւ Զատիկի Կարմիր Կիրակին, զէյթունցի երիտասարդներ այդտեղ կը քարձրանան, հրացանաձգութիւն տեղի կ'ունենայ, նշան կը նետեն այնտեղ եւ վերադարձին նունուֆար, նարնէս ծաղիկներու փունջեր քաղած Սօլագ Տէտէի ձիւնածածկ քարձունքէն կը վերադառնան Զէյթուն: Սօլագ Տէտէն մինչեւ Զէյթուն, այդ ամբողջ վայրէջքին կը շարունակեն տղաք երացանաձգութիւնը:

- Սէկմէն կը նշանակէ պաշտպան (անհամագգեստ խումբ):

**ՅՈՒՑԱԿ ԶԷՅԹՈՒՆԻ ԱՄԲՈՂԶ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐՈՒ
ԵՒ ԴԷՊԵՐՈՒ
1780-1895**

Թիւ	Պատերազմ,	Թուական Դէպք
1 Էօմէր Փաշա	1780	
2 Ալի Փաշա	1782	
3 Գալէնտէր փաշա	1808	
4 Չափան Օղլու Ահմէտ Փաշա	1810	
5 Քէօսէ Փաշա	1829	
6 Պալազիտ Օղլու Սիւլէյման Փաշա ներքին խռովութիւն	1831	
7 Իպրահիմ ուշադիններու ջարդը եւ Սիւլէյման Փաշա	1832	
8 Մարաշի պէյերու գերութիւնը եւ Թօսուն Փաշա		1835
9 Մարաշի իշխան Թոփալեանի սպաննումը. Իպրահիմ Փաշա եւ Տէյի Քէլիշ		1836
10 Աղճա Տաղի պատերազմը	1840	
11 Քասէքի պահանջումը		1841
12 Թէնիլիցլուց կռիւր եւ Եիւսիւֆ Փաշա	1842	
13 Չէլթունցլուց՝ Թէնիլիցիներու հետ Թշնամութիւնը եւ հինգ տարի չարունակ մղած պատերազմը	1850	
14 Ալպուսթանցի Հաճ Աղա	1842	
15 Թոփալ Սատօ	1847	
16 Հայթաները եւ Աթուղի կռիւր	1847	
17 Ալչարներու հետ պատերազմիւ Կոկիսոնի Զինչին Պօղազը (Ճանճի բերդի կիրճը) ըսուած տեղը	1848	
18 Պալազիտ Օղլու Ահմէտ Փաշա		1853
19 Խուրշիտ Փաշա	1860	
20 14 Քէթմանցի թիւրքերու սպաննումը		1862
21 Ազիզ Փաշա	1862	
22 Պալազիտ Օղլու Ահմէտ Փաշա	1862	
23 Պօյամեանի սպաննումը		1863
24 Տափուտու Նիսպի էֆէնտի		

միականի գալմազամը	1875
25 Վէզիր Օղլու Հաճի Մամբրէ եւ Եաթ Օղլու	1878
26 Պապիկ Փաշա, Փօյրազ Ալի	1878
27 7 Փաշա Նիկողայոս Եպս. Չաքրեան. Պապիկ Փաշա եւ Նոխուտեան Փանոս	1878
28 Պապիկ Փաշա եւ բանտարկեալք	1878
29 250 Զէրքէզներու ջարդը	1879
30 Տէտէ Փաշա եւ Արեգինցիներ	1884
31 Քացախ Փանոս	1886
32 Սալէհ Փաշա	1890
33 Տէրօրական գործողութիւնք Արեգին գիւղացիներէն	1895
34 Թիւրք Հազարապետի եւ Հարիւրապետի Ֆրնուզցիներէն սպաննուիլը	1895
35 Բերտիզ Զալի պատերազմը	1895
36 Զօրանոցի գրաւումը	1895
37 Զուբուր հիսարուց անձնատուութիւնը	1895
38 Անտրուրնու գրաւումը Բարթուղիմէոս Վարդապետի ձեռամբ	1895
39 Եէնիճէ Գալէի բլուրին կռիւր	1895
40 Կապանի վրայ յարձակում	1895
41 Եէզիտէրի պատերազմը եւ Բէմզի Փաշա	1895
42 Սանդուխի կռիւր	1895
43 Թիւրք գերեաց սպաննումը Կանանց ձեռամբ	1895
44 Զօրանոցի ալրումը	1895
45 Վանքին ուժակոծումը, Եէնիսիւսիւնեա Եղիայի յարձակումը Թիւրք բանակին վրայ	1895
46 Հայ եւ Թիւրք Թնդանօթաձիգները	1895
47 Ալի Պէյի բանակին խորտակումը եւայլն. Եւ Էտհէմ Փաշայի գալուստը (")	1895

Թիւ 13-ի մէջ ցուցուած զէլթունցիներու եւ Թէնիլիցիներու հնգամեայ պատերազմը, 10 կանոնաւոր բախումներով, 10 զատ պատերազմ ընդունուած է:

Համագումարն է 41 պատերազմ եւ 16 դէպք:

ԲԻՒԶԱՆԴԱԿԱՆ ՀԱՅ ԿԱՅՍՐԵՐՈՒ ՑԱՆԿ

582-1028

582-602 Մորիկ

610-641 Հերակլիոս Ֆլաւիոս

641-668 Կոստանդին, երկրորդ ժառանգը Հերակլիոսի

668-678 Կոստանդին Պոկոնաթ, ժառանգը Կոստանդին Բ.-ի

678-685 Մասիսիոս Ուղուրպատոր

685-695 Յուստինիոս Պոկոնաթի ժառանգը

695-698 Լէօն Ուղուրպատոր

698-705 Տիփէն Ե.-րդ Ուղուրպատոր

705-711 Տիփէն Դ.-րդ եւ հայրը Յուստինիոս Պոկոնաթ (այստեղ կը վերանայ

Հերակլի սերունդը)

711-713 Ֆիլոպէկոս Բարթանէս

742- Արտաւազդ

813-820 Լէօն Ե.-րդ

842-867 Միշէլ Գ.-րդ

867-886 Վասիլ

886-912 Լէօն Զ.-րդ վասիլի ժառանգը

912-913 Ալէքսանդր, Լէօն Գ.-րդի ժառանգը

913-919 Կոստանդին Ժ.-րդ, Ալէքսանդրի ժառանգը

920-944 Ռօմէն Ա.-րդ

944-963 Ռօմէն Բ.-րդ Կոստանդին կայսեր ժառանգը

963-969 Նիկիթօր Ֆօկաս

969-976 Յովհան Զըմըշկի

976-1025 Վասիլ Բ., Ռօմէն Բ.-ի ժառանգը

1025-1028 Կոստանդին, որով կը վերջանան իրար յաջորդող, օրինական եւ ոչ օրինական 23 հայ կայսրերը Բիւզանդական զահին վրայ, բայց հայ կայսրուհիները եւ հրամանատարները կը շարունակեն իշխել յունական կայսրերու ժամանակներուն ալ:

Հռոմէական կայսրութեան մայրաքաղաքը փոխադրուելով Բիւզանդիոն 395-ին, ան դեկավարուեցաւ.

395-582 Թուերուն, ընդամենը 187 տարիներու ընթացքին, Հռոմէական ծագում ունեցող կայսրերով

582-1028 Թուերուն, ընդամենը 446 տարիներու ընթացքին, հայկական ծագում ունեցող կայսրերով

1028-1453 Թուերուն, ընդամենը 425 տարիներու ընթացքին յունական ծագում ունեցող կայսրերով

1453-1923 Թուերուն, ընդամենը 480 տարիներու ընթացքին Օսմանեան

ծագում ունեցող կայսրերով

1923-1947 Թուերուն, ընդամենը 24 տարիներու ընթացքին Պոլիս դարձաւ մէկ նահանգը Թուրք հանրապետութեան:

(Ըստ Ռուբէնի «Հայաստան Միջ-Ցամաքային Ուղիներու վրայ»):



Հեղինակին ընտանեկան վերջին լուսանկարը, 1950


ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԱՂԲԻՐՆԵՐ ԵՒ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Լէյման Հահուպի
Tibulle
Զեխ Հրոզնի
Տօքթ. Ժ. Մարքուարթ
Տէօվլէթ Գէորգեան (Զէյթուն)
Գ. Գիւզելեան
Հայր Յ. Տաշեան
Վեր. Ե. Քասունի
Ն. Ադոնց
Հայր Ղեկոնդ Ալիշան «Սիսուան»
Գ. Հ. Գալուստեան (Կիլիկեցի)
Ունեցի Կարապետ Կաթողիկոս (1727)
Ա. Ալպոյաճեան «Հայ Կեսարիա», «Բարսեղ Օհանեան»
Մ. Խորենացի, Գիրք երկրորդ
Անդրէաս Վրդ. Ալեքսանեան (պատմիչ Սերաստիոյ)
Տօքթ. Յ. Տ. Ղազարեան
Միքայէլ Ասորի
Օրմանեան Պատրիարք «Ազգապատում»
Jonquirere (Բ. հատոր)
Սիմէոն Լեհացի
«Գանձ» գրչագիր յիշատակարան (1624)
Փաւստոս
Ս. Յովհան Ոսկերեան
Աւգերեան «Լիակատար վարք եւ վկայութիւնք սրբոց» (1810-15)
Մնացական Սէմէրճեան «Զէյթունի անցեալէն եւ ներկայէն»
Նազարէթ Զէյթունցեան «Զէյթունի վերջին դէպքերը»
Վարդավար Գարանֆիլեան (Վարդ Մելիակ) «Զէյթունի նահանջը»
Լեւոն Նորաշխարհեան «Մռայլ օրեր»
Հ. Ն. Էփրիկեան
Rene Grousset, «Les Croisades»
Ենովք Քհնյ. Դաւիթ Երէցեան «Մանկութեան աւետարան»
Աւետարան Հրոմկլայի (գրչագիր)
Մկրտիչ Եպս. Աղաւնունի «Միաբանք եւ այցելութեան հայ Երուսաղէմ»
Վ. Քինէի «Աշխարհագրութիւն»
Մամիկոն Վարժապետեան «Յուշիկ Զէյթունի»


Գրիգոր Գուտուլեան «Աշխարհագրութիւն Կիլիկիոյ»
Յովհաննէս Զազրեան «Մոմիս փարան տուր»
Արտաւազդ Արք. «Յուցակ հայերէն ձեռագրաց» (Հալէպ էջ 323)
Henri Vitto
Նիկոլ Աղբալեան
Հ. Աճարեան
Տօքթ. Ա. Ալթունեան
Նիկողայոս Եպս. Դաւիթեան Խոռխոռունի (Ֆրնուզի ուիժը), (Տէլի
Մահրասա)
Բարթոլոմէոս Վրդ. Թաքաճեան (Վեղարաւոր հերոսը)
Տօքթ. Ժ. Լէփսիուս
Տիգրան Անդրէասեան
Մկրտիչ Պէշիկթաշլեան
Աղասի
Գէորգ Աստարճեան



1924-1925 «Սուրիահայ տարեցոյց»ի խմբագրական կազմը
ձախէն աջ՝ Միսաք Սիսեռեան, Եղուարդ Ա. Ոսկերիչեան,
Միքայիլ Անեմեան (առաջին երկուքը՝ գէյթունցի)






La Cilicie égyptienne sous Ibrahim Pacha (1832-40)




Seigneurs arméniens et sièges catholico-saux (fin 11^e s.)

Extension maximum des domaines de Philartie







1. Բեքոճեհր (Բաքոճուր) :
2. Վաչիք Ս. Աստուածածնայ :
3. Գրապեհ Գաշուկի Բարսուր :
4. Սարսնայ :

5. Ափնը քարածի
Անտի [անդոն] քարածի) և
6. Ա. Լասարիի հեղեղի:
7. Քյոյ Սարճեան Բջառաց:

8. Գաղ-Լյութեր :
9. Ս - Յովհաննէս Կղզեպետ :
10. Կաթ օղկոյ ալ՝ ծանախ :
11. Ս - Լամարտած տոնոյ Էղեղեղի :

12. Π - Π арылар $\mathbb{Z}[\sqrt{d}]$ -ге
- 13) $\mathbb{Z}$ арналыгына $\mathbb{Z}[\sqrt{d}]$ -ге
- 14) $\mathbb{Z}$ арналыгына $\mathbb{Z}[\sqrt{d}]$ -ге
- 15) $\mathbb{Z}$ арналыгына $\mathbb{Z}[\sqrt{d}]$ -ге

2. 3. 10. 17. 5:

Ergebnisse Zusammenfassung für Euler.

[illegible][illegible]

L. J. Zuzulyan Kantsyabovskiy -

[illegible]

ՆԱԽԿԶ մը հեղինակի ձեռագրէն



Հագոր իշխան Շովրոյեան
իշխանապետ



Մկրտիչ Եղուպեան
իշխան Կարկալար թաղի



Նագարեթ Սուրենեան
իշխան Սուրենեան թաղի



Աստաուր Ենիտինեան
իշխան Ենիտինեան թաղի



Նիկողայոս Եգս, Խորխոռունի



Տ. Բաթբուղիմէոս Վարդապետ



Յար. Ս. Եաղուպեան



Խաչիկ Ս. Եաղուպեան



Ուսուցչական

Կազմ

Յովհ. Ահարոնեան



Մնացական Սեմերեան
(Զեյթունցի)



Սմբատ Բիւրատ



1910-10 Կեդր. վարժարանի ուսուցչական կազմը
1- Խաչիկ Եաղուպեան, 2- Յովհ. Ահարոնեան (Տնօրէն),
5- Գր. Գասապեան, 7- Գեորգ Շահինեան, 11- Միսաք Սիսեռեան,
12- Վարդ Խուլմունեան, 13- Յովսէփ Արիգեան



Ներսէս Եպս. Դանիէլեան



Ղազար (Հազոր), Աստուածատուր,
Իշխան Շովրոյեան, Իշխան Ենի-Տիւնեա,
Մովսէս Քենյ. Խաչուկեց



Յովհան քենյ. Ղափուզըպէօյի քեան
(Տէլի Քէշիշ)



Բարթուղիմէոս Մ. Վրդ. Թագանեան



Հնչակեան գործիչներ



Կարապետ, Մլեն, Նշան, Հրաչեայ, Աղասի, Ապահ



Իշխան Նազարեթ Նորաշխարհեան (Զավուշ)



Պարտեալ գօրավար՝ Ալի Պէյ



Հանրի Վիթթո



Թուրք բանակի պարտեալ սպայակոյտը
1895-1896



Ամանուի Հերոսախումբը, որ 1914-1918 լեռները ապաստանեցաւ եւ
պայքարեցաւ
1- Արամ Զօլագեան, 2- Յովն. Սիմոնեան



1915-ին գէյթունցիներ շղթայակապ Մարաշի մէջ, կեդրոնը,
գլուխը ծռած՝ Նազարէք Զավուշ



Արաբներուն մէջէն վերադարձող զէյթունցի մը



Արամ Պէկ Զօլագեան



1921-ին, Զեյթունեն նահանջողներու մեծ խումբը Քիլիս հասած



Հերոս Խաչեր Նորաշխարհեան եւ Տիկինը Հերոսուհի Մարիամ



Զեյթունցի մը:

ՅԱԻԵԼՈՒԱԾ

Ինչո՞ւ այս յաւելուածը հօրս բաւական ամբողջական Ձէյթունի պատմութենէն յետոյ, պատճառները շատ են:

Նախ, հայրս վերջացուցած է պատմութիւնը 1954-ին: 43 տարիներ անցած են այդ թուականէն եւ մինչեւ այսօր գոնէ ինծի ծանօթ երեք կարեւոր պատմութիւններ գրուած են Ձէյթունի վրայ, որոնք են.

1.- 1960-ին «Ձէյթունի Պատմագիրքը» 1146 էջ, հրատարակութիւն Ձէյթունի Հայրենակցական միութեան, խմբագրական մարմին ունենալով Արիս Ահարոնեան եւ Նշան Պատանեան (Մոնթէվիտիօ-Ուրուկուայ) Տպ. Պուէնոս Այրէս:

2.- 1969-ին, «Ձէյթունի Պատմութիւնը» 1409-1921, 457 էջ: Հ. Մ. Պօղոսեան, Երեւան:

3.- 1995-ին, «Ձէյթունի Ապստամբութիւնը» 1895-1896, 208 էջ, Լեւոն Մկրտչեան, Երեւան:

Թէեւ այս վերջին գիրքերը նախկին գիրքերուն վրայ, գրուած հեհեռեալ հեղինակներու կողմէ՝ Մնացական Սէմէրճեան (Ձէյթունցի), Սմբատ Բիւրատ, Գր. Հ. Գալուստեան (Կիլիկեցի) Տէօվլէթ Գէորգեան, Աղասի, Լեւոն Նորաշխարեան, Վարդիվար Գարանֆիլեան, Նշան Ձէյթունցեան, մեծ տարբերակներ չեն բերեր, կրնան կարգ մը լուսարանութիւններ եւ պատմաբանի ճշգրտութիւններ բերել, ուրեմն պիտի փորձեմ նուազագոյն մէջբերումներ ընել եւ օգտուիլ եւ ընտրել հայ կամ օտար պատմաբան կամ ճամբորդ գրողներէ:

Երկրորդ, պիտի յիշեմ գրութիւններ, բանաստեղծութիւններ եւ երգեր, սկսելով «Կիլիկիա»էն, Ն. Ռուսինեան գրուած 1862-ին, ապա 1862-ի Ձէյթունի Ա. մեծ ապստամբութեան նախօրեակէն յետոյ, գրուած Մկ. Պէշիկթաշեանի եւ ուրիշներու կողմէ:



ՍԵՊՈՒՀ ՍԻՍԵՌԵԱՆ

Հոս կ'ուզեմ դնել գրութիւնս, որ գրած էի 1954-ին, Պէյրութէն Տէր Մաշթոց Ա. Քահանայ Ոսկերիչեանի փափաքին վրայ, որպէսզի մասնակցութիւնս բերեմ իր հրատարակելիք Ձէյթուն Ալպում-ին, 1960: Զայն կը հրատարակեմ մասնաւորապէս բաղդատութիւն մը ընելու համար 1969-ին, տասը տարիներ յետոյ Պօղոսեանի կողմէ գրուած Ձէյթունի մասին մէկ գրութեան, ուր կը տեսնեմ նմանօրինակ զգացումներ:

«Տօքթ. Սեպուհ Միսեռեան, արժանաւոր զաւակը վաստակաւոր ուսուցիչ հանգուցեալ Միսաք Միսեռեանի: Ծնած է Հայէպ 1919-ին: 1932-ին շրջանաւարտ Հայէպի Ազգ. Հայկազեան վարժարանէն եւ տեղւոյն Միսիոն Լաւիքէն: Մտացած է բժշկական վկայական Պէյրութի Յրանաական Համալսարանէն: 1946-ին հաստատուած է Գամիշլի, ունի դարմանատուն, անձնական հիւանդանոց եւ կը զբաղի կուրծքի հիւանդութեան մասնագիտութեամբ: Տօքթ. Սեպուհ Միսեռեան, տակաւին երիտասարդ, կը խոստանայ մեծ ապագայ եւ պիտի բերէ պատիւ զէյթունցի հայրենակիցներուն եւ հայ ազգիին»:

ՄԱՇՏՈՑ ՔՂՆՅ. ՈՍԿԵՐԻՉԵԱՆ

ԶԵՅԹՈՒՆՑԻՆ

Զեմ գիտեր ինչո՞ւ երբ Ձէյթունցի ըլլալս յիշեմ հպարտ կը զգամ, նոր ուժ մը կու գայ վրաս: Նոյն ատեն կը տեսնեմ թէ փոխուած եմ, անիրաւութեան մը առջեւ, կամ սկզբունք մը յարգել տալու համար դիրքիս անվայելօրէն կռուազան կը դառնամ կարծես: Ձէյթունցի ըլլալուս զգացումը կ'ազդէ հոգիիս վրայ, տրամադրութեանս վրայ, ուժիս եւ կամքիս վրայ:

Վերլուծենք, սիրելի հայրենակիցներ, ինչո՞ւ այդպէս է: Այս զգացումին պատճառները մեր պատմութիւնն է, մեր ժայռուտ երկիրն է, մեր մռայլ ամպերն են, մեր խիստ կլիման է, մեր ձիւնն է, մեր երկրի ցուրտն է, մեր անցեալն է, մեր հայրենասիրութիւնն է, անոնց նկարագիրն է:

Բոլոր այն զէյթունցիները որոնք չեն տեսած, ինչպէս ես, ունին տակաւին իրենց ժառանգութենէն եկած նախնեաց նկարագրի գիծերը, հոգ չէ թէ միջավայրը, հագուստը, աշխատակերպը փոխուած ըլլան ներկայիս:

Ուրեմն, սիրելի հայրենակիցներ, թէեւ ժամանակը անգուժ թշնամին է նման զգացումներ պահելու, մենք յաճախ յիշելով մեր պատմութիւնը, կրնանք մօտենալ մեր հայրերու նկարագրին, եւ ըլլալ հպարտ մեր Ձէյթունցի ըլլալուն, կրնանք մնալ նկարագրի տէր, սկզբունքի տէր եւ կարող զոհուելու անոր համար, կրնանք ըլլալ անոնց նման, աշխատասէր եւ քաջ: Եւ այս նկարագիրը պահելու համար գլխաւոր ուժը այսօր մեր անցեալն է, որ պէ՛տք է յիշել, չմոռնալ եւ վերապրել:

Տօքթ. ՍԵՊՈՒՀ ՍԻՍԵՌԵԱՆ

Գամիշլի, 1959

Իսկ Պողոսեան կը գրէ՝

«Երկրի անմատչելի ձորերն ու կիրճերը, հսկայակերպ լեռները անմատչելի սրածայր գագաթներով արծուաբնի բնակիչներին տուել էին խիստ բնաւորութիւն: Զէյթունցին երբեք ու երբեք չի տարել մարդու նկատմամբ գործադրուած անարդարութիւնը եւ այդ է պատճառը, որ նա միշտ էլ ընդունակ է եղել հանդէս գալ նրա պաշտպանութեամբ: Նա միշտ էլ զէնքով պահպանել է իր իրաւունքները:

... Զէյթունցին ունի խրոխտ եւ անարդարութիւնների դէմ ընդվզող բնաւորութիւնը»:

«Զէյթունի Պատմութիւնը», էջ 54, Երեւան 196

Հոս կ'ուզեմ հօրս յիշատակը յարգած ըլլալու համար յիշել ապրումներս, դրուագներէն ցոյց տալու իր կապուածութիւնը իր Զէյթունին, կուսակցութեան, իր աշակերտներուն, իր հարազատներուն իր անկեղծ զինուոր, անկեղծ ուսուցիչ եւ յաճախ տարիներ յետոյ լսած եմ իր նախկին աշակերտներէն, որոնք ունեցած են անսահման սէր, փոխադարձ լաւ վերաբերում եւ իրենց հանդէպ եղած է ոչ թէ չոր ու ցամաք ուսուցիչ, այլ հարազատ հօր մը պէս:

Տխուր եւ կամ ուրախ ժամերէս հօրս հետ, կ'ուզեմ փոխանցել իր հարազատներուն, հայրենակիցներուն, ընկերներուն, աշակերտներուն, եթէ տալաւին ապրողներ կան եւ իր զաւակներու երիտասարդ սերունդին:

1924-25, կը յիշեմ, հազիւ հինգ տարեկանիս, առաջին եւ վերջին տխուր յիշատակս մօրմէս.- Օրը, մօրս հոգեվարքի եւ մահուան օրն էր, Հալէպի Սէն Լուի հիւանդանոցը, ուր մօրս մահիճէն անդին, հեռու մօրս աչքերէն, որ արդէն կը զառանցէր ջերմութենէն, տեսայ հօրս լուռ լացի արցունքները այտերուն: Գթութեան քոյրը գունաւոր ու սուրբ նկար մը տուած էր ինծի, որ երկար ատեն պահեցի, վրան կարդացած էի Mater Dolorosa...

Կը յիշեմ հօրս ընկերներէն Լեւոն Չորմիսեանը, խոշոր, սեւ եւ տարօրինակ փողկապով, նաեւ Բիւզանդ թօփալեանը, որ տպարան մը ունէր Սալիպէ դպրոցին թաղը եւ տպած էր Յ. Թումանեանի Անուշը: Տեսայ մեր տունը ֆէտայի Մուրատը, յետոյ, աւելի ուշ Հայկազեան վարժարանի բակը մեծ մարդու մը յայցելութիւնը, որ Համօ Օհանջանեանն էր: Կը յիշեմ ճերմակ հագուստով Տիրան Աճէմեանը, որ 1924-ի եւ 1925-ի Մուրիահայ տարեցոյցները ծաղրանկարներով զարդարած էր, աւելի ուշ Միս Եփփէի որբանոցի որբերը կու գային Տէր Զօրի շրջանէն արարական հագուստով, երկար հիւսուած մագերով, նոյնիսկ տղաքը:

Տէր Զօրի շրջանին, 1928-1932, հօրս այցելեց Համաստեղը, եկած էր տեսնելու 1915-ի սպանդի բացօդեայ գերեզմանը, Եփրատի անապատային ձախ ափին, ուրկէ տարած էր նշանաւոր գանկը:

Այդ տարիներուն տեսած եմ Տերսիմի լուռ հերոսներէն հռետոր մը: Երբ կ'աշակերտէի Տէր Զօրի Նահատակաց վարժարանը, եկեղեցին կ'երգէինք «Լոյս», «Ճանապարհ»: Հայրս տօնակատարութեանց հանդէսներուն կ'երգէր «Սեւ Մութ Ամպեր» եւ դասընկերուհիս կ'արտասանէր է. Ակնունիի «Դէպի Երկիր»ը:

Այս մթնոլորտին մէջ ապրած էի մանկութիւնս եւ պատանեկութիւնս: Ապրումներ, յուշեր նոյնիսկ, տխուրներն ալ ժամանակի ընթացքին կը մեղմանան: Հօրս յիշատակը նաեւ կը հետաքրքրէ անոնք որ հօրս սիրելի էին: Այս մթնոլորտին մէջ ապրեցաւ եւ դաստիարակեց իր զաւակները եւ մասնակից ըրաւ իր աշակերտները: Երբեմն դասի ընթացքին միօրինակութիւնը եւ ձանձրոյթը փարատելու համար կը շեղէր դասէն քանի մը վայրկեանի համար եւ իր յուշերէն կը պատմէր: Որով աշակերտներէն շատ փնտռուած էին եւ ուշի ուշով կը հետեւէին:

Այս յաւելուածը պիտի բովանդակէ.

1.- Բանաստեղծութիւններ, երգեր Զէյթունի մասին

2.- Զէյթունցին եւ զէնքը

3.- Զէյթուն քաղաքը, պատմաբաններէ եւ ճամբորդներէ մէջըրումներ

4.- 1895-96-ի ապստամբութիւնը

5.- Կարծիքներ եւ տեսակէտներ 1895-96-ի ապստամբութեան մասին

6.- Վերջաբան

7. Վերագնահատել Տէր Զօրը:

Ս. Ս.

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԵՐԳԵՐ ԶԷՅԹՈՒՆԻ ՄԱՍԻՆ

Հ. Մ. Պողոսեան «Զէյթունի Պատմութիւն» գիրքին 259-280 էջերուն մէջ կը գրէ.

«Կիլիկիան եւ Զէյթունը հարազատ են եղել իւրաքանչիւր հայ մարդու:

... Կիլիկիոյ եւ Զէյթունի մասին յօրինուել են բազմաթիւ բանաստեղծութիւններ եւ երգեր, որոնք մինչեւ այսօր էլ շատ մեծ հաճոյքով ընթերցուած ու երգուած են.

... «Կիլիկիա» երգը, որը գրուել է պոլսահայ մտաւորական Նահապետ Ռուսինեան: Երգը գրուել է 1862 թուականի Զէյթունի ապստամբութեան նախօրեակին, որի մէջ հեղինակը տեսնում է այն օրուայ մասին, երբ կը բացուեն յոյսի դռները, երբ մեր երկրից կը փախչի խստաշունչ ձմեռը: ... Անկասկած, ձմեռ ասելով հեղինակը ինկատի ունէր թուրքական տիրապետութիւնը եւ երազում էր տեսնել նրա կործանման ժամը:

ԿԻԼԻԿԻԱ

Երբոր բացուին դռներն յուսոյ
Եւ մեր երկրէն փախ տայ ձմեռ,
Զքնաղ երկիրն մեր Արմենիոյ
Երբ փայլէ իւր քաղցրիկ օրեր,
Երբոր ծիծառն ի բոյն դառնայ,
Երբոր ծառերն հագնին տերեւ,
Յանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ:

Տեսի դաշտերն Սուրիոյ,
Լեռնն Լիբանան եւ իւր մայրեր,
Տեսի գերկիրն Իտալիոյ,
Վենետիկ եւ իւր կոնտոլներ,
Կղզի նման չիք մեր Կիպրեայ,
Եւ ոչ մէկ վայր է արդարեւ
Գեղեցիկ քան զիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ:



Ն. ՌՈՒՍԻՆԵԱՆ

Հասակ մը կայ մեր կենաց մէջ,
Ուր ամենայն իղձ կ'աւարտի.
Հասակ մը ուր հոգին ի տենչ՝
Յիշատակաց իւր կարօտի.
Յորժամ քնարն իմ ցրտանայ,
Սիրոյն տալով վերջին բարեւ,
Երբամ ննջել յիմ Կիլիկիա,
Աշխարհ որ ինձ ետուր արեւ:

ՄԿՐՏԻԶ ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

Մ. Պէշիկթաշլեան 1862-ի Զէյթունի Ապստամբութեան մասին գրած է Մահ Բաջորդոյն, Հայ Բաջորդի, Թաղումն Բաջորդոյն, Հայ Քաջուհին, Եղբայր եմք մեք:

Պէշիկթաշլեան բանաստեղծութեան հերոսը որ անմիջապէս չէ մեռած, անշուշտ երկար ալ չէ ապրած, զի ստացած վերքը փորին վրայ էր, դաշոյնի հարուածով, եւ աղիքը դուրս թափած: Յուշիկք Զէյթունի համաձայն՝ Խասեան անուցով երիտասարդ մ'էր ան, դեռ նոր ամուսնացած, Շօվրոյեան թաղէն, իսկ ըստ Սեմէրնեանի՝ ան կը կոչուէր Քասմեան Մելիսեղիկ, Սուրենեան թաղէն: Հաւանաբար առաջին ենթադրութիւնն է ճիշդը: Բայց Մելիսեղիկ Քասմեանն ալ, որ շատ յետոյ մեռած է, նոյն պատերազմին մէջ զոհ գացած էր ուրիշ արկածի մը, անյոյս կերպով փութերէ պաշարուած, մեռեալ կը ձեւանայ, եւ թշնամիք զթոսնելու համար կը կտրեն իր երկու ալանջները, այդ պատճառաւ ալ մինչեւ իր մահը գլուխը միշտ փաթուած կը պտտէր, կ'ըսէին:

Տօվլէթ Գեորգեան «Զէյթուն» 1945 Բարիզ էջ 22-23:

ՄԱՀ ՔԱԶՈՐԴԻՈՅՆ

Դու գո՞վ խնդրես, մայր իմ անոյշ,
Ե՞կ, մի՞ դողար, մօտեցի՞ր հոս,
Անկաց աչօք դիտէ՛ գորդիդ
Ու իւր վերքերն արինահոս:



Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

Թրեաց մայրեր թող լան՝ ու դուն
 Ուրախ լուրեր տա՛ր ի Զէթուն:
 Ինչպէս երբեմն որբանիս մէջ
 Կակուղ ձեռքով փայփայելով
 Մանկիկ մարմնոյս հանգիստ տայիր
 Իրերս հրեշտակ նըւագելով,
 Զիս հանգչեցուր ի հող՝ եւ դուն
 Ուրախ լուրեր տար ի Զէթուն:
 «Նորեկ որդւոյս կենացն արեւ
 Զեզի համար փայլի՛, հայե՛ր»,
 Այսպէս յայնժամ դու կ'երգէիր՝
 Օրօրոցիս նըստեալ բովեր.
 Անոնց համար շիջաւ եւ դուն
 Ուրախ լուրեր տար ի Զէթուն:
 Կարմիր կայակ ցայտին վերքերս
 Սակայն, մա՛յր իմ, նայէ՛ չորս դին,
 Զարիւնը ուշտ Թուրքերըն տե՛ս
 Հագարներով փըռուած գետին.
 Կերաւ զանոնք սուր մեր՝ ու դուն
 Ուրախ լուրեր տար ի Զէթուն:
 Մըռնչեցին ինչպէս փիշապ
 Ու մեր վըրայ յարձակեցան,
 Ո՛վ հայրենիք, ի հուր ի բոց
 Քո համար մեր սիրտք վառեցան
 Կարմիր ներկան ձորք մեր՝ ու դուն
 Ուրախ լուրեր տար ի Զէթուն:
 Ու ծափ զարկին մեր հարց ոսկերք
 Զի չէ՛ մեռած հայոց կըրակ,
 Ու ցընծացին այնչափ գոհեր
 Զի լուծաւ վրէժ յարեան վըտակ,
 Խնդաց Մասիս, մա՛յր իմ, եւ դուն
 Ուրախ լուրեր տար ի Զէթուն:
 Վերջին համբոյր տամ ինձ, մայրի՛կ,
 Հատուցանես զայն սիրուհւոյս,
 Վերջին անգամ գրկեմ մեր հող
 Ոյր արդ կ'իջնամ ի ծոցն անոյս:
 Խաչ մը տընկէ վըրաս՝ ու դուն
 Ուրախ լուրեր տար ի Զէթուն:

ՔԱՅԼԵՐԳ ԶԷՅՔՈՒՆԻ
 ՅԱՐՈՒԹԻՒՆ ԶԱԳՐԵԱՆ

Քանի՞ թմրիմք, բաւ է եղբարք
 Շրջիմք աչերնիս աչ ու ահեակ
 Շատ ստրուկներ եղան ազատ
 Միայն մենք մնացինք իլու հնազանդ:
 Բաւ է եղբարք որչափ կրեցինք գերութիւն,
 Քիչ մալ ելլեմք, ցոյց տանք նրանց քաջութիւն:

Կեցցէ՛ Զէթուն, ապրի՛ Զէթուն,
 Թող չտեսնէ ստրկութիւն,
 Քանի ունի մեզ պէս քաջեր
 Կեցցէ՛ Զէթուն, ապրի՛ Զէթուն:

Զէթունցիք ենք, մեր զբօսանք
 Է պատերազմ եւ արշաւանք,
 Սուր, թուրք, գնդակ եւ երացան
 Մեր խաղալիք են յաւիտեան:
 Բաւ է եղբարք որչափ կրեցինք գերութիւն,
 Քիչ մալ ելլեմք, ցոյց տանք նրանց քաջութիւն:

Զէթունցի ենք, քաջեր ունինք,
 Ոսոխներէն մենք վախ չունինք,
 Մեր զբօսանքն է պատերազմ,
 Պատերազմներ ու արշաւանք:
 Բաւ է եղբարք որչափ կրեցինք գերութիւն,
 Քիչ մալ ելլեմք, ցոյց տանք նրանց քաջութիւն:

ԹԱՂՈՒՄՆ ՔԱԶՈՐԴԻՈՅՆ
 ՄԿԶՏԻՁ ՊԵՇԵԿՔԱՇԼԵԱՆ

Ոչ փող զարկիմք, ոչ արձագանգ լեռնասոյզ
 Սարէ ի սար չարաշշուկ տարին լուր.
 Ու չերգեցինք ողորոց երգեր սրտայոյզ
 Երբ պատանւոյն քացինք մըռայլ փոսին դուռ:

Գիշերական մուք ստուերներ շուրջ կային,
 Երբ հրացանի կոթով ըզհող փորեցինք:

Լուսին միայն դողդոջ շողայր մեր գլխին,
Սուգ էր պատեր ըզդաշտ, բըլուր եւ երկինք:

Պէտք էր դագաղ, եւ ոչ ճերմակ պատամենք,
Որով գոցուէր ազատորդի փաշտորդին,
Նա հետ մարտին կարծես յոգնած կու հանգչէր
Ուր վերարկուն կարմիր քաւէր իւր անձին:

Անձայն ու կարն ճնշեցելոց մի զրուցեց
Մեր ֆաջ տէրտէրն, զինուոր հայոց ով Աստուծոյ,
Գովեց ըզմահն եւ փաշտութիւնն իւր օրհնեց,
Թոյլ չի տուաւ հառաջ մ'ու ճիչ հանելու:

Բայց երբ գլուխն ի բարձ դրինք հողաշէն,
Տեսանք ըզգեղ ճակտին ու վերքըն պայծառ,
Ո'վ պատանեակ, ըսինք ամենքս մէկ բերնէն,
Վասն հայրենեաց մեռար, դու շա'տ ապրեցար:

Գնա', զրուցէ հայկազարմից մեծ ոգւոց
Որ կան այստեղ ազատ ու ֆաջ դեռ հայեր,
Որոնք ի բիւր պատերազմաց թէպէտ խոց
Մեզ ամպրոպաց ի ժայռ կանգուն են կեցեր...

Մէյ մ'ալ ֆամի յանկարծ փըչեց ցրտաշունչ
Լուսինն շողերն եկաւ գոցեց մըթին ամպ
Ու մեր սարերն գերթ ուրուականք անմըռունջ
Սեւ գլուխնին տնկած դիտեն ապշուքեամբ:

Յայնժամ ցուրտ ցուրտ հող լեցուցինք իւր վրան,
Խաչ մը դըրինք, ինչպէս իւր մօր պատուէր ետ,
Ոչ այլ շէնդ արձանագիր, ոչ տապան,
Զինքն միմակ թողուցինք իւր փառքին հետ:

ԵՐԳ ԶԷՅԹՈՒՆՑԻՈՑ ՅԱՐՈՒԹԻՒՆ ԶԱԳՐԵԱՆ

Զէյթունցի ենք, ժայռի պէս ձագ ենք
Կը թռչըտինք սարէ սար,
Ու որս գտնենք կը բզըկտենք

Եւ յօշոտենք չարաչար:

Զէյթունցիին կերակուրն է
Արեւմապուր ոսկրէ թան
Զոր ոսոյսէ սեւ արեւն է
Կը պատրաստենք միաբան:

Մենք վախ չունինք ո'չ գնդակէ
Եւ ո'չ սուրէ երկաայրի,
Խաղ մ'է մեզի Աստուած գիտէ,
Թափել արիւն գազանի:

Ապառաժի ֆաջ զաւակաց
Վախ կամ երկիւղ ամօթ է
Զէյթունցիին պսակն փառաց
Լեռի, դաշտի կռիւն է:

Զէյթունցի ենք մարդ ենք կռուի
Միշտ ջարդելու ենք յօժար
Այս է կտակ մեր պապերի
Զարնել մէկի դէմ հազար:

Ուրեմն հաստափոր դուք հարուստներ
Գորոց, սնտուկ բաց արէք,
Ծրարներով շատ ոսկիներ
Մեզի պաշար դրկեցէք:

Եւ դուք եղբարք, օ'ն անդր յառաջ,
Զենք ու զրահ կապեցէք,
Բա'ւ է այլեւս լաց ու հառաջ,
Ազատութիւն գոչեցէք:

ԶԷՅԹՈՒՆ ԱՆԿԱԽ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Զէյթուն անկախ դու աշխարհիկ,
Գո սար ու ձոր են անտիկ,
Ամէն մի ֆար եւ անկիւնդ,
Շաղախել է քո արիւնըդ:

Հելլէ, հելլէ, հելլէ, հելլէ,
Հելլէ, հելլէ, հելլէ, հելլէ լէ՛:

Դեռ եւս քո գործդ բազկում
Ռուբինեաց արիւնն է շարժում,
Յիշատակ նախնի դիւցազանց,
Պատկերն է քո քաջ զաւակաց:
Հելլէ, հելլէ, հելլէ, հելլէ,
Հելլէ, հելլէ, հելլէ, հելլէ լէ՛:

Մզրա՞խդ է ունեցած կայքն
Քո ապրուստն է քո կայքն,
Բռնութեան լուծն գէշ մարդու
Էդ գէնձով ես թօթափել դու:
Հելլէ, հելլէ, հելլէ, հելլէ,
Հելլէ, հելլէ, հելլէ, հելլէ լէ՛:

Կեցցէ՛ Գրիգորեան հաւատը
Հայ պահէ իր ժողովուրդը,
Ո՛չ մի կրօն աշխարհիս վերայ
Զունի ազատ ոգին սորա:
Հելլէ, հելլէ, հելլէ, հելլէ,
Հելլէ, հելլէ, հելլէ, հելլէ լէ՛:

ԶԷՅԹՈՒՆՑԻՆԵՐՈՒՆ

ՏԻՒՆՃԷ

(Զայն մը հնչեցի եղանակով)

Հրաքուխ մը ժայթփեց Զէյթուն իր վեհ կողերէն,
Սրբեց մուրը նախատինքի հայ նակատներէն:
Քաջ գէյթունցիք ձըգեցին տուն եւ հպարտ ու վեհ
Զարկին թրփաց վատ խուժանը առիւծների պէս:

Հոն կանգնեցին սուրբ դրօշակ արեամբ ներկեցին
Անոր վրայ Ազատութիւն կամ Մահ գրեցին:
Եւ Հայաստան վեց դարերու բունն արթնացած
Մնեկասէր հայ մայրերու, «մի լա՛մ» որոտաց:

Ահա ես եմ, մայր մայրերու, տէր իր զաւակաց-
Ես որ դարեր իրենց համար լացած արտասուած:

Մահն ամէն տեղ է տղերք, վայ որ վատանամ
Մեռէ՛ յօժար, որ փրկութեան օրը մօտենայ:

Սեւեր պատած իմ հովիտներս, լեռներ ու ձորեր,
Ձեր արիւնով թող ներկուին վարդ վարդ կարմիրներ:

Որ մահիկի պատրաստուած անարգ ցնցոտին
Ըլլայ յետին պատանքն աղտոտ, հոտած Սուլթանին:

Հապօն, ի գէն գէյթունցիներս ձեզ հետ թող ըլլան
Մեծ խաչակրին աչքն ու թեւեր ձեզ պատսպարան:

«Ժողովրդային երգարան» էջ 276, Գ. տպագրութիւն:
Հրատարակութիւն ԻԱ. Նրան թիւ 5, Պոսթոն:

ՈՂՋՈՅՆ

ԶԷՅԹՈՒՆԷՆ ԴԱՐՁՈՂ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ

ՊԵՐՃ ՄՈՒՇԼՈՒ

Միերան Տամատեան

Ողջոյն ձեզ, ընկերք, ընկերք քաջարի,
Դուք որ առաջնորդ եղաք քաջերի.
Դուք որ ձեր հոգւոյն անհուն եռանդով,
Ձեր բոլորանուէր հարազատ սըրտով
Եւ գորապետներ տօրոսեան մարտին.
Դուք որ մղեցիք կռիւ յաղթական
Ընդդէմ վատ թուրքին անարգ քրոնութեան.
Դուք որ տընկեցիք ի գլուխ հայ լեռանց
Սուրբ ազատութեան Դրօշ յաղթապանծ.
Ողջոյն ձեզ, համրոյր ձեր վեհ նակատին
Որ ծըռել տուաւ նակատն հրապարտին.
Եւ ուր դեռ քրտանց շիթեր շողշողան
Վըկայք գործերուդ առաքինական.
Համրոյր դըրոշմեմ աչացդ երջանիկ
Որ տեսան պարտեալ գոռոգ թըշնամիք,

Թողած քիւր մեռեալ, գէն՛, աւար հարուստ,
 Կարմիր փըրփըրած տեսան ըզձիհան,
 Տեսան ըզՏօրոս ազատ, յաղթական:
 Համրոյր զըրոշմեմ եւ ձեր ձեռքերուն
 Շաղախուած արեամբ դաժան թուրքերուն.
 Այն ձեր պատմական սուրբն ալ համրոյր,
 Ոյր տակէն անցան գերիք վեց հարիւր.
 Ողջոյն եւ ձեզմով կըտրին գէյթունցւոց
 Որոնց անպատում սըխրալի գործոց
 Պիտ ծափահարեն դարեր յաւիտեան,
 Որք փառք ու պարծանք են ողջ հայութեան...

Բայց է՞ր դուք քաջեր, տըխուր երեւիք,
 Դեմքերդ մըտածուն եւ մեկամաղձիկ...
 Թէ Զէյթուն դեռ չէ կատարեալ ազատ,
 - Զի գայն չուզեցին հըզօրք բըռնադատ,
 Թէ իւր յաղթութիւնք այնքան փառունակ
 Զի պըսակեցին մեր սուրբ նըպատակ,
 Գէթ պատուով դըրաւ իր սուրն ի պատեան,
 Գէթ պարծանք եղաւ մոռցուած հայութեան.
 Տեսաւ Եւրոպան, տեսան գէթ ազգեր
 Թէ Հայն ալ գիտէ կըռուիլ եւ յաղթել:
 Թող չի վըհատուի ուրեմն հայութիւն
 Քանի որ ունի Տօրոս ու Զէյթուն,
 Քանի հայորդի կըտրին առիւծներ
 Կ'ապրին ու գիտեն գործել անձնուէր.
 Քանի նորաբոյս ամեն պատանի
 Ազգի, հայրենեաց սիրով սընանի,
 Քանի ամենուս սիրտն է հաստատուն
 Մահ կամ ողջունել Սուրբ Ազատութեան:
 Գիտեմ, դուք, քաջեր, լալով հեռացաք
 Այն վայրերէն ուր քաջ քաջ կըռուեցաք.
 Ուր ինկան ձեր շատ անգին ընկերներ,
 Ուր գուցէ ստացաք դուք եւս վերքեր.
 Հոս Ալպիօնի հիւրընկալ յեզերք
 Գըտնէք հարազատ եղբարք եւ ընկերք.
 Հընչակի զինուորք, դառնաք առ Հընչակ,
 Հընչակն ալ տօնէ այդ ձեր յաղթանակ:
 Հանգչեցէք դափնեաց մէջ յօտար երկիր

Զերդ որդին ի գիրկ մօրը տարագիր.
 Գըզուեցէք յաւերժ ձեր յուշք Փարիզի,
 Եւ կու գայ մի օր - այն օր ցանկալի -
 Երբ յաղթանակէ մեր դատը արդար,
 Յայնժամ ցընծութեամբ դառնաք դուք Զէյթուն
 Վայր ձեր քաջայաղթ պատերազմներուն,
 Երկիւղած շըրթամբք, իբրեւ ուխտաւոր.
 Համբուրել գայն հող անմահ փառաւոր:
 1896, Մարտ, Լոնտոն

ԱԻԱՆԴԸ

Բաժանումի պահի մը մէջ սրտագին,
 Տօգոյն ցուրով լուսաստղին,
 Իմ սիրուհիս իր սերն հծծեց իմ կուրծքին,
 Համրոյր դըրաւ իմ նակտին:

Մատիս անցուց իր ձեռակերտ մատանի,
 Իբր անջինջ կապ մեր հոգւոյն,
 «Կ'երդնում յաւէտ զքեզ սիրել, պատանի»,
 Տուր ինձ խոստումըդ հանգոյն»:

Ու երգընեցայ ներկայութեամբն աստղերուն,
 Աւանդ առի հեռացայ.
 Կուրծքիս սեղմած կը դեզերիմ մոլորուն,
 Ա՛յ ուրիշ սէր չնանչցայ:

Այդ մատանին սերն ու ուխտն է իմ Ազգիս,
 Հայրենիքն իմ սիրուհիս,
 Ծունըր իջայ օր մ'առաջն իր խորանին,
 Նըւիրուեցայ իր ցաւին:

Ու կը տենչամ երթալ արեամբս ծիրանի
 Ներկել օր մ'իր սուրբ քազին,
 Եւ կամ վերքին ըլլալ ջերմ սպեղանի,
 Ոտքին փարիլ կաթոգին:

Հեռու փախիր ուրեմն, ո՛վ մահ ոճրապարտ,
 Ոտքիս տակ մի՛ դեզերիք,

Զունիմք բաժին հանոյք եւ փառք անձնագարդ,
Ես ինծի չեմ պատկանիր:

ՏԷՕՎԼԵԹ, «Արձագանգ Բարիզի»

ՄԱՂԹԵՐԳ ՀԱՅՐԱՊԵՏԿԱՆ

Ի վեհ բարձանց Սուրբ Սիովնի
Թռիչս առեալ Աղանի,
Ի Շնորհալոյն բարձացաւ Գահ,
Մի՛ մերժեսցի նմա մահ:
Արի՛ք, եղբա՛րք իմ՝ Հայկազնեան
Օ՛ն, մաղթեսցուք Միաբան.




ԳՐ. ԳԱՍԱՊԵԱՆ

ԿՐԿՆԵԼ

Պահեա՛, ո՛վ Տեր, անասան
ԶՍուրբ Աթոռ կիլիկեան,
Կեցցե՛, կեցցե՛ առ յաւետ
Տեր, Տեր (ԱՐԱՄ) Հայրապետ:

(Հեղինկութիւն Ջէյթունցի ԳՐԻԳՈՐ ԳԱՍԱՊԵԱՆԻ, Տնօրէն Ջէյթունի Հայոց վարժարանի, Մօր կողմէ մեծ հայրը ծանօթ գրագէտ Կարապետ Փոլատեան: Երգը յօրինուած ու երգուած է Սահակ Բ. Կաթողիկոսի 1905-ին Ջէյթուն այցելութեան առթիւ):

ԶԷՅԹՈՒՆՑԻՆ ԵՒ ԶԷՆՔԸ



Վարդավառ Խոնա, Գալուստ եւ Արթին Զօլագեան,
Զէյթունի իրենց արհեստանոց-գինագործարանին մէջ՝ 1913


Հին դարերէն գէյթունցիները իրենց գէնքերը իրենք կը պատրաստէին. հրացան, սուրբեր, դաշոյններ եւ դանակներ, հրացանը կաթճարի հրացանն էր մինչեւ վերջին ատենները, երբ այլեւս գեղեցիկ մարթիւններ ալ չինեյ սկսած էին:

Ձէյթունի հրացաններու կապարն ալ իրենք կը պատրաստէին, հրացանի փողը կ'ունենար մօտ մէկ մեթր երկայնութիւն, կոթը պատրաստուած կ'ըլլար տոկուն փայտէ եռանկիւնաձեւ, բլթակին հաստատուած տեղը կը նեղնար, կաճաբար զետեղուած կ'ըլլար փողին եւ բլթակին մէջտեղ, ուր գոյացած պզտիկ փոսիկը վառօղի համար էր, կաճաբարէն բոցը կը բռնկեցնէր վառօղը որ կարգին կը բռնկցնէր փողին մէջ զետեղուածը:

Փողը քովը կ'ունենար բարակ եւ քիչ մըն ալ փողէն երկայն, երկաթէ գա-

լազանիկ մը: Նոյն զաւազանիկով կ'ամրացնէին փողին մէջ գետեղուած վառօդն ու կապարը: Փողին մէջ կը գետեղէին քիչ մը վառօդ, վրան լաթի կտոր մը, դարձեալ քիչ մը վառօդ եւ վրան լաթի կտոր մը, վրան ալ գնդակը: Բոլորը կ'ամրացնէին զաւազանիկով փողին մէջէն մղելով դէպի վար, գործողութիւնը լմնալէն վերջ երկաթէ զաւազանիկը կը գետեղէր փողին վրայ:

Վառօդը եւ կապարը կ'ըլլար իրենց մէջքէն կապուած կապարճներու մէջ, որոնք փալասիս կը կոչուէին:



Ձէյթունի տեղական հրացանը եւ վառօդամանը

Ամէն տուն նման հրացաններէ մի քանի հատ կ'ունենար: Անոնք Ձէյթունի երկաթէն կը շինուէին եւ հրացաններ շինող բաւական վարպետներ կային:

Կարեւոր գէնքերէն մէկն ալ էր դաշոյնը (զաման) երկսայրի կ'ըլլար ան եւ ընդհանրապէս բոլոր զէյթունցիները կը կրէին իրենց մէջքը: Ան իրենց ամենօրեայ գէնքն էր, հին ատեններ կը գործածէին նաեւ փալաղանակ, երկայն, միաբերան դանակ մը: Դաշոյնը եւ փալաղանակը կ'ունենային պատեաններ: Վերջին ատենները կար նաեւ վեցգօնգուն, ատրճանակ:

Ձէյթունցիներ վառօդը կը պատրաստէին բորակէ, ծծումբէ եւ ածուխէ, որոնց խառնուրդի քանակին եւ պատրաստութեան ձեւին լաւ տեղեակ էին:

Ձէյթունի լաւ երկաթէն կը պատրաստէին նաեւ թիւեր, փորիչներ, դանակներ, յօտոցներ, կացիներ, անոնց շինութիւնը կրնար նախանձը գրգռել

օտարներուն եւ մրցիլ անոնց շինածներուն հետ:

Բոլոր երկաթագործներն էին նաեւ լաւ զինագործներ:

Ուրեմն զէյթունցիները իրենց գէնքերը իրենք կը պատրաստէին:

Ականատեսներից մէկը այսպէս է նկարագրում լեռնականների տունը. «Տան պատերը, ամէն տեսակ հրացաններով, դանակներով եւ սուրերով զարդարուած աւելի զօրանոցի մը երեւոյթն ունին, քան թէ տան, եւ այս ո՛չ թէ մէկ երկու անձանց մենաշնորհ մ'է, այլ ամբողջ հասարակութեան, քաղաքին մէջ զինեալ կը շրջին եւ տասը տարեկան հասակէն սկսեալ, թէ այր եւ թէ կին կրնայ գործածել ամէն տեսակ հրազէն: (Նոր Դար», 1887, 19 փետրուարի, թիւ 19):

Ինչպէս ճիշդ կերպով նկատել է Ձէյթուն այցելող անձը, այդ գիւղաքաղաքում աւելի շատ քաջեր են եղել տներում, քան կահկարասիներ: Զաւթիչների դէմ զէյթունցիների մղած չորս տասնեակից աւելի ճակատամարտները, նրանց հերոսապատումները, հայրենիքի համար մղուող պայքարը, ինչ խօսք, չէին կարող իրենց արտայայտութիւնը չգտնել ինչպէս գիւղաքաղաքի, այնպէս էլ շրջակայ գիւղերի հայ բնակչութեան ժողովրդական ստեղծագործութիւններում: Ձէյթունի հերոս ժողովրդի քաջագործութիւնների մասին գրել են ոչ միայն հայ բանաստեղծները, այլեւ նրանց իւրաքանչիւր յաղթանակ զովարանուել ու փառաբանուել է ժողովրդական երգիչների կողմից:

ԼԵՌՆԱԿԱՆՆԵՐՈՒ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԻՒՆԸ ՆԱԲՈԼԷՈՆ Գ.Ի

Լեռնականները 1862 թուականի ապստամբութիւնից ուղիղ 8 տարի յետոյ իրենց ուժերն են ուղարկել որպէս կամաւորներ Ֆրանս-Պրուսական պատերազմի ժամանակ ընդդէմ Գերմանիայի. «Ձէյթունցիք Նարոյէտնի համակրալից միջամտութիւնը, երախտագէտ ըլլալու համար, - գրում է Նուրիխանը, - Գաղիոյ 1870-ի Գաղիա-բրուսական պատերազմի ժամանակ իրենց քաջ մարտիկներին զոմանա զրկեցին կամաւոր գրուելու գաղիական բանակի մէջ» Մ. Նուրիխան, Պատմութիւն ժամանակակից «մասն Բ. էջ 830):

Ձէյթունի աշուղները իրենք նոյնպէս ռազմիկներ էին: Մի ձեռքին՝ գէնքը, միւսում՝ ջութակը, առանց երկնչելու նրանք մասնակցել են այն հերոսամարտերին, որ մղել է ժողովուրդը ընդդէմ թուրքական փաշաների զօրքերի: Նրանք իրենց երգերով ոգեւորել են ռազմիկներին ինչպէս կռիւներից առաջ, այնպէս էլ ընդամիջումներին եւ ճակատամարտերից յետոյ: Ժողովրդական ստեղծագործութիւնները երգի միջոցով գովաբանել են տուեալ ճակատամարտում տարած իրենց յաղթանակի փառքը: Պահպանուել եւ մեզ է հասել զէյթունցի աշուղ Գարաճա Օղլանի երգերից մի կտոր, որի մէջ նա ցանկութիւն է յայտնում պատերազմից առաջ հեծնել սպիտակ ձին եւ իր համագիւղացիներին ու թշնամուն ցոյց տալ, թէ ինչ է նշանակում պատերազմ: Այդ երգի մէջ կան հետեւեալ տողերը.

«Պիտի ուզէի ներմակ ձիուս վրայ հեծնուլ

Ցուցնելու թե պատերազմը ինչպես կ'ըլլայ»
(Ձէյթունի պատմագիրք» էջ 822)

Ձէյթունի ստեղծագործողների երգերից պահպանուել է նաեւ մէկը, որի մէջ կռուի գնացող լեռնականն իրար ետեւից թւում է ձիերի բազմաթիւ տեսակներ: Նա հերթականօրէն գովում է նրանցից իւրաքանչիւրի առաւելութիւնները, սակայն կանգ է առնում նրանցից մէկի վրայ, որին նստած նա կարող էր նետուել թշնամու վրայ եւ յաղթանակ տանել: (Հ. Մ. Պօղոսեան, «Ձէյթունի Պատմութիւնը» էջ 72-81):




Փանոս Ահարոնեան եւ իր անդրանիկ զաւակը՝ Յովհաննէս, Ձէյթունի իրենց հարազատ օնախին դրան առջեւ՝ ազգային ինքնապաշտպանութեան նամբով...

ԶԷՅԹՈՒՆ ՔԱՂԱՔԸ, ՊԱՏՄԱՐԱՆՆԵՐԷ ԵՒ ՃԱՄՐՈՐԴՆԵՐԷ ՄԷՋԲԵՐՈՒՄՆԵՐ

Բուն քաղաքը գրեթէ չորս հարիւր մեթր երկարութեան եւ երեք հարիւր մեթր լայնութեան վրայ շինուած, 1130 տուններէ կը բաղկանար. քաղաքը հեռուէն դիտողին սանդիսածեւ շինուածքի տպաւորութիւնը կը թողուր:

Շուրջը, քաղաքը ընդարձակուելու հող կամ գետին չունէր, տունները ընդհանրապէս երկյարկանի էին եւ մէկուն տանիքը միւսին սրահն էր: Քաղաքին մէջ հաստատուն, մեծ եւ փառաւոր շէնքերը եկեղեցիներն ու դպրոցներն էին:



ԶԷՅԹՈՒՆ

1896-ի մեծ պատերազմին պատուաւոր վերջաւորութենէ մը ամիս մը յետոյ, Ձէյթուն այցելեց Փրանսական զինուորական կցորդը: Ձէյթունէն մինչեւ մէկ ժամ անդին դիմաւորած էինք զինքը, ուրիշ խօսք չունէր բերնին մէջ. «տակաւին հեռո՞ւ է քաղաքը,» կը կրկնէր: Ձէյթունի արեւելեան կողմէն կ'առաջնորդէինք զինքը, այնպէս որ բերինք Մօտ ըսուած տեղը, ուրկից կարելի է մէկ ականարկով տեսնել ու դիտել քաղաքը: Ահա Ձէյթունը պարոն, Ձէյթո՞ւնը թէ արուարձանը պատասխանեց: Այո, Ձէյթունը եւ ո՛չ արուարձանը, «անամօթ թուրք» ըսաւ, ուրիշ ոչինչ: («Ձէյթունի պատմագիրք» էջ 468):

Բայց չըսաւ, «կեցցէ՛ Ձէյթուն, ապրի՛ Ձէյթուն», ամօթ իրեն... Ս. Ս.

ԶԷՅԹՈՒՆԻ ԿՐԹԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

1850-ին Ձէյթունի մէջ 23 հոգի պարզ ընթերցանութիւն եւ 3 հոգի ալ ընթերցանութեան հետ գիր գրող ու հաշուող կը գտնուի եղեր:

1862-ին ամբողջ բնակչութեան մէջ գիր գրողներ մատի վրայ կը համրուէին:

1914-ին Ձէյթուն իր կեդրոնականով, չորս ծաղկոցով, մանկապարտէզներով ու շրջակայ ունեցած դպրոցներով, ունէր 1592 երկսեռ աշակերտու-

Թիւն, 27 վարժարան ու 57 ուսուցիչ:

Ուրեմն, 1850-ին 23 հոգի կարդալ գիտցող կայ,

1862-ին գրողներուն թիւը մատի վրայ կը համրուի,

1909-10, 1120 հոգի երկսեռ աշակերտութիւն Զէյթուն եւ չրջակայքը,

1910-11, 1024 հոգի

1911-12, 1105 հոգի

1912-13, 1470 հոգի

1914, 1592 հոգի

1915 Մարտի սկիզբները գոցուեցան բոլոր վարժարանները:

Յովհաննէս Ահարոնեան, «Զէյթունի պատմագիրքը», 1980, էջ 924 եւ կի-
րիկեցի, «Մարաշ եւ Հերոս Զէյթուն», 1934, էջ 115):

Այս վերոյիշեալ թիւերէն կ'եզրակացնենք, որ 64 տարիներու ընթացքին
1850-1914 ուսումնաստենչ զէյթունցիները 1850-ին մինակ 26 ընթերցանութիւն
գիտցողներուն թիւը բարձրացուցին 1542 երկսեռ աշակերտութեան շնոր-
հիւ 27 վարժարաններու եւ 57 ուսուցիչներու, որոնք կը սորվեցնէին զանա-
զան նիւթերէ գատ երեք լեզուներ, հայերէն, թրքերէն եւ ֆրանսերէն:

Վիքթոր Լանկլուա ֆրանսացի նշանաւոր պատմաբանը գրած է Հետեւեալը:

«Les Arméniens de Zétoun forment une confédération placée vis-à-vis des
Turcs dans une situation analogue à celle des Monténégrins. Retranchés dans
des montagnes d'un accès difficile, ils ont toujours vécu en dehors de l'autorité
du Sultan. A aucune époque, ils n'ont été conquis, et ils veulent que le
Gouvernement ottoman respecte leur indépendance, ne fut ce qu'en vertu du
droit de possession d'Etat». (Victor Langlois, Les Arméniens de la Turquie et
les massacres du Taurus P.4 Paris 1863).

«Զէյթունի հայերը կը կազմեն դաշնակցութիւն մը հանդէպ թուրքերուն,
նմանը Մոնթենեգրիցիներուն: Քաշուած դժուարամատչելի լեռներուն մէջ,
ապրած են միշտ Մուլթանի իշխանութենէն դուրս:

Ոչ մէկ շրջան չեն տիրապետուած եւ կ'ուզեն որ Օսմանեան կառավա-
րութիւնը յարգէ իրենց անկախութիւնը զօրութեամբը երկիր ունենալու իրա-
ւունքին»:

Վիքթոր Լանկլուա, «Թուրքիոյ հայերը եւ Տաւրոսի ջարդերը», Փարիզ,
1863, էջ 4):

... Մարաշէն մէկուկէս օրուան ճամբայ աւելի Հեռուն, դրեթէ անմատչե-
լի լեռներու ծոցին մէջ, կը գտնուի Զէյթուն, հայ ազգի պատմութեան ամե-
նանշանաւոր քաղաքը, պատերազմիկ եւ հերոսական, որու պատմութիւնը
կռիւներու երկար շարք մըն է մահմետականին դէմ: «Իմ գաւազն ամօթալի
կերպով մեռաւ» կ'ըսէր հայ մամիկ մը Մարաշի մեր ազնիւ եւ քաջ փոխ հիւ-
պատոս Պր. Պառթէյէմիին: Ասիկա կը նշանակէր մեռնիլ անկողնոյ մէջ եւ
ոչ թէ թուրքերուն դէմ կռուած ատեն:

Լուսովիք Տը Բոնթէնսօ, «Ճամբորդութիւններ եւ ուսումնասիրութիւններ»:

ԶԵՅԹՈՒՆՆ ՈՒ ԶԵՅԹՈՒՆՑԻՆ

Հայ աշխարհագիրներ կը տեղեկացնեն մեզ թէ Հայաստանի, դրախտա-
վայր այդ երկրին մէկ խորշէն, գետ մը կը հոսի, ո'չ Արաքսի պէս սգաւոր, ոչ
ալ Տիգրիսի կամ Եփրատի պէս ահեղամուռնչ: Ձի հառաչեր, կը կարկաչէ, չի
խուժեր մոլեգնավազ, գոգչէ: Ջահանն է անիկա:

Այդ գետին լեռնահովիտին ծոցն է որ կը գտնուի Զէյթունը, հայ քաջա-
գործութեան այդ նուիրական Մեհեանը, ու այդ Մեհեանը՝ Հեթանոսներու
արհաւիրքին յաւիտենական առարկայ:

... Թողէք որ աչքերս գոց՝ երեւակայութեամբս պահ մը հոն սուզուիմ.
մեր քաջալանջ հայորդիներու այդ բնակավայրը, եւ կարօտագին ակնարկով
մը չափեմ անոր սարն ու ձորը, անոր վիմուտներն ու անդունդները, եւ անոր
մարդերն ու մարտերը, պողպատի պէս տոկուն, ու մրրիկներու պէս զար-
հուրելի:

Ահա հոյսիմ' ու լեռնաշղթան՝ որ Զէյթունի վերեւն ու շուրջը կը կանգ-
նի՝ վիթխարի, պարուրածեւ սղոցի մը պէս անոր հորիզոնը խածկուտելով
չորս դին: Ահա Զրիկը, Պէրիտը, ահա Պէրզինկան, Եօթնաղբարը, ահա Աւա-
զը, Կիւրտէնը, ահա Սոլախ-Տէտէն, ահա Դրախտիկը...:

Համբո՛յր անոնց հողերուն, համբո՛յր՝ անոնց կողերուն, համբո՛յր՝ անոնց
արտեւանը ցցուող սուրբ քարերուն՝ որք այնքան քիչ են թրջուած հայու
արիւնով:

Ու այդ ժեռուտ բարձունքէն օրհնութիւն վարիններուն, ձորանխատ Զէյ-
թունի բոլոր տուններուն ու տանիքներուն, վաստկուորին ու քնացողին, հրա-
զէնին փողը չփող հայդուկին ու ջահրակին առաջը կըքուն պառաւին, հաց
թխողին ու վառօդ պատրաստողին, ժիրաժիր մշակին եւ որրանը ճօճող
առույզ հարսնուկին, օրհնութիւն ու ողջո՛յն բոլորին...:

Բարձունք, բարձո՛ւնք ամէն դի: Անոնց վերեւ զէյթունցի քաջորդին իր
սլացիկ հասակը բարտած՝ դարերէ ի վեր հրազէն պայթեցուցած է ճակտին
անոր՝ որ այդ սահմանները դեղերելով փորձած է անոր Ազատութիւնը բռնա-
բարելու: Անդադար գինուած, անդադար կռուած, անդադար կուրծք տուած
է զէյթունցին, իր Անկախութիւնը վրդովող ամէն պատահական ոտնձգու-
թիւններուն դէմ:

Պէ՛տք է թուականներով խօսիլ անպատճառ: 1780-ին չէ՞ր որ հոն արշա-
ւող Էօմէր փաշան գնդակահար ինկաւ հերոս Յակոբէն: Երկու տարի վերջ,
Ալի փաշան չէ՞ր որ -համակ վրէժ ու ցասում- Կիւրէտին լեռը կը հասնէր
բանակով՝ ողբալի նահանջ մը կրելու համար քիչ յետոյ Ճիկիր հայ իշխանէն՝
որ լեռանը կիրճը բռնած էր իրեններով: 1790-ին չէ՞ր որ Կապանի մէջ տիրա-
պետող վատ հարստահարիչ մը իր մահը ողջունած է Հաճի Ղազարի հօրը
ճիգ դնակէն: 1900-ին չէ՞ր որ Շօվրոյեան՝ քաջամարտիկ Աբիլլէս մը հան-
դիսացած է՝ այն բռուռն պատերազմին մէջ որ տխուր օրն եղաւ Գալէնտէր
փաշաի կորակոր դրօշակիր մը դիտապաստ ինկաւ Եաղուպեանի շեշտ նշանա-
ռութեամբ, ու Քէօսէ փաշայի ալրուճին խուճապի մատնուած՝ ի փախուստ

աճապարեց: 1832-ին չէ՞ր որ, մէկ գիշերուան մէջ երեք հարիւր զօրք զոհ տուաւ Սիւլէյման փաշա, մինչեւ հայերէն մի միայն հինգ հոգի կ'իյնային...:

Մինչեւ 1859, զէջթուանի բնակչութիւնը, տղամարդէն մինչեւ ալեւորը, իր բազուկներուն կորովին, իր յանձնապատասխան ծեսին ու այն բարեբար երկաթէ նետիչին ապաւինած՝ բոլորած է արիւնալի եւ ահեղ պայքարներ, թշնամիին հետ կուրծք կուրծքի ու բոլոր այդ Ազատամարտներուն մէջ գրեթէ միշտ ողջունած է աղուոր ու պատուաւոր յաղթանակներ:

Երբ այսպէս ցանցառակի, կը թուենք հոս Զէյթունի հերոսները, երկիւղածօրէն յիշելու ենք նաեւ անունն այն անվեհեր հայուհոյն որ յանուն Հայր բնիքի կուռող մեր պատուական եղբայրներուն շարքին մէջ կու գայ ուրոյն եւ խոշոր տեղ մը գրաւելով, առնացի պերճ ու սոնք աշխոյժով մը: Սասունի հերոսուհի Եաքէին չի՞ նմանիր ասիկա, որ հայ կնոջ դարաւոր պատիւն անաղարտ պահեց՝ իր մարմնոյն դէպ ի անդունդ վազ տալով, կիւլի-զարին չի՞ նմանիր ասիկա, որ Լուսաւորչի լոյս-հաւատքին փարած մնաց՝ ի հեծուկս Մուսա Բէկի անլուր խժոժութեան: Զարմանուհի՛ն է, Ռուբինեանց հարստութենէն՝ Հեթում սպարապետին յանդուգն կինը՝ որ ճակատամարտ մղած է եգիպտացիներուն դէմ ու գերի բռնած Սուլթանին զաւակը: Անկա ապաստանեցաւ յետոյ Ուլնիոյ պախալէժ տեղուանքը, եւ լեռնցի հայ քաջերու հետ միացած, խիզախօրէն գրոհեց այլազգիներու դէմ եւ 65 տարի տիրեց կապանին: Ահաւասիկ Հայ ժան տ'Արք մը ձեզի, իր անունին պէս ձեր զարմանքին ու հիացումին առարկայ, որ իրաւամբ պանծալի համբաւ մը կը թողու հայ պատմութեան էջերուն մէջ: Այնպէս որ զէյթունցին, ի յարգանս անոր, Զարման անուամբ մկրտած է իր շատ մը աղջիկները:

Հարկ չկայ խօսիլ վերջին ժամանակներուն մէջ Զէյթունի անցուցած խռովայոյզ դէպքերուն վրայօք: Յաւիտենական ապստամբն է անիկա հարստահարութեանց դէմ, բռնապետութեան ապահարկ տուրքին դէմ, պատիւի, ինչքի, կեանքի ու հաւատքի պաշտպանութեան համար...: Հարազատ զաւակ՝ Մայր-Ազատութեան, բռնակալութիւնն ո՛չ իսկ խորթ եղբայր մըն է իրեն համար: Իր երկրորդ Աւետարանն է Օրէնքը, եւ գլխաւոր օրէնքը: Բայց երբ չարաչար գործածեն զայն, երբ ապօրինի տուրքեր զան խախտել իր գեղջուկ մարդու պիտեմէն, զէյթունցին իսկոյն հակառակ կողմը կը դարձունէ այդ Աւետարանը, ու կը նետուի դէպի Ազատամարտ: Ապացոյց՝ 1896 աղէտալի տարին: Դիւցազն շինականներ Աղասիի հետ պաշարեցին զօրանոցն եւ վաթսուն ժամուան կատաղի կռիւէ մը վերջ, արձակուող դժոխային ռումբերուն մէջ աներկեւան, անոնք տեսան անձնատուր ըլլալը վեց հազարանոց հակազօրքին, հրամանատար եւ ռազմամթերք միասին...:

Ոչ միայն քաջութեամբ կեցցէ մարդ, այլ եւ... հացիւ,՝ Հայութեան պարծանք այս աննման ժողովուրդը այս պահուս դատարկ կը տեսնէ իր շտեմարանները, ու աղիքները քաղցէն գալարուն՝ զո՛ւր կը հայցէ իր սուրբերէն օգնութիւն: Իր լեռներուն ստորոտը տարածուող պզտիկ դաշտերը կ'երեւայ թէ քիչ հունձք են տուեր վերջացող տարին: Ալպսթանէն, Օարբուզէն ու կոկիսոնէն ալ չեն կրցեր հայթայթել իրենց ցորենն ու գարին: Ինչ օգուտ անա-

ռիկ դիրքերին. իրենց ինչ օգուտ հիմա Պէրիա լեռը՝ իր երկաթի նշանաւոր հանքով, եւ առատ պաշարը գորշուկ վառօդին: Հողը, հանքն ու վառօդը փոր չեն կշտացներ: Ատրճանակէն կոշկոռ կապած այն ձեռքերը որ յաղթութեան դրօշակիր մնացած են ընդմիշտ, մեր շուրթերուն հիախանդ համբոյրին արժանի հուժկու այն ձեռքերը - կ'ըսեմ - որ կտոր կտոր են ըրած գերութեան լուծը գարշելի, կ'ուզէք որ երկարին հիմա ի մոյր...: Պատառ մը սեւ հացի համար, ափ մը չո՞ր սերմնցուկ փոխարէն...: Գաւաթ մը ջո՛ւր, զէյթունցիներ, գաւաթ մը ջուր ինծի ձեր Սուս աղբիւրէն, գաւաթ մըն ալ Այրան-Բունարէն: Աչքերս կ'այրին կոր արցունքէ...:

ԹԵՂԵԿ

Այս պատմական-գրական հակիրճ բանախօսութիւնը պերճ առողանութեամբ մը եւ գրուածքին ոգւոյ հաւատարիմ կարդաց Հօմ Բօլէճի շրջանաւարտ Օր. Նոյեմի Բրիկեան, Ուրբաթ գիշեր, Սիւլտար, Բողոքականներու ժողովասրահ տեղի ունեցող նուազահանգէսին, որ լաւ հասոյթ մը արտադրեց սովեալ զէյթունցուց, եւ այնքան փայլուն ու չքեղ եղաւ արդարեւ, պատիւ բերելով երեկոյթին առաջնորդ Ստեփան Էֆ. Բաբելեանի: Աւելցնենք թէ Օր. Բրիկեան նախաձեռնարկն եղած է այս բարենպաստ երեկոյթին կազմակերպութեան:

«Բիւզանդիոն» 1909, թ. 3758, փետր. 17

«Զէյթունի պատմագիրք» էջ 932-933-934

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ Ի ԿԻԼԻԿԻԱ ԵՒ ԼԵՐԻՆՍ ՏԱԻՐՈՍԻ

Աշխատութիւն վ. ԱՆԿԼՈՒԱ

ԿՈՒՈՒՆԿԻ նախընթաց համարումը կարդացինք այն ողբալի անցքերի նկարագրութիւնը, որ նորերս պատահել են կիլիկիոյ մէջ: Նոյն խօսքերը կրկնում են եւ ուրիշ ազգային ու Եւրոպական լրագիրներ, եւ ամէնքը միասին ցաւում ու խղճում են այն անպաշտպան ու անմեղ Հայերի վերայ, որ անգուժ մահմէտականաց սրբերուն զոհ են գնացել, եւ որոնց ռազմակոյտ դիակները միջնադարեան բարբարոս ժամանակների տեսարաններից մինը պատկերացնում են հանդիսատեսին առջեւ: Ո՛ր Հայը կարող է արդարեւ անտարբեր աչքով նայի իւր համարիւն եղբարց այս դառն ճակատագրին վերայ. այն եղբարց եմ ասում, որ Ռուբինեանց զահին վերջին պայազատին, թշուառ Լեռնին գերի գնալուց յետոյ, լաւ համարեցան տիրապետող ազգերի սպառնալիքներին, նոցա բռնակալութեանը, նոցա անիրաւութիւններին տանել համբերութեամբ իրանց հայրենի երկրումը, քան թէ օտար երկնքի տակ թափառել, օտար երկրի օդը ծծել: Դարձեալ ո՞ր մարդկային սիրտը չէ չարժեւում տեսնելով ափ մի լեռնաբնակ ժողովրդեան անյաղթելի արիւթիւնը, որ իրան ազատութեանը, կրօնն ու ազգայնութիւնը պահպանելու համար, չորս դարուց աւելի քաջութեամբ պատերազմում է եւ Տաւրոսի ապառաժները իւր արիւնովը ոռոգում:

Սակայն Զէյթունի եւ Հաճինի քաջ բնակիչների, ինչպէս նաեւ բոլոր Կիլիկիոյ ազգայինների վերայ ցաւալի է ասել, գրեթէ ամենեւին տեղեկութիւն չունենք: Պարոն Վիկտոր Լանկլուա՝ հայագէտ Ֆրանսիացին առաջինն եղաւ, որ փոքր Հայոց մէջ արած ուսումնական ճանապարհորդութեամբը ծանօթացրուց Եւրոպացւոց Կիլիկիան, նորա հնութիւնները, նորա յիշատակի արժանի տեղերը, նորա բնակչաց բարքն ու սովորութիւնները, լեզուն, վաճառականութիւնը եւ արհեստները:

Եւ թէպէտ նրանից առաջ ուրիշ ճանապարհորդներ ման են եկել Կիլիկիա, ինչպէս Վիլրանդ, Պետրոս Բըլոն, Պօղոս Ղուկաս, Օտտեր, Մակդոնալտ, Տեկսիէ, Վարկեր եւ ուրիշներ, բայց սոքա ամէնն էլ, Տաւրոսի եւ նորա շրջակայ տեղերի վերայ ուշադրութիւն չեն դարձրել, եւ միայն Միջերկրականին եզերքումն եղած քաղաքները ման են եկել ու ստորագրել են: Իսկ մեզանից, միայն Հ. Ղուկաս Ինճիճեան՝ Մխիթարեան վարդապետը փոքր Հայոց յիշատակի արժանի տեղերը ստորագրեց, այն էլ խիստ համառօտ ու անկատար կերպով: Հեղինակը զանց չէ առնում հայ ճանապարհորդին աշխատութիւնից մի քանի վկայութիւններ մէջ բերել, մանաւանդ երբ խօսքը գալիս է այն հնութիւնների վերայ, որ Ինճիճեանի ժամանակը տակաւին կանգուն էին, իսկ այժմ քար ու քանդ են դառել ու հողի հետ հաւասարուել:

Պ. Լանկլուայի աշխատութեան յարգը առաւելապէս երեւում է այս միջոցումը, երբ վերջին անցքերին պատճառով Տաւրոսի Հայերը լուսաւորեալ աշխարհի համակրութիւնը վաստկել են. իւրաքանչիւր ոք ցանկանում է իմանալ այս ժողովրդի անցեալ եւ ներկայ պատմութիւնը:

«Զէյթունի պատմագիրը» էջ 109

«Կռունկ Հայոց Աշխարհի», 1882 թիֆլիս, էջ 781 Գ. տարի

Ի՞նչ ոյժ կը ներկայացնէին Զէյթունցիք, նիւթապէս թէ բարոյապէս, Ռէմզի փաշայի բանակին դիմաց, ինչպէս նաեւ Ալի պէյի բանակին դիմաց որ արեւմուտքէն կու գար բայց քանի մ'օր ուշացած էր:

Զէյթուն քաղաքը, տեղացւոց ընդունածին եւ պատմագիրներու ալ ցուցմունքին համաձայն, կը բաղկանար 1500 տունէ, շատ շատ 8-10 հազար բնակչութեամբ: Իսկ Զէյթունի շրջակայ հայ գիւղերուն ընդհանուր մարդահամարը հազիւ քիչ մ'աւելի էր, ուր մասնաւոր արժէք մը կը ներկայացնէին Ֆրոնտըր եւ Արեգինը: Շատեր հիասթափ եղած էին երբ Զէյթունի համբաւը լսելէ յետոյ, եկած ու աչքով տեսած էին քանակապէս դիւզնաքեայ իրականութիւնը: Կը պատմեն որ Հալէպի խալապիկան ծերունի հիւպատոսը Հանրի Վիթթօ, երբ թուրք զօրքերու անվերջանալի վրաններու մէջէն անցնելէ յետոյ Զէյթունի դիմաց կը գտնուի, կը խնդրէ իր շուրջիներէն որ գիւղերուն առջեւ կանգ չառնեն եւ ուղղուին դէպի բուն քաղաքը, բայց երբ իրեն կ'ըսեն թէ այդ է Զէյթունը եւ ուրիշ քաղաք գոյութիւն չունի, ապահար կը դիտէ տուններու այդ փոքրիկ զանգուածը որ իր հերոսութեամբ այնչափ զբաղեցուցած էր Եւրոպացի ու եւրոպական պետութիւնները միանգամայն: այդ վայրկեանին է անշուշտ որ շարադրուեցան իր մտքին մէջ այս խանդավառ

եւ յուզիչ տողերը զոր կը կարդանք իր պատմութեան երկրորդ հատորին հինգերորդ գլխուն մէջ.

«Ողջո՛յն քեզ, Զէյթուն, դիւցա՛զն քաղաք: Ծորչափ արեւը փայլի մարդկային դժբախտութեանց վրայ, քու անունդ պիտի ապրի իբրեւ խորհրդաւնշա՛նը տառապող ժողովուրդներուն, պարթումի շեփորը անոնց համար որոնք պառկած են ստրկութեան տիղմին մէջ, դրօշակը ապագայ պատերզմիկներու ի պաշտպանութիւն իրենց ընտանեկան սրբութեանց»:

Այդ տասը հազար բնակչութեան մէջէն հազիւ կարելի էր 3 հազար հոգի հանել զէնք բռնելու կարող, հաշուելով նաեւ ծերունիները եւ 15 տարեկանէ վեր պատանիները, բայց պէտք է գիտնալ որ այս քանակութեան ալ կէսէն աւելին անզէն էր, որովհետեւ Զէյթունցիք, աղքատիկ ժողովուրդ, երբեք չէին կրցած պէտք եղածին չափ զէնք եւ ռազմամթերք ունենալ իրենց տրամադրութեան տակ: Իսկ շրջակայ գիւղացի Հայերը աւելի գէշ զինուած էին: Բացառութիւն կը կազմէին Զէյթունի մէջ մի քանի հարուստ ընտանիքներ, որոնց առատածնուն եւ ազգասէր հոգեբանութիւնը սակայն ոչինչ կը փոխէր ընդհանուր կացութենէն: Այնպէս որ ապրուստի տեւական անձկութեան քով, դեղվէռճիճն ալ (վառօդ եւ զնդակներ) տեւական մտահոգութիւն մը դարձած էր ռազմիկ Զէյթունցիին համար: Պատահած է յաճախ որ խոշոր աղէտներէ յետոյ, ինչպէս հրդեհ, սով, համաճարակ եւն. դուրսէն բաւական օգնութիւն եկած է դէպի Զէյթուն, բայց մի միայն նիւթական ապրուստի տեսակէտով, իսկ իրենց ռազմական կեանքի մասին ոչ մէկ քաջալերութիւն ընդհանուր ազգէն, նոյնիսկ այն շրջաններուն երբ կարելի էր այդ բանը, ոչ իսկ յեղափոխականներէն, բացի գաղտնի ծափերէ ու համակրութենէ:

Գ. ՏէՕվլէթ «Սանտօս» էջ 33-34

«... Ատելութեան ամենէն աններելի պատճառը, 1898-ին Հայոց պարտադրուած ծանր կացութեան վերջիշումին մէջ պէտք է փնտռել: Այն ատենէն իսկ «բարի» սուլթան Ապտիւլ Համիտը, ուրիշ անկանոն զինուորներէ զատ հաստատած էր նաեւ Համիտիէները - որոնց մէջ բանտէն փախած պատժապարտներէ, աւազակներէ եւ թափառաշրջիկներէ բաղկացած գունդեր - այն նպատակով որ դոյնգոյն զօրք մը ունենայ ձեռքի տակ, պատրաստ անխղճօրէն բոլորքելու այն դէպքերը, որոնցմով ան ամէն տեղ կը յուսար գոցել հայ ժողովուրդին բարեկարգախնդիր բերանը: Մինչ այս անկանոնները ուրիշ ամէն կողմ իրենց կազմութեան յատուկ «լաւագոյն յաջողութիւնները» կ'ունենային, Զէյթունի մէջ արիւնոտ պարտութեան մը ենթարկուեցան, եւ նոյնիսկ անոնց օգնելու համար վազող կանոնաւոր վաշտերը եւս սարսափելի կորուստներով, նեղ փողոցներէն բերելով դուրս չպարտուեցան զէյթունցիներու կողմէ: Այս պարտութենէն վերջ, մեծագոյն ուժով՝ քաղաքն ալ պաշարեցին, բայց ապարդիւն: Զէյթուն մնաց անառիկ: Ու երբ վերջապէս եւրոպական դիւանագիտութիւնը հայ քաջացիին ի նպաստ միջամտեց եւ Զէյթունի համար կատարեալ ընդհանուր ներում առաջ բերին զեսպանները Բ. Դրան մօտ, Սուլթանը ամօթէն ինչ ընելը չէր գիտեր, մինչ թուրքերը կ'սկսէ-

ին ակուայ կրճտել վհատումի մը մատնուած...»:

ՅՐԱՆՑ ՎԵՐՅԷԼ

«Մուսա Տադի 40 Օրերը», Ա. հատոր էջ 95-98

«Արդարեւ, մեծ պետութեանց բռնած դիրքը Պերլինի վեհաժողովին, անոնց կատարած ճշմարտութիւնները, բարենորոգմանց ծրագիրները, թուրքերէն կորզուած հանդիսաւոր խոստումները, շատ արդարացի կերպով հայոց մէջ արծարծած էին նոր յոյսեր, եւ հաւատքը դէպի մօտալուտ փրկութեան մը: Հայոց միամտութիւնը, որ կ'անգիտանար բարձր քաղաքականութեան մանուածապատ ուղիները, եւ այն կոյր հաւատքը որ ստեղծուած է եօթնաստուական թուականներուն, չէր ուզեր բմբուռն սակայն թէ տրուած խօսք մը չէր կրնար դրժուած մը ըլլալ, երբ մանաւանդ այդ խօսքը կու գար - հայոց դատին կարեկցող - մեծ պետութիւններէն...»:

Այս նպատակով, Եւրոպայի Հայկական Յեղ. շրջանակները, խօսքէն գործի անցնելով, ֆանացին կազմակերպել բնագաւառի հայութիւնը, գերութեան լուծը թօթափելու համար: Ազատագրական այդ պայքարը մեծ ոգեւորութիւն յառաջ բերաւ մանաւանդ 1895-ի Զէյթունի ապստամբական շարժմամբ, որ իր սկզբնական քայլին իսկ փայլուն յաղթանակներ արձանագրեց, յաղթանակներ տարուած թուրքերու վրայ փոքրաթիւ հայ մարտիկներու կողմէ, Տաւրոսեան սարալանջներուն մէջ: Այդ ապստամբութիւնը չէր ձգտեր անջատել Հայաստանը թուրքիայէն, նկատի ունենալով այն ատեն գտուած անկարելիութիւնը հայ եւ թուրք տարրերու, եւ ոչ ալ կրնար ստեղծել հայ կական պետութիւն մը, ազգային բացարձակ մեծամասնութեան մը հիման վրայ: Այլ այդ շարժումով, ապստամբները մէկ բան ունէին իրենց նպատակային է ձեռք բերել մարդկայնօրէն տանելի գոյալիճակ մը, եւ ազգային ներքին ինքնավարութիւն:

Բայց Սուլթանը վճռած էր ամէն զեւով բնաջնջել հայութիւնը, եւ Զէյթունի այս շարժման ծաւալումը Անատոլուի մէջ հետագայ մեծ աղէտներու պատրուակ բռնելով, ուզեց միանգամ ընդ միշտ իրագործել իր դաժան ծրագիրները, 1896-ի հայկական ջարդերը կազմակերպելով...»:

ՅՐԻՃՈՑ ՆԱՆՍԷՆ

«Լ'Արմէնի է լը բրօշ Օրիան», 1928 «Զէյթունի պատմագիրք» էջ 774-775

«Զէյթունի ամրակուռ զօրանոցին գրաւումէն յետոյ, Մարաշի կառավարական շրջանակները չփոթի մատնուեցան, որովհետեւ զինուորական ուժերնին շատ քիչ ու տկար էր. այնպէս որ եթէ Զէյթունի Շարժումը առաջ նորոգողներ, պատերազմական գործերու վարժ անձեր եղած ըլլային, շատ դիւրին պիտի ըլլար զօրանոցին եւ կառավարչատան գրաւումէն յետոյ ուղղակի Մարաշի վրայ քաշել ու քաղաքին ալ տիրանալ, եւ Մարաշի եւ Անթապի հայերուն միանալով, Հալէպն իսկ գրաւելը»:

ԱՆԱԹՈՒԹՈՒ ԼԱԹԻՆՕ - ԷՆՐԻԿ ՎԵՐՅԷ

Խաւական հիւպատոս Հալէպի, 1896 «Կլի Արմէնի է Զէյթուն», Ա. հատոր էջ 179

«Արդարեւ Եւրոպական Տէրութիւնները միջամտելով 1895-ի Զէյթունի Ապստամբութեան, ոչ միայն փրկեցին զէյթունցիները, այլ եւ մեծ ծառայութիւն մը մատուցին Սուլթան Համիտին, զինք դժուարին մղձաւանջէ մը ու անելէ մը ազատելով: Եւրոպական միջամտութեամբ, Համիտ, անտարակոյս լայն շունչ մը առաւ...»:

Մ. ՏԸ ԼԱ ՊՈՒԼԻՆԻԷՐԸ

Կ. Պոլսոյ Ֆրանսական Դեսպանի տեղակալ
«Դեղին գիրք» 1895-96, էջ 84, Բարիդ

«Յունաստանի ապագայ թագաւոր Կոստանդինը, պարտուեցաւ էթէմ ֆաշայէն. այս վերջինը այն թուրք զօրավարն էր, որ նախապէս, 30000 զօրքով չի կարողացաւ յաղթել Ապստամբ Զէյթունի 5000 մարտիկներուն, ինչ որ ի վերջոյ, Եւրոպական միջամտութիւն մը զսպեց այդ շարժումը»:

ԳՈԼՈՆԷԼ ՊՐԵՄՈՆՏ

Գնդապետ Արեւելեան լեգիոնի 1919
«Նոթ հիսթորիք է ժէոկր. սիւր լ'արմէնի», էջ 133

«1895-ին հինգ հազար զէյթունցիներ, իրենց սովորական հին զէնքերով զինուած, դիմադրեցին եւ պարտութեան մատնեցին աւելի քան 35000 թուրք կանոնաւոր զինուորներ, որոնք ունէին արդիական բանակի ամէն առաւելութիւններ: Զէյթունը նուաճելու համար ուղարկուած վաշտերը, ձմրան բուքին ու ձիւնին սառեցան Տաւրոսի լեռներուն մէջ, մինչեւ որ Եւրոպական միջամտութիւնը եկաւ փրկել թուրք բանակի երբեմնի համբաւեալ կռուասիրութիւնը...»:

ՄԻՍ ԷՄԻԼԻ Ժ. ՌՕՊԻՆՍԸՆ

«Խաբի Մակագին», Օգոստ. 1915, էջ 784

«Համիտեան կոտորածներու ժամանակ, Զէյթունցիք յաջողեցան ոչ միայն պաշտպանել իրենց քաղաքը իր շրջակայ դիւղերով, այլ շաքաթներ ամբողջ քաջարար դիմադրել թրքական բանակներուն, մինչեւ որ, մեծ պետութեանց հիւպատոսները միջամտեցին եւ հաշտութիւն գոյացուցին: Այս հերոսական դիմադրութիւնը, թէեւ պատճառ եղաւ որ զէյթունցիք չի ջարդուին 1895-96-ի կոտորածներուն, սակայն իր դէմ լարեց թուրք կառավարութեան ատելութիւնը»:

Գերման Հայասէր Տօբթ. ՃՕՀԱՆԷՍ ԼԷՐՍԻԻՍ

«Է է մասաքը տ'Արմէնի», Գաղտնի տեղեկագիր, էջ 10
«Զէյթունի տարեգիրք» էջ 773

Արիւնալին վաւերագրերից եւ ժամանակի մամուլում եղած յօդուածներից, Զէյթունցու վկայութիւնից երեւում է, որ զէնքի տակ են դրուել բոլորը՝ պատանիները, անգամ ծերերը եւ նոյնիսկ զէնք վերցնելու ընդունակ

կանայք:

Գիւղաքաղաքի իշխանները, ինչպէս իւրաքանչիւր կռուից առաջ, այս անգամ նոյնպէս խորհուրդ են հրաւիրում, որը քննարկելով ստեղծուած վիճակը, որոշում է 5000 գինուած լեռնական ուժերով դիմադրել թշնամուն մինչեւ արեան վերջին կաթիլը: Խորհրդում որոշում է ընդունել, որ եթէ պատահի այնպէս, որ պատերազմի ժամանակ զէյթունցիները պարտուեն, ապա գիւղաքաղաքի աղջիկներն ու կանայք թշնամու ձեռքը չընկնելու համար իրենց պէտք է նետեն Շուղրի կամրջից եւ վերջ տան իրենց կեանքին: Այս որոշումը կենսագործելու համար պատերազմական գործողութիւնների հետ առնչութիւն չունեցող կանանց ու աղջիկներին հաւաքում են Ծաղուպեան թաղի մօտ գտնուող տներում:

Ինչպէս տեսնում ենք, արծուարնի քաջերը անում էին ամէն ինչ՝ այդ օրհասական կռուին պատրաստելու համար՝ օգտագործելով իրենց ունեցած բոլոր հնարաւորութիւնները: Նրանք միասնաբար որոշում են մահն ընդունել այդ կռոււմ, բայց ոչ մի գիշում չանել թշնամուն: Այդ ճակատամարտն անցածներից ամենասարսափելին պէտք է լինէր: Ազիզ փաշան, ինչպէս ասուել է արդէն, նպատակ ունէր հիմնայատակ կործանել գիւղաքաղաքը եւ բնաջնջել նրա ողջ բնակչութեանը, որը քանի-քանի անգամ շառաչուն հարուածներ էր հասցրել Մարաշի փաշաներին: Իւրաքանչիւր լեռնական գիտէր, որ դրուած էր այդ մի բոլոր ժողովրդի լինել-չլինելու հարցը: Հայ ժողովուրդն իր հազարամեայ պատմութեան ընթացքում բազմաթիւ ճակատամարտերում պաշտպանել է հայրենիքի պատիւը եւ իր արեան գնով մաքառել զաւթիչների դէմ, սակայն Զէյթունի այս ճակատամարտը իւրաքանչիւր կենդանի մարդիկ համարում էին: Այս ճակատամարտում աչքի ընկած հերոսների սխրագործութիւններն ապրեցին ու ապրում են հայ ժողովրդի սրտում: Դրանք դարձան հայրենիքի ազատագրութեան եւ անկախութեան համար մղուող պայքարի մի հիանալի օրինակ, կարեւոր նշանակութիւն ունեցան հետագայում ժողովրդին ոգեւորելու, նրա ուժերը զաւթիչների ու հարստահարողների դէմ ուղղելու, ազգային-ազատագրական շարժումն էլ աւելի բորբոքելու եւ ծաւալելու համար: Տաւրոսեան լեռներում պաշտպանուեց ազատութիւնը, որը միշտ էլ հանդիսացել էր հայ ժողովրդի տենչանքը:

Թուրքական խառնիճաղանձ այդ բանակի դէմ կանգնած տաւրոսեան լեռնականների ջոկատները հաստատապէս որոշեցին մեռնել, սակայն թոյլ չտալ, որ թուրքական զինուորները ներխուժեն իրենց տները, եւ նրանց ձեռքի սմբակները կոխ տան այն հարազատ բնակավայրը, ուր նրանք եւ իրենց նախնիները ծնուել ու ապրել էին դարեր շարունակ եւ մի քանի տասնեակ անգամ մաքառել թշնամու դէմ: Ինքնապաշտպանութեան պատմութեան ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ լեռնականները մինչեւ վերջ ամուր կանգնեցին իրենց որոշման վրայ եւ այն կատարեցին սրբութեամբ:

Հ. Մ. ՊՕՂՈՍԵԱՆ

«Զէյթունի պատմութիւնը», էջ 168-169

1895-1896-ի ԱՊՍԱՄԱՐՈՒԹԻՒՆԸ

Գարանլըզ Տէրէ (Մութ ձոր) ժողովին Ատենապետը՝ Արթին Գօճայեան (Խէրէղէճի գիւղէն) կ'ըսէ Աղասին. «Դուք սիրելի ֆէտայիներ, ձեզ հետ ալ ամբողջ ազգը, եթէ դեռ նոր ազատութիւն կը քարոզէք, զէյթունցի սկզբնաւորութենէ մինչեւ 1890, ազատութեան համար կռուել, թուրք, թուրքմէն, պօղտուղանի վրանարնակ ժողովուրդը եւ չէրքէզ ջարդեր, եւ այս խակ պատճառով, չէ կրցած բազմանալ, համեստ նիւթական մը ունենալ, այլ ընդհակառակը թշուառ մնացած է, հիւժեր, մաշեր եւ փճանալու վրայ է»:

Ազատութեան տենչով ու կրակով վառուած մեր եկեղեցական պապերը վեց հարիւր տարիներէ ի վեր ազգիս հայոց ազատութիւն կը պոռան եկեղեցիներու մէջ, մոմ կը վառեն, խուկն կը ծխեն:

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՀԱՐՈՆԵԱՆ

«Զէյթունի պատմագիր» էջ 508-509

Կասկածից դուրս է, որ առանց դրսի միջամտութեան էլ լեռնականների մօտ կը բռնկուէր մի նոր հերոսական ապստամբութիւն: Սակայն չի կարելի չնշել նաեւ այն, որ հնչակեան կուսակցութեան կենտրոնը եւ նրա ակտիւ թ գործիչները իրենց պրոպագանդով ու գործողութիւններով արագացրին եւ աւելի կազմակերպուած բնոյթ տուին դրան: Որ Զէյթունի այդ ապստամբութիւնը ժողովրդական բնոյթ է ունեցել, այդ մասին նշում է ապստամբութիւնը գլխաւորող հնչակեան գործիչ Աղասին:

Ս. Շահէնի «Զէյթուն» տրամալի առաջաբանում նա գրում է. «Այս ապստամբութիւնը արդիւնք էր չորս տարուայան խոնջալիստութեանց եւ հանգամանքն ունի զուտ յեղափոխական ջանքերու եւ ազգային անկախութեան եւ ինքնատէր գիտակցութեան»:

Անիկա արդիւնք չէր ուսական, անգղիական, գաղիական կամ ռուս եւրոպական պետութիւնից շահագէտ դրդումներուն: Այդ ապստամբութիւնը վարողները չէին կրել ո'չ ուսական կամաւորի համազգեստը, ո'չ գաղիական տարազը, ո'չ անոնց շքանշանները, ո'չ անոնց զինուորական տիտղոսները: Մի ամսական կը ստանային անոնցմէ, ոչ ալ ռազմական օգնութիւն: Այս ապստամբութիւնը զուտ ազգային եւ յեղափոխական էր իր կազմակերպութեամբ, իր ընձեռնումով եւ ծրագրով: Նա կազմուած էր հայ ցեղին շահուն ծառայելու եւ հայ ցեղը իր ճակատագրին տէրն ընելու համար» (Ս. ՇԱՀԷՆ, «Զէյթուն», Նիւ Եորք 1920

1911 թուականի «մշակ»-ի հրատարակած «Ուլիս» յոդուածում միանգամայն ճիշդ կերպով է բնութագրուած լեռնականների ապստամբութիւնը

եւ Հնչակեան կուսակցութեան գործունէութիւնը. «Զէյթունցոց այս քիչ շատ նպաստաւոր կացութիւնը իրենց կուսակցութեանց իւրացնելու եւ վերագործելու ֆանքերը ըրած են 1895-ին Հնչակեանները եւ վերջերս՝ դաշնակցականները: Եւ սակայն ճշմարտութիւնն այն է, որ զէյթունցիները ուրիշ բան չէ, ու չ'ուզեր մնալ թէ՛ ոչ ամէն բանէ առաջ զէյթունցի: Ահա իր կուսակցութիւնը: Մնացածը սուտ ու փուչ բաներ են՝ աւելի քան իրականութիւնը՝ այդպէս հռչակողներուն ռեկլամի տեղ ծառայելու համար: Ապա թէ ոչ՝ ծիծաղելիութիւն մը չէ՞ զէյթունցիներ յեղափոխական ընելու անոնց պարծեցումը: Այն օր շատ տարիներ առաջ՝ երբ զէյթունցիներ կռիւ կը մղէր իր դիրքին պահպանութեան համար, ո՞ր էին մեր երկնառաք ազատարարները» («Մշակ», 1911, 23 Յունիսի, թիւ 157):

Դեռեւս ապստամբութիւնից առաջ Լոնտոնում նստած Հնչակեան գործիչները նախապատրաստել էին մի ծրագիր, որի համաձայն ապստամբութիւնը պէտք է ընդգրկէր ոչ միայն Զէյթունը, այլեւ ամբողջ Կիլիկիան: Այդ միամիտ ծրագիրը նպատակ ունէր ոտքի հանել Կիլիկիայի հայ ազգաբնակչութեանը, որից յետոյ եւրոպական դիւանագիտութեան առջեւ պէտք է բարձրացուէր հայկական հարցը:

Հնչակեան ծրագրի մասին «Հաճընի ընդհանուր պատմութիւն» գրքում կարգում ենք. «Զեզի հաղորդուելիք գաղտնիքը այս է, թէ՛ ինչպէս որ լսած էք, մեր հայրենակիցներէն Աղասին (Կարապետ Թուրսարզեան) իր քանի մը ընկերներով Զէյթուն գալով այնտեղի թուրք կառավարութեանը վտարած է եւ Զէյթունը իր ժողովրդով վերածած է հայկական կառավարութեան մը ըստ Հնչակեան կուսակցութեան հրահանգին ու ծրագրին, եւ սոյն ծրագրին համաձայն Հաճընն ու Տէօրթ Եոլն ալ միացնելով Կիլիկեան հայկական կառավարութեան մը պիտի կազմուէր. ահաւասիկ, ասորը համար է, որ Հաճըն եկած են Ապահ եւ Շահէն անուանով երկու կարող ռազմագէտ անձինք, եւ կը փափաքուի, որ Հաճընցիներն ալ կազմակերպուելով անմիջապէս ոտքի ելլեն ու գրաւեն թրքական 70-80 ուժերէ բաղկացող զօրանոցն ու կառավարութիւնը: Եթէ մենք մերժելու ըլլանք սոյն ծրագիրը, Ապահ եւ իր ընկերները հայ կամաւորներու միջոցաւ պիտի գործադրեն զանոնք, եւ պիտի պատժեն այս ծրագրին դէմ գտնուող ոեւէ անհատ, եւ պէտք է գիտնաք թէ՛ եւրոպական տէրութիւններ, մանաւանդ Անգլիա այս ծրագրին գործադրութեան համար ամէն կերպով ուժ կու տան» (Յ. Պ. ՊՕՂՈՍԵԱՆ, «Հաճընի ընդհանուր պատմութիւն», էջ 554-556):

Հաճընի ժողովականներին, անշուշտ, հետաքրքրել է այն հանգամանքը, թէ՛ Հնչակեան այդ երկու գործիչները եւ առհասարակ կուսակցութիւնն ունի՝ համապատասխան չափով դրամ եւ ռազմանիւթ: Նրանց միաժամանակ հետաքրքրել է, թէ՛ «ինչ վստահելի փաստ կայ, թէ՛ եւրոպական տէրութիւնք կազմ ու պատրաստ են մեզի օգնելու» (Նոյն, անդ): Հնչակեան այս ծրագիրը,

ինչպէս հաղորդում է ժողովում, պէտք է իրագործուէր նրանով, որ Ապահը պէտք է ծախսէր իր հետ բերած 900 ոսկին, իսկ ռազմանիւթի մի մասը պէտք է հայթաղուէր տեղական կառավարական ոստիկանութեան եւ զօրանոցի վրայ յարձակուելու ու գրաւելու միջոցով: Դրանից յետոյ ապստամբները պէտք է յարձակուէին Վահկայի զօրանոցի վրայ: Հնչակեան գործիչներն առանց հիմք ունենալու անգլիական օգնութիւն էին խոստանում հաճընցիներին. «Երբ ապստամբութեան սկսինք, երեք օրուան ընթացքին Անգլիական կառավարութիւնը իր զօրքերը պիտի հասցնէ, հերիք է, որ մենք դիմանանք միայն երեք օր», - ասուել է ժողովում: (Նոյն, անդ):

Սին ցնորքներ... Լեռնական զէյթունցիները թշնամու ահաբեկ բանակներին դիմացան մի քանի ամիս շարունակ, սակայն եւրոպական, եւ այն էլ անգլիական եւ ոչ մի զինուոր նրանց օգնութեան չեկաւ, իսկ բրիտանական կառավարութիւնն այդ մասին անգամ չմտածեց:

Վերը նշուած հարցերի մասին ժողովում վիճարանութիւններ են սկսւում: Ժողովականները վերջապէս համոզուելով, որ «ոեւէ որոշ հաւաստիք մը չկայ, որ եւրոպական տէրութիւնք, մանաւանդ Անգլիա, երեք օրէն մեզի զինուորական օգնութիւն հասցնէ...» (Նոյն, անդ), այդ պատճառով էլ ապստամբութիւն բարձրացնելը կարող է հասցնել նրան, որ թուրքական զօրքերը կը ընաֆնջեն Հաճընի բնակչութեանը, որոշում են հրաժարուել այդ ծրագրից եւ մերժել այն: Նշենք, որ Հաճընցիները անգլիական միախոնարներից նախօրօք իմացել էին, որ Անգլիան բոլորովին էլ չի պատրաստուում պաշտպանել հայերին եւ այդ պատճառով էլ չհաւատացին Հնչակեան գործիչներին:

Հնչակեան կուսակցութեան այդ ծրագիրը մերժուեց նաեւ Տէօրթ Եոլում: Սակայն տեղեկութիւններ կան այն մասին, որ եղել են մարդիկ, որոնք ցանկացել են Հաճընից գնալ Զէյթուն, միանալ ապստամբներին եւ կռուել թուրքական բանակների դէմ: Ապստամբութեան օրերին Հաճընից կռուելու մտադրութեամբ Զէյթուն են գնում «Յովնան Ծիէրճեանը եւ իր ընկերները, որոնք Զէյթուն օգնութեան կ'երթային՝ կը սպաննուին» (Նոյն, անդ): Լեռնականների ապստամբութեանը դրամով եւ կամաւորներով օգնեցին այնթապցիները («Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան», հտ. Ա, էջ 557):

Ա. Զօպանեանի «Պէտք է օգնենք զէյթունցիներին» առաջնորդող յօդուածից երեւում է, որ 1895 թուականին հանգանակութիւններ են կատարուել կռուող զէյթունցիների համար, սակայն այն հաւաքուել է Հնչակեանների ուրոյն ստիպողական մեթոտներով եւ սպառնալիքներով: Այդ կապակցութեամբ Ա. Զօպանեանը գրել է, որ այդ միջոցները «աւաղ, աւելի սպառնալիքով հաւաքուած գումարներով կազմուեցաւ, քան ինքնաբերաբար տրուած նպաստներով» («Անահիտ», 1963, Ապրիլ, թիւ 4): 1962 թուականին Պէյրութում լոյս տեսած «Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան» աշխատութեան առաջին հատորում նոյնպէս նշուած է, որ լեռնականների ապստ-

տամբութիւնն արդիւնք էր հարստահարութիւններու ուժեղացման եւ համաժողովրդական բնոյթ ունէր: «Այդ տեսակէտով պէտք է խոստովանիլ, որ Զէյթունի ապստամբական շարժումը,- կարողում ենք այնտեղ,- միայն հնչական կուսակցութեան չէր պատկաներ, այլ այն կը կրէր համաժողովրդային բնոյթ՝ հնչական ղեկավարութեան տակ» («Պատմութիւն Ս. Դ. հնչական կուսակցութեան», հատ. Ա. էջ 168):

Նշենք, որ հնչական կուսակցութեան գործիչները լաւ գիտէին, որ լեռնականների ապստամբութիւնն սկսելուց յետոյ եւրոպական պետութիւնները բոլորովին օգնութեան չէին հասնի նրանց: Սակայն ժողովրդին ոտքի հանելու նպատակով նրանք ստիպուած եւրոպացիների օգնութեան մասին խոստումներ էին անում՝ նպատակ ունենալով ապստամբութեան մասին մամուլում լուրեր տպագրելուց յետոյ եւրոպացիներին շահագրգռել միջամտելու Թուրքիայի ներքին գործերին՝ լուծելու հայկական հարցը: Սակայն եւրոպական պետութիւններից եւ ոչ մէկն այդ պահին նպատակ չուներ հայ ժողովրդի համար իր յարաբերութիւնները վատացնել Թուրքիայի հետ, ուր նրա կապիտալիստներն ու բանկիրները հսկայական միջոցներ էին դրել եւ մեծ չափերի հասնող շահ էին ստանում: Այսպէս գիւղի մօտ գտնուող մուկ Զոր վայրում տեղի ունեցած ժողովում հնչական կուսակցութեան գործիչ Ջոր վայրում տեղի ունեցած ժողովում հնչական կուսակցութեան գործիչ Աղասին ասում է. «Անգղիոյ վարչապետը, վսեմ Կլաւսթոն, պատույ խօսք տուած է թէ (ոչ ոք գիտէ, թէ Կլաւսթոնը ոեւէ խօսք տուել է եւ վերջապէս ինչով հաւատանք նրա պատույ խօսքին, միթէ այդպիսի խօսքը նշանակում է զօրքով օգնել լեռնականներին.- Հ. Պ.), երբ կ'ապստամբի Կիլիկիոյ հայութիւնը, մենք անմիջապէս զօրք կը հանենք Մերսին եւ օգնութեան կը հասնինք: Բացի աստի, Ֆրանսա, Ռուսիա, Գերմանիա եւ Իտալիա, Պերսիի վահագնող զորքերը հայկական ինդոյ համար շեշտուած ՅԱՐԴ յօդուածի տրամադրութիւնը, կէտ առ կէտ գործադրել տալու համար, սուլթանի վրայ ճնշում պիտի բանեցնեն: Նոր երէկ, լուր հասաւ, թէ Անգղիոյ զրահաւորները Մերսինի առջեւ խարսխած կը կենան, իսկ միւս տէրութեանց զրահաւորներն ալ, Միջերկրականի ցուրերու վրայ կը պտըտին ու աշխուրջ կը հսկեն, որպէսզի Կիլիկիոյ հայութիւնը ազատ մնայ կոտորածէ» («Զէյթունի պատմագիրք»):

Այս խօսքերն ասուել են ապստամբութեան նախօրեակին: Սակայն հենց ապստամբութեան ընթացքում մեր ունեցած տուեալների համաձայն լեռնականները բազմիցս հարցրել են Աղասուն, թէ որտե՞ղ են ապա անգլիական նաւերը, ինչո՞ւ նրանք չեն օգնում մեզ: Նրանք սին խոստումներ էին, որին չէին հաւատում հենց իրենք՝ հնչական կուսակցութեան գործիչները, որին չէին հաւատում հենց իրենք՝ հնչական կուսակցութեան գործիչները, քանի որ Աղասու, նրա ընկերների, ինչպէս նաեւ եւրոպական պետութիւնների ու նրանց ներկայացուցիչների աչքերի առջեւ Մարաշի հայութեան մի մասը այդ օրերին սրախողխող արուեց եւ դրա համար ոչ ոք պատասխան

չտուեց: Վերջապէս լեռնականների մէջ Արթին Աղան եւ Նրա հետ նաեւ ուրիշները բոլորովին էլ չէին հաւատացել Աղասու այն խոստումներին, թէ անգլիացիները կ'օգնեն լեռնականներին: Նրանք հասկանում էին, որ եթէ անգլիացիները նոյնիսկ այդպիսի խոստում էլ արած լինէին, ապա այն չեն կատարի իրենց զաւթողական պլաններից ելնելով: «Կլաւսթոնը,- ասում է նա,- պատույ խօսք տուած է օգնելու, եթէ իրականութիւն է, եթէ անկեղծ է, Հայաստանի լեռներն ու ձորերը հայարկւնով ներկել թող չիտային, ինչպէ՞ս կ'ըլլայ, որ անոնց չեն օգնել եւ մեզի օգնելու խոստում կ'ընեն. անոնք Կիլիկիոյ հայութիւնն ալ պիտի փճացնեն, որ հայ ազգին Հայաստան մը ունենալու դատը թաղուի հայուն հետ. որպէսզի երբ օր մը Թուրքիոյ հողը բաժնելու ըլլան մէջիներին ուրիշ ժառանգորդ մը երեւան չիգայ» («Զէյթունի պատմագիրք», էջ 510):

Ինչքան ճիշդ է գնահատել այն ժամանակ քաղաքականութիւնից ու դիւանագիտութիւնից քիչ բան հասկացող, պարզամիտ ու նահապետական լեռնացին: Կեանքը հետագայում հաստատեց նրա ասածների ճշմարիտ լինելը: Հնչական կուսակցութեան գործիչները եւրոպական պետութիւններից ոչ մի օգնութիւն չստացան եւ չէին էլ կարող ստանալ, դրա փոխարէն հազարաւոր մարդիկ զոհ գնացին ինչպէս պատերազմի ժամանակ, այնպէս էլ դրանից յետոյ:

Հ. Մ. ՊՕՂՈՍԵԱՆ
«Զէյթունի պատմագիրք», էջ 365

Պերսիի դաշնագիրն ստորագրող եւրոպական պետութեանց հիւպատոսներն էին որ միջամտեցին, որոնցմէ երկուքը, Ֆրանսացի Պարթիւրմին եւ իտալացի Էնրիքս Վիթոն,- որ յետոյ Զէյթունի վրայ ամբողջ գիրք մը հրատարակեց,- մասնաւորապէս ջիւրմ համակրութիւն մը տուին Թուրք կառավարութեան ու ապստամբներուն միջեւ հաշտութիւն կնքելով զէյթունցիներուն համար նպաստաւոր պայմաններով: Բայց նորէն հայ ժողովրդը չգիտցաւ այդ շրջանին մէջ կեդրոնացնել իր կարեւորագոյն գործօն ուժերը եւ իր ազատագրական պայքարին էական ճիգը:

ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆԵԱՆ

ԿԱՐՄԻՔՆԵՐ ԵՒ ՏԵՍԱԿԵՏՆԵՐ 1895-1896-ի ԶԷՅԹՈՒՆԻ ԱՊՍԱՄԲՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

19-րդ դարու վերջավորութեան բացառիկ տեղ կը գրաւէ 1895-1896-ի Զէյթունի ապստամբութիւնը, պատմականօրէն վերջին եւ մեծագոյն ապստամբութիւնը զէյթունցիներուն, Օսմանեան կայսրութեան դէմ, որ յաջողութեամբ պսակուեցաւ բայց մեծ զոհողութիւններով: Այս ապստամբութեան մասին զանազան տեսակէտներ կան կազմակերպութեան, իրականացման, աւարտին մասին: Լաւ կ'ըլլայ անկողմնակալ կերպով յիշել այդ օրերուն գրուած մամուլի յօդուածները եւ անկէ յետոյ գրուած պատմութիւնները պատմաբաններու կողմէ: Անոնցմէ կը քաղեմ մի քանին առանց մեկնաբանութեան, այդ իրաւունքն ու պարտականութիւնը ձգելով մասնագէտներու:

Ս. Ս.

Հիանալի հասկանալով, թէ կառավարութեանը ինչպիսի ծանր հարուած էր հասցւում Զէյթունում, որոշ ղեկավարներ առաջարկում էին անյապաղ ելոյթներ կազմակերպել նաեւ Կ. Պոլսում: Դրա համար հարկաւոր էր նախապատրաստական մեծ աշխատանքներ կատարել: 1895թ. Դեկտեմբերի սկզբին «Դրօշակ» խմբագրութեանն ուղղուած նամակում Հ. Յ. Դաշնակցութեան Կ. Պոլսի կազմակերպութեան ղեկավարներից մէկը Ա. Վռամեանը, առաջարկում է «Թէ հոս եւ Զէյթունին մէջ իրական գործ մը տեսնելու համար քանի մը հազարներ պէտք են, եւ ես կը կարծեմ որ մենք թէ՛ ձեզ եւ թէ՛ արեւելիները համոզելու պէտքը չունինք ցոյց տալու համար թէ որքան հարկ է ուժերը ու միջոցները այդ երկու կէտերուն մէջ ամփոփելու համար» (Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հտ. 1, էջ 233): 1896-ի սկզբին «Դրօշակ»-ում հրատարակուած կոչում նշում էր. «Հոյն (այսինքն Զէյթուն, Լ. Մ.) դարձած են հիմա Եւրոպայի ու Թուրքիոյ սարսափած աչքերը, ցորչափ Զէյթուն յաղթական շարունակէ մնալ իր անառիկ լեռներուն վրայ, ոչ Թուրքիան եւ ոչ Եւրոպան պիտի կրնան հալկական դատը մարելու եւ ապա այդ ըմբռնելով ամէն միջոց կը գործածուի զինաթափ ընելու Զէյթունը... Բայց ոչ, Զէյթուն պէտք չէ որ նուաճուի եւ չպիտի նուաճուի...»

Կեցցէ Զէյթուն, կեցցէ ապստամբութիւնը:

Հայեր, օգնեցէ՛ք Զէյթունին»

(«Դրօշակ» Վիեննա, 1896, թիւ 1, Յունուար 1):

Կուսակցութեան ջանքերով սկսեցին հանգանակութիւններ կազմակերպուել Զէյթունին օգնելու համար: Առաջ էր քաշուած մարտական խմբերի կիպրոսի վրայով Կիլիկիա անցնելու ծրագիրը: Հ. Յ. Դաշնակցութեան խմբերի դէպի Զէյթուն անցումը կազմակերպելու նպատակով Կիպրոս են անցնում

Արմէն Կարօն (Գ. Պաստրմաճեան) եւ Հրաչ Թիրեաքեանը: Կ Պոլսի Կ. Կոմիտէի ջանքերով որոշակի քանակութեամբ զէնք եւ զինամթերք է տեղափոխուում Զէյթունին համեմատաբար մօտ գտնուող Էնկիւրիի շրջանը: («Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան», հտ. 1, էջ 235-236): Թէեւ նման փորձերը ուղացած էին եւ ոեւէ արդիւնք չէին կարող տալ, բայց արժանի են ուղադրութեան ժամանակի մտայնութիւնը պարզելու տեսակէտից: Զէյթունի ապստամբութեան նկատմամբ հայութեան հետզհետէ աճող հետաքրքրութիւնը եւ ոգեւորութիւնը այն ոչ երկրորդական ազդակներն էին, որ ստիպում էին սուլթանին զիջողութիւնների գնալ ապստամբութիւնը օր առօրէ կազարեցնելու համար: Այնուհանդերձ, այստեղ հարկ է մէկ անգամ եւս շեշտել, որ ինչպէս Զէյթունի ապստամբութեան, այնպէս էլ ճգնաժամի ողջ ընթացքում, հայ ազգային երկու կուսակցութիւնները չկարողացան հանդել միասնական, համաձայնեցուած գործողութիւնների, ինչը մեծապէս ձախողեց պայքարի յաջող ելքը:

Սակայն Զէյթունի հերոսամարտը կազմակերպուածութեամբ, հզօրութեամբ խուճապի էր մատնել ոչ միայն Թուրքական իշխանութիւններին, այլ՝ եւ բաւականին դժուար կացութիւն էր ստեղծել մեծ պետութիւնների համար, ստիպելով նրանց որոշակի դիրք գրաւել ծագած ոչ միանշանակ իրադրութեան դէմ: 1896թ. ամրանն ու աշնանը Արեւելեան հարցի շուրջ ստեղծուած միջազգային քաղաքական բարդ իրադրութեանը արդէն ծանօթ ենք: Լեռնականների ըմբոստացումը առաջին իսկ օրերից իր վրայ դամեց եւրոպական դիւանագէտների ուղադրութիւնը եւ միջազգային լայն արձագանգ ստացաւ: Իր ինքնապաշտպանութիւններով, ապստամբութիւններով եւ զինուած ելոյթներով Զէյթունը 19-րդ դարի կէսերից արդէն ձեռք էր բերել եւրոպական ճանաչում: Լեռնականների քաջութիւնն ու տոկունութիւնը յայտնի էին ամէնքին: Բացառիկ էր եւ նրա աշխարհագրական դիրքը: Տաւրոսեան լեռների արծուաբոյնը իշխում էր Կիլիկիայի վրայ, շատ մօտ էր խոշոր նաւահանգիստներին ու Ասորիքի բարեբեր հարթավայրերին: Կիլիկիայում էին խաչածեւում եւրոպական շատ երկրների տնտեսական շահերը: Այստեղ, առաւել քան Արեւմտեան Հայաստանում, պայմաններ կային մեծ տէրութիւնների գործում միջամտութեան համար:

ԼԵՒՈՆ ՄԿՐՏՁԵԱՆ «Զէյթունի Ապստամբութիւնը 1895-1896»,

Երեւան, 1995

Ձէյթունի գիւղապետաց հաւաքումն ի Գարանլըզ Տէրէ (Մուք Ձոր) 1896 Մեպտ. 16-ին օտարականաց հարցաքննութիւնը. Գիւղապետաց խորհրդակցութիւնը. թիւրքի հետ պատերազմելու որոշումը. Տէր Բարթուղիմէոս Վարդապետի ատենաբանութիւնը:

Մի կողմէ 95-ի սկիզբէն ի վեր Հալէպէն մինչեւ Ձէյթուն Հայոց վրայ ի գործ դրուած թրքական անարդար դատաստանք եւ հարստահարող միջոցք, միւս կողմէ հայաբնակ գաւառաց մէջ թիւրք ժողովրդեան կողմէ ի գործ դրուելու համար Բ. Դոնէն դրկուած խժոժութեանց հրահանգներ՝ թէեւ սթափեցուցած էին զէյթունցիները եւ տեղի տուած խորհելու իրենց երկրի պատուոյն եւ ազգութեան վրայ, մասնաւորապէս սակայն Յ. Հայ օտար հիւրերուն գալուստը առիթ տուին Հազոր իշխանին՝ Բարթուղիմէոս Վարդապետը խրկելու Ձէյթունի գիւղապետերը հաւաքելու ի Մուք Ձոր, հասկնալու համար անոնց պաշտօնը եւ խորհելու իրենց վերջին կացութեան վրայ: Ահա թէ որոնք էին ի Մուք Ձոր հաւաքեալք:

Ֆրնուզի վանահայր Տէր Բարթուղիմէոս վարդ. 40 ֆրնուզցիներով, Արեգին գիւղէն խաչեր քեահեա՝ 30 արեգիցիներով, Աւագկալ գիւղէն Գոճայեան Յարութիւն Աղա 30 աւագկալցիներով: Հոն ատեան կազմեցին 100 անձինք, իրենց նախագահ ունենալով Ֆրնուզի վանահայր Բարթուղիմէոս վարդապետը եւ ատենապետ Աւագկալ գիւղի Գոճայեան Յարութիւն Աղան:

Ատեանը բացուած էր Տ. Բարթ. Հօր Ս. աղօթիւք:

Հաւաքման նպատակն էր, ինչպէս վերեւ ըսինք, կացութեան վրայ խորհիլ, եւ գործելու եղանակը վճռել:

Ըստ այսմ՝ իրերեւ սկիզբն այս խորհրդակցութեան՝ ժողովը պատշաճ դատելով նախ հասկնալ Յ. օտարականաց ո՞վ ըլլալը, ուրկէ՞ գալը եւ ի՞նչ պաշտօն կամ նպատակ ունենալը, կանչեց զանոնք իւր ներկայութեան:

Ատենապետ Յարութիւն Աղա, օտարականաց ուղղելով խօսքը.

Բարի եկեր էք. Դուք ո՞վ էք, պարոններ.

Գաղափարական քարոզիչք. մենք ընկերութեան մը գործիչներն ենք:

Յ. Աղ. - Քանի՞ անձ էք.

Գ. - Վեց.

Յ. Ա. - Ո՞ր ազգութեան կը պատկանիք.

Գ. - Հայ ազգութեան.

Յ. Ա. - Հայ ազգութեան ո՞ր կրօնին.

Գ. - Հայաստանեայց, այն է՝ Ս. Լուսաւորչի ուղղափառ կրօնին.

Յ. Ա. Անուննիդ ի՞նչ է.

Գ. - Աղասի, Հրաչեա, Ապահ, Նշան, Մլէհ, Կարապետ.

Յ. Ա. - Պետերնիդ ո՞վ է.

Գ. - Աղասին է.

Յ. Ա. - Դո՞ւ ես ասոնց Պետը (Աղասին ուղղելով խօսքը).

Գ. - Այո, ես եմ.

Յ. Ա. - Անուննիդ կե՞ղծ, թէ աւագանի անուն է. ճշմարիտ խօսէք.

Գ. - Աւագանի անուն է.

Յ. Ա. - Ամէնքդ մէ՞կ քաղաքէ, թէ տարբեր քաղաքներէ էք.

Գ. - Տարբեր քաղաքներէ.

Յ. Ա. - Ո՞ր քաղաքներէն էք.

Աղասի - Այդ մանրամասնութիւնները չենք կրնար յայտնել, որովհետեւ ընկերութեան երդուեալ անդամներն ենք.

Յ. Ա. - Ես կասկած ունիմ Ձեր անուանց ճշդութեան վրայ ալ, թէեւ ճշմարիտ խօսքը հարցուցի.

Աղասի - Անուննիս ուղիղ խօսած ենք, բայց ծննդավայրնիս չենք ըսեր.

Յ. Ա. - Ծննդավայրնիդ անյայտ պիտի մնայ, փոքր չէ, թէ անուննիդ ալ լինի ուղիղը կամ կեղծը: Ըսիք թէ մենք ընկերութեան մը գործիչներ ենք, ի՞նչ ընկերութիւն է այդ եւ ո՞ւր կը գտնուի.

Աղասի - Լոնտոն, Անգլիոյ մայրաքաղաքը.

Յ. Ա. - Ի՞նչ է այդ ընկերութեան նպատակը, ո՞վ է անոր վարիչը.

Աղասի - Նազարբէկեան եւ նպատակն է ազգը փրկել թուրքի գերութենէն.

Յ. Ա. Ի՞նչ եղանակաւ..

Աղ. - Դրամ հաւաքելով, եւ ի ձեռն առաքելութեան հայկական գաւառներու հայերուն ղրկելով, որ զէնք եւ ուտեստ գնեն, եւ այս կերպով զօրացած՝ թրքական բռնութեանց դիմադրեն.

Յ. Ա. - Մինչեւ ո՞ր աստիճան.

Աղ. - Մինչեւ սպաննուելու եւ նահատակուելու աստիճան.

Յ. Ա. - Լաւ, հայր ունեցաւ զէնք եւ ուտեստ եւ տեղ տեղ բռնաւոր թիւրքերու հետ մարտնչելով սպաննեց եւ սպաննուեցաւ, հետեւա՞նքը.

Աղ. - Ձորս մեծագոյն պետութիւնք՝ հայոց օգնելու խոստումը տուած են, թրքական լուծը իսպառ թօթափելու եւ առանձին կառավարուելու համար.

Յ. Ա. - Ո՞ր չորս պետութիւնք.

Աղ. - Թուսիա, Անգլիա, Գաղղիա եւ Իտալիա.

Յ. Ա. - Շատ կանոնաւոր եւ օգտակար ընթացք, եթէ ենթադրութիւն չէ. ինձ սակայն անհաւատալի կը մնայ Եւրոպական չորս պետութեանց հայոց ի նպաստ գործելու կարողութիւնը.

Աղ. - Ի՞նչ կ'ըսես, ուրեմն աշխարհավարութեան եւ քաղաքականութեան վրայ լուր չունիք. այսօր բոլոր Եւրոպա Հայկ. խնդրոյն վրայ կը խորհի եւ

յիշեալ չորս պետութիւնք միարան անոր յաջողութեան օգնելու տրամադիր են. արդէն իսկէնտէրուսի ծովախորշը լեցուած են Անգլիոյ մարտանաւերով եւ հազարաւոր զօրքերով, ո՛չ ապաքէն զմեզ ղրկողն ալ այն է.

Յ. Ա. - ՁԶեզ Անգլիա՞ն ղրկեց.

Աղ. - Ոչ միայն Անգլիա այլ եւ վերոյիշեալ պետութիւնք միանգամայն.

Յ. Ա. - Ըսել է թէ պատգամաւոր ալ էք.

Աղ. - Այո.

Յ. Ա. - Ո՛ր եւն ձեր պաշտօնական գրութիւնները.

Աղ. - Թուրքիա մտնողին այդպիսի գրութիւն կրելը վտանգաւոր է եւ բռնուած ատենը՝ պատկանեալ պետութեան նախատինք ըլլալով՝ հարկ չէ տեսնուած. այլ մօտ օրէն կ'ապացուցուի այն, երբ հայկական ընդհանուր շարժումը տեղի ունենայ եւ փոքրիկ պատերազմ մը հետեւի, չորս պետութեանց ծովային եւ ցամաքային օգնութիւնը շուտ կը հասնի.

Յ. Ա. - Ձեր յատակագիծը բաւական մեծ է, որովհետեւ կ'ըսէք թէ ամբողջ Ազգը պիտի փրկուի. այդ ամբողջ ազգը զինելու եւ պարենաւորելու բաւական դրամ ունի՞ ընկերութիւնը.

Աղ. - Ընկերութիւնը շատ հզօր է, միլիոնաւոր դրամ ունի եւ ամէն օր ալ հաւաքելու վրայ է.

Յ. Ա. - Ուրեմն դուք մեզի եկած էք իբրեւ պատուիրակ եւ օգնական.

Աղ. - Այո.

Յ. Ա. - Ի՞նչ կը հրամայէ մեզ ընկերութիւնը.

Աղ. - Ձէնք առնել.

Յ. Ա. - Յետո՞յ.

Աղ. - Ձէթունի սահմաններու թիւրքերը հալածել եւ սպաննել.

Յ. Ա. - Ըսել է պատերազմի.

Աղ. - Այո.

Յ. Ա. - Լաւ, բայց երբ պատերազմիլ հարկ ըլլայ թիւրքին հետ, աղէն սկսեալ ամէն ինչ կանխաւ պատրաստելու է. այժմ ի՞նչպէս կը յաջողի այդ, երբ մենք անպատրաստ ենք եւ պատրաստութեան ժամանակը անցած է, մանաւանդ որ դրամ չունինք. երկնառաք մանանայո՞վ պիտի կերակրուին պատերազմիկները.

Աղ. - Ձեր ուզածը դրամ թող ըլլայ, երկու ամիս է որ մենք Ձէթունի շուրջ դրամ կը սփռենք անխնայ եւ տակաւին պիտի սփռենք. ահա նոր դրամ կը հասնի մեզի. եւ որպէսզի գաղափար մ'ունենաք մեր հերոսութեան վրայ, կը յաւելունք թէ ցարդ 400 ոսկի ծախսած ենք.

Յ. Ա. - Այո, լսած եմ, բայց ոչ 400 այլ 200 ոսկիի չափ, այսինքն 100 ոսկի կէօյրչիլի (բորակ) եւ 100 ոսկի ցորեն ու աղ. (աղը Արեգին գիւղի համար, եւ ցորենը Ֆրոնզի): Հաճեցէք հասկցնել ինձ, ի՞նչ ըսել է հերոսութիւն, զոր պահ մը առաջ արտասանեցիք.

Աղ. - Ազգին անձնուէր, ամէն կերպով զոհուող քաջ եւ նահատակուող ըսել է.

Յ. Ա. - Եւ այդ դո՛ւք էք.

Աղ. - Այո.

Յ. Ա. - Ձարմանք, որ ի դմին ծնեալ սնեալ եւ աճեալ զէթունցին չունենայ այդ անունը եւ դուք՝ այսօրուայ պլուզներդ ունենաք, որ թշնամիի հանդէպ ելած չէք տակաւին, ոչ մէկ զնդակի կուրծք տուած կամ վառօդի հոտ կլլած էք.

Աղ. - Այո, Յար. Աղա, շիտակ է ձեր ըսածը թէ զէթունցին գործնական հերոս է, բան մը զոր Ազգը ընդունած է պարծանօք. բայց եւ մենք ազգէն ընտրուած վստահացուած եւ այնպէս կոչուած ենք այս պաշտօնին, մեր պաշտօնը կը պարտաւորէ զմեզ ոչ միայն խրախուսել հայը, այլ եւ առաջնորդել անոր ամենավտանգաւոր պարագային, թէեւ Հայկական այս ընդհանուր շարժում չպիտի ունենայ այնքան վտանգաւոր պարագայ, ի շնորհս անմիջական օգնութեան Եւրոպական մեծագոյն պետութեանց, երբ մանաւանդ Եւրոպ. պետութեանց օրէնքով, տէրութիւնը իւր հպատակաց վրայ չպիտի կրնայ զօրք ղրկել կամ թնդանօթ դարձնել.

Յ. Ա. - Հը՛, հը՛, հը՛, խնդալս կու գայ ձեր խօսքին վրայ. Սասունի վրայ ղրկուած զօրք եւ թնդանօթ չէ՞ր. Սասուն մարթինին եւ թնդանօթի զնդակներէ չաւերուեցա՞ւ. մաս մը կտրիճ հայ՝ որ Ձեզի պէս գործիչներու՝ պատուիրակներու եւ հերոսներու հաւատաց, այսօր թշուառ վիճակի մէջ, իւր մարտիրոսները, տուներ, տեղը կու լայ, կը նստի անօգնական. Եւրոպացիք ոչինչ չեն խօսիր եւ Սուլթանը Ձէքի փաշայի քաջութիւնը կը պսակէ նշանով.

Հոս յարութիւն Աղան հառաչ մը քաշելով եւ խորհրդաւոր լուութիւն մը անցընելով, խօսքը ընդհանուրին ուղղեց եւ ըսաւ.

- Սղած հարցուփորձը ամէնքդ լսեցիք. լսեցիք նաեւ թէ այս պարոններ ո՛վ են եւ ի՞նչ պաշտօնի եւ կամքի տէր. ասոնք պարզապէս կ'ըսեն մեզ՝ թէ նիւթապէս կ'օգնենք ձեզի, պատերազմեցէք թուրքին հետ: Իմ կարծիքով թուրքին հետ պատերազմելու հաշիւ չմնաց. նկատի առնելով վերջին խնդիրները՝ որոնք արդէն մեր խորհրդածութեան նիւթ եղած էին, եւ մեր նախնիքներուն սովորութեանց համեմատ, հարկ էր այդ չարիքները խափանելու միջոցներ ձեռք առնել. այն ալ գրեթէ գոհացուցիչ կերպով լուծուած կը համարուի: Դամասկացի դատրին, մալմիւտիւրիւ տղուն բարբարոս արարքներուն, որոնք վերեւ յիշուած են, վրէժն ալ լուծուեցաւ ուզածնուս պէս: Թիւրքին հետ պատերազմելու ալ ոչինչ ունինք: Այս պարոններուն խօսքին նայելով մեզի կը մնայ ազգային պատերազմ մղել թիւրքին դէմ: Թէեւ այդ խորհուրդը լաւ է, ի՞նչ օգուտ որ նախապատրաստութիւն չունինք. պարոնները սակայն մեզի կ'ուզեն համոզել որ եւրոպացիք թէ՛ դրամով եւ թէ՛ զի՛նու զօրութեամբ պիտի օգնեն:

Եւրոպացիներու դրամին եւ անոնց օգնութեան վստահիլ, ըստ իս ձախորդ ձեռնարկութիւն է: Եւրոպացիք դրամով լեցուն շատ պանքաներ ունին, շատ զօրք եւ գէնք, շատ գրահաւոր եւ թնդանօթ ունին, ստոյգ է, բայց թէ ատոնց բոլորը հայոց փրկութեան պիտի գործածուին, ինչպէս այս պարոնները կ'ուզեն հաստատել, բոլորովին անհաւատալի է ինծի համար եւ խնդրեմ Զեզմէ, եղբայրներ, որ դուք ալ այդպիսի կեղծիքներու հաւատացող չըլլաք: Եւրոպացիք ապստամբող ազգերու ապստամբութեան գործի համար դրամ չեն տար, բայց արկածեալներու օգնութեան կը փութան, գիտենք. անոնց մարտանաւերը ծովերու մէջ, հոս հոն նաւահանգստի առջեւ կը կենան, իրենց կառավարութեան հրահանգաւ եւ ծովակալներու հրամանաւ՝ այսպէս կրնայ ըլլալ որ վերջինի հրամանաւ Միջերկրական գտնուած ըլլան կամ Իսկէնտէրուէի առջեւ խարսխած. այս սովորական երեւոյթին ուղեղիկ մեկնութիւն տալ եւ ուղղակի Հայոց համար հոն եկած են ըսել, ըստ իս ոչ միայն տղայական այլ եւ յիմարական է: Ազգային շարժման միայն ազգը պարտաւոր է օգնել, որովհետեւ անոր օգուտը իրեն կը պատկանի: Ազգը՝ ըսելով, անշուշտ ազգի կարողները պէտք է հասկնալ: Իսկ անոնց համար ազգային փրկութեան բնաբանը օտար կը հնչէ. վասնզի նախ իրենց դիրքը պէտք չունի այդպիսի նորութեան, եւ երկրորդ՝ իրենք չահերով կապուած ըլլալով Թիւրքիոյ կառավարութեան հետ, ոչ կ'ուզեն եւ ոչ կրնան այդպիսի խնդրոյ մը դրամ տալ: Գալով այլ կարգի ազգայնոց՝ որոնց օրինակ է մեզի համար 5000 տունէ բաղկացեալ Հաճինը, նա ալ թխտող հաւերու նման հաւկիթի վրայէն չ'ելլեր, թէ եւ նիւթապէս մեզմէ կարող է: Ի՞նչ կ'ըսէք, սա ամենուէն հետ մէկտեղ հաւատա՞նք թէ Եւրոպացիք դրամով կամ գէնքով, կամ այս պարոնները եւ միւս հեռաւոր ազգայինք նիւթապէս եւ անձամբ կարող պիտի ըլլան օգնել մեզի, պատերազմի ընթացքին... Կրկնեմ թէ ինծի համար այս ենթադրութեանց վստահիլ եւ գործի ձեռնարկել մեծ սխալմունք է, եւ յոյժ աղիտարեր հետեւանք կ'ունենայ: Վասնզի մենք այսօր մեզմէ միայն 24 ժամ հեռաւորութիւն ունեցող մեզի դրացի եւ նիւթապէս մեզմէ կարող հաճրնցիներուն չենք վստահիր, տեսնելով իրենց անփութութիւնը, ո՞ր մնաց հեռաւոր ազգայինք կամ եւրոպացիներ: Զգաստօրէն խորհեցէք, վասնզի հարսանիքի եւ կոչունքի խնդիր չէ, մահու եւ կենաց խնդիր է պատերազմը: Տէր մի՛ արասցէ, եթէ մենք Զարդուինք, մեր արեան գինը փնտռող չըլլար, եւ մեր բնտանիքներ ու զաւակներ թշնամեաց ձեռք գերի կ'իյնան, կը լլկուին եւ կը թշուառանան:

Աղասի, Յարութիւն Աղայի խօսքը ընդմիջելով, ըսաւ. Ես գձեզ խելահաս մէկը կը համարէի, բայց այժմ խենթ մ'ես պիտի ըսեմ:

Յ. Ա. - Պատճա՞ռ...

Աղ. - Վասնզի մեղկութիւն, դասալքութիւն կը քարոզես՝ ի բնէ քաջարի ժողովրդին:

Յ. Ա. - Դու կը սխալիս, պարոն, որովհետեւ մեր ժողովուրդը այնպիսի խօսքերով չ'թուլաստիր. բայց իրօք խենթ դուք էք, որ եւ անուանիդ եւ քաղաքնիդ կը պահէք եւ Եւրոպական պետութեանց կողմէ դրկուած պատուիրակներ եւ հերոսներ կ'անուանէք գձեզ:

Աղ. - Քաւ լիցի, եթէ խենթ կամ խաբեբայ ըլլայինք, այսքան դրամ չէինք վատներ այս սահմաններու ժողովրդեան վրայ:

Յ. Ա. - Զէյթունցիք Ձեր հիւրութեան վարձ պահանջող չեն:

Աղ. - Մենք իբրեւ վարձ դրամ մը տուած չենք, այլ բորակի, աղի եւ ցորենի: Զէյթունցոց հիւրասիրութիւնը եւ իրենց նահապետական դրութեան հետեւող ըլլալը, մեր հետ բոլոր ազգը գիտէ, այդ մասին ըսելիք չունինք. շնորհակալ ենք ձեզի:

Յ. Ա. - Զէյթունցի 200 ոսկիով չի բաւականանար եւ շնորհակալութիւն ալ չի մատուցաներ, պարոն, դուք լաւ խորհեցէք. 1500 տունէ կը բաղկանայ Զէյթունը, 800 ալ Արեգին, Ֆրնուզ, Աւագկալ գիւղեր, ըսել է որ 2300 տունէ կը բաղկանայ ընդամէնը, որոնք 8000 պատերազմիկներ կրնան հանել, ասոնց համեմատ ոսկի կրնա՞ք տալ. մարդագլուխ առ նուազն 20 ոսկի պէտք կ'ըլլայ. եւ 8000-ին ալ 4000-ը թէ եւ հրացան ունին հին տեսակներէն, 2000 մարդ բաց կը մնայ, գոնէ 5 տարի առաջ ոսկիները պատրաստ ըլլային որ հրացան գնէինք, պատրաստէինք, այն ատենը շնորհակալ կ'ըլլայինք. հիմա մահը դուռ բերեր էք, ինչէ՞ն շնորհակալ ըլլանք, չէ որ ձախորդ շարժում ունեցաք: Ըսաւ ու լռեց:

Նախագահ Տէր Բարթոլոմէոս վարդապետը լռեցող ներկաները եւ ներկայից ուղղելով խօսքը ըսաւ.

- Յարութիւն Աղայ լաւ պարզեց մեր համախմբութեան նպատակը. մենք այստեղ հաւաքուած ենք վերջին անցքերուն եւ լուրերուն վրայ խորհելու, այսինքն վճռելու թէ ինչ պէտք է մեզի ընել, եթէ նմանօրինակ անցքեր յաճախեն եւ առնուած լուրեր իրականանան: Այդ շատ ստոյգ է թէ թուրքը յոյժ կատաղած է հայոց դէմ, եւ եթէ ձեռքէն գայ Մէլնուզեան բռնաւորներէն՝ Թիմուրլէնկին Սեբաստիոյ մէջ րրածին պէս հայոց արեամբ աւազան մը պիտի լեցնէ եւ մէջը լողանայ. թէ եւ Յարութիւն Աղայի խրատներուն ալ կատարելապէս համաձայն եմ, այսինքն ձախորդ հետեւանք չի կրելու համար խոհեմութեամբ շարժելու, բայց ինծի թուի թէ առանց պատերազմի չպիտի կրնանք մեր երկիրը ապահովել թրքական բռնութեան դէմ եւ խաղաղութիւն ունենալ այս մեր շուրջ տեղի ունեցած պարագաներուն հետեւանօք: Երբ մեր բոլոր Հայ եղբայրք նկատմամբ անդադար ի գործ դրած քրդաց եւ թրքաց խժոժութեան վրայ խորհինք, այն ժամանակ անշուշտ յոյժ աւելի իրաւունք ունեցած կ'ըլլանք վրէժխնդրութեան: Այս նկատառումներուն վրայ կ'աւելնան ներկայ պարոններուն պատերազմելու համար մեզի ըրած թախանձանքը, մանաւանդ ուշադրութեան արժանի սա խօսքը. «Ձեր պատե-

րազմելու փոքրիկ ցոյցին պիտի հետեւի արտաքին օգնութիւն եւ բոլոր հայ ազգին ազատութիւնը: Հայ ազգին ազատութիւնը, Հասկէ սիրելի ի՞նչ կայ մեզի համար. ո՞ր մէկիս սիրտը կը վերցնէ, Սասունցիին եղած նախատինքը. չէ՞ որ ան ալ մեր համազգին է, մեր արեւակիցն է, մեր եղբայրն է, դռնէ անոր վրէժը լուծենք: Ես կ'ըսեմ, պատերազմինք, որովհետեւ Ա. որպէսզի արիութեան ոգին չմարի մեղկ կեանքով, Բ. որպէսզի թուրքը մեզի տիրելու պատրաստութիւնը եւ փափաքը մէկդի դնէ, Գ. որպէսզի գէթ մասամբ վրէժն լուծած լինինք մեր ճնշեալ համազգեաց, Դ. ո՛ր գիտէ՝ կարելի է մեր այս պատերազմով Աստուած հաճի ազգը փրկել թուրքին ձեռքէն: Պատերազմինք, մեզ համար հանգիստ ընել չը վայելի քանի որ բոլոր ազգը ծանր բռնութեան տակ կը հեծէ, պատերազմինք, որ քիչ մը թուրքին քիթը խոնարհի եւ ակռաները թափին, որ Հայոց ոսկորը չկարենայ կրծել:

Աղ. - Ընդհատելով վարդապետին խօսքը. «Ապրիլը, ապրիլը հայր սուրբ, Լուսաւորիչն ալ դունես, Ղեւոնդ Երէցն ալ դունես, քաջ Վարդանն ալ դունես»:

Նախագ. - Գովութեան արժանանալու համար չեմ խօսիր, պարոն, յուզուած եմ Հայոց ազատութեան եւ փրկութեան խօսքին վրայ. ա՛խ, որչափ ժամանակ է որ այս ազգը իւր ազատութիւնը կորուսած է եւ անհաւատ ու անօրէն թուրքին բռնութեան տակ կը հեծէ, քիչ մնացեր է, որ կորսուի ու ջնջուի հայութիւնը. Հայաստան, մայր հայրենիք, դրախտի երկիրը օր ըստ օրէ կը պարպուի. իւր հարազատ որդիք եւ բնակիչք օտար երկիր կը գաղթեն, օտար ազգերու կը խառնուին, իսկ մէջը մնացողք կը հեծեն եւ կը փճանան: Պատերազմինք, եղբարք, ջարդուինք հոգ չէ, թող ազգը ազատուի:

Աղ. - Ի՞նչ կ'ըսէք Հայր սուրբ. չպիտի ջարդուինք. փոքր խլրտում մը բաւական է. օգնութիւն եւ ազատութիւն անմիջական պիտի ըլլան. այս է կեդրոնի հրահանգը. մեր Լոնտոնի կեդրոնը չսխալիր. անպատճառ պիտի իրագործուի իւր ծրագիրը:

Նախ. - Խիստ լաւ, Ձեր սուտին իբրեւ իրաւի կը հաւատանք:

ՀԱԶՈՐ ԱՂԱՅԻ ՆԱՄԱԿԸ ԲԱՐՔՈՒՂԻՄԵՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

Նորին ամենակարողի շնորհիւ յաղթող հանդիսացանք աշխարհի առջեւ, ըսաւ ու լռեց: Անոր խօսքերուն մէջ մարգարէական չեշտ մը ու հաւատք մը կար: Նազարէթ չափուշը պատասխանեց. «Արդէն ես ազգային խնդրոյ համար խմորեալ մարդ մ'եմ, իմին ալ փափաքս նոյնն է, ընդունած եմ ձեր հրամայածը, վաղ առաւօտ անպատճառ կ'երթամ կը գտնեմ Բարթոլոմէոս վարդապետը. եթէ կ'ուզէք նամակ մ'ալ գրեցէք վարդապետին. անոր հետ աջակցելով պէտք եղածը կը խորհինք եւ ձեզ կը հաղորդենք»: Հազոր Աղան նամակ մը գրեց եւ տուաւ հերոսապետին ձեռքը: Հայրենասէր չափուշը պատկառելի իշխանին ձեռքը համբուրեց եւ ըսաւ. «Մնաք բարոյ»: Նա ալ անոր

փայլուն ճակատը համբուրելով, «Երթաք բարոյ» մաղթեց: Միւս օր մի խումբ հայ զինուորներ զնացին հասան ի Գարանլը՝ Տէրէ Զէյթունէն վեց ժամ հեռի: Վարդապետը եւ Նազարէթ զիրար տեսածնուն պէս ողջագուրուեցան մեծ ուրախութեամբ, ցնծալով, հիւրերն ալ նոյնպէս ըրին: Վարդապետը նամակը բանալով կարդաց որուն պարունակութիւնը հետեւեալն էր. «Արժաներուն մասին, գրածիդ լիովին տեղեկացանք. որչափ որ ատոնց տուած տեղեկութիւններու չենք հաւատար՝ հոգ չէ. անոնք ալ չէ՞ որ մերայինք են՝ հայ են, արեւակից են, հիւրեր են, խաթերնին չդպչիք. իբրեւ սիրելի հիւրեր՝ գիրենք պատուեցէք. կարծեմ թէ ատոնք պատերազմի համար նորընծայ կը սեպուին. այս ալ վարժութիւն մ'է, թող տուէք որ սորվին: Ասոնց սուտերուն իբրեւ իրաւ հաւատանք ու գործենք, վասնզի միջոց չիկայ, ժամանակը լրացած է. եթէ հոգ մը ունինք՝ այն է որ՝ անպատրաստ ենք. այս հոգն ալ նախախնամութեան ապաւինելով, նորին անհուն ողորմութեան, գթութեան, զօրութեան թողունք, նա կարող է զմեզ փրկել մեր թշնամիներէն: Երբոր մենք եւ մեր պապերը կը պատերազմէինք, միթէ մեր օգնութիւնը Լոնտոնէ՞ն կու գար, կամ թէ օտարականաց խումբ մ'ը կու գային, կ'օգնէին. ոչ, ոչ. այնպէս չէ. «Մեր օգնութիւն ի Տեառնէ եկեցէ որ արար զերկինս եւ զերկիր»։ այս անգամին գործը ուրիշ օրինակի չեմ կրնար նմանցունել, այն է՝ որ անպատրաստ բառը կ'ուզեմ նմանցունել Հայր Աբրահամու դէպքին՝ երբոր իւր սիրելի գաւակ Իսահակին հետ կ'երթային որպէս մատաղի զենման համար. Սահակ զգացուելով հարցուց հօրը ըսաւ. «Հայր, ահա հուր եւ ահա փայտ, ո՞ւր է ոչխար յողջակէզ»։ Հայրը պատասխանեց. «Որդեակ, Տէր պատրաստեցէ՛: Ըստ հօր Աբրահամու մեր պիտոյքը Աստուծոյ խնամքին կը ձգենք, անիկա հօր Աստուած է, կարող է իրեն հրեշտակներով մեր բանակը պաշտպանել: Այս կտորին վրայ կատարեալ վստահ եմ. դուք ալ վստահ եղիք. ըստ Տեառն եւ Գէդէոնի»։ եղաւ Իսրայելացւոց ժամանակ, հիմա ալ սուր Տեառն եւ Զէյթունի պիտի կանչուի. ապահով եղիք: Յաղթութիւնը մերը պիտի ըլլայ, այս յուսով, այս հաւատքով, այս սիրով պէտք է ապրինք ամէնքս ալ, որով մնալու եմք առ այս: Ես եւս կը մնամ Ձեր Ս. Աղօթքի օժանդակութեան ջերմ փափաքող. Խ. Մ. Հազոր Շովրոյիան:

(ԶԵՅԹՈՒՆԾԻ, «Զէյթունի անցեալն եւ ներկայէն» Բ. մասն, 1903, էջ 7-23).

ԱՂԱՍԻԻ ԵՒ ԻՐ ԸՆԿԵՐՆԵՐՈՒՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆ
ՈՒ ԱՆՓՈՐՁՈՒԹԻՒՆԸ

Շուանդուն, քաջ, հայրենասէր եւ մաքուր բայց ապստամբութիւն մը վա-
րելու եւ դրական արդիւնքի մը հասցնելու համար պէտք էր ունենալ ամե-
նէն առաջ արհեստին տեղեակ զօրավարի մը յատկութիւնները, ինչ որ Աղա-
սի չունէր եւ չէր կրնար ունենալ: Արդէն մեր միւս յեղափոխականներուն
ալ տկար կողմ եղած է այդ, միշտ այնպէս կարծած են որ քաջութիւն եւ անձ-
նութիւններուն բաւական են հայ ազգը կարենալ փրկելու համար: Պատերազ-
մը արհեստ մ'է ինչպէս միւս արհեստները եւ պէտք է գիտնալ թէ ինչ ծրա-
գիրներ յղանալու է եւ ինչպէս զանոնք գործադրելու է վերջնական արդիւնքը
ձեռք բերելու համար: Աստիճաբար զօրավար մը գրած էր որ Մուստաֆա
Քէմալի յեղափոխութեան սկիզբները լուր տարածուած էր թէ Հայոց Անդ-
րանիկը չեմ գիտեր քանի տասնեակ հազարնոց բանակով մը կը պատրաս-
տուէր սահմանադրութիւն անցնելու, եւ Քէմալ անհանգիստ եղած՝ լուր կը
հարցնէր այդ մասին իր ստորադասեալին, որ կը պատասխանէր՝ Անդրանի-
կը դպրոցի մէջ պատրաստուած զօրավար մը չէ, եւ թէ իսկպէս իր տրա-
մադրութեան տակ ունենայ ալ այդչափ բանակ մը, ապահով է որ չպիտի
կրնայ զայն կառավարել: Դժբախտաբար թուրք զօրավարին դիտողութիւնը
ճիշդ էր, եւ Անդրանիկ ինքն ալ խոստովանած է որ իր բազմաթիւ ընդհա-
րումներուն մէջ շատ աւելի տառապած է կազմակերպութեան պակասէն,
պարէնաւորումի անկանոն վիճակէն, քան թէ բուն զինուորական գործո-
ղութիւններէն: Բնական է որ այդ պարագան չնուազեցնէր փառքը Անդրա-
նիկի որ մեզ համար հարկւր դպրոցական զօրավարէ աւելի արժէք ունի: Անդ-
րանիկ հրաշքներ գործեց բայց չհասաւ վերջնական արդիւնքին, ճիշդ անոր
համար որ կը պակսէր իրեն արդի եւրոպական զօրավարի մը յատկութիւնը:
Ըսենք որ Զէյթունի մէջ ալ կային հինգ վեց Անդրանիկներ, տեղական պա-
տերազմներու մէջ եփած ու փորձուած, բայց անոնց ալ կը պակսէր միեւ-
նոյն յատկութիւնը: Անոնք հրաշալի ոյժեր էին ճակատամարտներ շահելու
համար, բայց չէին ստեղծուած վերջնականապէս շահելու համար ազգային
պատերազմը: Մեզ պակսեցաւ միշտ եւրոպացի զօրավար մը, եւ չեմ գիտեր
ինչո՞ւ մեր կուսակցականները որ առիթ չէին փախցնել ճառեր եւ յօդուած-
ներ մուրալու մեր ազգին ի նպաստ, չփորձեցին նաեւ մի քանի զօրավարներ
մուրալու կամ ամէն զոհողութեամբ վարձելու, մեր դատը գործնականապէս
վարելու համար: Աւելին կայ, շատ հաւանական է որ առիթը ներկայացած ատեն
իսկ, մերժեցին կամ չլսել ձեւացուցին: Մի քանի վարանդեան կը քիչ նամակ մը
ուղղուած «Դորալակ» խմբագրութեան որ կոչւրած էր «Եւրոպացի ամէն կար-
գի հեղնակաւոր դէմքերու, խնդրելով, որ իրենց կարծիքները տան հայկական
շարժման մասին եւ իրենց ձայնը բարձրացնեն ընդդէմ համիտեան բարբարո-
սութիւններուն»: Ահա թէ ինչպէս կը վերջացնէր մեզի ուղղուած իր նամակը
զօրավար Րիչիտտի Գարիբալդի, աշխարհահռչակ հերոսին զաւակը:

«Հայերը, ինչպէս եւ միւս ժողովուրդները, որոնք այսօր բուրք բռնա-
պետութեան լուծը կը կրեն, եթէ կ'ուզեն ազատագրուիլ, պէտք է որ ար-

դարութեան ու մարդկայնութեան այդ գործը պահանջեն գէնքը ձեռին:
Այս կերպով միայն կարելի է ստիպել եւրոպական դիւանագիտութիւնը՝
ունկնդրելու թշուառ ժողովուրդներու ձայնին:

«Այդ մտքով ես եւ իմ բարեկամներս տրամադրութեանը տակ ենք հայ
վատաբախտ ժողովուրդին որու հետ է մեր բոլոր համակրանքը»:

Թէ ինչպէս պատասխանուեցաւ այս նամակին, այդ չենք գիտեր, բայց
գիտենք թէ հայկական դատին համար աշխատեցան ճառերով եւ յօդուած-
ներով՝ «Ժողէս, Պրէսսանսէ, Կլեմանսօ, Անատոլ Յրանս», եւ այլն:

Ահա թէ ինչ կ'ըսէ այս խնդրոյն շուրջ իտալական ծերունի հիւպատոսը որ
իր ամբողջ կեանքն անցուցած է Թուրքիոյ մէջ եւ որուն անվերապահ գովեստն
ըրած է Մինաս Չերազ, իբրեւ ամենահմուտ անձի մը արեւելեան խնդիրներուն:

«Բոլոր մարդկային դէպքերուն մէջ կայ վայրկեան մը որ իր ծոցին
մէջ կը կրէ յաջողութիւնը: Ով որ գիտէ գուշակել այդ վայրկեանը եւ ան-
կէ օգտուիլ, ան կը տանի յաղթանակը. իսկ այն որ տգիտութեամբ կամ
անփութութեամբ թոյլ կու տայ որ անցնի առիթը, նա կ'իյնայ շուտով, կը
կորսնցնէ իր շահածը եւ կը պարտուի: Հայկական ապստամբութիւնը ու-
նեցաւ արդեօք այդ վայրկեանը: Այո՛. Հոկտեմբերի վերջը, երբ Մարաշի
մէջ աննշան քանակութեամբ զօրք միայն գոյութիւն ունէր ու աննշան
քանակութեամբ զօրք ալ Այնթապի մէջ, երբ կառավարութիւնը բոլորո-
վին տարուած ջարդի գաղափարով, երբք չէր մտածեր ռազմագիտական
անակնկալներ ստեղծել ոչ մէկ կէտի վրայ, եթէ ապստամբներու գունդ
մը ուղղուած ըլլար դէպի Մարաշ, գայն պիտի գրաւէր անշուշտ առանց
դժուարութեան, դոյզն արեւմտեան դժուարութեամբ միայն: Չմոռնանք որ վախ
էր եւ ոչ թէ քաջութիւնը որ զինեց բուրքերուն ոճրագործ ձեռքը Մարաշի
եւ Այնթապի մէջ: Զէյթունցի գունդ մը որ պիտի ստուարանար Մարաշի
եւ Այնթապի հայերով, կրնար Հալէպ հասնիլ առնուազն 20 կամ 25 հա-
զար հոգիներ քանակի մը վերածուած: Վերջնական յաղթութիւնը թերեւս
կառավարութեան պիտի մնար նորէն, բայց 20 կամ 25 հազարնոց ոյժի մը
ազդեցութեան տակ կարգ մը գիշումներ եւ բարեփոխումներ արագա-
փոյթ եւ մեծ դիւրութեամբ կրնային տեղի ունենալ. Եւրոպայի բռնած դիրքն
ու իր նաւերուն կատարած ցոյցն ալ օսմանեան նաւահանգիստներուն մէջ,
տարբեր հանգամանքով կրնային ներկայանալ:

Հայկական յեղափոխութիւնը չունեցաւ արդէն պատերազմական գործո-
ղութիւններ վարած փորձառու առաջնորդ մը: Երիտասարդ ՊԱՐՈՆ ՆԵՐԸ
(Զէյթուն եկող հնչակեան գործիչները), լաւ զինուորներ էին միայն, գաղտ-
նի կազմակերպութեան մէջ ճարպիկ, իսկ գէյթունցի անվեհեր հայրենասէր-
ներն ու իրենց պետերը վարժ էին միայն լեռնային պատերազմներու, իրենց
երկրին ներքին շրջանակին մէջ: Եթէ ընդհակառակն գտնուէր զօրագլուխ մը, պա-
տերազմական գործողութեանց յստակ ծրագրով մը, եւ օժտուած այդ ծրագի-
րը գործադրելու համար պէտք եղած տաղանդով, Նոյեմբերի սկիզբները ար-
դէն Հալէպի ամբողջ վիլայէթը ապստամբներուն ձեռքն անցած պիտի ըլլար»:

(ՎԻԹԹՕ՝ «Պատմութիւն Հայոց եւ Զէյթունի». հատոր Բ. էջ 179-180):

(Գ. ՏԷՕՎԼԷԹ, «Մանուկ» ք. մաս, Փարիզ 1948, էջ 45, 46, 47):

1895-1896 թթ. Զէյթունի ապստամբութիւնը Հայ ժողովրդի ազգային-ազատագրական զինուած պայքարի կարեւորագոյն դրուագներից է: Արեւմտահայութեան այս փոքրիկ հատուածը շուրջ հնգամսեայ գոյամարտով ապացուցեց յարատեւելու, իր պահանջներին եւ իրաւունքներին սատար կանգնելու ազգի աներեր վճռականութիւնը:

Ապստամբութիւնը խուճապի մատնեց Ապտուլ Համիտին, թրքական հասարակական քաղաքական ամենատարբեր հոսանքներին, նրանց ցոյց տուեց «Հայկական յեղափոխութեան» իրական ուժը: Եւրոպական հասարակութիւնը, որ տարիներ շարունակ սովորել էր լսել արեւելեան քրիստոնեայ ժողովրդի անպատմելի չարչարանքների եւ ողբերգութիւնների, հազարաւոր նահատակների մասին, զարմանքով յայտնաբերեց մի բոլորովին այլ ազգային ինքնագիտակցութեամբ առեւցուց, պայքարող ու մարտնչող ժողովրդի: Սասունի, Վանի հերոսամարտներով, Զէյթունի հզօր ապստամբութեամբ, Փշտալական կռիւներով հայութիւնը ցոյց էր տալիս մարդկութեանը, որ ինքը միասնական ազգ է եւ կարող է զէնքով պաշտպանել իր գոյատեւման սուրբ իրաւունքը: Այսպիսով 1890-ական թթ. Ծանօթացաւ ոչ միայն «Հայկական սարսափներին», այլեւ հայոց «երկաթէ շերտի» հետ, եւ այստեղ վճռորոշ դեր խաղաց զէյթունցիների յաղթական ապստամբութիւնը:

Ապստամբութիւնից տարիներ յետոյ, 1903 թ. Փարիզում կայացած հայապաշտպան միջիններից մէկում, Փրանսիական պառլամենտի պատգամաւոր Ծր. դե. Պրեսանսէն իր փայլուն ելոյթում, հիմնաւորելու համար եւրոպական օգնութեան անհրաժեշտութիւնը, շեշտում էր այն կարեւորագոյն միտքը, որ Հայաստանը ոչ միայն բազմաթիւ նահատակուածների հայրենիք է, այլեւ բազմաթիւ հերոսների: Որպէս ապացոյց նա խնդրում էր եւրոպացիներին չմոռանալ «Զէյթունի լեռնականների հերոսական դիմադրութիւնն իրենց անմատչելի արծուարոյնում»:

Բնորոշ է, որ դեռեւս հերոսամարտի օրերին Ա. Նազարբեկը Փարիզում կարդացած իր զեկուցադրերից մէկի ժամանակ նշելով, որ հայը արդէն մահանում է ոչ որպէս ստրուկ, այլ զոհուած է զէնքը ձեռքին, հիացական ծափող շնորհների ներքոյ ընթերցեց զէյթունցիների արիւնով գրուած նամակը, որ սկսում էր հետեւեալ խօսքերով. «Մենք յաղթեցինք, յաղթեցինք...»: Իսկ 1896 թ. լոյս տեսած գրքում շեշտելով, որ Զէյթունի ապստամբութիւնը նշանակում էր դիմադրութիւն մի ողջ ազգի բնաջնջմանը, նա իրաւացիօրէն եզրակացնում էր. «Զէյթունի ապստամբութիւնը փրկեց Հայ ժողովրդի պատիւը»:

Այս ապստամբութիւնը նշանակութեամբ դուրս եկաւ հայկական շրջանակներից եւ մեծ ազդեցութիւն գործեց կրէտէի, Մակեդոնիայի բնակչութեան ազատագրական պայքարի վրայ: Լեռնականների յաղորդութիւնները սասանեցին Օսմանեան կայսրութեան ռազմական հզօրութեան առասպելը, մերկացրին բռնապետութեան ողջ փտածութիւնը:

Սուլթանի փորձերը ապստամբութիւնը արեան մէջ խեղդելով ցոյց տալ սեփական ուժը եւ Զէյթունի օրինակով սարսափեցնել ազատագրական պայքարի ուղին բռնած միւս ժողովուրդներին, դատապարտուեցին լիակատար ձախողման: Թուրքական հսկայական բանակի պարտութիւնը կատարուած փաստ էր: Թուով մի քանի անգամ գաւառակի բնակչութեանը գերազանցող կանոնաւոր զինուորների գումարտակները, մուսուլմանական աւազակախմբերը ամիսներ տեւող կռիւներում մեծ կորուստներ կրեցին եւ կանգնեցուցին Զէյթունի մատոյցներում: Թուրքական կառավարութիւնը ստիպուած էր դիմել տէրութիւնների միջամտութեանը եւ բանակցութիւնների ղեւալ սեփական հպատակների հետ: Զէյթունում 1896 թ. Յունուարի 30-ին կնքուած համաձայնագիրը ոչ միայն ապստամբների, այլեւ ողջ Հայ ժողովրդի յաղթանակն էր: Համաձայնագրի նշանակութիւնը, բացի զէյթունցիների սրուած մի շարք կոնկրէտ առանձնաշնորհումներից, ամենից առաջ այն էր, որ դա փաստօրէն հաւաստում էր սուլթանական բռնապետութեան պարտութիւնը, ապացուցում էր հայոց զինուած ազատագրական պայքարի հեռանկարայնութիւնը եւ այդ պայքարի առաջին լուրջ արդիւնքն էր:

Զէյթունի ապստամբութիւնը, լինելով Ապտուլ Համիտեան հայաջինջ քաղաքականութեան անմիջական արձագանգը, կայսրութեան ներքին եւ արտաքին քաղաքական ճգնաժամի արդիւնք, հսկայական ազդեցութիւն ունեցաւ Հայ ժողովրդի զինուած ազատագրական պայքարի վրայ, նոր ուժ հաղորդեց կազմակերպուած դիմադրութիւններին եւ ֆիտալական շարժմանը: Այն մեծագոյն անհանդստութիւն առաջադրեց սուլթանի մօտ, ստիպեց նրան համոզելու, որ հնարաւոր չէ մէկ հարուածով բնաջնջել հայերին, որոշ չափով կասեցրեց ընդհանուր կոտորածների այլքի տարածումը Հայէպի եւ Ատանայի վիլայէթներում:

Զէյթունի ապստամբութիւնը թուրքական կառավարութեանը կանգնեցրեց եւ միջազգային լուրջ բարդութիւնների առաջ: Լեռնային այս շրջանի ռազմավարական կարեւոր դիրքը, նրա բնակիչների յայտնի քաղութիւնն ու ազատասիրութիւնը որոշակի նախադրեալներ էին ստեղծում այստեղ եւրոպական գործում միջամտութեան իրականացման համար: Զէյթունում քաղաքական ազդեցութիւն ձեռք բերելու համար 1862 թուականից ի վեր պայքարում էին Փրանսիայի, Մեծ Բրիտանիայի եւ Ռուսաստանի դիւանագէտները: Ուշագրաւ է, որ 1890-ական թթ. Մեծ Բրիտանիայի հայկական հարցում գրաւած առաւել վճռական եւ սպառնալից դիրքը համընկնում է ապրա-տամբութեան ամիսների 1895 թ. Հոկտեմբեր-Նոյեմբեր ընկած ժամանակաշրջանի հետ: Զէյթունի յաղթական ապստամբութիւնը, Պանք Օթոմանի յայտնի գործողութիւնը, Սասունի, Վանի հերոսամարտերը զգալի ազդեցութիւն գործեցին եւրոպական հասարակական կարծիքի եւ պառլամենտների վրայ: Պատահական չէր, որ 1896 թ. վերջերին Փրանսիական պառլամենտում Ժան Ժորեսի, Ալպեր Վանդալի, Տենի Կոչենի, ամենատարբեր քաղաքական ուղղութիւնների շատ այլ ներկայացուցիչների նախաձեռնութեամբ խիստ ըննադատութեան ենթարկուեց Փրանսիական կառավարութեան վարած

«Հայկական» քաղաքականութիւնը եւ նոյնիսկ դրուեց վստահութեան քուէ տալու հարցը (Մ. Վարանդեան, նշ. աշխ. հտ. Ա. էջ 191-193): Ընդհանրապէս, Զէյթունի հարցի շուրջ մղուող դիւանագիտական պայքարը, 1895-1896 թթ. Օսմանեան կայսրութեան միջազգային քաղաքական ծանր դրութեան վեր-լուծութիւնը մեզ բերել է այն խոր համոզման, որ եթէ զէյթուցիները կա-րողանային դիմանալ եւս մի որոշ ժամանակ, ապա անխուսափելի կը լինէր եւրոպական մէկ (Մեծ Բրիտանիա) կամ մի քանի տէրութիւնների առաւել գործում միջամտութիւնը: Եւ այստեղ հարկ է խօսել Զէյթունում 1895-1896 թթ. չիրագործուած հնարաւորութիւնների մասին: Դեռեւս Լորիս Մելիքո-վը գրոյցներից մէկի ժամանակ արտայայտել է այն միտքը, որ Կիլիկիան այն վայրն էր, ուր առաւել իրական էր հայկական անկախութեան գաղափարի իրագործումը: Լիւանանեան կառավարման համակարգի մօտիկութիւնը, մի-ջերկրածովեան աւազանը, աշխարհագրական դիրքը առաւել բարենպաստ պայմաններ էին ստեղծում այս շրջանում հայ ժողովրդի ազատագրական պայքարի զարգացման համար: 1890 թ. Ա. Զուպանեանը վերլուծելով Զէյ-թունի ապստամբութեան նշանակութիւնը, իրաւամբ գրում էր. «Զէյթունի մէջ պատահածը... ապստամբութիւն մըն էր, զէնքի վարժ լեռնցիներու ժո-ղովուրդ մը, տեսնելով, որ Տաճիկը իր վրայ կու գար, որոշեց, ինչպէս միշտ, չջարգուիլ եւ զէնքը ձեռքը դէմը ելաւ թշնամիին, ու վեց ամիս դիմադրեց: Տարակոյս չկայ որ հայ յեղափոխութեան մէջ ոչ մէկ զէպք այդ լրջութիւնը, այդ կարեւորութիւնը, այդ դրական ու բեղուն հանգամանքը ունէր, որչափ այդ զէպքը: Մելիքովին «վարն» էր որ կը կախկտար, ինքնաբերաբար, լեռն-ցիներու բնազդական ճիգովը, հող բան մը կար ընելու, հող պէտք էր բան մը ընել եւ ահա ըլլուելիք բանը սկսեւ էր, յաջողելու վրայ էր. պէտք էր բան թափել ամէն զօրութիւն, պէտք էր ամբողջ ազգը իր ամէն տեսակ ուժերը հոն կեդրոնացնէր» («Անահիտ», 1890, Փարիզ, Յունուար, թիւ 3): Զէյթունի ապստամբութեան նախօրեակին եւ յատկապէս առաջին շրջանում առկայ էին բոլոր օբեկտիւ պայմանները համահայկական կամ թէկուզեւ Լեռնա-յին Կիլիկիայում երկարատեւ դիմադրութիւն կազմակերպելու համար: Հար-կաւոր էր այստեղ տեղափոխել որոշակի քանակութեամբ զէնք, ստեղծել կա-մաւորական խմբեր, աջակցել ֆիտայական պայքարին: Սուլթանական ջար-դարարական քաղաքականութիւնն ինքն էր ստիպում արեւմտահայ գիւղա-ցուն զէնքի դիմելու: Անհրաժեշտ էր կազմակերպուած բնոյթ տալ այդ պայ-քարին, դործել համաձայնեցում եւ միասնաբար: Ցաւօք այս վճռորոշ պա-րտնք անձնագոհաբար շարունակում էին յուսահատ եւ դիւցազնական պայ-քարը սուլթանի, նրա հովանաւոր միապետների դէմ, չկարողացան համա-գործակցել միմեանց հետ, ստեղծել ընդհանուր ճակատ, ինչը յաղթանակի հասնելու միակ յոյան ու երաշխիքն էր:

Սույթանը կարողացավ, օգտուելով ընդհանուր կենտրոնի բացակայու-
թյանից, առաձին-առանձին ֆախախել, իսկ 25-յթունում փոխզինման գնա-
լով՝ մարել ազատագրական պայքարի օջախները: Եթէ հետեւենք իրադար-

ձուլթիւնների ընթացքին, ապա հեշտութեամբ կը համոզուենք, թէ 1880-ական թուականներին հայոց ազատագրական շարժումը ինչպիսի յաղթաթուղթ բաց թողեց ձեռքից, 1894 թուականին Սասունի հերոսամարտը, քիչ անց Զէյ-թունի ապստամբութիւնը, Վանի հերոսամարտը, ապա Պանգ Օթոմանի գրաւումը, Խանասորի արշաւանքը... երկար կարելի է թուել սուլթանին հայերի կողմից հասցուած ծանր հարուածների շարքը: Դժուար է պատկերացնել, թէ ինչպիսի անելանելի դրութեան մէջ կ'ընկնէր սուլթանական կառավարութիւնը, եթէ Դաշնակցութիւնն ու Հնչակեան կուսակցութիւնը նախօրօք համաձայնեցնէին եւ համադրէին իրենց գործողութիւնները: Ներքին տարածայնութիւնները թոյլ էին տալիս հայկական կուսակցութիւններին սերտ յարաբերութիւններ հաստատել եւ Օսմանեան կայսրութեան ճնշուած ժողովուրդների ազատագրական ուժերի հետ: Յաճախ պալքանեան ազատագրական պալքարը ղեկավարող կազմակերպութիւնները, կուսակցութիւնները ստիպուած էին լինում միաժամանակ բանակցութիւններ վարել եւ հնչակեանների եւ դաշնակցականների հետ (Տես «Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան», Հտ. Ա. էջ 240-242):

1895 թ. ապրիլեան թղթակցութիւններէից մէկում հայոց ազատագրական պայքարի մեծագոյն նուիրեալներէից մէկը՝ Հրայրը, հետեւեալ խոստ տողերն է արձանագրել, ասեալ թէ պատմութեան համար. «... Ներկայ հանգամանքներում ինչպիսիք մենք հայերս ենք գտնուում, անխղճութիւն եւ միևնույն անգամ դաւաճանութիւն չէ՞ արդեօք որ դեռ այդ կուսակցութիւններն բաժան կը գործեն. այդ ընթացքը անշուշտ մեզ դիտել կու տայ, որ նսական փառքի ետեւից ընկած, անճնական կրքերից կուրացած ջլատում են ուրիշը, քան զօրացնում, մոռացած են ժողովրդի տառապանքը եւ իրենց փառաբանութեան համար են ծառայեցնում գործը: Ի՞նչ է ներկայացնում մեր բոլոր ուրիշ՝ այն մեծ ուրիշ առաջ, որի դէմ կուռելու ենք, մի կաթիլ ջուր ահագին գետի մէջ, եւ դեռ կը գտնուին այնպիսի անբարոյականներ, որ անխղճաբար այդ կաթիլն էլ կ'ուզեն ջլատել, կուսակցական կիրքերը իրարու դէմ մղել, փոխանակ միացած ընդհանուր թշնամուն դիմադրել...» (Երօշակ), Ապրիլ, 1895, թիւ 4):

Մեր կարծիքով, նման տխուր իրականութեան պատասխանատուութիւնը ընկնում էր ամենից առաջ հնչակեան կենտրոնի վրայ, որը սկսած 1890-ական թուականներից, ոչ միայն երկրորդական նշանակութիւն ունեցող պատճառաբանութիւններով դադարեցրեց իր անդամակցութիւնը նոր ստեղծուած Հայ Յեղափոխականների Դաշնակցութեան մէջ, այլև նորաստեղծ կազմակերպութեան նկատմամբ գրաւեց բացայայտ թշնամական դիրք:

Ինչ վերաբերում է բուն Ձէյթունի ապստամբութեանը, ապա ողջ հայութիւնը փաստօրէն չկարողացաւ որեւէ շօշափելի օգնութիւն ցոյց տալ լեռնականներին՝ ոչ ռազմամթերքով ու զէնքով, ոչ կամաւորական խմբերով, ոչ իսկ դրամով ու սննդամթերքով: Հնչակեան մի խումբ անձնուէր երիտասարդները, որոնք մեծ դեր խաղացին ապստամբութեան ժամանակ եւ նրա կազմակերպիչներին ու ղեկավարներին էին, փաստօրէն իրենք ստիպուած

էին յետագայում շեշտելու խոստացած օգնութեան լիակատար բացակայութիւնը հնչակեան կենտրոնից: Եւ չատ դիպուկ ու ճիշդ է նկատել ապստամբութեան ռազմական առաջնորդներից մէկը՝ Ապահը, որ «Ձէյթունի պէս առիւծասիրտ ժողովուրդ մը կոչուած էր ընդհանուր հայութեան ճակատագիրը փոխել, եթէ հայ ազգին պատասխանատու մարմինները իրենց կոչման եւ դերին բարձրութեան վրայ գտնուած ըլլային» («75-ամեակ Ձէյթունի հերոսամարտի», 1895-1970, Լիբանան, 1970):

Այո, զէյթունցիները կրկին անգամ միայնակ մնացին կաթողութեան հսկայական բանակների առջեւ եւ հաւատարիմ իրենց աւանդներին, անբեւեակայելի դիւցազնամարտով կարողացան ոչ միայն պաշտպանել գոյութեան իրաւունքը, այլեւ պարտութեան մատնելով թշնամուն, ստիպեցին եւ սուլթանին եւ եւրոպական տէրութիւններին հաշուի նստել իրենց հետ ու որոշ առանձնաշնորհումներ ստացան նրանցից: Իր խիզախ կեցուածքով, կամքով եւ ոգով արիութեամբ հայ ժողովրդի այս հատուածը խորին հիացմունք ու յարգանք առաջացրեց նոյնիսկ սառն ու անտարբեր պրոֆէսիտալ դիւանագէտների շրջանում: Ապստամբութիւնից քիչ անց, նրանցից մէկը Լորտ Ձէյմս Պրայսը գրում էր. «Քանի մը տարի առաջ, 1895-ին հայերը Ձէյթունի մէջ ջոյց տուին այնպիսի հերոսութիւն, որ եթէ ծանօթ ըլլար բովանդակ Եւրոպային, Ձէյթունին անունը այնքան հռչակաւոր պիտի ըլլար, որքան էին հին Յունաստանի մէկ քանի քաղաքներուն անունները» (Նոյն, անդ):

Ձէյթունը 1895-1896 թուականներին անընկճելի մնաց, որովհետեւ դուրս էր եկել իրօք համաժողովրդական հերոսամարտի: Ձէյթունցի մարտիկը անհաւատալի թուացող հրաշքներ էր գործում կասեցնելով տասնապատիկ անգամ ուժեղ, լաւ զինուած թշնամու զրոհները, որովհետեւ գիտէր, որ յետեւում հայրենի օջախն է, անպաշտպան մայրը, կինը, երեխան, գիտէր, թէ ինչպիսի ճակատագիր է նրանց սպասում պարտութիւնից յետոյ: Ձէյթունի ապստամբութեան պատմութեանը ծանօթանալիս, ակամայ զարմանալով այս ժողովրդի կամքի, ոգու զօրութեան վրայ, մտածում ես այդ յատկութիւնների արմատների մասին եւ որպէս պատասխան լիչում մեծն Պալլընի իմաստուն տողերը.

Եւ գգացումն այն, որ կամքն իր անբեկ
Տառապանքի տակ չի կքի երբեք,
Ձի բեկուի ոգին իր հպարտութեան,
Նրան հանում է սխրանքի մի սեգ,
Որ նա վերածի Մահը յաղթութեան:
(Ձ. Գ. Պալլըն, Երկերի ժողովածու, Երեւան, 1965, էջ 46):

ԼԵՒՈՆ ՄԿՐՏՁԵԱՆ

(«Ձէյթունի ապստամբութիւնը 1895-1896», էջ 196-202):

ՎԵՐԱԳՆԱՀԱՏԵԼ ՏԷՐ ԶՕՐԸ (REHABILITATION)

Տէր Զօր, տխուր անուն մը, որ անցաւ հայոց ժամանակակից պատմութեան սեւ էջերուն, անուն մը, որ յուզում, ընդվզում կը յառաջացնէ ամէն հայու սրտին, անուն մը, որ յաւիտեան կապուած է թրջական բարբարոս ջարդարար ATAVIQUE բնագոյին:

Բայց Տէր Զօր ինչո՞վ մեղաւոր է: Այո, երբ կը լսենք Տէր Զօր անունը, բոլորս ալ կը տառապինք եւ կ'անիծենք Տէր Զօրը, յաճախ կը մտածեմ եւ կ'ըսեմ. ինչո՞վ մեղաւոր է Տէր Զօր քաղաքը:

Մանկութեանս եւ պատանութեանս շրջանը՝ 1928-1932, նախակրթարանի չորս տարիներս ապրած եմ Տէր Զօր, երբ հայրս Հալէպի Ազգային իշխանութեան կողմէ դրկուած էր հոն՝ ստանձնելու տեղւոյն Ազգային վարժարանի տնօրէնութիւնը: Այդ տարիներուն Տէր Զօր երթալը կամ տեղափոխուիլը այնքան ալ հաճելի չէր, զոհողութիւն էր անապատ երթալ, հոն բնակիլ ու ծառայել: Բայց հայրս, դիտակցելով, որ իրեն առաջարկուածը ազգային պարտականութիւն է, անվարան ընդունած էր առաջարկը ու ընտանեօք տեղափոխուած Տէր Զօր, ուր Մեծ Եղեռնէն ճողոպրած ուսումնաստեղ պատանիներ կը սպասէին ուսուցիչի:

Թրջական հարաւային սահմանէն դէպի Սուրիա ունեցած ենք ուրիշ Տէր Զօրներ՝ Ռաս Էլ Այն, Բազա, Շատտատէ եւ Մարկատա, որոնք նաեւ ունեցան չար բախտը ըլլալու հայերու գերեզմանը 1915-ին: Բայց բոլոր այս քաղաքները ինչո՞վ մեղաւոր են. մեղաւոր են թուրք ոճրագործները իրենց ցեղասպանութեան որոշումով:

Տէր Զօրի հիւրընկալ Արաբ ժողովուրդը իր կարելիք ըրաւ ազատելու հալածուած հայ որբերը, հայ աղջիկները, կիները, զանոնք որդեգրելով եւ ոմանց հետ ամուսնանալով: Ամուսնացած արաբներու հետ հայ կիներ կու գային հօրս, որ օգնէ իրենց հարազատները փնտռելու, ոմանք կու գային եկեղեցի առանց իրենց ամուսիններուն արգելքին: Տէր Զօրի բնակիչները յաճախ ազատարար եղած են աքսորեալ հայերուն:

Տէր Զօր հիւրընկալ, գեղեցիկ քաղաք է, հակառակ իր անապատային շրջապատին. քաղաք մը, ուր նեստորական վանք եղած է Դ-Ծ դարուն, եւ իր անունը այդ շրջանէն կու գայ եւ կը նշանակէ՝ Տէր՝ վանք, Զօր՝ անտառ, այսինքն Անտառի վանք, որ կը գտնուէր Եփրատի կղզիին մէջ. կղզին կը գտնուէր Եփրատի մէջտեղը, բաժնելով գետը երկու թեւի, մեծը՝ դէպի հիւսիս եւ փոքրը՝ դէպի հարաւ. այս կղզիով Տէր Զօր ընդարձակ ովասիս մը ունի, երկարութիւնը քանի մը քիլոմետր եւ լայնքը մօտ 800 մետր:

Եփրատի կազմութիւնը կը սկսի Հայաստանէն, Արածանին կ'իջնէ Հայ-

կական Բարձրավանդակէն, միանալով արեւմտեան Եփրատին, կը գոյանայ Եփրատը, որ անցնելով Հայկական հողերէն, կը մտնէ Սուրիա, կը տարածուի աւազուտ անապատին մէջ եւ Տէր Զօր հազիւ հասած, կը բաժնուի երկու թելի, կազմելով ովասիս կղզին. երբ կղզին կը վերջանայ, երկու թելերը ալեկոծ գիրկընդխառնութեամբ կը միանան, շարունակելու համար դէպի Միջագետք:

Երբ գաղթականները կու գային Հիւսիսային անապատի տաքերէն խանձրուած, ի տես կանաչ ովասիսին, անապատէն յետոյ, իրենց վերապրելու կամքը կը զօրանար. ովասիսը շատերուն փրկութեան լաստը հանդիսացաւ, աւա՛ղ, սակայն, ծերեր ու տկարներ անօթի ծարաւ մահացան հեռու Եփրատի ափերէն:

Ովասիս անտառը խիտ բարտիններով, ուռնիններով, պտղատու ծառերով եւ բանջարանոցներով, պարարտացած հայկական բերրի հողերով, որոնք գարնանային ձիւնհալին կու գային Հայկական Բարձրավանդակէն եւ անապատը կ'ըլլար եղեմական՝ իր ովասիսով:

1932-էն 30 տարիներ յետոյ, երբ օդանաւով Տէր Զօրի վրայէն կ'անցնէի, օդանաւորդը անապատի եղնիկները մօտէն դիտելու համար սկսաւ ցածէն սաւառնիլ, եւ կղզին վերէն տեսայ, կարծես խոշոր, երկար կանաչ զմրուիտի շերտ մը նետուած էր Եփրատի ծիրանի կարմիր ջուրին մէջ, ներկուած եւ պարարտացած հայկական հողով: Այս եղեմական պարտէզը անապատի մէջ զովասուն, բարտիններու տերեւներուն շշուկը հովէն, եւ թռչուններու գեղգեղանքը հանդարտութիւն մը կը ստեղծէին, որ կը տանի մտախոհութեան (meditation) եւ բնաւ զարմանալի չէ որ Դ-Ս դարուն, ովասիսին մէջ եղած է նեստորական վանք:

1915-1918-ին քիչ մը աւելի Հիւսիս այս անապատի դրախտէն, դժոխքի դարձուցին համիտեան ոճրագործութեան երիտասարդ ժառանգորդները եւ հայ գաղթականներու մեծամասնութիւնը անապատին մէջ ցիրուցան, դեռ չհասած Ովասիս, տեսան զայն հեռուէն եւ անօթի ծարաւ մեռան՝ դիմացը հաստանեան ջուրերուն:

Այսպէս, Տէր Զօրի անապատը եղաւ բացօդեայ գերեզմանը հայերուն, ուր կան նաւ մեծ հօրս ոսկորները, որոնք եղան բոլորնիններու խաղալիք: Մեռաւ անօթի ծարաւ, հայկական Եփրատի ջուրէն քիչ անդին:

Բայց դարձեալ, ինչո՞ւ եւ ինչո՞վ մեղաւոր է Տէր Զօր քաղաքը:

1920-ի ամառը, Օգոստոս ամսուն, հայրս՝ ընդունեց երկու ազգայիններ՝ Սուրէն Բաբախեան եւ Համաստեղ: Ես տասը տարեկան էի եւ լաւ կը յիշեմ անոնց կեցութեան յիշատակելի օրը, երբ միասին գացին Եփրատի անապատային ափը, հայկական ցեղասպանութենէն աւազին վրայ մնացած ոսկորները տեսնելու համար:

Սուրէն Բաբախեան ուսուցիչ էր: Ան, յախուռն, բարձրաձայն, խոշոր կազմով եւ քսաքէթ կրող անձ մըն էր: Խօսակցութիւնը՝ սրտաբուխ: Տարիներ ետք զինք տեսայ քահանայի սքեմով:

Համաստեղ ճիշդ հակապատկերն էր, լուակեաց, խոհուն, խոշոր աչքերով, կարծես տխուր ժպիտ մը կար դէմքին, չեմ դիտեր եթէ ժպիտը կարելի է տխուր կոչել:

Մեր տունը լուռ կը հետեւէի հօրս հետ ունեցած իրենց խօսակցութեան: Լսեցի որ պիտի այցելեն Եփրատի Հիւսիսային ափը, ուր հայ նահատակներու աճիւններ կային: Ինչպէս ըսի, Տէր Զօրէն անցնող Եփրատը երկու թել ունէր: Փոքր թելի վրայ երկարած քարաշէն կամուրջէն անցանք կղզի եւ հասանք մեծ Եփրատի ափը: Հոն տակաւին կամուրջ չկար, Ֆրանսացիք սկսած էին կառուցել օդէն կախուած կամուրջ մը, 490 մետր երկայնքով, Սան Ֆրանսիսքոյի կողմը կէջք կամուրջին մէկ փոքր նմուշը: Ուրեմն, հայրս նաւակ մը վարձեց՝ երկու թիավարներով եւ Սուրէն Բաբախեան, Համաստեղ, հայրս ու ես տեղաւորուեցանք անոր նստարաններուն վրայ: Եփրատի այդ անցքը անմոռանալի է ինձի համար: Կը թիավարէինք հոսանքն ի վեր, որպէսզի կարենայինք հասնիլ ճիշդ դիմացի ափը: Բայց գետին մէջ կային ջրապտոյտներ, որոնք շատ վտանգաւոր էին եւ կը պատահէր, որ իրենց մէջ առնեն ու ջրամոյն ընեն նաւեր ու լուղորդներ: Տագնապալի վայրկեաններ ապրեցանք: Իրարանցում եւ վախ, բայց նաւաստիները ճարպիկօրէն միջամտեցին իրենց թիավարելու վարպետութեամբ յաջողեցան նաւակը հեռու պահել ոլորապտոյտ հոսանքէն եւ մեզ հասցուցին Եփրատի Հիւսիսային ափը: Հոգ կը տարածուէր անապատը, ուր Օգոստոսին ջերմութիւնը աւելի քան 40 աստիճան կ'ըլլար: Տաք անտանելի էր եւ մենք շուքանկիւն մը կը փնտռէինք, սակայն գետին եղերը հանդիպեցանք մէկ մետր բարձրութիւն ունեցող անապատային ճղճիմ թուփերու եւ նստեցանք անոնց կողքին: Շուքը հազիւ մեր գլուխներուն կը հասնէր: Ատեն մը Համաստեղ քանի մը քայլ հեռացաւ մեզմէ:

Մռած էր աւազին վրայ եւ ձեռքին բան մը առած՝ անշարժ եւ լուռ կը դիտէր: Մօտեցանք իրեն: Ձեռքը դանկ մը կար, իսկ աւազին վրայ մեծ ու փոքր ոսկորներ: Քիչ մը աւելի անդին՝ ձմերուկի թուփեր: Հետերնիս ջուր չէինք առած եւ ծարաւնիս յագեցնելու համար ձմերուկ փրցուցինք: Դանակ ալ չունէինք: Բաբախեան խոշոր քար մը գտաւ եւ զարկաւ ձմերուկին, որ ջարդուփշուր եղաւ, սեւ կոտորն ու շերտերը աւազը զարդարեցին: Ուտելու կը դանդաղէինք: Ես հօրս հարցուցի, թէ ինչու չենք ուտեր, պատասխանեց՝ Համբերէ, ձմերուկը արեւուն տակ կը ձգեն, որ պաղի: Յետոյ սորվեցայ, որ ջուրի շոգիացումէն պաղութիւն կ'առաջանայ:

Թուփերու շուքին, շնորհիւ ձմերուկին, կրցանք երկար մնալ անապատին մէջ, հայոց ջարդերու ընդարձակ գերեզմանին առջեւ: Կարծես չորսով

կը հեկեկայինք: Քիչ կը խօսէինք: Գերեզմանատան ծանր տպաւորութիւն մը կը տիրէր: Տխուր տրտում՝ Համաստեղ կ'ըսէր ու կը կրկնէր.

«Բայց ինչո՞ւ եւ ինչպէ՞ս պատահեցաւ այս աղէտը, զանգուածային ջարդը ազգի մը, որ դարաւոր մշակոյթ եւ պատմական անցեալ ունի, ինչո՞ւ ջանալ սրբել ազգ մը երկրագունդի վրայէն»:

Վերադարձանք նոյն նաւակով: Այս անգամ նաւաստիները աւելի զգոյշ էին: Համաստեղ թաշկինակի մէջ փաթթած գանկը կը կրէր մեծ զգուշութեամբ:

Մեր հիւրերը քանի մը օր մնացին: Ես միայն մէկ օր ընկերացայ իրենց: Առաջին օրը, հայրս զիս տարած էր իրենց հետ, որպէսզի տեսնեմ հայոց անպատային գերեզմանը, ուր ըստ վերապրած ականատեսներուն, մեծ հայրս հիւանդացած ու մահացած էր:

Տարիներ յետոյ վերադարձանք Հայէպ, ուր կարդացի «Գիւղը», «Անձրեւ»: «Անձրեւ»ին վերջին գրութիւնը «Ջրոյց շունի մը հետն էր, ուր կարդացի գանկի ներկայութիւնը, չկրցայ զսպել արցունքներս ու յուզումս, որ գանկի գրութեան երկունքին ես ալ ներկայ եղած էի լուռ ու տխուր, Տէր Զօրի անապատի տարածքին:

Համաստեղ հոն կը գրէր.

«Ամբողջ օր մը թաքնուեցայ այն տեղերը, ու վերջապէս տռիթը գտայ գոգնալու ալդ գանկը խոշոր: Պայուսակիս մէջ գրած՝ պտտցուցի Պադ-տատ, Հայէպ, Եգիպտոս, Թունուզ, Մարսէյլ ու Փարիզ: Քիչ մը անդին կը շարունակէ. «Կը սերտեմ ժպտիլ ճիշդ այս գանկին պէս: ... կը դիտեմ՝ երկու ձեռքերուն մէջ առած: Կը փորձեմ ժպտիլ, ա՛խ, ինչպէ՞ս ժպտիլ անոր պէս բարի, անոր պէս իմաստուն ու անոր պէս հեզմտ: Ու ես յաճախ կը մենախօսեմ առանձնութեան մէջ, կը խօսիմ Համէլթի մը իմաստուն խոհերով՝ գանկը աջ ձեռքիս մէջ բռնած»:

Յետոյ շատ աւելի ուշ կարդացի նաեւ «Գանկի մը հետ» իր գրութեան մէջ.

«Եփրատ գետը, որուն եզերքին վրայ Տէր Զօր քաղաքն էր, իսկ միւս եզերքին՝ կը սկսէր ու կը տարածուէր Ճեզիրէին ընդարձակ անապատը պղնձագոյն շիկացած արեւով եւ անեղր աւազներով: Ճիշդ այնտեղ, ուր 40 հազար (ճիշդը՝ 200000) հայեր շատ կարճ ժամանակուան մէջ քայքայուած են ու խառնուած աւազներուն մէջ, Գանկը այնտեղ, սեղանին վրայ կ'ապրէր, կը շնչէր կարծես ու կը խօսէր իմաստուն լուրթիւնով: Անոր մէջ դեռ երազը կար, ինչքան ալ թշնամին ուղեց զայն աւազով լեցնել: Ու կը սպասէր, կը սպասէին 1915-ի բոլոր նահատակները կապարճաւոր Հայկ դիւցազնի հզօր շեփորին, որ հաւաքեն իրենց ռսկորները, կանգնին ոտքի, հզօր բանակներու պէս, ապրողներուն հետ տէր կանգնելու իրենց հոգե-

րուն, վանքերուն, դպրոցներուն, իրենց կանաչ արտերուն ու նաւասարդեան առաւօտեան Մխանի Մուխերուն»:

Տէր Զօր Ճեզիրէ, Միջագետքի շրջանին հին քաղաք եղած է երկու հայկական գետերու՝ Եփրատի եւ Տիգրիսի կազմած Միջագետքին մէջ: Ճեզիրէ կը նկատուի Միջին Արեւելքի առաջին բնակավայրերուն եւ գիւղերուն օրրանը: Տէր Զօրէն 150 քմ. դէպի հիւսիս արեւելք կը գտնուի Թէլ Պրակ, ուր գտնուած են գրերու նախնական ձեւեր, գծագրութիւն, սեպագիր: Անցեալ Ապրիլին Եւրոպայէն, Միացեալ Նահանգներէն, Ասիայէն եւ Արաբական երկիրներէն աւելի քան 200 ուսումնասիրողներ ժողով մը գումարեցին Տէր Զօրի մէջ՝ քննարկելու համար Ճեզիրէէն լոյս աշխարհ եկած նորագոյն յայտնաբերումները («Ազդակ», 15 Յուլիս, 1996):

Այսօր, նախկին քաղաքակրթութեան հնագիտական կեդրոն, Համագումարի միջազգային գանձ, կեդրոն եւ թանգարան է Տէր Զօրը եւ նաեւ աւա՛ղ, մեր ցեղասպանութեան խորհրդանիշը, հակառակ իր հիւրընկալ եւ բարեացակամ բնակչութեան:

Արիստիանի սերունդը դարեր շարունակ հալածեց ու ջարդեց մեզ, յետոյ համիտեանները եւ անոնց ժամանակակից երիտասարդ ժառանգորդները, ի սպառ ջնջելու համար մեզ, ընտրեցին Տէր Զօրի անապատը, իսկ Տէր Զօրի ժողովուրդը իր կարելին ըրաւ փրկելու մնացած հայերը թուրքի ճիրաններէն:

Թուրքը ուղեց Տէր Զօրի մէջ դնել հայ ցեղի վերակէտը: Բայց Տէր Զօր եղաւ վերապրելու, վերածնունդի փոքր կեդրոններէն մէկը, շնորհիւ Տէր Զօրի բնակչութեան:

Տէր Զօր եղաւ յուշարձան քաղաք մեր նահատակներուն, որուն վրայ կը հսկէ սուրիացի բարեացակամ ժողովուրդը:

Յարգանք նահատակաց յուշարձանին:
Յարգանք Տէր Զօր քաղաքին, իր ժողովուրդին եւ պետութեան:
ՎԵՐԱԳՆԱՀԱՏԵԼ ՏԵՐ ԶՕՐԸ:

Ուել անձ չի կրնար իր նահատակաց գերեզմանին վայրերուն ատելու-թեամբ մօտենալ, Հայրս 1932-ին գրած էր.

«Երեք տարուան մեր երազը ալ միտակնութիւն է դարձած, ունինք սեփական եկեղեցի, ունինք սեփական վարժարան եւ «Ապրիլ 24» ուխտատեղի: Քանի կ'անցնին դարերը՝ կը վսեմանայ, կը սրբանայ այս ուխտավայրը, որպէս մի պանդէոն, ուր պէտք է ուխտի գան սերունդները, աշխարհի ծագերէն»:

ՏԵՐ ԶՕՐ, ԱՅՍՕՐ, ՍՐԲԱՎԱՅՐ ՄԸՆ Է ՀԱՅՈՒԹԵԱՆ:
ՏՕԳԹ. ՍԵՊՈՒՆ ՍԻՍԵՌԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

	Էջ
ՓՈՒԱՆ ԹԱՌԱՋԱԲԱՆԻ ԵՒ ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ	
ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ	1
Նախահայկական Կիլիկիա-բնական նկարագիր	
ՋԵՅԹՈՒՆ	11
ԱՐՇԱԿՈՒՆԵԱՑ ԱՆԿՈՒՄԷՆ ՍԿՍԱԾ ՀԱՅԵՐՈՒ	
ՋԱՆԳՈՒԱԾԱՅԻՆ ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ	29
ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ	33
Ըստ աւանդութեան Ջէյթունի հիմնադիրները	38
ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՄՈՒՏՔԸ ՋԵՅԹՈՒՆ	46
ՋԵՅԹՈՒՆԻ ՆՇԱՆԱՒՈՐ ԵԿԵՂԵՑԱԿԱՆՆԵՐ	54
ՋԵՅԹՈՒՆԻ ԹԱՂԵՐԸ ԵՒ ԱՆՈՆՑ ԻՇԽԱՆՆԵՐԸ	59
ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՐԱՏԻ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ	68
ՋԵՅԹՈՒՆԻ ԿՐԹԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԵՒ	
ՄՏԱՒՈՐԱԿԱՆՆԵՐԸ	70
Հ. Յ. ԳԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՋԵՅԹՈՒՆԻ ՄԷՋ -	
ՀՆՋԱԿԵԱՆՆԵՐ	77
ՋԵՅԹՈՒՆԻ ՄԷՋ ԳՐԶԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՐՈՒԵՍՏԸ	86
Ջէյթունի առաջին թուրք բնակիչները	90
Ջէյթունի առողջական պայմանները	90
Ջէյթունի ընտանեկան սովորութիւնները, բարքեր	96
ԱՐՇԱԿԱՆՔՆԵՐՈՒ ՇՐՋԱՆ	107
ՋԵՅԹՈՒՆԻ ԿՐՕՆԱԿԱՆ ԹԵՄԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ	
ԳԱՒԱՌԱԿՆԵՐ, ԳԻՒՂԵՐ	109
Նիկողայոս Եպս. Դաւիթեան (Խորխոռունի)	121
Բարթուղիմէոս Վրդ. Թագաճեան (Վեղարաւոր հերոսը)	124
ՋԵՅԹՈՒՆԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ, ԿՌԻՒՆԵՐԸ	
1780-էն մինչեւ 1915	128
Տէլի Բէշիշ - Սուլթան Մուրատ Դ-ի հրովարտակի	
նորոգութիւնը (1835)	140
Ազիզ փաշայի պատերազմը, Լեւոն զաղափարական	
քարոզիչ եւ դիմում նախդէոն Գ-ի	158
Դրուագներ Պապիկ Փաշայի քաջագործութիւններէն	174
ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍ՝ ՄԿՐՏԻՋ ՔԷՖՍԻՋԵԱՆԻ	
ՋԵՅԹՈՒՆԻ ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ	
ՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ	192
Կտակ յիսուն հայ բանտարկելոց	194

ՏՈՒՆԻՐ - ՏՕՆԵՐ	199
ՋԵՅԹՈՒՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ 1895-1896	212
ՋԵՅԹՈՒՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ 1895-1896 (Շարունակութիւն)	255
1895-1896-ի ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽԱՆՇԱՆՆԵՐԸ	279
ՋԵՅԹՈՒՆԸ 1895-1896-էն ԱՆՄԻՋԱՊԷՍ ՅԵՏՈՑ	285
ՋԵՅԹՈՒՆԸ 1896-ի ՊԱՏԵՐԱԶՄԷՆ ՄԻՆՁԵՒ 1908	
ԿԻԼԻԿԵԱՆ ԱՂԷՏԻ ՕՐԵՐԸ ԵՒ ՄԻՆՁԵՒ 1914	290
ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՍՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԼԵՋՈՒԻ ԵՒ	
ԲԱՐԱԱՌՆԵՐՈՒ ՄԱՍԻՆ	296
ՋԵՅԹՈՒՆԻ ԲԱՐԱԱՌԸ	303
Առածներ, անեծքներ	366
Օրհնէքներ եւ ասոյթներ	367
Առածներ եւ Ասացուածքներ Ջէյթունի քարքառով	368
Թաւալած Ջէյթունի պատմութեան առնչութեամբ	371
Աշուղներու գործերէն Ջէյթունի վրայ	375
ՄԱՍՆԱԿԻ ԴԷՊՔԵՐ	389
ՋԵՅԹՈՒՆԻ ՎԵՐՋԻՆ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԸ 10 ՕԳՈՍՏՈՍ	
1914-էն , 14 ՄԱՅԻՍ 1915	427
ԹՈՒՐԹԻԱ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿԸ ՄՏՆԷ	
ԳԵՐՄԱՆԻՈՅ ԿՈՂՔԻՆ	453
ՎԱՆՔԻՆ ԿՌԻՒԸ	464
ԳԱՂԹ ԵՒ ԱՔՍՈՐ	470
ՏՈՒՐ ՀԱՇՈՒԵՑԱՐԴԱՐ ՄԸ	484
ԵՂԻԱՅԻ ԵՒ ԻՐ ԽՈՒՄԲԻՆ ՄԱՐՏՆՁՈՒՄՆԵՐԸ	491
Ջէյթունը կրակի կու տայ թշնամին	493
Ֆնտընագի կոիւէն յետոյ Արամ Զօլազեան	494
ԹԷ ԻՆՁՈՒՆ ԴԵՅԹՈՒՆ ԶԿՌՈՒԵՑԱԻ	
ԵՒ ԲՈՆԵՑ ՏԱՐԱԳՐԻ ՃԱՄԲԱՆ	495
ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁ ՎԵՐԱՊՐՈՂ ՋԵՅԹՈՒՆՑԻՆԵՐՈՒ	
ՎԵՐԱԴԱՐՁԸ ՋԵՅԹՈՒՆ	501
ՋԵՅԹՈՒՆԻ ԱՋԳԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԻՒՆԸ	
ԵՒ ՊԱՍՏԻ ԹԱՆՁՆԱՌՈՒՄԲԻՆ ԱՅՑԸ	504
Ֆրանսացիք կը մտնեն Մարաշ,	
Ազգային Շարժումը կը սկսի	507
Ազգ. Միութեան արտակարգ մէկ ժողովը,	
Թուրք միւսիւրներու հետաճալը	511
Նամակ Մ. Տամատեանի	512
Քեմալական շարժումը կը տարածուի,	
Ֆրանսացիք կը նահանջեն Մարաշէն	518

Մարաշէն եկող խառն պատուիրակութիւնը	524
Երեք զէյթունցիներ կը սպաննուին	528
1921-ի ԳԱՐՈՒՆԸ ԿՈՒ ԳԱՅ, ՅԱՆՔԸ ԵՒ ԱՇՈՒՍԱՆՔԸ ԿԸ ՍԿՍԻ	530
Ձեռք ունենալու մտահոգութիւններ	531
ՁէթՔՈՒՆԻ ԿԱՑՈՒԹԻՒՆԸ	532
ՔէՄԱԼԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ ՁէթՔՈՒՆԷՆ ՁԻՆՈՒՈՐ ԿՈՒՁԷ	534
ՀԱՋԱՐԱՊԵՏ ԻՍՄԱԵԻԼ ՀԱԳԳԸ ՊԷՅ ՁէթՔՈՒՆ ԿՈՒ ԳԱՅ	535
ՎԵՐՁԻՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՈՐ ԿԸ ՂՐԿՈՒԻ ՄԱՐԱՇ	539
600-ի ՄՕՏ ԱՆԿԱՐՆԵՐ, ԿԻՆԵՐ, ԾԵՐԵՐ ԵՒ ՄԱՆՈՒԿՆԵՐ ՄԱՐԱՇ ԿԸ ՂՐԿՈՒԻՆ - ԿՈՒԸ ԿԸ ՍԿՍԻ	543
Նահանջէն նորէն դէպի Ձէյթուն	559
Ձէյթունցեան կը պատմէ	572
Վերստին նահանջ՝ դէպի Արեգին-Կուռիտինի բերդը	578
Դէպի Օսմանիէ	583
Ծանօթագրութիւն	594
Ցուցակ Ձէյթունի ամբողջ պատերազմներուն	606
Բիւզանդական հայ կայսրերու ցանկ	608
Օգտագործուած աղբիւրներ եւ գրականութիւն	610
Քարտէսներ-նկարներ	612
ՅԱԻԵԼՈՒԱԾ	636
Բանաստեղծութիւններ, երգեր Ձէյթունի մասին	640
Ձէյթունցիներ եւ զէնքը	651
Ձէյթուն քաղաքը, մէջքերումներ պատմաբաններէ եւ նամբորդներէ	655
1895-1896-ի ապստամբութիւնը	665
Կարծիքներ եւ տեսակետներ 1895-1896-ի ապստամբութեան մասին	670
Վերջաբան	682
Վերագնահատել Տէր Զօրը	687
Բովանդակութիւն	692